208.9
Ч-13

2348-42

220
491-ԱՕ

208.2
Ե-93

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

## ՏԵՐՈՆ ՄԵՐՈՑ
## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵՒՆ ՏԵՐՈՆ ՆԵՐՍԵՍԻ ԱՐՔԱՆԵՐՑԻՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՍՊԵՏԻ

1004
19564

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԻՊ

ՀԱՆԴԵՐՁ Վ. ԿԱՅԱՆՈՒԹԵԱՆՑ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ր.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱԳՐԱՏԱՆ Ն· ՅԷ ՔԱՍԹՐՕԻ

1850—ՌՈՂ

ՕՀՀ
ՕՄ-1614

Ոչ ոք զայս տպագրութիւն Նորոյ Կտակարանիս յաշխարհիկ բառ-
բառ՝ գոցես յար եւ նման՝ ըստ բնագրին՝ գրաբառ եւ աշխարհաբառ
հաւատարիմ թարգմանութեանն, որ ի լոյս ընծայեցաւ ի Մոսկով ի
Տպարանի Հայկական Հեմարանին Տեառց Լազարեանց յամի Տեառն
1834։

«Ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու Ըժանընտիր Կաթո-
ղիկոսի ամենայն Հայոց եւ Պատրիարքի»։

«Յառաջնորդութեան Յուսիաբնակ Հայոց առաքելաշաւիղ Տեառն
Ներսեսի Արբազան Արքեպիսկոպոսի եւ Պատրիարքի»։

«Հրամայեցաք տպագրել, գտաքննիչ Վրոյց Մխիթար Ծայրագոյն
Վարդապետ Յալանթեանց Կոստանդնուպոլսեցի Մխաբան եւ Նուիրակ
Արեւց Հնդկաստանի, ի 16 Մարտի 1833 ի Մոսկով»։

# ՑՈՒՑԱԿ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ


| | Երես |
|---|---|
| Ավետարան ըստ Մատթէոսի | 1 |
| Ավետարան ըստ Մարկոսի | 68 |
| Ավետարան ըստ Ղուկասու | 109 |
| Ավետարան ըստ Յովհաննու | 179 |
| Գործք Առաքելոց | 233 |
| Թուղթ Պօղոսի Ա. Հռովմայեցիան | 304 |
| » » Ա. Կորնթացիան Առաջին | 337 |
| » » Ա. Կորնթացիան Երկրորդ | 368 |
| » » Ա. Գաղատացիան | 390 |
| » » Ա. Եփեսացիան | 402 |
| » » Ա. Փիլիպեցիան | 414 |
| » » Ա. Կողոսացիան | 422 |
| » » Ա. Թեսաղոնիկեցիան Առաջին | 430 |
| » » Ա. Թեսաղոնիկեցիան Երկրորդ | 438 |
| » » Ա. Տիմոթէոս Առաջին | 442 |
| » » Ա. Տիմոթէոս Երկրորդ | 452 |
| » » Ա. Տիտոս | 459 |
| » » Ա. Փիլիմոն | 464 |
| » » Ա. Եբրայեցիան | 664 |
| Թուղթ Կաթուղիկեայց Յակոբոս | 490 |
| » » Պետրոսի Առաջին | 501 |
| » » Պետրոսի Երկրորդ | 509 |
| » » Յովհաննու Առաջին | 507 |
| » » Յովհաննու Երկրորդ | 516 |
| » » Յովհաննու Երրորդ | 518 |
| » » Յուդայի Առաքելոյ | 520 |
| Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ | 523 |

# ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

## ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Քրիստոսի աղգահամարն Աբրահամից մինչեւ Յօսէփն: 18 Նորա Սուրբ Հոգուց յղացաւն, եւ Յօսէփի նշանած կոյս Մարիամից ծնանիլն: 20 Հրեշտակն Յօսէփի ունեցած վախ միարն կը լսակէ՝ եւ Յիսուս անունի մէկնուելի իւն կը տայ:

1 Յիսուսի Քրիստոսի
դաւթի[1] որդոյ՝ աբրահամի[2] որդոյ
ծննդեան[3] գիրքն:

2 Աբրահամն[4] ծնաւ իսահակին.
Իսահակն[5] ծնաւ յակոբին. Յակոբն[6]
ծնաւ յուդային եւ նորա եղբարնե-
րին:

3 Յուդան[7] ծնաւ փարէսին եւ
զարային Թամարիցն. Փարէսն[8] ծը-
նաւ եզրոնին. Եզրոնն ծնաւ արամին:

4 Արամն ծնաւ ամինադաբին.
Ամինադաբն ծնաւ նաասոնին. Նա-
ասոնն ծնաւ սալմոնին:

5 Սալմոնն ծնաւ բոյոսին՝ Հռա-
քեքայիցն. Բոյոսն ծնաւ ովեթին՝
Հռութիցն. Ովեթն ծնաւ յեսսէին.
Յեսսէն[9] ծնաւ դաւիթ Թագաւո-
րին:

6 Դաւիթ[10] Թագաւորն ծնաւ
սողոմոնին ուրիայի կնկանիցն:

7 Սողոմոնն[11] ծնաւ րոբովամին.
Րոբովամն ծնաւ աբիային. Աբիան
ծնաւ ասափին:

8 Ասափն ծնաւ յոսափաթին.
Յոսափաթն ծնաւ յորամին. Յորա-
մըն ծնաւ ոզիային:

9 Ոզիան ծնաւ յովաթամին.
Յովաթամն ծնաւ աքազին. Աքազն
ծնաւ եզեկիային:

10 Եզեկիան[12] ծնաւ մանասէին.
Մանասէն ծնաւ ամոնին. Ամոնն
ծնաւ յոսիային:

11 Յոսիան[13] ծնաւ յեքոնիա-
յին եւ նորա եղբարներին, բաբի-
լացոց[14] գերութեան ժամանակումն:

12 Բաբիլացոց գերութենէն ե-

[1] Սաղ. ճզբ. 11: Եսայ. ժա. 1: Երեմ. իդ. 5: Մատթ. իբ. 42: Ցաղկ. 42: Գործ. բ. 30: ժգ. 23: Հռովմ. ա. 3: [2] Ծննդ. ժբ. 3: իբ. 18: Գաղ. գ. 16: [3] Ղեւտ. գ. 23: [4] Ծննդ. իա. 2, 3: [5] Ծննդ. իե. 26: [6] Ծննդ. իճ. 35: [7] Ծննդ. լբ. 27: [8] Հռութ. գ. 18, Թագաւ. ա Մնաց. բ. 5, 9, Թագաւ. [9] ա Թագ. ժգ. 1: ժե. 12: [10] բ Թագ. ժբ. 24: [11] ա Մնաց. գ. 10, Թագաւ. [12] գ Թագ. ի. 21: ա Մնաց. գ. 13: [13] ա Մնաց. գ. 15, 16: [14] գ Թագ. իգ. 14–16: իե. 11: բ Մնաց. լզ. 10, 20: Երեմ. իե. 20: լճ. 9: նբ. 11, 15, 28, 29, 30: Դան. ա. 2:

տեւ՝ Յեքոնիան[15] ծնաւ սաղաթիէլին. Սաղաթիէլն ծնաւ զոր-
բաբէլին[16]։
13 Զօրբաբէլն ծնաւ աբիուդին. Աբիուդն ծնաւ եղիակիմին. Եղիակիմն ծնաւ ազորին։
14 Ազորն ծնաւ սադոկին. Սադոկն ծնաւ աքինին. Աքինն ծնաւ եղիուդին։
15 Եղիուդն ծնաւ եղիազարին. Եղիազարն ծնաւ մատթանին. Մատթանն ծնաւ յակոբին։
16 Յակոբն ծնաւ յոսէփին՝ մարիամայ մարդոյն, որ ընդ որում ծնաւ Յիսուս՝ որ կոչեցաւ Քրիստոս։
17 Ամենայն՝ ազգք տասն և չորեքտասան ազգ յԱբրահամայ մինչեւ ցդաւիթն. և յաւուրց դաւթեան մինչեւ ցգերութիւնն Բաբելացւոց տասն և չորեքտասան ազգ. և յաւուրց գերութեանն Բաբելացւոց մինչեւ ցՔրիստոս՝ տասն և չորեքտասան ազգ։
18 Եւ Յիսուսի[17] Քրիստոսի ծնունդն էսպէս էր. զի մինչդեռ նշանած էր մարիամ մայր նորա յոսէփայ, եւ դեռ ոչ միանգամ եկեալ էին նոքա՝ գտաւ զնա յորովայնի սուրբ հոգւոյն։
19 Եւ յոսէփ՝ ամուսին նորա, մարդ արդար էր, եւ ոչ կամէր զնա ամօթ առնել, խորհեցաւ զնա ի գաղտի արձակել։
20 Եւ մինչդեռ զայս խորհէր, ահա հրեշտակ տեառն երեւեցաւ նմա ի տեսլեան՝ եւ ասէ. Յոսէփ որդի դաւթի, մի երկնչիր ընդունել զմարիամ կին քո. զի որ յնմա ծնեալ է՝ յհոգւոյն սրբոյ է։
21 Ծնցէ[18] որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. նա[19] ազատեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց նոցա։
22 Ամենայն սակայն եղեւ զի կատարեսցի բանն որ ասացաւ ի տեառնէ ի մարգարէէն (թէ)։
23 Ահա[20] կոյսն յղասցի եւ ծնցէ որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ է մեկնեալ՝ Մեզ հետ։
24 Եւ յոսէփ յարուցեալ ի քնոյ արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն տեառն, եւ ընկալաւ զկինն իւր։
25 Եւ ոչ գիտաց զնա մինչեւ ծնաւ զորդի իւր անդրանիկ[21], եւ կոչեաց զանուն նորա Յիսուս։

## ԳԼ. Բ

1 Մոգեր արեւելից՝ աստղ առաջնորդութեամբ Քրիստոսի կը գան։ 11 Նորանք Քրիստոսի երկրպագութիւն կանեն, եւ իրանց ընծայներն կը տան նորան։ 14 Յոսէփ վեր կառնէ Յիսուսին եւ նորան մօրն եւ Եգիպտոս կը փախչի։ 16 Հերովդէս երեխաներ կոտորէլու։ 20 Իրան մահնի։ 23 Քրիստոսի Եգիպտոսից դառնալն եւ Գալիլեայի նազարէթ քաղաքումն բնակվելն։

1 Եւ երբեմն Յիսուս[1] ծնեալ էր ի Բեթղեհեմ (Ջհուդաստան) երկրի
[15] ա Մնաց. գ. 17, 19։ [16] Եզր. գ. 2։ ե. 2։ Նեեմ. ժբ. 1։ Անգ. ա. 1։ Հինգերորդ ամ նախ քան գՀաւատարակ Թուականն Քրիստոսի։ [17] Դատ. ա. 27։ [18] Դատ. ա. 35։ [19] բ Օրէն. իզ. 1։ [20] Դատ. ա. 35։ [21] Դատ. ա. 31։ ‖ Ասուիճն՝ Փրկիչ. Եբր. [22] Գոյծ. գ. 12։ ե. 31։ ժգ. 23, 38։ [23] Եսայ. է. 14։ [24] Եւէց. ժգ. 2։ Դատ. բ. 7, 21։ Չորրորդ ամ նախքան զՀաւատարակ Թուականն Քրիստոսի։ [1] Դատ. բ. 4, 6, 7։

բեթզէհէմումն, հերովդէս թագաւորի օրերումն, ահա մոգեր արեւելքէն[2] եկին երուսաղէմ։

2 Եւ ասացին. Որտե՞ղ[3] է. որ ծնեալ հրէից (Ջհուտացէի) թագաւորն. որ մենք նորա[4] աստղն տեսինք արեւելքումն, եւ եկինք որ երկրպագութիւն տանք նորան։

3 Եւ երբոր հերովդէս թագաւորն էս լսեց՝ շլոմ վեցաւ, եւ ամէն երուսաղէմ էլ նորա հետ։

4 Եւ ամէն քահանայապետներն[5] եւ ժողովրդի[6] կարգացողներն ժողովեց եւ նորանցից հարցուց[7], թէ քրիստոն որտե՞ղ պիտի ծնվի։

5 Եւ նորանք ասացին նորան. Թէ հրէաստանի (Ջհուտացէի) բեթզէհէմումն. ինչուր՝ էսպէս գրված է մարգարէի ձեռովն (թէ).

6 Դո՛ւ[8] էլ բեթզէհէմ յուդայի երկիր՝ իսկի փոքր չես յուդայի իշխանների մէջն. քեզանից ինձ իշխան պիտի դուրս գայ, որ[9] իմ իսրայել ժողովուրդս կառավարէ։

7 Էն ժամանակն հերովդէս թագաւոն մոգերն իրան մօտ կանչեց, եւ նորանցից էն երեւեցած աստղի ժամանակին հաստատ տեղեկացաւ։

8 Եւ նորանց դէպի բեթզէհէմն ուղարկեց եւ ասաց. գնացէ՛ք շուտակ իմացէ՛ք՝ էն երեխայի համար, եւ երբոր կը գտնէք, ինձ էլ իմաց արէ՛ք. որ ես էլ գամ նորան երկրպագութիւն անեմ։

9 Եւ նորանք երբոր (էս) լսեցին թագաւորիցն, գնացին. եւ ահա էն աստղն որ արեւելքումն տեսել էին, ճանապարհն ցոյց տուաւ նորանց՝ մինչեւ որ եկաւ կանգնեց էն տեղին վերայ, որ տեղ որ երեխան էր։

10 Երբոր էն աստղն տեսին, շատ մեծ ուրախութեամով ուրախացան։

11 Եւ երբոր տունն մտին. տեսին երեխային իրան մայր Մարիամու հետ, եւ երեսներին վերայ ընկնելով երկրպագութիւն արին նորան. եւ իրանց գանձերն (խոջա նանէրն) բաց արին՝ եւ ընծայ[10] տուին նորան. ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս։

12 Եւ երազումն[11] հրաման առին՝ որ մինել յետ չդառնան հերովդէսի մօտ, (եւ) ուրիշ ճանապարհով գնացին իրանց աշխարհքն։

13 Եւ երբոր նորանք էն տեղից գնացին. ահա Տէրի հրեշտակն երազումն երեւեցաւ յոսէփին՝ եւ ասաց. վեր կաց վեր կալ երեխայիդ եւ իրան մօրն եւ փախիր եւ գիպտոս. եւ էն տեղ մնա՝ մինչեւ որ ասեմ քեզ, պատճառն որ՝ հերովդէսն ուզում էդ երեխայիդ կորցնել։

14 Եւ նա վերկացաւ վեր առաւ երեխային եւ իրան մօրն գիշերումն եւ գնաց եգիպտոս. եւ էն տեղ էր մինչեւ հերովդէսի մեռնելն։

15 Որ կատարվի Տէրից ասվածն (էն) մարգարէի ձեռովն՝ որ ասուածն. եգիպտոսիցն[12] կը կանչեմ իմ որդին։

16 Էն ժամանակն երբոր հերովդէս տեսաւ՝ թէ էն մոգերիցն խաբվեցաւ, շատ բարկացաւ. եւ ուղարկեց ամէն երեխայքն որ բեթզէհէմումն եւ նորա չորս կողմումն էին՝

[2] Ծննդ. ժ. 30։ իս. 6։ գ Թագ. գ. 30։ [3] Դան. բ. 11։ [4] Թագ. իդ. 17։ Ելայ. կ. 3։ [5] Ա Պարց. լզ. 14։ [6] բ Պարց. լդ. 13։ [7] Մաղ. բ. 7։ [8] Միք. ե. 2։ Ցաքհ. է. 42։ [9] Ցայտ. բ. 37։ [10] Սաղմ. հբ. 10։ Ելայ. կ. 6։ [11] Մարկ. ա. 30։ [12] Ովսէ. ժա. 1։

երկու տարեկաններից (սկսած) եւ նորանցից ցածերն կտորեց, են ժամանակին նայելով որ մոգերից իմացաւ:

17 Յն ժամանակն կատարվեցաւ երեմիա մարգարէի ձեռով ասվածն՝ որ ասում է:

18 Ալոյ ձայն[13] լսվեցաւ Հռամայի մէջն, սուգ եւ լաց եւ շատ վայ տարով գոռալ. Հռաքէլ իրան որգոց վերայ լաց էր լինում՝ եւ չէր կամենում որ մխիթարվի, ինչուոր՝ նորանք չկային:

19 Յն երբոր Հերովդէս մեռաւ, ահա Տէրի հրեշտակն եգիպտոսի մէջ երազումն երեւեցաւ Յոսէփին:

20 Յն ասաց. վեր կաց վեր կալ երեխայիդ եւ իրան մոր եւ գնա իսրայէլացոց երկիրն. պատճառնոր՝ մեռան նորանք՝ որ երեխայիդ կեանքն ուզումէին առնել:

21 Յն նա վերկացաւ, երեխային եւ իրան մոր վեր առաւ եւ եկաւ իսրայէլացոց երկիրն:

22 Յն երբոր լսեց՝ Թէ արքեղաւոս Հրէաստանին (Ջհուդա-պապանին) վերայ թագաւորումի է անում իրան Հայր Հերովդէսի տեղն, վախեցաւ գնալ էն տեղ. եւ երազումն հրաման առնելով գնաց[14] գալիլեայի կողմերն:

23 Յն եկաւ բնակվեցաւ էն քաղաքումն՝ որ Նազարէթ[15] էր ասվում. որ կատարվի մարգարէների խօսքն[16] Թէ Նազովրեցի կը կոչվի:

## Գլ. Գ

1 Յօհաննէսի քարոզելն. իրան պաշտօնն. ապրիլն եւ մկրտելն: 7 Փարիսեցիներին կը յանդիմանէ: 13 Քրիստոսն Յորդանանոյ մէջումն կը մկրտէ:

1 Յն օրերումն Յօհաննէս[1] մկրտիչն եկաւ, որ Հրէաստանի անապատումն[2] (Ջհուդա-պապանի չէօլումն) քարոզ տայ:

2 Յն ասումէր. ապաշխարեցէք՝ որ երկնքի[3] Թագաւորումէն մօտացել է:

3 Յինչուոր՝ սա է՝ որ նորա համար ասվել է եսայի մարգարէի ձեռովն, որ ասում է. կանչողի[4] ձայն անապատումն՝ Թէ պատրաստ[5] արէք Տէրի ճանապարհն, եւ՝ շիտակ արէք նորա գնալոյ ճանապարհն:

4 Յն Յօհաննէս[6] ինքն հագուստ ունէր ուղտու[7] բրդից եւ կաշվէ գօտիկ իրան մէջքումն, եւ նորա կերակուրն մարախ[8] էր եւ վայրի[9] մեղր:

5 Յն[10] ժամանակն ամէն երուսաղէմացիքն եւ ամէն Հրէաստան (Ջհուդա-պապան) եւ Յորդանանի ամէն կողմերն նորա մօտ էին դուրս գնում:

6 Յն նորանից մկրտվումէին Յորդանանի մէջն եւ իրանց[11] մեղքերն խոստովանումէին:

7 Յն (ինքն) որ տեսաւ Թէ սադուկեցիներից եւ փարիսեցիներից շատերն եկել էին որ իրանից մկրտվին, ասաց նոցա. ով ձեզ ցոյց տուաւ փախչել յառաջիկայ բարկութենէն:

8 Արէք պտուղ որ հարկաւոր է ապաշխարութեան:

9 Եւ մի՛ կարծէք ձեր մէջ ասել. մեր հայր Աբրահամն ունինք. վասն զի ասում եմ ձեզ՝ թէ Աստուած կարող է այս քարերից Աբրահամի որդիներ յարուցանել:

10 Յն արդէն կացինն ծառերի արմատին է դրված. ամէն ծառ որ լաւ պտուղ չի բերում՝ կտրվում է եւ կրակն է ձգվում:

11 Յն ես ձեզ ջրով մկրտում եմ ապաշխարութեան համար, բայց որ իմ յետեւից գալոցն է՝ ինձանից զօրաւոր է, որ ես արժան չեմ նորա կօշիկները կրել. նա ձեզ Սուրբ Հոգով եւ հրով կմկրտէ:

12 Յն նորա ձեռքումն է նորա հողմնակն, եւ նա իր կալն լաւ կմաքրէ, եւ իր ցորենն շտեմարանումն կը ժողովէ, բայց մանդարն անշէջ հրով կայրէ:

13 Յն այն ժամանակ Յիսուս Գալիլեայից եկաւ Յորդանանի մօտ Յովհաննէսի քովն որ մկրտվի նորանից:

14 Յն Յովհաննէս արգելում էր նորան՝ ասելով. ես պիտի որ քեզանից մկրտվիմ, եւ դու ինձ մօտ գալիս ես:

15 Յն Յիսուս պատասխանելով ասաց նորան. թող հիմի այդպէս լինի, վասն զի այսպէս մեզ համար է որ ամէն արդարութիւն կատարենք: Յն նա թողեց նորան:

16 Յն Յիսուս մկրտվելով անմիջապէս ջրից ելաւ, եւ ահա երկինքն բացվեցաւ նորա համար, եւ նա Աստուծոյ Հոգին տեսաւ որ աղաւնու պէս իջնում է եւ իր վերայ գալիս:

17 Յն ահա երկնքից ձայն եղաւ որ ասում էր. սա է իմ սիրելի Որդին, որ նորանով հաճեցայ:

---

[13] Երեմ. լա. 15: [14] Մատթ. գ. 13: Ղուկ. բ. 39: [15] Ցուվհ. ա. 45: [16] Դատ. ժգ. 5: ա Թագ. ա. 11: [1] Մարկ. ա. 4, 15: Ղուկ. գ. 2, 3: Ցուվհ. ա. 28: [2] Յես. ժգ. 10: [3] Դան. բ. 44: Մատթ. գ. 17: ժ. 7: [4] Եսայ. խ. 3: Մարկ. ա. 3: Ղուկ. գ. 4: Ցուվհ. ա. 23: [5] Ղուկ. ա. 76: [6] Մարկ. ա. 6: [7] գ Թագ. ա. 8: Զաք. ժգ. 4: [8] Ղեւտ. ժա. 22: [9] ա Թագ. ժգ. 25, 26: [10] Մարկ. ա. 5: Ղուկ. գ. 7: [11] Գործ. ժԹ. 4, 18

կրամէին, ասաց Նոյանց իմի[12] (օձի) ղաւակներ՝ ձեզ ո՞վ սովրեցուց փախչիլ էն բարկութենիցն, որ գա-
լու է[13]:

8 Այսուհետեւ ապաշխարու-
թեան արժանի պտուղ արէք:

9 Եւ չկարծէք ասել ձեր մի-
ջումն՝ Թէ մենք[14] աբրահամ ու-
նինք հայր. ասումեմ ձեզ, Թէ
աստուած կարող է էս քարերիցս
որդիք դուրս հանել աբրահամու
համար:

10 Ահնչուր՝ հիմիկ կացինն ծառե-
րի արմատին (բնօդին) մօտ դրած է՝
ամէն ծառ[15] որ բարի պտուղ չի-
բերում, կը կտրվի եւ կրակի մէջն
կը քցվի:

11 Էս[16] ջրով եմ մկրտում ձեզ՝
ապաշխարութեան համար. բայց նա՝
որ ինձանից ետեւ կը գայ, ինձանից
զօրաւոր է. եւ ես արժանի չեմ
նորա կօշիկներն վեր առնել. նա[17]
ձեզ սուրբ հոգով եւ կրակով կը-
մկրտէ.

12 Որ հօսկլին[18] իրան ձեռին
է, եւ իրան կալն կը սրբէ եւ ցո-
րենն կը հաւաքէ իրան ամբարն, դարմանն[19] անանցելի կրակով կայ-
ի:

13 Ան ժամանակն[20] Յիսուս գա-
լիլեայիցն[21] եկաւ յորդանան յՕհան-
նէսի մօտն՝ որ նորանից մկրտվի:

14 Եւ Յօհաննէսն արգելից նո-
րան եւ ասաց. ինձ պէտք որ քե-
զանից մկրտվիմ՝ եւ դու ինձ մօտ
ես գալիս:

15 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց նորան. Թոյլ տուր հիմիկ,
ինչուր՝ էապէս կը վայելէ մեզ՝ որ
ամէն արդարութիւնն կատարենք.
եւ Յիսուս Թոյլ տուաւ նորան:

16 Եւ երբոր մկրտվեցաւ[22] Յի-
սուս, շուտով ջրից դուրս եկաւ.
եւ ահա (եղէ) երկինքն բացվաւ
նորա համար. եւ աստուծոյ հոգին[23]
տեսաւ որ վէր էր գալիս աղաւնու
պէս եւ գալիս էր նորա վերայ:

17 Եւ ահա երկնքիցն ձայն[24] ե-
կաւ՝ որ ասումէր. գա է իմ սիրե-
լի որդին[25]՝ որ դորան հաճոյ կա-
ցայ:

## ԳԼ · Գ

1 Քրիստոսի ծամ պահելն, եւ փորձվիլն: 11 Հրեշտակներն նորան ապաստարութիւն են անում: 13 Կերիմայ կապառնայում կը բնակվի: 17 Քարոզելոյ կը սկսէ: 18 Պետրոս եւ Անդրեաս, 21 Յակոբոս եւ Յօհաննէան կը կանչէ: 23 Եւ ամէն հիւանդներն կըբժշկէ:

1 Ան ժամանակն Յիսուս[1] հո-
գովն[2] տարվաւ անապատն՝ (չօլն)
որ սատանայիցն փորձվի:

2 Եւ քառասուն ցերեկ եւ քա-
ռասուն գիշեր ծամ պահելուցն ե-
տեւ՝ սովեց:

[12] Մատ. ժբ. 34: Իգ. 33: Գործ. գ. 7, 8, 9: [13] Հռովմ. ե. 9: աթես. ա. 10: [14] Ցվճ. ը. 33, 39: Գործ. ժգ. 26: Հռովմ. գ. 1. 12, 16: [15] Մատ. է. 19: Ղուկ. ժգ. 7, 9: Ցվճ. ժե. 6: [16] Մրկ. ա. 8: Ղուկ. գ. 16: Ցվճ. ա. 15, 26, 33: Գործ. ա. 5: ժա. 16: ժի. 4: [17] Եսայ. գ. 4: Իգ. 3: Մաղ. գ. 2: Գործ. բ. 3, 4: ա Կորնթ. ժբ. 13: [18] Մաղ. գ. 3: [19] Մաղ. գ. 1: Մատ. ժգ. 30: [20] Մրկ. ա. 9: Ղուկ. գ. 21: [21] Մատ. բ. 22: [22] Մրկ. ա. 10: [23] Եսայ. ժա. 2: Ղուկ. գ. 22: Ցվճ. ա. 32, 33: [24] Ցվճ. ժբ. 28: [25] Սաղմ. բ. 7: Եսայ. խբ. 1: Մատ. ժբ. 18: ժէ. 5: Մրկ. ա. 11: Ղուկ. թ. 35: Եփես. ա. 6: Կաղ. ա. 13: բ Պետ. ա. 17: [1] Մրկ. ա. 12, Եսայե: Ղուկ. գ. 1, Եսայե: [2] գ Թագ. ժբ. 12: Եփես. գ. 14: ը. 3: ժա. 1, 24: խ. 2: Իգ. 5: Գործ. ը. 39:

3 Այլ փորձիչն ելեալ, ըսաւ ա-
սաց. Թէ որ դու Աստուծոյ որդին
ես, ասա՝ որ էս քարերս հաց լի-
նին:

4 Եւ պատասխան տուաւ եւ ա-
սաց. Գրված է՝ որ ոչ Թէ մինակ
հացով կապրի մարդ, այլ ամէն
խօսքովն՝ որ աստուծոյ բերանիցն
դուրս է գալիս[3]:

5 Յն ժամանակն սատանան նո-
ցան առաւ տարաւ սուրբ քաղաքն[4],
եւ տաճարի աշտարակին (քօ-ւըշ)
վերայ կանգնացրուց:

6 Այլ նորան ասաց. Թէ որ աս-
տուծոյ որդին ես, էս տեղից քեզ
վէր քցիր. ինչուր գրված է՝ Թէ
իրան հրեշտակներին հրամայէլ
քեզ համար[5] եւ ձեռներին վերայ
կառնեն քեզ՝ որ խիկի մին ժամա-
նակ քո ոտդ քարի չի դիպցնես:

7 Ս՚ինէլ Յիսուս նորան ասաց.
գրված է՝ Թէ մի փորձեր քո Տէր
Աստուծոյդ[6]:

8 Սատանան միւնէլ առաւ նորան
(եւ) տարաւ մին շատ բարձր սարի
վերայ՝ եւ ցոյց տուաւ նորան աշ-
խարհքի ամէն Թագաւորութիւն-
ներըն եւ նորանց փառքըն:

9 Այլ նորան ասաց. Էս ամէնըս
քեզ կը տամ՝ Թէ որ երեսիդ վե-
րայ ընկնելով ինձ երկրպագութիւն
անես:

10 Յն ժամանակն Յիսուս նորան
ասաց. դէն գնա ինձանից սատանայ.
ինչուր գրված է՝ Թէ քո Տէր աս-
տուծոյդ պէտք է երկրպագութիւն
անես եւ մինակ նորան պաշտես[7]:

11 Յետոյ սատանան Թողից նո-
ցան. եւ ահա հրեշտակներն մօտ ե-
կին եւ ծառայութիւն էին անում
նորան[8]:

12 Այլ երբոր Յիսուս լսեց՝ Թէ
Յովհաննէսն մատնըվեցաւ[9], ինքն
հետացաւ գնաց գալիլէա:

13 Այլ նազարէթըն Թողից. եկաւ
բնակվեցաւ կափառնայումի մէջն ծո-
վի եզերին (ըզոռ-ին) մօտ. զաբուղոնի
եւ նեփթաղիմի երկրումն:

14 Որ կատարվի էն խօսքն՝ որ
Եսայի մարգարէի ձեռովն ասված է՝
(Թէ)

15 Զաբուղոնի երկիրն եւ նեփ-
թաղիմի երկիրն՝ ծովու ճանապարհն՝
յորդանանի էն կողմն, հեթանոսաց
գալիլեան[10]:

16 Ժողովուրդն որ խաւարի մէջն
նստած էր, մեծ լոյս տեսաւ. եւ
լոյս ծագից նորանց որ մահի երկրումն
եւ շուաքումն նստած էին[11]:

17 Յայնժամ Յիսուս սկսից
քարոզել[12] եւ ասել. ապաշխա-
րեցէք[13]՝ որ երկինքի Թագաւորու-
Թիւնն մօտացել է:

18 Յերբոր Յիսուս գալիլեացոց ծո-
վի եզերումն (ըզոռ-ին) մանէր գա-
լիս[14] տեսաւ երկու եղբայրք՝ սիմո-
նին՝ որ պետրոս[15] էր կոչված, եւ
նորա անդրէաս եղբօրըն. որ ուռ-
կանըն (քօ-ւըն) քցել էին ծովն. ին-
չուր՝ ձուկըն բռնող էին:

19 Այլ նորանց ասաց. իմ հետ-
ևէս եկէք, եւ ձեզ մարդկանց հոր-
սորդ կանեմ[16]:

20 Յորանք էլ շուտով իրանց
գործիքներըն Թողին՝ եւ նորա հետ-
ևէն գնացին[17]:

21 Այլ ենտեղից որ առաջ գնաց
երկու ուրիշ եղբայրք տեսաւ[18], յակո-

[3] բ Օրէն. ը. 3: [4] Նէեմ. ժա. 1, 18: Եսայ. խը. 2: Ծբ. 1: Մատթ. իե. 53: Յայտ. ժա. 2: [5] Սաղմ. զա. 11, 12: [6] բ Օրէն. ջ. 16: [7] բ Օրէն. ջ. 13: Ժ. 20: Եփես. իդ. 14: ա Թեսաղ. է. 3: [8] Եբր. ա. 14: [9] Մատթ. ա. 14: Գործ. գ. 20: դ. 14, 31: Յովհ. գ. 43: [10] Եսայ. Թ. 1, 2: [11] Եսայ. խը. 7: Գործ. բ. 33: [12] Մատթ. ա. 14, 15: [13] Մատթ. գ. 2, Ժ. 7: [14] Մատթ. ա. 16, 17, 18: Գործ. ե. 2: [15] Յովհ. ա. 42: [16] Գործ. ե. 10, 11: [17] ը Մատթ. Ժ. 28: Գործ. ԺԸ. 28: [18] Մատթ. ա. 19, 20: Գործ. ե. 10:

բոս զերբեդեանըն՝ եւ նորա յօհաննէս եղբօրըն՝ որ նաեւ մէջն իրանց Հայր զերբէդէոսի Հետ իրանց ուռկանները (Ըօաէբսե) շինուածէին, եւ նոյանց կանչեց։

22 Նորանք էլ շուտով նաւըն եւ իրանց Հօրըն թողին. եւ նորա եւս ուէն գնացին։

23 Եւ յիսուս մանէր գալիս գալիլեայի ամէն կողմերումն. նորանց ժողովարաններուն մէջն սովորցնուելմեր[19]՝ եւ աքքայուէթեան աւետարանըն[20] քարոզուելմեր, եւ ամէն ժողովրդի մէջ էլած հիւանդութիւնները եւ ցաւերըն բժշկուելմեր[21]։

24 Եւ նորա Համբաւն դուրս եկաւ ասորոց ամէն երկրումն. եւ ամէն հիւանդներն որ կերպ կերպ ցաւերով եւ չարչարանքներով տանջուած էին, նորա մօտ բերին. եւ դիւահարներն եւ լուսնոտներն եւ անդամալոյծներն. եւ նորանց բժշկեց։

25 Եւ նորա հետեւէն շատ ժողովուրդներ[22] էին գնում գալիլեայիցն եւ դեկապօլիսիցն՝ եւ երուսաղէմիցն եւ հրէաստանիցն (ջհոսպոտանիցն), եւ յորդանանի էն կողմիցն եւ նորանց բժշկեց։

## ԳԼ · Ե

1 Քրիստոս սարին վերայ երան քարոզն կը սկսէ։ 3 Ցայց կը տայ թէ որո՞նք են երանելի լինողներն։ 13 Երկրի աղն։ 14 Աշխարհի լոյսն, սարին վերայ եւած քաղաքն։ 15 Ճրագն։ 17 Թէ նա եկաւ որ օրէնքն կատարէ։ 21 Մարգասպանութիւնն, 27 Եւ շնութիւն անէնն քանի սեռակ է։ 33 Խոի երդումն չուտել։ 38 Խրատ կը տայ անիրաւութեան դէմ համբերութիւն անել։ 44 Թշնամիներն էլ սիրել։ 48 Եւ կատարեալ լինելոյ ալեւտել։

1 Եւ երբոր ժողովուրդներին տեսաւ վեր էլաւ սարն[1]. եւ երբոր էնտեղ նստեց, նորա աշակերտներն եկին նորա մօտ։

2 Եւ իրան բերանըն բացարաւ, նորանց սովորցնուելմեր՝ եւ ասում՝։

3 Երանի՛ հոգով աղքատներին[2]՝ որ նորանցն է երկինքի աքքայութիւնն։

4 Երանի՛ սգաւորներին[3]՝ որ նորանք պիտի մխիթարվին։

5 Երանի՛ հեզահոգիներին[4]՝ որ նորանք պիտի ժառանգին երկիրըն[5]։

6 Երանի՛ նորանց՝ որ սոված եւ ծարաւ են արդարութեան համար՝ որ նորանք պիտի կըշտանան[6]։

7 Երանի՛ ողորմածներին՝ որ նորանք պիտի ողորմութիւն գտնեն[7]։

8 Երանի՛ նորանց՝ որ սրտով սուրբ են[8], որ նորանք պիտի Աստուծոյն տեսնեն[9]։

9 Երանի՛ խաղաղութիւն անողներին՝ որ նորանք պիտի Աստուծոյ որդիք կոչվին։

10 Երանի՛ նորանց՝ որ արդարութեան համար հալածված են[10]՝ որ նորանց է երկինքի աքքայութիւնն։

[19] Մատթ. թ. 35։ Մարկ. ա. 21, 39։ Ղուկ. դ. 15, 44։ [20] Մատթ. իգ. 14։ Մարկ. ա. 14։ [21] Մարկ. ա. 34։ [22] Մարկ. գ. 7։ [1] Մարկ. գ. 13, 20։ [2] Ղուկ. զ. 20։ Յակ. ծա. 17։ Ռոմ. ժգ. 19։ իմ. 23։ Եսայ. ծէ. 15։ կգ. 2։ [3] Եսայ. կա. 2, 3։ Ղուկ. զ. 21։ Յովհ. ժգ. 20։ բկռնէ. ա. 7։ Յայտ. իա. 4։ [4] Սաղմ. լէ. 11։ [5] Հռոմ. դ. 13։ [6] Եսայ. ծէ. 1։ կէ. 13։ [7] Սաղմ. իա. 1։ Մատթ. զ. 14։ Մարկ. ժա. 25։ բ Տիմ. ա. 16։ Եբր. զ. 10։ Յովբ. 13։ [8] Սաղմ. ժէ. 2։ իգ. 4։ Եբր. ժբ. 14։ [9] ա Կռնէ. ժգ. 12։ ա Յովհ. գ. 2, 3։ [10] բ Կռնէ. դ. 17։ բ Տիմ. բ. 12։ ա Պետ. դ. 14։

11 Արդեամբ է ձեզ՝ երբոր նախա-
տինք կը տան[11] եւ կը մատնեն
ձեզ, եւ իմ պատճառովը՝ ամէն չար
բան[12] սուտ ուղղն կասեն ձեր վը-
րայ:

12 Ցնծացէք[13] եւ ուրախ եղէք՝
որ ձեր վարձքն շատ են երկինքում.
ինչուորո՝ էնպէս էլ հալածեցին մար-
գարէներին[14] որ ձեզանից առաջ
կային:

13 Դուք երկրի աղն էք. թէ որ
աղն անհամանայ[15], ինչով պիտի
աղանվի. նրանից ետեւ իսկի մին
բանի համար գործածելոյ չէ, միայն
թէ դուրս քցվի եւ ճարդկանց ոտի
տակն կոխան լինի:

14 Դուք աշխարհի լոյսն էք[16]
էն քաղաքն որ սարի վերայ կայ
չի կարող թաքուն մնալ:

15 Եւ ճրագըն չեն վառիլ եւ տաշ-
տի տակ դնիլ[17], այլ ճրագակալի
վերայ՝ եւ լոյս կը տայ ամենին՝ որ
տան մէջն են:

16 Էնպէս էլ ձեր լոյսն պէտք է
լուսաւորէ մարդկանց առաջին, որ
ձեր բարի գործքն տեսանեն[18], եւ փա-
ռաւորեն ձեր Հայրըն[19] որ եր-
կինքումն է:

17 Ըլի կարծէք[20] թէ ես եկել
եմ՝ որ օրէնքըն կամ մարգարէներըն
քանդեմ. չեմ եկել քանդելոյ,
այլ կատարելոյ համար:

18 Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որ
մինչեւ երկինքն եւ երկիրս անց
կենան[21], օրէնքիցն եւ մարգարէ-
ներիցն մին կէտ՝ որ պզտիկ նշա-
նագիր է, չի անցկենալ մինչեւ ա-
յենն կատարվի:

19 Ով որ էս փոքր պատուիրանք-
ներիցս մինըն քանդէ[22], եւ մարդ-
կանց էնպէս սովորցնէ՝ նա փոքր
կը կոչվի երկնքի արքայութենումն.
բայց նա՝ որ կանէ եւ կը սովորցնէ,
մեծ կը կոչվի երկնքի արքայութե-
նումն:

20 Ասիան թէ ասումեմ ձեզ՝
թէ որ ձեր արդարութիւնն չա-
ւելանայ աւելի քան կարգացօղնե-
րինն եւ փարիսեցիներինն[23], չէք
մանիլ երկնքի արքայութիւնն:

21 Լսեցէք՝ որ առաջին մարդ-
կանցն ասվեցաւ, թէ մի սպաներ[24]՝
ինչուորո՝ ով որ կը սպանէ, պարտա-
կան կը լինի դատաստանին:

22 Բայց ես ասումեմ ձեզ՝ թէ
ով որ զուր տեղն կը բարկանայ[25]
իրան եղբօր վերայ, պարտական կը-
լինի դատաստանին. եւ ով որ իրան
եղբօրն կասէ՝ յիմար[26]. պարտա-
կան կը լինի մեծ դատաստանին. եւ
ով որ իրան եղբօրն կասէ՝ մորու,
պարտական կը լինի գեհենի կրակին:

23 (Լուբեմն) թէ որ սեղանի վը-
րայ քո պատարագըդ մատուցա-
նես[27] եւ էնտեղ միտքդ բերես՝ թէ
քո եղբայրդ քեզանից մին խոռ-
վութիւն ունի,

24 Քո պատարագըդ[28] սեղանի
առաջին թող, եւ գնա առաջ հաշա-
վիր քո եղբօր հետ. եւ յետոյ եկ
քո պատարագըդ արա:

25 Քո հակառակ ոսոխի հետ

[11] Դան. ղ. 22: [12] Պիտ. գ. 14: [13] Դան. ղ. 23: Գործ. ե. 41: Հռոմ. ե. 3: Յակ. ա. 2: ա Պետ. գ. 13: [14] Նէեմ. թ. 26: բ Մնաց. կզ. 16: Մատթ. իդ. 34, 37: Գործ. է. 52: ա Թես. բ. 15: [15] Մարկ. թ. 50: Դան. ժգ. 34, 35: [16] Ածխ. գ. 18: Փիլ. բ. 15: [17] Մատթ. գ. 31: Դան. ը. 16: Ժա. 33: [18] ա Պետ. բ. 12: [19] Յովհ. ժե. 8: ա Կորնթ. ժգ. 25: [20] Հռոմ. գ. 31: ժ. 4: Գալ. գ. 24: [21] Դան. ժգ. 17: [22] Յակ. բ. 10: [23] Հռոմ. թ. 31: ժ. 3: [24] Ելից. ի. 13: բ Օրէն. ե. 17: [25] ա Յովհ. գ. 15: [26] Յակ. բ. 20: բ Թագ. ղ. 20: [27] Մատթ. ը. 4: իդ. 19: [28] Մատթ. ժը. 19: ա Տիմ. բ. 8: ա Պետ. գ. 7:

շուտով քո բանըդ շինակ արա[29] քանի որ նորա հետ ճանապարհումն ես[30]· որ չըլինի թէ ոսոխդ քեզ դատաւորին մատնէ, եւ դատաւորն դահճին (ճէլլատին)· եւ բանտն (պընտանն) ընկնիս։

26 Ճշմարիտըն ասումեմ քեզ· դուրս չես գալ էնտեղիցն, մինչեւ վերջին դանկըն էլ չը վճարես։

27 Լսեր էք՝ որ ասվեցաւ՝ Թէ չընուելիս չանես[31]։

28 Բայց ես ասումեմ ձեզ· Թէ ամէն ով որ մին կնկան վերայ մեղկ տայ[32] նորան ցանկանալով համար, նա իսկոյն շնացաւ նորա հետ իրան սրտի մէջն։

29 Ցնէ որ քո աջ աչքդ գայթակղացնուսի քեզ[33], հանիր նորա եւ քեզանից գէն քցիր· Ինչուոր՝ լաւ է քեզ համար, Թէ քո անդամներդիցդ մինն կորչի՝ եւ քո ամէն մարմինդ չընկնի գեհենն։

30 Նա Թէ որ քո աջ ձեռքդ գայթակղացնուսի քեզ, կտրիր նորան եւ քեզանից գէն քցիր· Ինչուոր՝ լաւ է քեզ համար՝ Թէ քո անդամներդիցդ մինն կորչի, եւ քո ամէն մարմինդ չընկնի գեհենն։

31 Նա էլ ասվեցաւ՝ Թէ ով որ իրան կինըն Թող անի[35], դուրս առնէլ Թուղթ տայ նորան։

32 Բայց ես ասումեմ ձեզ· Թէ ով որ իրան կինըն դուրս անէ առանց պոռնկութեան պատճառի, նորա շնութեան պատճառն ինքն կը լինի[36], եւ ով որ էն դուրս առածըն առնէ, շնութիւն կը գործէ։

33 Մինէլ լսեր էք՝ որ ասվեցաւ առաջին մարդկանցն[37], Թէ սուտ երդում չուտես[38], բայց Տէրին արած երդմունքդ վճարիր[39]։

34 Բայց ես ասումեմ ձեզ· իսկի երդում մի ուտէք[40]· ոչ երկինքովն՝ որ աստուծոյ աթոռն է[41]։

35 Նա ոչ երկրովս՝ որ նորա ոտն դնելոյ տեղն է· եւ ոչ երուսաղէմովն՝ որ մեծ թագաւորի քաղաքն է[42]։

36 Նա ոչ քո գլխովդ երդում ուտես՝ որ կարող չես մին մազ սպիտակ անել կամ Թուխ։

37 Բայց ձեր խօսքն Թոդ լինի, հան՝ հա· եւ չէն՝ չէ[43], եւ նրանից աւելին չարիցն է։

38 Լսեր էք՝ որ ասվեցաւ՝ Թէ աչքին աչքին տեղ՝ եւ ատամն՝ ատամին տեղ[44]։

39 Բայց ես ասումեմ ձեզ· չարին հակառակ մի կենաք[45]· բայց Թէ որ մինն ապտակ (ֆչէչ) կը տայ քո աջ երեսիդ, մեկելն էլ նորան դէմ արա[46]։

40 Նա ով որ կուզէ քեզ հետ կռիւ անել եւ քո շապկըդ առնէլ, քո կապան էլ Թող նորա մնա։

41 Նա ով որ զուր տեղն քեզ

[29] Առակ. իե. 8: Գ–ես. ժբ. 58, 59: [30] Ա–ես. լբ. 6: Ես–յ. նե. 6: [31] Եւէց. բ. 14: բ Օրին. է. 18: [32] Յ–էբ. լա. 1: Առակ. գ. 25: Ծննդ. լգ. 2: բ Թագ. ժ ա. 2: [33] Մատթ. ժբ. 8, 9: Մարկ. Թ. 44–47: [34] Հռովմ. ը. 13: ա Կորնթ. Թ. 27: Կող. գ. 5: [35] բ Օրին. իգ. 1: Երեմ. գ. 1: Մատթ. ժի. 3, Ես–յէ: Մարկ. ժ. 2, Ես–յէ: [36] Մատթ. ժի. 9: Գ–ես. ժգ, 18: Հռովմ. է. 3: ա Կորնթ. է. 10, 11: [37] Մատթ. իգ. 16: [38] Ղեւէց. բ. 7, 16: Ղես–ս. ժի. 12: բ Օրին. է. 11: Թես–ղ. 2: [39] բ Օրին. իգ. 23: [40] Մատթ. իգ. 16, 18, 22: Յակ. է. 12: [41] Ես–յ. կգ. 1: [42] Սաղմ. խը. 2: Ամ. 3: [43] Կող. գ. 6: Յակ. է. 12: [44] Ղեւէց. իա. 24: Դէս–ս. իգ. 20: բ Օրին. ժի. 21: [45] Առակ. բ. 22: իգ. 29: Գ–ես. գ. 29: Հռովմ. ժբ. 17, 19: ա Կորնթ. զ. 7: ա Թես–ն. է. 15: ա Պետ. գ. 9: [46] Ես–յ. ծ. 6: Ովբ. գ. 30:

բռնած մին մղոն (ոտաճ) ճանապարհ կը քշէ[47], նորա հետ երկուսն էլ գնա։

42 Եվ որ քեզանից բան ուզէ՝ տուր. եւ ով կամենայ քեզանից փոխ առնել երեսդ յետ մի դարձներ նորանից[48]։

43 Ունկնէք լսեցէք՝ որ ասվեցաւ՝ թէ քո ընկերից սիրիր[49] եւ քո թշնամիդ ատիր[50]։

44 Ես այս ասում ձեզ. սիրեցէք ձեր թշնամիներին[51]. օրհնեցէք ձեզ անիծողներին. բարի արէք ձեզ ատողներին. եւ աղօթք արէք նորանց վերայ, որ ձեզ կը չարչարուին եւ կը հալածեն[52]։

45 Որ որդիք լինիք ձեր Հօրն, որ երկնքումն է. որ նա իւրան արեգակը ծագումէ չար եւ բարի մարդկանց վերայ[53], եւ անձրեւ է տում արդարներին եւ մեղաւորներին վերայ։

46 Ես այս թէ որ մէնակ նորանց սիրէք որ ձեզ սիրումեն[54], էլ ինչ վարձք կը լինի ձեզ. չէ որ մաքսաւորներն (Ն֊մ֊ա֊չ֊ե֊ն֊ք֊) էլ էնպէս են անում։

47 Եւ թէ որ մէնակ ձեր բարեկամներին բարեւ տաք. ինչ աւելի բան կանէք. չէ որ մաքսաւորներն (Ն֊մ֊ա֊չ֊ե֊ն֊ք֊) եւ մեղաւորներն էլ էնպէս են անում։

48 Լուսեմն դուք կատարեալ[55] էք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն կատարեալ է[56]։

## Գ֊Ղ

1 Զգոյշ կացէք ձեր ողորմութիւնն՝ որ մարդկանց առաջին չի անէք, իբր նորանց ցոյց տալոյ համար. որ չը լինի, թէ վարձք չառնէք ձեր Հօրիցն՝ որ երկնքումն է։

2 Ես այս երբոր ողորմութիւն անես[1]. փող չի տաս փչել քո առաջիդ. ինչպէս որ կեղծաւորներն անում են ժողովարանների մէջն եւ փողոցներումն՝ որ մարդկանցից փառաւորուին. Ճշմարիտն ասում ձեզ. որ նորանց վարձքն մէնակ էն է։

3 Ես այս երբոր դու ողորմութիւն անես, թող չիմանայ քո ձախ ձեռդ՝ թէ ինչ է գործում քո աջդ։

4 Որ էսպէս քո ողորմութիւնն ծածուկ լինի, եւ քո Հայրն՝ որ ծածուկն տեսնում է, յայտնի կը հատուցանէ քեզ[2]։

5 Եւ երբոր աղօթք անես, մի լինիր կեղծաւորներին պէս. ինչու որ նորանք սիրումեն ժողովարանների մէջն եւ փողոցների գլխումն աղօթք

[47] Մատթ. իե. 32։ Մարկ. ժե. 21։ [48] Ղուկ. ժե. 8, 10։ Ղևտ. գ. 30, 35։ [49] Ղևտ. ժթ. 18։ [50] Ելից. իգ. 6։ Սաղմ. խա. 10։ [51] Ղևտ. գ. 27, 35։ Հռոմ. ժբ. 14, 20։ [52] Ղևտ. իգ. 34։ Գործ. է. 60։ ա Կորնթ. դ. 12, 13։ ա Պետ. բ. 23։ գ. 9։ [53] Յոբ. իե. 3։ [54] Ղևտ. գ. 32։ [55] Ծննդ. ժէ. 1։ Ղևտ. ժա. 44։ ժթ. 2։ Ղևտ. գ. 36։ Կղ. ա. 28։ գ. 12։ Ծով. ա. 4։ ա Պետ. ա. 15, 16։ [56] Եփես. 1։ [1] Հռոմ. ժբ. 8։ [2] Ղևտ. ժգ. 14։

անել, որ մարդկանց երեւին։ Ո՛րչափ մարիարին ասուեմ ձեզ, որ նորանց վարձքն մենակ էն է։

6 Այլ դու ինչ ժամանակ որ աղօթք անես, մտիր քո խուցդ՝ եւ քո դըռնեղրդ փակիր[3] եւ ծածուկ աղօթք արա դէպի քո Հայրդ. եւ քո Հայրդ որ ծածուկըն տեսնող է՝ Յայտնի կը հատուցանէ քեզ։

7 Այլ էն ժամանակն որ աղօթք անէք, շատախօս մի լինիք[4], ինչպէս հեթանոսներն. որ նորանք կարծուեմեն՝ թէ իրանց շատ խօսելոյն համար կը լսվին[5]։

8 Ուրեմն նորանց նման մի լինիք. ինչուոր՝ ձեր Հայրն գիտուեմ՝ թէ ինչ պէտք է ձեզ, քանի որ մին բան դեռ չէք խնդրել նորանից։

9 Ուրեմն դուք էսպէս աղօթք արէք. Ո՛ր Հայր որ երկնքումն ես՝ քո անունդ սուրբ լինի[6]։

10 Գո՛ այքայուելիւնդ գայ, քո կամքդ լինի[7] ինչպէս երկնքումն[8], էնպէս էլ երկրիս վերայ։

11 Ո՛ր ամէն օրվան հացըն[9] էս օր տուր մեզ։

12 Այլ մեր պարտքըն թո՛ղ մեզ[10]. ինչպէս որ մենք էլ թողումենք մեր պարտականներին։

13 Այլ մեզ փորձանքի մէջ մի քը-ցերը[11]. բայց մեզ չարիցն ազատիր[12]. ինչուոր՝ քո է թագաւորութիւնն[13] եւ զօրութիւնն՝ եւ փառքն՝ յաւիտեանս. ամէն։

14 Գլատճառնոր՝ եթէ դուք մարդկանց իրանց մեղքըն թողէք[14]՝ ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ թողութիւն կը տայ։

15 Այլ թէ որ դուք մարդկանց չէք թողել իրանց մեղքըն[15], ձեր Հայրն էլ ձեր մեղքըն ձեզ չի թողել։

16 Այլ էն ժամանակն որ պաս կը պահէք[16], չը լինի որ կնդաւորներին պէս տրտում երեւիք, որ իրանց երեսըն ախտացնուեմեն, որ մարդկանց երեւին թէ պաս են պահում. ճշմարիտըն ասուեմ ձեզ՝ թէ նորանց վարձքն մենակ էն է։

17 Այլ դու ինչ ժամանակ որ պաս պահես, քո գլուխդ իւղով օծի[17] եւ քո երեսըդ լուա։

18 Որ մարդկանց առաջին չերեւիս պաս պահողն նման, բայց ծածուկ քո Հօրդ առաջին. եւ քո Հայրն՝ որ ծածուկն տեսնուեմ, Յայտնի կը հատուցանէ քեզ։

19 Չնզ համար գանձ[18] (խոպանոյ) մի հաւաքէք երկրիս վերայ. որ տեղ որ ցեցն եւ ժանկն ապականուեմեն. եւ որ տեղ որ գողերն գետնի տակըն փորուեմեն եւ գողանուեմ։

20 Այլ երկնքումն ձեզ համար գանձ (խոպանոյ) ժողովեցէք[19]՝ որ հնտեղ ոչ ցեց եւ ոչ ժանկ չեն ապականում, եւ գողերն գետնի տակըն չեն փորում եւ գողանում։

21 Գլատճառնոր՝ ինչ տեղ որ ձեր գանձերն են, հնտեղ էլ ձեր սիրտն կը լինի։

22 Ո՛րմնոյ ճրագն՝ աչքն է[20].

---

[3] դ Թագ. դ. 33։ [4] Ժող. ե. 2։ [5] դ Թագ. Ժբ. 26, 29։ [6] Ղուկ. Ժա. 2, Յոյն։ [7] Մարկ. իգ. 39, 42։ Գործ. իա. 14։ [8] Ցաղմ. ճբ. 30, 21։ [9] Ցվբ. իգ. 12։ Առակ. լ. 8։ [10] Յարկ. Ժբ. 21։ Յոյն։ [11] Մարկ. իգ. 41։ Ղուկ. իբ. 40, 46։ ա Կորնթ. Ժ. 13։ բ Պետ. բ. 9։ Ցայտ. դ. 10։ [12] Ցվբ. Ժե. 15։ [13] ա Մնաց. լիե. 11։ [14] Մարկ. Ժա. 25, 26։ Եփես. դ. 32։ Կող. գ. 13։ [15] Մարկ. Ժբ. 35։ Ցակ. բ. 13։ [16] Եսայ. Ծբ. 5։ [17] Հռոմ. գ. 3։ Դան. Ժ. 3 [18] Առակ. իգ. 4։ ա Տիմ. գ. 17։ Եբր. Ժգ. 5։ Ցակ. ե. 1, Յոյն։ [19] Մարկ. Ժե. [21] Ղուկ. Ժբ. 33, 34։ Ժբ. 23։ ա Տիմ. գ. 19։ ա Պետ. ա. 4։ [20] Ղուկ. Ժա. 34, 36։

թէ որ քո աչքդ պարզ է, քո ա-մէն մարմինդ լուսաւոր կը լինի:

23 Իսպէ թէ որ քո աչքդ չար է, քո ամէն մարմինդ խաւար կը լինի: Ուրեմն՝ թէ որ էն լոյսն որ քեզ-նում է՝ խաւար է, ապա խաւարն որչափ կը լինի:

24 Ոչ ով կարօղ չէ երկու տի-րոջ ծառայել թէն անել[21]. կամ մէնին կատէ՝ եւ մէկէլին կը սիրէ, կամ մէնին կը պատվէ՝ եւ մէկէլին ոչ ինչ տեղ կը համարէ: Չէք կա-րօղ Աստուծոյ ծառայել եւ մամո-նային[22]:

25 Որահամար ասումէմ ձեզ. Հոգս մի անէք[23] ձեր հոգոյն հա-մար. թէ ինչ պիտի ուտէք, կամ ինչ պիտի խմէք. եւ ոչ ձեր մարմ-նոյն համար՝ թէ ինչ պիտի հագ-նէք: Չէ որ հոգին աւելի է կերակ-րիցն՝ եւ մարմինն շորերիցն:

26 Մտիկ արէք երկնքի թռչուն-ներին[24]՝ որ ոչ վարումեն, եւ ոչ հընձ-ումեն, եւ ոչ ամբարներումն ժողվու-մեն, եւ ձեր երկնաւոր Հայրն կերակ-րումէ նորանց. չէ որ դուք նորան-ցից աւելի էք:

27 Հիմի՝ ձեզանից ով է կարօղ իրան հոգս անելովն իրան հասա-կին վերայ մին գալ էլ աւելացնել:

28 Եւ շորերի համար ինչու էք հոգս անում. մտիկ արէք վայրի շու-շան ծաղկին՝ թէ ինչպէս մեծա-նում. ոչ չանքէ անում՝ եւ ոչ մանում:

29 Ասումէմ ձեզ՝ թէ սաղոմոնն էլ իրան ամէն փառքի մէջն նորանց մինին նման չը հագաւ:

30 Իսպէ թէ որ վայրի խոտն՝ որ էսօր կայ եւ էգուց կրակն կը քցվի՝ Աստուած էնպէս է հագցնում, ա-պա ոլքան աւելի ձեզ՝ թերահա-ւատներ:

31 Որահամար էլ հոգս մի անէք՝ եւ մի ասէք. թէ ինչ ուտենք, կամ ինչ խմենք, կամ ինչ հագնենք:

32 Ինչուոր՝ էդ ամէն բաներըդ հեթանոսներն են ուզում. պատ-ճառն որ՝ ձեր երկնաւոր Հայրն գի-տումէ՝ թէ էդ ամենք պէտք է ձեզ:

33 (Պուք) առաջ Աստուծոյ ար-քայութիւնըն եւ նորա արդարու-թիւնըն խնդրեցէք. եւ էդ ամէն բաներդ կաւելանայ ձեզ[25]:

34 Ուրեմն՝ էգուցվան համար հոգս մի անէք, ինչուոր՝ էգուցվան օրն իրան համար հոգս կանի. օրի համար բաւական է իրան նեղու-թիւնն:

## Կ·Ը

1 Քրիստոս սարի վերայ իրան քարոզն վերջ անելով ժամանակն՝ ծուռ դատողներին կը-յանդիմանէ: 6 Սուրբ բաներըն շների տալն կարգիլէ: 7 Կը յորդորէ որ աղօթք անեն: 13 Նեղ դռնովն ներս մտնեն: 15 Սուտ մարգարէներից զգոյշ լինին: 21 Ի օգտն ունակ աստղներ չը լինին, բայց կատարողներ: 24 Գարի վերայ շինված ոլներն նմանին, 26 եւ չէ թէ աւազի վերայ:

1 Մի դատէք՝ որ (դուք էլ) չը-դատվիք[1]:

2 Պատճառնոր՝ ինչ դատաստա-նով որ ուրիշին դատէք, (նորանով)

[21] Ղուկ. ժդ. 13: [22] Գաղ. ա. 10: ա Տիմ. զ. 17: Յով. դ. 4: ա Յովհ. բ. 15: [23] Սաղմ. ծե. 22: Ղուկ. ժբ. 22, 23: Փիլ. դ. 6: ա Պետ. ե. 7: [24] Յոբ. լը. 41: Սաղմ. ճխե. 9: Ղուկ. ժբ. 24, Խոյլե: [25] գ Թագ. գ. 13: Սաղմ. լե. 25: Մատթ. ժ. 30: Ղուկ. ժբ. 31: ա Տիմ. դ. 8: [1] Ղուկ. զ. 37: Հռովմ. բ. 1: ժ. 3, 4, 10, 13: ակոբոս. դ. 3. 5: Յով. դ. 11, 12:

պիտի գաւռվիք. եւ ինչ չափով որ չափիք[2], (նորանով) կը չափվի ձեզ:

3 Ինչու քո եղբօր աչքի մէջի ծեղընն տեսնուս, եւ քո աչքիդ մէջի գերանն չես տեսնում[3]:

4 Կամ ինչպէս ես ասում եղբօրդ՝ Թող քո աչքիդ ծեղընն հանեմ, եւ ահա քո աչքիդ մէջին գերան կայ:

5 Կեղծաւոր՝ առաջ քո աչքիդ գերանն հանիր, եւ յետոյ մտիկ արա՝ որ քո եղբօր աչքիցն ծեղընն հանես:

6 Սուրբ բանն մի տաք շընե-բինն[4]. եւ ձեր մարգարիտներն խո-զերի առաջն մի քցիք. որ նորանց ոտով կոխ չը տան՝ եւ յետ դառ-նան ձեզ պատառեն:

7 Խնդրեցէք եւ կը տըրվի ձեզ[5]. մտն եկէք եւ կը գտնէք. (դուռըն) թակեցէք եւ կը բացվի ձեզ:

8 Ինչուր՝ ամէն ով որ կը խընդ-րի[6] կառնէ, եւ ով որ մտն կը գայ կը գտնէ, եւ ով որ կը թակէ կը-բացվի նորան:

9 Իվ է ձեզանից էն մարդն՝ որ նորանից իրան որդին հաց ուզէ՝ միթէ քար կը տայ նորան:

10 Յա կամ ձուկըն ուզէ՝ միթէ օձ կը տայ նորան:

11 Ուրեմն թէ որ դուք որ չար էք[8]՝ գիտումէք լաւ պարգեւներ տալ ձեր որդոցն, ապա ո՞րքան ա-ւելի ձեր Հայրն որ երկնքումն է, բարի բաներ կը տայ նորանց որ ու-զումեն իրանից:

12 Ամէն ինչ որ կամենումէք[9]՝ թէ մարդիքն ձեզ անեն, էնպէս էլ դուք արէք նորանց. ինչուր՝ հենց էս է օրէնքն եւ մարգարէքն[10]:

13 Նեղ դռնովն նեըս մտէք[11]. ինչուր՝ լայն է դուռն՝ եւ համար-ձակ ճանապարհն՝ որ դէպի կորուս-տըն է տանում. եւ շատ են նորանք որ նորանով են մտնում:

14 Քանի՞ նեղ է դուռն՝ եւ նեղ է ճանապարհն, որ դէպի կեանքն է տանում. եւ քիչ են նորանք՝ որ գտնումեն նորան:

15 Զգոյշ կացէք (էն) սուտ մար-գարէներից[12]՝ որ ոչխարի շորերով ձեզ մտ են գալիս[13], եւ իրանց մի-ջումն յափշտակող գայլեր են[14]:

16 Իրանց պտղից նորանց ճանա-չեցէք[15]. կը լինի՞ որ փշերից խա-ղող քաղեն[16]. կամ տատասկից թուզ:

17 Այսպէս ամէն բարի ծառ[17]՝ բարի պտուղ է բերում. եւ չար ծառն չար պտուղ է բերում:

18 Չի կարող բարի ծառն՝ չար պտուղ բերել, եւ ոչ էլ չար ծառն բարի պտուղ բերել:

19 Ամէն ծառ[18]՝ որ բարի պտուղ չի բերում, կարվումէ եւ կրակի մէջ է քցվում:

20 Ուրեմն իրանց պտղից ճանա-չեցէք նորանց:

21 Ոչ թէ ամէն ով որ ինձ ա-

[2] Մարկ. դ. 24: Ղուկ. զ. 38: [3] Ղուկ. զ. 41, 42: [4] Ընտ. թ. 7, 8: Իգ. 9: Գաղ. ժգ. 45, 46: [5] Մարկ. իա. 22: Մարկ. ժա. 24: Ղուկ. ժա. 9, 10: Ժղ. 1: Յովհ. ժգ. 13: Ժհ. 7: ԺՂ. 23, 24: Յակ. ա. 5, 6: ա Յովհ. գ. 22: Ե. 14, 15: [6] Ընտ. ը. 17: Երեմ. իե. 12, 13: [7] Ղուկ. ժա. 11, 12, 13: [8] Ծննդ. գ. 5: ը. 21: [9] Ղուկ. զ. 31: [10] Լնտ. ԺԹ. 18: Մատթ. իբ. 40: Հռոմ. ժգ. 8, 9, 10: Գաղ. Ե. 14: ա Տիմ. ա. 5: [11] Ղուկ. ժգ. 24: [12] բ Օրէն. ժգ. 3: Երեմ. իգ. 16: Մատթ. իդ. 4, 5, 11, 24: Մարկ. ժգ. 22: Հռոմ. ԺՂ. 17, 18: Եփես. Ե. 6: Կող. բ, 8: բ Պետ. բ, 1, 2, 3: ա Յովհ. գ, 1: [13] Մատթ. գ. 5: բ Տիմ. գ. 5: [14] Գաղ. ի. 29, 30: [15] Վարդ. 20: Մատթ. ԺԲ. 33: [16] Ղուկ. զ. 43, 44: [17] Երեմ. ԺԹ. 19: Մատթ. ԺԲ. 33: [18] Մատթ. գ. 10: Ղուկ. գ. 9: Յովհ. ժե. 2, 6:

սումն՝ Տէր Տէր[19]՝ երկնքի արքայութիւնն կը մտնէ. բայց նա՝ որ իմ հօրս կամքը կատարումէ՝ որ երկնքումն է:

22 Շատ մարդիք էն օրն կասեն ինձ. Տէր Տէր. չէ որ մենք քո անունովդ մարգարէութիւն արինք[20], եւ քո անունովդ դեւեր հանեցինք, եւ քո անունովդ շատ հրաշքներ արինք:

23 Յետ էն ժամանակն կասեմ նոցանց[21]՝ թէ իսկի մին ժամանակ ձեզ չեմ ճանաչել. ինձանից դէն գնացէք ամէնքդ՝ որ անօրէնութիւն էիք գործումէ:

24 Ամէն ով որ էս իմ խօսքերըս լսումէ[23] եւ նորանց կատարումէ, նա էն խմաստուն մարդոյն նման կըլինի, որ իրան տունըն քարի վերայ շինեց:

25 Ընձրեւներն եկին՝ եւ գետերըն վերկացան՝ քամիներ փչեցին՝ եւ տունըն թակեցին, եւ չը կործանվեցաւ. ինչուր՝ քարի վերայ հաստատված էր:

26 Յետ ամէն ով որ էս իմ խօսքերըս լսումէ՝ եւ նորանց չի կատարում, նա էն անխելք մարդոյն նման կըլինի՝ որ իրան տունըն աւազի վերայ շինեց:

27 Ընձրեւներն եկին՝ եւ գետերըն վերկացան՝ քամիներ փչեցին՝ եւ տունըն թակեցին եւ վէր ընկաւ, եւ նորա կործանվէլն շատ սաստիկ էր:

28 Յետ էրբոր Յիսուս էս ամէն բաներըս կատարեց, ժողովուրդներն զարմանում էին նորա վարդապետութեանն վերայ[24]:

29 Ինչուր՝ իշխանութիւն ունողի պէս էր սովորցնում[25], եւ ոչ թէ իրանց կարդացօղներին պէս:

## ԳԼ. Ը

2 Քրիստոսի բորոտ սրբելն, 5 Հարիւրապետի ոտքն, 14 Պետրոսի զրկանքն, 16 Յետ շատ ուրիշ դիւահարներ եւ հիւանդներ բժշկելն, 19 Ցոյց կըտայ թէ իրան ետեւէն ինչպես կարենումն երթալ, 23 Ծովի փոթորկին խաղաղեցնումն, 28 Երկու դիւահարների ոտնեցած դեւերն կը հանէ, 31 Յետ կը թողէ որ երթան խողերին մէջումն մտնեն:

1 Յետ էրբոր էն սարիցն վէր եկաւ, շատ ժողովուրդներ նորա ետեւէն գնացին:

2 Յետ ահա մին բորոտ մարդ մօտ եկաւ[1] երկրպագութիւն արաւ նորան եւ ասաց. Տէր՝ թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել:

3 Յիսուս իրան ձեռքն մեկնեց եւ նորան հասցրուց եւ ասաց. կամենումեմ՝ սրբվի՛ր. եւ շուտով բորոտութիւնն սրբվեցաւ նորանից:

4 Յետ Յիսուս ասաց նորան. ըղդիշ կաց՝ իսկի մին մարդոյ բան չասես[2]. միայն թէ գնա քո անձըդ ցոյց տուր քահանային. եւ մատճսից հրամայած պատարագըն[3] արա, որ վկայութիւն լինի նորանց:

5 Յետ էրբոր մտաւ կափառնաում[4], մին հարիւրապետ եկաւ նորա մօտ աղաչումէր նորան,

[19] Ովե. ը. 3: Մատ. իե. 11, 12: Ղուկ. զ. 46: Ժգ. 25: Գործ. ժԹ. 13: Հռովմ. բ. 13: Յակ. ա. 22: [20] Թագ. իգ. 4: Յովհ. ժա. 51: առակն. Ժգ. 3: [21] Մատ. իե. 12: Ղուկ. Ժգ. 25, 27: բ Տիմ. բ. 19: [22] Սաղմ. ե. 5: զ. 8: Մատ. իե. 41: [23] Ղուկ. զ. 47, եւայլն: [24] Մատ. Ժգ. 54: Մարկ. ա. 22: զ. 2: Ղուկ. դ. 32: [25] Յովհ. է. 46: [1] Մարկ. ա. 40, եւայլն: Ղուկ. ե. 12: [2] Մատ. Թ. 30: Մարկ. ե. 43: [3] Ղեւտ. Ժգ. 3. 4. 10: Ղուկ. է. 14: [4] Ղուկ. է. 1, եւայլն:

6 Եւ ասումէր՝ Տէր՝ իմ տղան անդամալոյծ վերընկած է տան մէջը՝ եւ սաստիկ տանջուելէ:

7 Յիսուս ներան ասաց. ես կը գամ եւ ներան կը բժշկեմ:

8 Հարիւրապետան պատասխան տուաւ եւ ասաց. Տէր՝ արժանի չեմ[5] որ իմ տան ծածկի տակն մտնես, բայց միայ խօսքով ասա[6] եւ իմ տղան կը բժշկի:

9 Ինչուր՝ ես էլ մին իշխանու- թեան տակ լինող մարդ եմ, իմ ձեռս տակն զինուորներ ունիմ եւ ասումեմ սորան թէ գնա՝ եւ գնումէ. եւ մկկելին թէ եկ՝ եւ գալիս է. եւ իմ ծառային՝ թէ էս բանը արա՝ եւ անումէ:

10 Երբոր Յիսուս լսեց, զարմացաւ եւ ասաց նորանց որ իրան ետեւէն գնումէին. ճշմարիտն ասումեմ ձեզ, որ իսրայելի մէջն էլ իսկի մին ժամանակ էսպէսի հաւատք չը գտի:

11 Այլ ասումեմ ձեզ, որ շատ մարդիք արեւելքէցն եւ արեւմտիցն կը գան[7], եւ աբրահամի եւ իսահակի եւ յակօբի հետ երկնքի արքայութենումն կը նստին:

12 Եւ արքայութեան որդիքն[8] դուրս կելլին դրսի խաւարն[9], որ էն տեղ լաց եւ առամների կրճտելն կը լինի:

13 Եւ Յիսուս ասաց հարիւրապետին. գնա՝ եւ ինչպէս որ հաւատացիր՝ թող էնպէս լինի քեզ. եւ ներա տղան էն օրումն առողջացաւ:

14 Եւ երբոր Յիսուս եկաւ պետրոսի տունն[10], տեսաւ որ ներա զօքանչն[11] տենտի մէջն վերընկած էր,

15 ու ներա ձեռքին բռնեց, եւ տենան թողից ներան. վերկացաւ եւ ծառայութիւն էր անումէ ներանց:

16 Երբոր իրիկուն էլաւ[12]՝ շատ դիւահարներ բերին ներան մօտ՝ եւ (միայ) խօսքով հանեց դեւերըն, եւ ամէն հիւանդներըն բժշկեց:

17 Որ կատարվի եսայի մարգարէի ձեռով ասված բանն. թէ նա մեր հիւանդութիւնները վերացրուց՝ եւ մեր ցաւերըն վերկալաւ[13]:

18 Յիսուս երբոր շատ ժողովուրդներ տեսաւ իրան չորս կողմովին, հրաման տուաւ էն կողմն գնալ:

19 Եւ մին կարդացօղ մօտ եկաւ եւ ներան ասաց. վարդապետ՝ ես էլ քո ետեւէդ կը գամ որ տեղ որ գնաս[14]:

20 Եւ Յիսուս ներան ասաց. աղուեսներն կենալոյ փոսեր ունին. եւ երկնքի թըռչուններն բուն. բայց որդին մարդոյ մին տեղ չունի՝ որ իրան գլուխն դնէ:

21 Եւ ներա աշակերտներից մինն ասաց ներան[15]. Տէր՝ ինձ հրաման տուր[16] որ գնամ առաջ իմ հայրըն թաղեմ:

22 Յիսուս ներան ասաց. իմ ետեւէս եկ, եւ թող մեռելներին որ իրանց մեռելներըն թաղեն:

23 Եւ երբոր մտաւ նաւն, ներա աշակերտներն ներա ետեւէն գնացին:

---

[5] Ղ–ե· ԺԸ· 19, 21: [6] Ս–ղ· ՃԷ· 20: [7] Ծննդ· ԺԸ· 3: Ե–ոյ· Բ· 2, 3: Ժա· 10: Մ–ղ· ա· 11: Ղ–ե· Ժգ· 29: Գ–ծ· Ժ· 45: Ժա· 18: Ժգ· 26: Հ–ռմ· Ժե· 9, Ի–այե· Խ ԷԲ· գ· 6: [8] Մ–ռկ· իա· 43: [9] Ժգ· 42, 50: Իբ· 13: Իդ· 51: Իե· 30: Ղ–ե· Ժգ· 28: Բ պէտ· Բ· 17: Ց–ար· 13: [10] Մ–բ· ա· 29, 30, 31: Ղ–ե· դ· 38, 39: [11] ա կ–ընթ· Թ· 5: [12] Մ–բ· ա· 33: Ի–այե· Ղ–ե· դ· 40, 41: [13] Ե–ոյ· Ծգ· 4: ա պէտ· Բ· 24: [14] Ղ–ե· Թ· 57, 58: [15] Ղ–ե· Թ· 59, 60: [16] ա Թագ· Ժե· 20:

24 Եւ ահա մեծ ալեկոծումն էր լաւ ծովի մէջն. մինչեւ որ նաւն էլ ծածկուէր ալիքներուն, եւ ինքն քնած էր[17]:

25 Եւ աշակերտներն մօտ եկին՝ նորան զարթնացուին եւ ասացին. Տէր՝ մեզ փրկէ՛ որ կորչումենք:

26 Եւ նորանց ասաց. ինչո՞ւ վախկոտ էք պակասահաւատներ: Յն ժամանակն վերկացաւ՝ քամիներուն եւ ծովուն սաստեց[18], եւ մեծ խաղաղութիւն էլաւ:

27 Եւ մարդիքն զարմացան եւ ասումէին. էս ի՞նչպէսի մարդ է՝ որ քամիներուն եւ ծովն էլ հնազանդ վումեն սորան:

28 Եւ երբոր էն կողմն անցին գերգեսացոց երկիրն[19], երկու դիւահար մարդ պատահեցին նորան, գերեզմաններիցն դուրս եկած՝ որ հնքան շատ չար էին, մինչեւ որ հընար չէր, թէ մին մարդ էն ճանապարհովն անցկինայ:

29 Եւ ահա աղաղակեցին եւ ասացին. Յիսուս որդի Աստուծոյ քեզ ի՞նչ բան կայ մեզ հետ. որ եկել ես անժամանակ մեզ տանջել:

30 Եւ նորանցից հեռու մին խոզի երամակ (ոխ-քոս) կար որ արածումէր:

31 Եւ դեւերն աղաչումէին նորան եւ ասում, թէ որ մեզ էս տիղցս հանես, հրաման տուր մեզ՝ որ գնանք էն խոզերի երամակն(ոխ-քոս):

32 Եւ նորանց ասաց՝ գնացէք. եւ նորանք դուրս եկին գնացին խոզերի երամակն. եւ խոզերի ամէն երամակն էն քարձր տեղիցն վազեց ծովի մէջն, եւ ջրերի միջումն մեռան:

33 Եւ խոզարածներն փախան, եւ գնացին քաղաքն. պատմեցին ամէնքն, եւ դիւահարների բաներըն էլ:

34 Եւ ահա ամէն քաղաքն դուրս եկաւ Յիսուսի առաջն. երբոր նորան տեսին՝ աղաչեցին որ գնայ իրանց երկրիցն[20]:

## Գ.Ղ. Ը

2 Քրիստոսի անդամալոյծ բժշկելն, 9 Մատթէոսն մաքսաւորութենից կանչելն, 10 Մաքսաւորներին եւ մեղաւորներին հետ ուտելն: 14 Իրան աշակերտներին պաս չի պահիլն պատասխանումէ: 20 Տեառաես կինն կը բժշկէ: 23 Յայրոսի աղջիկն մեռելներից կը յարութացնէ: 27 Երկու կոյր մարդկանց աչքերըն կը բանայ: 32 Համր դիւահար մին մարդ կը բժշկէ: 36 Եւ ժողովուրդին կը խղճայ, որ ոչխարների պէս հովիւ չունին:

1 Եւ նաւն մտաւ անցկացաւ էն նեղուվ. անդամալուծին ասաց. քո մեղքերն թողված լինին քեզ:

2 Եւ ահա կարդացողներիցն մին քանիսն իրանց մտքումն ասացին. թէ հայհոյումէ դա:

4 Յիսուս նորանց մտածմունքըն

[17] Մարկ. դ. 37, Ղուկ. ը. 23, Յայտ. [18] Սաղմ. կե. 7, Ամբ. 9, Ովս. 29, [19] Մարկ. ե. 1, Յայտ. Ղուկ. ը. 26, Յայտ. [20] Ը Օրէն. ե. 25, ա Թագ. ժէ. 18, Ղուկ. ե. 8, Գործ. ժգ. 39, [1] Մատթ. դ. 13, [2] Մարկ. բ. 3, Ղուկ. ե. 18, [3] Մատթ. ը. 10,

իմացա՞ւ եւ ասաց նորանց. ի՞նչու էք չար բան մտածում դուք ձեր սրտերումն:

5 Որն է հեշտ, ասել՝ թէ քո մեղքերդ թողված լինին քեզ, կամ ասել՝ վեր կաց եւ մեն ման:

6 Բայց որ դուք իմանաք՝ թէ որ գին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վրայ մեղաց թողութիւն տալոյ· են ժամանակին անդամալուծին ասաց· վերկաց քո մահիճդ (գէօՀԷՒԷՐ) վերստ եւ գնա քո տունդ:

7 Նա նա վերկացաւ եւ գնաց իրան տունն:

8 Երբոր ժողովուրդներն տեսին, զարմացան՝ եւ փառաւորեցին փառք էին տալիս, որ էնպիսի իշխանութիւն է տուել մարդկանց:

9 Նա Յիսուս երբոր էն տեղից առաջ գնաց, տեսաւ մին մարդ, ասուն անուն մարդ, որ նստած մաքսաւորութիւն (ՔՕՄՐՈՒՉԼՈՒՆ) էր առնում[5]. եւ նորան ասաց· իմ ետեւէս եկ· եւ նա վերկացաւ գնաց նորա ետեւէն:

10 Նա էլաւ երբոր նորա տան մէջն սեղանի վերայ նստած էր, եւ ահա ուրիշ էլ շատ մաքսաւորներ (ՔՕՄՐՈՒՉԼՈՒՆՔ) եւ մեղաւորներ եկել էին· եւ Յիսուսի եւ նորա աշակերտների հետ նստած էին[6]:

11 Երբոր փարիսեցիքն տեսին, նորա աշակերտներին ասացին· ի՞նչու ձեր վարդապետն մաքսաւորներին[7] եւ մեղաւորներին[8] հետ (հաց) է ուտում:

12 Բայց Յիսուս երբոր լսեց, նորանց ասաց· կարօղներին բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներին:

13 Գնացէք սովորեցէք՝ թէ ի՞նչ է (որ կասվի) ողորմութիւն եմ կամենում՝ եւ ոչ մատաղ[9]· ինչուր՝ ես չեմ եկել որ արդարներին կանչեմ, այլ մեղաւորներին[10]:

14 Յետ ժամանակին Յօհաննէսի աշակերտներն նորա մօտ եկին եւ ասացին· ի՞նչու մենք եւ փարիսեցիքն շատ պահ ենք պահում[11], եւ քո աշակերտներդ չեն պահում:

15 Յիսուս նորանց ասաց· միթէ կարելի՞ է որ հարսանիքի տղայքն[12] սուգ անեն քանի որ փեսան նորանց հետ է· բայց օրեր կը գան՝ որ փեսան նորանցից վերկառնալի, եւ նոքա նոյն ժամու կը պահեն[13]:

16 Մէ ով չը մաշված կարկատան կտոր հին շորի վերայ չի քցիլ· ինչուր՝ նա էն հին շորի ուժն էլ կառնէ գուրս կը գնայ՝ եւ նորա պատառվածքն էլ աւելի չար կը լինի:

17 Նա նոր գինին հին տոպրակի մէջ չեն ածիլ· ապա թէ ոչ՝ տոպրակն կը պատռվին՝ եւ գինին կը թափվի, եւ տոպրակն էլ կը կորչին· բայց նոր գինին նոր տոպրակի մէջ կածեն, եւ երկուքն էլ կը պահվին:

18 Դեռ քանի որ նա էս խօսումքը նորանց հետ, ահա մին իշխան[14] եկաւ նորան երկրպագութիւն արաւ՝ եւ ասաց· իմ աղջիկս հենց հիմի մեռնելոյ վերայ է· միայն թէ դու գաս քո ձեռքդ նորա վերայ դիր՝ եւ կապրի:

19 Յիսուս վերկացաւ եւ աշակերտներովն գնաց նորա ետեւէն:

20 Նա ահա մին կին[15], որ տասը

---

[4] Սամ. ՃԼԹ. 2: Մարկ. ժբ. 25: Մարկ. ժբ. 15: Ղուկ. ե. 22: ղ. 8: Թ. 47: ժա. 17: [5] Մարկ. բ. 14: Ղուկ. ե. 27: [6] Մարկ. բ. 15, Խոսյե: Ղուկ. ե. 29, Խոսյե: [7] Մարկ. ժա. 19: Ղուկ. ե. 30: ժե. 2: [8] Գալաթ. բ. 15: [9] Ոսէ. գ. 6: Մէյ. գ. 6, 7, 8: Մարկ. ժբ. 7: [10] ա Տիմ. ա. 15: [11] Մարկ. բ. 18, Խոսյե: Ղուկ. ե. 33, Խոսյե: ժբ. 12: [12] Յովհ. գ. 29: [13] Գալաթ. ժգ. 2, 3: ժբ. 23: ա Պետր. ե. 5: [14] Մարկ. ե. 22, Խոսյե: Ղուկ. ը. 41, Խոսյե: [15] Մարկ. ե. 25: Ղուկ. ը. 43:

ներկու տարի միշտ արիւն թաւիեւ-
լով ցաւագար էր. մօտ եկաւ՝ եւ
հանեւիցն նորա շորի ծայրին դիպաւ։
21 Ինչուար՝ իրան մտքումն ասաւ
մէր՝ թէ մէնակ նորա շորին դիպ-
չիմ, կը փրկըվիմ։
22 Ապց երբոր Յիսուս չետ դար-
ձաւ եւ նորան տեսաւ, ասաց. ժիր
կաց ով դուստր՝ քո հաւատքդ քեզ
ապրեցրուց[16]. եւ հենց էն ժամն
(սահմանն) կինն ազատվեցաւ։
23 Երբոր Յիսուս եկաւ իշխա-
նի տունն[17], տեսաւ փողիբ չօղնե-
րըն[18] եւ շատ ամբոխ (խալխ), նո-
րանց ասաց. հեռու գնացէք[19]։
24 Ինչուար՝ էդ աղջիկդ մեռած
չէ, բայց քնած է։
25 Յե ծաղր էին անում նորան.
եւ երբոր ամբոխն (խալխն) դուրս
էլաւ, ներս մտաւ՝ նորա ձեռիցն
բռնեց. եւ աղջիկն վերկացաւ։
26 Յե էս համբաւս դուրս եկաւ
էն ամէն երկիրն։
27 Յե ինչ ժամանակ որ Յիսուս
էն տեղիցն անց էր կենում, երկու
կույր աղաղակումէին նորա հանեւէն՝
եւ ասում՝ որդի դաւթի[20]՝ մեզ ո-
ղորմեա։
28 Յե երբոր տունն մտաւ. կու-
րերն նորա մօտ եկին. եւ Յիսուս
նորանց ասաց. հաւատումէք թէ
կարօղ եմ էդ անել ձեզ. եւ նո-
րան ասացին. հա Տէր։
29 Ապ ժամանակն նորանց աչքե-
րին մօտեցաւ՝ եւ ասաց. ձեր հա-
ւատացըն պէս թող լինի ձեզ։
30 Յե նորանց աչքերն բացվան.
եւ Յիսուս նորանց ատաւեց՝ եւ ա-
սաց. զգոյշ կացէք[21]. որ մին մարդ
չիմանայ։
31 Յե նորանք որ դուրս գնացին,
էն ամէն երկրումն նորա անունըն
յայտնի արին[22]։
32 Յե երբոր նորանք դուրս էին
գնում, ահա մին համր[23] (լալ) դի-
ւահար մարդ բերին նորա մօտ։
33 Յե երբոր դեւն դուրս եկաւ,
համր (լալն) (մարդն) խօսեց. եւ
ժողովուրդնըն զարմացան եւ ասա-
ցին. իսկի մին ժամանակ իսրայէլի
մէջն էսպիսի բան չի երեւեցաւ։
34 Ապց փարիսեցիքն ասում էին.
թէ դա դեւերի իշխանովն[24] է հա-
նում դեւերն։
35 Յե Յիսուս ամէն քաղաքնե-
րըն եւ գիւղերն մանէր գալիս[25].
նորանց ժողովարանների մէջն սո-
վորցնում էր. եւ արքայութեան ա-
ւետարանն քարոզում էր. եւ ժողո-
վըրդի միջի ամէն ցաւերըն եւ ա-
մէն հիւանդութիւններըն բժշկում
էր[26]։
36 Յե ժողովուրդներըն որ տե-
սաւ՝ խղճաց նորանց վերայ[27]. որ
աշխատած եւ ցրուած էին. ինչ-
պէս ոչխարներ որ հովիւ (չոպան)
չունին[28]։
37 Ապն ժամանակն իրան աշա-
կերտներին ասաց. հունձքն շատ են՝
եւ մշակներն քիչ[29]։
38 Ուրեմն աղաչեցէք հնձի Տի-
րոջն[30]՝ որ մշակներ ուղարկէ իրան
հունձն։

[16] Ղ.-ի. է. 50։ ը. 48։ Ժէ. 19։ Ժը. 42։ [17] Մ.-ի. ե. 38։ Ղ.-ի. ը. 51։ [18] ը Մ.-ց. լե. 25։ [19] Գ.-ի. ի. 10։ [20] Մ.-ի. ԺԵ. 22։ ի. 30, 31։ Մ.-ի. Ժ 47. 48։ Ղ.-ի. Ժը. 38, 39։ [21] Մ.-ի. ը. 4։ Ժը. 16։ Ժէ. 9։ Ղ.-ի. ե. 14։ [22] Մ.-ի. է. 36։ [23] Մ.-ի. Ժը. 22։ Ղ.-ի. ԺԵ. 14։ [24] Մ.-ի. Ժը. 24։ Մ.-ի. գ. 22։ Ղ.-ի. ԺԵ. 15։ [25] Մ.-ի. զ. 6։ Ղ.-ի. Ժգ. 22։ [26] Մ.-ի. գ. 23։ [27] Մ.-ի. չ. 34։ [28] Թ.-ս. իե. 17։ գ Թ.-ի. իը. 17։ Եզ.-ի. լդ. 5։ Զ.-ի. Ե. 2։ [29] Ղ.-ի. Ե. 2։ Ցվ. գ. 35։ [30] ը Թ.-ս. գ. 1։

# ԳԼ · Ի

1 Քրիստոս իրան տասներկու աշակերտներին իշխանութիւն կը տայ որ նորանք հրաշք առնեն եւ նորանք կուգարկէ: 5 Նորանց պատուէր կը տայ, եւ կը սովրցնէ: 16 Հալածանքներին համար նորանց սիրտ կը տայ: 40 Եւ իրանք ընդունօղներին վարձք խոսք կը տայ:

1 Եւ իրան տասներկու աշակերտներին իրան մօտ կանչեց[1], եւ նորանց իշխանութիւն տուաւ ամէն պիղծ դեւերին վերայ, որ նորանց հանեն, եւ ամէն ցաւերը եւ ամէն հիւանդութիւնները բժշկեն:

2 Եւ էն տասներկու առաքելոց անուններն էս էին. առաջինն սիմէն՝ պետրոս[2] կոչվածն, եւ նորա եղբայր անդրէասն:

3 Յակոբոս զեբեդեանն՝ եւ նորա եղբայր յովհաննէսն. փիլիպպոս եւ բարթողիմէոս՝ թոմաս եւ մատթէոս մաքսաւորն (Կ՚ուզուչը), յակոբոս ալփեանն. եւ դեբէոսն որ թադէոս կոչվեցաւ:

4 Սիմէն կանանացին[3]՝ եւ յուդա իսկարիօտացին[4]՝ նա, որ մատնեց նորան:

5 Էս տասներկուսին Յիսուս ուղարկեց, նորանց պատուէր տուաւ եւ ասաց. Հեթանոսների ճանապարհն[5] չը գնաք, եւ սամարացոց քաղաքն[6] չը մտնէք:

6 Այլ աւելի գնացէք իսրայէլի տան[7] կորած ոչխարներին մօտ[8]:

7 Եւ երբոր կը գնաք[9], քարոզեցէք եւ ասացէք. երկնքի արքայութիւնն մօտացել է[10]:

8 Հիւանդներն բժշկեցէք. բոլոտներըն սրբեցէք. դեւերըն հանեցէք. ձրի (Խոֆպա) առէլէք[11]՝ ձրի (Խոֆպա) տուէք:

9 Ալ եր չի՛ առնէք ո՛չ ոսկի՝ եւ ո՛չ արծաթ[12], եւ ո՛չ պղնձէ փող ձեր գօտիկներումն[13]:

10 Ո՛չ ճանապարհի պարկ, եւ ո՛չ երկու շոր՝ ո՛չ կօշիկ՝ ո՛չ գաւազան. ինչուր՝ մշակն իրան կերակրելն արժանի է[14]:

11 Որ քաղաք՝ կամ (որ) գիւղ որ մտնէք[15], հարցրէք՝ թէ նորա նում ով է արժանի, եւ էնտեղ կացէք՝ մինչեւ որ էն տեղից դուրս գնաք:

12 Եւ երբոր տունըն կը մտնէք, ողջոյն տուէք նորան եւ ասացէք. ողջոյն էս տանս:

13 Թէ որ էն տունն արժանի է[16], ձեր ողջոյնն նորա վերայ կը գայ. բայց թէ որ արժանի չէ՝ ձեր ողջոյնն յետ կը դառնայ դէպի ձեզ[17]:

14 Եւ ով որ ձեզ չի՛ ընդունի[18]՝ եւ ձեր խօսքին ականջ չի՛ դնէ, երբոր էն տանիցն կամ էն քաղաքիցն դուրս կը գնաք, ձեր ոտներիցն փոշին թափ տուէք[19]:

15 Ա՛միսարիտըն ասումեմ ձեզ, որ

[1] Մարկ. գ. 13, 14: ղ. 7: Ղուկ. ջ. 13: Թ. 1: [2] Ցովհ. ա. 42: [3] Ղուկ. ջ. 15: Գործ. ա. 13: [4] Ցովհ. ժգ. 26: [5] Մատթ. դ. 15: [6] բ Թագ. ժե. 24: Ցովհ. դ. 9, 20: [7] Մատթ. ժե. 24: Գործ. ժգ. 46: [8] Եսայ. ծգ. 6: Երեմ. ծ. 6, 17: Եզեկ. լդ. 5, 6, 16: ա Պետ. բ. 25: [9] Ղուկ. Թ. 2: [10] Մատթ. գ. 2: դ. 17: Ղուկ. ժ. 9: [11] Գործ. բ. 18, 20: [12] ա Սամ. Թ. 7: Մարկ. ջ. 8: Ղուկ. Թ. 3: ժ. 4: Իսա. 35: [13] Մատթ. ջ. 6: [14] Ղուկ. ժ. 7: ա Կորնթ. Թ. 7, Խոսյնե: ա Տիմ. ե. 18: [15] Ղուկ. ժ. 8: [16] Ղուկ. ժ. 5: [17] Սաղմ. լե. 13: [18] Մատթ. ջ. 11: Ղուկ. Թ. 5: ժ. 10, 11: [19] Նեեմ. ե. 13: Գործ. ժգ. 51: Ժը. 6,

*ողոմացոց եւ գօմբրացոց երկրին համար աւելի հեշտ կը լինի[26] գաւառաստանի օրումն քան էն քաղաքին։*

**16** Ա՛հա ես ուղարկումեմ ձեզ *ինչպէս* ոչխարներ գայլերի մէջ[21], *որ*համար խորատո՛ւէք[22] *ինչպէս* օձերն, եւ միամի՛տ[23] *ինչպէս* աղաւնիքն։

**17** Ո՛գոյշ կացէք մարդկանցից. *ինչուոր* ձեզ գաւառաստան կը քաշեն[24] եւ իրանց ժողովարաններումն կը տանջեն ձեզ։

**18** Եւ գաւառներուն եւ թագաւորներուն առաջի[26] կը տանեն ձեզ իմ պատճառումս՝ որ (ինձ համար) նորանց եւ հեթանոսներին վկայութիւն լինի։

**19** Ապայ երբոր կը մատնեն ձեզ, հոգա մի՛ անէք՝ թէ ի՛նչպէս կամ ի՛նչ պիտի խօսիք[27]. *ինչուոր*՝ հէնց էն ժամումն (աճապնո՛ւն) կը տրվի ձեզ *ինչ* որ պիտի խօսիք[28]։

**20** Պատճառնոր չէ թէ դուք էք որ կը խօսիք[29], բայց ձեր Հօր հոգին է որ ձեզմնում կը խօսի։

**21** Եղբայրն եղբօրըն մահու կը մատնէ[30], եւ Հայրն որդոյն. եւ որդիքն վերկրկենան իրանց Հարանց վերայ՝ եւ նորանց կը սպանեն։

**22** Եւ ամէնին աւելի կը լինիք[31] իմ անունիս համար. բայց ով որ կը համբերէ[32] մինչեւ վերջն՝ նա կապրի։

**23** Եւ երբոր էս քաղաքումն հալածեն ձեզ, փախէք ուրիշն[33]. եւ թէ որ նորանից էլ հալածեն ձեզ, փախէք էն մէկէլն։ Ճշմարիտըն ասումեմ ձեզ, որ չէք վերջացընիլ խրայէլի քաղաքներըն. մինչեւ որ-դին մարդդ կը գայ[34]։

**24** Աշակերտն վարպետիցն աւելի չէ[35], եւ ոչ ծառան իրան տիրոջիցն։

**25** Բաւական է՝ թէ աշակերտն իրան վարպետի նման լինի. եւ ծառան իրան տիրոջ նման։ Թէ որ տանուտէրին բէեղզեբուլ կոչեցին[36], ապա օրքան աւելի նորա ընտանիքըն։

**26** Արդ համար էլ մի վախենաք նորանցից. *ինչուոր* խոկի ծածուկ բան չը կայ՝ որ յայտնի չը լինի[37]. եւ թագուն բան՝ որ չիմացվի։

**27** Ինչ որ խաւարումն ասումեմ ձեզ, լուսի մէջն ասացէք. եւ *ինչ* որ ականջում լսումէք՝ կատրներին վերայ քարոզեցէք։

**28** Մի՛ վախենաք նրանցից՝ որ մարմինըն սպանումն եւ հոգին չի՛ն կարող սպանել[38]. բայց աւելի վախեցէք նորանից՝ որ կարող է հոգին եւ մարմինըն կորցնել գեհենի մէջն։

**29** Չէ՞ որ երկու ծիտ մին դանկի են ծախվում. եւ նորանցից մինն չի՛ ընկնիլ գետինն առանց ձեր Հօրն։

**30** Ապայ ձեր գլխի ամէն մազերն էլ համարված է[39]։

**31** Ուրեմն մի՛ վախենաք. *ինչուոր*

---

[20] Մատթ. ժա. 23, 24։ [21] Ղուկ. ժ 3։ [22] Հռոմ. ժգ 19։ Եփես. ե. 15։ [23] Կորնթ. ժգ. 20։ Փիլ. բ. 15։ [24] Մատթ. իդ. 9։ Մարկ. ժգ. 9։ Ղուկ. ժբ. 11։ իա. 12։ [25] Գործ. ե. 40։ [26] Գործ. ժբ. 1։ իդ. 10։ իե. 7, 23։ բ Տիմ. դ. 16։ [27] Մարկ. ժգ. 11, 12, 13։ Ղուկ. ժբ. 11։ իա. 14, 15։ [28] Եսա. գ. 12։ Երեմ. ա. 7։ [29] բ Թեսաք. իդ. 2։ Գործ. դ. 8։ ղ. 10։ բ Տիմ. գ. 17։ [30] Միք. է. 6։ Ղուկ. իա. 16։ [31] Ղուկ. իա. 17։ [32] Դան. ժբ. 12, 13։ Մատթ. իդ. 13։ Մարկ. ժգ. 13։ [33] Մատթ. բ. 13։ դ. 12։ ժբ. 15։ Գործ. ը. 1։ թ. 25։ ժգ. 6։ [34] Մատթ. ժգ. 28։ [35] Ղուկ. զ. 40։ Ցուհ. ժգ. 16։ ժե. 20։ [36] Մատթ. ժբ. 24։ Մարկ. գ. 22։ Ղուկ. ժա. 15։ Ցուհ. ը. 48, 52։ [37] Մարկ. գ. 22։ Ղուկ. ը. 17։ ժբ. 2, 3։ [38] Եսայ. ը. 12, 13։ Ղուկ. ժբ. 4։ ա Պետ. գ. 14։ [39] ա Թեսաք. ժգ. 45։ բ Թեսաք. ժգ. 11։ Ղուկ. իա. 18։ Գործ. իե. 34։

գուք աւելի լաւ էք քան շատ ծը-
տեր :

32 Ումն ով որ ինձ մարդկանց
առաջին կը դաւանի[40], ես էլ նորան
կը դաւանիմ իմ Հօրս առաջին որ
երկնքումն է[41] :

33 Իսկ ով որ ինձ կուրանայ[42]
մարդկանց առաջին՝ ես էլ նորան
կուրանամ իմ Հօրս առաջին որ եր-
կնքումն է :

34 Ըմ կարծէք թէ եկել եմ
երկրիս վերայ խաղաղութիւն քը-
ցել[43], չեմ եկել խաղաղութիւն քը-
ցել բայց սուր :

35 Պատճառն որ՝ եկի որ մարդն
իրան Հօրիցն, եւ աղջիկն իրան մ-
րիցն, եւ հարսն իրան սկեսուրիցն
բաժանեմ[44] :

36 Իսկ մարդոյ թշնամիներն իրան
ընտանիքն կը լինին[45] :

37 Ով որ Հօրն կամ մօրն ին-
ձանից աւելի կը սիրէ[46], նա ինձ
արժանի չէ . եւ ով որ իրան որդին
կամ աղջիկն ինձանից աւելի կը-
սիրէ, նա ինձ արժանի չէ :

38 Իսկ ով որ իրան խաչն չառ-
նէ եւ իմ ետեւէս գայ[47], նա ինձ
արժանի չէ :

39 Ով որ իրան անձն կը գըտ-
նէ[48] կը կորցնէ նորան, եւ ով որ
իրան անձն ինձ Համար կորցրուց,
կը գտնէ նորան :

40 Ով որ ձեզ կընդունի[49] ինձ
կընդունի . եւ ով որ ինձ կընդու-
նի, իմ ուղարկօղին կընդունի :

41 Ով որ մարգարէ կընդունի
մարգարէի անունովն[50] նա մարգա-
րէի վարձք կառնէ . եւ ով որ ար-
դարը կընդունի արդարի անունովն
արդարի վարձք կառնէ :

42 Իսկ ով որ էս փոքրիկներիցս մը-
նին[51] մէնակ մին աման ցուրտ ջուր
խմացնէ աշակերտի անունովն, ճըշ-
մարիտըն ասում եմ ձեզ, նա չի կոր-
ցնիլ իրան վարձքըն :

## ԿԱ · ԺԸ

2 Յօհաննէս իրան աշակերտներն Քրիստոսի կուղարկէ : 7 Քրիստոսի Յօհաննէսի հա-
մար ասած վկայութիւնն : 18 Քրիստոսի եւ Յօհաննէսի Համար ժողովուրդին ունեցած
կարծիքն : 20 Քրիստոս նախատինք կը տայ Քօրազին Բեթսայիդայ եւ Կափառնայում
քաղաքներին որ նորանք ապերախտութիւն արին եւ չապաշխարեցին : 25 Իսկ կը գովէ Ի-
րան Հօր խնամատարութիւնն որ աւետարանն տղայոց յայտնեց : 28 Եւ ամէն մեղքի ծանրու-
թիւն խնացօղներն իրան կը կանչէ :

1 Իսկ եղաւ երբոր Յիսուս իրան
տասներկու աշակերտներուն պատուի-
րանքներըն վերջացրուց, էն տեղից
գնաց որ նորանց քաղաքներումն
քարոզ տայ եւ սովորցընէ :

2 Իսկ Յօհաննէս երբոր բան-
տումն[1] (պէ-պաճառօ-ն) քրիստոսի
գործքերըն լսեց[2], իրան աշակերտ-

[40] Ղ-ու-է · ժը · 8 : Հ-ու-մ. ժ · 9, 10 : [41] Յ-այ-ե · գ · 5 : [42] Մ-ու-է · ը · 38 : Ղ-ու-է · թ · 26 : ը
Տէ՛. ը · 12 : [43] Ղ-ու-է , ժը · 49, 51, 52, 53 : [44] Մէ-ի · է · 6 : [45] Մ-ու-ի · խա · 9 : Տէ · 13 : Մէ-ի-
է · 6 : Ց-ւէ · ժգ · 18 : [46] Ղ-ու-է · ժգ · 26 : [47] Մ-ու-ի · ժզ · 24 : Մ-ու-է · ը · 34 : Ղ-ու-է · թ · 23 :
ժգ · 27 : [48] Մ-ու-ի · ժզ · 25 : Ղ-ու-է · ժէ · 33 : Ց-ւէ · ժը · 25 : [49] Մ-ու-ի , ժը · 5 : Ղ-ու-է
թ · 48 , ժ , 16 : Ց-ւէ · ժը · 44 : ժ-ի · 20 : Գ-ու-ղ · գ · 14 : [50] գ-ու-ի · ժէ · 10 : ժը · 4 : գ-ու-ի ·
գ · 8 : [51] Մ-ու-ի · ը · 5 , 6 : իե · 40 : Մ-ու-է · թ · 41 : Եբ-ր · ը · 10 : [1] Մ-ու-ի · ժգ · 3 : [2] Ղ-ու-է
է · 18 , 19 , ե-այ-ը :

Նէրի ձեռովն ուղարկեց,

3 Յր Նորան ասաց. դո՛ւ ես էն որ պէտք է գաս[3], թէ ուրիշի՞ սպասենք:

4 Յիսուս պատասխան տուաւ եւ Նորանց ասաց. գնացէ՛ք՝ Յոհաննէսին պատմեցէ՛ք, ինչ որ լսեցիք եւ տեսէք:

5 Կուրերն տեսնումն, կաղերն գնումն, բորոտներն սրբվումն. խուլերն (լսոլքն) լսումն, մեռելներն յարութիւն են առնում[4], եւ աղքատներին աւետարան է քարոզվում[5]:

6 Յր երանելի է նա, որ ինձ վերայ չի գայթակղվի[6]:

7 Այլ երբոր Նորանք գնացին[7], Յիսուս սկսեց ժողովուրդներին ասել Յոհաննէսին համար. (դուք) գուբս գնացիք ինչ տեսնելոյ անապատումն (չէօլօ՞ն), մին եղեգը[8] (գամչը)՝ որ քամուցն շարժվո՞ւմ:

8 Այլ ինչ տեսնելոյ գուբս գընացիք. մին մարդ փափուկ շորերով զարդարված. ահա նորանք որ փափուկ հագած են՝ թագաւորաց տըներումն են:

9 Այլ ինչ (գուք) տեսնելոյ գուբս գնացիք. մին մարգարէ՞. իրաւի ասումեմ ձեզ, որ մարգարէից էլ շատ աւելի է[9]:

10 Այնչուար՝ նա էն է՝ որ նորա համար գրված է. (Թէ) ահա ես իմ հրեշտակըս կուղարկեմ քո երեսիդ առաջին, որ քո առաջդ քո ճանապարհըն պատրաստէ[10]:

11 Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ. որ կանանց ծնվածներէ մէջն աւելի մեծ առաջ եկած չէ՝ քան Յոհաննէս մկրտիչն. բայց երկնքի արքայութեան մէջի փոքրն նորանից մեծ է:

12 Այլ Յոհաննէս մկրտչի օրերէն[11] մինչեւ հիմի երկնքի արքայութիւն ուժով առնվում՝ եւ ուժովներն յափշտակումն նորան:

13 Այնչուար՝ ամէն օրէնքն եւ մարգարէքն մինչեւ Յոհաննէսն մարգարէացան[12]:

14 Յր թէ կամենաք ընդունել, նա է եղիան[13], որ պէտք է գայ:

15 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[14]:

16 Որո՞ նմանեցնեմ էս ազգըս[15]. էն տղայոցն նման է՝ որ փողոցներումն նըստին եւ իրանց ընկերներին կանչեն,

17 Յր ասեն. փող փչեցինք ձեզ համար՝ եւ պար չեկիք. սուգ արինք ձեզ համար՝ եւ լաց չէլաք:

18 Յոհաննէսն եկաւ, ոչ ուտում եւ ոչ խմում էր. եւ ասումեն՝ դեւ կայ Նորանում:

19 Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ եւ խմումէ, եւ ասումեն. ահա ուտող եւ խմող մարդ. մաքսաւորներուն (կումբաչիներէն) եւ մեղաւորներուն[16] բարեկամ. եւ իմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներէցին[17]:

20 Յն ժամանակն սկսեց նախատինք տալ էն քաղաքներին[18] ուր որ Նորա շատ հրաշքներն էլան՝ եւ չապաշխարեցին:

---

[3] ՃՆՆԴ. ԽԹ. 10: ԹՈՒՂ. ԽԴ. 17: ԴԱՆ. Թ. 24: ՁԻՒ. Չ. 14: [4] ԵՍԱՅ. ԽԹ. 18: ԼԵ. 4, 5, 6: ԽԲ. 7: ՁԻՒ. Բ. 23: Գ, 2: Ե. 36: Ժ. 25, 38: ԺԳ. 11: [5] ՍԱՂՄ. ԽԲ. 26: ԵՍԱՅ. ԿԱ. 1: ՂՈՒԿ. Դ. 18: ՁԻՒ. Բ. 5: [6] ԵՍԱՅ. Ը. 14, 15: ՄԱՏԹ. ԺԳ. 57: ԽԴ. 10: ԽՂ. 31: ՀՈՎՀ. ԹԻ. 32, 33: ԱԿՆՔՆԻ. Ա 23: Բ. 14: ԳԱՂ. Ե. 11: ՍԳԻՐ. Բ. 8: [7] ՂՈՒԿ. Է. 24: [8] ԵՒԹ. Դ. 19: [9] ՄԱՏԹ. ԺԳ. 5: ԻԱ. 26: ՂՈՒԿ. Ա. 76: Է. 26: [10] ՄԱՂ. Գ. 1: ՄԱՐԿ. Ա. 2: ՂՈՒԿ. Ա. 76: Է. 27: [11] ՂՈՒԿ. ԺԶ. 16: [12] ՄԱՂ. Գ. 6: [13] ՄԱՂ. Գ. 5: ՄԱՏԹ. ԺԵ. 12: ՂՈՒԿ. Ա. 17: [14] ՄԱՏԹ. ԺԳ. 9: ՂՈՒԿ. Ը. 8: ՁԻՒ. Բ. 7, 11, 17, 39: Գ. 6, 13, 22: [15] ՂՈՒԿ. Է. 31: [16] ՄԱՏԹ. Թ. 10: [17] ՂՈՒԿ. Է. 35: [18] ՂՈՒԿ. Ժ. 13: ԻՈՒՆ.

21 Վ՚այ քեզ քորազին, վա՛յ քեզ Բեթսայիդա. ինչուո՛ւ եթէ տիւրոսի եւ սիդոնի մէջն էլած էին էն հրաշքներն որ ձեր մէջն էլան, շատ կանուխ զրձով[19] (տոպրակ ըզրով) եւ մոխրով ապաշխարել էին:

22 Այց ասումեմ ձեզ, դատաստանի օրումն աւելի հեշտ կըլինի տիւրոսի եւ սիդոնի երկրին համար՝ քան ձեզ[20]:

23 Եւ դու կափառնայում, մինչեւ երկինքն չի՛ բարձրանաս[21], բայց մինչեւ դժոխքն կը ցածանաս. ինչուո՛ւ եթէ սօդոմի մէջն էլած էին էն հրաշքներն՝ որ քեզանում էլան, ուղղիդ որ՝ մինչեւ էս օր դեռ մը նումէին:

24 Այց ասումեմ ձեզ՝ որ դատաստանի օրումն սօդոմացոց երկրին համար աւելի հեշտ կըլինի[22]. քան քեզ:

25 Յն ժամանակն Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. պոհա նումէ՛ քեզանից[23]. ո՛վ Հայր երկընքի եւ երկրի տէր, որ իմաստուներից եւ դիտունների էս բանըս ծած կեցիր[24] եւ տղայոցն յայտնեցիր[25]:

26 Իրաւի է ո՛վ Հայր, ինչուո՛ւ էսպէս հաճոյ էլաւ քո առաջիդ:

27 Ի՚մէն բան ինձ տըվվաւ իմ Հօրիցն[26], եւ ոչ ով չի՛ ճանաչումէ որդին՝ բայց միայն Հայրն, եւ ոչ ով չի՛ ճանաչումէ Հօրըն[27] բայց միայն որդին, եւ ումո՛ որ որդին կամենայ յայտնել:

28 Ինձ մօտ եկէ՛ք՝ ամէն վաստակածներ եւ բեռնաւորներ, եւ ես հանգիստ կը տամ ձեզ:

29 Իմ լուծըս ձեզ վերայ առէ՛ք, եւ ինձանից սովորեցէ՛ք[28], ինչուո՛ւ ես հեզասիրտ եմ եւ սրտով խոնարհ[29], եւ ձեր անձին համար հանգըստութիւն կը գտնէ՛ք[30]:

30 Ինչուո՛ւ իմ լուծս քաղցր է, եւ իմ բեռս թեթեւ[31]:

## ԺԲ · ԺՒ

1 Ջրիստոս չարաճճ չպահելոց համար փարիսեցոց ունեցած կուրութիւնն կը յանդիմանէ, 3 Սուրբ Դըբիցն օրինակ բերելով, 8 Իրաւունքով, 13 Եւ մին հրաշքով: 22 Սոյր եւ մունճ դիւահարն կըբժշկէ: 31 Սուրբ Հոգուն դէմ հայհոյանքն իսկի չըներժողվիլ: 36 Ամէն գաւառակ բանի համար պատասխան պիտի տան: 38 Անհաւատներին կը յանդիմանէ որ նորանք նշան էին ուզում: 49 Եւ ցոյց կը տայ թէ իրան եղբայր քոյր եւ մայր ո՛վ է:

1 Յն ժամանակն Յիսուս շաբաթի օրումն գնաց նորանց արտերի մէջն[1], եւ նորա աշակերտներն սկսեցին, եւ սկսեցին հասկ պոկել եւ ուտել:

2 Եբրոյ փարիսեցիքն տեսին՝ նորան ասացին. ահա քո աշակերտներդ բան են անում, որ արժան չէ շաբաթի օրումն անել:

3 Ե՚նա էլ ասաց նորանց. դուք չէ՛ք կարդացել էն՝ որ դաւիթն արաւ էն ժամանակն որ ինքն սովեց[2].

[19] Ցե՛ղ. գ. 7, 8: [20] Մատ. ժ. 15: Ղայր. 24: [21] Եսայ. ժգ. 13: Ողբ. բ. 1: [22] Մատ. ժ. 15: [23] Ղու՛կ. ժ. 21: [24] Սու՛մ. ը. 2: ա Կո՛ր. ա. 19, 27: բ. 8: բ Կո՛ր. գ. 14: [25] Մատ. ժգ. 17: [26] Մատ. իը. 18: Ղու՛կ. ժ. 22: Ցե՛ղ. գ. 35: ժգ. 3: ժէ. 2: ա Կո՛ր. ժէ. 27: [27] Ցե՛ղ. ա. 18: գ. 46: ժ. 15: [28] Ցե՛ղ. ժգ. 15: Փիլէպ. բ. 5: ա Պետ. բ. 21: ա Ցե՛ղ. բ. 6: [29] Զա՛ք. թ. 9: Փիլէպ. բ. 7, 8: [30] Երե՛մ. գ. 16: [31] ա Ցե՛ղ. ե. 3: [1] ր Օրի՛ն. իգ. 25: Մա՛ր. բ. 23: Ղու՛կ. վ. 1: [2] ա Թագ. իա. 6:

եւ նորանք էլ որ նորա հետ էին։

4 Թէ ինչպէս Յաուզդոյ առաւն մեռաւ եւ առաջաւորութեան (Նոյեմբեր ութերորդ) հացըն կերաւ[3]. որ օրէնք չէր նորան ուտել, եւ ոչ էլ նորանց որ նորա հետ էին. բայց միայն քահանայից[4]։

5 Կամ թէ չէք կարդացել օրէնքումն[5], որ քահանայքն շաբաթի օրերումն տաճարի մէջն շաբաթըն պղծումեն, եւ մեղք չէ նորանց։

6 Ասաց մեծն է հա՝ որ տաճարիցն էլ մեծն է հա տեղ[6]։

7 Ասաց թէ որ գիտէիք ինչ է էն բանն՝ թէ ողորմութիւն եմ ուզում եւ ոչ թէ մսաստ՝, դուք չէիք դատապարտել էն անմեղներին։

8 Ինչուր՝ շաբաթու տէրն՝ որ դին մարդոյ է։

9 Եւ Յիսուս էն տեղից գնաց[8]՝ եկաւ նորանց ժողովարանի մէջ։

10 Եւ էնտեղ մին մարդ կար՝ որ նորա ձեռն չորացած էր. նորան հարցրին եւ ասացին՝ թէ շաբաթի օրումն պէտք է բժշկութիւն անել[9]. որ նորա վերայ չարախօսեն։

11 Եւ նա ասաց նորանց. ով է ձեզանից էն մարդն. ու մին ոչխար ունենայ եւ էն ընկնի փոսի մէջ շաբաթի օրումն[10], միթէ չի՞ բռնիլ նորան եւ վերկացնիլ։

12 Պատ ո՞րքան աւելի է մարդ քան թէ ոչխար. նրաՀամար պէտք է շաբաթի օրումն բարիք գործել։

13 Էն ժամանակն ասաց էն մարդոյն. ձեռըդ մեկնիր, նա էլ մեկնեց, եւ ողջ կլաւ էն մեկկէլն պէս։

14 Ասաց փարիսեցիքն դուրս գընացին[11], եւ նորա համար խորհուրդ արին՝ թէ ինչպէս կորցընեն նորան։

15 Եւ Յիսուս եղբոր իմացաւ, էն տեղից հեռացաւ[12], եւ շատ ժողովուրդներ նորա հետէն գնացին[13], եւ ամէնքըն բժշկեց։

16 Եւ նորանց սաստեց[14]՝ որ իրանից մին մարդոյ բան չի յայտներն։

17 Որ կատարվի եսայի մարգարէի ձեռով ասվածն։

18 Էհա իմ մանուկ՝ որ ես ընտրեցի[15]. եւ իմ սիրելիս՝ որ իմ անձս հաւանել է նորան[16]. իմ հոգիս նորա վերայ կը դնեմ, եւ հեթանոսներին իրաւունքըն կը պատմէ։

19 (Էյա) չի հակառակիլ. եւ չի աղաղակիլ, եւ փողոցների մէջն՝ ոչ ով նորա ձայնըն չի լսիլ։

20 Ջարդված եղեգըն (ղամիշըն) չի փշրիլ, եւ վերջն կայծն հասած պատրիքըն չի անցնիլ. մինչեւ դատաստանըն գլուխ հանէ յաղթութեամբ։

21 Եւ նորա անունին հեթանոսներն յոյս կը դնեն։

22 Էն ժամանակն մին կոյր եւ համր (լեղկի) դիւահար բերին նորա մօտ[17]՝ եւ նորան բժշկեց. հենպէս որ համրն եւ կոյրն խօսեց եւ տեսաւ։

23 Էն ժողովուրդներն զարմացան եւ ասում էին. չըլնի՞ թէ սա է քրիստոսն դաւթի որդին։

24 Ասաց փարիսեցիքն երբոր լսե-

---

[3] Եւթ. Ել. 30։ Ղեւտ. իդ. 5։ [4] Եւթ. Թիւ. 32, 33։ Ղեւտ. ը. 31։ իդ. 9։ [5] Թուոց. իը. 9։ Յովհ. է. 22։ [6] Բ Մնաց. ջ. 18։ Մատ. գ. 1։ [7] Ովսէ. ջ. 6։ Մատ. ջ. 6, 7, 8։ Մարկ. ժ. 13։ [8] Մարկ. գ. 1։ Ղուկ. ջ. 6։ [9] Ղուկ. ժգ. 14։ ժգ. 3։ Յովհ. ժ. 16։ [10] Եւթ. իգ. 4, 5։ Բ Օրին. իը. 4։ [11] Մարկ. իե. 1։ Մարկ. գ. 6։ Ղուկ. ջ. 11։ Յովհ. է. 18։ ժ. 39, ժա. 53։ [12] Մարկ. ժ. 23։ Մարկ. ը. 7։ [13] Մարկ. ժԲ. 2։ [14] Մարկ. թ. 30։ [15] Եսայ. խբ. 1։ [16] Մարկ. գ. 17։ ժէ. 5։ [17] Մարկ. ժ. 32։ Մարկ. գ. 11։ Ղուկ. ժա. 14։

ցին[18]՝ ասացին. Թէ դա դեւերուն ուրիշ բանով չի հանուիր, բայց միայն բէեղզէբուղ դեւերի իշխանի ձեռովն։

25 Երբոր Յիսուս նորանց միտքերն իմացաւ[19], ասաց նորանց. Ամէն թագաւորութիւն որ իրան մէջն բաժանված է՝ կը կործանվի. եւ ամէն քաղաք կամ տուն որ իրան մէջն բաժանված է՝ չի՛ մնար։

26 Եւ Թէ որ սատանան սատանայի հանէ, իրան միջնէն բաժանվեցաւ. էլ ինչպէս նորա թագաւորութիւնն կը կենայ։

27 Եւ եթէ ես բէեղզէբուղաւն եմ հանուիր դեւերն, ապա ձեր որդիքն ինչով կը հանեն. նրահամար նորանք կը լինին ձեզ դատաւոր։

28 Բայց եթէ որ ես Աստուծոյ հոգովն եմ հանուիր դեւերն, ուրեմն Աստուծոյ արքայութիւնն ձեզ վրայ հասել է[20]։

29 Կամ ինչպէս մին մարդ կարող է զօրաւոր մարդոյ տունն մտնել[21] եւ նորա բաներն յափշտակել, Թէ որ առաջ էն զօրաւոր մարդն չը կապէ, եւ յետոյ նորա տունն յափշտակէ։

30 Ով որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ հակառակ է. եւ ով որ ինձ հետ չի ժողովում՝ (նա) ցրումէ։

31 Վրայհամար ասումեմ ձեզ. ամէն մեղք եւ հայհոյանք կը լինի մարդկանց[22], բայց հոգւոյն դէմ հայհոյանքն չի՛ լինիլ[23]։

32 Եւ ով որ որդոյն մարդոյ դէմ[24] բան ասէ կը լինի նորան[25], բայց ով որ սուրբ հոգւոյն դէմ ասէ, նորան չի՛ լինիլ. ոչ էս աշխարհումս եւ ոչ էն։

33 Կամ ծառն բարի արէք՝ եւ նորա պտուղն էլ բարի[26]. կամ ծառն չար արէք՝ եւ նորա պտուղն էլ չար. ինչուր՝ ծառն իրան պտղիցն կը ճանաչվի։

34 (Ա֊ժ)օձի զաւակներ՝ դուք ինչպէս կարող էք բարի բաներ խօսիլ՝ որ չար էք. ինչուր՝ սրտի աւելցածիցն կը խօսի բերանն[27]։

35 Մարդ իրան սրտի բարի գանձիցն (խոպ֊ոյ֊ն) բարիք կը հանէ, եւ չար մարդն իրան սրտի չար գանձիցն չար կը հանէ։

36 Բայց եթէ ասումեմ ձեզ. Թէ ամէն դատարկ բանի համար որ մարդիկ կը խօսին՝ պատասխան պիտի տան դատաստանի օրումն։

37 Ինչուր՝ քո խօսքերիցդ կարդարանաս, եւ քո խօսքերիցդ կը դատապարտվիս։

38 Յն ժամանակն մին քանիսն կարդացօղներիցն եւ փարիսեցներիցն պատասխան տուին եւ ասացին. վարդապետ՝ ուզումինք որ քեզանից մին նշան տեսնինք[28]։

39 Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց. չար եւ շնացօղ ազգն նշան է ուզում[29], եւ նշան չի՛ տվիլ նորան. բայց միայն Յովնան մարգարէի նշանն։

[18] Մտթ. թ. 34։ Մրկ. գ. 22։ Ղուկ. ժա. 15։ [19] Մտթ. թ. 4։ Ց֊ղծ. բ. 25։ Ցայտ. բ. 23։ [20] Դան. բ. 44։ է. 14։ Ղուկ. ա. 33։ ժա. 20։ ժէ. 20, 21։ [21] Լուսյ. խթ. 24։ Ղուկ. ժա, 21, 22, 23։ [22] Մրկ. գ. 28։ Ղուկ. ժբ. 10։ Եբր. գ. 4, Ի֊այնէ. ժ. 26, 29։ ա Ցհ֊ղծ. ե. 16։ [23] Գործ. է. 51։ [24] Մտթ. ժա. 19։ ժգ. 55։ Ց֊ղծ. է. 12, 52։ [25] ա Տիմ. ա. 13։ [26] Մտթ. է. 17։ իգ. 33։ [27] Ղուկ. զ. 45։ [28] Մտթ. ժգ. 1։ Մրկ. բ. 11։ Ղուկ. ժա. 16, 29։ Ց֊ղծ. բ. 18։ ա Կորնթ. ա. 22։ [29] Լուսյ. ձէ. 3։ Մտթ. ժգ. 4։ Մրկ. ը. 38։ Ց֊ղծ. գ. 48։

40 Պատճառնոր՝ ինչպէս Յովնան երեք օր եւ երեք գիշեր կէտ ձկան փորումն էլաւ[30], ընպէս էլ որդին մարդոյ երեք օր եւ երեք գիշեր երկրի սրտումն կը լինի։

41 Ղնինեւացւոց մարդիքն դատաստանումն վերկրկենան էս ազգիս հետ[31], եւ սորան կը դատապարտեն[32]. ինչուոր՝ նորանք Յովնանու քարոզութենովն ապաշխարեցին[33], եւ հիմիկ ահա Յովնանիցն աւելի մեծն է էս տեղ։

42 Հարաւային երկրի թագուհին դատաստանումն վերկրկենայ էս ազգիս հետ[34] եւ սորան կը դատապարտէ. ինչուոր՝ նա երկրի ծայրից եկաւ՝ որ սաղոմոնի իմաստութիւնըն լսէ. եւ ահա սաղոմոնիցն աւելի մեծն է էս տեղ։

43 Այդ ինչ ժամանակ որ պիղծ դեւն դուրս է գալիս մարդուցն[35]՝ անջուր տեղերումն ման է գալիս[36], հանգիստ է ինդրում եւ չի գտնում։

44 Յն ժամանակն ասում է. դէտ դառնամ իմ տունն՝ որ էն տեղից դուրս եկի. եւ գալիս է նորան գըտնում՝ պարապ՝ սրբված եւ պատրաստված։

45 Յն ժամանակն գնում է իրանից էլ աւելի չար՝ եօթը դեւ է առնում իրան հետ, եւ մանում են տեղ. եւ էն մարդոյ յետինն աւելի չար է լինում քան թէ առաջինըն[37]. էպէս էլ կը լինի էս չար ազգիս։

46 Դեռքանի որ նա ժողովրդերին հետ խոսում էր, ահա նորա մայրն[38] եւ նորա եղբայրքն[39] դուրսըն կանգնել էին՝ եւ ուզում էին որ նորա հետ խոսին։

47 Յ՚մին մարդ նորան ասաց. ահա քո մայրդ եւ քո եղբայրդ դուրսըն կանգնած են, եւ ուզում են որ քեզ հետ խոսին։

48 Դա պատասխան տուաւ նորան՝ որ ասաց իրան, եւ ասաց. ո՞վ է իմ մայրս կամ ո՞վ են իմ եղբայրքս։

49 Յ՚ւ իրան ձեռըն դէպ՚ի աշակերտներն մեկնեց՝ եւ ասաց. ահա իմ մայրս եւ իմ եղբայրքս։

50 Ինչուոր՝ ո՞վ որ իմ հօրս կամքըն կատարէ[40] որ երկնքումն է, նա է իմ եղբայրս՝ քոյրս եւ մայրս։

## Կ՚Ղ· ԺԳ·

3 Սկիզբ ցանողի եւ սերմի առակն։ 18 Դորանից մեկնութիւնն։ 24 Որոմի, 31 Մանանեխի հատի, 33 Խմորի։ 44 Պահված գանձի, 45 Մարգարէիի, 47 Ծովն քշած ուռկանի առակներն։ 53 Քրիստոսի իրան քաղաքացիներից անարգվելն։

1 Յն օրումն Յիսուս տանիցն դուրս էլաւ՝ եւ ծովի եզերին[1] (ըզթողլո) մնաւ նստեց։

2 Յ՚ւ շատ ժողովուրդներ նորա մօտ ժողովվեցան[2], մինչեւ որ նա նաւն մտաւ եւ նստեց[3]. եւ ամէն ժողովուրդն ծովի եզրումն (ըզբոլորն) կանգնել էր։

3 Յ՚ւ նորանց հետ շատ բան էր խոսում առակներով. եւ ասում էր։

---

[30] Ց-Ե· ա· 17։ [31] Ղ--ւ·. ժա· 32։ [32] Եբէր· գ· 11։ Եղէ· ժգ· 51, 52։ Հ--ւ· բ· 27։ [33] Ց-Ե· գ· 5։ [34] գ Թագ· ժ· 1։ ԲՄ Նոյ· թ· 1։ Ղ--ւ· 31։ ժա· [35] Ղ--ւ· ժա· 24։ [36] Ց-Ե· ա· 7։ ապ Պետր· ե· 8։ [37] Եբէր· ջ· 4։ ժ· 26։ բ Պետր· բ· 20, 21, 22։ [38] Մ--ւ· գ· 31։ Ղ--ւ· ը· 19, 20, 21։ [39] Մ--ւ· ժգ· 55։ Մ--ւ· գ· 3։ Ց-Հ· բ· 12։ է· 3, 5։ Գործ· ա· 14։ ա Կորնթ· ժ· 5։ Գաղ· ա· 19։ [40] Ց-Հ· ժե· 14։ Գ--ւ· ե· 6։ ջ· 15։ Կող· գ· 11։ Եբէր· բ· 11։ [1] Մ--ւ· դ· 1։ [2] Ղ--ւ· ը· 4։ [3] Ղ--ւ· ե· 3։

4 Ընդ այն սերմ ցանօղ մարդ դուրս գնաց որ սերմերն ցանէ[4]. եւ իրան սերմանելոյ ժամանակին մին քանի սերմն ճանապարհի վերայ ընկաւ՝ եւ երկնքի թռչունն եկաւ եւ նորան կերաւ։

5 Եւ մէկէլն քարքարուտ տեղ ընկաւ՝ որ տեղ որ շատ հող չունկար, եւ շուտով բուսաւ հողի պակասութեան պատճառովն։

6 Երբոր արեգակն ծագեց, տապացաւ. եւ որովհետեւ արմատ (ֆօտ) չունէր՝ չորացաւ։

7 Եւ մէկէլն ընկաւ փշերի մէջն, եւ փշերն դուրս եկին եւ խեղդեցին նորան։

8 Եւ մէկէլն բարի երկրի վերայ ընկաւ, եւ պտուղ էր տալիս. կար որ հարիւր[5], եւ կար որ վաթսուն, եւ կար որ երեսուն։

9 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[6]։

10 Եւ աշակերտներն մօտ եկին՝ եւ նորան ասացին. ինչո՞ւ նորանց հետ առակներով ես խօսում։

11 Նա պատասխան տուաւ՝ եւ նորանց ասաց. Ձեզ համար որ՝ ձեզ տրված է երկնքի արքայութեան խորհուրդներն[7] գիտել, բայց նորանց չի՛ տրված։

12 Որ ունի՝ նորան կտրվի եւ կաւելանայ. եւ որ չունի՝ նորանից էն էլ որ ունի, վերկանվի։

13 Նրա համար առակներով եմ խօսում նորանց հետ, որ տեսնելն եւ չեն տեսնում. եւ լսելն եւ չեն լսում, եւ մտքներն չեն առնում։

14 Եւ եսայեայ մարգարէութիւնն կատարվում նորանց վերայ՝ որ ասում է. լսելով կը լսէք[9], եւ չէք իմանալ. եւ տեսնելով կը տեսնէք, եւ չէք տեսնիլ։

15 Ինչո՞ւ որ էս ժողովրդիս սիրտն ծանրացաւ, եւ իրանց ականջներով ծանր լսեցին[10], եւ իրանց աչքերն խփեցին՝ որ իսկի մին ժամանակ աչքերով չը տեսնեն՝ եւ ականջներով չը լսեն, եւ սրտով չիմանան, եւ չկա դառնան եւ ես նորանց բժշկեմ։

16 Բայց երանի է[11] ձեր աչքերին՝ որ տեսնում են, եւ ձեր ականջներին՝ որ լսում են։

17 Ճշմարիտն ասում եմ ձեզ. որ շատ մարգարէներ եւ արդարներ ցանկացան տեսնել[12] էն՝ որ դուք տեսնում էք, եւ չը տեսին. եւ լսել էն՝ որ դուք լսում էք՝ եւ չը լսեցին։

18 Եւ հիմի լսեցէք դուք սերմ ցանօղի առակին[13]։

19 Էն ամէնիքն՝ որ արքայութեան բանն[14] լսում եւ միտք չէ առնում, գալիս է չարն եւ նորա սրտի մէջ սերմանածն յափշտակում. սա էն է՝ որ ճանապարհին վերայ սերմնվեցաւ։

20 Եւ էն որ քարքարուտ տեղն սերմնվեցաւ՝ նա է, որ երբոր բանն լսում՝ շուտով ուրախութեամբ ընդունում[15] նորան։

21 Բայց որովհետեւ արմատ (ֆօտ) չունի իրան մէջ, քիչ ժամանակ է մնում. երբոր նեղութիւն եւ հա-

[4] Ղ·ա·ե· ը· 5· [5] Ծննդ· իզ· 12· [6] Յ·ա·ռ· ժա· 15· Մ·ր·ի· գ· 9· [7] Մ·ա·ռ· ժա· 25· ժգ· 17· Մ·ր·ի· դ· 11· ա Կ·ո·ր· ը· 10· ա Ց·ո·վ· բ· 27· [8] Մ·ա·ռ· իե· 29· Մ·ր·ի· դ· 25· Ղ·ա·ե· ը· 18· ժի· 26· [9] Ե·ս·ա·յ· գ· 9· Եզ·է· ժը· 2· Մ·ր·ի· դ· 12· Ղ·ա·ե· ը· 10· Ց·ո·վ· ժ·ր· 40· Գ·ո·ծ· իը· 26, 27· Հ·ո·վ· ժա· 8· ե Կ·ո·ր· գ· 14, 15· [10] Եբ·ր· ե· 11· [11] Մ·ա·ռ· ժգ· 17· Ղ·ա·ե· ժ· 23, 24· Ց·ո·վ· ի· 29· [12] Եբ·ր· ժա· 13· ա Պ·է·տ· ա· 10, 11· [13] Մ·ր·ի· դ· 14· Ղ·ա·ե· ը· 11· [14] Մ·ա·ռ· դ· 23· [15] Ե·ս·ա·յ· ծը· 2· Եզ·է· լէ· 31, 32·

լածանք են լինում էն բանին համար, շատով գայթակղվում[16]։

22 Ասայ (էն) որ փըշերի[17] մէջն սերմըվեցաւ՝ նա է[18], որ երբոր բանըն լսում է, աշխարհքիս հոգսերն եւ մեծութեան խաբեբայութիւնն էն բանըն խեղդում են՝ եւ անպտուղ է լինում։

23 Ասայ (էն) որ բարի երկրումն սերմըվեցաւ՝ նա է, որ երբոր բանըն լսում է՝ (նորան) էլ միտքն է առնում եւ պտուղ է տալիս. կայ որ հարիւր, եւ կայ որ վաթսուն, եւ կայ որ երեսուն։

24 Աւրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ եւ ասաց. երկնքի արքայութիւնն նմանվեցաւ մի մարդու՝ որ իրան արտումն բարի սերմին ցանեց։

25 Իւ որ ժամանակ մարդիքն քուն էլան, նորա թշնամին էկաւ եւ ցորենին մէջ որոմ (չաղհան խոթէք) ցանեց եւ գնաց։

26 Իւ երբոր խոտն բուսաւ՝ եւ պտուղ տուաւ՝ ապա որոմն էլ երեւեցաւ։

27 Տանտիրոջ ծառաներն էկին նորան ասացին. Տէր՝ չէ՞ որ դու քո արտումն բարի սերմին սերմեցիր, ապա ինչ՞ տեղից է էն որոմն։

28 Նա էլ ասաց նորանց. թշնամի մարդ է արել էն։ Ծառաներն ասացին նորան. կամենո՞ւմս որ գընանք էն քաղենք դուրս հանենք։

29 Նա էլ նորանց ասաց. չէ. չըլինի թէ երբոր որոմն քաղէք, ցորենըն էլ նորա հետ դուրս հանէք։

30 Թո՛ղ տուէք որ երկուսն մին տեղ մեծանան մինչեւ հունձքն, եւ հնձի ժամանակն հնձողներին կասեմ՝ թէ առաջ որոմն քաղեցէք եւ նորան խուրձ խուրձ կապեցէք որ այրվի. եւ ցորենըն իմ ամբարներիս մէջ ժողովեցէք[19]։

31 Ա՛յն ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ՝ եւ ասաց. երկնքի արքայութիւնն նման է մանանեխի (խաչպաղէ) հատի[20], որ նորան մին մարդ առաւ՝ եւ իրան արտի մէջն սերմեց։

32 Որ ամէն սերմանքիցն փոքր է. եւ երբոր կաճի, ամէն բանջարի վերայ մեծանում, եւ ծառ է լինում՝ մինչեւ որ երկնքի թռչուններն գան եւ նորա ճղներին վրայ հանգիստ առնեն։

33 Աւրիշ առակ էլ խօսեց նորանց հետ եւ ասաց. երկնքի արքայութիւնն նման է խմորի[21], որ նորան մին կին առաւ՝ եւ երեք չափ ալիւրի մէջ պահեց, մինչեւ որ ամէնն էլ խմորվեցաւ։

34 Ա՛յս ամէն բաներըս Յիսուս առակներով[22] խօսեց ժողովուրդներին հետ, եւ առանց առակի բան չէր խօսում նորանց հետ։

35 Որ մարգարէի ասածն կատարվի՝ թէ առակներով կը բանամ իմ բերանըս[23] եւ դուրս կը բղխեմ աշխարհքի սկզբից ծածկված բաներըն[24]։

36 Ա՛յն ժամանակն Յիսուս ժողովուրդներին թողեց՝ եկաւ տուն. աշակերտներն նորա մօտ եկին եւ ասացին. էն արտի որոմներըն (չաղհան խոթէք) առակըն մեկնիր մեզ։

37 Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց. էն բարի սերմին ցա-

[16] Մատթ. ժա. 6։ բՏէմ. ա. 15։ [17] Երէմ. դ. 3։ [18] Մատթ. ժԹ. 23։ Մարկ. ժ. 23։ Ղուկ. ժը. 24։ աՏէմ. ը. 9։ բՏէմ. դ. 10։ [19] Մատթ. գ. 12։ [20] Լուսաւ. բ. 2, 3։ Մէտ. դ. 1։ Մատթ. գ. 31։ Ղուկ. ժգ. 18, 19։ [21] Ղուկ. ժգ. 21։ [22] Մատթ. գ. 33, 34։ [23] Սաղմ. հը. 2։ [24] Հռոմ. ժգ. 25, 26։ ա Կորնթ. բ. 7։ Եփես. դ. 9։ Կող. ա. 26։

Նօղն՝ որդին մարդոյ է:

38 Եւ ասան[25]՝ Էս աշխարհքս է. բարի սերմն նորանք են՝ որ արքայութեան որդիք են. եւ որոմն՝ չարի որդիքն են[26]:

39 Եւ թշնամին որ էն սերմեց, սատանան է. եւ հունձքն աշխարհքի վերջն է[27]. եւ հնձողներն՝ հրեշտակներն են:

40 Ինչպէս որ որոմն հաւաքվում եւ կրակի մէջ է այրվում, էնպէս էլ աշխարհքիս վերջում կը լինի:

41 Որդին մարդոյ իրան հրեշտակներն կուղարկէ՝ եւ նորա արքայութենիցն ամէն գայթակղութիւնները[28] կը ժողովին՝ եւ նոքանց էլ՝ որ անօրէնութիւն են գործում:

42 Եւ նորանց կը քցեն կրակի փոսն[29] մէջն, որ էնտեղ լաց եւ ատամների կըրճտանէն կը լինի[30]:

43 Էն ժամանակն արդարներն[31] արեգական պէս կը ծագին երկնքի արքայութեան մէջն. ով որ լսելոյ ականջ ունի՝ լսող լսէ[32]:

44 Ո՛րինէ՝ երկնքի արքայութիւնն նման է մի արտի մէջ պահված գանձի (խազնայի), որ նորան մին մարդ գտաւ պահեց, եւ ուրախութենիցն կը գնայ ամէն ինչ որ ունի ծախում[33] եւ էն արտն կը գնում[34]:

45 Ո՛րինէ՝ երկնքի արքայութիւն նման է մի վաճառական մարդոյ, որ գեղեցիկ մարգարիտների մէն կը գայ:

46 Եւ երբոր մին պատուական մարգարիտ[35] գըտաւ, գնաց ամէն ինչ որ ունէր ծախեց՝ եւ էն մարգարիտն գնեց:

47 Ո՛րինէ՝ երկնքի արքայութիւնն նման է մի ծովի քցած ուռկանի (ըռաղի), որ ամէն կերպ (ձկներ) ժողովեց[36]:

48 Եւ երբոր լցվաւ՝ նորան ցամաքն հանեցին, նստեցին եւ լաւերն ժողովեցին ամանների մէջ, եւ անպէտքներն դուրս քցեցին:

49 Այսպէս էլ կը լինի աշխարհքիս վերջում. հրեշտակներն[37] դուրս կը գան՝ եւ չարերն կը ջոկեն արդարների միջից,

50 Եւ նորանց կը քցեն կրակի փոսն[38] մէջն, որ էնտեղ լաց եւ ատամների կըրճտանէն կը լինի:

51 Յիսուս ասաց նորանց. Հասկացաք էս ամէն բաները. ասացին նորան. Հա, Տէր:

52 Ա՛յս էլ նորանց ասաց. սրահամար ամէն կարդացօղն որ երկնքի արքայութեան բաներին տեղեկացած է, նման է տանտէր մարդոյ՝ որ իրան գանձից (խազնայից) նորըն եւ հինըն հանում[39]:

53 Եւ էլաւ երբոր Յիսուս էս առակներըս կատարեց, էն տեղից գընաց:

54 Եւ եկաւ իրան գաւառն[40] եւ նորանց ժողովարանութեան սովորցնում էր նորանց, մինչեւ որ զարմանում էին նորանք եւ ասում էին. սորան

---

[25] Մատթ. իգ. 14: իը. 19: Մարկ. ժգ. 15, 20: Ղուկ. իգ. 47: Հովհ. ժ. 18: Կող. ա. 6: [26] Գործ. գ. 13: Ցայտ. ժգ. 15: [27] Ցաքեր. գ. 13: Ցայտ. ժգ. 15: [28] Մատթ. ժը. 7: Բ Պետր. բ. 1, 2: [29] Մատթ. գ. 12: Ցայտ. ժԹ. 20: ի. 10: [30] Մատթ. ը. 12: Ա՛յտ. 50: [31] Դան. ժբ. 3: ա Կորնթ. ժե. 42, 43: [32] Աիբ. 9: [33] Փիլիպ. գ. 7, 8: [34] Լուսաբ. 1: Ցայտ. գ. 18: [35] Ըղուկ. բ. 4: գ. 14, 15: ը. 10, 19: [36] Մատթ. իը. 10: [37] Մատթ. իե. 32: [38] Աիբ. 42: [39] Երէմ. է. 13: [40] Մատթ. բ. 23: Մարկ. զ. 1: Ղուկ. դ. 16, 23:

որ տեղից է էս իմաստութիւնս եւ զօրութիւններս:

55 Չէ որ սա Հիւսիան[41] (Ալֆէոսի) որդին է. չէ որ սորա մայրն՝ Մարիամ կը կոչվի. եւ սորա եղբայրքն[42] Յակոբոս՝ եւ Յոսէս[43] եւ սիմէն, եւ Յուդաս:

56 Եւ չէ որ սորա ամէն քրվէրքն մեզ մօտ են. ապա ո՞ր տեղից է սրան էս ամէն բաներս:

57 Եւ գայթակղուեցին[44] նորա վերայ. Յիսուս էլ նորանց ասաց. (մին) մարգարէ անարգված չի լինիլ՝ բայց իրան երկրի եւ իրան տան մէջն[45]:

58 Եւ էն տեղ շատ հրաշքներ չարաչ[46] նորանց անհաւատութեան պատճառաւն:

## ԳԼ. ԺԴ

1 Քրիստոսի համար Հերովդէսի կարծիքն: 3 Յովհաննէս Մկրտիչի գլուխ կտրելոյ պատճառն. 13 Յիսուս մին անապատ տեղ կը գնայ: 15 Եւ հոն հինգ հացով եւ երկու ձուկով հինգ հազար մարդկանց կշտացնում է: 25 Ծովին վերայ գնալով աշակերտներին մօտ կը գնայ: 34 Գեննեսարէթի կը գնայ եւ էնտեղ հիւանդներն իրան չորի ծայրին դիպչելով կը փրկվին:

1 Էն ժամանակն Հերովդէս չորրորդապետան[1] Յիսուսի համբաւըն լսեց:

2 Եւ իրան ծառաներին ասաց. Նա Յովհաննէս Մկրտիչն է, նա մեռելների միջնցն յարութիւն առաւ եւ նրահամար հրաշքներն են լինում նորանով:

3 Պատճառնոր՝ Հերովդէս բռնեց Յովհաննէսին[2] նորան կապեց եւ բանտի մէջ դրաւ՝ Հերովդիայի համար, որ իրան եղբայր փիլիպպոսի կինն էր:

4 Ինչուոր՝ Յովհաննէս նորան ասում էր, թէ արժան չէ քեզ[3] որ դորան (կին) ունենաս:

5 Եւ ուզում էր որ նորան սպաննէ, բայց ժողովրդից վախում էր, ինչուոր՝ նորան մարգարէի տեղ էին համարում[4]:

6 Եւ երբոր Հերովդէսի ծնընդեան օրն էլաւ, Հերովդիայի աղջիկն սեղանի նստածների մէջն պարեկաւ եւ Հերովդէսին լաւ թուեցաւ:

7 Որահամար էլ երդումով խոստացաւ նորան՝ թէ ինչ որ ուզէ՝ տայ նորան:

8 Նա էլ ինչպէս որ առաջ իրան մօրից խրատ էր առել՝ ասաց. Էս սկուտեղի (պնակի) վերայ Յովհաննէս Մկրտչի գլուխն տուր ինձ:

9 Եւ թագաւորն տրտմեցաւ՝ բայց իրան երդումին՝ եւ իրան հետ նստած մարդկանց համար՝ հրամայեց տուաւ, որ տան նորան:

10 Եւ ուղարկեց բանտի (պահպանի) միջումն Յովհաննէսի գլուխըն կտրեց:

11 Եւ նորա գլուխըն սկուտեղի (պնակի) վերայ բերին եւ աղջկանն

[41] Ղուկ. թ. 7: Մարկ. գ. 3: Ղուկ. գ. 23: Յովհ. գ. 42: [42] Մարկ. ժբ. 46: [43] Մարկ. ժբ. 40: [44] Մատթ. ժա. 6: Մարկ. գ. 3, 4: [45] Ղուկ. գ 24: Յովհ. գ. 44: [46] Մարկ. գ. 5, 6: [1] Մարկ. գ. 14: Ղուկ. թ. 7: [2] Մարկ. գ. 17: Ղուկ. գ 19, 20: [3] Ղեւտ. ժբ. 16: ի. 21: [4] Մատթ. իա. 26: Ղուկ. ի. 6:

տուին՝ եւ նա տարաւ իրան մօր մօտն։

12 Եւ նորա աշակերտներն եկին նորա մարմինը վերցրին եւ թա-ղեցին. եւ եկին Յիսուսին պատմե-ցին։

13 Եւ Յիսուս երբոր լսեց[5] էն տեղից նաւով գնաց առանձին մի անապատ տեղ։ Ժողովուրդները երբոր լսեցին, էն տեղի քաղաքնե-րից ոտով գնացին նորա ետեւէն։

14 Եւ երբոր դուրս եկաւ՝ եւ էն շատ ժողովուրդը տեսաւ, խղճաց[6] նորանց վերայ, եւ նորանց հիւանդ-ները բժշկեց։

15 Եւ երբոր իրիկվան դէմ էլաւ[7] աշակերտները նորա մօտ եկին եւ ա-սացին. տեղը անապատ է՝ եւ օրս էլ անցել է. էդ ժողովուրդներըդ թող արա՝ որ գընան չորս կողմի գիւղերն՝ իրանց համար կերակուր գնեն։

16 Եւ Յիսուս ասաց. պէտք չէ դորանց որ գնան. դուք տուէք դո-րանց ուտել։

17 Եւ նորանք ասացին նորան. մենք էստեղ բան չունինք, բայց միայն հինգ հատ հաց՝ եւ երկու ձուկն։

18 Եւ նորանց ասաց. նորանց էստեղ բերէք։

19 Եւ հրաման տուաւ որ ժողո-վուրդն խոտի վերայ նստացնեն. եւ էն հինգ հացըն եւ երկու ձուկն առաւ դէպի երկինքն նայեց՝ օրհ-նեց եւ կըտրեց[8], եւ էն հացերն աշակերտներին տուաւ՝ եւ աշա-կերտներն էլ ժողովուրդներին։

20 Ամէնքն կերին եւ կըշտացան, եւ աւելցած[9] կտորներից տասներ-կու քոշոց լիքն վերկալան։

21 Եւ նորանք որ կերին՝ հինգ հազարի չափ մարդիք էին՝ կանանց-ից եւ երեխաներից զատ (ԱՂՕՒՆ)։

22 Եւ շուտով աշակերտներին վռազացրուց որ նաւն մտնեն՝ եւ ի-րանից առաջ անցկենան էն կողմն. մինչեւ որ ինքն էն ժողովուրդներըն արձակէ։

23 Եւ երբոր ժողովուրդներըն արձակեց[9], վերբէաս սարն, որ մենակ աղօթք անէ. եւ երբոր իրիկուն է-լաւ[10], մենակ էնտեղ էր։

24 Եւ նաւն շատ ասպարէզով (ՀԱՆԿՈՒՄ) հեռացել էր ցամաքից՝ եւ ալեկոծութեան մէջն էր. ին-չուոր՝ քամին ներհակ էր։

25 Եւ գիշերի չորս բաժընի ժա-մանակումն՝ Յիսուս ծովին վերայ գնալով՝ նորանց մօտ եկաւ։

26 Աշակերտներն երբոր տեսին նորան՝ որ ծովին վերայ գնում էր[11], շփոթվեցան եւ ասացին՝ թէ աչքի երեւոյթ բան է, եւ վախեցուցն ա-ղաղակեցին։

27 Եւ Յիսուս շուտով խօսեց նո-րանց հետ՝ եւ ասաց. սրտապինա կացէք՝ ես եմ մի վախենաք։

28 Պետրոսն պատասխան տուաւ նորան եւ ասաց. Տէր՝ թէ որ դու ես, հրաման տուր ինձ. որ ջրից վե-րայով քեզ մօտ գամ։

29 Նա էլ ասաց. եկ. եւ պետ-րոս նաւից վերեկաւ ջրի վերայովն գնաց՝ եւ եկաւ Յիսուսի մօտն։

30 Եւ էն սաստիկ քամին տեսնե-լով՝ վախեցաւ. եւ երբոր սկսեց թաղվել, աղաղակեց եւ ասաց. Տէր՝ ինձ փրկիր։

31 Եւ շուտով Յիսուս իրան ձե-

[5] Մատթ. ժ. 23։ Ժբ. 15։ Մարկ. զ. 32։ Ղուկ. թ. 10։ Յովհ. զ. 1, 2։ [6] Մատթ. թ. 36։ Մարկ. զ. 34։ [7] Մատթ. ղ. 35։ Ղուկ. թ. 12։ Յովհ. ղ. 5։ [8] Մատթ. ժե. 36։ [9] Մարկ. ղ. 46։ [10] Յովհ. ղ. 16։ [11] Յովբ. թ. 8։

ոչն մեկնեց՝ նորան բռնեց եւ ասաց. [թ]ե՛րահասա՛ս՝ ինչո՞ւ երկմտեցիր:

32 Ու երբոր նաւն մտին, քամին հանդարտեց:

33 Ու նորանք որ նաւի մէջն էին՝ մօտ եկին նորան երկրպագութի՛ւն տուին՝ եւ ասացին. իրաւի՛ որ դու Աստուծոյ որդին ես[12]:

34 Ու անցկացան ցամաքն[13]՝ եւ եկին Գեննեսարէթ:

35 Ու երբոր հնտակղ մարդիքն ճանաչեցին նորան, ուղարկեցին հն ամէն գաւառն՝ եւ ամէն հիւանդներ բերին նորա մօտ բերին:

36 Ու նորան աղաչեցի՛ն՝ որ հինց մինակ նորա շորի ծայրին (փէշերին) դիպչին. եւ նորանք որ մին անգամ դիպան[14], փրկվեցան:

## ԳԼ. ԺԵ

3 Քրիստոս դպիրներին եւ փարիսեցիներին յանդիմանում է իրանց աւանդութեան պատճառաւ Աստուծոյ պատուիրանքը ոչինչ համարելու համար: 11 Կը սովորցնէ թէ չէն բաներ որ բերան մտնում՝ ոչ պղծում մարդուն: 22 Քանանացի կնկան աղջկին, 30 եւ ուրիշ շատ բազմութիւնների կը ժշկէ: 32 Չորս հազար մարդիք կը յագցնում կանանցից եւ երեխաներից զատ:

1 Էն ժամանակին Յիսուսի մօտ եկին երուսաղէմից եկած[1] փարիսեցիքն եւ գրագէտները, եւ ասացին:

2 Ինչո՞ւ քո աշակերտները[2] ծերերի աւանդութիւնները անց են[3] կենում. պատճառնոր՝ ձեռները չեն լուանում երբոր հաց են ուտում:

3 Ա՛յս էլ պատասխան տուաւ եւ նորանց ասաց. ապա դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանքովն անց էք կենում ձեր աւանդութեան պատճառաւն:

4 Ինչո՞ւ որ Աստուած ասաց. [թէ] քո հօրըդ եւ մօրըդ պատուի՛ր[4]:

5 Ու նա որ իրան հօրըն կամ մօրըն կըըամբասէ, մահո՛վ պիտի մեռնի[5]:

6 Ու դուք ասում՛ք՝ [թէ] ո՛վ որ իրան հօրըն կամ մօրըն ասէ՝ [թէ] պատարագ է էն[6], որ ինձանից պիտի շահվիս, եւ չի պատուէ իրան հօրըն եւ իրան մօրըն. եւ (էսպէս) ձեր աւանդութեան համար՝ Աստուծոյ խօսքըն ոչնչի տեղ էք դնում:

7 Կեղծաւորնե՛ր՝ լա՛ւ մարգարէացաւ ձեզ վերայ Եսային՝ եւ ասում է:

8 Այս ժողովուրդս պատուում է ինձ[8]. եւ իրանց սիրտն ինձանից հեռացած չկիսած է:

9 Օգուտ տալն են պաշտում ինձ. մարդկանցից պատուիրած վարդապետութիւնները են սովորցնում[9]:

10 Ու ժողովուրդներըն իրան մօտ կանչեց, եւ նորանց ասաց. լսեցէ՛ք

---

[12] Մ-ղ. բ · 7: Մ-բէ. ա · 1: Մ-ղէ · ժզ · 16: Ի՛ղ · 63: Գ-է · դ · 41: Ց-Վ· ա · 49: ղ · 69 ժա · 27: Գ-բէ · ը · 37: Հ-ա՛ղ · ա · 4: [13] Մ-բէ · ղ · 53: [14] Մ-ղէ · ի՛ · 20: Մ-բէ · գ · 10: Գ-է · ղ · 19: Գ-բէ · ժի՛ · 12: [1] Մ-բէ · է · 1: [2] Մ-բէ · է · 5: [3] Ե-Ա՛ · բ · 8: [4] Ե՛ր · ի՛ · 12: Գէ-գ · ժի՛ · 3: բ Օբէ՛ · է · 16: Ա-է · իգ · 23: Եբէ՛ · ղ · 2: [5] Ե՛ր · իա · 17: Գէ-գ · ի· 9: բ Օբէ՛ · իէ · 16: Ա-է · ի· 20: ձ · 17: [6] Մ-բէ · է · 11, 12: [7] Մ-բէ · է · 6: [8] Ե-ղ· իի՛ · 13: Եբէ՛ · լգ · 31: [9] Ե-ղ· իի՛ · 13: Կ-Ա՛ · բ · 18–22: Տէգ · ա · 14:

եւ մեքենէրդ առէք[10]։

11 Մի՛ թէ ինչ որ մտնումէ բե-
րանն[11]՝ պղծումէ մարդոյն, այլ ինչ
որ բերանիցն դուրս է գալիս, էն է
որ մարդոյն պղծումէ։

12 Յն ժամանակն նորա աշա-
կերտներն եկին՝ նորան ասացին.
գիտումէս՝ որ փարիսեցիքն երբոր էն
բանըն լսեցին, գայթակղվեցան։

13 Նա պատասխան տուաւ նորանց
եւ ասաց. ամէն տունկ[12] որ իմ երկ-
նաւոր Հայրս չըտընկեց, թող պոկվի։

14 Թո՛ղ տուէք նորանց՝ կոյր են
կուրերի առաջնորդ[13]. կոյրն երբոր
կուրին առաջնորդէ, կըմնըրվի՛ եւ
երկուքն էլ փոսի մէջ կըընկնին։

15 Պետրոս նորան պատասխան
տուաւ՝ եւ ասաց. էս առակըս մեզ
մեկնի՛ր[14]։

16 Յիսուս ասաց. դուք էլ դեռ
անխելք էք[15]։

17 Չէ՞ք խմնում, թէ ամէն
բան որ բերանն է մտնում, փորն է
գնում[16] եւ դուրս է գալիս։

18 Բայց էն որ բերանիցն դուրս
է գալիս[17], յաստուկ սրտիցն է գա-
լիս՝ եւ էն է մարդոյն պղծում։

19 Ինչուո՛ր սրտիցն են դուրս գա-
լիս չար խորհուրդներ[18]՝ սպանու-
թիւններ, շնութիւններ, պոռնկու-
թիւններ, գողութիւններ, սուտ վը-
կայութիւններ, հայհոյութիւններ։

20 Յա՛ ամէնն է՝ որ մարդոյն պըղ-
ծումէ. բայց անլուայ ձեռքով ու-
տելն՝ մարդոյն չի պղծում։

21 Եւ Յիսուս էնտեղից դուրս ե-
կաւ գնաց տիւրոսի եւ սիդօնի կող-
մերն[19]։

22 Եւ ահա մին քանանացի կին
նորանց երկրիցն դուրս եկաւ՝ աղա-
ղակումէր եւ ասում՝ Տէր՝ որդի
դաւթի՛ ինձ ողորմեա՛. իմ աղջիկս
սաստիկ դիւահարվումէ։

23 Եւ նա պատասխան չը տուաւ
նորան. եւ նորա աշակերտներն ե-
կին նորան աղաչումէին՝ եւ ասում՝
արձակի՛ր նորան. ինչուո՛ր մեր ետե-
ւէն աղաղակումէ։

24 Նա պատասխան տուաւ եւ ա-
սաց. ես ուրիշ տեղ չեմ ուղարկ-
վել[20] եթէ ոչ իսրայէլի տան կո-
րած ոչխարներին մէտ։

25 Նա էլ մտեցաւ նորան եր-
կրպագումիւն էր անում եւ ա-
սումէր. Տէր՝ ինձ օգնի՛ր։

26 Պատասխան տուաւ նորան՝ եւ
ասաց. լաւ չէ՝ երեխաների հացըն
առնել՝ եւ շներին քցել[21]։

27 Նա էլ ասաց. ուղղորդ է Տէր՝
ինչուո՛ր շներն էլ իրանց տիրոջ
սեղանին ընկած փշրանքներիցն էն
կերակրվումէ։

28 Յն ժամանակն Յիսուս պա-
տասխան տուաւ նորան՝ եւ ասաց.
ո՛վ կին դու՝ մեծ է քո հաւատքդ.
ինչպէս որ ուզումես՝ էնպէս լինի
քեզ. եւ նորա աղջիկն բժշկվեցաւ
հենց էն ժամումն (աւհալո՛ն)։

29 Եւ Յիսուս էն տեղից գնաց[22]
գալիլեացոց ծովի եզրն[23] (ղաղա՛ն)
եկաւ. եւ վերելաւ սարն, եւ էնտեղ
նստեց։

[10] Մարկ. է. 14։ [11] Գործ. ժ. 15։ Հռոմ. ժգ. 14. 17. 20։ ա Տիմ. գ. 4։ Տիտ. ա. 15։
[12] Ցած. ժե. 2։ ա Կորնթ. գ. 12. Եսայ.։ [13] Եսայ. թ. 16։ Մատ. բ. 8։ Մարկ. իգ. 16։
Ղուկ. զ. 39։ [14] Մարկ. է. 17։ [15] Մարկ. ժզ. 9։ Մարկ. է. 18։ [16] ա Կորնթ. գ. 13։
[17] Ցած. գ. 6։ [18] Ծննդ. գ. 5։ ը. 21։ Ելեւմ. զ. 14։ Երեմ. ժե. 9։ Մարկ. է. 21։ [19] Մարկ.
է. 24։ [20] Մատ. ժ. 5. 6։ Գործ. գ. 25. 26։ ժգ. 46։ Հռոմ. ժե. 8։ [21] Մարկ. է. 6։
Փիլիպ. գ. 2։ [22] Մարկ. է. 31։ [23] Մարկ. գ. 18։

30 Ա՛ւ շատ ժողովուրդներ նորա մծո՛ եկին[24], որ իրանց հետ ունէին հաղեր՝ կուռքեր՝ Համբրներ (լեռներ)՝ միահողմանիներ, եւ ուրիշ շատեր էլ. եւ նորանց քցեցին նորա ոտները, եւ նորանց բժշկեց։

31 Մինչեւ որ զարմանում էին ժողովուրդները որ տեսնում էին, որ համրներն խօսում էին, կաղերն գընում էին, միակողմանիները բժշկվում էին, կուրերն տեսնում էին, եւ փառաւորում էին իսրայէլի Աստուածը։

32 Ա՛ւ Յիսուս աշակերտներն իրան մծո՛ կանչեց եւ ասաց[25]. խղճամ գալիս է էս ժողովրդիս վերայ. ինչուո՛ր երեք օր է՝ որ իմ մծո՛ են, եւ բան չունին որ ուտեն. եւ չեմ ուզում նորանց սոված ճանապարհ քցել. որ չըլինի թէ սովամահ լինեն ճանապարհում։

33 Աշակերտներն նորան ասացին[26]. ապա մեզ էստեղ անապատում (չօլում) ո՞ր տեղից էնչափ հաց կըլինի՝ որ էդքան ժողովուրդըդ կշտացնենք։

34 Ա՛ւ Յիսուս նորանց ասաց. քանի՞ հատ հաց ունէք. եւ նորանք ասացին՝ եօթը, եւ քիչ ձկներ։

35 Ա՛ւ հրամեց տուաւ ժողովրդին՝ որ գետնի վերայ նստին։

36 Ա՛ւ էն եօթը հացըն՝ եւ ձկներըն[27] առաւ, գոհացաւ[28] եւ կըտրեց եւ աշակերտներին տուաւ՝ եւ նորանք էլ ժողովրդին։

37 Ա՛մէնքն կերին եւ կշտացան։ եւ աւելցած կտորներին եօթն զըմոց լիքն վերկալան։

38 Ա՛ւ նորանք որ կերին՝ չորս հազարի չափ մարդիք էին. կանանց ու երեխաներից զատ (չհամա)։

39 Ա՛յրոր էն ժողովուրդներըն արձակեց[29]. մտաւ նաւն եւ եկաւ մադդաղէի կողմերն։

## ԳԼ · ԺՕ

1 Փարիսեցիքն եւ սադուկեցիքն նշան խնդրում են։ 6 Յիսուս իրան աշակերտներն փարիսեցոց եւ սադուկեցոց խմորից զգուշացնում։ 13 Ժողովուրդի կարծիքն Քրիստոսի վերայ։ 16 Պետրոսի դաւանութիւնն։ 21 Յիսուս իրան մահն առաւօտ ցոյց կըտայ։ 23 Պետրոսն յանդիմանում՝ որա դեմ հակառակելուն համար։ 24 Եւ իրան եաւէն երթալ ուզողներին խրատ է տալիս որ իրանց խաչը վեր առնեն։

1 Ա՛ւ փարիսեցիքն եւ սադուկեցիքն նորա մծո՛ եկին, եւ փորձելով նորանից խնդրում էին՝ որ երկինքից մին նշան ցոյց տայ իրանց։

2 Ա՛ւ պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց. որ ժամանակ իրիկուն է լինում՝ ասում էք թէ պարզ կըլինի. ինչուո՛ր երկինքն կարմրացել է։

3 Ա՛ւ առաւօտն (ասում էք օր մըրիկ (գողովիլ տոմէ) (կըլինի.) ինչու որ երկինքն տրամադիր կարմրացել է։ Ա՛պա երկնքի երեսըն կարող էք քննել՝ բայց էս ժամանակիս նշանըն չէք կարող հասկանալ։

4 Չար եւ շնացող ազգն նշան է խնդրում[2]. եւ նշան չի տրվիլ նորան, բայց միայն յովնան մարգարէի նշանն. եւ նորանց թողից եւ գնաց։

---

[24] Նաւղ. լե. 5, 6։ Մարկ. ժա. 5։ Ղուկ. է. 22։ [25] Մարկ. ը. 1։ [26] գ Թագ. գ. 43։ [27] Մարկ. ժգ. 19։ [28] ա Թագ. թ. 13։ Ղուկ. իբ. 19։ [29] Մարկ. ը. 10։ [1] Մարկ. ժբ. 38։ Մարկ. ը. 11։ Ղուկ. ժա. 16։ ժբ. 54–56։ ա Կորնթ. ա. 22։ [2] Մարկ. ժբ. 39։

5 Աշակերտներն էլ գնացին են
կողմն[3], եւ մտացան Հայ վերատնել։
6 Յիսուս նորանց ասաց. տեսէք
եւ զգոյշ կացէք սադուկեցոց եւ փա-
րիսեցոց խմորէն[4]։
7 Նորանք իրանց միջումն միտք
էին անում՝ եւ ասում էին. Թէ հաց
չենք վերկալել։
8 Յիսուս իմացաւ եւ ասաց. ով
Թլփատաւանե՛ր՝ ինչո՞ւ էք ձեր մէջ-
քումն հոգս անում՝ Թէ հաց չունինք։
9 Դեռ չէք իմանում[5] եւ մտաք-
ներդ չէք բերում էն հինգ հա-
ցըն հինգ հազար մարդկանցն, եւ
քանի զամոց վերաւէք։
10 Չո՞ւ էլ են եօթըն հացըն
չորս հազար մարդկանցն[6], եւ քանի
զամոց վերաւէք։
11 Ուրեմն ինչպէս չէք իմանում՝
որ հացի համար չասացի ձեզ՝ ըղ-
գոյշ կացէք՝ փարիսեցոց եւ սադու-
կեցոց խմորիցն։
12 Յն ժամանակն հասկացան որ
չասաց՝ Թէ խմորիցն ղգոյշ կենան,
այլ փարիսեցոց եւ սադուկեցոց օ-
րէնքիցն։
13 Յե Յիսուս դուրս գնաց փի-
լիպպեայ կեսարիայի կողմերն, եւ ա-
շակերտներին հարցնում էր եւ ա-
սում էր. Թէ մարդիկն ինձ համար
ով են ասում՝ որ որդին մարդոյ լի-
նի[7]։
14 Յե նորանք ասացին. միոն (ա-
սում) Թէ յօհաննէս մկրտիչն է[8].
ուրիշներն էլ՝ Թէ եղիան. եւ էկան
էլ՝ Թէ երեմիան, կամ մարգարէ-
ներիցն միոն։
15 Յիսուս նորանց ասաց. պայ
դուք ով էք ասում ինձ համար որ
լինիմ։
16 Սիմոն պետրոսն պատասխան
տուաւ նորան եւ ասաց. դու ես քրէ-
ստոսն՝ կենդանի Աստուծոյ որ-
դին[9]։
17 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ
ասաց նորա. երանի քեզ՝ յօնանի
որդի սիմոն, ինչուղո՝ մարմին եւ ա-
րիւն[10] քեզ չի յայտնեց, բայց իմ
Հայրս[11] որ երկինքումն է։
18 Յե ես ասում քեզ, որ դու
ես վէմ[12], եւ էդ վիմիդ[13] վերայ իմ
եկեղեցիս կըշինեմ, եւ դժոխքի
դռներն չեն յաղթել դորան[14]։
19 Յե երկնքի արքայութեան բա-
նալիքըն[15] քեզ կըտամ, եւ էն որ
երկրի վերայ կըկապես, երկնքումն
էլ կապված կըլինի. եւ էն որ երկրի
վերայ կարձակես, երկնքումն էլ ար-
ձակված կըլինի։
20 Յն ժամանակն աշակերտներին
պատուիրեց՝ որ իսկի միոն մարդոյ չա-
սեն[16]. Թէ նա քրիստոսն է։
21 Յերանից եւեւ Յիսուս սկսեց
աշակերտներին յայտնել[17], Թէ
պէտք է նորան՝ որ երուսաղէմ գնայ
եւ քահանայապետներիցն եւ կար-
դացօղներիցն եւ ժողովրդի ծերա-
րիցն շատ չարչարանքով չարչարվի՝
սպանվի եւ երեք օրումն յարութիւն
առնի։

---

[3] Մ-ի։ ը. 14։ [4] Ղ-ա։ Ժբ. 1։ [5] Մ-ի. ժգ. 17։ Ց-վ. ղ. 9։ [6] Մ-ի. ժե. 34։ [7] Մ-ի։ ը. 27։ Ղ-ա։ թ. 18։ [8] Մ-ի. ժգ. 2։ Ղ-ա։ թ. 7. 8. 9։ [9] Մ-ի. ժգ. 33։ Մ-ի։ ը. 29։ Ղ-ա։ թ. 20։ Ց-վ. ղ. 69։ ժա. 27։ Գ-ծ. ը. 37։ թ. 20։ ա Ց-վ. գ. 15։ ե. 5։ Եբր. ա. 2, 5։ [10] Եփես. բ. 8։ [11] ա Կ-ին. բ. 10։ Գ-ա. ա. 16։ [12] Ց-վ. ա. 42։ [13] Եփես. բ. 20։ Ց-ա-իա. 14։ [14] Ց-Է. լը. 17։ Ս-մ. թ. 13։ Ռէ. 18։ Ի-ա-լը. 10։ [15] Մ-ի. ժը. 18։ Ց-վ. ի. 23։ [16] Մ-ի. ժե. 9։ Մ-ի։ ը. 30։ Ղ-ա։ թ 21։ [17] Մ-ի. ի. 17։ Մ-ի։ ը. 31։ թ. 31։ ժ. 33։ Ղ-ա։ թ. 22։ ժը. 31։ իգ. 6, 7

22 Եւ պետրոս նորան սին կողմն տարաւ. եւ սկսաց նորա հետ հակառակիլ եւ ասել՝ քաւ լեցի քեզ Տէր՝ էդ բանդ չը լինի քեզ:

23 Եւ նա դարձաւ դէպի պետրոսն՝ եւ ասաց. յետ գնա՝ ինձանից սատանայ[18] ինձ գայթակղութիւն[19] ես. ինչուար՝ դու Աստուծոյ բաներըն միտք չես առնում՝ բայց մարդկանց բաներըն:

24 Եւն ժամանակն Յիսուս իրան աշակերտներին ասաց. թէ որ մին մարդ կամենում իմ ետեւէս գալ, նա թող իրան անձըն ուրանայ՝ եւ իրան խաչըն առնէ, եւ իմ ետեւէս գայ[20]:

25 Պատճառնոր՝ ով որ իրան անձըն կուզէ ապրեցնել, կկորցնէ նորան. եւ ով որ իրան անձըն կկորցընէ հինձ համար, կըգտնէ նորան[21]:

26 Ինչ օգուտ է մարդոյ որ ամէն աշխարհքըս ստանայ՝ եւ իրան անձին վնաս տայ. կամ թէ ինչ գին կըտայ մարդ՝ իրան անձըն փրկելոյ համար[22]:

27 Ինչուար՝ գալու է որդին մարդոյ իրան հօր փառքովն[23] իրան հրեշտակներին[24] հետ. եւ էն ժամանակն ամէն մէկին[25] հատուցումըն կըտայ իրան գործքերի չափովն:

28 Ամէնարիստն ասումեմ ձեզ, որ էստեղ լինօղներիցն մին քանիսն կան, որ մահ չեն տեսնիլ[26] մինչեւ որ որդին մարդոյ տեսնէն իրան թագաւորութեանովն եկած:

## ԻԷ·ԺԷ

1 Քրիստոսի կերպարանքն փոխվելն: 14 Լուսնոտ բժշկելն: 22 Իրան չարչարանքներն առաջուց կըպատմէ: 33 Եւ հարկ կըտայ:

1 Եւ վեց օրից հետու Յիսուս պետրոսին եւ յակոբին եւ նորա եղբայր յովհաննէսին իրան հետ առաւ, եւ նորանց առանձին մին բարձր սար հանեց[1]:

2 Եւ նորանց առաջին նորա կերպարանքն փոխվեցաւ՝ եւ նորա երեսն արեգական պէս լուսաւորվեցաւ, եւ նորա շորերն լուսոյ պէս սպիտակ էլան:

3 Եւ ահա մնէսէն եւ եղիան նորանց երեւեցան՝ որ նորա հետ խոսում էին:

4 Պետրոսն պատասխան առաւ եւ ասաց Յիսուսին. Տէր՝ լաւ է որ մենք էստեղ կենանք. թէ որ կամենաս, երեք տաղաւար (շատրը) կըշինենք՝ մինըն քեզ համար՝ մինըն մնէսէին, եւ մինըն եղիային:

5 Եւ դեռ քանի որ նա խոսում

[18] ք ՃԽԱ· ԺԱ· 23: [19] Հռովմ· ը· 7: [20] Մատթ· ԺԸ 38: Մարկ· ը· 34: Ղուկ· թ· 23: ԺԴ· 27: Գործ· ԺԴ· 22: ա Թես· գ· 3: բ Տիմ· գ· 12: [21] Ղուկ· ԺԷ· 33: Յովհ· ԺԲ· 25· [22] Սաղմ· խլթ· 7, 8: [23] Մատթ· իգ· 6: Մարկ· ը· 38: Ղուկ· թ· 26: [24] Գործ· է· 10: Զաք· ԺԴ· 5: Մատթ· իե· 31: Յուդ· 14: [25] Յովհ· լդ· 11: Սալմ· կը· 12: Եսայ· իգ· 12: Երեմ· ԺԷ· 10: լբ· 19: Հռովհ· ը· 6: ա Կորնթ· գ· 8: բ Կորնթ· ե· 10: ա Պետր· ա· 17: Յայտ· բ· 23: իբ· 12: [26] Մատթ· թ· 1: Ղուկ· թ· 27: [1] Մարկ· թ· 2: Ղուկ· թ· 28:

մէր[2]՝ ահա մին լուսաւոր ամպ շուրջ արաւ ետրանց վերայ. էն ամպիցին ձայն էլաւ՝ եւ ասաց. դա է իմ սիրե-լի[3] որդին՝ որ գորան հաւանել եմ՝ դորան ականջ դրէք[5]:

6 Երբոր աշակերտանէրն լսեցին[6], իրանց երեսներին վերայ վէր ըն-կան. եւ շատ վախեցան:

7 Յս Յիսուս մօտեցաւ՝ ետրանց բռնեց[7] եւ ասաց. վերկացէք՝ եւ մի վախենաք:

8 Իրանց աչքերըն բարձրացրին եւ ոչ ով չի տեսին, քայց միայն Յիսուսին:

9 Յս երբոր էն սարիցին վէրէին գալիս, Յիսուս նորանց պատուէր տուաւ[8] եւ ասաց. էդ տեսիլքըդ իսկի մին մարդոյ չասէք, մինչեւ որ որդին մարդոյ մեռելնէրի միջիցն յարու-թիւն առնէ:

10 Աշակերտանէրն նորան հարցրին եւ ասացին. ի՞նչպէս է՝ որ կարդա-ցողնէրն ասումեն[9]՝ թէ առաջ եղիան պէտք է գայ:

11 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց. եղիան կըգայ՝ եւ ա-մէն բան կըհաստատէ[10]:

12 Բայց ասումեմ ձեզ՝ որ եղիան էնց հիմիկ եկած է[11] եւ նորան չը-ճանաչեցին. այլ ինչ որ ուզեցին՝ նո-րան արին[12]. էնպէս էլ որդին մար-դոյ նորանցից պիտի չարչարվի[13]:

13 Յն ժամանակն աշակերտանէրն հասկացան[14] թէ յօհաննէս մկրտչին համար ասաց նորանց:

14 Յս երբոր ժողովըրդի մէջն ե-կին[15], մին մարդ մօտեցաւ՝ ծունր էր դնում եւ ասումէր. Տէր իմ որդյա ողորմեա. որ լուսնոտումէ՝ եւ սաս-տիկ հիւանդանումէ. շատ անգամ կրակն է ընկնում. եւ մին քանի ան-գամ էլ ջուրն:

15 Յս նորան քո աշակերտանէրի մօտն բերի՝ եւ չըկարացին բժշկել:

16 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. ո՛վ անհաւատ եւ ծուռ ազգ. մինչեւ երբ ձեզ հետ պիտի լինիմ՝ մինչեւ երբ ձեզ պիտի համբերեմ. նորան ինձ մօտ բերէ:

17 Յս Յիսուս նորան սաստեց. եւ դեւն նորանից դուրս եկաւ, եւ տղան հենց էն ժամումն (սահմանում) բը-ժշկվեցաւ:

18 Յն ժամանակն աշակերտանէրն առանձին մօտ եկին. եւ Յիսուսին ասացին. մենք ինչու՞ չըկարացինք հանել նորան:

19 Ա՛յս էլ նորանց ասաց. ձեր թերահաւատութեան համար: Ա՛մէն-մերիտըն ասումեմ ձեզ՝ թէ որ մա-նանեխի (խարդալ) հատի չափ հա-ւատ ունենաք[16], եւ էս սարիս ասէք՝ էստեղից էնտեղ փոխվիր կըփոխվի. եւ իսկի մին բան անկարելի չէ լինել ձեզ համար:

20 Ա՛յդ թէ՝ էս ցեղս ուրիշ բանով դուրս չի գալ՝ եթէ ոչ ա-ղօթքով եւ պասով:

21 Յս գնաքանի որ նորանք գա-լիլեայի մէջն ման էին գալիս[17], Յի-սուս նորանց ասաց. որդին մարդոյ մարդկանց ձեռքն պէտք է մատնվի:

22 Յս նորան կըսպանեն՝ եւ երեք օրումն յարութիւն կ՚առնէ. եւ նո-

---

[2] Պետր. ա. 17: [3] Մատթ. գ. 17: Մարկ. ա. 11: Ղուկ. գ. 22: [4] Յոյս. խր. 1: [5] Որդ. ժբ. 15, 19: Գործ. գ. 22, 23: [6] Պետր. ա. 18: [7] Դան. ը. 18: [8] Մատթ. ժբ. 23: Մարկ. ը. 30: [9] Մատթ. գ. 5: Մատթ. ժա. 14: Մարկ. թ. 11: [10] Մատթ. գ. 6: Ղուկ. ա. 16, 17: Գործ. գ. 21: [11] Մատթ. ժա. 14: Մարկ. թ. 12, 13: [12] Մատթ. ժգ. 3, 10: [13] Մատթ. ժղ. 21: [14] Մատթ. ժա. 14: [15] Մարկ. թ. 14: Ղուկ. թ. 37: [16] Մատթ. իս. 21: Մարկ. ժա. 23: Ղուկ. ժէ. 6: ա Կորնթ. ժբ. 9: ժգ. 2: [17] Մատթ. ճղ. 21: ի. 17: Մարկ. ը. 31: թ. 30, 31: ժ. 33: Ղուկ. թ. 22, 44: ժբ. 31: իգ. 6, 7:

բանք չառ արտեցան :

23 Երբոր նորանք եկին կափառնայում[18], երկդրամեան հարկ ուղղողներն[19] եկին պետրոսի մօտ եւ ասացին. ձեր վարդապետն երկդրամեանըն չի՞ տալիս, եւ նա ասաց՝ Հա:

24 Երբոր տունն մտաւ, Յիսուս նորանից առաջ սկսեց եւ ասաց. սիմոն՝ ինչպէս է երեւում քեզ. ազգերի թագաւորներն ումի՞ց են առնում գնահարկըն կամ տուրքըն, իրանց որդիքներից, թէ օտարներից :

25 Երբոր ասաց՝ թէ օտարներից. Յիսուս նորան ասաց. ապա ուրեմն՝ ազատ են որդիքներն :

26 Այլ որ նորանց չգայթակղացնենք՝ գնա ծովն եւ ձանկըն քըցիր, եւ առաջին ձուկըն որ դուրս կրգայ՝ առ, նորա բերանն բաց՝ եւ մին սատեր (ϣեկել անուն է) կրգըտնես՝ եւ էն առ եւ նորանց տուր իմ ու քո տեղ :

## ԻԷ. ԺՐ.

1 Քրիստոս Խրատում է իրան աշակերտներին որ խոնարհ եւ միամիտ լինին. 7 Գայթակղութիւն աշխարհս եւ գայթակղողներն. 15 Կրսովորցնէ թէ մեղ գէմ մեղք անողներին հետ ինչպէս վարվում ենք: 21 Եւ քանի անգամ պէտք է թողութիւն տալ մեր եղբայրներին. 23 Իրան ծառաներից հաշիւ ուզող մին թագաւորի առակովն էս ցուցնում, 32 Որ իրան եղբօր չներողացող ծառան կպատժէ:

1 Էն օրում աշակերտներն Յիսուսի մօտ եկին՝ եւ ասացին. ով զանից ոմն մեծ կլինի երկնքի արքայութեան մէջն[1] :

2 Եւ Յիսուս մին երեխայ կանչեց իրան մօտ՝ եւ նորան կանգնացրուց նորանց միջումն :

3 Եւ ասաց. ճշմարիտըն ասում եմ ձեզ. թէ որ չդառնաք եւ չըլինիք երեխաների նման[2], չէք մտնիլ երկնքի արքայութեանն :

4 Ուրեմն ով որ իրան անձըն էս երեխայիս նման կը խոնարհացնէ[3], նա է մեծ երկնքի արքայութեան մէջն :

5 Եւ ով որ մին էսպէսի երեխայ իմ անունովս կընդունի[4], նա ինձ կընդունի :

6 Եւ ով որ կըգայթակղացնէ էս փոքրներից մինըն[5] որ ինձ հաւատացել են, լաւ էր նորան՝ որ մին իշու ջաղացի քար նորա վըզին կախվի եւ ծովի խոր տեղն խեղդվի :

7 Վայ աշխարհիս՝ գայթակղութիւններին համար. պէտք է որ գայթակղութիւններ գան[6], բայց վայ էն մարդուն[7] որ նորա ձեռովն կըգայ գայթակղութիւնն :

8 Եւ թէ որ քո ձեռք կամ ոտք քեզ գայթակղացնէ, կարկր նորան՝ եւ քեզանից դէն քցիր՝ լաւ է քեզ՝ որ մինձեռնանի կամ կաղ մտնես կեանքն, քանիմէ երկու ձեռք եւ երկու ոտք ունենաս՝ եւ յաւիտենական կրակին մէջ ընկնիս[8] :

[18] Մատ. ժ. 33: [19] Ելք. լ. 13: ղե. 26: [1] Մատ. ժ. 33: Ղուկ. ժ. 46: իբ. 24: [2] Ա-ղ. ճղա. 2: Մատ. ԺԸ. 14: Մատ. ժ. 14: Ղուկ. ԺԸ. 16: ա կորնթ. ԺԴ. 20: ա պետր. բ. 2: [3] Մատ. ի. 27: իԴ. 11: [4] Մատ. ԺԸ. 42: Ղուկ. ժ 48: [5] Մատ. ժ. 42: Ղուկ. ԺԸ. 1. 2: [6] Ղուկ. ԺԷ. 1: ա կորնթ. ԺԱ. 19: [7] Մատ. իԴ. 24: [8] Մատ. է. 29. 30: Մատ. ժ. 42. 45:

9 Այլ թէ որ քո աչքդ քեզ պայ-
թակղացնէ, հանիր նորան՝ եւ քե-
զանից քոյիր · լաւ է քեզ՝ որ մինաչ-
քանի մտնես կեանքն, քանթէ եր-
կու աչք ունենաս՝ եւ գահնիի կրակն
ընկնես:

10 Օգիշ կացէք՝ որ էս փոքրնե-
րիցս միոյն չանարգէք. ասումեմ
ձեզ՝ որ նորանց հրեշտակներն[9] եր-
կնքումն միշտ իմ Հօրս երեսըն[10]
տեսնումեն՝ որ երկնքումն է:

11 Պատճառնոր՝ որդին մարդոյ ե-
կաւ՝ որ ապրեցնէ կորածըն[11]:

12 Ի՞նչպէս է երեւում ձեզ՝ թէ
որ մին մարդ հարիւր ոչխար ունե-
նայ[12] եւ նորանցից միներվի, նա
չի՞ թողել իններսան եւ իրեն ոչխարըն
սարերումն, եւ գնալ էն մոլորվածին
մտնգալ:

13 Այլ երբոր կըգտնէ նորան.
ճշմարիտըն ասումեմ ձեզ, որ նորա
վերայ աւելի ուրախ կըլինի, քան
էն իններսան եւ իրենն վերայ, որ չեն
մոլորված:

14 Այսպէս էլ իմ Հայրս՝ որ եր-
կնքումն է, չի կամենում՝ որ էս փո-
քրներիցս միներն կորչի:

15 Թէ որ քո եղբայրդ քեզ դէմ
մեղք անէ[13], գնա նորան յանդի-
մանիր՝ երբոր դու եւ նա միտակ լի-
նէք. թէ որ լսէ քեզ՝ քո եղբայ-
րըդ շահեցիր[14]:

16 Իսայց թէ որ չի՛ լսէ քեզ, մին
կամ երկու ուրիշըն էլ քեզ հետ
առ. ինչուր՝ երկու կամ երեք վե-
կայի բերանով ամէն բան կըհաս-
տատվի[15]:

17 Իսայց թէ որ նորանց էլ չի՛ լսէ,
եկեղեցոյն ասա՝ ապա թէ որ եկե-
ղեցոյն էլ չի՛ լսէ, թող լինի քեզ
համար ինչպէս հեթանոս կամ մաք-
սաւոր[16] (Ա՛ղտ-ախչ):

18 Ճշմարիտըն ասումեմ ձեզ,
թէ էն՝ որ երկրիս վերայ կըկապէք,
երկնքումն էլ կապված կըլինի[17],
եւ էն՝ որ երկրիս վերայ կարձակէք,
երկնքումն էլ արձակված կըլինի:

19 Այս էլ ասումեմ ձեզ՝ թէ որ
ձեզանից երկու հոգի երկրի վերայ
միաբան լինին[18] ամէն բանի համար,
ինչ որ խնդրեն՝ կըլինի[19] նորանց իմ
Հօրից՝ որ երկնքումն է:

20 Ինչուր՝ որ տեղ երկու կամ
երեք հոգի իմ անունովս ժողովված
լինին՝ էնտեղ ես նորանց մէջն եմ:

21 Այն ժամանակն պետրոս նորա
մօտ եկաւ եւ ասաց. Տէր թէ որ
իմ եղբայրս ինձ դէմ մեղք անէ,
քանի անգամ պէտք է թողութիւն
տամ նորան. մինչեւ եօթն անգամ[20]:

22 Յիսուս նորան ասաց. չեմ ա-
սում քեզ՝ թէ մինչեւ եօթն ան-
գամ, բայց մինչեւ եօթանասուն ան-
գամ եօթն[21]:

23 Արդեամար երկնքի արքայու-
թիւնն նմանվեցաւ մին թագաւոր
մարդոյ, որ ուզեցաւ իրան ծառա-
ներիցն համար (Հէսապ) առնել:

24 Այլ երբոր սկսեց առնել, նո-
րա մօտ մին տասն հազար քանքարի
պարտական բերին:

25 Այրբոր չունէր վճարել, նորա
տէրն հրամայ տուաւ՝ որ նորան եւ
նորա կիներն եւ նորա որդիքըն եւ ա-
մէն ինչ որ ունէր ծախեն[22] եւ
պարտքըն վճարէ:

[9] Ա՛ղ. լգ · 7 : ժգ. 7: Եբր. ա. 14: [10] Եր. ա. 14: Ղ՛ա. ա. 19: [11] Ղ՛ա. Թ. 56: ԺԹ. 10: Ցվ. գ. 17: ԺԹ. 47: [12] Ղ՛ա. ԺԵ. 4: [13] Ղ՛ա. ԺԹ. 17: Ղ՛ա. ԺԵ. 3: [14] Ցա. Ե. 20: ա Պետր. գ. 1: [15] բ Օրէն. ԺԵ. 6: ԺԹ. 15: Ցվ. ը. 17: բ Կոր. ԺԳ. 1: Եբր. Ժ. 28: [16] Հռ. ԺԶ. 17: ա Կոր. Ե. 9: բ Թս. գ. 6, 14: բ Ցվ. 10: [17] Մտ. ԺԶ. 19: Ցվ. ի. 23: ա Կոր. Ե. 4, 5: [18] Մտ. Ե. 24: [19] ա Ցվ. գ. 23: Ե. 14: [20] Ղ՛ա. ԺԵ. 4: [21] Մտ. Զ. 14: Մրկ. Ժ. 25: Կղ. գ. 13: [22] ղ Թագ. գ. 1: Նեհ. Ե. 8:

26 Եւ ծառան երեսին վերայ ընկ-
նելով երկրպագութիւն էր անում
նորան եւ ասում. երկայնամիտ կաց
ինձ համար, եւ ամէնքն կը հատու-
ցանեմ քեզ:

27 Տէրն խղճաց էն ծառայի վե-
րայ՝ նորան արձակեց, եւ փոխքն էլ
բաշխեց նորան:

28 Եւ երբոր էն ծառան դուրս ե-
կաւ՝ իրան ընկեր ծառաներից մինն
գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան
պարտական էր, եւ նորան բռնեց՝
խեղդուելիք եւ ասում. վճարիր ինձ
ինչ որ պարտական ես:

29 Պա էն ընկեր ծառան՝ նորա
ոտներն ընկաւ, նորան աղաչում էր
եւ ասում էր, երկայնամիտ կաց ինձ
համար՝ եւ կը հատցընեմ քեզ:

30 Եւ նա չէր կամենում, այլ գը-
նաց՝ նորան քցից բանան (ղընդան)
մինչեւ որ պարտքն վճարէ:

31 Երբոր նորա ընկեր ծառաներն
տեսին ինչ որ էլաւ, շատ տրտմեցան՝
եւ եկին ամէն ինչ որ էլաւ, իրանց
տիրոջն յայտնեցին:

32 Էն ժամանակն իրան տէրն
կանչեց նորան եւ ասաց. ով չար ծա-
ռայ՝ ես ամէն պարտքդ բաշխեցի
քեզ, որովհետեւ դու աղաչեցիր ինձ:

33 Պէտք չէր քեզ էլ՝ որ քո ընկեր ծառային ողորմէիր՝ ինչ-
պէս որ ես քեզ ողորմեցայ:

34 Եւ նորա տէրն բարկացաւ՝ եւ
նորան մատնեց դահիճներին (ճեղ-
լապէդներ) ձեռքն, մինչեւ որ ամէն
պարտքն վճարէ:

35 Նոյնպէս էլ իմ Հայրս որ եր-
կնքումն է, ձեզ կանէ[23], թէ որ դուք
ամէն մէկդ իրան եղբօրն՝ ձեր բոլոր
սրտիցն չը թողէք նորանց յանցանքն:

## ԳԼ· ԺԹ·

2 Բրիտասի հետանդներ բժշկէլն, 3 Իշ թողլոյ համար փարիսեցոց պատասխան կը-
տայ, 10 Ցոյց կըտայ թէ կարդվելն երբ հարկաւոր է, 13 Երեխաներն ընդունում, 16 Կը-
առվորցնէ պատանիին թէ յաւիտենական կեանքն ինչպէս կարող է ժառանգել, 20 Նո-
թէ ինչպէս կարող է կատարեալ լինել, 23 Իրան աշակերտներին ասում թէ որչափ դժ-
ուար է հարուստի Աստուծոյ արքայու թիւնն մտնել, 27 Եւ վարձր խոստ կըտայ նորանց,
որ իրան եաւէն կըզնան ամէն բան թողելով:

1 Եւ էլաւ՝ երբոր Յիսուս էս
խոսքերըս վերջացրուց[1], գալիլեայի-
ցըն գնաց՝ եւ Հրէաստանի (Ջհու-
պաստանէ) կողմերն եկաւ, յորդա-
նանի էն կողմն:

2 Եւ շատ ժողովուրդներ նորա
ետեւէն գնացին[2] եւ նորանց էնտեղ
բժշկից:

3 Եւ փարիսեցիքն նորա մօտ ե-
կին՝ նորան փորձումէին եւ ասումէին՝
թէ արժա՞ն է մին մարդոյ՝ որ իրան
կինըն բաց թողէ ամէն պէտսի (առէ-
ի) համար որ լինի:

4 Նորանց պատասխան տուաւ եւ
ասաց. դուք չէը կարդացել՝ թէ նա
որ սկըզբիցն ստեղծեց[3] նորանց արու
(ոչխ) եւ էգ արաւ, եւ ասաց:

5 Որսհամար մարդն իրան հայ-
րըն եւ մայրըն կըթողէ եւ իրան կըն-
կան հետն կըգնայ[4] եւ երկուքն մին
մարմին կը լինին[5]:

6 Նորանից երկու չեն, այլ մին

[1] Ա-ած· իա· 13: Մ-ոթ· ղ· 12: Մ-բլ· ժա· 26: Յ-ի· բ· 13: [1] Մ-բլ· ժ· 1: Յ-վհ· ժ·
40: [2] Մ-ոթ· իբ· 15: [3] Ծննդ· ա· 27: հ· 3: Մ-ղ· բ· 15: [4] Ծննդ· բ· 24: Մ-բլ· ժ·
5-9: Եփես· հ· 31: [5] ա կ-նթ· ղ· 16: հ· 2:

մարմին են. ապա էն որ Աստուած միաւորեց, թող մարդն չքանկէ:

7 Յորան ասացին. ապա ինչու՞ մեսէն պատուիրեց մեզ՝ որ դուրս անելոյ թուղթ տանք եւ բաց ձգելնք[6]:

8 Յորանց ասաց. մեսէս ձեր քարտասրտութեան համար պատուէր տուաւ ձեզ՝ որ ձեր կանայքն բաց թողէք, բայց սկզբէն էնպէս չէլաւ:

9 Ումեան թէ ասումեմ ձեզ՝ առանց ոճ որ իրան կինն բաց կըթողու[7], եւ ոչ թէ պոռնըկութեան պատճառաւն, եւ (մին) ուրիշըն կառնէ՝ նա շնութիւն է գործում. եւ նա էլ՝ որ էն բաց թողածըն կառնէ, շնութիւն է գործում:

10 Իրան աշակերտներն Յորան ասացին, թէ որ մարդոյ եւ կնկան մէջն էդպէսի ինչ դժուարութիւն կայ[8], լաւ է չի կարգվին:

11 Իւ նա ասաց Յորանց. ամէնքն կարող չեն էդ բանիդ[9], բայց նորանք՝ որ Նորանց տըվված է:

12 Ինչուր՝ կան նեղբինիք (խոպոնիք)՝ որ իրանց մոր փորէն էնպէս են ծնվել. եւ կան նեղբինիք՝ որ մարդ կանցից են էլած նեղբինիք. եւ կան նեղբինիք[10]՝ որ իրանց անձըն նեղբինի են արել երկնքի արքայութեան համար. ով որ կարող է տանիլ՝ թող տանի:

13 Ին ժամանակն երեխաներ բերին[11] Նորա մօտ՝ որ ձեռըն դնէ Նորանց վերայ եւ աղօթք անէ. եւ Նորա աշակերտներն սաստում էին Նորանց:

14 Ցիսուս ասաց. թոդ տուէք էդ երեխաներիդ՝ եւ դորանց մի արգելէք որ ինձ մօտ գան. ինչուր՝ էդպէսներին[12] է երկնքի արքայութիւն:

15 Իւ Նորանց վերայ ձեռք դրաւ՝ եւ էնտեղից դնաց:

16 Իւ ահա մին Նորա մօտ եկաւ[13] եւ ասաց. բարի վարդապետ՝ ես ի՞նչ բարի (բան) գործեմ՝ որ յաւիտենական կեանքըն ընդունիմ[14]:

17 Յա էլ Նորան ասաց. ի՞նչու ես ինձ բարոյ համար հարցնում. մին է բարի. թէ որ կամենում ես յաւիտենական կեանքն մտնել, պատուիրանքներըն պահիր:

18 Յորան ասաց՝ որըն. Ցիսուս Նորան ասաց. (էն որ ասում) մի սպանանիր, մի շնար, մի գողանար, մի սուտ վկայիր[15],

19 Պատուիր քո հօրըն եւ քո մօրըն[16], եւ քո ընկերըդ՝ քո անձիդ պէս սիրիր[17]:

20 Յն տղան Նորան ասաց. էդ ամէնըդ իմ երեխայութենիցն պահեցի. ապա ի՞նչ բանով եմ պակաս:

21 Ցիսուս Նորան ասաց. թէ որ կամենում կատարեալ լինիլ, գնա քո ապրանքըն ծախիր[18] եւ աղքատներին տուր, եւ դանձ (նապնայ) կունենաս երկնքումն՝ եւ իմ հետեւէս եկ:

22 Յրբոր տղան էս բանըս լսեց, տրտմեցաւ եւ գնաց. պատճառնոր՝ շատ ապրանք ունէր:

23 Ցիսուս աշակերտներին ասաց. ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որ հարուստ մարդն շատ դժուար կըմտնէ երկնքի արքայութիւնն[19]:

[6] ը Օրէն · կդ · 1: Մատթ · ե · 31: [7] Մատթ · ե · 32: Մարկ · ժ · 11: Ղուկ · ժզ · 18: ա Կորնթ · է · 10, 11: [8] Ածխ · իա · 19: [9] ա Կորնթ · է · 2, 7, 9, 17: [10] ա Կորնթ · է · 32, 34: Թագ · 5, 15: [11] Մարկ · ժ · 13: Ղուկ · ժը · 15: [12] Մատթ · ժը · 3: [13] Մարկ · ժ · 17: Ղուկ · ժը · 18: [14] Ղուկ · ժ · 25: [15] Ելք · ի · 13: ը Օրէն · ե · 17: [16] Մատթ · ժե · 4: [17] Ղեւտ · ժթ · 18: Մատթ · խը · 39: Հռովմ · ժգ · 9: Գալ · ե · 14: Յակ · բ · 8: [18] Մատթ · ղ · 20: Ղուկ · ժբ · 33: ժզ · 9: Գործ · բ · 45: գ · 34, 35: ա Տիմ · զ · 18, 19: [19] Մատթ · ժգ · 22: Մարկ · ժ · 24: ա Կորնթ · ա · 26: ա Տիմ · զ · 9, 10:

24 Ա՛ինէլ ասումեմ ձեզ. աւելի հեշտ է՝ որ ուղտն ասեղի ծակովն անցկենայ՝ քան թէ հարուստն երկնքի արքայութիւնն մտնէ։

25 Աշակերտներն երբոր լսեցին, շատ զարմացան եւ ասացին. ապա ո՞վ կարէ ապրիլ։

26 Յիսուս նորանց մտիկ տուաւ եւ ասաց. Եդ բանդ մարդկանց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ՝ ամէն բան կարելի է[20]։

27 Յն ժամանակն պետրոս պատասխան տուաւ[21] եւ ասաց նորան. ահա մենք ամէն բան թողինք եւ քո ետեւէդ եկինք[22]. ապա ի՞նչ պիտի լինի մեզ։

28 Յիսուս նորանց ասաց. Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ դուք որ իմ ետեւէս եկիք, իմ մեկել գալոյ ժամանակումն՝ երբոր որդին մարդոյ իրան փառաց աթոռի վերայ կընստի, դուք էլ տասներկու աթոռի վերայ կընստիք[23] եւ իսրայէլի տասներկու ցեղին կըդատէք։

29 Յն ամէն ով որ թողից տունը՝ կամ եղբարքը՝ կամ քրվեքը՝ կամ հայրը կամ մայրը կամ կինը կամ որդիքը կամ արտերը իմ անունիս համար[24], հարիւրապատիկ կառնէ՝ եւ յաւիտենական կեանքըն կըժառանգէ։

30 Շատ առաջինները յետինք կըլինին՝ եւ յետիններն առաջինք[25]։

## ԿԱ. Ի

1 Քրիստոս այդպէս միջնաբան աշակերտին օրինակով ցոյց կըտայ թէ Աստուած մենէն էլ պարտական չէ որ ամէն մենէն իրան աշխատութեան չափովն տայ։ 17 Իրան շարչարանքներն առաջուց ասումէ։ 20 Զեբեդէայի որդոց մոր տըված պատասխանով իրան աշակերտներն կըսովորցնէ որ խոնարհ լինին. 30 եւ երկու կոյր մարդկանց աչքերըն կըբանայ։

1 Պատճառնոր՝ երկնքի արքայութիւնն նման է մին տանուտէր մարդոյ՝ որ առաւօտանց դուրս եկաւ՝ իրան պտղոյ (պողէ) համար մշակներ բռնել։

2 Յն էն մշակներին՝ օրն մին դահեկան խօսեց, եւ նորանց ուղարկեց իրան պտղին։

3 Յն երեք ժամ (սահաթ) ժամանակն դուրս եկաւ՝ ուրիշներ էլ տեսաւ որ փողոցներն մէջն պարապ կանգնել էին։

4 Նորանց էլ ասաց. դուք էլ գնացէք իմ պտղիս՝ եւ ինչ որ արժան է՝ կըտամ ձեզ։

5 Նորանք էլ գնացին. եւ մինէլ վեց ժամին եւ ինն ժամին դուրս եկաւ՝ եւ էնպէս արաւ։

6 Յն տասնմէկին ժամին էլ դուրս եկաւ՝ ուրիշներ գտաւ որ պարապ կանգնել էին. նորանց ասաց. ինչո՞ւ էք էստեղ բոլոր ցերեկս պարապ կանգնել։

7 Նորան ասացին. Որովհետեւ որ՝ ոչ ով մեզ բանի չի բռնեց. նորանց ասաց. դուք էլ գնացէք իմ պտղիս,

[20] Ծննդ. ԺԸ. 14։ Ցաւք. Խբ. 2։ Երեմ. Լբ. 17։ Զաք. ը. 6։ Մարկ. Ժ. 27։ Ղուկ. ա. 37։ Ժը. 27։ [21] Մարկ. Ժ. 28։ Ղուկ. Ժը. 28։ [22] ր Օրէն. Լգ. 9։ Մատթ. դ. 20։ Ղուկ. ե. 11։ [23] Մատթ. ի. 31։ Ղուկ. Իը. 28, 29, 30։ ա Կորնթ. գ. 2, 3։ Ցայտ. ը. 26։ [24] Մարկ. Ժ. 29, 30։ Ղուկ. Ժը. 29, 30։ [25] Մատթ. ի. 16։ Իա 31, 32։ Մարկ. Ժ. 31։ Ղուկ. Ժգ. 30։

եւ ինչ որ արժան է՝ կառնէք։

8 Ուր երբոր իյնիցուն հլաս, պղծ տէրն իրան տան վերակացուին ա սաց. մշակներըն կանչէ՛ր եւ նորանց վարձքըն տուր՝ յետիններէն սկսած մինչեւ առաջիններն։

9 Երբոր նորանք եկին՝ որ տասնումին ժամէնն էին, ամէն մէկն մին դահեկան առին։

10 Առաջիններն էլ եկին՝ եւ կարծեցին թէ աւելի կառնեն եւ նոքանք էլ ամէն մէկն մին դահեկան առին։

11 Երբոր առին, տան տիրոջէն տրտնջումէն եւ ասում.

12 Թէ եդ յետիններդ մին ժամ աշխատեցին, եւ դորանց մեզ հետ հաւասար արիր, որ օրի ծանրութիւնըն եւ տաքութիւնըն քաշեցինք։

13 Ա՛յս նորանցից մէնին պատասխան տուաւ եւ ասաց. ով ընկեր՝ չեմ զրկում քեզ. չէ՞ որ դու ինձ հետ մին դահեկան ես խօսացել։

14 Քո՛ւնըն առ եւ գնա. ես ուզումեմ որ էս յետիններիս տամ ինչ պէս քեզ։

15 Մի՞թէ ես իշխանութիւն չունիմ իմ ապրանքիս վերայ՝ որ ինչ որ ուզեմ անեմ. կամ թէ քո աչքդ չա՞ր է՝ որ ես առատաձեռն եմ։

16 Նոպէս յետիններն առաջինք կըլինին[3], եւ առաջիններն յետինք. ինչուոր՝ շատ են կանչըված[4], բայց քիչ են ընտրըված։

17 Երբոր Յիսուս գնումէր երուսաղէմ[5], տասներկուսըն առանձին իրան հետ առաւ՝ եւ ճանապարհումն ասաց նորանց։

18 Ո՛հա վեր ենք գլուխ երուսաղէմ՝ եւ որդին մարդոյ կըմատնըվի[6] քահանայապետների եւ կարդացողների ձեռքըն, եւ մահով կըդատապարտին նորան։

19 Եւ նորան կըմատնեն հեթանոսների ձեռքն՝ որ նորան խայտառակեն եւ ծեծեն եւ խաչ հանեն, եւ երեք օրումն յարութիւն կառնէ։

20 Յն ժամանակն[8] զերեդիայի որդոց մայրն իրան որդոցն հետ նորա մօտ եկաւ[9] երկրըպագութիւն էր անում, եւ նորանից մին բան էր խնդրում։

21 Ա՛յս էլ ասաց նորան. ի՞նչ ես խնդրում. նորան ասաց. ասա՝ որ էս իմ երկու որդիքս մինն քո աջ կողմըդ՝ եւ մինն ձախ կողմիդ նստին քո արքայութենումդ[10]։

22 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. չէք գիտում՝ թէ ի՞նչ էք խնդրում. կարօղ էք դուք էն բաժակըն[11] (Խաչն) խմել՝ որ ես պիտի խմեմ. կամ էն մկրտութենովն[12] մկրտըվել՝ որ ես պիտի մկրտվիմ. նոքանս ասացին. կարօղ ենք։

23 Յիսուս նորանց ասաց. իմ բաժակըս[13] կըխըմէք, եւ էն մկրտութենովն որ ես պիտի մկրտվիմ՝ կըմկրտվէք. բայց՝ իմ աջ եւ ձախ կողմն նստացնելն՝ իմս չէ՝ որ տամ՝ բայց միայն նորանց որ իմ Հօրիցս տրվված է[14]։

24 Եւ էն տասներն երբոր լսե-

[1] Հռով. թ. 31։ [2] Բ Օրէն. ժե. 9։ Ա՛ռակ. իգ. 6։ Մարկ. գ. 23։ [3] Մարկ. ժթ. 30։ [4] Մարկ. իբ. 14։ [5] Մրկ. ժ. 32։ Ղուկ. ժբ. 31։ Յովհ. ժբ. 12։ [6] Մարկ. ժ. 2։ [7] Մարկ. իե. 2։ Մրկ. ժե. 1, 16։ Ղուկ. իգ. 1։ Յովհ. ժբ. 28, Խաչե. Գործ. գ. 13։ [8] Մրկ. ժ. 35։ [9] Մարկ. գ. 21։ [10] Մարկ. ժթ. 28։ [11] Մարկ. իգ. 39, 42։ Մրկ. ժ. 36։ Ղուկ. իբ. 42։ Յովհ. ժբ. 11։ [12] Ղուկ. ժբ. 50։ [13] Գործ. ժբ. 2։ Հռով. ը. 17։ Գ Պետ. ա. 7։ Յայտ. ա. 9։ [14] Մարկ. իե. 34։

ցին[15], բարկացան էն երկու եղբարց վերայ։

25 Յիսուս նորանց կանչեց իրան մօտն. եւ ասաց. գիտուք՝ որ ազգերի իշխանները նորանց վերայ տիրապետութիւն են անում, եւ մեծամեծները նորանց վերայ իշխանութիւն են անում։

26 Նոքա չըպիտի լինի ձեր մէջում[16]. բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինել, թող ձեզ պաշտօնեայ լինի[17]։

27 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել[18], թող ձեզ ծառայ լինի։

28 Ինչպէս[19] որ՝ որդին մարդոյ չեկաւ որ իրան ծառայեն[20], բայց որ ինքն ծառայէ[21], եւ շատերի տեղակ[22] իրան անձին փրկութեան գին տայ[23]։

29 Եւ երբոր երիքովից դուրս եկին[24], շատ ժողովուրդներ գնացին նորա ետեւէն։

30 Եւ ահա երկու կոյր ճանապարհին վերայ նստած էին[25]. երբոր լսեցին՝ թէ Յիսուս անց է կենում, աղաղակեցին եւ ասացին. Յիսուս որդի դաւթի՝ մեզ ողորմեայ։

31 Եւ ամբոխն (խալխն) սաստեց նորանց՝ որ ձայն չըհանեն. եւ նորանք էլ աւելի աղաղակում էին եւ ասում. Տէր՝ որդի դաւթի, մեզ ողորմեայ։

32 Յիսուս կանգնեց՝ կանչեց նորանց եւ ասաց. ինչ էք ուզում՝ որ անեմ ձեզ։

33 Նորան ասացին. Տէր՝ որ մեր աչքերն բացվին։

34 Եւ Յիսուս խղճաց. նորանց աչքերին մատեցաւ՝ եւ շուտով տեսին. եւ նորա ետեւէն գնացին։

## ԳԼ. ԻԱ

1 Քրիստոսի հետ երուսաղէմ գնալն. 12 Վաճառականներն եւ գնողներն տաճարից դուրս կըշռնէ. 19 Թզի ծառն կաւլծէ. 23 Քահանաներին եւ ծերերին կըպատասխանեցնէ. 28 Եւ երկու որդոց առակն. 35 Եւ մշակների առակով՝ որ սրին իրան ուղարկած մարդկէն սպաննեցին, նորանց կըյանդիմանէ։

1 Երբոր երուսաղէմին մօտեցան[1] եւ բեթփագէ եկին ձիթենեաց սարին[2] մօտ, էն ժամանակն Յիսուս իրան աշակերտներից երկուսն ուղարկեց։

2 Եւ նորանց ասաց. գնացէք էդ գիւղը՝ որ ձեր առաջին է, եւ էնտեղ մին կապած էշ կըգտնէք՝ եւ քուռակն էլ նորա հետ, նորան արձակեցէք բերէք ինձ մօտ։

3 Եւ թէ որ մին մարդ բան ասէ ձեզ. ասացէք թէ նորանք Տէրին պէտք են, եւ շուտով կուղարկէ նորանց։

4 Այդ էս ամէն բաներս էլաւ՝ որ մարգարէի խօսքն կատարվի որ ասում է։

5 Սիոնի աղջկանն[3] ասացէք. ահա՝ քո թագաւորդ քեզ մօտ է գալիս։ հեզահոգի՝ եւ էշի քուռակին հեծած։

6 Աշակերտներն գնացին եւ ա-

[15] Մարկ. ժ. 41։ Ղուկ. իբ. 24, 25։ [16] ա Պետր. է. 3։ [17] Մատթ. իգ. 11։ Մարկ. թ. 35, ժ. 43։ [18] Մատթ. ժբ. 4։ [19] Ցածր. ժգ. 4։ [20] Փիլիպ. բ. 7։ [21] Ղուկ. իբ, 27։ Ցածր. ժգ. 14։ [22] Մատթ. իզ. 28։ Հռովմ. է. 15, 19։ Եբր. թ. 28։ [23] Եսայ. ծգ. 10, 11։ Դան. թ. 24, 26։ Ցածր. ժա. 51, 52։ աՅհ. բ. 6։ Տիտ. բ. 14։ ատիմ. ա. 19։ [24] Մարկ. ժ. 46։ Ղուկ. ժբ. 35։ [25] Մատթ. թ. 27։ [1] Մարկ. ժա. 1։ Ղուկ. ժԹ. 29։ [2] Զաք. ժգ. 4։ [3] Եսայ. կբ. 11։ Զաք. թ. 9։ Ցածր. ժբ. 15։

բին[4]՝ ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց։

7 Եւ էշըն եւ քուռակըն բերին՝ եւ իրանց շորերն նորանց վերայ քըցեցին[5], եւ նորանց վերայ նստեց։

8 Եւ շատ ժողովուրդներ իրանց հագուստըն ճանապարհի վերայ փըռեցին. եւ ուրիշներն ծառերուն ճիղեր էին կտրում եւ ճանապարհի վերայ փռում[6]։

9 Եւ ժողովուրդներն որ առաջին եւ ետեւէն գնում էին, աղաղակում էին եւ ասում, օրհնութիւն որդոյն Դաւթի[7]. օրհնեալ է նա[8] որ գալիս է Տեառն անունովն. օրհնութիւն ի բարձունս։

10 Եւ երբոր նա Երուսաղէմ մըտաւ[9], բոլոր քաղաքն դղրդաց եւ ասում՝ սա ո՞վ է։

11 Եւ ժողովուրդներն ասացին. սա Յիսուս մարգարէն[10] է՝ որ գալիլեայի Նազարէթից է։

12 Եւ Յիսուս մտաւ տաճարն[11] եւ ամէնին որ տաճարի մէջն ծախում էին եւ առնում էին, դուրս հանեց. եւ ըստակ փոխողներուն[12] (առաջնեղբ) սախտակներըն՝ եւ աղաւնի ծախողներուն աթոռներըն կործանեց։

13 Եւ ասաց նորանց. գրված է՝ թէ իմ տունս աղօթքի տուն[13] պիտի է կոչվի. եւ դուք աւազակներուն բուն էք արել զորան[14]։

14 Եւ տաճարի միջումն կուրեր եւ կաղեր եկին նորա մօտ՝ եւ նորանց բժշկեց։

15 Երբոր քահանայապետներն եւ կարդացօղներն էն հրաշքներըն տե-

սին որ արաւ, եւ երեխաներըն որ տաճարի միջումն աղաղակում էին եւ ասում. ովսաննա, օրհնութիւն որդոյ դաւթի, բարկացան։

16 Եւ նորան ասացին. լսո՞ւմես թէ զորանք ինչ են ասում։ Յիսուս նորանց ասաց. հա. դուք էն չէք կարդացել՝ թէ տղաների եւ կաթնակերների բերանից օրհնութիւն հաստատեցիր[15]։

17 Եւ նորանց թողից՝ քաղաքից դուրս գնաց դէպի բեթանիա՝ եւ (գիշերն) հետեղ մնաց[16]։

18 Եւ առաւօտանց[17] երբոր մինէլ յետ դարձաւ քաղաքն, սովեց։

19 Եւ ճանապարհին վերայ մի թզի ծառ[18] տեսաւ՝ նորա մօտ եւ կաւ եւ նորա վերայ բան չըգտաւ, բայց միայն տերեւ. եւ նորան ասաց. սրանից ետեւ յաւիտեան քեզանից էլ պտուղ չըլինի. եւ շուտով էն թզի ծառն չորացաւ։

20 Աշակերտներն երբոր տեսին՝ զարմացան[19] եւ ասացին. թէ ինչպէս շուտով թզի ծառն չորացաւ։

21 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց. ճշմարիտըն ասում եմ ձեզ. թէ որ հաւատք[20] ունենաք եւ չի երկմտէք[21], ոչ թէ միայն թզի ծառին էդ կանէք, այլ թէ որ էդ սարիդ էլ ասէք՝ վեր կաց եւ ծովն ընկիր[22], կըլինի։

22 Եւ ամէն ինչ՝ որ աղօթքի մէջ հաւատքով խնդրէք[23], կառնէք։

23 Եւ երբոր եկաւ տաճարն[24] ուրդանի որ էնտեղ սովրցնում էր, քահանայապետներն եւ ժողովըրդի

---

[4] Մարկ. ժա. 4։ [5] դ Թագ. թ. 13։ [6] Ղեւտ. իգ. 40։ Ցնծ. ժբ. 13։ [7] Սամ. ճժբ. 25։ [8] Սամ. ճժբ. 26։ Մարկ. իգ. 39։ [9] Մարկ. ժա. 15։ Ղեւտ. ժե. 45։ Ցնծ. բ. 13, 15։ [10] Մարկ. բ. 23։ Ղեւտ. է. 16։ Ցնծ. զ. 14։ է. 40։ թ. 17։ [11] Մարկ. ժա. 11։ Ղեւտ. ժե. 45։ Ցնծ. բ. 15։ [12] բ Օրին. ժգ. 25։ [13] Եսայ. ծգ. 7։ [14] Երեմ. է. 11։ Մարկ. ժա. 17։ Ղեւտ. ժե. 46։ [15] Սամ. ը. 2։ [16] Մարկ. ժա. 11։ Ցնծ. ժա. 18։ [17] Մարկ. ժա. 12։ [18] Մարկ. ժա. 13։ [19] Մարկ. ժա. 20։ [20] Մատթ. ժե. 19։ Ղեւտ. ժե. 6։ [21] Ցնծ. ա. 6։ [22] ա Կորնթ. ժգ. 2։ [23] Մարկ. է. 7։ Մարկ. ժա. 24։ Ղեւտ. ժա. 9։ Ցնծ. ե. 16։ Ցնծ. է. 22։ ե. 14։ [24] Մարկ. ժա. 27։ Ղեւտ. ի. 1։

ծերերն նորա մօտ եկին եւ ասացին[25]. դու ինչ իշխանութեամբ կա՛մ անուն էդ. եւ ո՞վ տուաւ քեզ էդ իշխանութիւնդ:

24 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց. ես էլ ձեզանից մին բան կը հարցնեմ, թէ որ էն ինձ ասէք, ես էլ ձեզ կասեմ՝ թէ ինչ իշխանութեամբ եմ անում էս:

25 Յոհաննէսի մկրտութիւնը որ տեղից էր, երկնքիցն էր, թէ մարդկանցիցն, եւ նորանք իրանց մէջ միտք էին անում եւ ասում էին,

26 թէ որ ասինք՝ երկնքիցն էր, կասէ մեզ թէ՝ ապա ինչու՞ չըհաւատացիք նորան. եւ թէ որ ասինք՝ մարդկանցիցն, ժողովրդից վախենում ենք. ինչու որ՝ ամէնքն Յոհաննէսին մարգարէի տէղ էին ընդունում[26]:

27 Պատասխան տուին Յիսուսին եւ ասացին. չենք գիտում. նա էլ նորանց ասաց. ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ինչ իշխանութեամբ եմ անում էս:

28 Ա՛խայն թէ՝ ինչպէս է երեւում ձեզ. մին մարդ երկու որդի ունէր. եւ եկաւ առաջինին ասաց. որդի՛ գնա՛ էս օր այգումն (պաղտնի) բան արա:

29 Նա նա պատասխան տուաւ եւ ասաց. կըգնամ Տէր. եւ չըգնաց:

30 Նէն մէկելի մօտն էլ գնաց եւ էնպէս ասաց. նա պատասխան տըւաւ եւ ասաց. չեմ կամենում. բայց յետոյ զղջացաւ՝ եւ գնաց պըրին:

31 Հիմիկ էս երկուսից որն արաւ իրան հօր կամքըն. ասացին՝ յետինն: Յիսուս նորանց ասաց. ճշմարիտըն ասումեմ ձեզ. որ մաքսաւորներն (մաքսաւորները) եւ պոռնիկներն[27] ձեզանից առաջ կըմտնեն երկնքի արքայութիւնն:

32 Ինչուր՝ Յոհաննէսն արդարութեան ճանապարհովն[28] եկաւ՝ եւ չըհաւատացիք նորան. եւ մաքսաւորներն[29] եւ պոռնիկներն հաւատացին նորան. եւ դուք տեսիք եւ չըզղջացաք՝ որ յետոյ հաւատաք նորան:

33 Լուրիշ առակ էլ լսեցէք. մին տանուտէր մարդ կար. որ այգի (պող) տնկեց եւ նորան պարսպով պատեց[30], եւ նորա մէջն հնձան փորեց եւ աշտարակ (պոպրգ) շինեց, եւ տուաւ նորան մշակներին. եւ գընաց հեռու աշխարհ.ք[31]:

34 Երբոր պտղի ժամանակն մօտեցաւ, իրան ծառաներն ուղարկեց մշակներին մօտ՝ որ նորա պտուղնեըն առնեն[32]:

35 Եւ մշակներն նորա ծառաներըն բռնեցին՝ մինըն ծանկեցին, մէկելն սպանեցին, մէկելն էլ քարկոծեցին[33]:

36 Ա՛ինէք ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններիցն շատ՝ եւ նորանց էլ էնպէս արին:

37 Յետոյ իրան որդին նորանց մօտ ուղարկեց եւ ասաց. կըլինի որ էս իմ որդուցս ամաչեն:

38 Բայց մշակներն երբոր որդին

[25] Եփ. բ. 14։ Գործ. գ. 7։ է. 27։ [26] Մատթ. ժգ. 5։ Մարկ. զ. 20։ Ղուկ. ի. 6։ [27] Ղուկ. է. 29, 50։ [28] Մատթ. գ. 1, Ի՜սայ.։ [29] Ղուկ. գ. 12, 13։ [30] Ա՜սմ. ա. 9։ Եբէ. ը. 11։ Ե՜սայ. ե. 1։ Եբէր. բ. 21։ Մարկ. ժբ. 1։ Ղուկ. ի. 9։ [31] Մատթ. իե. 14, 15։ [32] Եբէ. ը. 11, 12։ [33] բ Մ՜նաց. իգ. 21։ լգ. 16։ Նեհէմ. թ. 26։ Մատթ. ե. 12։ իգ. 34, 37։ Գործ. է. 52։ ա Թես. բ. 15։ Եբր. ժա. 36, 37։

տեսին, իրանց մտքումն ասացին. Էս է ժառանգն[34]. եկէք սորան սպանե՛նք[35]. եւ սորա ժառանգութեանն տիրապետե՛նք:

39 Եւ բռնեցին նորան[36]. այգուցն (պալչդն) դուրս հանեցին եւ սպանեցին:

40 Ա՛պա երբոր էն պիդդ Տէրն գայ, ի՞նչ կանէ էն մշակներին:

41 Նորան ասացին[37]. էն չարերըն չար պատժով կկորցնէ[38], եւ այգին կըտայ ուրիշ մշակների[39] որ նոր պտուղներըն տան իրան ժամանակումն:

42 Յիսուս նորանց ասաց. իսկի մին ժամանակ դուք չէք կարդացել գլխումն[40] թէ էն քարն, որ շինողներն անարգեցին, նա էլաւ անկիւնի գլուխ. էս բանս Տէրիցն էլաւ՝ եւ մեր աչքերի առաջին զարմանալի է:

43 Արահամար ասումեմ ձեզ. որ Աստուծոյ արքայութիւնն ձեզանից վեր կառնըվի[41], եւ էն ազգին կըտըվվի, որ նորա պտուղներըն կըբերէ:

44 Եւ ով որ էս քարիս[42] վերայ ընկնի՝ կըփշրըվի. եւ ում վերայ որ նա ընկնի, կը ջարդէ նորան[43]:

45 Երբոր քահանայապետներն եւ կարդացօղներն եւ փարիսեցիքն նորա առակներըն լսեցին, հասկացան՝ որ իրանց համար ասաց:

46 Եւ խնդրումէին որ բռնեն նորա, բայց ժողովուրդներիցն վախեցան. ինչուր՝ նորան մարգարէի տեղ էին ընդունումմ[44]:

## ԿԻ. ԻԸ

1 Թագաւորի որդոյն հարսանիքի առակն: 9 Հեթանոսների կոչվիլն: 13 Հարսանիքի չոր չունեցողի պատիժն: 15 Կայսերի հարկ տալն պէտք է: 23 Քրիստոս Սադուկեցիքն յաղթութեան համար կըպապանձացնէ: 35 Օրինապէտին դոյզ կըտայ թէ որն է առաջին եւ մեծ պատուիրանքն: 41 Եւ մեսիայի համար փարիսեցիներն չփոթութեան մէջ կըբոյե:

1 Ա՛ինէլ Յիսուս պատասխան տուաւ՝ եւ նորանց ասաց առակներով[1]:

2 Երկինքի արքայութիւնն նմանեցաւ թագաւոր մարդոյ, որ իրան որդոյն հարսանիք արաւ:

3 Եւ իրան ծառաներըն ուղարկեց՝ որ հրաւիրած մարդիքըն կանչեն հարսանիքն. եւ նորանք չըկամեցան գալ:

4 Ա՛ինէլ ուրիշ ծառաներ ուղարկեց եւ ասաց. ասացէ՛ք հրաւիրածներին. ահա իմ սեղանըս պատրաստեցի. իմ արջառներս եւ մատցուներս մորթվածե՛ն[2], եւ ամէն բանները պատրաստ է, եկէք հարսանիքն

[34] Ա՛ռմ. բ. 8: Եբր. ա. 2: [35] Ա՛ռմ. բ. 2: Մտթ. իզ. 8: իէ. 1: ՑՀ. ժա. 53: Գործ. գ. 27: [36] Մտթ. իզ. 50, խ՛այնպէս Մրկ. ժգ. 46, խ՛այնպէս: Ղկ. իբ. 54, խ՛այնպէս: ՑՀ. ժբ. 13, խ՛այնպէս: Գործ. բ. 23: [37] Ղկ. ի. 16: [38] Ղկ. իա. 24: Եբր. բ. 2: [39] Գործ. ժգ. 46: ժէ. 7: ժբ. 6: իբ. 28: Հռ՛մ. թ. ժ. ժա: [40] Ա՛ռմ. ճժբ. 22: Եփես. իբ. 16: Մրկ. ժբ. 10: Ղկ. ի. 17: Գործ. դ. 11: Եփես. բ. 20: ա Պետր. բ. 6, 7: [41] Մտթ. ը. 12: [42] Եփես. ը. 14, 15: Ձա՛խ. ժբ. 3: Ղկ. ի. 18: Հռ՛մ. թ. 33: ա Պետր. բ. 8: [43] Եփես. կ. 12: Դան. բ. 44: [44] Վէր. 11: Ղկ. է. 16: ՑՀ. է. 40: [1] Ղկ. ժգ. 16: Ցայտ. ժթ. 7, 9: [2] Ա՛ռմ. թ. 3:

5 Եւ նորանք հոգս չարին՝ եւ գըներին, մինն իրան արան, եւ մեկնէն իրան առուտուրի տեղէն։

6 Եւ ուրիշներն նորա ծառաներըն բռնեցին՝ թուքումուր տուին եւ սպանեցին։

7 Այդ թագաւորն կրկոր էս լսեց, բարկացաւ՝ եւ իրան զօրքըն ուղարկեց[3] եւ էն սպանօղներըն սատակեց, եւ նորանց քաղաքըն այրեց։

8 Յետ ժամանակին իրան ծառաներին ասաց. Հարսանիքս պատրաստ է՝ եւ հրաւիրածներն արժանի չէին[4]։

9 Ուրեմն գնացէք դէպի ճանապարհների անցքն (կէնէպներն)՝ եւ ում որ գտնէք, կանչեցէք հարսանիքս։

10 Եւ ծառաներն դուրս գնացին՝ ճանապարհներին վերայ ում որ գտին՝ չարն եւ բարին՝ ամէնըն ժողվեցին[5] եւ հարսանիքն հարսանեքաւորներով լցվաւ։

11 Եւ թագաւորն մտաւ՝ որ սեղան նստօղներին մտիկ անէ, եւ էն տեղ մին մարդ տեսաւ՝ որ հարսանիքի շոր չէր հագած[6]։

12 Եւ նորան ասաց. ընկեր ի՞նչպէս մտիր դու էստեղ՝ որ հարսանիքի շոր չունէիր. եւ նա պապանձվեցաւ։

13 Յետ ժամանակին թագաւորն ասաց ծառաներին, զորա ոտներըն եւ ձեռներըն կապեցէք. եւ զորան դրսի խաւարն հանեցէք[7]. էնտեղ որ լաց՝ եւ ատամների կրճտանըն կըլինի։

14 Ինչուայ՝ շատ են կանչված եւ քիչ են ընտրված[8]։

15 Յետ ժամանակին փարիսեցիքն գնացին՝ նորա համար խորհուրդ արին[9]. թէ ի՞նչպէս խօսքերով որոգայթ (նալով) քցեն նորան։

16 Եւ իրանց աշակերտներըն հերոդէսեանների հետ նորա մօտ ուղարկեցին եւ ասացին. վարդապետ՝ գիտումենք որ ճշմարիտ ես՝ եւ Աստուծոյ ճանապարհըն ճշմարտութեամբ սովորցնումես, եւ խոկի մին մարդուց հոգս չունիս, եւ մարդոյ երեսպաշտութիւն չես անում։

17 Ուրեմն ասա մեզ. ի՞նչպէս է երեւում քեզ. կայսերին հարկ տալ պիտք է, թէ չէ։

18 Յիսուս նորանց չարութիւնըն իմացաւ եւ ասաց. ինչո՞ւ էք փորձում ինձ կեղծաւորներ։

19 Հարկի ստակըն ցոյց տուէք ինձ. եւ նորանք մին դահեկան նետնեցին տուին նորան։

20 Եւ նորանց ասաց. էս պատկերս կամ գիրս ումն է։

21 Ասացին՝ կայսերին. էն ժամանակն ասաց նորանց. գնացէք՝ կայսերինըն կայսերին տուէք[10], եւ Աստուծունըն Աստուծոյն։

22 Երբոր լսեցին, զարմացան. եւ նորան թողին եւ գնացին։

23 Էն օրն սադուկեցիքն նորա մօտ[11] եկին՝ որ ասումեն՝ թէ յարութիւն չըկայ[12], եւ նորան հարցրին

24 Եւ ասացին. վարդապետ՝ մովսէսն ասայ[13], թէ որ մին մարդ առանց զաւակի մեռնի, նորա կինըն թող իրան եղբայրն առնէ, եւ իրան եղբօր համար զաւակ վերկացնէ։

25 Ի՞նդ մօտ եօթն եղբարք կային. նորանց առաջինն կին առաւ եւ մեռաւ, եւ որովհետեւ զաւակ չունէր՝ իրան կինըն թողից իրան եղբօրն։

[3] Դան. թ. 26։ Ղուկ. ԻԹ. 27։ [4] Մատթ. Ժ. 10, 13։ Գործ. Ժգ. 46։ [5] Մատթ. Ժգ. 38, 47։ [6] Ա Կորնթ. ե. 3։ Եբրայ. դ. 24։ Կող. գ. 10, 12։ Յայտ. գ. 4։ Ժգ. 15։ ԻԹ. 8։ [7] Մատթ. ը. 12։ [8] Մատթ. ք. 16։ [9] Մարկ. Ժբ. 13։ Ղուկ. ք. 20։ [10] Մատթ. Ժե. 25։ Հասկ. Ժգ. 7։ [11] Մարկ. Ժբ. 18։ Ղուկ. ք. 27։ [12] Գործ. իգ. 8։ [13] Ա Օրէն. քե. 5։

26 Ընպէս եւ երկրորդ (եղբայրն) եւ երրորդն՝ մինչեւ եօթներորդն:
27 Ամենեցուն եաւս կինն եւ մեռաւ:

28 Ապա յարութեան ժամանակումն են եօթնիցն նա որին պիտի լինի կին. ընդու որ՝ ամենքն նորան իրանց կին առին:
29 Յիսուս նորանց պատասխան տուաւ եւ ասաց. մոլորեալներ՝ դուք ոչ գիտքըն էք գիտութ[14] եւ ոչ Աստուծոյ զօրութիւնն:
30 Ընդու որ՝ յարութեան ժամանակումն ոչ կին կառնեն. եւ ոչ մարդ կըզեան. բայց երկնքումն հրեշտակներին նման են[15]:
31 Ի՝ինչն թէ մեռելներն յարութիւն առնելոցն համար դուք չէք կարդացել են Աստուածանից ձեզ ասվածըն:
32 Ես եմ աբրահամի Աստուածն, իսահակայ Աստուածն եւ յակոբի Աստուածն[16]. եւ Աստուած մեռելներն Աստուած չէ, այլ կենդանիներն:
33 Երբոր ժողովուրդներն լսեցին, զարմանային նորա վարդապետութեան վերայ[17]:
34 Ինայց փարիսեցիքն երբոր լսեցին[18], թէ սադուկեցիներին պատասխան ետաւ, մինտեղ հաւաքվեցան:
35 Եւ նորանցից մինն փորձելով հարցուց նորան[19], եւ ասաց:
36 Ա՝ ւրդապետ՝ օրէնքումն որ պատուիրանք է մեծ:
37 Եւ Յիսուս նորան ասաց. սիրիր քո Տէր Աստուածդ քո ամէն սրտովդ՝ քո ամէն անձնովդ՝ եւ քո ամէն մտքովդ[20]:
38 Ես է մեծ եւ առաջին պատուիրանքն:
39 Եւ երկրորդն սրան նման. քո ընկերըդ քո անձիդ պէս սիրիր[21]:
40 Ես երկու պատուիրանքիցս ամէն օրէնքն եւ մարգարէքն կախված են[22]:
41 Եւ երբոր փարիսեցիքն հաւաքված էին[23], Յիսուս նորանցից հարցուց՝ եւ ասաց:
42 Ձեզ ի՞նչպէս է երեւում Քրիստոսի համար՝ ումի որդին է. նորան ասացին. դաւթի:
43 Յիսուս էլ նորանց ասաց. ապա ի՞նչպէս դաւիթ հոգովն նորան Տէր է կոչում՝ եւ ասում:
44 Տէրն իմ Տէրին ասաց[24]. թէ իմ աջ կողմն նստիր, մինչեւ քո թշնամիներըն քո ոտացդ կոխելիք դնեմ:
45 Ապա՝ թէ որ դաւիթ նորան Տէր է կոչում, ի՞նչպէս նորա որդին կը լինի:
46 Եւ ոչ ով կարող էր մին բան պատասխան տալ նորան[25]. եւ էն օրիցն եաւս՝ էլ մինն էր համարձակվում[26]՝ որ նորանից իսկի մին բան հարցնէ:

[14] Ցե՛ղ. ի·9: [15] ա Ցե՛ղ. գ·2: [16] Ելք. գ. 6, 16: Մարկ. ժբ. 26: Ղուկ. ի. 37: Գործ. է. 32: Եբր. ժա. 16: [17] Մարկ. է. 28: [18] Մարկ. ժբ. 28: [19] Ղուկ. ժ. 25: [20] բ Օրէնք. զ. 5: ժ. 12: լ. 6: Ղուկ. ժ. 27: [21] Ղեւտ. ԺԹ. 18: Մարկ. ԺԲ. 19: Մարկ. ժբ. 31: Ղուկ. ժ. 27: Հռոմ. ԺԳ. 9: Գաղ. ե. 14: Յակ. բ. 8: [22] Մարկ. է. 12: ա Տէր. ա. 5: [23] Մարկ. ժբ. 35: Ղուկ. ի. 41: [24] Սաղմ. ՃԺ. 1: Գործ. բ. 34: ա Կորնթ. ԺԵ. 25: Եբր. ա. 13: ժ. 12, 13: [25] Ղուկ. ԺԴ. 6: [26] Մարկ. ժբ. 34: Ղուկ. ի. 40:

## ԳԼ · ԻԹ

1 Քրիստոս խրատում է ժողովուրդն որ կարգացօղների եւ վարիսեցիների սասձիներն ա-
նձն, քայց նորանց գործքերին պէս չանէն: 5 Իրան աշակերտներին պէսք է որ նորանց
փառասիրութենից զգոյշ լինին: 13 Ուէթ վայ կը կարդայ նորանց կեղծաւորութեան եւ
կուրութեան վերայ: 34 Եւ երուսաղէմի կործանվելոյն վերայ մարգարէութիւն է անում:

1 Յն ժամանակն Յիսուս ժողո-
վուրդներին եւ իրան աշակերտնե-
րին հետ խօսեց, եւ ասաց:

2 Մօսէսի աթոռին վերայ կար-
գացօղներն եւ փարիսեցիքն նստե-
ցին[1]:

3 Ամէն ինչ որ կասեն ձեզ՝ արէք
եւ պահեցէք, քայց նորանց գործ-
քերին պէս մի անէք, ինչուոր՝ ասում
են եւ չեն անում[2]:

4 Ծանր եւ դժուար տանելի
բեռներ[3] են կապում եւ մարդկանց
ուսերի վերայ են դնում, եւ իրանց
մատովն չեն ուզում շարժել նորանց:

5 Եւ իրանց ամէն գործքերըն[4]
մարդկանց ցոյց տալոյ համար են ա-
նում. իրանց գրապանակներըն[5] (ՕՐ-
ԳԱՆՔ ՆԵՂԱՑ ԳՐԵԻԸՆ) լայնացնում են.
եւ իրանց շորերի ծայրըն երկայնաց-
նում են:

6 Ընդան նստելոյ ժամանակն սի-
րում են վերեւի տեղերըն[6], ժողովա-
րանների միջումն առաջին աթոռնե-
րըն, եւ փողոցների միջումն բարեւ
առնելըն:

7 Եւ մարդկանցից ռաբբի ռաբբի
կոչվելըն:

8 Ձայց դուք մըննի վարդապետ
չը՛կանչէք[7], պատճառն որ՝ ձեր սո-
վորցնօղն մին է, եւ դուք ամէնքդ եղ-
բայրք էք:

9 Եւ երկրիս վերայ մըննի ձեզ
հայր չը՛կանչէք. ինչուոր՝ ձեր հայրն
մին է՝ որ երկնքումն է[8]:

10 Եւ դուք սովորցնօղ չը՛կանչը-
վիք. ինչուոր՝ ձեր սովորցնօղն Քրի-
ստոսն է:

11 Եւ նա՝ որ ձեր միջումն մեծ է,
ձեզ ծառայ պիտի լինի[9]:

12 Ամէն որ իրան անձըն կըբարձրա-
ցընէ՝ կըխոնարհվի[10], եւ նա որ իրան
անձըն կըխոնարհացնէ՝ կըբարձրա-
նայ:

13 Ամ՛այ ձեզ կարգացօղներ եւ
փարիսեցիներ կեղծաւորներ[11], որ
երկնքի արքայութիւնն մարդկանց
առաջին փակումէք. դուք չէք մըտա-
նում՝ եւ նորանց որ մանումն՝ թոյլ
չէք տալիս որ մանեն:

14 Ամ՛այ ձեզ կարգացօղներ եւ
փարիսեցիներ կեղծաւորներ, որ որ-
բեւէրիների տներըն ուտումէք[12]՝
եւ պատճառներով երկար աղօթք
էք անում. նրանհամար աւելի դա-
տաստան կառնէք:

15 Ամ՛այ ձեզ կարգացօղներ եւ
փարիսեցիներ կեղծաւորներ, որ
ծով եւ ցամաք շուռ էք գալիս՝ որ
մին մարդ հաւատք բերէք, եւ երբոր
կը լինի, նորան երկու տակ ձեզանից
աւելի գեհենի որդի էք անում:

16 Ամ՛այ ձեզ կոյր առաջնորդ-

---

[1] Նեհ. ը · 4, 8: Մաղ. բ · 7: Մարկ. ժբ · 38: Ղուկ. ի · 45: [2] Հռովմ. բ · 19, Խոյսե:
[3] Ղուկ. ժա. 46: Գործ. ժե. 10: Գաղ. գ · 13: [4] Մատթ. էզ · 1, 3, 5, 16: [5] Թուա. ժե. 38: բ Օրէն. գ · 8: իբ · 12: Ասող. գ · 3: [6] Մարկ. ժբ · 38, 39: Ղուկ. ժա. 43: ի. 46: գ Ցէն. 9: [7] Ցող. գ · 1: բ Կորնթ. ա. 24: ա Պետր. ե · 3: [8] Մաղ. ա. 6: [9] Մատթ. ի. 26, 27: [10] Ցէբ. իր · 29: Ասող. ժե. 33: իմ · 23: Ղուկ. ժգ · 11: ժբ. 14: Ցող. գ · 8: ա Պետր. ե · 5: [11] Ղուկ. ժա. 52: [12] Մարկ. ժբ. 40. Ղուկ. ի · 47: բ Տէմ. գ · 6: Տէր. ա · 11:

ներ[13] որ ասումք՝ թէ նա որ տա-
ճարին երդում ուտէ[14], բան չէ. բայց նա որ ոսկուն երդում ուտէ որ տաճարի մէջն է, պարտական է (անոր):

17 Ա՛նմիտներ եւ կուրեր. ո՞րն է մեծ, ոսկի՞ն թէ տաճարն՝ որ ոսկուն սրբեցուցանէ[15]:

18 Այս նա որ սեղանին երդում ուտէ՝ բան չէ. բայց նա որ նորա վրայ լինող պատարագին երդում ուտէ, պարտական է:

19 Կիմմարներ եւ կուրեր. ո՞րն է մեծ, պատարա՞գն թէ սեղանն[16], որ պատարագին սրբեցուցանէ:

20 Ուրեմն ով որ սեղանին երդում կերա՛, նա նորանով՝ եւ էն ամէն բաներովին երդում կերա՛ որ նորա վերայ են:

21 Այս նա որ տաճարին երդում կերա՛ նորանով եւ նորա միջումն բնակօղին երդում կերա՛[17]:

22 Այս նա որ երկնքին երդում կերա՛, Աստուծոյ աթոռին երդում կերա՛[18], եւ նորանով էլ՝ որ նորա վերայ նստաւ:

23 Ավ՛ այ ձեզ կարդացօղներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ. որ անանուխին եւ սամիթին եւ չամանին տասանորդ էք տալիս[19], եւ թողա՛ք օրէնքի ծանր ծանր բաներն[20]՝ դատաստանն, ողորմութիւնն եւ հաւատքն. էս պէտք էր անել՝ եւ էն չթողուել:

24 Կո՛յր առաջնորդներ. որ մի՛ժեղնիերն քամում էք, եւ ուղտերն կու՛լ էք տալիս:

25 Ավ՛ այ ձեզ կարդացօղներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ. որ բաժակին (կաթսին) եւ սկաւառակին (սահանին) դրսեւնանց սրբում էք[21] եւ ներսեւնանց յափշտակութիւնով եւ անկարգութիւնով լիքն էք:

26 Կո՛յր փարիսեցի՝ առաջ բաժակի եւ սկաւառակի մէջըն սրբի՛, որ նորանց դուրսն էլ սուրբ լինի:

27 Ավ՛ այ ձեզ կարդացօղներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ. որ նմանէք ծեփած գերեզմաններին[22]՝ որ դրսեւնանց գեղեցիկ են երեւում՝ եւ ներսեւնանց մեռելների ոսկերքով եւ ամէն պղծութիւնով լիքն են:

28 Այնպես էլ դուք դրսեւնանց արդա՛ր էք երեւում մարդկանց՝ եւ ներսեւնանց կեղծաւորութիւնով եւ անօրէնութիւնով լիքն էք:

29 Ավ՛ այ ձեզ կարդացօղներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ[23]. որ մարգարէների տապանները շինում էք՝ եւ արդարների գերեզմանները զարդարում էք:

30 Այս ասումք, թէ որ մեր հայրանց օրերումն լինէինք, մենք մասնակից չէինք լինիլ մարգարէների արիւնին:

31 Ուրեմն դուք ձեզանից վկայում էք, թէ նորանց որդիքն էք՝ որ մարգարէներին կոտորում էին[24]:

32 Այս դուք ձեր հարանց չափը լցցրի՛ք[25]:

33 Օ՛ձեր՝ (իժ) օձերի զաւակներ[26]՝ ի՞նչպէս կըփախչիք գեհենի դատաստանից:

---

[13] Մատթ. ժե. 14: Վ.այր. 24: [14] Մատթ. ե. 33, 34: [15] Եբ. ը. 29: [16] Եբ. ի՛թ. 37: [17] Գ.թես. ը. 13: բ Մ.նաց. գ. 2: Սամ. իզ. 8: ՃԼը. 14: [18] Մատթ. ե. 34: Սամ. ժա. 4: Գործ. է. 49: [19] Ղ.ւկ. ժա. 42: [20] ա Թես. ժե. 22: Ովսէ. գ. 6: Միք. գ. 8: Մատթ. թ. 13: ժբ. 7: [21] Մարկ. է. 4: Ղ.ւկ. ժա. 39: [22] Ղ.ւկ. ժա. 44: Գործ. իգ. 3: [23] Ղ.ւկ. ժա. 47: [24] Գործ. է. 51, 52: ա Թես. բ. 15: [25] Ծննդ. ժե. 16: ա Թես. բ. 16: [26] Մատթ. գ. 7: ժբ. 33:

34 Պրահատեաք՝ ահա եւ ձեզ մեռ մարգարէները եւ իմաստուները եւ կարդացողները կուղարկեմ[27]. եւ դուք նոցանից կըսպանէք[28] եւ խաչ կըհանէք՝ եւ նոցանից ձեր ժողովարանների միջումն կըտանջէք՝ եւ քաղաքից քաղաք կըհալածէք[29]:

35 Որ էսպէս ձեզ վերայ գայ ամէն արդար արիւնն[30] որ երկրի վերայ թափվել է. արդար աբելի[31] արիւնից մինչեւ բարաքիայի որդի զաքարիայի արիւնն[32], որ նոցան տաճարի եւ սեղանի մէջ սպանեցիք:

36 Ամէնարիստն ասում եմ ձեզ. որ էն ամէնն կըգայ էս ազգիս վերայ:

37 Երուսաղէմ երուսաղէմ՝ որ մարգարէներըն կսպանում էիր[33], եւ քեզ մեռ ուղարկվածներըն քարկոծում էիր[34]. քանի անգամ կամեցայ քո երեխաներըն ժողովել[35], ինչպէս որ հաւն իրան ձագերըն թեւերի տակն է ժողովում[36], եւ դուք չըկամեցաք:

38 Էհա ձեր տունն աւերված կըթողվի ձեզ:

39 Ասում եմ ձեզ. թէ հիմիկուց եւս էլ չէք տեսնիլ ինձ՝ մինչեւ որ ասէք. օրհնեալ է Տէրի անունով եկածն[37]:

## ԿԴ · ԻԴ

1 Քրիստոս տաճարին կործանվիլն առաջուց է ասում. 3 Թէ նորանից առաջ ինչ՝ եւ որպէս մեծ նեղութիւններ կըլինին. 29 Եւ թէ իրան դատաստանի գալոց նշաններն ինչ են, 36 Եւ էն օր եւ էն ժամ յայտնի չէ. 42 Պէտք է որ բարի ծառաների պէս արթուն կենանք, ամէն ժամումն մեր Տէրոջ գալուն սպասելով:

1 Եւ Յիսուս տաճարիցն դուրս եկաւ գնում[1] եւ աշակերտներն մեռ եկին՝ որ տաճարի շինվածքըն ցոյց տան նորան:

2 Եւ նա պատասխան տուաւ՝ եւ ասաց նորանց. տեսնո՞ւմք էդ ամէնըն. ճշմարիտն ասում եմ ձեզ. որ էդ տեղ քար քարի վերայ չի մնալ՝ որ չըքանդվի[2]:

3 Եւ երբոր ձիթենեաց սարի վերայ նըստած էր, աշակերտներն առանձին նորա մեռ[3] եկին՝ եւ ասացին. ասա մեզ[4]. էդ բանդ երբ կըլինի. կամ թէ գալոդ եւ աշխարհքիս վերջին նշանն ի՞նչ է:

4 Յիսուս պատասխան տուաւ՝ եւ նորանց ասաց. զգոյշ կացէք որ չըլինի թէ մինն խաբէ ձեզ[5]:

5 Ինչուոր՝ շատ մարդիք կըգան իմ անունովս եւ կասեն՝ թէ ես Քրիստոսն եմ[6], եւ շատերըն կըմոլորացնեն[7]:

6 Պատերազմներ եւ պատերազմների համբաւ լսելու էք. զգոյշ կացէք, մի շփոթե-

---

[27] Մատթ. ի. 34, 35: Ղուկ. ժա. 49: [28] Գործ. է. 40: է. 58, 59: իզ. 19: [29] Մատթ. ժ. 17: բ Կորնթ. ժա. 24, 25: [30] Ցայտ. ժը. 24: [31] Ծննդ. դ. 8: ա Ցաւհ. գ. 12: [32] բ Մնաց. իզ. 20, 21: [33] Ղուկ. ժգ. 34: [34] բ Մնաց. իզ. 21: [35] բ Օրէն. լբ. 11, 12: [36] Պաղմ. ԺԷ. 8: ղա. 4: [37] Պաղմ. ճժը. 26: Մատթ. իա. 9: [1] Մարկ. ժգ. 1: Ղուկ. իա. 5: [2] գ Թագ. թ. 7: Երեմ. իզ. 18: Մեռ. գ. 12: Ղուկ. ԺԹ. 44: [3] Մարկ. ժգ. 3: [4] ա Թես. ե. 1: [5] Եփես. ե. 6: Կող. բ. 8, 18: բ Թես. բ. 3: ա Ցաւհ. գ. 1: [6] Երեմ. ԺԹ. 14. իզ. 21, 23: Վարդ. 24: Ցաւհ. ե. 43: [7] Վարդ. 11:

վիք· ինչու՝ որ՝ էն ամէն բաներն պէտք է լինին· միայն թէ դեռ վերջն չէ:

7 Ազգ ազգի վերայ վերկրկեւնայ[8], եւ թագաւորութիւն թագաւորութեան վերայ, եւ սովեր կըլինին, եւ սաստիկ մահեր՝ եւ տեղ տեղ երկրի շարժմունքներ:

8 Բայց դեռ էն ամէնն՝ նեղութեանց սկիզբն է:

9 Էն ժամանակն ձեզ նեղութեանց մէջ կը բռնեն[9], եւ ձեզ կըսպանեն, եւ իմ անունիս համար ամէն ազգերին առելի կը լինիք:

10 Էյ էն ժամանակն շատեր կըգայթակղըվին[10], եւ իրար կըմատնեն եւ իրար կատեն:

11 Էյ շատ սուտ մարգարէք դուրս կըգան[11] եւ շատերըն կըմոլորացնեն[12]:

12 Էյ անօրէնութեան շատանալոյ պատճառաւն՝ շատերի սէրն կըցամաքի:

13 Բայց ով որ մինչեւ վերջն կըհամբերէ[13], նա կապրի:

14 Էյ էս արքայութեան աւետարանս[14] ամէն աշխարհքումն կը քարոզվի[15]՝ որ ամէն հեթանոսներին վկայութիւն լինի՝ եւ յետոյ վերջն կըգայ:

15 Ուրեմն՝ երբոր աւերածի պղծութիւնըն[16] տեսնէք, որ դանիէլ մարգարէի ձեռքովն ասված է[17] որ սրբութեան տեղումն կըկանգնի, ով որ կարդայ թող միտք առնէ[18]:

16 Էն ժամանակն նորանք՝ որ Հրէաստանումն (Քահանապետութիւնն) են, թող սարերն փախչին:

17 Էյ ով որ կըտրի վերայ կայ՝ թող վեր չըգայ, որ իրան տանիցն մին բան վեր առնէ:

18 Էյ ով որ յանդումն է՝ թող յետ չի գառնայ որ իրան շորերըն վերառնէ:

19 Բայց էն օրերումն վայ կըլինի յղացածներին եւ ծիծ տուողներին[19]:

20 Աղօթք արէք՝ որ էն ձեր փախչելն ձմեռան ժամանակումն եւ շաբաթի օրումն չը լինի:

21 Պատճառնոր՝ էն ժամանակն մեծ նեղութիւն կը լինի[20], ինչպէս որ աշխարհքիս սկզբից մինչեւ հիմիկ չէլաւ եւ էլ չի լինիլ:

22 Էյ թէ որ էն օրերն չը կարճանային, իսկի մին մարմին չէր ապրիլ, բայց ընտրվածներին համար էն օրերն կըկարճանան[21]:

23 Էն ժամանակն թէ որ մինն ասէ ձեզ[22]՝ ահա Քրիստոս կամ էնտեղ է՝ չհաւատաք:

24 Ինչուոր՝ սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ դուրս կըգան[23]՝ եւ շատ մեծ նըշաններ եւ հրաշքներ ցոյց կըտան, մինչեւ որ, եթէ կարելի լինէր[24], ընտրվածներին էլ կըմոլորացնէին:

25 Էհա առաջ ասացի ձեզ:

26 Պատ թէ որ ասեն ձեզ· ահա

[8] ր Մնաց· ժե· 6: Եսայ· ժէ· 2: Ամփ· բ· 22: Ջաւ· ժգ· 13: [9] Մատթ· ժ· 17: Մարկ· ժգ· 9: Ղուկ· իա· 12: Յովհ· ժե· 20: ժգ· 2: Գործ· գ· 2, 3: է· 59: ժբ· 1: ա Պետր· գ· 16: Յայտ· բ· 10, 13: [10] Մատթ· ժա· 6: ժգ· 57: բ Տիմ· ա· 15: գ· 10, 16: [11] Մատթ· է· 15: Գործ· ի· 39: բ Պետր· բ· 1: [12] ա Տիմ· գ· 1: վէբ· 5: վ·տր· 24: [13] Մատթ· ժ· 22: Մարկ· ժգ· 13: Եբր· գ· 6, 14: Յայտ· բ· 10: [14] Մատթ· գ· 23: ի· 35: [15] Մարկ· ժգ· 15: Հռովմ· ժ· 18: Կող· ա· 6, 23: [16] Մարկ· ժգ· 14: Ղուկ· իա· 20: [17] Գան· թ· 27: ժբ· 11: [18] Գան· թ· 23, 25: [19] Ղուկ· իգ· 29: [20] Գան· թ· 26: ժբ· 1: Յովէլ· բ· 2: [21] Եսայ· կե· 8, 9: Ջաւ· ժգ· 2, 3: [22] Մարկ· ժգ· 21: Ղուկ· ժէ· 23: իա· 8: [23] բ Օրին· ժգ· 1: վէբ· 5, 11: բ Թես· բ· 9, 10, 11: Յայտ· ժգ· 13: [24] Յովհ· զ· 37: ժ· 28, 29: Հռովմ· ը· 28, 29, 30: բ Տիմ· բ· 19:

անապատումն (չէօլօմի) է՝ դուրս չը՛գաք. եւ թէ ահա տան նիրան է՝ չը՛հաւատաք:

27 Պատճառնոր՝ ինչպէս կայծակն՝ որ արեւելքից դուրս կը գայ մինչեւ արեւմուտքն կերեւի, Հնպէս էլ որդի մարդոյ գալն կը լինի[25]:

28 Ինչուար՝ որ տեղ մեռած մարմին կը լինի[26], էն տեղ կը հաւաքվին արծիւներն:

29 Հուտով էն նեղութեան օրերիցն[27] եաեւ՝ արեգակն կը խաւարվի[28]. եւ լուսինն իրան լոյսն չի՛ տալ. եւ աստեղներն երկնքիցն վէր կընկնին, եւ երկնքի զօրութիւններն կը շարժվին:

30 Եւ յետոյ որդի մարդոյ նշանն[29] երկնքումն կերեւի՝ եւ էն ժամանակն երկրի ամեն ազգերն լաց կը լինին[30], եւ որդին մարդոյ կը տեսնեն երկնքի ամպերին վրայ եկած զօրութեամով եւ շատ փառքով[31]:

31 Եւ իրան հրեշտակներն մեծ փողով կուղարկի[32]. եւ իրան ընտրվածներին կը ժողովվին չորս կողմից՝ երկնքի մին ծայրիցն մինչեւ մէկել ծայրն:

32 Էն թզղի ծառիցն սովորեցէք[33] առակն՝ որ երբոր նորա ճիւղերն կը կակղին, եւ տերեւն կը բուսնէ, գիտուէք որ ամառն մօտ է:

33 Էնպէս էլ դուք՝ որ ժամանակ էս ամէն բաներըս կը տեսնէք, իմացէք որ (էս) դուռն մօտ է[34]:

34 Ճշմարիտն ասումէմ ձեզ՝ թէ էս պորոս չի՛ անցկենալ[35], մինչեւ էս ամէնս լինի:

35 Երկինքն եւ երկիրս անց կը կենան՝ եւ իմ խօսքերս չեն անցկենալ[36]:

36 Սիայն թէ էն օրին եւ ժամին (սահաթնին) հաւատր՝ ոչ ով չի՛ գիտում[37]՝ ոչ երկնքի հրեշտակներն՝ եւ ոչ որդին՝ բայց միայն Հայրն[38]:

37 Ինպէս ինչպէս էլ ան Նոյի օրերն՝ Հնպէս էլ կը լինի որդի մարդոյ գալն:

38 Ինչուար՝ ինչպէս որ էն օրերումն էին՝ որ ջրհեղեղէցն առաջ կային[39], որ ուտումէին եւ խմումէին, կին էին առնում՝ եւ մարդոց էին գնում, մինչեւ էն օրն, որ Նոյ մտաւ տապանն:

39 Եւ չըգիտացին՝ մինչեւ որ ջրհեղեղն եկաւ, եւ ամէնքըն վերացուաւ. Հնպէս էլ կը լինի որդի մարդոյ գալն:

40 Էն ժամանակն թէ որ երկու հոգի արտումն լինին՝ մինն կառնվի՝ եւ մէկէլն կը թողվի[40]:

41 Եւ թէ որ երկու հոգի մին ջաղացում աղան՝ մինն կառնվի՝ եւ մէկէլն կը թողվի:

42 Արթուն կացէք[41]՝ ինչու որ՝ չէք գիտում թէ ձեր Տէրն որ ժա-

---

[25] Ղուկ. ԺԷ. 24: [26] Յովէլ. Լ. 30: Ղուկ. ԺԷ. 37: [27] Դան. Է. 11. 12: [28] Եսայ. Ժգ. 10: Եզէկ. Լը. 7: Յովէլ. Բ. 10, 31: գ. 15: Ամբա. Ե. 20: Ը. 9: Մրկ. Ժգ. 24: Ղուկ. Խ. 25: Գործ. Բ. 20: Յայտ. Զ. 12: [29] Դան. Է. 13: [30] Զաք. ԺԲ. 12: [31] Մտթ. Ժգ. 27: Մրկ. Ժգ. 26: Յայտ. ա. 7: [32] Մտթ. Ժգ. 41: ա Կորնթ. ԺԵ. 52: ա Թես. դ. 16: [33] Ղուկ. Խ. 29: [34] Յակ. Ե. 9: [35] Մտթ. Ժգ. 28: Իգ. 36: Մրկ. Ժգ. 30: Ղուկ. Խ. 32: [36] Սաղ. ՃԲ. 26: Եսայ. Ծա. 6: Եբէր. Լ. 35, 36: Մտթ. Է. 18: Մրկ. Ժգ. 31: Ղուկ. Խ. 33: Եբէր. ա. 11: [37] Մրկ. Ժգ. 32: Գործ. ա. 7: ա Թես. Ե. 2: բ Պետր. գ. 10: [38] Զաք. Ժգ. 7: [39] Ծննդ. Զ. 3, 4, 5: է. 5: Ղուկ. ԺԷ. 26: ա Պետր. գ. 20: [40] Ղուկ. ԺԷ. 34, Եսայ: [41] Մտթ. ԻԵ. 13: Մրկ. Ժգ. 33. Եսայ: Ղուկ. Խ. 36:

մուծն (սահմնուածն) կըզայ :

43 Այն իմացէք՝ թէ որ տան տէրն գիտենար՝ թէ գողն գիշերի որ պահումն կըզայ[42], արթուն կըկենար եւ թող չէր տալ՝ որ իրան տան տակն փոս փորէ :

44 Սրահամար դուք էլ պատրաստ կացէք[43]. ինչուր՝ էն ժամն (սահմնըն)՝ որ դուք չէք սպասիլ, որդին մարդոյ կըգայ :

45 Ո՞պա ո՛վ կըլինի էն հաւատարիմ եւ խմաստուն ծառան[44] որ նորան իրան Տէրն իրան ծառանէրին վերայ դրաւ, որ նորանց կերակուր տայ իրանց ժամանակումն :

46 Երանի է էն ծառային[45]՝ որ Տէրն երբոր կըգայ, նորան էնպէս արած գտնէ :

47 Ամէնարիւրէն ասումիմ ձեզ, որ նորան իրան ամէն ապրանքին վերայ կըդնէ[46] :

48 Ո՞պա թէ որ չար ծառան իրան սրտումն ասէ, թէ իմ Տէրս գալըն ուշացնուում :

49 Եւ սկսէ իրան ընկեր ծառաներըն ծեծել՝ եւ հարբեցօղներին հետ ուտէ եւ խմէ :

50 կըգայ էն ծառային Տէրն էն օրն՝ որ նա չի՛ սպասիլ եւ էն ժամն՝ (սահմնըն) որ նա չի՛ գիտիլ :

51 Եւ նորան միջիցն կըկըտրէ եւ նորա բաժինըն կեղծաւորներին հետ կըդնէ. որ էնտեղ լաց եւ ատամնէրի կըճըտըն կըլինի[47] :

## ԳԼ · ԻՀ

1 Տան կուսանաց, 14 Եւ քանքարի առակն, 31 Վերջի դատաստանի համար ասված խօսքերըն :

1 Այն ժամանակն երկնքի արքայութիւնն կընմանվի տասն կուսանաց, որ իրանց լապտերներըն (ֆանառներըն) վերկալան՝ եւ դուրս ելին փեսային եւ հարսի առաջն[1] :

2 Նորանցից հինգն յիմար էին՝ եւ հինգն խմաստուն[2] :

3 Յիմարներն լապտերներըն վերառին՝ եւ ձէթ վեր չառին իրանց հետ :

4 Բայց խմաստուններն իրանց լապտերներին հետ ամաններով ձէթ վերառին :

5 Եւ փեսան որ ուշացաւ՝ ամէնքն թմրեցին եւ քուն էլան[3] :

6 Կէս գիշերումն ձայն էլաւ՝ թէ ահա փեսան գալիս է՝ դուրս եկէք նորա առաջն[4] :

7 Այն ժամանակն ամէն կուսանքն վեր կացան եւ իրանց լապտերներըն (ֆանառներըն) պատրաստեցին[5] :

8 Յիմարներն ասացին խմաստուններին. ձեր իւղիցն մեզ էլ տուէք. ինչու որ՝ մեր լապտերներն հանգչումեն :

9 Խմաստուններն պատասխան տուին՝ եւ ասացին. լինի թէ մեզ եւ ձեզ հերիք չըլինի. բայց գնացէք ծախողների մօտն եւ ձեզ համար գնեցէք :

10 Երբոր նորանք գնացին որ գընեն, փեսան եկաւ՝ եւ պատրաստ

---

[42] Ղ—ե. ժբ. 39։ ա Թես. ե. 2։ բ Պետր. գ. 10։ Յայտ. գ. 3։ ժզ. 15։ [43] Մատթ. իե. 13։ ա Թես. ե. 6։ [44] Ղ—ե. ժբ. 43։ Գործ. ի. 28։ ա Կորնթ. դ. 2։ Եբր. գ. 5։ [45] Յայտ. ժզ. 15։ [46] Մատթ. իե. 21, 23։ Ղ—ե. իբ. 29։ [47] Մատթ. ը. 12։ իե. 30։ [1] Եփես. ե. 29, 30։ Յայտ. ժԹ. 7։ իա. 2, 9։ [2] Մատթ. ժգ. 47։ իբ. 10։ [3] ա Թես. ե. 6։ [4] Մատթ. իդ. 31։ ա Թես. դ. 16։ [5] Ղ—ե. ժբ. 35։

կացածներն նորա հետ հարսանիքն մտին՝ եւ դուռն փակվեցաւ[6]։

11 Յետոյ էն մեկել կուսանքն էլ եկին՝ եւ ասացին. Տէր՝ Տէր՝ բաց մեզ[7]։

12 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ չեմ ճանաչում ձեզ[8]։

13 Ընդէնուն կացէք[9], ինչուոր՝ չէք գիտում օրն եւ ոչ ժամին (սոհաուէն)։

14 Ինչպէս՝ մին մարդ որ հեռու աշխարհ գնալու էլաւ[10] իրան ծառաներըն կանչեց, եւ իրան ապրանքըն նորանց տուաւ։

15 Ումնէն հինգ քանքար տուաւ՝ մեկելն երկու, եւ մեկելն մին. ամեն մեկին իրան կարողութեան չափովն[11] եւ գնաց։

16 Նա՝ որ հինգըն առաւ, շուտով գնաց՝ էն բանացրուց եւ ուրիշ հինգ էլ շահվեցաւ։

17 Ինպէս էլ նա՝ որ երկուսըն առաւ, ուրիշ երկուս էլ շահվեցաւ։

18 Իւ նա՝ որ մինը առաւ, գնաց, գետինըն փորեց՝ եւ իրան տիրոջ արծաթըն թաքցրուց։

19 Շատ ժամանակից հետու էն ծառաների տէրն եկաւ՝ եւ նորանցից համար առաւ։

20 Իւ նա՝ որ հինգ քանքար առաւ՝ առաջ եկաւ ուրիշ հինգ քանքար էլ բերաւ տուաւ՝ եւ ասաց. տէր՝ դու ինձ հինգ քանքար տուիր. ես՝ ահա ուրիշ հինգ քանքար էլ նորանց վերայ շահվեցայ։

21 Իրան տէրն նորան ասաց. ապրես՝ բարի եւ հաւատարիմ ծառայ՝ բարի եւ հաւատարիմ էս, քեզ շատ բաների վերայ կըդնեմ[12]. մտիր քո տիրոջ ուրախութիւնն[13]։

22 Նա էլ որ երկու քանքար էր առել, առաջ եկաւ եւ ասաց. տէր՝ դու ինձ երկու քանքար տուիր. ահա երկու ուրիշ քանքար էլ՝ որ նորանց վերայ շահվեցայ։

23 Իրան տէրն նորան ասաց. ապրես՝ բարի եւ հաւատարիմ[14], որովհետեւ էդ քիչ բանումդ հաւատարիմ ես, քեզ շատ բաների վերայ կըդնեմ, մտիր քո տիրոջ ուրախութիւնն։

24 Նա էլ՝ որ մին քանքար էր առել, առաջ եկաւ եւ ասաց. տէր՝ գիտումէի՝ որ դու մին քարասիրտ մարդ ես, որ հնձումես էն՝ որ չես սերմեցիր. եւ էն տեղից հաւաքումես՝ որ չես փռեցիր։

25 Վախեցայ գնացի եւ քո քանքարդ գետնի մէջ թաքցրի. ահա ահա քունն քեզ։

26 Տէրն պատասխան տուաւ՝ եւ ասաց նորան. չար եւ ծոյլ ծառայ՝ գիտուէիր՝ որ էն տեղից եմ հընձում, որ չըսերմեցի. եւ հետեղից եմ հաւաքում՝ որ չը փռեցի։

27 Պէտք էր քեզ՝ որ իմ արծաթըն տակ փոխողներին (սոհաուֆնէնէն) տայիր՝ եւ ես կըդայի եւ շահով կառնէի իմըն։

28 Ընդա առէք դորանից քանքարըն, եւ տուէք նորան որ տասն քանքարըն ունի։

---

[6] Ղուկ. ժգ. 25։ [7] Մատթ. է. 21, 22, 23։ [8] Սաղմ. ե. 5։ Ամբակ. ա. 13։ Ցնծ. թ. 31։ [9] Մատթ. իգ. 43, 44։ Մարկ. ժգ. 33, 35։ Ղուկ. խա. 36։ Աշխրհ. ժգ. 13։ աթես. ե. 6։ ա Պետր. ե. 8։ Յայտ. ժգ. 15։ [10] Մատթ. խա. 33։ Ղուկ. ժթ. 12։ [11] Հռովմ. ժբ. 6։ ա Կորնթ. ե. 7, 11, 29։ Եփես. դ. 11։ [12] Մատթ. իգ. 47։ Ակտ. 34, 46։ Ղուկ. ժբ. 44։ իբ. 29, 30։ [13] բ Տէր. բ. 12։ Եբր. ժբ. 2։ ա Պետր. ա. 8։ [14] Վէր. 21։

29 Ինչուա՛ր՝ ամէն ո՛վ որ ունի՝ նո-
րան կըտրվվի եւ կաւելանայ[15]. եւ
նա որ չունի, նորանից էն էլ որ ունի՝
վեր կառնըվի։

30 Այ էդ անպիտան ծառայիդ
հանեցէք դրսի խաւարն[16] որ էնտեղ
լաց եւ ատամների կրճըտելն կը լինի։

31 Այ ո՛ր ժամանակ որդին մար-
դոյ իրան փառքովն կըգայ[17] եւ ա-
մէն հրեշտակներն նորա հետ, էն
ժամանակն իրան փառաց աթոռին
վերայ կընստի։

32 Այ ամէն ազգերն կըժողովվին
նորա առաջին[18]. եւ նորանց կը ջոկէ
իրարից[19] ինչպէս մին հովիւ (չոպան)
որ ոչխարներըն այծերից կը ջոկէ։

33 Այ ոչխարներըն իրան աջ կող-
մըն կըկանգնացնէ՝ եւ այծերըն ձախ
կողմն։

34 Այն ժամանակն Թագաւորն կա-
սէ նորանց՝ որ աջ կողմն են, եկէք՝
իմ Հօրս օրհնըվածներ՝ ժառանգե-
ցէք էն արքայութիւնն[20], որ աշ-
խարհքի սկըզբից պատրաստված
է ձեզ համար[21]։

35 Ինչուա՛ր ես սովեցի՝ եւ տուիք
ինձ ուտել[22]. ծարաւեցի՝ եւ խմց-
րիք ինձ. օտար էի՝ եւ ինձ ձեզ մօտ
առիք[23]։

36 Մ՛երկ էի՝ եւ ինձ հագցրիք[24].
հիւանդ էի՝ եւ ինձ ակն տուիք. բան-
տի (պշպոնի) մէջ էի՝ եւ ինձ մօտ
եկիք[25]։

37 Այն ժամանակն արդարներն
պատասխան կըտան նորան եւ կասեն,
Տէր՝ (մեկը) երբ տեսինք քեզ սո-
ված՝ եւ կերակուր տուինք. կամ
ծարաւ՝ եւ խմացրինք։

38 Այ երբ տեսինք քեզ օտար՝ եւ
մեզ մօտ առինք, կամ մերկ՝ եւ հագ-
ցրինք։

39 Այ երբ տեսինք քեզ հիւանդ՝
կամ բանտի մէջ՝ եւ եկինք քեզ մօտ։

40 Թագաւորն էլ պատասխան
կըտայ՝ եւ նորանց կասէ. ճշմարիտըն
ասումեմ ձեզ՝ որովհետեւ էս իմ
փոքր եղբայրներիցս մէնին արիք[26],
ինձ արիք։

41 Այն ժամանակն նորանց էլ կա-
սէ՝ որ ձախ կողմն են. ինձանից դո՛ն
գնացէք անիծածներ[27]՝ յաւիտենա-
կան կրակի մէջն[28], որ պատրաստված
է սատանայի եւ նորա հրեշտակների
համար[29]։

42 Ինչուա՛ր՝ ես սովեցի՝ եւ չը՛ տը-
ւիք ինձ ուտել. ծարաւեցի՝ եւ ինձ
չը՛խմացրիք։

43 Օտար էի՝ եւ ինձ ձեզ մօտ
չառիք. մերկ էի՝ եւ ինձ չը՛հագցրիք.
հիւանդ՝ եւ բանտի (պշպոնի) մէջ
էի՝ եւ ինձ ակն չը՛տուիք։

44 Այն ժամանակն նորանք էլ պա-
տասխան կըտան եւ կասեն. Տէր՝
(մեկը) քեզ երբ տեսինք սոված կամ
ծարաւ կամ օտար կամ մերկ՝ կամ
հիւանդ կամ բանտի մէջ՝ եւ քեզ

[15] Մարկ. ժգ. 12։ Մարկ. գ. 25։ Ղուկ. ը. 18։ ժէ. 26։ Ցովհ. ժե. 2։ [16] Մարկ. ը. 12։ իգ. 51։ [17] Ջաւ. ժգ. 5։ Մարկ. ժզ. 27։ ժէ. 28։ Մարկ. ը. 38։ Գործ. ա. 11։ ա Թես. դ. 16։ բ Թես. ա. 7։ Ցուդ. 14։ Ցայտ. ա. 7։ [18] Հռովմ. ժգ. 10։ բ Կորնթ. ե. 10։ Ցայտ. բ. 19։ [19] Եզեկ. ե. 38։ լդ. 17, 20։ Մարկ. ժգ. 49։ [20] Հռովմ. ը. 17։ ա Պետր. ա. 4, 9։ գ. 9։ Ցայտ. իա. 7։ [21] Մարկ. ե. 23։ Մարկ. ժ. 40։ ա Կորնթ. բ. 9։ Եբր. ժա. 16։ [22] Եսայ. ծը. 7։ Եզեկ. ժը. 7։ Ցով. ա. 27։ գ Ցովհ. 5։ [23] Եբր. ժգ. 2։ գ Ցովհ. 5։ [24] Ցով. բ. 15, 16։ [25] բ Տիմ. ա. 16։ [26] Ասող. ժգ. 31։ ժէ. 17։ Մարկ. ժ. 42։ Մարկ. թ. 41։ Եբր. զ. 10։ [27] Սաղմ. զ. 8։ Մարկ. է. 23։ Ղուկ. ժգ. 27։ [28] Մարկ. ժգ. 40, 42։ [29] բ Պետր. բ. 4։ Ցուդ. 6։

ծառայութիւն չարինք։

45 Ան ժամանակն պատասխան կըտայ Նորանց՝ եւ կասէ. Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որովհետեւ էս փոքըրներիցս մընին չարիք՝ ինձ էլ չարիք[30]։

46 Նորանք կըգնան յաւիտենական տանջանքն, եւ արդարներն յաւիտենական կեանքն[31]։

## Գլ. Ի.

3 Իշխաններն Քրիստոսի վերայ խորհուրդ կանեն որ Նորան բռնեն եւ սպանեն։ 6 Մին կին Քրիստոսի գլուխն եղով կօծէ։ 14 Յուդան Քրիստոսն կըմախէ։ 17 Քրիստոս զաւրին կուտէ։ 26 Հաղորդութեան խորհուրդն կըհաստատէ։ 36 Պարտէզի մընալն կաղօթէ։ 47 Եւ մին համբոյրով կըմատնըվի։ 57 Կախտափային կը տարվի։ 69 Պետրոս Նորան կուրանայ։

1 Ու էլաւ՝ երբոր Յիսուս էս ամէն խօսքերըս վերջացուց, իրան աշակերտներին ասաց։

2 Գիտուն՝ որ երկու օրից ետեւ զատիկ կըլինի[1], եւ որդին մարդ-էդ կըմատնըվի որ խաչվի։

3 Ան ժամանակն քահանայապետներն եւ կարգացօղներն եւ ժողովրդի ծերերն ժողովվեցան[2] քահանայապետի սրահն՝ որ Նորա անունն կայիափա էր։

4 Ու խորհուրդ արին՝ որ հնարքով Յիսուսին բռնեն եւ սպանեն։

5 Բայց ասումէին՝ թէ էս տօնումն (չանէնք) որ ժողովրդի մէջն խռովութիւն չը լինի։

6 Երբոր Յիսուս եկաւ Բեթանիա[3] սիմոն բորոտի տունն[4],

7 Նորա մօտ մին կին եկաւ՝ որ մին շիշով (շաշայ) թանկագին իւղ ունէր եւ (հնաեղ) սեղան նստօղներին միջումն Նորա գլխին վերայ թափեց։

8 Երբոր աշակերտներն տեսին[5], բարկացան եւ ասացին. ինչո՞ւ էդ իւղը (զուրտեղն) կորաւ։

9 Ինչուր՝ կարելի էր շատ թանկ ծախել դրան եւ աղքատներին տալ։

10 Յիսուս իմացաւ եւ Նորանց ասաց. ինչո՞ւ էք էդ կնկանդ նեղութիւն տալիս. դա մին բարի բան գործեց ինձ վերայ։

11 Աղքատներըն ձեզ հետ ունէք[6] բայց ինձ միշտ ձեզ հետ չունէք[7]։

12 Նորա էդ իւղը իմ մարմնիս վերայ թափեցին՝ իմ թաղվիլըս նշանակեց։

13 Բայց ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որ ամէն աշխարհի մէջ՝ որ տեղ որ էս աւետարանս կըքարոզվի, դուրս յիշատակին համար էն էլ կըխօսվի՝ որ դա արաւ։

14 Ան ժամանակն տասներկուսիցն մինն[8]՝ որ Յուդա Իսկարիօտացի էր անուանվածՙ գնաց քահանայապետների մօտ[9] եւ ասաց։

15 Ի՞նչ էք կամենում տալ ինձ[10], եւ ես կըմատնեմ Նորան ձեր ձեռքն.

---

[30] Ա-ոխ. ժգ. 31։ ժէ. 5։ Ջ-ոխ. բ. 8։ Գ-ոբ. Թ. 5։ [31] Դա-ն. ժբ. 2։ Յ-վհ. ե. 29։ Հ-ովհ. բ. 7. Ե-սայ. [1] Մ-րկ. ժգ. 1։ Ղ-ոկ. խբ. 1։ Յ-վհ. ժգ. 1։ [2] Ա-ոչ. բ. 2։ Յ-վհ. ժա. 47։ Գ-ոբ. գ. 25. Ե-սայ. [3] Մ-ոթ. խա. 17։ [4] Մ-րկ. ժգ. 3։ Յ-վհ. ժա. 1, 2։ ժբ. 2։ [5] Յ-վհ. ժբ. 4։ [6] Բ Օ-րէն. ժե. 11։ Յ-վհ. ժբ. 8։ [7] Մ-ոթ. ժբ. 20։ իբ. 20։ Յ-վհ. ժգ. 33։ ժգ. 19։ ժգ. 5. 28։ ժէ. 11։ [8] Մ-րկ. ժգ. 10։ Ղ-ոկ. խբ. 3։ Յ-վհ. ժգ. 2. 30։ [9] Մ-ոթ. ժ. 4։ [10] Ջ-ոխ. ժա. 12։ Մ-ոթ. իէ. 3։

եւ Նորանը երեսուն արծաթի (փող) խոստացան Նորան։

16 Իւրաքանչիւրն ի ներանից եւեւ յարմար ժամանակ էր ուզում՝ որ Նորան մատնէ Նորանց ձեռքն։

17 Իւրաքանչիւրն ի բաղարջակերաց առաջին օրումն[11] աշակերտներն Յիսուսի մօտ եկին եւ ասացին. ո՞ր տեղ ես կամենում՝ որ քեզ համար զատիկ ուտելոյ տեղ պատրաստենք։

18 Նա էլ Նորանց ասաց. գնացէք քաղաքն՝ էս անուն մարդոյ մօտ, եւ Նորան ասացէք. վարդապետն ասում՝ ի՛մ ժամանակս մօտացել է՝ զատիկը իմ աշակերտներիս հետ քեզ մօտ կանեմ։

19 Իւրաքանչիւրն արին ինչպէս որ Յիսուս հրամայեց Նորանց. եւ զատիկն պատրաստեցին։

20 Իւրաքանչիւրն երբոր իրիկուն էլաւ[12] տասներկու աշակերտներին հետ սեղան էր նստել։

21 Իւրաքանչիւրն Նորանց ասում էր. ասաց՝ ճշմարիտն ասում ձեզ՝ որ ձեզանից մինն կը մատնէ ինձ։

22 Իւրաքանչիւրն շատ տրտմեցան, եւ Նորանց ամէն մէկն սկսեցին Նորան ասել. Տէր՝ ընդի՞ր ես եմ։

23 Նա պատասխան տուաւ եւ ասաց. էն որ ինձ հետ իրան ձեռն սկաւառակի (ամանի) մէջն կը մտցընէ[13], նա կը մատնէ ինձ։

24 Մարգոյ որդին կը գնայ՝ ինչպէս որ Նորա համար գրած է[14]. բայց վայ էն մարդոյն՝ որ Նորա ձեռնէն որդին մարդոյ կը մատնուի[15], լաւ էր Նորան՝ թէ էն մարդն ծնած չըլինէր։

25 Յուդան որ Նորան մատնելու էր՝ պատասխան տուաւ եւ ասաց. միթէ ես եմ վարդապետ Նորան ասաց՝ դու ասացիր։

26 Իւրաքանչիւրն գնում էին[16], Յիսուս հաց առաւ՝ օրհնեց եւ կարեց[17], եւ աշակերտներին տուաւ՝ եւ ասաց. առէք կերէք՝ էս է իմ մարմինս[18]։

27 Իւրաքանչիւրն (ըսպան) առաւ՝ գոհացաւ՝ Նորանց տուաւ, եւ ասաց. դրանից ամէնքդ խմեցէք[19]։

28 Ինչուղր էդ է իմ արիւնս[20] նոր ուխտի եւ պայմանի[21] որ շատերի վերայ թափվում[22], մեղաց թողութեան համար։

29 Այսպէս թէ՝ ասում ձեզ՝ թէ սրանից եւեւ որթի (ծառի) բերքից[23] էլ չեմ խմիլ՝ մինչեւ էն օրն՝ որ դուրան ձեզ հետ նոր խմեմ իմ հօրս արքայութեան մէջն[24]։

30 Իւրաքանչիւրն օրհնեցին եւ դուրս էլան ձիթենեաց սարն[25]։

31 Իւրաքանչիւրն Յիսուս Նորանց ասաց. դուք ամէնքդ էս գիշերս[26] կրգայթակղուիք ինձանից[27]. ինչուղր՝ գրած է՝ թէ հովիւն (չոպանն) կը զարկեմ՝ եւ հօտի (ախթաճի) ոչխարներն կը ցրուվին[28]։

32 Իւրաքանչիւրն իմ յարութենի առնելուցն եւեւ ձեզանից առաջ կը գնամ՝ գալիլա[29]։

33 Պետրոս պատասխան տուաւ եւ ասաց Նորան. թէ եւ ամէնքն էլ գայ-

[11] Եել. ժբ. 6, 18։ Մարկ. ժդ. 12։ Ղուկ. խբ. 7։ [12] Մարկ. ժդ. 17–21։ Ղուկ. խբ. 14։ [13] Սաղմ. խա. 9։ Ղուկ. խբ. 21։ Ցուհ. ժգ. 18, 21։ [14] Սաղմ. խբ։ Եսայ. ծգ։ Դան. թ. 26։ Մարկ. թ. 12։ Ղուկ. խդ. 25, 26, 46։ Գործ. ժե. 2, 3։ խգ. 23, 23։ ա Կորնթ. ժե. 3։ [15] Ցուհ. ժե. 12։ [16] Մարկ. ժդ. 22։ Ղուկ. խբ. 19։ [17] ա Կորնթ. ժա. 23, 24, 25։ [18] ա Կորնթ. ժ. 16։ [19] Մարկ. ժդ. 23։ [20] Եել. խդ. 8։ Գործ. ժբ. 11։ [21] Երեմ. լա. 31։ [22] Մարկ. ի. 28։ Հռոմ. ե. 15։ Եբր. թ. 22։ [23] Մարկ. ժդ. 25։ Ղուկ. խբ. 18։ [24] Գործ. ժ. 41։ [25] Մարկ. ժդ. 26։ [26] Մարկ. ժդ. 27։ Ցուհ. ժգ. 32։ [27] Մարկ. ժա. 6։ [28] Զաք. ժգ. 7։ [29] Մարկ. խբ. 7, 10, 16։ Մարկ. ժդ. 28։ ժզ. 7։

Թակղվին քեզանից, բայց ես չեմ պայթակղվիլ :

34 Յիսուս նորան ասաց . ճշմարիտն ասումեմ քեզ . Թէ ես գիշերս՝ գեռ հաւն չը լսածած՝ երիք անգամ կուրանաս ինձ[30] :

35 Պետրոս նորան ասաց . Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ՝ չեմ ուրանալ քեզ . Ենպէս էլ ամէն աշակերտներն էին ասում :

36 Ն ժամանակն Յիսուս նորանց հետ մին գիւղ եկաւ[31]՝ որ Նորա անունն գեթսեմանի էր՝ եւ նորանց ասաց . Էգ տեղ նստեցէք . մինչեւ որ գնամ աղօթք անեմ :

37 Ւ պետրոսըն եւ զեբեդեայի երկու որդիքըն[32] իրան հետ առաւ , սկսեց տրտմիլ եւ հոգս քաշել :

38 Ն ժամանակն նորանց ասաց . իմ հոգիս մեռնելոյ չափ տրտմած է[33]. Եստեղ կացէք եւ ինձ հետ արթուն մնացէք :

39 Ւ մին քիչ առաջ գնաց՝ երեսին վերայ ընկաւ՝ աղօթք արաւ[34] եւ ասաց . իմ Հայր[35]՝ թէ որ կարելի է թո՛ղ էս բաժակս[36] (Նասս) ինձանից անցկենայ . բայց չը թէ ինչպէս ես եմ կամենում , այլ ինչպէս դու[37] :

40 Ւկաւ աշակերտների մօտ , եւ նորանց քընի մէջ գտաւ՝ եւ ասաց պետրոսին . Էգպէս՝ մին ժամ (ժամ Հաւ) էլ չըկարացիք ինձ հետ արթուն կենալ :

41 Ւրթուն կացէք՝ եւ աղօթք արէք՝ որ փորձանքի մէջ չընկնիք[38]. Հոգիս յօժար է՝ բայց մարմինս ակար :

42 Ւ նորից երկրորդ անգամ Յիսուս գնաց եւ աղօթք արաւ՝ եւ ասաց . իմ Հայր՝ թէ կարելի է , որ էս բաժակս (Նասս) ինձանից անց կենայ . ապա թէ ո՛չ՝ կըլամեմ սորան , թո՛ղ քո կամքդ լինի :

43 Ւ մինել եկաւ նորանց քընի մէջ գտաւ , ինչուր՝ նորանց աչքերն ծանրացել էին :

44 Ւ նորանց թողեց եւ գնաց՝ եւ երրորդ անգամ աղօթք արաւ՝ եւ միեւնոյն խօսքըն ասաց :

45 Ն ժամանակն աշակերտներին մօտ եկաւ՝ եւ նորանց ասաց . այսուհետեւ քունն էլէք՝ եւ հանգիստ առէք . ինչուր՝ ահա հասել է ժամանակն՝ եւ որդին մարդոյ մատնըվում մեղաւորաց ձեռքըն :

46 Ւ եր կացէք գնանք էս տեղից . ինչուր՝ ահա հասաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ :

47 Ւ դեռ քանի որ նա էն խօսումէր , ահա յուդա՝ էն տասներկուսիցն միեւն՝ եկաւ՝ եւ նորա հետ մեծ ամբոխ (Նասս) սրերով եւ կըրներով՝ քահանայապետներիցն եւ ժողովրդի ծերերիցն[39] :

48 Ւ նա՝ որ նորան մատնելու էր , նորանց նշան տուաւ եւ ասաց . որին որ ես կըհամբուրեմ՝ նա է . նորան բռնեցէք :

49 Ւ շուտով Յիսուսի մօտ եկաւ՝ եւ ասաց . ողջ կաց վարդապետ՝ եւ նորան համբուրեց[40] :

50 Ւ Յիսուս նորան ասաց . ընկեր[41] (դու) ինչո՞ւ համար եկիր . եւ էն ժամանակն մօտ եկին Յիսուսին ձեռք ձգեցին՝ եւ նորան բռնեցին :

51 Ւ ահա նորանցից մինն՝ որ

[30] Մարկ . ժդ . 30 : Ղուկ . խբ . 34 : Յովհ . ժդ . 38 : [31] Մարկ . ժդ . 33–35 : Ղուկ . խբ . 39 : Յովհ . ժը . 1 : [32] Մարկ . դ . 21 : [33] Յովհ . ժբ . 27 : [34] Մարկ . ժդ . 36 : Ղուկ . խբ . 42 : Եբր . ե . 7 : [35] Յովհ . ժբ . 27 : [36] Մարկ . ժ . 22 : [37] Յովհ . ե . 30 : ջ . 38 : Փիլիպ . բ . 8 : [38] Մարկ . ժդ . 33 : ժդ . 38 : Ղուկ . խբ . 40 . 46 : Եփես . ջ . 18 [39] Մարկ . ժդ . 43 : Ղուկ . խբ . 47 : Յովհ . ժը . 3 : Գործ . ա . 16 : [40] ր Թագ . ժ . 9 : [41] Սամ . խա . 9 : Ծն . 13 :

Յիսուսի հետ էին, ձեռքն մեկնեց եւ իրան սուրբն հանեց՝ եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորա ականջն կտրեց[42]:

52 Յն ժամանակն Յիսուս նորան ասաց. քո սուրբդ իրան տեղն դիր. պատճառնոր՝ նորանք որ սուր կառնեն, սրով պիտի ընկնին[43]:

53 Կամ թէ կարծուես՝ որ չեմ կարող իմ Հօրըս աղաչել՝ եւ հիմիկ սաանեղկու գունդ (պէօլօւ) հրեշտակներից աւելի կըՀասցնէ ինձ Էստեղ[44]:

54 Ետյց ինչպես կըկատարվին գըքերըն՝ թէ Էապէս պէտք է լինել[45]:

55 Յն ժամանակն Յիսուս էն ամբոխին (խալխին) ասաց. ինչպես մին աւազակի վերայ սրերով եւ բՀըրներով դուրս եկիք ինձ բռնել. միշտ ձեզ մօտ տաճարումն նստումէի՝ եւ սովորցնումէի՝ եւ չբըբռնեցիք ինձ:

56 Ետյց Էս ամէնն էլաւ՝ որ մարգարէների գըքերն կատարվին[46]. էն ժամանակն ամէն աշակերտներն նորան թողին եւ փախան[47]:

57 Ետյց նորանք Յիսուսին բըռնեցին եւ տարան կայիափա քահանայապետի մօտն[48], որ տեղ որ կարգացողներն եւ ծերերն ժողովված էին:

58 Յն պետրոս Հեռուանց գնումէր նորա ետեւէն մինչեւ քահանայապետի սրահն. եւ ներս մտաւ ծառաներին Հետ նստեց՝ որ վերջըն տեսնէ:

59 Ետյց քահանայապետներն եւ բոլոր տիւանն Յիսուսի Համար սուտ վկայութիւն էին ուզում՝ որ նորան սպանեն:

60 Յւ Էն շատ սուտ վկաներից որ Էնեղ էին եկել[49], բան չէին գտնում. յետոյ երկու սուտ վկաներ առաջ եկին[50]:

61 Ետյսեվին՝ թէ սա ասումէր՝ ես կարող եմ Ետուծոյ տաճարըն քանդել՝ եւ երեք օրումն շինել[51]:

62 Յւ քահանայապետն վերկացաւ նորան ասաց. պատասխան չես տալիս՝ ինչ որ գորանք քեզանից գանգատումեն[52]:

63 Յւ Յիսուս լուռ էր կենում[53]. քահանայապետն պատասխան ըսւաւ, եւ նորան ասաց. կենդանի Ետուծոյն եմ երդումէ տալիս[54] քեզ՝ որ ասես մեզ՝ թէ դու ես օրդի Ետուծոյ Քրիստոսն:

64 Նորան ասաց. դու ասացիր. բայց ասումեմ ձեզ՝ որ հիմիկուց եւ տեւ կըտեսնէք որդին մարդոյ[55] (Ետուծոյ) զօրութեան աջ կողմն նըստած՝ եւ երկնքի ամպերին վերայ եկած[56]:

65 Յն ժամանակն քահանայապետն իրան շորերըն պատառեց[57] եւ ասաց. հայհոյեց. էլ ինչ պէտք է մեզ վկայ. ահա հիմիկ դուրս հայհոյանքըն լսեցիք:

66 Ինչ Համոյ է ձեզ. նորանք պատասխան տուին՝ եւ ասացին. (դա) մահապարտ է[58]:

---

[42] ՅովՀ. մը. 10: [43] Ծննդ. Թ. 6: Ցայտ. ժգ. 10: [44] գ Թագ. գ. 17: Դան. է. 10: [45] Եսայ. ծգ. 7, Երեմ. վԼը. 24: Ղեւտ. իդ. 25, 44, 46: [46] Ռէգ. գ. 20: վԼը. 54: [47] ՅովՀ. մը. 15: [48] Մարկ. ժգ. 53: Ղեւտ. իբ. 54: ՅովՀ. մը. 12, 13, 24: [49] Սաղմ. իէ. 12: լը. 11: Մարկ. ժգ. 55: Գործ. գ. 13: [50] բ Օրին. մԼԸ. 15: [51] Մարկ. իէ. 40: ՅովՀ. բ. 19: [52] Մարկ. ժգ. 60: [53] Եսայ. ծգ. 7: Մաղաք. իէ. 12, 14: [54] Գնաց. ե. 1: ա Թագ. ժգ. 24, 26: [55] Դան. է. 13: Մաղաք. ժգ. 27: իդ. 30: Ղեւտ. իա. 27: իէ. 31: ՅովՀ. ա. 51: Հռովմ. ժգ. 10: ա Թես. դ. 16: Ցայտ. ա. 7: [56] Սաղմ. ՀԸ. 1: Գործ. է. 55: [57] գ Թագ. մը. 37: ԺԹ. 1: [58] Ղեւտ. իգ. 16: ՅովՀ. մԸ. 7:

67 Եւ ժամանակն թլփեցին նորա երեսին[59]. եւ բռընց քով թաղեցին. եւ մին քահանան էլ ապտակ[60] (ախլէ) տուին նորան, եւ ասացին:

68 Դուն Քրիստոս՝ մարգարէացիր մեզ՝ նա ով է որ քեզ զարկեց[61]:

69 Եւ պետրոս դուրսն նստած էր սրահումն[62]. մին աղախին (ղըզ-աշ) նորա մօտ եկաւ, եւ ասաց. դուն էլ էն Յիսուս գալիլեացոյ հետն էիր:

70 Նա ամէնի առաջին ուրացաւ՝ եւ ասաց. չեմ գիտում թէ դու ինչ ես խօսում:

71 Եւ երբոր նա դռնիցն դուրս գնաց, մին ուրիշ կին նորան տեսաւ՝ եւ նորանց որ էն տեղ կային ասաց. սա էլ Յիսուս նազովրեցոյ հետն էր:

72 Եւ մինէլ երդումով ուրացաւ՝ թէ ես էն մարդուն չեմ ճանաչում:

73 Եւ մին քիչ յետոյ՝ նորանք որ հնտեղ կանգնած էին, եկին պետրոսին ասացին. իրաւի որ դու էլ նորանցից ես. ինչուոր՝ քո խօսքդ էլ յայտնում քեզ[63]:

74 Եւ ժամանակն սկսեց անիծել եւ երդվիլ[64]՝ թէ ես էն մարդուն չեմ ճանաչում, եւ շուտով հաւն կանչեց:

75 Եւ պետրոս յիշեց Յիսուսի էն խօսքըն՝ որ ասաց. թէ հաւն դեռ չը կանչած՝ երեք անգամ կուրանաս ինձ[65]. եւ դուրս գնաց դառն արտասուքով լաց էլաւ:

## ԿԻ. ԻՆ

1 Քրիստոսի կապած Պիղատոսի մատնելին: 3 Յուդան իրան ձեռնպէ է խեղդում. 19 Պիղատոս իրան կընդ խրատվելով, 24 Ձեռներըն կըլուայ. 26 Եւ բարաբբային կարձակէ: 29 Քրիստոսի փըշերով պսակվին, 34 խաչվին, 40 Նախատվին, 50 Մեռնիլ, Եւ թաղվին. 66 Իրան պերեզման կըկնքվի եւ պահապաններ կըդրվի:

1 Եւ երբոր առաւօտ էլաւ, ամէն քահանայապետներն եւ ժողովրդի ծերերն Յիսուսի համար խորհուրդ արին՝ որ սպանեն նորան[1]:

2 Նորան կապեցին, եւ առին գընացին, եւ պոնտացի պիղատոս դատաւորի ձեռքն տուին[2]:

3 Եւ ժամանակն Յուդան՝ որ նորան մատնեց՝ տեսաւ որ դատապարտվեցաւ, զղջացաւ՝ եւ էն արծաթըն Յիսուսի քահանայապետներին եւ ժողովրդի ծերերին[3]:

4 Եւ ասաց. մեղայ՝ ինչուոր արդար արիւն մատնեցի. նորանք էլ ասացին՝ մենք հոգս չունինք. դու գիտես:

5 Եւ արծաթըն քցեց տաճարի մէջն՝ եւ գնաց եկաւ, եւ գնաց խեղդվեցաւ[4]:

6 Իսյց քահանայապետներն էն արծաթըն առին՝ եւ ասացին. արժան չէ՝ որ էդ գանձանակի մէջն ընդունենք, ինչուոր արիւնի գին է:

7 Խորհուրդ արին՝ եւ նորանով բրուտի արտատեղն գնեցին՝ որ օտարականների գերեզմանատեղ լինի:

8 Էրահամար՝ էն արտատեղն՝ ա-

[59] Եսայ. Ծ. 6: Նգ. 3: Մատթ. իե. 30: [60] Ղուկ. իը. 63. Ցուկ. ժթ. 3: [61] Մուկ. ժգ. 65: Ղուկ. իը. 64: [62] Մուկ. ժգ. 66: Ղուկ. իը. 55: Ցուկ. ժը. 16, 17, 25: [63] Ղուկ. իը. 59: [64] Մուկ. ժգ. 71: [65] Վէր. 34: Մուկ. ժգ. 30: Ղուկ. իը. 61, 62: Ցուկ. ժգ. 38: [1] Սաղմ. ը. 2: Մուկ. ժե. 1: Ղուկ. իը. 66: [2] Մատթ. ի. 19: Ղուկ. իգ. 1: Ցուկ. ժը. 28: Գործ. գ. 13: [3] Մատթ. իզ. 14, 15: [4] Բ Թագ. ժե. 23: Գործ. ա. 18:

բիւնի արտ կոչվեցաւ մինչեւ ես օր[5]։

9 Յն ժամանակն կատարվեցաւ էն՝ որ ելեմիա մարգարէի ձեռովն ասվեցաւ, եւ էն ելեսուն արծաթի փողըն առին՝ էն ծախվածի գինըն՝ որ նորան իսրայէլի որդիքներից առել էին[6]։

10 Յս նորան բրուտի արտին տըւին՝ ինչպէս որ Հրամայեց ինձ Տէրն։

11 Յս Յիսուս կանգնեց դատաւորի առաջին, դատաւորն Հարցրուց նորան՝ եւ ասաց[7], դո՞ւ ես Հրէից (Ջհուդանէրի) թագաւորն, եւ Յիսուս ասաց, դու ես ասում[8]։

12 Յս երբոր քահանայապետներն եւ ծերերն նորանից չարախօսութիւն էին անում, նա խըկի պատասխան չըտուաւ[9]։

13 Յն ժամանակն պիղատոս ասաց նորան, չե՞ս լսում թէ դորանք որքա՜ափ քեզ Հակառակ են վկայում[10]։

14 Յս նորան խըկի մին բան էլ պատասխան չըտուաւ, մինչեւ որ դատաւորն էլ շատ զարմացաւ։

15 Իսպէ սովորութիւն էր դատաւորին՝ որ ծնի ժամանակումն մին բանտարկեալ[11] արձակէ ժողովրդին Համար, որին որ ուզում էին։

16 Յն ժամանակն մին անուանի բանտարկեալ ունէին, որ նորա անունն յԻսուս բարաբբա էր։

17 Յերբոր Հաւաքվեցան, պիղատոս նորանց ասաց, էս երկուսից որըն էք ուզում՝ որ ձեզ Համար արձակեմ, յԻսուս բարաբբային, թէ Յիսուսին, որ Քրիստոս է կոչված։

18 Պատճառնար՝ գիտում էր՝ որ նախանձով էին մատնել նորան։

19 Յս դատաստան էր նստած, նորա կինն ուղարկեց նորա մօտն եւ ասաց, էդ արդար մարդով Հետ դու բան չունես, ինչուոր՝ շատ բաներ երազումն էս օր իմ գըլխովս անցկացան նորա Համար։

20 Իսպէ քահանայապետներն եւ ծերերն՝ ժողովուրդներին Հաւանացրին՝ որ բարաբբային ուզեն՝ եւ Յիսուսին կորցնեն[12]։

21 Պատասխան տուաւ դատաւորն եւ ասաց նորանց՝ էս երկուսից որըն էք ուզում՝ որ արձակեմ ձեզ Համար։ Եւ նորանք ասացին՝ բարաբբային։

22 Պիղատոս ասաց նորանց, ապա ինչ անեմ Քրիստոս կոչված Յիսուսին։

23 Իմնքն էլ ասացին, պէտք է խաչվի։ Եւ նա ասաց, ի՞նչ չար բան է արել։ Եւ նորանք էլ աւելի աղաղակում էին եւ ասում՝ պէտք է խաչվի։

24 Յս պիղատոս երբոր տեսաւ՝ թէ իսկի օգուտ չի անում, բայց աւելի խռովութիւն է լինում, Ջուր առաւ՝ ժողովրդի առաջին ձեռներըն լուաց[13] եւ ասաց, ես էդ արդարիդ արիւնից անպատրաստ եմ, դուք գիտէք։

25 Իմն ժողովուրդն պատասխան տուաւ եւ ասաց, դորա արիւնն մեզ վերայ եւ մեր որդոց վերայ[14]։

26 Յն ժամանակն բարաբբային

---

[5] Գործ · ա · 19։ [6] Զաք · ժա · 12, 13։ [7] Մատթ · ժէ · 2։ Ղուկ · իգ · 3։ Ցովհ · ժը · 33։ [8] Ցովհ · ժը · 37։ ա Տիմ · գ · 13։ [9] Մատթ · իզ · 53։ Ցովհ · ժԹ · 9։ [10] Մատթ · իգ · 62։ Ցովհ · ժԹ · 10։ [11] Մատթ · ժէ · 6։ Ղուկ · իգ · 17։ Ցովհ · ժը · 39։ [12] Մատթ · ժէ · 11։ Ղուկ · իգ · 18։ Ցովհ · ժը · 40։ Գործ · գ · 14։ [13] բ Օրէն · իա · 6։ [14] բ Օրէն · ժԹ · 10։ Յեր · բ · 19։ բ Թագ · ա · 16։ գ Թագ · բ · 32։ Գործ · է · 28։

արձակեց Նոյանց համար, եւ Յիսուսին ծնծեց[15], եւ ձեռնէն տուաւ՝ որ խաչվի։

27 Յն ժամանակն զատաւորի զինուորներն՝ Յիսուսին տարան պալատան[16], եւ ամէն զինուորների դունդը (պէօլ-ըն) հաւաքեցին նորա վերայ։

28 Նորան մերկացրին՝ եւ նորա վերայ մին կարմիր քղամիդ[17] (ֆէրճէ) քցեցին։

29 Յե փըշերից մին թագ[18] քողորացրին՝ նորա գլուխն դրին, եւ նորա աջ ձեռին մին եղէգ (ղամըշ)։ Նորա առաջին ծունր գնելով՝ ծաղր էին անում եւ ասում՝ ողջ կաց Հըբէից (ջեհուդիներէ) թագաւոր։

30 Յե նորան թքելով՝ էն եղէգը առնումէին եւ նորա գլուխը թակումէին[19]։

31 Յե երբոր ծաղը արին նորան, էն կարմիր քղամիդն (ֆէրճէն) նորանից հանեցին՝ եւ նորան տարան որ խաչ հանեն[20]։

32 Յե երբոր դուրս էլան[21], մին կիւրենացի մարդ գտին՝ սիմն անունն[22]։ Նորան ուժով բռնեցին քաշեցին՝ որ նորա խաչը վերառնէ։

33 Յերբոր գողգոթա[23] ասված տեղն եկին, որ գլխատեղ տեղ է,

34 Նորան լեղով հետ խառնած գինի տուին[24] խըմել՝ եւ երբոր համին առաւ, չէր կամենում որ խըմէ։

35 Յե երբոր նորան խաչ հանեցին, նորա շորերը վիճակով բաժանեցին[25]՝ որ կատարվի էն խօսքն՝ որ մարգարէին ասված էր՝ Թէ իմ շորերը իրանց միջումն բաժանեցին՝ եւ իմ կապայիս վերայ վիճակ էին քցում[26]։

36 Յե նստած պահումէին նորան[27]։

37 Յե նորա վեռասըն (սուչըն) գըրեցին՝ եւ իրան գլխին վերայ դրին՝ Թէ սա է Յիսուս Հըբէից (ջեհուդիներէ) թագաւորն[28]։

38 Յն ժամանակն նորա հետ երկու աւազակներ[29] էլ խաչ հանեցին՝ մինըն նորա աջ կողմն՝ եւ մէկէլըն նորա ձախ կողմն։

39 Յե նորանք որ էնտեղից անցէին կենում, հայհոյումէին նորան[30]՝ իրանց գլխներըն շարժումէին,

40 Յե ասումէին՝ վա՛հ որ տաճարըն քանդումէիր՝ եւ երեք օրում շինումէիր[31]՝ ապրեցրո՛ւ քեզ՝ Թէ որ Աստուծոյ որդին ես, վէր կէ խաչիցդ[32]։

41 Յնպէս էլ քահանայապետներըն ծաղր էին անում գրագացոնների եւ ծերերին հետ՝ եւ ասումէին։

42 Ուրիշներըն ապրեցրուց՝ ինքն իրան չէ կարում ապրեցնել՝ Թէ որ իսրայէլի թագաւորն է, հիմիկ Թող վէր գայ խաչիցդ, եւ հաւատանք դորան։

43 Թէ որ Աստուծոյն յուսացաւ[33], հիմիկ Թող փրկէ դորան, Թէ որ ուզումէ դորան՝ ինչուր՝ ասացի՝ Թէ Աստուծոյ որդի եմ։

44 Յնպէս էլ աւազակներն՝ որ նորա հետ խաչված էին՝ նորան նախա-

[15] Լաւ. ծգ. 5։ Մարկ. ժե. 15։ Ղուկ. իգ. 16, 24, 25։ Յովհ. ժԹ. 1. 16։ [16] Մարկ. ժե. 16։ Յովհ. ժԹ. 2։ [17] Ղուկ. իգ. 11։ [18] Սաղմ. կԹ. 19։ Եսայ. ծգ. 3։ [19] Եսայ. ծ. 6։ Մարկ. իզ. 67։ [20] Եսայ. ծգ. 7։ [21] Թուոմ. ժե. 35։ գ Թագ. իա. 13։ Գործ. է. 58։ Եբր. ժգ. 12։ [22] Մարկ. ժե. 21։ Ղուկ. իգ. 26։ [23] Մարկ. ժե. 22։ Ղուկ. իգ. 33։ Յովհ. ժԹ. 17։ [24] Սաղմ. կԹ. 21։ Վայր. 48։ [25] Մարկ. ժե. 24։ Ղուկ. իգ. 34։ Յովհ. ժԹ. 24։ [26] Սաղմ. իբ. 18։ [27] Վայր. 54։ [28] Մարկ. ժե. 26։ Ղուկ. իգ. 38։ Յովհ. ժԹ. 19։ [29] Եսայ. ծգ. 12։ Մարկ. ժե. 27։ Ղուկ. իգ. 32, 33։ Յովհ. ժԹ. 18։ [30] Սաղմ. իբ. 7։ ՃԹ. 25։ Մարկ. ժե. 29։ Ղուկ. իգ. 35։ [31] Մարկ. իզ. 61։ Յովհ. բ. 19։ [32] Մարկ. իզ. 63։

տուաքին[34]։

45 Եւ օրի վեց ժամիցն (սահմնկին) մինչեւ ինն ժամն ամէն երկրի վերայ խաւար էլաւ[35]։

46 Եւ ինն ժամին (սահմնկին) դէմ Յիսուս մեծ ձայնով կանչեց եւ ասաց[36]. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. որ կասվի. իմ Աստուած՝ իմ Աստուած՝ ինչո՞ւ թողիր ինձ[37]։

47 Ոմն քանի մարդիք նորանցից՝ որ Էնտեղ կանգնած էին՝ երբոր լսեցին, ասաւքին՝ դա եղիային է կանչում։

48 Եւ շուտով նորանցից միւնն վազեց՝ սպունգ (սխնկէր) քացախով լիքն առաւ՝ եղէգի (ղամիշ) վերայ անցրուց՝ եւ նորան տուաւ, որ խըմ[38]։

49 Եւ կէսն ասաւքին. թող տեսնենք. եթէ եղիան կըգայ դորան փրկել։

50 Եւ Յիսուս միւնէլ մեծ ձայնով կանչեց՝ եւ արձակեց հոգին[39]։

51 Եւ ահա տաճարի վարագուրն երկու (կտոր) ճղվեցաւ վերեւիցն մինչեւ ցածն[40], եւ երկիրն շարժվեցաւ. եւ քարեր պատռտվեցան։

52 Եւ գերեզմանները բաց էլան. եւ շատ մարմիններ սուրբ նընջեցելոց յարութիւն առին։

53 Եւ գերեզմաններիցն դուրս եկին նորա յարութենիցն ետեւ՝ սուրբ քաղաքն մտին՝ եւ շատերին երեւեցան։

54 Իսպ հարիւրապետն եւ նորանք՝ որ նորա հետ Յիսուսին պահ տուէին[41], երբոր էն շարժմունքըն եւ էն էլածներըն տեսին, շատ վախեցան եւ ասացին. Ճշմարիտ որ սա Աստուծոյ որդի էր։

55 Իսն տեղ շատ կանայք կային՝ որ հեռուանց կանգնել էին՝ եւ մարիկ էին տալիս. որ գալիլեայիցն Յիսուսի ետեւէն եկին որ ծառայութիւն անէն նորան[42]։

56 Որանց միջումն էր մարիամ մագդալենացին՝ եւ մարիամ յակոբի եւ յոսէի մայրն[43] եւ զեբեդիայի որդոց մայրն։

57 Եւ երբոր իրիկուն էլաւ արիմաթեացին մին հարուստ մարդ եկաւ՝ որ նորա անունն յոսէփ էր[44], որ ինքն էլ աշակերտ էլած էր Յիսուսին։

58 Սա գնաց պիղատոսի մօն՝ եւ Յիսուսի մարմինըն խնդրեց. էն ժամանակն պիղատոս հրամայեց՝ որ մարմինըն տան։

59 Եւ յոսէփն մարմինըն առաւ՝ յիստակ կտաւներով պատանեց,

60 Եւ (մին) նոր գերեզմանի մէջ դրաւ՝ որ քարի մէջն փորել էր[45]. եւ գերեզմանի դուռն առաջին մին մեծ քար քցեց (նորան) փակելըց համար. եւ գնաց։

61 Իսն տեղ էր մարիամ մագդալենացին եւ մէկել մարիամն, որ գերեզմանին դէմ նստած էին։

62 Եւ նորա հետեւյան օրումն՝ որ ուրբաթի ետեւ է, քահանայապետներն եւ փարիսեցիներն հաւաքվեցան պիղատոսի մտա։

63 Եւ ասացին. տէր մեզներս բնքինք, որ էն մոլորացնօղն դեռքանի որ կենդանի էր, ասուաքը. թէ երեք

[34] Մարկ. ժե. 32։ Ղուկ. իգ. 39։ [35] Ամաւ. ը. 9։ Մարկ. ժե. 33։ Ղուկ. իգ. 44։ [36] Եբեր. ե. 7։ [37] Սաղմ. իբ. 1։ [38] Սաղմ. կճ. 21։ Մարկ. ժե. 36։ Ղուկ. իգ. 36։ Յովհ. ժզ. 29։ [39] Մարկ. ժե. 37։ Ղուկ. իգ. 46։ [40] Եբր. իզ. 31։ բ Մնաց. գ. 14։ Մարկ. ժե. 38։ Ղուկ. իգ. 45։ [41] Ա՛ղբ. 36։ Մարկ. ժե. 39։ Ղուկ. իգ. 47։ [42] Ղուկ. ը. 2. 3։ [43] Մարկ. ժե. 40։ [44] Մարկ. ժե. 43։ Ղուկ. իգ. 50։ Յովհ. ժզ. 38։ [45] Եսայ. նդ. 9։

օրիցն եաեւ յարուԹիւն կառնեմ[46]։

64 Ուրեմն հրաման տուր. որ մինչեւ երեք օր գերեզմանըն զգուշուԹիւնով պահեն. որ չըլլնի Թէ աշակերտներն գիշերն գան նորան գողանան՝ եւ ժողովրդին ասեն՝ Թէ մեռելներէ միջնցն յարուԹիւն առաւ, եւ յետին մոլորուԹիւնն չար լինի քանԹէ առաջինն։

65 Պիղատոս ասաց նորանց. պահապան զինուորներ ունիք. գնացէք զգոյշ պահեցէք ինչպէս որ գիտուԹիւնէ։

66 Նորանք էլ գնացին գերեզմանին պահպանուԹիւն արին. եւ պահապան զինուորներուն հետ քարըն կնքեցին[47] (Ղուկասէ)։

## ԳԼ. ԻԸ

1 Հրեշտակն Քրիստոսի յարուԹեան համար կանանցն աւետիս կըտայ։ 9 Քրիստոս նորանց կերեւանայ։ 11 Քահանայապետներն զինուորներուն փող կըտան, որ ասեն Թէ՝ նորան գերեզմանէն գողցան։ 16 Քրիստոսի իրեն աշակերտներուն երեւնալն, 19 եւ նորանք հեԹանոսներն աշակերտելոյ ուղարկելն։

1 Եւ շաբաԹի իրիկունն՝ որ մէկ շաբաԹի էր լուսանում[1], մարիամ մագդաղենացին եկաւ՝ եւ մէկել մարիամ[2] էլ, որ գերեզմանըն տեսնեն։

2 Եւ մեծ շարժուն եղաւ՝ ինչուորՏէրի հրեշտակն երկնքէցն վէր եկաւ՝ գնաց գոնին էն քարըն հեռու Թօլարաւ՝ եւ նորա վերայ նըստաւ[3]։

3 Եւ նորա կերպարանքն փայլակի պէս էր՝ եւ նորա հագուստն ձիւնի պէս սպիտակ[4]։

4 Եւ նորա ահիցն պահապանները շիտոնեցան, եւ մեռելի նման էլան։

5 Հրեշտակն պատասխան առաւ՝ եւ էն կանանցն ասաց. դուք մի վախենաք. գիտեմ՝ որ Յիսուս խաչվածըն էք ուզում։

6 Նստեղ չէ. պատճառն որ՝ յարուԹիւն առաւ՝ ինչպէս որ ասաց[5]. եկէք տեսէք էն տեղըն որ նա կար։

7 Եւ շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք՝ Թէ նա յարուԹիւն առաւ. եւ ահա նա ձեզանից առաջ գալիլեայ կըգնայ[6]. էն տեղ նորան կը տեսնէք. ահա ասացի ձեզ։

8 Եւ շուտով գերեզմանիցն դուրս եկին՝ վախով եւ շատ ուրախուԹիւնով վազեցին՝ որ աշակերտներին պատմեն։

9 Եւ ահա Յիսուս պատահեց[7] նորանց՝ եւ ասաց. ողջ կացէք. եւ նորանք մօտ եկին՝ նորա ոտներըն բռնեցին՝ եւ նորան երկրպագուԹիւն արին։

10 Յն ժամանակն Յիսուս նորանց ասաց. մի վախենաք. գնացէք իմ եղբայրներիս ասացէք՝ որ գնան գալիլեա, եւ էնտեղ կըտեսնեն ինձ[8]։

11 Երբոր նորանք գնացին. ահա

[46] Մարկ. ժզ. 21։ ժէ. 23։ ի. 19։ իզ. 61։ Մարկ. ը. 31։ ժ. 34։ Ղուկ. ԺԸ. 22։ ժը. 33։ իդ. 6, 7։ Յովհ. բ. 19։ [47] Դան. զ. 17։ [1] Մարկ. ժզ. 1։ Ղուկ. իդ. 1։ Յովհ. ի. 1։ [2] Մարկ. իէ. 56։ [3] Մարկ. ժզ. 5։ Ղուկ. իդ. 4։ Յովհ. ի. 12։ [4] Դան. ժ. 6։ [5] Մարկ. ժբ. 40։ ժզ. 21։ ժէ. 23։ ի. 19։ [6] Մարկ. իզ. 32։ Մարկ. ժզ. 7։ [7] Մարկ. ժզ. 9։ Յովհ. ի. 14։ [8] Յովհ. ի. 17։ Հռոմ. ը. 29։ Եբր. բ. 11։

(պահապան) զինուորներիցն մին քանիսն եկին քաղաքն՝ եւ ամէն ինչ որ էլաւ՝ պատմեցին քահանայապետներուն։

12 Եւ նորանք ծերերուն հետ հաւաքված խորհուրդ արին՝ եւ էն (պահապան) զինուորներուն շատ փող առուին,

13 Եւ ասացին. ասացէք՝ Թէ Նորա աշակերտներն գիշերն գեւ որ մենք քնած էինք՝ եկին գողացան նորան։

14 Եւ Թէ որ էդ բանդ դատաւորի ականջն հասնէ, մենք նորան կըհաւանացնենք՝ եւ ձեզ անհոգ կանենք։

15 Եւ նորանք փողըն առին՝ եւ էնպէս արին ինչպէս որ սովրեցին. եւ էս ձայնս հրէաների (ջհուտ-պանէդէ) մէջն գուբս եկաւ մինչեւ էսօր։

16 Բայց տասնումին աշակերտանէրըն գնացին գալիլեա՝ էն սարն՝ որ Յիսուս նորանց հետ խօսք էր կապել[9]։

17 Երբոր նորան տեսին, երկրըպագութիւն արին նորան, եւ մին քանիսն երկմտեցան։

18 Եւ Յիսուս մօտ եկաւ, նորանց հետ խօսեց՝ եւ ասաց. ամէն իշխանութիւն[10] ինձ տրվված երկնքումն եւ երկրումն. ինչպէս որ Հայրն ինձ ուղարկեց, էնպէս էլ ես ձեզ ուղարկումեմ։

19 Ուրեմն գնացէք[11] ամէն ազգեր աշակերտ շինեցէք[12] նորանց մկրտեցէք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ անունովն։

20 Նորանց սովորցրէք՝ որ ամէն ինչ որ ձեզ պատուիրեցի[13] պահեն. եւ ահա ես ձեզ հետ եմ ամէն օր, մինչեւ աշխարհքի վերջն։

[9] Մատթ. իզ. 32։ Ղուկ. է. 7։ [10] Դան. է. 13, 14։ Մատթ. ժա. 27։ ժզ. 28։ Ղուկ. ա. 32։ ժ. 22։ Ցովհ. գ. 35։ ե. 22։ ժգ. 3։ ժէ. 2։ Գործ. բ. 36։ Հռոմ. ժգ. 9։ ա Կորնթ. ժե. 27։ Եփես. ա. 20, 21։ Փիլիպ. բ. 9, 10։ Եբր. ա. 2։ բ. 8։ ա Պետր. գ. 22։ Յայտ. ժէ. 14։ [11] Մարկ. ժզ. 15։ [12] Եսայ. ծբ. 10։ Ղուկ. իգ. 47։ Գործ. բ. 38, 39։ Հռոմ. ժ. 18։ Կող. ա. 23։ [13] Գործ. բ. 42։

# ԸՒԱՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ որդոյ աւետարանի սկիզբն[1]։

2 Ինչպէս որ մարգարէներուն մէջ գրված է՝ (թէ) ահա ես իմ հրեշտակիս կուղարկեմ քու առաջիդ՝ որ քու ճանապարհդ քու առաջիդ պատրաստէ[2]։

3 Կանչողի ձայն անապատումն՝ (թէ) պատրաստ արէք Տէրոջ ճանապարհը՝ եւ շիտակ արէք նորա գըծակոյց ճանապարհները[3]։

4 Այս էլաւ՝ որ Յովհաննէս անապատումն (չոլաքին) մկրտուելով, եւ ապաշխարութեան մկրտութիւն էր քարոզում՝ մեղաց թողութեան համար[4]։

5 Այս հրէաստանի (ջհուդպատպա-նի) ամէն աշխարհն եւ ամէն երուսաղէմացիքն գնում էին նորա մօտ՝ եւ նորանից մկրտվում էին յորդանան գետումն՝ իրանց մեղքերըն խոստովանելով[5]։

6 Այս Յովհաննէս ուղտու բուրդ էր հագած[6], եւ կաշվէ գօտիկ իրան մէջքումն եւ նորա կերակուրն մարախ (էր) եւ վայրի մեղր[7]։

7 Վարդապետէր եւ ասում. Ինձանից զօրաւորն իմ ետեւէս է գալիս՝ որ նորան ես չեմ արժանի խոնարհվել եւ նորա կօշիկների կապըն արձակել[8]։

8 Այս ջրով[9] մկրտեցի ձեզ՝ եւ նա սուրբ Հոգով կըմկրտէ ձեզ[10]։

9 Այս էլաւ որ էն օրերումն Յիսուս գալիլեացոց Նազարեթիցն եկաւ, եւ Յովհաննէսից յորդանանումն մկրտվեցաւ[11]։

10 Այս շուտով որ ջրից դուրս եկաւ՝ տեսաւ երկինքն ճղված՝ եւ

[1] Մարկ. ժգ. 33։ Ղուկ. ա. 35։ Յովհ. ա. 34։ [2] Մաղ. գ. 1։ Մարկ. ժա. 10։ Ղուկ. է. 27։ [3] Եսայ. խ. 3։ Մարկ. գ. 3։ Ղուկ. գ. 4։ Յովհ. ա. 15, 23։ [4] Մարկ. գ. 1։ Ղուկ. գ. 3։ Յովհ. գ. 23։ [5] Մարկ. գ. 5։ [6] Մարկ. գ. 4։ [7] Ղեւտ. ժա. 22։ [8] Մարկ. գ. 11։ Յովհ. ա. 27։ Գործ. ժգ. 25։ [9] Գործ. ա. 5։ ժա. 16։ ԺԹ. 4։ [10] Եսայ. խդ. 3։ Յովհ. բ. 28։ Գործ. բ. 4։ ժ. 45։ ժա. 15, 16։ Ակնդ. ժբ. 13։ [11] Մարկ. գ. 13։ Ղուկ. գ. 21։

Ըստուծոյ հոգին ազատնու պէս՝ որ վէր էր գալես նորա վերայ[12]։

11 Ձայն էլաւ երկնքէն եւ ասաց՝ դու ես իմ սիրելի որդին, քեզ հաւան կացայ[13]։

12 Եւ շուտով հոգին նորան անապատն (ընդե) հանեց[14]։

13 Եւ նա էնտեղ էր քառասուն օր սատանայիցն փորձված. եւ գազաններուն հետ էր՝ եւ հրեշտակներ ծառայում էին նորան[15]։

14 Եւ երբոր յովհաննէս մատնեցվեցաւ[16]՝ Յիսուս եկաւ գալիլեա. Ըստուծոյ աւետարանըն քարոզելու

15 [Եւ] ժամանակն կատարվել է[18], եւ ըստուծոյ արքայութիւնն հասել է[19]. ապաշխարեցէք՝ եւ աւետարանին հաւատացէք։

16 Երբոր գալիլեացոց ծովի եղերին (ղազալին) մօտ անց էր կենում[20], սեսաւ սիմոնին եւ նորա անդրէաս եղբօրըն՝ որ նորանք ուռկաններըն (ընտելըն) ծովն էին քցել. ինչուսր՝ ձուկըն բռնող էին։

17 Եւ Յիսուս նորանց ասաց. իմ ետեւէս եկէք՝ եւ կանեմ ձեզ որ մարդկանց հօրսորդ լինիք։

18 Եւ շուտով ուռկաններըն թողին եւ նորա ետեւէն գնացին[21]։

19 Եւ էնտեղից որ մին քիչ առաջ գնաց՝ յակոբոս զեբեդեանին եւ նորա յովհաննէս եղբօրըն սեսաւ. երբոր նորանք նաւի մէջն ուռկաններըն շինում էին՝ եւ նորանց կանչեց[22]։

20 Եւ շուտով իրանց զեբեդէոս հօրըն վարձկաններին հետ նաւի մէջն թողին, եւ նորա ետեւէն գնացին։

21 Եւ մտին կափառնայում՝ եւ շուտով շաբաթ օրում ժողովարանի մէջն մտաւ՝ եւ սովորցնում էր նորանց[23]։

22 Եւ զարմանում էին նորա վարդապետութեանն վերայ[24]. ինչուսր՝ ինչպէս իշխանութեամբ էր սովորցնում նորանց՝ եւ ոչ թէ նորանց կարգացօղներին պէս։

23 Եւ նորանց ժողովարանի մէջն մին մարդ կար՝ որ պիղծ դեւ կար նորանում[25]. որ աղաղակեց եւ ասաց։

24 Թո՛ղ արա՝ դու ի՞նչ բան ունես մեզ հետ[26]՝ Յիսուս նազորեցի. եկիր որ մեզ կորցնես. գիտեմ[ք] քեզ (թէ) ո՛վ ես դու՝ Ըստուծոյ սուրբդ։

25 Յիսուս նորան սաստեց՝ եւ ասաց[27]. պապանձվիր՝ եւ դուրանից դուրս եկ։

26 Եւ պիղծ դեւն նորան գետինն զարկեց[28]. եւ մեծ ձայնով աղաղակեց, եւ նորանից դուրս եկաւ։

27 Եւ ամէնքն զարմացան մինչեւ որ իրար հետ քսփսալով հարցնում էին՝ եւ ասում. ես ի՞նչ նոր վարդապետութիւն է՝ որ իշխանութեամբ պիղծ դեւերին էլ սաստում՝ եւ հնազանդվում են սորան։

28 Եւ նորա համբաւն գալիլեացոց ամէն կողմերն դուրս գնաց։

29 Եւ շուտով ժողովարանիցն որ դուրս էլաւ, եկաւ սիմոնի եւ անդրէասի տունն[29]՝ յակոբի եւ յովհաննէսի հետ։

30 Եւ սիմոնի զրքանչն տենտով վերըննած էր՝ եւ շուտով նորա համար ասացին նորան։

31 Եւ մօտ եկաւ նորա ձեռիցն

[12] Մարկ. գ·16։ Ցածկ. ա. 32։ [13] Սաղմ. բ. 7։ Մարկ. գ. 17։ Մարկ. թ. 7։ [14] Մարկ. գ. 1։ Գործ. գ. 1։ [15] Մարկ. գ. 11։ [16] Մարկ. գ. 12։ [17] Մարկ. գ. 23։ [18] Դան. թ. 25։ Գաղ. գ. 4։ Եփես. ա. 10։ [19] Մարկ. գ. 2։ գ. 17։ [20] Մարկ. գ. 18։ Գործ. ե. 4։ [21] Մարկ. ԺԸ. 27։ Գործ. ե. 11։ [22] Մարկ. գ. 21։ [23] Մարկ. գ. 13։ Գործ. գ. 31։ [24] Մարկ. է. 28։ [25] Գործ. գ. 33։ [26] Մարկ. ը. 29։ [27] Ա՛ղ. 34։ [28] Մարկ. թ. 20։ [29] Մարկ. ը. 14։ Գործ. գ. 38։

բռնեց՝ եւ նորան վերկացրուց. եւ տենան Թողեց նորան՝ եւ նա ծառայումէր նորանց:

32 Իբրեւ իրիկուն էլաւ արեգական մըտնելոյ ժամանակին, ամէն հիւանդներըն եւ դիւահարներըն բերին նորա մօտ[30]:

33 Իբրեւ բոլոր քաղաքն ժողովված էր դըռներուն առաջին:

34 Իբրեւ շատ հիւանդներ բժշկեց կերպ կերպ ցաւերից՝ եւ շատ դեւեր հանեց. եւ Թոյլ չէր տալիս դեւերին որ խօսին[31]. ինչուր՝ գիտէին նորան որ Քրիստոսն է:

35 Իբրեւ առաւօտանց որ լուսացաւ՝ վեր կացաւ դուրս եկաւ եւ մին անապատ տեղ գնաց[32], եւ էնտեղ աղօթք էր անում:

36 Իբրեւ սիմոնն նորա ետեւէն գնաց, եւ նորանք էլ որ նորա հետ էին:

37 Իբրեւ գտին նորան գոհն՝ նորան ասացին, Թէ ամէնքն քեզ ման են գալիս:

38 Իբրեւ նորանց ասաց. եկէք ուրիշ մօտիկ գիւղաքաղաքներն էլ գընանք[33], որ էնտեղ էլ քարոզեմ. ինչուր ես հենց սրա համար եմ եկած[34]:

39 Իբրեւ ամէն գալիլեացոց երկրի մէջն նորանց ժողովարաններումն քարոզելէր, եւ դեւեր էր հանում[35]:

40 Մին բորոտ նորա մօտ եկաւ[36], աղաչելէր՝ ծունր էր դնելէ՝ եւ ասելէր. Տէր՝ Թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել:

41 Ցիսուս էլ խղճալով ձեռըն մեկնեց, նորան մօտեցաւ՝ եւ նորան ասաց. կամենումէ՝ սրբվիր:

42 Իբրեւ երբոր էս ասաց նորան, շուտով բորոտութիւնն գնաց նորանից՝ եւ սրբվեցաւ:

43 Իբրեւ սաստելով՝ շուտով դուրս հանեց նորան, եւ ասաց նորան:

44 Օգոյշ կաց խէի մին մարդոյ բան չասես. բայց գնա՛ քահանային, քեզ ցոյց տուր, եւ քո սրբութեան համար պատարագ արա՝ էն որ մօսէսն հրամայեց՝ նորանց վկայութիւն լինելոյ համար[37]:

45 Իբրեւ նա երբոր դուրս գնաց, սկսեց շատ քարոզել եւ էն բանըն տարածել, մինչեւ որ էլ նա կարող չէր յայտնի մտնել քաղաք՝ բայց դուրս անապատ (չոլ) տեղերում էր[38]. եւ ամէն կողմերից գալիս էին նորա մօտ[39]:

## Գլ. Ը

3 Քրիստոս մին անդամալուծ մարդ կըբժշկէ. 14 Մատթէոսն մաքս ընդունելոյ համար նստած տեղից կըկանչէ. 15 Մաքսաւորներին եւ մեղաւորներին հետ է ուտում. 18 Իսկ աշակերտներին պաս չիպահելն. 23 Եւ շաբաթ օրուն (յոբնին) հասկ պոկելն եւ ուտելն արդարացնում:

1 Իբրեւ մինէլ որ մտաւ կափառնայում՝ մին քանի օրից հետե[1],

2 լսվեցաւ Թէ տանն է. եւ շատ մարդիք ժողովվեցան՝ մինչեւ որ տեղ

[30] Մատթ. ը· 16: Ղ–ղ. դ· 40: [31] Մարկ. գ· 12: Ղ–ղ. դ· 41: Գործ. ժզ· 17, 18: [32] Ղ–ղ. գ· 42: [33] Ղ–ղ. դ· 43: [34] Եսայ. կա· 1: Ցխն. ժզ· 28: Ժէ· 4: [35] Մատթ. գ· 23: Ղ–ղ. դ· 44: [36] Մարկ. ը· 2: Ղ–ղ. ե· 12: [37] Ղեւտ. ժգ· 3, 4, 10: Ղ–ղ. ե· 14: [38] Ղ–ղ. ե· 15: [39] Մարկ. ը· 13: [1] Մատթ. Թ· 1:

էլ չըկար եւ ոչ էլ դուռն առաջին. եւ (Յ)ստուծոյ բանըն խօսումէր նոցանց.

3 Եւ գալիս էին նորա մօտ՝ եւ մին անդամալոյծ էին բերում չորս մարդով վեր առած:

4 Եւ երբոր կարում չէին մօտենալ նորան՝ ամբոխի (խալխի) պատճառուն՝ էն տան ծածկըն քակեցին, որ տեղ որ Յիսուսն էր. եւ օճղրքըն բաց արին եւ էն մահիճըն (փէօշէնէն) վեր բերին, որ նորանում անդամալուծն կար:

5 Եւ Յիսուս նորանց հաւատքըն տեսնելով՝ անդամալուծին ասաց. որդի Թոզ քո մեղքերդ Թողված լինին քեզ:

6 Եւ կարդացօղներիցն մին քահնիան կային՝ որ Էնտեղ նստած էին. եւ իրանց սրտումն միտք էին անում, (Թէ)

7 Այս ինչ է՝ որ սա Հայհոյում Թիւն է խօսում. ո՞վ կարօղ է մեղք Թողել եթէ ոչ՝ մին Յստուածն[2]:

8 Եւ Յիսուս իրան հոգով մէջն գիտաց Թէ իրանց սրտերումն Էնպէս են միտք անում, եւ ասաց. ինչո՞ւ էք ձեր սրտերումն էդ մտածում[3]:

9 Ո՞րն է հեշտ[4]. անդամալուծին ասել՝ Թէ Թոզ քո մեղքերդ Թոզված լինին քեզ, Թէ ասել՝ վերկաց, քո մահիճըդ (փէօշէկէդ) առ եւ քո տունդ գնա:

10 Այց որ իմանաք, Թէ որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղաց Թողութիւն տալ. անդամալուծին ասաց,

11 Ասումեմ քեզ՝ վեր կաց, քո մահիճըդ (փէօշէկէդ) առ եւ գնա քո տունդ:

12 Եւ (նա) շուտով վերկացաւ եւ մահիճըն առաւ՝ եւ ամէնի առաջին դուրս գնաց. մինչեւ որ ամէնքն զարմանում էին եւ Յստուծոյն փառաւորում էին եւ ասում[5]՝ Թէ իսկի մին ժամանակ էսպէսի բան չենք տեսել:

13 Եւ մինէլ դէպի ծովն եղըն (ղէօլն) դուրս գնաց, եւ ամէն ժողովուրդն նորա մօտ էր գալիս. եւ նորանց սովորցնում էր:

14 Եւ երբոր անց էր կենում[6], տեսաւ ղեւի ալիեանին՝ որ նստած մաքսաւորութիւն (կնմրուկլուխան) էր անում. եւ նորան ասաց, իմ եւ տուէս ես. եւ վերկացաւ՝ գնաց նորա ետեւէն:

15 Եւ էլաւ՝ երբոր նորա տան մէջն սեղանի վերայ նստած էր՝ եւ շատ մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի եւ նորա աշակերտներին հետ սեղան էին նստած[7]. պատճառնոր՝ շատ մարդիք էին՝ որ նորա ետեւէն գնում էին:

16 Այց կարգացօղներն եւ փարիսեցիքն երբոր տեսին՝ Թէ մաքսաւորներն եւ մեղաւորներն հետ ուտումէ՝ նորա աշակերտներին ասացին. էդ ի՞նչ է որ մաքսաւորներն եւ մեղաւորներն հետ ուտումէք եւ խմումէք:

17 Յիսուս երբոր լսեց՝ ասաց նոցանց. առողջներին բժիշկ պէտք չէ՝ բայց հիւանդներին[8]. եւ չեկի որ արդարներին կանչեմ՝ այլ մեղաւորներին:

18 Եւ յօհաննէսի աշակերտներն եւ փարիսեցիներն պասումն էին՝ եւ կին եւ նորան ասացին[9]. ինչո՞ւ յօհաննէսի աշակերտներն եւ փարիսեցիներն պաս են պահում, եւ քո ա-

[2] ՑՎէ. ժգ. 4: Եսայ. խգ. 25: [3] Մտթ. թ. 4: [4] Մտթ. թ. 5: [5] Մտթ. թ. 8: [6] Մտթ. թ. 9: Ղուկ. ե. 27: [7] Մտթ. թ. 10: [8] Մտթ. թ. 12, 13: Ժը. 11: Ղուկ. ե. 31, 32: Ժե. 10: ա Տիմ. ա. 15: [9] Մտթ. թ. 14: Ղուկ. ե. 33:

չակերտաներդ չէն պահում։

19 Եւ Յիսուս նորանց ասաց. Միթէ կարելի՞ է՝ որ հարսանիքի որդիքն պաս պահեն՝ դեռ քանի որ փեսան նորանց հետ է. քանի որ փեսան իրանց հետ ունին՝ կարելի չէ որ պաս պահեն։

20 Բայց օրեր կըգան՝ որ փեսան նորանցից վերկառնըվի. եւ ապա էն օրումն կըպահեն։

21 Ոչ ով նոր չըմաշված կարկատանի կտոր հին շորի վերայ չի՛ քըցել. ապա թէ ոչ՝ նորն իրան ուժովն էն հնիցն կառնէ, եւ պատռուվածքն էլ աւելի չար կըլինի։

22 Եւ ոչ ով նոր գինին հին տըկերի մէջ չի՛ ածիլ. ապա թէ ոչ՝ գինին տըկերըն կըպատռուէ՝ գինին կըթափվի, եւ տըկերն կըկորչին. բայց նոր գինին՝ նոր տըկերի մէջ պէտք է ածվի։

23 Եւ էլաւ որ նա շաբաթ օրումն արտերի մէջովն անց էր կենում[10]. եւ աշակերտաներն իրանց գնալով ժամանակն սկսեցին հասկ պոկել եւ ուտել[11]։

24 Եւ փարիսեցիքն նորան ասացին. տես ի՞նչ են գործում քո աշակերտաներդ շաբաթ օրումն՝ որ արժան չէ։

25 Եւ Յիսուս նորանց ասաց. դուք իսկի մին ժամանակ չէք կարդացել էն, որ դաւիթն արաւ, երբոր պէտք էլաւ՝ եւ սովից նա եւ նորանք էլ, որ նորա հետն էին[12]։

26 Ինչպէս Աբիաթարայ տուն մտաւ քահանայապետի օրերումն. եւ առաջաւորութեան (Ժողովոյ սեղանի վերայ դրած) հացըն կերաւ՝ եւ նորանց էլ տուաւ որ նորա հետն էին՝ որ ուրիշն օրէնք չէր ուտել՝ բայց միայն քահանայից[13]։

27 Եւ նորանց ասաց. շաբաթն մարդոյ համար էլաւ, եւ ոչ թէ մարդն շաբաթի համար։

28 Արեգին որդին մարդոյ շաբաթին էլ Տէրն է[14]։

## ԳԼ. Գ

1 Քրիստոս չորացած ձեռն, 10 Եւ շատ ուրիշ հիւանդութիւններ կըբժշկէ. 11 Դեւք դեւերն ասատուն. 13 Իրան տասներկու աշակերտներն կըկարգէ. 22 Ցոյց կըտայ կարդացողներին թէ իրան համար բեելզեբուղով հանում դեւերն որ ասում՝ հայհոյութիւն են անում։ 31 Եւ ցոյց կըտայ թէ ով է իրան եղբայրն քոյրն եւ մայրն։

1 Եւ մինէլ ժողովարանին մէջ մտաւ, եւ էն տեղ մին մարդ կար՝ որ նորա ձեռն չորացած էր[1]։

2 Եւ սպասում էին նորան՝ թէ շաբաթ օրումն բժշկէ նորան՝ որ չարախօսեն նորանից։

3 Եւ ասաց էն մարդոյն՝ որ նորա ձեռն չորացած էր. վեր կաց եկ մէջ տեղն։

4 Եւ նորանց ասաց. ի՞նչ արժան է շաբաթ օրումն. բարի՞ անել գործել՝ թէ չար անել. մին հոգի ապրեցնել՝ թէ կորցնել. եւ նորանք լուռ կացան։

5 Եւ Յիսուս շատ բարկութեանով չորս կողմովն նորանց մտիկ արաւ՝ նորանց սրտերի կարութեան համար տրտմելով՝ եւ էն մարդոյն

[10] Մատթ. ժբ. 1։ Ղուկ. գ. 1։ [11] Բ Օրէն. իդ. 25։ [12] Ա Թագ. իա. 6։ [13] Ելք. լեւ. 32, 33։ Ղեւտ. իդ. 9։ [14] Մատթ. ժբ. 8։ [1] Մատթ. ժբ. 9։ Ղուկ. գ. 6։

ասաց. քո ձեռքդ մեկնիր, եւ նա մեկնեց, եւ նորա ձեռն ողջացաւ։

6 Եւ փարիսեցիներն շուտով դուրս գնացին[2] հերովդեսեաններին հետ[3]. նորա համար խորհուրդ էին անում՝ թէ ինչպես կորցնեն նորան։

7 Բայց Յիսուս իրան աշակերտներին հետ ծովի կողմն (պատի) դնաց. եւ շատ ժողովուրդ նորա եւ անուէն գնում էին գալիլեացիներից, եւ հրէաստանից[4],

8 Եւ երուսաղէմից, եւ յորդանանի էն կողմից, եւ նորանք էլ որ տիւրոսից եւ սիդոնից էին. շատ ժողովուրդ երբոր լսում էին՝ թէ որքան բաներ էր անում, նորա մօտ էին գալիս։

9 Եւ իրան աշակերտներին ասաց, որ մին պզտիկ նաւ պատրաստ լինի իրան համար էն ամբոխի (խռնդի) պատճառաւ՝ որ չընկղմեն նորան։

10 Ինչուար՝ շատերին բժշկեց. մինչեւ որ եկին նորա վերայ թափվեցան՝ որ նորան դիպչին նորանք որ մին ցաւ ունէին։

11 Եւ պիղծ դեւերն երբոր նորան տեսնում էին[5], նորա առաջին ընկնում էին, աղաղակում էին եւ ասում՝

12 Թէ դու ես Աստուծոյ որդին[6]. եւ նա շատ սաստում էր նորանց, որ իրան չը յայտնեն[7]։

13 Ա եր էլաւ սարն[8] եւ իրան մօտ կանչեց նորանց որ ինքն կամեցաւ. եւ նորա մօտ գնացին։

14 Եւ տասներկու հոգի կարգեց՝ որ իրան հետ լինին, եւ որ նորանց ուղարկէ՝ որ քարոզեն,

15 Եւ իշխանութիւն ունենան նաև ցաւերըն բժշկելոյ՝ եւ դեւերըն հանելոյ։

16 Եւ սիմոնի անունըն պետրոս դրաւ[9].

17 Եւ զեբեդեան յակոբին՝ եւ յակոբի եղբայր յոհաննէսին, նորանց անուներն բանեռգէս դրաւ, որ է՝ որոտումնէի որդիք,

18 Եւ անդրէասին, եւ փիլիպպոսին, եւ բարթուղիմէոսին, եւ մատթէոս մաքսաւորին (հաւաքչին), եւ թովմասին, եւ յակոբոս ալփեանին, եւ թադէոսին, եւ սիմոն կանանացոյն։

19 Եւ յուդա իսկարիօտացոյն՝ նա որ մատնեց նորան։

20 Տուն եկին, եւ մինէլ նորանց հետ ժողովուրդն եկաւ՝ մինչեւ որ ժամանակ էլ չէլաւ նորանց՝ որ հաց ուտեն[10]։

21 Եւ երբոր նորա բնտանիքն լսեցին՝ դուրս եկին որ նորան բռնեն. ինչու որ՝ համարում էին, թէ նա գժվել է[11]։

22 Եւ կարդացօղներն՝ որ երուսաղէմից էին եկել, ասում էին՝ թէ բէեղզեբուղ կայ գորանում[12], եւ դեւերի իշխանովն է հանում դա դեւերըն։

23 Եւ նորանց իրան մօտ կանչեց՝ առակներով նորանց հետ խօսում էր[13]. (թէ) ինչպէս սատանայ կարող է սատանային հանել։

24 Որեմն՝ եթէ թագաւորութիւն իրան միջումն բաժանվի, էն թագաւորութիւն կարող չէ կենալ։

25 Եւ եթէ տուն իրան միջումն բաժանվի, էն տունն կարող չէ կենալ։

[2] Մարկ. ժբ. 14։ [3] Մարկ. իե. 16։ [4] Ղուկ. զ. 17։ [5] Մարկ. ա. 23, 21։ Ղուկ. դ. 41։ [6] Մարկ. ժգ. 33։ Մարկ. ա. 1։ [7] Մարկ. ժբ. 16։ Մարկ. ա. 25, 34։ [8] Մարկ. ժ. 1։ Ղուկ. զ. 12։ իբ. 1։ [9] Ցնկ. ա. 42։ [10] Մարկ. գ. 31։ [11] Ցնկ. է. 5։ ժ. 20։ [12] Մարկ. իբ. 34։ ժ. 25։ Ղուկ. ժա. 15։ Ցնկ. է. 20։ ը. 48, 52։ ժ. 20։ [13] Մարկ. ժբ. 25։

26 Այլ եթէ սատանան իրան անձին վերայ վերկացաւ եւ բաժանված է, կարօղ չէ կենալ, այլ վերջացած է:

27 Ոչոյց ոչ ով կարօղ չէ զօրաւոր մարդոյ տունն մտնել եւ նորա բաները յափշտակել[14], եթէ առաջ էն զօրաւորըն չկապէ, եւ ապա նորա տունըն յափշտակէ:

28 Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ մարդկանց որդոցն ամէն մեղքեր եւ հայհոյանքներ կըթողվին՝ որքան որ հայհոյեն[15]:

29 Այլոյց նա որ սուրբ Հոգոյն կըհայհոյէ՝ յաւիտեան թողութիւն չունենալ. այլ յաւիտենական մեղաց պարտական կըլինի:

30 Պատճառնոր՝ ասումէին՝ թէ պիղծ դեւ կայ նորանում:

31 Անորա եղբարքն եւ մայրն եկին, եւ դուրսն կանգնած՝ ուղարկեցին եւ նորան կանչումէին[16]:

32 Այլ էնտեղ ժողովուրդն նորա չորս կողմիվն նստած էր. եւ երբոր ասացին նորան՝ ահա քո մայրդ եւ քո եղբարքդ դուրսն կանգնած են, եւ քեզ են խնդրում.

33 Անորանց պատասխան տուաւ եւ ասաց՝ ով է իմ մայրս կամ եղբարքս:

34 Իրան չորս կողմիվն աշակերտներին միրկ տուաւ՝ որ նստած էին, եւ ասաց. ահա իմ մայրս եւ իմ եղբարքս:

35 Ինչուորՙ ով որ Աստուծոյ կամքըն կատարէ՝ նա է իմ եղբայրս եւ քոյրս եւ մայրս:

## Գ Լ · Գ

1 Վերմ ցանօղն առաւն, 14 Եւ նորա մեկնութիւնն: 21 Մեր գիտութեան լոյսն պէտք է որ ուրիշներին էլ բաժնենք: 26 Նշածուկ բուսած սերմ, 30 Եւ մանանեխի հատ առաւն: 35 Քրիստոսի ծովի մրրիկին դադարացնելն:

1 Անէ ծովի եզերին (պետքն) մօտ սկսեց սովորցնել[1], եւ շատ ժողովուրդներ նորա չորս կողմիվն կհավեցան, մինչեւ որ նաւ մտաւ, եւ ծովի վերայ նստաւ. եւ ամէն ժողովուրդներն ծովի եզերովն (պետքն) ցամաքըն բռնած էին:

2 Այլ շատ բան առակներով սովորցնումէր նորանց. եւ իրան վարդապետութեան մէջն ասումէր նորանց[2]:

3 Լսեցէք՝ ահա մին սերմ ցանօղ (մարդ) դուրս գնաց, որ սերմը ցանէ:

4 Այլ սերմելոյ ժամանակն էլաւ պատուղ էր տալիս[3], եւ մընի տեղ որ միեն ճանապարհի վերայ ընկաւ, եւ թռչունն եկաւ եւ նորան կերաւ:

5 Այլ մէկէլն քարքարուտ տեղ ընկաւ՝ որ էնտեղ շատ հող չկար. եւ շուտով բուսաւ. ինչուոր՝ բաւական հող չկար:

6 Այլ երբոր արեգակն ծագեց՝ տաքացաւ, եւ որովհետեւ արմատ (ֆէօտ) չունէր՝ չորացաւ:

7 Այլ մէկէլն ընկաւ փշերի մէջն. փշերն դուրս եկին եւ խեղդեցին նորան. եւ պտուղ չտուաւ:

8 Այլ մէկէլն բարի երկրի վերայ ընկաւ. եւ դուրս եկաւ աճեց եւ պտուղ էր տալիս[3], եւ մընի տեղ

[14] Եսայ. խթ. 24: Մտթ. ժբ. 29: [15] Մտթ. ժբ. 31: Ղուկ. ժբ. 10: ա Ցովհ. ե. 16: [16] Մտթ. ժբ. 46: Ղուկ. ը. 19: [1] Մտթ. ժգ. 1: Ղուկ. ը. 4: [2] Մտթ. ժբ, 38: [3] Ցովհ. ժե. 5: Կող. ա. 6:

քերումէր երեսուն՝ եւ մինի տեղ վաթսուն՝ եւ մինի տեղ հարիւր։

9 Եւ ասումէր. ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ։

10 Եւ երբոր մենակ էլաւ[4] նոր բանք որ նորա մօտ էին աշակերտներին հետ՝ հարցրին նորան էն առակներըն։

11 Եւ նորանց ասաց. ձեզ տրված է Աստուծոյ արքայութեան խորհուրդներըն գիտել, բայց նորանց որ դրսի են՝ ամէն բան առակներով է լինում[5]։

12 Որ տեսնելով տեսնեն՝ եւ չըտեսնեն, եւ լսելով լսեն՝ եւ չիմանան[6], որ իսկի չըգառնան, եւ թողութիւն լինի նորանց։

13 Եւ նորանց ասաց. էս առակըս չէք գիտում, եւ ի՞նչպէս ամէն առակներըն կըգիտենաք։

14 Ա՛յս որ սերմումէ՝ (Աստուծոյ) բանըն է սերմում[7]։

15 Եւ նորանք են՝ որ ճանապարհի վերայ են՝ որտեղ որ բանն սերմ վումէ, եւ երբոր էն լսումեն, սատանան գալիս է՝ եւ նորանց սրտերումն սերմնված բանըն հանումէ։

16 Եւ որ քարքարուտ տեղն սերմ վեցան, նորանք են՝ որ երբոր բանըն լսումեն, շուտով ուրախութեւնով ընդունումեն։

17 Եւ իրանց մէջ արմատ (ֆէօտ) չունին՝ էլ քիչ ժամանակ են մնում. յետոյ երբոր նեղութիւն կամ հալածմունք են հասնում էն բանին համար, շուտով գայթակղվումեն։

18 Ուրց որ փըշերի մէջն սերմ վեցան՝ նորանք են, որ երբոր բանըն լսումեն,

19 Աշխարհքի հոգսերն եւ մեծութեան խաբեբայութիւննեըն մըտանումեն, եւ բանըն խեղդումեն՝ եւ անպտուղ է լինում[8]։

20 Եւ որ բարի երկրի վերայ սերմ վեցան՝ նորանք են՝ որ բանըն լսումեն եւ ընդունումեն, եւ պտուղ են տալիս՝ մինի տեղ երեսուն՝ եւ մինի տեղ վաթսուն՝ եւ մինի տեղ հարիւր։

21 Եւ նորանց ասաց. միթէ ճրագն նրահամար է գալիս՝ որ տաշտի կամ մահճի (կրեվաթնի) տակն դընվի[9]. չէ որ ճրագակալի վերայ կըդնվի։

22 Ինչուոր՝ իսկի ծածուկ բան չըկայ՝ որ չըյայտնվի[10], եւ թաքուն բան չէլաւ, որ դէպի յայտնութիւն չըգայ։

23 Թէ որ մինն լսելոյ ականջ ունենայ՝ թող լսէ[11]։

24 Եւ նորանց ասաց. տեսէք թէ ինչ էք լսում, եւ կաւելանայ ձեզ էն որ լսումէք. ինչ չափով որ չափէք՝ նորանով էլ ձեզ կըչափվի[12]։

25 Որ ով որ ունի՝ նորան կըտրվի[13]. եւ ով որ չունի, նորանից էն էլ որ ունի՝ վերկառնվի։

26 Եւ ասումէր. Աստուծոյ արքայութիւնն էսպէս է[14]. ինչպէս թէ մին մարդ սերմ քցէ հողի մէջ,

27 Եւ գիշեր ու ցորեկ քուն լինի եւ վերկենայ. եւ էն սերմն բուսանէ եւ աճի՝ եւ ինքն չիգիտում։

28 Ինչուոր՝ երկիրն ինքն իրան պտուղ է բերում՝ առաջ խոտըն՝ եւ

[4] Մարկ. ժգ· 10։ Ղուկ. ը· 9, խոսյն։ [5] ա Կորնթ. ե· 12։ Կող. գ· 5։ ա Թես. գ· 13։ ա Տիմ. գ· 7։ [6] Եսայ. զ· 9։ Մարկ. ժգ· 14։ Ղուկ. ը· 10։ Յովհ. ժբ· 40։ Գործ. իը· 26։ Հռոմ. ժա· 8։ [7] Մարկ. ժգ· 19։ [8] ա Տիմ. զ· 9, 17։ [9] Մարկ. ե· 15։ Ղուկ. ը· 16։ ժա· 33։ [10] Մարկ. դ· 26։ Ղուկ. ժբ· 2։ [11] Մարկ. ժա· 15։ Վէր· 9։ [12] Մարկ. է· 2։ Ղուկ. զ· 38։ [13] Մարկ. ժգ· 12։ ԽԵ· 29։ Ղուկ. ը· 18։ ԺԹ· 26։ [14] Մարկ. ժգ· 24։

յետոյ Տաճկին՝ եւ ներանից եաեւ լըցված ցորենըն իրան Տաճկի մէջն։

29 Ինչպ երբոր պատուղըն կըտայ՝ շուտով մանգաղ (չին) կուղարկվի[15], ինչուոր Տունձքն Տասել է։

30 Նէ ասումէր. Աստուծոյ արքայութիւնըն ոմմ նմանեցնենք, կամ ինչ առակով յայտնենք նորա օրինակըն[16]։

31 Ինչպէս մանանեխի Տատըն՝ որ երբոր Տողի մէջ սերմվի, ամեն սերմունքիցն աւելի փոքր է՝ որ երկրի վերայ են։

32 Նէ երբոր սերմվի, բուսնումէ եւ ամեն բանջարիցն աւելի մեծ է լինում, եւ մեծ մեծ ճղըներ է դուրս բերում, մինչեւ որ բանական է լինում՝ որ երկնքի թռչուններն նորա շուաքի տակն բնակվին։

33 Նէ էնպէսի առակներով էր խօսում բանըն նորանց Տետ[17], ինչպէս որ նորանք կարող էին լսել։

34 Նէ առանց առակի ոչ ինչ էր խօսում նորանց Տետ, միայն թէ առանձին իրան աշակերտներին ամեն բան մեկնումէր։

35 Նէ էն օրն՝ երբոր իրիկվան դէմ էր լինում[18], նորանց ասաց. Եկէք անցկենանք էն կողմն։

36 Ժողովուրդըն թողնին, եւ նորան Տենց նաւումն առին, եւ ուրիշ նաւերըն էլ՝ որ նորա Տետ էին։

37 Նէ քամի մեծ մրրիկ էր լինում, եւ ալիքներըն էր թափում նաւին մէջ, մինչեւ որ Տամարեա թէ լցվումէր։

38 Նէ ինքն նաւի յետին կողմումըն բարձի վերայ ննջումէր. նորան զարթնացնումէին եւ ասում. վարդապետ՝ դու Տոգս չունիս, որ մենք կորչումենք Եսասէ։

39 Նէ նա զարթնացաւ՝ եւ քամին սաստեց՝ եւ ծովին ասաց. դադարիր պապանձվիր. եւ քամին դադարեց, եւ մեծ խաղաղութիւն էլաւ։

40 Նէ նորանց ասաց. ինչո՞ւ էդպէս վախկոտ էք. դեռ Տաւատք չունէք. եւ մեծ վախով վախեցան, եւ մին մընին ասացին. սա ո՞վ պիտի լինի՝ որ քամին եւ ծովն էլ Տնազանդվումեն նորան։

## Գ·Լ·Ա

1 Քրիստոս դեւերի լեգէոն ունեցող մարդն նորանցից կազատէ, 13 Նորանց խոզերի մէջն մտնելն։ 25 Քրիստոս աեռատես կնին կըբժշկէ։ 35 Յայրոսի աղջկին մեռելներից կըյարուցանէ։

1 Նէ եկաւ ծովի էն կողմն՝ գերգեսացոց աշխարհըն[1]։

2 Նէ նորա նաւիցն դուրս գալոյ ժամանակին, նորան մին մարդ պատահեց գերեզմաններիցն՝ որ նորան պիղծ դեւ բռնել էր։

3 Որ նորա բնակութիւնն գերեզմաններումն էր. եւ ոչ ով շղթաներով (պընճկընելով) էլ չէր կարող նորան։

4 Ինչուոր շատ անգամ ոտաց կապերով եւ շղթաներով կապուածքն էին՝ եւ նա շղթաներըն կըտրումէր, եւ ոտաց կապերըն ջարդումէր. եւ

[15] Յայտ. ԺԴ. 15։ [16] Մատթ. Ժգ. 31։ Ղուկ. Ժգ. 18։ Դործ. ը. 41։ դ. 4։ ե. 14։ ԺԹ. 20։ [17] Մատթ. Ժգ. 34։ Յովհ. Ժզ. 12։ [18] Մատթ. ը. 18, 23։ Ղուկ. ը. 22։ [1] Մատթ. ը. 28։ Ղուկ. ը. 26։

ձէ ով կարող չէր բռնել նորան:

5 Ինչուոր՝ միշտ գիշեր ու ցորեկ գերեզմաններումն ու սարերումն աղաղակումէր. եւ ինքն իրան ծեծումեր քարերով:

6 Երբոր հեռուանց Յիսուսին տեսաւ՝ վազեց գնաց եւ նորան երկրպագութիւն արաւ:

7 Ու ձայնով աղաղակեց՝ եւ ասաց. քեզ ինչ բան կայ ինձ հետ՝ Յիսուս բարձրեալ Աստուծոյ որդի. Աստուծով երդում եմ տալիս քեզ, մի տանջել ինձ:

8 Պատճառնոր՝ նորան ասումէր՝ ով պիղծ դեւ՝ էդ մարդուցդ դուրս եկ:

9 Ու հարցնումէր նորան՝ թէ քո անունդ ինչ է. եւ նորան ասումէր. իմ անունս լեգէոն է, ինչուոր մենք շատ ենք:

10 Ու նորան շատ աղաչումէին, որ իրանց էն աշխարհքին դուրս չուղարկէ:

11 Ու էնտեղ սարի մօտ խոզերի մին մեծ երամակ (պոռոս) կար՝ որ արածումէր:

12 Աստի դեւերն նորան աղաչեցին եւ ասացին, ուղարկիր մեզ էն խոզերին մէջ՝ որ նորանց մէջն մըտանենք:

13 Ու հրաման տուաւ նորանց. եւ պիղծ դեւերն երբոր դուրս եկին, խոզերի մէջն մտին, եւ երամակն (պոռոս) էն բարձր տեղից դէպի ծովն վազեց. երկու հազարի չափ էին, եւ ծովի միջումն խեղդվումէին:

14 Ու խոզապահներն փախան՝ եւ քաղաքումն եւ արտերումն պատմեցին. եւ դուրս եկին որ տեսնեն թէ ինչ է էն՝ որ գործ վեցաւ:

15 Գիտուսի մօտ եկին, եւ դիւահարին տեսին որ նստած էր հագած եւ խելքն գլուխն եկած՝ նա՝ որ լեգէոնըն ունէր. եւ վախեցան:

16 Ու նորանց պատմեցին՝ նորանք որ տեսել էին, թէ ինչ էլաւ էն դիւահարին, եւ ինչ խոզերի համար:

17 Ու սկսեցին աղաչել նորան՝ որ իրանց երկրին դուրս գնայ[2]:

18 Ու երբոր նա նաւն մտաւ՝ դիւահարն աղաչումէր նորան՝ որ նորա հետ լինի[3]:

19 Ու Յիսուս թոյլ չտուաւ նորան, բայց նորան ասաց. գնա քո տունդ՝ քո ընտանեաց մտան, եւ նորանց պատմիր ամէն ինչ որ Տէրն արաւ քեզ՝ եւ ողորմեցաւ քեզ:

20 Ու գնաց եւ սկսեց գեկապօլիսի մէջն քարոզել ինչ որ Յիսուս իրան արաւ, եւ ամէնքն զարմանումէին:

21 Ու երբոր Յիսուս մինել էն կողմն անցաւ[4] շատ ժողովուրդ նորա մօտ ժողովվեցան, եւ նա ծովի եզրումն (ղեպղե-ա) էր:

22 Ու ահա ժողովրդապետներիցն մինն գալիս էր՝ որ նորա անունն յայրոս էր[5]. եւ երբոր նորան տեսաւ, ընկաւ նորա ոտներն:

23 Ու նորան շատ աղաչումէր եւ ասում՝ թէ իրան աղջկնկն մեռնելոյ մօտ է, որ գայ ձեռքն նորա վերայ դնէ՝ որ ողջանայ եւ ապրի:

24 Ու նորա հետ գնաց. եւ շատ ժողովուրդ էլ նորա ետեւէն գնումէին, եւ նորան նեղացնումէին:

25 Ու մի կին կար արիւն հոսելոյ հիւանդութեան մէջ տասնեւրկու տարի[6]:

26 Ու շատ բժիշկներիցն շատ

[2] Մատթ. ը. 34; Գործ. ժզ. 39; [3] Ղուկ. ը. 38; [4] Մատթ. թ. 1; Ղուկ. ը. 40; [5] Մատթ. թ. 18; Ղուկ. ը. 41; [6] Ղեւտ. ժե. 25; Մատթ. թ. 20:

չարչարանք էր քաշել, եւ իրան ա-մեն ապրանքըն ծախել՝ եւ մին օ-գուտ չէր ստացել, բայց ցաւն էլ ա-ւելի սաստկացել էր:

27 Լրբոր Յիսուսի համար լսեց՝ ամբոխի (խալխ) մէջն եաեւիցն և-կաւ՝ եւ ձեռըն դիպցրուց նորա շորին:

28 Ինչուար՝ իրան մտքումն մտա-ծումէր, թէ որ մէնակ նորա շորերին մձաեւնամ, կըփրկըվիմ:

29 Լ՚ շուտով նորա արիւնի աղ-բիւրն ցամաքեցաւ. եւ իրան մարմ-նումն իմացաւ՝ թէ էն տանջանքիցն բժշկվեցաւ:

30 Լ՚ շուտով հենց էն ժամումն (սահաթ-ումն) Յիսուս իրան անձնու-մէն իմացաւ էն զորութիւնըն[7] որ ի-րանից դուրս գնաց, դարձաւ դէպի ամբոխն (խալխն) եւ ասաց. ո՞վ դի-պաւ իմ շորերիս:

31 Լ՚ աշակերտներն ասացին նո-ր՚ան. տեսնումէս որ էդ ամբոխդ նե-ղացնումէ քեզ, եւ ասումէս՝ թէ ո՞վ իմ շորերիս դիպաւ:

32 Լ՚ չորս կողմն նայումէր՝ որ տեսնէ՝ թէ էն ո՞վ արաւ:

33 Լ՚ կինն վախենալով եւ դո-ղալով էն բանի համար՝ որ ծածուկ արաւ՝ ինչուար՝ գիտումէր, ինչ էլաւ իրան. եկաւ ընկաւ նորա առաջին՝ եւ ամէն բաներըն ճշմարտութեամբ ասաց:

34 Լ՚ Յիսուս նորան ասաց. գո՛ւստր՝ քո հաւատդ ողջացրուց քեզ[8], գնա՛ խաղաղութեամբ, եւ քո տանջանքիցն ողջ լինես:

35 Դ՚եռքանի որ նա էն խօսումէր, ժողովրդապետի տանիցն մին քահին եկին եւ ասացին՝ թէ քո աղջկէդ մե-ռաւ. էլ ի՞նչու էս աշխատացնում վարդապետիդ[9]:

36 Լ՚ Յիսուս երբոր ասած բա-նըն լսեց՝ ժողովրդապետին ասաց. մի վախենար, բայց միայն հաւատա՛:

37 Լ՚ իսկի մին մարդուն չըթող-ց՚ որ իրան հետ գնայ, բայց միայն պետ-րոսին եւ յակոբին եւ յակոբի եղ-բայր յոհաննէսին:

38 Ժողովրդապետի տունն եկաւ, էնտեղ մեծ ամբոխ (խալխ) տեսաւ եւ լացողներ, եւ շատ աղաղակ:

39 Լ՚ ներս մտաւ՝ եւ նորանց ա-սաց. ինչո՞ւ էք շփոթված եւ լաց էք լինում, երեխան մեռած չէ, բայց քնած է[10]:

40 Լ՚ նորա էին անում նորան. եւ նա ամէնին դուրս հանեց[11], եւ երեխայի հօրըն եւ մօրըն եւ նորանց որ նորա հետ էին՝ իրան հետ առաւ, մտաւ էնտեղն՝ որ երեխան դրած էր:

41 Լ՚ երեխայի ձեռիցն բռնելով՝ նորան ասաց. տալիթա կումի, որ կը-թարգմանվի. ով աղջիկ՝ քեզ եմ ասում՝ վեր կաց:

42 Լ՚ շուտով վերկացաւ աղջիկն եւ գնում էր, ինչուր տասներկու տարեկանի չափ էր. եւ մեծ զար-մանքով զարմացան:

43 Լ՚ նորանց շատ պատուիրեց՝ որ իսկի մին մարդ չիմանայ էն բա-նըն[12]. եւ ասաց՝ որ նորան բան տան ուտելոյ:

---

[7] Ղ-ւկ. զ. 19: ը. 46: [8] Մ-տթ. թ. 22 Մ-րկ. ժ. 52: Գ-ծք. ժդ. 9. [9] Ղ-ւկ. ը. 49: [10] Յ-ան. ժա. 11: [11] Գ-ծք. թ. 40: [12] Մ-տթ. ը. 4: թ. 30: ժբ. 16: ժե. 9: Մ-րկ. գ. 12. Ղ-ւկ. ե. 14:

# ԳԼ· Ջ·

1 Քրիստոս իրան քաղաքացիներից կանչում է: 7 Տաներկուքսաներին իշխանութիւն կը-տայ պիղծ դեւերի վերայ: 14 Քրիստոսի համար եղած այլ եւայլ կարծիքներն. 27 Յօհան-նէս մկրտիչն դնահատուած, 29 եւ թագաւորած: 30 Առաքեալներն քարոզութենից դարձ են անում: 34 Հինգ հացի եւ երկու ձուկի հրաշքն: 48 Քրիստոս ծովի վերայ կը դնայ· 53 եւ ամէն իրան շրջրի ծայրին մօտեցողներին կը փրկէ:

1 Եւ էն ատեղից դուրս գնաց, եկաւ իրան գաւառն[1], եւ նորա աշա-կերտներն նորա ետեւէն գնում էին:

2 Եւ երբ որ շաբաթի օրուանն սկսեց ժողովարանի մէջն սովորցնել, եւ շատ մարդիք երբոր լսում էին՝ զարմանում էին նորա վարդապետու-թեան վերայ եւ ասում՝ սորան որ-տեղից է էս բանս[2], կամ էս ինչ իմաստութիւն է՝ որ տրւված է սորան՝ որ էսպէսի զօրութիւններ են լինում սորա ձեռքովն:

3 Չէ որ սա հիւսան (փէլէքէն) տղան է՝ եւ մարիամայ որդին, յակո-բոսի եւ յոսէի եւ յուդայի եւ սի-մոնի եղբայրն[3]. եւ չէ որ դորա քոյ-րերքն էստեղ մեզ մօտ են. եւ նորա վերայ գայթակղութիւն էին[4]:

4 Եւ Յիսուս նորանց ասաց. մարգարէ անարգված չէ՝ բայց միայն իրան գաւառի եւ իրան ազգական-ներն եւ իրան տան մէջն[5]:

5 Եւ չէր կարում էնտեղ իսկի մին զօրութիւն էլ անել[6], բայց մին-քիչ հիւանդների վերայ ձեռքն էր դնում եւ բժշկում նորանց:

6 Եւ նորանց անհաւատութեան համար զարմանում էր[7]: Եւ գաւառ-ների չորս կողմերն մեծ էր գալիս, եւ սովորցնում էր[8]:

7 Եւ տասներկուսին իրան մօտ կանչեց[9], եւ սկսեց նորանց երկու երկու ուղարկել՝ եւ նորանց իշխա-նութիւն էր տալիս պիղծ դեւերին վերայ:

8 Եւ նորանց պատուիրեց՝ որ ճանապարհի համար իսկի մին բան վեր չառնեն, բայց միայն մին գաւա-զան. ոչ պարկ, ոչ հաց, ոչ պղինձէ փող գօտիներումն:

9 Այլ հողաթափ[10] հագնին՝ եւ երկու կապայ չէր հագնիք՝ ասաց:

10 Եւ նորանց ասում էր. որ տունն որ մտնէք, էնտեղ մնացէք՝ մինչեւ որ էնտեղիցն դուրս գնաք[11]:

11 Եւ նորանք որ ձեզ չընդունին, եւ ձեզ ականջ չդընեն[12], երբոր էնտեղիցն դուրս կըդնաք՝ ձեր ոտ-նների փոշին թափ տուէք՝ որ նորանց վկայութիւն լինի[13]:

12 Եւ դուրս էլան, քարոզում էին՝ որ ապաշխարեն:

13 Եւ շատ դեւեր էին հանում, եւ շատ հիւանդներ իւղով օծում էին[14]՝ եւ նորանց բժշկում էին:

14 Եւ Հերովդէս թագաւորն լսեց. ինչու որ՝ նորա անունն յայտնի էր լաւ. եւ ասում էր՝ թէ յօհաննէս մկրտիչն մեռելների միջիցն յարու-թիւն առաւ, եւ նրանհամար զօրու-

[1] Մարկ· ժգ· 54: Ղուկ· դ· 16: [2] Յովհ· զ· 42: [3] Մարկ· ժբ· 46: Գործ· ա· 19: [4] Մարկ· ժա· 6: [5] Մարկ· ժգ· 57: Յովհ դ· 44: [6] Ծննդ· ժիե· 22: լբ· 25: Մարկ· ժգ· 58: Մարկ· թ· 22, 24: [7] Եսայ· ծիե· 16: [8] Մարկ· թ· 35: Ղուկ· ժգ· 22: [9] Մարկ· ժ· 1: Մարկ· դ· 13, 14: Ղուկ· թ· 1: [10] Գործ· ժբ· 8: [11] Մարկ· ժ· 11: Ղուկ· թ· 4: ժ· 7, 8: [12] Մարկ· ժ· 14: Ղուկ· ժ· 10: [13] Գործ· ժգ· 51· ժբ· 6: [14] Յակ· ե· 14:

թիւններ են լինում նորանով[15]։

15 Ուրիշներն ասում էին՝ թէ Եղիան է։ եւ ուրիշներն՝ թէ մարգարէ է, կամ թէ մարգարէներից մէնին պէս[16]։

16 Երբոր Հերովդէս լսեց, ասաց. սա Յովհաննէսն է՝ որ նորա գլուխը ես կտրեցի. նա մեռելների միջից յարութիւն առաւ[17]։

17 Ինչուար՝ ինքն Հերովդէս ուղարկեց, Յովհաննէսին բռնեց՝ եւ նորան կապեց՝ եւ դրաւ բանտի (պանդանի) մէջ՝ Հերովդիայի համար, որ իրան եղբօր փիլիպպոսի կինն էր, պատճառն որ նա իրան կին առաւ նորան։

18 Ինչուար՝ Յովհաննէս Հերովդէսին ասում էր՝ թէ օրէնք չէ քեզ՝ որ քո եղբօր կինը ունենաս[18]։

19 Եւ Հերովդիան նորա դէմ ոխ էր պահում, եւ ուզում էր սպանել նորան՝ եւ չէր կարում։

20 Պատճառնոր՝ Հերովդէսն Յովհաննէսից վախում էր[19]. ինչուար՝ նորան արդար եւ սուրբ մարդ էր ճանաչում. եւ նորան մոխ էր տալիս. եւ նորանից շատ բան լսելով՝ անում էր, եւ քաղցրութենով ականջ էր դնում նորան։

21 Երբոր մին յարմար օր պատահեց[20], որ ժամանակ Հերովդէս իրան ծնընդի օրումն ընթրիք (հայնէօ-ընէ) էր տալիս իրան իշխաններին եւ զօրապետներին եւ գալիլեացոց մեծամեծներին[21]։

22 Եւ Հերովդիայի աղջկին որ մտաւ՝ եւ պար եկաւ, Հերովդէսին եւ նորա հետ նստածներին հաճոյ եղաւ. թագաւորն ասաց աղջկանն. խնդրիր ինձանից ինչ որ կամենաս, եւ կըտամ քեզ։

23 Եւ շատ անգամ երդում կերաւ նորան՝ թէ ինչ բան որ դու խնդրես ինձանից, կըտամ քեզ, մինչեւ իմ թագաւորութեան կէսն[22]։

24 Նա դուրս գնաց եւ իրան մօրն ասաց՝ ինչ խնդրեմ. եւ նա ասաց, Յովհաննէս մկրտչի գլուխը։

25 Եւ շուտով մինչ մտաւ թագաւորի մօտ՝ եւ ասաց. կամենում եմ որ հիմիկ շուտով սկուտեղի (պինկի) վերայ տաս ինձ Յովհաննէս մկրտչի գլուխը։

26 Եւ թագաւորն շատ տրամեցաւ[23]. բայց իրան երդմունքի եւ կանչված մարդկանցն համար չկամեցաւ անարգել նորան։

27 Եւ թագաւորն շուտով դահիճ (ճէլլատ) ուղարկեց եւ հրամայեց, որ նորա գլուխը բերէ. եւ գնաց նորա գլուխը կարեց բանտի միջումն։

28 Եւ նորա գլուխը սկուտեղով (պինկով) բերաւ՝ եւ աղջկանն տուաւ. եւ աղջիկն տարաւ տուաւ իրան մօրն։

29 Երբոր նորա աշակերտներն լսեցին, եկին նորա մարմինը վերկալան՝ եւ դերեզմանի մէջ դրին։

30 Առաքեալներն Յիսուսի մօտ ժողովվեցան[24], եւ նորան պատմեցին ամէն ինչ որ արին եւ ինչ որ սովորցրին։

31 Եւ Յիսուս նորանց ասաց. դուք առանձին անապատ (չօլ) տեղ եւ կէք, եւ մինչիչ հանգիստ առէք[25]. պատճառն որ շատ մարդիք էին որ գնում էին եւ գալիս էին[26], եւ հաց

[15] Մ–ր։ ժգ։ 1։ Ղ–ւ։ Թ։ 7։ [16] Մ–ր։ ժշ։ 14։ Մ–ւ։ ը։ 28։ [17] Մ–ր։ ժգ։ 2։ Ղ–ւ։ գ։ 19։ [18] Ղև–ա։ ժը։ 16։ ի։ 21։ [19] Մ–ր։ ժդ։ 5։ իա։ 26։ [20] Մ–ր։ ժգ։ 6։ [21] Ծննդ։ ի։ 20։ [22] Ես–ի։ է։ 2։ [23] Մ–ր։ ժգ։ 9։ [24] Ղ–ւ։ Թ։ 10։ [25] Մ–ր։ ժգ։ 18։ [26] Մ–ւ։ գ։ 20։

ուտելոյ ժամանակ էլ չունէին :

32 Եւ նաւով առանձին անապատ տեղ գնացին[27] :

33 Եւ տեսին նորանց որ գնում էին՝ եւ շատ մարդիք իմացան . եւ ամէն քաղաքներից իրար վերայ դիզված ոտով հետեղ էին վազում , եւ նո- րանց մօտենում էին :

34 Եւ դուրս եկաւ , շատ ամբոխ (խումբ) տեսաւ , եւ նորանց վերայ խղճաց[28] . ինչուոր ոչխարներին պէս էին , որ հովիւ (չոպան) չունին . եւ սկսեց նորանց շատ բան սովորցը- նել[29] :

35 Եւ երբոր շատ ժամանակ ան- ցաւ՝ աշակերտներն մօտ եկին եւ ա- սացին[30] . Էս տեղս անապատ է . դեռ քանի որ ցերեկ է ,

36 Ձգուղ արա էդ ժողովուրդնե- րըդ որ չորս կողմով էլած շէներն եւ գիւղերն գնան՝ իրանց համար գնեն ինչ որ ուտելու լինին . պատճառնոր՝ էստեղ ուտելիք բան չունին :

37 Ա՛յս պատասխան տուաւ եւ նո- րանց ասաց . դուք տուէք դորանց ու- տել . նորան ասացին՝ գնանք երկու հարիւր դահեկանի հաց գնենք , եւ դորանց տանք՝ որ ուտեն[31] :

38 Ա՛յորանց ասաց . քանի՞ հատ հաց ունիք՝ գնացէք տեսէք . երբոր գիտացին , նորան ասացին . հինգ՝ եւ երկու ձուկն[32] :

39 Եւ հրամայեց նորանց՝ որ դաս դաս կանանչ խոտի վերայ նստին :

40 Եւ դաս դաս նստեցին հինսեղ հարիւր՝ եւ մին տեղ հիսուն :

41 Եւ էն հինգ հացըն եւ երկու ձուկըն առաւ , դէպի երկինքն նայեց՝ օրհնեց , էն հացերըն կոտրեց , եւ աշակերտներին տուաւ՝ որ քցեն նո- րանց առաջն[33] . եւ էն երկու ձուկըն բաժանեց ամէնին :

42 Կերին եւ կըշտացան ,

43 Եւ մնացած կտորներըն տաս- ներկու քոթոց լիքն վեր կալան , եւ էն ձկներից էլ :

44 Եւ նորանք որ կերին՝ հինգ հա- զարի չափ մարդիք էին :

45 Եւ շուտով աշակերտներըն վռազացրուց , որ նաւ մտնեն[34] , եւ իրանից առաջ էն կողմն բեթսայիդա գնան՝ մինչեւ որ ինքն ժողովուրդնե- րըն արձակէ :

46 Եւ նորանցից բաժանվեցաւ , եւ վերբերլա սարն՝ որ աղօթք անէ :

47 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ նաւն ծովի մէջն էր , եւ ինքն ցամաքում[35] :

48 Եւ նորանց տեսաւ որ նաւ վա- րելոյ ժամանակին ալէկոծ վում էին . ինչուոր քամին ներհակ էր նորանց . եւ գիշերի չորս բաժնի ժամանակին ծովի վերայ գնալով՝ նորանց մօտ եկաւ , եւ ուզում էր որ նորանցից անցկենայ[36] :

49 Ա՛յորանք երբոր տեսին՝ որ ծո- վին վերայ գնում էր՝ կարծեցին թէ աչքի երեւոյթի բան լինի , եւ ձայնով աղաղակ բարձրացրին :

50 Ինչուոր՝ ամէնքն նորան տե- սին՝ եւ շփոթվեցան . եւ նա շու- տով նորանց հետ խօսեց եւ ասաց . սրտապինա կացէք , ես եմ՝ մի վա- խենաք :

51 Եւ վեր էլաւ նաւն նորանց մօտ՝ եւ քամին հանդարտեց . եւ իրանց մտքներումն էլ աւելի յիմարված է- ին , եւ շատ զարմանում էին .

52 Ինչուոր՝ էն հացին վերայ էլ

[27] Մատթ . ժգ . 13 : [28] Մատթ . թ . 36 : ժգ . 14 : [29] Դ–ր . թ . 11 : [30] Մատթ . ժգ . 15 : Դ–ր . թ . 12 : [31] Թագ . ժա . 13 , 29 : գ Թագ . գ . 43 : [32] Մատթ . ժդ . 17 : գ–ր . թ . 13 : ճ–ղ . գ . 9 : [33] Մատթ . ժե . 34 : Մարկ . ը . 5 : [33] ա Թագ . թ . 13 : Մատթ . իգ . 26 : [34] Յովհ . ժդ . 22 : ճ–ղ . ը . 17 : [35] Մատթ . ժդ . 23 : ճ–ղ . գ . 16 , 17 : [36] Դ–ր . իգ . 28 :

չիմացան[37]. պատճառն որ՝ նորանց սիրան թմրած էր[38]։

53 Այլ երբոր էն կողմն անցկացան, գեննեսարեթի երկիրն եկին[39]։

54 Այլ երբոր էն նաւիցն դուրս եկին, էն տեղն մարդիկըն շուտով ճանաչեցին նորան։

55 Այլ էս կողմն էն կողմն ամէն գաւառն վազելով սկսեցին հիւանդներին մահիճներով (ԽՈՀԵՆԵՐՈՎ) բերել՝ որտեղ որ լսում էին՝ թէ էնտեղ է։

56 Այլ որտեղ որ մտնում էր գիւղեր կամ քաղաքներ կամ շէներ՝ ցաւագարներըն փողոցների մէջն էին դնում՝ եւ նորան աղաչում էին՝ որ լինի թէ նորա շորերի ծայրին (ՓԵՇԵՐԻՆ) մօտենան[40]. եւ ամէն նորանք որ մօտեցան՝ փրկվեցան։

## Գ Լ Ո Ւ Խ Ը Ե

1 Աշակերտներն առանց լուանալոյ ձեռքով հաց ուտելոյ համար փարիսեցիներն կըթամբաւեն։ 8 Իրանք մարդկանց աւանդութիւնն պահելոյ համար՝ Աստուծոյ պատուիրանքն թող կըտան։ 14 Ակրաւորն եւ իսկի մին բան չէ կարող պղծել մարդուն։ 24 Քրիստոս կըգթածէ Փիւնիկեցի ասորոյ ազգեցն մին կնիկի աղջկին պիղծ դեւից, 31 Եւ մինել խուլ եւ համր մարդն։

1 Այլ ժողովվեցան նորա մօտ փարիսեցիներն եւ կարդացօղներից մինքանիսն՝ որ երուսաղէմիցն էին եկել[1]։

2 Այլ երբոր տեսին՝ որ նորա աշակերտներից մին քանիսն՝ խառնըված ձեռքով, այսինքն՝ առանց լուանալոյ հաց էին ուտում, բամբասեցին։

3 Պատճառոնր՝ փարիսեցիներն եւ ամէն հրէաներն (ՅՀՈՎԴԵԱՑԻՔԸ)՝ թէ որ բուռը լցված չըլուանան ձեռներըն՝ հաց չեն ուտում. ինչուր ծերերի աւանդութիւնն են պահում։

4 Այլ փողոցից որ գալիս են՝ եթէ առաջ չըլուացվին, չեն ուտում. եւ ուրիշ էլ շատ բան կայ. որ ընդունեցին պահել. բաժակների (ԼՒԱՆԵՐԸ) եւ փարչերի եւ պղընձէ ամանների եւ մահիճների (ՈՀՈՉԿԱՆԵՐԸ) լուացմունքներ։

5 Ընդայ փարիսեցիներն եւ կարդացօղներն հարցրին նորան՝ թէ ինչու քո աշակերտներդ ծերերի աւանդութեան պէս չեն գնում[2]. այլ խառնըված ձեռքով հաց են ուտում։

6 Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց՝ թէ եսային լաւ մարգարէացաւ ձեզ կեղծաւորներիդ վերայ՝ ինչպէս որ ասաց. Էս ժողովուրդս պատուում է պատուում ինձ, եւ նորանց սրտերն ինձանից հեռացած չոկված են[3]։

7 Օգուր տեղն են պաշտում ինձ. մարդկանցից պատուիրած վարդապետութիւնները են սովորցնում։

8 Աստուծոյ պատուիրանքն թողած՝ մարդկանց աւանդութիւնն էք

[37] Մարկ. ը. 17, 18։ [38] Մարկ. գ. 5։ Ժղ. 14։ [39] Մարկ. ժգ. 34։ [40] Մարկ. թ. 20։ Մարկ. ե. 27, 28։ Գործ. ժթ. 12։ [1] Մարկ. ժե. 1։ [2] Մարկ. ժե. 2։ [3] Եսայ. խթ. 13։ Մարկ. ժե. 8։

պահում, փարչերի եւ ամանների լուացմունքներ՝ եւ սորանց նման էլ շատ բաներ էք անում։

9 Եւ նորանց ասաց. լաւ էք ապականում Աստուծոյ պատուիրանքը, որ ձեր աւանդութիւնը պինտ պահէք։

10 Մինչուար՝ մովսէս ասաց. քո հօրդ եւ մօրդ պատուիր[4]. եւ նա որ հօրին կամ մօրին չարախօսութիւն կանէ, թող մահով մեռնի[5]։

11 Եւ դուք ասումէք՝ թէ որ մինն հօրն կամ մօրն ասէ թէ կորբան[6], այսինքն պատարագ (է) էն՝ որ ինձանից պէտք է շահվիս։

12 Եւ էլ թոյլ չէք տալիս նորան որ մին բան անէ հօրն կամ մօրն։

13 Եւ Աստուծոյ բանը անարգումէք ձեր աւանդութենովը որ աւանդեցիք. եւ ուրիշ էլ շատ բաներ՝ որ սորան նման է՝ անումէք։

14 Եւ ամէն ժողովուրդը իրան մօտ կանչեց, եւ նորանց ասաց. ամէնքդ ինձ լսեցէք՝ եւ մտքներդ առէք[7],

15 Իսկի մին բան չըկայ որ դրսից մարդոյ մէջ մտած՝ կարօղանայ պղծել նորան. այլ որ նորանից դուրս է գալիս՝ էն է՝ որ մարդոյն պղծումէ։

16 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[8]։

17 Եւ երբոր էն ամբոխիցն (խօլ եկաւ՝ աշակերտներն Հարցրին նորան էն առակին համար[9]։

18 Եւ նորանց ասաց. էդպէս դուք էլ անխելք էք. չէք իմանում՝ թէ ամէն ինչ որ դրսիցն է մտնում մարդոյ մէջն՝ չի կարօղ պղծել նորան։

19 Պատճառնոր՝ ոչ թէ նորա սիրտն է մտնում, բայց փորն՝ եւ դուրս է գալիս, եւ ամէն կերակուրը ներքն սրբում է։

20 Եւ ասումէր՝ ինչ որ մարդուցն դուրս է գալիս՝ էն է պղծում մարդոյն։

21 Մինչուար՝ ներսից մարդկանց սրտիցն չար խորհուրդներ են դուրս գալիս[10], շնութիւններ, պոռնկութիւններ,

22 Գողութիւններ, սպանութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւններ, պիղծ ցանկութիւններ, նախանձոտութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն։

23 Եւ ամէն չար բաներս ներսիցն են դուրս գալիս, եւ մարդոյն պղծումն։

24 Եւ հետեղիցն վերկացաւ՝ եւ եկաւ տիւրոսի եւ սիդօնի կողմերն[11]. եւ տունն որ մտաւ՝ չէր ուզում որ մէնէն յայտնվի, եւ չըկարաց ծածկըվիլ։

25 Որ կին կին նորա համար լսեց՝ որ նորա աղջիկն պիղծ դեւից չարչարված էր. եկաւ եւ նորա առաջին ընկաւ։

26 Եւ էն կինն հեթանոս էր՝ փիւնիկեցի ասորոց ազգիցն. եւ աղաչում էր նորան՝ որ դեւըն իրան աղջկանիցն դուրս հանէ։

27 Եւ Յիսուս նորան ասաց. թող որ առաջ երեխաներն կըշտանան. ինչուար՝ լաւ չէ՝ երեխաների հացըն առնել եւ շներին քցել։

28 Եւ պատասխան տուաւ եւ ասաց. Տէր՝ շներն էլ երեխաների փշրանքներիցն են կերակրվում։

29 Եւ նորան ասաց. էդ խօսքիդ

---

[4] Եք. ք. 12։ ք Օրին. ե. 16։ Մատթ. ժե. 4։ [5] Եք. խա. 17։ Ղեւտ. ք. 9։ Ա՚ոմ. ք. 20։ [6] Մատթ. ժե. 5։ իգ. 18։ [7] Մատթ. ժե. 10։ [8] Մատթ. ժա. 15։ [9] Մատթ. ժե. 15։ [10] Ծննդ. գ. 5։ ը. 21։ Մատթ. ժի. 19։ [11] Մատթ. ժե. 21։

համար դնեմ, դեւն դուրս եկաւ. ըստ ասղջկանիցն։

30 Գնաց իրան տունն, եւ գտաւ որ դեւն դուրս էր եկել, եւ աղջկերն՝ որ մահճի (ԽՈՉԱՆԻ) վերայ վէր ընկած էր։

31 Յաւ մինել տիւրոսի եւ սիդովնի կողմերիցն դուրս գնաց, եւ գալիլեացոց ծովի եզրն (ԱՂԲԱՆ) եկաւ՝ դեկապօլիսի միջի կողմերն[12]։

32 Յաւ մին խուլ (ԽՈՒ) եւ համր (ԼԵԶՈՒ) (մարդ) բերին նորա առաջն[13], եւ աղաչեցին որ ձեռըն դնէ նորա վերայ։

33 Յաւ նորան ամբոխիցն (ԽԱԼԽԻՑՆ) մին կողմն տարաւ, իրան մատներըն նորա ականջներին մէջ տարաւ՝ եւ թքեց հնաւեղ, եւ նորա լեզուին

քաշեց[14]։

34 Յերկինքն նայեց[15], յոգոց հաներ եւ ասաց[16]. եփփաթա՝ որ է ասել, բացվիր։

35 Յաւ շուտով հետց էն ժամուն (ՃԱԽԱԽՈՒՆ) նորա ականջներն բացվան, եւ լեզուի կապանքներն արձակվեցան[17], եւ շիտակ խօսեցեր։

36 Յաւ նորանց պատուիրեց՝ որ իսկի մինին չասեն[18]. եւ որչափ նա պատուիրուեր նորանց, նորանք էլ աւելի քարոզեցին։

37 Յաւ չափիցն էլ աւելի զարմանեցան եւ ասեն՝. սա ամէն բան լաւ գործեց. ինչուր՝ խուլերին (ԽԱՒԱՐԻՆ) լսել է տալիս՝ եւ համրերին (ԼԵԶՈՒՆԵՐԻՆ) խօսել։

## Գլ. Ը

1 Քրիստոս հրաշքով ժողովուրդն կերակրէ. 11 Փարիսեցոց խնդրած նշանն չէ ուզում տալ. 15 Իրան աշակերտներին խմոր կրասց որ փարիսեցոց եւ Հերովդէսեաններուն խմորեցն զգոյշ լինին։ 22 Մին կոյր մարդոյ աչքերն կըբանայ։ 27 Պետրոս թէ ինքն է Քրիստոսն՝ որ պէտք է նորան շատ չարչարանք քաշել եւ երեք օրից յարութիւն առնել։ 34 Եւ կըսովորցնէ որ Աւետարանի համար իրանց հալածված ժամանակին համերութիւն անեն։

1 Յէն օրերումն մինել շատ ժողովուրդ կար, եւ բան չունէին ուտելոյ[1]. իրան աշակերտներըն կանչեց՝ եւ նորանց ասաց։

2 Խեղճս գալիս է էդ ժողովըրդիդ վերայ. ինչուր՝ հիմիկ երեք օր է՝ որ ինձ մօտ են, եւ բան չունին որ ուտեն։

3 Յաւ թէ որ նորանց սոված արձակեմ դէպի իրանց տունն՝ սովածութենիցն կըթուլանան ճանապարհումն. ինչուր՝ դորանցից կան, որ հեռու տեղից են եկել։

4 Նորա աշակերտներն պատասխան տուին նորան. որտեղից կարօղ ես հացով կըշտացնել դորանց էս անապատ (ԷՇՈՂ) տեղումս։

5 Յաւ նորանց հարցնումը՝ թէ քանի՞ հատ հաց ունէք. եւ նորանք ասացին՝ եօթն[2]։

6 Յաւ ժողովըրդին հրամայեց որ երկրի վերայ նստին. եւ էն եօթն

[12] Մարկ. ԺԵ. 29։ [13] Մարկ. Թ. 32։ Ղուկ. ԺԱ. 14։ [14] Մարկ. Ը. 23։ Յովհ. Թ. 6։ [15] Մարկ. Զ. 41։ Յովհ. ԺԱ. 41։ ԺԷ. 1։ [16] Յովհ. ԺԱ. 33, 38։ [17] Եսայ. ԼԵ. 5, 6։ Մարկ. ԺԱ. 5։ [18] Մարկ. Ե. 43։ [1] Մարկ. ԺԷ. 32։ [2] Մարկ. ԺԵ. 34։ Մարկ. Զ. 38։

Հացըն առաւ՝ գոհացաւ, կտրեց, եւ աշակերտներին էր տալիս՝ որ քցեն. եւ քցեցին ժողովրդի առաջն:

7 Նա մին քիչ ձուկըն ունէին. եւ նորան էլ օրհնեց, եւ հրամայեց որ քցեն[3]:

8 Կերին եւ կըշտացան. եւ աւելացած կտորներըն հաւքն քցոց վերա կալան:

9 Նա նորանք որ կերին՝ չորս հազարի չափ էին. եւ նորանց արձակեց:

10 Նա շուտով էն ժամումն (սուհաննա) աշակերտներին հետ նաւ մտաւ[4] եւ դաղմանուենայի կողմերն եկաւ:

11 Փարիսեցիներն եկին՝ եւ սկսեցին նորա հետ հակառակիլ[5]. եւ նորան փորձելով՝ նորանից մին նշան էին խնդրում երկնքից:

12 Նա շատ տրտմեցաւ իրան սրտումն՝ եւ ասաց. ի՞նչ է, որ էս ազգս նշան է խընդրում. ճշմարիտըն ասումեմ ձեզ, թէ որ էս ազգիս նշան տրվի:

13 Նորանց թողեց. մինէլ նաւ մտաւ՝ եւ էն կողմն գնաց:

14 Նա մոռացան իրանց հետ հաց վերառնել[6] բայց մէնակ մին հաց ունէին իրանց հետ նաւի մէջն:

15 Նա նորանց պատուիրումէր եւ ասում[7], զգոյշ կացէք էն փարիսեցիների խմորից եւ Հերովդէսեանների խմորից:

16 Նա իրար հետ միտք էին անում եւ ասում, թէ նրա համար՝ որ հաց չունինք[8]:

17 Յիսուս իմացաւ եւ նորանց ասաց՝ թէ ի՞նչ էք միտք անում ձեր սրտերումդ ա՛մէ թերահաւատներ, թէ հաց չունիք. դեռ էջք իմանում եւ էջք յիշում[9]. Թմրութիւն բըռնել է ձեր սրտերըն:

18 Աչք ունիք՝ եւ էջք տեսնում. ականջ ունիք՝ եւ էջք լսում. եւ դեռ էջք իմանում, եւ էջք յիշում:

19 Որ ժամանակ էն հինգ հացըն հինգ հազարին համար (կտրեցի), քանի՞ քոթոց լիքն վեր առիք նորա կտորներըն[10]. եւ նորան ասացին՝ տասներկու:

20 Նա որ ժամանակ եօթն հացըն չորս հազարին համար, քանի՞ քոթոց լիքն վեր առիք նորա կտորներըն[11]. եւ նորանք ասացին, եօթն:

21 Նա նորանց ասաց. ապա ի՞նչպէս էջք իմանում[12]:

22 Նա Բեթսայիդա եկին, եւ նորա առաջն մին կոյր բերին, եւ նորան աղաչեցին՝ որ մատնէայ նորան:

23 Նա կուրի ձեռքից բռնեց՝ շէնից դուրս հանեց, նորա աչքերին մէջ թքեց, եւ ձեռըն դրաւ նորա վերայ[13]. եւ նորան հարցնում էր՝ թէ մին բան տեսնում:

24 Նա նայվաւ՝ եւ ասումէր. մարդկանց տեսնում եմ՝ որ ծառերի պէս ման են գալիս:

25 Մինէլ ձեռներըն նորա աչքերին վերայ դրաւ՝ բաց արաւ, եւ տեսնումէր. ողջացաւ՝ եւ ամէն բան համաձակ տեսնում էր:

26 Նորան ուղարկեց իրան տունն՝ եւ ասաց. շէնն չի՛ մտնես, բայց դո տունդ գնա՛. եւ երբոր շէնն մտնես՝ շէնի մէջն մըրնի չասես[14]:

27 Նա Յիսուս աշակերտներին հետ դուրս գնաց փիլիպպեայ կեսարիայի շէներն[15]. եւ ճանապարհումն

[3] Մարկ. ժդ. 19։ Մարկ. ղ. 41։ [4] Մարկ. մե. 39։ [5] Մարկ. ժբ. 38։ ժզ. 1։ Ցածկ. ղ. 30։ [6] Մարկ. ժզ. 5։ [7] Մարկ. ժզ. 6։ Ղուկ. ժբ. 1։ [8] Մարկ. ժզ. 7։ [9] Մարկ. ղ. 25։ [10] Մարկ. ժդ. 20։ Մարկ. ղ. 43։ Ղուկ. թ. 17։ Ցածկ. ղ. 13։ [11] Մարկ. մե. 37։ Վէր. 8։ [12] Մարկ. ղ. 52։ Վէր. 17։ [13] Մարկ. է. 33։ [14] Մարկ. ը. 4։ Մարկ. է. 43։

աշակերտանըրին Հարցնուածեր եւ ա-
պուածեր՝ մարդիքն ինձ համար ով են
պատում՝ որ լինիմ։

28 Ասորանք պատասխան տուին՝ եւ
ասացին. (Թէ) Յովաննէս Մկրտիչն,
եւ ուրիշներն՝ (Թէ) Եղիան, եւ ու-
րիշներն՝ (Թէ) մարգարէներից մի-
ոնըն[16]։

29 Ասորանց ասաց. ապա դուք ով
էք ասում ինձ համար՝ որ լինիմ.
պետրոս պատասխան տուաւ, եւ ա-
սաց. դուն Քրիստոս ես[17]։

30 Եւ նորանց սաստեց՝ որ խոկ
միոնին բան չասեն իրան համար[18]։

31 Եւ սկսեց սովորցնել նորանց,
Թէ պէտք է՝ որ որդին մարդոյ շատ
չարչարանք քաշէ, եւ անարգվի ծե-
րերից եւ քահանայապետներից եւ
կարդացողներից, եւ մեռնի՝ եւ ե-
րեք օրումն յարութիւն առնի[19]։

32 Եւ համարձակ խօսեց բանըն.
եւ պետրոս նորան մին կողմ քաշեց՝
եւ սկսեց սաստել նորան։

33 Եւ նա դարձաւ, աշակերտանե-
րին տեսաւ՝ պետրոսին սաստեց եւ
ասաց. Յիս դնա ինձանից սատանայ.
ինչուոր՝ դու Աստուծոյ բաներըն
միտք չես անում՝ բայց մարդկանց
բաներըն։

34 Եւ ժողովուրդըն աշակերտանե-
րին հետ իրան մտ կանչեց, եւ նո-
րանց ասաց. Թէ որ մինն ուզում իմ
ետեւէս գալ՝ նա թող իրան անձըն
ուրանայ, եւ իրան խաչըն վերառնի՝
եւ իմ ետեւէս գայ[20]։

35 Պատճառնոր ով որ կամենայ
իրան անձըն ապրեցնել՝ կկորցնէ
նորան[21]. եւ ով որ իրան անձըն ա-
ետառարանին համար կկորցնէ, կապ-
րեցնէ նորան։

36 Ինչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն
աշխարհքըս ստանայ՝ եւ իրան անձին
վնաս տայ։

37 Պատճառնոր՝ ինչ բան կըտայ
մարդն իրան անձին տեղակ։

38 Ինչուոր՝ ով որ ինձ եւ իմ
խօսքերըս[22] ամէն կըհամարէ[23] էս
շնացօղ եւ մեղաւոր ազգիս միջումն,
որդին մարդոյ էլ նորան ամէն կա-
նէ՝ երբոր իրան հօր փառքովն եւ
սուրբ հրեշտակներովն կըգայ։

39 Եւ նորանց ասաց. Ճշմարիտըն
պատումեմ ձեզ. Թէ էստեղ կանգ-
նածներիցն մին քանիսն կան՝ որ մահ
չեն տեսնիլ[24] մինչեւ որ Աստուծոյ
արքայութիւնըն տեսնեն զօրութեա-
նով եկած[25]։

## ԳԼ. Թ.

1 Յիսուսի կերպարանքի փոխվելն։ 11 Եղիայի գալը համար աշակերտներին կըպատա-
ս. 24 Մին մռնճ համր եւ խուլ դեւ դուրս կըհանէ։ 30 Իրան մեռնիլն եւ յարութիւն
առնելն առաջուց կասէ։ 34 Իրան աշակերտներին խրատ կըտայ որ խոնարհ լինին, 38 Եւ
կըպատուիրէ Թէ իրանց հակառակ չէլողներին չարգելեն, 41 Ո՛չ էլ հաւատացեալներից
մըներին գայթակղութիւն չտան։

1 Եւ վեց օրիցն ետեւ Յիսուս Նէսին իրան հետ առաւ, եւ նորանց
պետրոսին եւ յակոբին եւ յօհան- առանձին մին բարձր սար հանեց. եւ

[15] Մարկ. ժզ. 13։ Ղուկ. Թ. 18։ [16] Մարկ. ժդ. 2։ [17] Մարկ. ժզ. 16։ Ցովհ. զ. 69։
ծա. 27։ [18] Մարկ. ժզ. 20։ [19] Մարկ. ժզ. 21։ ժէ. 32։ Ղուկ. Թ. 22։ [20] Մարկ. ժ.
38։ ժզ. 24։ Ղուկ. Թ. 23։ ժդ. 27։ [21] Ցովհ. ժբ. 25։ [22] Մարկ. ժ. 33։ Ղուկ. Թ.
26։ ժբ. 9։ [23] Հռովմ. ա. 16։ բ Տիմ. ա. 8։ բ. 12։ [24] Մարկ. ժզ. 28։ Ղուկ. Թ. 27։
[25] Մարկ. խզ. 30։ խե. 31։ Ղուկ. խբ. 18։

նորա կերպարանքն փոխվեցաւ նո-
ցանց առաջին[1]։

2 Եւ նորա շորերն փայլուն եւ
շատ սպիտակ էլան[2]· որ երկրիս վե-
րայ կտաւ սպիտակացնօղներն չեն
կարօղ էնպէս սպիտակացնել։

3 Եւ եղիան մօսէսին հետ նո-
ցանց երեւեցաւ, եւ Յիսուսի հետ
խօսում էին։

4 Պետրոս պատասխան տուաւ՝ եւ
Յիսուսին ասաց· ռաբբի՛ լաւ է որ
մենք էս տեղ կենանք· եւ երեք տա-
ղաւար (չատըր) կըշինենք՝ մին
քեզ համար եւ մին մօսէսին եւ մի-
նը եղիային։

5 Պատճառնօր՝ չէր գիտում ինչ
էր խօսում· ինչուօր՝ խիստ վախե-
ցած էին։

6 Եւ մին ամպ էլաւ՝ որ նորանց
վերայ շուաք արաւ· էն ամպիցն ձայն
էլաւ՝ եւ ասաց· գա՛ է իմ սիրելի որ-
դին, դորան ականջ դրէք։

7 Եւ շուտով որ էս կողմն էն
կողմն նայեցին՝ էլ ուրիշ մարդ չը-
տեսին, բայց մէնակ Յիսուսին իրանց
հետ։

8 Եւ երբոր էն սարիցն վէր էին
գալիս, նորանց պատուիրեց՝ որ իսկի
մինին չըպատմին ինչ որ տեսին[3]·
բայց էն ժամանակն որ որդին մարդոյ
մեռելների միջիցն յարութիւն առնէ։

9 Եւ նորանք էն խօսքըն մնքնե-
լում էին պահում, եւ իրար հետ
հարցնում էին՝ թէ ինչ է էն մեռել-
ների միջիցն յարութիւն առնելն։

10 Եւ նորան հարցրին եւ ասացին,
ինչ է էն՝ որ կարդացօղներն ասում
են՝ թէ պէտք է որ առաջ եղիան գայ[4]։

11 Եւ նա պատասխան տուաւ նո-
րանց՝ եւ ասաց· եղիան առաջ կըգայ,
եւ ամէն բան կարգին կըդնէ· բայց
ինչպէս է գրված որդոյ մարդոյ հա-
մար[5], թէ շատ պիտի չարչարվի եւ
անարգվի[6]։

12 Ա՛խայն թէ ես ասում ձեզ՝
թէ եղիան եկաւ, եւ ինչ որ ուզե-
ցին, նորան արին[7]· ինչպէս որ էլ
նորա համար գրված է։

13 Եւ երբոր եկին աշակերտնե-
րին մօտ, նորանց չորս կողմնին ամ-
բոխ (խալք) տեսին[8], եւ կարդացօղ-
ներին՝ որ նորանց հետ հակառակու-
թիւն էին անում։

14 Եւ շուտով ամէն ժողովուրդն
երբոր տեսին նորան, զարմացան եւ
առաջ վազելով՝ նորան բարեւ էին
տալիս։

15 Եւ նորանց հարցրուց՝ թէ ինչ
էիք հակառակում նորանց հետ։

16 Ժողովրդի միջիցն մինն պա-
տասխան տուաւ՝ եւ ասաց[9]· վէրպա-
պետ՝ իմ որդիս քեզ մօտ բերի, որ
նորան համր (լալկի) դեւ բռնել է։

17 Եւ ուրտեղ որ նորան հասնում՝
նորան գետնով է տալիս· եւ փըս-
փրացնում՝ եւ ատամներըն կըճըռ-
ացնում եւ ցամաքում։ Եւ քո ա-
շակերտներին ասացի՝ որ հանեն, եւ
չըկարացին հանել նորան։

18 Եւ նորանց պատասխան տուաւ եւ
ասաց· ով անհաւատ ազգ՝ մինչեւ
երբ ձեզ հետ պիտի լինիմ, մինչեւ
երբ ձեզ պիտի համբերեմ· նորան
ինձ մօտ բերէք։

19 Եւ նորան բերին նորա մօտ·
երբոր դեւն նորան տեսաւ, շուտով
սաստիկ շարժեց նորան[10]· եւ գետինն

[1] Մատթ. ժե. 1։ Ղուկ. թ. 28։ [2] Դան. է. 9։ Մատթ. իը. 3։ [3] Մատթ. ժե. 9։ [4] Մաղ. դ. 5։ Մատթ. ժե. 10։ [5] Սաղմ. իբ. 6։ Եսայ. նգ. 3, եսայե։ Դան. թ. 26։ [6] Ղուկ. իգ. 44։ Փիլիպ. բ. 7։ [7] Մատթ. ժա. 14։ ժե. 12։ Ղուկ. ա. 17։ [8] Մատթ. ժե. 14։ Ղուկ. թ. 37։ [9] Մատթ. ժե. 14։ Ղուկ. թ. 38։ [10] Մատթ. ա. 26։ Ղուկ. թ. 42։

ընկած թաւալումէր եւ փրփրումէր :

20 Այսր հօրըն հարցրուց եւ ասաց . քանի՞ ժամանակ է՝ որ էդ բանըդ էլաւ դորան . եւ նա ասաց՝ ես բնխայումենիկին :

21 Հ ատ անգամ կրակի մէջն է քցում եւ ջրի մէջն՝ որ դորան կորցընէ . ապա թէ որ մին բան կարօղ ես՝ օգնիր մեղ Տէր՝ խղճալով մեղ վրայ :

22 Այս Յիսուս նորան ասաց . ասացիր՝ թէ որ կարօղ ես . ամէն բան կարելի է նորան՝ որ հաւատում[11] :

23 Այս շուտով տղայի հայրն աղաղակեց՝ եւ ասաց . հաւատումեմ , իմ անհաւատութեանս օգնիր :

24 Այրբոր Յիսուս տեսաւ՝ թէ ժողովուրդն վերայ է կիտվում , էն պիղծ դեւին սաստեց եւ ասաց . ով համր (լռիկ) եւ խուլ (խաւ) դեւ՝ ես հրամայեմ տալիս քեզ , դորանից դուրս եկ , եւ մինէլ դորա մէջ չըմտնես :

25 Այս շատ աղաղակեց՝ եւ սաստիկ չարչարեց նորան , եւ դուրս եկաւ . եւ տղան մեռածի պէս էլաւ , մինչեւ որ շատերն ասումէին՝ թէ մեռաւ :

26 Այս Յիսուս նորա ձեռիցն բռնեց , նորան վերկացրուց , եւ կանգնեց :

27 Այս երբոր նա տուն մտաւ՝ աշակերտներն առանձին հարցրին նորան՝ (թէ) մենք ինչո՞ւ չըկարացինք հանել նորան[12] :

28 Այս նորանց ասաց . էդ ցեղդ ուրիշ բանով դուրս չի գալ , եթէ ոչ պասով եւ աղօթքով :

29 Այս էն տեղից դուրս եկած՝ գալիլեացով միջոցն անց էին կենում . եւ չէր ուզում որ մինն իմանայ :

30 Ինչուր՝ իրան աշակերտներըն սովորցնում՝ եւ նորանց ասումէր՝ թէ որդին մարդոյ մարդկանց ձեռքն պիտի մատնըվի , եւ նորան կրսպանեն , եւ երբոր կրսպանվի , երեք օրումն յարութիւն կառնէ[13] :

31 Այս նորանք էն բանըն չէին իմանում . եւ վախումէին որ հարցնեն նորան :

32 Կափառնայում եկաւ[14] , եւ երբոր տուն մտաւ , նորանց հարցնում՝ (թէ) ճանապարհումն ինչ էիք հակառակում իրար հետ :

33 Այս նորանք լուռ էին կենում . պատճառնոր՝ ճանապարհումն իրար հետ հակառակումէին թէ ով լինի մեծն :

34 Այս երբոր նստեց , տասներկուսին կանչեց եւ նորանց ասաց . թէ որ մինն ուզումէ առաջին լինել՝ թող ամենքին փոքր՝ եւ ամենին պաշտօնեայ լինի[15] :

35 Այս մին երեխայ առաւ , կանգնացրուց նորանց միջումն[16] . եւ նորան առաւ իրան գիրկն եւ նորանց ասաց :

36 Ով որ էսպէսի երեխաներից մինըն իմ անունովս կընդունի՝ ինձ կընդունի . եւ ով որ ինձ կընդունի՝ ինձ չի՝ ընդունել , այլ նորան՝ որ ինձ ուղարկեց[17] :

37 Յովհաննէս նորան պատասխան տուաւ եւ ասաց[18] . վարդապետ՝ մենք տեսինք որ քո անունովդ դեւեր էր հանում , եւ մեր ետեւէն գալիս , եւ արգելեցինք նորան :

38 Այս նա ասաց . մի արգելէք նորան . ինչուր՝ ոչ ով չըկայ՝ որ իմ

[11] Մատթ . ԺԷ . 21 : Մարկ . ԺԱ . 33 : Ղուկ . ԺԷ . 6 : Յովհ . ԺԴ . 40 : [12] Մատթ . ԺԷ . 19 : [13] Մատթ . ԺԷ . 22 : Ղուկ . Թ . 44 : [14] Մատթ . ԺԲ . 1 : Ղուկ . Թ . 46 : Իւ . 24 : [15] Մատթ . Ի . 26 , 27 : Մարկ . Թ . 43 : [16] Մատթ . ԺԲ . 2 : Մարկ . Թ . 16 : [17] Մատթ . Թ . 40 : Ղուկ . Թ . 48 : [18] Թուոց . ԺԱ . 28 : Ղուկ . Թ . 49 :

անունովը զօրութիւն անէ, կարենայ հայհոյել ինձ[19]։

39 Պատճառնոր՝ նա որ մեզ հակառակ չէ՝ մեր կողմն է[20]։

40 Եւ ով որ մին բաժակով (ըստ ասի) ջուր կրնծայնէ ձեզ Քս անունովս՝ թէ դուք Քրիստոսինն էք, ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ նա չի կորցնիլ իրան վարձքըն[21]։

41 Եւ ով որ կրգայթակղեցնէ Քս փոքրներիցս միոլն՝ որ ինձ հաւատումեն, աւելի լաւ էր նորան՝ որ իրան վզովեցն միւ իշու ջաղացի քար անցկացնըվի, եւ ծովն քցվի[22]։

42 Եւ եթէ քո ձեռգ քեզ գայթակղեցնէ՝ կտրիր նորան, քեզանից դէն քցիր· ինչուոր՝ լաւ է քեզ՝ որ խեղ (անխոտ) մտնես յաւիտենական կեանքն, քանթէ երկու ձեռք ունենաս՝ եւ գեհենն գնաս էն անանցնելի կրակի մէջն[23]։

43 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ եւ կրակն չի անցնում[24]։

44 Եւ եթէ քո ոտգ քեզ գայթակղեցնէ, կտրիր նորան՝ քեզանից դէն քցիր· լաւ է քեզ որ կաղ մանես յաւիտենական կեանքըն, քանթէ երկու ոտք ունենաս՝ եւ գեհենն ընկնիս էն անանցնելի կրակի մէջն։

45 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ եւ կրակն չի անցնում։

46 Եւ եթէ քո աչքդ քեզ գայթակղեցնէ՝ դուբս հանիր նորան· լաւ է քեզ՝ որ մին աչքով Աստուծոյ արքայութիւնն մանես, քանթէ երկու աչք ունենաս՝ եւ գեհենն ընկնիս։

47 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ եւ կրակն չի անցնում։

48 Պատճառնոր՝ ամէն բան կրակով պէտք է աղանվի, եւ ամէն մատաղ աղով պէտք է աղանվի[25]։

49 Աղն բարի է[26]· եւ թէ որ աղն անհամանայ, ինչո՞վ պիտի համեղացնայ· ուրիմն դուք աղըն բունեցէք ձեզ անձնեքումն[27], եւ իրար հետ խաղաղութիւն արէք[28]։

## Գլ· Ժ

2 Քրիստոս կին բաց թողելոյ գրին համար փարիսեցոց հետ հակառակութիւն կանի· 13 Իրան բերված երեխաներըն կօրհնէ· 17 Յայց կըսայ թէ հարուստ մարդն ինչպես կարող է յաւիտենական կեանքն ժառանգել· 23 Հարուստների վտանգն իրան աշակերտներին ցոյց կըտայ· 28 Աւետարանի համար ամէն բան թողողներին՝ վարձքի խոստանուք կըտայ· 32 Իրան մահն եւ յարութիւն առնելն առաջուց ասումէ· 35 Փառք սրտող երկու աշակերտներին պատասխ կըտայ որ ամէնից աւելի իրան հետ չարչարվելոյ վերայ մտածէն· 46 Եւ Բարտիմէոսին աչքերըն կըբանայ։

1 Եւ էնտեղիցն վերկացաւ եւ կաւ Հրէաստանի (Յորդանանի) կողմերն՝ յորդանանի էն կողմն[1]· եւ միներ ժողովուրդըն կիտվաձ գնուաձ մէին նորա մտա, եւ ինչպէս որ նորա սովորութիւն էր՝ միներ սովորցնուաձ մէր նորանց։

2 Եկայց փարիսեցիներն մտա եւ

[19] ա Կորնթ· ժբ· 3։ [20] Մարկ· ժբ· 30։ [21] Մարկ· ժ· 42։ [22] Մարկ· ժբ· 6։ Ղուկ· ժէ· 1։ [23] բ Օրին· ժգ· 6։ Մարկ· թ· 29։ ժբ· 8։ [24] Եսայ· կգ· 24։ [25] Ղեւտ· բ· 13։ Եզեկ· 24։ [26] Մարկ· թ· 13։ Ղուկ· ժգ· 34։ [27] Եփես· գ· 29։ Կող· գ· 6։ [28] Հռոմ· ժբ· 18։ ժգ· 19։ բ Կորնթ· ժգ· 11։ Եբր· ժբ· 14։ [1] Մարկ· ժթ· 1։ Յովհ· ժ· 40։ ժա· 7։

կին, եւ փորձելով նորան հարցնում էին եւ ասում՝ թէ արժանի է մարդոյ՝ որ իրան կինն բաց թողէ[2]:

3 Նա պատասխան տուաւ նորանց եւ ասաց. մնացեր ի՞նչ պատուիրեց ձեզ:

4 Նա նորանք ասացին. մնացեր հրաման տուաւ՝ գրել գիրս անջրպետ թողլի գրել, եւ զատ անել[3]:

5 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. ձեր քարտասրտութեան համար էն պատուիրանքն գրեց ձեզ:

6 Այլ սակայն ստեղծագործութեան սկզբից Աստուած նորանց արու (ոչ) եւ էգ արաւ[4], եւ ասաց.

7 Վասն համար մարդն իրան հօրն եւ մորն կըլթողէ, եւ իրան կնկան հետ կըմիացայ[5]:

8 Նա երկուքն մին մարմին կըլինին. եւ նրանից ետեւ երկու չեն՝ բայց մին մարմին են:

9 Ուրեմն էն որ Աստուած միաւորեց՝ թող մարդն չըջոկէ:

10 Նա տան մէջն աշակերտներն մինէլ հետց էն բանըն հարցրին նորան:

11 Նա նորանց ասաց. թէ որ մարդ իրան կինն բաց թողէ՝ եւ մին ուրիշն առնէ, շնութիւն է գործում[6]:

12 Նա կինն՝ թէ որ իրան մարդուցն զատ գնայ՝ եւ ուրիշ մարդոյ լինի՝ շնութիւն է գործում:

13 Նա նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ ձեռն դնէ նորանց վրայ[7]. բայց աշակերտներն սաստում էին նորանց՝ որ բերում էին:

14 Այլ որոյ Յիսուս տեսաւ՝ բարկացաւ եւ նորանց սաստեց եւ ասաց. Թողէք տուէք էգ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան, եւ մի արգելէք դորանց. ինչուր էգ պիսիներին է Աստուծոյ արքայութիւն[8]:

15 Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ (թէ) ով որ Աստուծոյ արքայութիւն չընդունի ինչպէս երեխայ նա չի մտնիլ նորա մէջ[9]:

16 Նա նորանց գիրկն առաւ՝ ձեռն դրաւ նորանց վրայ՝ եւ նորանց օրհնեց:

17 Նա ճանապարհն որ դուրս գնաց ճանապարհն, ահա մին հարուստ մարդ վազելով եկաւ՝ ծունր էր դնում՝ նորան հարցնումէր եւ ասում՝ բարի վարդապետ. ինչ գործեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ[10]:

18 Նա Յիսուս նորան ասաց. ինչո՞ւ ես ինձ բարի ասում՝ ոչ ով բարի չըլկայ, բայց միայն մինն Աստուած:

19 Պատուիրանքներըն գիտես՝ մի շնար, մի սպաներ, մի գողանար, մի սուտ վկայեր, քո հօրըդ եւ մորըդ պատուիր[11]:

20 Նա պատասխան տուաւ եւ նորան ասաց. վարդապետ՝ էգ ամէնըդ իմ երեխայութենիցն արի. ապա էլ ինչ բանով եմ պակաս:

21 Նա Յիսուս նորան մտիկ տուաւ՝ նորան սիրեց, եւ նորան ասաց. մին բան պակաս է քեզանից. Թէ որ կամենաս կատարեալ լինիլ, գնա, ինչ որ ունիս՝ ծախիր եւ աղքատներին տուր. եւ գանձ(նաւպայ) կունենաս երկնքումն[12]. եւ խաչըն առ՝ եւ իմ ետեւէս եկ:

[2] Մատթ. ԺԹ. 3: [3] Բ Օրէն. իդ. 1: Մատթ. ե. 31: ԺԹ. 7: [4] Ծննդ. ա. 27: ե. 2: [5] Ծննդ. բ. 24: ա Կորնթ. զ. 16: Եփես. ե. 31: [6] Մատթ. ե. 32: ԺԹ. 9: Ղուկ. ԺԶ. 18: Հռոմ. է. 3: ա Կորնթ. է. 10, 11: [7] Մատթ. ԺԹ. 13: Ղուկ. ԺԸ. 15: [8] ա Կորնթ. ԺԴ. 20: ա Պետր. բ. 2: [9] Մատթ. ԺԸ. 3: [10] Մատթ. ԺԹ. 16: Ղուկ. ԺԸ. 18: [11] Եփես. զ. 1: Հռոմ. ԺԳ. 9: [12] Մատթ. զ. 19, 20: ԺԹ. 21: Ղուկ. ԺԸ. 33: ԺԶ. 9:

22 Եւ նա էն բանին համար դըժուարացաւ՝ եւ տըրտմած գնաց. պատճառն որ՝ շատ ապրանք ունէր:
23 Եւ Յիսուս էսկողմն էնկողմն նայելով՝ աշակերտներին ասաց. ի՜նչքան դժուար է՝ որ նորանք որ ապրանք ունին՝ Աստուծոյ արքայութիւնն մտնեն[13]:
24 Եւ աշակերտներն զարմացել էին նորա խօսքերին վերայ. բայց Յիսուս միևել պատասխան տուաւ նորանց եւ ասաց. որդեակներ՝ ո՜րքան դժուար է՝ որ նորանք որ իրանց յոյսըն ապրանքի վերայ են դրել, Աստուծոյ արքայութիւնն մտնեն[14]:
25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի ծակով անցկենայ, քանիմէ հարուստն Աստուծոյ արքայութիւնն մտնէ:
26 Եւ նորանք էլ աւելի զարմանում էին՝ եւ միմեանք մէնիմ ասում էին. ապա ո՞վ կըկարենայ ապրիլ:
27 Յիսուս նորանց մէկ տուաւ եւ ասաց. մարդկանց կողմանէ՝ էդ անկարելի է, բայց ո՛չ թէ Աստուծոյ կողմանէ[15]:
28 Պետրոսն սկսեց նորան ասել. ահա մենք ամէն բան թողինք, եւ քո հետևէդ եկինք[16]:
29 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. ճշմարիտն ասումէմ ձեզ՝ թէ ո՛չ ով չըկայ՝ որ տունը կամ եղբարները կամ քըվէրքը կամ հօրը կամ մօրը կամ որդիքը կամ արտերը թողնց՝ ինձ համար կամ աւետարանին համար.
30 Ո՛ր հարիւրապատիկ հիմիկ էս ժամանակումն չառնէ տներ եւ եղբարներ եւ քըվէրքը եւ մայրք եւ որդիք եւ արտեր հալածմունքի հետ, եւ էն նոր գալու աշխարհքումն՝ յաւիտենական կեանքըն[17]:
31 Պատճառնոր՝ շատ առաջիններ յետինք կըլլինն՝ եւ յետիններն առաջինք[18]:
32 Եւ ճանապարհի վերայ էին՝ որ երուսաղէմ էին գնում՝, եւ Յիսուս նորանցից առաջ էր գնում[19]. եւ նորանք՝ որ հետևէն գնում էին, զարմացած էին եւ վախենում էին: Եւ տասներկուսին միևել առաձին առաւ, սկսեց նորանց ասել՝ թէ ինչ բաներ իրան վերայ պիտի անցկենան[20]:
33 Ա՛խ ահա վեր ենք էլնում երուսաղէմ. եւ որդին մարդոյ կըմատնըվի քահանայապետներին եւ գրագատօղներին ձեռքն. եւ նորան մահով կըդատապարտեն, եւ նորան հեթանոսներին կըմատնեն.
34 Եւ նորան ծաղր կանեն, եւ նորան կըծեծեն, եւ նորա վերայ կըթքեն, եւ կըսպանեն. եւ երեք օրումն յարութիւն կառնէ:
35 Եւ զեբեդեայի որդիքն՝ յակոբոսն եւ յովհաննէսն նորա մօտ եկին գնում՝ եւ նորան ասացին. վարդապետ՝ ուզումենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ անես[21]:
36 Եւ նա նորանց ասաց. ինչ էք խնդրում ինձանից՝ որ ձեզ անեմ:
37 Եւ նորանք ասացին նորան. տուր մեզ՝ որ մինն քո աջ կողմի եւ մէկէլն քո ձախ կողմի նստինք քո փառքումդ:
38 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. չէք գիտում՝ (թէ) ինչ էք խընդրում. կարօղ էք էն բաժակըն (նստըն) խմել՝ որ ես պի-

[13] Մտթ. ԺԹ. 23. Ղ.ե.ւ. ԺԸ.24: [14] Ցաւէ. Լա. 24: Մ.ւ. ՃՐ. Շ: կը. 10: ա Տիմ. զ՝ 17: [15] Ներմ. կը. 17: Մտթ. ԺԹ. 26: Ղ.ե.ւ. ա. 37: [16] Մտթ. ԺԹ. 27: Ղ.ե.ւ. Ժը. 28: [17] Մ.ւ.ղ. իե. 9: Ղ.ե.ւ. Ժը. 30: [18] Մտթ. ԺԹ. 30: ի. 16: Ղ.ե.ւ. Ժգ. 30: [19] Մտթ. ի. 17: Ղ.ե.ւ. Ժը. 31: [20] Մտթ. ը. 31: ԼԸ. 31: Ղ.ե.ւ. ԼԸ. 22: Ժը. 31: [21] Մտթ. ի. 20:

ահ համեմ, կամ էն մկրտութենովն մկրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ:

39 Եւ Տէրանը ասացին Տէրան. կարօղ ենք. եւ Յիսուս Տէրանց ասաց. էն բաժակըն (Ասացն)՝ որ ես պիտի համեմ, կրնահք, եւ (էն) մկրտութենովն՝ որ ես պիտի մկրտվիմ կրնկրտվիք:

40 Բայց իմ աջ եւ իմ ձախ կողմն նստացնելըն իմն չէ որ տամ՝ բայց Տէրանց՝ որ պատրաստված է:

41 Եւ էն (ըկէկլ) տասներն որ լսեցին, սկսեցին բարկանալ Յակօբի եւ Յոհաննէսի վերայ:

42 Եւ Յիսուս Տէրանց իրան մօտ կանչեց, եւ Տէրանց ասաց. գիտուածք՝ որ Հեթանոսների իշխան կոչվածներն Տէրանց վերայ տիրութեն, եւ Տէրանց մեծամեծներն իշխանութիւն են անոնց Տէրայ:

43 Այնպէս չի՝ պիտի լինի ձեր միջումդ. բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ պաշտօնեայ լինի:

44 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել՝ թող ամենից ծառայ լինի:

45 Պատճառն որ՝ որդին մարդոյ էլ չեկաւ՝ որ իրան ծառայեն՝ բայց որ ինքն ծառայէ, եւ իրան անձն շատերի տեղակ փրկութեան գին տայ:

46 Եւ երիքով եկին. եւ երբոր նա աշակերտներովն եւ շատ ժողովուրդներով երիքովից դուրս ելաւ, տիմէի որդի բարտիմէոս կոյրն ճանապարհի վերայ նստած էր մուրացով:

47 Երբոր լսեց՝ թէ Յիսուս Նազորեցին է, սկսեց աղաղակել եւ ասել. Յիսուս որդի դաւթի՝ ինձ ողորմեայ:

48 Եւ շատ մարդիք տաստումէին Տէրան՝ որ լուռ կենայ. եւ նա էլ աւելի աղաղակումէր. որդի դաւթի՝ ինձ ողորմեայ:

49 Յիսուս կանգնեց եւ հրամայեց՝ որ Տէրան կանչեն. կուրին կանչեցին՝ եւ Տէրան ասացին. սիրտդ պինդ բոներ. վերկաց, քեզ կանչումէ:

50 Եւ նա իրան շորերըն վեր քաշեց՝ վերկացաւ եւ Յիսուսի մօտ եկաւ:

51 Յիսուս Տէրան պատասխան տուաւ եւ ասաց. ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ. կոյրն Տէրան ասաց. ռաբբունի՝ որ բացվիմ:

52 Եւ Յիսուս Տէրան ասաց. գնա՝ քո հաւատդ քեզ ապրեցրուց[28]. եւ շուտով բացվաւ, եւ ճանապարհումն Տէրան ետեւէն գնումէր:

## ԳԼ. ԺԱ.

1 Քրիստոս առանակի վերայ նստած փառքով Երուսաղէմ մտնումէ. 13 Մխայն տերեւով լեր անպտուղ ծառն կանիծէ. 15 Տաճարն կըմաքրէ. 20 Իրան աշակերտներին խըրատ կըտայ որ հաստատ հաւատք ունենան, եւ իրանց թշնամիներին ներեն. 27 Իրան արած գործքերն հին իշխանութիւնով լինին Յոհաննէսի մկրտութիւնովն ցոյց կըտայ որ Տէրան Աստուածանից ուղարկված մին մարդ էր:

1 Եւ երբոր երուսաղէմին մօտեցան, բեթփագէ եւ բեթանիա (ելկէն) ձիթենեաց սարին մօտ՝ էն աշակերտներից երկուսը ուղարկեց[1]:

[22] Մտթ. բ. 24: [23] Ղկ. իբ. 25: [24] Մտթ. ե. 26, 28: Մրկ. թ. 35: Ղկ. թ. 48: [25] Յհ. ժգ. 14: Փլպ. բ. 7: [26] Մտթ. ե. 28: ա Տիմ. բ. 6: Տիտ. բ. 14: [27] Մտթ. բ. 29: Ղկ. ժբ. 35: [28] Մտթ. թ. 22: Մրկ. ե. 34: [1] Մտթ. խա. 1: Ղկ. ժթ. 29: Յհ. ժբ. 14:

2 Եւ նորանց ասաց. գնացէք գոք էդ գիւղդ՝ որ ձեր առաջին կայ. եւ շուտով երբոր նորա մէջ մտնէք, մին քուռակ կըզտանէք կապած՝ որ նորա վերայ իսկի մարդ չէ նստած. նորան արձակեցէք եւ բերէք:

3 Եւ թէ որ մինն ասէ ձեզ. թէ ինչո՞ւ համար էք էդ քուռակըդ արձակում, ասացէք՝ թէ նա տէրին պէտք է. եւ շուտով նորան էստեղ կուղարկէ:

4 Գնացին եւ քուռակըն գտին դուրսն փողոցի մէջ դըռների առաջին կապած, եւ նորան արձակեցին:

5 Եւ մին քանիսն նորանցից՝ որ էնտեղ կանգնած էին՝ ասացին նորանց. ի՞նչ էք անում. ինչո՞ւ համար էք արձակում էդ քուռակըդ:

6 Եւ նորանք ասացին նորանց, ինչպէս որ Յիսուս ասաց. եւ թոյլ տուին նորանց:

7 Քուռակըն Յիսուսի մօտ բերին. եւ նորա վերայ շորեր քցեցին, եւ նորա վերայ նստեց:

8 Եւ շատ մարդիք իրանց շորերն ճանապարհի վերայ փռումէին, եւ ուրիշներն ծառերից ճըղեր էին կարում եւ ճանապարհի վերայ փըռում[2]:

9 Եւ նորանք որ առաջին եւ ետեւէն գնում էին՝ աղաղակում էին եւ ասում. ՙՕսաննայ բարձրեալինՙ[3]:

10 ՙՕրհնեալ (են)՝ որ Տէրի անունովն ես գալիս. օրհնեալ է մեր դաւիթ հօր եկած թագաւորութիւնն, խաղաղութիւն երկնքումն եւ փառք՝ի բարձունս:

11 Եւ Յիսուս մտաւ երուսաղէմ՝ տաճարին մէջ[4], եւ չորս կողմով ամէն բանի մտիկ տուաւ. եւ որովհետեւ իրիկուան ժամանակ էր, դուրս գնաց բեթանիա՝ տասներկուսին հետ:

12 Եւ էդ ուրուան օրն երբոր բեթանիայից դուրս էին գալիս, նա սովեց[5]:

13 Եւ հեռուանց մին թզի ծառ տեսաւ տերեւով լիքն[6]. եւ մտաւ եկաւ՝ որ նորա վերայ մին բան գտնէ. եւ երբոր եկաւ՝ իսկի մին բան չըգտաւ նորանում՝ բայց միայն տերեւ. ինչուոր գեռ թզի ժամանակն չէր:

14 Պատասխան տուաւ եւ նորան ասաց. մինէլ մինն քեզանից յաւիտեան պտուղ չուտէ. եւ նորա աշակերտներն լսումէին:

15 Նկին երուսաղէմ[7]. եւ տաճարն մտաւ՝ սկսեց դուրս հանել վաճառականներըն եւ գնողներըն՝ որ տաճարումն էին. եւ ըստակ փոխողների (աաաաֆնէքէ) սեղաններըն ցրվեց, եւ աղաւնի ծախողների աթոռներըն կործանեց:

16 Եւ չէր թողում՝ որ մինն մին բան տաճարի միջովն անցկացնէ:

17 Եւ սովըցնում էր եւ նորանց ասում էր. գրված է՝ թէ իմ տունն աղօթքի տուն պիտի կոչվի ամէն հեթանոսներին համար[8]. եւ դուք աւազակների բուն արիք դարան[9]:

18 Քահանայապետներն եւ գրագօղներն լսեցին եւ խնդրում էին՝ թէ ի՞նչպէս կորցընեն նորան[10]. բայց վախենում էին նորանից. ինչուոր՝ ամէն ժողովուրդն նորա վարդապետութեան վերայ զարմացել էին[11]:

19 Եւ երբոր իրիկուն էր լինում՝ քաղաքից դուրս էին գնում:

20 Եւ առաւօտանց երբոր նորա

---

[2] Մարկ. իա. 8: [3] Ողմ. ծիզ. 26: Ղող. 1: [4] Մարկ. իա. 12: [5] Մարկ. իա. 18: [6] Մարկ. իա. 19: [7] Մարկ. իա. 12: Ղող. ժիդ. 45: Յովհ. բ. 14: [8] Եսայ. ծգ. 7: [9] Երեմ. է. 11: [10] Մարկ. իա. 45, 46: Ղող. ժիդ. 47: [11] Մարկ. է. 28: Մարկ. ա. 22: Ղող. դ. 32:

ժառանգ անց էին կենում՝ տեսին էն թզուկ ծառն արմատից (ՀԵՕՀԻՆ) չորացած[12]:

21 Պետրոսն միտքն բերաւ՝ եւ նորան ասաց. ռաբբի՝ ահա էն թզուկ ծառն որ անիծեցիր՝ չորացաւ:

22 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. թէ որ Աստուծոյ հաւատքն ունենաք,

23 Ամէնարիտն ասումեմ ձեզ, թէ ով որ էս սարիս ասէ՝ թէ վեր կաց եւ ծովն ընկիր, եւ իրան սրտում չի երկմտի, բայց հաւատայ՝ թէ էն որ ասումէ կը լինի, նորան կը լինի ինչ որ կասէ[13]:

24 Վրհամար ասումեմ ձեզ՝ թէ ամէն բան, որ նորա համար աղօթք անելով խնդրէք, եւ հաւատաք՝ թէ կառնէք, էն կը լինի ձեզ[14]:

25 Եւ որ ժամանակ աղօթք անէք, թողութիւն տուէք՝ թէ որ մէնիկն մի բան ունենաք[15]. որ ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է՝ ձեր մեղքըն թողէ ձեզ:

26 Պատճառնոր՝ եթէ դուք թողութիւն չըտաք, ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր մեղքըն չի՝ թողիլ ձեզ[16]:

27 Ա՛ինէլ երուսաղէմ եկին. եւ դեւքանի որ նա տաճարումն մեն էր գալիս, քահանայապետներն եւ գրագէտներն եւ ծերերն նորա մօտ եկին[17]:

28 Եւ նորան ասացին. ի՞նչ իշխանութիւնով ես անում էդ՝ եւ ո՞վ տուաւ քեզ էդ իշխանութիւնըդ:

29 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. ես էլ ձեզանից մի բան կը հարցընեմ. ինձ պատասխան տուէք, եւ ես էլ կասեմ ձեզ՝ թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում էս:

30 Յովհաննէսի մկրտութիւնն երկնքի՞ց էր թէ մարդկանցի՞ց. ինձ պատասխան տուէք:

31 Իրար հետ միաք էին անում եւ ասում. եթէ ասինք՝ թէ երկնքի՞ց, մեզ կասէ. ապա ինչո՞ւ չըհաւատացիք նորան:

32 Իսայց եթէ ասինք՝ մարդկանցից (է), ժողովրդի՞ց վախենում էինք. ինչուոր՝ ամէնքն ճանաչում էին Յովհաննէսին՝ թէ մարգարէ էր[18]:

33 Պատասխան տուին՝ եւ Յիսուսին ասացին. չենք գիտում: Եւ Յիսուս նորանց պատասխան տուաւ եւ ասաց. ես էլ չեմ ասիլ ձեզ, թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում էս:

## ԳԼ. ԺՒ

1 Ապերախտ մշակների տըվված այգոյ առակովն Քրիստոս Հրէաների դէմս քցվիլն եւ հեթանոսների կոչվիլն առաջուց ասումէ: 13 Կայսրին հարկ տալոյ համար փարիսեցիներին եւ Հերովէսեաններին որ խօսքով որսալ են ուզում՝ նորանից ազատվիլն. 18 Սադուկեցիների մոլորված լինելն ցոյց կըտայ, որ նորանք ասումէին թէ յարութիւն չըկայ: 28 Առաջին պատուիրանքի համար կարդացողին հարցրածին պատասխան կըտայ. 35 Ցոյց կըտայ թէ Քրիստոսի համար կարդացողների կարծիքն ճշմարիտ չէ. 38 Եւ պատուէր կըտայ ժողովրդին որ նորանց փառասիրութիւնից եւ կեղծաւորութիւնից զգոյշ լինին. 41 Եւ երկու լմնդ քցդ որբևարի կնկին ամենից աւելի գովումն:

1 Եւ սկսեց նորանց հետ առակ այգի (քաղ) անկից, եւ նորա չորս ներով խօսիլ՝ եւ ասել. մին մարդ կոշմիվն պարիսպ քաշեց, եւ գուբ

[12] Մատթ. իա. 19: [13] Մատթ. ժե. 20: իա. 21: Ղուկ. ժե. 6: [14] Մատթ. է. 7: Ղուկ. ժա. 9: Յովհ. ժգ. 13: ժե. 7: ժզ. 24: Յակ. ա. 5, 6: [15] Մատթ. զ. 14: կղ. գ. 13: [16] Մատթ. ժը. 35: [17] Մատթ. իա. 23: Ղուկ. ի. 1: [18] Մատթ. պ. 5: ժգ. 5: Մարկ. զ. 20:

հնձան փորեց, եւ աշտարակ (Բ՝ո՝ղ) շինեց՝ եւ նորան մշակներին տուաւ եւ հեռու աշխարհ գնաց[1]:

2 Եւ ժամանակով մշակների մօտն մին ծառայ ուղարկեց որ էն մշակներին պտղոյ (Բ՝ողի) պղտղին առնէ:

3 Եւ նորանք բռնեցին՝ նորան ծեծեցին, եւ դատարկ ճանապարհ քցեցին:

4 Ա՝ինէլ ուրիշ ծառայ ուղարկեց. եւ նորա գլուխը պատառեցին՝ եւ թուքմուքը տալով արձակեցին:

5 Ա՝ինէլ ուրիշը ուղարկեց՝ եւ նորան սպանեցին. եւ էլ շատ ուրիշները, մին քանիսըն ծեծումէին եւ մինքանիսըն սպանումէին:

6 Ա՝պա իրան մին սիրելի որդի ունէր՝ յետոյ նորան ուղարկեց նորանց մօտ, եւ ասաց. ընդի որ ես իմ որդուցս ամաչեմ:

7 Բայց մշակներն երբոր տեսին նորան՝ որ գալիս էր, իրար ասացին. սա է ժառանգն. եկէք սորան սպանենք՝ եւ ժառանգութիւնն մեզ լինի:

8 Եւ նորան բռնեցին, սպանեցին եւ այգուցն դուրս հանեցին:

9 Ա՝պա այգոյ տէրն ի՝նչ կանէ. կըգայ եւ էս մշակներըն կըկորցնէ, եւ այգին ուրիշների ձեռքն կըտայ:

10 Եւ դուք չէք կարդացել էն գրածըն՝ թէ էն քարն՝ որ շինօղներն անարգեցին՝ նա էլաւ անկիւնի գլուխ[2]:

11 Տէրիցն էլաւ էս բանս, եւ մեր աչքերի առաջին զարմանալի է:

12 Եւ կամենումէին՝ որ նորան բռնեն, եւ ժողովրդիցն վախեցան[3], ընչուր՝ իմացան՝ թէ էն առակըն ի՝րանց համար ասաց. եւ նորան թողին եւ գնացին:

13 Եւ փարիսեցիներիցն եւ Հերովդէսեաններիցն մին քանի հոգի նորա մօտ ուղարկեցին՝ որ խօսքով որսան նորան[4]:

14 Եւ նորանք եկին՝ հարցնումէին նորան խաբեբայութիւնով եւ ասում՝ վարդապետ՝ գիտումենք՝ որ ճշմարիտ ես, եւ իսկի մինից հոգս չունիս՝ եւ մարդոց երեսպաշտութիւն չես անում, բայց Ա՝ստուծոյ ճանապարհըն ճշմարտութիւնով սովրցնումես. ապա ասա մեզ, կայսերին հարկ տալ արժա՞ն է՝ թէ չէ՝ տա՞նք՝ թէ չըտանք:

15 Եւ Յիսուս իմացաւ նորանց կեղծաւորութիւնըն, նորանց ասաց. ինչո՞ւ էք փորձում ինձ՝ կեղծաւորներ. մին դահեկան բերէք ինձ՝ որ տեսնեմ:

16 Եւ նորանք բերին. եւ նորանց ասաց. էս պատկերս կամ գիրս ո՞ւմն է. եւ նորանք ասացին նորան՝ կայսերին:

17 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. գնացէք կայսերինըն կայսերին տուէք՝ եւ Ա՝ստուածունըն՝ Ա՝ստուծոյն. եւ զարմացան նորա վրայ:

18 Նորա մօտ եկին սադուկեցիքըն[5] որ ասումեն՝ թէ յարութիւն չըկայ[6]. նորան հարցնումէին եւ ասում:

19 Վարդապետ՝ մեզ էս մեր համար գրեց[7]. թէ որ մինի եղբայրն մեռնի եւ (իրան) կինըն թողէ, եւ որդի չըթողէ՝ թող նորա եղբայրն նորա կինըն առնէ, եւ իրան եղբօր

[1] Ա՝ստ. իա. 33: Ղ՝ե՝ւ. ի. 9: [2] Գ՝ործ. Ճ՝իը. 22: [3] Ա՝ստ. իա. 45, 46: Ա՝ր՝ւ. ժա. 18: Ը՝ղ. է. 25. 30. 44: [4] Ա՝ստ. իբ. 15: Ղ՝ե՝ւ. ի. 20: [5] Ա՝ստ. իբ. 23: Ղ՝ե՝ւ. ի. 27: [6] Գ՝ործ. իդ. 8: [7] Բ Օ՝ր՝էն. ի՝ե. 5:

համար զաւակ վերկացնէ։

20 Ասա մէզ մեր հօրն եղբարք կային, առաջինն կին առաւ՝ եւ մեռաւ, եւ զաւակ չթողից։

21 Եւ երկրորդն նորան առաւ՝ եւ մեռաւ, եւ նա էլ զաւակ չթողից։ Էսպէս էլ երրորդն նորան առաւ։

22 Եւ հինց հօրն էլ՝ եւ զաւակ չթողին, եւ ամէնքից ետեւ կինն էլ մեռաւ։

23 Ասա յարութեան ժամանակ՝ որ յարութիւն կառնեն, նորանցից որի՞ն կը լինի կին, ինչու որ՝ հօրն էլ նորան կին առին։

24 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց, չէ՞ որ հինց դրա համար մոլորւած էք՝ որ ո՛չ գիրքըն էք գիտում եւ ո՛չ Աստուծոյ զօրութիւնըն։

25 Պատճառնոր՝ երբոր մեռնելու միջոցին յարութիւն կառնեն՝ ո՛չ մարդիք կին կառնեն՝ եւ ո՛չ կանայք մարդոյ կըդնան՝ բայց հրեշտակներին պէս կը լինին՝ որ երկնքումն են[8]։

26 Ա՛խայն թէ մեռելների յարութեան համար՝ թէ յարութիւն պիտի առնեն, դուք չէ՞ք կարդացել մովսէսի գրքի մէջն՝ թէ Աստուած ինչպէս մշի միջումն նորան ասաց, ես եմ աբրահամու Աստուածն, եւ իսահակայ Աստուածն[9]։

27 Եւ Աստուած՝ մեռելների (Աստուած) չէ, բայց կենդանիներին, ուրեմն դուք շատ մոլորւած էք։

28 Եւ կարդացողներից մինն մեզ եկաւ՝ նորանց լսուեր՝ գեղքանի որ հակառակուեին, երբոր տեսաւ թէ լաւ պատասխան տուաւ նորանց՝ նորան հարցրուց եւ ասաց, առաջին պատուիրանքն որն է[10]։

29 Եւ Յիսուս նորան ասաց, առինիցն առաջինն (էն է՝ թէ) լսիր իսրայէլ՝ մեր Տէր Աստուածն մին Տէր է[11]։

30 Եւ սիրիր զո Տէր Աստուածդ՝ զո ամէն սրտովդ, եւ զո ամէն անձնովդ, եւ զո ամէն մտքովդ, եւ զո ամէն զօրութենովդ, էս է առաջին պատուիրանքն։

31 Եւ երկրորդն՝ սորան նման, զո ընկերդդ զո անձիդ պէս սիրիր, սորանցից աւելի մեծ ուրիշ պատուիրանք չըկայ[12]։

32 Եւ կարդացօղն նորան ասաց, լաւ է վարդապետ, ճշմարտութեանով ասացիր՝ թէ մին Աստուած է, եւ նորանից ջոկ ուրիշ չըկայ[13]։

33 Եւ նորան սիրելն ամէն սրտով եւ ամէն զօրութենով եւ ամէն մտքով, եւ ընկերըն անձին պէս սիրելն՝ աւելի է քանթէ ողջակէզներն եւ մատաղներն[14]։

34 Եւ Յիսուս որ տեսաւ՝ թէ խմաստութենով պատասխան տուաւ՝ նորան ասաց, դու Աստուծոյ արքայութենից հեռու չես, եւ նորանից ետեւ էլ մինն չէր համարձակվում՝ որ նորան մին բան հարցնէ[15]։

35 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց, դեռքանի որ տաճարումն սովորցնում էր, կարդացօղներն ինչպէս են ասում՝ թէ Քրիստոսն դաւթի որդին է[16]։

36 Եւ ինքն դաւթի սուրբ Հոգովն ասում[17], Տէրն իմ տէրին ասաց,

---

[8] ա կոր. ժե. 42, 49, 52։ [9] ելք. գ. 6։ [10] մարկ. իբ, 35։ [11] բ օրէն. զ. 4։ ղեւ. ժ. 27։ [12] ղեւ. ժե. 18։ մարկ. իբ. 39։ հռովմ. ժգ. 9։ գաղ. ե. 14։ ցակ. բ. 8։ [13] բ օրէն. դ. 39։ եսայ. խե. 6. 14։ խզ. 9։ [14] աթագ. ժե. 22։ ղեւ. զ. 6։ մէսէ. զ. 6, 7, 8։ [15] մարկ. իբ. 46։ [16] մարկ. իբ. 41։ ղեւ. ի. 41։ [17] բ յովէլ. իգ. 2։

(թէ) իմ աջ կողմն նստիր՝ մինչեւ քո թշնամիներըն քո ոտագդ կոխեալ դնեմ[18]։

37 Ըպա՝ թէ որ հինց ինքն դաւիթ Նորան Տէր է կոչում՝ ի՞նչպէս նորա որդին կը լինի. եւ շատ ժողովուրդներ քաղցրութենով լսումին նորան։

38 Ւր իրան վարդապետութեան մէջ սովորցնելով ասումէր[19]. զգոյշ կացէք կարդացողներիցն՝ որ կամենումն պայծառ հագուստներով շուռ գալ[20], եւ բաց փողոցներումն առաջին բարեւներըն խնդրել[21],

39 Ւր ժողովարանների մէջն առաջին աթոռներըն, եւ սեղան նրա տեղը ժամանակն գլխաւոր տեղերըն։

40 Որ որբեւէրների տներըն ուտումն[22], եւ պատճառներով երկար աղօթք են անում՝ որ էլ աւելի դատապարտութիւն առնեն։

41 Յիսուս գանձանակի դիմացն կանգնած էր՝ տեսնումէր թէ ժողովուրդն ինչպէս էր պղինձ քցում գանձանակն[23], եւ շատ հարուստներ շատ բան քցեցին[24]։

42 Մին որբեւէրի կին եկաւ՝ եւ երկու լմայ քցեց, որ մին նաքարա կիա (ֆէս ֆող) է։

43 Ւր իրան աշակերտներըն իրան մօտ կանչեց, եւ նորանց ասաց. Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ էն խղճալի որբեւէրին շատ քցեց քանթէ էն ամէնքն՝ որ գանձանակն քցեցին[25]։

44 Պատճառնոր ամէնքն իրանց աւելցածներիցն քցեցին. բայց նա իրան չբաւորութենիցն ամէն ինչ որ ունէր՝ իրան կեանքի ամէն ապրուստըն քցեց[26]։

## ԳԼ · ԻԳ

1 Քրիստոս տաճարի քանդվելն առաջուց ասում է, 9 եւ Ընտրեալների համար վիշտերից հալածանքներն. 10 պէտք է որ աւետարանն ամէն ազգերի քարոզվի, 14 թէ մեծ նեղութիւններ գալիս են հրեից վերայ։ 24 Քրիստոսի գաղտնաւանի գալն. 32 Սորա ժամն ոչ ով չի գիտում, նորա համար պէտք է որ ամէն մարդ արթուն լինի եւ աղօթք անէ որ պատրաստ գտվի, եւ ամէնին էլ պէտք է որ արթուն լինին. ինչուար՝ չեն գիտում թէ ատն աւերն երբ կըգայ. այսինքն՝ թէ մահն երբ կըգայ։

1 Ւր տաճարիցն որ դուրս գնաց՝ նորա աշակերտներիցն մինն նորան ասաց. վարդապետ, տես էս ինչպէս քարերը են, եւ ինչպէս շինուածներ[1]։

2 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց. տեսնո՞ւմես էդ ամէն շինուածներըդ. ճշմարիտըն ասում եմ ձեզ. որ էդ տեղ քար քարի վերայ չի թողվիլ՝ որ չը քանդվի[2]։

3 Ւր երբոր նա ձիթենեաց սարումն նստած էր տաճարի դիմացն, պետրոս եւ յակոբոս եւ յովհաննէս եւ անդրէասն առանձին հարցընումէին նորան։

4 Ըսա մեզ. էդ բաներդ երբ կը-

[18] Սաղմ. ճԺ. 1։ [19] Մարկ. գ. 2։ [20] Մարկ. իգ. 2։ Ղուկ. ի. 46։ [21] Ղուկ. ԺԱ. 43։ [22] Մարկ. իգ. 14։ [23] Ղուկ. իա. 1։ [24] Գ Թագ. ԺԲ. 9։ [25] Բ Կորնթ. ը. 12։ [26] Բ Օրէնք. իգ. 6։ ա Ցովհ. գ. 17։ [1] Մարկ. իգ. 1։ Ղուկ. իա. 5։ [2] Ղուկ. ԺԹ. 44։

լինի՝ եւ նշանն ի՞նչ է՝ երբոր էդ ամէն բաներդ պիտի կատարվին[3]։

5 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց· զգոյշ կացէք, չը լինի որ մինն խաբէ ձեզ[4]։

6 Ինքուր՝ շատ մարդիք կըգան իմ անունովս, եւ կասեն՝ թէ ես եմ Քրիստոսն՝ եւ շատ մարդ կըմոլորացնեն։

7 Բայց երբոր կռիւներ եւ կռիւներուն համբաւըն կըլսէք՝ մի շիոթվիք, ինչուր՝ պէտք է որ էն լինի· բայց դեռ վերջն չէ։

8 Պատճառնոր՝ ազգ ազգի վերայ վերկրկենայ՝ եւ թագաւորութիւն թագաւորութեան վերայ· եւ տեղ տեղ երկրի շարժմունքներ կըլինին, եւ սովեր եւ սաստիկ մնհեր եւ խըռովութիւններ· բայց էն ամէնն նըշանակութեանց սկիզբն է[5]։

9 Իւ հենց ձեզ էլ տիվաններին կըմատնեն, եւ ժողովարաններուն մէջն կըտանջվիք, եւ դատաւորներուն եւ թագաւորներուն առաջին կըկանգնիք ինձ համար՝ որ նորանց վկայութիւն լինի[6],

10 Իւ ամէն հեթանոսներին· միայն թէ առաջ պէտք է՝ որ էս աւետարանս քարոզվի[7]։

11 Բայց երբոր ձեզ կըտանեն որ մատնեն՝ առաջուց հոգս չանիք եւ չը մտածէք թէ ի՞նչ պիտի խոսիք[8]· բայց ինչ որ էն ժամուն (սահմանուն) կըտրվի ձեզ՝ էն պիտի խոսիք· ինչուր՝ դուք չէք՝ որ խոսումիք, բայց սուրբ հոգին[9]։

12 Իղբայր եղբօրըն կըմատնէ մահի մէջ՝ եւ հայր որդուն· եւ որդիք վերկրկենան հարանց վերայ, եւ նորանց կըսպանեն[10]։

13 Իւ ամէնին ատելի կըլինիք իմ անունիս համար[11]· բայց ով որ մինչեւ վերջն կըհամբերէ՝ նա կապրի[12]։

14 Իւ երբոր տեսնիք աւերածի պղծութիւնըն, որ էն տեղումն կըկանգնի՝ որ արժան չէ[13]· ով որ կարդումէ, միտք առնէ[14]· էն ժամանակն նորանք որ հրէաստանումն են՝ թող սարերն փախչին[15]։

15 Իւ ով որ կաերնէրի վերայ է՝ թող վերչըգայ տան մէջ եւ չը մտնէ՝ իրան տանիցն մին բան վերառնել։

16 Իւ ով որ յանդումն է՝ թող յետ չըդառնէ, որ իրան շորերըն առնէ։

17 Բայց էն օրերումն վայ կըլինի յղացածներին եւ ծիծ տուօղներին[16]։

18 Աղօթք արէք՝ որ էն ձմեռան ժամանակումն չը լինի։

19 Իւն օրերումն էնպէսի նեղութիւններ կըլինին՝ ինչպէս որ աշխարհքի սկզբիցն մինչեւ հիմիկ իսկի մին ժամանակ չէն էլած, եւ էլ չեն լինիլ[17]։

20 Իւ թէ որ Աստուած իրան ընտրվածներին համար էն օրերըն չէր կարճացրել, իսկի մին մարմին չէր ապրիլ· բայց էն ընտրվածներին համար՝ որ ընտրեց՝ էն օրերըն կարճացրուց։

21 Իւն ժամանակն թէ որ մինն ասէ ձեզ՝ թէ ահա էս տեղ է Քրիստոսն կամ էն տեղ, մի հաւատաք[18]

[3] Մատթ· իգ· 3։ Ղ–ս· իա· 7։ [4] Երէմ· իթ· 8։ Եզէն· է· 6։ ը Թես· բ· 3։ [5] Մատթ· իգ· 8։ [6] Մատթ· ժ· 17, 18։ իգ· 9։ Յայտ· բ· 10։ [7] Մատթ· իգ· 14։ [8] Մատթ· ժ· 19։ Ղ–ս, ժբ· 11։ իա· 14։ [9] Գործ· բ· 4։ գ· 8, 31։ [10] Միւթ· է· 6։ Մատթ· ժ· 21։ իգ· 10։ Ղ–ս· իա· 16։ [11] Մատթ· իգ· 9։ Ղ–ս· իա· 17։ [12] Դան· ժբ· 12։ Մատթ· ժ· 22։ իգ· 13։ Յայտ· բ· 10։ [13] Մատթ· իգ· 15, [14] Դան· թ· 27, [15] Ղ–ս· իա· 21։ [16] Ղ–ս· իա· 23։ իգ· 29։ [17] Դան· թ· 26։ ժբ· 1։ Յօէլ· բ· 2։ Մատթ· իգ· 21։ [18] Մատթ· իգ· 23։ Ղ–ս· ժէ· 23։ իա· 8։

22 Պատճառնոր՝ սուտ քրիստոս-
ներ եւ սուտ մարգարէները վերկրկե-
նան, եւ նշաններ եւ հրաշքներ ա-
ռաջ կբերեն՝ որ եթէ կարելի լի-
նէր՝ ընտրեալներին էլ կմոլորա-
ցրնէին։

23 Նայց դուք ղգոյշ կացէք[19], ա-
հա ամէն բանըն առաջուց ասացի
ձեզ։

24 Նայց էն օրերումն էն նեղու-
թենիցն ետեւ արեգակն կխաւար-
ի՝ եւ լուսինն իրան լոյսըն չի՛տալ[20]։

25 Եւ աստեղներն երկնքիցն կը-
թափվին, եւ զօրութիւններն եր-
կնքումն կշարժվին։

26 Եւ էն ժամանակն կտեսնեն
որդին մարդոյ ամպերով եկած, շատ
զօրութենով եւ փառքով[21]։

27 Եւ էն ժամանակն իրան հրես-
տակներըն կուղարկէ, եւ իրան ըն-
րըվածներին չորս կողմիցն կրժողովէ
երկրի ծայրիցն մինչեւ երկնքի ծայրն։

28 Նայց դուք՝ թըզի ծառիցն սո-
վորեցէք առակըն, երբոր նորա ճը-
ղերն մին քիչ կրկակղին եւ տերեւ
կարձակվի նորանում՝ գիտուք թէ
ամառն մօտ է[22]։

29 Նպէս էլ դուք՝ երբոր տես-
նէք էս ամէն բաներըս էլած՝ իմացէք
թէ էն մօտիկ է դըռներին։

30 Ճշմարիտըն ասումիմ՝ ձեզ,
թէ էս պորտս չի՛ անցկենալ՝ մինչեւ
որ էս ամէնս լինի։

31 Երկինքն եւ երկիրս անցկըն-
նան, բայց իմ խօսքերս չեն անցկե-
նալ[23]։

32 Պ՛իսկ թէ էն օրին եւ ժամին
(պահըն) հայտը ոչ ով չի՛ գի-
տում՝ ոչ հրեշտակներն երկնքումն
եւ ոչ որդին, բայց միայն Հայրն։

33 Ղգոյշ էլէք, արթուն կացէք
եւ աղօթէք արէք. ինչուոր՝ չէք գի-
տում, թէ էն ժամանակն երբ կը-
լինի[24]։

34 Ինչպէս մին մարդ՝ որ հեռու
աշխարհ գնալոյ ժամանակումն՝ ի-
րան տուներն կրթողէ. եւ իրան ծա-
ռաներին իշխանութիւն կըտայ, եւ
ամէն մէկին իրան գործըն. եւ դռնա-
պանին հրամայ կըտայ՝ որ արթուն
կենայ[25]։

35 Ղգոյշ արթուն կացէք[26], ին-
չուոր՝ չէք գիտում, տան տէրն երբ
կըգայ՝ իրիկո՞ւնն, թէ մէջգիշերն, թէ
հաւի խօսելոյ ժամանակն, թէ առա-
ւօտանց։

36 Որ չըլինի թէ յանկարծ գայ
եւ ձեզ քընի մէջ գտնէ։

37 Նայց ինչ որ ձեզ եմ ասում՝
ամէնին էլ ասումեմ. արթուն կա-
ցէք։

[19] Բ Պետր. գ. 17։ [20] Դան. է. 10։ Մատթ. ա. 15։ Մարկ. իդ. 39։ Ղուկ. իա. 25։ [21] Դան. է. 13, 14։ Մարկ. ժգ. 27։ իդ. 30։ Մարկ. ժգ. 62։ Գործ. ա. 11։ ա Թես. դ. 16։ բ Թես. ա. 7, 10։ Յայտ. ա. 7։ [22] Մարկ. իդ. 32։ Ղուկ. իա. 29։ [23] Եսայ. խ. 8։ [24] Մարկ. իդ. 43։ իե. 13։ Ղուկ. ժբ. 40։ իա. 34։ Հռոմ. ժգ. 11։ ա Թես. ե. 6։ [25] Մարկ. իդ. 45։ իե. 14։ [26] Մարկ. իդ. 42, 44։

## ԳԼ · ԺԴ

1 Քրիստոսի դէմ խորհուրդ կանեն որ Նորան բռնեն: 3 Մին կին Նորա գլխին վերայ ածելու իւղ կը թափէ: 10 Յուդայի իրան 8էր մանեանքն փողի համար: 18 Քրիստոս աւրհնուց ասում, թէ ինչպէս իրան աշակերտներից մին Նորան մատնում. 22 Ջաստին պատրաստելոյ եւ ուտելոյ ետեւ իրան ընծրիքն կըհաստատէ: 26 Խոստմնէ առաջուց թէ ամէն իրան աշակերտներն կըպայթակղուին Նորանից եւ կըցըրվին, եւ Պետրոսն էլ Նորան պիտի ուրանայ: 43 Յուդայի համբուրելով Նորան մատնեցին: 46 Պարտէզի մէջ Նորան բռնում են, 55 Իրան սուտ վկայութիւն կանեն, եւ հրէից ժողովն անօրէնութիւնով Նորան կըդատապարտեն. 65 Խայտառակութիւնով կընախատեն: 66 Պետրոսի երէք անգամ ուրանալն:

1 Եւ երկու օրից ետեւ զատիկն էր եւ բաղարջակերք[1]. քահանայապետներն եւ կարգացօղներն խնդրում էին՝ թէ ինչպէս Նորան նենդութեամբ բռնեն եւ սպանեն:

2 Բայց ասում էին՝ թէ էս տօնում չըլինի՝ որ ժողովրդի մէջն խռովութիւն չըլինի:

3 Եւ երբոր բեթանիա էր՝ սիմոն բորոտի տանն սեղան նստած[2] մին կին եկաւ՝ որ մին շիշ (շուշայ) ազնիւ թանկագին նարդոսի իւղ ունէր, եւ էն շիշըն (շուշան) կոտրեց՝ եւ Նորա գլխին վերայ թափեց:

4 Եւ աշակերտներն դժուարացում էին եւ ասում. ինչո՞ւ էդ իւղդ (ղուբ տեղն) կորաւ:

5 Կարելի էր էդ իւղդ երեք հարիւր դահեկանից աւելի թանգ ծախել, եւ աղքատներին տալ. եւ շատ բարկութեամբ տրտնջում էին Նորա վերայ:

6 Եւ Յիսուս Նորանց ասաց. թո՛ղ արէք դորան. ինչո՞ւ էք նեղում էն տալիս դորան. ինչուոր՝ դա մին բարի բան գործեց ինձ վերայ:

7 Ամէն ժամանակ աղքատներըն ձեզ հետ ունէք, եւ երբոր կամենաք՝ կարող էք Նորանց բարի անել[3]. բայց ինձ ամէն ժամանակ ձեզ հետ չունէք:

8 Դա ինչ որ ունէր՝ արաւ. աւրհնուց իմ մարմինըս օծելց՝ որ պատանքի նշան լինի:

9 Ճշմարիտըն ասում եմ ձեզ՝ որ ամէն աշխարհքի մէջն որտեղ որ էս աւետարանս կըքարոզվի՝ դորա յիշատակին համար էն էլ կըխօսվի՝ որ դա արաւ:

10 Եւ Յուդա Իսկարիօտացին՝ էն տասներկուսիցն մինն, քահանայապետներին մատ գնաց՝ որ Նորան մատնէ Նորանց ձեռքն[4]:

11 Նորանք երբոր լսեցին՝ ուրախացան եւ խոստացան՝ որ Նորան արծաթի տան. եւ խնդրում էր՝ թէ ինչպէս յարմար ժամանակով մատնէ Նորան:

12 Եւ բաղարջակերաց առաջին օրումն՝ որ ժամանակ որ զատիկն դառնն մորթում էին, աշակերտներն Նորան ասացին. ինչ տեղ ես կամենում որ գնանք պատրաստենք՝ որ զատիկըն ուտես[5]:

[1] Մատթ. իզ. 2: Ղուկ. իբ. 1: Ցուվ. ժա. 55: Ժդ. 1: [2] Մատթ. իզ. 6: Ղուկ. է. 37: Ցուվ. ժբ. 1, 3: [3] Բ Օրէն. ժե. 11: [4] Մատթ. իզ. 14: Ղուկ. իբ. 3, 4: [5] Մատթ. իզ. 17: Ղուկ. իբ. 7:

13 Եւ էն աշակերտներից երկուսին ուղարկեց եւ նորանց ասաց. գնացէք քաղաքն, եւ երբոր մտնէք քաղաքն՝ մին մարդ կըպատահի ձեզ՝ որ ջրի կուժըն ուսին վերայ կունենայ. նորա ետեւէն գնացէք:

14 Եւ որ տուն որ մտնէ, էն տան տիրոջն ասացէք. վարդապետն ասում՝ ո՞ւր է էն վէր գալոց տեղն՝ որ նորանում զատիկըն ուտեմ աշակերտներիս հետ:

15 Եւ նա մին մեծ զարդարված վերնատուն ցոյց կըտայ ձեզ. էն տեղ պատրաստեցէք մեզ համար:

16 Եւ նորա աշակերտներն գնացին որ պատրաստեն. քաղաքն եկին՝ եւ էնպէս գտին ինչպէս որ նորանց ասաց. եւ զատիկըն պատրաստեցին:

17 Եւ երբոր իրիկուն եղաւ՝ տասնեկուսին հետ եկաւ[6]:

18 Եւ երբոր սեղան նստեցին եւ գեռ ուտում էին, Յիսուս ասաց. ճշմարիտըն ասում եմ ձեզ՝ որ ձեզանից մինն կըմատնէ ինձ. նա որ հենց ինձ հետ ուտում:

19 Եւ նորանք սկսեցին տրտմել՝ եւ մինն մինից ետեւ ասել՝ միթէ ես եմ. եւ մէկէլն՝ միթէ ես եմ:

20 Նա պատասխան տուաւ եւ նորանց ասաց. էգ տասներկուսիցդ մինն՝ որ ինձ հետ ձեռըն էգ սկաւառակիզ (սահանէք) մէջն մտցրուց:

21 Բայց որդին մարդոյ կըգնայ՝ ինչպէս որ նորա համար գրված է. բայց վայ է էն մարդոյն՝ որ նորա ձեռովն որդին մարդոյ կըմատնըվի. լաւ էր նորան՝ թէ էն մարդն խկի ծընված չըլինէր[7]:

22 Եւ գեռքանի որ ուտում էին, Յիսուս հաց առաւ՝ օրհնեց եւ կըտրեց՝ տուաւ նորանց եւ ասաց. առէք՝ էգ է իմ մարմինս[8]:

23 Եւ բաժակըն (ըմպանն) առաւ՝ գոհացաւ, նորանց տուաւ, եւ ամէնքն խմեցին նորանից:

24 Եւ նորանց ասաց. էս է իմ արիւնս նոր ուխտի եւ պայմանի, որ շատերի տեղակ թափվում է:

25 Ճշմարիտըն ասում եմ ձեզ. թէ մինէլ որթի (խաղող) բերքիցն չեմ խմիլ մինչեւ էն օրն, երբոր նորան նոր կըխըմեմ Աստուծոյ արքայութեան մէջն:

26 Եւ գոհացան՝ եւ դուրս էլան ձիթենեաց սարն[9]:

27 Եւ Յիսուս նորանց ասաց. ամէնքդ էս գիշերս կըգայթակղվիք ինձանից[10]. ինչուր՝ գրված է՝ թէ հովիւըն (չոպանն) կըզարկեմ՝ եւ ոչխարներըն կըցրըվին[11]:

28 Բայց իմ յարութենից ետեւ ձեզանից առաջ կըգնամ գալիլեա[12]:

29 Պետրոս պատասխան տուաւ եւ նորան ասաց. թէեւ ամէնքն էլ գայթակղվին, բայց ես չէ[13]:

30 Եւ Յիսուս նորան ասաց. ճշմարիտըն ասում եմ քեզ. թէ հենց դու էս գիշերս՝ գեռքանի որ հաւն (երկու անգամ) չէ՛ խօսացել՝ երեք անգամ կուրանաս ինձ:

31 Բայց պետրոն էլ աւելի խօսքըն հաստատում էր եւ ասում. թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ՝ քեզ չեմ ուրանալ. էնպէս էլ ամէնքն էին ասում:

32 Հիմի էն գիւղն՝ որ նորա ա-

[6] Մատթ. իզ. 20, Ղուկ. իդ. 22: [7] Մատթ. իզ. 24: Ղուկ. իդ. 22: [8] Մատթ. իզ. 26: Ղուկ. իդ. 19: Ա Կորնթ. ժա. 23: [9] Մատթ. իզ. 30: [10] Մատթ. իզ. 31: Զաք. ժգ. 7: [11] Մարկ. ժգ. 7: [12] Մատթ. իզ. 33, 34: Ղուկ. իդ. 33, 34: Ցովհ. ժգ. 37, 38:

նուն գեթսեմանի էր. եւ աշակերտ-
ներին ասաց. էստեղ նստեցէ՛ք՝ մին-
չեւ որ ես աղօթք անեմ[14]:
33 Իւր պետրոսին եւ յակոբին եւ
յովհաննէսին իրան հետ առաւ, եւ
սկսեց տրտմիլ եւ հոգս քաշել:
34 Իւն ժամանակին նորանց ասաց.
իմ անձս մեռնելոյ չափ տրտմված
է[15]. էստեղ մնացէք եւ արթուն կա-
ցէք:
35 Իւր մին քիչ առաջ գնաց, ի-
րան երեսին վերայ գետինն ընկաւ,
եւ աղօթք էր անում՝ որ եթէ կա-
րելի է՝ էն ժամն (սահմանն) իրանից
անցկենայ:
36 Իւր ասաց. աբբա՛ հայր[16], ամէն
բան կարելի է քեզ[17]. էս բաժակս
(նեղութիւն) ինձանից անցկացրու՛, բայց
չէթէ ինչպէս ես եմ կամենում, բայց
ինչպէս որ դու ես կամենում[18]:
37 Իւր եկաւ գտաւ նորանց որ
քնած էին՝ եւ պետրոսին ասաց. սի-
մո՛ն քնո՞ւմես. չը՛կարացիր մին ժամ
(սահման) արթուն կենալ:
38 Արթուն կացէք եւ աղօթք ա-
րէք, որ փորձութեան մէջ չը՛մտնէք.
հոգիս յօժար է, բայց մարմինս տը-
կար[19]:
39 Իւր մինէլ գնաց աղօթք արաւ,
եւ հենց էն խօսքերըն ասաց:
40 Ա՛ինէլ գարձաւ եւ նորանց
քնի մէջ գտաւ. ինչուր՝ նորանց
աչքերըն ծանրացել էին, եւ չէին դի-
տում՝ թէ ինչ պատասխան տան նո-
ցան:
41 Երրորդ անգամ եկաւ եւ նո-
րանց ասաց. սրանից ետեւ քունն է-
լէք եւ հանգիստ առէք, ինչուր՝
վերջն հասել է. ժամն (սահմանն) ե-
կաւ, եւ աՀա որդին մարդոյ մատ-
նվում մեղաւորաց ձեռքն[20]:
42 Ա՛պա վե՛ր կացէք գնանք[21], ա-
Հա մատնեցաւ նա՝ որ պիտի ինձ մատ-
նէ:
43 Իւր դեռքանի որ նա էն խօսու-
մէր, յուդա իսկարիօտացին՝ էն տաս-
ներկուսիցն մինն եկաւ, եւ նորա հետ
ամբոխ (խումբ) սրերով եւ բՀընե-
բով՝ քահանայապետներիցն եւ
կարդացօղներիցն եւ ծերերիցն[22]:
44 Ա՛յսինչն նորանց նշան էր տը-
ւել՝ եւ ասել, թէ որին որ ես կը-
համբուրեմ՝ նա է նորան բռնեցէ՛ք
եւ զգուշութենով տարէ՛ք:
45 Իւր շուտով մտ եկաւ եւ նո-
ցան ասաց. ռաբբի՛, ռաբբի՛, եւ նո-
ցան համբուրեց:
46 Իւր նորանք ձեռք ձգեցին նո-
ցան՝ եւ նորան բռնեցին:
47 Իւր նորանցից մինն՝ որ նորա
մտ կայնի՝ սուրը քաշեց, եւ քա-
հանայապետի ծառային զարկեց, եւ
նորա ականջըն կտրեց:
48 Յիսուս պատասխան տուաւ եւ
նորանց ասաց. ինչպէս մին աւազակի
վերայ սրերով եւ բՀըներով
գուբս եկիք ինձ բռնել[23]:
49 Ա՛իշտ ձեզ մտ էի եւ տաճա-
րումն սովորցնում էի. եւ ինձ չը՛բռու-
նեցիք. բայց նրահամար՝ որ մար-
գարէների գըքերն կատարվին[24]:
50 Իւն ժամանակն ամէն աշա-
կերտներն նորան թողին՝ եւ փա-
խան[25]:
51 Իւր մին երիտասարդ նորա ե-
տեւէն գնում էր՝ որ մերկ մարմնոյն
վերայ կտաւ էր առել. եւ երիտա-
սարդներն բռնում էին նորան:

[14] Մատթ. իզ. 36: Ղուկ. իբ. 39: Յովհ. ժը. 1: [15] Յովհ. ժբ. 27: [16] Հռոմ. ը. 15: Գաղ. դ. 6: [17] Եբր. ե. 7: [18] Յովհ. ե. 30: է. 38: [19] Հռոմ. է. 22, 23: Գաղ. ե. 17: [20] Յովհ. ժգ. 1: [21] Մատթ. իզ. 46: Յովհ. ժը. 1, 2: [22] Մատթ. իզ. 47: Ղուկ. իբ. 47: Յովհ. ժը. 3: [23] Մատթ. իզ. 55: Ղուկ. իբ. 52: [24] Սաղմ. իբ. 6: Եսայ. ծգ. 7: Ղուկ. իբ. 37: իդ. 44: [25] Սաղմ. ձը. 8: Վէբ. 27:

52 Եւ նա կտաւըն բաց թողեց՝ եւ մերկ փախաւ նորանցից։

53 Եւ Յիսուսին տարան կայիափա քահանայապետին մօտ. եւ ամէն քահանայապետներն եւ կարգացօղներն եւ ծերերն նորա մօտ էին գալիս[26]։

54 Եւ պետրոս հեռուանց գնում էր նորա ետեւէն մինչեւ ներս քահանայապետի սրահի ներսն, եւ սպասաւորների հետ նստում էր եւ լուսոյ մօտն տաքանում էր։

55 Իսկ քահանայապետներն եւ ամէն տիվանն Յիսուսին հակառակ մի վկայութիւն էին ուզում՝ որ նորան սպանեն՝ եւ չէին գտնում[27]։

56 Պատճառնոր՝ շատ մարդիք սուտ վկայութիւն էին վկայում նորանից. եւ վկայութիւններն իրար նման չէին։

57 Ուրիշներ վերկացան եւ նորանից սուտ էին վկայում, եւ ասում.

58 Մենք դորանից լսեցինք, որ ասում էր՝ (Թէ) ես էդ ձեռքով շինած տաճարըդ կը քանդեմ, եւ երեք օրում ուրիշը կը շինեմ՝ որ ձեռքով չէ՛ շինած[28]։

59 Իսկ էնպէս էլ նորանց վկայութիւնն իրար նման չէր։

60 Ապա քահանայապետն վերկացաւ մէջ տեղն՝ եւ Յիսուսին հարցնում եւ ասում[29]. իսկի պատասխան չես տալիս, ինչ դորանք քեզանից վկայում են։

61 Եւ նա լուռ էր կենում՝ եւ իսկի մի պատասխան չէր տալիս[30]. քահանայապետն մինէլ երկրորդ անգամ նորան հարցնում եւ ասում. դո՞ւ ես Քրիստոսն՝ օրհնեալ Աստուծոյ որդին[31]։

62 Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. դու ասացիր՝ որ ես եմ. բայց կըտեսնէք որդին մարդոյ զօրութեան աջ կողմն նստած, եւ երկընքի ամպերով եկած[32]։

63 Եւ քահանայապետն շուռտով իրան շորերըն պատառեց՝ եւ ասաց. էլ ի՞նչ պէտք է մեզ վկայ։

64 Ա՛հա ամէնքդ դորա բերանիցն հայհոյանքըն լսեցիք. ի՞նչպէս է երեւում ձեզ. եւ ամէնքն դատապարտեցին նորան՝ Թէ մահապարտ է։

65 Եւ մին քանին սկսեցին նորա երեսին թքել, գլխին վերայ շոր քըցել, բընծգքով թակել եւ ասել. մեզ մարգարէացիր Քրիստոս՝ Թէ էն ո՞վ է՝ որ քեզ զարկեց. եւ սպասաւորներն նորան ապտակ (պէլէհ) էին տալիս։

66 Եւ պետրոն դեռ որ ներքին կողմն սրահի մէջն էր, քահանայապետի մին աղախին (ղըզ-աղ) եկաւ[33],

67 Եւ նորան տեսաւ՝ որ տաքանում էր. մէկ տուաւ նորան՝ եւ ասաց. դու էլ Յիսուս Նազովրեցոյն հետ էիր։

68 Նա ուրացաւ եւ ասաց. չեմ ճանաչում եւ չեմ գիտում, Թէ դու ինչ ես խօսում. եւ երբոր գուրս գնաց դրսի սրահն, հաւն խօսեց։

69 Ա՛յնէլ էն աղախինն (ղըզ-աղն) նորան տեսաւ, եւ սկսեց ասել նորանց՝ որ չորս կողմումն էին կանգնած, Թէ սա էլ նորանցից է[34]։

70 Եւ նա մինէլ ուրացաւ. եւ մինչիչ յետոյ նորանք՝ որ չորս կողմումն կանգնած էին, մինէլ ասացին պետրոսին. շնաակ՝ որ դու էլ նորանցից ես[35], ինչուոր՝ գալիլեացի

[26] Մատթ. իզ. 57։ Ղուկ. իբ. 54։ Յովհ. ժը. 13։ [27] Մատթ. իզ. 59։ [28] Մարկ. ժե. 29։ Յովհ. բ. 19։ [29] Մատթ. իզ. 62։ [30] Եսայ. ծգ. 7։ [31] Մատթ. իզ. 63։ [32] Մատթ. իգ. 30, իզ. 64։ Ղուկ. իբ. 69։ [33] Մատթ. իզ. 58, 69։ Ղուկ. իբ. 55։ Յովհ. ժը. 16։ [34] Մատթ. իզ. 71։ Ղուկ. իբ. 58։ Յովհ. ժը. 25։ [35] Մատթ. իզ. 73։ Ղուկ. իբ. 59։ Յովհ. ժը. 26։

ես, եւ հինգ քո խօսքդ էլ նման է[36]։
71 Յն նա սկսեց անիծել, եր-
դում ուտել եւ ասել՝ Թէ չեմ գի-
տում էն մարդըն՝ որ դուք ասում-
եք։
72 Յն շուտով հաւն երկրորդ ան-
գամ խօսեց[37]. եւ պետրոս միաքն
բերաւ էն բանըն՝ որ Յիսուս նորան
ասաց. Թէ հաւն դեռ որ երկու ան-
գամ չէ՛ խօսացել՝ դու երեք անգամ
ինձ կուրանաս. եւ սկսեց լաց լինել։

## ԳԼ. ԺԵ

1 Յիսուս կապած պիղատոսին կրաւնին եւ նորա առաջն չարախօսութիւն կանէն։ 11 Ամբոխի աղաղակովն մարդասպան բարաբբային արձակվիլն, եւ Յիսուսի նորանց ձեռ-
ներին տրվիլն որ խաչվի։ 17 Փուշերով կըպրտակվի, 19 Նորա երեսին կըթքին, եւ ծաղր
կանէն, 21 Նորա խաչափայտըն սիմոն կիւրենացին վերկառնէ։ 27 Երկու աւազակներ
մէջ կըխաչվի, 29 Հրէից նախատինքներըն կըքաշէ։ 39 Հարիւրապետն կըխոստովանի
Թէ նա Աստուծոյ Որդին է։ 43 Յովսէփն պատիւով կըթաղէ նորան։

1 Յն շուտով առաւօտանց՝ քա-
հանայապետներն ծերերին եւ կար-
գացօղներին հետ՝ եւ բոլոր տիվանն
էլ խորհուրդ արին, եւ Յիսուսին
կապեցին՝ եւ տարան մատնեցին պի-
ղատոսին[1]։
2 Յն պիղատոս նորան հարցրուց
եւ ասաց. դո՞ւ ես հրէից թագաւո-
րըն[2]. նա պատասխան տուաւ նորան
եւ ասաց. դու ես ասում։
3 Յն քահանայապետներն շատ
չարախօսութիւն էին անում նորա-
նից, եւ նա իսկի պատասխան չէր
տալիս։
4 Ւսյց պիղատոս միւնէլ հարց-
նում էր նորան. իսկի պատասխան չես
տալիս, տես՝ որքան չարախօսութիւն
են անում քեզանից[3]։
5 Յն Յիսուս նրանից եւեւ իսկի
միւն պատասխան չը՛ տուաւ, միւնչեւ
որ՝ պիղատոսն շատ զարմանում էր[4]։
6 Ւսյց ամեն ժամանակումն մին
բանտարկեալ էր արձակում նորանց
համար՝ որին որ իրանք խնդրում էին[5]։
7 Յն մինն կար՝ որ նորա անունն
բարաբբա էր՝ խռովութիւն անօրէն-
րին հետ կապված, որ իրանց խռո-
վութենումն մին մարդ էին սպանել։
8 Ամբոխն (խալխն) սկսեց բարձր
ձայնով աղաղակել, եւ խնդրել՝ ինչ-
պէս որ սովոր էր, որ բարաբբային
արձակէ նորանց համար։
9 Պիղատոս պատասխան տուաւ
եւ նորանց ասաց. կամենում՞ք՝ որ
հրէից թագաւորըն արձակեմ ձեզ
համար։
10 Պատճառնոր՝ դիտում էր Թէ
քահանայապետներն նախանձով էին
մատնել նորան։
11 Իր ամբոխին (խալխին) էլ հա-
ւանացրին՝ որ բարաբբային արձակէ
նորանց համար[6]։
12 Պիղատոս միւնէլ պատասխան
տուաւ եւ նորանց ասաց. ապա հրէից
թագաւորին ինչ էք ուզում՝ որ ա-
նեմ։
13 Յն նորանք քահանայապետ-
ներըցն դըրդված միւնէլ աղաղակե-

[36] Գործ. բ. 7։ [37] Մարկ. իգ. 75։ [1] Մատ. բ. 2։ Մարկ. իե. 1։ Ղուկ. իբ. 66։ իգ. 1։ Ցովհ. ժբ. 28։ Գործ. գ. 13։ գ. 26։ [2] Մարկ. իե. 11։ [3] Մարկ. իե. 13։ [4] Եսայ. նգ. 7։ Ցովհ. ժե. 9։ [5] Մարկ. իե. 15։ Ղուկ. իգ. 17։ Ցովհ. ժբ. 39։ [6] Մարկ. իե. 20։ Գործ. գ. 14։

ցին՝ խաչ հանիր դորան։

14 Պիղատոս նորանց ասաց, գա ի՞նչ չար բան է արել. եւ նորանք էլ աւելի աղաղակումին եւ ասում. խաչ հանիր դորան։

15 Այց պիղատոս՝ որովհետեւ կամեցաւ ամբոխի (խալխ) կամքըն կատարել, բարաբբային արձակեց նորանց համար՝, եւ Յիսուսին ծեծեց, եւ ձեռներն տուաւ, որ խաչվի։

16 Իւ զինուորներն նորան տարան ներսի սրահն՝ որտեղ որ հրապարակն (Ղյոռանա) էր[8], եւ բոլոր գունդըն (պէօլուքըն) մին տեղ կանչեցին։

17 Իւ նորան կարմիր քղամիդ (ֆէրաճէ) եւ ծիրանի շորերը հագցրին, եւ փշերից չհնած պսակ նորա գլուխն դրին։

18 Իւ սկսեցին նորան ողջոյն ասել՝ եւ ասել, ողջ կաց հրէից (ջհուդ-նէրի) թագաւոր։

19 Իւ նորա գլուխըն եղէգով (ղամըշով) թակում էին, եւ նորա երեսին թքում էին՝ եւ ծունր դնելով երկրը պագում էին տալիս նորան։

20 Իւ երբոր ծաղր արին նորան՝ էն քղամիդըն (ֆէրաճէն) եւ ծիրանի շորերըն նորանից հանեցին, եւ իրան շորերըն հագցրին իրան, եւ դուրս տարան, որ խաչ հանեն նորան։

21 Իւ ուժով բռնեցին սիմոն կիւրենացոյն, աղէքսանդրի եւ ռուփի հօրըն՝ որ յանդիցն եկած էն տեղից անց էր կենում, որ նորա խաչափայտըն վերառնի[9]։

22 Իւ տարան նորան մին գողգոթա (ասված) տեղ, որ կրթարգմանի՝ գլխատեղց տեղ[10]։

23 Իւ նորան զըմռնած գինի էին տալիս, եւ նա չառաւ[11]. եւ նորան խաչ հանեցին։

24 Իւ նորա շորերըն բաժանեցին, վիճակ քցելով նորանց վերայ՝ թէ ով ինչ պիտի առնէ[12]։

25 Իրէք ժամն (սահաթն) էր՝ եւ նորան խաչ հանեցին[13]։

26 Իւ նորա վնասի (սուչէ) գիրն գրված էր՝ թէ հրէից թագաւորն է[14]։

27 Իւ նորա հետ երկու աւազակ խաչ հանեցին, միսը նորա աջ կողմն՝ եւ միսը ձախ կողմն[15]։

28 Իւ կատարվեցաւ էն գիրն, որ ասում՝ թէ անօրէնների հետ համարվեցաւ[16]։

29 Իւ նորանք՝ որ էնտեղով անց էին կենում, նորան հայհոյում էին, իրանց գլխներըն շարժում էին եւ ասում[17]. վահ որ տաճարըն քանդում էիր՝ եւ երեք օրումն շինում էիր[18],

30 Ազատեցրու քո անձըդ եւ վեր եկ խաչիցդ։

31 Նմանէս էլ քահանայապետներըն կարդացօղներին հետ իրար մէջ ծաղր էին անում՝ եւ ասում, ուրիշներին ապրեցրուց՝ իրան անձըն չի կարում ապրեցնել։

32 Նդ Քրիստոսդ իսրայէլի թագաւորդ հիմիկ թող էդ խաչիցդ վեր գայ, որ տեսնինք եւ դորան հաւատանք. եւ նորանք էլ որ նորա հետ խաչված էին, նորան նախատինք էին տալիս[19]։

33 Իւ երբոր վեց ժամ (սահաթ) էլաւ՝ խաւար ամէն երկրին բռնեց մինչեւ իննը ժամն[20]։

34 Իւ իննը ժամի ժամնակումն

[7] Մարկ. իե. 26։ Ցուկ. ժթ. 1. 16։ [8] Մարկ. իե. 27։ [9] Մարկ. իե. 32։ Ղուկ. իգ. 26։ [10] Մարկ. իե. 33։ Ղուկ. իգ. 33։ Ցուկ. ժթ. 17։ [11] Մարկ. իե. 34։ [12] Սաղմ. իը. 18։ Ղուկ. իգ. 34։ Ցուկ. ժթ. 23։ [13] Մարկ. իե. 45։ Ղուկ. իգ. 44։ Ցուկ. ժթ. 14։ [14] Մարկ. իե. 37։ Ցուկ. ժթ. 19։ [15] Մարկ. իե. 38։ [16] Եսայ. նգ. 12։ Ղուկ. իը. 37։ [17] Սաղմ. իը. 7։ [18] Մարկ. իգ. 58։ Ցուկ. ը. 19։ [19] Մարկ. իե. 44։ Ղուկ. իգ. 39։ [20] Մարկ. իե. 45։ Ղուկ. իգ. 44։

Յիսուս մեծ ձայնով աղաղակեց եւ ասաց. Հայր Հայր լամա սաբաքթանի[21], որ կը թարգմանվի իմ Աստուած, իմ Աստուած, ինչո՞ւ թողիր զիս:

35 Եւ մինչեանիկ նորանցից՝ որ նորա մօտ կանգնած էին, երբոր լսեցին, ասումէին՝ Թէ եղիային է կանչում:

36 Եւ մին վազեց մին սպունգ (ախնիկը) քացախով լցուց, եւ եղէգի (ղամիշ) վերայ անցրուց[22], եւ տուաւ նորան՝ որ խմէ, եւ ասաց[23]. Թող տեսնենք՝ Թէ եղիան կը գայ որ նորան վէր բերէ:

37 Եւ Յիսուս մեծ ձայն արձակեց եւ հոգին հանեց[24]:

38 Եւ տաճարի վարագոյրն երկու կտոր պատառուեցաւ՝ վերեւիցն մինչեւ ցածն[25]:

39 Եւ հարիւրապետն՝ որ էնդեղ կանգնած էր[26], երբոր տեսաւ՝ Թէ (Յիսուս) աղաղակեց եւ հոգին հանեց, ասաց. Ճշմարիտ որ՝ էս մարդս Աստուծոյ որդի էր:

40 Կանայք[27] էլ կային՝ որ հեռուանց մտիկ էին տալիս[28]. որ նոքանց միջումն էր Մարիամ Մագդալենացին, եւ Մարիամն փոքր Յակոբի եւ Յոսէի մայրն, եւ սաղոմէն:

41 Որ նորանք՝ երբոր նա գալիլեա էր՝ նորա ետեւէն մտն էին գալիս եւ նորան ծառայում էին[29]. եւ էլ ուրիշ շատ կանայք՝ որ հետ նորա հետ երուսաղէմ էին եկել:

42 Եւ երբոր իրիկուն էլաւ[30], ինչուոր՝ ուրբաթի օր էր՝ որ շաբաթին էր մտնում,

43 Յովսէփն եկաւ՝ որ արիմաթիայիցն էր՝ պարկեշտ իշխանաւոր մարդ՝ որ ինքն էլ Աստուծոյ արքայութիւնն սպասում էր[31]. սա համարձակվեցաւ՝ պիղատոսի մօտ մտաւ, եւ Յիսուսի մարմինն խնդրեց:

44 Եւ պիղատոս զարմացաւ՝ որ էնքան շուտով մեռաւ, եւ հարիւրապետին իրան մօտ կանչեց, նորան հարցրուց եւ ասաց՝ Թէ իրաւի որ էնքան շուտով մեռաւ:

45 Եւ երբոր էն հարիւրապետից տեղեկացաւ (բանին)՝ մարմինըն յոսէփին շնորհեց:

46 Եւ Յոսէփ կտաւ գնեց՝ եւ նորան վէր բերաւ եւ կտաւով պատեց, եւ գերեզմանի մէջ դրաւ՝ որ նորան քարից էր փորել[32]. եւ մին մեծ քար քցեց գերեզմանի դռան առաջին:

47 Բայց Մարիամ Մագդալենացին եւ Յակոբի եւ Յոսէի մարիամն տեսին էն տեղն՝ որ դրված:

## ԿԼ. ԺՕ.

1 Հրեշտակն երեք հինիներին կասէ որ Քրիստոս յարութիւն առաւ: 9 Քրիստոս Մագդալենացոյ Մարիամին, 12 Ցանդն գնացող երկու մարդկանց երեւումն. 14 Նաեւ Առաքելոց եւ. 15 Որ նորանք Աշխարհն քարոզելոյ կուղարկէ. 19 Եւ երկինքն համբարձումն:

1 Եւ երբոր շաբաթն անցկացաւ, Մարիամ Մագդալենացին եւ

[21] Սաղմ. իբ. 1: Մատթ. իէ. 46: [22] Մատթ. իէ. 48: Ցովհ. ժթ. 29: [23] Սաղմ. կթ. 21: [24] Մատթ. իէ. 50: Ղուկ. իգ. 46: Ցովհ. ժթ. 30: [25] Մատթ. իէ. 51: Ղուկ. իգ. 45: [26] Մատթ. իէ. 54: Ղուկ. իգ. 47: [27] Մատթ. իէ. 55: Ղուկ. իգ. 49: [28] Սաղմ. լը. 11: [29] Ղուկ. ը. 2, 3: [30] Մատթ. իէ. 57: Ղուկ. իգ. 50: Ցովհ. ժթ. 38: [31] Ղուկ. բ. 25, 38: [32] Մատթ. իէ. 59, 60: Ղուկ. իգ. 53: Ցովհ. ժթ. 40:

Յակոբի մարիամն եւ սաղոմէն[1] գնացին խունկ պատրաստեցին, որ գան նորան օծանի[2]:

2 Եւ մեկշաբթի օրումն առաւօտանց արեգական ծագելոյ ժամանակըն եկին գերեզմանն[3]:

3 Եւ իրար ասումէին՝ ով պիտի էն քարըն մեզ համար գերեզմանի դրանիցն գէն թօլանէ:

4 Եւ նայեցին տեսին՝ որ քարն գերեզմանիցն հեռու էր թօլաւած. ինչուոր շատ մեծ էր:

5 Եւ գերեզմանի մէջն որ մտին, մին երիտասարդ տեսին՝ որ աջ կողմն նստած էր՝ սպիտակ կապայ հագած, եւ շատ վախեցան[4]:

6 Եւ նա ասաց նորանց. մի վախենաք[5], դուք Յիսուս նազովրեցի խաչվածըն էք ուզում. նա յարութիւն առաւ. էստեղ չէ. ահայ էն տեղըն՝ ուր որ նորան դրին:

7 Այլ գնացէք նորա աշակերտներին եւ պետրոսին ասացէք թէ ահա նա ձեզանից առաջ կըգնայ գալիլեա. էնտեղ կըտեսնէք նորան ինչպէս որ նա ասաց ձեզ[6]:

8 Եւ երբոր լսեցին՝ դուրս եկին եւ փախան գերեզմանիցն, պատճառընոր՝ ահով բռնըված էին, եւ իսկի մինին բան չասացին՝ ինչուոր վախնումէին:

9 Յիսուս որ յարութիւն առաւ մեկշաբթի առաւօտանց առաջ երեւեցաւ մարիամ մադդալինացոյն[8] որ նորանից եօթն դեւ էր հանել[9]:

10 Եւ նա գնաց պատմեց նորանց որ նորա հետ էին[10], գնաքանի որ սուգ եւ լաց էին անում:

11 Նորանք երբոր լսեցին՝ թէ (նա) կենդանի է, եւ երեւեցաւ նորան չըհաւատացին[11]:

12 Յետոյ ուրիշ կերպարանքով երեւեցաւ նորանց որ յանդն էին գնում[12]:

13 Նորանք գնացին ուրիշներին պատմեցին, եւ նորանց էլ չըհաւատացին:

14 Յետոյ երբոր տասնումէնըն սեղան էին նստած նորանց երեւեցաւ եւ նորանց անհաւատութիւնըն եւ քարասրտութիւնըն յանդիմանեց՝ որ չըհաւատացին նորանց, որ ինքն մեռելների միջից յարութիւն արած երեւեցաւ նորանց[13]:

15 Եւ նորանց ասաց[14]. գնացէք ամէն աշխարհ, եւ աւետարանըն ամէն ըստեղծվածներին քարոզեցէք[15]:

16 Որ ոք հաւատայ եւ մկրտվի՝ կապրի[16]. եւ ով որ չըհաւատայ՝ կըդատապարտվի[17]:

17 Նորանց որ հաւատումէն, էս նշաններս կըհետեւին. իմ անունովս դեւեր կըհանեն[18], լեզուներ կըխօսին[19],

18 Իրանց ձեռներոնից օձեր վեր կառնեն, եւ թէ որ մին մահագին խմեն՝ վնաս չի տալ նորանց[20]. հիւանդների վերայ ձեռք կըդնեն՝ եւ կըբժշկվին[21]:

[1] Մարկ. իը. 1: Ղուկ. իդ. 1: Յովհ. ի. 1: [2] Ղուկ. իդ. 56: [3] Ղուկ. իդ. 1: Յովհ. ի. 1: [4] Ղուկ. իդ. 3: Յովհ. ի. 11, 12: [5] Մարկ. իը. 5, 6, 7: [6] Մարկ. իզ. 32: Մարկ. ժդ. 28: [7] Մարկ. իը. 8: Ղուկ. իդ. 9: [8] Յովհ. ի. 14: [9] Ղուկ. ը. 2: [10] Ղուկ. իդ. 10: Յովհ. ի. 18: [11] Ղուկ. իդ. 11: [12] Ղուկ. իդ. 13: [13] Ղուկ. իդ. 36: Յովհ. ի. 19: ա Կորնթ. ժե. 5: [14] Մարկ. իը. 19: Յովհ. ժե. 16: [15] Կող. ա. 23: [16] Յովհ. գ. 18, 36: Գործ. ը. 38: ժզ. 30, 31, 32: Հռովմ. ժ. 9: ա Պետր. գ. 21: [17] Յովհ. ժը. 48: [18] Ղուկ. ժ. 17: Գործ. ե. 16: ը. 7: ժզ. 18: ժԹ. 12: [19] Գործ. բ. 4: ժ. 46: ժԹ. 6: ա Կորնթ. ժը. 10, 28: [20] Ղուկ. ժ. 19: Գործ. իը. 5: [21] Գործ. ե. 15, 16: Թ. 17: իը. 8: Յակ. ե. 14, 15:

19 Եւ ինքն Տէր Յիսուս նորանից
հետ խօսելուցն ետու[22] երկինքն
համբարձաւ[23], եւ հօր աջ կողմն
նստեց[24]:

20 Եւ նորանք դուրս գնացին, բո-
լոր աշխարհքի մէջն քարոզուէին՝
Տէրի օգնականութիւնովն, եւ Յա-
տուծոյ խօսքըն հաստատուէին ամէն
նշանակերով՝ որ հետեւուէին նո-
րանց[25]:

[22] Գործ. ա. 2, 3: [23] Ղուկ. խդ. 51: [24] Սաղմ. ճժ. 1: Գործ. է. 55: [25] Գործ. դ. 12: Ժդ. 3: Ա Կորնթ. բ. 4, 5: Եբր. բ. 4:

# ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ
## ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ղուկաս Աւետարանիչ առաջաբանութիւնն իւրան գրած Աւետարանի համար։ 5 Ցօհաննէս մկրտիչի պատմութիւնն, 26 Եւ Քրիստոսի յղութիւնն։ 39 Քրիստոսի համար Եղիսաբեթի եւ Մարիամի արած մարգարէութիւնն։ 57 Ցօհաննէսի ծնանիլը եւ թլփատուիլն։ 67 Զաքարիայի Քրիստոսի համար. 76 Եւ Ցօհաննէսի համար արած մարգարէութիւնն։

1 ՈՐՈՎ ՀԱՅՏԻ ԸՆԴՅ մարդիք յօժարեցին՝ որ նոր կարգն էն բաներուն պատմութիւնըն՝ որ մեր մէջն հաստատուեցան.

2 Ինչպէս որ մեզ աւանդեցին նորանք[1] որ սկզբէն իրանց աչքովն տեսին եւ սպասաւոր էլան բանին[2].

3 Ես էլ, որ սկզբէն ամէն բաներին ճշմարտութենով հետեւեցի[3] կամեցայ, որ կարգով գրեմ[4] քեզ՝ ով պատուականդ Թէոփիլէ[5].

4 Որ իմանաս էն բաներուն ճշմարտութիւնըն, որ սովորեցիր[6].

5 Յե հերովդէս հրէաստանի (ջհոպոպանի) թագաւորի օրերումն, մին քահանայ էլաւ զաքարիա անունի[7] աբիայի դասակարգութենէն. եւ նորա կինն ահարոնի աղջիկներէն էր, եւ նորա անունն եղիսաբեթ[8]։

6 Յե երկուսն էլ Աստուծոյ առաջին արդար էին՝ եւ Տէրի ամէն պատուիրանքներումն եւ իրաւունքներումն անմեղ էին գնում[9]։

7 Յե նորանք որդի չունէին, պատճառնով՝ եղիսաբեթն ամուլ (չըբէնը) էր. եւ երկուսն էլ իրանց օրերըն անց էին կացրել։

8 Յե էլաւ որ՝ երբոր նա Աստուծոյ առաջին քահանայութիւն էր անում՝ իրան հասած կարգի օրերումն[10],

9 Քահանայութեան սովորութեան պէս (վիճակ) ընկաւ նորան՝ որ Աստուծոյ տաճարն մտնէ, եւ

[1] Եբր. բ. 3։ ա Պետր. ե. 1։ բ Պետր. ա. 16։ ա Ցօհ. ա. 1։ [2] Մարկ. ա. 1։ Ցովհ. ժե. 27։ [3] Գործ. ժե. 19, 25, 28։ ա Կորնթ. է. 40։ [4] Գործ. ժա. 4։ [5] Գործ. ա. 1։ [6] Ցովհ. ի. 31։ Վեցերորդ ամ նախ քան զՔրիստոս։ [7] Մատթ. բ. 1։ [8] ա Մնաց. իդ. 10, 19։ Նեհեմ. ժբ. 4, 17։ [9] Ծննդ. է. 1։ ժե. 1։ դ Թագ. թ. 4։ դ Թագ. ի. 3։ Ցովհ. ա. 1։ Գործ. իգ. 1։ իդ. 16։ Փիլիպ. գ. 6։ [10] ա Մնաց. իդ. 19։ բ Մնաց. ը. 14։ լ. 2։

խնկարկութիւն անել[11]։

10 Եւ ժողովրդի ամէն բազմութիւնն դուրսն աղօթք էին անում՝ խնկարկութեան ժամանակում[12]։

11 Եւ Տէրի հրեշտակն երեւեցաւ նորան, որ կանգնած էր խնկի սեղանի աջ կողմն[13]։

12 Եւ զաքարիան երբոր տեսաւ՝ շփոթվեցաւ, եւ վախ ընկաւ նորա վերայ[14]։

13 Տէրի հրեշտակն նորան ասաց. Մի վախենար զաքարիա, ինչու որ՝ քո աղօթքդ լսվեցաւ, եւ քո եղիսաբեթ կինդ մին որդի կըծնի քեզ՝ եւ նորա անունըն յովհաննէս կըկանչես[15]։

14 Եւ քեզ ուրախութիւն եւ ցնծութիւն կըլինի, եւ շատ մարդիք նորա ծնվելովն կուրախանան[16]։

15 Ինչուոր՝ (նա) մեծ կըլինի Տէրի առաջին՝ եւ գինի եւ օղի (հոբբէնշեօղ խմելիք) թող չըխմի[17], եւ դեռ իւրան մոր փորումն՝ սուրբ հոգովն կըլցվի[18]։

16 Եւ իսրայէլի որդիքներից շատ հոգի կըդարձնէ դէպի իրանց Տէր Աստուածըն[19]։

17 Եւ ինքն կըգայ նորա առաջին եղիայի հոգովն եւ զօրութեանովն[20]՝ որ հարանց սրտերըն դէպի որդիքն դարձնէ. եւ անհնազանդներն դէպի արդարների իմաստութիւնն՝ որ Տէրին համար բարեկարգ ժողովուրդ պատրաստէ։

18 Եւ զաքարիան հրեշտակին ասաց. ապա ինչով ճանաչեմ էդ բանը[21], պատճառնոր՝ ես ծեր եմ, եւ իմ կինս իւրան օրերըն անց է կացրել։

19 Հրեշտակն պատասխան տուաւ եւ նորան ասաց. Ես գաբրիէլն եմ[22]՝ որ Աստուծոյ առաջին եմ կանգնում, եւ ուղարկվեցայ՝ որ քեզ հետ խօսիմ, եւ էդ բանըդ քեզ աւետիք տամ։

20 Եւ ահա համր (լռիկ) կըլինիս, եւ չես կարենալ խօսիլ, մինչեւ էն օրն՝ որ էդ բանդ կըլինի[23]. պատճառըն որ՝ չը հաւատացիր իմ խօսքերիս՝ որ իրանց ժամանակում պիտի կատարվին։

21 Եւ ժողովուրդն սպասումիեին զաքարիային՝ եւ զարմանումիեին նորա տաճարի միջումն ուշանալոյն հասմար։

22 Եւ երբոր դուրս եկաւ՝ չէր կարում խօսիլ նորանց հետ. եւ իմացան թէ տաճարի միջն տեսիլք տեսաւ. եւ նա նշաններով էր խօսում նորանց հետ եւ կար պապանձված։

23 Եւ էլաւ՝ երբոր նորա պաշտօնի օրերն լցվան, գնաց իրան տունն[24]։

24 Եւ էն օրերից ետեւ նորա եղիսաբեթ կինն յղացաւ, եւ հինգ ամիս իրան անձըն ծածուկ էր պահում՝ եւ ասում էր.

25 Այս ի՞նչ բան է՝ որ Տէրն ինձ վերայ գործեց էս օրերումս՝ որ ինձ վերայ նայեց՝ որ իմ նախատինքըս մարդկանց միջնից վեր առնէ[25]։

26 Եւ վեցերորդ ամսումն գաբրիէլ հրեշտակն Աստուածանից ու-

[11] Եել. Լ. 7, 8։ [12] Թաք. բ. 28։ [13] Ա Նոց. իդ. 13։ [14] Ա Նոց. իթ. 11։ [15] Դատ. ժգ. 17։ Ծայտ. ը. 3, 4։ [16] Եել. Լ. 1։ [17] Դատ. զ. 22։ ժգ. 22։ Դան. ժ. 8։ Վայր. 29։ Զաքար. բ. 9։ Գործ. ժ. 4։ Ծայտ. ա. 17։ [18] Վայր. 60, 63։ [19] Վայր. 58։ [20] Թագ. զ. 3։ Գործ. ժգ. 4։ Զաքար. է. 33։ [21] Եբէմ. ա. 5։ Գաղ. ա. 15։ [22] Մաղ. գ. 5, 6։ [23] Մաղ. գ. 5։ Մաղաք. ժա. 14։ Մարկ. թ. 12։ [24] Ա Նոց. ժէ. 17։ [25] Գան. ը. 16։ թ. 21, 22, 23։ Մաղաք. ժը. 10։ Եբէր. ա. 14։ [26] Եել. գ. 26։ իդ. 27։ [27] Գ թագ. ժա. 5։ ա Նոց. թ. 25։ [28] Ծննդ. Լ. 23։ Եսայ. գ. 1։ Ծդ. 1, 4։

զարկվեցաւ գալիլեացոց մին քաղաք՝ որ նորա անունն նազարեթ էր,

27 Ա՛ին կուսի մօտ՝ որ նշանված էր մին մարդոյ՝ որ նորա անունն յոսեփ էր՝ դաւթի տանիցն. եւ էն կուսի անունն մարիամ (էր)[26]:

28 Եւ հրեշտակն որ նորա մօտ եկաւ՝ ասաց. ուրախ լեր շնորհքով լցուածդ[27]. Տէրն քեզ հետ[28]:

29 Եւ նա էն խօսքերին համար շփոթվեցաւ[29], եւ իրան մտքումն մտածումէր՝ թէ ինչպէսի բան պիտի լինի էս բարեւս:

30 Եւ հրեշտակն նորան ասաց. մի վախենար մարիամ. ինչուոր՝ Աստուածանից շնորհք գտար:

31 Եւ ահա կը յղանաս՝ եւ որդի կը ծննիս[30]. եւ նորա անունըն Յիսուս կը կանչես[31]:

32 Նա մեծ կը լինի, եւ որդի բարձրելոյն կը կոչվի[32]. եւ Տէր Աստուած նորա դաւթի հօր աթոռըն[33] կը տայ նորան. եւ յակօբայ տանն վերայ յաւիտեան կը թագաւորէ[34]:

33 Եւ նորա թագաւորութեանն վերջ չի՛ լինիլ:

34 Եւ մարիամն ասաց հրեշտակին. էդ բանդ ի՞նչպէս կը լինի ինձ, որ ես մարդ չեմ գիտում:

35 Հրեշտակն պատասխան տուաւ եւ նորան ասաց. սուրբ հոգին կը գայ քեզ վերայ, եւ բարձրելոյ զօրութիւնն քեզ վերայ շուաք կանի[35]. ինչու որ՝ նա էլ, որ քեզանից պիտի ծնվի, սուրբ է, եւ Աստուծոյ որդի կը կոչվի[36]:

36 Եւ ահա քո ազգական եղիսաբեթն, նա էլ յղի է իրան ծերութեննումն. եւ էս նորա վեցերորդ ամիսն է՝ նա որ ամուլ էր կոչված:

37 Ինչուոր՝ Աստուծոյ առաջին խոսք մին բան անկարելի չէ[37]:

38 Եւ մարիամն ասաց. ահա (ես) Տէրի աղախին (պաշտաւոր) եմ. թող քո խօսքիդ պէս լինի ինձ. եւ հրեշտակն գնաց նորանից:

39 Ա՛յն ժամանակին էն օրերումն վերկացաւ, եւ վազով սարերի կողմն գընաց յուդայի քաղաքն[38]:

40 Եւ զաքարիայի տունն մտաւ, եւ եղիսաբեթին բարեւ տուաւ:

41 Եւ էլաւ եղիսաբեթն մարիամու բարեւըն լսեց, երեխեն նորա փորումն խաղաց. եւ եղիսաբեթն սուրբ հոգով լցվաւ:

42 Եւ բարձր ձայնով աղաղակեց եւ ասաց. օրհնեալ ես դու կանանց միջումն, եւ օրհնեալ է քո փորի պտուղն[39]:

43 Եւ էս ի՞նչ տեղից է ինձ՝ որ իմ Տէրի մայրն ինձ մօտ գայ:

44 Ինչուոր՝ ահա երբոր քո բարեւի ձայնն իմ ականջս հասաւ, իմ երեխեն իմ փորիս մէջն ուրախանալով խաղաց:

45 Եւ երանի է նորան՝ որ կրհաւատայ՝ թէ էն բաներն կը կատարվին, որ Տէրից իրան ասված են:

46 Եւ մարիամն ասումէր. Թող իմ անձս փառաւորէ Տէրին[40].

47 Եւ իմ հոգիս ուրախացաւ՝ իմ փրկիչ Աստուծումը:

[26] Մատթ. ա. 18: Ղուկ. բ. 4, 5: [27] Դան. Թ. 23: ժ. 19: [28] Դատ. զ. 12: [29] Ալբ. 12: [30] Եսայ. է. 14: Մատթ. ա. 21: [31] Ղուկ. բ. 21: [32] Մարկ. ե. 7: [33] Բ թագ. է. 11, 12: Եսայ. Թ. 6, 7: ժզ. 5: Երեմ. իդ. 5: Սաղմ. ճՂբ. 11: Ճայտ. գ. 7: [34] Դան. բ. 44: է. 14, 27: Աբդի. 21: Միք. գ. 7: Ցաքր. ժբ. 34: Եբր. ա. 8: [35] Մատթ. ա. 20: [36] Մատթ. ժդ. 33: խզ. 63, 64: Մարկ. ա. 1: Ցաքր. ա. 34: ի. 31: Գործ. բ. 37: Հռոմ. ա. 4: [37] Ծննդ. ժբ. 14: Երեմ. լբ. 17: Զաք. բ. 6: Մատթ. ժԹ. 26: Մարկ. ժ. 27: Ղուկ. ժբ. 27: Հռոմ. գ. 21: [38] Ցես. ի. 9, 10, 11: [39] Դատ. ե. 24: [40] Ա թագ. բ. 1: Սաղմ. լԷ. 2, 3: լե. 9: Ա՛ր. գ. 18:

48 Պատճառնոր՝ իրան ազանդոյ (ազգասէրէ) խոնարհութեանն մխիկ տուաւ[41], ինչու որ՝ ահա հիմիկուց ետեւ ամէն ազգերն երանի կըտան ինձ[42]։

49 Պատճառնոր՝ զօրաւորն մեծ մեծ բաներ արաւ ինձ[43], եւ սուրբ է նորա անունն[44]։

50 Եւ նորա ողորմութիւնն պորտէ պորտ նորա վախեցողներին վերայ է[45]։

51 Զօրութիւն արաւ իրան բազկովն[46] ցրուեց ամբարտաւաններին իրանց սրտի մտածմունքներովն[47]։

52 Զօրաւորներին իրանց աթոռներէն կործանեց, եւ խոնարհներին բարձրացրուց[48]։

53 Սովածներին բարութիւնով լցուց, եւ հարուստներին դատարկ թողեց[49]։

54 Իսրայէլ ծառային խնամք տարաւ՝ իրան ողորմութիւններէն յիշելով[50]։

55 Ինչպէս որ մեր Հարանց խոստացաւ՝ Աբրահամին եւ նորա զաւակին՝ միշտ յաւիտեան[51]։

56 Ս՝արիան մնաց նորա մօտ երեք ամի չափ՝ եւ (ապա) դարձաւ իրան տունն։

57 Եւ եղիսաբեթի ծնելոյ ժամանակն լցաւ, եւ որդի ծնաւ։

58 Եւ նորանք՝ որ նորա չորս կողմն էին՝ եւ նորա ազգականներն լսեցին՝ թէ Տէրն իրան ողորմութիւնն մեծ արաւ նորա վերայ. եւ ուրախացան նորա հետ[52]։

59 Եւ էլաւ՝ ութ օրուանն եկին, որ երեխային թլփատեն, եւ նորան հայրան հօր անունովն զաքարիա էին կոչում[53]։

60 Մայրն պատասխան տըւաւ եւ ասաց. չէ՝ այլ յովհաննէս պիտի կոչվի[54]։

61 Եւ նորան ասացին՝ թէ ոչ ով չը կայ քո ազգումդ՝ որ նորա անունն յովհաննէս կոչվի։

62 Նորա հօրն աչքով էին ածում՝ թէ ինչ կըկամենայ կոչել նորան։

63 Եւ նա տախտակ խնդրեց, գրեց՝ եւ ասաց, դորա անունն յովհաննէս է. եւ ամէնքն զարմացան[55]։

64 Եւ շուտով նորա բերանն եւ լեզուն բացվաւ. եւ խօսում էր՝ եւ Աստուծոյն օրհնում էր[56]։

65 Եւ ահ ընկաւ ամէնին վերայ, որ էս (բաները) լսում էին, եւ որ նորանց չորս կողմումն բընակված էին. եւ հրէաստանի սարերի ամէն կողմերումն էս ամէն բաներըս պատմվում էին[57]։

66 Եւ ամէնքն՝ որ լսում էին՝ իրանց սրտերումն դրին եւ ասացին[58]. էս երեխաս ի՞նչ պիտի լինի. եւ Տէրն ձեռն նորա հետն էր[59]։

67 Եւ նորա հայր զաքարիան սուրբ հոգով լցվաւ, մարգարէացաւ եւ ասաց[60].

68 Օրհնեալ է իսրայէլի Տէր Աստուածն[61] որ մեզ տեսութիւն եւ

---

[41] ա թագ. ա. 11։ Առակ. ծղբ. 6։ [42] Մաղ. գ. 12։ Ղեւտ. ժա. 27։ Առակ. հա. 19։ ճիղա. 3. [44] Առակ. ձժա. 9։ [45] Ծննդ. ժէ. 7։ Ելք. ի. 6։ Առակ. ոգ. 17, 18։ [46] Առակ. ղբ. 1։ ճժբ. 15։ Ելայ. խ. 10։ ծա. 9։ ծբ. 10։ [47] Առակ. լէ. 10։ ա պետր. ե. 5։ [48] ա թագ. բ. 6։ ճ-վէ. ե. 11։ Առակ. ձժգ. 6։ [49] ա թագ. բ. 5։ Առակ. լէ. 10։ [50] Առակ. ղբ. 3։ Երեմ. ե. 3, 20։ [51] Ծննդ. ժէ. 19։ Առակ. ճղբ. 11։ Հռով. ժա. 28։ Գաղ. գ. 16։ [52] վէր. 14։ [53] Ծննդ. ժէ. 12։ Ղեւտ. ժբ. 3։ [54] վէր. 13։ [55] վէր. 13։ [56] վէր. 20։ [57] վէր. 39։ [58] Ղուկ. բ. 19, 51։ [59] Ծննդ. լիե. 2։ Առակ. ի. 17։ Ձիե. 21։ Գործ. ժա. 21։ [60] ճ-վէ. բ. 28։ [61] գ թագ. ա. 48։ Առակ. խա. 13։ Հր. 18։ ճղ. 48։

կաւ՝ եւ իրան ժողովրդին համար փրկութիւն արաւ[62]։

69 Եւ իրան դաւիթ ծառայի տան Նիցն փրկութեան եղջիւր վերկայացաւ մեզ համար[63]։

70 Ինչպէս որ խօսեց սրբոց բերանովն՝ որ յաւիտենից նորա մարգարէներն էին[64],

71 փրկութիւն մեր թշնամիներից, եւ ամէն մեզ ատողների ձեռքից։

72 Որ մեր հարանց վերայ ողորմութիւն անէ, եւ իրան սուրբ ուխտն եւ պայմանն յիշէ[65]՝

73 Են երդումն, որ մեր Հայր աբրահամին երդուաւ՝ որ մեզ տայ[66],

74 Որ մեր թշնամիների ձեռքից ազատած՝ առանց վախի պաշտանք իրան[67],

75 Արդարութեամբ եւ արդարութեամբ նորա առաջին՝ մեր կենաց ամէն օրերումն[68]։

76 Եւ դու, ով երեխայ՝ բարձրեալն մարգարէ կըկոչուիս. ընդդէմ պիտի գնաս Տէրի երեսաց առաջին՝ որ նորա ճանապարհն պատրաստես[69]։

77 Նորա ժողովրդին փրկութեան գիտութիւն տաս իրանց մեղաց թողութեան համար[70]։

78 Ո՛ւր Ըստուծոյ քաղցր ողորմութեան համար, որ նորանով արեւգակն վերեւիցն առաքութիւն եկաւ մեզ[71]։

79 Որ երեւի նորանց՝ որ խաւարումն եւ մահի շուքումն նստած էին, որ մեր ոտներըս դէպի խաղաղութեան ճանապարհն շիտակէ[72]։

80 Եւ երեխան աճումէր՝ եւ հոգով զօրանումէր[73], եւ անապատներումն (էօրէմոս) էր մինչեւ էն օրն՝ որ նա երեւեցաւ իսրայէլին[74]։

## ԳԼ · Ը

1 Օգոստոս կայսրն ամէն Հռովմայի աշխարհքին տակ էլոյներին աշխարհագիր կառնէ։ 6 Քրիստոսի ծնունդն։ 8 Որն հրեշտակ էս աւետեաց հովիւներին կըսայ։ 13 Շատ մարդիկ սորա համար Աստուած կըդովին։ 21 Քրիստոսի թլփատվին։ 22 Մարիամ սրբութեան օրերն կըլցուին։ 28 Սիմէոնն եւ Աննան Քրիստոսի համար կըմարգարեանան։ 40 Քրիստոսի ընթերքով աճին, 46 Տաճարին մէջ վարդապետներին բան հարցանէ։ 51 Եւ իրան ծնողաց հնազանդութիւն։

1 Եւ եղաւ որ էն օրերումն՝ հրամայեց դուրս եկաւ օգոստոս կայսերիցն, որ ամէն աշխարհքի միջն մարդիկն գրի տակ ձգվին։

2 Այս առաջին աշխարհագիրն կիւրենեայ տարոյց դատաւորութեան ժամանակումն էլաւ[1]։

3 Եւ ամէնքն գնում էին՝ որ էն

---

[62] Եփ. գ. 16։ գ. 31։ Սաղ. ճժա. 9։ Ղուկ. է. 16։ [63] Սաղ. ճլը. 17։ [64] Երեմ. իգ. 5, 6։ ե. 10։ Դան. թ. 24։ Գործ. գ. 21։ Հռոմ. ա. 2։ [65] Գործ. իգ. 42։ Սաղ. զը. 3։ ճե. 8, 9։ ճգ. 45։ Եզեկ. ժգ. 60։ Ելք. 54։ [66] Ծննդ. ժբ. 3։ ժե. 4։ իս. 16, 17։ Եբր. գ. 13, 17։ [67] Հռոմ. գ. 18, 22։ Եբր. թ. 14։ [68] Երեմ. լը. 39, 40։ Եփես. գ. 24։ բ Թես. բ. 13։ բ Տիմ. ա. 9։ Տիտ. բ. 12։ ա Պետր. ա. 15։ բ Պետր. ա. 4։ [69] Ես. խ. 3։ Մաղ. գ. 1։ գ. 5։ Մատթ. ժա. 10։ Ելք. 17։ [70] Մարկ. ա. 4։ Ղուկ. գ. 3։ [71] Թագ. իգ. 17, Ես. ժա. 1։ Ջեր. գ. 8։ գ. 12։ Մաղ. գ. 2։ [72] Ես. իթ. 2։ իս. 7։ խթ. 9։ Մատթ. դ. 16։ Գործ. իգ. 18։ [73] Ղուկ. բ. 40։ [74] Մատթ. գ. 1։ Ժա. 7։ Հինգերորդ առ նախ քան Քհասարակ Թուականն Քրիստոսի։ [1] Գործ. ե. 37։

աշխարհագիրն մնանեն՝ ամէն մէկն իւրան քաղաքն։

4 Յովսէփն էլ գալիլեայիցըն՝ Նազարէթ քաղաքիցն գնաց Հրէաստան (Ջհահուդաստան) դաւթի քաղաքն[2], որ բեթղեհեմ է կոչվում. ինչուր՝ Նա դաւթի տանիցն եւ ազգիցն էր[3],

5 Որ աշխարհագիրն մնանէ մաբիամու հետ՝ որ նշանված էր Նորան, եւ յղի էր։

6 Իւ երբոր Նորանք էն տեղ հասին, Նորա ծնելոյ օրերն լցվան։

7 Իւ իրան առջինեկ որդին ծընաւ, եւ պատեց խանձարուրների (քաթրանէլէ) մէջ՝ եւ մնուրի (ախուրէ) մէջ դրաւ[4]. ինչուր՝ էն վերտալոյ տեղումն տեղ չը կար Նորանց համար։

8 Իւ էն տեղումն հովիւներ (չոպաններ) կային դուրս տեղն կացօղ՝ որ գիշերի ժամանակն իրանց հօտերըն (ախուրներըն) պահումէին։

9 Իւ Տէրի հրեշտակն երեւացաւ Նորանց, եւ Տէրի փառքն Նորանց վերայ ծագեց. եւ մեծ վախով վախեցան[5]։

10 Իւ հրեշտակն Նորանց ասաց. մի վախենաք, ինչուր՝ ահա մեծ ուրախութիւն աւետիք եմ տալիս ձեզ, որ ամէն ժողվրդին պիտի լինի[6].

11 Պատճառներ՝ էս օր[7] ձեզ փրկիչ ծնվաւ՝ դաւթի քաղաքումն[8], որ Նա օծեալ Տէր է[9]։

12 Իւ էս լինի ձեզ նշան. մին եւ մեկայ կրգտնէք խանձարուրներով (քաթրանէլէ) պատած, եւ մնուրի (ախուրէ) մէջ դրած։

13 Իւ յանկարծակի էն հրեշտակին հետ էլաւ երկնաւոր զորքի բազմութիւնն, որ Աստուծոյն օրհնումէին՝ եւ ասում[10].

14 փառք (լինի) Աստուծոյ ի բարձունս[11], եւ երկրի վերայ խաղաղութիւն[12], եւ մարդկանց մէջ հաճոյութիւն[13]։

15 Իւ էլաւ երբոր հրեշտակներն Նորանցից վերացան երկինքն, հովիւներն (չոպաններն) իրար ասացին. եկէք գնանք մինչեւ բեթղեհեմ, եւ աւետենք ի՛նչ է էս բանն՝ որ էլաւ, որ Տէրն ցոյց տուաւ մեզ։

16 Իւ վազով եկին եւ գտին մարիամին եւ յոսէփին, եւ երեխան յին մնուրի մէջ դրած։

17 Իւ իմացան էն բանըն՝ որ էն երեխայի համար ասվեցաւ Նորանց։

18 Իւ ամէնքն՝ որ լսումէին, զարմանումէին էն բաներին համար՝ որ հովիւներն Նորանց հետ խոսեցին։

19 Իւ մարիամն էս ամէն բաներըս պահումէր, եւ իրան սրտումն մտածումէր[14]։

20 Իւ հովիւներն դարձան. Աս-

---

[2] ա թագ. ժգ. 1. 4։ Ցաքար. է. 12։ [3] Մատթ. ա. 16։ Ղուկ. ա. 27։ [4] Մատթ. ա. 25։ [5] Ղուկ. ա. 12։ [6] Ծննդ. ժբ. 3։ Մատթ. իը. 19։ Մարկ. ա. 15։ Ղուկ. իդ. 47։ Կողոս. ա. 23։ [7] Եսայ. թ. 6։ [8] Մատթ. ա. 21։ [9] Մատթ. ա. 16։ ժգ. 16։ Ղուկ. ա. 43։ Գործ. բ. 36, 38։ ժ. 36։ Փիլիպ. բ. 11։ [10] Ծննդ. իը. 13։ Լուկ. ա. 2։ Ասմ. ծգ. 20. 21։ Ծնօր. 2։ Դան. է. 10։ Եբր. ա. 14։ Ցայտ. է. 11։ [11] Ղուկ. ժթ. 38։ Եփես. ա. 6։ գ. 10. 21։ Ցայտ. է. 13։ [12] Եսայ. ծէ. 19։ Ղուկ. ա. 79։ Հռոմ. է. 1։ Եփես. բ. 17։ Կողոս. ա. 20։ [13] Ցաքար. գ. 16։ Եփես. բ. 4. 7։ բ Թես. բ. 16։ ա Ցաքար. գ. 9. 10։ [14] Ծննդ. լէ. 11։ Ղուկ. ա. 66։ ա Յոյր. 51։

առածդն փառաւորուածին եւ օրհնուածին էն ամէն բաներին համար՝ որ տեսին, ինչպէս որ նորանց պատմուեցաւ։

21 Այ երբոր ութ օր լցաւ[15] որ նորան թլպիատուին, նորա անունն Յիսուս կոչուեցաւ՝ էն որ հրեշտակին էր կոչուած, դեռքանի որ նա չէր յղացուած փորուն[16]։

22 Այ երբոր նորա սրբուելուան օրերն լըցուան՝ մնէսի օրէնքին պէս[17], նորան տարան երուսաղէմ՝ որ Տէրի առաջին կանգնացնեն։

23 Ինչպէս որ Տէրի օրէնքումն գրուած է՝ թէ ամէն արու (պէտ ըտ՚ի)՝ որ արգանդ բանայ[18], Տէրին սուրբ պիտի կոչուի։

24 Այ որ Տէրի օրէնքումն ասած ձին պէս պատարագ բերին մին զուխտ տատրակ (ղումրի), կամ ազաւնու երկու ձագ[19]։

25 Այ ահա երուսաղէմումն մին մարդ կար՝ որ նորա անունն սիմէօն էր, եւ էն մարդն արդար եւ աստուածավախ էր, եւ իսրայէլի միսխիթարուելուանն սպասուէր[20], եւ սուրբ Հոգի կար նորանուն։

26 Այ նա սուրբ Հոգուին հրաման էր առել՝ որ մահ չ՚տեսնէ[21], մինչեւ որ Տէրի օծեալըն տեսնէ։

27 Այ նա Հոգուին եկաւ տաճարըն[22]. եւ երբոր ծնողներն Յիսուս երեխային բերին՝ որ օրէնքի սովորուելուան պէս նորա վերայ անեն.

28 Ա՛յս էլ նորան առաւ ընդունեց իրան գիրկն, եւ Աստուծոյ օրհնեց, եւ ասաց.

29 Տէր հիմիկ քո խոսքիդ պէս խաղաղութեամբ ես արձակում քո ծառայիդ[23].

30 Ինչուր՝ իմ աչքերս քո փրկութիւնըդ տեսին[24],

31 Որ նորան ամէն ժողովրդներուն առաջին պատրաստեցիր։

32 Լոյս՝ որ հեթանոսներին սիտի յայտնըվի, եւ փառք քո իսրայէլ ժողովրդիդ համար[25]։

33 Այ նորա հայրն եւ մայրն զարմացել էին էն բաներին վերայ՝ որ նորա համար խոսվում էին։

34 Այ սիմէօնն օրհնեց նորանց, եւ նորա մայր մարիամին ասաց. ահա սա կայ շատ մարդկանց համար ընկնելոյ եւ կանգնելոյ պատճառ[26] իսրայէլի միջումն, եւ հակառակութեան նշան[27]։

35 Այ հենց քո անձնովդ սուր կանցնէ, որ շատ սրտերից խորհուրդներն յայտնըվին[28]։

36 Այ էնտեղ էր աննա մարգարէ՝ փանուէլի աղջիկ ասերի ազգիցն. սա ինքն շատ օրերը անց էր կացուել՝ որ իրան կուսութեան ժամանակիցն ևօթն տարի էր ձեացել մարդոյ հետ։

37 Այ ութսուն եւ չորս տարոյ հասի որբևուերի էր՝ որ տաճարիցն չէր հեռանում. բայց պատով եւ աղօթքով գիշերուցերեկ ծառայում էր (Աստուծոյն)[29]։

38 Այ սա էլ էն ժամումըն (ապա-

[15] Ծննդ. ժէ. 12։ Ղեւտ. ժբ. 3։ Ղեւտ. ա. 59։ [16] Մարկ. ա. 21. 25։ Ղեւտ. ա. 31։ [17] Ղեւտ. ժբ. 2, 3, 4, 6։ [18] Ելք. ժգ. 12։ խր. 29։ լդ. 19։ Թուոց. գ. 13։ ը. 17։ ժբ. 15։ [19] Ղեւտ. ժբ. 2, 6, 8։ [20] Եսայ. խ. 1։ Մարկ. ժե. 43։ Ղուկ. 38։ [21] Սաղմ. ԽԹ. 48։ Եբր. ժա. 5։ [22] Մարկ. գ. 1։ [23] Ծննդ. խզ. 30։ Փիլիպ. ա. 23։ [24] Եսայ. ծբ. 10։ Ղեւտ. գ. 6։ [25] Եսայ. ԼԹ. 3։ խբ. 6։ խԹ. 6։ կ. 1, 2, 3։ [26] Եսայ. ը. 14։ Ովես. ժգ. 9։ Մարկ. ւա. 44։ Հռոմ. Թ. 32, 33։ Գործ. ա. 23, 24։ Գործ. ը. 16։ ա Պետր. բ. 7, 8։ [27] Գործ. խը. 22։ [28] Սաղմ. խբ. 10։ Ցաքար. ժԹ. 25։ [29] Գործ. իզ. 7։ ա Տիմ. ե. 5։

Հաղո՛ւ) վերկացաւ եւ Տէրիցն գո՛հանումեր, եւ նորա համար ամէնին հետ խօսումեր՝ որ երուսաղէմի փըրկութեանն սպասումին[30]։

39 Ա՛ւ երբոր ամէն բաներըն Տէրի օրէնքին պէս կատարեցին, յետ դարձան գալիլեա՝ իրանց նազարէթ քաղաքն։

40 Ա՛ւ երեխան աճումեր[31] եւ զօրանում իմաստութիւնով լցված. եւ Աստուծոյ շնորհքն նորա վերայ էր։

41 Ա՛ւ նորա ծնօղքն տարուց տարի երուսաղէմ էին գնում զատկի տօնումին[32]։

42 Ա՛ւ երբոր նա տասն երկու տարեկան էլաւ, նորանք տօնի սովորութեան պէս երուսաղէմ գնացին։

43 Ա՛ւ երբոր (էն) օրերն կատարվեցան՝ եւ յետ դարձան, Յիսուս տղան երուսաղէմումն մնաց. եւ նորա ծնօղքն չիմացան։

44 Կարծումին՝ թէ նա ճանապարհի ընկերներն հետ կըլինի. մին օրման չափ ճանապարհ եկին եւ նորան մեն էին դալիս դըացիների (հարքէ՛ն) եւ ծանօթների մեն։

45 Ա՛ւ երբոր չը գտին, յետ դարձան երուսաղէմ՝ որ նորան մեն գան։

46 Ա՛ւ էլաւ որ երեք օրիցն ետեւ նորան տաճարի մէջն գտին, որ վարդապետներին հետ նստած էր. նորանց ականջ էր դնում, եւ նորանցից հարցնում էր։

47 Ա՛ւ ամէնքն՝ որ նորանից լսումէին՝ զարմանումէին նորա իմաստութեան եւ պատասխաններին վերայ[33]։

48 Ա՛ւ երբոր նորան տեսին՝ շատ զարմացան. եւ նորա մայրն ասաց նորան. որդեակ՝ ես ի՞նչ բան արիր մեզ հետ. ահա քո հայրդ եւ ես մեծ նեղութեանով մեն էինք գալիս քեզ համար։

49 Ա՛ւ նորանց ասաց. ի՞նչ էիք ինձ մեն գալիս. չէի՞ք գիտում՝ թէ պէտք է, որ ես իմ հօր տանն լինիմ[34]։

50 Ա՛ւ նորանք չիմացան էն բանըն՝ որ նորանց հետ խօսեց[35]։

51 Ա՛ւ նորանց հետ վերկաւ, եւ գնաց նազարէթ. եւ նորանց հնազանդ էր. եւ նորա մայրն էն ամէն բաներն պահումէր իրան սրտումն[36]։

52 Ա՛ւ Յիսուս աճումէր իմաստութիւնով եւ հասակով[37], եւ շնորհքով Աստուծոյ եւ մարդկանց առաջին։

## ԳԼ. Գ

1 Յովհաննէսի քարոզութիւնն եւ մկրտելն, 15 Քրիստոսի համար իրան արած վկայութիւնն։ Հերովդէս Յովհաննէսն բանտումն կըդնէ։ Քրիստոս կմկրտվի, եւ երկինքէն նորա վկայութիւն կըտըվի։ 23 Քրիստոսի ցեղն եւ ազգահամարն Յովսէփից սկսած մինչեւ Ադամ։

1 Տիբերիոս կայսերի տէրութեան տասն եւ հինգ տարումն, պոնտացի պիղատոսի Հրէաստանի վերայ դատաւորութեան ժամանակումն, եւ Հերովդէսի՝ գալիլեացոց վերայ չորրդապետութեան ժամանակումն,

[30] Մ՚ա՛ւ. ժէ. 13։ Վէր. 25։ Ղ՚ա՛ւ. իգ. 21։ [31] Վ՚ա՛ր. 52։ Ղ՚ա՛ւ. ա. 80։ [32] Ելք. իգ. 15, 17։ Լղ. 23։ [33] Բ Օրէն. ժգ. 1, 16։ [34] Մ՚ա՛ւ. է. 28։ Մ՚ա՛ւ. ա. 22։ Ղ՚ա՛ւ. գ. 22, 32։ Ց՚ա՛ւ. է. 15, 46։ [35] Ց՚ա՛ւ. բ. 16։ [36] Ղ՚ա՛ւ. թ, 45։ ժը. 34։ [36] Վէր. 19։ Դ՚ա՛ւ. է. 28։ [37] ա Թ՚ա՛ւ. բ. 26։ Վէր. 40։

եւ նորա փիլիպպոս եղբօր՝ խուսա-
ցոց եւ տաքսոնացոց աշխարհքին վե-
րայ չորրորդապետութեան ժամա-
նակումն, եւ լիւսանիայի արիլենացոց
վերայ չորրորդապետութեան ժա-
մանակումն,

2 Յե անունայի եւ կայիափայի քա-
հանայապետութեան օրերումն Ը-
ոտուծոյ խօսքն գաքարիայի որդի յո-
հաննէսին վերայ էլաւ՝ անապատի
(էօվէ) միջումն[1]:

3 Յե նա եկաւ յորդանանի ամէն
կողմերն[2], որ ապաշխարութեան մը-
կրտութիւնըն քարոզէ՝ մեղաց թո-
ղութեան համար[3]:

4 Ինչպէս որ եսայի մարգարէի
խօսքերի գրքումն գրված է՝ (թէ)
կանչօղի ձայն անապատումն[4], (թէ)
պատրաստարէք Տ էրի ճանապարհն,
եւ շիտակ արէք նորա դնալոյ ճանա-
պարհներըն:

5 (Թող) ամէն ձորերն լցվին, եւ
ամէն սարերն եւ դարերն խոնարհ-
վին. եւ դժուարներն հեշտ լինին,
եւ դարուփոսներն հաւասար ճանա-
պարհներ լինին:

6 Յե (թող) ամէն մարմին Ը-ստու-
ծոյ փրկութիւնըն տեսանէ[5]:

7 Յե էն ժողովուրդներին՝ որ
դուրս էին եկած, որ նորանից մը-
կրտվին՝ ասաց. (իժ) օձի վաւակ-
ներ՝ ո՛վ տվորցրուց ձեզ փախչել
էն բարկութենից՝ որ գալու է[6]:

8 Ը-յստեհետե ապաշխարու-
թեան արժանի պտուղներ արէք. մի
սկսէք ասել՝ (թէ) մենք աբրահամ ու-
նինք հայր, էս ասումեմ ձեզ, (թէ)
Ը-ստուած կարօղ է էս քարերից
որդիք հանել աբրահամի համար:

9 Ի-այց ահա կացինն ծառերի
արմատին (էլօդին) մօտ դրած է. ա-
մէն ծառ՝ որ բարի պտուղ չի բե-
րումը[7], կըկտրվի եւ կրակի մէջ կը-
քըցվի:

10 Յե ժողովուրդներն նորան
հարցնումէին եւ ասում. ապա ի՞նչ
գործենք[8]:

11 Պատասխան տուաւ եւ նորանց
ասաց. նա՝ որ երկու շոր ունի, (թող)
մին նորան տայ՝ որ չունի. եւ նա էլ՝
որ կերակուր ունի, (թող) էնպէս
անէ[9]:

12 Ո՛աքսաւորներն (Ն՛էֆթօ-
նէ՛ն) էլ եկին՝ որ մկրտվին, եւ նո-
րան ասացին. վարդապետ՝ ի՞նչ գոր-
ծենք[10]:

13 Յե նա ասաց նորանց. ձեզ հը-
րամայածից աւելի բան մի անէք[11]:

14 Զ-ինուորներն էլ նորան հարց-
նումէին եւ ասում. ապա մենք ի՞նչ
գործենք. նորանց ասաց. խակի մինին
մի նեղացընէք՝ մինին զըրպարտու-
թիւն մի անէք, (թող) ձեր վարձքերն
բաւական լինին ձեզ[12]:

15 Ինչ որ ժողովուրդն սպասու-
մէր՝ եւ ամէնքն իրանց սրտերումն
մտածումէին յօհաննէսին համար՝
միթէ սա լինի Ք-րիստոսն:

16 Ա՛յս ամէնին պատասխան տը-
ւաւ եւ ասաց. ես ջրով եմ մկրտում
ձեզ[13], բայց ինձանից էլ զօրաւորն
է գալիս՝ որ ես արժանի չեմ նորա
կօշկակներըն վեր առնել. նա ձեզ
սուրբ Հոգով եւ կրակով կըմկրտէ:

17 Ո՛ր նորա հողերն իրան ձեռին
է՝ որ իրան կալըն կըսրբէ՝ եւ ցորեները

---

[1] Ցվհ. ժա. 49, 51: ժբ. 13: Գործ. գ. 6: [2] Մ-ատ. գ. 1: Մ-արկ. ա. 4: [3] Ղ-ուկ. ա. 77: [4] Եսայ. խ. 3: Մ-ատ. գ. 3: Մ-արկ. ա. 3: Ցվհ. ա. 23: [5] Սաղմ. ղը. 2: Եսայ. ծբ. 10: Ղ-ուկ. բ. 10: [6] Մ-ատ. գ. 7: [7] Մ-ատ. է. 19: [8] Գործ. բ. 37: [9] Ղ-ուկ. ժա. 41: [10] Կորնթ. ը. 14: Ցվհ. բ. 15, 16: ա Ցվհ. գ. 17: գ. 20: [10] Մ-ատ. իա. 32: Ղ-ուկ. է. 29: [11] Ղ-ուկ. ԺԹ. 8: [12] Նե. իգ. 1: Գ-որ. ժԹ. 11: [13] Մ-ատ. գ. 11: [14] Մթ. գ. 12: Մ-ատ. ԺԳ. 30:

իրան համբարն կը ժողովէ, եւ գարմանըն կայրէ անանցնելի կրակով[14]։

18 Ուրիշ էլ շատ բաներ մխիթարութենով աւետիք էր տալիս ժողովրդին։

19 Հայց Հերովդէս չորրորդապետն նորանից յանդիմանված իրան եղբօր կնկան Հերովդիայի պատճառովն, եւ էն ամէն չար գործքերին համար՝ որ Հերովդէսն արաւ[15],

20 էն ամէնին վերայ էս էլ աւելացրուց՝ որ Յովհաննէսին բանտի (պահապան) մէջ դրաւ։

21 Բայց եղաւ ամէն ժողովրդի մէջ կրտվելոյ ժամանակին, եւ երբոր Յիսուս մկրտվեցաւ՝ եւ աղօթք էր անում, երկինքն բացվաւ[16].

22 Եւ սուրբ Հոգին մարմնաւոր կերպարանքով աղաւնու պէս վէր էր գալիս նորա վերայ. եւ երկնքիցն ձայն եկաւ՝ որ ասում էր. դու ես իմ սիրելի որդին՝ քեզ հաւան կացայ։

23 Եւ ինքն Յիսուս սկսած էր երեսուն տարեկանի չափ լինել[17]՝ որ ինչպէս որ կարծըվում էր, Յոսէփի որդին էր[18]. եւ նա՝ Յակօբին. եւ նա՝ Հեղիին. եւ նա՝ մատաթիային։

24 Եւ նա՝ Ղեւիին. եւ նա՝ Մելքիին. եւ նա՝ Յաննէին. եւ նա՝ Յոսէփին։

25 Եւ նա՝ մատթէին. եւ նա՝ ամոսին. եւ նա՝ նաւումին. եւ նա՝ էսղիին. եւ նա՝ նանգէին։

26 Եւ նա՝ մահաթիին. եւ նա՝ մատաթիային. եւ նա՝ սեմիին. եւ նա՝ յոսէքին. եւ նա՝ յոդին։

27 Եւ նա՝ յոհանին. եւ նա՝ բերսին. եւ նա՝ զորաբաբէլին. եւ նա՝ սաղաթիէլին. եւ նա՝ նեւրիին։

28 Եւ նա՝ մելքիին. եւ նա՝ ադդէին. եւ նա՝ կոսամին. եւ նա՝ եղմադադին. եւ նա՝ երին։

29 Եւ նա՝ յեսուին. եւ նա՝ եղիազարին. եւ նա՝ յորիմին. եւ նա՝ մատթիային. եւ նա՝ ղեւիին։

30 Եւ նա՝ սիմէօնին. եւ նա՝ յուդային. եւ նա՝ յոսէփին. եւ նա՝ յոնամին. եւ նա՝ եղեկիմին։

31 Եւ նա՝ մելիէին. եւ նա՝ մէնէային. եւ նա՝ նաթանային[19]. եւ նա՝ դաւիթին[20]։

32 Եւ նա՝ յեսսէին[21]. եւ նա՝ յոբէդին. եւ նա՝ բոոսին. եւ նա՝ սաղմոնին. եւ նա՝ նասսօնին։

33 Եւ նա՝ ամինադաբին. եւ նա՝ արամին. եւ նա՝ ադմէին. եւ նա՝ առնէին. եւ նա՝ էսրոմին. եւ նա՝ փարեսին. եւ նա՝ յուդային։

34 Եւ նա՝ յակօբին. եւ նա՝ իսահակին. եւ նա՝ աբրահամին. եւ նա՝ թարայինն[22]. եւ նա՝ նաքորին։

35 Եւ նա՝ սերուքին եւ նա՝ ռագաւին. եւ նա՝ փաղեկին. եւ նա՝ եբերին. եւ նա՝ սաղային։

36 Եւ նա՝ կայնանին[23]. եւ նա՝ արփաքսադին. եւ նա՝ սէմին[24]. եւ նա՝ նոյին. եւ նա՝ ղամէքին։

37 Եւ նա՝ մաթուսաղային. եւ նա՝ ենոքին. եւ նա՝ յարեդին. եւ նա՝ մաղաղիէլին. եւ նա՝ կայնանին։

38 Եւ նա՝ ենոսին. եւ նա՝ սեթին. եւ նա՝ ադամին. եւ նա՝ [Աստուծոյն][25]։

---

[14] Մատթ. ժգ. 3։ Մարկ. ը. 17։ [16] Մատթ. գ. 13։ Ցովհ. ա. 32։ [17] Թէոփ. գ. 3. 35, 39, 43, 47։ [18] Մատթ. ժգ. 55։ Ցովհ. ը. 42։ [19] Զաք. ժբ. 12։ [20] բ Թագ. ե. 14։ ա Մնաց. գ. 5։ [21] Հռութ. դ. 18, 1 Սամ. բ. 10, 1 Մնաց. [22] Ծննդ. ժա. 24, 26։ [23] Ծննդ. ժա. 12։ [24] Ծննդ. ե. 6, 1 Մնաց. ա. 10, 1 Մնաց. [25] Ծննդ. ե. 1, 2։

## Գ·Ի · Գ

1 Քրիստոսի փորձվելն եւ ծառ պահելն: 13 Նա սատանային կ՚յաղթէ: 14 Քարոզելոյ կըսկսի: 16 Նազարէթի ժողովուրդն կըզարմանայ նորա շնորհաց խօսքերին վերայ: 23 Դեւ ունեցող մին մարդ կըբժշկէ: 38 Պետրոսի զքրանչն: 41 Եւ ուրիշ կերպ հիւանդներ կըբժշկէ: 42 Դեւերն Քրիստոսն կըխոստովանին, եւ սորա համար Քրիստոս սատուկ նորանց: 43 Քրիստոսի ամէն քաղաքների մէջ քարոզութիւն:

1 Ու Յիսուս սուրբ Հոգովն լըցված յորդանանին դարձաւ[1], եւ Հոգովն վարվեցաւ անապատն[2] (չէօլն):

2 Վառասուն օր սատանային փորձվեցաւ. եւ էն օրերումն ոչ կերաւ եւ ոչ խմեց[3]. եւ երբոր նորանք կատարվեցան, սովեց:

3 Ու սատանան նորան ասաց. Թէ որ դու Աստուծոյ որդին ես, էդ քարիդ ասա՝ որ հաց լինի:

4 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց. գրված է, Թէ ոչ մէնակ հացով կապրի մարդ, այլ Աստուծոյ ամէն խօսքովն[4]:

5 Ու նորան մին բարձր սար հանեց՝ եւ աշխարհքի ամէն թագաւորութիւններըն ցոյց տուաւ նորան մին աչքի թափ տալոց ժամանակումն:

6 Ու սատանան ասաց նորան. էս ամէն իշխանութիւններըս եւ սրանց փառքն քեզ կըտամ. ինչուր՝ ինձ տրվված է. եւ ումն որ կամենամ՝ կըտամ սրան[5]:

7 Ուրեմն՝ եթէ իմ առաջիս ընկած երկրպագութիւն անես, ամէնն քեզ լինի:

8 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց. գրված է՝ Թէ քո Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն անես, եւ նորան մէնակ պաշտես[6]:

9 Ու տարաւ նորան Երուսաղէմ, եւ տաճարի աշտարակին (քօլջն) վերայ կանգնացուց, եւ նորան ասաց. Թէ որ Աստուծոյ որդի ես, էստեղից քեզ վէր քցիր[7]:

10 Պատճառն՝ գրված է՝ Թէ իրան հրեշտակներին հրամայել է քեզ համար՝ որ քեզ պահեն[8]:

11 Ու ձեռներին վերայ քեզ վեր առնեն՝ որ խէր մին ժամանակ քո ոտդ քարի չի դիպցընես:

12 Յիսուս նորան պատասխան տուաւ եւ ասաց. ասված է՝ Թէ մի փորձեր քո Տէր Աստուծոյդ[9]:

13 Ու սատանան երբոր էն ամէն փորձութիւններըն կատարեց, հեռացաւ նորանից մին ժամանակ[10]:

14 Ու Յիսուս[11] Հոգով զօրութեանովն[12] դարձաւ գալիլեա[13]. եւ նորա համբաւն գնաց էն գաւառի ամէն կողմերն:

15 Ու նա սովորցնում էր նորանց ժողովարաններումն, եւ ամէնից փառաւորվում էր:

16 Ու եկաւ նազարէթ՝ որտեղ որ մեծացել էր[14]. եւ իրան սովորութեան պէս շաբաթ օրումն ժողով-

---

[1] Մատ. գ. 1: Մարկ. ա. 12: [2] Ղուկ. դ. 1: [3] Եսա. ղ. 28: գ Թագ. ԺԹ. 8: [4] Օրէն. ը. 3: [5] Յովհ. ժը. 31: ԺԲ. 30: Յայտ. ժգ. 2. 7. [6] Օրէն. ջ. 13: Ժ. 20: [7] Մատ. դ. 5: [8] Սաղմ. զա. 11: [9] Օրէն. ջ. 16: [10] Յովհ. ԺԲ. 30: Եբր. գ. 15: [11] Մատթ. գ. 12: Յովհ. դ. 43: [12] Ավետ. 1: [13] Գործ. ժ. 37: [14] Մատթ. բ. 23: ԺԳ. 54: Մարկ. զ. 1:

բանին մէջ մնաւ[15]։

17 Եւ եօսէի մարգարէի գիրքէն տուին Նոյեան՝ եւ վերկացաւ՝ որ կարդայ· եւ երբոր գիրքէն բացաւ՝ էն տեղէն գտաւ՝ որ Նոյեանում գրված էր·

18 Տէրի հոգին ինձ վերայ է[16]· եւ Հինց նրահամար էլ օծեց ինձ· նա ինձ ուղարկեց՝ աղքատներին աւետիք տալ, սրտով կոտրվածներին բժշկել,

19 Գերիներին թողութիւն քարոզել, եւ կուրերին տեսութիւն· խոցվածներին արձակել դէպի թողութիւն, Տէրի ընդունելի տարին քարոզել։

20 Եւ գիրքէն խփեց՝ եւ պաշտօնեային տուաւ, եւ նըստեց· եւ ժողովարանի մէջն ամէն լինօղների աչքերին Նոյեան էին մտիկ տալիս։

21 Եւ սկսեց ասել Նոյեանց՝ (թէ) Էսօր էս գիրքս կատարվեցաւ ձեր առկանջներումն։

22 Եւ ամէնքն վկայումէին Նոյեան, եւ զարմանումէին էն շնորհէց խօսքերին վերայ՝ որ դուրս էին գալիս Նոյա բերանիցն[17]· եւ ասումէին՝ չէ որ սա Յոսէփի որդին է[18]։

23 Եւ Նոյեանց ասաց· լինի թէ էս առակս ասէք ինձ· բժիշկ՝ քո անձդ բժշկիր· որչափ բաներ լսեցինք՝ որ կափառնայումի մէջն արիր[19]՝ էս տեղ էլ արա՝ քո դաւառումդ[20]։

24 Եւ ասաց· ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ մարգարէն ընդունելի չէ իրան քաղաքումն[21]։

25 Իրաւի ասումեմ ձեզ· թէ եղելայի օրերումն Իսրայէլի մէջն շատ այրեւէրիներ կային՝ երբ որ երկինքն եղեք տարի եւ վեց ամիս փակվեցաւ, եւ ամէն երկրի մէջ մեծ սով էլաւ[22]։

26 Եւ եղիան Նոյեանցից մէնին մատ չուղարկվեցաւ, բայց միայն սիդօնացոց սարեփթա (քաղաքն)՝ մին որ բեւէրի կընկան մատ։

27 Եւ շատ բորոտներ կային Իսրայէլի մէջն եղիսէ մարգարէի ժամանակումն. եւ Նոյեանցից ոչ ոք չըսրբվեցաւ, բայց միայն Նէեման ասորին[23]։

28 Եւ ամէնքն՝ որ ժողովարանի մէջն էին, բարկութենով լցվան՝ երբոր էս լսեցին։

29 Եւ վերկացան՝ Նոյեան քաղաքիցն դուրս հանեցին, եւ տարան Նոյեան մինչեւ էն սարի գլուխն՝ որ Նոյեանց քաղաքն Նոյա վերայ էր շինված՝ որ բարձր տեղիցն վէր քցեն Նոյեան։

30 Եւ Նա Նոյեանց միջովն անցաւ գնաց[24]։

31 Եւ վերկաւ կափառնայում՝ գալիլեացոց քաղաքն[25], եւ շաբաթ օրերումն սովորցնումէր Նոյեանց։

32 Եւ զարմանումէին Նոյա վարդապետութենեան վերայ, ինչուր՝ Նոյա խօսքն իշխանութենով էր[26]։

33 Եւ ժողովարանի մէջն մին մարդ կար՝ որ Նոյեան պիղծ դեւ բռնված էր, եւ մեծ ձայնով աղաղակեց[27],

34 Եւ ասաց· թող արա· դու ինչ բան ունիս մեզ հետ՝ Յիսուս Նազովրեցի· եկիր՝ որ մեզ կորցնես·

---

[15] Գործ· ժգ· 14· ժէ· 2· [16] Եսայ· կա· 1· [17] Ա՛ղվ· ղկ· 3· Ա՛ռաք· ժգ· 54· Ա՛ռք· գ· 2· Դ՛ատ· բ· 47· [18] Ց՛ղէ· գ· 43· [19] Ա՛ռաք· դ· 13· ժա· 23· [20] Ա՛ռաք· ժգ· 54· Ա՛ռք· գ· 1· [21] Ա՛ռաք· ժգ· 57· Ա՛ռք· գ· 4· Ց՛ղէ· դ· 44· [22] գ Թագ· ժէ· 9· ժը· 1· Ց՛ղէ· ծ· 17· [23] գ Թագ· ե· 14· [24] Ց՛ղէ· ը· 59· ժ· 30· [25] Ա՛ռաք· դ· 13· Ա՛ռք· ա· 21· [26] Ա՛ռաք· գ· 28, 29· Ց՛ղէ· բ· 15· [27] Ա՛ռք· ա· 23·

պիտումինք քեզ[28] (Թէ) ոմն ես դու՝ Աստուծոյ սուրբդ[29]։

35 Յիսուս սասեց նորան եւ ասաց. պապանձվիր եւ դուրս կէգ դո-րանից. գեւն էն մէջ տեղումն գե-տինն զարկեց նորան՝ եւ դուրս եկաւ նորանից, եւ իսկի մին վնաս չը՛դո-ծեց նորան։

36 Եւ զարմանք էլաւ ամենին վե-րայ, իրար հետ խոսումէին եւ ա-սում. էս ի՞նչ բան է՝ որ իշխանու-թենով եւ ուժով պիղծ գեւերին սաստումէ՝ եւ դուրս են գալիս։

37 Եւ նորա համբաւն գնումէր էն գաւառի ամէն չորս կողմերն։

38 Եւ վերկացաւ էն ժողովարա-նիցն, եւ մնաւ սիմոնի տունն[30]։

39 Սիմոնի զքնջնէն սաստիկ տեն-տով չարչարվումէր՝ եւ նորան ա-ղաչեցին նորա համար։

40 Նորա մնտ կանգնեց՝ սաստեց տենտին, եւ թողեց նորան. եւ շու-տով վերկացաւ՝ եւ նորանց ծա-ռայումէր։

41 Եւ արեգական մնելուց ժա-մանակն՝ ամէնքն՝ որ կերով կերով ցա-վերով հիւանդներ ունէին՝ նորանց բերումէին նորա մնտ. եւ նա նորանց ամէն մէկին վերայ ձեռք էր դնում՝ եւ նորանց բժշկումէր[31]։

42 Շատ մարդկանցից էլ դուրս էին գալիս գեւերը, եւ աղաղակու-մէին եւ ասում՝ Թէ դու ես Աստու-ծոյ որդին[32]. եւ նա սաստումէր նո-րանց՝ եւ թոյլ չէր տալիս՝ որ խօսին. ինչուր՝ գիտումէին՝ Թէ նա Քրիս-տոսն է[33]։

43 Եւ երբոր ցերեկ էլաւ՝ դուրս եկաւ գնաց անապատ (չէօլ) տեղ. եւ ժողովուրդներն ման էին գալիս նորան՝ եւ եկին մինչեւ նորա մնտն. եւ արգելումէին նորան՝ որ չը՛գնայ իրանցից[34]։

44 Եւ նա ասաց նորանց. պէտք է՝ որ ես ուրիշ քաղաքներին էլ Աս-տուծոյ արքայութիւնըն աւետարա-նեմ. ինչուր՝ հինց սրա համար ու-ղարկվեցայ։

45 Եւ գալիլեացոց ժողովարան-ների մէջն քարոզումէր[35]։

## Գ Լ · Ե

1 Քրիստոս Պետրոսի նաւերի մէջից ժողովուրդն կը սովորցնէ. 4 Հրաշքով ձկներ բռնե-նել կը տայ եւ Պետրոսին կը մխիթարէ Թէ նա իրան ընկերներումն մարդկանց հոգսորդներ պիտի անէ. 12 Բորտի որբվելն. 16 Քրիստոսի անապատ տեղերումն աղօթքն. 18 Մին անդամալոյծ կը բժշկէ. 27 Մատթէոս մաքսաւորն կը կանչէ. 29 Հոգոց բժիշկ լի-նելոյ համար մեղաւորներին հետ ուտելն. 34 Իրան համբառնալուցն եւտեւ առաքելոց պաս պահելն եւ նորանց քաշելոյ չարչարանքներն առաջուց կը պատմէ. 36 Նոր շորից հին հագուստի վերայ չը՛ քցվելոյ եւ նոր գինին հին աքիւրի մէջ չի՛ ածվելոյ առակներն ասում։

1 Եւ էլաւ որ ժողովուրդն նորա վերայ կիսումէր, եւ Աստուծոյ բանըն լսումէր, եւ ինքն գեննէսա-րեթի ծովակին մնտ կանգնած էր[1]։

2 Եւ երկու նաւ տեսաւ՝ որ ծո-վակին մնտ կանգնած էին, եւ ձուկ

[28] Վ՚ոյ· 42։ [29] Ց՚ալմ. ԺԶ· 10։ Դան. Թ· 24։ Գ՚ոէլ· ա· 35։ [30] Մ՚ատթ· ը· 14։ Մ՚արկ· ա· 29։ [31] Մ՚ատթ· ը· 16։ Մ՚արկ· ա· 32։ [32] Մ՚արկ· ա· 34։ գ· 11։ [33] Մ՚արկ· ա· 25, 34։ Վ՚եր· 34, 35։ [34] Մ՚արկ· ա· 35։ [35] Մ՚արկ· ա· 39։ [1] Մ՚ատթ· դ· 18։ Մ՚արկ· ա· 16։

Հրամայեցին նորան դուրս հանել և քարկոծել՝ և գործիքները լուանում էին:

3 Եւ այս են նաւերից մէնի մէջը մտաւ՝ որ սիմոնին էր, և նորան աղաչեց՝ որ նաւը մի քիչ ցամաքից ներս տանի. նստեց՝ և նաւից ժողովրդներին ուսուցանում էր:

4 Եւ երբոր խօսքը վերջացրուց, սիմոնին ասաց. նաւը դէպի խորը տար, և ձեր գործիքները քաշեցէք հրամայում[2]:

5 Սիմոն պատասխան տուաւ՝ և նորան ասաց. վարդապետ՝ ես ողոր գիշերս աշխատեցինք՝ և իսկի մի բան չը բռնեցինք, միայն թէ քո խօսքիդ համար գործիքները կը քաշեցնենք:

6 Երբոր էս արին՝ ձկներով մեծ բազմութիւն ներս փակեցին, մինչև որ նորանց ուռկանները (նաւակը) պատռուում էին:

7 Եւ ընկերներին՝ որ գան իրանց օգնեն. և եկին՝ և երկու նաւն էլ լցուեն, մինչև որ թաղ ւելայ մօտ էին:

8 Երբոր սիմոն պետրոսն տեսաւ՝ ընկաւ Յիսուսի ծունկերին և ասաց. Տէր հեռանից գնա[3], ինչուր՝ ես մեղաւոր մարդ եմ:

9 Զարհուրանքը՝ ա՛յ պատճառով՝ նորան և ամէնին էլ՝ որ նորա հետ էին՝ էն ձկների հրոսին համար, որ բռնեցին.

10 Եւնոյնս էլ զեբեդիայի որդիքներին՝ յակոբին և յոհաննէսին, որ սիմոնի հրոսընկերներն էին. Եւ Յիսուս սիմոնին ասաց. մի վախենար՝ սրանից հետև մարդկանց կը հրոսայ դէպի կեանքն[4]:

11 Եւ նաւերն հանեցին ցամաքն, ամէն բաներըն թողին[5], և նորա հետևէն գնացին:

12 Եւ էլաւ՝ երբոր նա քաղաքներից մէնի մէջ հասաւ, ա՛յ մին մարդ՝ որ բորոտութիւնով լիքն էր, երբոր Յիսուսին տեսաւ՝ երեսին վրայ ընկաւ, նորան աղաչեց՝ և ասաց. Տէր՝ թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել[6]:

13 Իրան ձեռքն մեկնեց՝ հասցրուց նորան՝ և ասաց. կամենումեմ՝ սրբուիվր. և շուտով բորոտութիւնն գնաց նորանից:

14 Եւ նա պատուիրեց նորան՝ որ իսկի մէնին չասէ[7], բայց թէ՝ գնա, քո անձըդ ցոյց տուր քահանային, և քո սրբութեան համար պատարագ բեր՝ ինչպես որ մովսէսն էլ հրամայեց, որ նորանց վկայութիւն լինի[8]:

15 Եւ նորա համբաւն էլ աւելի շատանում էր. և շատ ժողովուրդներ ժողովվում էին՝ որ լսեն և իրանց հիւանդութիւններից բժշկվին[9]:

16 Եւ նա քաշվում անապատ (չոլ) տեղերանք, և աղօթք էր անում[10]:

17 Եւ մին օր էլաւ՝ որ ինքն ուսուցանում էր. և փարիսեցիներն և օրէնաց վարդապետներն նստած էին, որ գալիլեացոց և հրէաստանի ամէն քաղաքներից էին եկած, և երուսաղէմից հաւաքված էին. և Տէրի զօրութիւնն կար նորանց բժշկելու համար:

18 Եւ ահա մարդիք մին մարդ էին

---

[2] Ցուկ. ե. 6: [3] Բ Թագ. գ. 9: գ Թագ. ժէ. 18: [4] Մատթ. դ. 19: Մարկ. ա. 17: [5] Մատթ. դ. 20: ժէ. 27: Մարկ. ա. 18: Ղուկ. ժը. 28: [6] Մատթ. ը. 2: Մարկ. ա. 40: [7] Մատթ. ը. 4: [8] Ղեւտ. ժգ. 4, 19, 21, 22: [9] Մատթ. դ. 25: Մարկ. գ. 7: Ցուկ. զ. 2: [10] Մատթ. ժգ. 23: Մարկ. զ. 46:

բերում՝ մահիճով (պէօշէ֊ի֊ով)՝ որ անդամալուծ էր, եւ ուղում էին՝ որ նորան ներս տանեն, եւ նորա առաջին գնեն[11]։

19 Եւ երբոր տեղ չէին գտնում՝ որ նորան ներս տանեն՝ էն ամբոխի (խալքէ) պատճառով, վեր էլան կըտուրն, եւ օճոռքիցն կախեցին նորան, եւ մահիճովն (պէօշէ֊ի֊ով) վեր բերին մէջ տեղն Յիսուսի առաջին։

20 Եւ նորանց հաւատքըն որ տեսաւ՝ նորան ասաց. ով մարդ՝ թող քո մեղքերդ թողված լինին քեզ։

21 Կարդացողներն եւ փարիսեցիներն սկսեցին միտք անել, եւ պատգին[12]. սա ով է՝ որ հայհոյանք է խօսում. ով կարող է մեղքըն թողել՝ բայց միայն Աստուած[13]։

22 Յիսուս երբոր նորանց մտածմունքներըն իմացաւ, պատասխան տուաւ եւ նորանց ասաց. ի՞նչ էք միտք անում ձեր սրտերումն։

23 Որն է աւելի հեշտ, ասել՝ թէ քո մեղքերդ թողված լինին քեզ, թէ ասել՝ վեր կաց եւ գնա։

24 Բայց որ իմանաք՝ թէ որդին մարդոյ իշխանութիւն ունի՝ երկրիս վերայ մեղքերըն թողլոյ. անդամալուծին ասաց, քեզ եմ ասում՝ վեր կաց քո մահիճդըդ (պէօշէկդէ) առ՝ եւ գնա քո տունդ։

25 Եւ հենց էն ժամումն (սահաթ֊ըն֊ա) ամենի առաջին վերկացաւ, իրան վերայ առաւ էն՝ որ նորա վերայ ընկած դըրած էր, գնաց իրան տունն, եւ փառք էր տալիս Աստուծոյն։

26 Օ՛արմանք բռնեց ամենին, եւ փառք էին տալիս Աստուծոյն. ահով լցվան, եւ ասում էին՝ թէ էսօր նոր նշան տեսինք։

27 Եւ նրանից հետո Յիսուս էն տեղըցն դուրս գնաց՝ եւ մին մաքսաւոր (Կ֊ոմ֊ուշէ) տեսաւ՝ որ նորա անունն Ղեւի էր, եւ նստած մաքսաւորութիւն էր անում. եւ նորան ասաց, իմ հետեւէս եկ[14]։

28 Եւ նա ամէն բան թողնց, վերկացաւ գնաց նորա հետեւէն։

29 Եւ Ղեւի նորան մեծ հացկերոյթիւն արաւ իրան տան մէջն[15]. եւ շատ ժողովուրդ կար մաքսաւորների (Կ֊ոմ֊ուշէնէք) եւ ուրիշների՝ որ նորանց հետ սեղան էին նստել[16]։

30 Եւ փարիսեցիներն եւ նորանց կարդացողներն նորանից տրտնջումէին նորա աշակերտներից եւ ասում. ինչո՞ւ էք մաքսաւորների եւ մեղաւորների հետ ուտում եւ խմում։

31 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. առողջներին բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներին։

32 Չէմ եկել՝ որ արդարներն կանչեմ, այլ մեղաւորներն՝ որ ապաշխարեն[17]։

33 Եւ նորանք ասացին նորան. ինչո՞ւ յովհաննէսի աշակերտներն շատ ժամանակ պաս են պահում՝ եւ աղօթք են անում, հնպէս էլ փարիսեցիներինն. եւ քո (աշակերտներդ) ուտումեն եւ խմում[18]։

34 Եւ նա նորանց ասաց. միթէ կարո՞ղ էք հարսանիքի տղաներին, դեռքանի որ փեսան նորանց հետ է, հրամայել տալ որ պաս պահեն։

35 Օրեր կըգան՝ երբոր փեսան վերկառնվի նորանցից, ապա էն օրե-

[11] Մ֊ոռ. Թ. 2։ Մ֊ուխ. բ. 3։ [12] Մ֊ոռ. Թ. 3։ Մ֊ուխ. բ. 6, 7։ [13] Սաղ. կբ. 5։ Եսայ. խգ. 25։ [14] Մ֊ոռ. Թ. 9։ Մ֊ուխ. բ. 13, 14։ [15] Մ֊ոռ. Թ. 10։ Մ֊ուխ. բ. 15։ [16] Ղեւ֊ի֊ական. 1։ [17] Մ֊ոռ. Թ. 13։ ա Տիմ. ա. 15։ [18] Մ֊ոռ. Թ. 14։ Մ֊ուխ. բ. 18։

բուն կըպահեն։

36 Մին առակ էլ ասաց նորանց, թէ ոչ ոք մին նոր շորից հին հագուստի վերայ (կարկատան) չի քըցիլ. ապա թէ չէ՝ էն նորըն էլ կըպատառէ, եւ կտորն՝ որ նորիցն է, հընին հետ չի միաբանիլ[19]։

37 Եւ ոչ ոք նոր գինին հին տըկերի մէջ չի՛ ածիլ. ապա թէ չէ՝ նոր գինին հին տըկերըն կըպատառէ, ինքն կըթափվի, եւ տըկերն կըկորչի։

38 Այլ նոր գինին նոր տըկերի մէջ պէտք է ածվի, եւ երկուքն էլ կըպահվին։

39 Եւ ոչ ոք չը՛կայ՝ որ հինըն խմի՝ եւ նորըն կամենայ. ինչուա՛ որ սումի՝ թէ հինն աւելի քաղցր է։

## ԿԻ. Օ

1 Քրիստոս շաբաթն պահելոյ համար փարիսեցոց ուսեցած կուրութիւնն Յուդա Դրքերի վկայութիւնով՝ իրաւունքով եւ հրաշքով իրանց երեսին կըթակէ։ 13 Ցառներկու աքառաքեալներին կընտրէ։ 17 Հիւանդներն եւ պիղծ դեւերից չարչարվածներն կըբժշկէ։ 20 Ծաղվոյրդի առաջին աշակերտներին երանութիւն եւ ուրիշներին վայ կըտայ։ 27 Եւ ցոյց կըտայ թէ ի՞նչպես պէտք է որ մեր թշնամիներն սիրենք։ 46 Եւ իրան խօսքերն լսելով նորանց անձնք, որ չը՛լինի թէ փորձութեան ժամանակուն հողի վերայ չինված հիմն չունեցող առէ պես կործանվինք։

1 Եւ էլաւ՝ որ նա երկրորդի առաջին շաբաթի օրուն արտերովն անց էր կենում, եւ նորա աշակերտներն հասկ էին պոկում՝ ափի մէջն փըշրըմնին, եւ ուտում[1]։

2 Եւ փարիսեցիներից մին քանիսն ասացին նորանց. էդ ինչո՞ւ էք անում՝ որ շաբաթի օրուն օրէնք չէ՞[2]։

3 Յիսուս նորանց պատասխան տուաւ եւ ասաց. դուք չէք կարդացել էն՝ որ դաւիթն արաւ, երբոր սովեց ինքն եւ նորանք՝ որ նորա հետն էին[3]։

4 (Թէ) ինչպէս նա Աստուծոյ տունն մտաւ, եւ առաջաւորութեան (Աթոռոյն պէղմի վերայ դրած) հացըն կերաւ, եւ նորանց էլ տուաւ՝ որ նորա հետ էին, որ օրէնքը չէր ուտել, բայց միայն քահանայապետներին[4]։

5 Եւ նորանց ասաց. որդին մարդոյ շաբաթի էլ Տէրն է։

6 Եւ էլաւ՝ որ նա մէկել շաբաթի օրուն ժողովարանի մէջ մտաւ՝ եւ սովորցնում էր. եւ էնտեղ մին մարդ կայ՝ եւ նորա աջ ձեռն չորացել էր[5]։

7 Եւ կարդացողներն եւ փարիսեցիներն սպասում էին նորան՝ եթէ շաբաթի օրուն բժշկի, որ նորանից չարախօսելոյ պատճառ գտնեն։

8 Եւ նա գիտուէր նորանց մըտածմունքներըն, եւ էն մարդոյն՝ որ նորա ձեռն չորացել էր՝ ասաց. վեր կաց մէկ մէջ տեղն. եւ նա վերկացաւ կանգնեց։

9 Յիսուս նորանց ասաց. մին բան հարցնում ձեզանից. ի՞նչ արժան է շաբաթի օրուն, բարի բան անել՝ թէ չար գործել, մին հոգի ապրեցընել՝ թէ կորցնել։

10 Եւ շատ բարկացած չորս կողմուվ ամէնին վերայ նայեց՝ եւ նորան ասաց. քո ձեռըդ մեկնիր. եւ նա մեկնեց, եւ նորա ձեռն մէկելին

[19] Մատթ. ի. 16, 17։ Մարկ. բ. 21, 22։ [1] Մատթ. ժբ. 1։ Մարկ. բ. 23։ [2] Ելք. ի. 10։ [3] Ա Թագ. իա. 6։ [4] Ղեւտ. իդ. 9։ [5] Մատթ. ժբ. 9։ Մարկ. գ. 1։ Ղուկ. ժգ. 14։ ժդ. 3։ Ցհ. Թ. 16։

պէս հաստատվեցաւ :

11 Եւ նորանք յիմարութենով լըցվան, եւ իրար հետ խօսուվէին՝ թէ ի՞նչ անեն Յիսուսին :

12 Եւ էլաւ էն օրերումն՝ որ վերէլաւ սարն՝ աղօթք անել, գիշերըն լուսացրուց աղօթք անելով Աստուածո[6] :

13 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ իրան աշակերտներըն կանչեց, եւ նորանցից տասներկուսին ընտրեց՝ որ էլ առաքեալ անուանեց նորանց[7] :

14 Սիմոնին՝ որ էլ պետրոս անուանեց նորան[8], եւ նորա անդրէաս եղբօրըն, եւ յակոբին եւ յովհաննէսին, եւ փիլիպպոսին եւ բարթողիմէոսին,

15 Եւ մատթէոսին եւ թովմասին, եւ յակոբոս ալփեանին, եւ սիմոնին՝ նախանձայոյզ կոչվածին :

16 Եւ յակոբայ յուդային[9], եւ յուդա իսկարիօտացին՝ որ էլ մատնիչ էլաւ :

17 Եւ վէր եկաւ նորանց հետ մին տափակ տեղ, եւ հետեղ էր նորա աշակերտներըն ժողովն եւ ժողովրդի մեծ բազմութիւն, ամէն երկրէ ըէաստանիցն եւ երուսաղէմիցն եւ Տիրկել կողմերիցն եւ տիւրոսի եւ սիդոնի ծովի եզերիցն (ղբաղկան)[10] .

18 Որ եկին նորանից լսել եւ իրանց հիւանդութիւններից բժշկվել, եւ պիղծ դեւերից չարչարվածներն բժշկվուէին :

19 Եւ ամէն ժողովուրդն ձգտուէր՝ որ մօտենայ նորան[11], ինչուր՝ նորանից շատ զօրութիւն էր դուրս գալիս՝ եւ ամէնին բժշկուէր[12] :

20 Եւ նա իրան աչքերըն դէպի իրան աշակերտներն բարձրացրուց՝ եւ ասաց . երանի է ձեզ՝ հոգով աղքատներիդ, որ ձերն է Աստուծոյ արքայութիւնն[13] :

21 Երանի նորանց՝ որ հիմիկ սոված են[14], որ պիտի կըշտանան . եւ երանի նորանց՝ որ հիմիկ լաց են լինում՝ որ պիտի ծիծաղեն[15] :

22 Երանի է ձեզ, երբոր մարդիք նախատինք կրտան ձեզ[16], եւ երբոր ձեզ կըջոկեն եւ կատեն, եւ ձեզ վերայ չար անուն կըհանեն՝ որդոյ մարդոյ պատճառովն[17] :

23 Ուրախ էլէք էն օրումն եւ ցնծացէք, ինչուր՝ ահա ձեր վարձքն շատ է երկնքումն[18] . հենց էդ կերպով մարգարէներին էին անում նորանց հարքն[19] :

24 Այլ վայ ձեզ[20] հարուստներիդ[21], ինչուր՝ ձեր մխիթարութիւնըդ ընդունեցիք[22] :

25 Վայ ձեզ՝ որ հիմիկ կըշտացել էք[23], ինչուր՝ պիտի սովիք . վայ ձեզ՝ որ հիմիկ ծիծաղումէք, ինչուր՝ սուգ պիտի անէք, եւ լաց պիտի լինիք[24] :

26 Վայ ձեզ՝ երբոր ամէն մարդիք ձեզանից բարի ասեն, ինչուր՝ էդպէս էլ սուտ մարգարէներին էին անում նորանց հարքն[25] :

27 Այլ ձեզ՝ որ լսումէք, ասում-

[6] Մարկ. ժդ. 23 : [7] Մարկ. ժ. 1 : [8] Ցովհ. ա. 42 : [9] Ցակոբ. 1 : [10] Մարկ. գ. 25 : Մարկ. գ. 7 : [11] Մարկ. ժգ. 36 : [12] Մարկ. ե. 30 : Ղուկ. ը. 46 : [13] Մարկ. ե. 3 : Ժա. 5 : Ցակ. բ. 5 : [14] Եսայ. նե. 1 : կե. 13 : Մարկ. ե. 6 : [15] Եսայ. կա. 3 : Մարկ. ե. 4 : [16] Մարկ. ե. 11 : ա Պետր. բ. 19 : գ. 14 : դ. 14 : [17] Ցովհ. ժգ. 2 : [18] Մարկ. ե. 12 : Գործ. է. 41 : Կող. ա. 24 : Ցակ. ա. 2 : [19] Գործ. է. 51 : [20] Ամբ. գ. 1 : Ցակ. ե. 1 : [21] Ղուկ. ժբ. 21 : [22] Մարկ. գ. 2. 5. 16 : Ղուկ. ժգ. 25 : [23] Եսայ. կե. 13 : [24] Ամոս. ժդ. 13 : [25] Ցովհ. ժե. 19 : ա Ցովհ. դ. 5 :

մեմ[26], սիրեցէք ձեր թշնամիներըն, բարի արէք ձեզ ատողներին։

28 Օրհնեցէք ձեզ անիծողներին, աղօթեք արէք ձեզ նեղացնողներին վերայ[27]։

29 Նա որ քո մին երեսիդ զարկուսն՝ մկկելն էլ դէմ ալա նորան[28]. եւ նա որ քո կապան քեզանից հանուսն՝ շապիկըդ էլ մի արգելներ նորանից[29]։

30 Ամէնին՝ որքան ուզուսն քեզանից՝ տուր, եւ ինչ որ մինն քեզանից հանուսն՝ յետ մի ուզեր[30]։

31 Նա ինչպէս որ կամենուսիք՝ թէ մարդիքն ձեզ անեն, էնպէս էլ դուք արէք նորանց[31]։

32 Նա թէ որ դուք ձեզ սիրօղներին սիրեք՝ ի՞նչ շնորհք է ձեզ, ինչուոր՝ մեղաւորներն էլ իրանց սիրօղներին սիրուսմեն[32]։

33 Նա թէ որ ձեր բարերարներին բարի անեք՝ ի՞նչ շնորհք է ձեզ, ինչուոր՝ մեղաւորներն էլ հենց էնպէս են անուսմ։

34 Նա եթէ փոխ տաք նորանց՝ որ նորանցից յետ առնելոյ յոյս ունիք՝ ի՞նչ շնորհք է ձեզ[33], ինչուոր՝ մեղաւորներն էլ մեղաւորներին փոխ են տալիս, որ հաւասար չափն յետ առնեն։

35 Այլ սիրեցէք ձեր թշնամիներըն[34], եւ բարի արէք ձեզ ատողներին, եւ փոխ տուէք նորանց՝ որ յետ առնելոյ յոյս չունիք[35], եւ ձեր վարձքն շատ կըլինի, եւ բարձրելոյ որդիք կըլինիք[36]. ինչուոր՝ նա քաղցր է չարերի եւ երախտամոռների վերայ։

36 Ուրեմն ողորմած էլէք՝ ինչպէս որ ձեր Հայրն էլ ողորմած է[37]։

37 Մի դատէք՝ եւ չէք դատուիլ[38]. մի պատժէք՝ եւ չէք պատժըվիլ. արձակեցէք՝ եւ կարձակվիք։

38 Տուէք՝ եւ կըտրվի ձեզ[39]. լաւ թափ տրվված շարժված առատ չափ կըտան ձեր գոգն[40]. որ չափով որ չափէք՝ նորանով կըչափվի ձեզ[41]։

39 Ա՛յն առակ էլ ասաց նորանց՝ թէ միթէ կարօղ է կոյրն կուրին առաջնորդել[42], չէ՞ որ երկուքն էլ փոսի մէջ կընկնին։

40 Աշակերտն իրեն վարդապետից լաւ չէ[43]. ամէն կատարեալն իրեան վարդապետին պէս կըլինի։

41 Ինչո՞ւ քո եղբօր աչքին միջի ծղոտն տեսնուսես, եւ քո աչքիդ միջի գերանն չես տեսնում[44]։

42 Կամ ի՞նչպէս կարօղ ես քո եղբօրդ ասել. եղբայր՝ թող քո աչքիդ ծղոտն հանեմ, եւ քո աչքիդ միջի գերանն չես տեսնում. կեղծաւոր՝ առաջ քո աչքիդ գերանն հանիր, եւ ապա մտիկ արա՝ որ քո եղբօր աչքիցն ծղոտն հանես[45]։

43 Ինչուոր՝ բարի ծառ չըկայ՝ որ չար պտուղ բերէ, եւ էնպէս էլ չար ծառ չըկայ՝ որ բարի պտուղ բերէ[46]։

44 Ինչուոր՝ ամէն մէկ ծառ իրան պըտղովն է ճանաչվում[47]. պատճառոր՝ ոչ փըշերիցն թուզ են քաղում, եւ ոչ մէջոցն խաղող են կըթում։

[26] Եփ. դ. 31։ Առաք. իե. 21։ Պարոյ. ե. 44։ Վայր. 35։ Հռովմ. ժբ. 20։ [27] Ղուկ. իգ. 34։ Գործ. է. 60։ [28] Պարոյ. ե. 39։ [29] ա Կորնթ. գ. 7։ [30] բ Օրէն. ժե. 7, 8, 10։ Առաք. իա. 26։ Պարոյ. ե. 42։ [31] Պարոյ. է. 12։ [32] Պարոյ. ե. 46։ [33] Պարոյ. ե. 42։ [34] Վայր. 27։ [35] Ղուկ. լէ. 26։ Վայր. 30։ [36] Պարոյ. ե. 45։ [37] Պարոյ. ե. 47։ [38] Պարոյ. է. 1։ [39] Առաք. ժթ. 17։ [40] Ղուկ. հթ. 12։ [41] Պարոյ. է. 2։ Պրով. գ. 24։ Ցաւ. բ. 13։ [42] Պարոյ. ժե. 14։ [43] Պարոյ. ժ. 24։ Ցաւ. ժգ. 16։ ժե. 20։ [44] Պարոյ. է. 3։ [45] Առաք. ժբ. 17։ [46] Պարոյ. է. 16, 17։ [47] Պարոյ. ժբ. 33։

45 Խարի մարդն իրան սրտի բարի գանձուցն (խոպնեայիցն) բարիք է բղխում[48], եւ չար մարդն չար (գանձուցն) չարիք է բղխում. ինչուա՛ սրտի աւելցածիցն է խօսում նորա բերանն[49]:

46 Ինչո՞ւ էք ինձ ՏԷր ՏԷր կոչում, եւ էն որ ասում եմ, չէք անում[50]:

47 Ամէն՝ ով որ ինձ մօտ է գալիս, եւ իմ խօսքերըս լսում՝ եւ նորանց անում, ցոյց տամ ձեզ՝ թէ ո՛ւմ նման է[51]:

48 Նման է էն մարդոյն՝ որ տուն կը շինէ. որ փորեց եւ խորացրուց, եւ հիմքն քարի վերայ դրաւ. ջրի հեղեղներ որ վերկացան՝ դէտն էն տանըն թակեց, եւ չը կարաց շարժել նորան. ինչուա՛ նորա հիմն քարի վերայ հաստատած էր:

49 Այլ նա՝ որ իմ խօսքերըս լսում՝ եւ չի անում, նման է էն մարդոյն՝ որ տունըն հողի վերայ կը շինէ առանց հիմնաքի. դէտն նորան թակեց, եւ շուտով վեր ընկաւ. եւ էն տան կործանվիլն սաստիկ եղաւ:

## ԿՒ· Ի·

1 Քրիստոս Հերովդեսի հարեւրապետի մէջ Հրեաներից շատ աւելի մեծ հաւատք է գտնում, 10 Հեռու տեղից նորա ծառան կըբժշկէ. 11 Նոյնի քաղաքի որբեւէրի կնոջ մեռելը կ՚յարուցանէ. 19 Յօհաննէսի ուղարկած մարդկանց՝ հրաշքներով պատասխան կըտայ. 24 Յաղորմութիւն առնել կը կոչէ Թէ նա Յօհաննէսի համար ի՞նչ կարծիք ունի. 30 Հրեաներն սաստում որ ուշ Յօհաննէսի եւ ուշ էլ իրան բռնած ճամփին կը յարդարվին. 36 Եւ Մարիամ Մագդաղենացիի պատճառով ցոյց կըտայ Թէ նա մեղաւորաց բարեկամն է, չէ Թէ նորանք մեղքի մէջ մնալոյ համար նորանց բարեկամ կըլինի, հապա որ նորանք հաւատան իրան եւ զղջալով՝ իրանց մեղքերին Թողութիւն առնեն նորանից:

1 Ու երբոր իրան ամէն խօսքերըն կատարեց ժողովրդի ականջներումն, մտաւ կափառնայում[1]:

2 Մի հարիւրապետի ծառայ խիստ հիւանդացած՝ մեռնելոյ մօտ էր, որ պատուական էր նորան:

3 Երբոր Յիսուսի համար լսեց, հրէաների (ջհուդպանէքի) ծերերըն ուղարկեց՝ որ աղաչեն նորան՝ որ գայ իրան ծառային ապրեցնէ:

4 Ու նորանք Յիսուսի մօտ եկին՝ նորան խիստ աղաչելով եւ ասում, Թէ արժանի է նա՝ որ էս ընորհքըս անես նորան:

5 Զատճառնոր՝ մեր ազգին սիրում, եւ ժողովարանըն նա շինեց մեզ համար:

6 Ու Յիսուս նորանց հետ գնաց. երբոր տանիցն շատ հեռու չէր, հարիւրապետն բարեկամներ ուղարկեց նորա մօտ, եւ նորան ասաց. Տէր՝ աշխատանք մի քաշեր, ինչու որ արժանի չեմ՝ որ իմ (տան) ծածկի տակն մտնես:

7 Նրա համար էլ ես իմ անձըս արժանաւոր չը համարեցի՝ որ քեզ մօտ գամ. բայց խօսքով ասա՝ եւ իմ տղաս կըբժշկվի:

[48] Մատթ. ժբ. 35: [49] Մատթ. ժբ. 34: [50] Մաղ. ա. 6: Մատթ. է. 21: Իսա. 11: Ղևտ. ժդ. 25: [51] Մատթ. է. 24: [1] Մատթ. ը. 3:

8 Ինչուորո՝ ես էլ մին իշխանու-
թեան տակ լինող մարդ եմ. իմ ձե-
ռիս տակն զինուորներ ունիմ, եւ
մինին ասումեմ՝ թէ գնա, եւ նա
գնումէ. եւ մեկելին՝ թէ եկ, եւ գա-
լիս է. եւ իմ ծառային՝ թէ ես բա-
նըս արա, եւ անումէ։

9 Իւ երբոր Յիսուս ես լսեց՝
զարմացաւ, դարձաւ դէպի ժողո-
վուրդն՝ որ նորա ետեւէն գնումէին՝
եւ ասաց. ճշմարիտըն ասումեմ ձեզ՝
թէ իսրայէլի մէջն էլ էսքան հա-
ւատք չը գտի։

10 Իւ էն ուղարկված մարդիքն
յետ դարձան տուն, եւ հիւանդ ծա-
ռային բժշկված գտին։

11 Իւ յետեւի օրումն էլաւ՝ որ մին
քաղաք էր գնումէ, որ նորա անունն
Նային էր. նորա աշակերտներն էլ
նորա հետ գնումէին եւ շատ ժողո-
վուրդ էլ։

12 Իւրբոր մտեցաւ քաղաքի դը-
ռանն, ահա մին մեռեալ էին դուրս
բերում՝ որ իրան մօր միածնուն
որդի էր, եւ նա որբեւէրի էր. եւ
քաղաքիցն շատ ժողովուրդ կար նո-
րա հետ։

13 Իւրբոր Տէրն նորան տեսաւ՝
խղճաց նորա վերայ եւ ասաց. լաց
մի լինիր։

14 Իւ մօտ եկաւ՝ նաժիշն մտե-
ցաւ. եւ նորանք՝ որ վեր առած տա-
նումէին, կանգնեցին. եւ ասաց, ո՛վ
երիտասարդ՝ քեզ եմ ասում՝ վեր
կաց[2]։

15 Ի՝ւեռեալն վերկացաւ, նստեց
եւ սկսեց խօսել. եւ նորան տուաւ
իրան մօրն։

16 Իւ ահ բռնեց ամենին[3], եւ
Աստուծոյն փառք էին տալիս՝ եւ
ասում, թէ մին մեծ մարգարէ[4] ա-
ռաջ է եկել մեր միջումն, եւ թէ
Աստուած իրան ժողովրդին տե-
սութիւն եկաւ բարութենով[5]։

17 Իւ էս ձայնս նորա համար
դուրս գնաց բոլոր հրէաստանն՝ եւ
էն աշխարհքի ամէն կողմերն։

18 Իւ յոհաննէսին պատմեցին ի-
րան աշակերտներն էս ամէն բանե-
րիս համար[6]։

19 Իւ յոհաննէս իրան աշակերտ-
ներիցն երկու հոգի կանչեց իրան
մօտ, ուղարկեց Տէրին մօտ եւ ա-
սաց. դո՞ւ ես էն՝ որ պէտք է գաս,
թէ ուրիշն սպասենք։

20 Իւ էն մարդիքն նորա մօտ ե-
կին եւ ասացին. յոհաննէս մկրտիչն
մեզ ուղարկեց քեզ մօտ՝ եւ ասու-
մէ, դո՞ւ ես էն՝ որ պէտք է գաս, թէ
ուրիշն սպասենք։

21 Իւ (Յիսուս) հենց էն ժա-
մումն (ասհաղ-ոմն) շատ մարդկանց
բժշկեց հիւանդութիւններից եւ
չարչարանքից եւ չար դեւերից, եւ
շատ կուրերին տեսնել շնորհեց։

22 Պատասխան տուաւ նորանց եւ
ասաց. գնացէք յոհաննէսին պատ-
մեցէք[7] ինչ որ տեսիք եւ լսեցիք.
թէ կուրերն տեսնումեն, կաղերն
գնումեն, բորոտներն սրբըվումեն,
խուլերն (յառէրն) լսումեն, մեռել-
ներն յարութիւն են առնում[8], աղ-
քատներին աւետարան է քարոզ-
վում[9]։

23 Իւ երանի է նորան՝ որ ինձ
վերայ չի գայթակղվի։

24 Իւ երբոր յոհաննէսի ուղարկ-
ված մարդիքն գնացին, սկսեց ժո-
ղովուրդներին հետ յոհաննէսի հա-
մար խօսել[10]. (դուք) ինչ տեսնե-

[2] Ղ-ա։ ը. 54։ Ցե՛ղ. ժա. 43։ Գործ. թ. 40։ Հռոմ. դ. 17։ [3] Ղ-ա։ ա. 65։ [4] Ղ-ա։ խդ. 19։ Ցե՛ղ. գ. 19։ ը. 14։ թ. 17։ [5] Ղ-ա։ ա. 68։ [6] Մտթ. ժա. 2։ [7] Մտթ. ժա. 5։ [8] Եսայ. լե. 5։ [9] Ղ-ա։ դ. 18։ [10] Մտթ. ժա. 7։

լոյ գուբս գնացիք անապատն, մին նե՞ղ (ալէշ)՝ որ քամուցն շարժը-վուսի։

25 Ա՛պա ի՞նչ տեսնելոյ գուբս գնացիք, մին մա՞րդ փափուկ շո-բերով զարդարված. ահա նորանք՝ որ փառաւոր շորերուսն եւ փափ-կութենուսն են՝ թագաւորներուն պա-լատներուսն են։

26 Ա՛պա ի՞նչ տեսնելոյ գուբս գնացիք, մին մարգարէ՞. իրաւ ա-սուսեմ ձեզ՝ որ մարգարէից էլ ա-ւելի է։

27 Ինչուար՝ սա էն է՝ որ նորա հա-մար գրված է, Թէ ահա իմ հրեշ-տակըս ուղարկուսեմ քո առաջիդ՝ որ քո առաջիդ քո ճանապարհըդ պատ-րաստէ[11]։

28 Ա՛մէնիարն ասուսեմ ձեզ՝ որ կանանց ծնված-ներուն միջուսին ա՛չ ով աւելի մեծ մարգարէ չը՛կայ՝ քան Յոհաննէսն. բայց Աստուծոյ արքա-յութեան միջի փոքրն նորանից մեծ է։

29 Եւ ամէն ժողովուրդն երբոր ես լսեցին՝ եւ մաքսաւորներն (Ա-ղո-վէնէրն), Աստուծոյն արդարացրին. ինչուար՝ Յոհաննէսի մկրտութենովն մկրտվեցան[12]։

30 Ա՛յց փարիսեցիներն եւ օրէնք գիտօղներն Աստուծոյ խորհուրդն անարգեցին իրանց անձներուսն[13]. ինչուար՝ չը՛մկրտվեցան նորանից։

31 Ա՛պա ո՞ւմ նմանեցնեմ ես ազ-գիս մարդիքըն. եւ ո՞ւմ նման են[14]։

32 Նը՛ տղայոց նման են՝ որ փո-ղոցներուսն նստին, իրար կանչին եւ ասեն. փող փչեցինք ձեզ համար՝ եւ պար չեկիք, տուգ արինք՝ եւ լաց չեղաք։

33 Յոհաննէս մկրտիչն եկաւ՝ ո՛չ ուտուսեր եւ ո՛չ խմուսեր, եւ ասուս-սեիք՝ Թէ դեւ կայ նորանուս[15]։

34 Որդին մարդոյ եկաւ՝ ուտուսեր եւ խմուսեր, եւ ասուսեր. ահա ու-տող եւ խմող մարդ՝ մաքսաւորներուն (Ա-ղո-վէնէրն) եւ մեղաւորներուն բարեկամ։

35 Եւ իմաստութիւնն արդարա-ցաւ իրան որդիքներիցն[16]։

36 Փարիսեցիներիցն մին աղա-չուսեր նորան՝ որ հաց ուտէ իրան հետ[17]. եւ մտաւ փարիսեցոյ տունն՝ եւ սեղան նստեց։

37 Եւ էն քաղաքուսն մին մեղա-ւոր կին կար. երբոր իմացաւ, Թէ փարիսեցոյ տանըն սեղան է նստած, մին շիշ (շո-շայ) պատուական իւղ բերաւ.

38 Եւ կայնաւ ետեւիցն նորա ոտաց մօտ կանգնած էր, եւ լաց էր լինուսմ. եւ արտասուներովն նորա ոտներըն սկսեց Թրջել, եւ իրան գլխի մազե-րովն սրբեսեր, եւ նորա ոտներըն համբուրուսեր, եւ իւղովն օծուսեր։

39 Եւ (էն) փարիսեցին՝ որ նո-րան կանչեց, երբոր տեսաւ՝ իրան մտքուսն ասուսեր. սա Թէ որ մին մարգարէ էր, ապա կըգիտէր՝ Թէ ո՞վ կամ ի՞նչպէսի կին է նա՝ որ իրան մտնենուսմ, ինչուար՝ մեղաւոր է[18]։

40 Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. սիմո՛ն՝ մին բան ունիմ ասել քեզ. եւ նա ասաց. ասա վար-դապետ. եւ ասաց.

41 Երկու մարդ պարտական էին մին փոխ տուօղի. մինն հինգ հարիւր դահեկան պարտական էր, եւ մէ-կէլն յիսուն։

42 Եւ երբոր նորանք բան չու-

[11] Մաղ. գ. 1։ [12] Մարկ. գ. 5։ Ղուկ. գ. 12։ [13] Գործ. ի. 27։ [14] Մարկ. ժա. 16։ [15] Մարկ. գ. 4։ Մաթէ. ա. 6։ Ղուկ. ա. 15։ [16] Մաթէ. ժա. 19։ [17] Մարկ. իգ. 6։ Մարկ. ժգ. 3։ Ցո՛ւն. ժա. 2։ [18] Ղուկ. ժ. 2։

Նէին՝ որ վճարեն, երկուսին էլ բաշխեց. հիմիկ ասա՝ նորանցից ո՞վ աւելի կսիրէ նորան:

43 Սիմէոն ասաց. ինձ կսպէս է երեւում, թէ նա՝ որ նորան շատ բաշխեց. եւ նա ասաց նորան. շիտակ դատեցիր:

44 Եւ դարձաւ դէպի կինն, եւ սիմէոնին ասաց. տեսնո՞ւմես էս կինը, քո տունդ մտի՝ իմ ոտքս ջուր չը՛տուիր, բայց սա իրան արտասուքովն իմ ոտներըս թրջեց, եւ իրան մազերովն սրբեց:

45 Դու ինձ համբոյր չը՛տուիր ինձ. սա՝ ահա քանի որ էստեղ եմ մտել՝ իմ ոտներըս համբուրելուցն չը՛դադարեց:

46 Դու իւղով չօծեցիր իմ գլուխը[19]. սա՝ անուշ իւղով օծեց:

47 Վրահամար ասումեմ քեզ. սրա շատ մեղքերն իրան թողված կըլինին, ինչուոր շատ սիրեց[20]. պատճառն որ՝ որին որ շատ կըթողվի՝ նա շատ կըսիրէ, եւ որին որ քիչ՝ նա քիչ:

48 Եւ նորան ասաց. քո մեղքերդ թողված լինին քեզ[21]:

49 Եւ նորանք՝ որ նորա հետ սեղան էին նստած, սկսեցին իրանց մէջերումն ասել. սա ո՞վ է՝ որ մեղք է թողում[22]:

50 Եւ նա ասաց էն կնկանն. քո հաւատքդ ապրեցրուց քեզ՝ գնա խաղաղութեանով[23]:

## ԳԼ. Ը

3 կնիկներն իրանց տպրանքներից Քրիստոսի ծառայութիւն էին անում: 4 Քրիստոս իրան աշակերտներով քաղաքներն ու վիլներն քարոզելուցն ետու սերմ ցանողի. 16 Եւ ճրագի առակն կասէ. 21 Ցոյց կըտայ թէ որո՞նք են իրան մայրն ու եղբայրներն. 22 Քաշ մին սատանեն: 26 Դեւերի լեգէոնն մարդուցն հանելուն եւ նորանց խոզերի երամակումն ուղարկելն. 37 Գերգեսացիքն նորան չեն ընդունում: 43 Արիւն տեսնող կինն կըբժշկէ, 49 Եւ Յայրոսի մեռեալ աղջկն կապրեցնէ:

1 Եւ ետեւից եղաւ՝ որ նա մատն էր գալիս քաղաքներն ու գիւղերն, քարոզելիք եւ Աստուծոյ արքայութիւնըն աւետարանելիք. եւ էն տասներկուքն էլ նորա հետ,

2 Եւ քանի մի կանայք՝ որ չար դեւերից եւ հիւանդութիւններից բժշկված էին[1]. Մարիամն՝ որ մագդաղենացի էր կոչվում, որ նորանից եօթն դեւ էին դուրս եկել[2],

3 Եւ Յովհաննան՝ Հերովդէսի տնտես քուզայի կինն, եւ Շուշանն, եւ շատ ուրիշները, որ իրանց ապրանքներից էին ծառայում նորան:

4 Եւ երբոր շատ ժողովուրդներ հաւաքվեցան, եւ ամէն մէկ քաղաքներից նորա մտ եկին՝ առակով ասաց[3]:

5 Մին սերմ ցանող մարդ դուրս գնաց՝ որ իրան սերմունքըն ցանէ. եւ երբ սերմելիս ժամանակն՝ կար որ ճանապարհի վերայ ընկաւ՝ եւ կոխվեցաւ, եւ երկնքի թռչուններն նորան կլկրին:

6 Եւ մէկելն քարքարուտ տեղ

[19] Ա՛ղ. իգ· 5: [20] ա Տի՛մ· ա· 14: [21] Մ՛ար· ե· 2: Մ՛ար· բ· 5: [22] Մ՛ար· ե· 3: Մ՛ար· բ· 7: [23] Մ՛ար· ե· 23: Մ՛ար· ե· 34: Ժ· 52: Գ՛ոյ· ը· 48: Ժը· 42: [1] Մ՛ար· ի՛ե· 55. 56: [2] Մ՛ար· ժը· 9: [3] Մ՛ար· Ժգ· 2: Մ՛ար· գ· 1:

ընկաւ· եւ բռնեալց ժամանակն՝ չո-
բացաւ հողի պակասութեան պատ-
ճառովն։

7 Եւ մկկէն փըչերի մէջն ընկաւ,
եւ փըչերն նորա հետ բուսան՝ եւ
խեղդեցին նորան։

8 Եւ մկկէն բարի եւ պարարտ
երկրի վերայ ընկաւ· եւ բուսաւ՝ եւ
հարիւրապատիկ պտուղ տուաւ· եր-
բոր էս խօսեց, ասաց· ով որ լսելոյ
ականջ ունի՝ թող լսէ։

9 Աշակերտներն նորան հարց-
նեմէին՝ թէ ի՛նչ է էն առակն[4]։

10 Եւ նա ասաց· ձեզ տրվված է
Աստուծոյ արքայութեան խոր-
հուրդներըն գիտել, բայց ուրիշնե-
րին առակներով, որ տեսնեն՝ եւ չի՛
տեսնեն, եւ լսեն՝ եւ չիմանան[5]։

11 Ա՛յսն թէ առակն էս է·
սերմն Աստուծոյ բանն է[6]։

12 Եւ որ ճանապարհի վերայ են,
նորանք են՝ որ լսումեն· եւ ապա սա-
տանան գալիս է՝ բանըն նորանց սըր-
տիցն հանումէ, որ չը՛հաւատան՝ եւ
ապրին։

13 Եւ որ քարքարուտի վերայ են,
նորանք են՝ որ երբոր լսեն՝ բանըն ու-
րախութեւով ընդունումեն, եւ ար-
մատ (ֆէօտ) չունեն· նորանք մին ժա-
մանակ հաւատումեն, եւ փորձու-
թեան ժամանակումն հետանումեն։

14 Էսպէս էն՝ որ փըշերի մէջն ըն-
կաւ, նորանք են՝ որ երբոր բանըն
լսումեն՝ հոգսերով եւ մեծութեւով
եւ աշխարհքի ցանկութիւններով
ղեռղված՝ խեղդվումեն, եւ պտուղ
չեն տալիս։

15 Էսպէս էն՝ որ պարարտ երկրին
վերայ (ընկաւ), նորանք են՝ որ բարի
եւ յօժար սրտով բանըն լսումեն եւ
ընդունումեն, եւ համբերութեւով
պտուղ են տալիս։

16 Ա՛չ ով ճրագ չի՛ վառիլ եւ ա-
մանի տակ թաքցնիլ՝ կամ մահճիճի
(կրովաթի) տակ դնիլ, բայց ճրա-
գակալի վերայ կըդնէ, որ նորանք՝ որ
ներս են մանում՝ լոյս տեսնեն[7]։

17 Թաղի ծածուկ բան չը՛կայ՝ որ
չը՛յայտնըվի[8]· եւ ոչ թաքուն բան՝
որ չիմացվի, եւ դէպի լոյն գայ։

18 Աւ պա տեսէք՝ թէ գուք ի՛նչպէս
էք լսում· ինչուորՙ ով որ ունի, նո-
րան կըտրվվի, եւ ով որ չունի՝ էն
էլ որ կարծումՙ թէ ունի, նորանից
վեր կառնըվի[9]։

19 Ա՛նորա մայրն եւ նորա եղբայրքն
նորա մօտ եկին[10], եւ չէին կարում
նորա մօտ հասնել (մարդկանց) բազ-
մութեան պատճառովն։

20 Ա՛նորան խնդց արին եւ ասացին·
քո մայրդ եւ քո եղբայրդ դուրսն
կանգնած են՝ եւ ուզումեն քեզ
տեսնել։

21 Եւ նորանց ասաց· իմ մայրս եւ
իմ եղբայրքս սորանք են՝ որ Աստու-
ծոյ խօսքըն լսումեն եւ անում։

22 Եւ էլաւ օրերից մինումՙ որ
ինքն նաւ մտաւ, եւ նորա աշակերտ-
ներն էլ, եւ նորանց ասաց[11]· եկէք
անց կենանք ծովակի էն կողմն· եւ
գնացին։

23 Եւ գեռ որ նաւով գնումէին՝
նա քունն մտաւ· եւ քամի մըրիկ
ընկաւ էն ծովակի մէջ՝ եւ (ծովը)
բարձրանումէր, եւ նեղութեան մէջ
էին։

[4] Մտթ· ԺԳ· 10։ Մրկ· Դ· 10։ [5] Եսայ· Զ· 9։ Մրկ· Դ· 12։ [6] Մտթ· ԺԳ· 18։ Մրկ·
Դ· 14։ [7] Մտթ· Ե· 15։ Մրկ· Դ· 21։ Ղուկ· Ժա· 33։ [8] Մտթ· Ժ· 26։ Ղուկ· Ժը· 2։
[9] Մտթ· ԺԳ· 12։ ԻԵ· 29։ Ղուկ· ԺԹ· 26։ [10] Մտթ· Ժը· 46։ Մրկ· Գ· 31։ [11] Մտթ·
Ը· 23։ Մրկ· Դ· 35։

24 Ա՛օտ եկին, նորան զարհնացըրին եւ ասացին. վարդապետ վարդապետ՝ ա՛ջա՛ կորչումենք. եւ նա վերկացաւ, եւ քամոյն եւ ջրի ալէկոծումեանն սաստեց՝ եւ հանդարտեցին, եւ խաղաղութիւն էլաւ:

25 Ա՛սաց նորանց. ի՞նչ սեղ է ձեր հաւատքն. եւ նիստ վախեցած զարմացան, եւ իրար ասումէին. սա ո՞վ պիտի լինի՝ որ քամիներին եւ ջերին հրաման է տալիս, եւ հնազանդվումեն սորան:

26 Եւ նաւով գնացին, հասին գերգեսացոց աշխարհքն[12] որ էն կողմն է գալիլեայի դիմացն:

27 Եւ երբոր նա դուրս էր գալիս ցամաքն, քաղաքիցն մին մարդ պատահեց նորան՝ որ նորանում դեւեր կային. եւ շատ ժամանակ շոր չէր հագած՝ եւ ոչ տան մէջ բնակված, այլ գերեզմաններումն:

28 Եւ Յիսուսին որ տեսաւ, աղաղակեց եւ նորա առաջին ընկաւ, եւ բարձր ձայնով ասաց. քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ՝ Յիսուս բարձրէլ Ա՛ստուծոյ որդի. աղաչումեմ քեզ՝ մի տանջեր ինձ:

29 Պատճառնոր՝ նա պիղծ դեւին հրաման էր տալիս՝ որ էն մարդուցն դուրս գայ. ինչուոր՝ շատ անգամ յափշտակել էր նորան, եւ շղթաներով (պընդկընդով) կապվումէր, եւ երկաթների մէջ պահվումէր, եւ նա կապանքներըն կտրումէր, եւ դեւից քաշվումէր անապատ տեղ:

30 Յիսուս նորան հարցրուց՝ եւ ասաց. քո անունդ ի՞նչ է. եւ նա ասաց, լեգէօն, ինչուոր՝ շատ դեւեր էին մտած նորա մէջ:

31 Եւ աղաչումէին նորան՝ որ չը֊հրամայէ նորանց գնալ անդունդն[13]:

32 Եւ հետեղ շատ խոզերի մին երամակ (պ֊ղ֊ա) կար՝ որ էն սարին վերայ արածումէին, եւ աղաչեցին նորան՝ որ հրաման տայ իրանց մըտնել նորանց մէջ. եւ հրամայեց նորանց:

33 Եւ դեւերն էն մարդուցն դուրս եկին՝ եւ խոզերին մէջ մտին, եւ երամակն էն բարձր տեղից վազեց ծովակին մէջ՝ եւ խեղդվեցաւ:

34 Երբոր խոզաբածներն տեսին էն բաներըն՝ որ էլան, փախան, եւ էն քաղաքի եւ շէնների մէջն պատմեցին:

35 Եւ երբոր (մարդիք) դուրս էլան էն բաներըն տեսնելոյ, եւ Յիսուսի մոտ եկին, էն մարդըն գտին՝ որ նորանից դեւերն դուրս էին եկել, որ հագված եւ խելքն գլուխն եկած՝ Յիսուսի ոտներին մոտ նըստած էր. եւ վախեցան:

36 Նորանք՝ որ տեսել էին, պատմեցին նորանց, թէ ինչպես փրկվեցաւ էն դիւահարն:

37 Եւ գերգեսացոց պէն չորս կողմերն էլած մարդիքն աղաչումէին[14] նորան՝ որ իրանց սահմաններից գնայ[15], պատճառն որ՝ սաստիկ ահով եւ վախով բռնըված էին. եւ նա նաւ մտաւ՝ եւ յետ գարձաւ:

38 Էն մարդն՝ որ նորանից դեւերն դուրս էին եկել, նորան աղաչումէր՝ որ նորա հետ մեն գայ[16]. արձակեց նորան՝ եւ ասաց.

39 Դարձիր քո տունդ, եւ պատմիր ամէն՝ ինչ որ Ա՛ստուած քեզ արաւ. նա գնաց քաղաքն՝ եւ քարոզումէր ինչ որ Յիսուս իրան արաւ:

40 Եւ երբոր Յիսուս յետ դարձաւ, ժողովուրդն ընդունեց նորան. ինչուոր՝ ամէնքն էլ սպասումէին նո֊

[12] Մարկ. ը. 28։ Մատթ. ԺԶ. 1։ [13] Ցայտ. ԻԶ. 3։ [14] Մարկ. ը. 34։ [15] Գործ. ԺԶ. 39։ [16] Մատթ. Ը. 18։

բան։

41 Եւ ահա մին մարդ եկաւ՝ որ նորա անունն Յայրոս էր, եւ նա ժողովարանի իշխան էր[17]. Յիսուսի առներն ընկած՝ աղաչեաց նորան, որ իրան տունն մտնէ։

42 Ինչուորՙ մին միածնունդ աղջիկ ունէր, իբր տասներկու տարեկան, եւ նա մեռնելոյ մօտ էր։ Եւ նորա գնալոյ ժամանակՙ ժողովուրդն նեղացնում էին նորան։

43 Եւ մին կին կարՙ արիւն թափելոյ հիւանդութեան մէջ տասներկու տարուց՝ որ իրան ամէն ապրանքն բժշկներին էր տուել՝ փըճացրել[18], որ նորան հնար չէր եղած՝ մինիցն բժշկվելոյ։

44 Այս մօտ եկաւ, եւ եռուիցըն նորա շորի ծայրերին (ՓՆՂԷՐԻՆ) դիպաւ. եւ շուտով հենց էն ժամումն (ՕՐԻՆԱՒՈՒՄՆ) նորա արունի վազելն դադարեց։

45 Եւ Յիսուս ասաց. ո՞վ է՝ որ ինձ դիպաւ. երբոր ամէնքն ուրանում էին, պետրոս եւ նորանք՝ որ նորա հետ էին՝ ասացին. վարդապետՙ ժողովուրդներդ պնդումն եւ նեղացնումն քեզ։

46 Եւ Յիսուս ասաց. մինն դիպաւ ինձ. ինչուորՙ իմացայ՝ որ զօրութիւն դուրս եկաւ ինձանից[19]։

47 Երբոր կինն տեսաւ՝ որ չըծածկվեցաւ նորանից, դողալով եկաւ՝ եւ նորա առաջին ընկաւ, եւ ամէն ժողովրդի առաջին պատմեց՝ թէ ինչ բանի համար նորան դիպաւ, եւ թէ ինչպէս հենց էն ժամումն բժշկվեցաւ։

48 Եւ (նա) ասաց. սրտապինդ կաց դուստր՝ քո հաւատքդ ողջացրուց քեզ, գնա խաղաղութեամբ։

49 Եւ դեռ որ նա խօսումէր, էն ժողովրդապետի տանիցն մին մարդ եկաւ, եւ նորան ասաց[20]. քո աղջիկդ մեռաւ, էլ դորան մի աշխատացնիր։

50 Բայց Յիսուս երբոր լսեց, նորան պատասխան տուաւ եւ ասաց. մի վախենար, միայն հաւատա՝ եւ նա կապրի։

51 Եւ տունն որ մտաւ՝ իսկի մըներին չըթողեց որ մտնէ, բայց միայն պետրոսին, եւ յակօբին եւ յօհաննէսին, եւ երեխայի հօրն եւ նորա մօրն։

52 Ըմէնքն լաց էին լինում՝ եւ նորա վերայ սուգ էին անում. եւ նա ասաց, լաց մի լինիք, ինչուորՙ մեռած չէ, այլ քնած է[21]։

53 Եւ նորանք ծաղր էին անում նորան, ինչուորՙ գիտումէին, որ մեռաւ։

54 Եւ նա ամէնին դուրս հանեց,

55 Նորա ձեռքին բռնեց, խօսեց եւ ասաց. ովՙ երեխայՙ վերկաց[22],

56 Եւ նորա հոգին դարձաւ, եւ շուտով կանգնեց. եւ հրամայեց՝ որ նորան բան տան ուտելոյ։

57 Եւ նորա ծնօղքն զարմացան. եւ նա պատուիրեց՝ որ իսկի մէնին չասեն էն՝ ինչ որ եղաւ[23]։

[17] Մատթ. թ. 18։ Մարկ. ե. 22։ [18] Մատթ. թ. 20։ [19] Մարկ. ե. 30։ Ղուկ. զ. 19։ [20] Մարկ. ե. 35։ [21] Յովհ. ժա. 11, 13։ [22] Ղուկ. է. 14։ Յովհ. ժա. 43։ [23] Մատթ. ը. 4։ Թ. 30։ Մարկ. ե. 43։

## ԳԼ· Թ

1 Առաքեալներն հրաւէր գործելոյ եւ քարոզելոյ կուղարկվին։ 7 Հերովդէս Ցիսուսի խնդրումն որ առնէ։ 17 Քրիստոս հինգ հազար մարդկանց կերակրացնէ։ 18 Կը հարցնէ աշակերտներէն թէ ժողովուրդն իրեն համար ո՛վ են ասում։ 22 Իրեն շարչարանքներն առաջուց կասէ։ 23 Նորանց առաջին գնումէ որ իրեն եռեւէն գնացողներն իրենց անձնը ուրանան եւ իրենց խաչն առնուն եւ իրեն գնան։ 28 Իրեն կերպարանքի փոխուելին։ 37 Լուսնոտն կը բժշկէ։ 43 Մինել կրկնօսք իրեն աշակերտներին՝ իրեն քարեղոյ շարչարանքներին վերայ։ 46 Իրեն աշակերտներին խնարհութիւն կը քարոզէ, 51 եւ պատուէր կուտայ նորանց որ ամէն մարդ սիրեն, եւ ոխ հանող չըլինին։ 57 Մին քանի մարդ մին մին պատճառով Քրիստոսի եռեւէն գնալ են ուզում։

1 Եւ տասներկու առաքեալներն կանչեց, եւ նորանց զօրութիւն եւ իշխանութիւն տուաւ ամէն դեւերին վերայ, եւ հիւանդութիւններ բժշկելոյ[1]։

2 Եւ նորանց ուղարկեց՝ որ քարոզեն թագաւորութեան աղբայրութիւնն, եւ զաւադարներըն բժշկեն[2]։

3 Եւ նորանց ասաց. իսկի մին բան վեր չառնէք ճանապարհի համար. ո՛չ գաւազան, ո՛չ պարկ, ո՛չ հաց եւ ո՛չ արծաթ, երկու հագուստ էլ չունենաք[3]։

4 Եւ որ տուն որ մտնէք՝ էնտեղ մնացէք, եւ էնտեղիցըն գնացէք[4]։

5 Եւ նորանք՝ որ ձեզ չընդունեն[5], երբոր էն քաղաքիցն դուրս կըգնաք, ձեր ոտների փոշին թափ տուէք՝ որ նորանց վկայութիւն լինի[6]։

6 Եւ դուրս գնացին եւ ման էին գալես քաղաքներն եւ գիւղերն՝ աւետարանըն քարոզումին, եւ ամէն տեղ բժշկութիւն էին անում[7]։

7 Հերովդէս չորրորդապետըն էն ամէն գործքերըն լսեց[8]. եւ զարմանում էր նորա համար՝ որ մին քանիսն ասում էին,

8 թէ Յովհաննէսն մեռելների միջիցն յարութիւն առաւ, եւ մին քանիսն՝ թէ եղիան յայտնըվեցաւ՝ եւ ուրիշներն՝ թէ առաջին մարգարէներից մինն յարութիւն առաւ։

9 Եւ Հերովդէսն ասաց. Յովհաննէսի գլուխըն ես կարեցի. բայց սա ո՞վ է՝ որ նորանից էսպէսի բաներ եմ լսում. եւ խնդրում էր, որ տեսնէ նորան[9]։

10 Առաքեալներն դարձան եւ պատմեցին նորան՝ ամէն ինչ որ արին[10]. եւ նորանց առաւ՝ գնաց առանձին մին անապատ (Հօր) տեղ, մին քաղաքի մօտ՝ որ նորա անունն բեթսայիդա էր[11]։

11 Եւ ժողովուրդներն երբոր գիտացին, նորա եռեւէն գնացին. եւ նորանց ընդունեց եւ նորանց հետ Աստուծոյ արքայութեան համար խօսում էր, եւ նորանց՝ որ բժշկութեան կարօտ էին՝ բժշկում էր։

12 Եւ օրն սկսեց մթնել. տասներկուքն մօտ եկին եւ նորան ասացին. թող արա էդ ժողովուրդըդ, որ չորս կողմով էլած գիւղերն եւ շէնքերն գնան, հանգիստ առնեն, եւ

[1] Մտթ. ժ· 1։ Մրկ· գ· 13։ ղ· 7։ [2] Մտթ· ժ· 7, 8։ Մրկ· ղ· 13։ Ղտ։ ժ· 1, 9։ [3] Մտթ· ժ· 9։ Մրկ· ղ· 8։ Ղտ։ ժ· 4։ իբ· 35։ [4] Մտթ· ժ· 11։ Մրկ· ղ· 10։ [5] Մտթ· ժ· 14։ [6] Գործ· ժգ· 51։ [7] Մրկ· ղ· 12։ [8] Մտթ· ժգ· 1։ Մրկ· ղ· 14։ [9] Ղտ։ իգ· 8։ [10] Մրկ· ղ· 30։ [11] Մտթ· ժդ· 13։

կերակուր գտնեն՝ ինչուոր՝ Էստեղ անտապատ տեղում ենք[12]։

13 Ասրանց ասաց. դուք տուէք դորանց ուտել. եւ նորանք ասացին. մենք հինգ հատ հացից եւ երկու ձկնից աւելի բան չունինք, եթէ ոչ՝ գնանք էդ ժողովրդիդ համար բաւական կերակուր գնենք։

14 Ինչուոր՝ հինգ հազարի չափ մարդիկ էին. աշակերտներին ասաց. նստացրէք դորանց դաս դաս՝ հիսուն հիսուն։

15 Էնպէս արին, եւ ամենին նստացրին։

16 Էն հինգ հացըն եւ երկու ձուկըն առաւ, դէպի երկինքն նայեց, օրհնեց եւ կոտրեց, եւ տալիս էր աշակերտներին՝ որ քցեն ժողովրդին։

17 Ամենքն կերին եւ կշտացան. եւ կտորների փշրանքներըն վերկացան՝ տասներկու քոդոց։

18 Էլաւ՝ երբոր նա առանձին աղօթք էր անում՝ նորա աշակերտներն էլ նորա հետ էին. հարցրուց նորանց եւ ասաց. ժողովուրդներն ինձ համար ով են ասում՝ որ լինիմ[13]։

19 Էնորանք պատասխան տուին եւ ասացին. յօհաննէս մկրտիչն[14], եւ ուրիշներն՝ (թէ) եղիան, եւ ուրիշներն՝ թէ առաջին մարգարէներից մինն յարուեիւն առաւ։

20 Ասրանց ասաց. դուք ով էք ասում ինձ համար՝ որ լինիմ. պետրոսն պատասխան տուաւ եւ ասաց. Աստուծոյ Քրիստոսն[15]։

21 Էյա ասաւեց նորանց, եւ պատուիրեց՝ որ էն իսկի մէնեին չասեն[16]։

22 Էյս ասաց՝ թէ պէտք է, որ որդին մարդոյ շատ չարչարվի եւ ահ նարդվի քահանայապետներից եւ ծերերից եւ կարպացօղներից, եւ սպանվի՝ եւ երեք օրումն յարութիւն առնի[17]։

23 Էյս ամենին ասում էր, թէ որ մինն կամենում իմ ետեւէս գալ՝ թող իրան անձըն ուրանայ՝ եւ ամեն օր իրան խաչըն առնի՝ եւ իմ ետեւէս գայ[18]։

24 Պատճառնոր՝ ով որ կամենայ իրան անձըն ապրեցնել՝ կըկորցնի նորան. եւ ով որ իրան անձըն կըկորցնի ինձ համար՝ կապրեցնի նորան։

25 Էնէ օգուտ է մարդոյ՝ որ աշխարհքըս ստանայ, եւ իրան անձըն կորցնի, կամ (նորան) վնաս տայ[19]։

26 Էնէրուր՝ ով որ ինձ եւ իմ խոսքերըս ամօթ կըհամարի՝ որդին մարդոյ էլ նորան ամօթ կանի՝ երբոր իրան եւ հօր եւ սուրբ հրեշտակների փառքովն կըգայ[20]։

27 Էդայց ուղղորդըն ասում եմ ձեզ. թէ էստեղ կինօղներից մին քանի կան, որ մահ չեն տեսնիլ, մինչեւ որ Աստուծոյ արքայութիւնըն տեսնեն[21]։

28 Էյս էլաւ՝ որ ութ օրի չափ էս խոսքերից ետեւ, պետրոսին եւ յակոբին եւ յօհաննէսին առաւ՝ եւ վեր էլաւ մին սար աղօթք անելոյ[22]։

29 Էյս նորա աղօթք անելոյ ժամանակն՝ նորա երեսի կերպարանքն ուրիշ կերպ էլաւ. եւ նորա հագուստն փոխվեցաւ՝ եւ սպիտակ

[12] Մատթ. ԺԴ. 15։ Մարկ. Զ. 35։ Ճոխ. Ղ. 1, 5։ [13] Մատթ. ԺԶ. 13։ Մարկ. Ը. 27։ [14] Մատթ. Ժդ. 2։ Ա Էր. 7, 8։ [15] Մատթ. ԺԶ. 16։ Ճոխ. Ղ. 69։ [16] Մատթ. Ժ. 20։ [17] Մատթ. Ժզ. 21։ Ժէ. 22։ [18] Մատթ. Ժ. 38։ Ժզ. 24։ Մարկ. Ը. 34։ Ղուկ. Ժդ. 27։ [19] Մատթ. Ժզ. 26։ Մարկ. Ը. 36։ [20] Մատթ. Ժ. 33։ Մարկ. Ը. 38։ Բ Տիմ. Բ. 12։ [21] Մատթ. ԺԶ. 28։ Մարկ. Թ. 1։ [22] Մատթ. Ժէ. 1։ Մարկ. Թ. 2։

փայլուն էլաւ։

30 Եւ ահա երկու մարդ խօսուեցան ընդ նմա հետ, որ նորանք մօսէան եւ եղիան էին,

31 փառօվ երեւեցան՝ եւ նորա վախճանին համար խօսուէին՝ որ եւ բուսաղէմում պէտք էր կատարէր։

32 Իսկ պետրոն եւ նորանք՝ որ նորա հետ էին՝ որ քնով ծանրացած էին, զարթնացան՝ տեսին նորա փառքըն, եւ էն երկու մարդըն՝ որ նորա մօտ կանգնած էին[23]։

33 Եւ էլաւ երբոր նորանք հեռանումէին նորանից, պետրոն ասաց Յիսուսին. վարդապետ՝ լաւ է որ մենք հոտեղ կենանք, եւ երեք տաղաւար (շաթըր) շինենք, մինըն քեզ համար. եւ մինըն մօսէսին եւ մինըն եղիային. եւ չէր գիտում՝ թէ ինչ էր խօսում։

34 Եւ երբոր էս ասաց, մին ամպ եկաւ եւ նորանց վերայ շուաք արաւ. եւ վախեցան, երբոր էն ամպին մէջ մտին։

35 Ձայն էլաւ ամպիցն եւ ասաց. դա է իմ ընտրված որդին[24] դորան ականջ դրէք[25]։

36 Եւ էն ձայնն որ էլաւ՝ Յիսուս մենակ գտաւ, եւ նորանք լուռ կացան եւ էն օրերումն խոկի մին մարդ չը պատմեցին էն բաներիցն՝ որ տեսին[26]։

37 Եւ էլաւ էգուցվան օրումըն՝ երբոր էն սարիցն վէր էին գալիս՝ շատ ժողովուրդ նորա առաջն եկաւ[27]։

38 Եւ ահա էն ժողովրդիցն մին մարդ աղաղակեց եւ ասաց. վարդապետ՝ աղաչումեմ քեզ, մտիկ տուր իմ որդուց. ինչուր՝ միածնուդ է ինձ։

39 Եւ ահա դեւ բռնումէ նորան, եւ յանկարծ գոռգոռումէ՝ եւ նորան դեանով է տալիս, եւ թաւալացնումէ նորան եւ փրփրացնումէ, եւ դըժուար թէ նորան կոտրատելուցըն հետեւ հեռանումէ նորանից։

40 Եւ քո աշակերտներին աղաչեցի, որ հանեն նորան, եւ չըկարացին։

41 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. ով անհաւատ եւ ծուռ ազգ, մինչեւ երբ ձեզ հետ պիտի լինիմ եւ համբերեմ ձեզ. քո որդին էստեղ բեր։

42 Եւ դեռ որ մօտ էր գալիս, դեւն գետնով զարկեց նորան՝ եւ շատ սաստիկ շարժեց։

43 Յիսուս սաստեց պիղծ դեւին, եւ աղային բժշկեց. եւ նորան տուաւ իրան հօրն։

44 Եւ ամէնքն զարմանումէին Աստուծոյ մեծամեծ գործքերին վերայ. եւ դեռ որ ամէնքն զարմանումէին էն ամէն բաներին վերայ՝ որ անումէր, իրան աշակերտներին ասաց. էս բաներըս դրէք դուք ձեր ականջներն[28]. որ որդին մարդոյ մարդկանց ձեռքն պիտի մատնըվի։

45 Եւ նորանք չէին գիտում էն բանըն եւ ծածկված էր նորանցից՝ որ չը գիտեենան[29]. եւ վախումէին հարցնել նորան էն բանին համար։

46 Վէճ խորհուրդ մտաւ նորանց մէջ՝ թէ նորանցից ո՞վ լինի մեծն[30]։

47 Յիսուս երբոր նորանց սրտերի մտածմունքներըն իմացաւ՝ մին երեխայ առաւ եւ նորանց մէջումն կանգ-

[23] Դտ. ը·18։ ժ·9։ [24] Մտթ. դ·17։ [25] Գ-րք·գ·22։ [26] Մտթ. ժէ. 9։ [27] Մտթ. ժէ. 14։ Մրկ. թ. 14, 17։ [28] Մտթ. ժէ. 22։ [29] Մրկ. թ·32։ Ղտ. ը·50։ ժը·34։ [30] Մտթ. ժը·1։ Մրկ. թ·34։

Նացրուց իրան մօտ ,

48 Ու նորանց ասաց. ով որ էս երեխային կընդունի իմ անունովս՝ ինձ կընդունի[31]. եւ ով որ ինձ կընդունի՝ իմ ուղարկողին կընդունի. պատճառն որ՝ ով որ ձեր ամենիդ մէջն շատ փոքրն է՝ նա մեծ կը լինի[32]:

49 Յօհաննէսն պատասխան տուաւ եւ ասաց[33]. վարդապետ՝ մինը տեսինք՝ որ քո անունովդ դեւեր էր հանում՝ եւ արգելեցինք նորան, ինչուոր՝ մեզ հետ սան չէր գալիս:

50 Յիսուս նորանց ասաց. մի արգելէք նորան. պատճառն որ՝ ով սր ձեր հընամի չէ՝ ձեր կողմն է[34]:

51 Ու էլաւ՝ երբոր նորա վերանալոյ օրերն կատարվումէին[35], եւ ինքն երեսն հաստատեց՝ որ գնայ երուսաղէմ:

52 Ու իրան երեսի առաջին պատգամաւորներ ուղարկեց՝ եւ երբոր գնացին՝ սամարացոց մին գիւղ մտին՝ որ նորա համար բան պատրաստեն:

53 Ու չընդունեցին նորան. ինչուոր՝ իրան երեսն դրած էր՝ որ երուսաղէմ գնայ[36]:

54 Երբոր յակոբոս եւ յՀաննէս աշակերտներն տեսին՝ ասացին. Տէր՝ կուզամենաս՝ որ ասենք, եւ կրակ վերդայ երկնքիցն՝ եւ նորանց սատակէ[37]:

55 Դարձաւ՝ սատեց նորանց եւ ասաց. չէք գիտում՝ թէ ո՛ր հոգոյ էք դուք:

56 Պատճառներ՝ որդին մարդոյ չեկաւ՝ որ մարդկանց հոգիներն կորցնէ, այլ որ ապրեցնէ[38]. եւ գընացին ուրիշ գիւղ:

57 Ու գնա որ ճանապարհումն գնումէին՝ մին մարդ նորան ասաց. ես էլ քո ետեւէդ կըգամ՝ որ տեղ որ գնաս[39]:

58 Յիսուս նորան ասաց. աղուէսներն բուն ունին, եւ երկնքի թռչուններն դադարելոյ տեղ՝ եւ որդին մարդոյ տեղ չունի՝ որ իրան գլուխն գնէ:

59 Ա՛յն ուրիշին ասաց՝ իմ ետեւէս ե՛կ. եւ նա ասաց. Տէր հրամա՛ն տուր՝ որ գնամ առաջ իմ հայրըս թաղեմ[40]:

60 Յիսուս նորան ասաց. թո՛ղ մեռելներին՝ որ իրանց մեռելներն թաղեն. եւ դու գնա՝ Աստուծոյ արքայութիւնն պատմի՛ր:

61 Ա՛յն ուրիշն էլ ասաց. Տէր՝ քո ետեւէդ կըգամ. միայն թէ առաջ հրամա՛ն տուր ինձ, որ իմ տանս բարեւ մնա անեմ[41]:

62 Յիսուս նորան ասաց. ո՛չ ով՝ որ ձեռն մաճի վերայ քցէ՝ եւ յետ նայի՝ Աստուծոյ արքայութեան հաւոր յաջողված չէ:

[31] Մտթ. ժ. 40։ Ժբ. 5։ Մրկ. Թ. 37։ Ցհն. ժբ. 44։ ժգ. 20։ [32] Մտթ. իգ. 11. 12։ [33] Թուոմ. ժա. 28։ Մրկ. Թ. 38։ [34] Մտթ. ժբ. 30։ Դեւ. ժա. 23։ [35] Մրկ. ժզ. 19։ Գործ. ա. 2։ [36] Ցհն. դ. 4. 9։ [37] գ Թագ. ա. 10. 12։ [38] Ցհն. գ. 17։ ժբ. 47։ [39] Մտթ. ը. 19։ [40] Մտթ. ը. 21։ [41] գ Թագ. ժԹ. 20։

## ԳԼ · Ժ

1 Քրիստոս եօթանասուն եւ երկու աշակերտներ էլ կուղարկէ որ նորանք հրաշք անեն եւ քարոզեն, 17 Նորանց խրատ կըտայ որ խոնարհ լինին, եւ թէ որ բանի համար պէտք է որ նորանք ուրախ լինին. 21 Շնորհակալ կըլինի իրան Հօրից որ ես խորհուրդն աղայոց յայտնեց. 23 Իրան նկատողացյ վիճակին երանի կըտայ. 25 Օրէնքը գիտօղին կըսովորցնէ թէ յաւիտենական կեանքը ի՞նչպէս պիտի ժառանգէ, եւ իրան պէտք է որ ամէն կարօտ էլղներին ողորմութիւն անէ իրան ընկերներին պէս: 41 Մարթան սաստուէ եւ նորա քոյր Մարիամն գովուէ:

1 Ա յնից ետեւ Տէրն ուրիշ եօթանասուն եւ երկու հոգի էլ կարգեց, եւ նորանց երկու երկու իրան առաջին ուղարկից էն ամէն քաղաքներն եւ տեղերն՝ որ տեղ որ ինքն պէտք էր գնայ[1]:

2 Յե նորանց ասաց. Հունձքն շատ է, եւ մշակներն քիչ[2]. ուրեմն աղաչեցէք Տիրոջն՝ որ մշակներ ուղարկէ իրան հունձքն[3]:

3 Գնացէք. ահա ուղարկուիմ ձեզ ինչպէս գառներ գայլերի մէջ[4]:

4 Ա եր մի առնէք ո՛չ քսակ, ո՛չ պարկ, ո՛չ կօշկին եր[5]. եւ ճանապարհումն իսկի մէնին բարեւ չը՛տաք[6]:

5 Ո՛ր տուն որ մտնէք՝ առաջ ասացէք՝ Թէ ողջոյն էս տանս[7]:

6 Թէ որ էնտեղ ողջոյնի որդի լինի, ձեր ողջոյնն նորա վերայ կըմնայ. ապա Թէ չէ՝ յետ կըդառնայ դէպի ձեզ:

7 Յե էն տանն մնացէք[8], նորանցից կերէք եւ խմեցէք[9]. ինչուր՝ մշակն իրան վարձքին արժանի է[10]. տանից տուն մի փոխվիք:

8 Ո՛ր քաղաք որ մտնէք՝ եւ ձեզ ընդունին, կերէք՝ ինչ որ կըդնեն ձեր առաջին:

9 Յե հիւանդներին՝ որ էնտեղ լինին՝ բժշկեցէք[11]. եւ նորանց ասացէք՝ (Թէ) Յաստուծոյ արքայութիւնն մօտացել է ձեզ վերայ[12]:

10 Ա յց որ քաղաք որ մտնէք, եւ ձեզ չընդունին՝ երբոր դուրս գաք նորա բաց փողոցներն՝ ասացէք.

11 Յա փոշին էլ՝ որ ձեր քաղաքիցն մեր ոտներիս է կպել՝ Թափ ենք տալիս ձեզ վերայ[13]. միայն Թէ էս գիտացէք, որ Յաստուծոյ արքայութիւնն մօտացել է:

12 Յասումէ ձեզ՝ որ սոդոմացոց համար աւելի հեշտ կըլինի էն օրումն՝ քանեմէ էն քաղաքին համար[14]:

13 Վ ա՛յ քեզ քորազին. վա՛յ քեզ բեթսայիդա[15]. պատճառն որ՝ եթէ տիւրոսի եւ սիդոնի մէջն էլած էին էն զօրութիւնները՝ որ ձեր մէջն էլան՝ շատ առաջուց քըրձի (խոպ չոքն) եւ մոխրի մէջ նստած ապաշխարել էին[16]:

[1] Մատթ. ժ. 1: Մարկ. զ. 7: [2] Մատթ. թ. 37, 38: Յովհ. դ. 35: [3] ա Թես. գ. 1: [4] Մատթ. ժ. 16: [5] Մատթ. ժ. 9, 10: Մարկ. զ. 8: Ղուկ. թ. 3: [6] գ Թագ. դ. 29: [7] Մատթ. ժ. 12: [8] Մատթ. ժ. 11: [9] ա Կորնթ. ժ. 27: [10] Մատթ. ժ. 10: ա Կորնթ. թ. 4: Ա՛ստ. ա Տիմ. ե. 18: [11] Ղուկ. թ. 2: [12] Մատթ. դ. 2: դ. 17: ժ. 7: Մարկ. 11: [13] Մատթ. ժ. 14: Ղուկ. թ. 5: Գործ. ժգ. 51: ժը. 6: [14] Մատթ. ժ. 15: Մարկ. զ. 11: [15] Մատթ. ժա. 21: [16] Եսայ. դ. 6:

14 Ոչայց տիւրտի եւ սիգօնի համար աւելի հեշտ կը լինի գատաստանի օրումն՝ քանիմէ ձեզ համար։

15 Իւ դուն կախառնայուս[17] որ մինչեւ երկինքն բարձրացած ես[18]՝ մինչեւ դժոխքն պիտի վէր գաս[19]։

16 Ով որ ձեզ կը լսէ՝ ինձ կը լսէ[20], եւ ով որ ձեզ կանարգէ՝ ինձ կանարգէ[21], եւ ով որ ինձ կանարգէ, ինձ ուղարկողին կանարգէ[22]. եւ ով որ ինձ կը լսէ՝ նորան կը լսէ, որ ինձ ուղարկեց։

17 Իյն եօթանասուն եւ երկուքն ուրախութիւնով յետ դարձան եւ ասացին[23]. Տէր՝ դեւերն էլ հնազանդվումեն մեզ քո անունովդ։

18 Իւ նորանց ասաց. տեսնումի սատանային, որ կայծակի պէս երկնքիցն վէր էր ընկնում[24]։

19 Իյա իշխանութիւն տուի ձեզ՝ որ օձերը եւ կարիճները եւ թշնամոյ ամէն զօրութիւնըն կոխէք, եւ ձեզ խիկի վնաս չանեն[25]։

20 Մ՚իայն թէ՝ նորա համար մի՛ ուրախանաք՝ որ դեւերըն հնազանդվումեն ձեզ՝ բայց ուրախացէ՛ք՝ որ ձեր անուններն երկնքումն գրված են[26]։

21 Ի նոյն էն ժամումն (սահլեսդին) Յիսուս սուրբ Հոգովն ցնծացաւ եւ ասաց. դոհանումեմ քեզանից ով Հայր՝ երկնքի եւ երկրի Տէր, որ իմաստուններիցն եւ գիտուններիցն էս բանըս ծածկեցիր եւ տղայոցն յայտնեցիր սրան. իրաւի ով Հայր. ինչուր՝ էսպէս հաճոյ էլաւ քո առաջիդ[27]։

22 Իամէն բան տըվաւ ինձ իմ Հօրիցս[28]. եւ ոչ ով չի գիտում՝ թէ ով է որդին՝ բայց միայն Հայրն. եւ թէ ով է Հայրն՝ բայց միայն որդին, եւ ում որ որդին կամենայ յայտնել[29]։

23 Իւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝ եւ ասաց. երանի է էն աչքերին՝ որ տեսնումեն էն՝ որ դուք տեսնումէք[30]։

24 Իասումեմ ձեզ՝ թէ շատ մարգարէներ եւ թագաւորներ կամեցան տեսնել էն՝ որ դուք տեսնումէք. եւ չը՚տեսին[31]. եւ լսել էն՝ որ դուք լսումէք, եւ չը՚լսեցին։

25 Իւ ահա մին օրէնիք գիտօղ վերկացաւ՝ նորան փորձումէր եւ ասում. վարդապետ՝ ինչ պիտի անեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ[32]։

26 Իւ նա ասաց նորան. օրէնքումն ինչ է գրված, ինչպէս ես կարդում։

27 Ի՚նա պատասխան տուաւ եւ ասաց. սիրիր քո Տէր Աստուածդ քո ամէն սրտովդ, քո ամէն անձնովդ, քո ամէն զօրութիւնովդ, եւ քո ամէն մտքովդ[33]. եւ քո ընկերդ քո անձին պէս[34]։

28 Իւ նորան ասաց. շիտակ պատասխան տուիր՝ էդ արա՛ եւ կապրիս[35]։

29 Ի՚նա՝ որովհետեւ կամեցաւ իրան անձըն արդարացնել՝ Յիսուսին ասաց. եւ իմ ընկերս ո՞վ է[36]։

---

[17] Մտթ. ժա. 23։ [18] Ծննդ. ժա. 4։ բ Օրէն. ա. 28։ Եսայ. ժդ. 13։ Երեմ. ծա. 53։ [19] Եզէկ. իզ. 20։ լբ. 18։ [20] Մտթ. ժ. 40։ Մրկ. թ. 37։ Ցուղ. ժգ. 20։ [21] ա Թես. դ. 8։ [22] Ցուղ. ե. 23։ [23] Ղկ. ժ. 1։ [24] Ցուղ. ժբ. 31։ ժզ. 11։ Ցայտ. թ. 1։ ժբ. 8, 9։ [25] Մրկ. ժզ. 18։ Գործ. իբ. 5։ [26] Եբ. լբ. 32։ Սաղմ. կճ. 28։ Եսայ. գ. 3։ Դան. ժբ. 1։ Փիլիպ. դ. 3։ Եբր. ժբ. 23։ Յայտ. ժգ. 8։ ի. 12։ իա. 27։ [27] Մտթ. ժա. 25։ [28] Մտթ. իբ. 18։ Ցուղ. գ. 35։ ե. 27։ ժէ. 2։ [29] Ցուղ. ա. 18։ զ. 44, 43։ [30] Մտթ. ժգ. 16։ [31] ա Պետր. ա. 10։ [32] Մտթ. ժի. 16։ իբ. 35։ [33] բ Օրէն. զ. 5։ [34] Ղեւտ. ժի. 18։ [35] Ղեւտ. ժբ. 5։ Ն ԻՒՐ. թ. 29։ Եզէկ. ի. 11, 13, 21։ Հռովմ. ժ. 5։ [36] Ղեւտ. ժզ. 15։

30 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. մին մարդ երուսաղէմիցն վէր էր գալիս երիքովՙ եւ աւազակներուն ձեռքն ընկաւ՝ որ մերկացուցին նորան՝ եւ խոցեր դրին նորա վերայ, կիսամահ թողլին եւ գնացին:

31 Պատահեց՝ որ մին քահանայ հենց էն ճանապարհովն գնումէր՝ եւ նորան տեսաւ՝ (թողեց) անցկացաւ[37]:

32 Նմանապէս էլ մին ղեւտացի հենց էն տեղն եկաւ, տեսաւ եւ անցկացաւ:

33 Սրին սամարացի՝ որ ճանապարհ էր գնում՝ եկաւ հենց նորա մօտ[38]. եւ նորան որ տեսաւ՝ խղճն եկաւ:

34 Նէ մօտ եկաւ՝ նորա խոցերին վերայ ձէթ եւ գինի ածեց եւ պատեց. եւ իրան անասունին վերայ դրաւ՝ մին իջեւան (խրվան սրայ) տարաւ նորան, եւ նորա համար հոգս արաւ:

35 Նէ հետեւի օրումն՝ երբոր էն տեղիցն գնաւ էր գնում՝ երկու դահեկան հանեց եւ իջեւանի (խրվան սրայի) տիրոջն տուաւ եւ ասաց. գորա համար հոգս արա, եւ ինչ որ գորա համար կրծախես՝ իմ մեկել գալըշ ժամանակն կըվճարեմ քեզ:

36 Ո՞րիկ էն երեքիցն ո՞րն է եւ րեւում՝ քեզ՝ թէ մնաւոր է էն աւազակներն ձեռքն ընկած մարդոյն:

37 Նէ նա ասաց. նա՝ որ ողորմութիւն արաւ նորա վերայ: Յիսուս նորան ասաց. գնա դու էլ հենց էնպէս արա:

38 Նէ էլաւ որ նորանց գնալըշ ժամանակն ինքն էլ մին գիւղ մտաւ. եւ մին կին մարթա անուն նորան ընդունեց իրան տունն[39]:

39 Նէ նա մին քոյր ունէր՝ որ նորա անունն՝ մարիամ էր. որ էլ եկաւ[40] Տէրի ոտներին մօտ նստեց, եւ նորա խօսքերըն լսումէր[41]:

40 Ս՝արթան ծառայութեան համար շատ զբաղմունքի մէջ էր. եկաւ նորա մօտն կանգնեց եւ ասաց. Տէր՝ դու իմի հոգս չունի՞ս՝ որ իմ քոյրս ինձ մենակ թողեց ծառայութեան մէջ. ապա ասա գորան՝ որ օգնէ ինձ:

41 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. մարթա մարթա՝ դու հոգա ես քաշում եւ շատ բաներով զբաղած ես.

42 Բայց էստեղ քիչ բան պէտք է.* մարիամն բարի բաժինըն ընտրեց՝ որ վեր չառնըվիլ սորանից:

## ԿԱ· ԺՈ

1 Քրիստոս աղօթք անել կըսովորցնէ իրան աշակերտներին եւ պատուէր կըտայ նորանց որ խիստ աղաչանքով աղօթք անեն, 11 Որ Աստուած նորանց էապէս բարի բաներ կըտայ: 14 Մին մունճ դեւ կըհանէ եւ հայհոյութիւն անող փարիսեցիքն կը ամաւտ, 28 Ձայն կըտայ թէ երանելի որդըք կըլինեն եւ ինչ բանով կըլինեն. 29 Ժողովուրդին կըբարոզէ. 37 Եւ փարիսեցոց եւ օրէնք գիտողներին սաստումէ եւ վայ է տալիս որ իրանց դըբսի կողմըն սրբըւմեն, 45 Եւ ժողովուրդն կորցընումեն:

1 Նէ էլաւ որ մին տեղ աղօթք էր անում. եւ երբոր դադարեց, իրան աշակերտներիցն մինն ասաց նորան. Տէր՝ սովորցրու մեզ աղօթք

[37] Ս՝ղ. լբ. 11: [38] Ձ՝ղ. գ. 9: [39] Ձ՝ղ. ժա. 1: ժբ. 2, 3: [40] ա Կ՝թ. է. 32, Խ՝ղ: [41] Ղ՝ղ. ը. 35: Գ՝բ. իբ. 3:

* Յո՝հ՝ն՝ բայց մին բան պէտք է:

անել, ինչպէս որ Յովհաննէսն իրան աշակերտներին սովորցուց։

2 Ասաց նորանց. երբոր աղօթք անէք, ասացէք. մեր Հայր, քո անունդ սուրբ լինի. քո արքայութիւնդ գայ[1]։

3 Ու՝ եր ամէն օրվան հացըն օրեցօր տուր մեզ։

4 Եւ մեր մեղքերըն թող մեզ, որ մենք էլ թողումենք էն ամէնին՝ որ պարտական են մեզ. եւ մեզ փորձանքի մէջ մի ձգիր։

5 Եւ նորանց ասաց. ձեզանից ով է, որ բարեկամ ունենայ, եւ կէս գիշերումն նորա մօտ գնայ, եւ նորան ասէ. բարեկամ՝ ինձ երեք հաց փոխ տուր.

6 Ինչուորդ՝ իմ բարեկամն ինձ մօտ եկաւ ճանապարհիցն, եւ բան չունիմ՝ որ նորա առաջին դնեմ։

7 Եւ նա՝ պատասխան տայ ներսիցն եւ ասէ. մի աշխատացներ ինձ ինչու որ՝ դռներըն փակված են, եւ երեխաներս ինձ հետ անկողնումն (կոթաւելուածն) (թեքըլկած) են. չեմ կարող վեր կանալ եւ տալ քեզ։

8 Ասումեմ ձեզ՝ թէ որ բարեկամութեան համար վեր չկենայ եւ տայ նորան[2], բայց նորա խիստ աղաչանքին համար վերկրկենայ եւ կրտայ նորան՝ ինչ որ էլ պէտք լինի։

9 Եւ ես ասումեմ ձեզ[3], խնդրեցէք՝ եւ կրտրվի ձեզ, մանեկէք՝ եւ կրգտանէք, (դուռըն) թակեցէք՝ եւ կրբացվի ձեզ։

10 Ինչու որ՝ ամէն ով որ կրխնդրէ՝ կառնէ, եւ ով որ մանկրգայ՝ կրգտնէ, եւ ով որ կրթակէ՝ կրբացվի նորան։

11 Ձեզանից ով է էն հայրն՝ որ նորանից իրան որդին ձուկն ուզէ, միթէ ձկան տեղակ օձ կրտայ նորան[4]։

12 Եւ կամ ձու ուզէ, միթէ կարիճ կրտայ նորան։

13 Ապա թէ որ դուք, որ չար էք՝ գիտումեք բարի պարգեւներ տալ ձեր որդոցն, էլ որքան աւելի ձեր Հայրն երկնքիցն բարի բաներ կրտայ նորանց, որ ուզումեն նորանից։

14 Եւ մին համր (լեզի) դեւ էր հանում[5], եւ երբ էն դեւի դուրս գալոյ ժամանակն՝ որ համր (մարդն) խօսեց, եւ ամէն ժողովուրդներն զարմացան։

15 Եւ նորանցից մին քանիսն ասացին թէ՝ դա դեւերի իշխան բէեղզեբուղին է հանում դեւերըն[6]։

16 Եւ ուրիշներն փորձումէին եւ երկնքիցն մին նշան էին խնդրում նորանից[7]։

17 Ասյց նա նորանց մտածմունքներըն[8] իմանալով[9] նորանց ասաց. ամէն թագաւորութիւն որ իրան մէջն բաժանված է՝ կաւերվի, եւ տունն՝ որ իրան մէջն բաժանված է՝ կրկործանվի։

18 Ապա թէ որ սատանան էլ ինքն իրանից բաժանվեցաւ, նորա թագաւորութիւնն ի՞նչպէս կրկենայ, պատճառն որ ինձ համար ասումէք, թէ դա դեւերի իշխան բէեղզեբուղին է հանում դեւերըն։

19 Եւ թէ ես բէեղզեբուղին եմ հանում դեւերըն, (ապա) ձեր որդիքն ի՞նով են հանում. դրահամար նորանք կրլինին ձեզ դատաւոր։

20 Ասյց եթէ Աստուծոյ մատովն

[1] Մատթ. զ. 9։ [2] Ղուկ. ժբ. 1. Խաչէ։ [3] Մատթ. է. 7։ իա. 22։ Մարկ. ժա. 24։ Յովհ. ժե. 7։ Յակ. ա. 6։ ա Յովհ. գ. 22։ [4] Մատթ. է. 9։ [5] Մատթ. թ. 32։ ժբ. 22։ [6] Մատթ. թ. 34։ ժբ. 24։ [7] Մատթ. ժբ. 38։ ժզ. 1։ [8] Մատթ. ժբ. 25։ Մարկ. գ. 24։ [9] Յովհ. բ. 25։

եմ Հանուամ դեւերըն[10], ապա Յ՚աստուծոյ արքայութիւնն ձեզ վերայ հասել է։

21 Երբոր զօրաւոր (մարդ) զէնք հագած իւրն տունըն պահէ, նորա ապրանքներն խաղաղութեանով են[11];

22 Այլ եթէ որ նորանից էլ աւելի զօրաւոր գայ (նորա) վերայ՝ եւ նորան յաղթէ, նորա զէնքերըն՝ որ յոյսըն նորանց վերայ էր դրել, կըհանէ եւ նորա աւարըն (թալանըն) կըբաժանէ[12]։

23 Ով որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ հակառակ է, եւ ով որ ինձ հետ չի ժողովում՝ (նա) ցրվում է[13]։

24 Երբոր պիղծ դեւըն դուրս է գալիս մարդուցն՝ անջուր տեղերանքում է մանգալիս եւ հանգիստ ենդրում. եւ երբոր չի գտնում՝ ասում է. յետ դառնամ իմ տունս՝ որտեղից որ դուրս եկի[14]։

25 Եւ գալիս է նորան սրբված եւ պատրաստված է գտնում։

26 Յն ժամանակն գնում է եւ իրանից էլ աւելի չար եօթն դեւ է առնում՝ եւ մանում է բնակվում էնտեղ, եւ էն մարդոյ յետինն աւելի չար է լինում քանեմ առաջինն[15]։

27 Եւ էլաւ դուռ քանի որ էս խոսում էր, ժողովրդի միջեցըն մին կին ձայն բարձրացրուց եւ ասաց. երանի է էն փորին՝ որ քեզ պահէց, եւ էն ծըծերին՝ որ քեզ ծըծացրին[16]։

28 Եւ նա ասաց. էլ աւելի երանի է՝ նորանց, որ Յ՚աստուծոյ բանըն լսումեն եւ անում[17]։

29 Եւ երբոր ժողովրդներն, նորա վերայ դիզվում էին՝ սկսեց ասել. էս ազգս չար ազգ է[18]. նշան է խընդրում, եւ երկնքիցն նշան չի տրվի սորան՝ բայց միայն Յովնանու նշանն։

30 Պատճառն որ՝ ինչպէս որ՝ Յովնան նշան էլաւ նինուէացոց համար, էնպէս էլ որդին մարդոյ էս ազգիս համար կըլինի[19]։

31 Հարաւային երկրի թագուհին դատաստանումն վերկըկենայ էս ազգիս մարդկանց հետ եւ սորանց կըդատապարտէ, պատճառն որ՝ նա երկրի ծայրիցն եկաւ, որ սաղոմոնի իմաստութիւնըն լսէ, եւ ահա սաղոմոնիցն էլ աւելին էստեղ է[20]։

32 Նինուէացոց մարդիքն դատաստանումն վեր կըկենան էս ազգիս հետ եւ սորան կըդատապարտեն, ինչու որ՝ նորանք Յովնանու քարոզութեանովն ապաշխարեցին[21]. եւ ահա Յովնանիցն էլ աւելին էստեղ է։

33 Ո՚չ ով ճրագ չի վառում եւ թաքուն տեղ գնում եւ ոչ տաշտի տակ, բայց ճրագակալի վերայ, որ նորանք որ ներս են մանում՝ լոյս տեսնեն[22]։

34 Ո՚րմեոյ ճրագն աչքն է. երբոր աչքն պարզ է, ամէն մարմինն լուսաւոր կըլինի. եւ երբոր աչքն չար է՝ մարմինն էլ խաւար կըլինի[23]։

35 Նրսկե՛ զգո՛յշ կաց, չըլինի որ էն լոյսն, որ քեզանում է՝ խաւար լինի։

36 Թէ որ քո ամէն մարմինդ լուսաւոր է եւ իսկի խաւարի մին մանր

[10] Եփ. ը. 19։ [11] Մարկ. ժբ. 29։ Մարկ. գ. 27։ [12] Եսայ. ծգ. 12։ Կող. բ. 15։ [13] Մարկ. ժբ. 30։ [14] Մարկ. ժբ. 43։ [15] Ճուկ. ե. 14։ Եբր. գ. 4։ ժ. 26։ բ Պետր. բ. 20։ [16] Ղուկ. ա. 28, 48, [17] Մարկ. է. 21։ Ղուկ. ը. 21։ Ճակ. ա. 25։ [18] Մարկ. ժբ. 38, 39։ [19] Ճակ. ա. 17։ բ. 10։ [20] Գործ. ժ. 1։ [21] Ճակ. գ. 5։ [22] Մարկ. դ. 15։ Մարկ. գ. 21։ Ղուկ. ը. 16։ [23] Մարկ. գ. 22։

ջակայ, ամէնն լուսաւոր կը լինի. ինչպէս էն ժամանակն՝ որ Ճրադն իրան շաւղներովն լուսաւորէ քեզ։

37 Այլ դեռ որ էս խօսումէր՝ մին փարիսեցի աղաչումէր նորան՝ որ նորա մօտ հաց ուտէ. եւ նա մտաւ՝ եւ սեղան նստեց։

38 Այրսոր փարիսեցին տեսաւ՝ զարմացաւ, որ ճաշիցն առաջ չը-լուացվաւ[24]։

39 Տէրն ասաց նորան. հիմիկ դուք փարիսեցիներդ բաժակի (նաւ) եւ պնակի դրսի կողմէն սրբումէք[25], եւ ձեր ներսինն յափշտակութիւնով եւ չարութիւնով լիքն է[26]։

40 Անմիտներ՝ չէ՞ որ նա որ դրսինքն արաւ՝ ներսինքն էլ նա՞ արաւ։

41 Բայց աւելի էն արէք որ արժանն է, ողորմութիւն տուէք եւ ահա ձեր ամէն բանն սուրբ է[27]։

42 Բայց վայ ձեզ փարիսեցիներիդ՝ որ անանուխի եւ փեգենայի եւ ամէն բանջարի տասանորդ էք տալիս, եւ Աստուծոյ իրաւունքովն եւ սիրովն անց էք կենում. էս պէտք էր անել, եւ նորանով անց չըկենալ[28]։

43 Ա՛յ ձեզ փարիսեցիներիդ, որ ժողովարանների միջումն վերեւի տեղերն էք սիրում, եւ փողոցների մէջն առաջին բարեւներն[29]։

44 Ա՛յ ձեզ[30] որ դուք գերեզմաններին պէս էք, որ չեն տեսնվում եւ մարդիք նորանց վերայ գնումեն եւ չեն գիտում[31]։

45 Պատասխան տուաւ օրէնք դիտողներիցն մինն եւ ասաց նորան՝ վարդապետ՝ էդ բաներըդ ասելով մեզ էլ նախատինք ես տալիս։

46 Այ նա ասաց, ձեզ օրէնք դիտողներիդ էլ վայ. ինչու որ՝ դըժուար տանելի բեռներ էք բեռնում մարդկանց, եւ դուք մին մատով չէք մատնում էն բեռներին[32]։

47 Ա՛յ ձեզ, որ մարգարէների տապանները չինում էք եւ ձեր հարքն սպանեցին նորանց[33]։

48 Ապա ուրեմն վկայումէք՝ թէ ձեր հարանց գործքերին հետ կամակից էք. ինչու որ նորանք կոտրեցին նորանց, եւ դուք նորանց գերեզմանները չինում էք։

49 Վրահամար Աստուծոյ խմաստութիւնն ասաց. թէ՝ մարգարէներ եւ առաքեալներ կուղարկեմ նորանց մօտ, եւ նորանցից կըսպանեն եւ կըհալածեն[34]։

50 Որ ամէն մարդարէների արիւնն որ աշխարհքի սկզբից թափված է՝ էս ազգիցս խնդրվի,

51 Աբելի արիւնից[35] մինչեւ զաքարիայի արիւնն[36] որ սեղանի եւ տաճարի մէջն կորաւ. իրաւ՝ ասում եմ ձեզ, էդ ազգիդ կըխնդրվի։

52 Ա՛յ ձեզ օրէնք գիտողներիդ՝ որ գիտութեան բանալիքն թագցրնում էք. դուք էջ մտնում՝ եւ նորանց որ մտնելու էն արգելումէք[37]։

53 Այ երբոր էս ամէն բաներըդ ասաց նորանց ամէն ժողովրդի աուաջին, շատ ամօթ էին քաշում՝ եւ կարպացօղներն եւ փարիսեցիներն սկսեցին նախանձով բարկանալ եւ շատ բաների համար նորա հետ հակառակել։

54 Այ սպասումէին՝ որ նորա բերանից մին խօսք որսան, որ չարաչաճին նորա վերայ[38]։

[21] Մարկ. ե. 3։ [25] Մատթ. իգ. 25։ [26] Ցէփ. ա. 15։ [27] Եսայ. ծը. 7։ Դան. դ. 27։ Ղեւտ. ժը. 33։ [28] Մատթ. իգ. 23։ [29] Մատթ. իգ. 6։ Մարկ. ժը. 38, 39։ [30] Մատթ. իգ. 27։ [31] Այաղ. ե. 9. [32] Մատթ. իգ. 4։ [33] Մատթ. իգ. 29։ [34] Մատթ. իգ. 34։ [35] Ծննդ. գ. 8։ [36] Բ Մնաց. իգ. 20, 21։ [37] Մատթ. իգ. 13։ [38] Մարկ. ե

## ԳԼ. ԺԲ

1 Քրիստոս իրան աշակերտներին կը խրատէ որ իրենց անձերին զգոյշ պահեն փարիսեցւոց կեղծաւորութենէն՝ եւ իրան վարդապետութիւններն տարածելոյ համար չը վախենան. 15 Մեծ համբարներ չինող մին հարուստ մարդոյ առակով ժողովուրդն ազատութենից զգոյշ կը պահէ։ 22 Պէտք չէ որ հոգոյ համար ոչ եւ մարմնոյ համար հոգ տանք, 31 Բայց պէտք է որ Աստուծոյ արքայութիւնն խնդրենք, 33 Ողորմութիւն տանք, 36 Որ ժամանակ որ գայ մեր Տէրն եւ դուռն թակէ շուտով բանալոյ պատրաստ լինինք։ 41 Քրիստոսի անուանեալներն պէտք է որ իրենց հրամայեալ բաներին համար լաւ հոգ տանին, 49 Եւ հալածանք քաշելն անձերին առնեն, 54 Ժողովուրդն պէտք է որ քրիստոսի ընորհքն ընդունելոյ ժամանակն չը կորոշեն, 58 Քո հակառակ ոսոխի հետ լաւ ատ քո գործն արա՝ այսինքն հաշտուէ, որ չը ըլլայ թէ էնպէս մեռնիս եւ յաւիտենական կորուստն գնաս։

1 Այն ժամանակն երբոր հազարաւոր ժողովուրդներ դիպուածին՝ մինչեւ որ իրար կոխ էին տալիս՝ սկսեց իրան աշակերտներին ասել[1]. առաջ անձերիդ զգոյշ պահեցէք փարիսեցւոց խմորիցն՝ որ կեղծաւորութիւն է[2]։

2 Ինչու որ՝ խակի ծածուկ բան չը կայ՝ որ չը յայտնըվի՝ եւ թագուն բան՝ որ չիմացվի[3]։

3 Վասնզի որ՝ ինչ որ խաւարումն ասէք, լուսով մէջ կը լսըվի. ինչ որ ներսիներս սան միջումն ականջում խոսիք՝ կը քարոզվի։

4 Բայց ձեզ[4] իմ սիրելիներիս ասումեմ[5]. մի վախենաք նորանցից՝ որ մարմինն սպանումն, եւ նրանից յետու աւելի բան չունին՝ որ անեն։

5 Բայց ցոյց կը տամ ձեզ՝ թէ ումից պէտք է վախենաք. նորա՝ նից վախեցէք, որ սպանելուցն ետու իշխանութիւն ունի գեհենի մէջ քցելոյ. իրաւի ասումեմ ձեզ՝ նորանից վախեցէք։

6 Չէ՞ որ հինգ ծիտ երկու դանկի են ծախվում. եւ նորանցից մինն էլ Աստուծոյ առաջին մոռացած չէ։

7 Բայց ձեր գլխի հենց ամէն մազերն էլ համարված է. մի վախենաք. ինչու որ՝ դուք աւելի լաւ էք քան շատ ծրտեր։

8 Ասումեմ ձեզ՝ թէ ամէն ով որ ինձ մարդկանց առաջին կըդաւանէ՝ որդին մարդոյ էլ նորան կըդաւանէ Աստուծոյ հրեշտակներին առաջին[6]։

9 Եւ ով որ ինձ կուրանայ մարդկանց առաջին՝ (նա էլ) ուրացված կըլինի Աստուծոյ հրեշտակներին առաջին։

10 Եւ ամէն ով որ որդի մարդոյ դէմ բան ասէ՝ կըներվովի նորան. բայց ով որ սուրբ Հոգուն հայհոյէ՝ նորան չի թողվիլ[7]։

11 Բայց երբոր կըտանեն ձեզ ժողովարանների մէջ եւ դատաւորների եւ իշխանների առաջին, հոգ մի անէք[8]՝ իրրեւ ինչ պատասխան պիտի տաք, կամ ինչ պիտի ասէք։

[1] Մտթ. ժզ. 6։ Մրկ. ը. 15։ [2] Մտթ. ժզ. 12։ [3] Մտթ. ժ. 26։ Մրկ. դ. 22։ Ղկս. ը. 17։ [4] Եսայ. ծա. 7, 8, 12, 13։ Երէմ. ա. 8։ Մտթ. ժ. 28։ [5] Ց-ւմ. ժե. 14, 15։ [6] Մտթ. ժ. 32։ Մրկ. ը. 38։ [7] Տէր. բ. 12։ ա Ց-ւմ. բ. 23։ [8] Մտթ. ժբ. 31, 32։ Մրկ. գ. 28։ ա Ց-ւմ. ե. 16։

12 Պատճառն որ՝ սուրբ Հոգին հենց էն ժամումն (սահմանում) կը-
սովորցնէ ձեզ՝ թէ ինչ պէտք է
խօսել։

13 Ժողովրդի միջից մինն ասաց
նորան. վարդապետ՝ իմ եղբօրս ա-
սա՝ որ ժառանգութիւնըն հետ
բաժանէ։

14 Նա նա ասաց նորան. ով մարդ՝
ինձ ո՞վ կարգեց ձեզ վերայ դատա-
ւոր կամ բաժինաօդ[9]։

15 Նա նորանց ասաց. տեսէք եւ
զգոյշ կացէք ամէն ագահութիւն-
ցըն[10], պատճառն որ՝ իսկի մինի
կեանքն իրան կիսված ապրանքնե-
րից չէ։

16 Նորանց մին առակ խօսեց եւ
ասաց. մին հարուստ մարդոյ արտերն՝
առատ պտուղ տուին։

17 Նա իրան մտքումն մտածումեր
եւ ասում. ի՞նչ անեմ՝ որ տեղ չը-
կայ որ իմ պտուղներըս հնտեղ ժո-
ղովեմ։

18 Նա ասաց. գիտումեմ ինչ կա-
նեմ. իմ համբարներըս կը քանգեմ,
եւ էլ աւելի մեծ կը շինեմ, եւ իմ
ցորներս եւ ամէն բարիքներըս կը-
ժողովեմ հնտեղ։

19 Նա իմ անձիս կասեմ. ով
անձն՝ շատ բարիքներ ունես շատ տա-
րիների համար ամբարված[11]. ապա
հանգիստ առ՝ կեր՝ խմիր եւ ուրախ
լեր։

20 Աստուած նորան ասաց. ով
անմիտ. էս գիշերումն քո հոգիդ քե-
զանից յետ կըխնդրեն[12]. ապա էն
որ պատրաստացիր՝ ո՞ւմ կը լինի[13]։

21 Նպէս էլ նա՝ որ իրան անձին
համար գանձ (խազնայ) հաւաքէ, եւ
Աստուծով չը հարուստանայ[14]։

22 Նրան աշակերտներին ասաց.
դրահամար ասումեմ ձեզ. հոգս մի
անէք հոգոյ համար՝ թէ ինչ պիտի
ուտէք, եւ ոչ մարմնոյ համար՝ թէ
ինչ պիտի հագնէք[15]։

23 Ինչուա՞ր հոգին աւելի է քան
թէ կերակուրն, եւ մարմինն քան
թէ հագուստն։

24 Մտիկ արէք ագռաւներին. որ
ոչ սերմանումն եւ ոչ հնձումեն. որ
նորանք ոչ մառաններ ունեն եւ ոչ
ամբարներ, եւ Աստուած կերակ-
րումէ նորանց[16]. ապա ո՞րքան էլ ա-
ւելի ձեզ՝ որ թռչուններից աւելի
լաւ էք։

25 Ձեզանից ո՞վ կարող է իրան
հոգս անելովն իրան հասակին վերայ
մին գազ աւելացնել։

26 Մտա թէ որ փոքր բանի հա-
մար բաւական չէք՝ ինչո՞ւ ուրիշ բա-
ների համար հոգս էք անում։

27 Մտիկ արէք շուշան (ծաղ-
կին), թէ ինչպէս է մեծանում. ոչ
գանք է անում եւ ոչ մանում. ա-
սումեմ ձեզ՝ թէ սաղոմոնն էլ իրան
ամէն փառքի մէջն նորանց մինի նման
չը հագաւ։

28 Խայց թէ որ խոտըն որ էս օր
յանդումն կայ՝ եւ էգուց փուռն մէջ
կը ջոգվի, Աստուած հնպէս է հագ-
ցընում, ապա ո՞րքան էլ աւելի ձեզ՝
ով թերահաւատներ։

29 Նա դուք մի խնդրէք՝ թէ ինչ
պիտի ուտէք կամ ինչ պիտի խմէք
եւ հոգս մի քաշէք։

30 Ինչու որ՝ էգ ամէն բաներըդ
աշխարհքի հեթանոսներն են խընդ-
րում. բայց ձեր Հայրն գիտումէ՝ որ
էն ամէնն պէտք է (ձեզ)։

31 Խայց Աստուծոյ արքայութիւ-

[9] Ցաւմ. ժը. 36։ [10] ա Տիմ. գ. 7, Խոյնն։ [11] Ծառ. ժա. 9։ ա Պետր. ժե. 32։ Ցակ. ե. 5։ [12] Ճոբ. ի. 22։ իե. 8։ Պաղմ. ծր. 7։ Ցոբ. գ. 14։ [13] Պաղմ. լթ. 6։ Երեմ. ժէ. 11։ [14] Պարմ. գ. 20։ Վսիր. 33. ա Տիմ. գ. 18, 19։ Ցոբ. ը. 5։ [15] Պարմ. գ. 25։ [16] Ճոբ. լը. 41։ Պաղմ. ծխե. 9։

նըն խնդրեցէք, եւ էն ամէն կատարա-
նայ ձեզ[17]։

32 Ա՛ն վախենար փոքր հօտ
(ախտաւոր)։ ինչու որ՝ ձեր Հօրն հա-
ճայ էլաւ՝ որ ալքայութիւնն տայ
ձեզ[18]։

33 Ձեր ապրանքըն ծախեցէք՝ եւ
ողորմութիւն տուէք[19], ձեզ համար
քսակներ շինեցէք՝ առանց հնանա-
լոյ՝ անպակաս գանձ (նաւահայ) երկն-
քումն, որտեղ որ՝ ոչ գող է մօտե-
նում եւ ոչ ցեցն է ապականում[20]։

34 Պատճառն որ՝ ինչ տեղ որ ձեր
գանձն է՝ էնտեղ էլ ձեր սրտերն կը-
լինին։

35 Թող ձեր գօտիկներն պինա
կապված լինին մէջքերումդ[21] եւ
ճրագներն վառված[22]։

36 Այս գուք էն մարդկանց նման՝
որ իրանց տիրոջն սպասումն՝ թէ
երբ կըգառնայ հարսանիքիցըն. որ
երբոր գայ եւ գուռըն թակէ, շու-
տով բանան նորա համար։

37 Երանի՛ է էն ծառաներին՝ որ
տէրն երբոր գայ, արթուն գտնէ նո-
րանց[23]. ճշմարիտըն ասումեմ ձեզ՝
թէ նա գօտիկըն մէջքն կըկապէ եւ
նորանց սեղան կընստացնէ եւ առաջ
եկած կըծառայէ նորանց։

38 Այս թէ որ գիշերի երկրորդ
կամ երրորդ բաժնումն գայ՝ եւ էն-
պէս գտնէ՝ երանելի են էն ծառա-
ներն։

39 Այդ էն իմացէք՝ թէ որ տան
տէրն կըգիտէր՝ թէ գողն ո՛ր ժա-
մումն (սահմանումն) կըգայ՝ արթուն
կըկենար եւ թոյլ չէր տալ որ իրան
տունըն ծակէ[24]։

40 Այս դուք պատրաստ կացէք՝ ին-
չու որ՝ էն ժամումն որ չէք կարծիլ,
որդին մարդոյ կըգայ[25]։

41 Պետրոսն ասաց. Տէր. էգ ա-
ռակըդ մե՞զ ասացիր, թէ ամէնին։

42 Այս Տէրն ասաց. ո՞վ է էն հա-
ւատարիմ եւ խնամտուն տնտեսն՝ որ
նորան՝ իրան տէրն տան ընտանեաց
վերայ կարգեց՝ որ նորանց կերա-
կուր տայ (իրանց) ժամանակումն[26]։

43 Երանի է էն ծառային՝ որ ի-
րան տէրն երբոր գայ, էնպէս արած
գտնէ նորան։

44 Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ՝
թէ իրան ամէն ապրանքներին վե-
րայ կըդնէ նորան[27]։

45 Այպա թէ էն ծառան իրան
սրտումն ասէ՝ թէ իմ տէրս ուշա-
նումէ գալ, եւ սկսէ ծառաներին եւ
ազախիններին (պըռաշէներին) ծե-
ծել, ուտել եւ խմել եւ հարբենալ[28]։

46 Կըգայ էն ծառայի տէրն էն օ-
րումն՝ որ նա չի սպասիլ, եւ էն ժա-
մումն (սահմանումն), որ նա չի գի-
տիլ, նորան միջնցն կըկարէ, եւ նորա
բաժինըն անհաւատներին հետ կը-
դնէ։

47 Այս ծառան որ իրան տիրոջ
կամքըն գիտենայ եւ նորա կամացն
պէս չըպատրաստէ, շատ ծեծ կուտ-
էէ[29]։

48 Այս նա որ չըգիտենայ՝ եւ ծեծի
արժանի բան գործէ, քիչ ծեծ կու-
տէ[30]. էն ամէնին ումի՛ որ շատ տըվ-
ված՝ նորանից շատ կըխնդրըվի. եւ
ումի՛ որ շատ (բան) պահ տըվված՝

[17] Մատթ. գ. 33։ [18] Մատթ. ժա. 25, 26։ [19] Մատթ. ժԹ. 21։ Գործ. բ. 45։ դ. 34։ [20] Մատթ. գ. 20։ Դ–ի. ժգ. 9։ ա Տիմ. գ. 19։ [21] Եփես. գ. 14։ ա Պետր. ա. 13։ [22] Մատթ. իե. 1, եւ այլն։ [23] Մատթ. իդ. 46։ [24] Մատթ. իդ. 43։ ա Թես. ե. 2։ բ Պետր. գ. 10։ Յայտ. գ. 3։ ժգ. 15։ [25] Մատթ. իդ. 44։ իե. 13։ Մարկ. ժգ. 33։ Ղ–ի. իա. 34, 36։ ա Թես. ե. 6։ բ Պետր. գ. 12։ [26] Մատթ. իդ. 45։ իե. 21։ ա Կորնթ. դ. 2։ [27] Մատթ. իդ. 47։ [28] Մատթ. իդ. 48։ [29] Թես. ժե. 30։ բ Օրէն. իե. 2։ Ցաւ. Թ. 41։ ժե. 22։ Գործ. ժե. 30։ Յուդ. գ. 17։ [30] Ղ–ի. ե. 17։ ա Տիմ. ա. 13։

նորանից էլ աւելի կրնդրուն։

49 (Ա·ս) Եկէք՝ որ կրակ քցեմ երկրիս վերայ[31]. եւ ի՞նչ՝ ուզումեմ որ հիմակուց բորբոքվէր։

50 Ա·այց մի մկրտութիւն ունիմ որ պիտի մըկրտվիմ[32]. եւ քանի՞ հոգս եմ քաշում մինչեւ որ էն կատարվի։

51 Մ·իթէ կարծումէք թէ եկի խաղաղութիւն տալ երկրիս վերայ[33], չէ՝ ասումեմ ձեզ՝ բայց բաժանումնք[34]։

52 Ինչու որ՝ սրանից եւեւ հինգ հոգի մին ան մէջ բաժանված կըլինին, երեքն երկուսին՝ եւ երկուքն երեքիցն[35]։

53 Հայրն կրբաժանվի որգուցն՝ եւ որդին հօրիցն, մայրն (իրան) աղջկանիցն՝ եւ աղջիկն իրան մօրիցն. կեսուրն (իրան) հարսիցն՝ եւ հարսն իրան կեսուրիցն։

54 Ժողովուրդներին էլ ասաց. երբոր տեսնումէք թէ արեւմտիցն ամպ է դուրս գալիս՝ շուտով ասումէք թէ անձրեւ կըգայ, եւ էնպէս է լինում[36]։

55 Եւ երբոր հարաւային քամին փչումէ, ասումէք՝ թէ շոգ կըլինի եւ էնպէս է լինում։

56 Կեղծաւորներ՝ երկնքի եւ երկրի երեսըն գիտումէք փորձել. բայց էս ժամանակըս ինչո՞ւ չէք փորձում։

57 Եւ ինչո՞ւ հինց ձեզանից էլ չէք ընտրում էն՝ որ արժանն է։

58 Երբոր քո հակառակ ոսոխի հետ իշխանի մօտ գնալու լինիս[37], ճանապարհումն տալիքըն տուր՝ որ նորա ձեռքիցն ազատվիս[38]. որ չըլինի թէ քեզ դատաւորին մօտ քաշէ՝ եւ դատաւորն դահճին (ճեղապին) մատնէ, եւ դահիճն բանտի մէջ քցէ։

59 Ասումեմ քեզ. Էնտեղից դուրս չես գալ՝ մինչեւ որ վերջին դանկէն էլ չըվճարիս։

## ԳԼ · ԺԳ

1 Քրիստոս Գալիլեացոց եւ ուրիշներին պատիժ քաչելովն ապաշխարութիւն կը քարոզէ։ 6 Ննպաստող թուզի ծառն Աստուած չըկամենում որ նորան երկրին խափանէ։ 11 Կըծկված մին կնկան բժշկվելն։ 18 Քրիստոս մանանեխի հատի եւ խմորի պատկովն ցոյց կըտայ թէ իրան խօսքերն իրան ընտրածներին սրտում ի՞նչպէս զօրութիւն գործումէ։ 24 Կըյորդորէ որ նեղ դըռնովն ներս մտնեն. 31 եւ Հերովդէսն եւ Երուսաղէմն կըսպասէ։

1 Հինց էն ժամանակումն մին քանի մարդիք եկին եւ պատմեցին նորա էն գալիլեացիներին համար, որ նորանց արիւնըն պիղատոս նորանց մատաղի հետ խառնեց։

2 Պատասխան տուաւ եւ նորանց ասաց. միթէ կարծումէք թէ էն գալիլեացիներն աւելի մեղաւոր էլան, քանիթէ ամէն գալիլեացիներն, որ էնպէսի բան եկաւ նորանց վերայ։

3 Չէ՛ ասումեմ ձեզ. բայց թէ որ չապաշխարէք, ամէնքդ էլ էնպէս կըկորչէք։

4 Կամ էն տասնուերի հոգին որ

[31] Ա·ղ. 51։ [32] Մ·ատ. ի. 22։ Մ·ար. ժ. 38։ [33] Մ·ատ. ժ. 34։ Ա·ղբ. 49։ [34] Մ·ար. է. 6, 8–ղե. է. 43։ Թ. 16։ ժ. 19։ [35] Մ·ատ. ժ. 35։ [36] Մ·ատ. ժղ. 2։ [37] Ա·ղ. ի·ա. 8։ Մ·ատ. է. 25։ [38] Ս·ղ. լբ. 8։ Ի·մ. ա·է. 6։

սելոմամի մէջ աշտարակն (քո-ըշէ) վէրընկաւ նորանց վերայ, եւ նորանց սպանեց. մի թէ կարծումէք թէ նորանք աւելի՞ պարտական էյան քան ամէն մարդիք՝ որ երուսաղէմումն բնակված են:

5 Չէ, ասումեմ ձեզ. բայց թէ որ չապաշխարէք՝ ամէնքդ էլ էնպէս կըկորչէք:

6 Յս առակըս էլ ասաց. մին մարդ իրան պտղոց (քաղէ) մէջ մին թզզի ծառ էր տնկել. եւ եկաւ, որ պտուղ խնդրէ նորանից, եւ չը-գտաւ[1]:

7 Ա՛յգեպանին ասաց. ահա ե-րեք տարի է՝ որ գալիսեմ պտուղ խնդրել էդ թզզի ծառիցդ, եւ չեմ գտնում. ուրեմն կարիր գորան, էլ ինչո՞ւ դա երկիրըդ խափանումէ:

8 Ա՛նա պատասխան տուաւ եւ ա-սաց. տէր՝ էս տարիս էլ թո՛ղ դո-րան, մինչեւ որ դորա չորս կողմնէն փորեմ եւ աղբ ածեմ.

9 Որ լինի թէ պտուղ բերէ, ա-պա թէ չէ՝ տարուցն ետեւ կարիր դորան:

10 Յս մին ժողովարանի մէջ սո-վորցնումէր շաբաթ օրումն:

11 Յս ահա մին կին՝ (կար) որ հի-ւանդութեան դեւ բռնել էր նորան տասնուերէք տարի. եւ կծկըված էր՝ եւ խոկի չէր կարում դէպի վեր նա-յել:

12 Յս Յիսուս որ նորան տեսաւ՝ իրան մօտ կանչեց՝ եւ նորան ասաց. ա՛վ կին՝ արձակված ես քո հիւան-դութենիցդ:

13 Յս ձեռքն դրաւ նորա վերայ, եւ շուտով շիտակվեցաւ, եւ Ա-ստուծոյն փառաւորումէր[2]:

14 Ժողովարանի գլխաւորն շատ բարկացաւ, թէ ինչու համար Յի-սուս շաբաթ օրումն բժշկեց. պա-տասխան տուաւ եւ ժողովըրդին ա-սաց. վեց օր կայ՝ որ նորանցումն օ-րերնէք է գործ գործել[3], էն օրերումն եկէք բժշկվեցէք, եւ չէ թէ շաբաթ օրումն[4]:

15 Տէրն պատասխան տուաւ նո-րան եւ ասաց. կեղծաւորնե՛ր՝ միթէ ձեզանից ամէն մէկն շաբաթ օրումն իրան եզն կամ էշըն չի՞ արձակիլ մնուրիցն եւ տանիլ ջուր տալ[5]:

16 Ա՛յդ սա՝ որ աբրահամի աղ-ջկէն էր. որ հիմիկ տասնուեօթ տարի է, որ սատանան կապել է սորան. միթէ արժան չէր որ շաբաթ օրումն էն կապանքիցն արձակվի[6]:

17 Յս երբոր էս ասաց՝ ամեթով էյեն լինում էն ամէնքն՝ որ հակառակ կային նորան. եւ ամէն ժողովուրդն ուրախանումէր էն ամէն փառաւոր գործքերուն համար՝ որ նորանով գործվումէին:

18 Յս ասումէր. Ա՛ստուծոյ արքա-յութիւնն ո՞ւմ նման է. եւ ի՞նչ նմանութենով նմանեցնեմ նորան[7]:

19 Մ՛անանեխի (խրդալէ) հատի նման է, որ նորան մին մարդ առաւ իրան պարտէզի (պօպանէ) մէջն ցա-նեց. մեծացաւ եւ ծառ էլաւ՝ եւ եր-կընքի թռչուններն նորա ճղներին վերայ բնակված էյեն:

20 Յս մինել ասաց. ո՞ւմ նմանեց-նեմ Ա՛ստուծոյ արքայութիւնըն.

21 խմորի նման է, որ նորան մին կին առաւ եւ երեք չափ ալիւրի մէջ պահեց, մինչեւ որ ամէնն խմորվե-ցաւ:

22 Յս մանկեր գալիս քաղաքնե-

[1] Եսայ. ե. 2: Մարկ. իա. 19: [2] Մարկ. ժգ. 18: Գործ. Թ. 17: [3] Ելք. ի. 9: [4] Մարկ. ժբ. 10: Մարկ. գ. 2: Ղուկ. զ. 7: ժգ. 2: [5] Ղուկ. ժգ. 5: [6] Ղուկ. ժբ. 9: [7] Մարկ. ժգ. 31: Մարկ. դ. 30:

թումն եւ գիւղերումն՝ եւ սովորացնուէր[8]· եւ երբոր ճանապարհ ընկած գնումէր դէպի երուսաղէմ՝

23 Ո՛ւնն ասաց նորան· Տէր՝ միթէ քի՞չ են նորանք, որ պիտի ապրին· եւ նա ասաց նորանց՝

24 Ջանք արէք որ նեղ դրնոյն ներս մտնէք[9]· ասումեմ ձեզ, թէ շատ մարդիկ կըլնդրեն մտնել եւ չեն կարենալ[10]՝

25 Վրանից հետեւ որ տան տէրն կըմտնէ[11] եւ դուրսը կըփակէ· եւ կըսկսէք դուրսն կանգնիլ եւ դուռն թակել՝ եւ ասել[12]· Տէր Տէր՝ բաց մեզ[13]· պատասխան տալով կասէ ձեզ· չեմ ճանաչում ձեզ թէ ինչ տեղից էք[14]՝

26 Ն ժամանակն կըսկսէք ասել· (մենք) քո առաջիդ կերինք եւ խըմեցինք, եւ (դու) մեր փողոցներումն սովրցրիր՝

27 Ն կասէ· ասումեմ ձեզ, ես չեմ ճանաչում ձեզ[15]· թէ ի՞նչ տեղից էք· հեռու կացէք ինձանից դուք անիրաւութեան ամէն մշակներդ[16]՝

28 Ն տեղ կըլինի լաց եւ ատամների կրըճտումն[17]· երբոր աբրահամին եւ իսահակին եւ յակոբին եւ ամէն մարգարէներին Ա՛ստուծոյ արքայութեան մէջն կըտեսնէք՝ եւ ձեզ դուրս հանած[18]՝

29 Ն արեւելքից եւ արեւմուտից, եւ հիւսիսից եւ հարաւից կըգան եւ Ա՛ստուծոյ արքայութեան կընստին՝

30 Ն ահա յետինները կան՝ որ առաջին կըլինին· եւ առաջիններն կան՝ որ յետին կըլինին[19]՝

31 Ն հնց էն օրումն մին քանի փարիսեցիք մօտ եկին եւ նորան ասացին· դուրս եկ եւ գնա էստեղից· ինչու որ՝ հերովդէս կամենումէ որ քեզ սպանէ՝

32 Ն նորանց ասաց· գնացէք ասացէք էն աղուէսին, թէ ահա դեւեր եմ հանում եւ բժշկութիւններ եմ կատարում էսօր եւ էգուց· եւ երիք օրումն կըկատարեմ[20]՝

33 Ա՛յց էսօր եւ էգուց եւ մէկել օրն պէտք է գնալ· ինչու որ՝ կարելի չէ՝ որ մին մարգարէ երուսաղէմից դուրս կորչի՝

34 Ն՛երուսաղէմ՝ երուսաղէմ՝ որ մարգարէներըն կոտորումէիր, եւ քեզ մօտ ուղարկվածներըն քարկոծումէիր· քանի անգամ կամեցայ քո որդիքներըդ ժողվել՝ ինչպէս որ հաւն իրան ձագերըն թեւերի տակն (է ժողովում)· եւ չըկամեցաք[21]՝

35 Ն՛ահա ձեր տունդ թողված կըլինի ձեզ[22], բայց ասումեմ ձեզ՝ թէ էլ ինձ չէք տեսնիլ՝ մինչեւ որ ասէք· օրհնեալ է Տէրի անունով եկածն[23]՝

[8] Մարկ· թ· 35· Մարկ· զ· 6· [9] Մատթ· է· 13· [10] Ցաւմ· է· 34· ը· 21· Ժգ· 33· Հռովմ· թ· 31· [11] Սաղմ· լբ· 6· Եսայ· ծթ· 6· [12] Մատթ· իե· 10· [13] Դ·օրէ· զ· 46· [14] Մատթ· է· 23· իե· 12· [15] Մատթ· է· 23· իե· 41· վէր· 25· [16] Սաղմ· զ· 8· Մատթ· իե· 41· [17] Մատթ· ը· 12· Ժգ· 42· իդ· 51· [18] Մատթ· ը· 11· [19] Մատթ· ժթ· 30· ի· 16· Մարկ· ժ· 31· [20] Եբր· բ· 10· [21] Մատթ· իգ· 37· [22] Դ·էսդ· իզ· 31, 32· Սաղմ· կթ· 25· Եսայ· ա· 7· Դան· թ· 27· Մէտ· գ· 12· [23] Սաղմ· ճժը· 26· Մատթ· իա· 9· Մարկ· ժա· 10· Դ·օրէ· ժթ· 38· Ցաւմ· ժբ· 13·

## ԳԼ. ԺԹ

1 Քրիստոս չաբաթ օրումն ջրդողված մարդն կրբժշկէ. 7 Խոնարհութիւն, 12 եւ աղքատներին ճաշ անելն կըսովորցնէ. 15 եւ մին ընթրիքի առակով ցոյց կըտայ թէ Աստուծոյ խօսքն առօղ աշխարհասէր մարդիքն ինչպես երկնքին դռրս պիտի քցվին։ 25 Նորա աշակերտ լինիլ եւ իրանց խաչըն վեր առնել կամեցողներն պէտք է որ առաջուց իրանց անձներին փորձեն, որ չըլինի թէ վերջն ամեհի ցետ դառնան, 34 եւ համն կորած աղի պէս անպիտան լինին։

1 Եւ էլաւ որ նա մին չաբաթի օրում փարիսեցոց իշխաններից մինի տունն մտաւ՝ որ հաց ուտէ. եւ նոքա նայեցան նորան։

2 Եւ ահա՝ էնտեղ մին ջրդողված մարդ կար նորա առաջին։

3 Յիսուս պատասխան տուաւ եւ էն օրէնք գիտօղներին եւ փարիսեցիներին ասաց, միթէ արժանի է չաբաթի օրումն բժշկութիւն անել[1]։

4 Եւ նոքանք լուռ կացան. եւ ձեռով բռնեց նորան՝ եւ նորան բժշկեց եւ արձակեց։

5 Եւ նորանց ասաց. ձեզանից ո՞րի էշն կամ եզն ջրհորի մէջ ընկնի եւ շուտով չըհանէ նորան չաբաթի օրումն[2]։

6 Եւ չըկարացին պատասխան տալ նորան էն բանի համար։

7 Էն կանչված մարդկանցն էլ մին առակ ասաց, տեսնելով՝ թէ ինչպես վերեւի տեղերըն ընտրուէին. ասաց նորանց։

8 Երբոր մինն քեզ հարսանիք կամ հացկերութիւն կանչէ, առաջին բարձին վերայ մի նստիր. չըլինի թէ քեզանից էլ աւելի պատուական (մարդ) լինի կանչված նորանից։

9 Եւ նա՝ որ քեզ եւ նորան կանչեց, գայ եւ քեզ ասէ. սորան տեղ տուր. եւ ապա սկսես ամենով ետին տեղումն նստիլ։

10 Այլ երբոր կանչվիս՝ գնա ետին տեղումն նստիր[3]. որ նա՝ որ կանչեց քեզ՝ երբոր գայ, ասէ քեզ. բարեկամ՝ վերեւ նստիր. էն ժամանակն քեզ հետ նստօղների առաջին փառք կըլինի քեզ։

11 Պատճառն որ՝ ամեն ով որ իրան անձըն բարձրացնումէ՝ կըխոնարհվի. եւ ով որ (իրան) անձըն խոնարհացնումէ, կըբարձրանայ[4]։

12 Եւ հացկերութեան տիրոջն էլ ասաց. երբոր ճաշ կամ ընթրիք (նրկնիան հոցկերօ-նկոն) անես, մի կանչեր քո բարեկամներիդ, եւ ոչ քո եղբայրներիդ, եւ ոչ քո ազգականներիդ, եւ ոչ քո հարեւաններիդ եւ ոչ էլ մեծամեծներին. որ չըլինի թէ նորանք էլ նորա տեղակ կանչեն քեզ եւ էն հատուցումն լինի քեզ։

13 Այլ երբոր հացկերութիւն անես՝ կանչիր աղքատներին եւ խեղերին (սաֆաոպնէրքին) եւ կաղերին եւ կուրերին[5]։

14 Եւ երանելի կըլինիս. ինչու որ՝ բան չունին որ նորա տեղակ վճարեն քեզ. եւ արդարների յա-

[1] Մատթ. ժբ. 10։ [2] Ելք. իգ. 5։ բ Օրէն. իբ. 4։ Ղեւ. ժգ. 15։ [3] Ղեւ. իե. 6, 7։ [4] Ցոբ. իբ. 29։ Սաղմ. ժբ. 27։ Ղեւ. իե. 23։ Մատթ. իգ. 12։ Ղեւ. ժբ. 14։ Ցեղ. գ. 6։ ա Պետր. ե. 5։ [5] Նեէմ. ը. 10, 12։

բուխեան ժամանակումն նորա տե-
ղակ հատուցումն կըլինի քեզ :
15 Եւ երբոր էն սեղան նստօղներից
մինն էս բանըս լսեց՝ նորան ասաց.
երանի՛ նորան՝ որ Աստուծոյ արքա-
յութիւնումն ճաշ կուտէ[6],
16 Եւ նա ասաց. մին մարդ ընթե-
րիք (էքվիլան հացկերոյթն) արաւ
եւ շատ մարդիկ հրաւիրեց[7]:
17 Եւ ընթերիքի ժամն (սահմանն)
որ եկաւ՝ իրան ծառան ուղարկեց՝
որ էն հրաւիրածներըն կանչէ թէ
եկէք, որ ահա ամէն բան պատրաստ
է[8]:
18 Եւ ամէնքն սկսեցին մին մին
պես քաշվիլ . առաջինն ասաց . արտ
գնեցի, եւ պէտք է՝ որ գնամ նորան
տեսնեմ . աղաչումեմ քեզ՝ որ ինձ
ներող տաս :
19 Եւ մէկէլն ասաց . հինգ զուգ
եզ գնեցի, եւ գնումեմ որ նորանց
փորձեմ . աղաչումեմ քեզ՝ որ ինձ
ներող տաս :
20 Եւ մէկէլն ասաց . կին առի, եւ
նրահամար չեմ կարող գալ :
21 Եւ ծառան եկաւ եւ էս բանըս
պատմեց իրան տիրոջն . էն ժամա-
նակն տան տէրն բարկացաւ եւ իրան
ծառային ասաց . դուրս գնա շուտով
քաղաքիդ բաց տեղերըն եւ փո-
ղոցներն . եւ աղքատներին եւ խե-
ղերին, եւ կաղերին եւ կուրերին
բեր մոցրու էստեղս :
22 Եւ ծառան ասաց . տէր՝ ինչ որ
հրամայեցիր էլաւ , եւ դեռ էլ տեղ
կայ :
23 Եւ տէրն ասաց ծառային .
դուրս գնա ճանապարհներն եւ պա-
տի տակերն՝ եւ ստիպիր որ էստեղս
մտնեն, որ իմ տունս լցվի :
24 Ասումեմ ձեզ՝ թէ էն կանչ-
վածներից իսկի մինն էլ իմ ընթե-
րիքս համըն չըպիտի առնէ[9]:
25 Եւ շատ ժողովուրդներ նորա
հետ գնումէին . դարձաւ եւ նորանց
ասաց .
26 Թէ որ մինն ինձ մօտ գայ[10] եւ
չատէ իրան հօրըն եւ մօրըն, կըն-
կանըն եւ որդիքներին, եւ եղբայր-
ներին եւ քրվիներին[11], եւ հենց ի-
րան անձին էլ[12] . նա չի՛ կարող ինձ
աշակերտ լինիլ :
27 Ինչու որ՝ ով որ իրան խաչըն
վեր չառնէ եւ իմ ետեւէս գայ՝ նա
չի կարող ինձ աշակերտ լինիլ[13]:
28 Չէ՞ պանից ով է՝ որ կամենայ
աշտարակ (բուրջ) շինել՝ եւ առաջ
չի նստի եւ ծախսըն համարէ՝ եթէ
աւարտելոյ համար բաւական բան
ունի՝[14]:
29 Որ չըլինի թէ երբոր հիմունք-
քըն քցէ եւ չըկարօղանայ աւար-
տել, ամէնքն որ տեսնեն, սկսեն
ծաղր անել նորան .
30 Եւ ասել . թէ էս մարդըս ըս-
կսեց շինել, եւ չըկարաց աւարտել :
31 Կամ թէ՝ որ թագաւոր կը-
գնայ ուրիշ թագաւորի հետ կռիւ
կանէ . եւ չի՛ նստիլ առաջ միտք
անել՝ եթէ տասն հազարով կարող
է դէմ կենայ նորան՝ որ քսան հա-
զարով պիտի գայ իրան վերայ :
32 Ապա թէ չէ՝ քանի որ հեռու
է՝ պատգամաւոր կուղարկէ՝ եւ կա-
ղաչէ՝ որ խաղաղութիւն անէ :
33 Ուրեմն՝ էսպէս էլ ձեզանից
ամէն մէկն՝ որ իրան ամէն ապրան-
քից չըհրաժարվի՝ չի՛ կարող ինձ

[6] Յայտ. ժթ . 9 ։ [7] Լուսկ . իբ . 2։ [8] Ա-ել . թ . 2, 5։ [9] Լուսկ . իա . 43 ։ իբ . 8 ։ Գործ .
ժգ . 46 ։ [10] ը Օբդ . ժգ . 6 ։ լգ . 9 ։ Լուսկ . ժ . 37 ։ [11] Հռովմ . թ . 13 ։ [12] Յայտ . ժբ . 11 .
[13] Լուսկ . ժգ . 24 ։ Լուսկ . ը . 34 ։ Ղեւ . թ . 23 ։ ը Ջիմ . գ . 12 ։ [14] Ա-ել . իգ . 27 ։

աշակերտ լինել :

34 Աչն լաւ (բան) է. բայց թէ որ աղն անհամանայ, ի՞նչով պիտի համեղանայ[15] :

35 Ո՛չ հողի համար է պիտանի եւ ո՛չ աղբի համար, այլ պէտք է դուրս քցվի. ով որ լսելոյ ականջ ունի՝ թո՛ղ լսէ :

## Կ Ա · Յ Ե

1 Կորած ոչխարի, 8 Դրամի, 11 Եւ անառակ որդոյ առակները :

1 Ու ամէն մաքսաւորներն (կո՛ր-ղոտչինեքն) եւ մեղաւորներն մատենուելին նորան որ (բան) լսեն նորանից[1] :

2 Փարիսեցիներն եւ կարդացողներն տրտնջուելին եւ ասում. սա ի՞նչու է մեղաւորներին ընդունում՝ եւ նորանց հետ ուտում[2] :

3 Ու առակը ասաց նորանց :

4 Ո՞վ է էն մարդը՝ որ հարիւր ոչխար ունենայ, եւ նորանցից մինըն կորցնէ[3]. նա չի՞ թողել էն իննսուն եւ իննըն անապատումն (չո՛լոն) եւ էն կորածի ետեւէն գնալ՝ մինչեւ որ գանէ նորան :

5 Ու երբոր կըգանէ՝ ուրախանալով իրան ուսերին վերայ կըդնէ նորան.

6 Ու տուն կըգնայ, բարեկամներին եւ դրացիներին (հարեւա՛ննեքն) կըկանչէ եւ նորանց կասէ. ուրախացէք ինձ հետ, ինչու որ իմ կորած ոչխարըս գտի[4] :

7 Ասում եմ ձեզ, թէ էսպէս աւելի ուրախութիւն կըլինի երկնքումն մին մեղաւորի համար՝ որ ապաշխարէ, քանթէ իննսուն եւ ինն արդարների համար՝ որ ապաշխարութիւն պէտք չէ նորանց[5] :

8 Կամ ո՞վ է էն կինն՝ որ տասն դրամ ունենայ, եւ թէ որ մին դրամ կորցնէ՝ ճրագ չի՞ վառիլ եւ տան մէջն աւելել եւ շատ շուռ գալ՝ մինչեւ որ գտնէ :

9 Ու երբոր կըգանէ՝ բարեկամներին եւ դրացիներին (հարեւա՛ննեքն) կըկանչէ եւ կասէ. ուրախացէք ինձ հետ, ինչու որ իմ դրամըս գտի՝ որ կորցրել էի :

10 Ասում եմ ձեզ, էնպէս էլ՝ Աստուծոյ հրեշտակների առաջին ուրախութիւն կըլինի մին մեղաւորի համար որ կապաշխարէ :

11 Ու ասաց. մին մարդ երկու որդի ունէր.

12 Ա՝որանցից փոքրն ասաց Հօրն. Հայր՝ ինձ բաժին տուր ինչ որ կըհասնի ինձ ապրանքներիցդ, եւ նա իրան ապրանքըն բաժանեց նորանց[6] :

13 Ու շատ օր չանցկացաւ՝ որ փոքր որդին ամէն բաներըն ժողովեց եւ հեռու աշխարհք գնաց, եւ էնտեղ իրան ապրանքըն մսխեց, ինչու որ՝ անառակութենով կեանք էր վարում :

14 Ու երբոր ամէնըն հատցրուց՝ սաստիկ սով եկաւ էն աշխարհքումն եւ ինքն սկսեց չքաւորվիլ :

15 Ու գնաց էն աշխարհքի քաղաքացիների մէնին մնա մնաւ. եւ նա նորան ուղարկեց իրան յանկն որ խոզ արածացնէ :

16 Ու ցանկանում եմ՝ որ իրան փորըն լցնէ էն եղջիւրովն՝ որ խոզերն

[15] Մատթ. ե. 13: Մարկ. թ. 50: [1] Մատթ. թ. 10: [2] Գործ. ժա. 3: Գաղ. բ. 12: [3] Մատթ. ժը. 12: [4] ա Պետր. բ. 10, 25: [5] Ղուկ. ե. 33: [6] Մարկ. ժբ. 44:

ուտուամբին՝ եւ ոչ ոք չէր տալիս նրան։

17 Այս երբոր իրան խելքն եւ կաւ, ասաց. քանի՞ բանվորներ կան իմ հօրս տանն՝ հացով լցված՝ եւ ես հստեղ սովամահ կորչումեմ։

18 Ա՛ր կենամ գնամ իմ հօրս մօտ՝ եւ նորան ասեմ. հայր՝ ես մեղայ երկնքի դէմ եւ քո առաջիդ.

19 Այս էլ արժանի չեմ, որ քեզ որդի կոչվիմ. ինձ քո բանվորների մինին պէս արա։

20 Այս վերկացաւ եկաւ իրան հօր մօտ. եւ դեռ որ հեռու էր՝ հայրն տեսաւ նորան եւ խղճաց. վերացաւ եւ առաջն վազեց՝ նորա վզովն ընկաւ՝ եւ համբուրեց նորան[7]։

21 Այս որդին ասաց նորան. հայր՝ ես մեղայ երկնքի դէմ եւ քո առաջիդ, եւ էլ չեմ արժանի՝ որ քեզ որդի կոչվիմ[8]։

22 Հայրն ասաց իրան ծառաներին. շուտով առաջին կապան հագցրէք եւ հագցրէք նորան, եւ մատանի դրէք նորա ձեռն՝ եւ կօշիկներ նորա ոտներն։

23 Այս մեզալու եղնն բերէք մորթեցէք՝ ուտենք եւ ուրախ լինինք։

24 Վասն որ՝ ես իմ որդիս մեռած էր, եւ կենդանացաւ. կորած էր, եւ գտաւ. եւ սկսեցին ուրախ լինել[9]։

25 Այս նորա մեծ որդին յանդումն էր. եւ երբոր գալեսէր եւ տանն մօտեցաւ՝ տաղերի եւ պարդալոյ ձայնըն լսեց։

26 Այս ծառաներից մինին կանչեց իրան մօտ՝ հարցնումէր թէ էդ ինչ (բան) է։

27 Այս նա ասաց նորան. ներաւ մաս որ քո եղբայրդ եկել է, եւ քո հայրը մատաղ եղն մորթեց՝ որովհետեւ առջեւթիվնով ընդունեց նորան։

28 Խարկացաւ եւ չէր ուզում ներս մտնել՝ եւ հայրն դուրս եկաւ՝ աղաչումէր նորան։

29 Պատասխան տուաւ՝ եւ ասաց հօրն. էս քանի տարի է՝ որ քեզ ծառայումեմ՝ եւ քո պատուիրանքից խսկի մին ժամանակ դուրս չեմ եկել. մին ուլ չըտուիր ինձ՝ որ իմ բարեկամներիս հետ ուրախ լինիմ։

30 Այրերը էդ քո որդիդ եկաւ՝ որ քո ապրանքըդ պոռնիկներին հետ կերաւ, մատաղ եղըն մորթեցիր դոռ ըա համար։

31 Այս նորան ասաց. որդեակ՝ դուռ ամէն ժամանակն ինձ հետ ես. եւ ամէն ինչ որ իմն է՝ քունն է։

32 Այայց ուրախ լինել եւ խնդալ պէտք էր. վասն որ՝ էս քո եղբայրդ մեռած էր եւ կենդանացաւ. կորած էր եւ գտաւ[10]։

## ՂՒ · ԱՅՈՑ

1 Ընդրաւ անտեսի առակն։ 14 Քրիստոս ապահ փարիսեցոց կեղծաւորութիւնն կը-տատաւէ։ 19 Շատակեր եւ աշխարհիկ սիրող հարուստի եւ աղքատ ղազարոսի առակն։

1 Այս աշակերտներին ասաց. մին հարուստ մարդ կար՝ որ տնտես ունէր. եւ չարախօսութիւն էլաւ նորա

2 Կանչեց՝ եւ ասաց նորան. էս լսում եմ քո մասին։ Հաշիւ տուր քո տնտեսութեան, որովհետեւ

[7] Գործ. ը. 39։ Եփես. ը. 13, 17։ [8] Յոել. ծ. 4։ [9] Ղուկ. 32։ Եփես. ը. 1։ ե. 14։ Յայտ. գ. 1։ [10] Ղուկ. 24։

ինչ է որ ես լսումեմ քեզանից. քո անտեսութեան համարըն տուր. ինչու որ՝ էլ կարօղ չես տնտես լինել:

3 Տնտեսն իրան մտքումն ասաց. ի՞նչ անեմ. որ իմ տէրս տնտեսութիւնըն ինձանից առնումէ. գործ գործել չեմ կարօղ՝ եւ մուրանալ ամաչումեմ:

4 Գիտումեմ ինչ կանեմ, որ երբոր էս տնտեսութենից դուրս գամ՝ (մարդիք) ընդունին ինձ իրանց տըներըն:

5 Իւր իրան տիրոջ պարտականներին մին մին իրան մօտ կանչեց, առաջինին ասաց. ի՞նչքան բան պարտական ես իմ տիրոջս:

6 Իւ նա ասաց. Հարիւր մար (չափ) ձէթ. Նորան ասաց. քո գիրըդ առ եւ նստիր շուտով գրիր յիսուն:

7 Յետոյ մէկէլին էլ ասաց. դու ի՞նչքան բան պարտական ես. եւ նա ասաց. Հարիւր քոռ (ասղաբ) ցորըն. եւ նորան ասաց. քո գիրըդ առ եւ նստիր գրիր ութսուն:

8 Իւ տէրն էն անիրաւ տնտեսին գովեց, որ խմաստութենով գործեց. պատճառն որ՝ էս աշխարհքիս որդիքն լուսոյ որդիքներից աւելի խմաստուն են իրանց ցեղի մէջն[1]:

9 Իւ ես ասումեմ ձեզ. թէ անիրաւ մամոնայից բարեկամներ արէք ձեզ համար[2] որ երբոր էն պակասի, յաւիտենական բնակարաններին մէջ ընդունեն ձեզ:

10 Իվ որ քիչ բանի մէջ հաւատարիմ է, (նա) շատ բանի մէջ էլ հաւատարիմ է[3]. եւ նա որ քիչ բանի մէջ անիրաւ է, շատ բանի մէջ էլ անիրաւ է:

11 Իւրեմն՝ թէ որ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չէլաք. ապա ճշմարիտըն ո՞վ կըտայ ձեր ձեռքն:

12 Իւ թէ որ օտար բանի մէջ հաւատարիմ չէլաք, ապա ձերըն ո՞վ կըտայ ձեզ:

13 Իվ ով ծառայ չի՛ կարօղ երկու տիրոջ ծառայել[4]. ինչուոլ՝ կամ մէնին կատէ եւ մէկէլին կըսիրէ. կամ մէնին կըպատուէ եւ մէկէլին ոչընչի տեղ կըհամարէ. կարօղ չէք Աստուծոյ ծառայել եւ մամոնային:

14 Իս ամէն բաներըս երբոր փարիսեցիներն լսումէին՝ որովհետեւ արծաթասէր էին, ծաղր էին անում նորան[5]:

15 Իւ նորանց ասաց. դուք էք՝ որ մարդկանց առաջին ձեր անձներըդ արդարացնումէք[6] բայց Աստուած գիտումէ ձեր սրտերըն[7]. պատճառն որ՝ ով որ մարդկանց առաջին բարձր է՝ նա պիղծ է Աստուծոյ առաջին[8]:

16 Օրէնքն եւ մարգարէքն մինչեւ Յօհաննէսն[9] (էլան). Ներանից ետեւ Աստուծոյ արքայութիւնն աւետարանվումէ, եւ ամէն մարդ ուժով բռնումէ նորան:

17 Աւելի հեշտ է որ երկինքն եւ երկիրս անցկենան, թէ քան օրէնքիցն մին պղտիկ նշանագիր վեր ընկնի[10]:

18 Ամէն ով որ իրան կինըն դուրս է անում եւ ուրիշ առնումէ, շնութիւն է գործում. եւ նա որ էն դուրս արածըն առնումէ՝ շնութիւն է գործում[11]:

[1] Ցածկ. ժր. 36: Եփես. ե. 8: ա Թես. ե. 5: [2] Դան. դ. 27: Առակ. գ. 19: ժթ. 21: Գործ. ժա. 41: ա Տիմ. ջ. 17–19: [3] Առակ. իե. 21: Գործ. ժթ. 26: [4] Առակ. գ. 24: [5] Առակ. իդ. 14: [6] Գործ. ժ. 29: [7] Սամ. է. 9: [8] ա Թագ. ժգ. 7: [9] Առակ. գ. 17: ժա. 12, 13: Գործ. է. 29: [10] Ամոս. ծբ. 26, 27: Եսայ. խ. 8: ծա. 6: Առակ. ե. 18: ա Պետր. ա. 25: [11] Առակ. ե. 32: ժթ. 9: Առակ. ժ. 11: ա Կորնթ. է. 10, 11:

19 Մին Հարուստ մարդ կար՝ եւ շատ աղնիւ բեհեզներ եւ ծիրանի շորեր էր հագնում՝ եւ ամէն ժամանակ շատ ուրախութեան մէջ էր։

20 Եւ մին աղքատ մարդ էլ կար՝ ղազարոս անուն, որ խոցերով լցված նորա դուռն ժօտ վէր ընկած էր։

21 Եւ ցանկանում էր՝ որ իրան փորըն լցնէ էն փշրանքներիցն՝ որ էն հարուստի սեղանիցն ընկնում էին՝ բայց շներն էլ գալիս էին եւ նորա խոցերըն լիզում էին։

22 Եւ էլաւ որ աղքատն մեռաւ, եւ հրեշտակներն տարան նորան աբրահամի գոգն. հարուստն էլ մեռաւ՝ եւ թաղվեցաւ։

23 Եւ դժոխքի մէջն՝ երբոր տանջանքի մէջ էր, իրան աչքերըն բարձրացրուց աբրահամին հեռուանց տեսաւ՝ եւ ղազարոսին էլ որ նորա գոգումն հանգիստ առած էր։

24 Եւ նա ազաղակեց եւ ասաց. Հայր աբրահամ՝ ինձ ողորմիր, եւ ղազարոսին ուղարկիր որ իրան մատի ծայրըն թաց անի ջրումն, եւ իմ լեզուս հովացնէ[12], ինչու որ՝ էս սաստիկ տաքութենիցս պապակվում եմ[13]։

25 Եւ աբրահամն նորան ասաց. որդի՝ միտգդ լինի, որ քո բարիքըդ քո կեանքումդ ընդունեցիր՝ ենպէս էլ ղազարոսն չարչարանքներ[14]. հիմի՝ սա էս տեղ մխիթարվում, եւ դու էդ տեղ պապակվում ես։

26 Եւ էս ամէնիս վերայ՝ մեր մէջն՝ եւ ձեր մէջն մեծ անդունդ կայ, որ եթէ կամենան էստեղից ձեզ ժօտ անցկենալ՝ չեն կարող, եւ ոչ էլ էդ տեղից մինն կարող է մեզ ժօտ անցկենալ։

27 Եւ ասաց. ապա ազաչում քեզ հայր՝ որ գորան ուղարկես իմ հօրս տունն։

28 Ինչուր՝ ես հինգ եղբայր ունիմ, որ նորանց վկայութիւն տայ, որ նորանք էլ չըգան էս տանջանքիս տեղըն։

29 Եւ աբրահամն ասաց. նորանք մօսէսին եւ մարգարէներին ունեն՝ թող նորանց ականջ դնեն[15]։

30 Եւ նա ասաց. չէ, հայր աբրահամ, բայց թէ որ մեռելներիցն մինն նորանց մօտ գնայ, կապաշխարեն։

31 Եւ նորան ասաց. թէ որ մօսէսին եւ մարգարէներին ականջ չեն դնում՝ էլ թէ որ մեռելներիցն մինն յարութիւն առնէ՝ չեն հաւատալ[16]։

## ԻԱ · ԺԱ

1 Իրան աշակերտներին էլ ասաց. թէ կարելի չէ՝ որ գայթակղութիւն չըգայ[1]. բայց վայ է էն մարդոյն՝ որ նորա ձեռովն կըգայ։

2 Աւելի լաւ էր նորան՝ որ նորա վըզովն ջաղացի քար կախվէր եւ ծովն ընկներ՝ քան թէ էս փոքրներիցս մինին գայթակղացնէ։

---

¶ Քրիստոս կըսովորցնէ որ գայթակղութիւն ասելոց բաներից զգոյշ լինին, 3 Եւ իրար ներին, 6 Հաւատքի զօրութիւնն, 7 Մինք Աստուծոյն պարտական ենք, եւ չէ թէ Աստուած մեզ պարտական է։ 11 Յառն բորոտների սրբվիլն։ 22 Աստուծոյ սրբությութեան եւ Որդոյ մարդոյ գալոյ պատմութիւնն։

[12] Ջատ. ժգ. 12։ [13] Եսայ. կզ. 24։ Մարկ. թ. 44, Եսայ. [14] Յոբ. իա. 13։ Ղուկ. զ. 24։ [15] Եսայ. ը. 20։ լգ. 16։ Յովհ. ե. 39, 45։ Գործ. ժե. 21։ ժէ. 11։ [16] Յովհ. ժբ. 10, 11 Մարկ. ժը. 6, 7։ Մարկ. թ. 42։ ա Կորնթ. ժա. 19։

3 Օգնիշ կացէք անձնէրիդ. Թէ որ քո եղբայրդ մեղք անէ[2] սաստիր նորան[3], եւ թէ որ ապաշխարէ՝ թո-ղուլիւն տուր նորան:

4 Եւ թէ որ եօթն անգամ քեզ դէմ մեղք անէ՝ եւ եօթն անգամ քեզ մօտ դառնայ եւ ասէ՝ (Թէ) ա-պաշխարումէ՝ թողուլիւն տուր նորան:

5 Եւ առաքեալներն ասացին Տէրին՝ մեր հաւատքըն աւելացուր:

6 Եւ Տէրն ասաց. Թէ որ մա-նանեխի (նրպոյէ) հատին չափ հա-ւատք ունենաք, եւ էս թըզի ծառին ասէք. պոկվիր եւ ծովն մէջն տըն-կըվիր՝ կըհնազանդվի ձեզ[4]:

7 Ասյց ձեզանից ո՞վ է նա՝ որ մին հողագործ կամ հովիւ (չոպան) ծառայ ունենայ, որ երբոր յանդիպի (գայ տուն) մտնէ՝ շուտով ասէ նո-րան՝ Թէ ելի սեղան նստիր:

8 Ասյց չասէ՞ նորան՝ Թէ պատ-րաստիր ինչ որ իրիկունն պիտի ու-տեմ, եւ գօտիկըդ կապած ինձ ծա-ռայիր՝ մինչեւ որ ուտեմ եւ խմեմ, եւ յետոյ դու էլ կեր եւ խմիր[5]:

9 Միթէ էն ծառային շնոր-հակալ կըլինի՝ որ էն ամէն հրա-մաններըն արաւ:

10 Ինչպէս էլ դուք՝ երբոր ամէն ձեզ հրամայված բաներըն անէք, ասացէք Թէ՝ մենք անպիտան ծա-ռաներ ենք[6]. էն որ պարտական էինք անելոյ, արինք:

11 Եւ էլաւ՝ երբոր նա երուսա-ղէմ էր գնում՝ եւ ինքն սամարիայի եւ գալիլեացոց միջիցն էր անցկե-նում[7]:

12 Եւ երբոր մին գիւղ էր մըտ-նում, տասն բորոտ մարդիք պատա-հեցին նորան որ հեռուանց կանգ-նեցին[8]:

13 Ձայներըն բարձրացրին՝ եւ ա-սացին. Յիսուս վարդապետ՝ մեզ ողորմա՛:

14 Եւ երբոր տեսաւ նորանց՝ ա-սաց նորանց. գնացէք անձնէրդ քահանաներին ցոյց տուէք[9]. եւ էլ-լաւ երբոր գնացին՝ շուտով սրբվե-ցան:

15 Նորանցից մինն երբոր տեսաւ՝ Թէ բժշկըվեցաւ, յետ դարձաւ՝ բարձր ձայնով փառք էր տալիս Ա-ստուծոյն:

16 Իրան երեսին վերայ ընկաւ նորա ոտների առաջին, եւ գոհա-նումէր նորանից. եւ ինքն սամարա-ցի էր:

17 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. Է՞ որ տասն էին սորանք որ սրբվեցան. ապա էն իննն ո՞ւր են:

18 Որ խակի չը գտան որ յետ դառնան՝ եւ Աստուծոյն փառք տան, բայց միայն էս պըղպէխս:

19 Եւ ասաց նորան. վեր կաց գնա՛. ինչու որ քո հաւատքդ ապ-րեցրուց քեզ[10]:

20 Երբոր փարիսեցիներից հարցվեցաւ՝ Թէ Աստուծոյ արքայու-թիւնն երբ պիտի գայ. պատասխան տուաւ նորանց եւ ասաց. Աստուծոյ արքայութիւնն դրսի նշաններով չի գալ:

21 Եւ չեն ասիլ՝ Թէ ահա էստեղ կամ էնտեղ է[11]. ինչուր՝ ահա Աստուծոյ արքայութիւնն հենց ձեր

---

[2] Մատթ. ժը. 15, 21: [3] Ղեւտ. ժԹ. 17: Ա՛մոս. ժէ. 10: Ցաւ. է. 19: [4] Մատթ. ժէ. 20: իա. 21: Մարկ. Թ. 23: ժա. 23: [5] Ղուկ. ժը. 37: [6] Ցոբ. իը. 3: լե. 7: Սաղմ. ժզ. 2: Մատթ. իե. 30: Հռոմ. գ. 12. ժա. 35: ա Կորնթ. Թ. 16, 17: Փիլիպ. 11: [7] Ղուկ. Թ. 51, 52: Ցովհ. գ. 4: [8] Ղեւտ. ժգ. 46. [9] Ղեւտ. ժգ. 2 ժգ. 3: Մատթ. ը. 4: Ղուկ. է. 14: [10] Մատթ. Թ. 22: Մարկ. է. 34. ժ. 52: Ղուկ. է. 50: ը. 48: ժը. 42: [11] Ղուկ. 23:

ներսեւումն է[12]։

22 Աշակերտներին էլ ասաց. օրեր կըգան՝ որ դուք կըցանկանաք որդոյ մարդոյ օրերից մինըն տեսանել, եւ չէք տեսնիլ[13]։

23 Եւ թէ որ ասեն ձեզ՝ ահա էստեղ է կամ հնտեղ՝ եռեւէն չըգնաք[14]։

24 Պատճառն որ՝ ինչպէս կայծակն որ փայլումէ, երկնքի տակն (մին կողմիցն) լոյս է տալիս մինչեւ երկնքի տակովն (մէկէլ կողմն)՝ հնպէս էլ որդին մարդոյ իրան օրումն[15]։

25 Բայց առաջ պէտք է՝ որ նա շատ չարչարվի եւ անարգվի էս ազգիցս[16]։

26 Եւ ինչպէս որ Նոյի օրերումն էլաւ՝ հնպէս էլ որդոյ մարդոյ օրերումն կըլինի[17]։

27 Ուտումէին՝ խմումէին՝ կին էին առնումա՝ եւ մարդոյ էին տնումա, մինչեւ էն օրն՝ որ Նոյ մտաւ գապանըն. եւ ջրհեղեղն եկաւ եւ ամենին կորցրուց։

28 Նոյնպէս էլ՝ ինչպէս որ Ղովտի օրերումն էլաւ. ուտումէին, խմումէին, գնումէին՝ ծախումէին, տընկումէին՝ շինումէին[18]։

29 Եւ էն օրումն՝ որ Ղովտ սօդոմիցն դուրս եկաւ՝ կրակ եւ ծրծումն (բառաքով) թափվեցաւ երկնքիցն եւ ամենին կորցրուց[19]։

30 Հնց էն կերպովն էլ կըլինի էն օրումն՝ որ որդին մարդոյ կըյայտնըվի[20]։

31 Էն օրումն՝ նա որ կըտրի վերայ լինի եւ իրան բաներն տան մէջն՝ թող վէր չըգայ, որ նորանց առնէ[21]. եւ ով որ յանդումն լինի՝ հնպէս էլ թող յետ չըդառնայ։

32 Մ՚ըտքներդ բերէք ղովտի կնոջն[22]։

33 Ով որ կըկամենայ իրան անձըն ապրեցնել՝ կըկորցնէ նորան. եւ ով որ կըկորցնէ, կապրեցնէ նորան[23]։

34 Ասումեմ ձեզ. էն գիշերումն երեք հոգի մին մահճի (ախոռ չէնի) մէջ լինին՝ մինն կառնըվի եւ մէկէլն կըթողվի[24]։

35 Եւ երեք հոգի մինտեղ աղալոյ վերայ լինին՝ մինն կառնըվի եւ մէկէլն կըթողվի. եւ երեք հոգի յանդումն լինին՝ մինն կառնըվի եւ մէկէլն կըթողվի։

36 Պատասխան տուին՝ եւ նորան ասացին. Տէր՝ ո՞րտեղ (պիտի լինի)[25]։

37 Եւ նա ասաց նորանց. որտեղ որ մարմին կայ, արծիւներն էլ էնտեղ կըհաւաքվին։

---

[12] Հռոմ. ժգ. 17։ [13] Մատթ. ի. 15։ Յովհ. ժէ. 12։ [14] Մատթ. իդ. 23։ Մարկ. ժգ. 21։ Ղուկ. իա. 8։ [15] Մատթ. իդ. 27։ [16] Մարկ. ը. 31։ ի. 31։ ժ. 33։ Ղուկ. թ. 22։ [17] Ծննդ. է. Մատթ. իդ. 37։ [18] Ծննդ. ժի. 19։ Ծննդ. ժի. 16. 24։ [20] ը Թես. ա. 7։ [21] Մատթ. իդ. 17։ Մարկ. ժգ. 15։ [22] Ծննդ. ժի. 26։ [23] Մատթ. ժ. 29։ ժը. 25։ Մարկ. ը. 35։ Ղուկ. թ. 24։ Յովհ. ժբ. 25։ [24] Մատթ. իդ. 40, 41։ աթես. դ. 17։ [25] Յոբ. լեզ. 30։ Մատթ. իդ. 28։

## Գ·Ի, · ԺՐ

3 Շատ աշխատացնող որբևէրի կնկան, եւ փարիսեցոյ եւ մաքսաւորի պատմութիւնն։
15 Երեխաներին Քրիստոսի բերվելն։ 18 Յաւիտենական կեանքն կանգնող եւ Քրիստոս-
ի եաեւէն դնալոյ համար իրան հարստութենից աթգելված իշխանն։ 28 Քրիստոսի
համար ամէն բաներըն քցողի վարձքն։ 31 Քրիստոս իրան մահն առաջուց ցոյց կըտայ։
35 Մին կոյր մարդոյ աչքերն կըբանայ։

1 Ա՚ին առակ էլ ասաց նորանց՝ նրա վերայ թէ պէտք է նորանց՝ որ ամէն ժամանակ աղօթք անեն եւ չը-
ձանձրանան[1]։

2 Ա՚սաց. մին դատաւոր կար մին քաղաքի մէջ, որ Ա՚ստուածանից չէր վախենում եւ մարդկանցից էլ չէր ամաչում։

3 Ա՚յ մին որբևէրի էլ կար էն քաղաքումն, նորա մօտ էր գալիս եւ ասում, թէ իրաւունք արա ինձ իմ հակառակ ոսոխից։

4 Ա՚յ նա շատ ժամանակ չէր կամենում. նրանից ետեւ իրան մտքումն ասաց. թէ եւ Ա՚ստուածանից չեմ վախենում եւ մարդկանցից չեմ ամաչում,

5 Ա՚յց որովհետեւ էս որբևէրս աշխատացնում ինձ՝ իրաւունք կանեմ նորան՝ որ չը գայ աղաչելով իսպառ ձանձրացնէ ինձ[2]։

6 Ա՚յ Տէրն ասաց. լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ էր ասում։

7 Ա՚յց Ա՚ստուած միթէ իրան ծառաներին համար վրէժ չի՞ խընդրիլ, որ ցերեկ եւ գիշեր աղաղակում են դէպի նա[3]. եւ միանակ նորանց համար երկայնամիտ կը լինի։

8 Ա՚սում եմ ձեզ՝ թէ շուտով վրէժխնդրութիւն կանէ նորանց համար[4]. բայց որդին մարդոյ երբոր կըգայ՝ միթէ հաւատք կը-
գտնէ՞ երկրի վերայ։

9 Ա՚յն քանի մարդկանց էլ՝ որ իրանց մտքերումն պարծենում էին՝ իբր թէ արդար են՝ եւ ուրիշներին ոչ ինչ էին համարում՝ էս առակը
ասաց[5]։

10 Ա՚յրկու մարդ վեր էլան տաճարըն որ աղօթք անեն. մինն փարիսեցի եւ մէկէլն մաքսաւոր (Ա՚մպռո-
չէ)։

11 փարիսեցին ջոկ կանգնած էր եւ առանձին էս աղօթքըս էր ա-
նում[6]. իմ Ա՚ստուած, գոհանում եմ քեզանից՝ որ ես ուրիշ մարդկանց պէս չեմ՝ յափշտակողների, եւ ա-
նիրաւների, եւ շնացողների, կամ թէ էս մաքսաւորիս պէս[7]։

12 Ա՚յց շաբաթումն երկու անգամ պաս եմ պահում՝ եւ իմ ամէն ապրանքներիցս տասանորդ եմ տա-
լիս։

13 Ա՚յ մաքսաւորն հեռու կանգնած էր՝ եւ իրան աչքերըն էլ չէր կամենում դէպի երկինքն բարձրացընել. բայց իրան կուրծքըն (պօշէն)
թակում էր եւ ասում. Ա՚ստուած՝ քաւիր ինձ մեղաւորիս։

14 Ա՚սում եմ ձեզ՝ թէ այս ար-

[1] Դ–ե։ ժա. 5։ իա. 36։ Հ–ե։ ժբ. 12։ Եփես. գ. 18։ Կող. դ. 2։ ա Թես. ե. 17։
[2] Դ–ե։ ժա. 8։ [3] Յայտ. գ. 10։ [4] Եբր. ժ. 37։ բ Պետ. գ. 8։ 9։ [5] Դ–ե։ ժ. 29։ ժգ. 15։ [6] Ա–մ. ճկե. 2։ [7] Եսայ. ա. 15։ ծը. 3։ Յայտ. գ. 17։

դարացած գնաց իրան տունըն քան-
ԹԷ նա. ինչու որ՝ ամէն ով որ իրան
անձըն բարձրացնուէ՝ կըխոնարհ-
վի, եւ ով որ իրան անձըն խոնար-
հացնուէ՝ կըբարձրանայ[8]:

15 Ու նախանները էլ բերուէին նո-
րա մօտ՝ որ նորանց մօտնուայ[9]. ա-
շակերտներն երբոր տեսին, սաս-
տուէին նորանց:

16 Բայց Յիսուս նորանց իրան
մօտ կանչեց, եւ ասաց. ԹոյլՏուէք
էդ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան,
եւ մի արգելէք դորանց. ինչու որ՝
էդպէսներուն է Աստուծոյ արքա-
յութիւնն[10]:

17 Ա՛ՀմարիաԼն ասուէմ ձեզ.
ԹԷ ով որ Աստուծոյ արքայութիւ-
նըն չընդունի ինչպէս երեխայ՝ նա
չի՛ մտնիլ նորա մէջ[11]:

18 Ու մին իշխան՝ հարցրուց նո-
րան եւ ասաց. բարի վարդապետ՝
ի՞նչ գործեմ, որ յաւիտենական
կեանքըն ժառանգեմ[12]:

19 Յիսուս նորան ասաց. ի՞նչու
ես ինձ բարի ասուէմ. ոչ ով բարի
չը՛կայ բայց միայն մինն Աստուած:

20 Պատուիրանքներըն գիտուէս.
մի շնար, մի սպաններ, մի գողնար,
մի սուտ վկայեր[13], պատուիր քո
հօրըդ, եւ մօրըդ[14]:

21 Ու նա ասաց. էդ ամէնըդ իմ
երեխայութենիցն պահեցի:

22 Յիսուս երբոր էս լսեց՝ նորան
ասաց. մին բան էլ պակաս է քեզ.
ամէն ինչ՝ որ ունիս, ծախիր եւ աղ-
քատներին տուր, եւ գանձ (Խազինայ)
կունենաս երկինքըւմն, եւ իմ ետե-
ւէս եկ[15]:

23 Ա՛յս երբոր էս լսեց՝ տրտմե-
ցաւ. ինչու որ՝ շատ հարուստ էր:

24 Յիսուս երբոր նորան տրտմած
տեսաւ, ասաց. նորանք որ ապրանք
ունին՝ ի՞նչպէս գժուարութենով
կըմտնեն Աստուծոյ արքայութիւ-
նըն[16]:

25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի
ծակով անցկենայ, քան ԹԷ հա-
րուստն Աստուծոյ արքայութիւնն
մտնէ:

26 Ու նորանք որ լսեցին՝ ասու-
մէին. էլ ո՞վ կարէ ապրիլ:

27 Ու նա ասաց. էն բաներն որ
անկարելի են մարդկանց մօտ՝ կարե-
լի են Աստուծոյ մօտ[17]:

28 Ու պետրոս ասաց. ահա մենք
մեր ամէն բաներըն թողինք եւ քո
ետեւէդ եկինք[18]:

29 Ու նա ասաց նորանց. ճշմա-
րիտըն ասուէմ ձեզ, ԹԷ ոչ ով
չը՛կայ՝ որ տըները կամ ծնօղները
կամ եղբարները կամ կինը կամ որ-
դիքը թողնէ՝ Աստուծոյ արքայու-
թեան համար[19],

30 Որ շատ աւելի չառնէ էս ժա-
մանակումն՝ եւ էն աշխարհքումն՝ որ
գալու է՝ յաւիտենական կեանքըն
ժառանգէ[20]:

31 Ու էն տասներկուսին առան-
ձին առաւ եւ նորանց ասաց[21]. ահա
վեր ենք էլնում երուսաղէմ. եւ ա-
մէն բաներն որ մարգարէների ձե-
ռովն որդոյ մարդոյ համար գրված

[8] ՑՂ. իբ. 29: Մ՚ՈՒՂ. իդ. 12: Ղ՚ՈՒ. ժգ. 11: Ճ՚ՈՒ. գ. 6: ա Պետր. ե. 5, 6: [9] Մ՚ՈՒՂ. ժԹ. 13: Մ՚ՈՒՐ. ժ. 13: [10] ա Կորնթ. ժգ. 20: ա Պետր. բ. 2: [11] Մ՚ՈՒՐ. ժ. 15: [12] Մ՚ՈՒՂ. ԺԹ. 16: Մ՚ՈՒՐ. ժ. 17: [13] Եքս. ի. 12–16: բ Օրին. ե. 16–20: Հռովմ. ժգ. 9: [14] Եփես. զ. 2: Կող. գ. 20: [15] Մ՚ՈՒՂ. ղ. 19, 20: ԺԹ. 21: ա Տիմ. գ. 19: [16] Ա՚ՈՒՂ. ժա. 28: Մ՚ՈՒՂ. ԺԹ. 23: Մ՚ՈՒՐ. ժ. 23: [17] Եբրա. իբ. 17: Յոբ. ը. 6: Մ՚ՈՒՂ. ԺԹ. 26: Ղ՚ՈՒ. ա. 37: [18] Մ՚ՈՒՂ. ԺԹ. 27: [19] բ Օրին. լդ. 9: [20] ՑՂ. իա. 10: [21] Մ՚ՈՒՂ. ԺՂ. 21: ԺԷ. 22: ի. 17: Մ՚ՈՒՐ. ժ. 32:

են, կրկատաւվին[22]։

32 Ինչու որ՝ հրեշտանոսներուն ձեռքն կըմատնըվի եւ ծաղր կըլինի[23]։

33 Ու կրծեծեն եւ կըսպանեն նորան. եւ երեք օրուն յարութիւն կառնէ։

34 Ու նորանք ոչ ինչ չիմացան էն բաներուն՝ բայց խօսքն ծած կըված էր նորանցից՝ եւ ասած բաներըն չէին գիտում[24]։

35 Ու երբոր նա երիքովին մօտենում[25], մին կույր ճանապարհի վերայ նստած էր՝ մուրացական։

36 Երբոր ժողովըրդի անցկենալն լսեց, հարցնում՝ թէ էն ի՞նչ է։

37 Ու պատմեցին նորան՝ թէ Յիսուս Նազովրեցից անց կ՚կենում։

38 Աղաղակեց եւ ասաց. Յիսուս որդի դաւթի՝ ինձ ողորմեա։

39 Ու նորանք՝ որ առաջ էին գնում, սաստում էին նորան՝ որ լուռ կենայ. եւ նա էլ աւելի աղաղակում էր. որդի դաւթի՝ ինձ ողորմեա։

40 Յիսուս կանգնեց եւ հրամայեց՝ որ նորան իրան մօտ բերին. եւ երբոր իրան մօտ եկաւ՝ հարցրուց նորան եւ ասաց։

41 Ի՞նչ ես ուզում դու որ անեմ քեզ. եւ նա ասաց. Տէր՝ որ իմ աչքերս բացվին եւ տեսնեմ։

42 Ու Յիսուս ասաց նորան, նայիր, քո հաւատդ ապրեցրուց քեզ[26]։

43 Ու շուտով տեսաւ, եւ նորա ետեւէն գնում՝ եւ Աստուծոյն փառաւորում[27]. եւ ամէն ժողովրդն՝ որ տեսաւ՝ օրհնում էր տալիս Աստուծոյն։

## ԿԻ. ԺԹ

2 Զաքէոս մաքսաւորն։ 11 Մնասների առակն։ 28 Քրիստոսի քառակերն հեծած յաղթականութեամբ Երուսաղէմ մտնելն. 41 քաղաքին վերայ կլալ. 45 ծախողներին եւ գնողներին տաճարից դուրս կըհանէ. 47 Եւ ամէն օր էն տեղ կըսովորցնէ. քահանայապետներն եւ կարգացողներն ուզում էին որ նորան կորցնեն՝ բայց ժողովրդից վախենում էին։

1 Ու մտաւ երիքովի միջովն անց էր կենում։

2 Ու ահա մին մարդ անունն զաքէոս կոչված. եւ նա մաքսաւորների (Ա֊ր֊ք֊ի֊ե֊ր֊ի) գլխաւորն էր, եւ ինքն էր հարուստ։

3 Ու ուզում էր որ տեսնի՝ թէ ո՞վ է Յիսուսն, եւ մարդկանց բազմութեան պատճառով չէր կարում. ինչու որ հասակովն կարճ էր։

4 Ու առաջ վազեց եւ վեր ելաւ մին ժանտաքրքի ծառ՝ որ տեսնէ նորան. ինչու որ (Յիսուս) հենց էնտեղովն պէտք էր անցկենայ։

5 Երբոր էն տեղն եկաւ՝ Յիսուս վեր նայեց եւ նորան ասաց. զաքէ շուտ արա էդ տեղիցդ վէր եկ, ինչու որ՝ պէտք է ինձ՝ որ էս օր քո տանդ վեր գամ։

6 Ու նա վռազելով վեր եկաւ եւ ուրախութեամբ ընդունեց նորան։

7 Ամէնքն երբոր տեսին, տրտընջ-

---

22 Յաչ. իբ։ Եսայ. ծգ։ 23 Մտթ. իէ. 2։ Ղ֊ա֊. իգ. 1։ Յ֊ո֊. ժը. 28։ Գ֊ծ֊. գ. 13։ 24 Մտթ. լթ. 32։ Ղ֊ա֊. բ. 50։ Թ. 45։ Յ֊ո֊. ժ. 6։ ժբ. 16։ 25 Մտթ. խ. 29։ Մ֊ր֊. ժ. 46։ 26 Ղ֊ա֊. ժէ. 19։ 27 Ղ֊ա֊. ե. 26։ Գ֊ծ֊. գ. 21։ ժա. 18։

ջումէին եւ ասում. Թէ մեղաւոր մարդոյ մօտ մտաւ հանգիստ առնելոյ համար[1]։

8 Զաքէոսն եկաւ կանգնեց եւ Տէրին ասաց. Տէր՝ ահա իմ ապրանքներիս կէսըն աղքատներին կը տամ. եւ եթէ մինուն զրկեցի[2] չորս տակ կրկնադարձում[3] (նորան)։

9 Յիսուս նորան ասաց. Էս օր փրկութիւն էլաւ էս տանս. ինչու որ՝ սա էլ[4] աբրահամու որդի է[5]։

10 Պատճառն որ՝ որդին մարդոյ եկաւ, որ մանգալ եւ ապրեցնէ կորածին[6]։

11 Յիւ դեռ որ նորանք էս բանըս լսումէին՝ մին առակ աւելացրուց եւ ասաց, իրան երուսաղէմին մօտենալոյ համար, եւ նորանց կարծելոյ համար՝ Թէ Աստուծոյ արքայութիւնն շուտով պիտի յայտնվի[7]։

12 Ասաց. մին մեծազգի մարդ գնաց հեռու աշխարհք, որ թագաւորութիւն առնէ իրան համար եւ յետ դառնայ[8]։

13 Յիւ իրան ծառաներին կանչեց, տասն մնաս տուաւ նորանց, եւ ասաց նորանց. էդ բանացրէք մինչեւ որ գամ։

14 Յիւ նորա քաղաքացիներն, նորան ատումէին. նորա հետեւէն պատգամաւորներ ուղարկեցին եւ ասացին. Թէ չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վերայ[9]։

15 Յիւ էլաւ՝ որ նա թագաւորութիւնըն առաւ՝ յետ դարձաւ. եւ էն ծառաներին՝ որ արծաթըն նորանց էր տուել, կանչեց, որ գիտենայ, Թէ ով ի՞նչ շահվեցաւ։

16 Յառաջինն եկաւ եւ ասաց. տէր քո մնագ տասն մնաս (շահ) արաւ։

17 Յիւ նորան ասաց. ապրիս եւ բարի ծառայ՝ որովհետեւ էդ քիչ բանումդ հաւատարիմ էլար՝ թող տասն քաղաքի վերայ իշխանութիւն ունենաս[10]։

18 Յերկրորդն եկաւ եւ ասաց. քո մնագ հինգ մնաս (շահ) արաւ։

19 Նորան էլ ասաց. Թող դու էլ հինգ քաղաքի վերայ լինիս։

20 Մեկէն էլ եկաւ եւ ասաց. տէր ահա քո մնագ՝ որ վարշամակի (խաբեմայի) մէջ պատած պահումէի։

21 Ա՝ խեհումէի քեզանից. ինչու որ՝ դու մին քարասիրտ մարդ ես. վեր ես առնում էն՝ որ չը՛դրիր՝ եւ հնձումես էն՝ որ չը՛սերմեցիր[11]։

22 Յիւ ասաց նորան. քո բերանեցդ քեզ կդատեմ, ա՛նհաւատ ծառայ[12]. դու գիտումէիր՝ որ ես մին քարասիրտ մարդ եմ[13], վեր եմ առնում էն՝ որ չդրի, եւ հնձումեմ՝ որտեղ որ չըսերմեցի։

23 Յիւ ինչու՞ իմ արծաթըս ստակ փոխողներին (սառաֆներին) չդրուիր, որ ես գայի շահով յետ առնէի։

24 Յիւ ծառաներին ասաց. առէք դորանից էն մնասըն, եւ տարէք տուէք նորան՝ որ տասն մնասըն ունի։

25 Յիւ նորան ասացին. տէր, (նա) տասն մնաս ունի։

26 Ասումեմ ձեզ, Թէ ամէնին որ ունի, կըտրվի, եւ նա որ չունի, նորանից էն էլ, որ ունի, վեր կառնըվի[14]։

27 Բայց էն իմ թշնամիներիս՝ որ չէին ուզում, որ ես նորանց վերայ

[1] Մատթ. թ. 11։ Ղուկ. ե. 30։ [2] Ղուկ. գ. 14։ [3] Ելք. իբ. 1։ ա Թագ. ժբ. 3։ բ Թագ. ժբ. 6։ [4] Հռոմ. գ. 11, 12, 16։ Գաղ. գ. 7։ [5] Ղուկ. ժգ. 16։ [6] Մատթ. ժ. 6։ ժե. 24։ ժը. 11։ [7] Գործ. ա. 6։ [8] Մատթ. իե. 14։ Մարկ. ժգ. 34։ [9] Յովհ. ա. 11։ [10] Մատթ. իե. 21։ Ղուկ. ժզ. 10։ [11] Մատթ. իե. 24։ [12] բ Թագ. ա. 16։ Յոբ. ժե. 6։ Մատթ. ժը. 37։ [13] Մատթ. իե. 26։ [14] Մատթ. ժգ. 12։ իե. 29։ Մարկ. գ. 25։ Ղուկ. ը. 18։

թագաւորեմ՝, էստեղ բերէք եւ սպանեցէք իմ առաջիս:

28 Այե երբոր էս ասաց, առաջ գնաց, որ վեր էլլի երուսաղէմ[15]:

29 Այե էլաւ երբոր բեթփագէին եւ բեթանեային մօտ եղան սարին մօտ՝ որ ձիթենեաց սար է կոչվում՝ իրան աշակերտներից երկուսը ուղարկեց եւ ասաց[16].

30 Գնացէք դուք էդ գիւղը, որ մեր դիմացն է. եւ երբոր մտնէք նորա մէջ՝ մին քուռակ կը գտնէք կապած, որ նորա վերայ իսկի մին մարդ չը նստեց. նորան արձակեցէք եւ բերէք:

31 Այե թէ որ մինն հարցնէ ձեզ՝ թէ ինչո՞ւ էք արձակում՝ նորան էսպէս ասացէք՝ թէ Տէրին պէտք է սա:

32 Այերբոր գնացին նորանք որ ուղարկվեցան, էնպէս գտին ինչպէս որ նորանց ասաց, քուռակը կանգնած էր:

33 Այե երբոր քուռակին արձակում էին՝ նորա տէրերն ասացին նորանց. ինչո՞ւ էք արձակում էդ քուռակը:

34 Այե նորանք ասացին. Տէրին պէտք է սա:

35 Այե նորան բերին Յիսուսի մօտ. եւ շորեր քցեցին նորա վերայ, եւ Յիսուսին հեծացրին[17]:

36 Այե դեռ որ գնում էր՝ իրանց շորերըն փռում էին ճանապարհին վերայ[18]:

37 Այե երբոր դեռ որ մօտեցաւ որ ձիթենեաց սարիցն դէպի ցածն վէր գնայ՝ աշակերտների ամէն բազմութիւնն ուրախանում սկսեց օրհնութիւն ասել Աստուծոյն բարձր ձայնով՝ էն ամէն էլած զօրութիւններին համար որ տեսել էին:

38 Այե ասում էին. օրհնեալ է դա՝ որ գալիս է թագաւոր Տէրի անունովն[19]. խաղաղութիւն (լինի) երկրի քումն եւ փառք ի բարձունս[20]:

39 Այե փարիսեցիներիցն մին քանիսն, որ ժողովուրդների մէջն էին, նորան ասացին. վարդապետ՝ սաստիր քո աշակերտներիդ:

40 Պատասխան տուաւ եւ ասաց՝ ասումեմ ձեզ՝ որ եթէ սորանք էլ լուռ կենան՝ էդ քարերդ կաղաղակեն[21]:

41 Այե երբոր մօտեցաւ, տեսաւ քաղաքին՝ եւ լաց էլաւ նորա վերայ եւ ասաց[22].

42 Այթէ գոնեա էս օրս դիտենայիր քո խաղաղութիւնդ. բայց հիմիկ ծած կըվեցաւ քո երեսիդ:

43 Ինչու որ՝ օրեր կըգան քեզ վերայ, եւ քո թշնամիներդ քո չորս կողմովդ պատնէշ (ՊԷՊԷԳՈ) կըպատեն եւ քեզ կըպաշարեն եւ ամէն կողմից քեզ կընեղացնեն[23]:

44 Այե հիմնայատակ կանեն քեզ եւ քո որդիքըդ էլ քո միջումդ[24]. եւ խկի քար քարի վերայ չեն թողել քո միջումդ[25]. ինչու որ՝ չը ճանաչեցիր (Ստուածոյ) քեզ տես գալդ ժամանակըդ[26]:

45 Այե մտաւ տաճարն եւ սկսեց

[15] Մարկ. ժ · 32: [16] Մատթ. իա · 1: Մարկ. ժա · 1: [17] գ թագ. թ · 13: Մատթ. իա · 7: Մարկ. ժա · 7: Ցախ. ժբ · 14: [18] Մատթ. իա · 8: [19] Սաղմ. ՃԺբ · 26: Ղուկ. ժգ · 35: [20] Ղուկ. բ · 14: Եփես. բ · 14: [21] Աւգբ. բ · 11: [22] Ցախ. ժա · 35: [23] Եսայ. լթ · 3, 4: Երեմ. զ · 3, 6: Ղուկ. իա · 20: [24] գ թագ. թ · 7, 8: Մէսէկ. գ · 12: [25] Մատթ. իգ · 2: Մարկ. ժգ · 2: Ղուկ. իա · 6: [26] Դան. թ · 24: Ղուկ. ա · 68, 78: ա պետր. բ · 12:

դուրս հանել աղաւնի ծախողներին եւ գնողներին, եւ ըստակ փոխողներիւ տախտակներըն ցրուեց[27]։

46 Յն նորանց ասաց, գրված է՝ թէ իմ տունս աղօթքի տուն պիտի լինի[28], եւ դուք դորան աւազակների բուն արիք[29]։

47 Յն ամէն օր սովորցնումէր նորանց տաճարի միջումն. բայց քահանայապետներն եւ կարդացողներն եւ ժողովրդի գլխաւորներն խընդրումէին, որ կորցնեն նորան[30]։

48 Յն չէին գտնում՝ թէ ինչ անեն. պատճառն որ՝ ամէն ժողովուրդըն նորանից կախված էր որ (նորա խօսքըն) լսէ։

## ԳԼ. Ի

1 Քրիստոս Յօհաննէս մկրտչի համար մին բան հարցնելով քահանայապետներին եւ կարդացողներին իրան իշխանութիւնն որ տեղից լինելն կըպատէ։ 9 Առակ առանն։ 20 Կայսերին հարկ տալը վերայ։ 27 Քրիստոս սադուկեցիներին կըշամդէ, նորանք մեռելների յարութիւնն կուրանան։ 41 Քրիստոս ինչպէս դաւթի որդին է։ 45 Իրան աշակերտներին կը պատուիրէ որ կարդացողների պատ բաներից զգոյշ լինին։

1 Յն էլաւ որ էն օրերից մինումն՝ դէռ քանի որ տաճարումն սովորցնումէր ժողովրդին եւ աւետարանումէր, քահանայապետներն եւ կարդացողներն ծերերին հետ վերայ հասին[1]։

2 Յն նորան ասացին, ասա մեզ, դու ի՞նչ իշխանութիւնով ես անում էդ[2], կամ ո՞վ է նա, որ էդ իշխանութիւնըդ տուաւ քեզ։

3 Պատասխան տուաւ եւ ասաց նորանց, եսէլ ձեզանից մին բան կըհարցնեմ՝, եւ ասացէք ինձ։

4 Յօհաննէսի մկրտութիւնն երկընքի՞ցն էր, թէ մարդկանցիցն։

5 Յն նորանք իրանց միջումն միտք արին եւ ասացին.

6 Թէ որ ասենք, երկնքիցն. կասէ. ապա ինչո՞ւ չըհաւատացիք նորան. եւ թէ որ ասենք՝ մարդկանցիցն, ամէն ժողովուրդն մեզ քարկոծ կանեն. ինչու որ՝ իրանց մտքումն հաստատ դրել են յօհաննէսին հա-մար՝ թէ (նա) մարգարէ է[3]։

7 Յն պատասխան տուին՝ չըգիտենք, թէ որ տեղից է։

8 Յն Յիսուս նորանց ասաց. ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում էս։

9 (Ա՛պա սկսեց էս պառակս ասել ժողովրդին. մին մարդ այգի (քաղ) տնկեց, եւ մշակներին տուաւ նորան, եւ ինքն ճանապարհ գնաց շատ ժամանակ[4]։

10 Յն ժամանակն որ եկաւ՝ մին ծառայ ուղարկեց մշակներին մօտ, որ այգոյ (քաղէ) պըտղիցն իրան տան. եւ մշակներն ծեծեցին նորան եւ դատարկ յետ արձակեցին։

11 Յն նրա վերայ մին ուրիշ ծառայ էլ ուղարկեց. եւ նորան էլ ծեծեցին, թուքըումըր տուին եւ դատարկ յետ ուղարկեցին։

12 Յն նրա վերայ երրորդին էլ ուղարկեց. նորանք նորան էլ խոցեցին եւ դուրս հանեցին։

[27] Մտթ. խա. 12։ Մրկ. ժա. 11, 15։ Ղուկ. բ. 14, 15։ [28] Եսայ. ծզ. 7։ [29] Երեմ. է. 11։ [30] Մրկ. ժա. 18։ Ղուկ. է. 19։ բ. 37։ [1] Մտթ. խա. 23։ [2] Գործ. գ. 7։ է. 27։ [3] Մտթ. ժդ. 5։ խա. 26։ Ղուկ. է. 29։ [4] Մտթ. խա. 33։ Մրկ. ժբ. 1։

13 Ա՛յդպէս տէրն ասաց. ի՞նչ ա-նեմ. իմ սիրելի որդիս կուզարկեմ՝ լինի թէ սորանից ամաչեն:

14 Ա՛շակներն երբոր նորան տե-սին՝ իրար հետ խորհուրդ արին եւ ասացին. սա է ժառանգն. սպանե՛նք սորան. որ ժառանգութիւնն մեզ լինի:

15 Ա՛ւ պգուշն (քաղքի՛) դուրս հանեցին նորան եւ սպանեցին. ապա պգպզ տէրն ի՞նչ պիտի անէ նորանց:

16 Չէ՞ որ կըգայ եւ էն մշակ-ներըն կըկորցնէ եւ այգին ուրիշնե-րին կըտայ, երբոր էս լսեցին՝ ասա-ցին. քա՛ւ լեցի:

17 Ա՛ւ նա մտիկ տուաւ նորանց եւ ասաց. ապա ի՞նչ է էն որ գրված է՝ թէ էն քարն՝ որ շինօղներն անար-գեցին՝ նա էլաւ անկիւնի գլուխ[5]:

18 Ա՛մէն՝ ով որ էս քարիս վերայ ընկնի՝ կըփշրվի՝ եւ ում՝ վերայ որ (նա) ընկնի՝ կը ջարդէ նորան[6]:

19 Ա՛ւ կարդացօղներն եւ քահա-նայապետներն հենց էն ժամուն (սահմանուն) ուզեցին, որ ձեռք ձգեն նորա վերայ, եւ ժողովըրդից վախեցան. ինչու որ՝ գիտացին որ՝ իրանց համար ասաց էն առակըն:

20 Ա՛ւ ապա սպասեցին եւ նեն-գաւոր մարդիք ուղարկեցին՝ որ կեղ-ծաւորութեամբ իրանց անձներըն արդար երեւացրին. որ խօսքով բռնեն նորան՝ որ մատնեն նորան դա-տաւորի աէրութեանն եւ իշխանու-թեանն[7]:

21 Նորան հարցրին եւ ասացին. վա՛րդապետ՝ գիտուցինք, որ շիտակ ես խօսում եւ սովորցնում, եւ երես-պաշտութիւն չես անում. բայց ճշմարտութեամբ Աստուծոյ ճանա-պարհըն սովորցնում ես[8]:

22 Հարժա՞ն է մեզ՝ որ կայսերին հարկ տանք, թէ չէ:

23 Ա՛ւ նորանց չարութիւնըն տես-նելով՝ ասաց նորանց. (ինչո՞ւ էք փորձում ինձ.)

24 Ցո՛յց տուէք ինձ էն դահեկա-նըն. եւ նորանք ցոյց տուին. եւ ա-սաց. ո՞ւմ պատկերըն եւ գիրըն ունի (սա). պատասխան տուին. եւ ասա-ցին. կայսերին:

25 Ա՛ւ նա ասաց նորանց. ուրեմն գնացէ՛ք կայսերինըն կայսերին տը-ուէ՛ք, եւ Աստուծունըն Աստուծոյ:

26 Ա՛ւ չըկարացին խօսքերով բռնել նորան ժողովըրդի առաջին. եւ նորա պատասխանին վերայ զար-մացան եւ լուռ կացան:

27 Մատուկեցիներին[9], որ հակա-ռակումն են թէ յարութիւն չըկայ[10], մին քանիսն մօտ եկին եւ նորան հարցրին.

28 Ա՛ւ ասացին. վա՛րդապետ. մո-սէսն գրեց մեզ[11]. թէ որ մէնի եղ-բայրն մեռնի, որ կին ունենայ՝ եւ անորդի լինի, որ նորա եղբայրն էն կինըն առնէ, եւ իրան եղբօր համար զաւակ վերկացնէ:

29 Ա՛պա եօթն եղբայրք կային՝ եւ առաջինն կին առաւ եւ առանց զա-ւակի մեռաւ:

30 Երկրորդն էլ նորան առաւ, եւ նա էլ առանց զաւակի մեռաւ:

31 Երրորդն էլ նորան առաւ. էն-պէս հենց էն եօթն էլ, եւ որդի չը-թողին:

32 Ա՛ւ (ամենքից ետեւ) էն կինն էլ մեռաւ:

33 Ա՛պա յարութեան ժամանա-կումն նորանցից ո՞րին պիտի լինի կին.

[5] Պսաղ. ԺԸ. 22: Մարկ. ԻԲ. 42: [6] Դան. Բ. 34, 35: Մարկ. ԻԲ. 44: [7] Մարկ. ԻԲ. 15: [8] Մարկ. ԻԲ. 16: Մարկ. ԺԲ. 14: [9] Մարկ. ԻԲ. 23: Մարկ. ԺԲ. 18: [10] Գործ. ԻԳ. 6, 8: [11] Բ Օրին. ԻԵ. 5:

ինչու որ՝ էն եօթին էլ կին առին նո-
րան :

34 Յիսուս պատասխան տուաւ նո-
րանց եւ ասաց. Էս աշխարհքիս որ-
դիքն կ՚ին են առնում եւ մարդոյ են
գնում :

35 Բայց նորանք որ արժանի լինին
էն աշխարհքին հասնելոյ եւ մեռել-
ներէն միւնդան յարութիւն առնելոյ,
ոչ կին կառնեն եւ ոչ մարդոյ կըգը-
նան :

36 Պատճառն որ՝ էլ չեն կարող
մեռնիլ . ինչու որ՝ հրեշտակներին
հաւասար են եւ Աստուծոյ որդիք[12],
նրանհամար որ յարութեան որդիք
են[13] :

37 Բայց դրահամար թէ մեռել-
ներն յարութիւն կառնեն՝ մօսէն
էլ մարդարէացաւ մոշի մօտն՝ ինչ-
պէս որ տէրին համար ասում՝ Աս-
տուած աբրահամու եւ Աստուած
սահակայ եւ Աստուած յակոբայ[14] :

38 Եւ Աստուած մեռելներին չէ՝
բայց կենդանիներին . ինչու որ՝ ա-
մէնքն կենդանի են նորան[15] :

39 Կարդացողներիցն մին քանիսն
պատասխան տուին նորան եւ ասա-
ցին . վարդապետ՝ լաւ ասացիր :

40 Եւ էլ իսկի մինն չէր համար-
ձակվում՝ որ նորանից իսկի մին բան
հարցնէ :

41 Եւ նորանց էլ ասաց . ի՞նչպէս
են ասում Քրիստոսի համար՝ թէ
դաւթի որդին է[16] :

42 Եւ դաւիթ ինքն սաղմոս գըր-
քումն ասում . Տէրն իմ Տէրին ա-
սաց՝ թէ իմ աջ կողմն նստիր[17],

43 Մինչեւ որ քո թշնամիներըդ
քո ոտացդ գահնելիք գնեմ :

44 Պա՞ թէ որ դաւիթն Տէր է
կոչում նորան . ի՞նչպէս նորա որդի
կըլինի :

45 Եւ ամէն ժողովրդի առաջին
որ լսում էին՝ ասաց աշակերտներին[18],

46 Զգոյշ կացէք կարպացողնե-
րից՝ որ լայն կապանտրով կամենու-
մեն մանգալ[19], եւ սիրումեն բաց տե-
ղերանքրումն բարեւ առնելոյն[20], եւ
ժողովարանների մէջն առաջին ա-
թոռներըն՝ եւ ընթրիքներումն վե-
րեւի տեղերըն :

47 Որ որբեւէրիների տներըն
ուտումեն, եւ պատճառներով եր-
կար աղօթք են անում . նորանք ա-
ւելի դատապարտութիւն կընդու-
նին[21] :

## ԻԱ · ԻԸ

2 Քրիստոս մին աղքատ որբեւէրին կընդունէ : 5 Տաճարի եւ Երուսաղէմի քանդվելն ։ 25 Եւ վերջի օրից առաջ լինելոյ նշանները առաջուց կասէ : 34 Կըյորդորէ որ արթուն կենան որդոյ մարդոյ գալոյն սպասելով :

1 Եւ մտիկ տուաւ, տեսաւ հա-
րուստանների՝ որ իրանց տուրքըն
գանձանային էին քցում[1] :

2 Մին որբեւէրի աղքատ կին էլ
տեսաւ՝ որ երկու լումայ քցեց հնտեղ :

3 Եւ ասաց . Ճշմարիտն ասում
եմ ձեզ՝ թէ էն աղքատ որբեւէրին
ամէնիցն աւելի քցեց[2] :

12 ա Կորնթ. ժե. 42, 49, 52: ա Թես. գ. 2: 13 Հռովմ. ը. 23: 14 Ելք. գ. 6: 15 Հռովմ. զ. 10, 11: 16 Մարկ. իբ. 43: Մարթ. ժբ. 35: 17 Սամ. ճժ. 1: Գործ. բ. 34: 18 Մարկ. իգ. 1: Մարթ. ժբ. 38: 19 Մարկ. իգ. 5: 20 Ղուկ. ժա. 43: 21 Մարկ. իգ. 14: 1 Մարթ. ժբ. 41: 2 բ Կորնթ. ը. 12:

4 Այնու որ՝ նորանք ամէնքն ի-
րանց աւելցածներից քցեցին Աս-
տուծոյ ընծաների մէջն, բայց նա ի-
րան կարօտութիւնից իրան բոլոր կե-
նաց ապրուստն՝ որ ունէր՝ քցեց։

5 Այս երբոր մին քանի մարդ ա-
սումէին տաճարի համար՝ թէ գեղե-
ցիկ քարերով եւ աշտարակներով
(Բ-ղջէրով) զարդարված է, նա ա-
սաց[3]՝

6 Այդ ամէնըդ որ տեսնում էք՝ օ-
րեր կըգան՝ որ էդ տեղ քար քարի
վերայ չի՛ թողվիլ՝ որ չը քանդվի[4]։

7 Հարցրին նորան եւ ասացին՝
վարդապետ՝ էդ երբ կըլինի, եւ
ի՞նչ է նշանն՝ երբոր էդ պիտի լինի։

8 Այս նա ասաց՝ զգոյշ կացէք՝ որ
չըխաբվիք[5]. ինչու որ՝ շատ մարդիք
կըգան իմ անունովս եւ կասեն՝ թէ
ես եմ, եւ ժամանակն մօտեցաւ. նո-
րանց ետեւէն մի գնաք։

9 Այս երբոր կռիւներ եւ խռո-
վութիւններ կըլսէք՝ մի շփոթվիք.
ինչու որ՝ պէտք է, որ առաջ էն լի-
նի, բայց դեռ շուտով վերջն չէ։

10 Այն ժամանակն նորանց ասաց՝
ազգ ազգի վերայ վեր կըկենայ եւ
թագաւորութիւն թագաւորու-
թեան վերայ[6]։

11 Այս մեծամեծ գետնաշարժու-
թիւններ՝ եւ տեղ տեղ սովեր եւ
սաստիկ մահներ (կըլինին). եւ եր-
կընքից ահաւոր բաներ եւ մեծամեծ
նշաններ կըլինին։

12 Այսց էս բաներից առաջ ի-
րանց ձեռներըն ձեզ վերայ կըձը-
գեն եւ կըհալածեն[7]. (եւ) ժողո-
վարանների եւ բանտերի մէջ կը-
մատնեն[8], եւ կըտանեն դատաւոր-
ների եւ թագաւորների առաջին[9]՝
իմ անունիս համար[10]։

13 Այս էն կըլինի ձեզ վկայու-
թեան համար[11]։

14 Լուսին ձեր սրտի մէջ գրէք՝
որ առաջուց միտք չանէք պատաս-
խան տալըդ համար[12]։

15 Ինչու որ՝ ես բերան եւ իմաս-
տութիւն կըտամ ձեզ, որ ձեր ամէն
հակառակորդներն չեն կարենալ դէմ
կենալ կամ պատասխան տալ նո-
րան[13]։

16 Կըմատնվիք էլ ծնօղներից եւ
եղբայրներից եւ ազգականներից եւ
բարեկամներից[14], եւ ձեզանից կը-
սպանեն[15]։

17 Այս ամէնին սաեղի կըլինիք իմ
անունիս համար[16]։

18 Այս ձեր գլխից մին մազ չի՛
կորչիլ[17]։

19 Այս ձեր համբերութենովն ձեր
հոգին կըշահէք։

20 Այսց երբոր կըտեսնէք թէ ե-
րուսաղէմն չորս կողմնից պատած է
զօրքերով՝ էն ժամանակն գիտացէք
թէ նորա քանդվելն մօտիկ է[18]։

21 Այն ժամանակն նորանք՝ որ Հը-
րէաստանումն են՝ թող սարերն
փախչեն, եւ նորանք՝ որ նորա մի-
ջումն են՝ թող դուրս քաշվին, եւ
նորանք՝ որ նորա գաւառներումն են՝
թող չի մտնեն նորա մէջն։

22 Այնու որ՝ էն (օրերն) վրէժ
խնդրելոյ օրերն են՝ որ ամէն գրված-
ներն կատարվին[19]։

23 Այսց էն օրերումն վայ կըլինի

---

[3] Մտթ. իդ. 1։ Մրկ. ժգ. 1։ [4] Ղկս. ժԹ. 44։ [5] Մտթ. իդ. 4։ Մրկ. ժգ. 5։ Եփես. ե. 6։ ա Թես. բ. 3։ [6] Մտթ. իդ. 7։ [7] Մրկ. ժգ. 9։ Ցայտ. բ. 10։ [8] Գործ. գ. 3։ ե. 18։ ժբ. 4։ ժզ. 24։ [9] Գործ. իե. 23։ [10] ա Պետ. բ. 13։ [11] Փիլիպ. ա. 28։ բ Թես. ա. 5։ [12] Մտթ. ժ. 19։ Մրկ. ժգ. 11։ Ղկս. ժբ. 11։ [13] Գործ. զ. 10։ [14] Մտթ. է. 6։ Մրկ. ժգ. 12։ [15] Գործ. է. 59։ ժբ. 2։ [16] Մտթ. ժ. 22։ [17] Մտթ. ժ. 30։ [18] Մտթ. իդ. 15։ Մրկ. ժգ. 14։ [19] Գաղ. Թ. 26, 27։ Ջտ. ժա. 1։

Յղացածներին եւ ծիծաւորներին[20], ինչու որ՝ մեծ նեղութիւն կը լինի երկրիս վերայ, եւ (Աստուծոյ) բարկութիւնն են ժողովրդին վերայ։

24 Եւ սրի բերան կընկնին, եւ ամէն հեթանոսների մէջ գերի կըտանուին, եւ երուսաղէմ հեթանոսներից կոխած կը լինի՝ մինչեւ որ հեթանոսների ժամանակներն կատարվին[21]։

25 Եւ նշաններ կը լինին, արեգակումն եւ լուսնումն եւ աստեղնըւումն, եւ երկրումս հեթանոսների սաստիկ ահ եւ վախ (կը լինի) ինչպէս ծովի եւ խռովութեան ձայներից[22]։

26 Որովհետեւ մարդկանց հոգիքն գուրս կըգան վախի համար եւ էն բաներին մոկ տալոյ համար՝ որ բոլոր աշխարհքի վերայ պիտի գան. ինչու որ՝ երկնքի զօրութիւնները կը շարժվին[23]։

27 Եւ էն ժամանակն կըտեսնեն որդին մարդոյ ամպերի վերայ եկած զօրութեամբ եւ շատ փառքով[24]։

28 Եւ երբոր էս բաներս կըսկսեն լինել՝ վեր կացէք եւ բարձրացրէք ձեր գլխներըդ. ինչու որ՝ ձեր փրկութիւնն մօտ է[25]։

29 Եւ նորանց մին առակ ասաց. տեսէք թըզի ծառըն եւ ամէն ծառերըն[26].

30 Երբոր իրանց պտուղըն երեւացնում են՝ տեսնում եք եւ ձանաչում եք, թէ ամառն մօտ է։

31 Ինչպէս էլ դուք՝ երբոր էս ամէն բաներըս էլած տեսնէք՝ գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնն մօտ է։

32 Ճշմարիտըն ասում եմ ձեզ՝ թէ էս պորտս չի անցկենալ, մինչեւ որ՝ էս ամէն բաներս լինին։

33 Երկինքն եւ երկիրս անց կընկենան եւ իմ խօսքերս չեն անցկենալ[27]։

34 Ուշիշ կացէք անձներիդ՝ որ ձեր սրտերն չըծանրանան շատակերութիւնով եւ արբեցութիւնով եւ աշխարհական հոգսերով, եւ էն օրն յանկարծ հասնի ձեզ վերայ[28].

35 Ինչու որ՝ (հենց) որոգայթի (ըսածին) պէս կըհասնի էն ամէնին վերայ՝ որ բոլոր երկրի երեսին վերայ բնակված են[29]։

36 Ուրեմն արթուն կացէք[30], աղաչելով արէք[31], որ արժանի լինիք ազատվիլ էն ամէն բաներից՝ որ պիտի լինին, եւ կանգնիլ որդոյ մարդոյ առաջին[32]։

37 Եւ ցերեկն տաճարումն սովորցնում էր[33] եւ գիշերներն գուրս էր գալիս եւ կենում էն սարումն՝ որ ձիթենեաց (սար) էր կոչվում[34]։

38 Եւ ամէն ժողովուրդն առաւօտանց շուտով գնում էր տաճարն նորա մօտ՝ որ նորանից լսան լէք։

---

[20] Մատթ· իգ· 19։ [21] Դան· թ· 27։ Ժր· 7։ Հաւմ· ժա· 25։ [22] Մատթ· իգ· 29։ Մարկ· ժգ· 24։ [23] Մատթ· իգ· 29։ [24] Մատթ· իգ· 30։ Ցայտ· ա· 7։ Ժգ· 14։ [25] Հաւմ· ը· 19, 33։ [26] Մատթ· իգ· 32։ Մարկ· ժգ· 28։ [27] Մատթ· իգ· 35։ [28] Հաւմ· ժգ· 13։ ա Թես· ե· 6։ ա Պետր· գ· 7։ [29] ա Թես· ե· 2։ բ Պետր· գ· 10։ Ցայտ· գ· 3։ Ժգ· 15։ [30] Մատթ· իգ· 42։ իե· 13։ Մարկ· ժգ· 33։ [31] Ղուկ· Ժը· 1։ [32] Սամ· ա· 5։ Եփես· գ· 13։ [33] Ցաքր· ը· 1, 2։ [34] Ղուկ· իր· 39։

# ԳԼ· ԻՒ

2 Հրեաներն Քրիստոսի համար խորհուրդ կանեն։ 3 Սատանան Յուդայի մէջ կը մտնէ որ նորան մատնէ։ 7 Առաքեալներն պասէքը կը պատրաստեն։ 19 Քրիստոս Յուդը ընծրիքն կը յայտնէ։ 21 Դաժանի մատնօղն առաջուց կասկ. 24 Մէկիկ Առաքեալներն փառասիրութենէ կը զգուշացնէ. 31 Իմաց կըսայ Պետրոսին որ իրան հաւատքն պիտի չը քանդուի, 34 Բայց երեք անգամ նորան պիտի ուրանայ։ 39 Քրիստոսի ձեռնադնաց սարին մին տեղ աղօթելն եւ արիւն քրտունքն թափելն, 47 Յուդան մին համբոյրով Յիսուսին կը մատնէ. 50 Յիսուս Մալքոսի ականջն կը բժշկէ, 54 Պետրոսի երեք անգամ ուրանալն. 63 Քրիստոսի ծաղր լինելով անարդելին, 66 Եւ իրան անէծքն Պաուղոյ Որդի լինել կըխոստովանի։

1 Խաղարջակերաց տօնն մտեցաւ՝ որ պասքա էր կոչվում[1]։

2 Եւ քահանայապետներն եւ կարդացօղներն խնդրում էին թէ ինչպէս սպանեն նորան[2]. բայց ժողովրդից վախենում էին։

3 Սպա սատանան մտաւ իսկարիօտացի ասած Յուդայի մէջ՝ որ տասներկուսի թուից էր[3]։

4 Գնաց քահանայապետներին եւ կարգացօղներին եւ ժողովրդապի իշխաններին հետ խօսք կապից՝ որ նորան մատնէ նորանց։

5 Եւ նորանք ուրախացան եւ խոստացան՝ որ արծաթի տան նորան[4]։

6 Եւ նա խօսք տուաւ եւ յարմար ժամանակ էր ուզում՝ որ նորան ամբոխին (խալխին) հետուս գտած մատնէ նորանց։

7 Խաղարջակերաց օրն եկաւ՝ որ օրէնք էր պասքըն (պասխն գոռըն) նորանում մորթել[5]։

8 Եւ պետրոսին եւ յոհաննէսին ուղարկեց եւ ասաց. գնացէք պասքըն պատրաստեցէք մեզ համար որ ուտենք։

9 Եւ նորանք ասացին. ինչ տեղ ես կամենում՝ որ պատրաստենք։

10 Եւ նորանց ասաց. ահա երբոր քաղաքն կըմտնէք՝ մին մարդ կըպատահի ձեզ ջրի կուժը վերկալած. նորա հետեւէն գնացէք էն տունն՝ որ նա կըմտնէ.

11 Եւ էն տան տիրոջն ասացէք. վարդապետն ասում քեզ. թէ ուր է իմ վէրգ տեղն՝ որ նորանում պասքըն ուտեմ իմ աշակերտներիս հետ։

12 Եւ նա մին մեծ զարդարված վերնատուն ցոյց կըտայ ձեզ, եւ էն տեղ պատրաստեցէք։

13 Եւ գնացին էնպէս գտին՝ ինչպէս որ ասաց նորանց. եւ պասքըն պատրաստեցին։

14 Եւ ժամն (սահլէնն)՝ որ էլաւ՝ սեղան նստեց[6]. եւ տասներկու առաքեալներն էլ նորա հետ։

15 Եւ նորանց ասաց. ցանկանալով ցանկացայ՝ որ էս պասքըս ձեզ հետ ուտեմ՝ իմ չարչարվելուցն առաջ։

16 Ասց ասումեմ ձեզ՝ թէ սրանից էլ չեմ ուտիլ՝ մինչեւ որ կատարվի Աստուծոյ արքայութենումն[7]։

[1] Մատթ. իզ· 2։ Մարկ· ժգ· 1։ [2] Սամ· բ· 2։ Ցաւհ· ժա· 47։ Գործ· գ· 27։ [3] Մատթ· իզ· 14։ Մարկ· ժդ· 10։ Ցաւհ· ժգ· 2, 27։ [4] Զաք· ժա· 12։ [5] Մատթ· իզ· 17։ Մարկ· ժդ· 13։ [6] Մատթ· իզ· 20։ Մարկ· ժդ· 17։ [7] Ղուկ· ժդ· 15։ Գործ· ժ· 41։ Ցայտ· ժիե· 9։

17 Եւ բաժակըն (Խաղն) առաւ՝ գոհացաւ եւ ասաց, առէք զսորան եւ
ձեր միջումըն բաժանեցէք:
18 Ասեմ ձեզ՝ թէ սրանից եւս
տեւ որթի (Խաղ) բերքից չեմ խմիլ՝
մինչեւ որ՝ Աստուծոյ արքայութիւնն
գայ[8]:
19 Եւ հաց առաւ, գոհացաւ,
կտրեց եւ նորանց տուաւ եւ ասաց[9].
Ես է իմ մարմինս՝ որ շատերին հա-
մար տրվելու է. Ես արէք, իմ յի-
շատակիս համար[10]:
20 Ինպէս էլ ըն թ բիբլիցն եաեւ
բաժակըն (Խաղն) առաւ, եւ ասաց,
Ես բաժակս նար ուխտ եւ պայման է
իմ՝ արիւնով՝ որ ձեզ համար թափ-
վելու[11]:
21 Այց ահա՝ իմ մատնօղի ձեռն
ինձ հետ է սեղանումն է[12]:
22 Եւ որդին մարդոյ կերթայ[13]
ինչպէս որ սահմանված է. բայց վայ
էն մարդոյն՝ որ նորա ձեռովն կը-
մատնըվի[14]:
23 Եւ նորանք սկսեցին հարցնել
իրանց միջումն՝ թէ իրանցից ով է
նա՝ որ պիտի էն բանըն գործէ[15]:
24 Նորանց միջումն հակաառակու-
թիւն էլ եղաւ՝ թէ իրանցից ով պի-
տի մեծ համարվի[16]:
25 Եւ նա ասաց նորանց, ազգերի
թագաւորներն տիրապետումն նո-
րանց վերայ, եւ նորանք՝ որ իշխա-
նութիւն են անում նորանց վերայ՝
բարերար են կոչվում[17]:
26 Այց դուք էնպէս չէ[18]. այլ
ով որ ձեր միջումն մեծ է՝ թող փոք-
րի պէս լինի, եւ առաջնորդն ծա-
ռայի պէս[19]:
27 Ով է մեծ, սեղան նստողն[20]՝
թէ ծառան. չէ որ սեղան նստողն.
բայց ես՝ ձեր միջումն ծառայի պէս
եմ[21]:
28 Եւ դուք էք, որ միշտ ինձ հետ
եկիք իմ փորձութիւններումս[22]:
29 Եւ ես հաստատ խոստանումեմ
ձեզ արքայութիւն՝ ինչպէս որ Հայ-
րըն էլ ինձ հաստատ խոստացաւ[23].
30 Որ ուտէք եւ խմէք իմ սեղա-
նիս վերայ իմ արքայութեանումն[24],
եւ տասներկու աթոռի վերայ նըս-
տիք՝ իսրայելի տասներկու ցեղեն
դատաստան անելըս համար[25]:
31 Եւ Տէրն ասաց. սիմոն սիմոն,
ահա սատանան ուզեց[26]՝ որ ձեզ խա-
խտէ ցորենի պէս[27].
32 Այց ես աղաչեցի քեզ հա-
մար՝ որ քո հաւատքդ չըպակասի[28].
եւ դու մին ժամանակ դառնաս եւ քո
եղբարներըդ հաստատես[29]:
33 Եւ նա ասաց նորան. Տէր. ես
պատրաստ եմ՝ որ քեզ հետ հինդ
բանտի (գէշ տանի) եւ մահի մէջ էլ
գնամ:
34 Եւ նա ասաց նորան. ասումեմ
քեզ պետրէ, որ էս օր գեռ որ հաւն
չըխօսացել, դու երիք անգամ կու-
րանաս չըգիտել ինձ[30]:
35 Եւ նորանց ասաց. երբոր ու-

[8] Մատթ. իզ. 29: Մարկ. ժդ. 25: [9] Մատթ. իզ. 26: Մարկ. ժդ. 22: [10] ա Կորնթ. ժա. 24:
[11] ա Կորնթ. ժ. 16: [12] Յովհ. ԽԱ. 9: Մատթ. իզ. 21, 23: Մարկ. ժդ. 18: Ցածկ. ժդ.
21, 26: [13] Մատթ. իզ. 24: [14] Գործ. բ. 23, դ. 28: [15] Մատթ. իզ. 22: Ցածկ. ժդ. 22, 25:
[16] Մարկ. թ. 34: Ղուկ. թ. 46: [17] Մատթ. ի. 25: Մարկ. ժ. 42: [18] Մատթ. ի. 26:
ա Պետր. ե. 3: [19] Ղուկ. թ. 48: [20] Ղուկ. ժբ. 37: [21] Մատթ. ի. 28: Ցածկ. ժդ. 13, 14:
Փիլիպ. բ. 7: [22] Եբր. դ. 15: [23] Մատթ. իդ. 47: Ղուկ. ժբ. 32: բ Կորնթ. ա. 7: բ Տիմ.
բ. 12: [24] Մատթ. ը. 11: Ղուկ. ժդ. 15: Յայտ. ԺԹ. 9: [25] Մատ. խթ. 14: Մատթ.
ԺԹ. 28: ա Կորնթ. զ. 2: Յայտ. դ. 21: [26] ա Պետր. ե. 8: [27] Ամովս. թ. 9: [28] Ցածկ.
ԺԵ. 9, 11, 15: [29] Յովհ. ծա. 13: Ցածկ. իա. 15, 16, 17: [30] Մատթ. իզ. 34: Մարկ. ժդ.
30: Ցածկ. ժդ. 38:

զարկեցի ձեզ առանց քաղաքի, եւ պարկի եւ կոշիկների՝ միթէ կարօտացաք մի բանի[31]։

36 Ես նորանք ասացին. իսկի մի բանի էլ չէ. ամբա ասաց. բայց հիմիկուայ որ քաղաք ունի, թող վեր առնէ, էնպէս էլ պարկը, եւ ով որ նէ, էնպէս էլ պարկը, եւ ով որ չունի՝ թող իրան շորերըն ծախէ եւ իրան համար սուր գնէ։

37 Ասյց ասում եմ ձեզ, թէ էս էլ որ գրված է, պէտք է որ կատարվի ինձանում՝ թէ անօրէնների հետ համարվեցաւ[32]. պատճառն որ՝ ինչ որ ինձ համար ասված է՝ գլուխ է եկած։

38 Ես նորանք ասացին. Տէր՝ աչքէ էսանել երկու սուր կայ. եւ նա ասաց նորանց. բաւական են։

39 Ես դուրս էլաւ իրան սովորութեան պէս[33] գնաց Ձիթենեաց սարն՝ աշակերտներն էլ նորա ետեւէն գնացին[34]։

40 Երբոր հասաւ՝ նորանց ասաց. աղօթք արէք՝ որ փորձութեան մէջ չըմանէք[35]։

41 Ես ինքն նորանցից հեռացաւ մի քար քցելչափով՝ ծունր դրեաւ՝ աղօթք էր անում[36].

42 Ես ասում. Հայր՝ եթէ կամենում էս բաժակս (պատը) անցկացրու ինձանից. միայն թէ՝ ոչ իմ կամքս՝ բայց քո (կամքդ) լինի[37]։

43 Ես հրեշտակ երեւեցաւ[38] նորան երկնքից, եւ զօրացուցանէր նորան, եւ մեռնելչափ խռովութեան մէջ էր, եւ աւելի ջանքով աղօթք էր անում[39]։

44 Ես քրտունքն վազում էր նորա նից, ինչպէս արիւնի կաթիլք՝ որ կըր կըր երկրի վերայ էին թափվում։

45 Ես աղօթքից վերկացաւ՝ եկաւ աշակերտներին մօտ, եւ նորանց քնի մէջ գտաւ տրտմութեան պատճառովն.

46 Ես նորանց ասաց. ինչու էք քնում՞. վերկացէք աղօթք արէք[40], որ փորձութեան մէջ չըմանէք։

47 Ես դեռ որ խօսում էր՝ ահա ամբոխ (խալխ), եւ նա որ յուդա էր կոչվում՝ էն տասներկուսից միներս, առաջնորդում էր նորանց[41]. երբոր մօտեցաւ Յիսուսին՝ համբուրեց նորան. պատճառն որ՝ էն նշան էր տուել նորանց, թէ որին որ ես կըհամբուրեմ՝ նա է՝ նորան բռնեցէք։

48 Յիսուս նորան ասաց. յուդա՛ համբուրելով ես որդին մարդոյ մատնում։

49 Երբոր նորանք՝ որ նորա հետն էին՝ տեսին ինչ որ էլաւ՝ նորան ասացին. Տէր սրով զարկե՞նք նորանց։

50 Ես նորանցից միներս քահանայապետի ծառային զարկեց՝ եւ նորա աջ ականջըն կտրեց[42]։

51 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. թող տուէք մինչեւ էգ տեղը. եւ ականջին մատեցաւ եւ բժշկեց նորան։

52 Ես իրան վերայ եկածներին՝ քահանայապետներին եւ տաճարի իշխաններին եւ ծերերին ասաց[43]. ինչպէս մի աւազակի վերայ դուրս եկիք սրերով եւ բշտերով։

53 Մինօր ձեզ հետ էի տաճարումն. եւ ձեռներըն չէք գցեցիք ինձ

---

[31] Մարկ. ժ. 9։ Ղուկ. թ. 3։ ժ. 4։ [32] Եսայ. ծգ. 12։ Մարկ. ժե. 28։ [33] Մարկ. իգ. 36։ Մարկ. ժգ. 32։ Ցովհ. ժը. 1։ [34] Ղուկ. իա. 37։ [35] Մարկ. գ. 13։ իգ. 41։ Մարկ. ժգ. 38։ վերջ. 46։ [36] Մարկ. իգ. 39։ Մարկ. ժգ. 35։ [37] Ցովհ. ե. 30։ գ. 38։ [38] Մարկ. գ. 11։ [39] Ցովհ. ժը. 27։ Եբր. ե. 7։ [40] Վեր. 40։ [41] Մարկ. իգ. 47։ Մարկ. ժգ. 43։ Ցովհ. ժը. 3։ [42] Մարկ. իգ. 51։ Մարկ. ժգ. 47։ Ցովհ. ժը. 10։ [43] Մարկ. իգ. 55։ Մարկ. ժգ. 48։

վերայ ։ Էս է ձեր ժամն (սահմանն) եւ խաւարի իշխանութիւնն[44] ։

54 Եւ նորան բռնեցին տարան եւ մտցրին քահանայապետի տունն[45]. եւ պետրոս հեռուանց գնում էր նորա ետեւն[46] ։

55 Երբոր սրահի մէջն կրակ վառեցին եւ շուրջ կողմով նստեցին, պետրոսն էլ նստեց նորանց միջումն[47] ։

56 Իրեն աղախին (պաշտօնեայ) տեսաւ նորան՝ որ լուսոյ մօտ նստած էր. մտիկ տուաւ նորան եւ ասաց. այ էլ նորանց հետ էր՝ որ նորա հետն էին ։

57 Նայց պետրոսն ուրացաւ եւ ասաց. ով կին. ես նորան չեմ գիտում ։

58 Եւ մինչիչ յետոյ մին ուրիշն տեսաւ նորան եւ ասաց[48]. դուն էլ նորանցից ես. եւ պետրոսն ասաց. ով մարդ՝ ես նորանցից չեմ ։

59 Եւ երբոր մին ժամ (սահման) վերայ անցկացաւ՝ մին ուրիշն հաստատումէր եւ ասում, շիտակ, որ սա էլ նորա հետն էր[49]. ինչուոր՝ գալիլեացի է ։

60 Պետրոսն ասաց. ով մարդ՝ չեմ գիտում թէ դու ինչ ես խոսում. եւ հենց էն ժամումն դեռ որ նա էն ասումէր՝ հանն խոսեց ։

61 Տէրն դարձաւ եւ մտիկ տուաւ պետրոսին՝ եւ պետրոսն միտքն բերաւ Տէրի էն խօսքըն որ ասաց նորան[50], թէ հանն դեռ չը խոսած, երեք անգամ կուրանաս՝ չըգիտես ինձ[51] ։

62 Եւ դուրս գնաց եւ դառն արտասուքով լաց էլաւ ։

63 Եւ մարդիքն՝ որ նորան պահումէին՝ ծաղր էին անում նորան եւ զարկում[52] ։

64 Եւ նորա երեսն ծածկումէին եւ հարցնումէին, եւ նորան հարցընումէին եւ ասում. մարգարէացիր՝ ով է նա՝ որ քեզ զարկեց ։

65 Եւ էլ ուրիշ շատ բաներ հայհոյանքով խօսումէին նորա դէմ ։

66 Եւ երբոր առաւօտ էլաւ[53] ժողովրդի ծերերն եւ քահանայապետներն եւ կարգացողներն ժողովեցան[54], եւ նորան հանեցին տարան իրանց սիվանն՝ եւ ասացին[55]. Թէ որ դու Քրիստոսն ես, ասա մեզ ։

67 Եւ նրանց ասաց. Թէ որ ասեմ ձեզ, հնարէս էլ դուք չէք հաւատալ ։

68 Եւ Թէ որ մին բան հարցնեմ ձեզ, ինձ պատասխան չէք տալ կամ արձակել ։

69 Նայց սրանից հետեւ որդին մարդոյ՝ Աստուծոյ զօրութեան աջ կողմն կընստի[56] ։

70 Եւ ամէնքն ասացին. ուրեմն դո՞ւ ես Աստուծոյ որդին ։ եւ նա ասաց նորանց. դուք էք ասում[57], որ ես եմ ։

71 Եւ նորանք ասացին. էլ ի՞նչ պէտք է մեզ վկայութիւն, ինչու որ հենց մենք ինքն լսեցինք դորա բերանիցն[58] ։

---

[44] Ցուկ. ԺԲ. 27։ [45] Մատթ. ԻԶ. 57։ [46] Մատթ. ԻԶ. 58։ Ցուկ. ԺԲ. 15։ [47] Մատթ. ԻԶ. 69։ Մարկ. ԺԴ. 66։ Ցուկ. ԺԲ. 17, 18։ [48] Մատթ. ԻԶ. 71։ Մարկ. ԺԴ. 69։ Ցուկ. ԺԲ. 25։ [49] Մատթ. ԻԶ. 73։ Մարկ. ԺԴ. 70։ Ցուկ. ԺԲ. 26։ [50] Մատթ. ԻԶ. 75։ Մարկ. ԺԴ. 72։ [51] Մատթ. ԻԶ. 34, 75։ Ցուկ. ԺԴ. 38։ [52] Մատթ. ԻԶ. 67, 68։ Մարկ. ԺԴ. 65։ [53] Մատթ. ԻԷ. 1։ [54] Գործ. Դ. 26։ Գործ. Իե. 5։ [55] Մատթ. ԻԷ. 63։ Մարկ. ԺԵ. 61։ [56] Մատթ. ԻԶ. 64։ Մարկ. ԺԴ. 62։ Եբր. Ա. 3։ Ը. 1։ [57] Մատթ. ԻԶ. 64։ Մարկ. ԺԴ. 62։ [58] Մատթ. ԻԶ. 65։ Մարկ. ԺԴ. 63։

## ԴԱ · ԻԹ

1 Յեսուան կը չարախօսէ Պիղատոսի առաջին եւ Հերովդէսի կուղարկվի, 8 Հերովդէսն Նորան կանարդէ եւ ծաղր կանէ, 12 Պիղատոս եւ Հերովդէս իրար հետ բարեկամ կըլի-նին։ 13 Ժողովուրդն կամենուվ որ բարերարն արձակվի, 25 Պիղատոսն Յեսուսին նո-րանց կամացն կըմատնէ որ Նորան խաչվի։ 27 Քրիստոս իրան վերայ կոծ եւ սուգ անող կանանց Երուսաղէմի քանդվիլն իմաց կըտայ. 34 Իրան թշնամիներին համար աղօթք կանէ։ 39 Երկու չարագործներին խօսիլն որ իրան հետ խաչն էին հանում։ 46 Յի-սուսի մահն, 50 եւ թաղվիլն։

1 Եւ նորանց ամէն բազմու-թիւնն վերկացաւ՝ եւ Նորան տարան պիղատոսի մօտ[1]։

2 Եւ սկսեցին չարախօսութիւն անել Նորանից եւ ասել. սորան գտինք՝ որ մեր ազգին ծռումէր[2] եւ արգելումէր կայսերին հարկ տա-լուցն[3]. եւ ինքն իրան համար ասու-մէր՝ թէ Քրիստոս թագաւոր է[4]։

3 Իսայց պիղատոս հարցուց Նո-րան եւ ասաց. դո՞ւ ես հրէից թա-գաւորն[5]. նա պատասխան տուաւ Նո-րան եւ ասաց. դու ասացիր։

4 Պիղատոս ասաց քահանայա-պետներին եւ ժողովրդին. ես մին պատճառ չեմ գտնում էս մարդումս[6]։

5 Եւ Նորանք սաստկացնումէին եւ ասում. թէ ժողովուրդներըն խռովացնուվ, եւ բոլոր հրէաստանի մէջն սովորցնում՝ գալիլեայից սկը-սած մինչեւ էստեղս։

6 Իսայց պիղատոն երբոր գալի-լեայի համար լսեց, հարցրուց՝ եթէ էգ մարդդ գալիլեացի՞ է։

7 Եւ երբոր իմացաւ՝ թէ հերո-դէսի իշխանութիւնից է[7]. տանիլ տուաւ Նորան հերովդէսի մօտ. ինչու որ՝ նա էլ էն օրերումն երուսաղէ-մում էր։

8 Եւ հերովդէսն՝ երբոր Յիսու-սին տեսաւ՝ շատ ուրախ էլաւ. ին-չու որ՝ շատ ժամանակից ետու ցան-կանումէր տեսնել Նորան[8]. պատ-ճառն որ՝ շատ անգամ՝ Նորա համար լսումէր, եւ սպասումէր՝ որ մին նշան տեսնէ Նորանից էլած[9]։

9 Շատ խօսքերով հարցնումէր Նորան՝ եւ նա իսկի մին պատասխան չըտուաւ Նորան։

10 Քահանայապետներն եւ կար-գացօղներն կանգնած էին՝ եւ շատ սաստիկ չարախօսումէին Նորանից։

11 Հերովդէսն էլ իրան զինուո-ղներին հետ անարգեց Նորան. եւ ծա-ղըր անելով՝ մին սպիտակ շոր քցեց Նորա վերայ, եւ յետ տանիլ տուաւ պիղատոսի մօտ[10]։

12 Եւ պիղատոս եւ հերովդէս բա-րեկամ էլան էն օրումն, ինչու որ՝ ա-ռաջ իրար հետ թշնամի էին[11]։

13 Պիղատոս կանչեց քահանայա-պետներին եւ իշխաններին եւ ժո-ղովրդին[12],

14 Եւ Նորանց ասաց. դուք ինձ

[1] Մարկ. իե. 2։ Մարխ. ժե. 1։ Ցովհ. ժը. 28։ [2] գործ. ժե. 7։ [3] Մարկ. ժէ. 27։ իը. 21։ Մարխ. ժը. 17։ [4] Ցովհ. ժԲ. 12։ [5] Մարկ. իե. 11։ ա Տիմ. գ. 13։ [6] ա Պետր. գ. 22։ [7] Գաղ. գ. 1։ [8] Ղուկ. թ. 9։ [9] Մարկ. ժգ. 1։ Մարխ. գ. 14։ [10] Եսայ. ծգ. 3։ [11] գործ. դ. 27։ [12] Մարկ. իե. 23։ Մարխ. ժե. 14։ Ցովհ. ժը. 38։ ժԹ. 4։

մեզ բերիք էս մարդըս ինչպէս ժո-
ղովրդի մոլորացնող[13]. եւ ահա
ձեր առաջին դատեցի՝ եւ իսկի մեռաս
չը՛գըտի էս մարդումն էն բաներին
համար, որ դուք չարախօսեցիք դո-
րանից[14]:

15 Յուդէ էլ հերօդէսն. ինչու որ՝
դորան տանիլ տուի նորա մեռ. եւ
ահա իսկի մեռնելոյ արժանի բան չի
գործել դա:

16 Պետրոսեմ դորան՝ եւ կար-
ձակեմ[15]:

17 Պատճառն որ՝ ոճնի ժամանա-
կումն հարկաւոր էր՝ որ միւս մարդ ար-
ձակէ նորանց համար[16].

18 Յե նորանք ամէն բաղմութե-
նովն աղաղակումէին եւ ասում[17].
դորան վեր առ՝ եւ բարաբբային ար-
ձակիր մեզ համար.

19 Որ նա քաղաքումն էլած խռո-
վութեան եւ մարդասպանութեան
համար բանտն էր մտել:

20 Պիղատոսն միւն էլ սկսեց խօ-
սիլ. ինչու որ՝ կամենում էր արձակել
Յիսուսին:

21 Յե նորանք միւն էլ աղաղակու-
մէին եւ ասում՝ խաչ հանիր դորան:

22 Յե նա երիք անգամ՝ ասաց նո-
րանց. ի՞նչ չար բան գործեց սա.
իսկի մեռնելոյ վնաս չը՛գտի սորա-
նում. կրկըռատեմ սորան եւ կար-
ձակեմ:

23 Յե նորանք բարձր ձայնով
ստիպումէին եւ խնդրումէին՝ որ խաչ
հանէ նորան. եւ նորանց եւ քահա-
նայապետներըն աղաղակելն զօրանու-
մէր:

24 Յե պիղատոս հաւանկացաւ՝ որ
նորանց խնդիրքըն անէ[18]:

25 Յարաբբային արձակեց նո-
րանց համար՝ որ խռովութեան եւ
մարդասպանութեան համար բանտի
մէջ էր բցված, որ նորանք էլ հենց
նորան էին խնդրում. եւ Յիսուսին
մատնեց նորանց կամացն:

26 Յերբոր նորան առին գնացին,
միւն սիմեն կիւրենացի (ասած) մարդ
բռնեցին՝ որ յանդիցն էր գալիս.
(եւ) խաչըն նորա վերայ դրին, որ
Յիսուսի ետեւէն բերէ[19]:

27 Յե շատ ժողովուրդ էր գնում
նորա ետեւէն. եւ կանայք էլ՝ որ
կոծ եւ սուգ էին անում նորա վերայ:

28 Յիսուս դարձաւ եւ նորանց ա-
սաց. երուսաղէմի աղջիկներ՝ լաց
միւ լինիք ինձ վերայ՝ այլ լաց եղէք
ձեր անձներիդ եւ ձեր որդոց վերայ:

29 Ինչու որ՝ օրեր կըգան՝ որ նո-
րանցում կասեն՝ թէ երանի ամուլ-
ներին (չըբերնէրին) եւ էն փորերին,
որ չըծնան, եւ էն ծըծերին, որ չը-
ծըծացրին[20]:

30 Յեն ժամանակն կսկսեն ասել
սարերին՝ թէ մեզ վերայ ընկէք, եւ
բլուրներին՝ թէ ծածկեցէք մեզ[21]:

31 Ինչու որ՝ եթէ կանանչ փայ-
տին էս են անում, սպա չորին ի՞նչ
կըլինի[22]:

32 Յուրիշ երկու չարագործ մար-
դիք էլ տարան, որ նորա հետ սպա-
նեն[23]:

33 Յերբոր եկին Գնտեղն՝ որ գա-
գաթն էր կոչվում, Գնտեղ խաչ հա-
նեցին նորան. եւ էն չարագործնե-
րըն էլ, միւնը աջ կողմն եւ մեկելը
ձախ կողմն խաչեցին[24]:

[13] Ա՛ր· 1, 2: [14] Ա՛ր· 4: [15] Մարթ· իե· 26: Ցուղ· ժի· 1: [16] Մարթ· իե· 15: Մարկ· ժե· 6: Ցուղ· ժը· 39: [17] Գործ· գ· 14: [18] Մարթ· իե· 26: Մարկ· ժե· 15: Ցուղ· ժի· 16: [19] Մարթ· իե· 32: Մարկ· ժե· 21: Ցուղ· ժի· 17: [20] Մարթ· իգ· 19: Ղուկ· իա· 23: [21] Եսայ· ը· 19: Ովե· ժ· 8: Ցայտ· զ· 16: Թ· 6: [22] Եզեկ· ժա· 31: Եբեր· իե· 29: Եղէկ· ի· 47: իա· 3, 4: ա Պետր· դ· 17: [23] Եսայ· ծգ· 12: Մարթ· իե· 38: [24] Մարթ· իե· 33: Մարկ· ժե· 22: Ցուղ· ժի· 17, 18:

34 Ա՛ր Յիսուս ասաց. Ամէն՝ ամէն կ՚ըսեմ ձեզի՝ թէ ամէն մարդ՝ որ մեղք կ՚ընէ՝ մեղքին ծառան է։ 35 Եւ ծառան յաւիտեան չի մնար տանը մէջ, բայց որդին յաւիտեան կը մնայ։ 36 Ուստի եթէ որդին ձեզ ազատէ՝ իսկապէս ազատ պիտի ըլլաք։ 37 Գիտեմ թէ Աբրահամի զաւակ էք, բայց ինծի սպանել կ՚ուզէք, որովհետեւ իմ խօսքս ձեր մէջ տեղ չունի։ 38 Ես որ հօրմէս տեսած եմ, կը խօսիմ. դուք ալ ձեր հօրմէն լսածը կ՚ընէք։

39 Պատասխանեցին ու անոր ըսին. Մեր հայրը Աբրահամ է։ Յիսուս ըսաւ անոնց. Եթէ Աբրահամի զաւակներ ըլլայիք, Աբրահամի գործերը պիտի ընէիք։ 40 Բայց հիմա ինծի սպանել կ՚ուզէք, մարդ մը՝ որ ձեզի ճշմարտութիւնը խօսեցայ, զոր Աստուծմէ լսեցի. Աբրահամ այդպէս չըրաւ։ 41 Դուք ձեր հօրը գործերը կ՚ընէք։ Անոնք ըսին անոր. Մենք պոռնկութենէ չծնանք. մեկ հայր ունինք՝ Աստուած։

42 Յիսուս ըսաւ անոնց. Եթէ Աստուած ձեր հայրը ըլլար, պիտի սիրէիք զիս, վասն զի ես Աստուծմէ ելայ եկայ. ոչ թէ ինքնին եկայ, հապա ինք զիս ղրկեց։ 43 Ինչո՞ւ համար իմ խօսքս չէք հասկնար. որովհետեւ չէք կրնար իմ խօսքս լսել։ 44 Դուք ձեր հայրը սատանան էք, եւ ձեր հօր ցանկութիւնները պիտի ընէք։ Ան սկիզբէն մարդասպան էր, եւ ճշմարտութեան մէջ չկայնեցաւ, վասն զի ճշմարտութիւն չկայ անոր մէջ։ Երբ սուտ կը խօսի, իր բնիկէն կը խօսի, վասն զի սուտ է եւ սուտին հայր է։ 45 Բայց ես որովհետեւ ճշմարտութիւնը կ՚ըսեմ, ինծի չէք հաւատար։ 46 Ո՞ր մէկդ զիս մեղքի մէջ կը գտնէ։ Եթէ ճշմարտութիւնը կ՚ըսեմ, ինչո՞ւ համար ինծի չէք հաւատար։ 47 Ով որ Աստուծմէ է, Աստուծոյ խօսքերը կը լսէ. ձեր պատճառը այն է, որ Աստուծմէ չէք։

48 Պատասխանեցին հրեաները ու ըսին անոր. Չենք ըսեր մենք ալ լաւ՝ թէ Սամարացի ես դուն եւ դեւ ունիս։ 49 Յիսուս պատասխանեց. Ես դեւ չունիմ, հապա պատիւ կու տամ իմ Հօրս, եւ դուք զիս կ՚անարգէք։ 50 Բայց ես իմ փառքս չեմ փնտռեր. կայ մէկը որ կը փնտռէ եւ կը դատէ։ 51 Ամէն ճշմարիտ ամէն ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի՝ եթէ մարդ մը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ չպիտի տեսնէ։ 52 Հրեաները ըսին անոր. Հիմա գիտցանք որ դեւ ունիս։ Աբրահամ մեռաւ, մարգարէներն ալ մեռան, եւ դուն կ՚ըսես՝ եթէ մարդ մը իմ խօսքս պահէ, յաւիտեան մահ չպիտի համտեսէ։ 53 Մեծ ես դուն մեր հայր Աբրահամէն, որ մեռաւ. մարգարէներն ալ մեռան. ո՞ւմ կ՚ընես քեզ։ 54 Յիսուս պատասխանեց. Եթէ ես ինծի փառք տամ, իմ փառքս ոչինչ է. Հայրս է որ զիս կը փառաւորէ, որուն դուք կ՚ըսէք թէ մեր Աստուածն է։ 55 Եւ չէք ճանչցեր զայն, բայց ես կը ճանչնամ զայն. եւ եթէ ըսեմ թէ չեմ ճանչնար զայն, ձեզի պէս սուտ պիտի ըլլամ. բայց կը ճանչնամ զայն եւ անոր խօսքը կը պահեմ։ 56 Ձեր հայր Աբրահամ ցնծաց որ պիտի տեսնէ իմ օրս, տեսաւ ալ եւ ուրախացաւ։ 57 Ուստի հրեաները ըսին անոր. Հիսուն տարեկան չես դեռ, եւ Աբրահամ տեսա՞ր։ 58 Յիսուս ըսաւ անոնց. Ամէն՝ ամէն կ՚ըսեմ ձեզի՝ մինչեւ Աբրահամ չեղաւ, ես եմ։ 59 Ուստի քարեր վերցուցին որ ձգեն անոր վրայ. բայց Յիսուս պահուեցաւ ու դուրս ելաւ տաճարէն։

9 1 Եւ անցնելով տեսաւ մարդ մը՝ որ կոյր էր ծնած։ 2 Եւ իր աշակերտները հարցուցին զանիկա ըսելով. Վարդապե՛տ, ո՞վ մեղաւ, ինքը թէ անոր ծնողքը, որ կոյր ծնաւ։ 3 Յիսուս պատասխանեց. Ո՛չ ինքը մեղաւ եւ ո՛չ ալ անոր ծնողքը, հապա որպէսզի Աստուծոյ գործերը յայտնուին անոր մէջ։ 4 Ինծի հարկ է գործել զգործս Ա՛ր որ զիս ղրկեց, մինչեւ որ ցորեկ է. գիշեր կու գայ, երբ ոչ ոք կրնայ գործել։ 5 Երբ աշխարհիս մէջ եմ, աշխարհի լոյսն եմ։ 6 Այս ըսելէ ետքը թքեց գետին, թուքով մանր ցեխ շինեց եւ ցեխը քսեց կոյրին աչքերուն վրայ։ 7 Եւ ըսաւ անոր. Գնա՛ լուացուիր Սիլովամ աւազանը (որ կը թարգմանուի՝ Ղրկեալ)։ Գնաց ուրեմն լուացուեցաւ ու տեսողութիւն առած եկաւ։ 8 Ուստի դրացիները եւ զանիկա առաջ կոյր տեսնողները ըսին. Ասիկա չէ՞ որ նստած կ՚աղաչէր։ 9 Ոմանք կ՚ըսէին թէ ասիկա է, ուրիշներ կ՚ըսէին թէ նմանը կ՚երեւի անոր։ Ինքը կ՚ըսէր թէ ես եմ։ 10 Ուստի ըսին անոր. Ինչպէ՞ս բացուեցան աչքերդ։ 11 Պատասխանեց ան ու ըսաւ. Մարդ մը՝ որ Յիսուս կը կոչուի, ցեխ շինեց եւ քսեց աչքերուս վրայ եւ ըսաւ ինծի. Գնա՛ Սիլովամ աւազանը լուացուիր։ Գացի ուրեմն լուացուեցայ ու տեսողութիւն առի։ 12 Ըսին անոր. Ո՞ւր է ան։ Ըսաւ. Չեմ գիտեր։

13 Կը տանեն զանիկա առաջ կոյր եղածը դէպի փարիսեցիները։ 14 Եւ շաբաթ օր էր այն օր՝ երբ Յիսուս ցեխ շինեց եւ անոր աչքերը բացաւ։ 15 Ուստի նորէն հարցուցին զանիկա փարիսեցիները թէ ինչպէ՞ս տեսողութիւն առաւ։ Ան ալ ըսաւ անոնց. Ցեխ դրաւ աչքերուս վրայ, լուացուեցայ ու կը տեսնեմ։ 16 Ուստի փարիսեցիներէն ոմանք կ՚ըսէին. Այս մարդը Աստուծմէ չէ, որովհետեւ շաբաթը չի պահեր։ Ուրիշներ կ՚ըսէին. Ինչպէ՞ս մեղաւոր մարդ մը կրնայ այսպիսի նշաններ ընել։ Եւ անոնց մէջ պառակտում եղաւ։ 17 Նորէն ըսին կոյրին. Դուն ի՞նչ կ՚ըսես անոր մասին՝ որ աչքերդ բացաւ։ Ան ալ ըսաւ. Մարգարէ է։

18 Հրեաները չհաւատացին անոր մասին թէ կոյր ծնած է ու տեսողութիւն առած, մինչեւ որ կանչեցին տեսողութիւն առած անոր ծնողքը 19 եւ հարցուցին զանոնք ըսելով. Ձե՞ր որդին է ասիկա՝ որ դուք կ՚ըսէք թէ կոյր ծնաւ. ուրեմն ինչպէ՞ս հիմա կը տեսնէ։ 20 Պատասխանեցին անոր ծնողքը ու ըսին. Գիտենք թէ մեր որդին է ասիկա եւ թէ կոյր ծնաւ։ 21 Բայց ինչպէ՞ս հիմա կը տեսնէ՝ չենք գիտեր, կամ ո՞վ բացաւ անոր աչքերը՝ չենք գիտեր. ինքը հասակ ունի, իրմէ հարցուցէք, ինքը իր վրայ կը խօսի։ 22 Անոր ծնողքը այս ըսին, վասն զի կը վախնային հրեաներէն, որովհետեւ հրեաները արդէն համաձայնած էին որ եթէ մարդ մը զինք Քրիստոս խոստովանի, ժողովարանէն դուրս հանուի։ 23 Ասոր համար ըսին անոր ծնողքը. Հասակ ունի, իրմէ հարցուցէք։

24 Ուստի նորէն կանչեցին կոյր եղած մարդը ու ըսին անոր. Փա՛ռք տուր Աստուծոյ. մենք գիտենք թէ մարդը մեղաւոր է։ 25 Ան ալ պատասխանեց ու ըսաւ. Մեղաւոր է կամ չէ՝ չեմ գիտեր. մէկ բան գիտեմ, որ կոյր էի, հիմա կը տեսնեմ։ 26 Ուստի ըսին անոր. Ի՞նչ ըրաւ քեզի, ինչպէ՞ս բացաւ աչքերդ։ 27 Պատասխանեց անոնց. Ըսի ձեզի արդէն ու չլսեցիք. ինչո՞ւ համար նորէն կ՚ուզէք լսել. միթէ դուք ալ անոր աշակերտ ըլլալ կ՚ուզէք։ 28 Անոնք ալ նախատեցին զանիկա ու ըսին. Դուն անոր աշակերտն ես, մենք Մովսէսի աշակերտներ ենք։ 29 Մենք գիտենք թէ Աստուած խօսեցաւ Մովսէսի հետ, բայց ասիկա չենք գիտեր թէ որտեղէ՞ն է։ 30 Պատասխանեց մարդը ու ըսաւ անոնց. Ասիկա զարմանալի բան է, որ դուք չգիտնաք թէ որտեղէ՞ն է, եւ ինծի աչքերը բացաւ։ 31 Գիտենք թէ Աստուած մեղաւորներու չի լսեր, հապա եթէ մարդ մը Աստուածավախ ըլլայ եւ անոր կամքը կատարէ, զայն կը լսէ։ 32 Յաւիտենից ի վեր չլսուեցաւ թէ մարդ մը բացաւ կոյրի մը աչքերը։ 33 Եթէ ասիկա Աստուծմէ չէր, բան մը չէր կրնար ընել։ 34 Պատասխանեցին ու ըսին անոր. Դուն ամբողջովին մեղքերու մէջ ծնած ես, ու մեզ կը սորվեցնե՞ս։ Եւ դուրս հանեցին զանիկա։

35 Յիսուս լսեց թէ դուրս հանեցին զանիկա, եւ գտնելով զանիկա ըսաւ. Դուն Մարդու Որդիին կը հաւատա՞ս։ 36 Պատասխանեց ան ու ըսաւ. Ո՞վ է, Տէ՛ր, որ հաւատամ անոր։ 37 Յիսուս ըսաւ անոր. Տեսեր ես զայն, եւ ան որ կը խօսի քեզի հետ՝ նա՛ է։ 38 Ան ալ ըսաւ. Կը հաւատամ, Տէ՛ր։ Եւ երկրպագեց անոր։ 39 Յիսուս ըսաւ. Ես դատաստանի համար եկայ այս աշխարհս, որպէսզի տեսողութիւն չունեցողները տեսողութիւն ունենան, եւ տեսողութիւն ունեցողները կուրանան։ 40 Այս բաները լսեցին փարիսեցիներէն ոմանք որ անոր հետ էին, ու ըսին անոր. Մե՞նք ալ կուրցա՞ծ ենք։ 41 Յիսուս ըսաւ անոնց. Եթէ կուրցած ըլլայիք, մեղք չպիտի ունենայիք. բայց հիմա կ՚ըսէք թէ կը տեսնենք, ձեր մեղքը կը մնայ։

10 1 Ամէն՝ ամէն կ՚ըսեմ ձեզի՝ ան որ ոչխարներուն գաւիթը դռնէն չի մտնար, հապա ուրկէ մէկ տեղէն կը բարձրանայ, գող է եւ աւազակ։ 2 Բայց ան որ դռնէն կը մտնէ, ոչխարներուն հովիւն է։ 3 Դռնապանը անոր կը բանայ, եւ ոչխարները անոր ձայնը կը լսեն, եւ ինք իր ոչխարները անուն առ անուն կը կանչէ ու կը հանէ զանոնք։ 4 Երբ իր ոչխարները դուրս հանէ, անոնց առջեւէն կ՚երթայ, եւ ոչխարները կը հետեւին անոր, վասն զի կը ճանչնան անոր ձայնը։ 5 Օտարի մը կը հետեւին երբեք, հապա կը փախչին անկէ, վասն զի օտարներուն ձայնը չեն ճանչնար։ 6 Այս առակը ըսաւ անոնց Յիսուս, բայց անոնք չհասկցան թէ ինչ բաներ էին որ կ՚ըսէր անոնց։

7 Ուստի նորէն ըսաւ Յիսուս. Ամէն՝ ամէն կ՚ըսեմ ձեզի՝ ես եմ ոչխարներուն դուռը։ 8 Ամէնքը որ առաջ եկան՝ գող են եւ աւազակ, բայց ոչխարները չլսեցին զանոնք։ 9 Ես եմ դուռը. ես միջոցաւ եթէ մարդ մը մտնէ, պիտի ազատի, եւ պիտի մտնէ ու պիտի ելլէ եւ արօտ պիտի գտնէ։ 10 Գողը չի գար՝ եթէ ոչ թէ որպէսզի գողնայ, սպաննէ եւ կորսնցնէ. ես եկայ որպէսզի կեանք ունենան եւ առատութեամբ ունենան։ 11 Ես եմ բարի հովիւը. բարի հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար։ 12 Վարձկան մը՝ որ հովիւ չէ, ոչխարները իրենը չեն, կը տեսնէ գայլը որ կու գայ, ոչխարները կը թողու ու կը փախչի, եւ գայլը կը յափշտակէ զանոնք ու կը ցրուէ։ 13 Վարձկանը կը փախչի, վասն զի վարձկան է ու ոչխարներուն համար հոգ չունի։ 14 Ես եմ բարի հովիւը, եւ կը ճանչնամ իմ ոչխարներս ու իմ ոչխարներս կը ճանչնան զիս, 15 ինչպէս Հայրը կը ճանչնայ զիս ու ես կը ճանչնամ Հայրը, եւ իմ ոչխարներուս համար կու տամ իմ կեանքս։ 16 Ուրիշ ոչխարներ ալ ունիմ՝ որ այս գաւթէն չեն, զանոնք ալ պէտք է որ առնեմ, եւ իմ ձայնս պիտի լսեն, եւ մէկ հօտ պիտի ըլլան, մէկ հովիւ։ 17 Ասոր համար Հայրը կը սիրէ զիս, որովհետեւ իմ կեանքս կու տամ, որպէսզի նորէն առնեմ զայն։ 18 Ոչ ոք կ՚առնէ զայն ինձմէ, հապա ես ինքնին կու տամ զայն. իշխանութիւն ունիմ զայն տալու, եւ իշխանութիւն ունիմ զայն նորէն առնելու. այս պատուէրը ստացայ Հօրմէս։ 19 Նորէն պառակտում եղաւ հրեաներուն մէջ այս խօսքերուն համար։ 20 Շատեր անոնց մէջէն կ՚ըսէին. Դեւ ունի ու խելագարած է. ինչո՞ւ համար անոր կը լսէք։ 21 Ուրիշներ կ՚ըսէին. Այս խօսքերը դեւ ունեցողի խօսքեր չեն. միթէ դեւ կրնա՞յ կոյրերուն աչքերը բանալ։

22 Երուսաղէմի մէջ նորոգութեան տօնը կատարուեցաւ, եւ ձմեռ էր։ 23 Յիսուս կը պտտէր տաճարին մէջ՝ Սողոմոնի սրահին մէջ։ 24 Ուստի հրեաները շրջապատեցին զինք ու ըսին անոր. Մինչեւ ե՞րբ պիտի կասկածի մէջ պահես մեր հոգիները. եթէ դուն Քրիստոս ես, յայտնապէս ըսէ մեզի։ 25 Յիսուս պատասխանեց անոնց. Ըսի ձեզի ու չհաւատացիք. իմ Հօրս անունով որ գործերը կ՚ընեմ, անոնք կը վկայեն իմ մասիս։ 26 Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք։ 27 Իմ ոչխարներս իմ ձայնս կը լսեն, եւ ես կը ճանչնամ զանոնք, եւ անոնք կը հետեւին ինծի։ 28 Ես յաւիտենական կեանք կու տամ անոնց, եւ յաւիտեան պիտի չկորսուին, եւ ոչ ոք պիտի յափշտակէ զանոնք ձեռքէս։ 29 Հայրս՝ որ ինծի տուաւ զանոնք, ամենէն մեծ է, եւ ոչ ոք կրնայ յափշտակել Հօրս ձեռքէն։ 30 Ես եւ Հայրը մէկ ենք։ 31 Հրեաները քարեր վերցուցին որ ձգեն անոր վրայ։ 32 Յիսուս պատասխանեց անոնց. Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի Հօրմէս, անոնցմէ որո՞ւ համար զիս կ՚ուզէք քարկոծել։ 33 Հրեաները պատասխանեցին անոր ըսելով. Բարի գործի համար չենք քարկոծեր զքեզ, հապա հայհոյութեան համար, եւ որովհետեւ դուն մարդ ես, Աստուած կ՚ընես քեզ։ 34 Յիսուս պատասխանեց անոնց. Չէ՞ որ ձեր Օրէնքին մէջ գրուած է. Ես ըսի՝ դուք աստուածներ էք։ 35 Եթէ զանոնք աստուածներ ըսաւ՝ որոնց որ Աստուծոյ խօսքը եղաւ, եւ գրուածը չի կրնար ջնջուիլ, 36 ինչպէ՞ս կ՚ըսէք ինծի՝ զոր Հայրը սրբեց եւ աշխարհ ղրկեց, թէ հայհոյեցիր, որովհետեւ ըսի թէ Աստուծոյ Որդին եմ։ 37 Եթէ իմ Հօրս գործերը չեմ ըներ, ինծի մի՛ հաւատաք։ 38 Բայց եթէ ընեմ, թէեւ ինծի չհաւատաք, գործերուն հաւատացէք, որպէսզի գիտնաք ու հաւատաք թէ Հայրը իմիս մէջ է, եւ ես Հօրմէ մէջ եմ։ 39 Ուստի նորէն կ՚ուզէին բռնել զինք, բայց ձեռքէն ազատեցաւ։

40 Եւ նորէն գնաց Յորդանանի անդիի կողմերը, ուր Յովհաննէս առաջ կը մկրտէր, եւ հոն կեցաւ։ 41 Եւ շատեր եկան անոր մօտ ու ըսին. Յովհաննէս նշան մը չըրաւ, բայց ամէն բան որ Յովհաննէս ասոր մասին ըսաւ՝ ճշմարիտ էր։ 42 Եւ հոն շատեր հաւատացին անոր։

11 1 Եւ հիւանդ մը կար՝ Ղազարոս անունով, Բեթանիայէն՝ Մարիամի եւ անոր քոյրը Մարթայի գիւղէն։ 2 Մարիամ այն է որ օծեց Տէրը անուշահոտ իւղով եւ սրբեց իր մազերով անոր ոտքերը, որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր։ 3 Ուստի քոյրերը ղրկեցին անոր ըսելով. Տէ՛ր, ահա՝ զոր դուն կը սիրես հիւանդ է։ 4 Յիսուս լսելով ըսաւ. Այս հիւանդութիւնը մահուան համար չէ, հապա Աստուծոյ փառքին համար, որպէսզի Աստուծոյ Որդին փառաւորուի անով։ 5 Յիսուս կը սիրէր Մարթան, քոյրը եւ Ղազարոսը։ 6 Երբ լսեց թէ հիւանդ է, ուրեմն երկու օր եւս մնաց հոն ուր էր։ 7 Ապա յետոյ ըսաւ աշակերտներուն. Նորէն Հրէաստան երթանք։ 8 Աշակերտները ըսին անոր. Վարդապե՛տ, հիմա կը փնտռէին հրեաները զքեզ քարկոծելու, եւ նորէն հոն կ՚երթաս։ 9 Յիսուս պատասխանեց. Տասներկու ժամ չէ՞ որ ցորեկ է։ Եթէ մարդ մը ցորեկ ատեն քալէ, չի գայթակղիր, վասն զի այս աշխարհին լոյսը կը տեսնէ։ 10 Բայց եթէ գիշեր ատեն քալէ, կը գայթակղի, վասն զի լոյս չկայ անոր մէջ։ 11 Այս ըսելէ ետքը ըսաւ անոնց. Մեր բարեկամ Ղազարոս քնացաւ, բայց կ՚երթամ որ զանիկա արթնցնեմ։ 12 Ուստի ըսին աշակերտները. Տէ՛ր, եթէ քնացաւ, պիտի ապրի։ 13 Յիսուս իր մահուան մասին ըսած էր, բայց անոնք կարծեցին թէ քունի մասին կ՚ըսէ։ 14 Ուստի յայտնապէս ըսաւ անոնց. Ղազարոս մեռաւ։ 15 Եւ ձեզի համար կ՚ուրախանամ որ հոն չէի, որպէսզի հաւատաք. բայց եկէք անոր մօտ երթանք։ 16 Ուստի Թովմաս՝ որ կը կոչուի Երկուորեակ, ըսաւ իր աշակերտակիցներուն. Եկէ՛ք մենք ալ երթանք որ մեռնինք անոր հետ։

17 Երբ եկաւ Յիսուս, գտաւ զանիկա չորս օր ըլլալ արդէն գերեզմանին մէջ։ 18 Բեթանիա Երուսաղէմին մօտ էր, մօտաւորապէս տասնհինգ ստատիոն հեռու։ 19 Եւ շատ հրեաներ եկած էին Մարթայի եւ Մարիամի մօտ՝ որ մխիթարեն զանոնք եղբօրը համար։ 20 Մարթա երբ լսեց թէ Յիսուս կու գայ, ընդառաջ ելաւ անոր, բայց Մարիամ տունը նստած էր։ 21 Ուստի Մարթա ըսաւ Յիսուսի. Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս պիտի չմեռնէր։ 22 Բայց հիմա ալ գիտեմ թէ ինչ որ խնդրես Աստուծմէ՝ Աստուած պիտի տայ քեզի։ 23 Յիսուս ըսաւ անոր. Եղբայրդ պիտի յարութիւն առնէ։ 24 Մարթա ըսաւ անոր. Գիտեմ թէ յարութեան ատեն՝ վերջին օրը պիտի յարութիւն առնէ։ 25 Յիսուս ըսաւ անոր. Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ան որ կը հաւատայ ինծի, թէեւ մեռնի՝ պիտի ապրի։ 26 Եւ ամէն ոք որ կ՚ապրի եւ կը հաւատայ ինծի՝ յաւիտեան պիտի չմեռնի։ Այս կը հաւատա՞ս։ 27 Ան ալ ըսաւ անոր. Այո՛, Տէ՛ր, ես հաւատացի թէ դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գար։

28 Եւ այս ըսելէ ետքը գնաց եւ իր քոյրը Մարիամ գաղտնի կանչեց ըսելով. Վարդապետը եկաւ ու կը կանչէ զքեզ։ 29 Ան ալ լսելով՝ շուտով ելաւ ու գնաց անոր մօտ։ 30 Յիսուս դեռ գիւղին մէջ չէր մտած, հապա հոն էր ուր Մարթա ընդառաջ ելաւ անոր։ 31 Ուստի հրեաները որ անոր հետ տունը կը մխիթարէին զանիկա, երբ տեսան որ Մարիամ շուտով ելաւ ու դուրս գնաց, հետեւեցան անոր՝ կարծելով թէ գերեզմանը կու գայ որ հոն լալու։ 32 Մարիամ երբ եկաւ ուր Յիսուս էր, տեսնելով զանիկա ինկաւ անոր ոտքերուն առջեւ ու ըսաւ անոր. Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս պիտի չմեռնէր։ 33 Յիսուս երբ տեսաւ զանիկա լալով, եւ անոր հետ եկած հրեաները լալով, հոգիով խռովեցաւ եւ ինքզինքը տագնապի մատնեց 34 ու ըսաւ. Ո՞ւր դրիք զանիկա։ Ըսին անոր. Տէ՛ր, եկո՛ւր եւ տե՛ս։ 35 Յիսուս արտասուեց։ 36 Ուստի հրեաները ըսին. Տե՛ս թէ որչա՛փ կը սիրէր զանիկա։ 37 Բայց անոնցմէ ոմանք ըսին. Ասիկա որ կոյրի մը աչքերը բացաւ, չէր կրնար ընել որ ասիկա ալ չմեռնէր։ 38 Յիսուս նորէն խռովելով գերեզմանին եկաւ։ Քարայր մըն էր ան, եւ քար մը դրուած էր անոր վրայ։ 39 Յիսուս ըսաւ. Վերցուցէ՛ք քարը։ Մեռելին քոյրը՝ Մարթա, ըսաւ անոր. Տէ՛ր, արդէն գարշահոտ է, վասն զի չորս օրուան է։ 40 Յիսուս ըսաւ անոր. Չըսի՞ քեզի թէ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես։ 41 Ուստի վերցուցին քարը։ Յիսուս վերցուց աչքերը վերի կողմը ու ըսաւ. Հա՛յր, կը գոհանամ քեզմէ որ լսեցիր ինծի։ 42 Ես գիտէի թէ միշտ կը լսես ինծի, բայց ասոր համար ըսի՝ որ շրջապատողները հաւատան թէ դուն զիս ղրկեցիր։ 43 Այս ըսելէ ետքը բարձր ձայնով կանչեց. Ղազա՛րոս, դո՛ւրս եկուր։ 44 Մեռելը դուրս եկաւ, ձեռքերն ու ոտքերը կապուած էին գերեզմանի կտաւներով, եւ դէմքը կապուած էր թաշկինակով։ Յիսուս ըսաւ անոնց. Արձակեցէ՛ք զանիկա ու թո՛ղուցէք որ երթայ։

45 Ուստի հրեաներէն շատեր որ եկած էին Մարիամի մօտ եւ տեսան զոր ըրաւ Յիսուս, հաւատացին անոր։ 46 Բայց անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներուն ու ըսին անոնց զոր ըրաւ Յիսուս։ 47 Ուստի քահանայապետները եւ փարիսեցիները ժողով հաւաքեցին ու ըսին. Ի՞նչ ընենք, վասն զի այս մարդը շատ նշաններ կ՚ընէ։ 48 Եթէ զայն այսպէս թողունք, բոլորը պիտի հաւատան անոր, եւ հռոմայեցիները պիտի գան ու պիտի առնեն մեր տեղն ալ եւ ազգն ալ։ 49 Բայց անոնցմէ մէկը՝ Կայիափա անունով, որ տարեկան քահանայապետ էր, ըսաւ անոնց. Դուք ոչինչ գիտէք, 50 ոչ ալ կը խորհիք թէ մեզի համար աւելի լաւ է որ մէկ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, քան թէ ամբողջ ազգը կորսուի։ 51 Բայց ասիկա իր անձնական կամքով չըսաւ, հապա որովհետեւ տարեկան քահանայապետ էր, մարգարէացաւ թէ Յիսուս պիտի մեռնի ազգին համար, 52 եւ ոչ միայն ազգին համար, հապա որպէսզի նաեւ Աստուծոյ ցրուած զաւակները մէկ տեղ ժողվէ։ 53 Ուստի այդ օրէն սկսեալ խորհուրդ կ՚ընէին որ զինք սպաննեն։ 54 Ասոր համար Յիսուս այլեւս յայտնապէս չէր շրջիր հրեաներուն մէջ, հապա հոնկէ մեկնեցաւ դէպի անապատին մօտ գտնուող երկիրը, Եփրեմ անունով քաղաքը, եւ հոն կը բնակէր աշակերտներուն հետ։

55 Հրեաներուն Զատիկը մօտ էր, եւ շատեր գացին երկրէն Երուսաղէմ՝ Զատկէն առաջ, որ իրենց անձերը սրբեն։ 56 Ուստի Յիսուսը կը փնտռէին եւ տաճարին մէջ իրարու կ՚ըսէին կայնած. Ի՞նչ կը կարծէք, տօնին չի՞ գար։ 57 Քահանայապետները եւ փարիսեցիները պատուէր տուած էին որ եթէ մարդ մը գիտնայ թէ ուր է, յայտնէ, որպէսզի բռնեն զինք։

12 1 Զատկէն վեց օր առաջ Յիսուս եկաւ Բեթանիա, ուր Ղազարոսը կար՝ զոր յարուցած էր մեռելներէն։ 2 Ուստի ընթրիք պատրաստեցին անոր հոն, եւ Մարթա կը սպասարկէր, իսկ Ղազարոս անոնց հետ սեղանակից էր։ 3 Մարիամ առաւ ֆունտ մը անուշահոտ իւղ՝ մաքուր նարդոսէ, օծեց Յիսուսի ոտքերը եւ իր մազերով սրբեց անոր ոտքերը, եւ տունը լեցուեցաւ իւղին հոտով։ 4 Ուստի Յուդա Սիմոնի Իսկարիովտացի աշակերտներէն մէկը՝ որ պիտի մատնէր զինք, ըսաւ. 5 Ինչո՞ւ համար այս իւղը չծախուեցաւ երեք հարիւր դահեկանի եւ չտրուեցաւ աղքատներուն։ 6 Ասիկա չըսաւ թէ աղքատներուն հոգ կը տանէր, հապա որովհետեւ գող էր եւ քսակը իրեն յանձնուած էր, եւ ինչ որ կը դրուէր անոր մէջ՝ կը գողնար։ 7 Ուստի Յիսուս ըսաւ. Թո՛ղ զանիկա, որ իմ թաղման օրուան համար պահած ըլլայ զայն։ 8 Աղքատները միշտ ձեզի հետ կ՚ունենաք, բայց ինծի միշտ չունիք։ 9 Ուստի հրեաներէն շատեր գիտցան թէ հոն է, եւ եկան ոչ միայն Յիսուսի համար, հապա որպէսզի տեսնեն նաեւ Ղազարոսը՝ զոր յարուցած էր մեռելներէն։ 10 Քահանայապետները խորհուրդ կ՚ընէին որ Ղազարոսն ալ սպաննեն, 11 վասն զի շատեր անոր պատճառով կ՚երթային ու կը հաւատային Յիսուսի։

12 Հետեւեալ օրը՝ մեծ բազմութիւն մը որ տօնին եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, 13 արմաւենիի ճիւղեր առին ու ելան անոր ընդառաջ եւ կը գոչէին. Օսաննա՛. օրհնեալ է Տիրոջ անունով եկողը, Իսրայէլի թագաւորը։ 14 Յիսուս գտաւ էշ մը ու նստաւ անոր վրայ, ինչպէս գրուած է. 15 Մի՛ վախնար, Սիոնի դուստր. ահա՝ քու թագաւորդ կու գայ՝ էշու մը քուռակի վրայ նստած։ 16 Աշակերտները նախ չհասկցան այս բաները, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, յիշեցին թէ այս բաները անոր համար գրուած էին, եւ թէ այս բաները ըրին անոր։ 17 Ուստի բազմութիւնը որ անոր հետ էր երբ Ղազարոսը գերեզմանէն կանչեց եւ մեռելներէն յարուցանեց զանիկա, վկայութիւն կու տար։ 18 Ասոր համար ալ բազմութիւնը ընդառաջ ելաւ անոր, վասն զի լսած էին թէ նշան մը ըրած է։ 19 Ուստի փարիսեցիները ըսին իրարու. Կը տեսնէ՞ք որ ոչինչ կրնաք ընել. ահա՝ աշխարհը ետեւէն գնաց։

20 Եղան հեթանոսներէն ոմանք որ տօնին համար Երուսաղէմ կ՚երթային երկրպագութեան։ 21 Ասոնք եկան Փիլիպպոսի մօտ՝ որ Գալիլիոյ Բեթսայիդայէն էր, եւ խնդրեցին զանիկա ըսելով. Տէ՛ր, կ՚ուզենք Յիսուսը տեսնել։ 22 Փիլիպպոս գնաց ու ըսաւ Անդրէասի, Անդրէաս եկաւ ու Փիլիպպոս ալ եկաւ ու ըսին Յիսուսի։ 23 Յիսուս պատասխանեց անոնց ըսելով. Եկաւ ժամը որ Մարդու Որդին պիտի փառաւորուի։ 24 Ամէն՝ ամէն կ՚ըսեմ ձեզի՝ եթէ ցորենի հատիկ մը հողին մէջ չի ձգուիր ու չի մեռնիր, կը մնայ միայն հատիկ մը. բայց եթէ մեռնի, շատ պտուղ կու տայ։ 25 Ան որ իր կեանքը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, եւ ան որ իր կեանքը կ՚ատէ այս աշխարհի մէջ՝ յաւիտենական կեանքի համար պիտի պահէ զայն։ 26 Եթէ ինծի ծառայէ մարդ մը, ինծի հետեւի, եւ ուր որ ես՝ հոն ալ իմ ծառաս պիտի ըլլայ։ Եթէ ինծի ծառայէ մարդ մը, Հայրը պիտի պատուէ զայն։ 27 Հիմա հոգիս խռովեցաւ, եւ ի՞նչ ըսեմ. Հա՛յր, փրկէ զիս այս ժամէն։ Բայց ասոր համար եկայ այս ժամուն։ 28 Հա՛յր, փառաւորէ քու անունդ։ Ձայն մը եկաւ երկնքէն. Փառաւորեցի եւ նորէն պիտի փառաւորեմ։ 29 Ուստի բազմութիւնը որ կայնած էր եւ լսեց, կ՚ըսէր թէ որոտ եղաւ։ Ուրիշներ կ՚ըսէին. Հրեշտակ մը խօսեցաւ անոր։ 30 Յիսուս պատասխանեց ու ըսաւ. Ասիկա ինծի համար չեղաւ այս ձայնը, հապա ձեզի համար։ 31 Հիմա է այս աշխարհիս դատաստանը. հիմա այս աշխարհիս իշխանը դուրս պիտի հանուի։ 32 Եւ ես երբ երկրէ վերացուիմ, բոլորը ինծի պիտի քաշեմ։ 33 Այս ըսաւ՝ նշանակելով թէ ինչ մահով պիտի մեռնէր։ 34 Ուստի բազմութիւնը պատասխանեց անոր. Մենք Օրէնքէն լսեցինք թէ Քրիստոս յաւիտեան կը մնայ, եւ ինչպէ՞ս դուն կ՚ըսես թէ Մարդու Որդին պէտք է որ բարձրացուի։ Ո՞վ է այս Մարդու Որդին։ 35 Յիսուս ըսաւ անոնց. Լոյսը դեռ քանի մը ժամ ձեզի հետ է։ Քալեցէ՛ք մինչ լոյս ունիք, որպէսզի խաւարը ձեզ չբռնէ։ Խաւարի մէջ քալող մարդը չգիտեր թէ ուր կ՚երթայ։ 36 Մինչ լոյս ունիք, լոյսին հաւատացէ՛ք, որպէսզի լոյսի որդիներ ըլլաք։ Այս բաները ըսաւ Յիսուս, ապա գնաց ու պահուեցաւ անոնցմէ։

37 Թէեւ այսչափ նշաններ ըրած էր անոնց առջեւ, բայց չհաւատացին անոր, 38 որպէսզի կատարուի Եսայի մարգարէին խօսքը զոր ըսաւ. Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր լսածին, եւ Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ։ 39 Ասոր համար չէին կրնար հաւատալ, որովհետեւ Եսայի նորէն ըսաւ. 40 Կուրցուց անոնց աչքերը եւ խստացուց անոնց սիրտը, որպէսզի աչքերով չտեսնեն եւ սրտով չհասկնան եւ չդառնան, եւ ես զանոնք չբժշկեմ։ 41 Եսայի այս ըսաւ՝ երբ տեսաւ անոր փառքը եւ անոր մասին խօսեցաւ։ 42 Բայց նոյնիսկ իշխաններէն շատեր հաւատացին անոր, սակայն փարիսեցիներուն պատճառով չէին խոստովաներ, որպէս

53 Եւ վերբերաւ նորան ամպիւ
կատուով պատեց, եւ քարից փորած
գերեզմանի մէջ դրաւ՝ որ էն տեղ
էլ խակի մին մարդ չէր[40]:
54 Եւ օրն ուրբաթն էր՝ եւ շա-
բաթ էր լուսանում[41]:
55 Եւ էն կանայքն՝ որ գալիլեա-
յիցն նորա հետ էին եկել՝ գնում էին
նորա ետեւէն[42], տեսին գերեզմա-
նըն՝ եւ թէ ինչպէս դրւաւ նորա
մարմինըն[43]:
56 Յետ դարձան՝ եւ խընկեր եւ
իւղեր պատրաստեցին[44]. եւ շաբաթ
օրումն հանդարտ մնացին պատուի-
րանքի պատճառուվն[45]:

## ԳԼ · ԻԴ

1 Երկու հրեշտակներ գերեզման գնացող կիներին՝ Քրիստոսի յարութիւնըն իմաց կըտան: 9 Նորանք էլ էս համբաւն ուրիշներին իմաց կըտան: 13 Քրիստոս Էմմաուս գնացող երկու աշակերտներին երեւում: 36 Նաեւ աշակերտներին երեւում եւ թ-
րանց անհաւատութիւնըն նորանց երեսներին կըթակէ: 47 Ն ոյանց պատուէր կըտայ: 49 Սուրբ Հոգին նորանց կը խոստանայ, 51 Եւ երկինքումն կըհամրառնայ:

1 Բայց մէկ շաբթի օրումն ա-
ռաւօտանց կանուխ եկին գերեզմա-
նըն[1], եւ բերին էն խընկերըն, որ
պատրաստեցին[2]. եւ ուրիշ կանայք
էլ նորանց հետ:
2 Եւ քարըն գերեզմանիցըն հե-
ռու էր թօլարած գտին[3]:
3 Եւ ներս մտին եւ Տէր Յի-
սուսի մարմինըն չըգտին[4]:
4 Եւ երբոր նրանցմոր շատ
զարմանում էին՝ ահա երկու մարդ
հասին նորանց լուսաւոր շորերով[5]:

5 Եւ երբոր ահով լցան, եւ ե-
րանց երեսները գետի երկիրն խո-
նարհացրին, նորանց ասացին. ինչո՞ւ
էք կենդանին մեռելների մէջն խընդ-
րում:
6 Չատեղ չէ, բայց յարութիւն
առաւ. մտքնդրէք բերէք՝ ինչպես որ
(նա) ձեզ հետ խօսեց՝ երբոր գալի-
լեայում էր[6].
7 Եւ ասում էր՝ թէ պէտք է, որ
որդին մարդոյ մեղաւոր մարդկանց
ձեռքն մատնըվի եւ խաչ հանվի՝ եւ
երեք օրումն յարութիւն առնի:
8 Եւ նորա խօսքերըն յիշեցին[7]:
9 Եւ յետ դարձան եւ էս ամէն
բաներըս պատմեցին տասնումէնին
եւ ամէն ուրիշներին[8]:
10 Եւ (նորանք) էին Մարիամ
Մագդաղենացին, եւ Յոհաննան, եւ
Յակոբայ Մարիամն, եւ նորանց հետ
ուրիշներն էլ՝ որ էս բաներս պատ-
մեցին առաքեալներին[9]:
11 Եւ նորանց ասածներն առաջ
պիղատի խօսք երեւեցաւ նորանց ա-
ռաջին՝ եւ չէին հաւատում նորանց[10]:
12 Բայց պետրոս վերկացաւ վա-
զեց գերեզմանն, եւ նայելով տես-
աւ՝ որ կտաւներն միեւնակ կային[11].
եւ գնաց զարմանալով իրան մտքու-

[40] Մարկ. իե · 59, 60: Մարկ. իզ · 46: [41] Մարկ. իե · 62: [42] Ղուկ. ը · 2: [43] Մարկ. իզ · 47: [44] Մարկ. իզ · 1: [45] Ելք. ի · 10:
[1] Մարկ. իբ · 1: Մարկ. իզ · 1: Ցփհ. ի · 1: [2] Ղուկ. իդ · 56: [3] Մարկ. իբ · 2: Մարկ. իզ · 4:
[4] Ղուկ. 23: Մարկ. իզ · 5: [5] Ցփհ. ի · 12. Գործ · ա · 10: [6] Մարկ. իզ · 21. իէ · 23: Մարկ. ը · 31: թ · 31: Ղուկ. թ · 22:
[7] Ցփհ. բ · 22: [8] Մարկ. իբ, 8: Մարկ. իզ · 10:
[9] Ղուկ. ը · 3: [10] Մարկ. իզ · 11: Ղուկ. 25:
[11] Ցփհ. ի · 3, 6:

մին, թէ ինչ էլաւ։

13 Իսկ ահա նորանցից երկու հոգի հենց էն օրումն մին գիւղ էին գնում՝ որ վաթսուն ասպարեզով (հանգիստ) երուսաղէմից հեռու էր, եւ նորա անունն Էմմաուս էր[12]։

14 Իսկ նորանք իրար հետ խօսում էին ամէն անցկացած բաներին համար։

15 Իսկ էլաւ երբոր նորանք խօսում էին եւ հակառակում էին հենց Յիսուս ինքն էլ մօտեցաւ՝ եւ գնում էր նորանց հետ[13]։

16 Իսկ նորանց աչքերն բռնված էին՝ որ չըճանաչին նորան[14]։

17 Իսկ նորանց ասաց. էդ ի՞նչ խօսքեր են՝ որ դորանց համար իրար հետ հակառակումք գնալով ժամանակին, եւ տրտմած էք։

18 Պատասխան տուաւ նորանցից մինն, որ նորա անունն կղէոպաս էր, եւ ասաց նորան[15]. միթէ երուսաղէմում դու մենակ ես մնացել՝ որ չիմացար էն բաներն, որ էս օրերումս դործվեցաւ նորանում։

19 Իսկ նա ասաց նորանց. ի՞նչ. եւ նորանք ասացին. Յիսուս Նազորեցոյ համար՝ որ մին մարգարէ մարդ էլաւ[16], զօրաւոր գործքերով եւ խօսքերով Աստուծոյ եւ ամէն ժողովրդի առաջին[17]։

20 Ինչպէս մեր քահանայապետներն եւ իշխաններն մահի դատապարտեցին մահենցին նորան՝ եւ խաչ հանեցին նորան[18]։

21 Մենք յոյս ունէինք թէ նա է՝ որ իսրայէլին պիտի փրկէ[19], բայց էս ամենից վերայ, էս երեք օր է՝ որ էն գործվեցաւ։

22 Իսկ էլ մեր միջիցն մին քանի կանայք զարմացրին մեզ. որ առաւօտանց կանուխ գնացին գերեզմանն[20],

23 Իսկ նորա մարմինն չըգտին, եկին եւ ասացին, թէ հրեշտակների տեսիլք էլ տեսին՝ որ նորա համար ասում էին՝ թէ կենդանի է։

24 Իսկ մեզանից մին քանիսն գնացին գերեզմանն՝ եւ հենց էնպէս գտին, ինչպէս որ կանայքն ասացին, բայց նորան չըտեսին[21]։

25 Իսկ նա ասաց նորանց. ով անմիտներ եւ թլուլասիրտներ հաւատալոյ էն ամէն բաներին՝ որ մարգարէներն խօսացին։

26 Չէ՞ որ պէտք էր՝ որ հենց էնպէս Քրիստոսն չարչարվի, եւ իրան փառքն մտնէ[22]։

27 Իսկ սկսեց[23] Մովսիսին[24] եւ ամէն մարգարէներին[25], մեկնում էր նորանց ամէն՝ ինչ որ գրված էր իրան համար։

28 Իրերոյ մօտեցան էն գիւղին, որ գնում էին՝ նա էնպէս ցոյց էր տալիս՝ թէ մին աւելի հեռու տեղ է գնալու[26]։

29 Իսկ բռնադատեցին նորան եւ ասացին[27]. մեզ մնա՛ մնա՛, ինչու որ

---

[12] Մարկ. ժդ. 12։ [13] Մարկ. ժը. 20։ Ա՚ղաչ. 36։ [14] Յովհ. ի. 14։ խա. 4։ [15] Յովհ. ժէ. 25։ [16] Մարկ. խա. 11։ Ղուկ. է. 16։ Յովհ. գ. 2։ դ. 19։ զ. 14։ Գործ. բ. 22։ [17] Գործ. է. 23։ [18] Ղուկ. խգ. 1։ Գործ. ժգ. 27, 28։ [19] Ղուկ. ա. 68։ բ. 38։ Գործ. ա. 6։ [20] Մարկ. իը. 8։ Մարկ. ժգ. 10։ Ա՚ղաչ. 9, 10։ Յովհ. ի. 18։ [21] Ա՚ղաչ. 12։ [22] Ա՚ղաչ. 46։ Գործ. ժէ. 3։ ա Պետր. ա. 11։ [23] Ա՚ղաչ. 45։ [24] Ծննդ. 3. 15։ իը. 18։ իզ. 4։ խթ. 10։ [25] Յով. խա. 9։ ը Օշէ. ժը. 15։ [26] Ա՚ղաչ. ժգ. 9, 10։ իը. ՚ղաչ. 11։ Ե՚ղայ. է. 14։ լթ. 6։ խ. 10. 11։ ծ. 6։ ծգ. Երէմ. խգ. 5։ լգ. 14. 15։ Եփես. լգ. 23։ լէ. 25։ Գաղ. լթ. 24։ Մէթէ. է. 20։ Մա՚ղ. գ. 1։ դ. 2։ Յովհ. ա. 45։ [27] Ծննդ. լը. 26։ խբ. 7։ Մարկ. ղ. 48։ [28] Ծննդ. ժթ. 3։ Գործ. ժգ. 15։

իրիկուն է եւ օրս անց է կացել՝ եւ մնաւ որ նորանց հետ ենտեղ մնայ:

30 Ու էլաւ երբոր նա նորանց հետ սեղան նստեց, հացըն առաւ՝ օրհնեց, կոտրեց եւ տուաւ նորանց[28]:

31 Ու նորանց աչքերն բացվան՝ եւ նորան ճանաչեցին. եւ նա անեւ-թեւոյթ էլաւ նորանցից:

32 Ու իրար ասացին. էՙ որ հենց մեր սրտերս հալվում էին մեզանում՝ երբոր ճանապարհումն մեզ հետ խոսում էր, եւ ինչպես գլքերըն բաց էր անում մեզ համար:

33 Ու շուտով վերկացան՝ յետ գարձան երուսաղէմ, եւ էն տաս-նումընին ժողովված գտին, եւ նո-րանց էլ՝ որ նորանց հետ էին:

34 Ու ասացին. Թէ իրաւի որ՝ Տէրն յարութիւն առաւ՝ եւ երե-ւեցաւ սիմոնին[29]:

35 Ու նորանք պատմում էին՝ որ ճանապարհումն էլաւ, եւ թէ ինչպես իրան ճանաչացրուց իրանց հաց կոտրելոյ ժամանակն:

36 Դեռ քանի որ էս խոսումին, հենց ինքն Յիսուս կանգնեց նորանց միջումն եւ նորանց ասաց. խաղա-ղութիւն (լինի) ձեզ հետ՝ ես եմ. մի վախենաք[30]:

37 Ու ահով լցված վախեցան, եւ համարումին՝ թէ հոգի են տես-նում[31]:

38 Ու նորանց ասաց. ինչո՞ւ էք շփոթված՝ ինչո՞ւ համար խորհուրդ-ներ են վերկենում ձեր սրտերումն:

39 Տեսէք իմ ձեռներըս եւ ոտ-ներըս՝ որ հենց ես էն եմ. բռնեցէք ինձ եւ տեսէք. ինչու որ՝ հոգին մարմին եւ ոսկերք չունի, ինչպէս որ ինձ տեսնումէք որ ունիմ[32]:

40 Ու էս որ ասաց, ձեռներըն եւ ոտներըն ցոյց տուաւ նորանց:

41 Ու դեռ քանի որ չէին հաւա-տում ուրախութենից եւ զարմա-ցած էին[33], նորանց ասաց. իսկի կե-րակուր ունի՞ք էստեղ[34]:

42 Ու նորանք խորոված ձկան կը-տոր տուին նորան՝ եւ մեղրի հացի կտոր:

43 Ու առաւ կերաւ նորանց ա-ռաջին, եւ աւելցածներըն տուաւ նորանց[35]:

44 Ու ասաց նորանց. էս էն բա-ներն են՝ որ ձեզ հետ խոսեցի՝ քանի որ ձեզ հետ էի, թէ ամենն պէտք է կատարվի՝ որ մովսէսի օրէնքումն եւ մարգարէներումն եւ սաղմոսներումն ինձ համար գրված է[36]:

45 Ուն ժամանակն նորանց մտքնե-րըն բացաւաւ՝ որ գլքերըն իմանան[37]:

46 Ու նորանց ասաց. Թէ էսպէս պէտք էր[38], որ Քրիստոսն չարչար-վի՝ եւ երեք օրումն մեռելներին մի-ջեցն յարութիւն առնէ.

47 Ու նորա անունովն ապաշխա-րութիւն եւ մեղաց թողութիւն քա-րոզվի[39] ամեն ազգերի միջումն՝ ե-րուսաղէմից սկսած[40]:

48 Ու դուք էք էս բաներիս հա-մար վկայ[41]:

[28] Մատթ. ժդ. 19: [29] ա Կորնթ. ժե. 5: [30] Մարկ. ժզ. 14: Ցածե. ի. 19: ա Կորնթ. ժե. 5: [31] Մարկ. ղ. 49: [32] Ցածե. ի. 20, 27: [33] Ծննդ. խե. 26: [34] Ցածե. իա. 5: [35] Գործ. ժ. 41: [36] Մատթ. ժզ. 21: ժե. 22: ի. 18: Մարկ. ը. 31: Ղուկ. թ. 22: ժը. 31: վէր. 6: [37] Գործ. ժզ. 14: [38] վէր. 26: Սամ. իը: Եսայ. ծ. 6: Նգ. 2, Խոսէ: Գործ. ժէ. 3: [39] Դան. թ. 24: Գործ. ժդ. 38, 46: ա Ցածե. բ. 12: [40] Ծննդ. ժը. 3: Սամ. իե. 27: Եսայ. խթ. 6, 22: Երեմ. լ. 34: Ովսե. բ. 23: Միխէ. դ. 3: Մատ. ա. 11: [41] Ցածե. ժե. 27: Գործ. ա. 8, 22: բ. 32: գ. 15:

49 Եւ ահա ես իմ հօրս աւետիքըն կուղարկեմ ձեզ վերայ. եւ դուք նստեցէք երուսաղէմ քաղաքումն՝ մինչեւ վերեւիցն զօրութիւն հագնիք[42]։

50 Եւ նորանց հանեց մինչեւ բեթանիա. եւ իրան ձեռներըն բարձրացրուց եւ նորանց օրհնեց[43]։

51 Եւ էլաւ՝ դեռ որ նա օրհնում էր նորանց՝ հեռացաւ նորանցից, եւ դէպի երկինքն վերանում էր[44]։

52 Եւ նորանք երկրպագութիւն արին նորան, եւ մեծ ուրախութեամբ նով յետ գարձան երուսաղէմ[45]։

53 Եւ ամէն ժամանակ տաճարումն էին[46]. գովում էին եւ օրհնում էին Աստուծոյն։

[42] Եսայ. խգ. 3։ Ցովէլ. բ. 28։ Ցովհ. ժգ. 16, 26։ ԺԹ. 26։ ԺԶ. 7։ Գործ. ա. 4։ բ. 1, 4—յե։ [43] Գործ. ա. 12։ [44] Դ Թագ. բ. 11։ Մարկ. ԺԶ. 19։ Ցովհ. ի. 17։ Գործ. ա. 9։ Եփես. գ. 8։ [45] Մարկ. իբ. 9, 17։ [46] Գործ. բ. 46։ ե. 40։

# ԱՒԵՏԱՐԱՆ

## ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քրիստոսի Աստուածաբնութիւնն մարդկութիւնն եւ պաշտօնն։ 15 Յովհաննէսի վկայութիւնն։ 39 Անդրեասի եւ Պետրոսի կանչվիլն։

1 Սկիզբն էր
բանն[1]. եւ բանն էր
առ Աստուած[2]. եւ բանն Աստուած էր[3]։
2 Նա սկզբանէն առ Աստուած էր[4]։
3 Ամեն ինչ նորանով եղաւ, եւ առանց նորան իսկի ոչ ինչ չեղաւ,
ինչ որ եղաւ[5]։
4 Նորանով կեանքն էր[6], եւ կեանքն մարդկանց լոյսն էր[7]։
5 Լոյսն խաւարումն լոյս էր տալիս, եւ խաւարն չի մացաւ նորան[8]։
6 Մի մարդ եղաւ Աստուածանից ուղարկված, որ նորա անունն
Յովհաննէս (էր)[9]։
7 Նա վկայութեան համար եկաւ, որ լուսոյ համար վկայէ. որ
ամենքն նորանով հաւատան[10]։
8 Նա չէր լոյսն, բայց որ լուսոյն
համար վկայէ։
9 (Նն) էր ճշմարիտ լոյսն, որ
ամեն մարդոյն լուսաւորէ անում՝
որ էս աշխարհքս գալու էր[11]։
10 Աշխարհքումն էր, եւ աշխարհքն նորանով եղաւ[12], եւ աշխարհքն չըճանաչեց նորան։
11 Իրանների մէջ եկաւ, եւ իրաններն չընդունեցին նորան[13]։
12 Այլ նորանք՝ որ նորան ընդունեցին՝ իշխանութիւն տուաւ նորանց՝ որ Աստուծոյ որդիք լինին[14],
նորանց որ նորա անունին հաւատում են։
13 Որ նորանք ոչ արիւնից եւ ոչ

[1] Առակ. ը. 22, 23, Իմաստ. Կող. ա. 17։ ա Ցովհ. ա. 1։ Ցայտ. ա. 2։ Ժթ. 13։ [2] Առակ. ը. 30։ Ցովհ. ժէ. 5։ ա Ցովհ. ա. 2։ [3] Փիլէպ. բ. 6։ ա Ցովհ. է. 7։ [4] Ծննդ. ա. 1։ [5] Սաղմ. լդ. 6։ Վայր. 10։ Կող. ա. 16։ Եբէռ. գ. 9։ Եբր. ա. 2։ Ցայտ. գ. 11։ [6] Ցովհ. ե. 26։ ա Ցովհ. է. 11։ [7] Ցովհ. ը. 12։ Թ. 5։ Ժը. 35, 46։ [8] Ցովհ. գ. 19։ [9] Մաղ. գ. 1։ Մարկ. գ. 1։ Ղուկ. գ. 3։ Վայր. 33։ [10] Գործ. ժԹ. 4։ [11] Վէր. 4։ Եսայ. խԹ. 6։ ա Ցովհ. բ. 8։ [12] Վէր. 3։ Եբր. ա. 2։ ժա. 3։ [13] Ղուկ. ժԹ. 14։ Գործ. գ. 26։ Ժգ. 46։ [14] Եսայ. ծգ. 5, Հռովմ. ը. 15։ Գաղ. գ. 26։ բ Պետր. ա. 4։ ա Ցովհ. գ. 1։

մարմնոյ կամքից, եւ ոչ մարդոյ կամքից, բայց Աստուածանից ծնեան[15]։

14 Եւ բանն[16] մարմին[17] եղեւ՝ եւ մեր միջումն բնակեցաւ[18]. եւ նորա փառքըն տեսինք ինչպէս Հօրից եղած միածնին որդոյ փառքըն[19] շնորհքով՝ եւ ճշմարտութեամբ լիքն[20]։

15 Յովհաննէսն վկայում նորա համար[21]. աղաղակեց եւ ասաց, սա է՝ որ սորա համար ասում էի, թէ նա որ ինձանից ետեւս գալու էր[22], ինձանից առաջ էլաւ. ինչու որ՝ նա ինձանից առաջ էր[23]։

16 Ինչու որ՝ նորա լեռնէն ենք մենք ամենքս շընորհք առինք՝ շնորհքի տեղ[24]։

17 Պատճառն որ՝ օրէնքն Մովսէսի ձեռովն տրվաւ[25]. շնորհքն[26] եւ ճշմարտութիւնն Յիսուսի Քրիստոսի ձեռովն էլաւ[27]։

18 Աստուած ով չի տեսաւ երբէք, բայց միածին որդին՝ որ Հօր ծոցումն է նա պատմեց[29]։

19 Եւ էս է յովհաննէսի վկայութիւնն, երբոր հրեաներն (ջահոտ նէրն) երուսաղէմից քահանաներ եւ ղեւտացիներ ուղարկեցին նորա մօտ՝ որ հարցնեն նորան՝ թէ դու ով ես[30]։

20 Եւ (նա) խոստովանեցաւ՝ եւ չի ուրացաւ. եւ խոստովանեցաւ՝ թէ ես չեմ Քրիստոսն[31]։

21 Եւ նորան հարցրին. ապա դու ով ես. միթէ եղիան ես[32]. եւ ասաց. չեմ. ապա մարգարէն ես դու[33]. պատասխան տուաւ՝ թէ չէ։

22 Ապա ասա մեզ, դու ով ես, որ պատասխան տանենք նորանց, որ մեզ ուղարկեցին, ի՞նչ ես ասում քեզ համար։

23 Ասաց. ես եմ՝ ձայն կանչողի անապատումն (չէօլո՜ն)՝ թէ շտա՜կեցէք Տէրի ճանապարհն[34], ինչպէս որ Եսայի մարգարէն ասաց[35]։

24 Եւ նորանք՝ որ ուղարկվեցան, փարիսեցիներից էին։

25 Կորան հարցրին եւ ասացին. ապա ինչո՞ւ ես մկրտում, եթէ դու ոչ Քրիստոսն ես, եւ ոչ եղիան, եւ ոչ էլ մարգարէն։

26 Յովհաննէս պատասխան տուաւ նորանց եւ ասաց. ես ջրով եմ մկրտում ձեզ[36]. ձեր միջումն կայ (մինն)՝ որ դուք նորան չէք գիտում[37]։

27 Որ նա ինձանից ետեւս գալու է, որ ինձանից առաջ եղաւ[38]. որ ես արժանի չեմ՝ որ նորա կօշիկների կապանքըն արձակեմ։

---

[15] Ցովհ. գ·5։ Ցակ. ա·18։ ա Գործ. ա·23։ [16] Մարկ. ա·16, 20։ Գաղ. ա·31, 35։ բ·7։ ա Տիմ. գ·16։ [17] Եբր. բ·11, 14, 16, 17։ [18] Հռոմ. ա·3 Եսայի։ [19] Եսայ. խ·5։ Մարկ. ժէ·2։ Ցովհ. բ·11։ ժա·40։ բ Գործ. ա·17։ [20] Կող. ա·19։ բ·3, 9։ [21] Վայր·32։ Ցովհ. գ·32։ ե·33։ [22] Մարկ. գ·11։ Մարկ. ա·7։ Գաղ. գ·16։ Վայր·27, 30։ Ցովհ. գ·31։ [23] Ցովհ. ը·58։ Կող. ա·17։ [24] Ցովհ. գ·34։ Եփես. ա·6–8։ Կող. ա·19։ բ·9, 10։ [25] Եփ. բ·1, Եսայի։ բ Օրէն. գ·44։ ե·1։ լգ·4։ [26] Հռոմ. գ·24։ ե·21։ ղ·14։ [27] Ցովհ. ը·32։ ժգ·6։ [28] Եփ. լգ·20։ բ Օրէն. գ·12։ Մարկ. ժա·27։ Գաղ. ժ·22։ Ցովհ. գ·16։ ա Տիմ. ա·17։ ղ·16։ ա Ցովհ. գ·12, 20։ [29] Վէր·14։ Ցովհ. գ·16, 18։ ա Ցովհ. գ·9։ [30] Ցովհ. ե·33։ [31] Գաղ. գ·15։ Ցովհ. գ·28։ Գործ. ժգ·25։ [32] Մաղ. գ·5։ Մարկ. ժէ·10։ [33] բ Օրէն. ժը·15, 18։ [34] Մարկ. գ·3։ Մարկ. ա·3։ Գաղ. գ·4։ Ցովհ. գ·28։ [35] Եսայ. խ·3։ [36] Մարկ. գ·11։ [37] Մաղ. գ·1։ [38] Վէր·15։ Վայր·30։ Գործ. ժԹ·4։

28 Այս բեթաբարայումն էլաւ, յորդանանի էն կողմն, որ տեղ որ Յոհաննէսն էր՝ եւ մկրտումէր[39]։

29 Յետեւի օրումն (Յոհաննէս) տեսաւ Յիսուսին՝ որ իրան մօտն էր գալիս, եւ ասաց. ահա Աստուծոյ գառն[40] որ աշխարհի մեղքըն վեր է առնում[41]։

30 Այ է՝ որ սորա համար ես ասումէի՝ թէ ինձանից ետեւ մարդ կըգայ՝ որ ինձանից առաջ էլաւ. ինչու որ նա հենց ինձանից առաջ էր[42]։

31 Եւ ես նորան չէի գիտում. բայց որ Յայտնի լինի իսրայէլին՝ նրա համար ես եկի որ ջրով մկրտեմ[43]։

32 Յոհաննէսն վկայեց եւ ասաց. թէ տեսնումի Հոգին՝ որ աղաւնոյ պէս վեր էր գալիս երկնքիցն՝ եւ նորա վերայ մնումէր[44]։

33 Եւ ես չէի գիտում նորան, բայց նա որ ինձ ուղարկեց՝ որ ջրով մկրտեմ, նա ասաց ինձ, թէ ում վերայ տեսնես որ Հոգին վեր գայ եւ նորա վերայ մնայ՝ նա է որ սուրբ Հոգովն կըմկրտէ[45]։

34 Եւ ես տեսի եւ վկայեցի՝ թէ սա է Աստուծոյ որդին։

35 Յետեւի օրումն Յոհաննէսն կանգնած էր՝ եւ երկու Հոգի էլ նորա աշակերտներից։

36 Եւ մտիկ տուաւ Յիսուսին՝ որ մօն էր գալիս, եւ ասաց, ահա (էս է) Աստուծոյ գառն[46]։

37 Եւ երկու աշակերտներն լսեցին նորանից՝ որ խօսումէր, եւ Յիսուսի ետեւէն գնացին։

38 Երբոր Յիսուս դարձաւ եւ նորանց տեսաւ՝ որ գնումէին իրան ետեւէն՝ նորանց ասաց. ի՞նչ էք ուզում. նորանք ասացին նորան. ռաբբի՝ (որ թարգմանված ասվումէ՝ վարդապետ.) քո բնակարանն որտեղ է։

39 Նորանց ասաց. եկէք եւ տեսէք. եկին եւ տեսին՝ որ տեղ որ նորա բնակարանն էր. եւ էն օրն նորա մօտ մնացին, ինչու որ՝ տասն ժամի (սահաթէ) մօտ էր։

40 Ընդրեան վեմ սիմոնի եղբայրն էն երկուսից մինն էր՝ որ Յոհաննէսից լսեցին եւ նորա ետեւէն գնացին[47]։

41 Այս առաջ իրան սիմոն եղբօրըն գտաւ եւ նորան ասաց. մեսիային գտինք՝ որ կըթարգմանվի Քրիստոս։

42 Այս նորան բերաւ Յիսուսի մօտ. Յիսուս նորան մտիկ տուաւ եւ ասաց. դու սիմոնն ես Յովնանի որդին. դու պիտի կոչվիս կեփաս, որ կըթարգմանվի պետրոս[48]։

43 Յետեւի օրումն կամեցաւ, որ դուրս գնայ գալիլեա. փիլիպպոսին գտաւ, եւ Յիսուս նորան ասաց. իմ ետեւէս եկ։

44 Եւ փիլիպպոս բեթսայիդայիցն էր, անդրէասի եւ պետրոսի քաղաքիցն[49]։

45 Փիլիպպոսն գտաւ նաթանայէլ

---

[39] Դատ. է. 24։ Ցուհ. ժ. 40։ [40] Եփ. ժբ. 3։ Եսայ. ծգ. 7։ Վայր. 36։ Գործ. ը. 32։ ա Պետր. ա. 19։ Ցայտ. է. 6, Խայնէ։ [41] Եսայ. ծգ. 11։ ա Կորնթ. ժե. 3։ Գաղ. ա. 4։ Եբր. ա. 3։ բ. 17։ Թագ. 28։ ա Պետր. բ. 24։ գ. 18։ ա Ցուհ. բ. 2։ գ. 5։ դ. 10։ Ցայտ. ա. 5։ [42] Վէր. 15, 27։ [43] Մատ. գ. 1։ Մարկ. գ. 6։ Ղուկ. ա. 17, 76, 77։ գ. 3, 4։ [44] Մարկ. գ. 16։ Մարկ. ա. 10։ Ղուկ. գ. 22։ Ցուհ. է. 32։ [45] Մարկ. գ. 11։ Գործ. ա. 5։ բ. 4։ ժ. 44։ ժթ. 6։ [46] Վէր. 29։ [47] Մարկ. դ. 18։ [48] Մարկ. ժզ. 18։ [49] Ցուհ. ժբ. 21։

լին՝ եւ նորան ասաց[50]. նա որ նորա համար մօսէսն օրէնքումն գրեց[51] եւ մարգարէներն[52], գտինք Յիսուսին Յօսէփի որդոյն նազարէթիին[53]:

46 Նաթանայէլն նորան ասաց. միթէ կարելի՞ է որ նազարէթիցն բարի բան լինի՝ փիլիպպոս նորան ասաց. ե՛կ եւ տե՛ս[54]:

47 Զորս որ Յիսուս տեսաւ նաթանայէլին՝ որ իրան մօտ էր գալիս՝ ասաց նորա համար. ահա՛ ուղղիդ իսրայէլացի[55], որ նորանում խաբէութիւն չկայ:

48 Նաթանայէլն ասաց նորան. ի՞նչ տեղից ես ճանաչում ինձ. Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. դեռ որ փիլիպպոսն քեզ չէր կանչել՝ որ թզուկ ծառի տակն էիր՝ քեզ տեսի:

49 Նաթանայէլն պատասխան տուաւ նորան եւ ասաց. ռաբբի՝ դու ես Աստուծոյ որդին[56], դու ես իսրայէլի թագաւորն[57]:

50 Յիսուս պատասխան տուաւ նորան եւ ասաց. որովհետեւ ասացի քեզ՝ թէ թզուկ ծառի տակն տեսի քեզ՝ հաւատում ես. սրանից էլ աւելի մեծ բաներ կըտեսնես:

51 Եւ նորանց ասաց. ճշմարիտըն ճշմարիտն ասում եմ ձեզ. թէ (սրանից ետեւ) երկինքն բացված կըտեսնէք, եւ Աստուծոյ հրեշտակներըն՝ որ վեր կելլին եւ վեր կըգան որդոյ մարդոյ վերայ[58]:

## ԳԼ. Ր

1 Քրիստոս ջուրն գինի կանէ, 12 Կափառնայում եւ Երուսաղէմ կըգնայ, 14 եւ ծախողներն եւ գնողներն տաճարիցն կըշանէ: 19 Իրան մահն եւ յարութիւն առնելն առաջուց կասէ: 23 Շատ մարդիք իրան հրաշքներին համար կըհաւատան նորան, բայց ինքն իրան անձն չէր հաւատալ նորանց:

1 Եւ երրորդ օրումն հալսանիք էր գալիլեացոց կանայումն, եւ Յիսուսի մայրն հնտեղ էր[1]:

2 Յիսուս էլ եւ նորա աշակերտներն կանչվեցան էն հարսանիքն:

3 Եւ գինին որ պակասեցաւ, մայրն ասաց Յիսուսին. գինի չունին:

4 Եւ Յիսուս նորան ասաց. ով կին[2] դու՝ քեզ ի՞նչ բան կայ ինձ հետ[3]. իմ ժամանակս դեռ չի հասել[4]:

5 Նորա մայրն սպասաւորներին ասաց. ինչ որ ասէ ձեզ՝ արէք:

6 Էն տեղ վեց քարէ կարաս կային հրէաների լուացմունքին համար՝ որ նորանցից ամէն մէկն երկու կամ երեք մար (չափ) էին տանում[5]:

7 Յիսուս նորանց ասաց. էդ կարասները ջրով լցէք. նորանց լցրին մինչեւ բերանն:

8 Եւ նորանց ասաց. հիմի առէք եւ բերէք (սեղանի) վերակացուին համար. եւ նորանք բերին:

9 Եւ երբոր վերակացուն էն ջրի համին առաւ[6] որ գինի էր եղած՝ եւ չէր գիտում թէ ինչ տեղից է. բայց

---

[50] Ցուկ. իա. 2: [51] Օննդ. գ. 15: Ղեւ. 10: բ Օրին. ժբ. 18: Դեւ. իդ. 27: [52] Եսայ. գ. 2: է. 14: Թագ. 6: Նգ. 2: Մխ. ե. 2: Զաք. զ. 12: Թագ. 9: Դեւ. իդ. 27: [53] Մարկ. բ. 23: Դեւ. բ. 4: [54] Ցուկ. է. 41, 42, 52: [55] Սաղմ. լբ. 2: Հգ. 1: Ցուկ. ը. 39: Հովհ. բ. 28, 29: Թագ. 6: [56] Մարկ. ժգ. 33: [57] Մարկ. իա. 5: իէ. 11, 43: Ցուկ. ժը. 37: ժԹ. 3: [58] Ննդ. իը. 12: Մարկ. գ. 11: Դեւ. բ. 9, 13: իը. 43: իգ. 4: Գործ. ա. 10: [1] Ցհաւ. ժԹ. 28: [2] Ցուկ. ժԹ. 26: [3] Բ Թագ. ժզ. 10: ժԹ. 22: [4] Ցուկ. է. 6: [5] Մարկ. է. 3: [6] Ցուկ. գ. 46:

սպասաւորներն գիտումէին՝ որ ջուրը լցրել էին՝ վերակացուն փեսային հետ խօսեց.

10 Եւ ասաց. ամեն մարդ անպշ գինին առաջ է տալիս. եւ երբոր կը հարբենան՝ էն ժամանակն վատը. (բայց) դու էդ անպշ գինիդ մինչեւ հիմիկ պահեցիր:

11 Նշանների սկիզբը Յիսուս էս արաւ գալիլեացոյ Կանայումն՝ եւ իր փառքն յայտնեց[7]. եւ նորա աշակերտներն հաւատացին նորան:

12 Ապրանից ետեւ Յիսուս վէր եկաւ Կափառնայում՝ ինքն եւ իրան մայրն եւ իրան եղբայրներն[8]. եւ շատ օր չմնացին էն տեղ:

13 Եւ Հրէից զատիկն մօտիկ էր, եւ Յիսուս վեր եկաւ Երուսաղէմ[9]:

14 Եւ տաճարումն գտաւ նորանց՝ որ եզներ եւ ոչխարներ եւ աղաւնիներ էին ծախում՝, եւ փող փոխողներին էլ որ նստած էին[10]:

15 Եւ չուանէ խարազան (խփոց) շինեց, եւ ամէնին տաճարիցն հանեց, ոչխարներին եւ եզներն՝ եւ (փող) փոխողներիի պղինձներըն ցրվեց եւ տախտակներըն կործանեց:

16 Եւ նորանք որ աղաւնի էին ծախում՝, նորանց ասաց. դրան վերատէք էտեղից՝ եւ իմ Տօրս տունըն մի անէք առուտուրի տուն[11].

17 Էն ժամանակն նորա աշակերտներն յիշեցին թէ գրված է՝ քո տան նախանձն ուտումէ ինձ[12]:

18 Հրէաներն պատասխան տուին եւ ասացին նորան. դու ի՞նչ նշան ես ցոյց տալիս մեզ՝ որ անում ես էդ[13]:

19 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. քանդեցէք էդ տաճարըդ, եւ երեք օրումն կըկանգնեմ դորան[14]:

20 Հրէաներն ասացին նորան. էս տաճարս քառասուն եւ վեց տարումն շինվեցաւ՝ եւ դու երեք օրումն կըկանգնացնե՞ս դորան:

21 Բայց նա իրան մարմնոյ տաճարին համար էր ասում[15]:

22 Պատ երբոր նա մեռելների միջնեցաւ յարութիւն առաւ՝ նորա աշակերտներն յիշեցին թէ էս էն է՝ որ նա ասաց. եւ հաւատացին գրքին՝ եւ էն խօսքին որ Յիսուսն ասաց[16]:

23 Եւ երբոր երուսաղէմումն էր զատկի տօնումն՝ շատ մարդիք հաւատացին նորա անունին. տեսնում էին նշանները՝ որ նա անում էր:

24 Բայց ինքն Յիսուս իրան անձին չէր հաւատում՝ նորանց. պատճառն որ՝ ինքն ամէն բան գիտումէր:

25 Եւ պէտք չէր որ մինն վկայէր մարդոյ համար. ինչու որ՝ հենց ինքն գիտումէր թէ ինչ կայ մարդոյ ներսումն[17]:

---

[7] ՅՀՎ. ա. 14: [8] Մտթ. ժբ. 46: [9] Եզր. ժբ. 14: [10] Օրէն. ժզ. 1, 16: Վայր. 23: ՅՀՎ. ե. 1: զ. 4: ժա. 55: [11] Մտթ. իա. 12: Մրկ. ժա. 15: Ղ–ս. ժԹ. 45: [12] Ղ–ս. բ. 49: [13] Մաղ. կԹ. 9: [14] Մտթ. ժբ. 38: ՅՀՎ. զ. 30: [15] Մտթ. իզ. 61: իէ. 40: Մրկ. ժզ. 58: ժէ. 29: [16] ա Կորնթ. գ. 16: զ. 19: բ Կորնթ. գ. 16: Կող. բ. 9: Եբր. ը. 2: [17] Ղ–ս. իգ. 8: [17] ա Թագ. ժզ. 7: ա Մնաց. իը. 9: Մտթ. Թ. 4: Մրկ. բ. 8: ՅՀՎ. զ. 64: ժզ. 30: Գործ. ա. 24: ՅԱյտ. բ. 23:

## ԳԼ · Գ

1 Քրիստոս կը սովորցնէ Նիկոդիմոսի նոր ծնելոյց հարկաւոր լինելը, 14 Իրան մահուան վերայ պէտք է որ հաւատանք, 16 Աստուած մեծ սէր ունի աշխարհքին վերայ, 18 Ընդ հաւատացողներուն դատապարտութիւն պիտի տրվի։ 23 Յովհաննէսի մկրտելը եւ Քրիստոսի համար ասած վկայութիւնն եւ վարդապետութիւնն։

1 Եւ փարիսեցիներուցն մին մարդ կար՝ անունն Նիկոդիմոս՝ հրէաներուն իշխան։

2 Սա գիշերուայն նորա մօտ եկաւ եւ նորան ասաց. ռաբբի՝ գիտենք որ Աստուածմէ վարդապետ ես եկել[1], քանզի որ՝ ոչ ով չի կարող էդ նշաններդ անել՝ որ դու անում ես[2], թէ որ Աստուած նորա հետ չըլինի[3]։

3 Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. ճշմարիտն ճշմարիտն ասում եմ քեզ. թէ որ մինն նոր չըծնվի՝ կարող չէ Աստուծոյ արքայութիւնն տեսնել[4]։

4 Նիկոդիմոս նորան ասաց. մարդ ինչպէս կարող է ծնվիլ՝ որ ծեր է. միթէ կարելի՞ է՝ որ մինել երկրորդ անգամ իրան մոր փորն մտնէ եւ ծնվի։

5 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. ճշմարիտն ճշմարիտն ասում եմ քեզ. թէ որ մինն ջրից եւ հոգուց չըծնվի[5], նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնն մտնել։

6 Պատճառն որ՝ մարմնուց ծընվածն՝ մարմին է. եւ հոգուց ծնվածն՝ հոգի է։

7 Դու մի զարմանար՝ որ ասացի քեզ, թէ պէտք է ձեզ՝ որ նոր ծնվիք։

8 Ինչու որ՝ քամին որ տեղ որ ուզում՝ փչում, եւ նորա ձայնըն լսում ես. բայց չես գիտում՝ թէ ի՞նչ տեղից է գալիս կամ ո՞ր տեղ է գընում. հենց էլ էապէս (է) ամեն հոգուց ծնվածն[6]։

9 Նիկոդիմոս պատասխան տուաւ եւ նորան ասաց. էդ ի՞նչպէս կարող է լինիլ[7]։

10 Յիսուս պատասխան տուաւ եւ նորան ասաց. դու ես իսրայէլի վարդապետ՝ եւ էդ բանըդ չի՞ս գիտում։

11 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ քեզ՝ թէ ինչ որ գիտենք՝ էն ենք խոսում, եւ ինչ որ տեսինք՝ էն ենք վկայում[8]. եւ մեր վկայութիւնըն չէք ընդունում[9]։

12 Էսպէս թէ որ երկրաւոր բաներըն ասացի ձեզ եւ չէք հաւատում. ապա ի՞նչպէս կըհաւատաք թէ որ երկնաւոր բաներըն ասեմ։

13 Եւ ոչ ով վեր չէ ելել երկինքն, եթէ ոչ որդին մարդոյ՝ որ երկնքիցն վեր եկաւ՝ նա որ երկնքումն է[10]։

14 Եւ ինչպէս որ մովսէսն օձը բարձրացրուց անապատումն[11] հենց էնպէս էլ պէտք է որ որդին մարդոյ բարձրանայ[12].

[1] Ց-ՀՀ · է · 50։ ԺՀ · 39։ [2] Ց-ՀՀ · Թ · 16, 33։ Գ-ՐՔ · Բ · 22։ [3] Գ-ՐՔ · Ժ · 38։ [4] Ց-ՀՀ · ա · 13։ Գ-ՂՂ · Ղ · 15։ Տէր · գ · 5։ Ց-Հ · ա · 18։ ա Պէտ · ա · 23։ ա Ց-ՀՀ · գ · 2, 5։ Մ-ՐՀ · Ժ · 16։ Գ-ՐՔ · Բ · 38։ [6] Ժ-ՂՂ · Ժա · 5։ ա Կ-ՌՆ · Բ · 11։ [7] Ց-ՀՀ · Զ · 53, 61։ [8] Մ-ՐՔ · Ժա · 27։ Ց-ՀՀ · ա · 18։ Է · 16։ Ը · 28։ Ժբ · 49։ Ժգ · 24։ [9] Վ-ՅՐ · 32։ [10] Ա-Ա · Հ · 4։ Ց-ՀՀ · Զ · 33, 38, 51, 63։ Ժ-Ղ · 28։ Գ-ՐՔ · Բ · 34։ ա Կ-ՌՆ · Ժհ · 47։ Եբ-Ս · գ · 9, 10։ [11] Թ-Ս · Իա · 9։ [12] Ց-ՀՀ · Ը · 28։ Ժբ · 32։

15 Որ ամէն ով որ հաւատայ նո-
ր ան՝ չի կորչի, այլ յաւիտենական
կեանքըն ընդունի[13]։
16 Պատճառն որ՝ Աստուած հն-
պէս սիրեց աշխարհքին՝ մինչեւ որ
իրան միածին որդին տուաւ, որ ա-
մէն ով որ հաւատայ նորան՝ չը կորչի,
այլ յաւիտենական կեանքըն ընդու-
նի[14]։
17 Քինչու որ Աստուած իրան որ-
դին չուղարկեց աշխարհքս՝ որ աշ-
խարհքին դատէ՝ բայց որ աշխարհքն
նորանով փրկվի[15]։
18 Ով որ հաւատումէ նորան՝ չի
դատապարտվիլ՝ եւ ով որ չըհա-
ւատում նորան՝ հինց հիմիկ դատա-
պարտված է, քինչու որ՝ չըհաւատաց
Աստուծոյ միածին որդոյ անունին[16]։
19 Այ հինց էս է դատաստանն՝ որ
լոյսն եկաւ աշխարհքս՝ եւ մարդիք
խաւարըն աւելի սիրեցին քան թէ
լոյսըն, քինչու որ նորանց գործքերն
չար էին[17]։
20 Պատճառն որ՝ ամէն ով որ չար
է գործում՝ լոյսն ատում, եւ դէպի
լոյսն չի գալիս, որ նորա գործքերն
չի յանդիմանվին[18]։
21 Բայց նա՝ որ ճշմարտութիւն է
գործում՝ դէպի լոյսն է գալիս, որ
նորա գործքերն յայտնի լինին, թէ
Աստուծով գործվեցան։
22 Արանից ետեւ Յիսուս եկաւ
հրէաստանի երկիրն, եւ նորա աշա-
կերտներն էլ, եւ հնտեղ նորանց
հետ մնն էր գալիս եւ մկրտում էր[19]։
23 Յովհաննէսն էլ յայնհնտումն
էր մկրտում՝ սաղեմայ մօտ[20], քինչու
որ՝ շատ ջուր կար հնտեղ, եւ (մար-
դիք) գալիս էին եւ մկրտվումէին[21]։
24 Պատճառն որ՝ Յովհաննէսն գեռ
բանտի մէջ չէր դրած[22]։
25 Այ Յովհաննէսի աշակերտներն
հրէաներին հետ հակառակեցին սըզ-
բութեան համար։
26 Յովհաննէսի մօտ եկին եւ նո-
րան ասացին, ռաբբի՝ նա որ յորդա-
նանի էն կողմն էր քեզ հետ՝ որ դու
նորա համար վկայեցիր[23], ահա նա
մկրտումէ, եւ ամէնքն նորա մօտ են
գալիս։
27 Յովհաննէսն պատասխան տուաւ
եւ ասաց, մարդ իսկի կարօղ չէ ինքն
իրանից մին բան առնել, թէ որ վե-
րնուիչն երկնքիցն տըվված չըլինի
նորան[24]։
28 Դուք ձեզանից վկայումէք ինձ
համար՝ որ ասացի ձեզ՝ թէ ես Քրը-
իստոսն չեմ[25] բայց թէ նորա ա-
ռաջին ուղարկված եմ[26]։
29 Ով որ հարսըն ունի՝ նա է փե-
սան[27], բայց փեսայի բարեկամն՝ որ
կայ եւ լսումէ նորան, փեսայի ձայ-
նին համար ուրախութենով ուրա-
խանումէ[28], ուրեմն էս իմ ուրա-
խութիւնս լըված է։
30 Նորան պէտք է որ աճի (մե-
ծանայ), եւ ես ցածանամ։
31 Որ վերնուիչն է գալիս[29],
ամէնից վերեւ է[30]։ Նա որ էս երկ-
րիցս է՝ երկրիցն է եւ երկրիցն է
խօսում[31]։
32 Այ որ երկնքիցն է գալիս[32]

---

[13] Ա Յովհ. 3։ Ցովհ. գ. 47։ [14] Հռոմ. ե. 8։ ա Ցովհ. գ. 9։ [15] Գործ. թ. 56։ Ցովհ. ե. 45։ ը. 15։ Ժր. 47։ ա Ցովհ. գ. 14։ [16] Ցովհ. ե. 24։ ը. 40, 47։ ի. 31։ [17] Ցովհ. ա. 4, 9, 10, 11։ ը. 12։ [18] Ցօբ. իդ. 13, 17։ Եփես. ե. 13։ [19] Ցովհ. գ. 2։ [20] ա Թագ. թ. 4։ [21] Մարկ. գ. 5, 6։ [22] Մարկ. ժգ. 3։ [23] Ցովհ. ա. 7, 15, 27, 34։ [24] ա Կորնթ. գ. 7։ Եբր. ե. 4։ Ցակ. ա. 17։ [25] Ցովհ. ա. 20, 27։ [26] Մատթ. գ. 1։ Մարկ. ա. 2։ Գործ. ա. 17։ [27] Մարկ. իբ. 2։ բ Կորնթ. ժա. 2։ Եփես. ե. 25, 27։ Յայտն. իա. 9։ [28] Երէմ. ե, 1։ [29] Վէր. 13։ Ցովհ. ը. 23։ [30] Մարկ. իբ. 18։ Ցովհ. ա. 15, 27։ Հռոմ. թ. 5։ [31] ա Կորնթ. ժե. 47։ [32] Ցովհ. գ. 33։ ա Կորնթ. ժե. 47։ Եփես. ա. 21։ Փիլիպ. բ. 9։

ինչ որ տեսաք եւ ինչ որ լսեց՝ վըկայուածէ, եւ նորա վկայութիւնըն խաբկի մինն չի ընդունուիր[33]։

33 Ով որ նորա վկայութիւնըն ընդունուիր՝ կընքով (Տնօքով) հաստատեց թէ Աստուած ճշմարիտ է[34]։

34 Պատճառն որ՝ նա որ Աստուած ուղարկեց նորան, Աստուծոյ բանըն է խօսուիր[35]. ինչու որ՝ Աստուած հոգին չափով չի տալիս[36]։

35 Հայրն սիրուիր որդոյն՝ եւ ամէն բան նորա ձեռքն տուաւ[37]։

36 Ով որ հաւատայ որդոյն՝ յաւիտենական կեանքըն ընդունուիր. եւ ով որ չի հնազանդվիր որդոյն՝ կեանքըն չի տեսնիր, բայց Աստուծոյ բարկութիւնն է մնում նորա վրայ[38]։

## ԳԼ· Գ

4 Քրիստոս Սամարացի մին կնկան հետ կըխօսի եւ իրան անձըն կըյայտնէ նորան։ 27 Իրան աշակերտներին զարմանալն որ էն կնկան հետ խօսուիր։ 31 Կա խնդ կըտայ նորանց թէ Աստուծոյ վառաց համար որչափ փափաք ունի։ 39 Շատ Սամարացիք նորան կըհաւատան։ 43 Ինչն գալիլէա կըգնայ եւ կափառնայուի մէջ թագաւորացեղ մին մարդոյ հիւանդ որդին կըբժշկէ։

1 Երբոր Յիսուս գիտաց թէ՝ փարիսեցիներն լսեցին՝ թէ Յիսուս շատ աշակերտներ է անում եւ յոհանէսից էլ աւելի է մկրտում[1]։

2 Ինչու որ՝ չէ թէ Յիսուսն ինքն էր մկրտում՝ բայց նորա աշակերտներն։

3 Հրէաստանի (Ջհուդպտապանի) երկիրըն թողից եւ մինէլ եկաւ գալիլեա։

4 Եւ պէտք էր նորան՝ որ սամարիայի միջովն անցկենայ։

5 Գայ նա սամարացոց մին քաղաք եկաւ՝ որ նորա անունն սիւքար էր. էն գիւղին մօտ՝ որ յակոբ տըւաւ իրան որդի յոսէփին[2]։

6 Եւ յակոբի մին աղբիւր կար էնտեղ. եւ Յիսուս ճանապարհիցն վաստակել էր՝ եւ էն աղբիւրին վրայ նստել էր. եւ վեց ժամին (սահաթին) գէմ էր։

7 Սամարիայից մին կին եկաւ՝ որ ջուր հանի. Յիսուս նորան ասաց՝ ինձ տուր որ խմեմ։

8 Պատճառն որ՝ նորա աշակերտներն քաղաքն էին գնացել՝ որ կերակուր գնեն։

9 Սամարացի կինն ասաց նորան. գուս որ հրէայ ես՝ ի՞նչպէս ես ուզում ջուր խմել ինձանից՝ մին սամարացի կնկանից. ինչու որ՝ հրէաներն իսկի չեն խառնվըւում սամարացոց հետ[3]։

10 Յիսուս պատասխան տուաւ նորան եւ ասաց՝ թէ որ գուս Աստուծոյ պարգեւըն գիտնայիր, եւ թէ ով է նա՝ որ քեզ ասում՝ թէ տուր ինձ խմել, ապա գուս նորանից կը-

[33] ա Յով. ե. 10։ [34] Հռով. գ. 4։ ա Յով. ե. 10։ [35] Յով. ե. 16։ [36] Յով. ա. 16։ [37] Մտթ. ժա. 27։ Ղկ. ժ. 22։ Յով. ե. 20, 22։ ժգ. 3։ ԺԷ. 2։ Եբր. բ. 8։ [38] Ա՛ր. բ. 4։ Յով. ա. 12։ գ. 47։ Վր. 15, 16։ Հռով. ա. 17։ ա Յով. ե. 10։

[1] Յով. գ. 22, 26։ [2] Ծննդ. լգ. 19։ Ես. 22։ Յես. բգ. 32։ [3] գ Թագ. ԺԷ. 24։ Ղկ. թ. 52, 53։ Գործ. ժ. 28։

խնդրեիր՝ եւ նա կենդանի ջուր կըտար քեզ[4]։

11 Կինն ասաց նորան. Տէր՝ դու իսկի ջուր քաշելոյ ման էլ չունիս՝ եւ հորս խոր է. ապա ի՞նչ տեղից պիտի ունենաս կենդանի ջուրըն։

12 Միթէ դու մեր աւելի՞ մեծ մարդ ես քան մեր Հայր Յակոբն՝ որ էս հորըս տուաւ մեզ. եւ ինքն ու բանից խմեց, եւ նորա որդիքն եւ նորա անասուններն։

13 Յիսուս պատասխան տուաւ նորան եւ ասաց. ամէն ով որ էդ ջրից խմումէ՝ միսկ կըծարաւի. բայց ով որ էն ջրից խմէ՝ որ ես կըտամ նորան՝ նա յաւիտեան չի ծարաւիլ[5]։

14 Խայց էն ջուրն՝ որ ես կըտամ նորան՝ ջրի աղբիւր կըլինի նորա նում, որ յաւիտենական կենաց մէջ կըբղխի[6]։

15 Կինն նորան ասաց. Տէր՝ տուր ինձ էն ջուրըն, որ չըծարաւիմ, եւ չըգամ էստեղ ջուր հանելոյ[7]։

16 Յիսուս նորան ասաց. գնա կանչիր քո մարդոյն եւ էկ էստեղ։

17 Կինն պատասխան տուաւ նորան եւ ասաց. ես մարդ չունիմ. Յիսուս նորան ասաց. լաւ ասացիր՝ թէ ես մարդ չունիմ։

18 Պատճառն որ դու հինգ մարդ ես փոխել՝ եւ նա որ հիմիկ ունիս, քո մարդը չէ. էդ շիտակ ասացիր։

19 Կինն նորան ասաց. Տէր՝ երեւումէ ինձ՝ թէ դու մարգարէ ես[8]։

20 Մեր հարքն էս սարումն երկրպագումէին արին[9]. եւ դուք ասումէք՝ թէ երուսաղէմն մէնակ է էնտեղն՝ որ պէտք է երկրպագութիւն անել[10]։

21 Յիսուս նորան ասաց. ով կին, հաւատա ինձ՝ որ ժամանակ կըգայ, որ ոչ էս սարումն երկրպագութիւն կանէն հօրն, եւ ոչ էլ երուսաղէմումն[11]։

22 Դուք երկրպագութիւն էք անում նորան՝ որ դուք չէք գիտում[12], մենք երկրպագութիւն ենք անում նորան՝ որ գիտումենք. ինչու որ՝ փրկութիւնն հրէաներից է[13]։

23 Խայց ժամանակ կըգայ՝ եւ հենց հիմիկ է, որ ճշմարիտ երկրպագողներն հոգով[14] եւ ճշմարտութեամբ երկրպագութիւն կանեն հօրն[15], պատճառն որ հենց հայրն էլ էնպէս իրան երկրպագողներ է ուզում։

24 Աստուած հոգի է, եւ նորան երկրպագողներն էլ պէտք է՝ որ հոգով եւ ճշմարտութեամբ երկրպագութիւն անեն (նորան)[16]։

25 Կինն ասաց նորան. գիտումենք՝ որ մեսիան պիտի գայ՝ որ Քրիստոս է կոչվում. երբոր կըգայ՝ նա ամէն բան կըպատմի մեզ[17]։

26 Յիսուս նորան ասաց. (նա) ես եմ՝ որ քեզ հետ խոսումեմ[18]։

27 Էս խոսքիս վերայ նորա աշակերտներն եկին, եւ զարմանումէին, որ էն կնկան հետ խոսումէր. բայց նորանցից իսկի մինն չասաց՝ թէ ի՞նչ ես ուզում կամ ի՞նչ ես խո-

---

[4] Եսա. ԺԲ. 3։ Խդ. 3։ Երէմ. Բ. 13։ Զաք. Ժգ. 1։ Ժգ. 8։ [5] Ցուզ. գ. 35, 58։ [6] Ցուզ. է. 38։ [7] Ցուզ. գ. 34։ Հռովմ. գ. 23։ ա Ցուզ. է. 20։ [8] Գործ. է. 16։ Խդ. 19։ Ցուզ. գ. 14։ է. 40։ [9] Գաղ. Թ. 7։ [10] Բ Օրին. ԺԲ. 5, 11։ գ Թագ. Թ. 3։ բ Պետ. է. 12։ [11] Պտր. ա. 11։ ա Տիմ. Բ. 8։ [12] գ Թագ. ԺԸ. 29։ [13] Եսա. Բ. 3։ Գործ. Խդ. 47։ Հռովմ. Թ. 4, 5։ [14] Փիլիպ. գ. 3։ [15] Ցուզ. ա. 17։ [16] բ Կորնթ. գ. 17։ [17] Վայր. 29, 39։ [18] Ցուզ. Թ. 37։ Պտրտ. իգ. 63, 64։ Պարս. Ժգ. 61, 62։

սում դորա Հետ։

28 Ասին իրան կուժըն Թողեց՝ եւ գնաց քաղաքն, եւ մարդկանց ասաց։

29 Նկէք տեսէք մին մարդ՝ որ ինձ ասաց էն ամէնըն՝ ինչ որ գործել եմ։ միթէ նա՞ է Քրիստոսն[19]։

30 Դուրս էլան քաղաքիցն՝ եւ նորա մօտ էին գալիս։

31 Ու դեռ որ նորանք չէին եկած՝ աշակերտներն աղաչում էին նորան եւ ասում՝ ռաբբի՝ Հաց կէր։

32 Ա՛յս նորանց ասաց՝ ես կերա կուր ունիմ ուտելոյ, որ դուք չէք գիտում նորան։

33 Աշակերտներն իրար ասում էին՝ միթէ մին մարդ գորան բան բերաւ ուտելոյ։

34 Յիսուս նորանց ասաց՝ իմ կերակուրս էն է՝ որ նորա կամքըն առնեմ, որ ուղարկեց ինձ, եւ նորա գործըն կատարեմ[20]։

35 Միթէ դուք չէք ասում՝ Թէ չորս ամիս էլ կայ՝ եւ հունձքն կըգայ։ ահա ես ասում եմ ձեզ՝ բարձրացրէք ձեր աչքերըն՝ եւ տեսէք արտերըն՝ որ սպիտակացել են՝ եւ հընձին հասել[21]։

36 Ու նա որ հնձում՝ վարձք է առնում, եւ յաւիտենական կենաց մէջ պտուղ է ժողովում, որ նա որ սերմանէ՝ եւ նա որ հնձում՝ իրար հետ ուրախանան[22]։

37 Այսով ճշմարիտ է էն խօսքն՝ Թէ ուրիշ է՝ որ սերմանէ, եւ ուրիշ է՝ որ հնձում։

38 Ես ուղարկեցի ձեզ հնձել էն՝ որ դուք չըսերմեցիք։ ուրիշներն աշխատեցին, եւ դուք նորանց աշխատանքի մէջն մտնէք։

39 Ու սամարացոց էն քաղաքիցն շատ մարդիք հաւատացին նորան էն կնկան խօսքին համար՝ որ վկայում էր՝ Թէ ասաց ինձ ամէնըն՝ ինչ որ գործել էի[23]։

40 Ուստի երբոր սամարացիներն նորա մօտ եկին, նորան աղաչեցին որ իրանց հետ մնայ։ եւ երկու օր մնաց հետեղ։

41 Ու էլ շատ մարդիք հաւատացին նորան՝ նորա խօսքին համար։

42 Ու էն կնկան ասում էին՝ Թէ սրանից ետեւ ոչ Թէ քո խոսքերիդ համար ենք հաւատում. ինչու որ՝ հենց մենք ինքներս լսեցինք դորանից, եւ գիտում ենք ճշմարտապէս՝ որ դա է աշխարհքի փրկիչն[24]։

43 Ու երկու օրից ետեւ հետեղից դուրս եկաւ եւ գնաց դալիլեա։

44 Վասնզի որ՝ հենց Քրիստոս ինքն վկայեց՝ Թէ մարգարէ իրան գաւառումն պատիւ չունի[25]։

45 Ասյց երբոր նա գալիլեա եկաւ, գալիլեացիներն ընդունեցին նորան, ինչու որ՝ տեսել էին էն ամէն նշաններըն[26], որ ծնի ժամանակումն արաւ երուսաղէմի մէջն, պատճառն որ՝ նորանք էլ եկել էին էն ծնին[27]։

46 Ինել գալիլեացոց կանան եկաւ՝ հետեղ որ ջուրըն գինի արաւ[28], եւ հետեղ մին Թագաւորացեղ մարդ կար, որ նորա որդին կատիառնայումի մէջն հիւանդ էր։

47 Ա՛յս երբոր լսեց, Թէ Յիսուս հրեաստանիցն եկել է գալիլեա, նորա մօտ եկաւ եւ աղաչումէր՝ որ վեր գայ եւ իրան որդին բժշկէ. ինչու որ՝ մեռնելոյ մօտ էր։

48 Յիսուս նորան ասաց, Թէ որ նշաններ եւ հրաշքներ չըտեսնէք՝

---

[19] վԱր. 25։ [20] Ցոբ. իդ. 12։ Ցովհ. գ. 38։ ԺԵ. 4։ ԺԹ. 30։ [21] Մտթ. Թ. 37։ Ղուկ. ժ. 2։ [22] Դան. ժը. 3։ [23] վԱր. 29։ [24] Ցովհ. ԺԵ. 8։ ա Ցովհ. դ. 14։ [25] Մտթ. ԺԳ. 57։ Մրկ. գ. 4։ Ղուկ. դ. 24։ [26] Ցովհ. բ. 23։ գ. 2։ [27] բ Օրէն. ԺԸ. 16։ [28] Ցովհ. բ. 1, 11։

չէք հաւատար[29]։

49 Յովհաննէս պատասխանեաց նորան ասելով. Տէր՝ վէր եկ դուռ քանի որ չի մեռնիլ իմ տղան։

50 Յիսուս նորան ասաց. գնա՛ քո որդիդ կենդանի է. եւ մարդն հաւատաց էն խօսքին՝ որ Յիսուս նորան ասաց՝ եւ գնաց։

51 Իջ դուռ որ վէր էր գալիս՝ նորա ծառաներն նորա առաջն ելին աւետիս տուին եւ ասացին, թէ քո տղան կենդանի է։

52 Ուրանց հարցնումէր էն ժամին (սահլնէն) համար՝ որ նորանում ողջացաւ. եւ նորան ասացին. երեկ եօթն ժամումն տենտն թողեց նորան։

53 Ուրա հայրն իմացաւ՝ թէ հենց էն ժամումն (է)՝ որ Յիսուս նորան ասաց. թէ քո որդիդ կենդանի է. եւ հաւատաց ինքն եւ նորա բոլոր տունն։

54 Իս մինէլ երկրորդ նշան արաւ Յիսուս՝ երբոր հրէաստանիցն եկաւ գալիլեա։

## ԳԼ · Ե

1 Յիսուս երեսուն եւ ութ տարուան հիւանդ մարդն շաբաթ օրումն կըբժշկէ։ 10 Հրէաներն Յիսուսին կըհալածեն։ 17 Քրիստոս իրան համար կըվկայէ եւ նորանց կըսաստէ, եւ իրան Հօրըն, 32 Յօհաննէսին, 36 Իրան գործերին, 39 Եւ Սուրբ Գրքերին վկայութիւններովն իրան ալ լինելն ցոյց կըտայ։

1 Սրանից հետէ տօն էր հրէաների՝. եւ Յիսուս վերկաւ երուսաղէմ՝։

2 Իջ երուսաղէմի մէջն պրոպատիկէ աւազանումն, որ եբրայեցերէն բեթհզդա էր կոչվում՝ հինգ սրահ կար[2]։

3 Որ նորանցում խիստ շատ հիւանդներ կային վէր ընկած՝ կուրեր, կաղեր, չորացածներ, որ ջրերի շարժվելոյն էին սպասում՝։

4 Իջ Տէրի հրեշտակն ժամանակով վէր էր գալիս էն աւազանն՝ եւ ջրերըն շարժումէր. եւ ով որ առաջ վէր էր գալիս էն շարժած ջրերի մէջն՝ բժշկվումէր՝ որ իսկի հիւանդութեան նշան չէր մնում՝։

5 Իջ էնտեղ մին մարդ կար, որ երեսուն եւ ութ տարի էր իրան հիւանդութեանումն։

6 Իջրբոր Յիսուս նորան տեսաւ՝ որ վէր ընկած էր, եւ գիտաց՝ թէ շատ ժամանակ է մնացել, նորան ասաց. կամենո՞ւմես, որ ողջ լինիս։

7 Հիւանդն պատասխան տուաւ նորան. Տէր՝ իսկի մին մարդ չունիմ՝ որ երբոր ջրերն շարժվին՝ ինձ աւազանի մէջն քցէ. եւ մինչեւ որ ես շարժվումեմ՝, մին ուրիշ ինձանից առաջ (էնտեղ) վէր է գալիս։

8 Յիսուս նորան ասաց. վեր կաց, քո մահիճդ (ախօշէնէտ) ա՛ռ եւ գնա՛[3]։

9 Իջ մարդն ողջացաւ եւ վերկացաւ՝ իրան մահիճըն առաւ եւ մնէկը գալիս, եւ էն օրն շաբաթ էր[4]։

10 Հրէաներն ասացին բժշկվածին. շաբաթ է, եւ արժան չէ քեզ՝ որ քո մահիճդ (ախօշէնէտ) վեր առնես[5]։

[29] ա Կոր. ա. 22։ [1] Դէսպ. խդ. 3։ բ Օրին. ժզ. 1։ Ճով. բ. 13։ [2] Նեհ. գ. 1։ ժբ. 39։ [3] Մատ. թ. 6։ Մարկ. բ. 11։ Ղուկ. է. 24։ [4] Ճով. թ. 14։ [5] Եր. ժ. 10։ Նեհ. ժգ. 19։ Երէմ. ժե. 21, Եսայ. Մատ. ժբ. 2։ Մարկ. բ. 24։ գ. 4։ Ղուկ. զ. 2։ ժգ. 14։

11 Ա՛կա պատասխան տուաւ նո-
րանց՝ եւ ասաց. Նա՝ որ ինձ բժշկեց՝
նա ասաց ինձ՝ Թէ քո մահիճդ առ
եւ գնա:
12 Հարցրին նորան եւ ասացին.
Ո՞վ է էն մարդն՝ որ քեզ ասաց՝ Թէ
քո մահիճդ առ եւ ման ևկ:
13 Իւ բժշկվածն չէր գիտում Թէ
ո՞վ է. ինչու որ՝ Յիսուս ամբոխի
(խուճի) պատճառովն էնտեղիցն
քաշվեցաւ:
14 Ետքից ետու Յիսուս նորան
գտաւ տաճարումն՝ եւ նորան ասաց.
Ահա ողջացար՝ մինէլ չէ՛ մեղանչես՝
որ էլ աւելի չար բան չըլինի քեզ[6]:
15 Մարդն գնաց եւ հրէաներին
պատմեց՝ Թէ Յիսուն էր որ ինձ
բժշկեց:
16 Իւ նրահամար հրէաներն Յի-
սուսին հալածումէին՝ որ շաբաթի օ-
րումն էն (բանըն) էր անում:
17 Իւ Յիսուս պատասխան տուաւ
նորանց. Թէ իմ Հայրս մինչեւ հիմիկ
գործումէ՝ եւ ես էլ գործումեմ[7]:
18 Նրահամար հրէաներն էլ ա-
ւելի հետեւումէին՝ որ սպանեն նո-
րան[8]. որ ոչ Թէ մինակ շաբաթի օրե-
րըն էր քանդում՝ բայց Աստուծոյն
էլ իրան Հայր էր կոչում, եւ իրան ան-
ձըն Աստուծոյն հաւասար էր անում[9]:
19 Յիսուս պատասխան տուաւ եւ
ասաց նորանց. Ճշմարիտն ճշմարիտ
ասումեմ ձեզ. Թէ որդին մարդոյ
իրանից կարող չէ մին բան անել,
Թէ որ չըտեսնէ Հօրըն որ անում[10].
ինչու որ՝ ինչոր նա անում, հենց
որդին էլ էն բանըն է նորա նման
անում:
20 Պատճառն որ՝ Հայրն սիրումէ
որդոյն[11], եւ ցոյց է տալիս նորան էն
ամէն բանըն, որ ինքն անում, եւ
սորանցից էլ աւելի մեծ մեծ գործ-
քեր ցոյց է տալիս նորան, որ դուք
նորա համար զարմանումէք:
21 Պատճառն որ՝ ինչպէս որ Հայրն
մեռելներըն յարուցանումէ եւ կեն-
դանի անում, հենց էնպէս էլ որ-
դին՝ ում որ կամենում՝ կենդանի է
անում[12]:
22 Իւ չէ Թէ Հայրն մինըն դա-
տումէ, բայց ամէն դատաստանըն
տուաւ իրան որդոյն[13]:
23 Որ ամէնքն պատուեն որդոյն,
ինչպէս որ Հօրըն պատուումեն. ով
որ որդոյն չի պատուում՝ Հօրն էլ չի
պատուում, որ ուղարկեց նորան[14]:
24 Ա՛շմարիտըն ճշմարիտն ասու-
մեմ ձեզ. Թէ նա որ իմ խօսքիս ա-
կանջ է դնում եւ հաւատումէ նո-
րան՝ որ ինձ ուղարկեց[15], յաւիտե-
նական կեանքըն կընդունի եւ դա-
տաստան չի՛ մտնիլ, բայց մահիցն
փոխվեցաւ դէպի կեանքն[16]:
25 Ա՛շմարիտըն ճշմարիտն ասու-
մեմ ձեզ. Թէ ժամանակ է գալիս՝
եւ հենց հիմիկ է, երբոր մեռելներն
Աստուծոյ որդոյ ձայնըն կըլսեն[17].
եւ նորանք, որ կըլսեն՝ կապրին:
26 Պատճառն որ՝ ինչպէս որ Հայ-
րըն իրան անձնուրն կեանք ունի,
հենց էնպէս էլ որդոյն տուաւ՝ որ ի-
րան անձնուրն կեանք ունենայ:

[6] Մատթ. ժբ. 45: Ցովհ. ը. 11: [7] Ցովհ. թ. 4: ժգ. 10: [8] Ցովհ. է. 9: [9] Ցովհ. ժ. 30, 33: Փիլիպ. բ. 6: [10] Ա՛ստ. 30: Ցովհ. ը. 28: թ. 4: ժբ. 49: ժգ. 10: [11] Մատթ. գ. 17: Ցովհ. գ. 35: ե Պետր. ա, 17: [12] Գ՚ոյն. է. 14: ը. 54: Ցովհ. ժա. 25, 43: [13] Մատթ. ժա. 27: իը. 18: Ա՛ստ. 27: Ցովհ. գ. 35: ժէ. 2: Գործ. ժէ. 31: ա Պետր. գ. 5: [14] ա Ցովհ. բ. 23: [15] Ցովհ. գ. 16, 18: զ. 40, 47: ը. 51: ի. 31: [16] ա Ցովհ. գ. 14: [17] Ա՛ստ. 28: Եփես. բ, 1, 5: ե. 14: Կող. բ. 13:

27 Եւ նորան իշխանութիւն տա-
ւաւ[18], որ դատաստան անէ. ինչու
որ՝ որդի մարդոյ է[19].

28 Ասրա վերայ ինչո՞ւ էք զարմա-
նում. պատճառն որ՝ ժամանակ կը-
գայ, որ ամենքն՝ որ գերեզմաննե-
րումն են, նորա ձայնըն կը լսեն.

29 Եւ դուրս կըգան նորանք[20], որ
բարի են գործել՝ դէպի կենաց յա-
րութիւնն, եւ նորանք՝ որ չար են
արել՝ դէպի դատաստանի յարու-
թիւնն[21]։

30 Ես ինձանից չեմ կարող իսկի
մին բան անել[22], բայց ինչպէս որ
լսումեմ՝ էնպէս եմ դատում, եւ իմ
դատաստանս արդար է. պատճառն
որ՝ իմ կամքըս չեմ խնդրում, այլ
նորա կամքըն՝ որ ինձ ուղարկեց[23]։

31 Թէ որ ես ինձ համար վկայու-
մեմ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ չէ[24]։

32 Ուրիշ է՝ որ ինձ համար վկա-
յումէ. եւ դուք գիտումք՝ թէ ճըշ-
մարիտ է էն վկայութիւնն՝ որ ինձ
համար վկայեց[25]։

33 Դուք ուղարկեցիք Յովհաննէսի
մօտ՝ եւ վկայութիւն տուաւ ճշմար-
տութեանն[26]։

34 Բայց ես ոչ թէ մարդկանցից
եմ առնում վկայութիւն. բայց էս
ասումեմ՝ որ դուք ապրիք։

35 Նա ճրագ էր՝ որ վառվում եր
եւ լոյս էր տալիս[27]. եւ դուք կամե-
ցաք մին քիչ ժամանակ ուրախանալ
նորա լուսովն[28]։

36 Բայց ես Յովհաննէսից էլ ա-
ւելի մեծ վկայութիւն ունեմ[29]. էն
գործքերըն՝ որ Հայրն ինձ տուաւ,
որ կատարեմ նորանց[30]. հենց էն
գործքերն՝ որ գործումեմ, ինձ Հա-
մար վկայումեն, թէ Հայրն ուղարկեց
ինձ։

37 Եւ Հայրն որ ինձ ուղարկեց՝
նա ինձ համար վկայեց. դուք իսկի
մին ժամանակ ոչ նորա ձայնըն լսե-
ցիք[31], եւ ոչ նորա կերպարանքն տե-
սիք[32]։

38 Եւ ոչ էլ նորա խօսքըն ձեղա-
նում քնակված ունիք. պատճառն
որ՝ էն որ նա ուղարկեց՝ դուք չէք
հաւատում նորան։

39 Քննեցէք գրքերըն. որ դուք
կարծումէք թէ նորանցով ունիք
յաւիտենական կեանքըն[33], եւ հենց
նորանք են, որ ինձ համար վկայու-
մեն՝ որ նորանցով կարծումէք թէ
կեանքըն ունիք[34]։

40 Եւ դուք չէք կամենում ինձ
մօտ գալ՝ որ կեանքըն ունենաք[35]։

41 Ես մարդկանցից փառք չեմ
առնում[36]։

42 Բայց ճանաչումեմ ձեզ՝ որ
Աստուծոյ սէրըն չունիք ձեր անձ-
ներումն։

43 Ես իմ Հօրս անունովն եկի՝ եւ
ինձ չէք ընդունում. թէ որ մին ու-
րիշ կըգայ իրան անունովն, նորան
կընդունիք։

44 Ինչպէս կարող էք դուք Հա-

[18] Վեր· 22։ Գործ· ժ. 42։ Ժէ. 31։ [19] Դան. է. 13, 14։ [20] Եսայ. իզ. 19։ ա Կորնթ. ԺԵ. 52։ ա Թես. դ. 15։ [21] Դան. Ժը. 2։ Մատթ. ԼԵ. 32, 33, 46։ [22] Վեր. 19։ [23] Մատթ. իզ. 39։ Ցովհ. դ. 34։ զ. 38։ [24] Ցովհ. ը. 14։ Ցայտ. գ. 14։ [25] Մատթ. գ. 17։ ԺԷ. 5։ Ցովհ. ը. 18։ ա Ցովհ. Ե. 6, 7, 9։ [26] Ցովհ. ա. 15, 19, 27, 32։ [27] Ը Պետր. ա. 19։ [28] Մատթ. Ժգ. 20։ Ղուկ. զ. 20։ [29] ա Ցովհ. Ե. 9։ [30] Ցովհ. գ. 2։ Ժ. 25։ ԺԵ. 24։ [31] Մատթ. գ. 17։ ԺԷ. 5։ Ցովհ. զ. 27։ ը. 18։ [32] Բ Օրէն. դ. 12։ Ցովհ. ա. 18։ ա Տիմ. ա. 17։ ա Ցովհ. գ. 12։ [33] Եսայ. ը. 20։ լդ. 16։ Ղուկ. Ժզ. 29։ Վեր. 46։ Գործ. ԺԵ. 11։ [34] Բ Օրէն. Ժը. 15, 18։ Ղուկ. իդ. 27։ [35] Ցովհ. ա. 11։ գ. 19։ [36] Վեր. 34։ ա Թես. բ. 6։

ւատաք՝ որ իրարից էք փառք առնում[37], եւ էն փառքըն որ միայն Աստուածանից է՝ չէք խնդրում[38]։

45 Մի կարծէք՝ որ ես հօր ձեզանից չարախօսեմ. կայ միւնն որ ձեզանից չարախօսում է, էն մեսիան՝ որ դուք ձեր յոյսըն նորա վերայ էք դրել[39]։

46 Ինչու որ՝ եթէ դուք մեսիային հաւատայիք, ապա ինձ էլ կըհաւատայիք. պատճառն որ՝ նա ինձ համար գրեց[40]։

47 Իայց եթէ որ նորա գրքերին չէք հաւատում, ի՞նչպես իմ խօսքերիս կըհաւատաք։

## Գլ. Ը.

1 Քրիստոս հինգ հացով եւ երկու ձուկով հինգ հազար մարդկանց կերակրացնել է։ 15 Սըբա համար ժողովուրդն նորա թագաւոր անել են ուզում։ 16 Իայց նա կըփախչի եւ ծովի վերայ գնալով աշակերտներին կըզնայ։ 26 Իրան եաեւէն շատ բազմութիւն կըգնայ չէ թէ որ նորան հաւատան՝ բայց որ էն հացին կերրին, որ նորան Քրիստոս նըրանց տըվեալ. եւ օրահամար նորանց կըսասակ. 32 Ցոյց կըտայ թէ ինքն իրան հաւատացեալներին կենաց հացն է։ 66 Նորա աշակերտներիցն շատերն նորանից յետ կըգնան։ 68 Պետրոսի դաւանութիւնն։ 70 Ցուդայի սատանայ լինելը։

1 Սրանից եաեւ գնաց Յիսուս գալիլեացոց տիբերիա ծովի մէկիկ կողմն[1]։

2 Նէ շատ ժողովուրդ էր գնում նորա եաեւէն. ինչուորը՝ տեսնում էն նշանները՝ որ անում էր հիւանդներին վերայ։

3 Յիսուս վեր էլաւ սարն, եւ աշակերտներին հետ նստում էնտեղ։

4 Նէ հրէաների զատիկ տօնն մօտիկ էր[2]։

5 Յիսուս իրան աչքերըն բարձրացրուց եւ տեսաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ. փիլիպոսին ասաց. ի՞նչ տեղից հաց կըգնենք՝ որ դորանք ուտեն։

6 Նա բանըս փորձելոյ համար էր ասում. բայց ինքն գիտում էր թէ ինչ պիտի անէր։

7 Փիլիպպոսն պատասխան տուաւ նորան. երկու հարիւր դահեկանի հաց բաւական չէ դորանց համար՝ էնպէս որ ամէն մէկն մի քիչ առնէ[4]։

8 Նորա աշակերտներիցն միւնն (այսինքն) անդրէասն վէմ սիմոնի եղբայրն՝ ասաց նորան։

9 Նստող մի տղայ կայ, որ հինգ գարէ հաց ունի եւ երկու ձուկ. բայց էն ի՞նչ է եգէաի մարդկանց համար[5]։

10 Յիսուս ասաց. էք մարդկանցըդ նստացրէք. եւ շատ խոտ կար էնտեղն. եւ մարդիքն նստեցին համարով իրը հինգ հազար։

11 Նէ Յիսուս հացըն առաւ եւ գոհացաւ եւ բաժանեց նըստողներին. էնպէս էլ ձըկներիցն որչափ որ կամեցան։

---

[37] Ցովհ. ժբ. 43, [38] Հռոմ. բ. 29։ [39] Հռոմ. բ. 12։ [40] Ծննդ. գ. 15։ ժբ. 3։ ժը. 18։ իբ. 18։ խթ. 10։ բ Օրէն. ժը. 15, 18։ Ցովհ. ա. 45։ Գործ. իգ. 22։ [1] Մատթ. ժգ. 13։ Մարկ. զ. 32։ Ղուկ. թ. 10, 12։ [2] Ելից. իգ. 5, 7։ բ Օրէն. ժզ. 1։ Ցովհ. բ. 13։ եւ 1։ [3] Մատթ. ժգ. 14։ Մարկ. զ. 34։ Ղուկ. թ. 11։ [4] Թագ. ժա. 21, 22։ [5] գ Թագ. գ. 43։

12 Այլ երբոր կը շատանան, աշա-
կերտներին ասաց. Ժողովեցէք զա-
ւելցած կտորները՝ որ բան չը-
կորչի:

13 Ժողովեցին եւ կտորներէն
տասն երկու զբեզոց լցրին են հինգ
գարի հացիցն՝ որ ուտողներուն աւե-
լացաւ:

14 Ապա մարդիքն երբոր տեսին
էն նշանն որ արաւ, ասումէին՝ Ըն-
տս են ճշմարիտ մարգարէն է՝ որ
պէտք էր աշխարհս գայ[6]:

15 Յիսուս երբոր գիտաց՝ թէ գա-
լու են իրան յափշտակելոյ՝ որ թա-
գաւոր անէն իրան, մինակ դնաց սարն
մէնակ:

16 Այլ երբոր իրիկուն էլաւ՝ նորա
աշակերտներն վէր եկին ծովն եղեն
(ղէպէն)[7]:

17 Այլ մտնէնտան եւ գնացին ծովի
էն կողմն կափառնայում. եւ երբոր
մըթնացաւ՝ Յիսուս դեռ չէր եկել
նորանց մօտն:

18 Այլ ծովն՝ սաստիկ քամոյ փչե-
լուցն շարժվումէր:

19 Այլ երբոր քսան եւ հինգ կամ
երեսուն ասպարէզի (ֆառլէնգ) չափ
առաջ գնացին՝ Յիսուսին տեսին՝ որ
ծովի վերայ գալիս էր՝ եւ նաւին մօ-
տիկ էր՝ եւ շատ ահով լցվան:

20 Այլ նա ասաց նորանց. ես եմ՝
մի վախենաք:

21 Այլ կամենումէին նորան ըն-
դունել նաւի մէջն. եւ նաւն շատով
հասաւ էն երկիրն՝ որ գնումէին:

22 Յետեւի օրումն էն ժողովուր-
դըն՝ որ ծովի էն կողմն էր՝ տեսաւ
որ ուրիշ նաւ չըկար էնտեղ էն մը-
նէին ջոկ՝ որ Յիսուսի աշակերտներն
նորա մէջ մտին. եւ որ Յիսուս աշա-
կերտներուն հետ նաւն չէր մտած,
բայց մէնակ նորա աշակերտներն
գնացին:

23 Այլ տիբերիայիցն ուրիշ նաւ-
ներ եկին էն տեղն մօտ՝ որ հացըն
կերին:

24 Ապա երբոր ժողովուրդն տես-
սաւ՝ թէ ոչ Յիսուսն էնտեղ է եւ
ոչ նորա աշակերտներն, նորանք էն
նաւերըն առին եւ եկին կափառնա-
յում՝ որ Յիսուսին մնդգան:

25 Այլ երբոր նորան ծովի էն կող-
մին գտին՝ նորան ասացին. ռաբբի՝
երբ եկիր էստեղ:

26 Յիսուս պատասխան տուաւ
նորանց եւ ասաց. Ճշմարիտըն ճըշ-
մարիտըն ասումեմ ձեզ. գուք ինձ
մըն էք գալիս՝ չէ թէ նըշանիսըր՝
որ մին նշան տեսիք, բայց որ էն
հացիցն կերիք՝ եւ կշտացաք:

27 Վնացէք ոչ թէ կորչելու կե-
րակուրըն գործեցէք, բայց էն կե-
րակուրըն, որ յաւիտենական կեան-
քին մէջ կրմնայ, որ նորան որդին
մարդոյ կըտայ ձեզ[8]. պատճառն որ՝
Աստուած Հայրն կնքով (ֆօհրով)
հաստատեց նորան[9]:

28 Ապա նորան ասացին. ի՞նչ պիտի
անենք՝ որ Աստուծոյ գործքերըն
գործենք:

29 Յիսուս պատասխան տուաւ եւ
նորանց ասաց. Էս է Աստուծոյ գոր-
ծըն՝ որ հաւատաք նորան՝ որ նա ու-
ղարկեց[10]:

30 Ապա նորան ասացին. ի՞նչ նշան
կանես՝ որ տեսնենք եւ հաւատանք,
ի՞նչ կը գործես[11]:

31 Մեր հարքն անապատի (էօլ)

[6] Ընդհ· Թագ· 10· բ Օրին· ժբ· 15, 18· Աստր· ժա 3· Ցուն· ա· 21· գ· 19, 25· է· 40· [7] Աստր· ժգ· 23· Մարկ· զ· 47· [8] Ղևտ· 54· Ցուն· գ· 14· [9] Աստր· գ· 17· ժէ· 5· Մարկ· ա· 11· Թագ· 7· գ· 22· Թագ· 35· Ցուն· ա· 33· է· 37· ը· 18· գ· 23· բ Օրէտ· ա· 17· [10] ա Ցուն· գ· 23· [11] Աստր· ժբ· 38· ժգ· 1· Մարկ· ը· 11· ա Կորնթ· ա· 22·

մէջն մանանայ կերին[12], ինչպէս որ գրված է թէ՝ երկնքիցն հաց տուաւ նոցանց ուտել[13]։

32 Յիսուս նոցանց ասաց. Ճշմարիտն ճշմարիտըն ասումեմ ձեզ. Թէ մովսէս չտուաւ ձեզ էն հացըն երկնքիցն, բայց իմ Հայրս երկնքիցն ճշմարիտ հացըն կըտայ ձեզ։

33 Պատճառն որ՝ Աստուածանից հացն էն է՝ որ երկնքիցն վեր է գալիս՝ եւ աշխարհքին կեանք է տալիս։

34 Նորան ասացին. Տէր՝ ամէն ժամանակ տուր մեզ էն հացըն[14]։

35 Յիսուս նորանց ասաց. Ես եմ կենաց հացն[15]. ով որ ինձ մօտ է գալիս՝ չի սովիլ, եւ ով որ ինձ հաւատումէ՝ խկի մին ժամանակ չի ծարաւիլ[16]։

36 Բայց ասացի ձեզ՝ Թէ տեսիք ինձ՝ եւ չէք հաւատում[17]։

37 Ամէն՝ ումն որ Հայրն ինձ է տալիս[18], ինձ մօտ կըգայ. եւ նա որ ինձ մօտ է գալիս՝ դուրս չեմ հանիլ նորան[19]։

38 Պատճառն որ՝ ես վեր չեկի երկնքիցն՝ որ իմ կամքըս անեմ[20], բայց նորա կամքն՝ որ ինձ ուղարկեց[21]։

39 Այս է իմ հօրս կամքն, որ ինձ ուղարկեց. որ էն ամէնըն՝ որ Հայրն ինձ տուաւ՝ նորանից չկորցնեմ[22], այլ յետին օրումն յարուցանեմ նորան։

40 Այս է իմ հօրս կամքն. որ ամէն ով՝ որ տեսնէ որդոյն եւ հաւատայ նորան, յաւիտենական կեանքն ընդունի. եւ ես յետին օրումն կըյարուցանեմ նորան[23]։

41 Հրեաներն տրտնջումէին նորանից՝ որ ասաց, Թէ ես եմ երկնքիցն վեր եկած հացն։

42 Եւ ասումէին. Չէ՞ որ սա Յոսէփի որդին է՝ որ մենք գիտումենք նորա հօրն, ապա ինչպէս է ասում՝ Թէ ես երկնքիցն վեր եկի[24]։

43 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Մի տրտնջէք իրար հետ։

44 Ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ Հայրն՝ որ ինձ ուղարկեց՝ չը քաշէ նորան. եւ ես յետին օրումն կըյարուցանեմ նորա[25]։

45 Գրված է մարգարէների մէջն Թէ՝ եւ ամէնքն Աստուածանից սովորած կըլինին[26]. ամէն ով որ հօրիցն է լսում եւ սովորում՝ գալիս է ինձ մօտ[27]։

46 Իբր չէ Թէ մինն տեսել է հօրըն[28], բայց միայն նա՝ որ էնըն Աստուածանից է, նա տեսաւ հօրըն[29]։

47 Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ. Թէ ով որ ինձ հաւատումէ՝ յաւիտենական կեանքըն ընդունում[30]։

48 Այս եմ կենաց հացն[31]։

49 Ձեր հարքն մանանան կերին անապատումն (չօլըմն), եւ մեռան[32]։

50 Այս է (էն) հացն, որ երկնքիցն է վերկելէ՝ որ եթէ մինն նորանից ուտէ՝ չի մեռնիլ[33]։

---

[12] Նէմ. ժգ. 15։ Թէսս. ժա. 7։ Նէհեմ. թ. 15։ ասպտն. ժ. 3։ [13] Պսաղմ. հը. 24, 25։ [14] Յովհ. գ. 15։ [15] վէրս. 48, 59։ [16] Յովհ. գ. 14։ է. 37։ [17] վէրս. 26։ վ.ոյս 65։ [18] վ.ոյս. 45։ [19] Պառն. խգ. 24։ Յովհ. ժ. 28, 29։ ր Ցեմ. բ. 19։ աՑովհ. բ 19։ [20] Պառն. խգ. 39։ ր.ովհ. է. 30։ [21] Յովհ. գ. 34։ [22] Յովհ. ժ. 28։ ժէ. 17։ ժը. 9։ [23] վէրս. 27։ վ.ոյս. 47, 55։ գ. 15, 16։ գ. 14։ [24] Պառն. ժգ. 55։ Պառն. գ. 3։ Գ.ոն. գ. 22։ [25] Երէմ. ա. 4։ վ.ոյս. 66։ [26] Եսայ. ծգ. 13։ Երեմ. լա. 34։ Պէտ. գ. 2։ Եբր. ը. 10։ ժ. 16։ [27] վէրս. 37։ [28] Յովհ. ա. 18։ է. 37։ [29] Պառն. ժա. 27։ Գ.ոն. ժ. 22։ Յովհ. ա. 18։ է. 29. ը. 19։ [30] Յովհ. գ. 16. 18, 36։ վէրս. 40։ [31] վէրս. 33, 35։ [32] վէրս. 31։ [33] վ.ոյս. 51։ 59։

51 Այս եմ կենդանի հացն, որ երկնքիցն է վէր եկել[34]։

52 Ի՞նչ որ միւնոյն էս հացիցս ուտէ՝ յաւիտեան կապրի. եւ (էն) հացն՝ որ ես կըտամ՝ իմ մարմինս է, որ ես նորան աշխարհքի կենաց համար կըտամ[35]։

53 Հրէաներն իրար հետ կռուռ մէին եւ ասում[36]. սա ինչպէս կարող է իրան մարմինըն տալ մեզ ուտելու[37]։

54 Յիսուս նորանց ասաց. ճշմարիտըն ճշմարիտն ասումեմ ձեզ, թէ որ որդդ մարդդ մարմինըն չուտէք եւ նորա արիւնըն չըխմէք, կեանք չունիք ձեր անձին մէջն[38]։

55 Իվ որ իմ մարմինըս ուտում եւ իմ արիւնըս խմում, յաւիտենական կեանքըն ունի, եւ ես յիւրին օրումն կըյարուցանեմ նորան[39]։

56 Ինչու որ՝ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ խմելիք է։

57 Իվ որ իմ մարմինըս ուտում եւ իմ արիւնըս խմում՝ ինձանում կըբնակվի, եւ ես նորանում[40]։

58 Ինչպէս որ կենդանի Հայրն ինձ ուղարկեց, եւ ես կենդանի եմ Հօր համար, էնպէս էլ նա՝ որ ինձ ուտում, կենդանի կըլինի ինձ համար։

59 Այս է էն հացն՝ որ երկնքիցն վէր է եկել, չէ թէ ինչպէս որ ձեր հարքն մանանան կերին եւ մեռան. (բայց) ով որ էս հացըս ուտում՝ յաւիտեան կապրի[41]։

60 Այս բանըս ժողովարանի մէջն ասաց՝ երբոր կափառնայում միջումն սովորցնում էր։

61 Այլ աշակերտներիցն շատերն երբոր (էս) լսեցին՝ ասացին. դժուար է էդ բանդ, ով կարող է լսել դորան[42]։

62 Երբոր Յիսուս գիտաց իրան անձնումն՝ թէ աշակերտներն տըրտընջումէին նորա համար, նորանց ասաց. Էդ է գայթակղեցնում ձեզ։

63 Պա (ի՞նչ) եթէ որդդն մարդդ տեսնէք, որ վեր էլլի (էնտեղն)՝ որ առաջ էր[43]։

64 Հոգին է կենդանացնող, մարմինն մին օգուտ չիտալիս. էն բանն՝ որ ես ձեզ հետ խօսեցի՝ հոգի է եւ կեանք[44]։

65 Այլ ձեզանից մին քանիսն կան, որ չեն հաւատում[45], պատճառն որ՝ Յիսուս սկզբիցն գիտէր մէր, ով են նորանք՝ որ չեն հաւատում, եւ ով է նա՝ որ պիտի մատնէր իրան. եւ ասումէր[46]։

66 Վ'որհամար ասացի ձեզ՝ թէ ոչ ով կարող չէ ինձ մօտ գալ, եթէ իմ Հօրիցն տըվված չըլինի (նորան)[47]։

67 Արանից ետեւ նորա աշակերտներիցն շատերն յետ գնացին, եւ էլ մանն չէին գալիս նորա հետ[48]։

68 Յիսուս տասներկու աշակերտներին ասաց. միթէ դուք էլ կամենումէք գնալ։

69 Սիմոն պետրոսն պատասխան տուաւ նորան. Տէր՝ ո՞ւմ մօտ գնանք. (դու) յաւիտենական կենաց խօսքեր ունես[49]։

70 Այս մենք հաւատացինք եւ ճանաչեցինք՝ թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ որդին[50]։

---

[34] Ցվն. գ. 13։ [35] Եբր. ժ. 5, 10։ [36] Ցվն. է. 43։ Թ. 16։ ժ. 19։ [37] Ցվն. գ. 9։ [38] Մտթ. իզ. 26, 28։ [39] վԲր. 27, 40։ Վ.տր. 64։ Ցվն. դ. 14։ [40] ա Ցվն. գ. 24։ դ. 15, 16։ [41] վԲր. 49, 50, 51։ [42] վ.տր. 67։ Մտթ. ժա. 6։ [43] Ցվն. գ. 13։ Մրկ. ժզ. 19։ Գործ. ա. 9։ Եփես. դ. 8։ [44] բ Կրնթ. գ. 6։ [45] վԲր. 36։ [46] Ցվն. բ. 24, 25։ ժգ. 11։ [47] վԲր. 44, 45։ [48] վԲր. 61։ [49] Գործ. ե. 20։ [50] Մտթ. ժզ. 16։ Մրկ. Ը. 29։ Ղ.ս. Թ. 20։ Ցվն. ա. 49։ ժա. 27։

71 Յիսուս պատասխան տուաւ նո-
րանց. չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ
ընտրեցի[51], եւ ձեզանից միևն սա-
տանայ է[52]:
72 Այս (էս) իսկարիօտացի սիմո-
նեան յուդայի համար էր ասում.
ինչու որ՝ հենց նա պիտի մատնէր նո-
րան. եւ ինքն տասներկուսիցն միևն
էր:

## ԳԼ. Ի

1 Յիսուս իրան ազգականներին փառասիրութիւնն եւ համարձակութիւնն կըսաստէ: 10 Գալիլեայեցն ոտնին կըդնայ: 14 Տաճարի մէջն կըսովորցնէ: 40 Ժողովրդի մէջն իրան համար ելած ուրիշ ուրիշ կարծիքներըն: 45 Փարիսեցոց բարկութիւնն իրանց ապաստաւորներին դէմ որ Յիսուսին չէն բռնել եւ նորանց տանել, եւ Նիկոդիմոսն նո-
րա կողմից խօսելուն համար նորանք կըսաստեն նորան:

1 Այս սրանից ետու Յիսուս մեն
էր գալիս գալիլեայի միջումն. ինչու
որ՝ չէր կամենում հրէաստանումն
(Ջհու-պաեաձոմ) մեռնգալ, պատ-
ճառն որ՝ հրէաներն խնդրումէին
սպանել նորան[1]:
2 Այս հրէաների տաղաւարահա-
րաց տոնն մօտիկ էր[2]:
3 Նորա եղբարներն ասացին նո-
րան. էստեղից դուրս եկ եւ գնա՛
հրէաստան, որ քո աշակերտներն էլ
տեսնեն քո գործքերըդ՝ որ գործու-
մես[3]:
4 Ինչու որ՝ ոչ ով չըկայ՝ որ
թաքուն մին բան անէ, եւ խնդրէ որ
ինքն ճանաչված լինի. թէ որ (դու)
էդ ես գործում, քո անձըդ յայտ-
նիր աշխարհքին:
5 Պատճառն որ՝ հենց (իրան) եղ-
բարներն էլ չէին հաւատացել նո-
րան[4]:
6 Յիսուս նորանց ասաց. իմ ժա-
մանակս դեռ հասած չէ, բայց ձեր
ժամանակն միշտ պատրաստ է[5]:
7 Աշխարհքն կարող չէ ձեզ ա-
տել[6]. բայց ինձատումէ, ինչու որ՝
ես նորա համար վկայումեմ՝ թէ նո-
րա գործքերն չար են[7]:
8 Դուք գնացէ՛ք էն ոտնին, ես
չեմ գնում էն ոտնին. ինչու որ՝ իմ
ժամանակս դեռ լցված չէ[8]:
9 Այս որ ասաց՝ ինքն մնաց էն
տեղ գալիլեայի մէջն:
10 Այրըսոր նորա եղբարներն գնա-
ցին, ապա ինքն էլ գնաց էն ոտնին,
չէ թէ յայտնի, բայց իբր մին ծա-
ծուկ կերպով:
11 Այս հրէաներն խնդրումէին նո-
րան էն ոտնումն եւ ասում՝, թէ նա
որտեղ պիտի լինի[9]:
12 Այս ժողովրդի միջումն տըր-
տընջմունք կար նորա համար[10]. կէսն
ասումէին՝ թէ բարի մարդ է[11]. ու-
րիշներն ասումէին՝ չէ, բայց ժողո-
վըրդին մոլորացնում:
13 Այս ոչ ով համարձակ էր խօ-
սում նորա վերայ, հրէաների վա-
խին համար[12]:

[51] Ղ·ե·Յ· ղ· 13: [52] Յ·Ե· ժգ· 27: [1] Յ·Ե· ե· 16, 18: [2] Ղ·Ե·ա· իգ· 34: [3] Մ·ա·Ք· ժբ· 46: Մ·բ·Ղ· գ· 31: Գ·բ·Հ· ա· 14: [4] Մ·բ·Ղ· գ· 21: [5] Յ·Ե· բ· 4: ը· 20: Վ·յ·Ր· 8, 30: [6] Յ·Ե· ժե· 19: [7] Յ·Ե· գ· 19: [8] Յ·Ե· ը· 20: Վ·Հ·Ր· 6: [9] Յ·Ե· ժա· 56: [10] Յ·Ե· Թ· 16: ժ· 19: [11] Մ·ա·Ք· իա· 46: Ղ·ե·Յ· է· 16: Յ·Ե· ղ· 14: Վ·յ·Ր· 40: [12] Յ·Ե· Թ· 22: ժբ· 42: ժԹ· 38:

14 Երբոր տօնն կէս էլաւ, Յիսուս վեր էլաւ տաճարն՝ եւ սովորցնուէր։

15 Հրէաներն զարմանուէին եւ ասում՝ սա ի՞նչպէս է գիտում գըրքերըն, որ իսկի սովորած չէ[13]։

16 Յիսուս պատասխան տուաւ նոցանց եւ ասաց՝ իմ վարդապետութիւնս իմն չէ, այլ նորանն է՝ որ ինձ ուղարկեց[14]։

17 Թէ որ մինն կամենում նորա կամքըն անել՝ նա կիմանայ իմ վարդապետութիւնեան համար, եթէ Աստուածանից է, կամ եթէ ես իմ անձնէից եմ խօսում[15]։

18 Ով որ իրան անձնէից է խօսում՝ իրան անձին փառքըն է խընդրում՝ բայց նա՝ որ նորա փառքըն է խնդրում՝ որ ուղարկեց նորան՝ նա ճշմարիտ է, եւ անիրաւութիւն չըկայ նորանում[16]։

19 Չէ՞ որ Մովսէսն տուաւ ձեզ օրէնքըն, եւ ձեզանից ոչ ով չի կատարում օրէնքըն[17]։

20 Ինչու՞ էք ուզում ինձ սպանել։ Ժողովուրդն պատասխան տուաւ եւ ասաց[18]՝ դեւ կայ քեզանում։ Ո՞վ է ուզում՝ որ քեզ սպանէ[19]։

21 Յիսուս պատասխան տուաւ նոցանց եւ ասաց։ Մին գործ գործեցի, եւ ամէնքդ զարմացել էք։

22 Ա՛յսհամար Մովսէսն ձեզ տուաւ թլփատութիւնըն, չէ թէ որ Մովսէսիցն էր[20], բայց էն հին հայրանցիցն[21]։ Եւ շաբաթի օրումն մարդ էք թլփատում։

23 Եպա եթէ մարդ շաբաթի օրումն թլփատութիւն է առնում, որ Մովսէսի օրէնքըն չը քանդվի, ինձ վրայ բարկացած էք՝ որ ես ամբողջ մարդ բժշկեցի շաբաթի օրումն[22]։

24 Աչքի երեւութով մի դատէք, բայց ճիշտ դատաստան արէք[23]։

25 Երուսաղէմացիներիցն մին քանիսն ասումէին։ Չէ՞ որ սա էն է՝ որ ուզումէին նորան սպանել։

26 Եւ ահա յայտնի խօսում, եւ բան չեն ասում դորան։ Չը լինի՞ որ իշխաններն էլ իմացան՝ որ սա է Քրիստոսն[24]։

27 Բայց սորան գիտումինք թէ որտեղից է[25]։ Եւ Քրիստոսն երբոր կըգայ իսկի մինն չի գիտենալ թէ որտեղից է։

28 Յիսուս աղաղակեց տաճարումն, սովորցնումէր եւ ասումէր։ Թէ ինձ գիտումէք, եւ թէ ինչ տեղից եմ եկել գիտումէք[26]։ Եւ իմ անձնիցըս չեմ եկել[27], բայց նա ճշմարիտ է՝ որ ինձ ուղարկեց[28]։ որ դուք նորան չէք գիտում[29]։

29 Ես գիտումեմ նորան, ինչու որ հենց նորանից եմ, եւ նա ուղարկեց ինձ[30]։

30 Եւ ուզումէին բռնել նորան[31], եւ նորանց ձեռներիցն դուրս գնաց։ Եւ ոչ ով ձեռք չը ձգեց նորան[32]։ ինչու որ նորա ժամանակն դեռ չէր

[13] Մատ. ժգ. 54։ Մրկ. զ. 2։ Ղուկ. գ. 22։ Գործ. բ. 7։ [14] Ցվհ. գ. 11։ ը. 28։ ժբ. 49։ ժդ. 10, 24։ [15] Ցվհ. ը. 43։ [16] Ցվհ. ե. 41։ ը. 50։ [17] Եսդ. իդ. 3։ ր Օրին. ԺԴ. 4։ Ցվհ. ա. 17։ Գործ. է. 38։ [18] Մատ. ժբ. 14։ Մրկ. գ. 6։ Ցվհ. ե. 16, 18։ ժ. 31, 39։ [19] Ցվհ. ը. 48 52։ ժ. 20։ [20] Ղեւտ. ժբ. 3։ [21] ՚ի Նախ. ԺԵ, 10։ [22] Ցվհ. ե. 8, 9, 16։ [23] ր Օրին. ա. 16, 17։ Ամոս. իդ. 22։ Ցվհ. ը. 15։ Ցվհ. բ. 1։ [24] Աշխ. 48։ [25] Մատ. ժգ. 55։ Մրկ. զ. 3։ Ղուկ. գ. 22։ [26] Ցվհ. ը. 14։ [27] Ցվհ. ե. 43։ ը. 42։ [28] Ցվհ. ե. 32։ ը. 26։ Հովհ. գ. 4։ [29] Ցվհ. ա. 18։ ը. 55։ [30] Մատ. ժա. 27։ Ցվհ. ժ. 15։ [31] Մրկ. ժա. 18։ Ղուկ. ԺԹ. 47։ ի. 19։ Վեր. 20։ ը. 37։ [32] Աշխ. 44։ ը. 20։

հասել։

31 Եւ ժողովրդին շատ մարդիք հաւատացին նորան՝ եւ ասում էին, Քրիստոսն երբոր կըգայ՝ միթէ ա՛լելի նշաններ կանէ, քան էն՝ որ սա անում է[33]։

32 Եւ փարիսեցիներն լսեցին ժողովրդի էն արտունչն՝ որ նորա համար արել էին. եւ քահանայապետներն եւ փարիսեցիներն սպասաւորներ ուղարկեցին՝ որ բռնեն նորան։

33 Յիսուս ասաց. մին քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ՝ եւ գնում եմ նորա մօտ, որ ուղարկեց ինձ[34]։

34 Ինձ մանը կըգաք եւ չէք գտնիլ. եւ որտեղ որ ես գնում եմ, դուք չէք կարող գալ[35]։

35 Հրէաներն իրար ասացին. ա՞պա դա ո՞ր տեղ պիտի գնայ, որ մենք չըգտնենք դորան. միթէ հեթանոսների մէջ ցրված ժողովուրդների մօտն կըգնայ եւ հեթանոսներին կըսովըրցնէ[36]։

36 Ի՞նչ է էն խօսքն՝ որ ասաց. թէ ինձ մանը կըգաք՝ եւ չէք գտնիլ՝ եւ որտեղ որ ես գնում եմ, դուք չէք կարող գալ։

37 Տօնի վերջին մեծ օրումն Յիսուս կանգնած էր՝ աղաղակումէր եւ ասում[37]՝ թէ որ մինն ծարաւ է՝ թող ինձ մօտ գայ, եւ խմէ[38]։

38 Ինչպէս որ գիրքն էլ ասում է[39], նորա փորից կենդանի ջրերի գետեր կըբղխին[40]։

39 Էս բանըս ասում էր Հոգին համար՝ որ պիտի ընդունէին նորանք, որ հաւատում էին նորան[41], ինչու որ դեռ Հոգին չըկար, որովհետեւ Յիսուս դեռ չէր փառաւորված[42]։

40 Ժողովրդից մին քանիսն երբոր էս խօսքըս լսում էին, ասում էին. սա ճշմարիտ մարգարէն է[43]։

41 Ուրիշներն ասում էին. սա Քրիստոսն է[44]. բայց կէսն ասում էին՝ միթէ Քրիստոսն գալիլեացից կըգայ[45]։

42 Չէ՞ որ գրքերն ասում են, թէ Քրիստոսն գաւթի զաւակից[46], եւ բեթղէհէմ գիւղից պիտի գայ՝ որտեղ որ գաւիթն էր[47]։

43 Եւ տարաձայնութիւն էլաւ ժողովրդի միջումն նորա համար[48]։

44 Եւ նորանից մին քանիսն կամեցան բռնել նորան[49]. բայց իսկի մինն ձեռք չըձգեց նորա վերայ։

45 Եւ սպասաւորներն գնան եկին քահանայապետների եւ փարիսեցիների մօտն. եւ սորանք ասացին նորանց. ի՞նչու համար նորան չըբերիք հետներ։

46 Սպասաւորներն պատասխան տուին եւ ասացին. իսկի մին ժամանակ մին մարդ (էնպէս) չըխօսեց՝ ինչպէս որ էն մարդն[50]։

47 Փարիսեցիքն պատասխան տըւին եւ ասացին. միթէ դո՞ւք էլ մոլորվեցաք։

48 Միթէ իշխաններիցն կամ փարիսեցիներից մինն հաւատաց նորան[51].

---

[33] Մատթ. ժբ. 23։ Ցովհ. գ. 2։ ը. 30։ [34] Ցովհ. ժդ. 33։ ժզ. 16։ [35] Ովսէ. է. 6։ Ցովհ. ը. 21։ ժդ. 33։ [36] Եսայ. ժա. 12։ Ցով. ա. 1։ ա Պետր. ա. 1։ [37] Ղեւտ. իդ. 36։ [38] Եսայ. ծէ. 1։ Ցովհ. զ. 35։ Յայտ. իբ. 17։ [39] բ Օրէն. ժը. 15։ [40] Ամով. ժը. 4։ Եսայ. ժբ. 3։ խդ. 3։ Ցովհ. գ. 14։ [41] Եսայ. խդ. 3։ Ցովհ. բ. 28։ Ցովհ. ժզ. 7։ Գործ. բ. 17, 33, 38։ [42] Ցովհ. ժբ. 16։ ժզ. 7։ [43] բ Օրէն. ժը. 15, 18։ Ցովհ. ա. 21։ զ. 14։ [44] Ցովհ. գ. 42։ զ. 70։ [45] Վեր. 52։ Ցովհ. ա. 46։ [46] Ովսէ. ձյբ. 11։ Երեմ. խգ. 5։ Մէխ. է. 2։ Մատթ. բ. 5։ Ղուկ. բ. 4։ [47] աթագ. ժզ. 1, 4։ [48] վեր. 12։ Ցովհ. թ. 16։ ժ. 19։ [49] վեր. 30։ [50] Մատթ. է. 29։ [51] Ցովհ. ժբ. 42։ Գործ. զ. 7։ ա Կորնթ. ա. 20, 26։ բ. 8։

49 Ոտից էն ոամիկ ժողովուրդն՝ որ օրէնքըն չիգիտաւ եւ անիծված են։

50 Ասիկոդիմոն՝ որ առաջ գիշերուն նորա մօտ էր եկել՝ եւ նորանցիկ միւն էր. ասաց նորանց[52].

51 Մի՞թէ մեր օրէնքն մին մարդ դատո՞ւմեն՝ թէ որ առաջ քան չըլսեն նորանից կամ գիտենան՝ թէ ինչ է գործում[53]։

52 Պատասխան տուին նորան եւ ասացին. միթէ դո՞ւ էլ գալիլեացիցն ես, քննիր եւ տես՝ որ գալիլեացիցն մարգարէ դուրս չի գալ[54]։

53 Եւ ամէն մէկն գնացին իրանց տեղն։

## ԳԼ · Ը

1 Քրիստոս Հնութեան մէջ բանըված կինն կազատէ։ 12 Կը քարոզէ թէ ինքն աշխարհքի լոյսն է, եւ իրան անձին վկայութիւնն կըՀաստատէ։ 33 Աբրահամով պարծանք անող Հրէաներին պատասխան կըտայ. 59 ինքն իրան անձըն նորանց չարութենիկ կըպահէ։

1 Ետայ Յիսուս գնաց ձիթենեաց սարն։

2 Եւ առաւօտանց միւն էլ եկաւ տաճարն, եւ ամէն ժողովուրդն նորա մօտ էր գալիս. եւ նստած սովորցնում էր նորանց։

3 Կարդացօղներն, քահանայապետներն եւ փարիսեցիներն միւն կինն բերին Հնութեան մէջ բանըված, եւ կանգնացրին նորա առաջին.

4 Ասրան ասացին. վարդապետ՝ էս կինս որ բըռնել ենք՝ ինքն յայտնապէս շնացած է։

5 Եւ օրէնքումն մեզէս պատուիրեց մեզ, որ էսպէսիներն քարկոծվին. ապա՝ դուն ինչ ես ասում դորա համար[1]։

6 Էս բանըս նորան փորձելոյ համար էին ասում, որ չարաիստութենն ունենան նորանից. բայց Յիսուս ցած նայելով՝ մատովն գրում էր երկրի վերայ։

7 Ետայ երբոր ղօռ արին հարցնելով նորան, վեր նայեց եւ ասաց. ձեզանից ով որ անմեղ է՝ թող առաջ նա քար քցէ դորա վերայ[2]։

8 Եւ միւնէլ ցած նայելով գրում էր երկրի վերայ։

9 Եւ էս որ լսեցին միւնն մընից եւեւ դուրս էին գնում[3], առաջինների սկսած միւնչեւ յետիններն. եւ Յիսուս մէնակ մնաց, եւ կինն կանգնած էր նորա առաջին։

10 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորան. ո՛վ կին՝ ո՞ւր են, ո՛չ ով քեզ չըդատապարտեց։

11 Եւ ասաց. չէ՛ Տէր. եւ Յիսուս ասաց. ես էլ քեզ չեմ դատապարտում[4]. գնա՝ սրանից եւեւ մեղք մի գործե՛ր[5]։

12 Յիսուս միւնէլ խօսեց նորանց հետ եւ ասաց. ես եմ աշխարհքի լոյսն[6]. ով որ իմ հետեւէս գայ՝ նա խաւարով չի գնալ, բայց կենաց լոյսըն կընդունի։

13 Փարիսեցիներն ասացին նորան. դուն քո անձիդ համար ես վկայում՝ եւ քո վկայութիւնդ ճշմա-

---

[52] Ծն. գ · 2։ [53] Բ Օրէն. ա · 17։ Ժէ · 8, Ի՜սայ. Ժթ · 15։ [54] Նաում. թ · 1, 2։ Բ՜սքէ. գ · 15։ Ցն. ա · 46։ Ա՜ԽԲ · 41։ [1] Դէ՜ու. ի · 10։ Բ Օրէն. իբ · 22։ [2] Բ Օրէն. Ժէ · 7։ Հռով. բ · 1։ [3] Հռով. բ · 22։ [4] Դա՜ն. թ · 56։ Ժբ · 14։ Ցն. գ · 17։ [5] Ցն. ե · 14։ [6] Ցն. ա · 4, 5, 9։ գ · 19։ թ · 5։ Ժբ · 35, 36, 46։

բիտ է[7]։

14 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. Թէեւ իմ անձիս համար վկայութիւն եմ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ է. ինչու որ՝ գիտեմ՝ թէ որտեղից ելի եւ որտեղ եմ գնում, բայց դուք չէք գիտում՝ թէ որ տեղից եմ գալիս, եւ որ տեղ եմ գնում[8]։

15 Դուք մարմնոյ վերայ նայելով էք դատաստան անում[9]. ես չեմ դատում ոչ մէնին էլ[10]։

16 Եւ եթէ եւ դատեմ էլ մէնին, իմ դատաստանս ճշմարիտ է. ինչու որ՝ (ես) մենակ չեմ՝ բայց ես եւ Հայրն՝ որ ինձ ուղարկեց[11]։

17 Եւ ձեզ ձեր օրէնքումն էլ գրած է՝ թէ երկու մարդկանց վկայութիւնն ճշմարիտ է[12]։

18 Ես եմ՝ որ ինձ համար վկայում եմ, եւ Հայրն էլ՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ համար վկայում[13]։

19 Ասումէին նորա. որ տեղ է քո Հայրդ. Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց նորանց. ոչ ինձ էք գիտում՝ եւ ոչ իմ Հօրըս[14]. թէ որ ինձ գիտենայիք՝ լինի որ իմ Հօրըս էլ գիտենայիք[15]։

20 Այս բանըս Յիսուս գանձատան մէջն խօսեց նորանց հետ՝ երբոր տաճարումն սովորցնում էր[16]. եւ ոչ ով չը բռնեց նորան[17]. պատճառն որ՝ դեռ նորա ժամն (սահմանն) չէր հասել[18]։

21 Յիսուս միւնէլ ասաց նորանց. ես գնում եմ եւ ինձ ման կը դաք[19]. եւ ձեր մեղաց մէջն կը մեռնիք[20]. ինչու որ՝ որտեղ որ ես եմ գնում, դուք չէք կարող գալ։

22 Հրէաներն ասումէին. միթէ ինքն իրան կը սպանէ, որ ասում՝ թէ որտեղ որ ես եմ գնում՝ դուք չէք կարող գալ։

23 Եւ ասաց նորանց. դուք էս տեղից նեղբեւիցն էք, եւ ես էնտեղից վերեւիցն եմ[21], դուք էս աշխարհքիցս էք՝ ես չեմ էս աշխարհքիցս[22]։

24 Ասացի ձեզ՝ թէ ձեր մեղաց մէջն կը մեռնիք[23]. ինչու որ՝ եթէ չը հաւատաք՝ թէ էն ես եմ, ձեր մեղաց մէջն կը մեռնիք[24]։

25 Հասցին նորան. դու ո՞վ ես. Յիսուս ասաց նորանց. առաջ էն՝ որ հէնց ձեզ հետ խօսումեմ։

26 Շատ բան ունիմ ձեզ համար խօսիլ եւ դատել. բայց նա որ ինձ ուղարկեց՝ ճշմարիտ է[25]. եւ ես ինչ որ նորանից լսեցի՝ էն եմ խօսում աշխարհումն[26]։

27 Չ՚էին գիտացան՝ թէ Հօր համար էր ասում նորանց։

28 Յիսուս ասաց նորանց. երբոր որդին մարդոյ կը բարձրացնիք[27]՝ էն ժամանակն կիմանաք՝ թէ ես եմ[28]. եւ իմ անձնիցս բան չեմ անում[29]. բայց ինչպէս իմ Հայրս սովորցրուց ինձ, էն եմ խօսում[30]։

29 Եւ նա՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ հետ[31] է. ինձ մենակ չը թողեց[32], ինչու որ՝ ես միշտ էն բաներն եմ անում, որ հաճոյ են նորան[33]։

---

[7] Ց-ՎԿ. ե. 31։ [8] Ց-ՎԿ. է. 28։ [թ. 29։ [9] Ց-ՎԿ. է. 24։ [10] Ց-ՎԿ. գ. 17։ ԺՐ. 47։ ԺԸ. 36։ Վ-ՅՐ. 29։ Ց-ՎԿ. Ժ. 32։ [12] Բ ՕՐԻ. Ժ. 6։ ԺԹ. 15։ Ա-ՐԻ. ԺԸ. 16։ Բ Կ-ՆԹ. Ժ. 1։ ԵՔԷ. Ժ. 28։ [13] Ց-ՎԿ. ե. 37։ [14] Վ-ՅՐ. 55։ Ց-ՎԿ. Ժ. 3։ [15] Ց-ՎԿ. Ժ. 7։ [16] Ա-ՐԻ. ԺՐ. 41։ [17] Ց-ՎԿ. է. 30։ [18] Ց-ՎԿ. է. 8։ [19] Ց-ՎԿ. է. 34։ Ժ. 33։ [20] Վ-ՅՐ. 24։ [21] Ց-ՎԿ. գ. 31։ [22] Ց-ՎԿ. ԺԸ. 19։ ԺԸ. 16. ա Ց-ՎԿ. գ. 5։ [23] Վ-ՅՐ. 21։ [24] Ա-ՐԻ. Ժ. 16։ [25] Ց-ՎԿ. է. 28։ [26] Ց-ՎԿ. գ. 32։ ԺԸ. 15։ [27] Ց-ՎԿ. գ. 14։ ԺՐ. 32։ [28] Հ-ՎՀ. ա. 4։ [29] Ց-ՎԿ. ե. 19, 30։ [30] Ց-ՎԿ. գ. 11։ [31] Ց-ՎԿ. Ժ. 10, 11։ [32] Վ-ՅՐ. 16։ [33] Ց-ՎԿ. գ. 34։ ե. 30։ ը. 38։

30 Երբոր էս (բանըս) խօսեց՝ շատ մարդիք հաւատացին նորան[34]։

31 Ու Յիսուս հաւատացեալ հրեաներին ասաց. Թէ որ դուք իմ խօսքիս մէջ կենաք՝ իմ ճշմարիտ աշակերտներս էք։

32 Ու ճշմարտութիւնըն կըճանաչէք. ու ճշմարտութիւնն կազատէ ձեզ[35]։

33 Պատասխան տուին նորան ու ասացին. մենք աբրահամի զաւակ ենք, ու իակի մընըն չըծառայեցինք[36]. էլ ի՞նչպէս ես ասում՝ Թէ ազատ կըլինէք։

34 Յիսուս պատասխան տուաւ նոքանց. ճշմարիտին ճշմարիտըն ասումէմ ձեզ, Թէ ամէն ով որ մեղք է անում՝ մեղքի ծառայ է[37]։

35 Ու ծառան յաւիտեան չի կենում տան մէջն, բայց որդին յաւիտեան է կենում[38]։

36 Իբրեմն եթէ որդին ազատէ ձեզ, ճշմարիտ ազատ կըլինէք[39]։

37 Գիտումէմ որ աբրահամի զաւակ էք. բայց ուզումէք որ ինձ սպանէք[40]. ինչու որ՝ իմ խօսքիս համար տեղ չըկայ ձեզանում։

38 Ես ինչ որ տեսի իմ Հօր մօտն էն եմ խօսում[41]. ու դուք՝ ինչ որ ձեր Հօրիցն լսեցիք՝ անումէք։

39 Պատասխան տուին նորան ու ասացին. մեր Հայրն աբրահամն է. Յիսուս նորանց ասաց[42]. Թէ որ աբրահամի որդիք լինէիք՝ աբրահամի գործքերըն կըդործէիք[43]։

40 Հապա հիմիկ ուզումէք որ ինձ սպանէք, մին մարդ՝ որ ճշմարտութիւնըն խօսեցի ձեզ[44], էն որ իմ Հօրիցս լսեցի. էդ բանըդ աբրահամ չարաւ[45]։

41 Դուք ձեր Հօր գործքերըն էք անում. ասացին նորան. մենք պոռնկութիւնից չենք ծնված. մեր Հայրըն մին է՝ (այսինքն) Աստուած[46]։

42 Յիսուս նորանց ասաց. Թէ որ ձեր Հայրն Աստուած լինէր, ապա ինձ կըսիրէիք[47]. ինչու որ՝ ես Աստուածանից դուրս էլայ ու եկի[48]. ու չէ Թէ իմ անձնիցս եկի, բայց նա ուղարկից ինձ[49]։

43 Ինչու՞ համար իմ խօսքըս չէք իմանում. ներքամար որ դուք չէք կարօղ իմ բանըս լսել[50]։

44 Դուք սատանայ Հօրիցն էք. ու կամենումք ձեր Հօր ցանկութիւնները անել[51]. ինչու որ՝ նա սկզբից մարդասպան էր, ու ճշմարտութեան մէջ չըմնաց, պատճառն որ՝ ճշմարտութիւն չըկայ նորանում[52]. երբոր սուտ խօսի՝ հինից իրան բանէրից է խօսում. ինչու որ՝ սուտ է ու նորա (սուտութեան) Հայր է։

45 Հապա ես՝ որովհետև ճշմարտութիւնն եմ խօսում, ինձ չէք հաւատում։

46 Ձեզանից ո՞վ է որ ինձ մեղայ համար յանդիմանէ. Թէ որ ճշմարիտն եմ ասում ձեզ՝ ինչու՞ չէք հաւատում ինձ։

47 Ով որ Աստուածանից է՝ Աստուծոյ բանէրն ականջ է դնում. ու դուք նրա համար ականջ չէք դնում,

---

[34] Ցհ. է. 13։ Ժ. 42։ Ժա. 45։ [35] Հռովմ. ը. 14. 18. 22։ ը. 2։ Յակ. ա. 25։ բ. 12։ [36] Գաղ. դե. 42։ Մատթ. գ. 9։ Վէպր. 39։ [37] Հռովմ. ը. 16. 20։ բ Պետր. բ. 19։ [38] Գաղ. դ. 30։ [39] Հռովմ. ը. 2։ Գաղ. ե. 1։ [40] Ցհ. է. 20։ Վէպր. 40։ [41] Ցհ. գ. 32։ ե. 19. 30։ Ժգ. 10. 24։ [42] Մատթ. գ. 9։ Վէր. 33։ [43] Հռովմ. բ. 28։ Թ. 7։ Գաղ. գ. 7. 29։ [44] Վէր. 37։ [45] Վէր. 26։ [46] Եսայ. կգ. 16։ կդ. 8։ Մաղ. ա. 6։ [47] ա Ցհ. է. 1։ [48] Ցհ. ժգ. 27։ ժէ. 8. 25։ [49] Ցհ. է. 43։ է. 28. 29։ [50] Ցհ. է. 17։ [51] Մատթ. Ժէ. 38։ ա Ցհ. գ. 8։ [52] Յուդ. 6։

որ Աստուածանից էիք[53]։

48 Հրէաներն պատասխան տուին եւ նորան ասացին. չէ՞ որ լաւ ենք ասում՝ թէ դու սամարացի ես, եւ դեւ կայ քեզանում[54]։

49 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. ինձանում դեւ չկայ, բայց իմ Հօրըս պատուում եմ, եւ դուք անարգում էք ինձ։

50 Ես իմ փառքըս չեմ խնդրում՝ կայ մինն՝ որ խնդրում է եւ դատում[55]։

51 Ճշմարիտն ճշմարիտըն ասում եմ ձեզ. թէ որ մինն իմ խօսքըս պահէ՝ նա մահ չի տեսնիլ յաւիտեան[56]։

52 Հրէաներն ասացին նորան. հիմիկ իմացանք՝ որ դեւ կայ քեզանում. աբրահամն մեռաւ եւ մարգարէներն[57], եւ դու ասում ես՝ թէ որ մինն իմ խօսքըս պահէ՝ նա յաւիտեան մահ չի տեսնիլ։

53 Միթէ դու մին աւելի մեծ ես քան մեր Հայր աբրահամն, որ մեռաւ եւ մարգարէներն մեռան. ապա դու քեզ ո՛վ ես անում։

54 Յիսուս պատասխան տուաւ. թէ որ ես իմ անձըս փառաւորեմ, իմ փառքս ոչ ինչ է[58]. Հայրն է՝ որ ինձ փառաւորում, որ դուք նորա համար ասում էք թէ մեր Աստուածն է[59]։

55 Եւ չէք ճանաչում նորան[60]. բայց ես գիտում նորան. եւ թէ որ ասեմ՝ թէ չեմ գիտում նորան, ձեզ նման սուտ կըլինիմ. բայց գիտում եմ նորան, եւ նորա խօսքըն պահում եմ։

56 Աբրահամ ձեր Հայրն ցանկացաւ իմ օրըս տեսնել[61], տեսաւ եւ ուրախ եղաւ[62]։

57 Հրէաներն նորան ասացին. դու դեռ հիսուն տարեկան չես, եւ աբրահամին էիր տեսել։

58 Յիսուս նորանց ասաց. ճշմարիտըն ճշմարիտն ասում եմ ձեզ. ես աբրահամի լինելուցն էլ առաջ եմ[63]։

59 Հրէաներն քարեր վերկացան, որ նորա վերայ քցեն[64]. եւ Յիսուս մինկողմն քաշվեցաւ, եւ դուրս եկաւ գնաց տաճարիցն[65]։

## Գլ. Թ

1 Ծնընդեան կոյր աչքերին բացվելն։ 11 Նա փարիսեցոց տանուելն։ 38 Նորանք էս էլան բանի վերայ չաս կըբարկանան, եւ կոյրն ժողովարանիցն դուրս կըհանեն։ 35 Յիսուսի էն կոյր ճարդոց ընդունելն, եւ նորա դատմունքի խնդն։ 39 Քրիստոսի գաւառատառնավ՝ Ճարդիք՝ որ չեն տեսնում կըտեսանեն, եւ նորանք՝ որ տեսնումեն՝ կըկուրանան։

1 Եւ երբոր անց էր կենում՝ մին մարդ տեսաւ ծնընդեան կոյր։

2 Եւ նորա աշակերտներն հարցըրին նորան եւ ասացին. ռաբբի՝ ո՞վ մեղք է, սորան՝ թէ իրան հօրըն եւ մօրն, որ սա կոյր ծնվաւ[1]։

3 Յիսուս պատասխան տուաւ. ո՛չ դորան մեղք է, եւ ո՛չ էլ իրան

---

53 Ցուվ. ժ. 26, 27։ ա Ցուվ. գ. 6։ 54 Ցուվ. է. 20։ ժ. 20։ Ա՚ոյր. 52։ 55 Ցուվ. է. 41։ է. 18։ 56 Ցուվ. ե. 24։ ժա. 26։ 57 Ջա՛. ա. 5։ Եբր. ժա. 13։ 58 Ցուվ. է. 31։ 59 Ցուվ. է. 41։ ժչ. 14։ ժէ. 1։ Գ՚ոյ. գ. 13։ 60 Ցուվ. է. 28, 29։ 61 Ղ՚ու. ժ. 24։ 62 Եբր. ժա. 13։ 63 Եփ. գ. 14։ Ե՚այ. խգ. 13։ Ցուվ. ժէ. 5, 24։ Կ՚ղ. ա. 17։ Ցոյո՛ա. 8։ 64 Ցուվ. ժ. 31, 39։ ժա. 8։ 65 Ղ՚ու. գ. 30։ 1 Ա՚ոյր. 34։

Հօրն եւ ոչ մէկն, բայց որ Աստուածդ գործքերն յայտնի լինին դորանում[2]:

4 Այլ ինձ պէտք է՝ որ նորա գործքերըն գործեմ, որ ինձ ուղարկեց՝ դեռ քանի որ օր կայ. գիշերն գալիս է՝ որ էն ժամանակն ոչ ով կարող չէ գործել[3]:

5 Վասնի որ աշխարհքի միջումն եմ՝ աշխարհքի լոյսն եմ[4]:

6 Այլորոր էս ասաց՝ թքեց գետինըն՝ եւ էն թըքից ցեխ շինեց, եւ էն ցեխըն ծեփեց կուրի աչքերին վերայ[5]:

7 Այս նորան ասաց, գնա՝ լուացիր սելոամայ աւազանումն[6], որ թարգմանվում՝ առաքեալ, գնաց լուացաւ՝ եկաւ եւ տեսնում էր[7]:

8 Այդպէս դրացիներն (հաչեանը նէրն) եւ նորանք՝ որ առաջուց տեսել էին նորան՝ որ մուրացական էր, ասում էին թէ՝ չէ՞ որ սա էր՝ որ նըստում էր եւ մուրանում էր. կէսն ասում էին՝ թէ նա է:

9 Այլ ուրիշներն ասում էին, թէ չէ. բայց նորան նման է. եւ ինքն ասում էր՝ թէ ես եմ:

10 Այդորան ասացին, ապա քո աչքերդ ի՞նչպէս բաց էլան:

11 Այդ պատասխան տուաւ. մին մարդ՝ որ Յիսուս են ասում, ցեխ շինեց եւ իմ աչքերիս ծեփեց, եւ ինձ ասաց[8]. գնա՝ սելոամ, եւ լուացիր. գնացի լուացայ եւ տեսնում եմ:

12 Այդորան ասացին. Նա ո՞րտեղ է. նորանց ասաց. չեմ դիտում:

13 Փարիսեցիներուն մօտ տարան նորան, որ մին ժամանակ կոյր էր:

14 Այս շաբաթ օր էր՝ երբոր Յիսուս ցեխըն շինեց եւ կուրի աչքերըն բաց արաւ:

15 Այնինչ փարիսեցիներն էլին հարցնում նորան՝ թէ ի՞նչպէս ես տեսնում. եւ նա նորանց ասաց. ցեխ դրաւ իմ աչքերիս վերայ՝ եւ լուացայ եւ տեսնում եմ:

16 Այն փարիսեցիներիցն մինքանեն ասացին. էն մարդն Աստուածանից չէ՝ ինչու որ՝ շաբաթի օրերըն չի պահում. կէսն ասում էին՝ ապա ի՞նչպէս կարող է մեղաւոր մարդն նշաններ անել[9]. եւ տարաձայնութիւն էր նորանց միջումն[10]:

17 Այնինչ ասացին կուրին. դու ի՞նչ ես ասում նորա համար՝ որ քո աչքերըդ բաց արաւ. եւ նա ասաց. թէ մարգարէ է[11]:

18 Այս հրէաներն չէին հաւատում նորա համար՝ թէ կոյր էր եւ բացվաւ. մինչեւ որ աչքը բացարածի ծնողքըն կանչեցին:

19 Այդորանց հարցրին եւ ասացին. սա՞ է ձեր որդին՝ որ դուք նորա համար ասում էք՝ թէ կոյր ծնվաւ. ապա ի՞նչպէս է տեսնում:

20 Այդորա ծնողքն պատասխան տուին եւ ասացին. գիտենք որ սա մեր որդին է, եւ թէ կոյր ծնվաւ.

21 Այդպէս թէ հիմիկ ի՞նչպէս է տեսնում՝ էն չենք գիտում. կամ՝ թէ ո՞վ բաց արաւ նորա աչքերըն՝ մենք չենք գիտում. հենց իրան հարցրէք. ինքն չափն հասած է՝ թող հենց ինքն խօսի իրան համար:

22 Այդորա ծնողքն էս ասացին. պատճառն որ՝ հրէաներից վախենում էին[12]. ինչու որ՝ հրէաներն ուխտ էին դրել որ՝ եթէ մինն Այբրիստոս դաւանի նորան՝ ժողովարանից դուրս լինի[13]:

23 Այդրա համար նորա ծնողքն ա-

---

[2] ՅՈՎՀ. ժա. 4: [3] ՅՈՎՀ. գ. 34: ե. 19, 36: ԺԱ. 9: ԺԲ. 35: ԺԵ. 4: [4] ՅՈՎՀ. ա. 5. 9: գ. 19: ը. 12: ԺԲ. 35, 46: [5] Մարկ. է. 33: ը. 23: [6] Նէեմ. գ. 15: [7] գ Թագ. է. 14: [8] Այբ. 6, 7: [9] Վար. 33: ՅՈՎՀ. գ. 2: [10] ՅՈՎՀ. է. 12, 43: Ժ. 19: [11] ՅՈՎՀ. գ. 19: գ. 14: [12] ՅՈՎՀ. է. 13: ԺԲ. 42: ԺԶ. 38: Գործ. է. 13: [13] Վար. 34: ԺԳ. 2:

սացին՝ Թէ ինքն չարին Հասած է՝ հինց իրանից Հարցրէք։

24 Ա՛ինէլ երկրորդ անդամ կանչեցին էն մարդին՝ որ կոյր էր, եւ նորան ասացին. Աստուծոյ փառք տուր[14], մենք գիտումենք՝ որ էն մարդն մեղաւոր է[15]։

25 Նա նա ասաց. եթէ մեղաւոր է՝ ես չեմ գիտում, միայն Թէ էս եմ գիտում, որ կոյր էի՝ եւ հիմիկ տեսնումեմ։

26 Ա՛ինէլ ասացին նորան. ի՞նչ արաւ քեզ. ի՞նչպէս բաց արաւ քո աչքերըդ։

27 Նորանց պատասխան տուաւ. հիմիկ ձեզ ասացի եւ չլսեցիք. ի՞նչ-չու էք մինէլ կամենում լսել. միթէ դուք էլ կամենումէք նորան աշակերտ լինել։

28 Նորանք հայհոյումէին նորան եւ ասում. դու լինիր նորան աշակերտ. մենք մօսէսի աշակերտներն ենք։

29 Ա՛ինք գիտումենք՝ որ Աստուած մօսէսի հետ խօսեց. սորան չենք գիտում՝ (Թէ) որ տեղից է[16]։

30 Էն մարդն պատասխան տուաւ եւ նորանց ասաց. հինց էդ է զարմանալի բան՝ որ դուք չէք գիտում՝ Թէ սա որտեղից է՝ եւ իմ աչքերըս բաց արաւ[17]։

31 Գիտումենք՝ որ Աստուած մեղաւորներին չի լսում[18], բայց Թէ որ մինն աստուածապաշտ է՝ եւ նորա կամքըն կատարումէ՝ նորան լսում։

32 Յաւիտենից մին մարդ չլսեց՝ Թէ մինն ծնընդից կոյր ծնվածի աչքերըն բաց արաւ։

33 Թէ որ էն մարդն Աստուածանից չէր՝ (ապա) մին բան չէր կարող անել[19]։

34 Պատասխան տուին՝ եւ նորան ասացին. դու իսպառ մեղքի մէջն ես ծնվել, եւ դու վարդապետ ես լինում մեզ[20], եւ դուրս հանեցին նորան[21]։

35 Յիսուս լսեց՝ որ նորան դուրս հանեցին, եւ երբոր նորան գտաւ՝ նորան ասաց. դու հաւատումես Աստուծոյ որդուն[22]։

36 Նա պատասխան տուաւ եւ ասաց. Տէր՝ ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան։

37 Յիսուս նորան ասաց. հինց տեսիր նորան, եւ հինց նա է, որ քեզ հետ խօսումէ[23]։

38 Նա նա ասաց. հաւատումեմ Տէր՝ եւ երկրպագութիւն արաւ նորան։

39 Նա Յիսուս ասաց. (ես) դատաստանի համար եկի էս աշխարհքըս[24] որ նորանք՝ որ չեն տեսնում՝ տեսնեն, եւ նորանք՝ որ տեսնումեն՝ կուրանան[25]։

40 Փարիսեցիներիցն մին քանիսն՝ որ նորա հետ էին՝ լսեցին, եւ նորան ասացին. միթէ մենք էլ կոյր ենք[26]։

41 Յիսուս նորանց ասաց. Թէ որ կոյր լինէիք՝ մեղք չէիք ունենալ[27], բայց հիմիկ ասումէք Թէ՝ տեսնումենք, եւ (նրահամար) ձեր մեղքերն հաստատված են ձեզանում։

---

[14] Յես. է· 19։ աթոռ· գ· 5։ [15] Ա՛էր· 16։ [16] Յովհ· ը· 14։ [17] Յովհ· գ· 10։ [18] Յոբ· խե· 9։ լե· 12։ Պառ· ժը· 41։ լդ· 15։ կգ· 18։ Առակ· ա· 28։ ժե· 29։ իը· 9։ Եսայ· ա· 15։ Երեմ· ժա· 11։ ժդ· 12։ Եզեկ· ը· 18։ Միխէ· գ· 4։ Զաք· է· 13։ [19] Ա՛էր· 16։ [20] Ա՛էր· 2։ [21] Ա՛էր· 22։ [22] Մատթ· ժդ· 33։ ժզ· 16։ Մարկ· ա· 1։ Յովհ· ժ· 36։ ա Յովհ· ե· 13։ [23] Յովհ· գ· 26։ [24] Յովհ· գ· 17։ ե· 22, 27։ ժը· 47։ [25] Մատթ· ժդ· 13։ [26] Հռովմ· բ· 19։ [27] Յովհ· ժե· 22, 24։

## ԳԼ· Ժ·

1 Քրիստոսն դուռ է եւ բարի Հովիւ։ 19 Իրան համար էլած կերպ կերպ կարծիքները ժողովրդումն։ 24 Իրան գործքերովն կը փոխուի թէ ինքն է Քրիստոսն Աստուծոյ որդին. 39 Հրէաներից ձեռքից դուրս կըգայ. 40 Եւ մինել Յորդանանի մէկել կողմն կըգնայ, եւ էն տեղ շատ մարդիք իրան կըհաւատան։

1 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ. ով որ դրունովն չի մտնում ոչխարների գաւիթն (պըշնան)՝ բայց ուրիշ կողմիցն է վեր էլում էնտեղ՝ նա գող եւ աւազակ է։

2 Բայց նա որ դրունովն է մտնում, ոչխարների հովիւն (չօպանն) է։

3 Դրունապանն նորա համար բաց է անում. եւ ոչխարներն նորա ձայնին լսում են, եւ իրան ոչխարներըն իրանց անունովն կանչում, եւ նորանց դուրս է հանում։

4 Եւ երբոր իրաններըն ամէնն հանում, նորանց առաջին գնում, եւ ոչխարներն նորա ետեւէն գնում են. ինչուոր՝ նորա ձայնըն ճանաչում են։

5 Օտարի ետեւէն չեն գնում. բայց նորանից փախչում են, ինչու որ՝ օտարների ձայնըն չեն ճանաչում։

6 Էս առակըս Յիսուս ասաց նորանց. եւ նորանք չէին գիտում, թէ ինչ էր էն՝ որ խօսում էր նորանց հետ։

7 Ա՛յն էլ Յիսուս նորանց ասաց. ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ. թէ ես եմ ոչխարների դուռն։

8 Ա՛մէնն՝ որ ինձանից առաջ եկին, գողեր եւ աւազակներ էին. ոչխարներն էլ նորանց չլսեցին։

9 Էս եմ դուռն. թէ որ մինն ինձանով՝ նէրս մտնի՝ նա կապրի. կըմտնի եւ դուրս կըգայ, եւ արօտ կըգտնի[1]։

10 Գողն չի գալիս, բայց միայն՝ որ գողանայ եւ սպանի եւ կորցնի. ես եկի որ կեանք ունենան, եւ էլ աւելի ունենան։

11 Էս եմ բարի Հովիւն (չօպանն). բարի Հովիւն իրան անձըն դնում է ոչխարներին վերայ[2]։

12 Բայց վարձկանն՝ որ Հովիւ չէ, որ ոչխարներն իրանն չեն. երբոր տեսնում՝ որ գայլն գալիս է, ոչխարներըն թողում եւ փախչում, եւ գայլն յափշտակում նորանց եւ ցրիւ է անում[3]։

13 Պատճառն որ՝ վարձկան է, եւ ոչխարներին համար հոգս չունի։

14 Էս եմ բարի Հովիւն (չօպանն), եւ իմոնքներին ճանաչում եմ եւ իմոնքներիցն էլ ճանաչվում եմ[4]։

15 Ինչպէս որ Հայրն ինձ գիտում է[5], էնպէս էլ ես Հօրըն գիտում եմ, եւ իմ անձըս դնում եմ ոչխարներին վերայ[6]։

16 Եւ դեռ ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ էս գաւթիցս (պշնայիցս) չեն[7], եւ նորանց էլ պէտք է, որ ես էս տեղ բերեմ. եւ իմ ձայնիս կըլսեն, եւ մին հօտ (ախբօ) եւ մին Հովիւ (չօպան) կըլինին[8]։

17 Էրա համար իմ Հայրս սիրում է ինձ, պատճառն որ իմ անձըս դնում

[1] Ծւվ. Ժդ. 6։ Եփես. բ. 18։ [2] Եսայ. խ. 11։ Եբէլ. լդ. 12, 23։ լէ. 24։ Եբբ. Ժգ. 20։ ա Պետր. բ. 25։ է. 4։ [3] Ջաւ. Ժա. 16, 17։ [4] բ Տիմ. բ. 19։ [5] Մատթ. Ժա. 27։ [6] Ծւվ. քե. 13։ [7] Եսայ. ծզ. 8։ [8] Եբէլ. լէ. 22։ Եփես. բ. 14։ ա Պետր. բ. 25,

մեմ՝ որ մին էլ առնեմ նորան[9]։

18 Ա՛ւ ով նորան չէ հանում ինձանից. բայց ես ինքս իմ անձնովս եմ դնում նորան. իշխանութիւն ունիմ նորան դնելոյ եւ իշխանութիւն ունիմ նորան մինէլ առնելոյ[10]. էս պատուէրըս առի իմ Հօրիցս[11]։

19 Ա՛ինէլ տարաձայնութիւն էր լինում Հրէաների միջումն էս բանիս համար[12]։

20 Այ նորանցից շատերն ասում էին՝ թէ դեւ կայ նորանում եւ գժվում է[13], ինչու համար խօսում էք նորան։

21 Ա՛յեան ասում էին. էսպէսի խօսքեր դիւահարի չեն. միթէ դեւն կարո՞ղ է[14] կուրի աչքերըն բանալ[15]։

22 Այն ժամանակին Երուսաղէմումն նաւակատիք տօն էլաւ՝ եւ ձմեռն էր։

23 Այ Յիսուս մեն էր գալիս տաճարումն սաղօմոնի սրահի միջն[16]։

24 Հրէաներն նորան չորս կողմիցն պատեցին եւ ասացին. մինչեւ ե՞րբ մեր հոգիները հանես. թէ որ դու ես Քրիստոսն՝ համարձակ ասա մեզ։

25 Յիսուս պատասխան տուաւ նորանց եւ ասաց. ասացի ձեզ եւ չէք հաւատում. էն գործքերն՝ որ իմ Հօրս անունովն գործումեմ՝ էնոց նորանք վկայումեն ինձ համար[17]։

26 Այց դուք չէք հաւատում[18], ինչու որ՝ իմ ոչխարներիցս չէք։

27 Իմ ոչխարներս իմ ձայնիս լսումեն եւ ես ճանաչումեմ նորանց, եւ իմ ետեւէս գալիս են[19]։

28 Այ ես յաւիտենական կեանք քըն եմ տալիս նորանց, եւ յաւիտեան չեն կորչիլ, եւ ոչ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռքիցս[20]։

29 Իմ Հայրս[21] որ նորանց տուաւ ինձ, ամէնիցն մեծ է, եւ ոչ ով կարող չէ իմ Հօրս ձեռքիցն յափշտակել նորանց[22]։

30 Այս եւ իմ Հայրս մին ենք[23]։

31 Հրէաներն քարեր վեր առին՝ որ նորան քարկոծ անեն[24]։

32 Յիսուս նորանց պատասխան տուաւ. շատ բարի գործքեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցս. նորանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծ անում։

33 Հրէաներն պատասխան տուին, բարի գործքի համար քեզ չենք քարկոծ անում, բայց Հայհոյութեան համար, եւ որ դու մարդ ես, եւ քո անձըդ Աստուած ես անում[25]։

34 Յիսուս նորանց պատասխան տուաւ. չէ՞ որ ձեր օրէնքումն գըրված է՝ թէ ես ասացի՝ թէ աստուածներ էք[26]։

35 Ա՛պա թէ որ նորանց աստուածներն է ասում՝ որ (մէնակ) Աստուծոյ խօսքն էլաւ նորանց վերայ[27]. եւ կարելի չէ որ գիրքն քանգվի։

36 Ա՛պա նորան որ Հայրն սրբեց[28] եւ ուղարկեց աշխարհքս[29], դուք ասումէք թէ Հայհոյումես. պատճառն որ ասացի[30] թէ Աստուծոյ որդի եմ[31]։

---

[9] Ես. ծդ. 7, 8, 12։ Եբր. բ. 9։ [10] Ցվէ. բ. 19։ [11] Ցվէ. զ. 38։ Ժէ. 10։ Գործ. բ. 24, 32։ [12] Ցվէ. է. 43։ Թ. 16։ [13] Ցվէ. է. 20։ ը. 48, 52։ [14] Եփ. գ. 11։ Սաղմ. ղդ. 9։ ճիզ. 8։ [15] Ցվէ. Թ. 6, 7, 32, 33։ [16] Գործ. գ. 11։ ե. 13։ [17] Վէր. 38։ Ցվէ. գ. 2։ ե. 36։ [18] Ցվէ. ը. 47։ ա Ցվէ. գ. 6։ [19] Վէր. 4, 14։ [20] Ցվէ. զ. 37։ Ժէ. 11, 12։ Ժը. 9։ [21] Ցվէ. Ժգ. 28։ [22] Ցվէ. Ժէ. 2, 6, Իսայի։ [23] Ցվէ. Ժէ. 11, 22։ [24] Ցվէ. ը. 59։ [25] Ցվէ. ե. 18։ [26] Սաղմ. ծբ. 6։ [27] Հեսէ. Ժգ. 1։ [28] Ցվէ. զ. 27։ [29] Ցվէ. գ. 17։ ե. 36, 37։ ը. 42։ [30] Ցվէ. ե. 17, 18։ Վէր. 30։ [31] Գաղ. ա. 35։ Ցվէ. Թ. 35, 37։

37 Ինչ որ իմ հօրս գործքըն չեմ գործում, մի հաւատաք ինձ[32]։

38 Եպա թէ որ գործումեմ, թէեւ ինձ չը հաւատաք, բայց գոնեայ գործքերին հաւատացէք[33]։ որ գիտենաք եւ ճանաչէք, թէ Հայրն ինձանում է եւ ես հօր միջումն[34]։

39 Ա՛ինել ուզուէին որ նորան բռնեն, եւ նորանց ձեռքիցն դուրս եկաւ[35]։

40 Եւ մինել գնաց յորդանանի

էն կողմն էնտեղն, որ յովհաննէան առաջուց կար եւ մկրտուէր[36]. եւ էնտեղ էր լինում։

41 Շատ մարդիք նորա մօտ եկին՝ եւ ասացին. թէ յովհաննէան մին նշան չըգործեց։

42 Բայց ամէն ինչ որ յովհաննէան նորա համար ասաց[37], ճշմարիտ էր. եւ էնտեղ շատ մարդիք հաւատացին նորան[38]։

## ԳԼ. ԺԱ

1 Քրիստոս չորս օրվան թաղված Ղազարոսին յարութիւն առնել կրոայ։ 45 Շատ Հրեաներ իրան կըհաւատան։ 47 Քահանայապետներն եւ փարիսեցիներն եւ տիվանն Քրիստոսի վերայ խորհուրդ անելը կըժողովին։ 49 կայիափաի մարգարէութիւնն։ 54 Ձիսուս իրան անձըն կըպահէ։ 55 Զատկիք ծօնելումն մարդ կըգան նորան, եւ քահանայապետներն եւ փարիսեցիներն հրաման կըտան ձերբկանց որ բռնեն նորան։

1 Եւ մին ղազարոս մարդ կար հիւանդ՝ բեթանիայից, մարիամի եւ նորա քոյր մարթայի գիւղից[1]։

2 Եյս էն մարիամն էր՝ որ Տէրին իւղով օծեց՝ եւ նորա ոտներըն սրբեց իրան մազերովն. որ նորա ղազարոս եղբայրն հիւանդ էր[2]։

3 Նորա քրվէրքն ուղարկեցին նորա մօտ եւ ասացին. Տէր՝ ահա՝ որ դու սիրումէիր՝ հիւանդացել է։

4 Ձիսուս երբոր լսեց՝ ասաց. էն հիւանդութիւնն մեռնելոյ համար չէ՝ այլ Աստուծոյ փառաց համար. որ որդին Աստուծոյ նորանով փառաւորվի[3]։

5 Եւ Ձիսուս սիրումէր մարիամին եւ նորա քոյր մարթային եւ ղազարին։

6 Երբոր լսեց՝ թէ նա հիւանդացել է, երկու օր մնաց էնտեղն՝ որ էր[4]։

7 Եպա ետքից ետեւ ասաց նոքանց. եկէք մինել գնանք հրէաստան։

8 Աշակերտներն նորան ասացին. ռաբբի՝ հինց հիմիկ հրէաներն ուզումէին քեզ քարկոծ անել[5]. եւ մինել էնտեղ ես գնում։

9 Ձիսուս պատասխան տուաւ. չէ՞ որ օրն տասներկու ժամ (ասհաղ) ունի. թէ որ մինն ցերեկն կըգնայ, նա չի գայթակղվիլ[6]. ինչու որ՝ էս աշխարհքիս լոյսն տեսնումէ։

10 Եպա թէ որ մինն գիշերումն կըգնայ՝ կըգայթակղվի. ինչու որ՝ լոյս չըկայ նորա հետ[7]։

11 Եյսքոր էս ասաց, սրանից ետեւ ասաց նորանց. մեր ղազարոս բարե-

[32] Ց-ՎԼ. ԺԱ. 24։ [33] Ց-ՎԼ. Ե. 36։ ԺԳ. 10, 11։ [34] Ց-ՎԼ. ԺԳ. 10, 11։ ԺԱ. 21։ [35] Ց-ՎԼ. Է. 30, 44։ Ը. 59։ [36] Ց-ՎԼ. Ա. 28։ [37] Ց-ՎԼ. Գ. 30։ [38] Ց-ՎԼ. Ը. 30։ Ժա. 45։ [1] Ղ-ՒԼ. Ժ. 38, 39։ [2] Մ-ՈՒՌ. Իգ. 7։ Մ-ԲԼ. ԺԳ. 3։ Ց-ՎԼ. Ժբ. 3։ [3] Ց-ՎԼ. Թ. 3։ Վ-ՅՐ. 40։ [4] Ց-ՎԼ. Ժ. 40։ [5] Ց-ՎԼ. Ժ. 31։ [6] Ց-ՎԼ. Թ. 4։ [7] Ց-ՎԼ. Ժբ. 35։

կամն քոյն ելաւ. բայց կըզնամ՝ որ զարհնացնեմ նորան[8]:

12 Աշակերտներն նորան ասացին. Տէր՝ ահ որ քոյն ելաւ՝ ապա կառոզջանայ:

13 Բայց Յիսուս նորա մեռնելոյն համար էր ասում. նորանց ենպէս երեւեցաւ թէ քընի ենկընած լինելոյ համար ասում էր:

14 Յնժամանակն Յիսուս յայտնի ասաց նորանց. զաղարան մեռաւ:

15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար՝ որ դուք հաւատաք ինձ. որ ես ենսուղ չէի. բայց հիմիկ նկնք գնանք նորա մօտ:

16 (Ապա) Թովմաս երկուորեակ (ջուխտակ) կոչվածն (իրան) ընկերաշակերտներին ասաց. ապա նկնք՝ որ մենք էլ նորա հետ մեռնինք:

17 Յիսուս եկաւ՝ նորան չորս օր գերեզմանի մէջ (դրած) գտաւ:

18 Եւ բեթանիա մօտ էր երուսաղէմին տասն հինգ ասպարէզի (տանջելի) չափով:

19 Հրէաներից շատեր նկել էին Մարթայի եւ Մարիամի մօտ, որ ներքօր կողմանէ մխիթարեն նորանց:

20 Երբոր Մարթա լսեց՝ թէ Յիսուս գալիս է, գնաց նորա առաջն. բայց Մարիամն ենսուղ տան միջումն նստած էր:

21 Մարթա Յիսուսին ասաց. Տէր՝ թէ որ դու եսուղ էլած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռել:

22 Բայց հիմիկ էլ գիտեմ, թէ ինչ որ Աստուածանից խնդրես՝ Աստուած կըտայ քեզ[9]:

23 Յիսուս նորան ասաց. քո եղբայրդ յարութիւն կառնէ:

24 Մարթան նորան ասաց. գիտեմ որ յարութիւն կառնէ յարութենումն յետին օրումն[10]:

25 Յիսուս նորան ասաց. ես եմ յարութիւն[11] եւ կեանք[12], ով որ ինձ հաւատաւմէ՝ թէ եւ մեռնի՝ կապրի[13],

26 Եւ ամէն ով որ կենդանի է եւ ինձ հաւատաւմէ, նա յաւիտեան չի մեռնիլ. հաւատո՞ւմես սրան:

27 Նորան ասաց. հա՝ Տէր, ես հաւատացի՝ թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ որդին[14], որ պէտք է աշխարհը գայիր:

28 Եւ երբոր էս ասաց, գնաց թաքուն կանչեց իրան մարիամ քրոջը եւ ասաց. վարդապետան եկել է եւ քեզ կանչում է:

29 Նա երբոր լսեց՝ շուտով վերկացաւ, եւ եկաւ Յիսուսի մօտ:

30 Յիսուս գետ չէր եկել գիւղն՝ բայց էտեղն էր՝ որտեղ որ Մարթան եկաւ նորա առաջն:

31 Բայց հրէաներն՝ որ էնտեղ տան միջն նորա հետ էին եւ նորան մխիթարումին, երբոր մարիամին տեսին՝ թէ շուտով վերկացաւ եւ գնաց՝ նորանք էլ նորա ետեւէն գընացին. կարծումին՝ թէ գերեզմանն է գնում, որ էնտեղ լայ լինի[15]:

32 Բայց մարիամն երբոր եկաւ էնտեղն՝ որ Յիսուսն էր՝ եւ նորան տեսաւ, նորա ոտներըն ընկաւ եւ ասաց. Տէր՝ թէ որ էստեղ պատահած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռել[16]:

33 Յիսուս երբոր նորան տեսաւ՝ որ լայ էր լինում եւ հրէաներն էլ՝ որ նորա հետ էին՝ լայ էին լինում, իրան հոգով մէջն գժաւարացաւ շատ

---

[8] Օրին. լա. 16: Դատ. ժբ. 2: Մատթ. թ. 24: Գործ. է. 59: ա Գեներ. մե. 18, 51: [9] Ցուկ. թ. 31: [10] գ-ա. Ժգ. 14: Ցուկ. ե. 29: [11] Ցուկ. ե. 21: ղ. 39, 40, 44: [12] Ցուկ. ա. 4: ղ. 35: Ժգ. 6: Կող. գ. 4: ա Ցուկ. ա. 1, 2: ե. 11: [13] Ցուկ. գ. 36: ա Ցուկ. ե. 10, Յոյե: [14] Ս Ատթ. Ժղ. 16: Ցուկ. դ. 42: ղ. 14, 70: [15] Ա՞ր. 19: [16] Ա՞ր. 21:

տրտմածի նման.

34 Նա ասաց. Ի՞նչ տեղ դրիք նո-
ցան, նորան ասացին. Տէր՝ եկ եւ
տես:

35 Նա Յիսուս արտասուեց[17]:

36 Հրէաներն ասացին. տեսէք՝
թէ որքան սիրեաց նորան:

37 Ոմանցից կէսն ասացին. Միթէ սա՝ որ կուրի աչքերըն բաց ա-
րաւ, չէր կարօղ անել՝ որ սա էլ չը-
մեռնի[18]:

38 (Ա՛պա) Յիսուս միտել իրան մաքուռն սաստիկ տրտմած՝ նկաւ գե-
րեզմանն. եւ էն միւ այր (Խաչատրայ) էր՝ եւ միւ քար նորա վերայ դրած:

39 Նա Յիսուս ասաց. Էդ քարըդ
էդն քցեցէք. մեռելի քոյրն՝ մար-
թեան նորան ասաց. Տէր՝ հիմիկ հո-
տած կը լինի. ինչու որ՝ չորս օրվան է:

40 Յիսուս նորան ասաց. չէ՞ որ
քեզ ասացի. եթէ հաւատաս՝ Ա-
ստուծոյ փառքըն կըտեսնես[19]:

41 Նա նրանք քարըն վերատէն,
Յիսուս իրան աչքերըն դէպի վեր
բարձրացրուց եւ ասաց. Հայր՝ գո-
հանում եմ քեզանից, որ ինձ լսեցիր:

42 Նա ես գիտէի՝ որ ամէն ժա-
մանակ լսում ես ինձ. բայց էս ժո-
ղովրդիս համար եմ անում՝ որ չորս
կողմովը կանգնած են, որ հաւատան
թէ դու ուղարկեցիր ինձ[20]:

43 Նրանք էս ասաց, մեծ ձայնով
աղաղակից եւ ասաց. ղազարէ՝ վեր
կաց՝ դուրս եկ:

44 Նա մեռելն դուրս նկաւ կա-
պած ոտներով, եւ ձեռներն շորե-
րով պատած, եւ երեսն վարշամակ-
ներով (կտաւով) պատած[21]. եւ Յի-
սուս նորանց ասաց. արձակեցէք զո-
րան եւ թողէք որ գնայ:

45 Հրէաներից շատերն՝ որ մա-
րիամեանի մոտն էին եկել՝ երբոր
տեսին էն՝ որ նա արաւ, հաւատացին
նորան[22]:

46 Նա նորանցից միւ քանիսն գը-
նացին փարիսեցիներին մոտ, եւ նո-
րանց պատմեցին ինչ որ Յիսուսն ա-
րաւ:

47 Քահանայապետներն եւ փա-
րիսեցիներն ժիվան ժողովեցին[23], եւ
ասացին. ի՞նչ անենք, ինչու որ էն
մարդն շատ նշաններ է անում[24]:

48 Թէ որ նորան էսպէս թողենք՝
ամէնքն կըհաւատան նորան, եւ հը-
ռոմայեցիքն կըգան եւ մեր ազգըն
եւ տեղըն վեր կառնեն:

49 Ոմանցից միտն կայիափա ա-
նունով՝ որ էն տարվան քահանայա-
պետն էր՝ նորանց ասաց[25]. դուք իս-
կի բան չէք գիտում:

50 Նա իսկի էլ չէք մտածում,
թէ լաւ է մեզ համար՝ որ միտ մարդ
մեռնի ժողովրդիս վերայ՝ եւ ամէն
ազգըս չկորչի[26]:

51 Նա բանըս ոչ թէ իրանից ա-
սաց. բայց որովհետեւ էն տարվան
քահանայապետն էր, մարգարէա-
ցաւ՝ թէ Յիսուս պիտի մեռնէր ազ-
գին վերայ:

52 Նա ոչ թէ միայնակ ազգին վե-
րայ[27], բայց որ Աստուծոյ ցրված
որդիքներըն էլ միանալ ժողովի[28]:

53 Ա՛պա էն օրից եաեւ խորհուրդ արին՝ որ նորան սպանեն:

54 Նա Յիսուս նրանից եաեւ էլ
համարձակ չէր մտնում հրէաների
միջն[29]. բայց էնտեղից գնաց մի ե-
կեղեց, որ անապատին մոտ էր, մի քա-

[17] Ղուկ. ժթ. 41: [18] Ցուն. թ. 6: [19] Գէն. 4, 23: [20] Ցուն. ժբ. 30, [21] Ցուն. ի. 7: [22] Ցուն. բ. 23: ժ. 42: ժբ. 11, 18: [23] Մատթ. իզ. 3: Մարկ. ժդ. 1: Ղուկ. իբ. 2, [24] Ցուն. ժբ. 19: Գործ. դ. 16: [25] Ղուկ. դ. 2: Ցուն. ժբ. 14: Գործ. դ. 6: [26] Ցուն. ժբ. 14: [27] Եսայ. խթ. 6: ա Ցուն. բ. 2: [28] Ցուն. ժ. 16: Եփես. բ. 14–17: [29] Ցուն. դ. 1, 3: է. 1:

ղաքի մէջ՝ որ Նորա անունն եփրա-
յիմ էր[30]. եւ Հետեղ էր կենում
աշակերտներին հետ:

55 Եւ հրէաների զատիկն մօտ էր,
եւ էն գաւառից շատ մարդիք ա-
ռաջ վեր էլան Երուսաղէմ, որ ի-
րանց անձներըն սրբեն[31]:

56 Ա՛ն էին գալիս Յիսուսին, եւ
իրար ասում էին[32]՝ երբոր տաճա-
րումն էին՝ ի՞նչպէս է երեւում ձեզ.
միթէ էս տօնիս չի՞ գալ Նա հետեղ.
(բայց) քահանայապետներն եւ փա-
րիսեցիներն հրաման էին տուել, որ
եթէ մինն գիտենայ՝ թէ ինչ տեղ
է, նորա համար իմաց տայ՝ որ բռնեն
Նորան:

## ԿԱ · ԺՒ

1 Յիսուս Մարիամին կըգովէ որ իրան ոտներըն օծեց: 9 Շատ ժողովուրդ կըգան էն
տեղ Ղազարոսին էլ տեսնեն: 10 Քահանայապետներն խորհուրդ կանեն՝ որ Նորան էլ
սպանեն: 12 Քրիստոս էշով Երուսաղէմ կըմտնայ: 20 Հեթանոսներն փափաքումեն որ
Յիսուսին տեսնեն: 23 Իրան մահին համար առաջուց իմաց կըտայ: 37 Հրէաներին մեծ
կուրութիւնն: 42 Շատ իշխաններից կըհաւատան Նորան. բայց յայտնի չեն գաւանում:
44 Քրիստոս ցոյց կըտայ որ իրան հաւատացողներն Աստուծոյն էլ կըհաւատան:
47 Քրիստոսի խօսքն կըդատէ յիւրմէն օրէնքն:

1 Բայց Յիսուս զատկից վեց օր
առաջ եկաւ Բեթանիա, որտեղ որ
մեռած զաղարոսն էր՝ որ Նորան մե-
ռելների միջից յարոյց[1]:

2 Եւ էնտեղ հայկերութիւն ա-
րին Նորա համար[2]. եւ մարթա ծա-
ռայումէր սեղանին, եւ զաղարն Նորա
հետ նստողներից մինն էր:

3 Բայց մարիամն մին լիտրը նար-
դոսի աղնիւ մեծագին իւղ առաւ[3].
եւ Յիսուսի ոտներըն օծեց, եւ իրան
մազերովն սրբումէր Նորա ոտներըն.
եւ տունն լցվաւ էն իւղի հոտովն:

4 Աշակերտներից մինն՝ յուդա
իսկարիօտացին, որ Նորան մատնելու
էր՝ ասաց.

5 Ինչո՞ւ համար էդ իւղը երեք
հարիւր դինարի չըծախվեցաւ, եւ
աղքատներին տրվաւ:

6 Էս ասաց՝ ոչ թէ որ Նա աղ-
քատների համար հոգս ունէր. բայց
նրա համար որ գող էր՝ եւ քսակըն
ինքն ունէր. եւ ինչ որ ընկնումէր՝
Նա էր պահումէ[4]:

7 Յիսուս ասաց. թող տուր դո-
րան, որ մինչեւ իմ պատանքիս օրն
պահէ էդ:

8 Աղքատներըն ամէն ժամանակ
ձեզ հետ ունիք. (բայց) ինձ ամէն
ժամանակ ձեզ հետ չունիք[5]:

9 Երբոր հրէաներից շատ ժողո-
վուրդ գիտաց՝ թէ (նա) էնտեղ է՝
եկին, ոչ թէ մէնակ Յիսուսի հա-
մար, բայց որ զաղարին էլ տեսնեն,
որ Նորան մեռելների միջից յարոյց[6]:

10 Քահանայապետներն խոր-
հուրդ արին՝ որ զաղարին էլ սպա-
նեն[7]:

11 Պատճառն որ՝ հրէաներից
շատ մարդիք գնումէին եւ հաւա-
տումէին Յիսուսին[8]:

12 Վաղ յետեւի օրումն շատ ժո-
ղովուրդ՝ որ եկեղեցին տօնն, երբոր
լսեցին՝ թէ Յիսուս գալիս է երու-

---

[30] բ Պետ. ժգ · 19: [31] Ցհ. բ · 13: ե · 1: ը · 4: [32] Վէր · 7: [1] Ցհ. ժա · 1. 43:
[2] Պետ. իզ · 6: Պետ. ժգ · 3: [3] Ղեւ. ժ · 38, 39, Ցհ. ժա · 2: [4] Ցհ. ժգ · 29:
[5] Պետ. իզ · 11: Պետ. ժգ · 7: [6] Ցհ. ժա · 43, 44: [7] Ղեւ. ժզ · 31: [8] Ցհ. ժա ·
45: վ · 18:

տաղէմ[9]։

13 Ընտրեալ ծառերի ճղերը առին, եւ դուրս գնացին նորա առաջն, ա-ղաղակումէին եւ ասում. ովսաննայ, օրհնեալ (է՛ս) որ Տէրի անունովն գալիս ես՝ դու իսրայէլի թագա-ւորդ[10]։

14 Իսկ Յիսուս մին էշ գտաւ, եւ նորա վերայ նստեց. ինչպէս որ գըր-ված է՝ (թէ)[11].

15 Մի՛ վախենար սիօնի աղջիկ, ահա քո թագաւորդ գալիս է՝ իշի քուռակի վերայ նստած[12]։

16 Իսկ աշակերտներն առաջ չի-մացան էն բանըն[13], բայց երբոր Յի-սուս փառաւորվեցաւ[14]՝ էն ժամա-նակն մտքներն բերին՝ թէ էն էր՝ որ նորա համար գրված էր[15]. եւ էն բա-նըն արին նորան։

17 Իսկ ժողովուրդն՝ որ նորա հետ էր՝ վկայութիւ, թէ դադարին գե-րեզմանիցն մէնակ դուրս կանչեց. եւ հնչէր մեռելներին միջից յարեաց նորան։

18 Իսկ նորա համար ժողովուրդն գնաց նորպ առաջն, ինչու որ՝ լսեցին թէ նա էն նշանըն արել էր[16]։

19 Իսկ փարիսեցիներն իրար մէջ ասում էին. տեսնում՞ք՝ որ իսկի հնար չէք գտնում. ահա աշխարհքն նորա ետևէն գնաց[17]։

20 Իսկ հետեղ մին քանի հեթանոս-ներ էլ կային նորանց միջումն[18], որ եկել էին հնտեղ, որ երկրպագու-թիւն անեն էն տօնումն[19]։

21 Նորանք եկին փիլիպպոսի մօ-տըն՝ որ գալիլեացոց բեթսայիդայից էր, նորան աղաչեցին եւ ասում. տէր՝ կամնում ենք Յիսուսին տես-նել[20]։

22 Փիլիպպոսն եկաւ եւ անդրեա-սին ասաց. անդրեասըն եւ փիլիպ-պոսն ասացին Յիսուսին։

23 Իսկ Յիսուս պատասխան տուաւ նորանց՝ եւ ասաց. ժամն (սահմանն) հասաւ՝ որ որդին մարդոյ փառաւոր-վի[21]։

24 Ամէնամիսըն ճշմարիտըն ասում եմ ձեզ. թէ որ ցորենի հատն հողի մէջ չընկնի եւ մեռնի[22],

25 Նորն մէնակ կըմնայ. բայց թէ որ մեռնի՝ շատ պտուղ կըբերէ. ով որ իրան անձըն սիրումի՝ կըկորցնէ նորան. եւ ով որ իրան անձըն ա-տումէ էս աշխարհքումս, յաւիտե-նական կենդանց մէջ կըպահէ նորան[23]։

26 Եթէ որ մինն ծառայէ ինձ՝ թող նա իմ ետևէս գայ. եւ որտեղ որ ես եմ՝ հետեղ էլ իմ պաշտօնեայս կըլինի. թէ որ մինն ծառայէ ինձ, իմ Հայրս կըպատուէ նորան[24]։

27 Բայց հիմիկ իմ անձս տրտմած է[25]. եւ ի՞նչ ասեմ. Հայր՝ ապրե-ցրուր ինձ էս ժամից (սահմանից). բայց հենց նրահամար եկի էս ժամիս մէջն[26]։

28 Հայր՝ փառաւորիր քո որդոյդ. երկնքիցն ձայն եկաւ, (թէ) փառա-ւորեցի եւ միեւնոյն կըփառաւորեմ[27]։

29 Իսկ ժողովուրդն՝ որ կանգնած էր եւ լսում էր՝ ասում էին, թէ որո-մանք է լինում. եւ ուրիշն ասում էին՝ թէ հրեշտակ խօսեց նորա հետ։

30 Յիսուս պատասխան տուաւ եւ

[9] Մարկ. իա. 8։ Մատթ. ժա. 8։ Ղուկ. ԺԹ. 35, 36, Յովհ. ժբ. 13։ [10] Սոփ. Ե՛ժբ. 25. 26։ [11] Մատթ. իա. 7։ [12] Զաքա. թ. 9։ [13] Ղուկ. ժբ. 33։ [14] Ցուկ. է. 39։ [15] Ցուկ. ժգ. 26։ [16] Վէրբ. 11։ [17] Ցուկ. ժա. 47, 48։ [18] Գործ. ժէ. 4։ [19] գ Թագ. ը. 41, 42։ Գործ. ը. 27։ [20] Ցուկ. ա. 44։ [21] Ցուկ. ժգ. 32։ ժէ. 1։ [22] ա Կորնթ. ժէ. 36։ [23] Մատթ. ժ. 39։ ժգ. 25։ Մատթ. ը. 35։ Ղուկ. ԺԹ. 24։ ժէ. 33։ [24] Ցուկ. ժգ. 3։ ժէ. 24։ ա Թես. գ. 16։ [25] Մատթ. խզ. 38, 39։ Ղուկ. ժբ. 50։ Ցուկ. ժգ. 21։ [26] Ղուկ. իբ. 53։ Ցուկ. ժբ. 37։ [27] Մատթ. գ. 17։

ասաց. Էս ձայնս ոչ թէ ինձ համար եկաւ, բայց ձեզ համար[28]։

31 Հիմիկ է էս աշխարհքիս դատաստանն. հիմիկ էս աշխարհքիս իշխանն դուրս կը քցվի[29]։

32 Եւ ես երբոր կըբարձրանամ երկրիցս[30], ամենին կը քաշեմ ինձ մօտ[31]։

33 Էս բանըս ասում՝ որ ցոյց տայ թէ ինչ մահով պիտի մեռնի[32]։

34 Ժողովուրդն պատասխան տուաւ նորան. Մենք օրէնքիցն լսեցինք՝ թէ Քրիստոսն յաւիտեան կը կենայ. եւ դու ի՞նչպէս ես ասում՝ թէ պէտք է՝ որ որդին մարդոյ բարձրանայ. ո՞վ է էն որդին մարդոյ[33]։

35 Յիսուս նորանց ասաց. Մին քիչ ժամանակ դեռ լոյսն ձեզ հետ է[34]. գնացէք, քանի որ լոյսըն ունիք՝ որ խաւարն ձեզ չբռնէ[35]. պատճառն որ՝ ով որ խաւարումն է գնում, չի գիտում (թէ) ուր է գնում[36]։

36 Դեռ քանի որ լոյսն ձեզ հետ ունիք՝ հաւատացէք լուսոյն, որ լուսոյ որդիք լինիք[37]. Յիսուս էս (բանը) խօսեց, եւ գնաց թաք կացաւ նորանցից[38]։

37 Եւ էնքան նշաններ արել էր նորանց առաջին. եւ նորանք չէին հաւատում նորան։

38 Որ խօսքն մարգարէի խօսքն կատարվի՝ որ ասաց. Տէր՝ մեր լսածքին ո՞վ հաւատաց, եւ Տէրի բազուկն (քեզ) ո՞ւմ յայտնվեցաւ[39]։

39 Վասնամայր չէին կարում հաւատալ. ինչու որ՝ Եսային մինել ասում է.

40 Թէ նորանց աչքերըն կուրացրուց, եւ նորանց սրտերըն թմրացրուց[40]. որ աչքով չտեսնեն, եւ սրտով չխմանան, եւ դառնան՝ եւ (ես) բժշկեմ նորանց։

41 Եսային էս ասաց. երբոր նորա փառքըն տեսաւ, եւ նորա համար խօսեց[41]։

42 Այց էնպէս էլ իշխաններիցն շատերն հաւատացին նորան. բայց փարիսեցիների պատճառովն չէին յայտնում, որ ժողովարանիցն դուրս չըլինին[42]։

43 Ինչու որ՝ մարդկանց փառքըն աւելի սիրեցին քանթէ Աստուծոյ փառքըն[43]։

44 Եւ Յիսուս աղաղակումէր եւ ասում. Նա որ ինձ հաւատումէ՝ ոչ թէ ինձ է հաւատում, բայց նորան՝ որ ինձ ուղարկեց[44]։

45 Եւ նա որ ինձ տեսնումէ, նորան է տեսնում՝ որ ինձ ուղարկեց[45]։

46 Էս լոյս եկի աշխարհքս, որ ամեն ով հաւատումէ ինձ՝ խաւարի մէջ չըմնայ[46]։

47 Եւ թէ որ մինն իմ խօսքերիս լսէ եւ չըպահէ, ես չեմ դատիլ նորան[47], պատճառն որ՝ ես չեկի՝ որ աշխարհքը դատեմ[48], այլ որ աշխարհքը փրկեմ։

---

[28] Ցովհ. ժա. 42։ [29] Մատթ. ժբ. 29։ Ղուկ. ժ. 18։ Ցովհ. ժգ. 30։ ԺԶ. 11։ Գործ. իզ. 18։ բ Կորնթ. գ. 4։ Եփես. բ. 2։ զ. 12։ [30] Ցովհ. գ. 14։ ը 28։ [31] Հռոմ. ե. 18։ Եբր. բ. 9։ [32] Ցովհ. ժբ. 32։ [33] Սաղմ. ճԺ. 36, 37։ ՃԺ. 4։ Եսայ. Լ. 7։ Ծգ. 8։ Եփես. լե. 25։ Դան. բ. 44։ է. 14, 27։ Մխէ. գ. 7։ [34] Ցովհ. ա. 9։ ը. 12։ Լ. 5. վ. 46։ [35] Երէմ. ժգ. 16։ Եփես. ե. 8։ [36] Ցովհ. ժա. 10։ ա Ցովհ. բ. 11։ [37] Ղուկ. ժզ. 8։ Եփես. ե. 8։ ա Թես. ե. 5։ ա Ցովհ. բ. 9–11։ [38] Ցովհ. ը. 59։ ԺԱ. 54։ [39] Եսայ. Ծգ. 1։ Հռոմ. ժ. 16։ [40] Եսայ. զ. 9, 10։ Մատթ. ժգ. 14։ [41] Եսայ. ջ. 1։ [42] Ցովհ. է. 13։ Լ. 22։ [43] Ցովհ. ե. 44։ [44] Մատթ. Լ. 36։ ա պետ. ա. 21։ [45] Ցովհ. ժգ. 9։ [46] Վէր. 35, 36։ Ցովհ. գ. 19։ ը. 12։ Լ. 5, 39։ [47] Ցովհ. ե. 45։ ը. 15, 26։ [48] Ցովհ. գ. 17։

48 Ով որ ինձ անարգուածէ, եւ իմ խօսքերըս չի ընդունում[49], կայ՝ որ կըդատէ նորան. էն խօսքն՝ որ ես խօսեցի, նա կըդատէ նորան յետին օրումն[50]։

49 Ինչու որ՝ ես իմ անձնիցս չըխօսեցի[51], բայց Հայրն՝ որ ինձ ուղարկեց, նա պատուէր տուաւ ինձ՝ թէ ինչ պիտի ասեմ՝ եւ ինչ պիտի խօսիմ[52]։

50 Եւ գիտումեմ՝ որ էն պատուիրանքն յաւիտենական կեանք է. ապա ինչ որ ես խօսումեմ, էնպէս եմ խօսում՝ ինչպէս որ Հայրն ասաց ինձ։

## ԳԼ · ԺԹ

1 Ցիսուս իրան աշակերտներին ոտներն կըլուանայ. 14 Նորանց օրինակ կըտայ որ իրար սիրեն եւ խոնարհութիւն անեն։ 18 Ցուդայի համար առաջուց կասէ՝ որ ինքն պիտի մատնէ եւ մին նշանով նորանց ցոյց կըտայ էն մատնողն. 34 Նորանց պատուիրանք կըտայ որ իրար սիրեն, 36 եւ Պետրոսի ուրանալն առաջուց իրան կըյայտնէ։

1 Յ Ա տակի տօնիցն առաջ՝ Յիսուս գիտաց[1], որ իրան ժամն (սահմանն) հասել է[2] որ էս աշխարհիցս փոխվի դէպի Հայրն, իրաններին՝ որ էս աշխարհումն են՝ սիրեց, եւ մինչեւ վերջն սիրեց նորանց։

2 Եւ երբոր ընթրիքն (Եւկիւլաճ հայկ. Ե-Լ-Ե) էր լինում, սատանան սիմոնեան յուդա իսկարիօտացոյ սրտի մէջն քցել էր՝ որ մատնէ նորան[3]։

3 Յիսուս գիտաց՝ որ Հայրն ամէն բան իրան ձեռքն տուաւ[4], եւ որ Աստուածանից ելաւ, եւ Աստուծոյ մօտն է գնում[5]։

4 Ոտացկերտուածներն վերկացաւ եւ շորերըն վեր դրաւ, եւ մին ղէնջակ (փէշտեմալ) առաւ մէջքովն պատեց[6]։

5 Եւ յետոյ ջուր առաւ՝ լցրուց տաշտակը, եւ սկսեց աշակերտներուն ոտներն լուանալ, եւ էն ղէնջակովն՝ որ մէջքումն պատած էր՝ սրբում էր։

6 Սիմոն պետրոսի մօտ եկաւ, եւ նա նորան ասաց. Տէր՝ դո՞ւ ես իմ ոտներըս լուանում[7]։

7 Յիսուս պատասխան տուաւ նորան՝ եւ ասաց. ինչ որ ես գործումեմ, դու հիմիկ չես գիտում, բայց յետոյ կըգիտենաս[8]։

8 Պետրոս նորան ասաց. դու իմ ոտներըս յաւիտեան չը պիտի լուանաս. Յիսուս պատասխան տուաւ. թէ որ քո ոտներըդ չըլուանամ, դու ինձ հետ բաժին չունիս[9]։

9 Սիմոն պետրոսն նորան ասաց. Տէր՝ ոչ թէ իմ ոտներըս մինակ, բայց իմ ձեռներըս եւ գլուխըս էլ։

10 Յիսուս նորան ասաց. լուացածին բան պէտք չէ՝ բայց միայն որ ոտներըն լուանայ. ինչու որ՝ խապառ սուրբ է (նա). եւ դուք սուրբ էք, բայց չէ թէ ամէնդ[10]։

11 Պատճառն որ՝ գիտումէր նորան, որ իրան պիտի մատնէր. նրա համար ասաց, թէ ամէնդ սուրբ

[49] Ղ–Ե · ժ · 16։ [50] ը Օրէն · ԺԸ · 19։ Մ–Բ · ԺԳ · 16։ [51] Ցովհ · ը · 38։ ԺԳ · 10։ [52] ը Օրէն · ԺԸ · 18։ [1] Մ–Ր · իգ · 2։ [2] Ցովհ · ԺԲ · 23։ ԺԷ · 1, 11։ [3] Ղ–Ե · իը · 3։ Ա–Ր · 27։ [4] Մ–Ր · ԺԱ · 27։ իը · 18։ Ցովհ · գ · 35։ ԺԷ · 2։ Գ–Ր · ը · 36։ ա Կ–Ռ · ԺԲ · 27։ Եբր · ը · 8։ [5] Ցովհ · ը · 42։ ԺԳ · 28։ [6] Ղ–Ե · իը · 27։ Փիլէպ · ը · 7, 8։ [7] Մ–Ր · գ · 14։ [8] Ա–Ր · 12։ [9] Ցովհ · գ · 5։ ա Կ–Ռ · գ · 11։ Եփես · ե · 26։ Յէր · գ · 5։ Եբր · ԺԱ · 22։ [10] Ցովհ · ԺԵ · 3։

չէք[11]։

12 Այլ երբոր նորանց ոտներըն լուացաւ, իրան շորերըն առաւ՝ եւ միւս նիզ սեղան նստաց, եւ նորանց ասաց. միթէ գիտո՞ւմք թէ ես ինչ արի ձեզ։

13 Դուք ինձ վարդապետ եւ Տէր կը կոչէմ. եւ էն լաւ կը անում, ինչու որ ես հենց էն եմ[12]։

14 Ուրա թէ որ ես՝ Տէրս եւ վարդապետս ձեր ոտներըն լուացի[13], դուք էլ պէտք է՝ որ իրար ոտները լուանաք[14]։

15 Ինչու որ՝ ձեզ մին օրինակ տուի, որ ինչպէս որ ես ձեզ արի, դուք էլ անէք[15]։

16 Ա՛մէն ամէնըն ձեզմարիտըն ասում ձեզ. ծառան աւելի մեծ չէ քան թէ իրան ուէրն. եւ ոչ էլ ուղարկվածն աւելի մեծ է՝ քան թէ նա՝ որ ուղարկեց նորան[16]։

17 Թէ որ էս գիտումք, էլ աւելի երանելի էք՝ թէ որ էս անէք[17]։

18 Ձեզ ամէնիզ համար չեմ ասում, ինչու որ ես գիտումեմ նորանց, որ ընտրեցի. բայց որ գիրքն կատարվի՝ թէ նա որ ինձ հետ հաց էր ուտում՝ ինձ խաբէութիւն արաւ[18]։

19 Հենց հիմիկուց եսեւ ասումեմ ձեզ՝ դեռ քանի որ չի էլլել[19], որ երբոր լինի՝ հաւատաք թէ ես եմ։

20 Ա՛մէն ամէնըն ձեզմարիտըն ասում ձեզ. ով որ ընդունում մինին՝ որ ես կուղարկեմ՝ ինձ է ընդունում. եւ նա որ ինձ է ընդունում, նորան է ընդունում, որ ինձ ուղարկեց[20]։

21 Յիսուս երբոր էս ասաց[21] տրամեցաւ իրան հոգով մէջն, վկայեց եւ ասաց[22]. ճշմարիտըն ճշմարիտըն ասում եմ ձեզ, թէ ձեզան իցդ մինն, պիտի մատնէ ինձ[23]։

22 Աշակերտներն տարակուսած՝ իրար մտիկ էին տալիս, թէ ո՞մ համար ասած լինի։

23 Այ աշակերտներիցն մինն Յիսուսի մօտ նստած էր, որ Յիսուս նորան սիրումէր[24]։

24 Սիմոն պետրոսն նորան աչքով էր անում՝ որ հարցընէ՝ թէ նա ո՞վ է, որ նորա համար ասումէ։

25 Այ նա Յիսուսի լանջքովն (գէօչվէն) ընկաւ, եւ նորան ասաց. Տէր՝ նա ո՞վ է։

26 Յիսուս պատասխան տուաւ եւ ասաց. նա է՝ որ ես պատդըն թաց կանեմ եւ նորան կըտամ. եւ պատդըն թաց արաւ եւ տուաւ Յուդա իսկարիօտացոյն։

27 Այ էն պատառիցն ետեւ՝ սատանան մտաւ նորա մէջն[25]. եւ Յիսուս նորան ասաց. հիմիկ ինչ որ անելու ես՝ շուտով արա։

28 Այ էս բանըս էն սեղան նստողներիցն ոչ ով չիմացաւ՝ թէ ի՞նչ պատճառով ասաց նորան։

29 Ինչու որ՝ մին քանիսն կարծումէին՝ թէ որովհետեւ Յուդան փողն քսակըն ունէր, Յիսուս նորան ասաց՝ թէ գնիր ինչ բան որ էս տօնումն պէտք է մեզ[26]. կամ թէ՝ որ

[11] Ցվ. ղ. 65։ [12] Մտթ. իգ. 8, 10։ Ղտ. ղ. 46։ ա Կորնթ. ը. 6։ Ժբ. 3։ Փլիպ. բ. 11։ [13] Ղտ. իբ. 27։ [14] Հռոմ. ժբ. 10։ Գտ. ղ. 1, 2։ ա Պետր. ե. 5։ [15] Մտթ. ժա. 29։ Փլիպ. բ. 5։ ա Պետր. բ. 21։ ա Ցվհ. բ. 6։ [16] Մտթ. ժ. 24։ Ղտ. ղ. 40։ Ցվհ. ժե. 20։ [17] Ցվհ. ա. 25։ [18] Սաղմ. խա. 9։ Մտթ. իգ. 23։ Մրկ. 21։ [19] Ցվհ. ժդ. 29։ ժզ. 4։ [20] Մտթ. ժ. 40։ իե. 40։ Ղտ. ժ. 16։ [21] Մտթ. իգ. 21։ Մրկ. ժդ. 18։ Ղտ. իբ. 21։ [22] Ցվհ. ժբ. 27։ [23] Գործ. ա. 17։ ա Ցվհ. բ. 19։ [24] Ցվհ. ժԹ. 26։ ի. 2։ իա. 7, 20, 24։ [25] Ղտ. իբ. 3։ Ցվհ. ղ. 27։ [26] Ցվհ. ժբ. 6։

աղքատներին քան տալ։

30 Եւ նա երբոր պատառն առաւ, շուտով դուրս գնաց. եւ գիշեր էր։

31 Եւ երբոր դուրս գնաց, Յիսուս ասաց. Հիմիկ որդին մարդոյ փառաւորվեցաւ[27], եւ Աստուած նորանում փառաւորվեցաւ[28]։

32 Որ՝ եթէ Աստուած նորանում փառաւորվեցաւ, Աստուած էլ նորան կըփառաւորէ իրան անձնումն[29], եւ շուտով կըփառաւորէ նորան[30]։

33 Իմ որդեակներս՝ մին քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ. ինձ մանկըգաք. եւ ինչպէս որ հրէաներին ասացի, թէ որտեղ որ ես գնումեմ՝ դուք չէք կարող գալ[31]. եւ հիմիկ ձեզ եմ ասում։

34 Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. ինչպէս որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրէք[32]։

35 Այսով կըգիտենան ամէնքն՝ որ իմ աշակերտներս էք, եթէ իրար սիրէք[33]։

36 Սիմոն պետրոսն նորան ասաց. Տէր՝ ո՞ւր ես գնում. Յիսուս պատասխան տուաւ. որտեղ որ ես գընումեմ՝ դու հիմիկ չես կարող իմ հետեւէս գալ. բայց յետոյ իմ հետեւէս կըգաս[34]։

37 Պետրոսն նորան ասաց. Տէր՝ ինչո՞ւ չեմ կարող հիմիկ քո հետեւէդ գալ. հենց իմ անձըս էլ քեզ վերայ կըդընեմ[35]։

38 Յիսուս պատասխան տուաւ. քո անձը՞դ կըդնես ինձ վերայ. ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ քեզ, որ գեռ հաւն չըխօսած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ։

## ԳԼ · ԺԴ

1 Քրիստոս իրան աշակերտներին երկինք տանելըս յայտնի կըմխիթարէ. 6 ինքն ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք եւ Հօր հետ մին լինելն կըհաստատվանի. 13 կըհաստատէ թէ իրան անունով էլած աղօթքն պիտի ընդունելի լինի. 15 Ցոյց կըտայ նորանց թէ որ նա սիրուն իրան պատուիրանքներն պահումն։ 16 Իրան Հօրըն կաղաչէ որ մխիթարիչ Սուրբ Հոգին տայ նորանց, 27 Եւ իրան խաղաղութիւնն նորանց կըթողուս։

1 Ձեր սրտերդ թող չըշլիթա-
վին[1]. քայց Աստուծոյն հաւատացէք՝ եւ ինձ հաւատացէք։

2 Իմ հօր տանն շատ բնակարաններ կան. ապա թէ չէր՝ ես ձեզ ասած կը լինէի, որ կըգնամ եւ ձեզ համար տեղ կըպատրաստեմ[2]։

3 Եւ թէ որ գնամ եւ ձեզ համար տեղ պատրաստեմ, մինէլ կըգամ եւ ձեզ ինձ մօտ կառնեմ[3]. որ որտեղ որ ես լինիմ՝ էնտեղ էլ դուք լինէք[4]։

4 Եւ որտեղ որ գնումեմ՝ գիտումէք, եւ ճանապարհըն գիտումէք։

---

[27] Ց-ՀՀ· Ժբ· 23։ [28] Ց-ՀՀ· Ժգ· 13։ ա Պետր· գ· 11։ [29] Ց-ՀՀ· Ժէ· 1, 4, 5, 6։ [30] Ց-ՀՀ· Ժբ· 23։ [31] Ց-ՀՀ· է· 34։ ը· 21։ [32] Ղեւտ· Ժիթ· 18։ Ց-ՀՀ· Ժէ· 12, 17։ Եփես· ե· 2։ ա Թես· դ· 9։ Ց-Յ· բ· 8։ ա Պետր· ա· 22։ ա Ց-ՀՀ· բ· 7, 8։ գ· 11, 23։ դ· 21 [33] ա Ց-ՀՀ· բ· 5։ դ· 20։ [34] Ց-ՀՀ· իա· 18։ բ Պետր· ա· 14։ [35] Պսաղ· իզ· 33, 34, 35։ Պսղ· Ժդ· 29, 30, 31։ Ղեւ· իբ· 33, 34։ [1] Վեր· 27։ Ց-ՀՀ· Ժզ· 3, 22։ [2] Ց-ՀՀ· Ժգ· 33, 36։ [3] Գեր· 18, 28։ Գործ· ա· 11։ [4] Ց-ՀՀ· Ժբ· 26։ Ժե· 24։ ա Թես· դ· 16։

5 Ցօսէա նորան ասաց. Տէր՝ չինք գիտում՝ որտեղ ես գնում, եւ ի՞նչպէս կարենանք ճանապարհը գիտել:

6 Յիսուս նորան ասաց. ես եմ ճանապարհն[5] եւ ճշմարտութիւնն[6] եւ կեանքն[7]. ոչ ով չի գալ Հօր մօտ՝ եթէ ոչ ինձանով[8]:

7 Եթէ որ ինձ գիտնայիք՝ իմ Հօրը կը գիտնայիք[9]. եւ սրանից յետոյ կը գիտենաք նորան:

8 Փիլիպպոս նորան ասաց. Տէր՝ Հայրը ցոյց տուր մեզ՝ եւ բաւական է մեզ:

9 Յիսուս նորան ասաց. Էս քան ժամանակ ձեզ հետ եմ, եւ ինձ չը-ճանաչեցի՞ր փիլիպպոս. ով որ ինձ տեսաւ՝ Հօրը տեսաւ. եւ դու ի՞նչ պէս ես ասում, թէ Հայրը ցոյց տուր մեզ[10]:

10 Չե՞ս հաւատում՝ որ ես Հօր մէջն եմ, եւ Հայրն ինձանում[11]. էն բանն՝ որ ես խօսում եմ ձեզ հետ, չէ թէ իմ անձնիցս եմ խօսում, բայց Հայրն՝ որ ինձանում է բնակած է, նա է գործում էն գործքերըն[12]:

11 Հաւատո՛ւմ ինձ, որ ես Հօր մէջն եմ՝ եւ Հայրն ինձանում:

12 Ապա թէ չէ՝ գոնեայ գործքե-րին համար հաւատացէք ինձ[13]. ճըշ-մարիտըն ճշմարիտըն ասում եմ ձեզ, թէ ով որ ինձ հաւատում է, էն գործքերըն որ ես գործում՝ նա էլ կը գործէ, եւ էնից նրանցից ա-ւելի մեծ բաներ էլ կը գործէ. ինչու որ՝ ես Հօր մօտն եմ գնում[14]:

13 Եւ ինչ որ խնդրէք իմ անու-նով՝ էն կանեմ[15],

14 Որ Հայրն փառաւորվի որդովն:

15 Եթէ որ ինձ սիրում էք՝ իմ պա-տուիրանքներըս պահեցէք[16]:

16 Եւ ես Հօրըն կաղաչեմ, եւ ու-րիշ միխիթարիչ կը տայ ձեզ. որ յա-ւիտեան ձեզ հետ բնակվի[17]:

17 Ճշմարտութեան Հոգին[18], որ աշխարհքս կարօղ չէ ընդունել, նո-րան[19]. ինչու որ՝ չի տեսնում նորան. եւ չի ճանաչում նորան. բայց դուք նորան ճանաչում էք, ինչու որ՝ ձեզ մօտ կը բնակվի՝ եւ ձեզ հետ կը լինի[20]:

18 Ձեզ որբ չեմ թողիլ[21]. ձեզ մօտ կը գամ[22]:

19 Մի՛ փոքր ժամանակ էլ՝ եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կը տեսնէք ինձ[23]. ինչու որ՝ ես կենդանի եմ, եւ դուք կեն-դանի պիտի լինէք[24]:

20 Էն օրումն դուք կը ճանաչէք, որ ես իմ Հօր մէջն եմ, եւ դուք ինձանում՝ եւ ես ձեզանում[25]:

21 Ով որ իմ պատուիրանքներըս ունի՝ եւ նորանց պահում է, նա է՝ որ ինձ սիրում է. եւ նա՝ որ ինձ սի-րում է՝ իմ Հօրիցս կը սիրվի. եւ ես կը-սիրեմ նորան, եւ ինձ կերեւացընեմ նորան[26]:

22 Յուդան՝ ոչ թէ էն իսկարիո-տացին, նորան ասաց. ինչու՞ համար

---

[5] Եբր. Թ. 8: [6] Ցովհ. ա. 17: ը. 32: [7] Ցովհ. ա. 4: ժա. 25: [8] Ցովհ. ժ. 9: [9] Ցովհ. ը. 19: [10] Ցովհ. ժը. 45: կող. ա. 15: Եբր. ա. 3: [11] Վ.այր. 20: Ցովհ. ժ. 38: ժէ. 21, 23: [12] Ցովհ. է. 19: է. 16: ը. 28: ժը. 49: [13] Ցովհ. է. 36: ժ. 38: [14] Մարկ. խա. 21: Մարկ. ժզ. 17: Ղուկ. ժ. 17: [15] Մարկ. է. 7: խա. 22: Մարկ. ժա. 24: Ղուկ. ժա. 9: Ցովհ. ժէ. 7, 16: ժզ. 23, 24: Ցակ. ա. 5: ա Ցովհ. գ. 22: է. 14: [16] Վ.այր. 21, 23: Ցովհ. ժէ. 10, 14: ա Ցովհ. է. 3: [17] Ցովհ. ժէ. 26: ժզ. 7: Հռոմ. ը. 15, 26: [18] Ցովհ. ժէ. 26: ժզ. 13: ա Ցովհ. դ. 6: [19] ա Կորնթ. բ. 14: [20] ա Ցովհ. բ. 27: [21] Մարկ. խը. 20: [22] Վէր. 3: Վ.այր. 28: [23] Ցովհ. ժզ. 16: [24] ա Կորնթ. ժէ. 20: [25] Վէր. 10: Ցովհ. ժ. 38: ժէ. 21, 23, 26: [26] Վէր. 15: Վ.այր. 23: ա Ցովհ. ը. 5: է. 3:

է, որ մեզ կը յայտնես քեզ՝ եւ աշ-
խարհքին չէ[27]։

23 Յիսուս պատասխան տուաւ եւ
ըսաւ. Թէ որ մէնն ինձ սի-
րուէ՝ իմ խօսքը կը պահէ, եւ իմ
Հայրս կը սիրէ զնոր ան[28], եւ նոր ա
մնան կը գանք եւ բնակութիւն կա-
նենք նորա մօտ[29]։

24 Ո՛չ նա՝ որ ինձ չի սիրուէ ։ իմ
խօսքս չի՛ պահուէ. եւ իմ խօսքս՝
որ լսուէք՝ իմն չէ, բայց Հօրն է՝ որ
ինձ ուղարկեց[30]։

25 Այս խօսեցայ ձեզ հետ՝ դեռ
քանի որ ձեզ մօտ եմ։

26 Բայց մխիթարիչն սուրբ Հո-
գին՝ որ Հայրն իմ անունովս կուղար-
կէ[31], նա ամէն բան կը սորվորցնէ ձեզ,
եւ ինչ որ ձեզ ասացի, ձեր մտքերնե-
րը կը բերէ[32]։

27 Խաղաղութիւն եմ թողում
ձեզ, իմ խաղաղութիւնս եմ տալիս
ձեզ[33]. չէ թէ՝ ինչպէս աշխարհքն
տալիս է՝ ես եմ տալիս ձեզ. ձեր
սրտերդ չըշփոթվին եւ չըվախե-
նան[34]։

28 Լսեցիք, որ ես ասացի ձեզ[35],
թէ գնումեմ եւ էլ կըգամ ձեզ
մօտ. Թէ որ ինձ սիրեիք, ապա ու-
րախ կըլինեիք՝ որ ես Հօր մօտն եմ
գնում[36], ինչու որ՝ իմ Հայրս մեծ է
ինձանից։

29 Ահա (ես) հիմիկ ասացի ձեզ[37],
դեռ քանի որ չի էլել՝ որ երբոր լի-
նի, հաւատաք[38]։

30 Այլ շատ չեմ խօսիլ ձեզ հետ.
ես աշխարհքիս իշխանն գալիս է,
եւ ինձանում բան չի գտնում[39]։

31 Բայց որ աշխարհքն գիտենայ՝
թէ (ես) սիրումեմ Հօրըն. եւ ինչպէս
որ Հայրն պատուիրեց ինձ, էնպէս
եմ անում. Էլ վեր կացէք գնանք
էստեղից[40]։

## ԳԼ · Ի · Ե

1 Քրիստոս որթոյ առակովն ցոյց կուտայ իրան անդամներին եւ իրան մէջ եղած էն աերն որ փոխվելով կը լինի, եւ նորանց կըմխիթարէ։ 18 Աշխարհքն որ ժամանակ որ նորանց կատէ՝ մեն մխիթարութիւն է տալիս նորանց։ 26 Սուրբ Հոգին եւ առաքեալներին վկայութիւնն իրան համար։

1 Ես եմ ճշմարիտ որթեն (խաղող), եւ իմ Հայրս (նորա) մշակն է։

2 Ամեն ճուղն որ ինձանում է՝ եւ պտուղ չըտալիս, նորան կտրուէ. եւ էն ամէնն՝ որ պտուղ է տալիս՝ (նա) սրբուէ նորան, որ էլ աւելի պտղաբեր լինի[1]։

3 Հիմիկ դուք սուրբ էք՝ էն բանին համար՝ որ ձեզ հետ խօսեցի[2]։

4 Կացէք ինձանում՝ եւ ես ձեզ-
նում. ինչպէս որ ճուղն իրան անձինքն կարող չէ պտուղ բերել, եթէ որթումն (խաղողի) հաստատ-
ված չըլինի, էնպէս էլ դուք՝ եթէ

[27] Դ՚ա՛ւ. գ. 16։ [28] Ա՚Էր. 15։ [29] ա Ցա՛ն. բ. 24։ Ցա՛կ. գ. 20։ [30] Ա՚Էր. 10։ Ցա՛ն. ե. 19, 38։ է. 16։ [31] Ա՚Էր. 16։ Գ՚ա՛ւ. իգ. 49։ Ցա՛ն. ժե. 26։ ժզ. 7։ [32] Ցա՛ն. բ. 22։ ժբ. 16։ ժզ. 13։ ա Ցա՛ն. բ. 20, 27։ [33] Փիլիպ. գ. 7։ Կո՛ղ. գ. 15։ [34] Ա՚Էր. 1։ [35] Ա՚Էր. 3. 18։ [36] Ա՚Էր. 12։ Ցա՛ն. ժզ. 16։ ի. 17։ [37] Ցա՛ն. ե. 18։ ժ. 30։ Փիլիպ. բ. 6։ [38] Ցա՛ն. ժգ. 19։ ժզ. 4։ [39] Ցա՛ն. ժբ. 31։ ժզ. 11։ [40] Ցա՛ն. ժ. 18։ Փիլիպ. բ. 8։ Եբր. է. 8։ [1] Մա՛տ. ժե. 13։ [2] Ցա՛ն. ժգ. 10։ ժէ. 17։ Եփե՛ս. ե. 26։ ա Պետ. ա. 22։

ինձանում հաստատված չըլինիք[3]։

5 Այս որքան (ձայն) եմ՝ եւ գուք ճուղ. նա՝ որ ինձանում է հաստատված՝ եւ ես նորանում, նա շատ պտուղ է բերում[4]. ինչու որ՝ առանց ինձ՝ իսկի մին բան չէք կարող անել։

6 Եթէ որ մինն ինձանում չէ հաստատված, նա գուրս է քցվում ինչպէս ճուղ՝ եւ չորանում. եւ ժողովումեն նորան եւ կրակի մէջ են քցում՝ եւ այրվում[5]։

7 Եթէ որ կինաք ինձանում՝ եւ իմ խօսքերս ձեզանում կինան, ինչ որ կամենաք, կըխնդրէք՝ եւ կըլինի ձեզ[6]։

8 Վրանով փառաւորվեցաւ իմ Հայրս[7] որ շատ պտուղ բերէք. եւ իմ աշակերտներս լինիք[8]։

9 Ինչպէս որ իմ Հայրն ինձ սիրեց՝ ես էլ ձեզ սիրեցի. հաստատ կացէք իմ սիրոյ մէջն։

10 Եթէ որ իմ պատուիրանքներըս պահէք, իմ սիրոյ մէջն կրկինաք. ինչպէս որ ես իմ Հօրս պատուիրանքներըն պահեցի, եւ նորա սիրոյ մէջն կինամ[9]։

11 Այս խօսեցի ձեզ հետ՝ որ իմ ուրախութիւնս ձեզանում լինի, եւ ձեր ուրախութիւնն լցված լինի[10]։

12 Այս է իմ պատուիրանքս՝ որ իրար սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի[11]։

13 Էն ով աւելի մեծ սէր չունի քանիմէ էն՝ որ իրան անձըն դնէ իրան բարեկամներին վերայ[12]։

14 Դուք իմ բարեկամներն էք, եթէ որ անէք էն՝ որ ես պատուիրում ձեզ[13]։

15 Այլ ծառայ չեմ կանչում ձեզ, ինչու որ՝ ծառան չի գիտում՝ թէ իրան աէրն ինչ է գործում. բայց ձեզ բարեկամ կանչեցի, ինչու որ՝ ամէն ինչ՝ որ լսեցի իմ Հօրիցս, իմացրի ձեզ[14]։

16 Չէ թէ գուք ինձ ընտրեցիք[15]. բայց ես ձեզ ընտրեցի՝ եւ ձեզ դրի[16], որ գուք գնաք՝ եւ պտղաբեր լինիք. եւ ձեր պտուղն մնայ. եւ ինչ որ իմ Հօրիցս խնդրէք իմ անունովս՝ էն կրտայ ձեզ[17]։

17 Այս եմ պատուիրում ձեզ՝ որ իրար սիրէք[18]։

18 Եթէ որ աշխարհքն ատումէ ձեզ, գիտացէք՝ որ առաջ ինձ ատեց[19]։

19 Եթէ որ էս աշխարհքիցս լինէիք՝ ապա աշխարհքն իրաններին կըսիրէր[20]. բայց որովհետեւ աշխարքիցն չէք[21], բայց ես ընտրեցի ձեզ աշխարքից, նրահամար աշխարհքն ատումէ ձեզ։

20 Յիշեցէք էն խօսքըն՝ որ ասացի ձեզ. թէ ծառան իրան տիրոջնից մեծ չէ[22]. թէ որ ինձ հալածեցին, ապա ձեզ էլ կըհալածեն. թէ որ իմ խօսքըս պահեցին՝ ապա ձերըն էլ կըպահեն[23]։

21 Բայց էն (բաներըն) կանեն ձեզ իմ անունիս համար[24], ինչու որ

[3] Կող. ա. 23։ ա Ցովհ. բ. 6։ [4] Յովհ. ժգ. 8։ Փիլիպ. ա. 11։ գ. 13։ Գործ. գ. 12։ [5] Պատմ. գ. 10։ է. 19։ [6] Ալայր. 16։ Ցովհ. ժդ. 13, 14։ ժզ. 23։ [7] Պատմ. է. 16։ Փիլիպ. ա. 11։ [8] Ցովհ. ը. 31։ ժդ. 35։ [9] Ցովհ. ժդ. 15, 21, 23։ [10] Ցովհ. ժզ. 24։ ժէ. 13։ ա Ցովհ. ա. 4։ [11] Ցովհ. ժգ. 34։ ա Թես. գ. 9։ ա Պետր. գ. 8։ ա Ցովհ. գ. 11։ գ. 21։ [12] Ցովհ. ժ. 11, 15։ Հռոմ. է. 7. 8։ Եփես. է. 2։ ա Ցովհ. գ. 16։ [13] Պատմ. ժը. 50։ Ցովհ. ժդ. 15. 23։ [14] Ղուկ. ժը. 17։ Ցովհ. ժէ. 26։ Գործ. ի. 27։ [15] Ցովհ. զ. 71։ ժդ. 18։ ա Ցովհ. գ. 10, 19։ [16] Պատմ. իը. 19։ Պատ. ժզ. 15։ Կող. ա. 6։ [17] Եբր. 7։ Ցովհ. ժգ. 13։ [18] Եբր. 12։ [19] ա Ցովհ. գ. 1, 13։ [20] ա Ցովհ. գ. 5։ [21] Ցովհ. ժէ. 14։ [22] Պատմ. ժ. 24։ Ղուկ. զ. 40։ Ցովհ. ժգ. 16։ [23] Եսթ. գ. 7։ [24] Պատմ. ժ. 22։ իգ. 9։ Ցովհ. ժզ. 3։

*չըճանաչեցին նորան՝ որ ինձ ուղարկեց։*

22 *Թէ որ ես չէի եկել՝ եւ նորանց հետ խօսացել, նորանք մեղք չէին ունենալ*[25]*. բայց հիմիկ իսկի պատճառ չունին իրանց մեղաց համար*[26]։

23 *Ով որ ինձ է ատում՝ իմ Հօրն էլ ատում*[27]։

24 *Թէ որ էն գործքերըն՝ չէի գործել նորանց միջումն, որ մին ուրիշ մարդ չըգործեց, նորանք իսկի մեղք չունէին. բայց հիմիկ տեսին՝ եւ ատեցին ինձ՝ եւ իմ Հօրըս*[28]։

25 *Բայց որ էն բանն կատարվի՝ որ նորանց օրէնքումն գրված է. Թէ զուր տեղն ատեցին ինձ*[29]։

26 *Բայց երբոր միխիթարիչն կըգայ՝ որ նորան ես Հօրիցն կուղարկեմ ձեզ, Ճշմարտութեան Հոգին*[30]*, որ Հօրիցն է դուրս գալիս, նա կըվկայէ ինձ համար*[31]։

27 *Էս դուք (էլ) կըվկայէք*[32]*, ինչու որ՝ սկըզբիցն ինձ հետ էք*[33]։

## ԳԼ. · ԺԶ.

1 Քրիստոս Սուրբ Հոգւոյ խոստմունքովն, եւ իրան յարութիւն առնելոյ եւ երկինք համբառնալոյ յայտնի աշակերտներն իրանց քարոզութիւններին համար կըմխիթարէ։ 23 Կըհաստատէ Թէ ինչ որ իրան Հօրիցն խնդրումն իրան անունովն էն նորանց կըտայ։ 33 Քրիստոսի հետ խաղաղութիւն եւ աշխարհքումն նեղութիւն պիտի ունենանք։

1 *Էս խօսեցի ձեզ հետ, որ չըգայթակղվիք*[1]։

2 *Իրանց ժողովարաններիցն ձեզ դուրս կըհանեն*[2]*. բայց ժամանակ կըգայ՝ որ ամէն ով որ սպանէ ձեզ, կըկարծէ Թէ Աստուծոյ պաշտօն է մատուցանում*[3]։

3 *Էս էն կանեն ձեզ վերայ. ինչու որ՝ ոչ Հօրըն ճանաչեցին՝ եւ ոչ ինձ*[4]։

4 *Բայց էս էլ խօսեցի ձեզ հետ, որ երբոր ժամանակն կըգայ՝ մտքներըդ թևրիք, Թէ ես ասացի ձեզ*[5]։

5 *Էս բանըս սկըզբումն չասացի ձեզ*[6]*. պատճառն որ՝ ես ձեզ հետ էի. բայց հիմիկ ես ինձ ուղարկողն մեռան եմ գնում. եւ ձեզանից իսկի մինն չի հարցնում ինձ, Թէ ուր ես գնում*[7]։

6 *Բայց որովհետեւ էս խօսեցի ձեզ հետ, տրտմութիւնն լցրուց ձեր սրտերըն*[8]։

7 *Բայց ես ճշմարիտն ասում եմ ձեզ՝ Թէ լաւ է ձեզ համար, որ ես գնամ. ինչու որ՝ եթէ ես չըգնամ, միխիթարիչն չի գալ ձեզ մոտ*[9]*. բայց*

---

[25] Ցվհ. Թ. 41։ [26] Հռովմ. ա. 20։ Ցոհ. դ. 17։ [27] ա Ցվհ. բ. 33։ [28] Ցվհ. գ. 2։ ե. 31։ Թ. 33։ [29] Կաղմ. լե. 19։ կԹ. 4։ [30] Ղուկ. իգ. 49։ Ցվհ. ժգ. 17, 26։ ժզ. 7, 13։ Գործ. բ. 33։ [31] ա Ցվհ. ե. 6։ [32] Ղուկ. իգ. 48։ Գործ. ա. 8, 21, 22։ բ. 32։ գ. 15։ դ. 20, 33։ ե. 32։ ժ. 39։ ժգ. 31։ ա Պետր. ե. 1։ բ Պետր. ա. 16։ [33] Ղուկ. ա. 2։ ա Ցվհ. ա. 1, 2։ [1] Մատթ. ժա. 6։ իգ. 10։ իզ. 31։ [2] Ցվհ. Թ. 22, 34։ ժբ. 42։ [3] Գործ. է. 59։ Թ. 1։ իզ. 9, 10, 11։ [4] Ցվհ. ժե. 21։ Հռովմ. ժ. 2։ ա Կորնթ. բ. 8։ ա Տիմ. ա. 13։ [5] Ցվհ. ժգ. 19։ ժգ. 29։ [6] Մատթ. Թ. 15։ [7] Վեր. 10, 16։ է. 33։ ժգ. 3։ ժգ. 28։ [8] Վեր. 22։ Ցվհ. ժգ. 1։ [9] Ցվհ. է. 39։ ժգ. 16, 26։ ժե. 26։

թէ որ գնամ, նորան կուղարկեմ ձեզ մօտ[10]։

8 Եւ նա երբոր կըգայ աշխարհքին կըյանդիմանէ, մեղաց համար, եւ արդարութեան համար, եւ դատաստանի համար։

9 Մեղաց համար՝ որ ինձ չեն հաւատում[11]։

10 Արդարութեան համար[12] որ ես իմ հօր մօտն եմ գնում, եւ էլ ինձ չէք տեսնիլ[13]։

11 Դատաստանի համար[14] որ էս աշխարհքիս իշխանն դատապարտված է[15]։

12 Իշ շատ բան ունիմ որ ձեզ ասեմ, բայց հիմիկ չէք կարօղ տանել[16]։

13 Երբոր նա՝ ճշմարտութեան հոգին կըգայ[17], նա ձեզ ամէն ճըշմարտութենով կառաչնորդէ[18]. պատճառն որ՝ չէ թէ իրան անձնիշխ մին բան կըխօսի, բայց ինչ որ կըլսէ՝ էն կըխօսի, եւ նոր գալու բաները կըպատմէ ձեզ։

14 Նա ինձ կըփառաւորէ, ինչու որ՝ իմ բաներիցն կառնէ եւ կըպատմէ ձեզ։

15 Ամէն ինչ որ Հայրն ունի՝ իմն է. նրա համար ասացի ձեզ, թէ իմ բաներիցն կառնէ եւ կըպատմէ ձեզ[19]։

16 Մինչիւ ժամանակ էլ, եւ էլ չէք տեսնիլ ինձ. եւ յետոյ մին քիչ էլ, եւ կըտեսնէք ինձ[20]. եւ ես հօր մօտն եմ գնում[21]։

17 Աշակերտներիցն մին քանիսն իրար ասումէին. էս ի՞նչ է որ ասում մեզ. թէ մին քիչ ժամանակ՝ եւ էլ չէք տեսնիլ ինձ, եւ մինել՝ մին քիչ էլ, եւ կըտեսնէք ինձ, եւ թէ ես իմ հօրս մօտն եմ գնում։

18 Եւ ասումէին. ի՞նչ է էն մին քիչ ժամանակն. չենք գիտում՝ թէ ինչ է խօսում։

19 Յիսուս իմացաւ՝ թէ ուզումէին հարցնել իրան եւ ասաց նորանց. դրահամար հարցնումէք իրար միջումն, որ ասացի՝ թէ մինքիչ ժամանակ, եւ չէք տեսնիլ ինձ, եւ մինել՝ մինքիչ էլ, եւ կըտեսնէք ինձ։

20 Ճշմարիտն ճշմարիտն ասում եմ ձեզ, որ դուք լաց կըլինէք եւ կըողբաք, եւ աշխարհքն կուրախանայ. դուք կըտրտմիք, բայց ձեր տրտմութիւնն ուրախութիւն կըլինի։

21 Մին կին, երբոր ծնի՝ տըրտմութիւն քաշում նորան, ինչու որ՝ նորա ժամանակն հասել է. բայց երբոր երեխան ծնվում, էն նեղութիւնն չի յիշում էն ուրախութեան համար՝ որ մին մարդ ծնվաւ աշխարհքի մէջ[22]։

22 Եւ դուք հիմիկ տրտմութիւն ունիք[23], բայց մինել կըտեսնեմ ձեզ, եւ ձեր սրտերն ուրախ կըլինեն. եւ ձեր ուրախութիւնըն իսկի մինն չի Հանիլ ձեզանից[24]։

23 Եւ էն օրումն իսկի մին բան չէք հարցնիլ ինձ. ճշմարիտն ճըշմարիտն ասում եմ ձեզ՝ թէ ինչ որ իմ հօրից խնդրէք իմ անունովս,

[10] Գործ· ը· 33։ Եփես· դ· 8։ [11] Գործ· բ· 22, 37։ [12] Յով· բ· 32։ [13] Ցովհ· գ· 14։ ե· 32։ [14] Գործ· իզ· 18։ [15] Ղուկ· ժ· 18։ Ցովհ· ժբ· 31։ Եփես· բ· 2։ Կող· բ· 15։ Եբր· բ· 14։ [16] Մարկ· դ· 33։ ա Կորնթ· դ· 3։ Եբր· ե· 12։ [17] Ցովհ· ժգ· 17։ ժե· 26։ [18] Ցովհ· ժգ· 26։ ա Ցովհ· բ· 30. 27։ [19] Մարկ· ժա· 27։ Ցովհ· գ· 35։ ժգ· 3։ ժէ· 10։ [20] Վեր· 10։ Ցովհ· է· 33։ ժգ· 33։ ժզ· 19։ [21] Վար· 28։ Ցովհ· ժգ· 3։ [22] Նոյ· իզ· 17։ [23] Վեր· 6։ [24] Ղուկ· իզ· 41, 52. Ցովհ· ժգ· 1, 27։ ի· 20։ Գործ· բ· 46։ ժգ· 52։ ա Պետր· ա· 8։

էն կըտայ ձեզ[25]։

24 Մինչեւ հիմիկ՝ իմ անունովս, խնդրեցիք իմ անունովս, խնդրեցէք եւ կառնէք, որ ձեր ուրախութիւնն կատարեալ լինի[26]։

25 Ես բանըս առակով խօսեցի ձեզ հետ։ Ժամանակ կըգայ, երբոր էլ ա՛ռակով չեմ խօսիլ ձեզ հետ, բայց յայտնի կըպատմեմ ձեզ հօր համար։

26 Ն օրումն իմ անունովս կըխնդրէք, եւ չեմ ասում ձեզ՝ թէ ես ձեզ համար կաղաչեմ հօրըն[27]։

27 Ինչու որ՝ հենց հայրն ինքն սիրում ձեզ[28], ինչու որ դուք ինձ սիրեցիք եւ հաւատացիք, թէ ես Աստուածանից դուրս եկի[29]։

28 Հօրից դուրս եկի՝ եւ եկի աշխարհ, միս էլ աշխարհըն թողում եմ եւ հօր մտնում եմ գնում[30]։

29 Աշակերտներն նորան ասացին, ա՛խ հիմիկ յայտնի ես խօսում, եւ իսկի միս առակ չես ասում։

30 Հիմիկ գիտումենք՝ որ դու ամեն բան գիտես[31]. եւ իսկի պէտք չէ՝ որ մինն հարցնէ քեզ, սրանով հաւատումենք՝ թէ դու Աստուածանից դուրս եկիր[32]։

31 Յիսուս պատասխան տուաւ նորանց եւ ասաց, հիմիկ հաւատո՞ւմք։

32 Ա՛խ ժամանակ կըգայ, եւ հենց հիմիկ եկած է[33], որ ամէն մէկդ կըցրուվիք իրան տեղն, եւ ինձ մենակ կըթողէք[34]. եւ մենակ չեմ[35], ինչու որ հայրն ինձ հետ է։

33 Ես խօսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղութիւն ունենաք[36]. էստեղ աշխարհումն նեղութիւն կունենաք[37], բայց սրտապինդ կացէք[38], ինչու որ ես աշխարհըն յաղթեցի[39]։

## ԳԼ · ԺԱ

1 Յիսուս իրան Հօրն կաղօթէ որ նորան փառաւորէ, 11 Եւ իրան աշակերտներն սուրբ պահէ որ մին լինին, 17 Որ նորանց սուրբ անէ իրան ճշմարտութենովն, 20 Նորանց եւ ամեն ուրիշ հաւատացեալներին համար աղաչում։ 24 Որ նորանք մին լինին եւ իրան հետ երկնքում լինին։

1 Երբոր Յիսուս էս խօսեց՝ իրան աչքերըն բարձրացրուց դէպի երկինքն եւ ասաց, Հայր՝ ժամն (սահմանն) հասել է, փառաւորիր քո որդդ որ քո որդին էլ քեզ փառաւորէ[1]։

2 Ինչպէս որ նորան իշխանութիւն տուիր ամէն մարմնոյ վերայ, որ յաւիտենական կեանքն տայ էն ամենին[2] որ տուիր նորան[3]։

3 Ես է յաւիտենական կեանքն[4], որ քեզ միայն ճշմարիտ Աստուած ճանաչեն[5], եւ նորան, որ ուղարկեցիր Յիսուսին Քրիստոսին[6]։

---

[25] Մատթ. է. 7։ Ցովհ. ժգ. 13։ ԺԷ. 16։ [26] Ցովհ. ԺԷ. 11։ [27] Վ Եր. 23։ [28] Ցովհ. ժգ. 21, 23։ [29] Վ.այր. 30։ Ցովհ. գ. 13։ ԺԷ. 8։ [30] Ցովհ. ժգ. 3։ [31] Ցովհ. իա. 17։ [32] Վ Եր. 27։ Ցովհ. ԺԷ. 8։ [33] Մատթ. իզ. 31։ Մարկ. ժգ. 27։ [34] Ցովհ. ի. 10։ [35] Ցովհ. ը. 29, ժգ. 10, 11։ [36] Եսայ. Թ. 6։ Ցովհ. ժգ. 27։ Հռովմ. է. 1։ Եփես. բ. 14։ Կող. ա. 20։ [37] Ցովհ ԺԷ. 19, 20, 21։ ր Ցեփ. գ. 12։ [38] Ցովհ. ժգ. 1։ [39] Հռովմ. ը. 37։ ա Ցովհ. գ. 4։ է. 4։ [1] Ցովհ. ԺԲ. 23։ ժգ. 32։ [2] Դան. է. 14։ Մատթ. ԺԱ. 27։ իը. 18։ Ցովհ. գ. 35։ է. 27։ ա Կորնթ. ԺԵ. 25, 27։ Փիլիպ. բ. 10։ Եբր. բ. 8։ [3] Վ.այր. 6, 9, 24։ Ցովհ. գ. 37։ [4] Եսայ. ծգ. 11։ Երեմ. Թ. 24։ [5] ա Կորնթ. ը. 4։ ա Թես. ա. 9։ [6] Ցովհ. գ. 34։ է. 36, 37։ ը. 29, 58։ է. 29։ Ժ. 36։ ԺԱ. 42։

4 Այս քեզ փառաւորեցի երկրի վերայ[7]. Էն գործըն կատարեցի[8], որ տուիր ինձ՝ որ անեմ[9]։

5 Այժ հիմիկ Հայր՝ փառաւորիր ինձ քեզ մօտ էն փառքովն՝ որ նորան աշխարհքի լինելուցն առաջ ունէի քեզ մօտ[10]։

6 Յայտնեցի էն մարդկանց[11] որ աշխարհքիցն տուիր ինձ[12]. քո էին, եւ ինձ տուիր նոքանց. եւ քո խօսքըդ պահեցին։

7 Հիմիկ իմացան՝ որ էն ամէն բանն՝ որ ինձ տուիր՝ քեզանից է.

8 Ինչու որ՝ էն խօսքըն՝ որ ինձ տուիր՝ (ես) նորանց տուի[13]. եւ նորանք ընդունեցին, եւ ճշմարտութեամբ իմացան՝ որ քեզանից դուրս եկի[14]. եւ հաւատացին՝ թէ դու ուղարկեցիր ինձ։

9 Ուրեմն ես նորանց համար եմ աղաչում, եւ աշխարհքի համար չեմ աղաչում. բայց նորանց համար՝ որ ինձ տուիր, ինչու որ՝ քո էին[15]։

10 Եւ ինչ որ իմն է՝ էն ամէնն քո է. եւ ինչ որ քո է՝ էն իմն է[16]. եւ ես փառաւորված եմ նորանցում։

11 Եւ ես էլ աշխարհքում չեմ, եւ նորանք աշխարհքում են, եւ ես քեզ մօտ եմ գալիս[17]. ով Հայր սուրբ՝ պահիր նորանց քո անունովդ[18], որ նորանով տուիր ինձ. որ մին լինին[19], ինչպէս որ մենք էլ մին ենք[20]։

12 Երբ քանի որ աշխարհքում նորանց հետ էի, ես էի պահում նոքանց քո անունովդ, նորանց որ տըւիր ինձ, էլ պահեցի[21]. եւ նորանցից մինն չկորաւ[22], բայց միայն կորուստի որդին[23], որ գիրքն կատարվի[24]։

13 Այժ հիմիկ քեզ մօտ եմ գալիս. եւ էս բանըս աշխարհքում խօսումեմ, որ իմ ուրախութիւնըս լիութեամբ ունենան իրանց անձնեբումն։

14 Այս քո խօսքըդ նորանց տուի[25], եւ աշխարհքս նորանց ատեց, պատճառն որ՝ աշխարհքիցս չեն[26], ինչպէս որ ես էլ աշխարհքիցս չեմ[27]։

15 Չս չեմ աղաչում, որ աշխարհքիցս վեր առնես նորանց. բայց որ չարիցն պահես նորանց[28]։

16 Չս աշխարհքիցս չեն, ինչպէս որ ես էլ աշխարհքիցս չեմ[29]։

17 Սրբացն սուրբ արա քո ճշմարտութեամբդ[30]. ինչու որ՝ քո խօսքդ ճշմարտութիւն է[31]։

18 Ինչպէս որ ինձ ուղարկեցիր աշխարհք, ես էլ նորանց ուղարկեցի աշխարհք[32]։

19 Եւ ես նորանց վերայ իմ անձս սուրբ եմ անում, որ նորանք էլ ճշմարտութեամբ սրբված լինին[33]։

20 Այժ ոչ թէ միայն նորանց համար եմ աղաչում, այլ ամէնին համար էլ՝ որ նորանց խօսքովն կը-

[7] Ցուղ. ժգ. 31։ ժդ. 13։ [8] Ցուղ. դ. 34։ ե. 36։ թ. 3։ ժթ. 30։ [9] Ցուղ. ժգ. 31։ ժե. 10։ [10] Ցուղ. ա. 1, 2։ ժ. 30։ ժդ. 9։ Փիլիպ. բ. 6։ Կող. ա. 15, 17։ Եբր. ա. 3, 10։ [11] Վեր. 26։ Յովհ. իբ. 22։ [12] Վեր. 2։ Վեր. 9, 11։ Ցուղ. զ. 37, 39։ ժ. 29։ ժե. 19։ [13] Ցուղ. ը. 28։ ժբ. 49։ ժդ. 10։ [14] Վեր. 25։ Ցուղ. ժզ. 27, 30։ [15] ա Ցուղ. բ. 19։ [16] Ցուղ. ժզ. 15։ [17] Ցուղ. ժգ. 1։ ժզ. 28։ [18] ա Պետր. ա. 5։ Ցուբ. 1։ [19] Վեր. 21, Եփես.։ [20] Ցուղ. ժ. 30։ [21] Ցուղ. զ. 39։ ժ. 28։ Եբր. բ. 13։ [22] Ցուղ. ժը. 9։ ա Ցուղ. բ. 19։ [23] Ցուղ. զ. 71։ ժգ. 18։ [24] Յովհ. ձիթ. 8։ Գործ. ա. 20։ [25] Վեր. 8։ [26] Ցուղ. ժե. 18, 19։ ա Ցուղ. գ. 13։ [27] Ցուղ. ը. 23։ Վեր. 16։ [28] Մատթ. զ. 13։ Գաղ. ա. 4։ բ Թես. գ. 3։ ա Ցուղ. ե. 18։ [29] Վեր. 14։ [30] Ցուղ. ժե. 3։ Գործ. ժե. 9։ Եփես. ե. 26։ ա Պետր. ա. 22։ [31] բ Թագ. է. 28։ Յովհ. ձիթ. 142, 151։ Ցուղ. ը. 40։ [32] Ցուղ. ի. 21։ [33] ա Կորնթ. ա. 2, 30։ ա Թես. գ. 7։ Եբր. ժ. 10։

հաւատան ինձ։

21 Որ ամէնքն մին լինին, ինչպէս որ[34] դու Հայր ինձանում՝ եւ ես քեզանում, որ նորանք էլ մեզա-նում լինին[35]. որ աշխարհքն հաւատայ՝ թէ դու ուղարկեցիր ինձ։

22 Եւ ես՝ էն փառքըն՝ որ ինձ տուիր՝ նորանց տուի, որ մին լինին՝ ինչպէս որ մենք էլ մին ենք[36]։

23 Ես նորանցում՝ եւ դու ինձա-նում, որ մինի մէջ կատարեալ լի-նին[37]. եւ աշխարհքն գիտենայ՝ թէ դու ուղարկեցիր ինձ. եւ ես սի-րեցի նորանց՝ ինչպէս որ դու ինձ սիրեցիր։

24 Հայր՝ նորանք՝ որ դու ինձ տա-ւիր[38], կամենում եմ՝ որ ինչտեղ որ ես եմ, նորանք էլ ինձ հետ լինին, որ իմ փառքս տեսնին, որ տուիր ինձ. ինչու որ՝ աշխարհքի լինելուցն առաջ սիրեցիր ինձ[39]։

25 Արդար Հայր՝ աշխարհքն չը-ճանաչեց քեզ[40]. բայց ես ճանա-չեցի քեզ[41], եւ սորանք ճանաչեցին, որ դու ուղարկեցիր ինձ[42]։

26 Եւ քո անունըդ ճանաչացրի նորանց, եւ կրճանաչացնեմ[43]. որ էն սէրն, որ ինձ սիրեցիր՝ նորան-ցում լինի, եւ ես էլ նորանցում[44]։

## ԳԼ · ԺԲ

1 Ցուդան Իսուսին կըմատնէ։ 6 Պատասուրներն գետնի վերայ կըզարկվին։ 10 Պետ-րոս Մազքսի ականջըն կըկարէ։ 12 Կըբռնեն Իսուսին եւ կըտանին Աննայի մօտ։ 15 Պետրոսի ուրանալն։ 19 Իսուսին Քահանայապետի առաջեւ դատելն։ 28 Պիղա-տոսի առաջին երան վերայ էլած չարախօսութիւնն։ 36 Իրան Թագաւորութիւնն։ 40 Հրէաներն աղաղակումն որ Բաբարբան նորանց արձակվի։

1 Իսուս երբոր էս ասաց, ա-շակերտներին հետ դուրս գնաց[1] կեդրոնի ձորի մէկել կողմն, որտեղ որ պարտեզ (պօդպան) կար[2]. որ նո-րա մէջ մտաւ ինքն եւ իրան աշա-կերտներն։

2 Ցուդա էլ՝ որ պիտի մատնէր նորան, գիտէր մէր էնտեղն. ինչու որ՝ Իսուս շատ անգամ ժողովվել էր էնտեղն աշակերտներին հետ[3]։

3 Ես յուդան զինուորների դունդըն (ջօ-ոլքն) եւ քահանա-յապետներից եւ փարիսեցիներից սպասաւորներ առաւ իրան հետ, եւ եկաւ էնտեղ ջահերով եւ լապտեր-ներով (ֆանուսներով) եւ զէնքեր-ով[4]։

4 Յայց Իսուս երբոր տեսաւ էն ամէնըն, որ իրան վերայ էր եկել, դուրս եկաւ եւ նորանց ասաց. ո՞ւմ էք ուզում։

5 Պատասխան տուին նորան թէ՝ Իսուս Նազորեցուն. Իսուս նո-րանց ասաց. ես եմ. յուդան էլ՝ որ նորան մատնում էր՝ կանգնած էր նո-րանց հետ։

[34] Աէբ· 11։ Ա յայր· 22, 23։ Ցուն· յ· 16։ Հռոմ· յր· 5։ Գաղ· գ· 28։ [35] Ցուն· յ· 38։ յգ· 11։ [36] Ցուն· յգ· 20։ ա Ցուն· ա· 3։ գ· 24։ [37] Կող· գ· 14։ [38] Ցուն· յր· 26։ յգ· 3։ ա Թես· գ· 16։ [39] Աէբ· 5։ [40] Ցուն· յհ· 12։ յգ· 3։ [41] Ցուն· է· 29։ ը· 55։ յ· 15։ [42] Աէբ· 8։ Ցուն· յգ· 27։ [43] Աէբ· 6։ Ցուն· յհ· 15։ [44] Ցուն· յհ· 9։ [1] Ա յոան· իգ· 36։ Ա յոան· յգ· 33։ Գաղ· իր· 39։ [2] Բ Թագ· յհ· 23։ [3] Գաղ· իա· 37։ իբ· 39։ [4] Ա յոան· իգ· 47։ Ա յոան· յգ· 43։ Գաղ· իբ· 47։ Գործ· ա· 16։

6 Յորոր (Յիսուս) ասաց Թէ ես եմ, (նորանք) յետ գնացին, եւ գետնի վերայ զարկվեցան։

7 Ո՞ւնել հարցուց նորանց՝ Թէ ո՞ւմ կը ուզուիս. եւ նորանք ասացին. Յիսուս Նազորեցին։

8 Յիսուս նորանց պատասխան տուաւ. ձեզ ասացի Թէ ես եմ. ուրեմն Թէ որ ինձ կը ուզուիս. Թող տուէք զորանց, որ գնան։

9 Որ կատարվին էն բանն՝ որ ասաց, Թէ նորանց՝ որ ինձ տուեր, նոքանցից իսկի մինըն էլ չեմ կորցնել[5]։

10 Ապա սիմէն պետրոն՝ որովհետեւ սուր ունէր՝ քաշեց էն եւ քահանայապետի ծառային զարկեց, եւ նորա ակ ականջն կտրեց. եւ էն ծառայի անունն մալքոս էր[6]։

11 Յիսուս պետրոսին ասաց. սուրը դարձրուր քեզի իրան պատեանքի (պանի) մէջն. էն բաժակըն (խառնը) որ իմ Հայրս տուաւ ինձ, էն չըխմե՞մ[7]։

12 Ապա զինուորների գունդըն (պետ-կոն) եւ հազարապետն եւ հրէաների սպասաւորներն բռնեցին Յիսուսին, եւ կապեցին.

13 Եւ տարան նորան[8] առնայի մօտ, որ կայիափայի աներն էր. որ էն տարվան քահանայապետն էր[9]։

14 Այս էն կայիափան էր, որ հրէաներին խրատ տուաւ՝ Թէ լաւ է, մին մարդ մեռնի ժողովրդի վերայ[10]։

15 Եւ սիմէն պետրոն եւ մի ևս աշակերտն գնում էին Յիսուսի ետեւէն. էն աշակերտն որովհետեւ ճանաչ էր քահանայապետին, Յիսուսի հետ մտաւ քահանայապետի սրահն[11]։

16 Եւ պետրոն դուռն մօտ կանգնած էր դուրսն[12]. էն մի ևս աշակերտն, որ քահանայապետին ճանաչ էր, դուրս եկաւ եւ դռնապանին ասաց, եւ պետրոսին ներս մտցրուց։

17 Էն աղջիկն՝ որ դռնապան էր՝ պետրոսին ասաց. միԹե դու էլ էն մարդոյ աշակերտներից ես. եւ նա ասաց՝ Թէ չեմ։

18 Ծառաներն եւ սպասաւորներն կանգնած էին, կրակը վառած, ինչու որ՝ ցուրտ էր՝ եւ տաքանում էին. պետրոն էլ նորանց հետ կանգնած էր եւ տաքանում էր։

19 Եւ քահանայապետն Յիսուսին հարցրուց (իրան) աշակերտների համար՝ եւ իրան վարդապետութեան համար։

20 Յիսուս պատասխան տուաւ նորան. ես յայտնի խօսեցի աշխարհքի մէջն[13]. ես ամէն ժամանակ սովորցրի ժողովարանում, եւ հինց տաճարում, որտեղ որ ամէն հրէաներն ժողովված էին, եւ խիւի մին ծածուկ բան չըխօսեցի։

21 Ինչու՞ ես ինձ հարցնում. նոքանց հարցրուր՝ որ լսեցին, Թէ ինչ խօսեցի նորանց հետ. ահա նորանք գիտուն՞ ինչ որ խօսեցի։

22 Յորոր նա ես ասաց, սպասաւորներից մինն, որ էնտեղ կանգնած էր, Յիսուսին ապտակ (աչլե) տուաւ՝ եւ ասաց[14]. Էդպէս ես պատասխան տալիս քահանայապետին։

---

[5] Ցում. ժե. 12։ [6] Մատ. իգ. 51։ Մարկ. ժգ. 47։ Ղուկ. իբ. 49, 50։ [7] Մատ. ի. 22։ իզ. 39, 42։ [8] Մատ. իզ. 57։ [9] Ղուկ. գ. 2։ [10] Ցում. ժա. 50։ [11] Մատ. իզ. 58։ Մարկ. ժգ. 54։ Ղուկ. իբ. 54։ [12] Մատ. իզ. 69։ Մարկ. ժգ. 66։ Ղուկ. իբ. 54։ [13] Մատ. իշ. 55։ Ղուկ. գ. 15։ Ցում. ե. 14, 26, 28։ ը. 2։ [14] Երե. ի. 2։ Գործ. իգ. 3։

23 Եւ Յիսուս նորան ասաց. Թէ որ չար բան խօսեցի՝ վկայիր էն չարին համար, բայց թէ որ բարի (ա-սացի), ինչո՞ւ ես զարհուրմ ինձ:

24 Եւ անտա նորան կապած ուղարկեց կայիափա քահանայապետի մօտն[15]:

25 Եւ սիմոն պետրոսն էնտեղ կանդնած էր՝ եւ տաքանումէր. նորան ասացին[16], միթէ դո՛ւ էլ նորա աշակերտներիցն ես. նա ուրացաւ եւ ասաց՝ Թէ չեմ:

26 Եւ քահանայապետի ծառաներիցն մինն՝ որ աղգական էր նորան, որ պետրոս նորա ականջն կարեց, ասաց. չէ՞ որ հինց ես տեսի քեզ էն պարտէզումն (պօռտէզումն) նորա հետ:

27 Պետրոսն միեղ ուրացաւ. եւ շուտով հաւն հօսեց[17]:

28 Եւ Յիսուսին կայիափայի տանից տարան դատարանի պալատն[18]. եւ առաւօտ էր. եւ նորանք չըմտին պալատի մէջն, որ չըպղծվին, բայց որ զատիկըն ուտեն[19]:

29 Պիղատոս դուրս եկաւ նորանց մօտ եւ ասաց. էն մարդոյ համար ի՞նչ չարախօսութիւն էք անում:

30 Պատասխան տուին եւ նորան ասացին. Թէ որ էն մարդն չարագործ չըլինէր, ապա նորան չէինք մատնել քեզ:

31 Պիղատոս նորանց ասաց. դուք առէք նորան, եւ ձեր օրէնքին պէս դատեցէք. հրէաներն նորան ասացին. մեզ արժան չէ որ մին (մարդ) սպանենք:

32 Որ Յիսուսի խօսքն կատարվի՝ որ ասաց, ցոյց տալով՝ Թէ ի՞նչ մահով պիտի մեռնի[20]:

33 Պիղատոս միեղ մտաւ պալատն, Յիսուսին կանչեց՝ եւ նորան ասաց. դո՛ւ ես հրէաների թագաւորն[21]:

34 Յիսուս պատասխան տուաւ. քեզանից ես ասում էդ, Թէ ուրիշներն ասացին քեզ ինձ համար:

35 Պիղատոս պատասխան տուաւ. միթէ ես հրէայ եմ. քո ազգդ եւ քահանայապետներն քեզ մատնեցին ինձ, դու ի՞նչ բան ես արել:

36 Յիսուս պատասխան տուաւ[22]. իմ թագաւորութիւնս էս աշխարհքիցս չէ[23]. Թէ որ իմ թագաւորութիւնս էս աշխարհքիցս լինէր, ապա իմ ծառաներս կռիւ կանէին՝ որ չըմատնվիմ հրէաների ձեռքըն. բայց հիմիկ իմ թագաւորութիւնս էտեղից չէ:

37 Պիղատոս ասաց նորան. ապա Թէ որ էդպէս է, դու մին թագաւոր ես. Յիսուս պատասխան տուաւ. դու ես ասում՝ որ ես թագաւոր եմ. բայց ես հինց դրա համար եմ ծնված, եւ հինց դրա համար եմ եկել աշխարհք, որ ճշմարտութեանն վըկայեմ. ամէն՝ ով որ ճշմարտութենից էն՝ իմ խօսքիս լսում[24]:

38 Պիղատոս նորան ասաց. ի՞նչ է ճշմարտութիւն. երբոր էս ասաց, միեղ դուրս գնաց հրէաների մօտ եւ նորանց ասաց. ես իսկի մին պատճառ չեմ գտնում նորանում[25]:

39 Բայց ձեր սովորութիւն է՝ որ

[15] Մատթ. իզ. 57: [16] Մատթ. իզ. 69. 71: Մարկ. ժդ. 69: Ղուկ. իբ. 58: [17] Մատթ. իզ. 74: Մարկ. ժդ. 72: Ղուկ. իբ. 60: Ցուկ. ժդ. 38: [18] Մատթ. իե. 2: Մարկ. ժե. 1: Ղուկ. իգ. 1: Գործ. գ. 13: Մատթ. իե. 27: [19] Գործ. ժ. 28: ժա. 3: [20] Մատթ. ի. 19: Ցուկ. ժբ. 33. 33: [21] Մատթ. իե. 11: [22] ա Տիմ. զ. 13: [23] Դան. բ. 44: է. 14: Ղուկ. ժբ. 14: Ցուկ. զ. 15: ը. 15: [24] Ցուկ. ը. 47: ա Ցուկ. գ. 19: գ. 6. [25] Մատթ. իե. 24: Ղուկ. իգ. 4: Ցուկ. ժԲ. 4. 6:

պատկի ժամանակումն մին մարդ առ-
ձակեմ ձեզ Համար. ուրուհն կամե-
նուիք՝ որ հրէանների թագաւորըն
արձակեմ ձեզ Համար[26]:

40 Ամենքն աղաղակեցին՝ եւ ա-
սումէին[27]. դորան չէ, այլ բարաբ-
բային. եւ էն բարաբբան (մին) ա-
ւազակ էր[28]:

## ԳԼ· ԺԹ·

1 Յիսուսի ծեծվելին, փշերով պսակվելին եւ ապտակվելին: 4 Պիղատոս կամենուէ որ Նորան արձակէ, բայց Հրէաների աղաղակին Համար Նորանց ձեռքն կըտայ որ խաչ Հան-վի: 23 Նորա կապային վերայ վճակ կըդցին: 26 Իրան Մայրն Յովհաննէսի կըդցէ: 30 Կըմեռնի: 34 Նորա կողըն կըխոցեն: 38 Յոսէփն եւ Նիկոդիմոսն Նորան կըմ ազնն:

1 Էն ժամանակն պիղատոս Յի-
սուսին առաւ եւ ծեծեց[1]:

2 Եւ զինուորներն փշերից մին
պսակ շինեցին, Նորան գլուխն դրին,
եւ ծիրանի շոր Հագցրին Նորան:

3 Եւ գալիս էին Նորա մօտ, եւ
ասում. ողջ կաց Հրէից թագաւոր.
եւ ապտակներ (պէշկեներ) էին տա-
լիս Նորան:

4 Պիղատոս միւսըւ դուրս գնաց
եւ Նորանց ասաց. ահա Նորան դուրս
եմ բերում ձեզ մօտ, որ գիտենաք
թէ՝ ես իսկի մին պատճառ չեմ գտնում
Նորանում[2]:

5 Յիսուս դուրս եկաւ փշըե-
րից պսակ ունէր, եւ ծիրանի Հա-
գուստ. եւ Նորանց ասաց. ահա էդ
մարդ ձեր առաջիվ:

6 Երբոր քահանայապետներն եւ
սպասաւորներն Նորան տեսին, աղա-
ղակեցին՝ եւ ասացին[3]. խաչ Հանիր
դորան. պիղատոս Նորանց ասաց.
ձեզ մօտ առէք դորան, եւ Հնոց
ձեզանից խաչ Հանեցէք. ինչու որ
ես իսկի պատճառ չեմ գտնում դորա-
նում:

7 Հրէաներն պատասխան տուին
Նորան. մենք օրէնք ունինք, եւ մեր
օրէնքին պէս պէտք է մեռնի[4]. ինչու
որ՝ իրան անձին Աստուծոյ որդի ա-
րաւ[5]:

8 Երբոր պիղատոս էս բանս լը-
սեց, էլ աւելի վախեցաւ:

9 Մինէլ մտաւ պալատի մէջ, եւ
Յիսուսին ասաց. դու ի՞նչ տեղից
ես. եւ Յիսուս պատասխան չըտուաւ
Նորան[6]:

10 Պիղատոս ասաց Նորան. ինձ
Հետ չե՞ս խօսում. միթէ չես գի-
տում, որ իշխանութիւն ունիմ քեզ
խաչ Հանելոյ, եւ իշխանութիւն ու-
նիմ քեզ արձակելոյ:

11 Յիսուս պատասխան տուաւ.
դու իշխանութիւն չունէիր ինձ վե-
րայ, թէ որ վերուիցն չէր տրվված
քեզ[7]. նրաՀամար՝ նա որ ինձ մատ-
նեց քեզ, Նորա մեղքն (աւելի) մեծ
է:

12 Եւ Նրանիցետեւ պիղատոս ու-
զումէր՝ որ Նորան արձակէ. եւ Հր-
էաներն աղաղակումէին եւ ասում.
թէ որ դորան արձակես՝ կայսերի
բարեկամ չես[8]. ամեն ով որ իրան
անձըն թագաւոր է կոչում, նա
կայսերին Հակառակ է[9]:

13 Պիղատոս երբոր էս բաներըս

[26] Մատթ. իե· 15: Մարկ. իժ· 6: Ղուկ. իգ· 17: [27] Գործ· գ· 14: [28] Ղուկ. իգ· 19: [1] Մատթ. կ· 19: իե· 26: Մարկ. իժ· 15: Ղուկ. իժ· 33: [2] Ցաքե. իժ· 38: Մատթ· 6: [3] Գործ· գ· 13: [4] Ղեւտ. իգ· 16: [5] Մատթ. իզ· 65: Ցաքե. ե· 18: իժ· 33: [6] Եսայ. նգ· 7: Մատթ. իե· 12, 14: [7] Ղուկ. իբ· 53: Ցաքե. է· 30: [8] Ղուկ. իգ· 2: [9] Գործ· իե· 7·

լսեց, Յիսուսին դուրս ելեալ, եւ ետես վերայ նմանց, ետուն՝ որ քարայատակ էր կոչվում, եւ երթայ հեցերէն կապպաթա:

14 Օրական ուրբաթն էր՝ իբր վեց ժամն (առաւօտն) էր, եւ հրէաներին ասաց. ահա ձեր թագաւորն ձեր ա-ռաջին (է)[10]:

15 Իւ նորանք աղաղակումեին, մեզանից վեր առ, մեզանից վեր առ՝ եւ խաչ հանիր դորան. պիղատոս նորանց ասաց. ես ձեր թագաւորըն խաչ հանեմ. քահանայապետներն պատասխան տուին. մենք թագաւոր չունինք կայսերից զատ (առ)[11]:

16 Յն ժամանակն նորան տուաւ նորանց ձեռքն, որ խաչ հանվի[12]:

17 Իւ նորանք առին տարան նո-րան. եւ խաչափայտն ինքն էր վեր-կալել[13], եւ գուրս էր գնում էն տե-ղըն՝ որ գագաթան էր ասվում, եւ երբայեցերէն գողգոթա էր կոչ-վում[14]:

18 Իտեղ խաչ հանեցին նորան. եւ նորա հետ երկու ուրիշ մարդ էլ նորա էս կողմն եւ էն կողմն, եւ Յի-սուսին մէջ տեղն:

19 Պիղատոս էլ մին տախտակ գրեց, եւ խաչի վերայ դրաւ. եւ գրած էր. Յիսուս նազորեցի՝ թա-գաւոր հրէից[15]:

20 Յն տախտակըն հրէաներից շատ մարդիք կարդացին. ինչու որ՝ քաղաքին մոտ էր էտեղն՝ որ Յի-սուս խաչվեցաւ. եւ էն գրված էր երբայեցերէն, յատներէն եւ յու-նարէն (գրով):

21 Հրէաների քահանայապետ-նէրն ասացին պիղատոսին. մի գրեր թագաւոր հրէից, այլ թէ նա ասաց՝ թէ թագաւոր եմ հրէից:

22 Պիղատոս պատասխան տուաւ. ինչ որ գրեցի՝ գրեցի:

23 Այդ զինուորներն երբոր Յի-սուսին խաչ հանեցին, նորա շորե-րըն առին՝ եւ չորս բաժին արին, ամէն մէկ զինուորի համար մին բա-ժին[16]. բայց կապան՝ որովհետեւ ա-ռանց կարի էր՝ վերեւիցն (մինչեւ յատն) բոլորն մին հիւսված.

24 Իրար ասացին. գորան չըպա-տառնենք, բայց վիճակ քցենք գորա վերայ՝ ումի որ գուրս գայ. որ գիրքն կատարվի, որ ասում է. թէկ իմ շո-րերըս իրանց մէջ բաժանեցին եւ իմ կապայիս վերայ վիճակ քցեցին[17]. զինուորներն էն բանըն արին:

25 Իւ Յիսուսի խաչին մոտ կանգ-նած էին նորա մայրն[18], եւ նորա մօր քոյրն Մարիամ կղէոպասն[19] եւ Մա-րիամ Մագդաղենացին:

26 Յիսուս երբոր տեսաւ իրան մօրըն եւ էն աշակերտին՝ որ սիրու-մէր[20], որ մօտիկ կանգնած էր, մօրն ասաց. ով կին՝ ահա քո որդի[21]:

27 Յետոյ աշակերտին ասաց. ահա քո մայրդ. եւ էն ժամանակից՝ էն աշակերտն իրան մոտ առաւ նորան[22]:

28 Արանից յետոյ երբոր Յիսուս գիտաց, թէ ամէն բան կատարված է, որ գիրքն կատարվի՝ ասաց. ծա-րաւ եմ[23]:

29 Իւ էնտեղ մին աման կար քա-ցախով լիքն. եւ նորանք մին սպունգ (սէնդէկ) լցրին քացախով լեղդ էետ՝ եւ զոպայի մշտիկի (ջընջիկ) վե-րայ պատած նորա բերանին մօտացը-րին[24]:

[10] Մարկ. իե. 62: [11] Ցաննդ. խթ. 10: [12] Մարկ. իե. 26, 31: Մարկ. ժե. 15: Ղուկ. իգ. 24: [13] Մարկ. իե. 31, 33: Մարկ. ժե. 21, 22: Ղուկ. իգ. 26, 33: [14] Թուոց. ժե. 36: Եբեր. ժգ. 12: [15] Մարկ. իե. 37: Մարկ. ժե. 26: Ղուկ. իգ. 38: [16] Մարկ. իե. 35: Մարկ. ժե. 24: Ղուկ. իգ. 34: [17] Սաղմ. իը. 18: [18] Մարկ. իե. 55: Մարկ. ժե. 40: Ղուկ. իգ. 49: [19] Ղուկ. իգ. 18: [20] Ցովհ. ժգ. 23: ի. 2: իա. 7, 20, 24: [21] Ցովհ. բ. 4: [22] Ցովհ. ա. 11: ժգ. 32: [23] Սաղմ. կհ. 21: [24] Մարկ. իե. 48:

30 Երբոր Յիսուս էն քացախըն լեզու հետ առաւ՝ ասաց. ամէն բան կատարված է[25]. եւ գլուխըն խոնարհացուց եւ հոգին աւանդեց:

31 Ախց հրէաներն՝ որովհետեւ ուրբաթի օրն էր[26], որ մարմիններն չըմնան խաչի վերայ մինչեւ շաբաթի օրն, ինչու որ՝ էն շաբաթի օրն մեծ էր[27]. պիղատոսին աղաչեցին, որ նոքանց ծընկներըն ջարդեն. եւ վեր առնըվին:

32 Ո՛րինուորներն եկին եւ առաջինի ծընկներըն ջարդեցին, էնպէս էլ մէկէլին՝ որ նորա հետ խաչված էր:

33 Ախց երբոր Յիսուսի մօտ եկին եւ տեսին, որ նա մեռած էր, նորա ծընկներըն չըջարդեցին:

34 Ախց զինուորներից մին դեղարդով (նըզակով) նորա կողըն խոցեց. եւ շուտով արիւն եւ ջուր դուրս եկաւ[28]:

35 Ո՛ր նա որ էն տեսաւ՝ վկայեց. եւ վկայութիւնն ճշմարիտ է. եւ նա գիտուէ թէ ճշմարիտըն է ասում՝ որ դուք էլ հաւատաք:

36 Ո՛յս էլաւ՝ որ գիրքն կատարվի, թէ նորա ոսկորն չըպիտի փշըրվի[29]:

37 Ո՛ւ մինէլ ուրիշ գիրք ասում է, թէ մեկ կըտան նորան՝ որ խոցեցին[30]:

38 Արանից ետեւ պիղատոսին աղաչեց Յոսէփն, որ արիմաթեայիցի էր[31] հրէաների վախից ծածուկ աշակերտ (էլած) Յիսուսին, որ Յիսուսի մարմինըն վեր առնէ[32]. եւ պիղատոս հրաման տուաւ. եւ ապա եկաւ եւ վերկալաւ նորան:

39 Նիկոդիմոսն էլ եկաւ՝ որ առաջ Յիսուսի մօտ էր եկել գիշերուսին[33]. եւ զմուռս հալուէի հետ խառնած բերաւ՝ հարիւր լըտրի չափ:

40 Յիսուսի մարմինըն առին, եւ էն խըտկերին հետ կտաւներով պատեցին, ինչպէս որ հրէաների օրէնք էր պատել[34]:

41 Ո՛ւ էն տեղումն, որ խաչվեցաւ՝ մին պարտէզ (պօսպան) կար, եւ էն պարտէզումն մին նոր գերեզման, որ նորանում իսկի մին ժամանակ մին մարդ չէր դրված:

42 Ո՛նտեղն դրին Յիսուսին[35] հրէաների ուրբաթին համար. պատճառն որ՝ գերեզմանն մօտ էր[36]:

## ԳԼ· Ի

Մարիամ գերեզմանն կըղնայ, 3 Պետրոս եւ Յօհաննէսն էլ Քրիստոսի Յարութիւն առնելն չըգիտելով էն տէղ կըղնան: 11 Յիսուս Մարիամ Մագդալենացուին, 19 Երեքան աշակերտներին կերեւանայ: 24 Թոմասի անհաւատութիւնն եւ դատապարտութիւնն: 30 Սուրբ Գիրքն էգրան գրվեցաւ որ հաւատան թէ Յիսուս է Քրիստոսն. եւ յաւիտենական կեանքն ընդունին:

1 Ո՛ւ մէկ շաբթի օրումն Մարիամ Մագդալենացին առաւօտանց լուսանալոյ ժամանակումն եկաւ գերեզմանն, եւ տեսաւ որ քարն գերեզմանի դրունից վերէր առած[1]:

2 Ըպա վազից եւ եկաւ սիմոն պետրոսի մօտն եւ մէկէլ աշակերտի մօտն՝ որ Յիսուս սիրուէր նորան[2],

---

[25] Յովհ. ԺԹ. 4։ [26] Վ.Բ. 42։ Մարկ. ԺԵ. 42։ [27] ա Օրին. իա. 23։ [28] ա Յովհ. է. 6, 8։ [29] Ելք. ժը. 46։ Թուա. թ. 12։ Սաղմ. կդ. 20։ [3] Սաղմ. խը. 16, 17։ Զաք. ժը. 10։ Յայտ. ա, 7։ [31] Մատթ. իե. 57։ Մարկ. ԺԵ. 42։ Ղուկ. իգ. 50։ [32] Յովհ. թ. 22։ ժը. 42։ [33] Յովհ. գ. 1, 2։ է. 50։ [34] Գործ. է. 6։ [35] Եսայ. ծգ. 9։ [36] Վէր. 31։ [1] Մատթ. իը. 1։ Մարկ. ժգ. 1։ Ղուկ. իգ. 1։ [2] Յովհ. ԺԳ. 23։ ժԹ. 26։ իա. 7, 20, 24։

եւ ասաց նորանից. Տէրին վերառին էն գերեզմանիցն, եւ չենք գիտում՝ թէ որտեղ դրին նորան:

3 Պետրոս եկաւ պետրոսն եւ մեկել աշակերտն՝ եւ գալիս էին գերեզմանն[3]:

4 Երկուքն միասեղ վազում էին. եւ մեկել աշակերտն շուտով անցկացաւ պետրոսից, եւ առաջ եկաւ գերեզմանն:

5 Նա վեր խոնարհված տեսաւ՝ որ կտաւներն հնտեղ կային[4], բայց ներս չմտաւ:

6 Սիմոն պետրոսն էլ եկաւ՝ որ նորա ետեւէն գալիս էր, եւ մտաւ գերեզմանի մէջն, եւ կտաւներն տեսաւ՝ որ էն տեղ կային:

7 Նա վարշամակն[5]՝ որ նորա գլխունն էր՝ ուրիշ կտաւներին հետ չէրկար, բայց ջոկ ծալած մեկ կողմն դրած էր:

8 Էն ժամանակն մեկել աշակերտն էլ ներս մտաւ, նա որ առաջ գերեզմանն էր եկել, տեսաւ եւ հաւատաց:

9 Մինչեւ որ դեռ չէին գիտում գրքերըն՝ թէ պէտք է որ նա մեռնէր ների միջիցն յարութիւն առնէ[6]:

10 Պատ աշակերտներն միսել գընացին իրար մտան:

11 Բայց Մարիամն գերեզմանի դուրն կանգնած էր՝ եւ լաց էր լինում. եւ լաց լինելով ժամանակն խոնարհվեցաւ (մտիկ տուաւ) գերեզմանի մէջ[7]:

12 Նա երկու հրեշտակ տեսաւ սպիտակ շորերով, որ նստած էին, մինն գլխի կողմն՝ եւ մեկէն ոտների կողմն, որտեղ որ Յիսուսի մարմինն կար:

13 Նա նորանք ասացին նորան. ովկին՝ ինչու լաց ես լինում. նորանց ասաց. նրահամար՝ որ իմ Տէրիս վեր առին էս գերեզմանիցս, եւ չեմ գիտում՝ թէ որտեղ դրին նորան:

14 Երբոր էս ասաց, դարձաւ իրան յետին կողմն, եւ Յիսուսին տեսաւ՝ որ կանգնած էր[8]. եւ չէր գիտում՝ թէ Յիսուսն է[9]:

15 Յիսուս նորան ասաց. կին դու՝ ինչու ես լաց լինում, ո՞ւմ ես մտնգալիս. նորան էնպէս երեւեցաւ՝ թէ նա պարտէզպանն (պօսպանճին) է, նորան ասաց. Տէր՝ թէ որ դու վերառիր նորան՝ ասա ինձ՝ որտեղ ես դրել նորան, որ ես վերառնեմ նորան:

16 Յիսուս նորան ասաց. Մարիամ. եւ նա յետ դարձաւ, եւ նորան ասաց՝ եբրայեցերէն. բաբբունի, որ կըթարգմանվի՝ վարդապետ:

17 Յիսուս նորան ասաց. մի մատնար ինձ, ինչու որ՝ դեռ չեմ վեր էլել իմ Հօր մտան. բայց դու գնայ իմ եղբայրներիս մտա[10], եւ նորանց ասա. ես վեր եմ էլում իմ Հօր մտա՝ եւ ձեր Հօր մտա[11], իմ Աստուծոյ մտա՝ եւ ձեր Աստուծոյ մտա[12]:

18 Մարիամ Մագդալենացին եկաւ՝ եւ աշակերտներին պատմեց, թէ նա տեսաւ Տէրին, եւ էս բանըս իրան ասաց[13]:

19 Նա մեկ շաբթի օրումն, երբոր իրիկուն էր՝ եւ դռներն փակված, էն տեղն որ աշակերտներն ժողովված էին հրէաների վախից, Յիսուս ե-

[3] Ղուկ. իդ. 12: [4] Յովհ. ժէ. 40: [5] Յովհ. ժա. 44: [6] Մատ. ժզ. 10: Գործ. բ. 25–31: Ժզ. 34. 35: [7] Մարկ. ժզ. 5: [8] Մատթ. իբ. 9: Մարկ. ժզ. 9: [9] Ղուկ. իդ. 16. 31: Յովհ. իա. 4: [10] Սղմ. իբ. 22: Մատթ. իբ. 10: Հռովմ. ը. 29: Եբր. բ. 11: [11] Յովհ. ժզ. 28: [12] Եփես. ա. 17: [13] Մատթ. իբ. 10: Ղուկ. իդ. 10:

կաւ՝ եւ նորանց միջումն կանդնեց, եւ նորանց ասաց. ողջոյն ձեզ[14]:

20 Երբոր էս ասաց՝ իրան ձեռնե-ըին եւ իրան կողըն ցոյց տուաւ նո-րանց. եւ աշակերտներն ուրախա-ցան՝ երբոր Տէրին տեսին[15]:

21 Մինեղ ասաց նորանց. ողջոյն ձեզ. ինչպէս որ իմ Հայրս ինձ ու-ղարկեց, ես էլ ձեզ եմ ուղար-կում[16]:

22 Էս երբոր էս ասաց՝ փչեց դէպի նորանց եւ ասաց. առէք սուրբ Հոգին:

23 Թէ որ մինի մեղքըն թողէք՝ թողված կըլինի նորանց. թէ որ մինին բռնէք՝ բռնըված կըլինի[17]:

24 Բայց Թովման տասներկուսից միննՙ երկուորեակ (ջոխոպ) կոչ-վածն, նորանց հետ չէր՝ երբոր Յի-սուս եկաւ[18]:

25 Մէկել աշակերտներն ասու-մէին նորան, թէ Տէրին տեսինք. եւ նա ասաց նորանց, թէ որ նորա ձեռ-ներումն բեւեռների (խամարդէր) նշանըն չըտեսնեմ, եւ իմ մատներս չըդնեմ բեւեռների տեղն, եւ իմ ձեռներըս չըմտցնեմ նորա կողն՝ չեմ հաւատալ:

26 Էս ութ օրից հետու աշակերտ-ներն միննէլ ներսումն էին, եւ Թո-մասն (էլ) նորանց հետ. Յիսուս դըռներըն փակված լինելով՝ եկաւ եւ նորանց միջումն կանդնեց եւ ա-սաց. ողջոյն ձեզ:

27 Յետոյ Թովմասին ասաց. բեր քո մատներըդ եւ էստեղ դիր, եւ իմ ձեռներըս տես, եւ քո ձեռնե-րըդ բեր՝ եւ իմ կողս մտցրուռ, եւ մի լինիր անհաւատ՝ այլ հաւատա-ցեալ[19]:

28 Թովմասն պատասխան տուաւ եւ նորան ասաց. իմ Տէրս եւ իմ Աստուածս:

29 Յիսուս նորան ասաց. էդ որ տեսիր ինձ՝ հաւատացիր. երանի նո-րանց՝ որ չեն տեսել եւ հաւատու-մեն[20]:

30 Յիսուս ուրիշ էլ շատ նշաններ արաւ իրան աշակերտների առաջին՝ որ չեն գրված էս գիրքումս[21]:

31 Բայց էս էնքան գրվեցաւ՝ որ հաւատաք[22], թէ Յիսուս է Քրիս-տոսն Աստուծոյ որդին. եւ որ հա-ւատաք, եւ յաւիտենական կեանքըն ընդունիք նորա անունովն[23]:

## ԳԼՈՒԽ

1 Քրիստոս մինէլ իրան աշակերտներին երեւանալով չաւ ձուկըն բռնել տալոյ հրաշ-քովն իրան անձըն կըճանաչացնէ: 13 Նորանց հետ հաց կուտէ: 15 Պետրոսի պատուէր կըտայ որ իրան գառներըն եւ ոչխարներըն արածացնէ: 18 Նորա մեռնելոյ կերպն ա-ռաջօրէ իմաց կըտայ նորան: 22 Նորա յՀովհաննէսի համար ինչ պիտի լինի հարցնելն կը-տասանէ: 25 Վերջի խօսքն:

1 Ետանից հետու Յիսուս միննէլ իրան անձըն յայտնեց իրան աշա-կերտներին տիբերիայ ծովի եզերին (ղեռաղինա) մնա. եւ էս կերպովս յայտ-նեց:

2 Մինտեղ էին՝ սիմէն պետրոսն, եւ Թովմասն երկուորեակ (ջոխոպ) անուանվածն, եւ Նաթանայէլին[1] որ գալիլեացոց կանայիցն էր, եւ զեբե-դիայի որդիքներն, եւ էն աշակերտ-

[14] Մարկ. ժզ. 14: Ղուկ. խդ. 36: ա Կորնթ. ժե. 5: [15] Յովհ. ժզ. 22: [16] Մատթ. իը. 18: Յովհ. ժե. 18, 19: Եբեր. գ. 1: բ Տիմոթ. 2: [17] Մատթ. ժգ. 19: ժը. 18: [18] Յովհ. ժա. 16: [19] ա Յովհ. ա. 1: [20] բ Կորնթ. ե. 7: ա Պետր. ա. 8: [21] Յովհ. խա. 25: [22] Ղուկ. ա. 4: [23] Յովհ. գ. 15, 16: ե. 24: ա Պետր. ա. 9: [1] Յովհ. ա. 45:

ներին ուրիշ երկու հոգի էլ[2]։

3 Սիմոն պետրոս նորանց ասաց. Ես գնում եմ ձուկը բռնելու. նորան ասացին. Մենք էլ կըգանք քեզ հետ. գնացին եւ մտին նաւն, եւ էն գիշերն իսկի բան չըբռնեցին։

4 Երբոր առաւօտ էլաւ՝ Յիսուս ծովի եզրումն (ղեպուռն) կանգնած էր, բայց աշակերտներն չըճանաչեցին[3], թէ Յիսուսն է։

5 Յիսուս նորանց ասաց. Մանուկներ՝ իսկի ուտելու բան ունէք[4]. պատասխան տուին եւ նորան ասացին. Չէ։

6 Նորանց ասաց. ուղիներն (թօռըն) աջի կողմն քցեցէք, եւ կըգտնէք. նորանք քցեցին, եւ էլ չէին կարում քաշել՝ ձկներուն շատութեան պատճառովն[5]։

7 Էն աշակերտն՝ որ Յիսուս սիրում էր նորան[6] պետրոսին ասաց. Նա Տէրն է. սիմոն պետրոսն երբոր լսեց՝ թէ Տէրն է, շորըն իրան վերայ առաւ, ինչու որ՝ մերկ էր, եւ ինքն իրան քցեց ծովի մէջն։

8 Էս մեկել աշակերտներն նաւակին էին գալիս. ինչու որ՝ ցամաքիցն հեռու չէին. բայց երկու հարիւր գաղի չափ (էր), եւ ուտկանըն (ըօռըն) ձկներովն քաշում էին։

9 Երբոր գետս եկին ցամաքն, տեսին անծուխի կրակ վառած, եւ նորա վերայ մին ձուկ եւ հաց։

10 Յիսուս նորանց ասաց. բերէք ինձ էդ ձկներիցն՝ որ դուք հիմիկ բռնեցիք։

11 Սիմոն պետրոսն մտաւ եւ ուտկանըն քաշումէր գետի ցամաքն՝ մեծ մեծ ձկներով լիքն, հարիւր յիսուն եւ երեք հատ. եւ էնքան բան կար՝ եւ գործքն չըպատառվեցաւ։

12 Յիսուս նորանց ասաց. եկէք ճաշ կերէք[7]. եւ աշակերտներիցն ոչ ով չէր համարձակվում հարցնել՝ թէ դու ո՞վ ես. ինչու որ՝ գիտեին թէ Տէրն է։

13 Յիսուս եկաւ՝ եւ հացըն առաւ՝ եւ նորանց տուաւ, եւ էնպէս էլ ձուկըն։

14 Էս երեք անգամն Յիսուս աշակերտներին երեւեցաւ, մեռելների միջիցն յարութիւն առնելուցն ետեւ[8]։

15 Էն երբոր ճաշըն կերին, Յիսուս ասաց սիմոն պետրոսին. սիմոն յովնանի (որդի) գոթանցից աւելի սիրումես ինձ. նորան ասաց. Հա Տէր, դու էլ գիտումես՝ որ քեզ սիրում եմ. նորան ասաց. արածացրու իմ գառնիկները։

16 Էնհել ասաց նորան. սիմոն յովնանի (որդի) սիրումես ինձ. նորան ասաց. Հա Տէր՝ դու էլ գիտումես՝ որ քեզ սիրում եմ. նորան ասաց. արածացրու իմ ոչխարները[9]։

17 Էնհել երեք անգամն ասաց նորան. սիմոն յովնանի (որդի՛) սիրումես ինձ. պետրոսն տրտմեցաւ. որովհետեւ երեք անգամ նորան ասաց՝ թէ սիրումես ինձ. եւ նորան ասաց. Տէր՝ դու ամէն բան գիտումես, եւ ամէն բան ճանաչումես[10], եւ որ սիրումեմ քեզ. Յիսուս նորան ասաց. արածացրու իմ ոչխարները։

18 Շշմարիտըն ճշմարիտըն ասում եմ քեզ, թէ դեռ քանի որ տղայ

[2] Ա՛ռաք. գ. 21։ [3] Ցուկ. ք. 14։ [4] Դ՛ատ. իգ. 41։ [5] Դ՛ատ. ե. 4, 6, 7։ [6] Ցուկ. ժգ. 23։ ք. 2։ [7] Գործ. ժ. 41։ [8] Ցուկ. ք. 19, 26։ [9] Գործ. ք. 28։ Եբր. ժգ. 30։ ա Պետր. բ. 25։ ե. 2, 4։ [10] Ցուկ. բ. 24, 25։ ժգ. 30։

էիր՝ ինքդ քո գօտիկըդ կապումէիր՝ եւ որ տեղ որ ուզումէիր՝ գնումէիր. եւ երբոր կըծերանաս, ձեռներըդ վերկառնես. եւ ուրիշներն գօտիկ կըկապեն քեզ, եւ կըտանեն՝ որ տեղ որ չես ուզիլ[11]:

19 Յս ասաց՝ ցոյց տալով թէ նա ինչ մահով պիտի փառաւորէ Աստուծոյն. եւ էս երբոր ասաց, նոյան ասաց. իմ հետեւէս ե՛կ[12]:

20 Պետրոսն յետ դարձաւ՝ եւ տեսաւ էն աշակերտին, որ Յիսուս սիրումէր[13] նոյան, որ հետեւէն գալիս էր, նա՝ որ էլ նորա լանջքինին (պոչին) ընկաւ եւ ասաց. Տէր՝ ո՞վ է նա՝ որ քեզ պիտի մատնէ:

21 Պետրոսն երբոր տեսաւ նոյան, Յիսուսին ասաց. Տէր՝ ապա սա ի՞նչ (կը լինի):

22 Յիսուս նոյան ասաց. Թէ որ կամենումեմ, որ դա կենայ, մինչեւ որ ես գամ. դու ի՞նչ հոգս ունիս, դու իմ հետեւէս ե՛կ[14]:

23 Յս էս բանս դուրս եկաւ եղբայրների միջումն՝ եւ կարծեցին Թէ էն աշակերտն չմեռնիլ. եւ Յիսուս չասաց նորան՝ Թէ չի մեռնիլ. բայց Թէ՝ որ կամենումեմ որ դա կենայ մինչեւ որ ես գամ, (դու ի՞նչ հոգս ունիս):

24 Յս աշակերտս է, որ էս բանիս համար վկայումէ. որ էլ էս բաներըս գրեց, եւ գիտումենք որ նորա վկայութիւնըն ճշմարիտ է[15]:

25 Այլ ուրիշ էլ շատ բաներ կան[16]՝ որ Յիսուս արաւ, որ եթէ նորանք մին մին գրված լինէին, կարծումեմ Թէ աշխարհքս էլ բաւական չէր լինիլ էն գրքերըն տանելոյ, Թէ որ գրված լինէին[17]:

[11] Ցհ. ժգ. 36: Գործ. ժբ. 3, 4: [12] բ Պետր. ա. 14: [13] Ցհ. ժգ. 23, 25: ի. 2: [14] Մատթ. ժզ. 27, 28: իե. 31: ա Կորնթ. դ. 5: ժա. 26: Ցայտ. բ. 25: պ. 11: իբ. 7, 20: [15] Ցհ. ժէ. 35: գ Ցհ. 12: [16] Ցհ. ի. 30: [17] Ա՛մէն. է. 10:

## ՎԷՀԱՆ ՍՐԲՈՑ ԵՒՍՏԵՐԸՆԵՑ

# ԴՈՐՆՕՐ

## ԸՕԵՐԵԼՈՑ

### ԴԱՄԻՈ ԸՆԹԱՑԻԿ

1 Քրիստոս առաքեալներին իրան վերառնալն տեսնելոյ համար Հրեից տարին կրասա-նի, եւ պատուէր կուտայ նոցանց որ Երուսաղէմի միջոցին Սուրբ Հոգին գալուն սպասեն՝ որ մին քանի օրից ուղարկելոյ խոսք կուտայ. որ նորա զօրութենովին նորանք մինչեւ երկրի ծայրերն Քրիստոսի համար վկաներ լինին: 9 Իրան վերառնուցին վերջին երկու հրեշտակներ նորանց խրատ կուտան որ էն տեղուցն գնան, եւ նորանց աւետիք կուտան Քրիստոսի մինէլ գալուն համար: 12 Նորանք էլ անտ կդառնան, եւ միշտ աղօթք անելով Ցուդայի տեղ Մատաթիասին առաքեալ կընտրեն:

1 ԶՈՒԱՆՑԻՆ ԽՕՍՈՒՐԸՆ
առի՝ ով Թէոփիլէ[1] ամէն բանի հասմար, որ Յիսուս սկսաց անել եւ սովրցնել:

2 Մինչեւ էն օրն՝ որ սուրբ Հոգով ձեռնէն պատուէր տուաւ առաքեալներին[2], (նորանց)՝ որ ընտրեց, եւ վերացաւ[3]:

3 Որ իրան չարչարանքին ետեւ իրան կենդանի կանգնացուց նորանց առաջին՝ շատ հրաշքներով՝ որ քառասուն օր երեւեցաւ նորանց՝ եւ Աստուծոյ արքայութեան համար խօսեց[4]:

4 Եւ նորանց հետ հացով հաղրդվելոյ ժամանակն, պատուէր էր տալիս նորանց՝ որ Երուսաղէմից չըհեռանան[5], բայց սպասեն Հոր աւետիքին՝ որ (ասաց) ինձանից լսեցիք[6]:

5 Ինչու որ՝ Յոհաննէսն ջրով մկրտեց[7], բայց դուք սուրբ Հոգուվնէ կըմկրտվիք[8], ոչ թէ շատ օրերից ետեւ:

6 Եւ նորանք մօտ եկին հարցնուցին նորան՝ եւ ասումէին. Տէր[9] միթէ հիմիկ էս ժամանակումն պիտի հասցնես իսրայէլի թագաւորութիւնըն[10]:

7 Աստ նորանց. ձեզ (պէտք) չէ որ գիտենաք ժամերըն (սահմանները-

[1] Գործ. ա. 3: [2] Մարկ. ժգ. 19: Գործ. թ. 51: իգ. 51: Վարդ. 9: ա Տիմ. գ. 16: [3] Մարկ. իը. 19: Մարկ. ժգ. 15: Ցուկ. ի. 21: Գործ. ժ. 41, 42: [4] Մարկ. ժգ. 14: Գործ. իգ. 36: Ցուկ. ի. 19, 26: իա. 1, 14: ա Կորնթ. ժե. 5: [5] Գործ. իգ. 43, 49: [6] Գործ. իգ. 49: Ցուկ. ժգ. 16, 26, 27: ժե. 26: ժզ. 7: Գործ. ը. 33: [7] Մարկ. գ. 11: Գործ. ժա. 16: ԺԹ. 4: [8] Ցուկ. գ. 18: Գործ. ը. 4: ժա. 15: [9] Մարկ. իգ. 3: [10] Եսայ. ա. 26: Դան. է. 27: Ամոս. Թ. 11:

եւ ժամանակներըն, որ Հայրն իրան իշխանութեանն դրաւ (պահեց)[11]։

8 Ասաց երբոր Հոգին ձեզ վերայ կըՀասնի[12], զօրութիւն կառնէք[13]. եւ ինձ վկայ կըլինիք երուսաղէմացիք եւ ամէն Հրէաստանի եւ սամարիայի մէջն, մինչեւ երկրի ծայրերն[14]։

9 Եւ երբոր էս ասաց, դեռ քանի որ նորանք նայումէին[15] վերացաւ. եւ ամպն վերկալաւ նորան նորանց աչքերից[16]։

10 Եւ դեռ որ խիստ մտիկ տալով նայումէին նորա դէպի երկինքն գնացըն, եւ ահա երկու մարդիկ երեւեցան նորանց սպիտակ շորերով[17]։

11 Որ էլ ասացին. ով գալիլեացի մարդիք՝ ի՞նչ էք կանգնած եւ մտիկ էք տալիս դէպի երկինքն[18]. էս Յիսուսն՝ որ ձեզանից վերացաւ երկինքըն, Հենց էսպէս կըգայ՝ ինչպէս որ նորան տեսիք գնալ դէպի երկինքն[19]։

12 Ապա էն ձիթենեաց անուանված սարիցն յետ գարձան երուսաղէմ. որ մօտ էր երուսաղէմին՝ (մին) շաբաթ օրի ճանապարհի չափ[20]։

13 Եւ երբոր մտին, վերէլան վերնատունն՝ որտեղ որ բնակված էին[21], պետրոն եւ յակոբոն, յովհաննէսն եւ անդրէասն, փիլիպպոսն եւ թոմասն, բարթողիմէոսն եւ մատթէոսն[22], յակոբոս ալփեանն եւ շմաւօն նախանձայոյզն[23]՝ եւ յուդա յակոբեանն[24]։

14 Սորանք ամէնքն միշտ միաբան աղօթք էին անում[25] կանանց Հետ[26], եւ Յիսուսի մայր մարիամի՝ եւ նորա եղբարներին Հետ[27]։

15 Եւ էն օրերումն պետրոն վերկացաւ եղբարների մէջն՝ եւ ասաց. եւ էնտեղ Հարիւր եւ քսան Հոգինների չափ բազմութիւն կային[28]։

16 Մարդիք եղբարք՝ պէտք էր որ էն գրվածն կատարվէր. որ առաջուց ասաց սուրբ Հոգին դաւթի բերանովն Յուդայի Համար[29], որ Յիսուսի բռնողներին առաջնորդ էլաւ[30].

17 Պատճառն որ՝ նա մեզ Հետ մեր Համարումն էր[31]. եւ էս պաշտօնիս վիճակն՝ նորան (էլ) Հասած էր[32]։

18 Այ անիրաւութեան վարձքովն[33] մին գիւղ ստացաւ[34], եւ ուռաւ միջից ճղվեցաւ, եւ նորա ամէն փորըն դուրս թափվեցաւ։

19 Եւ յայտնի էլաւ ամէնին՝ որ երուսաղէմացի բնակված են. մինչեւ որ էն գիւղն անունն իրանց լեզուովն ակեղդամայ կոչվեցաւ. որ է ասել՝ արիւնի գիւղ։

20 Ինչու որ՝ սաղմոս գրքումն գրըված է՝ (թէ) նորա բնակութիւնն աւերակ (խարոպէ) պիտի լինի, եւ մինն էլ չըլինի՝ որ նորանում բնակվի[35]. եւ նորա կարգըն (մին) ուրիշն պիտի առնէ[36]։

21 Հիմի պէտք է՝ որ էս մարդ-

[11] Պօղ. իդ· 36։ Պօղ. ժգ· 32։ ա թես. ե· 1։ [12] Ղօղ. իդ· 49։ [13] Գործ. բ· 1, 4։ [14] Ղօղ. իդ· 48։ Ցախ. ժե· 27։ Ա՚յր· 23։ Գործ. բ· 32։ [15] Ղօղ. իդ· 51։ Ցախ. զ· 63։ [16] Ա՚կեր· 2։ [17] Պօղ. իը· 3։ Պօղ. ժզ· 5։ Ղօղ. իդ· 4։ Ցախ. ի· 12։ Գործ. ժ· 3, 30։ [18] Գործ. բ· 7։ ժգ· 31։ [19] Գաղ. է, 13։ Պօղ. իդ· 30։ Պօղ. ժգ· 26։ Ղօղ. իա· 27։ Ցախ. ժգ· 3։ ա թես. ա· 10։ գ· 16։ բ թես. ա· 10։ Ցայտ. ա· 7։ [20] Ղօղ. իդ· 52։ [21] Գործ. թ· 37, 39։ ի· 8։ [22] Պօղ. ժ· 2, 3, 4։ [23] Ղօղ. զ· 15։ [24] Ցախ. ա· 1։ [25] Գործ. բ· 1, 46։ [26] Ղօղ. իդ· 49, 55։ իդ· 10։ [27] Պօղ. ժգ· 55։ [28] Ցայտ. գ· 4։ [29] Սաղմ. իա· 9։ Ցախ. ժգ· 18։ [30] Ղօղ. իը· 47։ Ցախ. ժը· 3։ [31] Պօղ. ժ· 4։ Ղօղ. զ· 16։ [32] Ա՚յր· 25։ Գործ. ժբ· 25։ ի· 24։ իա· 19։ [33] Պօղ. իգ· 15։ բ պետր. բ· 15։ [34] Պօղ. իէ· 5, 7, 8։ [35] Սաղմ. կհ· 25։ [36] Սաղմ. ճվ· 8։

կանցիցս որ մեզ հետ եկիլ են Հնա-
մէն ժամանակն՝ որ Տէր Յիսուս
մեզ հետ ներս մտաւ եւ դուրս ելաւ.
22 Յովհաննէսի մկրտութենէն
սկսած մինչեւ հն օրն[37] որ մեզմէ
վերացաւ[38]. որ սորանցից միոն մեզ
հետ վկայ լինի նորա յարութեան[39]:
23 Եւ երկու (մարդ) կանգնացը-
րին. Յոսէփին՝ որ բարսաբա էին կո-
չուած, որ յուստոս անուանվեցաւ՝ եւ
մատաթիային[40]:
24 Եւ աղօթք անելով ասացին.
դուն Տէր՝ որ ամէնի սիրտըն գիտուս
ես՝ ես երկուսիցս միոն յայտնիր՝
որն որ ընտրեցիր[41]:
25 Որ հս պաշտօնիս՝ եւ առաքեալ
լինելոյ վիճակին առնէ, որ նորանից
յուդան վեր ընկաւ՝ որ գնայ իրան
տեղն[42]:
26 Եւ նորանց վերայ վիճակ քը-
ցեցին, եւ վիճակն ընկաւ մատաթիա-
յին վերայ, եւ նա տասնումին առա-
քեալներին հետ համարվեցաւ:

## ԳԼ · Բ

1 Առաքեալներին Սուրբ Հոգով լցվելըն եւ ուրիշ լեզուներով խօսելըն համար մին
քանի մարդիք կզպամանան, եւ մին քանիներն էլ ծաղր կանեն: 14 Պետրոս վեր կը-
կենայ եւ կհամառաւել նորանց թէ նորանք Սուրբ Հոգով զօրութենովն կխօսին, թէ
Յիսուս մեռելներից յարութիւն առած է, եւ երկինքն վերացած եւ էս Սուրբ Հոգին
ուղարկեց, եւ էն է մեսիան Աստուածանից նորանց ցոյց արվված մին մարդ զօրութե-
նով եւ նշաններով եւ հրաշքներով. եւ Աստուծոյ խորհրդովն եւ կանուխ դիտութե-
նովն փայտի վերայ սպանեցին: 37 Պետրոս զղջացողներից միոն չատ մարդիկ կքրիստ.
41 Որ նորանք միշտ առաքելոց վարդապետութեանն էին հետեւում. չատ հրաշքներ
գործվելն առաքելոց ձեռքովն, եւ ամէն օր եկեղեցոյն աւելնալն Տէրից:

1 Եւ երբոր պէնտէկոստէի օրը-
ըըն կատարվում էին[1], ամէնքն միա-
բան միոն տեղ էին[2]:
2 Եւ յանկարծակի երկնքից
սաստիկ ձայն էլաւ՝ սաստիկ քամու
պէս եկած. եւ լցուց (էն) ամէն
տունըն՝ որ նորանում նստած էին[3]:
3 Եւ երեւեցան նորանց՝ բա-
ժանված լեզուներ ինչպէս կրակից.
եւ նստեց նորանց ամէն մէկին վերայ:
4 Եւ ամէնքն սուրբ Հոգով լը-
ցվան[4], եւ սկսեցին ուրիշ լեզուներ-
լով խօսել՝ ինչպէս որ Հոգին նո-
րանց խօսել էր տալիս[5]:
5 Եւ երուսաղէմումն բնակված
էին հրէաներ (ջհուդաներ)՝ աս-
տուածավախ մարդիք՝ երկնքի տակ
քիս (էլած) ամէն ազգերից:
6 Եւ երբոր էս ձայնս էլաւ՝ բազ-
մութիւնն եկաւ միտեղ եւ կիսվե-
ցաւ. պատճառն որ՝ լսում էին նո-
րանց՝ որ ամէն մէկի լեզուներովն խօ-
սում էին:
7 Հանում էին ամէնքն եւ զար-

[37] Մարկ. ա. 1: [38] վէր. 9: [39] Ցուկ. ժէ. 27: վէր. 8: Գործ. գ. 33: [40] Գործ. ժէ. 22.
[41] ա Թագ. ժզ. 7: ա Մնաց. իը. 9: իմ. 17: Երէմ. ժա. 20: ժէ. 10: Գործ. ժէ. 8,
Ցայտ. բ. 23: [42] վէր. 17: [1] Գնաց. իզ. 15: բ Օրին. ժշ. 9: Գործ. ի. 16: [2] Գործ. ա. 14:
[3] Գործ. գ. 31: [4] Գործ. ա. 5: [5] Մարկ. ժզ. 17: Գործ. ժ. 46: ժզ. 6: ա Կորնթ.
ժբ. 10, 28, 30: ժգ. 1: ժգ. 2, Խոյնե:

մանում՝ եւ միւնն միւնին ասումէին. ահա չէ՞ որ սորանք ամէնքն՝ որ խոսումեն, գալիլեացի են[6]:

8 Եւ ի՞նչպէս (է՞) որ մենք ամէն մէկս մեր լեզուներովս լսումենք՝ որ ծնորանում ծնված ենք:

9 Պարթեւներ եւ մարք եւ ելամացիք, եւ ծորանք՝ որ բնակված են միջագետումն, Հրէաստանումն, եւ գամիրքումն, պոնտոսումն, եւ ասիայի մէջն:

10 փռւգիայի եւ պամփիլիայի մէջն, եգիպտոսումն, եւ լիբացոց չորս կողմերումն, ծորանք՝ որ կիւրենացոց հետ (են), եւ ծոր եկած հրոմայեցիքն:

11 Հրէաներ՝ եւ ծորանց մտ դարձածներ, կրետացիք եւ արաբացիք, լսումենք որ՝ ծորանք մեր լեզուներովս Աստուծոյ մեծամեծ բաներըն խոսումեն:

12 Հանուսին ամէնքն եւ զարմանում, եւ միւն միւնին ասումէին. ես ի՞նչ (բան) պիտի լինի:

13 Եւ կէսերն ծաղր անելով ասումէին, թէ (սորանք) քաղցուով (հնդոյով) հարբած են:

14 Պ երկացաւ պետրոս էն տասնումիւնին հետ՝ իրան ձայնըն բարձրացրուց՝ եւ ծորանց հետ խոսեց. ով հրէաստանցի մարդիք, եւ ամէնքդ որ բնակված էք երուսաղէմումն, ես ձեզ յայտնի լինի՝ եւ իմ խոսքերիս ականջ դրէք:

15 Զի թէ ինչպես որ դուք կարծումէք, թէ սորանք հարբած են, ինչու որ՝ դեռ օրիս երեք ժամն (սահմանն) է[7]:

16 Հապց ես է՝ որ յովել մարգարէի ձեռովն ասվեցաւ:

17 Եւ կը լինի սորանից ետեւ, յերումին օրերումն՝ Աստուած ասում[8], որ իմ հոգուցս կրեթափեմ ամէն մարմնոյ վերայ[9]. եւ ձեր որդիքներն, եւ ձեր աղջիկներն կրմարգարէանան[10]. եւ ձեր երիտասարդներն տեսիլքներ կրտեսանեն, եւ ձեր ծերերն երազներով երազ կրտեսնեն:

18 Եւ իմ ծառաներին վերայ՝ եւ իմ աղախիններին (աղջուշէրին) վերայ էն օրերումն իմ հոգուցս կրեթափեմ, եւ կրմարգարէանան[11]:

19 Եւ նշաններ կրտամ վերեւ երկնքումն, եւ նշաններ ներքեւ երկրումս, արիւն եւ կրակ եւ ծխի մրրիկ (քլքլոց)[12]:

20 Արեգակն խաւար կրդառնայ, եւ լուսինն արիւն՝ դեռ որ Տէրի մեծ եւ երեւելի օրն չեկած[13]:

21 Եւ կը լինի ամէն՝ ով որ Տէրի անունըն կրկանչէ՝ կապրի[14]:

22 Իմ իսրայէլացի մարդիք՝ ես բաներըս լսեցէք. Յիսուս նազորեցին՝ էն մարդըն՝ որ Աստուածանից ցոյց տրվված ձեզանում զօրութեամբ նով եւ նշաններով եւ հրաշքներով, որ Աստուած ծորանով արաւ ձեր միջումն[15]. ինչպէս որ հենց դուք էլ գիտումէք:

23 Նորան՝ որ Աստուծոյ սահմանված խորհրդովն եւ կանուխ գիտութեանովն մատնըվված էր[16] անօրէններ-

[6] Գործ. ա. 11: [7] Թագ. ե. 7: [8] Ծոյլ. խդ. 3: Եսայ. ժա. 19: լդ. 27: Ցաքեր. բ. 28, 29: Ջատ. ժգ. 10: Ցաքեր. է. 38: [9] Գործ. ժ. 45: [10] Գործ. ի. 9: [11] Գործ. ի. 4, 9, 10: ա Կորնթ. ժգ. 10, 28: ժգ. 1, Եփես: [12] Ցաքեր. ե. 30, 31: [13] Մատթ. իդ. 29: Մարկ. ժգ. 24: Ղուկ. ի. 25: [14] Հռոմ. ժ. 13: [15] Ցաքեր. գ. 2: ժգ. 10, 11: Գործ. ժ. 38: Եբր. բ. 4: [16] Մատթ. իզ. 24: Ղուկ. իբ. 22: իդ. 44: Գործ. գ. 18: գ. 28:

բի ձեռքովն, փայտի վերայ բևեռած սպանեցիք[17]։

24 Որ նորան Աստուած յարոյց մահի ցաւերըն լսափանելով[18]. ինչու որ՝ կարելի էջր, որ նա բռնըվի նորանից։

25 Ասենց դաւիթն էլ ասումէ նորա համար. առաջուց տեսնումէի Տէրըն ամէն ժամ (առիաղէ) իմ առաջիս[19]. ինչու որ՝ իմ աջ կողմն էր, որ չըսասպանիմ։

26 Սրահամար իմ սիրտս ուրախ էլաւ, եւ իմ լեզուս ցնծացաւ, եւ իմ մարմինս էլ յուսով կըբնակվի։

27 Պատճառն որ՝ իմ անձրս չես թողել դժոխքումն՝ եւ քո սրբոյն չես տալ ապականութիւն տեսնել։

28 Կեանքի ճանապարհներըն ճաւնաչացրիր ինձ. (եւ) քո երեսիդ ուրախութիւնովն լցրիր ինձ։

29 Սարդիք եղբայրք՝ պէտք է որ համարձակութիւնով ասեմ դաւիթ նահապետին համար[20]. թէ նա մեռաւ եւ թաղվեցաւ. եւ նորա գերեզմանն մինչեւ էս օր մեր միջումն կայ։

30 Որովհետեւ (նա) մարգարէ էր, եւ գիտումէր՝ որ Աստուած երդումով երդվաւ նորան, որ նորա փորի պտղին նորա աթոռին վերայ նստացնէ[21]։

31 Առաջուց իմացած խօսեց Քրիստոսի յարութեան համար. որ նորա հոգին դժոխքումն չըթողվաւ՝ եւ նորա մարմինն ապականութիւն չըտեսաւ[22]։

32 Այս Յիսուսին Աստուած յարոյց[23] որ նորան մենք ամենքս վկայումենք[24]։

33 Աստուծոյ աջովն բարձրացած[25]. եւ սուրբ հոգոյ աւետիքըն հօրիցն առած[26] (նա) փուշց էս[27], որ դուք տեսնումէք եւ լսումէք։

34 Պատճառն որ՝ ոչ թէ դաւիթն վերկացաւ երկինքն. բայց հենց ինքն ասումէ՝ Տէրն իմ Տէրին ասաց. իմ աջ կողմն նստիր[28],

35 Մինչեւ քո թշնամիներըդ քո ոտացդ գոհարկը դնեմ։

36 Հաստատ թող ճշմարտութիւնով գիտենայ իսրայէլի ամէն տունն, որ Աստուած նորան Տէր եւ օծեալ արաւ. էն Յիսուսին՝ որ դուք խաչեցիք[29]։

37 Այս երբոր էս լսեցին, իրանց սրտերումն զղջացան[30]. եւ ասացին պետրոսին եւ մեկել առաքեալներին. ի՞նչ պիտի գործենք՝ սարդիք եղբարք։

38 Պետրոսն նորանց ասաց. ապաշխարեցէք՝ եւ ձեղանից ամէն մէկն թող մկրտվի Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ մեղաց թողութեան համար, եւ սուրբ հոգոյ աւետիքըն կընդունիք[31]։

39 Ինչու որ՝ ձեզ եւ ձեր որդոց

[17] Գործ. ե. 30։ [18] Վեր. 32։ Գործ. գ. 15։ դ. 10։ ժ. 40։ ժգ. 30, 34։ ժէ. 31։ Հռոմ. դ. 24։ ը. 11։ ա Կորնթ. չ. 14։ ժե. 15։ բ Կորնթ. գ. 14։ Գաղ. ա. 1։ Եփես. ա. 20։ կ. ը. 13։ ա Թես. ա. 10։ Եբր. ժգ. 20։ ա Պետր. ա. 21։ [19] Սաղմ. ժգ. 8։ [20] գ Թագ. ը. 10։ Գործ. ժգ. 36։ [21] բ Թագ. է. 12, 13։ Սաղմ. ճղը. 11։ Ղուկ. ա. 32, 69։ Հռոմ. ա. 3։ բ Տիմ. ը. 8։ [22] Սաղմ. ժգ. 10։ Գործ. ժգ. 35։ [23] Վեր. 24։ [24] Գործ. ա. 8։ [25] Գործ. է. 31։ Փիլիպ. ը. 9։ Եբր. ժ. 12։ [26] Ծննդ. ժգ. 26։ ժե. 26։ ժգ. 7, 13։ Գործ. ա. 4։ [27] Գործ. ժ. 45։ Եփես. գ. 8։ [28] Սաղմ. ճժ. 1։ Մատթ. իբ. 44։ ա Կորնթ. ժե. 25։ Եփես. ա. 20։ Եբր. ա. 13։ [29] Գործ. է. 31. [30] Զաք. ժը. 10։ Ղուկ գ. 10։ Գործ. թ. 6։ ժգ. 30։ [31] Ղուկ. իգ. 47։ Գործ. գ. 19։

համար է էս աւետիքս[32], եւ էն ա-
մէն հետաւորներին համար՝ որ Նո-
րանց մեր Տէր Աստուածն կըկանչէ[33]:
40 Նէ ուրիշ շատ խօսքերով վե-
կայուելիւն էր դնում, եւ յորդո-
րում էր նորանց՝ եւ ասում էր. ա-
զատվեցէք էս ծուռ ազգից:
41 Մէն քանիսն նորա խօսքն յո-
ժարութեամբ ընդունեցին եւ մը-
կրտվեցան. եւ էն օրն երեք հա-
զարի չափ հոգիք աւելացան:
42 Նէ միշտ առաքելոց վարդա-
պետութեանն եւ հաղորդութեանն,
եւ հացի կտրելոյն՝ եւ աղօթքին էին
հետեւում[34]:
43 Նէ ամէն անձին վերայ ահ եւ
վախ էր լինում. շատ նշաններ եւ
հրաշքներ գործվում էին առաքելոց
ձեռքովն[35]:
44 Մէն հաւատացեալներն իրար
հետ միասեղ էին, եւ ամէն բան հա-
սարակաց ունէին[36]:
45 Նէ ապրանքներըն եւ ամէն
բաներըն ծախում էին, եւ բաշխու-
մէին էն ամէնին, ում որ մին բան
պէտք էր լինում[37]:
46 Մէշտ եւ ամէն օր միաբանու-
թեամբ[38] տաճարն էին գնում[39],
եւ հացըն տներումն էին կտրում,
եւ ուրախութեամբ եւ սրտի միա-
մտութեամբ կերակուր էին առ-
նում[40]:
47 Աստուծըն օրհնում էին, եւ ա-
մէն ժողովրդի առաջին շնորհք ու-
նէին[41]. եւ Տէրն միշտ եւ ամէն օր
փրկվածներ էր աւելացնում նորանց
հետ[42]:

## Գ·Գ

1 պետրոս ոտքերըն հասատաված կաղ մարդն տեսնելոյ վազող ժողովուրդըն քարոզե-
լով, 12 կըհասատավանի թէ էն բժշկութիւնն հենց իրան կամ թէ Յիսուսեան զօրու-
թեամբ եւ քաջութեամբ ելած չէ, բայց Աստուածանից եւ իրան Արդոյն Ցիսուսից, եւ
նորա անունի հաւատքովն, 13 Եւ մեղադրում նորանք Ցիսուսին խաչելոյ համար: 17 Եւ
որովհետեւ էս անպիտանութեամբ արին, բայց Աստուած որ մարգարէներին բերանովն
պատմեց իրան Քրիստոսի չարչարվելն՝ հնպէս էլ կատարեց, 19 Նէրահամար կըյորդորէ
նորանք որ զղջանան՝ որ իրանց մեղքերն ընջվին, եւ էն Ցիսուսից օրհնութիւն առնին:

1 Պետրոն եւ յովհաննէսն գը-
նում էին տաճարն՝ աղօթքի ինն ժա-
մումն (սահաթ-ն)[2]:
2 Նէ մին մարդ կար իրան մոր
փորից կաղ (ծնված)՝ որ նորան ա-
մէն օր վերկալած գնում էին տաճարի
(էն) դուռն մնան՝ որ գեղեցիկ էր
կոչվում[3], որ ողորմութիւն խնդրէ
նրանցից՝ որ տաճարն էին մտնում[4]:
3 Նրըսր տեսաւ պետրոսին եւ
յովհաննէսին՝ որ տաճարն էին մըտ-
նում, աղաչում էր՝ որ ողորմութիւն
առնէ նորանցից:
4 Պետրոն յովհաննէսին հետ
մտիկ արաւ նորան՝ եւ ասաց. դէպի
մեզ նայիր:
5 Նա դարձաւ դէպի նորանց, եւ
յոյս ունէր՝ որ մին բան առնէ նո-

---

3² Ցաւել. բ. 28: Գործ. դ. 25: ³³ Գործ. ժ. 45: ժա. 15, 18: ժգ. 26: ժե. 3, 8, 14:
Եփես. բ. 13, 17: ³⁴ Վեր. 46: Գործ. ա. 14: Հռոմ. ժբ. 12: Եփես. գ. 18: Կող. դ.
2: Եբր. ժ. 25: ³⁵ Մարկ. ժգ. 17: Գործ. դ. 33: ե. 12: ³⁶ Գործ. դ. 32, 34: ³⁷ Եսայ.
ծբ. 7: ³⁸ Գործ. ա. 14: ³⁹ Ղուկ. իգ. 53: Գործ. ե. 42: ⁴⁰ Գործ. ե. 7: ⁴¹ Ղուկ. բ.
52: Գործ. դ. 33: Հռոմ. ժգ. 18: ⁴² Գործ. ե. 14: ժա. 24: ¹ Գործ. բ. 46. ² Սաղմ.
ծե. 17: ³ Գործ. ժգ. 7: ⁴ Ցաւել. թ. 8:

բանցից։

6 Եւ պետրոսն ասաց. արծաթ եւ ոսկի չունիմ. բայց ինչ որ ունիմ, էն քեզ կըտամ. Յիսուսի Քրիստոսի նազովրեցոյ անունովն վեր կաց՝ եւ գնա[5]։

7 Եւ նորա աջ ձեռքին բռնեց՝ եւ վերկացրուց նորան. եւ շուտով հաստատվեցան նորա բարձքն (ֆաշէնէն)՝ եւ ոտաց սրունքն (ըօֆռաՂէ նէրքն)։

8 Ել եր վազեց՝ եւ սկսեց գնալ, եւ նորանց հետ մտաւ տաճարն[6]. եւ գնումէր եւ վազ էր տալիս՝ եւ Աստուծոյն օրհնումէր։

9 Եւ ամէն ժողովուրդն տեսաւ նորան, որ գնումէր՝ եւ Աստուծոյն օրհնումէր[7]։

10 Եւ գիտումէին նորան՝ որ սա էն էր, որ ողորմութեան համար նստումէր տաճարի գեղեցիկ դռանն, եւ զարմանքով լցվան էն նշանին համար՝ որ էլաւ[8]։

11 Եւ դեռ որ նա պետրոսին եւ յովհաննէսին բռնած էր, ամէն ժողովուրդն վազեց նորանց մօտ (էն) սրահն՝ որ սաղոմոնի էր կոչվում, եւ զարմացան[9]։

12 Երբոր պետրոսն տեսաւ, պատասխան տուաւ ժողովրդին. ով իսրայէլացի մարդիկ՝ ինչո՞ւ էք զարմացել սրա վերայ՝ կամ մեզ վերայ ինչո՞ւ էք սաստիկ նայում, իբր մեզ՝ մենք մեր զօրութեանով եւ քաջութեանով տուած լինինք դորան գնալուն։

13 Աբրահամու Աստուածն՝ սահակայ Աստուածն՝ եւ յակոբայ Աստուածն, մեր հարանց Աստուածն[10] փառաւորեց իրան որդի Յիսուսին[11]. նորան՝ որ դուք մատնեցիք[12], եւ ուրացաք պիղատոսի առաջին, երբոր նա դատումէր՝ որ արձակէ (նորան)[13]։

14 Եւ էն սրբըն[14] եւ արդարին ուրացաք, եւ խնդրեցիք՝ որ (նա) մին մահապարտ մարդ շնորհէ ձեզ[15]։

15 Եւ կենաց առաջնորդին սպանեցիք, որ նորան Աստուած մեռելների միջից յարոյց[16], որ նորան հենց մենք վկայ ենք[17]։

16 Եւ նորա անունի հաւատքովն սորան՝ որ տեսնում էք եւ գիտէք, նորա անունն հաստատեց[18]. եւ հաւատքն՝ որ նորանով է՝ էս առողջութիւնս տուաւ դորան ձեր ամենի աչքի առաջին։

17 Եւ հիմի՝ եղբարք, գիտեմ, որ անգիտութեանով արիք՝ ինչպէս որ ձեր իշխաններն էլ[19]։

18 Այդ Աստուած՝ ինչպէս որ առաջուց[20] ամէն մարգարէների բերանովն պատմեց իրան Քրիստոսի չարչարվիլն, էնպէս էլ կատարեց[21]։

19 Ուրեմն՝ զղջացէք եւ կեցտ դարձէք, որ ձեր մեղքերն ջնջվին[22]։

20 Որ Տէրի երեսից հանգստանալու ժամանակներն գան. եւ Յիսուսին ուղարկէ, որ

---

[5] Գործ. գ. 10։ [6] Եւսեբ. լե. 6։ [7] Գործ. դ. 16, 21։ [8] Ցուկ. թ. 8։ [9] Ցուկ. ժ. 23։ Գործ. ե. 12։ [10] Գործ. ե. 30։ [11] Ցուկ. է. 39։ ժբ. 16։ ժէ. 1։ [12] Մատթ. իէ. 2։ [13] Մատթ. իէ. 20։ Մարկ. ժե. 11։ Ղուկ. իգ. 18, 20, 21։ Ցուկ. ժբ. 40։ ժԹ. 15։ Գործ. ժգ. 28։ [14] Յովհ. ժգ. 10։ Մարկ. ա. 24։ Ղուկ. ա. 35։ Գործ. բ, 27։ գ. 27։ [15] Գործ. ե. 52։ իբ. 14։ [16] Գործ. բ. 24։ [17] Գործ. բ. 32։ [18] Մատթ. իթ. 22։ Գործ. գ. 10։ ժգ. 9։ [19] Ղուկ. իգ. 34։ Ցուկ. ժգ. 3։ Գործ. ժգ. 27։ ա Կորնթ. բ. 8։ ա Տիմ. ա. 13։ [20] Ղուկ. իդ. 44։ Գործ. իգ. 22։ [21] Յովհ. իբ։ Եսայ. ծ. 6։ ծգ. 5, Լսայն։ Դան. թ. 26։ ա Պետր. ա. 10, 11։ [22] Գործ. բ. 38։

առաջուց ձեզ համար սահմանված է։

21 Որ նորան երկինքն պէտք է ընդունի[23] մինչեւ էն ամէն բաներուն հաստատվելոյ ժամանակներն[24], որ նորանց համար խօսեց Աստուած իրան սուրբ մարգարէներուն բերանովն[25]։

22 Մօսէս մեր հարանցն ասաց, թէ ձեր Տէր Աստուածն մարգարէ վերկրկացնէ ձեզ համար ձեր եղբարներուն միջէնն՝ ինձ նման, նորան լսեցէք ամէն բանի համար՝ ինչ որ կրնասի ձեզ[26]։

23 Եւ կըլինի, որ ամէն անձն՝ որ էն մարգարէին չլսէ, նա ժողովըրդի միջէնն թնդ սատակվի։

24 Եւ ամէն մարգարէներն՝ որ սամուէլէնն մինչեւ հիմիկ մարգարեցան, հենց էս օրերս պատմեցին։

25 Դուք էք էն մարգարէներուն որդիքն եւ էն ուխտին, որ Աստուած մեր հարանց հետ հաստատեց, եւ աբրահամին ասաց[27]. քո զաւակովդ պիտի օրհնվին երկրի ամէն աղգերն[28]։

26 Աստուած առաջ ձեզ համար[29] վերկացուց իրան որդին, եւ նորան ուղարկեց՝ որ ձեզ օրհնէ[30], որ ձեր ամէն մէկը չէտ դառնաք ձեր չարութենէնին[31]։

## ԳԼ. Դ

1 Քահանայապետներն եւ իշխաններն պետրոսի քարոզութեանն համար սաստիկ բարկանալով՝ ինքն եւ Յովհաննէսն բանտի մէջ կըդնեն, 4 էն խօսքն լսողներէց շատերն կըհաւատան։ 5 Երբ որ նորանք դատաստանի կըհանեն պետրոս համարձակութենով կըհաստատէ թէ էն կաղ մարդն Յիսուսի անունով ողջացաւ, եւ թէ մէնակ Յիսուսի անունովն փրկութիւն կայ երկնքի ներքեւն։ 13 Նորանք ահ տալով պատուէր կըտան նորանց որ իսկի չլսեսին եւ չսովրըցնեն Յիսուսի անունովն, 23 Նորանց համար եկեղեցին աղօթք կանէ։ 31 Աստուած նորանց ժողովված տեղն շարժելով Սուրբ Հոգովն ցոյց կըտայ թէ իրանց աղօթքն լսեց. եւ եկեղեցին կըհաստատէ Սուրբ Հոգին պարգեւներովն, նորանց բազմութիւնն մին սիրտ անելով եւ ողորմութենով։

1 Եւ դեռ քանի որ նորանք ժողովըրդին հետ խօսում էին, քահանայապետներն եւ տաճարի իշխաններն եւ սադուկեցիքն նորանց վերայ հասին

2 Ասատիկ բարկացած նրահամար՝ որ նորանք ժողովըրդին սովրցնում էին, եւ Յիսուսի ձեռովն մեռելներուն յարութիւն առնելըն պատմում էին[1]։

3 Իրանց ձեռներըն ձգեցին նորանց, եւ բանտի (պահպանի) մէջ դըրին մինչեւ առաւօտն. ինչու որ՝ եւ իրիկվան դէմ էր։

4 Այլ էն խօսքը լսողներիցն շատերն հաւատացին. եւ մարդկանց համարն հինգ հազարի չափ էլաւ։

5 Եւ յետեւի օրումն էլաւ՝ որ նորանք իշխաններուն եւ երէցներուն եւ կարգացօղներին ժողվեցին եւ [ե]րուսաղէմ՝

6 Եւ աննա քահանայապետին՝

[23] Դործ. ա. 11։ [24] Մարկ. ժէ. 11։ [25] Ղուկ. ա. 70։ [26] Բ Օրին. ժը. 15, 18, 19։ Գործ. է. 37։ [27] Գործ. բ. 39։ Հռոմ. թ. ձ, 8։ ժե. 8։ Գաղ. գ. 26։ [28] Ծննդ. ժբ. 3։ ժը. 18։ իբ. 18։ իգ. 4։ իը. 14։ Գաղ. գ. 8։ [29] Մարկ. ժ. 5։ ժե. 24։ Ղուկ. իգ. 47։ Գործ. ժգ. 32, 33, 46։ [30] Վարչ. 22։ [31] Մարկ. ա. 21։ [1] Մարկ. իբ. 23։ Գործ. իգ. 8.

եւ կայիափային, եւ Յովհաննէսին եւ աղէքսանդրոսին, եւ էն ամենին՝ որ քահանայական ցեղէցն էին[2]։

7 Եւ Նորանց կանգնացրին մէջ տեղն՝ (եւ) Նորանց հարցնում էին. (թէ) ի՞նչ զօրութենով կամ ո՛ր անունով գուք արիք էս[3]։

8 Էն ժամանակն պետրոսն սուրբ հոգով լցված՝ Նորանց ասաց[4]. ով ժողովրդի իշխաններ՝ եւ իսրայէլի էլեցներ.

9 Թէ արժանն է՝ որ մեզ էս օր գատէք մին տկար մարդոյ երախտիք անելոյ համար, թէ ում ձեռովն սա բժշկվեցաւ։

10 Թող յայտնի լինի ձեզ ա-մէնիդ՝ եւ ամէն իսրայէլի ժողովրդիդ. որ Յիսուսի Քրիստոսի Նազովրեցոյ անունովն[5] որ Նորան գուք խաչեցիք՝ որ Նորան Աստուած յա-րոյց մեռելների միջիցն, Հենց Նորանով սա հիմիկ ձեր առաջիգ ողջացած կայ[6]։

11 Նա է ձեզանից շինօղներիդ անարգված քարն, որ անկիւնի գլուխ էլաւ[7]։

12 Եւ էլ մին ուրիշ բանով փըրկութիւն չկայ. ինչու որ էլ ուրիշ անուն չկայ երկնքի նեղքուն մարդկանց տրվված՝ որ Նորանով կարելի լինի մեզ ապրիլ[8]։

13 Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութիւնն տեսնելով, եւ գիտելով թէ ապէս եւ առանց ուսմունքի մարդիք են, զարմանում էին[9], պատճառն որ՝ ճանաչում էին Նորանց՝ որ Յիսուսի հետ էին։

14 Եւ էն բժշկված մարդն էլ տեսնում էին՝ որ Նորանց հետ կար. եւ իսկի չէին կարող մին պատասխան տալ[10]։

15 Եւ հրամայեցին Նորանց՝ որ տիվանիցն դուրս գնան, եւ իրար հետ խորհուրդ արին։

16 Եւ ասացին. ի՞նչ անենք էս մարդկանցս՝ որ երեւելի նշան էլաւ սրանց ձեռովն[11]. որ Հենց ամէն երուսաղէմի մէջ բնակօղներին յայտնի է, եւ կարօղ չենք ուրանալ[12]։

17 Մի՛այն թէ՝ որ աւելի չըտարածվի ժողովրդի մէջն՝ ահ տանք Նորանց, որ միևնէլ էն անունովն չըխոսին մարդկանց մէնի հետ։

18 Եւ Նորանց կանչեցին եւ պատուէր տուին՝ որ իսկի չըխոսին, եւ միևնէլ չըսովորցնեն Յիսուսի անունովն[13]։

19 Բայց պետրոսն եւ յովհաննէսն պատասխան տուին՝ եւ Նորանց ասացին. վճիռ կարեցէք, եթէ արժանն է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ աւելի ականջ դնենք՝ քան թէ Աստուծոյն[14]։

20 Ինչու որ՝ մենք չենք կարօղ չըխոսիլ էն[15]՝ որ տեսնիք եւ լսեցինք[16]։

21 Նօրանք ահ տալով արձակեցին Նորանց, եւ ոչ ինչ բան չըգտին՝ թէ ինչպես պատիժ տան Նորանց՝ ժողովրդի պատճառովն[17]. ինչու որ՝ ամէնքն էլ էն էլած բաներին համար փառք էին տալիս Աստուծոյն[18]։

22 Պատճառն որ՝ էն մարդըն՝ քառասուն տարուց էլ աւելի էր, որ Նորա վերայ էս բժշկութեան նշանս էլաւ։

23 Եւ Հետզհետէ՝ որ արձակվե-

[2] Գոր· գ · 2, ճ-վէ· ժա· 49· ԺԲ· 13։ [3] Նէ· բ· 14։ Մարկ· իա· 23։ Գործ· է· 27։ [4] Գոր· ժբ· 11, 12։ [5] Գործ· գ· 6, 16։ [6] Գործ· բ· 24։ [7] Սաղմ· ճժբ· 22։ Եսայ· իը· 16։ Մարկ· իա· 42։ [8] Մարկ· ա· 21։ Գործ· ժ· 43։ ա Տիմ· բ· 5· 6։ [9] Մարկ· ժա· 25։ ա Կորնթ· ա· 27։ [10] Գործ· գ· 11։ [11] Ճ-վէ· ժա· 47։ [12] Գործ· գ· 9, 10։ [13] Գործ· է· 40։ [14] Գործ· է· 29։ [15] Գործ· ա· 8։ բ· 32։ [16] Գործ· իը· 15։ ա Ճ-վէ· ա· 1, 3։ [17] Մարկ· իա· 26։ Գոր· է· 6, 19։ իը· 2։ Գործ· է· 26։ [18] Գործ· գ· 7, 8։

ցան՝ եկին իրանցների մօտը, եւ պատմեցին որքան բան որ քահանայապետներն եւ էլեցներն ասացին նորանց[19]։

24 Ու նորանք երբոր լսեցին, իրանց ձայներըն բարձրացուին դէպի Աստուած եւ ասացին. դու Տէր Աստուած՝ որ արիր երկինքըն եւ երկիրըս՝ ծովըն եւ ամէն բան՝ որ նորանցում է[20].

25 Որ մեր Հայր Դաւթի՝ քո ծառայի բերանովն խօսեցիր եւ ասացիր սուրբ Հոգով ձեռովն, ինչո՞ւ համար հեթանոսներն խռովեցան՝ եւ ժողովուրդներն ունայն բաներ մտածեցին[21]։

26 Երկրի թագաւորներն վերկացան, եւ իշխաններն միտեղ հաւաքվեցան Տէրին համար՝ եւ նորա օծեալին համար։

27 Իրաւի որ հաւաքվեցան էս քաղաքումս[22] քո սուրբ որդի Յիսուսին վերայ[23], որ նորան օծեցիր[24]. Հերովդէսն եւ պոնտոս պիղատոսն՝ հեթանոսներովն եւ իսրայէլի ժողովուրդներովն,

28 Որ անեն՝ որչափ որ քո ձեռն եւ կամքն առաջուց սահմանեց որ լինի[25]։

29 Ու հիմի՝ Տէր, նայիր նորանց ահ տալըն, եւ տուր քո ծառաներին՝ որ ամէն համարձակութեամբ նոյ քո բանըդ խօսին[26]։

30 Երանով որ քո ձեռըն մեկնես, որ բժշկութիւն, եւ նշաններ եւ հրաշքներ լինին[27], քո սուրբ որդի Յիսուսի[28] անունովն[29]։

31 Ու դեռ քանի որ նորանք աղօթք էին անում՝ շարժվեցաւ էն տեղն՝ որ ժողովված էին, եւ ամէնքն սուրբ Հոգով լցվան[30]. եւ Աստուծոյ բանըն համարձակութեամբ խօսեցին[31]։

32 Ու էն հաւատացելոց բազմութիւնն մին սիրտ՝ եւ մին անձն էր[32]. եւ նորանցից իսկի մինն էլ չէր ասում իրան ապրանքների համար՝ թէ իրանն էն[33], բայց նորանց ամէն բաներն հասարակաց էր։

33 Ու առաքեալներն շատ զօրութեամբ[34] վկայութիւն էին տալիս Տէր Յիսուսի Քրիստոսի յարութիւն առնելըն համար[35]. եւ մեծ մեծ շնորհքներ կային նորանց ամենին վերայ[36]։

34 Ու նորանց մէջն իսկի մինն կարօտութիւն չունէր. պատճառն որ՝ նորանք ամէնքըն՝ որ գետերի կամ տըների տէր էին՝ ծախում էին, եւ ծախվածի գինըն բերում էին[37]։

35 Ու առաքելոց ոտներին մօտն էին դնում[38]. եւ ամէնին բաժանում էին՝ ինչպէս որ մինին մին բան պէտք էր լինում[39]։

36 Յովսէփն՝ որ առաքեալներից բառնաբաս կոչվեցաւ, որ մեկնութեամբ լինի որդի կասվի. ղեւտացի ցեղից՝ կիպրոսեցի.

37 Ունա մին գիւղ ունէր, (եւ) ծախից՝ եւ գինըն բերաւ առաքելոց ոտների մօտն դրաւ[40]։

---

[19] Գործ. ժբ. 12։ [20] Գ Թագ. ԺԹ. 15։ [21] Սաղմ. բ. 1։ [22] Ա Մակ. Ի. 3։ Ղուկ. Իբ. 2։ Իգ. 1, 8։ [23] Ղուկ. ա. 35։ [24] Ղուկ. դ. 18։ Ես. Ժ. 36։ [25] Գործ. բ. 23։ գ. 18։ [26] Ա Կր. 13։ Ա Տես. 31։ Գործ. Լ. 27։ Ժգ. 46։ Ժգ. 3։ Ժէ. 8։ Իգ. 26։ Իբ. 31։ Եփես. գ. 19։ [27] Գործ. բ. 43։ ե. 12։ [28] Ա Կր. 27։ [29] Գործ. գ. 6, 16։ [30] Գործ. բ. 2, 4։ Ժգ. 26։ [31] Ա Կր. 29։ [32] Գործ. ե. 12։ Հռոմ. Ժե. 5, 6։ Բ Կորնթ. Ժգ. 11։ Փիլիպ. ա. 27։ բ. 2։ ա Պետր. գ. 8։ [33] Գործ. բ. 44։ [34] Գործ. ա. 8։ [35] Գործ. ա. 22։ [36] Գործ. բ. 47։ [37] Գործ. բ. 45։ [38] Ա Կր. 37։ Գործ. ե. 2։ [39] Գործ. բ. 45։ գ. 1։ [40] Ա Կր. 34, 35։ Գործ. ե. 1, 2։

# ԳԼ · Ե

1 Ընաւհան եւ նորա կինն Սափիրան իրանց սուտ ասելոյն համար Պետրոսից սասանվելով վերընկան եւ իրանց հոգիներն հանեցին, 12 Առաքեալների ձեռովն նշաններ եւ շատ հրաշքներ կըլինին, 14 Հաւատացեալներըն շատանալոյ համար: 17 Մինէլ ձեռք կըձգին Առաքեալներին, եւ նորանց կըդնեն բանտի (ընտանի) մէջն, 19 Մին հրեշտակ նորանց կազատէ եւ պատուէր կըտայ նորանց որ համարձակ ամէնին քարոզեն. 21 Նորանք էլ երթոր տաճարին մէջն, 29 Եւ տիվանի առաջին քարոզեցին, 33 Թշնամիներըն մտաածումին որ նորանք սպանեն, վերջն մին Գամաղիէլ օրէնք սովորեցնող հրեայի խորհըրդովն 40 Մէնակ կըձեձեն եւ կարձակեն նորանց. որ նրանհամար Առաւած կըփառաւորեն եւ ամէն օր չեն գադարում սովորցնելուցն՝ եւ աւետարանելուցն:

1 Բայց մին անանիա անուն մարդ, իրան սափիրիա կնկան հետ՝ (մին) ագարակ (ղէշլաղ) ծախեց:

2 Եւ նորա գնիցն գաղնց որ կինն էլ գիտումէր. եւ մինքիչ բաժին բերաւ առաքելոց ոտների մտան դըրաւ[1]:

3 Պետրոսն ասաց. անանիա՝ ինչ՞ համար[2] սատանան քո սիրտը լցրուց՝ որ դու սուտ խօսիս սուրբ հոգուն, եւ ագարակի (ղէշլաղ) գըներից գաղես[3]:

4 Չէ՞ որ գնոքանի որ կար՝ քոնն էր, եւ երբոր ծախումէիր՝ քո իշխանութեանդ տակն էր. ի՞նչ է՝ որ էս բանըս գրիր քո սրտիդ մէջն. ոչ թէ մարդկանց սուտ ասացիր, բայց Աստուծոյն:

5 Եւ անանիան երբոր էս բանըս լսեց, վերընկաւ եւ հոգին հանեց[4]. եւ մեծ վախ էլաւ ամէնին վերայ՝ որ էն լսեցին:

6 Երիտասարդներն վերկացան՝ պատանեցին նորան, եւ տարան թաղեցին[5]:

7 Եւ էլաւ երբոր երեք ժամ (սահաթ) անցկացան, եւ նորա կինն (որ) չէր գիտում ինչ որ էլած էր, ներս մտաւ:

8 Պետրոսն պատասխան տուաւ նորան՝ եւ ասաց. դու ինձ ասա՝ թէ ի՞նչափ գնով ծախեցիք էն ագարակն. եւ նա ասաց. հա՝ էնչափ:

9 Եւ պետրոսն ասաց նորան. ինչ է՝ որ միաբանվեցաք դուք, որ Տէրի հոգին փորձէք[6]. ահա (նորանց) ոտներն՝ որ քո մարդըն թաղեցին, դուռն մտան (են)՝ քեզ էլ կըհանեն:

10 Եւ շուտով վերընկաւ նորա ոտների առաջին՝ եւ հոգին հանեց. երիտասարդներն ներս մտին՝ նորան մեռած գտին, եւ հանեցին իրան մարդոյ մտան թաղեցին[7]:

11 Եւ մեծ ահ էլաւ ամէն եկեղեցոյն վերայ, եւ ամէնին վերայ՝ որ էս լսեցին[8]:

12 Եւ առաքեալների ձեռովն նշաններ եւ շատ հրաշքներ էին լինում ժողովրդի մէջն[9]. եւ ամէնքն միաբան սաղոմոնի սրահումն էին[10]:

13 Եւ էն ուրիշներից խոկ մինն չէր համարձակվում մտներնալ նորանց[11]. բայց ժողովուրդն պատիւ

[1] Գործ · գ · 37: [2] Թագ · Ա · 2: բ Օբին · իգ · 21: Ծալ · ե · 4: [3] Գործ · իբ · 3: [4] Վայր · 10, 11: [5] Ցած · ժթ · 40: [6] Վէր · 3: Մատթ · գ · 7: [7] Վէր · 5: [8] Վէր · 5: Գործ · բ · 43: ժթ · 17: [9] Գործ · բ · 43: ժգ · 3: ժթ · 11: Հռոմ. ժե · 19: բ Կորնթ · ժբ · 12: Եբր · բ · 4: [10] Գործ · գ · 11: գ · 33: [11] Ցած · թ · 22: ժբ · 42: ժթ · 38:

էր տալիս նորանց[12]։

14 Եւ էլ աւելի շատանում էին Տէրի հաւատացեալները, մարդկանց եւ կանանց բազմութիւնն։

15 Մինչեւ որ հիւանդները հանում էին փողոցները, եւ իրանց մահիճներով (փէօշ ընդհանրապէս) հետեղ էին դնում, որ երբոր պետրոս անցկենայ, լուի թէ նորա շուքն նորանցից մէնին հասնէ[13]։

16 Եւ էն չորս կողմի քաղաքներից բազմութիւն էին հաւաքվում երուսաղէմ, բերում էին հիւանդներն եւ պիղծ դեւերից չարչարվածներն, որ ամէնքն էլ բժշկվում էին[14]։

17 Ի հերիացաւ քահանայապետն եւ ամէնքն՝ որ նորան հետ էին, եւ սադուկեցոց աղանդն՝ նախանձով լցան[15]։

18 Եւ ձեռք ձգեցին առաքեալներին, եւ նորանց յայտնի գրին բանտի (պէնտանէ) մէջն[16]։

19 Բայց հետոյ Տէրի հրեշտակն գիշերով բանտի դռներըն բաց արաւ, նորանց հանեց՝ եւ ասաց[17]։

20 Գնացէք տաճարի մէջն կանգնեցէք, եւ էս կեանքիս ամէն հրամանները խօսեցէք ժողովրդի հետ[18]։

21 Եւ երբոր լսեցին, առաւօտանց մտին տաճարի մէջն՝ եւ սովորցնում էին. եկաւ քահանայապետն՝ եւ նորանք՝ որ նորա հետ էին, ուխտադրուժները՝ եւ իսրայէլի որդոց ամէն ծերակոյտն կանչեցին միասին, եւ ուղարկեցին բանտն՝ որ բերեն նորանց[19]։

22 Եւ երբոր սպասաւորներն եկին՝ նորանց չըգտին բանտի մէջն. դարձան եւ պատմեցին,

23 Եւ ասացին. Թէ բանտըն ամէն զգուշութեամբ փակված գըտինք, եւ պահապաններըն էլ՝ որ դռան մօտն կանգնած էին. բայց երբոր բացինք՝ եւ ներսումն իսկի մարդ չըգըտինք։

24 Երբոր տաճարի իշխաններն եւ քահանայապետներն էս բանըս լսեցին, զարմանում էին նորանց համար, թէ էն ինչ պիտի լինի[20]։

25 Եւ մինն եկաւ նորանց պատմեց՝ թէ ահա էն մարդիկն՝ որ բանտի մէջ դրիք, տաճարումն կանգնած են՝ եւ սովորցնում են ժողովրդին։

26 Եւ ժամանակին իշխանն սպասաւորներին հետ գնաց՝ նորանց բերին առանց բռնութեան. պատճառն որ՝ ժողովրդից վախենում էին՝ որ չըքարկոծվին[21]։

27 Եւ (երբոր) բերին նորանց՝ կանգնացրին տիվանի առաջին. քահանայապետն հարցրուց նորանց,

28 Եւ ասաց. Չէ՞ որ պատուիրելով պատուիրեցինք ձեզ՝ որ չըսովորցնէք էն անունովն[22]. եւ հիմիկ՝ ահա երուսաղէմն լցրիք ձեր ուսմունքովդ, եւ կամենում էք մարդոց արունն[23] մեզ վերայ բերել[24]։

29 Պատասխան տուաւ պետրոսն եւ առաքեալներն, եւ ասացին. Պատուծոյ պէտք է աւելի հնազանդվել՝ քան մարդկանց[25]։

---

[12] Գործ. բ. 47։ գ. 21։ [13] Մատթ. ը. 21։ ժգ. 36։ Գործ. ժէ. 12։ [14] Մարկ. ժգ. 17. 18։ Ցածկ. ժգ. 12։ [15] Գործ. գ. 1, 2, 6։ [16] Ղուկ. իա. 12։ [17] Գործ. ժբ. 7։ ժգ. 26։ [18] Ցածկ. գ. 69։ ժէ. 3։ ա Ցածկ. ե. 11։ [19] Գործ. գ. 5, 6։ [20] Ղուկ. իբ. 4։ Գործ. գ. 1։ [21] Մատթ. իա. 26։ [22] Գործ. գ. 18։ [23] Մատթ. իէ. 35։ իէ. 25։ [24] Գործ. բ. 23, 36։ գ. 15։ է. 52։ [25] Գործ. գ. 19։

30 Ա՛ստ հարանց Աստուածն Յա-
ղոյց էն Յիսուսին[26]՝ որ դուք փայ-
տից կախած սպանեցիք[27]:
31 Աստուած նորան[28] առաջ-
նորդ[29] եւ փրկիչ բարձրացուց ի-
րան աջովն[30]՝ որ իսրայէլին ապաշ-
խարութիւն տայ եւ մեղաց թողու-
թիւն[31]:
32 Եւ մենք ենք նորա վկաները էս
խօսքերիս համար[32], եւ սուրբ Հո-
գին՝ որ Աստուած իրան հնազանդ
լինողներին տուաւ նորան[33]:
33 Եւ նորանք լըսեր լսեցին,
բարկանում էին, եւ մտածում էին, որ
նորանց սպանեն[34]:
34 Ա՛յն փարիսեցի վերկացաւ
տիվանի միջումն, որ նորա անունն
Գամալիէլ էր[35], օրէնքի սովորցնող՝
ամէն ժողովրդի առաջին պատուա-
կան, հրամայեց առաւ որ էն մարդ-
կանց մինչիչ դուրս տանեն:
35 Եւ նորանց ասաց, իսրայէլացի
մարդիկ՝ ձեզ վերայ նայեցէք էս
մարդկանցս համար, թէ ի՞նչ պէտք
է անել:
36 Ա՛յս օրերից առաջ Թեւդան
վերկացաւ՝ իրան համար ասելով՝
թէ ինքն մի մեծ բան է, որ չորս
հարիւրի չափ մարդիկ նորա եաւ-
էն ընկան, որ (ինքն) սպանվեցաւ՝
եւ ամէնքն էլ՝ որ նորա հետ միա-
բանված էին, քանդվեցան՝ եւ ո-
չինչ էլան:
37 Նրանից ետու գալիլեացի յու-
դան վերկացաւ աշխարհագրի օրե-
րումն, եւ շատ ժողովուրդ ապստամ
բացրուց իրան հետ, նա էլ կորաւ՝
եւ (էն) ամէնքն էլ՝ որ նորան հա-
ւանել էին՝ ցրվեցան:
38 Եւ հիմիկ ասումեմ ձեզ, հե-
ռի կացէք էդ մարդկանցից, եւ
թողէք դորանց, պատճառն որ՝ եթէ
էդ խորհուրդդ կամ էդ գործդ
մարդկանցից է՝ կըքանդվի[36],
39 Ա՛յլ թէ որ աստուածանից է՝
չէք կարող քանդել դորանց[37], չը-
լինի որ Աստուծոյ դէմ կռիւ անող
էլ գանըվիք[38]:
40 Հաւան կացան նորան, եւ ա-
ռաքեալներին կանչեցին[39] ծեծե-
ցին, եւ պատուէր տուին՝ որ էլ չը-
խօսեն Յիսուսի անունովն, եւ ար-
ձակեցին նորանց[40]:
41 Եւ նորանք ուրախանալով
դնացին տիվանի երեսից, ինչու որ՝
արժանի էլան Տէրի անունին համար
անարգվել[41]:
42 Եւ ամէն օր չէին դադարում[42]
տաճարումն եւ տընեերումն սովորց-
նել՝ եւ Յիսուսի Քրիստոսի հա-
մար աւետարանել[43]:

[26] Գործ. գ. 13, 15: Բր. 14: [27] Գործ. ժ. 39: Ժգ. 29: Գաղ. գ. 13: ա Պետր. բ. 24:
[28] Գործ. բ. 33, 36: Փիլիպ. բ. 9: Եբր. բ. 10: Ժբ. 2: [29] Գործ. գ. 15: [30] Յոան. ա. 21: [31] Ղուկ. իգ. 47: Գործ. գ. 26: Ժգ. 38: Եփես. ա. 7: Կող. ա. 14: [32] ՑՀՀ. Ժե. 26, 27: [33] Գործ. բ. 4: Ժ. 44: [34] Գործ. բ. 37: է. 54: [35] Գործ. Բր. 3: *Երբորդ Եմ նաև քան զՀասարակ Թուականն Քրիստոսի: [36] Առակ. 30: Եսայ. ը. 10: Ա՛ստ. Ժե. 13: [37] Ղուկ. իա. 15: ա Կորնթ. ա. 25: [38] Գործ. է. 51: Թ. 5: Իգ. 9: [39] Գործ. գ. 18: [40] Ա՛ստ. Ժ. 17: Իգ. 34: Ա՛ստ. Ժգ. 9: [41] Ա՛ստ. է. 12: Հռով. է. 3: ա Կորնթ. Ժբ. 10: Փիլիպ. ա. 29: Եբր. Ժ. 34: Ցակ. ա. 2: ա Պետր. գ. 13, 16: [42] Գործ. գ. 20, 29: [43] Գործ. բ. 46:

# ԻԼ·Ո

1 Ընաբեաղներին հաճոյ չէ երեւում որ Աստուծոյ խօսքըն թողնեն՝ եւ աղքատներին հաժար հոգս տանին, 3 Նրանհամար օրհնեն մարդիք որ նորանք սարկաւագութեան պաշտօնն անեն. 5 Որ նորանց մինն Սաեփանոսն էր՝ Սուրբ Հոգով եւ հաւատքով լցված մին մարդ։ 12 Նորա հետ վիճաբանութիւն անողներն կըբռնեն նորան, 13 Ի Սուրբ տեղոյն եւ Օրէնքին դէմ հայհոյութիւն արաւ ըսելով՝ նորա վերայ սուտ վկայութիւն կանեն։

1 Ի էն օրերումն՝ երբոր աշակերտներն շատացան[1], յունաց արտունչ էլաւ երբայեցոց դէմ[2]. ինչու որ՝ նորանց որբեւէրի կաննայքն ամեն օրվան պաշտամունքի մէջն անարգվում էին[3]։

2 Տասներկուքն կանչեցին աշակերտների բազմութիւնըն եւ ասացին. մեզ հաճոյ չէ՝ որ Աստուծոյ խօսքըն թողնինք՝ եւ սեղանին ծառայինք[4]։

3 Ընդրեք՝ եօթըն մարդ ընտրեցէք, որ ձեզանից բարի վկայութիւն ունին, եւ սուրբ Հոգով եւ իմաստութեամով լցված են, որ նորանց էս պէտքական բաներիս վերայ կանդնացնինք[5]։

4 Ի մենք աղօթքին եւ բանի եւ պաշտամունքին հետեւինք[6]։

5 Ի էն խօսքն ամեն բազմութեան առաջին հաւանեցի երեւեցաւ. եւ ընտրեցին սաեփանոսին՝ որ սուրբ Հոգով եւ հաւատքով լցված մարդ էր[7], եւ փիլիպպոսին եւ պրօխորոսին եւ նիկանորային եւ տիմոնային եւ պարմենային[8], եւ անտիոքացի նոր դարձած նիկողայոսին[9]։

6 Նորանց կանգնացրին առաքեալներն առաջին. եւ աղօթք անելով[10] ձեռք դրին նորանց վերայ[11]։

7 Ի Աստուծոյ խօսքըն մեծանում՝ եւ աշակերտների համարն աւելի շատանում էր երուսաղէմումն[12]. եւ քահանաներէին շատ բազմութիւն հնազանդվում հաւատքին[13]։

8 Սաեփանոս մարդն՝ շնորհքով եւ զօրութեամով լցված, մեծ մեծ նշաններ եւ հրաշքներ էր անում ժողովրդի մէջն։

9 Ի էն քանի մարդիք՝ էն ժողովարանէն՝ որ լիբերտացոց եւ կիւրենացոց՝ եւ կիւրենացոց՝ եւ աղեքսանդրացոց՝ եւ նորանց՝ որ կիլիկիայեցն եւ ասիայեցն էին, վերկացան, որ սաեփանոսի հետ վիճաբանութիւն անեն։

10 Ի չէին կարում հակառակ կենալ էն իմաստութեանն՝ եւ էն հոգւոյն, որ նորանով խօսում էր[14]։

11 Էն ժամանակն մին քանի մարդկանց սովորցրին՝ որ նորանց ասեն, թէ մենք լսեցինք զորանից՝ որ հայհոյութեան բաներ էր խօսում՝

[1] Գործ. բ. 41։ գ. 4։ ե. 14։ Վեր. 7։ [2] Գործ. թ. 29։ ժա. 20։ [3] Գործ. գ. 35։ [4] Եփ. ժբ. 17։ [5] Բ Օրէն. ա. 13։ Գործ. ա. 21։ ժգ. 2։ ա Տիմ. գ. 7։ [6] Գործ. բ. 42։ [7] Գործ. ժա. 24։ [8] Գործ. ը. 5, 26։ իա. 8։ [9] Յայտ. բ. 6, 15։ [10] Գործ. ա. 24։ [11] Գործ. ը. 17։ թ. 17։ ժգ. 3։ ա Տիմ. գ. 14. ե. 22։ բ Տիմ. ա. 6։ [12] Գործ. ժբ. 24։ ժԹ. 20։ կող. ա. 6։ [13] Յովհ. ժբ. 42։ [14] Ղուկ. իա. 15։ Գործ. ե. 39։ Եփ. գ. 12։ Եսայ. ծգ. 17։

ՄՆԱՑԵԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԱՆ ՀԱԿԱՌԱԿ[15],

12 Եւ ժողովրդին եւ էրէցներին եւ կարգացողներին խոստացրին. եւ վերայ հասին յափշտակեցին նորան՝ եւ տարան տիվանն։

13 Եւ սուտ վկաներ կանգնացրին՝ որ ասումէին. Էս մարդս չի դադարում սուրբ տեղըն՝ եւ օրէնքին դէմ հայհոյութեան բաներ խօսելուցն։

14 Մենք լսեցինք դորանից՝ որ ասումէր[16], թէ Յիսուս Նազորեցին՝ նա էս տեղըս կը քանդէ, եւ էն օրէնքըն՝ որ մեզ տուաւ մեղ, կը փոխէ[17]։

15 Եւ ամէնքն՝ որ էն տիվանումն նստած էին, մտիկ տուին նորան, եւ նորա երեսըն հրեշտակի երեսի նման տեսին։

## ԳԼ · Ի

1 Սեւիանոսի հրաման կըտայ քահանայապետն որ իրան հայհոյութիւն անելուցն սուտ վկայութեանն համար պատասխան տայ։ 2 Նա էլ ցոյց կըտայ թէ Աբրահամ ինչպես ճշմարտութեամբ Աստուծոյ երկրպագութիւն արաւ, եւ թէ Աստուած Հայրերն ինչպես ընտրեց, 20 Մօսէսի ծնվելուցն եւ խորանի եւ տաճարի շինվելուցն առաջ. 37 թէ Մօսէս ինքն էլ Քրիստոսի համար վկայեց, 44 Մինչէ թէ ամէն դրած արարողութիւնները երկրի օրինակի համար մնալ Աստուած պատուէր տըվաւ մին քիչ ժամանակի համար։ 51 Նորանց ապստամբութիւնն երեսներնին կըմռայլէ եւ իրանց հարցն որ մարգարէներին հալածեցին՝ որ նորանք առաջուց պատմեցին էն արդարի գալըն համար, որ նորանք մատնեցին եւ սպանեցին նորան՝ էս ամէնին համար կըտասուէ նորանք։ 54 Սրա համար ամէն հրէաներն նորան կը քարկոծեն, որ էն էլ իրան Հոգին Քիստոսի կըյանձնէ եւ ամէն սրտովն նորանց համար աղօթք կանէ։

1 Եւ քահանայապետն ասաց. Թէ շիտակ որ էդ բանդ էդպէս է։

2 Եւ նա ասաց, մարդիք եղբարք եւ հայր՝ լինէ լսեցէք. փառաց Աստուածն երեւեցաւ մեր Հայր աբրահամին՝ դեռ որ միջագետումն էր, դեռ որ նորան խառանի մէջն չէր բնակացրել. եւ ասաց նորան[1].

3 Ելիր էս քո երկրիցն եւ քո ազգիցն, եւ գնա էն երկիրն՝ որ ես ցոյց կըտամ քեզ[2]։

4 Եւն ժամանակն քաղդէացոց երկրիցն դուրս եկաւ՝ խառանումն բնակվեցաւ[3]. եւ նորա հօր մեռնելուցն եւեւ՝ նորան էնաեղտեղն փոխեց, եւ պանդխտացրուց էս երկրումս, որ սորանում հիմիկ դուք բնակված էք։

5 Եւ սորանում ժառանգութիւն չըտուաւ նորան, եւ ոչ (էլ) մին ոտի քայլի չափ (տեղ). եւ խոստացաւ՝ որ էս տեղըս բնակութիւն տայ նորան[4]. եւ նորանից եւեւ՝ նորա զաւակին, դեռ որ նա որդի չունէր։

6 Աստուած էսպէս խօսեց. Թէ նորա զաւակն պանդխտ կըլինի օտար երկրի մէջ[5]. եւ ծառայութեան մէջ կը բռնեն նորան, եւ կըշարչարեն չորս հարիւր տարի[6]։

7 Եւ էն ազգին՝ որ (նորանք) կը-

[15] գ Թագ. իա. 10, 13։ Մարկ. իզ. 59, 60։ [16] Գործ. իե. 8։ [17] Գաղ. Թ. 26։ [1] Գործ. իբ. 1։ [2] Ծննդ. ժբ. 1։ [3] Ծննդ. ժա. 31։ ժբ. 4, 5։ [4] Ծննդ. ժբ. 7։ ժգ. 15։ ժե. 3, 18։ ժէ. 8։ իզ. 3։ [5] Ծննդ. ժե. 13, 16։ [6] Ելք. ժբ. 40։ Գաղ. գ. 17։

ծառային, Նորան ես կըզատեմ, ա-սաց Աստուած. եւ սրանից եւս դուրս կըգան՝ եւ էս տեղումն ինձ կըպաշտեն[7]։

8 Եւ Նորան թլփատութեան ուխտ տուաւ[8]. եւ Յոտոյ սահակին ծնաւ, եւ ութ օրումն թլփատեց նո-ցան[9]. եւ սահակն (էլ) Յակոբին[10], եւ Յակոբն (էլ) տասներկու նահա-պետներին[11]։

9 Եւ նահապետներն նախանձ-վեցան Յոսէփի հետ, եւ ծախեցին (Նորան) եգիպտոս[12]. եւ Աստուած Նորան հետ էր[13]։

10 Եւ Նորան փրկեց իրան ամէն նեղութիւններից. եւ Նորան շը-նորհք եւ իմաստութիւն տուաւ և-դիպացոց փարաւոն թագաւորի ա-ռաջին. եւ (նա) Նորան իշխան կանգ-նացրուց եգիպտացոց, եւ իրան ա-մէն տան վերայ[14]։

11 Եւ սով եկաւ եգիպտոսի ամէն երկիրն, եւ քանան էլ՝ եւ մեծ նե-ղութիւն կար. եւ մեր հարքն կերա-կուր չէին գտնում[15]։

12 Եւ Յակոբն՝ որ լսեց թէ եգիպ-տոսումն կերակուր է գտնվում, մեր հարանցն ուղարկեց առաջին անգամ[16]։

13 Եւ երկրորդ անգամն Յոսէփն իրան ճանաչել տուաւ իրան եղբար-նեներին. եւ Նորա ազգն Յայտնի էլաւ փարաւոնին[17]։

14 Յոսէփն ուղարկեց եւ կանչեց իրան Հայր Յակոբին[18], եւ ամէն ազ-գատոհմին (էլ)՝ եօթանասուն եւ հինգ հոգիք[19]։

15 Եւ Յակոբն վերկաւ եգիպ-տոս[20]՝ եւ վախճանվեցաւ ինքն եւ մեր հարքն էլ[21]։

16 Եւ փոխվեցան սիւքեմ[22], եւ դրվան էն քարայրի (Խաղտայի) մէջն, որ Նորան աբրահամն եւնդրայի որ-դիքներից գնեց արծաթով՝ սիւքե-մումն[23]։

17 Երբոր էն աւետիքի ժամանակն մնաւեցաւ՝ որ Աստուած աբրահամին խոստացաւ[24], ժողովուրդն մեծացաւ եւ շատացաւ եգիպտոսումն[25]։

18 Մինչեւ որ ուրիշ թագաւոր վերկացաւ եգիպտոսումն՝ որ Յոսէ-փին չէր ճանաչում[26]։

19 Նա հնարք գործեց մեր ազգին համար, եւ մեր հարանցն չարչա-րեց՝ որ իրանց երախաներն դուրս քցեն՝ որ չապրին[27]։

20 Որ մանկան էլ էն ժամանա-կումն ծնվաւ[28], եւ գեղեցիկ էր Աս-տուծոյ առաջին. որ էլ իրան հօր տանն երեք ամիս կերակրվեցաւ[29]։

21 Եւ երբոր դուրս քցեցին Նո-րան, փարաւոնի աղջիկն վերկալաւ Նորան, եւ մեծացրուց Նորան՝ որ ի-րան որդեգիր լինի[29]։

22 Եւ մանկան վարժ վեցաւ եգիպ-տացոց ամէն իմաստութենովն. եւ զօրաւոր էր իրան խօսքերովն եւ գործքերովն[30]։

23 Երբոր Նորա քառասուն տա-րեկան ժամանակն լըցվաւ, Նորա

---

[7] Եել. գ. 12։ [8] Ծննդ. ժէ. 9, 10, 11։ [9] Ծննդ. իա. 2, 3, 4։ [10] Ծննդ. իե. 26։ [11] Ծննդ. իթ. 31, Ելից. Լ. 5, Ելից. լէ. 18, 23։ [12] Ծննդ. լէ. 4, 11, 28։ Աստ. ճե. 17։ [13] Ծննդ. լթ. 2. 21, 23։ [14] Ծննդ. խա. 37։ խբ. 6։ [15] Ծննդ. խա. 54։ [16] Ծննդ. խբ. 1։ [17] Ծննդ. խե. 4, 16։ [18] Ծննդ. խե. 9, 27։ [19] Ծննդ. խզ. 27։ ք Օ-րին. ժ. 22։ [20] Ծննդ. խզ. 5։ [21] Ծննդ. խթ. 33։ Եել. ա. 6։ [22] Եել. ժգ. 19։ Ճե-ես. իգ. 32։ [23] Ծննդ. իգ. 16։ լէ. 19։ [24] Ծննդ. ժե. 13։ Վէր. 6։ [25] Եել. ա. 7, 8, 9։ Աստ. ճե. 24, 25։ [26] Եել. ա. 22։ [27] Եել. բ. 2։ [28] Եբր. ժա, 23։ [29] Եել. բ. 3–10։ [30] Լու-կ. իգ. 19։

սրտի մէջն ընկաւ՝ որ իրան եղբայրների իսրայէլի որդիքներուն մէջն մտնի գայ[31]։

24 Եւ երբոր տեսաւ, որ մինչեւ ծունկը կտրած էր, դժուար եկաւ իրան. էն ծունկածին համար վճռեցնելութիւն արաւ՝ եւ եգիպտացոյն սպանեց։

25 Միտք էր անում՝ թէ նորա եղբարքն կհմանան, որ Աստուած նորա ձեռովն փրկութիւն պիտի տայ նորանց. եւ նորանք չհմացան։

26 Եւ յետեւի օրումն երեւեցաւ նորանց՝ դեւս որ կռիւ էին անում, եւ յորդորեց նորանց դէպի խաղաղութիւն, ասաց. մարդիք՝ դուք եղբարք էք, ինչո՞ւ էք իրար ծռկում[32]։

27 Ասյց նա՝ որ ընկերին ծռկում էր, նախատեց նորան՝ եւ ասաց. քեզ ո՞վ կանգնացրուց մեզ վերայ իշխան եւ դատաւոր[33]։

28 Միթէ կամենում ես ինձ էլ սպանել, ինչպէս որ երեկ եգիպտացոյն սպանեցիր։

29 Եւ էս խօսքիցս մտաէս փախաւ, եւ պանդուխտ էլաւ մադիամի երկրումն. ուր որ երկու որդիք ծնաւ[34]։

30 Եւ երբոր քառասուն տարին կատարվեցաւ, սինա սարի անապատումն (էօրէ՛ն) Տէրի հրեշտակն երեւեցաւ նորան կրակի բոցով մշի միջումն[35]։

31 Եւ մտաէն երբոր տեսաւ՝ զարմացաւ էն տեսիլքին համար, եւ երբոր մտաենումէր որ մտիկ անէ, Տէրի ձայնն էլաւ (եւ ասաց).

32 Ես եմ քո Հարանց Աստուածն՝ աբրահամի՝ եւ սահակայ եւ յակոբայ Աստուածն. եւ մտաէս սաստիկ ահով բռնված էր՝ եւ չէր համարձակվում նայիլ[36]։

33 Եւ Տէրն ասաց նորան. կօշիկներըդ հանիր ոտներիդ, պատճառն որ՝ տեղդ՝ որ դու կանգնել ես, սուրբ երկիր է[37]։

34 Տեսնելով տեսի իմ ժողովրդիս չարչարանքներըն՝ որ եգիպտացումն է, եւ լսեցի նորանց թառանչ քաշելըն՝ եւ վեր եկի որ նորանց փրկեմ. եւ հիմիկ եկ քեզ ուղարկեմ եգիպտոս[38]։

35 Էն մտաէսին՝ որ նորան ուրացան եւ ասացին. քեզ ո՞վ կանգնացրուց մեզ վերայ իշխան եւ դատաւոր, հենց նորան Աստուած իշխան եւ փրկիչ ուղարկեց էն հրեշտակի ձեռովն՝ որ մշի մէջն երեւեցաւ նորան[39]։

36 Ա՛յս հանեց նորանց[40]՝ եւ նշաններ եւ հրաշքներ արաւ եգիպտացոց երկրումն[41]. եւ կարմիր ծովումն[42], եւ անապատումն քառասուն տարի[43]։

37 Էս է էն մտաէսն, որ իսրայէլի որդոցն ասաց. ձեր Տէր Աստուածն մարգարէ վերկկացնէ ձեզ համար ձեր եղբարներիցն ինձ նմանն[44], նորան լսեցէք[45]։

38 Սա է՝ որ էլաւ ժողովրդի մէջն՝ անապատումն[46] հրեշտակին հետ[47], որ նորա հետ սինայ սարումն խօսեց՝ եւ մեր հարանց հետ. որ կենդանի[48] հրամաններ առաւ՝ որ տայ մեզ[49]։

39 Որ մեր հարքն չկամեցան հը-

[31] ԵԼ· ք· 11, 12։ [32] ԵԼ· ք· 13։ [33] գ–է· ժք· 14։ Գ–ր· գ· 7։ [34] ԵԼ· ք· 15, 22։ գ· 20։ ԺՔ· 3, 4։ [35] ԵԼ· գ· 2։ [36] Մ–ղ· իբ· 32։ ԵԲ· ժա· 16։ [37] ԵԼ· գ· 5։ Յ–ս· ե· 15։ [38] ԵԼ· գ· 7։ [39] ԵԼ· ժգ· 19։ Ք–ս· ի· 16։ [40] ԵԼ· ժք· 41։ լգ· 1։ [41] ԵԼ· է։ ը։ թ։ ժ։ ժա։ ժգ։ Սաղ· ճե· 27։ [42] ԵԼ· ժգ· 21, 27, 28, 29։ [43] ԵԼ· ժգ· 1, 35։ [44] Բ Օրէն· ժք· 15, 18։ Գ–ր· գ· 22։ [45] Մ–ղ· ժե· 5։ [46] ԵԼ· ժԹ· 3, 17։ [47] Ն–յ· կգ· 9։ Գ–ղ· գ· 19։ ԵԲ· ք· 2։ [48] ԵԼ· իա· 1։ Բ Օրէն· ե· 27, 31։ լգ· 4։ Ճ–ե· ա· 17։ [49] Հ–ղ· գ· 2։

նազանդ լինիլ Նորան. բայց դէն քցեցին՝ եւ իրանց սրտերովն դարձան եգիպտոսի մէջ։

40 Նա ահաբեկին ասացին. մեզ համար աստուածներ շինիր, որ մեր առաջին գնան. պատճառն որ՝ էն մեսկան՝ որ եգիպտացոց երկրին մեզ հանեց, չենք գիտում ի՞նչ է եղեւ նորան[50]։

41 Նա էն օրերումն մին հորթ շինեցին, եւ մատաղ արին կռոքերին, եւ ուրախանում էին իրանց ձեռների գործքերովն[51]։

42 Աստուած (Նորանցից երեսը) դարձուց եւ Նորանց մատնեց[52] որ երկնքի զօրութիւնըն պաշտեն[53], ինչպէս որ գրված է մարգարէների գրքերումն. միթէ մատաղներ եւ պատարագներ քեզի՞ք ինձ քառասուն տարի անապատումն, ով իսրայէլի տուն[54]։

43 Նա մոզքայ վրանըն (շոփէքն) առիք, եւ հեռիա աստուծոյ աստղըն, էն պատկերն՝ որ արիք Նորանց երկրպագութիւն տալոյ համար, եւ ձեզ կըփոխեմ բաբելացոց էն կողմն։

44 Ա կայուհեան խորանն մեր հարանց հետ անապատումն էր, ինչպէս հրաման առաւ նա՝ որ մեսկան հետ խոսումէր, որ Նորան անէ էն օրինակին պէս՝ որ տեսաւ[55]։

45 Որ Նորան էլ մեր հարքն առին բերին յհեսուայ հետ էն ազգերի երկրին[56], որ Աստուած դուրս քցեց մեր հարանց երեսիցն. մինչեւ դաւթի ժամանակն[57],

46 Որ նա Աստուծոյ առաջին շնորհք գտաւ[58], եւ խնդրեց՝ որ յակոբի Աստուծոյ համար բնակարան գտնի[59]։

47 Սաղոմոնն էլ Նորա համար տուն շինեց[60].

48 Իայց բարձրեայն ոչ թէ ձեռքով շինած տաճարում է բնակվում, բայց ինչպէս որ մարգարէն ասումէ[61].

49 Երկինքն իմ աթոռն է, եւ երկիրն իմ ոտից դնելոյ տեղն. ի՞նչպէսի տուն շինեցիք ինձ, ասումէ Տէրն, կամ ի՞նչ տեղ է իմ հանգիստ առնելոյ (տեղն)[62]։

50 Չէ՞ որ իմ ձեռս արաւ էս ամենըս։

51 Խստապարանոցներ[63] եւ սրտաւերով եւ ականջներով չթլփատվածներ[64], դուք միշտ սուրբ Հոգոյն հակառակ էք կենում. ինչպէս որ ձեր հարքն՝ (էնպէս) էլ դուք։

52 Մարգարէներին որն (է որ) չըհալածեցին ձեր հարքն[65]. եւ սպանեցին Նորանց՝ որ առաջուց պատմեցին էն արդարի գալոյն համար, որ դուք հիմիկ Նորան մատնիչ եւ սպանող էլաք[66]։

53 Որ դուք օրէնքըն առիք հրեշտակների հրամանքովն եւ չըպահեցիք[67]։

54 Նա երբոր լսումէին էս (բանե-

[50] Եսդ. լբ. 1։ [51] ք Օրէն. թ. 16։ Սաղմ. ճզ. 19։ [52] Սաղմ. ձա. 12։ Եսդի. ի. 25, 39։ Հոսէմ. ա. 24։ ք թագ. բ. 11։ [53] ք Օրէն. դ. 19։ Ժէ. 3։ գ Թագ. Ժէ. 16։ իա. 3։ Երեմ. Ժթ. 13։ [54] Ածվ. է. 25, 26։ [55] Եսդ. իե. ի0։ իգ. 30։ Եբր. ը. 5։ [56] Ցես. գ. 14։ [57] Նեհեմ. թ. 24։ Սաղմ. խգ. 2։ Հը. 55։ Գործ. Ժգ. 19։ [58] ա թագ. Ժգ. 1։ բ թագ. է. 1։ Սաղմ. ձի. 19։ Գործ. Ժգ. 22։ [59] գ թագ. ը. 17։ ա Մնաց. իը, 7։ Սաղմ. ճը. 4, 5։ [60] գ թագ. գ. 1։ ը. 20. ա Մնաց. Ժէ. 12։ բ Մնաց. գ. 1։ [61] գ թագ. ը. 27։ բ Մնաց. ը. 6։ գ. 18։ Գործ. Ժէ. 24։ [62] Եսդ. կգ. 1, 2։ Մատթ. է. 34, 35։ իգ. 22։ [63] Եսդ. լբ. 9։ լգ. 3։ Եսդ. խը. 4։ [64] Ղեւտ. իգ. 41։ բ Օրէն. Ժ. 16։ Երեմ. գ. 4։ գ. 10։ թ. 26։ Եզեկ. խգ. 9։ [65] բ Մնաց. լգ. 16։ Մատթ. իա. 35։ իգ. 34, 37։ ա թագ. բ. 15։ [66] Գործ. գ. 14։ [67] Եսդ. ի. 1։ Գաղ. գ. 19։ Եբր. բ. 2։

մեր հարանց երեսիցն. մինչեւ դաւթի ժամանակն[57],

46 Որ նա Աստուծոյ առաջին շնորհք գտաւ[58], եւ խնդրեց՝ որ յակոբի Աստուծոյ համար բնակարան գտնի[59]։

47 Սաղոմոնն էլ Նորա համար տուն շինեց[60].

48 Իայց բարձրեայն ոչ թէ ձեռքով շինած տաճարում է բնակվում, բայց ինչպէս որ մարգարէն ասումէ[61].

49 Երկինքն իմ աթոռն է, եւ երկիրն իմ ոտից դնելոյ տեղն. ի՞նչպէսի տուն շինեցիք ինձ, ասումէ Տէրն, կամ ի՞նչ տեղ է իմ հանգիստ առնելոյ (տեղն)[62]։

50 Չէ՞ որ իմ ձեռս արաւ էս ամենըս։

51 Խստապարանոցներ[63] եւ սրտաւերով եւ ականջներով չթլփատվածներ[64], դուք միշտ սուրբ Հոգոյն հակառակ էք կենում. ինչպէս որ ձեր հարքն՝ (էնպէս) էլ դուք։

52 Մարգարէներին որն (է որ) չըհալածեցին ձեր հարքն[65]. եւ սպանեցին Նորանց՝ որ առաջուց պատմեցին էն արդարի գալոյն համար, որ դուք հիմիկ Նորան մատնիչ եւ սպանող էլաք[66]։

53 Որ դուք օրէնքըն առիք հրեշտակների հրամանքովն եւ չըպահեցիք[67]։

54 Նա երբոր լսումէին էս (բանե-

[50] Եսդ. լբ. 1։ [51] ք Օրէն. թ. 16։ Սաղմ. ճզ. 19։ [52] Սաղմ. ձա. 12։ Եսդի. ի. 25, 39։ Հոսէմ. ա. 24։ ք թագ. բ. 11։ [53] ք Օրէն. դ. 19։ Ժէ. 3։ գ Թագ. Ժէ. 16։ իա. 3։ Երեմ. Ժթ. 13։ [54] Ածվ. է. 25, 26։ [55] Եսդ. իե. ի0։ իգ. 30։ Եբր. ը. 5։ [56] Ցես. գ. 14։ [57] Նեհեմ. թ. 24։ Սաղմ. խգ. 2։ Հը. 55։ Գործ. Ժգ. 19։ [58] ա թագ. Ժգ. 1։ բ թագ. է. 1։ Սաղմ. ձի. 19։ Գործ. Ժգ. 22։ [59] գ թագ. ը. 17։ ա Մնաց. իը, 7։ Սաղմ. ճը. 4, 5։ [60] գ թագ. գ. 1։ ը. 20. ա Մնաց. Ժէ. 12։ բ Մնաց. գ. 1։ [61] գ թագ. ը. 27։ բ Մնաց. ը. 6։ գ. 18։ Գործ. Ժէ. 24։ [62] Եսդ. կգ. 1, 2։ Մատթ. է. 34, 35։ իգ. 22։ [63] Եսդ. լբ. 9։ լգ. 3։ Եսդ. խը. 4։ [64] Ղեւտ. իգ. 41։ բ Օրէն. Ժ. 16։ Երեմ. գ. 4։ գ. 10։ թ. 26։ Եզեկ. խգ. 9։ [65] բ Մնաց. լգ. 16։ Մատթ. իա. 35։ իգ. 34, 37։ ա թագ. բ. 15։ [66] Գործ. գ. 14։ [67] Եսդ. ի. 1։ Գաղ. գ. 19։ Եբր. բ. 2։

բըս), իրանց սրտերումն շատ սաստիկ բարկանումէին, եւ առաքեալներըն կրճատացնումէին նորա վերայ[68]։

55 Ի՛նչ նա լցված էր սուրբ Հոգով[69]. դէպի երկինքն նայեց՝ եւ Աստուծոյ փառքըն տեսաւ, եւ Յիսուսին (էլ)՝ որ կար Աստուծոյ աջ կողմն. եւ ասաց. ահա տեսնումեմ երկինքըն բացված[70], եւ մարդոյ որդին՝ որ կայ Աստուծոյ աջ կողմունն[71]։

56 Ա՛նձ ձայնով աղաղակեցին՝ իրանց ականջներըն խփեցին, եւ ամենքն առհասարակ վազեցին նորա վերայ։

57 Ի՛նչ քաղաքէյն դուրս հանեցին[72]՝ եւ նորան քարկոծումէին[73]. եւ վկաներն իրանց շորերըն դնումէին մին երիտասարդ մարդոյ ոտաց մօտ՝ որ սաւուղ էր կոչվում[74]։

58 Ի՛նչ քարկոծումէին ստեփանոսին, որ կանչումէր եւ ասում[75]. Տէր Յիսուս՝ իմ հոգիս ընդունիր[76]։

59 Ծունր գրաւ՝ եւ բարձր ձայնով աղաղակեց[77]. Տէր՝ էս դրանից համար մեղք մի համարիր[78]. եւ երբոր էս ասաց, ննջեց. եւ սողոս կամակից էր նորա սպանվելոյն[79]։

## ԳԼ · Ը

Երուսաղէմի մէջ էլած հալածմունքի պատճառովն Սամարացոց քաղաքումն Եկեղեցի կըՀաստատվի, 5 Փիլիպպոս սարկաւագի ձեռովն, որ էն տեղ քարոզելով եւ հրաշքներ անելով՝ շատերըն մկրտեւ էր որ նորանց հետ Սիմոն կախարդն էլ՝ որ ժողովրդն յիմարացնումէր, հաւատաց Տէրին, եւ մկրտվեցաւ։ 14 Պետրոս եւ Յովհաննէսն էն տեղ կըղնան նորանց մօտ Եկեղեցին մեծացնելոյ եւ զօրացնելոյ համար, եւ ձեռներըն դնելով նորանց վերայ՝ աղօթք արին որ Սուրբ Հոգինձառնին։ 18 Սիմոն էլ կամեցաւ էս իշխանութիւնն փողով առնել նորանցից, 20 Պետրոս էլ իրան կեղծաւորութեանն եւ ապահովութեանն համար շատ սաստում, եւ յորդորումէ նորան որ ապաշխարէ, եւ Յովհաննէսի հետ վկայութիւն տալով՝ եւ Աստուծոյ բանըն խօսելով դարձ կանէն Երուսաղէմ. 26 Տէրի հրեշտան Փիլիպպոսին կուղարկէ որ դնայ Եթովպացի (հապաշ) ներքինոյն (խաղտ) քարոզէ եւ նորան մկրտէ։

1 Ի՛նչ էն օրերումն մեծ հալածմունք էլաւ Երուսաղէմումն Եկեղեցոյն վերայ. եւ ամենքն ցրվեցան Հրէաստանի գիւղերին մէջ՝ եւ սամարիայի մէջ[1], առաքեալներից զատ (սաղայէ)։

2 Ի՛նչ Աստուածաւախ մարդիկ ստեփաննոսին վերառին՝ եւ մեծ սուգ արին նորա վերայ[2]։

3 Ի՛սայց սողոս վնաս էր տալիս Եկեղեցոյն. եւ տանից տուն էր մտնում, եւ մարդկանց եւ կանանց քաշումէր՝ եւ մտաներումէր բանտի (պընդանէ) մէջ[3]։

4 Ի՛նչ ցրվածներն գան էին գալիս՝ եւ (Աստուծոյ) խօսքըն աւետա-

[68] Գործ · է · 33։ [69] Գործ · ը · 5։ [70] Եզէկ · ա · 1։ Մատթ · գ · 16։ Գործ · ժ · 11։ [71] Դան · է · 13, [72] գ Թագ · իա · 13։ Ղեւի · դ · 29։ Եբր · ժգ · 12։ [73] Գէորգ · իդ · 16։ [74] բ Օրին · ժգ · 9 · 10։ ժէ · 7։ Վայր · 59։ Գործ · իբ · 20։ [75] Գործ · թ · 14։ [76] Սաղմ. լա · 5։ Ղեւի · իգ · 46։ [77] Գործ · թ · 40։ ի · 36։ իա · 5։ [78] Մատթ · է · 44։ Ղեւի · գ · 28։ իգ · 34։ [79] Վէր · 57։ Գործ · իբ · 20։ [1] Գործ · ժա · 19։ [2] Ծննդ · իգ · 2։ ծ · 10։ բ Թագ · գ · 31։ [3] Գործ · է · 57։ թ · 1, 13, 21։ իբ · 4։ իգ · 10, 11։ ա Կորնթ · ժէ · 9։ Գաղ · ա · 13։ Փիլիպ · գ · 6։ ա Տիմ · ա · 13։

բանութեան[4]։

5 Ասաց փիլիպպոսն[5] վէր եկաւ սամարացոց քաղաքն՝ եւ Քրիստոսին քարոզութեր նոցանց։

6 Ժողովուրդներն միաբան ականջ էին դնում փիլիպպոսի խօսքերին, երբոր նորանք լսութեին եւ տեսնում էն նշաններըն, որ անում։

7 Պատճառն որ՝ շատերն որ պիղծ դեւեր ունէին՝ մեծ ձայնով աղաղակութեին, եւ դուրս էլին գալիս[6]։

8 Եւ շատ անդամալուծներ եւ կաղեր բժշկվութեին։

9 Եւ շատ ուրախութիւն էլաւ էն քաղաքումն. մին սիմոն անուն մարդ՝ առաջուց էն քաղաքումն էր. կախարդ էր, եւ սամարացոց ազգըն յիմարացնում էր[7]. իրան անձին համան ասելով՝ թէ մին մեծ բան է[8]։

10 Որ փոքրներից մինչեւ մեծերն ամէնքն նորան էին նայում, եւ ասում էին. (թէ) սա է Աստուծոյ զօրութիւնն՝ որ մեծ է կոչվում։

11 Ա՛տիկ էին տալիս նորան. ինչու որ՝ շատ ժամանակ կախարդութիւններով յիմարացրել էր նոցանց։

12 Ասյց երբոր հաւատացին փիլիպպոսին, որ Աստուծոյ արքայութեան համար էր աւետարանում[9], եւ Յիսուսի Քրիստոսի անունին համար, ամէնքն (էլ) մկրտվութեին (թէ) մարդիքն եւ (թէ) կանայքն։

13 Եւ սիմոն ինքն էլ հաւատաց, եւ երբոր մկրտվեցաւ՝ միշտ փիլիպպոսին հետ էր. եւ երբոր տեսնում էին նշաններըն եւ մեծ մեծ զորութիւններըն՝ որ լինում, զարմանում։

14 Երբոր առաքեալքն՝ որ Երուսաղէմումն էին՝ լսեցին, թէ սամարիայի մէջն էլ Աստուծոյ խօսքըն ընդունեցին, պետրոսին եւ յովհաննէսին ուղարկեցին նորանց մօտ։

15 Որ նորանք վէր եկին եւ աղօթք արին նորանց վերայ, որ սուրբ հոգին առնեն[10]։

16 Ինչու որ՝ մինչեւ էն ժամանակն դեռ իսկի նորանցից մէնին վերայ (սուրբ հոգին) չէր հասել[11]. բայց մէնակ Տէր Յիսուսի անունովն[12] մկրտված էին[13]։

17 Էն ժամանակն ձեռներըն դրին նորանց վերայ՝ եւ (նորանք) սուրբ հոգին առնում էին[14]։

18 Սիմոն երբոր տեսաւ՝ թէ առաքեալների ձեռն վերադնելովն՝ սուրբ հոգին տրվում է, փող բերաւ նորանց՝ եւ ասաց.

19 Ինձ էլ տուէք էս իշխանութիւնս, որ ում վերայ ձեռք դնեմ՝ սուրբ հոգին առնէ։

20 Եւ պետրոսն նորան ասաց. քո արծաթդ քեզ հետ կորչի. պատճառն որ՝ դու կարծեցիր, որ Աստուծոյ պարգեւներըն[15] փողով կառնես[16]։

21 Դու բաժին եւ վիճակ չունիս էդ բանումդ. պատճառն որ՝ քո սիրտդ շիտակ չէ Աստուծոյ առաջին։

22 Պաշխարիր դու քո էդ չարութենիցդ եւ Տէրին աղաչէր, որ լինի թէ խղճութիւն լինի քեզ քո սրտի դէշ խորհուրդներից[17]։

23 Ինչու որ տեսնում եմ քեզ՝ որ

[4] Մատթ. ժ. 23։ Գործ. ժա. 19։ [5] Գործ. զ. 5։ [6] Մատթ. ժզ. 17։ [7] Գործ. ժգ. 6։ [8] Գործ. ե. 36։ [9] Գործ. ա. 3։ [10] Գործ. բ. 38։ [11] Գործ. ժԹ. 2։ [12] Գործ. ժ. 48։ ժԹ. 5։ [13] Մատթ. իը. 19։ Գործ. բ. 38։ [14] Գործ. զ. 6։ ժԹ. 6։ Եբր. զ. 2։ [15] Գործ. բ. 38։ ժ. 45։ ժա. 17։ [16] Մատթ. ժ. 8։ դ Թագ. ե. 16։ [17] Դատ. դ. 27։ բ Տիմ. բ. 25։

մաղձի դառնութեան եւ անիրաւութեան կապանքն եմ[18]։

24 Ասէն պատասխան տուաւ եւ ասաց. դուք ինձ համար աղաչանք արէք Տէրին[19], որ ինձ վերայ մին բան չըգայ նորանցից, որ դուք ասացիք։

25 Իւ նորանք վկայութիւն տալով՝ Յ.ստուծոյ բանն խօսեցին, եւ գարձան երուսաղէմ. եւ սամարացոց շատ գիւղերի մէջն աւետարանեցին։

26 Տէրի հրեշտակն խօսեց փիլիպպոսին հետ՝ եւ ասաց. վեր կաց դու եւ գնա հարաւային կողմն՝ են ճանապարհովն, որ երուսաղէմից վեր է գալիս գազայ, որ է անապատ։

27 Իւ վերկացաւ գնաց. եւ ահա մին եթովպացի (հոգով)[20], եւ թօպացոց կանդակ թագուհոյ նեռքինի (նոպրմ) եւ իշխան. որ նորա ամէն գանձին (նոպչայի) վերայ էր. որ եկել էր երուսաղէմ երկրպագութիւն անելոյ[21]։

28 Իւ էնտղեցն յետ էր գառնում. եւ իրան կառքումն (պոպոպայոմն) նստած, եսայեայ մարգարէոյ թիւրն կարդում էր։

29 Սուրբ Հոգին փիլիպպոսին ասաց. մտանցիր եւ հասիր էդ կառքիդ (պոպոպայիդ)։

30 Իւ փիլիպպոս առաջ վազեց՝ եւ լսում էր որ եսայեայ մարգարէոյ թիւրն կարդում էր, եւ ասաց. դիտումն էդ որ դու կարդումես։

31 Եայ էլ ասաց՝ ի՞նչպէս կըկարենամ, թէ որ մին չառաջնորդէ ինձ. եւ փիլիպպոսին աղաչեց՝ որ վերէկլի նստի նորա հետ։

32 Իւ գրի դլուխն՝ որ կարդում էս էր. ինչպէս ոչխար վարվեցաւ սպանվելոյ (տեղն). եւ ինչպէս գառն՝ իրան խուզողի առաջին լուռ կացած՝ էնպէս չի բանում իրան բերանն[22]։

33 Եայ խոնարհութեան նորա դատաստանն վերկալվաւ, նորա ցեղն ով պիտի պատմէ. ինչու որ՝ նորա կեանքն երկրից վեր է առնըվում։

34 Եընըքինն պատասխան տուաւ փիլիպպոսին՝ եւ ասաց. աղաչում եմ քեզ՝ մարգարէն էս ումի համար է ասում. իրա՞ն համար, թէ մին ուրիշի համար։

35 Փիլիպպոսն իրան բերանն բաց արաւ, եւ էս գրքից սկսած՝ Յիսուս Քրիստոսն աւետարանեց նորան[23]։

36 Երբոր ճանապարհումն գնում էին, եկին մին ջրի մօտ. եւ նեռքինին ասաց. ահ՝ ջուր՝ ինչ կարգելէ ինձ՝ որ մկրտվիմ[24]։

37 Իւ նորան ասաց. թէ որ քո բոլոր սրտովդ հաւատում էս, կարելի է[25]. նա պատասխան տուաւ եւ ասաց. հաւատում եմ՝ թէ Յիսուս Քրիստոսն Յ.ստուծոյ որդին է[26]։

38 Իւ հրաման տուաւ, որ կառքն կանդնացնեն. եւ երկուսն (էլ) վեր եկին ջուրն՝ փիլիպպոսն եւ նեռքինին, եւ մկրտեց նորան։

39 Իւ երբոր էն ջրից դուս էին, սուրբ Հոգին եկաւ նեղքինցն վերայ[27]. եւ Տէրի հրեշտակն փիլիպպոսին յափշտակեց, եւ նեղքինն էլ ջրաեսաւ նորան. եւ ուրա-

[18] Եբր. ժբ. 15։ [19] Ծննդ. ի. 7, 17։ Եմ. ը. 8։ Թուոց. իա. 7։ գ Թագ. ժգ. 6։ Ճ.ոբ. իը. 8։ Ցաւ. ե. 16։ [20] Սաք. գ. 10։ [21] Ճ.ղե. ժբ. 20։ [22] Եսայ. ծգ. 7, 8։ [23] Ղ.ւկ. իգ. 27։ Գործ. ժը. 28։ [24] Գործ. ժ. 47։ [25] Մատթ. իը. 19։ Մարկ. ժգ. 16։ [26] Մատթ. ժգ. 16։ Ճ.ղե. դ. 70։ Թ. 35, 38։ ժա. 27։ Գործ. Թ. 20։ ա Ճ.ղե. դ. 15։ ե. 5, 13։ [27] գ Թագ. ժբ. 12։ դ Թագ. բ. 16։ Եմ. գ. 12, 14։

խուճեւով գնումէր իրան ճանա պարհն։
40 Բայց փիլոպոան աղօտոսումն

գտաւ. եւ մեն էր գալիս եւ աւե տարանումէր՝ մինչեւ որ եկաւ կե սարիա։

## ԿԼ· Թ

1 Սաուղ դամասկոս գնալով ճանապարհումն, 4 Վերկընկնի գեանին, 10 Եւ Ղաբեաղ լինելոյ կընարբվի. 18 Եւ Ընանիայիցն կընկրավի. 20 Ինչն էլ վերկինալով չուտով Քեսուսին կըքարոզէ։ 23 Հրէաներն խորհուրդ կանեն՝ որ նորան սպանեն, 29 Եւ Ցաւ նաց հետ էլ խօսումէր՝ եւ նորանք էլ խորհուրդ կանեն, որ սպանեն նորան, բայց նա էս ամենից էլ կազատվի։ 31 Եկեղեցիին խաղաղութիւնն, պետրոսի անդամալուծ Ենեան բժշկելն. 36 Եւ Տաբիթաին յարութիւն առնել տալն։

1 Բայց սօղոմն՝ որ դեռ լցված է
աշուվախ տալովին, եւ Տէրի աշա
կերտներըն սպանելոյ մաքովին, քա
հանայապետներին մօտ եկաւ[1]։
2 Եւ նորանցից թղթեր խընդ
րեց դամասկոսի ժողովարանների վե
րայ. որ եթէ մինն գտնէ էն ճանա
պարհին հետեւօղ՝ մարդիք կամ կա
նայք, նորանց կապած բերէ երու
սաղէմ։
3 Եւ երբոր գնումէր նա, մօտե
ցաւ դամասկոսին[2], եւ յանկարծակի
նորա չորս կողմին լոյս փայլեց եր
կնքից։
4 Եւ վերընկաւ գետնին եւ ձայն
լսեց՝ որ ասումէր նորան, սաւուղ սա
ւուղ՝ ինչո՞ւ ես ինձ հալածումէ[3]։
5 Եւ (նա) ասաց. (դու) ո՞վ ես
Տէր. եւ նա ասաց. ես եմ Յի
սուսն՝ որ դու հալածումես. դժուար
է քեզ՝ խթանին (ծռեղն) քացի
տալ[4]։
6 Եւ խիստ վախով ընկրված եւ
ապուշ մնացած ասաց. Տէր՝ ինձ
ի՞նչ ես կամենումէ որ ես անեմ[5]։
7 Եւ Տէրն ասաց նորան. կանգ

նէր եւ մարդ էդ քաղաքդ, եւ կը
պատմվի քեզ՝ թէ ինչ պէտք է
քեզ՝ որ անես. բայց էն մարդիքն՝
որ նորա հետ գնումէին, ապուշ
կանգնած էին[6]. մինակ ձայնըն լսու
մէին, բայց իսկի մին բան չէին տես
նումէ։
8 Սօղոմն վերկացաւ գետնիցն, եւ
բաց աչքով իսկի մինին չէր տես
նումէ. նորա ձեռիցն բռնած մարդիկն
դամասկոս։
9 Եւ էնտեղ էր երեք օր՝ եւ չէր
տեսնումէ. եւ ոչ կերաւ եւ ոչ խմեց։
10 Եւ դամասկոսումն մին աշա
կերտ կար անանիա անուն[7], որ Տէրն
տեսիլքի մէջն նորան ասաց. ա՛նա
նիա, եւ նա ասաց. էստեղ եմ Տէր։
11 Եւ Տէրն նորան ասաց. վեր
կաց՝ եւ գնա էն փողոցն՝ որ շիտակ
է կոչվումէ, եւ յուդայի տանն մնն
եկ՝ մին սօղոս անուն տարսծացի
մարդ, որ դեռ աղօթք է անումէ[8]։
12 Եւ տեսիլքի մէջն տեսաւ մին
անանիա անուն մարդ՝ որ մտաւ եւ
ձեռն դրաւ իրան վերայ, որ տեսնէ։
13 Ընանիան պատասխան տուաւ.

[1] Գործ. ը, 3։ Գծղ. ա· 13։ ա Տիմ. ա· 13։ [2] Գործ. իբ· 6։ իզ· 12։ ա Կորնթ. ժե· 8։ [3] Ա՞ռաք. իե· 40, Լուսյե։ [4] Գործ. է· 39։ [5] Ղուկ. գ· 10։ Գործ. բ· 37։ ժզ· 30։ [6] Դան. ժ· 7։ Գործ. իբ· 9։ իզ· 13։ [7] Գործ. իբ· 12։ [8] Գործ. իա, 39։ իբ· 3։

Տէր՝ ես էն մարդոյն համար չատերիցն լսեցի՝ թէ երուսաղէմումն որչափ չարիք առաւ քո սրբերին[9]։

14 Ու հասել էլ քահանայապետին իշխանութիւն ունի՝ որ էն ամէնքըն կապէ, որ քո անունըդ կանչումեն[10]։

15 Տէրն ասաց նորան. գնա դու, ինչու որ՝ նա ինձ համար ընտրված աման է[11], որ իմ անունըս վեր առնէ տանի հեթանոսներին[12]. թագաւորների՛ եւ իսրայէլի որդոց առաջին[13]։

16 Ինչու որ՝ հենց ես նորան ցոյց կըտամ՝ թէ նա որչափ իմ անունիս համար պիտի չարչարվի[14]։

17 Ու անանիան գնաց[15] եւ մտաւ էն տունն. եւ ձեռներըն դրաւ նորա վերայ[16], եւ ասաց. սաւուղ եղբայր՝ վեր նայիր. Տէրն ուղարկեց ինձ, էն Յիսուսն՝ որ երեւեցաւ քեզ ճանապարհումն՝ որ գալես էիր. որ տեսնես՝ եւ սուրբ Հոգով լցվիս[17]։

18 Ու շուտով նորա աչքերիցն կեղեւների պէս (բաներ) վեր ընկան. տեսաւ՝ եւ վերկացաւ եւ մկրտվեցաւ։

19 Ու կերակուր առաւ՝ զօրացաւ. եւ մինքանի օր դամասկոսումն աշակերտներին հետ էլաւ[18]։

20 Ու շուտով ժողովարաններումն Յիսուսին քարոզեց, թէ սա է Աստուծոյ որդին[19]։

21 Ամէնքն էլ՝ որ լսումէին, զարմացած էին, եւ ասումէին. չէ՞ որ սա էր՝ որ երուսաղէմումն թալանումէր նորանց[20], որ Յիսուսի անունըն կանչումէին. եւ հենց նրաՀամար է էստեղ եկել, որ սորանց կապած՝ տանի քահանայապետներին մօտն։

22 Նայց սօղոսն էլ աւելի զօրանումէր՝ եւ յաղթումէր էն հրէաներին, որ դամասկոսումն բնակված էին[21]. հաստատ հասկացնումէր՝ թէ սա է Քրիստոսն։

23 Երբոր շատ օրեր անցէին կենումէ, հրէաներն խորհուրդ արին՝ որ սպանեն նորան[22]։

24 Նորանց նենգութիւնն յայտնի էլաւ սօղոսին, ինչու որ՝ գիշեր եւ ցերեկ դռներըն պահումէին՝ որ նորան սպանեն[23]։

25 Ու աշակերտներն նորան գիշերումն առին, եւ քրիթոցով պարսպից կախելով վեր բերին[24]։

26 Երբոր սօղոսն երուսաղէմ եկաւ, ջանք էր անում՝ որ աշակերտներին հետ միաւորվի. եւ ամէնքն նորանից վախենումէին, եւ չէին հաւատում՝ թէ աշակերտ է[25]։

27 Նայց բառնաբաս նորան առաւ տարաւ առաքեալների մօտն. եւ նորանց պատմեց՝ թէ ինչպէս ճանապարհումն Տէրին տեսաւ, եւ թէ նորա հետ խօսեց[26], եւ թէ դամասկոսումն համարձակ քարոզեց Յիսուսի անունըն[27]։

28 Ու նորանց հետ էր երուսաղէմումն մնալով եւ դուրս գալով, եւ Յիսուսի անունըն համարձակ քարոզելով[28]։

29 Յունաց հետ էլ խօսումէր՝ եւ

[9] Գործ. է. 59։ իբ. 16։ ա Կորնթ. ա. 2։ բ Տիմ. բ։ 22։ [11] Գործ. ժգ. 2։ իբ. 21։ իգ. 17։ Հռոմ. ա. 1։ ա Կորնթ. ժե. 10։ Գաղ. ա. 15։ Եփես. գ. 7, 8։ ա. Տիմ. բ. 7։ բ Տիմ. ա. 11։ [12] Հռոմ. ա. 5։ ժա. 13։ Գաղ. բ. 7, 8։ [13] Գործ. իե. 22, 23։ իզ. 1, Եսայի. [14] Գործ. ի. 23։ իա. 11։ բ Կորնթ. ժա. 23։ [15] Գործ. իբ. 12. 13։ [16] Գործ. ը. 17։ [17] Գործ. բ. 4։ գ. 31։ ը. 17։ ժգ. 52։ [18] Գործ. իզ. 20։ [19] Գործ. ը. 37։ [20] Գործ. ը. 3։ Վէր. 1։ Գաղ. ա. 13, 23։ [21] Գործ. ժը. 28։ [22] Գործ. իգ. 12։ իե. 3։ բ Կորնթ. ժա. 26։ [25] բ Կորնթ. ժա. 32։ [24] Ցեղ. ը. 15։ ա Թագ. ժի. 12։ [25] Գործ. իբ. 17։ Գաղ. ա. 17, 18։ [26] Գործ. գ. 36։ ժգ. 2։ [27] Վէր. 20, 22։ [28] Գաղ. ա. 18։

վիճաբանութիւն էր անոմ[29]. եւ նորանք խորհուրդ էին անում, որ սպանեն նորան[30]։

30 Եւ եղբայրքն՝ որ իմացան, նոքա տարան կեսարիա, եւ ուղարկեցին նորան տարսոն։

31 Բայց եկեղեցին ամէն հրէաստանի՝ սամարիայի եւ գալիլեայի մէջն խաղաղութիւն ունէր, շինվում եւ Տէրի երկիւղին (վախին) հետեւում. եւ սուրբ Հոգով միխիթարութեան նովն շատանում էր[31]։

32 Եւ էլաւ երբոր պետրոսն մեն էր գալիս չորս կողմէն ամէնին մօտ, եկաւ էն սրբերին մօտ, որ լիւդիայի մէջն բնակված էին[32]։

33 Եւ գտաւ մին մարդ գոտաւ, որ նորա անունն ենաս էր. (սա) ութ տարի (էր՝ որ) մահիճի (ռէօշէնի) մէջ անդամալուծ դրած էր։

34 Եւ պետրոսն ասաց նորան. ենա՝ Տէր Յիսուս Քրիստոսն քեզ բժշկէ, վեր կաց, դու ինքդ քո անկողինդ (ռեզոէյդդ) լաւի տուր շինիր. եւ շուտով վերկացաւ[33]։

35 Եւ ամէնքն նորան տեսին՝ որ բնակված էին լիւդիայի եւ սարոնի մէջն[34], եւ նորանք էլ դարձան դէպի Տէրն[35]։

36 Եւ Յոպպէի մէջն մին աշակերտ էլած կին կար՝ անունն տաբիթա, որ կրթարգմանվի այծնիկ. սա լիքն էր բարի գործքերով եւ ողորմութիւնով՝ որ անում էր[36]։

37 Եւ էլաւ էն օրերումն՝ որ նա հիւանդացաւ եւ մեռաւ, լուացին նորան եւ դրին վերնատունն[37]։

38 Եւ լիւդիան մօտիկ էր Յոպպէին. երբոր աշակերտներն լսեցին՝ թէ պետրոսն հետեղ է, նորա մօտ երկու մարդ ուղարկեցին աղաչելով, որ չուշանայ նորանց մօտ գալ։

39 Եւ պետրոսն վերկացաւ՝ եւ նորանց հետ եկաւ. երբոր եկաւ, նորան հանեցին էն վերնատունն. եւ ամէն որբևէրիներն նորա չորս կողմէն կանգնեցին՝ լայ էին լինում, եւ ցոյց էին տալիս էն հագուստներն եւ էն շորերն, որչափ որ այծնիկն նորանց համար անում էր։

40 Եւ պետրոսն ամէնին դուրս հանեց[38], ծունր դրաւ՝ աղօթք արաւ[39]. եւ դարձաւ դէպի (նորա) մարմինն՝ եւ ասաց. տաբիթա՝ վեր կաց Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն. եւ նա աչքերն բաց արաւ[40]. եւ պետրոսին որ տեսաւ՝ շինտակ նստեց։

41 Եւ ձեռքն տուաւ նորան եւ վերկացուց նորան. եւ կանչեց որբերին եւ որբևէրիներին, եւ նորանց առաջին կենդանի կանգնացուց նորան։

42 Եւ յայտնի էլաւ ամէն Յոպպէի մէջն, եւ շատերն հաւատացին Տէրն[41].

43 Եւ նա շատ օր մնաց Յոպպէումն՝ մին կաշի քերօղ (փոստաղ) սիմոնի մօտն[42]։

---

[29] Գործ. ղ. 1։ ժա. 20։ [30] Ա Կր. 23։ Բ Կորնթ. ժա, 26։ [31] Գործ. ը. 1, [32] Գործ, ը. 14։ [33] Գործ. գ. 6, 16։ դ։ 10։ [34] ա Մնաց. ե. 16։ [35] Գործ. ժա. 21։ [36] ա Թագ. բ. 10։ Տիտ. գ. 8։ [37] Գործ. ա. 13։ [38] Մատթ. թ. 25։ [39] Գործ. է. 59։ [40] Մարկ. ե. 41։ 42։ Ցածկ. ժա. 43։ [41] Ցածկ. ժա. 45։ ժբ. 11։ [42] Գործ. ժ. 6։

# ԳԼ · Ժ·

1 Կուռնելիոս մին բարեպաշտ հարիւրապետ մարդ, 5 Մին հրեշտակից հրաման առնելով պետրոսի մօտ մարդիկ կուղարկէ՝ որ նորան կանչեն։ 11 Պետրոս մին տեսլեամբ, 15 հրամման կառնէ Տէրից՝ որ հեթանոսներն պիղծ չի համարի։ 34 Երբոր ինքն Քրիստոսին կը քարոզէ Կուռնելիոսի եւ նորա ազգականներին եւ ընտանի բարեկամներին, 44 Սուրբ Հոգին նորանց ամենին վերայ վէր կըջայ, 48 Եւ նորանք կըմկրտվին։

1 Ա՛հա մարդ կար՝ Կուռնելիոս անուն Հարիւրապետ, էն գնտիին (պէօլ-ենկեան)՝ որ Իտալեացի էր կոչվում՝։

2 Հարեպաշտ[1] եւ Աստուածավախ (էր) իրան ամէն տանովին. եւ շատ ողորմութիւն էր անում ժողովրդի մէջն. եւ ամէն ժամ (սահաթ) աղօթք էր անում դէպի Աստուած[2]։

3 Ա՛յս օրի (սահաթ) տեսլեքի մէջն յայտնի տեսաւ Աստուծոյ հրեշտակըն, որ մըտա նուէմ նորան մօտ՝ եւ նորան ասում, ով Կուռնելիոս[3]։

4 Ա՛յնե նա երբոր նայեց դէպի նա՝ շատ վախով բռնվեցաւ, եւ ասաց. ի՞նչ է՝ Տէր. եւ նա ասաց նորան. քո աղօթքդ՝ եւ քո ողորմութիւն ներդ վերբէան Աստուծոյ առաջին՝ որ յիշվին։

5 Ա՛յնե հիմիկ մարդիկ ուղարկիր Յոպպէ՝ եւ մին սիմօն (մարդ) կանչիր՝ որ պետրոս է կոչվում՝։

6 Ա՛յս մանել է մին կաշի քերող (փոստալ) սիմօնի մօտ, որ նորա տունն ծովին մօտ է[4]։

7 Ա՛յնե երբոր գնաց էն հրեշտակն՝ որ նորա հետ խօսումէր, իրան ծառաներից երկուսին՝ եւ իրան սպասաւորներից մին բարեպաշտ զինըւոր կանչեց.

8 Ա՛յնե ամենըն պատմեց նորանց, եւ ուղարկեց նորանց Յոպպէ։

9 Ա՛յնե յետեւի օրումն երբոր նոքանք ճանապարհ ընկան, եւ էն քաղաքին մօտեցան, պետրոսն վերբէաւ կըտուրն վեց ժամումն (սահաթ)՝ որ աղօթք անէ[5]։

10 Այլեց՝ եւ կամենումէր հաց ուտել. եւ երբոր նորանք դեռ պատրաստումէին՝ զարմանք էլաւ նորա վերայ։

11 Ա՛յնե տեսաւ երկինքըն բացված[6], եւ մին մեծ կըտաւի պէս ամանի՝ չորս ծայրից կապած կախած էր, եւ վէր եկաւ եւ նստաւ երկրի վերայ։

12 Որ նորանումէ կային երկրի անմեն կերպ չորս ոտանիքներ եւ սողացօղներ եւ երկնքի թռչունները։

13 Ա՛յնե երկնքից ձայն եկաւ նորան. վէր կաց պետրոս, մորթիր՝ եւ կեր։

14 Ա՛յնե պետրոսն ասաց. քաւ լինի Տէր, ինչու որ իսկի մին ժամանակ էլ խառնակ եւ պիղծ բան չըկերայ[7]։

15 Մինէլ ձայն եկաւ նորան. էն որ Աստուած սրբեց՝ դու պիղծ մի համարիր[8]։

[1] Վ.Պ. · 22 · Գործ. ը · 2 · իբ · 12 · [2] Վ.Պ. · 35 · [3] Վ.Պ. · 30 · Գործ. ժա · 13 · [4] Գործ. թ · 43 · [5] Գործ ժա · 5, Խ.Պ. · [6] Գործ. է · 55 · Յայտ. ժի · 11 · [7] Ղեւտ. ժա · 4 · ի · 25 · ի Օրէն. ժդ · 3, 7 · Եզէկ. գ · 14 · [8] Մատթ. ժե · 11 · Վ.Պ. · 38 · Հռովմ. ժդ · 14, 17, 20 · ա Կորնթ · ժ · 25 · ա Տիմ. գ · 4 · Տիտ · ա · 15 ·

16 Այս երեք անգամ էլաւ՝ եւ էն ամանն վերացաւ երկինքն:

17 Ու պետրոսն դեռ որ զարմացած էր իրան մտքումն, թէ ինչ պիտի լինի էն տեսիլքն՝ որ տեսաւ. ահա էն կուռնէլիոսիցն ուղարկված մարդիքն՝ սիմոնի տան համար հարցրին, եւ դրան մօտն կանգնեցին.

18 կանչեցին եւ հարցնում էին, թէ էն սիմոնն՝ որ պետրոս է կոչվում՝ էստեղ մնա՞ծ է:

19 Ու դեռ որ պետրոսն տեսիլքին համար միտք էր անում, Հոգին նորան ասաց. ահա մին քանի մարդիք քեզ ուզումեն[9]:

20 Այց վեր կաց վեր եկ, եւ նրանց հետ գնա առանց մին խղճմտանք անելց, ինչու որ՝ ես ուղարկեցի նրանց[10]:

21 Ու երբոր պետրոսն վեր եկաւ նորանց մօտ, ասաց. ահա ես եմ՝ որ ուզումէք. ի՞նչ բան կայ՝ որ նորա համար եկիք դուք:

22 Նորանք ասացին, կուռնէլիոս հարիւրապետն՝ արդար եւ Աստուածավախ մարդ[11], որ հրէաների ամէն ազգիցն բարի վկայութիւն ունի[12]. նա հրաման առաւ սուրբ հրեշտակիցն՝ որ քեզ կանչէ իրան տունն եւ քեզանից խօսքեր լսէ:

23 Ա՛յնպս կանչեց նորանց՝ եւ իրան մօտ պահեց. եւ յետեւի օրումն պետրոս վերկացաւ՝ եւ նորանց հետ գնաց. եւ էն եղբայրներիցն՝ որ Յոպպէյումն էին, մին քանիսն նորա հետ եկին[13]:

24 Ու էգուցվան օրումն մտին կեսարիա. եւ կուռնէլիոս իրան ազգականներին եւ ընտանի բարեկամներին կանչել էր, եւ սպասումէր նորանց:

25 Ու էլաւ երբոր պետրոսն ներս էր մտնում՝ կուռնէլիոսն դուրս եկաւ նորա առաջն, եւ նորա ոտներն ընկած՝ երկրպագութիւն էր անում:

26 Ու պետրոսն կանգնացրուց նորան՝ եւ ասաց. վերկաց՝ հենց ես ինքս էլ մարդ եմ[14]:

27 Ու նորա հետ խօսելով ներս մտաւ. եւ էնտեղ շատ մարդ ժողովված գտաւ:

28 Ու նորանց ասաց. դուք ինքներդ գիտումէք (թէ) ինչպէս չի վայելում հրէայ մարդոյ՝ որ մին այլազգի դիպչի կամ մտնեայ[15]. եւ Աստուած ինձ ցոյց տուաւ[16]՝ որ մարդկանցից իսկի մինն էլ խառնակ կամ անսուրբ չըսկիտի ասվի:

29 Վրահամար էլ առանց մին բան մտածելոյ եկի, երբոր կանչվեցայ. բայց հիմիկ հարցնումեմ, ի՞նչ բան նի համար կանչեցիք ինձ:

30 Ու կուռնէլիոսն ասաց. չորս օրից առաջ մինչեւ էս ժամս՝ իմ տան մէջն աղօթք էի անում իննն ժամումն, եւ ահա մին մարդ եկաւ՝ կանգնեց իմ առաջիս[17] սպիտակ շորերով[18], եւ ասաց.

31 Կուռնէլիոս՝ քո աղօթքդ լսվեցաւ[19]. եւ քո ողորմութիւններդ յիշվեցան Աստուծոյ առաջին[20]:

32 Ու հիմիկ ուղարկիր Յոպպէ՝ եւ կանչիր էն սիմոնն՝ որ պետրոս է կոչվում. սա մնել է մին կաշի քրօղ (փոստով) սիմոնի տուն ծովին մօտ, որ նա գայ, եւ քեզ հետ խօսի:

33 Ու ես շուտով քեզ մօտ ուղարկեցի. (եւ) դու շատ լաւ արիր՝

[9] Գործ. ժա. 12: [10] Գործ. ժե. 7: [11] Գործ. ժ. 1, 2, Խոյնե: [12] Գործ. իբ. 12: [13] Ա՛յլ. 45: Գործ. ժա. 12: [14] Գործ. ժդ. 14, 15: Ցայտ. ժթ. 10: իբ. 9: [15] Ցուխ. գ. 9: Ժը. 28: Գործ. ժա. 3: Գաղ. բ. 12, 14: [16] Գործ. ժե. 8, 9: Եփես. գ. 6: [17] Գործ. ա. 10: [18] Ա՛յտն. իբ. 3: Ա՛յտն. ժգ. 5: Զախ. իդ. 4: [19] Ա՛յլ. 4, Խոյնե: Դան. ժ. 12: [20] Եբր. զ. 10:

որ եկիր. Հիմիկ մենք ամենքս Ա-
ստուծոյ առաջին կանգնած ենք՝ որ
լսենք էն ամենըն, որ Տէրին քեզ
հրամայած է:

34 Պետրոն իրան բերանըն բաց
արաւ՝ եւ ասաց. Ճշմարտութենով
հասկացել եմ, որ Ա̈ստուծոյ առաջին
երեսպաշտութիւն չկայ[21]:

35 Այլ ամեն ազգերումն, ով որ
վախենումէ նորանից՝ եւ արդարու-
թիւն է գործում, ընդունելի է նո-
ցան[22]:

36 Էս էն բանըն ուղարկեց Ի-
սրայէլի որդոցն համար՝ որ խաղաղու-
թիւն աւետարանէ Յիսուսի Քրիս-
տոսի ձեռովն[23]. սա է ամենի Տէրն[24]:

37 Դուք ինքներդ գիտումէք էն
բանըն, որ էլաւ ամեն Հրէաստա-
նումն գալիլեայիցն սկսած՝ էն մկըր-
տութենիցն ետեւ, որ Յովհաննէսն
քարոզեց[25]:

38 Էն Յիսուսըն՝ որ Նազարէ-
թիցն (է)՝ որ նորան Ա̈ստուած սուրբ
Հոգով եւ զօրութենով օծեց[26], որ
մեն եկաւ բարի անելով՝ եւ սատա-
նայիցն ամեն բռնվածներըն բժշկե-
լով համար, ինչու որ՝ Ա̈ստուած նորա
հետն էր[27]:

39 Էս մենք վկայ ենք էն ամենին՝
որ Հրէաստանի երկրումն՝ եւ երու-
սաղէմումն արաւ[28], որ նորան էլ
փայտից կախած սպանեցին[29]:

40 Էնորան Ա̈ստուած յարոյց ե-
րեք օրումն, եւ նորան յայտնի ա-
րաւ[30].

41 Ոչ թէ ամեն ժողովրդին,
բայց մեզ Ա̈ստուածանից առաջ
ընտրված վկաներիս[31], որ էլ կե-
րինք եւ խմեցինք նորա հետ՝ նորա
մեռելների միջից յարութիւն առա-
նելուցն ետեւ[32]:

42 Էս պատուիրեց մեզ՝ որ ժո-
ղովրդին քարոզենք[33] եւ վկայու-
թիւն դնենք, թէ նա Ա̈ստուածա-
նից սահմանված է[34] կենդանիների
եւ մեռելների դատաւոր[35]:

43 Էնորան ամեն մարգարէներն
վկայութիւն են տալիս[36], որ նորա
անունովն մեղաց թողութիւն կաս-
նէն էն ամենքն՝ որ հաւատումեն նո-
ցան[37]:

44 Էս դեռ քանի որ պետրոսն էս
բանըս խօսումէր, սուրբ Հոգին վէր
եկաւ էն ամենին վերայ՝ որ էն խօս-
քըն լսումէին[38]:

45 Օ՜արմացան էն թլփատութե-
նիցն հաւատացեալներն՝ որ պետրո-
սին հետ եկել էին[39]. որ հեթա-
նոսների մէջ էլ սուրբ Հոգոյ պար-
գեւներն թափվումէին[40]:

46 Էնչու որ՝ լսումէին՝ որ նորանք
լեզուներով խօսումէին՝ եւ Ա̈ստու-

[21] բ Օրին. ժ. 17: բ Մ Նաթ. ժթ. 7: ՃՒԲ. լգ. 19: Հռոմ. բ. 11: Գաղ. բ. 6: Եփես. գ. 9: Կող. գ. 25: ա Պետր. ա. 17: [22] Գործ. ժե. 9: Հռոմ. բ. 13, 27: գ. 22, 29: ժ. 12, 13: ա Կորնթ. ժբ. 13: Գաղ. գ. 28: Եփես. բ. 13, 18: գ. 6: [23] Եսայ. ծէ. 19: Եփես. բ. 14, 16, 17: Կող. ա. 20: [24] Մատթ. իբ. 18: Հռոմ. ժ. 12: ա Կորնթ. ժե. 27: Եփես. ա. 20, 22: ա Պետր. գ. 22: Ցայտ. ժէ. 14: ժթ. 16: [25] Ղուկ. գ. 14: [26] Ղուկ. գ. 18: Գործ. բ. 22: գ. 27: Եբր. ա. 9: [27] ՃՒՀ. գ. 2: [28] Գործ. բ. 32: [29] Գործ. է. 30: [30] Գործ. բ. 24: [31] ՃՒՀ. ժգ. 17 22: Գործ. ժգ. 31: [32] Ղուկ. իգ. 30, 43: ՃՒՀ. իա. 13: [33] Մատթ. իբ. 19, 20: Գործ. ա. 8: [34] ՃՒՀ. է. 22, 27: Գործ. ժէ. 31: [35] Հռոմ. ժգ. 9, 10: բ Կորնթ. է. 10: բ Տիմ. գ. 1: ա Պետր. գ. 5: [36] Եսայ. ծգ. 11: Երեմ. լա. 34: Գոմ. Թ. 24: Մէսէ. է. 18: Զաք. ժգ. 1: Մաղ. գ. 3: Գործ. իզ. 22: [37] Գործ. ժե. 9: իզ. 18: Հռոմ. ժ. 11: Գաղ. գ. 22: [38] Գործ. գ. 31: ը. 15, 16, 17: ծա. 15: [39] վէր. 23: [40] Գործ. ժա. 18: Գաղ. գ. 14:

ծոյն փառաւորութեանն։

47 Ո՞ն ժամանակին պետրոսն պատասխան տուաւ՝ եւ ասաց. միթէ մինն կարօղ է ջուրըն արգելլել՝ որ սորանք չմկրտվին. որ սուրբ Հոգին նորան՝ որ մինքեանի օր էնանէ կենայ։

ԳԼ. ԺԸ

1 Առաքեալներն եւ հաւատացեալներն Երուսաղէմումն քաշվուածին պետրոսից, թէ նա անթլփատ մարդկանց մօտ մտել էր, 5 Ինքն իրան անձըն կարդարացնէ, 18 Եւ նորան ամէնն էլ կընդունին։ 19 Փիւնիկէ եւ կիպրոս Աւետարանն տարածվելուն համար, Բառնաբասն էն քաղաքներին կուղարկին՝ որ նորանց հաստատէ։ 26 Աշակերտներն առաջ Անտիոքումն քրիստոնեայ կանուանվին։ 27 Սորանք սովի ժամանակ հրեաստանումն բնակված եղբարներին օգնութիւն կանին։

1 Առաքեալներն եւ էն եղբարներն՝ որ հրէաստանի կողմերումն էին՝ լսեցին, որ հեթանոսների մէջն էլ Աստուծոյ խօսքըն ընդունեցին։

2 Այդ երբոր պետրոսն վեր էլաւ եկաւ երուսաղէմ, էն հաւատացեալներն՝ որ թլփատութենէին (էին)՝ քաշվուածին նորանից[1]։

3 Եւ ասումէին, թէ նա անթլփատ մարդկանց մօտ մտաւ[2], եւ նորանց հետ (հայ) կերաւ[3]։

4 Եւ պետրոսն սկսեց կարդով պատմել նորանց՝ եւ ասաց[4]։

5 Էս յոպպէ քաղաքումն աղօթք էի անում՝ եւ զարմանքով տեսիլք տեսի. որ մին մեծ կտաւի պէս ամանի՝ չորս ծայրիցն կախած երկնքիցն վէր էր գալիս՝ եւ հասաւ մինչեւ ինձ մօտ[5]։

6 Որոն պըլջած նայումէի. եւ տեսի երկրի չորս ոտանիքներըն, եւ գազաններըն, եւ սողացողներըն, եւ երկնքի թռչուններըն։

7 Եւ ձայն լսեցի՝ որ ասումէր ինձ. պետրոս՝ վէրկաց՝ մորթիր եւ կեր։

8 Եւ ասացի. քաւ լիցի Տէր. ինչու որ՝ իսկի մին ժամանակ մին խառնակ եւ անսուրբ բան իմ բերանս չէ մտած։

9 Եւ ձայնն երկրորդ անգամ պատասխան տուաւ. էն որ Աստուած սրբից դու խառնակ մի համարեր։

10 Եւ էս երեք անգամ էլաւ, եւ բոլոր ամէնն միւնէլ վերացաւ երկինքն։

11 Եւ ահա շուտով երեք մարդիք եկին կանգնեցին՝ էն տան առաջին, որտեղ որ ես կայի, կեսարիայից ինձ մօտ ուղարկված։

12 Եւ Հոգին ինձ ասաց՝ որ նորանց հետ գնամ՝ եւ իսկի խղճմտանք չանեմ[6]. սորանք էլ էս վեց եղբարքս ինձ հետ եկին, եւ մտինք էն մարդոյ տունն[7].

13 Եւ պատմեց մեզ՝ թէ ինչպէս տեսաւ հրեշտակին իրան տան միջումն, որ կանգնած էր՝ եւ ասումէր նորան. ուղարկիր յոպպէ, եւ պետրոս կոչված սիմոնին կանչիր[8].

14 Որ քեզ հետ բաներ կըխօսի, որ նորանով կապրիս դու՝ եւ քո ա-

[1] Գործ. ժա. 17։ ԺԵ. 8, 9։ Հռովմ. ժ. 12։ [42] ա Կորնթ. ա. 17։ [43] Գործ. բ. 38։ ը. 16։ [1] Գործ. ժ. 45։ Գաղ. բ. 12։ [2] Գործ. ժ. 28։ [3] Գաղ. բ. 12։ [4] Ղուկ. ա. 3։ [5] Գործ. ժ. 9, Խոյլ։ [6] Ցովէլ. ԺԶ. 13։ Գործ. ժ. 19։ ԺԵ. 7։ [7] Գործ. ժ. 23։ [8] Գործ. ժ. 30։

մէն տունդ։

15 Եւ երբոր սկսեցի խօսիլ, սուրբ Հոգին եկաւ նորանց վերայ, ինչպէս որ մեզ վերայ սկզբումն[9]։

16 Ձիշդեցի Տէրի էն խօսքըն՝ որ ասումէր. Յովհաննէսն ջրով մկրտեց[10], բայց դուք սուրբ Հոգով կըմկրտվիք[11]։

17 Ուրեմն՝ թէ որ Աստուած հաւասարակաց պարգեւըն նորանց էլ տըւաւ[12], ինչպէս որ մեզ՝ որ Տէր Յիսուս Քրիստոսին հաւատացինք. ես ի՞նչպէս կարօղ էի Աստուծոյն արգելել[13]։

18 Եւ երբոր լսեցին էս, լուռ կացան եւ փառաւորումէին Աստուծոյն՝ եւ ասումէին. ուրեմն հեթանոսներին էլ Աստուած կենաց ապաշխարութիւնըն տուաւ[14]։

19 Եւ նորանք որ ցրված էին էն նեղութենիցն՝ որ ստեփաննոսի վրայ էլաւ, մինչեւ փիւնիկէ եւ կիպրոս եւ անտիոքիա հասին. խօսք մըներին Աստուծոյ բանըն չէին խօսում, բայց մէնակ հրէաներին[15]։

20 Եւ նորանցից մինքանիսն կային կիպրացի եւ կիւրենացի մարդիք, որ անտիոք մտած խօսումէին յունաց հետ՝ (եւ) աւետարանում էին Տէր Յիսուսըն[16]։

21 Եւ Տէրի ձեռն նորանց հետ էր[17], եւ շատերն հաւատացին՝ եւ դէպի Տէրն դարձան[18]։

22 *Լուս բանս, որ նորանց համար էլաւ՝ լսվեցաւ էն եկեղեցոյ ականջն երուսաղէմումն, որ երուսաղէմումն էր, եւ բառնաբասին ուղարկեցին մինչեւ անտիոք[19]։

23 Ինչ երբոր եկաւ, եւ Աստուծոյ շնորհքներըն տեսաւ՝ ուրախ էլաւ, եւ մխիթարումէր ամէնին՝ որ սրտի յօժարութենով Տէրին հետ մնան[20]։

24 Ինչու որ՝ նա արդուն մարդով մարդ էր՝ եւ սուրբ Հոգով եւ հաւատքով լցված[21], եւ շատ ժողովուրդ աւելացաւ Տէրին համար[22]։

25 Եւ դուրս եկաւ գնաց տարսոն՝ որ սօղոսին խնդրէ, եւ նորան գտաւ բերաւ անտիոք[23]։

26 Եւ էլաւ որ նորանք էն բոլոր տարին ժողովվումէին էն եկեղեցոյն մէջ՝ եւ շատ ժողովուրդ էին սովորեցնում, եւ աշակերտներն առաջ անտիոքումն Քրիստոնեայ անուանվեցան։

27 Եւ էն օրերումն երուսաղէմիցն մարգարէներ վէր եկին անտիոք[24]։

28 Եւորանցից մինն՝ ագաբոս անունն վերկացաւ՝ հոգովն նշանակեց, (թէ) բոլոր աշխարհքիս մէջն մեծ սով պիտի լինի, որ կղօդիոսի ժամանակումն էլաւ[25]։

29 Ինչց էն աշակերտներիցն, ինչպէս որ մին կարօղ էր՝ նորանց ամէն մէկն ընտրեցին՝ որ պէտք լինօղ բան ուղարկեն էն եղբայրներին՝ որ հրէաստանումն բնակված էին[26]։

30 Որ էլ հենց արին՝ եւ ուղարկեցին էրեցներին մօտ՝ բառնաբասի եւ սօղոսի ձեռովն[27]։

[9] Գործ. բ. 4։ [10] Մատթ. գ. 11։ Ցուկ. ա. 26, 33։ Գործ. ա. 5։ Ժթ. 4։ [11] Եփես. խդ. 3։ Ցովհ. բ. 28։ գ. 18։ [12] Գործ. Ժե. 8, 9։ [13] Գործ. ժ. 47։ [14] Հռոմ. ժ. 12, 13։ Ժե. 9, 16։ [15] Գործ. ը. 1։ [16] Գործ. գ. 1։ թ. 29։ [17] Ղուկ. ա. 66։ Գործ. բ. 47։ [18] Գործ. թ. 35։ *Ա՛մ Տեառն 42։ [19] Գործ. թ. 27։ [20] Գործ. ժգ. 43։ ԺԳ. 22։ [21] Գործ. գ. 5։ [22] Վէր. 21։ Գործ. ե. 14։ *Ա՛մ Տեառն 43։ [23] Գործ. թ. 30։ [24] Գործ. բ. 17։ ԺԳ. 1։ Ժե. 32։ խա. 9։ ա Կորնթ. ԺԲ. 28։ Եփես. գ. 11։ [25] Գործ. խա. 10։ [26] Հռոմ. Ժե. 26։ ա Կորնթ. ԺԶ. 1։ բ Կորնթ. թ. 1։

## ԻԴ · ԺՐ

1 Հերովդէս թագաւորին քրիստոնեաներին դէմ արած հալածանքն, Յակոբին սրով կըսպանէ եւ Պետրոսին էլ բանտի մէջ կը դնէ· որ Եկեղեցին աղօթքով մին հրեշտակ կազատէ նորան։ 20 Հերովդէս Տիւրոսեցւոյն վայելած փառքն իրան վերայ առնելուն համար, Տէրի հրեշտակն կը զարկէ նորան եւ որդուներովը լցված կըսատակի։ 24 Նորան սատակվելուցն ետեւ Աստուծոյ խօսքն աճումներ եւ շատանում։

1 Ի ժամանակներումն հերովդէս թագաւորն ձեռն ձգեց՝ որ եկեղեցւոյն մին քանիսըն չարչարէ։

2 Եւ Յակոբին՝ Յովհաննէսի եղբօրըն սրով սպանեց[1]։

3 (Եւ որ) տեսաւ՝ թէ հրեաներին հաճոյ է, էլ աւելացաւ պետրոսին էլ բռնել։ Եւ բաղարջակերաց օրերն էր[2]։

4 Նորան երբոր բռնեց՝ բանտի (պանդոկի) մէջ դրաւ, եւ մատնեց չորս անգամ չորս զինուորներին՝ որ պահեն։ Եւ կամենում՝ որ զատկին ետեւ նորան բերէ ժողովրդի (առաջն)[3]։

5 Եւ պետրոսն բանտի միջումն պահված էր։ Եւ նորա համար անդադար աղօթք էր լինում եկեղեցւոյն դէպի Աստուած։

6 Երբոր հերովդէս կամեցաւ՝ որ նորան դուրս բերէ։ Են գիշերումն պետրոսն քնած էր երկու զինուորների մէջ՝ երկու շղթայով (պճնկլնէ) կապած։ Եւ պահապաններն դուռն առաջին բանտըն պահում էին։

7 Եւ ահա Տէրի հրեշտակն եւ կաւ կանգնեց նորա վերայ[4], եւ տան մէջն լոյս ծագեց, եւ խթեց պետրոսի կողերին՝ եւ նորան զարթնացրուց՝ եւ ասաց։ Վեր կաց շուտով։ Եւ շղթաներն (պճնկլնէ) վեր ընկան նորա ձեռներից։

8 Եւ հրեշտակն ասաց նորան։ Քո գօտիկըդ կապիր՝ եւ հողամաներըդ քցիր ոտներդ, եւ ինձ պես առաւ։ Եւ ասաց նորան։ Շորերըդ քեզ վերայ քցիր՝ եւ իմ ետեւէս ել։

9 Եւ դուրս եկաւ գնում նորա ետեւէն, եւ չէր գիտում՝ թէ ճըշմարիտ է էն բանն՝ որ հրեշտակին էլաւ[5]։ Ինչու որ՝ կարծում թէ երազ է տեսնում[6]։

10 Եւ երբոր նորանք անցկացան առաջին պահապաններումն եւ երկրորդ պահապաններումն, եկին մինչեւի երկաթի դուռն՝ որ դէպի քաղաքն էր տանում։ որ ինքն իրանից բաց էլաւ նորանց համար, եւ մտին մին փողոց անցկացան, եւ շուտով հրեշտակն նորանից հեռացաւ[7]։

11 Եւ պետրոսի միտքն երբոր իբան վերայ եկաւ, ասաց։ Հիմիկ շիտակ իմացայ, որ Տէրն իրան հրեշտակըն ուղարկեց[8]։ Եւ փրկեց ինձ հերովդէսի ձեռքիցն, եւ էն ամէն բաներիցն՝ որ հրեաների ժողովուրդն սպասում էր[9]։

12 Եւ երբոր միտք արաւ՝ եկաւ

---

[27] Գործ. ժբ. 25։ [1] Մատթ. դ. 21։ ի. 23։ [2] Ելք. ժբ. 14, 15։ իգ. 15։ [3] Ցաւհ. ի. 18։ [4] Գործ. ե. 19։ [5] Սաղմ. ճիզ. 1։ [6] Գործ. ժ. 3, 17։ ժա. 5։ [7] Գործ. ժզ. 26։ [8] Սաղմ. լդ. 7։ Դան. գ. 28։ զ. 22։ Եբր. ա. 14։ [9] Ցոբ. ե. 19։ Սաղմ. լդ. 18, 19։ լդ. 22։ իա. 3։ ղէ. 10։ բ Կորնթ. ա. 10։ բ Պետր. բ. 9։

Յովհաննէսի մայր մարիամայ[10] տունն, որ մարկոս կոչվեցաւ[11], որ էնտեղ շատեր կային ժողովված՝ եւ աղօթք էին անում[12]:

13 Էն դուռըն որ թակեց, մին աղախին (պաթաշ)՝ որ նորա անունն Հռոդէ էր՝ մօտ եկաւ, որ ականջ դնէ:

14 Էն պետրոսի ձայնըն որ ճանաչեց՝ ուրախութենից դուռըն բաց չարաւ. ներս վազեց եւ պատմեց, թէ պետրոսն դռանն կանգնած է:

15 Նորանք ասացին նորան՝ խիմարվել ես. եւ նա էլ աւելի հաստատուէր՝ թէ էսպէս է. եւ նորանք ասումէին՝ թէ նորա հրեշտակն կըլինի[13]:

16 Էն պետրոսն շուտ շուտ դուռըն թակումէր. երբոր բաց արին, տեսին նորան՝ եւ զարմացան:

17 Էն նա ձեռով ցույց էր տալիս նորանց որ լուռ կենան[14]. եւ պատմեց՝ թէ ինչպէս Տէրն բանտից իրան հանեց. եւ ասաց, էս բանըս պատմեցէք յակոբին եւ եղբայրներին. եւ դուրս եկաւ գնաց ուրիշ տեղ:

18 Էն երբոր առաւօտ էլաւ՝ մեծ խռովութիւն էր էն զինուորների մէջըն, (թէ) պետրոսն ի՞նչ էլաւ:

19 Հայց Հերովդէսն երբոր նորան ուղեց՝ եւ չգտաւ, պահապաններին հարցրուց՝ եւ հրաման տուաւ՝ որ սպանեն նորանց. եւ հրեաստանիցն վէր եկաւ կեսարիա՝ եւ էնտեղ էր լինում:

20 Էն Հերովդէսն շատ բարկացած էր տիւրացոց եւ սիդօնացոց վերայ. եւ նորանք ամէնքն միաբան եկին նորա մօտն. եւ բղաստոսին թագաւորի ներսի տան վերակացուին հաւանացնելով՝ խաղաղութիւն էին խընդրում. ինչու որ՝ նորանց երկիրն թագաւորի երկրից էր կերակրըվում[15]:

21 Մի հանդիսաւոր օր՝ Հերովդէսն թագաւորական շոր էր հագել՝ եւ տիվանումն նստած էր, եւ ամէնի առաջին խօսումէր նորանց հետ:

22 Էն ամբոխն (խալկն) աղաղակումէր՝ թէ էդ Աստուծոյ ձայն է, եւ ոչ մարդոյ (ձայն):

23 Էն շուտով Տէրի հրեշտակն զարկեց նորան[16], ինչու որ՝ Աստուծոյն փառք չտուաւ. եւ որդունքներով լցվաւ՝ եւ սատակվեցաւ[17]:

24 Էն Աստուծոյ խօսքն աճումէր եւ շատանում[18]:

25 Յառնաբասն եւ սօղոսն երբոր պաշտամունքըն կատարեցին[19]՝ երուսաղէմիցն յետ դարձան. եւ յովհաննէսին էլ[20] իրանց հետ էին առել[21]՝ որ մարկոս էր կոչված:

---

[10] Գործ. ժե. 37: [11] Գործ. գ. 23: [12] Վէր. 5: [13] Ծննդ. խը. 16: Մատթ. ժը. 10: [14] Գործ. ժգ. 16: ժէ. 33: իա. 40: [15] Գ թագ. ե. 9. 11: Եզէկ. իե. 17: [16] Ա թագ. ե. 38: բ թագ. իդ. 17: [17] Սաղմ. ճժե. 1: [18] Եսայ. նե. 11: Գործ. ղ. 7: ժէ. 20: Կող. ա. 6: [19] Գործ. ժա. 29, 30: [20] Վէր. 12: [21] Գործ. ժգ. 5, 13: ժե. 37:

## ԿԱ· ԺՊ

*1 Սօղոմն եւ Բառնաբասն հեթանոսներին գնալով կը ջրկուին։ 7 Սիրդի պօղոսի եւ Եղիմաս կախարդի պատմութիւնն։ 14 Պօղոսն Պիսիդիայի Անտիոքումն կը քարոզէ Յիսուսին թէ Քրիստոսն է։ 42 Հեթանոսներն հաւատքի կը գան. 45 Բայց Հրէաներն նորանց խօսքերուն հակառակ կ'ելլայ, 46 Սրահամար նորանք եւ հեթանոսներին կ'ըսեն։ 48 Գէպի յաւիտենական կեանքն կարգուածներն կը հաւատան։*

1 Անտիոքումն՝ Էնտեղ լինօղ եւ կեղեցոյ միջումն կային մին քանի մարգարէներ եւ վարդապետներ[1]. բառնաբասն՝ եւ Նիւգէր որ ասած շըմաւօնն[2], եւ ղուկիոս կիւրենացին, եւ Հերովդէս չորրորդապետի ծծմբոր որդի մանայինն, եւ սօղոսն[3]։

2 Դէտ քանի որ Տէրի պաշտօնի մէջն կային՝ եւ պաս էին պահում, սուրբ Հոգին ասաց. ինձ համար ջընկեցէք բառնաբասին եւ սօղոսին՝ էն գործին համար[4], որ ես դորանց կանչել եմ[5]։

3 Էն ժամանակն պաս պահեցին՝ եւ աղօթք արին, նորանց վերայ ձեռըն դրին՝ եւ արձակեցին[6]։

4 Էնե նորանք սուրբ Հոգուցն ուղարկված՝ վեր եկին սելեւկիա, եւ էնտեղից նաւով գնացին կիպրոս[7]։

5 Էնե սալամինա որ հասին՝ Աստուծոյ խօսքըն պատմում էին հրէաներուն ժողովարաններումն[8]. յօհաննէսին էլ պաշտօնեայ ունէին[9]։

6 Ման եկին ամէն կղզումն (ափոյոմն) մինչեւի պափոս, եւ էնտեղ մին կախարդ մարդ գտին՝ սուտ մարգարէ՝ հրէայ (ջհոոփ), որ նորա անունն բարէյեսու էր[10]։

7 Որ փոխանակ բդեշխ սէրգիոս պօղոսի իմաստուն մարդոյ հետ էր. նա բառնաբասին եւ սօղոսին աղաչելով՝ խնդրումէր որ Աստուծոյ խօսքըն լսէ։

8 Էլորանց հակառակ կացաւ եւ լինաս կախարդն[11]. ինչու որ էսպէս է թարգմանվում նորա անունն, ուզումէր փոխանակ բդեշխին հաւատքին փոխել։

9 Այց սօղոսն, որ էլ պօղոս (է կոչվում)՝ սուրբ Հոգով լցված մինիկ տուաւ նորան[12],

10 Էյ ասաց. ով դու՝ որ ամէն խաբէբայութեանով եւ խորամանկութեանով լցված ես, սատանայի որդի եւ ամէն արդարութեան թշնամի. (էլ) չե՞ս դադարում Տէրի ուղիղ ճանապարհներըն ծռելուց[13]։

11 Էյ հիմի՝ ահա Տէրի ձեռն քեզ վերայ (է)[14], եւ կույր կլինիս՝ որ չըտեսնես արեգակըն՝ մինչեւ մին ժամանակ. եւ շուտով մուխ եւ խաւար ընկաւ նորա վերայ, եւ մին էր գալիս ձեռք բռնօղ մարդիկ էր ուզում։

[1] Գործ. ժա. 27։ ժգ. 26։ ժե. 35։ [2] Գործ. ժա. 22–26։ [3] Հռովմ. ժչ. 21։ [4] Թուոց. ը. 14։ Գործ. ժ. 15։ իբ. 21։ Հռովմ. ա. 1։ Գալ. ա. 15։ բ. 9։ [5] Մարկ. ժ. 33։ Գործ. ժգ. 25։ Հռովմ. ժ. 15։ Եփես. գ. 7, 8։ ա Տիմ. բ. 7։ բ Տիմ. ա. 11։ Եբր. է. 4։ [6] Գործ. ղ. 6։ [7] Գործ. դ. 36։ [8] Ղևտ. 46։ [9] Գործ. ժբ. 25։ ժե. 37։ [10] Գործ. ը. 9։ [11] Եզր. է. 11։ բ Տիմ. գ. 8։ [12] Գործ. դ. 8։ [13] Մատթ. ժգ. 38։ Ցաքեր. ը. 44։ ա Ցաքեր. գ. 8։ [14] Եզր. ժ. 3։ ա Թագ. է. 6։

12 Յն ժամանակն փոխանակ բը-
դեշխին երբոր տեսաւ էն բաներըն՝ որ
էլան, հաւատաց, եւ Տ֊էրի վարդա-
պետութեանն վերայ զարմացաւ։

13 Յե պօղոսն եւ (նորա) հետ լի-
նող մարդիքն պաֆեայիցն դուրս է-
լան՝ եկին պամփիւլիայի պերգէ քա-
ղաքն։ (բայց) յօհաննէսն նորանցից
հեռացաւ՝ եւ յետ գարձաւ երուսա-
ղէմ[15]։

14 Յե նորանք պերգեայիցն գնա-
ցին՝ եկին պիսիդիայի անտիոք. եւ
շաբաթի օրումն ժողովարանին մէջ
մտին՝ նստեցին[16]։

15 Յե օրէնքըն եւ մարգարէնե-
րըն կարդալուցն ետեւ, ժողովրդա-
պետներն նորանց մօտ ուղարկեցին
եւ ասացին[17]. մարդիք եղբարք՝ թէ
որ դուք էդ ժողովրդիդ համար
մխիթարութեան խօսքեր ունիք՝ խո-
սեցէք[18]։

16 Պօղոսն վերկացաւ՝ իրան ձե-
ռըն շարժեց եւ ասաց[19]. ով իս-
րայէլացի մարդիք, եւ դուք որ Ա֊
ստուածանից վախուէք՝ լսեցէք[20]։

17 Յս իսրայէլացի ժողովրդիս
Ա֊ստուածն՝ մեր հարանցըն ընտ-
րեց[21]. եւ ժողովրդըն բարձրաց-
ուց պանդխտութենումն՝ եգիպտա-
ցոց երկրի մէջն[22]. եւ բարձր բազկով
նորանց էնտեղից դուրս հանեց[23]։

18 Յե քառասուն տարի չափ ժա-
մանակ նորանց կերակրեց անապատի
մէջն[24]։

19 Յե քանանու երկրումն եօթը
ազգեր քանդեց[25]՝ եւ նորանց երկի-
րըն նորանց ժառանգել տուաւ[26]՝

20 Չորս հարիւր եւ յիսուն տա-
րոյ չափ[27]. եւ սրանից ետեւ նորանց
դատաւորներ տուաւ մինչեւ սա-
մուէլ մարգարէն[28]։

21 Յե ապա առաջ գալով՝ թա-
գաւոր ուզեցին, եւ Ա֊ստուած տը-
ւաւ նորանց կեսիայի որդի սաուղըն՝
մին մարդ բենիամենի ցեղիցն, քա-
ռասուն տարի[29]։

22 Յե երբոր նորան փոխեց[30],
դաւթին նորանց համար թագաւոր
կանգնացրուց, որ նորան էլ վկայու-
թիւն տուաւ եւ ասաց[31]. յեսսէի
որդի դաւթին գտի[32] իմ սրտիս ու-
զածին պէս մարդ՝ որ նա իմ ամէն
կամքըս կանէ[33]։

23 Սորա զաւակիցն Ա֊ստուած[34]
աւետիքին պէս իսրայէլացոց համար
Յիսուս[35] փրկիչն վերկացրուց[36]։

24 Ինչպէս որ յօհաննէսն նորա
երեսի առաջին մտնելոյ ժամանա-
կումն, առաջուց ապաշխարութեան
մկրտութիւնըն քարոզեց իսրայէլի
ամէն ժողովրդին[37]։

25 Յե երբոր յօհաննէսն վերջա-
ցընում էր իրան գնալըն՝ ասում էր.
ինձ համար ով էք կարծում՝ որ լի-
նիմ. ես էն չեմ[38], բայց ահա իմ
ետեւէս գալիս է նա, որ եսչեմ ար-
ժանի նորա ոտաց կօշիկներըն ար-
ձակելոյ։

[15] Գործ. ժե. 38։ [16] Գործ. ժզ. 13։ ժէ. 2։ ժը. 4։ [17] Ղեւի. դ. 16։ Վոյր. 27։ [18] Եբր. ժգ. 22։ [19] Գործ. ժբ. 17։ [20] Վոյր. 26, 42, 43։ Գործ. ժ. 35։ [21] Բ Օրին. է. 6, 7։ [22] Ելք. ա. 1։ Սաղմ. ճե. 23, 24։ Գործ. է. 17։ [23] Ելք. զ. 6։ ժգ. 14, 16։ [24] Ելք. ժզ. 35։ Թուա. ժգ. 33, 34։ Սաղմ. ղե. 9, 10։ Գործ. է. 36։ [25] Բ Օրին. է. 1։ [26] Ցե. ժգ. 1, 2։ Սաղմ. հը. 55։ [27] Դատ. բ. 16։ [28] ա Թագ. դ. 20։ [29] ա Թագ. ը. 5։ ժ. 1։ [30] ա Թագ. ժե. 23, 26, 28։ ժզ. 1։ Ա֊ղէթ. ժգ. 11։ [31] ա Թագ. ժզ. 13։ բ Թագ. բ. 4։ է. 3։ [32] Սաղմ. ձժ. 20։ [33] ա Թագ. ժգ. 14։ Գործ. է. 46։ [34] Եսայ. ժա. 1։ Ղեւի. ա. 32, 69։ Գործ. բ. 30։ Հեսէմ. ա. 3։ [35] բ Թագ. է. 12։ Սաղմ. ձբ. 11։ [36] Մատթ. ա. 21։ Հեսէմ. ժա. 26։ [37] Մատթ. գ. 1։ Ղեւի. դ. 3։ [38] Մատթ. գ. 11։ Մարկ. ա. 7։ Ղեւի. դ. 16։ Ցովհ. ա, 20, 27։

26 Ա՛րդիք եղբարք՝ աբրահամի ցեղի որդիքներ, եւ ո՛վ որ ձեզ-նում աստուած ախտ են. ձեզ ու-ղարկվեցաւ էս փրկութեան խօսքս[39]:
27 Ասյց նորանք որ բնակված են երուսաղէմումն, եւ նորանց իշխան-ներն՝ նորան չըճանաչեցին[40]. եւ մարգարէների խօսքերին պէս, որ ա-մեն շաբաթներումն կարդվումեն[41]՝ դատաստան անելով կատարեցին[42]:
28 Եւ թէպէտ նորա վերայ մին մեռնելոյ պատճառ չըգտին[43], պի-ղատոսից ուզեցին՝ որ նորան սպա-նէ[44]:
29 Եւ երբոր էն ամէնքն՝ որ նորա համար գրված էր կատարեցին[45], փայտից վէր բերին՝ եւ գերեզմանի մէջ դրին[46]:
30 Ասյց Աստուած նորան մեռել-ների միջից յարոյց[47]. որ շատ օրե-րով երեւեցաւ նորանց[48],
31 Որ նորա հետ գալիլեայից վեր էին էլել երուսաղէմ[49]. որ նորանք հիմա հիմիկ էլ նորա համար վկաներ են ժողովրդի առաջին[50]:
32 Եւ մենք աւետարանում-ենք ձեզ էն խոստումնքըն՝ որ հարանցն էված էր[51]:
33 Ինչու որ՝ Աստուած էն կատա-րեց մեզանում՝ որ նորանց որդիքն ենք, Յիսուսին յարուցանելով. ինչ-պէս որ երկրորդ սաղմոսումն գրված է. դու իմ որդիս ես. ես էս օր ծնայ քեզ[52]:
34 Եւ էն որ մեռելների միջից յարոյց նորան, եւ որ էլ չըպիտի դառնայ ապականութեան մէջ՝ էս-պէս ասաց. թէ ձեզ կըտամ դաւթի հաւատարիմ սրբութիւններըն[53]:
35 Ինչու որ՝ (նա) ուրիշ տեղումն էլ ասումէ. քո սրբոյն չես տալ որ ապականութիւն տեսնէ[54]:
36 Ասյց դաւթեն էն իրան ազ-գումն ծառայեց Աստուծոյ կամքին, եւ ննջեց, եւ գնաց աւելացաւ իրանց հարանց հետն՝ եւ ապականութիւն տեսաւ[55]:
37 Ասյց նորան՝ որ Աստուած յա-րոյց, նա ապականութիւն չըտեսաւ:
38 Ծանո՛ղ լինի ձեզ մարդիկ եղբարք, որ սորանով մեզայ թողութիւն է աւետարանվում ձեզ[56]. եւ էն ամէն բաներից՝ որ մովսէսի օրէնքովն չըկարացիք արդա-րանալ.
39 Սորանով ամէն ով որ հաւա-տայ՝ կարդարանայ[57]:
40 Զգո՛յշ կացէք՝ որ չըլինի թէ ձեզ վերայ գայ էն որ մարգարէնե-րիցն ասված է (թէ)[58].
41 Տեսէք անարգողներ, եւ զար-մացէք եւ փշացէք. ինչու որ՝ ես մին գործ եմ գործում ձեր օրերումն. (էնպէսի) գործ, որ նորան չէք հա-

[39] Մատթ. ժ. 6: Ղուկ. իգ. 47: Սաղմ. 46: Գործ. գ. 26: [40] Ղուկ. իգ. 34: Գործ. գ. 17: [41] Սկսելով. ը. 8: [42] Ալէք. 14, 15: Գործ. ժե. 21: [43] Ղուկ. իգ. 20, 44: Գործ. իզ. 22: իը. 23: [44] Մատթ. իե. 22: Մարկ. ժե. 13, 14: Ղուկ. իգ. 21, 22. Ցովհ. ժթ. 6 15: [45] Գործ. գ. 13, 14: [46] Ղուկ. ժը. 31: իգ. 44: Ցովհ. ժթ. 28, 30, 36, 37: [47] Մատթ. իե. 59: Մարկ. ժե. 46: Ղուկ. իգ. 53: Ցովհ. ժթ. 38: [48] Մատթ. իը. 16: Գործ. ա. 3: Սկսելով. ժե. 5, 6, 7: [49] Գործ. ա. 11: [50] Գործ. ա. 8: բ. 32: գ. 15: ե. 32: [51] Ծննդ. գ. 15: ժբ. 3: իբ. 18: Գործ. իզ. 6: Հռոմ. գ. 13: Գաղ. գ. 16: [52] Սաղմ. բ. 7: Եբր. ա. 5: ե. 5: [53] Եսայ. ծե. 3: [54] Սաղմ. ժգ. 10: Գործ. բ. 31: [55] գ Թագ. բ. 10: Գործ. բ. 29: [56] Ընդհ. լա. 34: Դան. թ. 24: Ղուկ. իգ. 47: ա Ցովհ. բ. 12: [57] Եսայ. ծգ. 11: Հռոմ. գ. 28: ը. 3: Եբր. է. 19: [58] Եսայ. իթ. 14: Ամբ. ա. 5:

ատալ՝ թէ որ միւնն պատմէ ձեզ ։

42 Այլ երբոր հնազանդին դուրս եւ կին, աղաչուեցին որ մէկել շաբաթումն էլ էն բանըն խօսին իրանց համար ։

43 Երբոր ժողովուրդն արձակվեցաւ, էն հրեաներին՝ եւ նոր դարձած աստուածապաշտ մարդկացիցն շատերն՝ գնումէին պօղոսի եւ բառնաբասի հետեւէն . որ էլ նորանց հետ խօսումէին , եւ նորանց հաւանացնումէին[59] որ Աստուծոյ շնորհքի մէջն կենան միւն[60] ։

44 Այլ երբոր մէկել շաբաթըն եկաւ , համարեա թէ բոլոր քաղաքն հաւաքվեցաւ՝ որ Աստուծոյ խօսքըն լսեն ։

45 Երբոր հրեաներն էն ամբոխըն (խալքըն) տեսին՝ նախանձով լցվան . եւ պօղոսիցն ասված խօսքերին հակառակ կենալով՝ հայհոյումէին[61] ։

46 Պօղոսն եւ բառնաբասն համարձակութենով ասումէին . առաջ պէտք էր Աստուծոյ բանըն ձեզ խօսել[62] . եւ որովհետեւ դուք դուրս էք անում նորան , եւ արժան չէք համարում ձեզ յաւիտենական կեանցն[63] , ահա դէպի հեթանոսներն ենք դառնում[64] ։

47 Պատճառն որ՝ Տէրն էսպէս պատուիրեց մեզ . (թէ) քեզ հեթանոսներին լոյս պրի՝ որ դու փրկութիւն լինիս մինչեւ երկրի ծայրերն[65] ։

48 Երբոր հեթանոսներն էս լսումէին՝ ուրախանումէին , եւ Տէրի խօսքըն փառաւորումէին . եւ հաւատացին նորանք՝ որ կարգված էին դէպի յաւիտենական կեանքն[66] ։

49 Այլ Աստուծոյ խօսքն փովումէր էն ամէն գաւառն ։

50 Հայց հրեաներն դրդեցին աստուածապաշտ պարկեշտ կանանցըն՝ եւ քաղաքի դլխաւորներին , եւ հալածանք վերկացնելով պօղոսին եւ բառնաբասին վերայ՝ նորանց դուրս հանեցին իրանց սահմաններիցն[67] ։

51 Այլ նորանք իրանց ոտների փոշին թափ տուին նորանց վերայ , եւ եկին իկոնիան[68] ։

52 Այլ աշակերտներն լցվումէին ուրախութենով՝ եւ սուրբ Հոգով[69] ։

## ԿԱ · ԺԴ

1 Պօղոս եւ Բառնաբաս Իկոնիոնումն հալածանք քաշելով էն տեղից կրփախին ։ 7 Պօղոս Լիւստրայի մէջ մին կաղ մարդ կրբժշկէ , որ Նորա համար ժողովուրդն նորանք Աստուածներ համարումն ։ 18 Պօղոսի քարկոծվելն . 21 Նորանք ամէն քաղաքներն ման գալով աշակերտներն հաւատքի եւ համբերութեան մէջն կենալոց համար կրհաստատուեն ։ 26 Մինէչ Անտիոք կրգառնան եւ կրպատմեն ինչ որ Աստուած արաւ իրանց հետ ։

1 Այլ էլաւ իկոնիոնումն որ նոր քանք իրար հետ մանումէին հրեաները մինչեւ որ հրեից՝ եւ յունաց խիստ շատ հոգիք հաւատան կաներվի ժողովարանի մէջ , եւ էնպէս խօսումէին .

2 Ասաց անհաւան հրէաներն հե-
թանոսների անձներըն վերկացրին՝
եւ չարաչար դրդեցին եղբարներին
վերայ:

3 Շատ ժամանակ մնն էին գա-
լիս համարձակված Տէրի վկայու-
թեանովն՝ նորա շնորհաց խօսքովն.
եւ նշաններ եւ հրաշքներ տուաւ լի-
նել նորանց ձեռովն[1]:

4 Եւ տարաձայնութիւն էրաւ
քաղաքի բազմութեան մէջն. որ մին
քահին հրէաների կողմն էին, եւ
մին քահին առաքեալների կողմն[2]:

5 Երբոր էրաւ որ հեթանոսներն
եւ հրէաներն իրանց իշխաններովն
վերայ վազեցին՝ որ նորանց նախա-
տինք տան եւ քարկոծ անեն[3],

6 Նորանք իմացան՝ եւ փախան
(գնացին) լիկայոնացոց լիւստրա եւ
դերբէ քաղաքներն՝ եւ գաւառի
շորս կողմերն, եւ հետեղ աւետա-
բանութիւն:

7 Եւ մին լիւստրացի մարդ ոտ-
ներով տկար նստած էր՝ որ իրան մոր
փորիցն կաղ էր ծընված, եւ իսկի
չէր մանեւկած[5]:

8 Սա լսեց պօղոսի խօսքերըն, նա
էլ նորա վերայ նայեց, եւ տեսաւ՝ որ
հաւատք ունի փրկվելու[6],

9 Ասեց ձայնով ասց. քեզ եմ
ասում՝ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի անունովն՝ քո ոտներիդ վերայ
շիտակ կանգնիր. եւ նա վազումեր
եւ գնումեր[7]:

10 Եւ ժողովուրդն որ տեսաւ էն՝
որ պօղոսն արաւ, իրանց ձայներն

բարձրացրին լիկայոներէն՝ եւ ասա-
ցին. աստուածներն մարդկանց նման
էլած վէր եկին մեզ մօ[8]:

11 Եւ բառնաբասին դիոս էին կո-
չում, եւ պօղոսին Հերմէս. ինչու որ՝
նա էր խօսքի առաջնորդն:

12 Եւ դիոս (կռքի) քահանան՝
որ քաղաքի առաջին կար, արջառներ
եւ պսակներ հասցրուց դուռն՝ եւ էն
բազմութեանն հետ կամենումեր մա-
տաղ անել[9]:

13 Եւ երբոր բառնաբաս եւ պօ-
ղոս առաքեալներն լսեցին, իրանց
շորերըն պատռատած՝ ամբոխի (նաւէ
նէ) միջեցն դուրս վազեցին. մեծ ձայ-
նով կանչումեին[10],

14 Եւ ասումեին. մարդիք՝ էդ
ի՞նչ էք անում[11]. մենք էլ ձեզ նման
կարօտութիւն ունող մարդիք ենք[12].
որ աւետարանումենք ձեզ՝ որ էդ-
պէսի ոչ ինչ բաներից յետ դառ-
նաք[13] դէպի կենդանի Աստուածն[14].
որ սահզծեց երկինքըն եւ երկիրըս
եւ ծովըն եւ էն ամենըն՝ որ նորանց
մէջն է[15]:

15 Որ անցկացած պորտերումն
թող տուաւ ամեն հեթանոսներին՝
որ իրանց ճանապարհներովն գնան[16]:

16 Այնպէս թէ ինքն իրան առանց
վկայութեան չըթողեց[17]. ինչու որ՝
բարերարութենով երկինքէցն տուաւ
ձեզ անձրեւներ՝ եւ պտղաբեր ժա-
մանակներ, որ կերակուրներով եւ
ուրախութենով ձեր սրտերըն լըց-
նէ[18]:

17 Եւ էս ասելով՝ դժուար թէ

[1] ե Մարկ. ժգ. 20: Եբր. բ. 4: [2] Գործ. ժգ. 3: [3] բ Տիմ. գ. 11: [4] Մատթ. ժ. 23: Գործ. գ. 2: [6] Մատթ. ը. 10: թ. 28. 29: [7] Եսայ. լե. 6: [8] Գործ. ը. 10: իը. 6: Գան. բ. 46: [10] Մատթ. իգ. 65: [11] Գործ. ժ. 26: [12] Յակ. ե. 17: Յայտ. ժթ. 10: [13] ա Թագ. ժբ. 21: բ Թագ. ժգ. 13: Երեմ. ժդ. 22: Ամբա. բ. 4: անդերձ. ը. 4: [14] ա Թես. ա. 9: [15] Ծննդ. ա. 1: Սաղմ. լդ. 6: Հռով. 6: Յայտ. ժդ. 7: [16] Սաղմ. ձա. 12: Գործ. ժե. 30: ա Պետր. գ. 3: [17] Գործ. ժե. 27: Հռոմ. ա. 20: [18] Գ Կոր. իգ. 4: բ Օրին. ժա. 14: իը. 12: Յոբ. ե. 10: Սաղմ. կե. 10: կը. 9: Հես. 8: Երեմ. ժդ. 22: Մատթ. ե. 45:

ժողովուրդներըն դադարացնուսէին՝ որ մատաղ չանեն իրանց համար. բայց գընան ամէն մէկն իրանց տեղն։

18 Ու երբոր նորանք ման էին գալիս եւ սովորցնուսէին, հրէաները եկին հասին իկոնիոնիցի եւ անտիոքիցի[19]. եւ նորանք որ համարձակութեննով վիճմունք էին անում, ժողովուրդներըն խաբեցին՝ որ յետ կենան նորանցից, եւ ասուսէին՝ թէ (նորանք) իսկի ճշմարտութիւն չէին ասում, բայց ամէնըն սուտ են խօսում. եւ պօղոսին քարկոծ անելով՝ քաղաքիցն դուրս քաշեցին, եւ նորան մեռած էին համարում[20]։

19 Ու երբոր աշակերտներն նորա չորս կողմիվ պատվեցան, վերկացաւ մտաւ քաղաքն. եւ առաւօտն բառնաբասին հետ դուրս եկաւ գնաց Դերբէ։

20 Էն քաղաքումն աւետարանեցին, եւ շատերին աշակերտ շինեցին. եւ ապա յետ դարձան լիւստրա եւ իկոնիոն՝ եւ անտիոքիա[21]։

21 Աշակերտների անձներըն հաստատեցին եւ մխիթարեցին[22]՝ որ հաստատ կենան հաւատքի մէջն. եւ թէ շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւնըն[23]։

22 Երանց ամէն մէկ եկեղեցիներին համար էրէցներ ձեռնադրեցին. աղօթք արին պաս պահելով, եւ յանձնեցին նորանց Տէրին՝ որ հաւատացել էին նորան[24]։

23 Ու պիսիդիայի մէջն ման եկած՝ պամփիլիայի մէջ եկին։

24 Ու երբոր պերգէի մէջն Տէրի բանըն խօսեցին, վէր եկին աստալիա։

25 Ու էնտեղից նաւով գնացին անտիոք, որ էնտեղից[25] Աստուծոյ շնորհքին յանձնըված էին՝ էն գործոյն համար՝ որ կատարեցին[26]։

26 Ու եկին հինտեղ ժողովեցին եկեղեցին՝ պատմեցին ինչ որ Աստուած արաւ իրանց հետ[27]. եւ թէ նա հեթանոսներին համար հաւատքի դուռըն բացարաւ[28]։

27 (Ու) քիչ ժամանակ չէլաւ՝ որ աշակերտներին հետ ման եկին։

## ԳԼ · ԺԱ

1 Թլփատութեան համար հակառակութիւն եւ վիճմունք կըլինի, 6 Առաքեալներն եւ էրէցներն սրահամար խորհուրդ կանեն, 22 Ու իրանց հաստատած խօսքըն մին թուղթով եւ մին քանի մարդկերներով եկեղեցիներին կուղարկեն։ 36 Պօղոս եւ Բառնաբաս մնում եղբարներին տեսնելու համար խորհուրդ անելով՝ իրար հետ մին կռիւ կանեն եւ Յովհին իրարից։

1 Ու մին քանիսն որ հրէաստանից վէր[2] մտան էին եկած՝ եղբարներին սովորցնուսէին[1], թէ որ չըթլփատուիք մովսէսի օրէնքին պէս՝ չէք կարող ապրիլ[3]։

2 Ու (երբոր) պօղոսի եւ բառ-

[19] Գործ · ժգ · 45։ [20] Բ Կորնթ · ժա · 25։ Բ Տիմ · գ · 11։ [21] Մատթ · իը · 19։ [22] Գործ · ժա · 23։ ժգ · 43։ [23] Մատթ · ժ · 38։ ժղ · 24։ Գործ · իը · 28, 29։ Հռոմ · ը · 17։ Բ Տիմ · բ · 11, 12։ գ · 12։ [24] Տիտ · ա · 5։ [25] Գործ · ժգ · 1, 3։ [26] Գործ · ժե · 40։ [27] Գործ · ժե · 4, 12։ իա · 19։ [28] ա Կորնթ · ժզ · 9։ Բ Կորնթ · ը · 12։ Կող · գ · 3։ Ճայտ · գ · 8։ [1] Գործ · ը · 12։ [2] Ցնծ · է · 22։ Վայր · 5։ Գալ · ե · 2։ Փիլիպ · գ · 2։ Կող · բ · 8, 11. 16։ [3] Ծննդ · ժէ · 10։ Դէսպ · ժբ · 3։

Նաբասի հակառակութիւն եւ վնաս- մունք քիչ էէր՝ որ նորանց հետ ա- րին, խօսք դրին որ պօղոսն եւ բառ- նաբասն՝ եւ նորանցից մին քանիսն էն խնդիրքին համար գնան երուսա- ղէմ առաքեալների եւ էլդերների մօտն[4]:

3 Նորանք ժողովրդիցն ճանա- պարհ քցվեցան, եւ փիւնիկէի եւ սամարիայի միջն ման եկին[5]. պատ- մութիւն հեթանոսների դառնալըն, եւ մեծ ուրախութիւն էին անում ամէն եղբարներին[6]:

4 Նէ երբոր հասին երուսաղէմ, եկեղեցուցն եւ առաքեալներից եւ էլդերներից ընդունվեցան, եւ պատ- մեցին որչափ բան որ Աստուած ի- րանց հետ արաւ[7]:

5 Փարիսեցոց հերձուածիցըն մին քանի հաւատացեալներ վերկացան, եւ ասումէին՝ թէ պէտք է թլփատել դորանց, եւ պատուէր տալ՝ որ մո- սէսի օրէնքըն պահեն[8]:

6 Նէ առաքեալներն եւ էլդեր- ներն ժողովվեցան՝ որ տեսնեն էս բանիս համար:

7 Նէ շատ քննութիւն լինելուցն ետեւ՝ պետրոս վերկացաւ՝ եւ նո- րանց ասաց. մարդիք եղբարք՝ դուք ինքներդ գիտուէք, որ առաջին օ- րերիցն ձեր միջումն Աստուած ընտ- րեց՝ որ իմ բերանովս հեթանոսներն աւետարանի խօսքըն լսեն, եւ հա- ւատան[9]:

8 Նէ սիրտ գիտող Աստուածն վկայութիւն տուաւ նորանց[10], տուրբ Հոգին տալով նորանց ինչպէս որ էլ մեզ[11]:

9 Նէ ոչ ինչ զոկութիւն չարաւ նորանց եւ մեր միջն[12], որ հաւատքով սրբեց նորանց սրտերըն[13]:

10 Հիմիկ՝ ինչո՞ւ էք Աստուծոյն փորձում, որ լուծ էք դնում աշա- կերտների վզըն վերայ, որ (էն) ոչ մեր հարքն եւ ոչ էլ մենք չկարաց- ցինք վեր առնել[14]:

11 Նայց Տէր Յիսուսի Քրիստո- սի շնորհքովն հաւատումենք ապրիլ, ինչպէս որ էլ նորանք[15]:

12 Ամէն ժողովուրդն լուռ կացաւ, եւ բառնաբասին եւ պօղոսի պատ- մելըն լսումէին. թէ Աստուած որ- չափ նշաններ եւ հրաշքներ արաւ նորանց ձեռովն հեթանոսների մի- ջումն[16]:

13 Նէ երբոր նորանք լուռ կացան, յակօբոսն պատասխան տուաւ՝ եւ ա- սաց. մարդիք եղբարք՝ ինձ լսեցէք[17]:

14 Շ մնաւոն պատմեց՝ թէ ինչպէս Աստուած առաջուց տեսութիւն ա- րաւ՝ որ հեթանոսներիցն ժողովուրդ առնէ իրան անունին համար[18]:

15 Նէ նորա հետ միաբանվումեն մարգարէների խօսքերըն, ինչպէս որ էլ գրված է.

16 Արանից ետեւ կդառնամ՝ եւ դաւթի քնակարանըն կը շինեմ, եւ նորա վեր ընկածըն եւ քանդվածըն նոր կը շինեմ՝ եւ կըկանգնացնեմ նորան[19]:

17 Որ մարդկանց մնացածներն Տէրին խնդրեն. եւ ամէն հեթա- նոսներն՝ որ նորանց վերայ իմ անուն նըս կոչված է, ասումէ Տէրն. (նա) որ էս ամէնըս անումէ,

18 Որ յաւիտենից հետէ յայտնի

[4] Գործ. ե. 1: [5] Հռոմ. ժե. 24: ա Կորնթ. ժզ. 6, 11: [6] Գործ. ժդ. 26: [7] Վեր. 12: Գործ. ժդ. 26: իա. 19: [8] Վեր. 1: [9] Գործ. ժ. 20: ժա, 12: [10] ա Թես. իը. 9: Գործ. ա. 24: [11] Գործ. ժ. 44: [12] Հռոմ. ժ. 12: [13] Գործ. ժ. 15, 28, 43: ա Կորնթ. ա. 2: ա Պետր. ա. 22: [14] Մատթ. իդ. 4: Գաղ. ե. 1: [15] Հռոմ. գ. 24: Եփես. բ. 8: Տիտ. բ. 11: գ. 4, 5: [16] Գործ. ժդ. 26: [17] Գործ. ժբ. 17: [18] Վեր. 7: [19] Ամովս. թ. 11, 12:

ի Տէրին իրան գործըն։

19 Արդարեւ ես էլ իրաւունք եմ համարում, որ նեղութիւն չըտան նորանց՝ որ հեթանոսներիցն[20] յետ են դառնում դէպի Աստուած[21]։

20 Այլ որ թուղթ արվվի նորանց, որ յետ քաշվին կուռքերի կերակուրներիցն[22], եւ պոռնկութենից[23], եւ մեռած բաներից՝ եւ արիւնից[24]։

21 Քանզի որ՝ մօսէս առաջին պորտերից ետեւ՝ ամէն քաղաքներում իրան քարոզիչներըն ունի· որովհետեւ ժողովարանների մէջն ամէն շաբաթ օրերում կարդվում է[25]։

22 Այն ժամանակն հաճոյ երեւեցաւ առաքեալներին եւ երէցներին եւ ամէն եկեղեցոյն, որ իրանցից ընտրված մարդիք ուղարկեն անտիոք՝ պօղոսի եւ բառնաբասի հետ, էն բարսաբայ կոչված յուդային, եւ շղային՝ գլխաւոր մարդկանցըն[26]։

23 Նորանց ձեռովն եղբարներին գրեցին էս բանըս· առաքեալներս եւ երէցներս եւ եղբայրներս, անտիոքի եւ սիւրիայի եւ կիլիկիայի մէջ (լինող) եղբայրներիդ՝ որ հեթանոսներից էք, ողջոյն (լինի)։

24 Որովհետեւ լսեցինք՝ թէ մին քանիսն իրե թէ մեր կողմանէ խառվացրին ձեզ խօսքերով, որ ձեր անձներըն տեղահան անեն[27]· ասում են թէ պէտք է թլփատվիլ՝ եւ օրէնքըն պահել· որ նորանց մինք չենք հրամայ տուել։

25 Ուրեմն միաբան ժողովվածներիս հաճոյ երեւեցաւ՝ որ մեր սիրելի բառնաբասի եւ պօղոսի հետ ընտրեալ մարդիք ուղարկենք ձեզ մօտ։

26 (Նոյնպէս) մարդիք՝ որ իրանց անձներըն մատնեցին մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունին համար[28]։

27 Արդարեւ յուդային եւ շիղային ուղարկեցինք· որ նորանք էլ խօսքով հենց էն բանըն պատմեն։

28 Քանզի որ՝ սուրբ հոգին եւ մեզ էլ հաճոյ երեւեցաւ, որ իսկի աւելի բեռըն չըդնենք ձեզ վերայ, բայց միայն էս հարկաւոր բաներըս·

29 Որ հեռու կենաք կըռքի մատաղ արածիցն[29]՝ եւ արիւնից՝ եւ խեղդվածից՝ եւ պոռնկութենից[30]· սորանցից որ պահէք (ձեր) անձներըն՝ լաւ կանէք· ողջ կացէք։

30 Էս նորանք՝ որ արձակվեցան՝ վերեկին անտիոք, եւ ժողովուրդըն հաւաքեցին՝ եւ էն թուղթըն տուին։

31 Էս երբոր կարդացին, ուրախ էլան էն մխիթարութեանն վերայ։

32 Յուդան եւ շիղան՝ որովհետեւ նորանք էլ մարգարէք էին՝ շատ խօսքերով մխիթարեցին եւ հաստատեցին եղբայրներին[31]։

33 Էս երբոր մին ժամանակ էնտեղ էլան, եղբայրներիցն խաղաղութեամբ արձակվեցան գնալ դէպի առաքեալներն[32]։

34 Էս շիղային հաճոյ երեւեցաւ՝ որ էնտեղ մնայ։

35 Այլ պօղոսն եւ բառնաբասն անտիոքի մէջն մնան էին գալիս[33], որ Տէրի խօսքըն շատ ուրիշների հետ

[20] վ.պր. 28։ [21] ա թես. ա. 9։ [22] Նմնդ. լե. 2։ Ելք. ի. 3, 23։ Եվխ. ի. 30։ ա կորնթ. ը. 1։ Ցայտ. բ. 14, 20։ ժ. 20, 28։ [23] ա կորնթ. զ. 9, 18։ Գաղ. ե. 19։ Եփես. ե. 3։ Կող. գ. 5։ ա թես. դ. 3։ ա Պետր. դ. 3։ [24] Նմնդ. թ. 4։ Ղեւտ. է. 17։ բ Օրին. ժբ. 16, 23։ [25] Գործ. ժգ. 15, 27։ [26] Գործ. ա. 23։ [27] վ.պր. 1։ Գաղ. բ. 4։ ե. 12։ Տիտ. ա. 10, 11։ [28] Գործ. ժգ. 50։ ժգ. 18։ ա կորնթ. ժե. 30։ բ կորնթ. ժա. 23, 26։ [29] վ.պր. 20։ Գործ. իա. 25։ Ցայտ. բ. 14, 20։ [30] Ղեւտ. ժե. 14։ [31] Գործ. ժգ. 21։ ԺԸ. 23։ [32] ա կորնթ. ժզ. 11։ Եբր. ժա. 31։ [33] Գործ. ՃԳ. 1։

աժվորցնեն եւ աւետարանեն։

36 Նայց մին քանի օրից ետեւ պօղոսն ասաց բառնաբասին. դառնանք եւ մանք գնք եղբարներին մեր՝ ամէն քաղաքներն, որ նորանցում Տէրի խօսքըն քարոզեցինք[34], (տես նենք) թէ ինչպէս կան։

37 Նառնաբասն կամենաւմէր էն մարկոս կոչված յոհաննէսին էլ վեր առնել[35]։

38 Նայց պօղոսն աղաչաւմէր՝ որ էն պամփիւլիայի մէջ իրանցից չոկվածըն, եւ նորանց հետ գործի մէջ չկածըն իրանց հետ չառնեն[36]։

39 Նէ կռիւ էլաւ նորանց միջումն. մինչեւ որ նորանք չոկվեցան իրարից. բառնաբասն մարկոսին առաւ որ նաւով գնայ կիպրոս.

40 Նէ պօղոսն շէղային ընտրեց, եւ էն եղբարներից Աստուծոյ շնորհքին յանձնված դուրս եկաւ[37]։

41 Նէ ասորոց եւ կիւլիկեցոց կողմերն մանն էր գալիս, եւ եկեղեցիներըն հաստատուաւմէր[38]։

## ԳԼ· ԺՈ

1 Պօղոս Տիմոթէոսն կըթվատէ, 7 Եւ նորանք Տէրի Հոգուն մին քաղաքից մեկելն հրաւիրվելով՝ 14 Լիդիայի կըմկրտեն. 16 Պօղոս մին՝դեւ (ջատու) կըհանէ մին աղաչենից։ 19 Սրահամար ինքն եւ Շիղան կըձեռվին եւ բանտաւմն (զընտանուման) կըքցվին. 26 Բանտի գռներն բացվին, 31 Բանտապետի գառնալն եւ հաւատալն, 37 Եւ իրանց ազատվելն։

1 Նէ եկաւ Հասաւ դերբէ եւ լիւստրա[1]. եւ ահա մին աշակերտ կար էնտեղ՝ տիմոթէոս անուն[2]. որ հրէայ հաւատացեալ կնկան՝ եւ հեթանոս հօր որդի էր[3].

2 Որ բարի վկայութիւն ունէր լիւստրացի եւ իկոնիացի եղբարներից[4]։

3 Պօղոսն կամեցաւ որ սորան տաներ իրան հետ. եւ առաւ թլփատեց նորան՝ հրէաներից պատճառումն, որ էնտեղներումն էին[5], ինչու որ՝ ամէնքն գիտէին՝ որ նորա հայրն հեթանոս էր։

4 Նրբոր անց էին կենում էն քաղաքներումն՝ աւանդացին նորանց պահել էն հրամաններըն, որ երուսաղէմումն լինող առաքեալներից եւ երէցներից պատուիրած էին[6]։

5 Նէ եկեղեցիներն հաւատքի մէջ հաստատվաւմէին, եւ օրէ ցօր թուով աւելանաւմէին[7]։

6 Նէ փռիւգիայի եւ գաղատացոց կողմերն մանն եկին, սուրբ հոգուցն արգելված՝ որ ասիայի մէջն Աստուծոյ բանըն չըխօսին։

7 Նայց երբոր եկին միւսիայի կողմերն, ջանք էին անում որ գնան

---

[34] Գործ· ԺԳ· 4, 13, 14, 51։ ԺԴ· 1· 6, 24, 25։ [35] Գործ· ԺԵ· 12, 25։ ԺԶ· 5։ Կող· դ· 10։ բ Տիմ· դ· 11։ Փիլ· 24։ [36] Գործ· ԺԶ· 13։ [37] Գործ· ԺԶ· 25։ [38] Գործ· ԺԶ· 5։ [1] Գործ· ԺԶ· 6։ [2] Գործ· ԺԸ· 22։ Հռոմ· ԺԶ· 21։ ա Կորնթ· դ· 17։ Փիլիպ· բ· 19։ ա Թես· գ· 2։ ա Տիմ· ա· 2։ բ Տիմ· ա· 2։ [3] բ Տիմ· ա· 5։ [4] Գործ· զ· 3։ [5] ա Կորնթ· թ· 20։ Գաղ· բ· 3։ ե· 2։ [6] Գործ· ԺԵ· 28, 29։ [7] Գործ· ԺԵ· 41։

բիւրեղանիա, եւ Ջիսուսի Հոգին թոյլ չտուաւ նորանց :

8 Եւ միտսիայովն որ անցկացան՝ վէր եկին տրօադա[8] :

9 Եւ պօղոսին գիշերուան տեսիլք երեւեցաւ. մին մակեդօնացի մարդ կանգնած էր, աղաչեալեր նորան՝ եւ ասելեր. անցկաց մակեդօնիա՝ եւ մեզ օգնէր[9] :

10 Եւ երբոր տեսաւ էն տեսիլքըն՝ շուտով խնդրեցինք որ դուս գանք մակեդօնիա[10], ինչու որ՝ իմացանք՝ որ Տէրն հրաւիրեց մեզ, որ աւետարանինք նորանց :

11 Եւ տրօադայիցն դուս եկած՝ շնաակ գնացինք սամեթրակէ. եւ յետեւի օրումն նոր քաղաքն :

12 Եւ հնեոլղնցն փիլիպպուսն, որ մակեդօնացոց առաջին բաժինն է՝ կողնիա քաղաք[11]. եւ մենք՝ որ էնտեղ քաղաքումն մինքանի օր դադարեցինք մնացինք.

13 Շաբաթի օրումն քաղաքիցն դուս էլանք դէպի գետի ափն՝ որ էնտեղ սովոր էին աղօթք անել, եւ նստած խօսումէինք ժողովված կանանց հետն :

14 Եւ մին կին լիդիա անուն՝ ծիրանի ծախող՝ որ թիւատիր քաղաքիցն էր՝ Աստուածանից վախող՝ լսեց. որ Տէրն նորա սիրտն բաց արաւ, որ պօղոսի խօսքերին մտիկ անէ[12] :

15 Եւ երբոր ինքն եւ իրան տունն մկրտվեցաւ, աղաչումէր եւ ասելեր. թէ որ ինձ Տէրին հաւատացած համարիք, մտէք իմ տունս, էնտեղ մնացէք. եւ զօր արաւ տարաւ մեզ[13] :

16 Եւ էլաւ գնացանի որ մենք գնումէինք աղօթք անել, մին աղախին (պէթաոշ) պատահեց մեզ՝ որ կախարդութեան դեւ (ջոփոս) ունէր[14]. որ կախարդութիւնովն իրան տէրերին շատ շահ էր բերում[15] :

17 Նա պօղոսի եւ մեր ետեւէն ընկած՝ աղաղակումէր եւ ասելեր. էս մարդիքս բարձրեալ Աստուծոյ ծառաներն են, որ ձեզ պատմումեն փրկութեան ճանապարհներըն :

18 Եւ շատ օրեր էս բանըս անումէր. պօղոսին դժուար եկաւ՝ յետ դարձաւ եւ դեւին ասաց[16]. Յիսուսի Քրիստոսի անունովն պատուիրումեմ քեզ՝ դուս ելկ դորանից. եւ դեւն հենց էն ժամումն (սահաթովն) դուս եկաւ[17] :

19 Երբոր նորա տէրերն տեսին՝ թէ իրանց շահի յոյսն կտրվեցաւ[18], պօղոսին եւ ղիլասին առին[19] քաշեցին տիվանն իշխանների մօտն[20] :

20 Եւ նորանց տարան զօրապետների մօտն՝ եւ ասացին. էս մարդիքս խռովացնումեն մեր քաղաքս՝ իրանք հրէաներ են[21],

21 Եւ մեզ էնպէսի օրէնք են պատմում՝ որ մեզ արժանչէ ոչ ընդունել, եւ ոչ անել, ինչու որ՝ մենք հռօմացիք ենք :

22 Եւ ամբոխն (խալկն) կիսամեցաւ նորանց վերայ. եւ զօրապետներն իրանց շորերքն պատառեցին, եւ հրաման տուին որ ծեծեն[22] :

23 Եւ երբոր շատ խոցեր նորանց վերայ դրին՝ բանտին (պէնտանին) մէջ քցեցին. եւ բանտապետին պատուիրեցին, որ նորանց զգուշա-

[8] բ Կորնթ. բ. 12: բ Տիմ. գ. 13: [9] Գործ. ժ. 30: [10] բ Կորնթ. բ, 13: [11] Փիլէպ. ա. 1: [12] Ղուկ. իգ. 45: [13] Գործ. ժթ. 3: իզ. 11: Գործ. ժթ. 21: Ղուկ. իգ. 29: Եբր. ժգ. 2: [14] ա Թագ. իը. 7: [15] Գործ. ժթ. 34: [16] Մարկ. ա. 25, 34: [17] Մարկ. ժգ. 17: [18] Գործ. ժթ. 25, 26: [19] բ Կորնթ. գ. 5: [20] Մարկ. ժ. 18: [21] գ Թագ. ժը. 17: Գործ. ժէ. 6: [22] բ Կորնթ. զ. 5: ժա. 23, 25: ա Թես. բ. 2:

թենով պահէ։

24 Ա՛ռ եւ զ որ էսպէսի պատուէր առաւ, նորանց ներսի բանան քցեց. եւ նորանց ոտներըն կոճեղումն (գէօ-ղէ-ֆա) պնդացրուց։

25 Իսկ մէջ գիշերումն պօղոսն եւ շիղան ազօթք էին անում, եւ օրհնութիւն էին տալիս Աստուծոյ. եւ (ուրիշ) բանըվածներն նորանց ականջ էին դնում։

26 Եւ յանկարծակի մեծ շարժմունք եղաւ՝ մինչեւ որ բանտի հիմունքներն էլ շարժվումէին[23]. եւ շուտով ամէն դռներն բացվան, եւ ամէնի կապանքներն արձակվեցան[24]։

27 Երբոր բանտապետն զարթնացաւ, եւ տեսաւ որ բանտի դռներն բացված էին, սուրըն քաշեց՝ եւ կամենումէր ինքն իրան սպանել. ինչու որ՝ կարծումէր՝ թէ կապածներն փախել են։

28 Իսկ պօղոսն մեծ ձայնով կանչեց՝ եւ ասաց. քո անձիդ շար բան մի գործեր, ինչու որ՝ մենք ամէնքս էստեղ ենք։

29 Ճրագ ուզեց՝ եւ ներս վազեց. եւ շատ վախով բանըված պօղոսի եւ շիղայի առաջին վերընկաւ։

30 Իսկ նորանց դուրս հանեց եւ ասաց. տէրե՛ր՝ ես ի՞նչ պէտք է անեմ որ ապրիմ[25]։

31 Իսկ նորանք ասացին. հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին, եւ կապրիս դու՝ եւ քո ամէն տունդ[26]։

32 Իսկ Տէրի բանըն խօսեցին նորան՝ եւ էն ամէնին, որ նորա տունն կային։

33 Իսկ նորանց վեր առաւ գիշերի էն ժամումն (սահաթ-ֆն) էն խոցրիցն լուացաւ. եւ շուտով մկրտվեցաւ ինքն՝ եւ նորա ամէն ընտանիքն։

34 Իսկ նորանց տարաւ իրան տունըն, նորանց առաջին սեղան դրաւ. եւ ուրախ էլաւ ամէն ընտանիքնեւրով՝ որ Աստուծոյն հաւատաց[27]։

35 Իսկ երբոր լուսացաւ, զօրագլուխներն ուղարկեցին սիվանի պահապանականերին՝ եւ ասացին. արձակիր էդ մարդկանցդ։

36 Իսկ բանտապետն էն խօսքերըն պօղոսին պատմեց, թէ զօրագլուխներն ուղարկեցին՝ որ արձակվիք. ուրեմն դուրս եկէք, եւ գնացէք խաղաղութենով։

37 Իսկ պօղոսն ասաց նորանց. ամէնի առաջին ծեծեցին մեզ՝ որ անմեղ հռոմայեցի մարդիք ենք, եւ բանտի մէջ քցեցին[28]. եւ հիմիկ մեզ թաքուն են հանում. էդպէս չէ, բայց թող հենց իրանք գան մեզ հանեն։

38 Իսկ սիվանի պահապանականերն էն խօսքերըն զօրագլուխներին պատմեցին. շատ վախեցան՝ երբոր լսեցին թէ հռոմայեցիք են. եւ եկին աղաչեցին նորանց։

39 Իսկ երբոր հանեցին, աղաչումէին՝ որ էն քաղաքիցն գնան[29]։

40 Իսկ բանտիցն դուրս եկին՝ մտին լիդիացին մօտ[30]. եւ եղբարներին որ տեսին՝ նորանց մխիթարեցին եւ գըներացին։

---

[23] Գործ. ղ. 31։ [24] Գործ. է. 19։ Ժբ. 7, 10։ [25] Ղեւ. ղ. 10։ Գործ. բ. 37։ Թ. 6։ [26] Ցած. գ. 16, 36։ ղ. 47։ ա Ցած. է. 10։ [27] Ղեւ. է. 29։ Ժթ. 6։ [28] Գործ. կբ. 25։ [29] Մտթ. ը. 34։ [30] Ա Կոր. 14։

# ԺԱ· ԺԱ

1 Պօղոս թեսաղոնիկէի մէջն կը քարոզէ, 4 Որ էն տեղ մին քանիսն կը հաւատան եւ մին քանիսն նորան կը հալածեն։ 10 Եղբարներն Պօղոսին եւ Շիղային Բերիա կուղարկեն, եւ էնտեղ կը քարոզեն, 13 Եւ թեսաղոնիկեցիներից հալածվելով, 15 Պօղոս Աթէնքն կը գնայ։ Էն տեղ վիճաբանութիւն կանէ եւ նորանց չընդունած Աստուածն կը քարոզէ։ 34 Սրանով շատ մարդիք Քրիստոսի կը դառնան։

1 Եւ ամիփոլիսի եւ ապողո-
նիայի միջին մանգալով՝ եկին թեսա-
ղոնիկէ, որ էնտեղ հրէաների ժո-
ղովարան կար։
2 Եւ պօղոսն (իրան) սովորու-
թեանն պէս մտաւ նորանց մօտ, եւ
երեք շաբաթի (օրերումն) նորանց
հետ խօսեց գրքերիցն[1]։
3 Ինչ էր անում՝ եւ առաջի
դնում՝ թէ պէտք էր որ Քրիս-
տոսն չարչարվի՝ եւ մեռելների մի-
ջիցն յարութիւն առնէ[2]. եւ թէ՝ նա
էն Յիսուս Քրիստոսն է, որ ես
պատմում ձեզ։
4 Եւ նորանցից մին քանիսն հա-
ւան կացան[3], եւ պօղոսի եւ շիղայի[4]
հետ միաւորվեցան. բայց աստուա-
ծապաշտ հելլենոնների շատ բազ-
մութիւն կար, եւ գլխաւոր կանանց-
ցիցն էլ քիչ չէ։
5 Եւ հրէաներն նախանձվեցան,
եւ մինքանի ոսմիկ անօրէն մարդիք
առին՝ ամբոխ (խալխ) արին, քաղաքի
մէջն շփոթութիւն շինեցին. եւ յա-
սոնի տան մօտ հասաւ՝ ուզու-
մէին, որ նորանց տաներն դատաստա-
նատունն[5]։
6 Եւ երբոր չգտին նորանց՝ յա-
սոնին եւ մին քանի եղբարներին
քաշումէին քաղաքապետների մօտն.
եւ սաստիկ աղաղակումէին՝ թէ սո-
րանք՝ որ աշխարհքըն շփոթացրին,
հասել էլ հասին[6]։
7 Որ յասոնն ընդունել է նո-
րանց. եւ սորանք ամէնքն կայսերի
հրամաններին հակառակ են գոր-
ծում. որ մին Յիսուս թագաւոր են
ասում[7]։
8 Եւ շփոթացրին ժողովուրդ-
ներին եւ քաղաքապետներին՝ որ էս
լսումէին։
9 Եւ յասոնիցն եւ ուրիշներիցն
երաշխաւորութիւն (պանդխթու-
ին) առին՝ եւ նորանց արձակեցին։
10 Իսկ եղբարներն պօղոսին եւ
շիղային շուտով գիշերումն ճանա-
պարհ քցեցին դէպի բերիա. որ նո-
րանք երբոր էնտեղ հասին, գնացին
հրէաների ժողովարանն[8]։
11 Ինչու որ՝ սորանք աւելի ազնիւ
անձինք էին՝ քան նորանք՝ որ թէս-
սաղոնիկէումն էին. որ (Աստուծոյ)
խօսքըն ամէն յօժարութեամբով ըն-
դունեցին. միշտ գրքերըն քննու-
մէին, թէ էս (բանս) էսպէս լինի[9]։
12 Եւ նորանցից շատերն հաւա-
տացին. եւ յոյն պարկեշտ կանան-
ցիցն եւ մարդկանցիցն էլ քիչ չէ։

[1] Ղուկ. գ. 16։ Գործ. թ. 20։ Ժգ. 5, 14։ Ժգ. 1։ Ժզ. 13։ Ժթ. 8։ [2] Ղուկ. իգ. 26, 46։ Գործ. ժը. 28։ Գալ. գ. 1։ [3] Գործ. իը. 24։ [4] Գործ. ժե. 22. 27, 32, 40։ [5] Հռովմ. ժզ. 21։ [6] Գործ. ժզ. 20։ [7] Ղուկ. իգ. 2։ Յովհ. ժթ. 12։ Ա Պետր. բ. 15։ [8] Գործ. թ. 25։ Վայր. 14։ [9] Եսայ. լդ. 16։ Ղուկ. ժզ. 29։ Յովհ. ե. 39։

13 Այլք էն հրէաներն՝ որ թափա-
ռօնիկէացիք էին, երբոր գիտացին՝
թէ բերիայի մէջն էլ Աստուծոյ
խօսքն պատմվեցաւ պողոսից, էն-
տեղ էլ եկին՝ որ ժողովուրդներըն
շարժեն եւ շփոթացնեն։

14 Այն ժամանակն եղբարներն պօ-
ղոսին շուտով ուղարկեցին՝ որ մին-
չեւ ծովի եզրն գնայ[10]. եւ Շիղան եւ
տիմոթէոսն էնտեղ մնացին։

15 Այս նորանք՝ որ պողոսին տա-
նում էին, նորան մինչեւ աթէնքն
տարան. եւ որ պատուէր առին նո-
րանից շուտով Շիղային եւ տիմոթէոսին հա-
մար[11], որ շուտով դան նորա մօտ,
գնացին։

16 Այս պողոսն երբոր աթէնքում
նորանց սպասում էր, նորա հոգին
սաստիկ դժուարանում էր նորա ներ-
սում, ինչու որ՝ էն քաղաքըն կուա-
պաշտութեան մէջ էր տեսնում[12]։

17 Այս ժողովարանում հրէաներին
հետ եւ աստուածապաշտներին հետ
խօսում էր եւ փողոցներում ամենօր
նորանց հետ՝ որ պատահում էին։

18 Էպիկուրեան եւ ստոյիկեան
փիլիսոփաներից մին քանիսն նորա
հետ հակառակում էին. եւ մին քա-
նիսն ասում էին. էս (դատարկախօս)
սերմ քաղօղս ի՞նչ է կամենում
խօսել. բայց ուրիշներն էլ, (աստու-
ծին) թէ երեւում է, որ մին օտար
կրքի համար պատմում է. պատճառն
որ՝ Յիսուսին եւ յարութիւնին էր
աւետարանում։

19 Այս առին տարան նորան արիս-
պագոսն՝ եւ ասում էին. կարող ենք
իմանալ՝ թէ ի՞նչ է էգ նոր վար-
դապետութիւնդ՝ որ դու պատմում
ես։

20 Ինչ նոր օտար բան ես բերում
մեր ականջներին. կամենում ենք իմա-
նալ՝ թէ էս ի՞նչ բան պիտի լինի։

21 Ինչու որ՝ ամէն աթենացիքն՝
եւ հետեղ եկած օտարներն էլ ու-
րիշ բանի չէին հետեւում, բայց
մէնակ որ նոր բան ասեն կամ լսեն։

22 Պօղոսն կանգնեց արիսպագի
մէջն՝ եւ ասաց. ով աթենացի մար-
դիք, ես ձեզ ամէն կողմանէ կրօնա-
սէր եմ տեսնում.

23 Պատճառն որ՝ ես մեն եկի եւ
ձեր պաշտամունքներն տեսի, մին
սեղան գտի՝ որ նորա վերայ գրած էր,
չըճանաչված Աստուծոյն. էն որ
դուք առանց ճանաչելոյ էք պաշ-
տում, հենց էն ես եմ պատմում ձեզ։

24 Աստուած՝ որ էս աշխարհքըս
եւ ամէն բան՝ որ նորանում կայ[13]՝
արաւ, նա երկնքի եւ երկրիս Տէրն
է[14]. նա ձեռքով շինած տաճարների
մէջն չի բնակվում[15],

25 Այս մարդկանց ձեռքով չի
պաշտվում՝ իբրեւ մին բանի կա-
րօտ լինի[16]. նա ամէնին կեանք եւ
շունչ՝ եւ ամէն բան տալիս է[17]։

26 Ա՛յս մին արիւնից մարդկանց ա-
մէն ազգերըն արաւ՝ որ երկրի ամէն
երեսին վերայ բնակվին. կարգված
ժամանակներ եւ սահմաններ հաս-
տատեց նորանց բնակութեան հա-
մար[18] որ Աստուծոյն խնդրեն[19].

27 Որ լինի թէ գտնեն նորան եւ
գանեն. եւ ինքն հեռու չէ հենց մեր
ամէն մէկիցս[20]։

28 Ինչու որ՝ մենք նորանով ենք

[10] Առաք. ժ. 23։ [11] գործ. ժբ. 5։ [12] բ Պետր. բ. 8։ [13] գործ. ժգ. 14։ [14] Առաք. ժա. 25։ [15] գործ. է. 48։ [16] Սաղմ. ծ. 10–13։ [17] Ծննդ. բ. 7։ Թագ. ժզ. 22։ Ցոբ. ժբ. 10։ իէ. 3։ լգ. 4։ Եսայ. խբ. 5։ նէ. 16։ Զաք. ժբ. 1։ [18] բ Օրին. լբ. 8։ [19] Հռոմ. ա. 20։ [20] գործ. ժգ. 16։

ապրում եւ շարժվում՝ եւ կանք[21]. ինչպէս որ ձեր իմաստուններից մին քանիսն էլ ասացին, թէ (մենք) հենց նորա ազգիցն էլ ենք[22]:

29 Այլ հիմիկ՝ որովհետեւ Աստուծոյ ազգիցն ենք, պէտք չէ՝ որ մենք համարինք՝ թէ աստուածութիւնն նման լինի ոսկւոյ՝ կամ արծաթի կամ քարի, որ մարդոյ վարպետութենով եւ մտքով փորված շինած է[23]:

30 Ասյց Աստուած՝ որ անդիտութեան ժամանակներըն անտես արաւ[24], հիմիկ մարդկանց էս է պատուիրում՝ որ ամէն մէկն ապաշխարէ[25]:

31 Պատճառն որ՝ (մին) օր հաստատեց՝ որ նորանում արդարութեամբ նով աշխարհքըս պիտի դատէ էն մարդոյ ձեռովն՝ որ սահմանեց նորա նով ամէնին հաւատք տալ[26]՝ որ նորան մեռելների միջից յարոյց[27]:

32 Երբոր լսեցին մեռելների յարութիւն առնելըն, մին քանիսն ծաղրը էին անում. կէսերն ասում էին՝ էդ բանիդ (համար) քեզանից մինէլ պիտի լսենք:

33 Այ յետոյ պօղոսն նորանց միջից դուրս եկաւ գնաց:

34 Այ մին քանի մարդիկ նորա կողմն ընկան, եւ հաւատացին. որ նորանց հետն էր դիոնէսիոս արիսպագացին, եւ մին դամարիս անուն կին՝ եւ ուրիշներ էլ նորանց հետ:

## ԳԼ · ԺԴ

3 Պօղոս իրան արուեստն կանէ, եւ Կորնթոսում հրէաներին եւ հեթանոսներին ամէն շաբաթ օր կքարոզէ: 9 Տէրն տեսիլքումն պօղոսին կըզօրացնէ: 12 Գալիոս փոխանակ բդեշխի առաջին նորա համար զրպարտութիւն կանէն, բայց նա նորանց էն գատաստանին դուրս կըհանէ: 18 Պօղոս քաղաքից քաղաք մտն գալով աշակերտներըն կըհաստատէ: 24 Ապղէկան Ակիւղայից եւ Պրիսկիլլայից աւելի Աստուծոյ ճանապարհն սովորելով՝ 28 Շատ զօրութենով հրեաներին կըքարոզէ:

1 Արանից ետեւ պօղոսն էն աթենացիներից հեռացաւ՝ եկաւ կորնթոս:

2 Այ մին հրէայ գտաւ պոնտացոց ազգիցն՝ ակիւղաս անուն[1], որ իտալիայից նոր եկել էր, եւ նորա պրիսկիլլա կինն էլ, կղօդիայի հրամանին համար՝ որ ամէն հրէաներն հռօմիցն դուրս գնան. եւ նորանց մօտ մտաւ:

3 Այ որովհետեւ հենց մին արուեստիցն էր, (նորանց հետ) մնաց նորանց մօտ՝ եւ բան էր անում. պատճառն որ՝ արուեստով խորանակար (չատրը խրօզ) էին[2]:

4 Այ ժողովարանի մէջն ամէն շաբաթ օր խօսում էր, եւ հրէաներին եւ հեթանոսներին հաւանացնում

[21] կող. ա. 17: Եբր. ա. 3: [22] Տիտ. ա. 12: [23] Եսայ. խ. 18: [24] Գործ. ժդ. 15: Հռոմ. գ. 25: [25] Ղուկ. իդ. 47: Տիտ. բ. 11, 13: ա Պետր. ա. 14: դ. 3: [26] Գործ. ժ. 42: Հռոմ. բ. 16: ժդ. 10: [27] Գործ. բ. 24: [1] Հռոմ. ժզ. 3: ա Կորնթ. ժզ. 19: բ Տիմ. դ. 19: [2] Գործ. ի. 34: ա Կորնթ. դ. 12: ա Թես. բ. 9: բ Թես. դ. 8:

մէր[3]։

5 Այլեւս չիշան եւ տիմնթէոն վէրեկին մակեդոնիայիցն[4], պօղոս հոգովն վառվռմէր՝ որ վկայութիւն դնէ հրեաներուն՝ թէ Յիսուս է Քրիստոսն[5]։

6 Այլ երբոր նորանք ներհակ էին դառնում եւ հայհոյում[6], շորերըն թափ տուաւ՝ եւ նորանց ասաց[7]. ձեր արիւնն ձեր գլխներիդ վերայ (լինի)[8], ես անպարտ եմ[9]. հիմիկուց ես տեւ հեթանոսներուն մեան եմ գընում[10]։

7 Այլ հետեղից գնաց մտաւ մէնի տունն՝ որ նորա անունն տիտոս յուստոս էր, մին աստուածապաշտ մարդ, որ նորա տունն ժողովարանին մօտ էր։

8 Կրիսպոս ժողովրդապետն իւրան ամէն տանովն հաւատաց Տէրին. եւ կորնթացոց շատերն երբոր լսեցին՝ հաւատացին եւ մկրտվեցան[11]։

9 Այլ Տէրն գիշերուն տեսիլքով պօղոսին ասաց. մի վախնար՝ բայց խօսիր՝ եւ լուռ մի կենար[12]։

10 Ինչու որ ես քեզ հետ եմ, եւ ոչ ով քեզ ներհակ չի դառնալ՝ որ քեզ չարչարէ. պատճառն որ ես շատ ժողովուրդ ունիմ էս քաղաքումն[13]։

11 Այլ հետեղ մին տարի եւ վեց ամիս նստեց՝ եւ նորանց Աստուծոյ խօսքըն սովորցնում էր։

12 Գալիոնս գաղիոս փոխանակ բռնշխի ժամանակումն, հրեաներն միաբան վերկացան պօղոսին վերայ, եւ նորան քաշեցին դատաստան.

13 Այլ ասումէին, թէ սա մարդ կանց խաբումէ՝ որ օրինաց հակառակ Աստուած պաշտեն։

14 Այլ երբոր պօղոսն մտ էր որ իրան բերանըն բանայ, գալիոնն հրեաներին ասաց. ով հրեաներ, թէ որ մին անիրաւութիւն կամ մին չար ներնգութիւն լինէր, ինձ արժան էր որ լսէի[14]։

15 Այլ թէ որ ձեր օրէնքին եւ խօսքի եւ անուններուն համար խնդիրք կան, դուք ինքն տեսէք. ինչու որ՝ էդպիսի բաների դատաւոր չեմ կամենում լինել։

16 Այլ նորանց էն դատաստանիցն դուրս հանեց։

17 Այլ ամէն յոյնքն սոսթենէս ժողովրդապետին բռնեցին՝ եւ տիվանի առաջին ծեծումէին[15]. եւ գալիոնն նորա համար ոչ ինչ հոգս չունէր։

18 Այլ պօղոս դեռ շատ օրեր մնալուցն ետեւ, եղբայրներից հրաժարեց, եւ նաւով գնումէր դէպի ասորիքն. եւ պրիսկիլան եւ ակիւղան նորա հետ, կենքրեայումն[16] գլուխն խուզեց[17]. ինչու որ ուխտ դրած էր։

19 Այլ երբոր հասին եփեսոս, նորանց էնտեղ թողեց, եւ ինքն մտաւ ժողովարանն՝ եւ հրեաներին հետ խօսումէր։

20 Այլ աղաչումէին նորան՝ որ շատ ժամանակ էնտեղ մնայ, եւ չկամեցաւ։

21 Այլ նորանցից հրաժարեց եւ ասաց. Աստուծոյ կամքովն մինէլ ձեզ մօտ յետ կըդառնամ[18]. եփեսոսիցն վերկացաւ,

[3] Գործ. ԺԸ. 3։ [4] Գործ. ԺԸ. 14, 15։ [5] Ցոբ. ԼԲ. 18։ Գործ. ԺԸ. 3։ Վայր. 28։ [6] Գործ. Ժգ. 45։ ա Պետր. գ. 4։ [7] Նէեմ. Ե. 13։ Մատթ. Ժ. 14։ Գործ. Ժգ. 51։ [8] Գլխաւ. ի. 9, 11, 12։ բ Թագ. ա. 16։ Եզեկ. ԺԸ. 13։ Լգ. 4։ [9] Եզեկ. գ. 18, 19։ Լգ. 9։ Գործ. ի. 26։ [10] Գործ. Ժգ. 46։ իը. 28։ [11] ա Կորնթ. ա. 14։ [12] Գործ. իգ. 11։ [13] Երեմ. ա. 18, 19։ Մատթ. իը. 20։ [14] Գործ. իգ. 29։ իե. 11, 19։ [15] Առակաց. ա. 1։ [16] Հռովմ. ԺԶ. 1։ [17] Թուոց. զ. 18։ Գործ. ի. 24։ [18] ա Կորնթ. գ. 19։ Եբր. զ. 3։ Յակ. գ. 15։

22 Այլ վերեկաւ կեսօրիա, վերադարձաւ՝ եւ ողջոյն տուաւ եկեղեցւոյն. վերեկաւ անտիոք:

23 Այլ ենտեղ որ մին ժամանակ ճնաց, դուրս եկաւ՝ որ գաղատացոց աշխարհբռնաւն եւ փռիւգիայի մէջն կարգով մանգպ[19], ամէն աշակերտներն հաստատելով [20]:

24 Մին ապեդէս անուն հրէայ[21] ազգով աղէքսանդրացի, ճարտար խօսող մարդ՝ եկաւ հասաւ Եփեսոս. նա գրքերովն զօրաւոր էր:

25 Այս Տէրի ճանապարհին տեղակացած էր, հոգով վառվռէր[22]. Յիսուսին համար խօսէր՝ եւ ճշմարտութեամբ սովորցնէր. եւ (ինքն) միայն յովհաննէսի մկրտութիւնն էր գիտէր[23]:

26 Այս սկսաւ ժողովարանի մէջն համարձակ խօսիլ. եւ երբոր ակիւղան եւ պրիսկիլեան նորանից լսեցին, նորան իրանց մօտ առին, եւ էլ աւելի ճշմարտութեամբ Աստուծոյ ճանապարհն պատմեցին նորան:

27 Երբոր նա կամեցաւ գնալ Աքայիա, եղբարներն յօժար էլան եւ գրեցին աշակերտներին՝ որ նորան ընդունեն. երբոր նա ենտեղ հասաւ, հաւատացեալներին շատ օգնութիւն էր տալիս շնորհքի ձեռնով[24]:

28 Ինչու որ՝ խիստ պնդութեամբ յանդիմանում էր հրէաներին ամէնի առաջին. գրքերի ցոյց տալով՝ թէ Յիսուս է Քրիստոսն[25]:

## ԻԹ · ԺԹ

6 Պօղոսի ձեռով Սուրբ Հոգին գալն մկրտվածներին վերայ: 9 Հրէաներն իրան վարդապետութիւնն կըգամլասեն, որ նորան Աստուծոյ զօրութենովն եւ հրաշքներով հաստատումէր. 13 Հրէաներից երդում տուողներն, 16 Շար գիւից կըճեճվին: 19 Կախարդութեան գրքերն այրուիլն: 24 Դեմետրիոս իրան շահի համար Պօղոսի դէմ՝ մին մեծ չիմութիւն կըբցե քաղաքումն, 35 Եւ քաղաքի կարգացօղների գլխաւորն կըդադարացնէ:

1 Այլ էլաւ դէռ քանի որ ապողոն կորնթոս էր, պօղոսն որ վերի կողմերումն ման էր եկել՝ վերեկաւ եփեսոս. եւ մին քանի աշակերտներ գտաւ[1]:

2 Ասաց նորանց. միթէ սուրբ հոգին ընդունեցիք՝ երբոր հաւատացիք. նորանք ասացին նորան. մինք էլ իսկի չենք լսել՝ եթէ սուրբ հոգի կայ[2]:

3 Այլ ասաց. ապա ինչով մկրտվեցաք. նորանք ասացին. յովհաննէսի մկրտութեամբն[3]:

4 Այլ պօղոսն ասաց. յովհաննէսն ամէն ժողովրդին ապաշխարութեան մկրտութիւնն քարոզեց[4]. եւ ասումէր. թէ նա՝ որ նորա ետեւէն պիտի գայ, նորան հաւատան. այսինքն՝ Յիսուս Քրիստոսին:

5 Այլ երբոր լսեցին, Տէր Յիսուսի անունովն մկրտվեցան[5]:

6 Այլ երբոր պօղոս ձեռն դրաւ

[19] Գործ. ա · 2: գ · 1: [20] Գործ. ժգ · 23: ԺԸ. 32, 41: [21] ա Կորնթ. ա · 12: գ · 5, 6: դ · 6: Տիտ · գ · 13: [22] Հռովմ. ժբ · 11: [23] Գործ. ԺԹ · 3: [24] ա Կորնթ. գ · 6: [25] Գործ. ԺԹ · 22: ԺԸ · 3: Վէր · 5: [1] ա Կորնթ. ա · 12: գ · 5, 6: [2] ա Թես. գ · 7: Գործ. ը · 16: [3] Գործ. ԺԸ · 25: [4] Մարկ. գ · 11: Ցովհ. ա · 15, 27, 30: Գործ. ա · 5: Ժա. 16: ԺԳ · 24, 25: [5] Գործ. ը · 16:

Նորանց վերայ, սուրբ Հոգին եկաւ Նորանց վերայ[6]. լեզուներ էին խօսում՝ եւ մարգարէանում էին[7]:

7 Ու ամէնքն տանտերկու մարդ էին:

8 Ու ժողովարանին մէջ մնած՝ երեք ամիս համարձակ խօսում էր[8]. եւ Աստուծոյ արքայութեանն համոզում էր[9]:

9 Երբոր մին քանիսն պնդում՝ եւ ներհակ էին դառնում[10]՝ էն ճանապարհին բամբասելով բազմութեան առաջին, նա հեռացաւ Նորանցից՝ եւ աշակերտներն ջոկեց[11]. ամէն օր մին ուրբան (մարզդ) ժողովարանում էր խօսում:

10 Ու էս եղաւ մին երկու տարի, մինչեւ որ ասիայի ամէն բնակիչներն՝ հրէաներն եւ հեթանոսներն Տէրի խօսքը լսեցին[12]:

11 Ու Աստուած չէ թէ քիչ զօրութիւններ էր անում պօղոսի ձեռովը[13]:

12 Մինչեւ որ Նորա քրտինքից թաշկինակներ (խաւղոմանէք) եւ վարշամակներ (ֆէշդամնէք) տանում էին դնում հիւանդներին վերայ, եւ ցաւերն հեռանում էին Նորանցից, եւ չար դեւերն դուրս էին գալիս[14]:

13 Մին քանիսն էն մանեկօղ հրեաներից՝ որ երդում տուող[15] էին՝ համարձակվեցան Տէր Յիսուսի անունն ասել Նորանց վերայ՝ որ չար դեւեր ունէին, եւ ասում էին. երդում եմ տալիս ձեզ էն Յիսուսովն՝ որ պօղոսն քարոզում[16]:

14 Մին սկեւռի հրէայ քահանայապետի եօթն որդիք կային, որ էս անում էին:

15 Չար դեւն պատասխան տուաւ եւ ասաց Նորանց. Յիսուսին գիտեմ՝ եւ պօղոսին ճանաչում եմ, բայց դուք ո՞վ էք:

16 Ու էն մարդն՝ որ նորանում չար դեւ կար՝ վազեց էն երկուսին բռնեց, Նորանց տակն քցեց, մինչեւ որ մերկ եւ խոցված էն տանից փախան:

17 Ու էն յայտնի եղաւ ամէն հրեաներին եւ հեթանոսներին՝ որ եփեսոսումն բնակված էին. եւ ահ ընկաւ Նորանց ամէնին վերայ[17]. եւ Տէր Յիսուսի անունն մեծանում էր:

18 Ու հաւատացեալներից շատերն գալիս էին՝ խոստովանում էին, եւ իրանց գործքերն պատմում էին[18]:

19 Ու կախարդութեան հետեւողներից շատերն գրքերը բերում էին, եւ ամէնի առաջին պրտում էին. եւ Նորանց գինն համարեցին՝ եւ գտնում էին յիսուն հազար արծաթի (դահեկան):

20 Ու էսպէս Աստուծոյ խօսքն աճում էր՝ եւ զօրանում[19]:

21 Ու երբոր էս կատարվեցաւ, պօղոսն միտքն դրաւ[20]՝ որ մակեդոնիայի եւ աքայիայի միջովն անցկենայ գնայ երուսաղէմ. ասաց՝ թէ իմ հետեւ գնալուցն հետեւ, պէտք է ինձ՝ որ հռոմ էլ տեսնեմ[21]:

22 Իրան պաշտօնեաներից երկուսին[22]՝ տիմոթէոսին եւ երաստո-

---

6 Գործ. ը. 6: ը. 17: 7 Գործ. ը. 4: ժ. 46: 8 Գործ. ժէ. 2: ժը. 4: 9 Գործ. ա. 3: իը. 23: 10 Յհ. ա. 15: բ Պետր. բ. 2: 3—ա. 10: 11 Գործ. ժ. 2: իը. 4: իգ. 14: ա Յհ. 23: 12 Գործ. ի. 31: 13 Մրկ. ժգ. 20: Գործ. ժգ. 3: 14 Գործ. է. 15: գ Թես. գ. 29: 15 Մտթ. ժը. 27: 16 Մրկ. ժ. 38: Ղևտ. ժ. 49: 17 Ղևտ. ա. 65: է. 16: Գործ. բ. 43: է. 5, 11: 18 Մտթ. գ. 6: 19 Գործ. գ. 7: ժը. 24: 20 Հռոմ. ժէ. 25: Գաղ. բ. 1: 21 Գործ. ի. 22: 22 Գործ. ժը. 21: իգ. 11: Հռոմ. ժէ. 21—38: 23 Գործ. ժգ. 5:

սին ուղարկեց մակեդոնիա, եւ ինքն մին ժամանակ մնաց ասիայի մէջն[24]։

23 Յորժամ էն ժամանակումն շատ խրոովութիւն էլաւ[25] էն ճանապարհին համար[26]։

24 Ինչու որ՝ մին արծաթագործ՝ (պրնիոբ) դեմետրիոս անուն, արտեմիս կըռքի արծաթէ տաճարներ էր շինում, եւ քիչ շահ չէր՝ որ տալիս էր վարպետներին[27]։

25 Որ էն արուեստի բանվորներըն էլ ժողվեց՝ եւ ասաց, ով մարդիք՝ դուք ինքներդ գիտումիք, որ էս դրծից մենք շահ ունինք։

26 Յորժամ տեսնումիք եւ լսումիք՝ որ էս պօղոս չէ թէ մենակ եփեսացոց, բայց համարեա թէ՝ ամէն ասիացոց շատ ժողովուրդ հաւանացնելով՝ էն կողմն դարձրուց, որ ասումէ՝ թէ ձեռքով շինած բաներն Աստուած չեն[28]։

27 Յորժամ չէ թէ մենակ մեր բանս ջնջք է անում որ անարգվի, բայց էլ մեծ աստուածոց արտեմիայի տաճարն ոչ ինչի տեղ է համարվում, եւ նորա մեծութիւնն էլ կըքանդվի, որ բոլոր ասիան՝ եւ աշխարհք են պաշտում նորան։

28 Յորժամ էս լսեցին, բարկութեամբով լցվան, աղաղակումէին՝ եւ ասում, մեծ է եփեսացոց արտեմիան։

29 Յորժամ քաղաքն շփոթութեամբով լցվաւ, ամէնքն էլ միտեղ վազեցին թէատրոնն, եւ առին քաշելին դաիոսին[29] եւ արիստարքոս մակեդոնացոցն՝ պօղոսի ճանապարհի ընկերներին[30]։

30 Իսայց պօղոսն երբոր կամեցաւ ամբոխի (խալխի) մէջ մանել, աշակերտներն չըթողին նորան։

31 Ասիայի գլխաւորներիցն մին քանիսն էլ՝ որ նորա բարեկամներն էին, ուղարկեցին նորա մօտ՝ եւ աղաչումէին, որ իրան անձըն չըտայ թէատրոնի մէջ։

32 Էն ամբոխումն (խալխում) ամէն մէկներն ուրիշ բան էին աղաղակում, ինչու որ՝ նորանց ժողովքն խռովված էր, եւ նորանցից շատերն չէին գիտում, թէ ինչու համար են հաւաքված։

33 Յորժամ շատ ամբոխի միջիցն աղէքսանդրոսին բռնեցին դուրս քաշեցին, եւ երբոր հրէաներն նորան առաջ բերին, աղէքսանդրոսն[31] ձեռըն շարժից՝ եւ կամենումէր ամբոխին (խալխին) պատասխան տալ[32]։

34 Յորոր գիտացին՝ թէ էն մարդն հրէայ է, ամէնքն էլ մին ձայնով երկու ժամի (սահաթի) չափ աղաղակումէին, թէ մեծ է եփեսացոց արտեմիան։

35 Կարդացօղների գլխաւորն էն ամբոխին դադարացրուց՝ եւ ասաց, ով եփեսացի մարդիք՝ ո՞վ է էն մարդն՝ որ չի գիտում թէ էս եփեսացոց քաղաքս մեծ արտեմիս կըռքի եւ դիոպետի կըռքերի տաճարներովն զարդարված է։

36 Յորովհետեւ էդ շիտակ էդպէս է, պէտք է ձեզ որ հանդարտվիք, եւ չափիցն դուրս բան չըդործէք։

37 Յդ մարդկանցըդ բերիք էստեղ, ոչ թէ որ կըռքի տուն են կողոպտել՝ եւ ոչ մեր աստուածոյն հայհոյանք են տուել։

[24] Հռոմ. ժզ. 23։ բ Տիմ. դ. 20։ [25] բ Կորնթ. ա. 8։ [26] Գործ. Թ. 2։ [?] Գործ. ԺԶ. 16, 19։ [28] Սաղմ. ճժե. 4։ Եսայ. խդ. 10–20։ Երեմ. ժ. 3։ [29] Հռոմ. ժզ. 23։ ա Կորնթ. ա. 14։ [30] Գործ. ի. 4։ իե. 2։ Կող. դ. 10։ Փիլ. 24։ [31] ա Տիմ. ա. 20։ բ Տիմ. դ. 14։ [32] Գործ. ժբ. 17։

38 Ուրեմն՝ թէ որ դեմ եղարիսոն եւ նորա հետ լինող վարպետները՝ մի՛ նին հետ բան ունենան, թէպէ գնան տիվանն եւ դատաւորներ կան, եւ թէպէ միւնն մէնիցն գանգատ անեն։

39 Պատ թէ որ ուրիշ բանի համար խնդիր լինի, թէպէ օրինաւոր ժողովքի մէջն կատարուն։

40 Ինչու որ՝ մեզ էլ մեծ վտանգ կայ էսօրվան կռւիս համար. որովհետեւ յանցանք (սխալ) չըկայ, որ էս ժողովքիս համար չենք կարող պատասխան տալ. եւ էս ասելով՝ ժողովուրդըն արձակեց։

## ԳԼ. Ի

1 Պօղոսի Պահպօնիա գնալն։ 7 Տերի ընթրիքն կանչ եւ քարոզ կըտայ։ 9 Եւտիքոս վէրկընկիի տանից եւ վեր կըկարվի մեռած. 10 Եւ Նորան Պօղոսի ձեռնէն բերումն կենդանի։ 17 Պրկաբէյցին Եփեսոս մարդ կուղարկէ. եւ եկեղեցոյ երէցներըն կըկանչէ, եւ իրան ինչ անելն եւ ինչ լինելն Նորանց կըպատմէ, 28 Տերի հօտն (սիրելին) Նորանց կըյանձնէ, 29 Նորանք սուտ վարդապետներից գոյշ կանե, 32 Եւ Նորանք Աստուածոյ կըյանձնէ, 36 Նորանց ամէնին հետ աղօթք կանե, եւ Նորանցից կընջկովի՝ կըհնայ։

1 Եւ ամէնի (խալխէ) դադարելուցնետեւ՝ պօղոսն աշակերտներին կանչեց, եւ մխիթարեց. ողջոյն տուաւ՝ եւ դուրս եկաւ գնաց մակեդօնիա[1]։

2 Եւ էն կողմերն որ ման եկաւ՝ եւ շատ խօսքերով մխիթարեց Նորանց, եկաւ եղաւ։

3 Երբոր էնտեղ երեք ամիս կացաւ, հրէաներն որոգայթ (խալէ) քցեցին Նորան[2], դեռքանի որ կամենաւմէր դուրս գալ ասորոց երկիրն. խորհուրդ արաւ՝ որ մակեդօնիայի միջոցն յետ դառնայ։

4 Եւ մինչեւ ասիա Նորա հետ գնաւմէր սոսիպատրոս բերիացին՝ պիւռոսի որդին. եւ թեսաղոնիկեցիներից արիստարքոսն եւ սեկունդոսն[3] եւ գայիոս դերբացին[4] եւ տիմոթէոսն[5], եւ ասիացիներից՝ տիւքիկոսն[6] եւ տրոփիմոսն[7]։

5 Սորանք առաջ գնացին՝ սպասաւումէին մեզ տրոադպայի մէջն։

6 Եւ մենք բաղարջակերաց օրերից հետեւ նաւով գնացինք փիլիպպէյցին[8], եւ մինչեւ հինգ օրումն եկինք տրոադա Նորանց մօտ. էնտեղ եօթն օր դադարեցինք[9]։

7 Եւ շաբաթի օրումն՝ դեռ որ ժողովված էինք հաց կարելոյ համար[10], պօղոսն Նորանց հետ խօսում էր՝ ինչու որ յետեւի օրումն պէտք էր գնայ, եւ խօսքըն երկարացրուց մինչեւ կէս գիշերն։

8 Եւ շատ լապտերներ (ֆանաա-նէր) կային էն վերնատանն՝ որ մենք ժողովված էինք[11]։

9 Եւ մին եւտիքոս անուն երիտասարդ (ճահիլ խալդ) պատուհանին վերայ նստած էր. պօղոսի եր-

[1] ա Կոր. ը. 5։ ա Տիմ. ա. 3։ [2] Գործ. ք. 23։ իգ. 12։ իե. 3։ բ Կորնթ. ժա. 26։ [3] Գործ. ժի. 29։ իե. 2։ կող. դ. 10։ [4] Գործ. ժի. 29։ [5] Գործ. ժգ. 1։ [6] Եփես. գ. 21։ կող. դ. 7։ բ Տիմ. դ. 12։ Տիտ. գ. 12։ [7] Գործ. իա. 29։ բ Տիմ. դ. 20։ [8] Ղուկ. ժբ. 14, 15։ իգ. 15։ [9] Գործ. ժգ. 8։ բ Կորնթ. բ. 12։ բ Տիմ. գ. 13։ [10] Գործ. բ. 42, 46։ ա Կորնթ. ժ. 16։ ժա. 20, Խոսյնէ։ [11] Գործ. ա. 13։

կար խօսելոյ ժամանակն, Թանձր քնի մէջն ննջումէր. եւ որ խոր քնով քնացած էր՝ տան երրորդ պատկոնեցին (պէնճըն) վէր ընկաւ, եւ վերկաքաւած մեռած:

10 Եւ պօղոսն վերեկաւ նորա վրայ ընկաւ[12], եւ նորան՝ գիրկն էր առնում եւ ասում. Մի շփոթիք[13], ինչու որ՝ սորա հոգին սորանում է:

11 Եւ վեր ելաւ հացըն կարեց՝ եւ կերաւ. եւ էլ շատ խօսեց մինչեւ առաւօտն, եւ յետոյ գնաց եկաւ եւ գնաց:

12 Եւ էն տղային բերին կենդանի, եւ շատ մխիթարուեցան:

13 Եւ մենք նաւն մտինք՝ գնացինք ասոն. Ենտեղից յոյս ունէինք՝ որ մինէլ պօղոսին մեզ հետ առնինք. ինչու որ՝ էնպէս էր պատուիրել՝ գետ որ ինքն ցամաքումն գնալու էր:

14 Եւ երբոր ասոնում հանդիպեցաւ մեզ, վեր առինք նորան եւ կինք մետիլենէ:

15 Եւ էնտեղից նաւով գնացինք՝ յետեւի օրումն հասինք քիոյի դիմացն. եւ մէկէլ օրումն հասինք սամոսն. եւ յետեւի օրումն եկինք մելիտոն:

16 Ինչու որ՝ պօղոսն իրան մտքի մէջն գրել էր՝ որ եփեսոսի մոտովն նաւով անցկենայ՝ որ չըլինի թէ նա ասիայի մէջն մին ժամանակ յետ մնայ. պատճառն որ՝ վռազ[14], որ եթէ կարելի լինի նորան՝ պենտեկոստէի օրումն[15] գնայ երուսաղէմ[16]:

17 Եւ մելիտէյին ուղարկեց եւ փեսոս՝ եկեղեցոյ երէցներըն կանչեց

18 Եւ երբոր եկին նորա մօտ, նորանց ասաց. դուք ինքներդ գիտուք՝ եթէ էն առաջին օրիցն եւեւ որ ասիա եկի՝ ինչպէս էլայ ամէն ժամանակներն ձեզ հետ[17]:

19 Որ ամէն խոնարհութիւնով Տէրին ծառայեցի, եւ շատ արտասուքով եւ փորձութիւններով որ հրէաներին հնարքներից պատահեցին ինձ[18]:

20 Ինչպէս որ իսկի մին օգտակար բան վախով չըծածկեցի, որ չըպատմեմ եւ սովրցնեմ ձեզ՝ թէ փողոցումն եւ թէ տան մէջն[19]:

21 Հրէաներին եւ հեթանոսներին վկայութիւն տուի[20] էն ապաշխարութեան համար՝ որ դէպի Աստուած, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին հաւատալոյն համար[21]:

22 Եւ հիմի՝ աչի ես հոգուն կապած գնումեմ երուսաղէմ. եւ չեմ գիտում՝ թէ ենտեղ ինչ պիտի անցկենայ ինձ վերայ[22]:

23 Միայն թէ՝ սուրբ հոգին քաղաքից քաղաք ինձ վկայումէ՝ եւ ասումէ, թէ կապանքներ եւ նեղութիւններ սպասումեն քեզ[23]:

24 Ասյց ես իսկի մին բանով էլ իմ անձըս պատուական չեմ համարում[24] որ ուրախութիւնով կատարեմ իմ վազելքն[25], եւ էն պաշտօնըն[26] որ Տէր Յիսուս Քրիստոսից առի, որ Աստուծոյ շնորհաց աւետարանին վկայ լինիմ[27]:

25 Եւ հիմի՝ աչի ես գիտեմեմ,

---

[12] Ք Թագ. ժէ. 21: [13] Գ Թագ. դ. 31: [14] Մարկ. թ. 24: [15] Գործ. ժը. 21: Ժէ. 21: Իմ. 4, 12: [16] Գործ. բ. 1: [17] Նախդ. ժղ. 8: [18] Գործ. խգ. 17: [19] Գործ. ժ. 19: Ժէ. 1, 10: [20] Վէր. 3: [21] Վայր. 27: [22] Գործ. ժը. 5: [23] Մարկ. ա. 15: Գործ. խգ. 47: Գործ. բ. 38: [24] Գործ. Ժէ. 21: [25] Գործ. իա. 4, 11: [26] Թէս. գ. 3: [27] Գործ. իա. 13: Հռոմ. ը. 35: [28] Գործ. գ. 16: [29] Ք Տիմ. գ. 7: [30] Գործ. ա. 17: [31] Կորնթ. գ. 1: [32] Գաղ. ա. 1: Տիտ. ա. 3:

որ եւ իմ երեսաց չէք տեսանիլ դուք ամենեքե՛ն[28], որ ձեր մէջն մնանիկ Աստուծոյ ապքաղաքութիւնըն քարոզելով համար։

26 Վրահամար՝ էս օր վկայութիւն եմ դնում ձեզ՝ որ ձեր ամենից ա-բիւնից անմեղ եմ[29]։

27 Մնչու որ՝ չհա չըքաշվեցայ[30] Աստուծոյ ամէն կամքըն ձեզ պատ-մելուց[31]։

28 Ձգիշ կացէք անձնեցիդ՝ եւ ամէն հօտիդ (ա֊բէ֊նէ)[32], որ սուրբ հոգին ձեզ վերակացու դրաւ նորա նում[33], որ արածացնէք Տէրի ժո-ղովուրդըն. նորան՝ որ իրան արիւ-նովն[34] ապրեցրուց[35]։

29 Գիատնամ որ՝ ես գիտեմ որ իմ հեռանալուցն ետեւ՝ յափըշ-տակող գայլեր կըդան ձեր մէջն, որ հօտիդ (ա֊բէ֊նէ) չեն խնայիլ[36]։

30 Եւ ձեզանից էլ մարդիք վեր-կըկենան՝ որ ծուռ բաներ կըխօսին, որ աշակերտներին իրանց ետեւէն քաշեն[37]։

31 Վրահամար արթուն կացէք, եւ մնքներդ բերէք՝ որ երկու տարի գի-շեր եւ ցերեկ չըդադարեցի ամէն մէկիդ արտասունքով խրատել[38]։

32 Եւ հիմի՝ ձեզ Աստուծոյ եմ յանձնում՝ եւ նորա շնորհաց խօս-քին[39], որ նա կարող է շինել[40] եւ ամէն սրբերին հետ ձեզ ժառան-գութիւն տալ[41]։

33 Ձոչանից մէնի արծաթին կամ ոսկոյն կամ շորերին չըցանկացայ[42]։

34 Դուք ձեզանից գիտումք՝ որ էս ձեռներս վաստակեցին իմ պէտ-քըս, եւ նորանցն էլ՝ որ ինձ հետ էին[43]։

35 Եւ ամէն բնչ ցոյց տուի ձեզ՝ որ էսպէս պէտք է աշխատիլ, եւ հի-ւանդներին հոգս տանել, եւ Տէր Յիսուսի խօսքըն յիշել, որ հինց ինքն ասաց[44]. աւելի երանելի է տա-լըն՝ քան թէ առնելն։

36 Եւ երբոր էս ասաց, ծունր դրաւ ամենին հետ՝ եւ աղօթք ա-րաւ[45]։

37 Ամենքն էլ շատ լաց էին լի-նում. եւ պօղոսի վզըդին ընկած՝ նո-րան համբուրում էին[46]։

38 Վրաներն էլ մանաւանդ կսկը-ծումէին էն խօսքին համար՝ որ ա-սումէր, թէ նորա երեսըն էլ չըպի-տի տեսնեն. եւ նորան ճանապարհ քցեցին գէպի նաւն[47]։

---

[28] վ֊այր · 38։ Հռոմ. ժե · 23։ [29] գործ. ժը · 6։ բ կորնթ. է · 2։ [30] վ֊էր · 20։ [31] գ֊ոխ · է · 30։ ցուվ. ժե · 15։ եբէս. ա · 11։ [32] ա Տիմ. գ · 16։ ա պետր. է · 2։ [33] ա կորնթ. ժը · 28։ [34] եբէր · թ · 14։ [35] եբէս. ա · 7, 14։ կող. ա · 14։ եբէր · թ · 12։ ա֊պետր. ա · 19։ ցոյժ · է · 9։ [36] Մատթ · է · 15։ բ պետր · բ · 1։ [37] ա Տիմ. ա · 20։ ա ցուվ. բ · 19։ [38] գործ. ժթ · 10։ [39] եբէր · ժգ · 9։ [40] գործ. թ · 31։ [41] գործ. իզ · 18։ եբէս. ա · 18։ կող. ա · 12։ գ · 24։ եբէր · թ · 15։ ա պետր. ա · 4։ [42] ա թես. բ · 3։ ա կորնթ. թ · 12։ բ կորնթ. է · 2։ ժա · 9։ ժբ · 17։ [43] գործ. ժը · 3։ ա կորնթ. դ · 12։ ա թես. բ · 9։ բ թես. դ · 8։ [44] հռոմ. ժե · 1։ ա կորնթ. թ · 12։ բ կորնթ. ժա · 9, 12։ ժբ · 13։ եբէս. դ · 28։ ա թես. դ · 11։ հ · 14։ բ թես. դ · 8։ [45] գործ. է · 59։ իա · 5։ [46] ծննդ. խե · 14։ խզ · 29։ [47] վէր · 25։

# ԳԼ · ԻԸ

4 Պօղոս խակի չըհնազանդվիր՝ որ Երուսաղէմ գնալուցն յետ կենայ։ 9 Փիլիպպոսի մարգարէ աղջիկներն, 17 Պօղոսի Երուսաղէմ գնալն, 27 Որ էն տեղ ձեռք կըբռվի եւ շատ մեծ վտանգի մէջ կըլինի, 31 Բայց հազարապետն նորանց ձեռներից կառնէ եւ հրաման կըտայ նորան՝ որ ժողովուրդի հետն խօսի։

1 Ա՛յ երբոր էլաւ՝ որ մենք դուրս եկինք եւ նորանցից ջոկվեցանք, շիտակ գնալով եկինք կոզ, եւ յետեւի օրումն (եկինք) Հռոդոն, եւ էնտեղից պատարայ։

2 Ա՛յ մին նաւ որ գտինք՝ որ փիւնիկէն էր գնում, նորա մէջն մտինք գնացինք։

3 Ա՛յ երբոր կիպրոսն երեւեցաւ՝ նորան մեր ձախ կողմն թողինք, նաւըն շտակեցինք դէպի ասորիքն, եւ վէր եկինք տիւրոս. ինչու որ՝ նաւն (իրան) բեռներըն էնտեղ պիտի թափէր։

4 Ա՛յ աշակերտներին որ գտինք՝ էնտեղ եօթն օր մնացինք. որ նորանք սուրբ Հոգով ձեռովն պօղոսին ասում էին, որ վեր չելնի երուսաղէմ[1]։

5 Ա՛յ երբոր մենք էն օրերըն կատարեցինք, դուրս եկինք գնացինք. ամէնքն՝ մէզ կանանցով եւ որդիներով ճանապարհ քցեցին մինչեւ քաղաքի դուրս կողմն. եւ ծովի եզերին (ջուրն) մտ ծունր դրինք եւ աղօթք արինք[2]։

6 Ա՛յ իրարից բաժանվեցանք եւ վերէկինք նաւն. եւ նորանք յետ դարձան իրանց տեղերն։

7 Ա՛յ մենք նաւըն տիւրոսիցն ա-ռաջ քցեցինք՝ հասինք պտղոմայիդա. եւ եղբարներին ողջոյն տուինք՝ նորանց մտ մին օր մնացինք։

8 Ա՛յ յետեւի օրումն Էնտեղից դուրս էլանք՝ եկինք կեսարիա. եւ փիլիպպոս աւետարանչի տունն մտինք[3] որ նա էն եօթնիցն էր, եւ նորա մտ մնացինք[4]։

9 Ա՛յ էրս կոյս աղջիկներ ուներ՝ որ մարգարէ էին[5]։

10 Ա՛յ երբոր մենք էնտեղ շատ օրեր մնում էինք, մին ագաբոս անուն մարգարէ վէրեկաւ հրէաստանիցն[6]։

11 Ա՛յ մեզ մտ որ եկաւ, պօղոսի գօտիկըն առաւ՝ իրան ոտներըն եւ ձեռներըն կապեց եւ ասաց. սուրբ Հոգին էսպէս է ասում. էն մարդն՝ որ էս գօտիկս նորանն է, հրէաներն երուսաղէմումն էսպէս կրկապեն[7], եւ նորան հեթանոսների ձեռքն կըմատնեն։

12 Ա՛յ երբոր էն լսեցինք՝ մենք ա-ղաչում էինք, եւ նորանք էլ՝ որ էն-տեղ էին՝ որ նա վերչելի երուսաղէմ։

13 Ա՛յն ժամանակն պօղոսն պատասխան տուաւ եւ ասաց. (մէկ) ի՞նչ էք անում, ինչո՞ւ համար էք լաց լինում եւ իմ սիրտս կսկծացնում[8]. ինչու որ՝ ես ոչ մէկ մէնակ կապվելոյ՝ բայց էլ երուսաղէմումն

[1] Գործ. ի. 12։ [2] Գործ. ի. 23։ [3] Գործ. ի. 36։ [4] Եփես. դ. 11։ ա Տիմ. գ. 5։ [5] Գործ. զ. 5։ ը. 26, 40։ [6] Ցովել. ա. 28։ Գործ. բ. 17։ [7] Գործ. ժա. 28։ [8] Գործ. ի. 33։ Գործ. ի. 23։ [9] Գործ. ի. 24։

մեռնելոյ պատրաստ եմ Տէր Յիսուսի Քրիստոսի անունին համար:

14 Եւ երբոր նա ականջ չդրաւ, լուռ կացանք՝ եւ ասացինք. Թող Տէրի կամքն լինի[9]:

15 Եւ էն օրերին ետեւ՝ պատրաստվեցանք՝ վերկինք ելլում երուսաղէմ:

16 Էն կեսարացի աշակերտներիցն էլ մեզ հետ եկին, եւ տանում էին մեզ մին Մնասոն անուն կիպրացի մարդոյ՝ առաջին աշակերտի մծա, որ նորա մծա պէտք էր կենայինք:

17 Եւ երբոր մենք երուսաղէմ մտինք, եղբարքն մեզ ուրախութեամբ ընդունեցին[10]:

18 Յայդ յետեւի օրումն պօղոսն մեզ հետ մտաւ Յակոբի[11] մծան. եւ բոլոր երէցներն եկին:

19 Եւ ողջոյն տուաւ նորանց՝ մին մին պատմում էր ինչ որ Աստուած հեթանոսների մէջն արաւ[12] իրան ծառայութեամբն[13]:

20 Եւ երբոր նորանք լսեցին, փառք էին տալիս Աստծոյ. եւ նորան ասում էին. Եղբայր՝ տեսնո՞ւմես, որչափ հազարաւոր հաւատացեալ հրեաներ կան, եւ ամէնքն օրէնքին համար նախանձով լցված են[14]:

21 Յայդ քեզ համար էնպէս են խնացել՝ թէ հեթանոսների մէջն լինող հրեաներին սովորցնում ես, որ մնախէցին յետ քաշվին. ասում ես թող իրանց որդիքներն չթլթլիատեն, եւ օրինաց կրօնքի պէս չըվարվին:

22 Ախմիկ ի՞նչ կը լինի՝ իրաւի որ՝ կըլսեն որ դու եկել ես:

23 Ախմիկ էս արա՝ որ քեզ ասում ենք. մեզանում չորս մարդ կան՝ որ ուխտ են դրած իրանց անձներին վերայ:

24 Դօրանց առ՝ եւ նորանց հետ սրբվի՛ր. եւ նորանց վերայ ծախք արա՝ որ իրանց գլխներըն վերա-նեն[15]. եւ (ապա) ամէնքն կըգիտեն, թէ ինչ որ քեզ համար խնացել էին՝ ո՛չ ինչ է. բայց թէ դու էլ միաբան ես օրէնքըն պահելոյ համար:

25 Յայց էն հաւատացեալներին համար՝ որ հեթանոսներիցն են, մենք ուղարկեցինք՝ ինչպէս որ սահմանեցինք, որ նորանք հնպէսի բան չըպահեն, բայց միայն յետ կենան կըռնի մնատաղիցն եւ արիւնիցն, եւ խեղդվածիցն, եւ պոռնկութենիցն[16]:

26 Էն ժամանակն պօղոսն էն մարդկանցըն առաւ, յետեւի օրումն նորանց հետ սրբվեցաւ, եւ տաճարն մնաւ ցոյց տալով[17] սրբութեան օրերի կատարվիլըն[18]. մինչեւ որ նորանց համն մէկին վերայ պատարագ էլաւ:

27 Եւ երբոր էն եօթն օրերն կատարվելոյ մծա էին, ասիացի հրեաներն նորան տաճարումն տեսին[19], եւ ամէն ամբոխին (խառնին) նորա վերայ թափեցին, եւ նորան ձեռք ձգելով՝ ազազակում էին[20].

28 Իմ իսրայէլացի մարդիք՝ օգնեցէ՛ք. էս էն մարդն է՝ որ ժողովրդին՝ եւ օրէնքին եւ էստեղիս հաւատկ՝ ամէնին ամէն տեղ սովորցնում՝ մինչեւ որ հեթանոսներ էլ մտրուց տաճարին մէջ՝ եւ էն սուրբ տեղըն պղծեց[21]:

[9] Մատթ. ղ·10: Ղուկ. ժա. 2: [10] Գործ. ժե. 4: [11] Գործ. ժե. 13: Գաղ. ա. 19: [12] Գործ. ժե. 4, 12: Հռոմ. ժե. 18, 19: [13] Գործ. ա. 17: [14] Գործ. իբ·3: Հռոմ. ժ. 2: Գաղ. ա. 14: [15] Թուոց ղ. 2, 13, 18: Գործ. ժը. 18: [16] Գործ. ժե. 20, 29: [17] Գործ. իգ. 18: [18] Թուոց ղ. 13: [19] Գործ. իգ. 18: [20] Գործ. իգ. 21: [21] Գործ. իգ. 5, 6:

29 Ինչու՞ որ՝ առուիմոս եւիւսացոյն առաջուց նորա հետ քաղաքացի տեսել էին[22]. եւ կարծումէին՝ թէ պօղոսն նորան մեցրուց տաճարին մէջ։

30 Ողոր քաղաքն շարժվեցաւ, եւ ժողովուրդն կիտվեցաւ. եւ պօղոսին բռնած տաճարիցն դուրս էին քաշում՝ եւ շուտով դռներն փակվեցան[23]։

31 Եւ ուզումէին՝ որ նորան սպանեն. զուռց հասաւ գնդի (պէօլՒԿ) հաղարապետին՝ թէ ամէն երուսաղէմն շփոթվել է։

32 Ւյա էլ շուտով զինուորներ եւ հարիւրապետներ առաւ՝ եւ նորանց վերայ վազեց[24]. եւ նորանք երբոր հաղարապետին եւ զինուորներն տեսին, պօղոսին ծեծելուց դադարեցին։

33 Ւյն ժամանակն հաղարապետն մօտեցաւ բռնեց նորան՝ եւ հրամայեց, որ երկու շղթայով (պՃՆՂՒՔ) կապեն[25]. եւ հարցնումէր՝ թէ ո՞վ է, եւ ի՞նչ է արել։

34 Ւմէն մէկէրն ամբոխի (խալկի) մէջն մին ուրիշ բան էին աղաղակում նորանից. երբոր ամբոխի շըփոթութենից չըկարաց ճշմարիտն իմանալ, հրամայեց որ նորան տանեն բանակն (օբօռա)։

35 Եւ երբոր հասաւ աստիճաններն (նէրքոռանի ոդն), պէտք է՝ եղաւ որ ամբոխի զօռ անելոյ պատճառովն՝ զինուորներն նորան վերառնեն բերեն։

36 Ինչու՞ որ՝ շատ ժողովուրդ էր եւեւէն գնում, եւ աւումէին. միջից մէր կալ դորան[26]։

37 Ւվեռքանի որ պօղոսն բանակն մտնելոյ վերայ էր, հաղարապետին ասաց. կարելի է ինձ՝ որ քեզ հետ խօսիմ. նա էլ ասաց՝ յունարէն գիտե՞ս։

38 Ոչ լինի թէ դու էն *եգիպտացին ես, որ էս օրերից առաջ շփոթութիւն արիր՝ եւ չորս հազար սիկարեան (չէսՃՔ) մարդիք հանեցիր անապատն (չէօլ)[27]։

39 Եւ պօղոսն ասաց. ես հրէայ մարդ եմ կիլիկեցոց տարսօնից[28]. ոչ թէ աննշան քաղաքի քաղաքացի. աղաչումեմ քեզ՝ հրամայն տուր ինձ, որ էդ ժողովրդիդ հետ խօսիմ։

40 Եւ երբոր նա հրամայեց, պօղոսն աստիճաններին վերայ կանգնեց՝ եւ դէպի ժողովուրդն ձեռն շարժեց[29]. երբոր շատ լուռ կացան, սկսեց եբրայեցոց լեզուովն խօսիլ՝ եւ ասաց.

[22] Գործ. ի. 4։ [23] Գործ. իզ. 21։ [24] Գործ. իզ. 27։ իդ. 7։ [25] Վեր. 11։ Գործ. ի. 23։ [26] Գ–ե։ իզ. 18։ ՑածՀ. ԺԹ. 15։ Գործ. իբ. 22։ *Ժամանակ Եգիպտացւոյն ամ 8նաուն 55։ [27] Գործ. է. 36։ [28] Գործ. թ. 11։ իբ. 3։ [29] Գործ. ժբ. 17։

## ԳԼ. ԻԲ

1 Պօղոս երկար կը պատմէ որ ինչպէս Հաւատաց Տէրին. 17 Եւ առաքեալ լինելոյ կը կանչվի: 22 Երբոր իրան հեթանոսներին դնալն ակնուեմ՝ ժողովուրդն աղաղակուեմ. 24 Հաղարապետն կը հրամայէ որ նորան Նեմելով հարցընեն, 25 Բայց իրան հռոմայեցի լինելն իմաց տալով կազատվի:

1 Ա՛րդիւք եղբարք եւ հարք՝ հնդիկ իմ ձեզ պատասխան տալոյս լսեցէք[1]:

2 Երբոր լսեցին՝ թէ եբրայեցոյ լեզուովն նորանց հետ խօսեց, էլ աւելի լուռ կացան:

3 Ես նա ասաց. ես հրեայ մարդ եմ կիլիկեցոյ տարսոնուն ծնված[2] էս քաղաքումն մեծացած գամալիէլի[3] ոտքի մօտն[4], ճշմարիտ հայրենական օրէնքին պէս վարժված[5]. Աստուծոյ կողմանէ խիստ նախանձով ջերմեռանդ էի[6] ինչպէս որ էս օր դուք ամենքդ էք[7]:

4 Որ հետց էս ճանապարհս հալածեցի մահու չափ. որ մարդկանց եւ կանանց կապուածի եւ մատնուածի բանտերի մէջ[8]:

5 Ինչպէս որ քահանայապետն էլ ինձ վկայուեմ՝ եւ ծերերի ամէն ժողովն էլ[9]. որ նորանցից էլ թղթեր առած գնուեմի դամասկոս եղբարներին մօտ, որ էն տեղից էլ կապածներ բերեմ երուսաղէմ, որ պատժվին[10]:

6 Ես էլաւ երբոր ես գնուեմի եւ դամասկոսին մօտենուեմի, էնս օրվան դէմ՝ յանկարծակի երկինքից մին սաստիկ լոյս փայլեց իմ չորս կողմովս[11]:

7 Ես վէր ընկայ գետնին վերայ, եւ ձայն լսեցի՝ որ ասուեմէր ինձ. սաւուղ սաւուղ՝ ինձ հետեւ ես հալածուեմ:

8 Ես ես պատասխան տուի՝ թէ Տէր՝ դու ո՞վ ես. եւ ինձ ասաց. ես Յիսուս Նազովրեցին եմ՝ որ դու հալածուեմս:

9 Ես այդ նորանք՝ որ ինձ հետ էին՝ լոյսը տեսնուեմին, բայց էն ձայնըն չէին լսում՝ որ ինձ հետ խօսուեմէր[12]:

10 Ես ասացի. ինչ պիտի անեմ՝ Տէր. եւ Տէրն ասաց ինձ. վեր կաց՝ գնա դամասկոս, եւ էնտեղ կը պատմվի քեզ ամէն բանի համար՝ որ քեզ հրաման է որ անես:

11 Երբոր էն լուսոյ փառքիցն կաթող չէի տեսնել՝ նորանք՝ որ ինձ հետ էին, ձեռքից բռնեցին՝ եւ մտի դամասկոս:

12 Ա՛յն անանիա մարդ՝ աստուածավախն օրէնք պահող[13], դամասկոսումն բնակված ամէն հրէանեցիցն[14] բարի վկայութիւն ունող[15],

13 Ես եկաւ ինձ մօտ կանգնեց՝ եւ ասաց. սաւուղ եղբայր՝ վեր նայիր:

[1] Գործ. է. 2: [2] Գործ. իա. 39: բ կորնթ. ժա. 22: Փիլիպ. գ. 5: [3] Գործ. ե. 34: [4] բ Օրին. լգ. 3: գ Թագ. գ. 38: Ղուկ. ժ. 39: [5] Գործ. իզ. 5: [6] Գործ. իա. 20: Գաղատ. ա. 14: [7] Հռովմ. ժ. 2: [8] Գործ. ը. 3: իզ. 9–11: Փիլիպ. գ. 6: ա Տիմ. ա. 13: [9] Ղուկ. իբ. 66: Գործ. գ. 5: [10] Գործ. թ. 2: իզ. 10, 12: [11] Գործ. թ. 3: իզ. 12. 13: [12] Գործ. թ. 7: Դան. ժ. 7: [13] Գործ. թ. 17: [14] ա Տիմ. գ. 7: [15] Գործ. ժ. 22:

14 Այլ ես հենց էն ժամումն (սա՛ համարեա) դէպի նա վերեւ նայեցի, եւ նա ինձ ասաց. մեր Հարանց Աստուածն առաջուց[16] քեզ ընտրեց[17], որ նորա կամքըն ճանաչես, եւ էն արդարն[18] տեսնես[19], եւ նորա բերանից խօսք լսես[20]:

15 Որ նորա վկայ լինես ամէն մարդկանց մէջն՝ էն բաներին համար[21], որ տեսիր եւ լսեցիր[22]:

16 Այ հիմիկ՝ ինչո՞ւ ես ծուլանում, վեր կաց մկրտիւիր եւ քո մեղքերըն լուա[23] նորա անունըն (քեզ) կանչելով[24]:

17 Այլ էլաւ երբոր ես յետ դարձայ երուսաղէմ, եւ տաճարումն աղօթք էի անում, ափշութիւն ինձ բռնեց[25]:

18 Այ նորան տեսի՝ որ ինձ ասում էր[26]. վազ արա՝ շուտով դուրս եկ երուսաղէմիցն[27]. պատճառն որ՝ չեն ընդունիլ քո վկայութիւնդ՝ որ ինձ համար տալիս ես:

19 Այլ ես ասացի. Տէր՝ հենց նրանք գիտումեն՝ որ ես էի՝ որ քեզ հաւատացողներին բանտի մէջ էի տալիս[28], եւ ամէն ժողովարաններում ծեծում էի[29]:

20 Այ երբոր քո ստեփաննոս վկայիդ արիւնն թափվում էր[30], ես ինքնս էի՝ որ նորա մօտ կանգնած էի, եւ նորա սպանօղներին կամակից էի, եւ նորա սպանօղների շորերըն պահում էի[31]:

21 Այլ ասաց ինձ. գնա՛, ինչու որ՝ ես հեռու հեթանոսների մէջ կուղարկեմ քեզ[32]:

22 Այ մինչեւ էս խօսքս ականջ էին դնում նորան. յետոյ իրանց ձայներըն բարձրացրին՝ եւ ասացին. էգպէսի մարդըն երկրիցս վեր կալ[33]. ինչու որ՝ պէտք չէ որ էգպէսիդ ապրի[34]:

23 Այ երբոր նորանք աղաղակումէին՝ եւ շորերըն վեր էին քցում, եւ փոշին օդի (հովի) մէջն էին ցանում.

24 Հազարապետն հրամայեց որ նորան բանակին (օթոցին) մէջ մտցնեն. ասում էր՝ պէտք է ծեծելով հարցընել նորան՝ որ գիտենայ, թէ ինչ յանցանքի (սա՛ն) համար էին նորա վերայ էնպէս աղաղակում:

25 Այ երբոր նորան կաշվէ փոկերով պինդ կապեցին, պօղոս ասաց հարիւրապետին՝ որ մօտ կանգնած էր, թէ արժա՞ն է որ դուք հռոմայեցի անմեղ մարդ ծեծէք[35]:

26 Երբոր լսեց հարիւրապետն, մօտեցաւ հազարապետին պատմեց՝ եւ ասաց. ի՞նչ ես կամենում անել, ինչու որ՝ էս մարդս հռոմայեցի է:

27 Այ հազարապետն մօտ եկաւ՝ եւ նորան ասաց. դու ինձ ասա՝ հռոմայեցի՞ ես. եւ նա ասաց. Հա:

28 Հազարապետն պատասխան տուաւ. ես շատ բանով էս զինուորութիւնն ստացայ. եւ պօղոսն ասաց.

[16] Գործ. գ. 13: ե. 30: [17] Գործ. ի. 15: իզ. 16: [18] Գործ. գ. 14: է. 52: [19] ա Կորնթ. թ. 1: Ժե. 8: [20] ա Կորնթ. ժա. 23: Գաղ. ա. 12: [21] Գործ. իզ. 11: [22] Գործ. գ. 20: իզ. 16: [23] Գործ. բ. 38: Եբր. ժ. 22: [24] Գործ. ի. 14: Հռովմ. ժ. 13: [25] Գործ. ի. 26: բ Կորնթ. ժբ. 2: [26] ա Էր. 14: [27] Մատթ. ժ. 14: [28] ա Էր. 4. Գործ. ը. 3: [29] Մատթ. ժ. 17: [30] Գործ. է. 58: [31] Գործ. ժա. 48: Գործ. է. 59: Հռովմ. ա. 32: [32] Գործ. ի. 15: ժգ. 2, 46, 47: ժբ. 6: իզ. 17: Հռովմ. ա. 5: ժա. 13: ժե. 16: Գաղ. ա. 15, 16: բ. 7, 8: Եփես. գ. 7, 8: ա Տիմ. բ. 7: բ Տիմ. ա. 11: [33] Գործ. խա. 36: [34] Գործ. ժե. 24: [35] Գործ. ժգ. 37:

ես հենց դորանում ծնված եմ:

29 Նէ նորանք՝ որ նորան պիտի ծնծղին, շուռտալ հեռացան նորանից. եւ հազարապետն էլ վախեցաւ՝ երբոր իմացաւ թէ հռօմայեցի է. ինչու որ՝ կապել էր նորան:

30 Նէ յետեւի օրումն կամենալ-

մէր՝ որ ճշմարիտըն իմանայ, թէ ինչ է հրէաների չարախօսութիւնն. նորան արձակեց՝ եւ հրամայեց որ քահանայապետն եւ բոլոր տիվանըն կանչեն. եւ պօղոսին էլ վէր բերաւ նորանց մէջն կանգնացուց:

## ԳԼ. ԼԹ

1 Պօղոս երբոր իրան վարվելն Աստուծոյ առաջին՝կըպատմէ, 2 Ընանիա քահանայապետն կըհրամայէ՝ որ նորա բերանըն թակեն: 7 Խնդն չարախօսողներին տարաձայնութիւն: 11 Տէրն նորան կըզօրացընէ: 12 Հրէաներին պօղոսի համար իրար հետ արած երդումն նորան սպանելոյ համար, 20 Հազարապետին իմաց կըտայ մին աղայ: 27 Էն էլ պօղոսն փելիքս դատաւորին կուղարկէ:

1 Նէ պօղոսն տիվանին մտիկ աուաւ՝ եւ ասաց. մարդիք եղբարք՝ ես ամէն շիտակ մտքով վարվելիմ Աստուծոյ առաջին մինչեւ էս օր[1]:

2 Նէ անանիա քահանայապետն ծառաներին հրամայեց՝ որ նորա բերանըն թակեն[2]:

3 Նէն ժամանակն պօղոսն ասաց նորան. Աստուած պիտի քեզ զարկէ՝ բուով (գաճով) ծեփած պատ. եւ դու նստի՞ս ես որ ինձ օրէնքին պէս դատես, եւ օրէնքին հակառակ հրամայումես՝ որ ինձ թակեն[3]:

4 Նէ նորանք՝ որ նորա մօտն էին՝ ասացին. դու Աստուծոյ քահանայապետին հայհոյո՞նք ես տալիս:

5 Նէ պօղոսն ասաց. եղբարք՝ ես չէի գիտում՝ որ քահանայապետ է. հենց գրված է՝ թէ քո ժողովրդի իշխանըն չըհայհոյես[4]:

6 Նէրբոր պօղոսն իմացաւ թէ մին կողմն սադուկեցոց է՝ եւ մէկէլ կողմն փարիսեցոց, տիվանի մէջն

աղաղակումէր. մարդիք եղբարք՝ ես փարիսեցի եմ՝ եւ փարիսեցոյ որդի[5]. հաւ մեռելների յուսոյն՝ եւ յարութիւն առնելոյն համար ես հիմիկ դատվումեմ[6]:

7 Նէ երբոր էս ասաց, փարիսեցոց եւ սադուկեցոց մէջն տարաձայնութիւն ընկաւ. եւ բազմութիւնն պատառվեցաւ:

8 Պատճառն որ՝ սադուկեցիքն ասումեն, թէ չէ յարութիւն կայ՝ չէ հրեշտակ՝ եւ չէ հոգի[7]. բայց փարիսեցիքն երկուսըն էլ դաւանումեն:

9 Նէ մեծ աղաղակ էլաւ. փարիսեցոց կողմիցն մին քանի կարգաւորներ վերկացան, հակառակումէին եւ ասում. մենք խիկի չարութիւն չենք գտնում էս մարդումն[8]. միայն թէ հոգի խօսեց դորանում կամ հրեշտակ[9]:

10 Նէ երբոր խռովութիւնն շատացաւ, հազարապետն վախեցաւ՝ որ

[1] Գործ. իգ. 16: ա Կորնթ. գ. 4: բ Կորնթ. ա. 12: դ. 2: բ Տիմ. ա. 3: Եբր. ժգ. 18: [2] գ Թագ. իբ. 24: Եբեմ. ի. 2: Ճառվ. ժբ. 22: [3] Գնաւոր. ժԹ. 35: բ Օրին. իե. 1, 2: Ճառվ. է. 51: [4] Եմ. իբ. 28: Ծառ. ժ. 20: բ Պետր. բ. 10: Ճառոր. 8: [5] Գործ. իգ. 5: Փիլիպ. գ. 5: [6] Գործ. իգ. 15, 21: իգ. 6: իբ. 20: [7] Մաթէ. իբ. 23: Մարկ. ժբ. 18: Ղուկ. ի. 27: [8] Գործ. իե. 25: իգ. 31: [9] Գործ. իբ. 7, 17, 18:

չըլինի թէ պօղոսն նորանցից ձեղքվի · զինուորներին հրամայեց՝ որ վեր գան նորան նորանց միջից խլեն, եւ բերեն բանակին (օբաս-ին) մէջ :

11 Եւ յետեւի գիշերումն Տէրն կանգնեց նորա մօտ՝ եւ ասաց · սրբատապիղծ կաց՝ պօղէ, ինչու որ՝ ինչպէս ինձ համար երուսաղէմումն վըկայեցիր, էնպէս էլ պէտք է հռօմումն վկայես[10] :

12 Եւ երբոր առաւօտ էլաւ հրէաներն ժողովք արին՝ իրանց անձերին վերայ նզովք դրին, որ չուտեն՝ եւ չըխմեն, մինչեւ որ պօղոսին սպանեն[11] :

13 Եւ քառասուն մարդուց աւելի էին նորանք՝ որ էս երդումը իրար հետ արել էին :

14 Նորանք քահանայապետների եւ էրէցների մօտ գնին՝ եւ ասացին · նզովքով նզովեցինք մեր անձներըս՝ որ ոչ ինչ չուտենք՝ մինչեւ պօղոսին սպանենք :

15 Ասց դուք տիվանին հետ իմաց արէք հազարապետին · որ նորան վերբերէ ձեզ մօտ · իբր թէ կամենաք էլ աւելի ճշմարտութենով բան իմանալ նորա համար · մենք էլ նորա մօտ գալուն առաջ՝ պատրաստ ենք՝ որ սպանենք նորան :

16 Եւ պօղոսի քրվոր որդին՝ երբոր նորանց էն պատ հնարքները լսեց, գնաւ մտաւ էն բանակն (օբաս-ին) եւ պօղոսին պատմեց :

17 Եւ պօղոսն էն հարիւրապետներից մէնին կանչեց իրան մօտ՝ եւ ասաց · էս տղայիս տար հազարապետի մօտն · ինչու որ՝ բան ունի նորան պատմելոյ :

18 Եւ նա առաւ նորան հազարապետի մօտն տարաւ՝ եւ ասաց · կապած պօղոսն ինձ կանչեց՝ եւ աղաչեց, որ էս տղայիս բերեմ քեզ մօտ, որ մին բան ունի քեզ հետ խօսել :

19 Հազարապետն նորա ձեռքից բռնեց · գնաց առանձին տեղ՝ հարցնում էր, թէ ի՞նչ բան ունիս ինձ հետ խօսել :

20 Եւ նա ասաց · հրէաներն իրար հետ խօսք դրին՝ որ քեզ աղաչեն, որ էգուց պօղոսին վէրբերես տիվանին մէջ, իբրեւ կամենան մին աւելի ճշմարիտ քննութիւն անել նորա համար[12] :

21 Բայց դու մարիկ չի՛անես նորանց · պատճառն որ՝ նորանցից քառասուն մարդուց էլ աւելի հնարք են դործել նորա համար, որ անձներըն էլ նզովեցին՝ որ չուտեն եւ չըխմեն՝ մինչեւ որ նորան սպանեն · հիմիկ էլ պատրաստ են՝ եւ քո հրամանիդ են սպասում :

22 Ապա հազարապետն էն տղային թող արաւ՝ պատուէր տուաւ, որ իսկի մէնին չասէ, որ էս բանըս իմաց արիր ինձ :

23 Եւ հարիւրապետներից երկուսին կանչեց՝ եւ ասաց · երկու հարիւր զինուոր պատրաստեցէք, որ գնան մինչեւ կեսարիա · եւ ձիաձառնասուն ձիաւոր՝ եւ երկու հարիւր էլ սիդաւոր (նըզախոս-որ) դիշերի ը-րէք ժամի (սահմին) ժամնակումն :

24 Եւ դրատներ (ո-լախնէ-ը) էլ պատրաստեն՝ որ պօղոսին էնտեղ վեր բերեն սպրեցնեն :

25 Եւ փեղիքս դատաւորին թուղթ դրեց, որ նորա օրինակն էս էր ·

26 Կղոդիոս լիւսիաս՝ պատուական փեղիքս դատաւորիդ, ողջոյն ·

27 Էս մարդս հրէաներից բռա-

[10] Գործ · ԻԳ · 9 : ԻԵ · 23, 24 : [11] Վեր · 21, 30 : ԻԶ · 3 : [12] Վր · 12 :

նըվաճ՝ եւ նորանցից սպանվելոյ մեռ էր. ես վէնուոլներով վերայ հասի պրծացրի, իմանալով՝ որ հուժկուացի է[13]:

28 Ուզեցի որ նորա յանցանքըն (աո-չըն) իմանամ՝ որ նորա համար գանգատ էին անում դորանից. վէր բերի դորան՝ նորանց տիվանն[14]:

29 Էն գտի՝ որ իրանց օրէնքին մին վիճմունքի (հէօճմէ) համար ամբաստանված է[15], եւ իսկի մեռնելոյ կամ կապվելոյ արժանի յանցանք չունէր[16]:

30 Երբոր իմ ականջս հասաւ՝ որ նորանք էդ մարդոյդ համար հնարք են գործել[17] նորան քեզ մեռ ուղարկեցի. եւ չարախօսներին էլ հրաման տուի՝ որ դորանից քո առաջից խօսեն[18]. ոչ[19] կաց:

31 Էս վէնուոլներն նորա հրամանին պէս՝ գիշերուն պօղոսին առին տարան անախպատրիս:

32 Էս յետեւի օրումն արձակեցին էն վէնուոլներն՝ որ նորա հետ գնացել էին, եւ յետ դարձան բանակն (օրթօու):

33 Նորանք մին կէսարիա. եւ թուղթն դատաւորին տուին, եւ պօղոսին էլ նորա առաջին կանգնացրին:

34 Երբոր կարդաց՝ հարցրուց թէ ո՞ր գաւառիցն է. եւ երբոր տեղեկացաւ թէ կիւլիկիայիցն է[19],

35 Ասաց. կը լսեմ քեզ՝ երբոր քո չարախօսներն էլ կըգան[20]. եւ հրամայեց՝ որ հերովդէսի պալատումն պահեն նորան[21]:

## ԳԼ. ԻԹ

1 Պօղոս Ցերտիւղոս ճարտար խօսող մարդուցն չարախօսվելով. 10 Իրան անվեղ կեանքի եւ արած վարդապետութեան պատմութիւն կանէ: 24 Դատաւորի եւ նորա կնկանն Ա՛ւետարան կը քարոզէ: 26 Դատաւորն պօղոսից փող կը յուսայ, բայց դատարկ կը լինի նորա յոյսն: 27 Վերջն իրան իշխանութենէն դուրս կընկնի, բայց պօղոսին կապած կը թողէ:

1 Էս հինգ օրից ետեւ[1] անանիա քահանայապետն մին քանի ծերերի եւ մին ճարտար խօսող տերտիւղոս անուն մարդոյ հետ վէր եկաւ, որ սորանք էլ իմց արին գաւառօրին՝ պօղոսի համար[2]:

2 Էս երբոր նորան կանչեց, տերտիւղոսն սկսեց գանգատ անել եւ ասել. որովհետեւ քեզանից շատ խաղաղութիւն ենք գտել՝ եւ էս ազգիս համար շատ բաների շնորհքութիւն քո խնամք տանելովդ:

3 Մեն կերպով եւ ամեն տեղ շատ գոհութենով շնորհակալ ենք՝ քեզանից ոչ ազնուական փելիքս:

4 Ասայ որ չըլինի թէ էլ աւելի նեղութիւն տամ քեզ, աղաչումեմ՝ որ մին քիչ լսես մեզ քո հեզութենովդ:

5 Պատճառն որ՝ մենք գտինք էս մարդըս՝ որ ապականումէ եւ խռովացնումէ էն ամեն հրէաներին, որ բոլոր աշխարհքումն կան. եւ նազորեցոց հերձուածի առաջնորդ է[3]:

6 Որ նա հենց տաճարըն էլ կամեցաւ պղծել. որ էլ նորան բռնե-

[13] Գործ. իա. 33: իդ. 7: [14] Գործ. իբ. 30: [15] Գործ. ժը. 15: իե. 19: [16] Գործ. իզ. 31: [17] Վեր. 20: [18] Գործ. իդ. 8: իե. 6: [19] Գործ. իա. 39: [20] Գործ. իդ. 1. 10: իե. 16: [21] Մատթ. իե. 27: [1] Գործ. իա. 27: [2] Գործ. իդ. 3, 30, 35: իե. 3: [3] Ղուկ. իդ. 2: Գործ. ջ. 13: ժզ. 20: ժէ. 6: իա. 28: ա Պետր. բ. 12, 15:

ցինք[4]. եւ մեր օրէնքին պէս ուզեցինք դատաստան անել[5]։

7 Իսահաս Հազարապետն եկաւ՝ եւ մեծ բունութենով մեր ձեռնէրիցս Հանեց[6]։

8 Ասացինք՝ որ նորա չարախօսներն էլ գան քեզ մօտ. որ հինց դու միևել դատաստան անելով կաթող ես տէղկանալ նորանից ամէն բանի համար՝ որ մենք դանգատուեմնք դորանից[7]։

9 Երկանեըն էլ միաբան էլած՝ ասացին Էդպէս է։

10 Պօղոսն պատասխան տուաւ՝ երբոր դատաւորն նորան աչքով աբաւ որ խօսի. դիտուեմ որ դու շատ տարուց հետէ էս ազգիս դատաւորն ես. (ապա) յօժար սրտով իմ բաներիս համար պատասխան եմ տալիս։

11 Ինչու որ՝ դու կարող ես դիտել, որ տասներկու օրից աւելի չէ՝ որ ես եկի երկրպագութիւն անել երուսաղէմումն[8]։

12 Չէ տաճարումն ինձ չէն գտել՝ որ մին մարդով հետ խօսացել եմ, եւ կամ շատ մարդ միտեղ հաւաքելով՝ ոչ ժողովարանումն[9],

13 Չէ ոչ քաղաքումն. եւ չէն կարող քո առաջիդ ցոյց տալ էն՝ որ հիմիկ նրահամար չարախօսումեն ինձանից։

14 Ասացի էս եմ խոստովանվում քեզ, թէ էն ճանապարհովն՝ որ ասումեն հերձուած[10], էնպէս եմ պաշտում Հայրենական Աստուծոյն, ամէն բաներին հաւատալով[11] որ օրէնքումն եւ մարգարէներումն գըրւած է[12]։

15 Յոյս ունիմ դէպի Աստուած, որ դորանք էլ սպասումեն նորան[13]՝ թէ արգարների եւ մեղաւորների յարութիւն պիտի լինի[14]։

16 Որ հինց նորանով ես էլ ջանք եմ անում, որ ամէն ժամ (առհաս) անմեղ խղճմտանք ունենամ Աստուծոյ առաջին՝ եւ մարդկանց առջին[15]։

17 Շատ տարիներից հետէ եկի՝ որ իմ ազգիս մէջ ողորմութիւն անեմ, եւ պատարագս տուի[16].

18 Որանով ինձ գտին տաճարումն սրբված՝ ոչ շատերով՝ եւ ոչ էլ ամբոխով (խուլով)[17]։

19 Որին քանի ասիացի հրէաներ՝ որ նորանց պէտք էր գալ քո առաջիդ՝ եւ գանգատ անել, թէ որ մին բան ունենան ինձանից[18]։

20 Կամ հինց սորանք՝ թող ասեն. ինձանում ինչ անիրաւութիւն գտին՝ դեռ քանի որ տիվանումն կայի։

21 Բայց մինակ էս խօսքիս համար՝ որ երբոր նորանց միջումն կանգնած էի, աղաղակեցի, թէ մեռելների յարութիւն առնելոյն համար՝ ես էս օր դատվում եմ ձեզանից[19]։

22 Իր փիլիքս նորանց ուշացրուց՝ ինչու որ՝ շատ լաւ տեղեկացած էր էն ճանապարհին համար, ասաց. երբոր լիսիաս Հազարապետն էստեղ կըգայ, կըտեղեկանամ ձեզ համար[20]։

23 Հարիւրապետին հրամայեց՝ որ նորան պահէ. եւ իրան մարդկանցից

[4] Գործ· իա· 28։ [5] Ցաւմ· ժը· 31։ [6] Գործ· իա· 33։ [7] Գործ· իգ· 30։ [8] Վեր· 17։ Գործ· իա· 26։ [9] Գործ· իե· 8։ իը· 17։ [10] Ա Թես· ը· 14։ Գործ· Թ, 2։ [11] Բ Տիմ· ա· 3։ [12] Գործ· իզ· 22։ իը· 23։ [13] Գործ· իգ· 6։ իզ· 6, 7։ իը· 20։ [14] Դան· ժբ· 2։ Ցաւմ· ե· 28, 29։ [15] Գործ· իգ· 1։ [16] Գործ· ժա· 39, 30։ ի· 16։ Հաւմ· ժե· 25։ Բ Կորնթ· ը· 4։ Գաղ· բ· 10։ [17] Գործ· իա· 26, 27։ իզ· 21։ [18] Գործ· իգ· 30։ իե· 16։ [19] Գործ· իգ· 6։ իը· 20։ [20] Վեր· 7։

իսկի մընին չարգելէ՝ նորան ծառա-
յութիւն անել[21]։

24 Ու մին քանի օրից ետեւ փե-
լիքս եկաւ իրան դրուսիլա կնկանն
հետ՝ որ նա հրեայ էր։ պօղոսին կանչ-
եց՝ եւ նորանից՝ Յիսուս Քրիս-
տոսի հաւատքին համար բան լսեց։

25 Ու երբոր նա խօսում էր ար-
դարութեան եւ պարկեշտութեան
եւ նոր գալու դատաստանին համար,
փելիքս շատ ահով բռնուեցաւ, եւ
պատասխան տուաւ։ դու հիմիկ
դնա՝ եւ երբոր ժամանակ կը լինի,
կը կանչեմ քեզ։

26 Յոյսդնա էնպէս յոյս էլ ունէր՝
որ պօղոսից մին բան տրուի իրան։
եւ նրա համար շատ անգամ կանչու-
ում էր նորան՝ եւ նորա հետ խօսում էր[22]։

27 Ու երբոր երկու տարին կա-
տարուեցաւ, փեստոս պորկիոսն եկաւ
փելիքսի տեղն։ (եւ) որովհետեւ
փելիքս կամեցաւ՝ որ հրեաներին մին
շնորհք անէ, պօղոսին կապած թո-
ղեց[23]։

## ԿԶ։ ԻՆ

2 Հրեաները պօղոսին համար փեստոսի չարախօսութիւն կանեն, 8 պօղոս իրան համար պատասխան կուտայ փեստոսի առաջին, 11 եւ դեպի կայսերն կը ղողանջէ (տօք Լէլանդէ)։ 14 փեստոս էս բանն Ագրիպպա թագաւորին կը պատմէ, 23 պօղոսին կը բերեն նորանց առաջին։ 25 Եւ փեստոսն կասէ թէ նա իսկի մեռնելոյ արժանի բան չի գործել։

1 Փեստոսն երբոր իշխանու-
թեանն հասաւ, երեք օրից ետեւ
կեսարիայից վերէլաւ երուսաղէմ։

2 Ու քահանայապետներն եւ
հրեաների գլխաւորներն պօղոսին
համար իմացուին տուին նորան[1]։

3 Ու աղաչեցուին՝ էս ընորհքը
խնդրելով նորանից, որ երուսաղէմ
կանչէ նորան, ինչու որ՝ հնարք էին
գործել՝ որ ճանապարհումն սպանեն
նորան[2]։

4 Բայց փեստոսն պատասխան
տուաւ՝ որ նորան կեսարիայումն կը-
պահէ, եւ որ հենց ինքն էլ շուտով
հետեղ կը գնայ։

5 Ու ձեզանից ով որ կարող են,
ասաց՝ թող ինձ հետ գան, եւ թէ
որ էն մարդումն մին յանցանք կը-
լինի՝ թող նորանից դանգատ անեն[3]։

6 Ու հետեղ ութ կամ տասն օ-
րից աւելի չըմնացած՝ վերեկաւ կե-
սարիա, եւ յաւելի օրումն տիվան
նստեց, եւ հրամայեց որ պօղոսին
բերեն։

7 Ու երբոր եկաւ՝ նորա չորս
կողմիվ կանգնեցին՝ էն հրեաները,
որ երուսաղէմից եկել էին, շատ
եւ ծանր յանցանք (ասել) էին դը-
նում (նորա վերայ) որ չէին կա-
րող ցոյց տալ[4]։

8 Պատճառն որ՝ պօղոսն պա-
տասխան էր տալիս, թէ՝ ոչ հրեա-
ների օրէնքին եւ ոչ կայսերին դէմ
մին մեղք եմ գործել[5]։

9 Բայց փեստոսն՝ որ կամեցաւ
հրեաներին շնորհք անել, պատաս-
խան տուաւ պօղոսին՝ եւ ասաց[6]։ կա-
մենո՞մես երուսաղէմ գնալ՝ եւ էն-

[21] Գործ. իե 3։ իը · 16։ [22] Եբ. իգ · 8։ [23] Եբ. իգ · 2։ Գործ. ժբ · 3։ իե, 9, 14։
[1] Գործ. իգ · 1 Վ.յր · 15։ [2] Գործ. իգ 12, 15։ [3] Գործ. ժբ · 14։ Վ.յր · 18։ [4] Պաւլ. ժե· 3։ Ղ.ա.ի. իգ · 2, 10։ Գործ. իգ · 5, 13։ [5] Գործ. զ · 13։ իգ · 12։ իը · 17։ [6] Գործ. իգ · 27։

տեղ էգ բաներիդ համար գաւազիլ իմ առաջիս[7]։

10 Եւ պօղոսն ասաց. կայսերի տիւանին եմ հասած կանգնած, որ հնտեղ պէտք է որ ես դատուիմ. հրէաներին մին չիս ինձ տուել, ինչպէս որ դու էլ լաւ գիտես։

11 Բայց թէ որ չիս տուօղ եմ եւ մեռնելոյ արժանի բան գործեցի մեռնելուց չեմ վախենում[8]. բայց թէ որ իսկի հնպէսի բան չըկայ, որ սորանք ինձանից գանգատուեն, ոչ ով ինձ կարօղ չէ դորանց ձեռքն տալ. ես դէպի կայսերն եմ բողոքում (Պօօ կանչում)[9]։

12 Էն ժամանակն փեստոսն խորհըրդակիցին հետ խօսեց եւ պատասխան տուաւ, դէպի կայսերն բողոքելիր՝ կայսերի մօտն դնաս։

13 Նրբոր մին քանի օր անց կացաւ, ագրիպպաս թագաւորն եւ բերնիկէն եկին կեսարիա՝ փեստոսին ողջոյն տալոյ համար։

14 Եւ երբոր հնտեղ շատ օրեր անց կացրին, փեստոսն պօղոսին համար խնդրուց թագաւորին՝ եւ ասաց. հստեղ մին մարդ է մնացել փելիքսից կապված[10]։

15 Որ նորա համար երբոր երուսաղէմ գնացի, քահանայապետներն եւ հրէաների դիւանաւորներն խնդրին ինձ. խնդրուելին ինձանից՝ որ նորան պատիժ տամ[11]։

16 Նորանց էլ պատասխան տուի, թէ հռոմայեցոց օրէնք չէ՝ որ մինն մին ուրիշի ձեռքն տրվի՝ դեռ որ ամբաստանվածն իրան չարախօսներին իրան դիմացն չունենայ՝ եւ էն չարախօսութեան համար պատասխան տալոյ կարօղութիւն չառնէ[12]։

17 Եւ երբոր հստեղ եկին՝ չըյետացրի, բայց յետեւի օրումն տիւանն նստած՝ հրամայեցի որ էն մարդոյն բերեն[13]։

18 Եւ երբոր չարախօսներն առաջ եկին, իսկի նորա համար մին չարախօսութեան ձիաս չէին առաջ բերում՝ ինչ որ ես կարծումէի։

19 Բայց իրանց պաշտամունքին համար վիճմունք ունէին նորա հետ. եւ մին մեռած Յիսուսի համար՝ որ նորա համար պօղոսն ասումէր՝ թէ կենդանի է[14]։

20 Նրբոր ես բաւական չէի էնպէսի բաներըն քննելոյ՝ ասացի, թէ կամենում երուսաղէմ գնալ՝ եւ հնտեղ դաւազիլ էգ բաներիդ համար։

21 Բայց պօղոսն երբոր բողոքեց՝ որ կայսերի քննութեան համար պահվի, հրաման տուի՝ որ նորան պահեն, մինչեւ որ տանել տամ կայսերի մօտն։

22 Ագրիպպան փեստոսին ասաց. ես էլ կամենումէի որ լսեմ էն մարդոյն. եւ նա ասաց՝ էգուց կլսես[15]։

23 Եւ յետեւի օրումն երբոր ագրիպպաս եւ բերնիկէն՝ շատ եւ փառաւոր հանդիսով եկին, եւ հազարապետներին՝ եւ քաղաքի պատուական մարդկանցն հետ տիւանն մտին, փեստոսն հրամայեց՝ եւ պօղոսին բերին։

24 Եւ փեստոսն ասաց. ով ագրիպպաս թագաւոր՝ եւ ամէն մարդիքդ՝ որ մեզ հետ էք, տեսնո՞ւմէք սորան. հրէաների ամէն ժողովուրդն իմ առաջիս գանգատ արին սորա

[7] Գ.տար. 20։ [8] Գ.տար. 25։ Գործ. ԻԵ. 14։ Իզ. 29։ Իզ. 31։ [9] Գործ. Իզ. 32։ Իը. 19։ [10] Գործ. Իզ. 27։ [11] Գ.Եր. 2, 3։ [12] Գ.Եր. 4, 5։ [13] Գ.Եր. 6։ [14] Գործ. ԻԵ. 15։ Իզ. 29։ [15] Գործ. Լ. 15։

համար երուսաղէմումն[16], եւ հոստեղ աղաղակումին՝ թէ պէտք չէ որ դա ապրի[17]։

25 Հայց ես տեղեկացայ՝ որ դա իսկի մեռնելոյ արժանի բան չի գործ ծել[18]. եւ երբոր դա ինքն իրան դէպի կայսերն բողոքեց, խորհուրդ արի որ ուղարկեմ[19];

26 Ու նորա համար մին հաստատ բան չունիմ՝ որ գրեմ իմ տէրին. նրահամար դորան բերի ձեր առաջին՝ եւ մանաւանդ քո առաջիդ՝ ով ագրիպպաս թագաւոր. որ մինէլ քննելով՝ կարօղ լինիմ մին բան գրել։

27 Հնչու որ՝ ինձ անպատշաճ է երեւում, որ մին կապած մարդ տանել տամ, եւ նորա մին արած վատութիւն չհամցնեմ։

## ԿԶ. ԻՕ.

1 Պօղոս իրան տղայութենէն հետէ ինչ կեանք որ վարել է՝ Ագրիպպոսի առաջին կը պատմէ, 12 Մինէլ թէ ինչպէս ինքն հրաշքով դարձավ եւ Առաքեալ լինելոյ կանչուեցաւ։ 24 Փեստոս մեծ ձայնով կասէ նորան թէ գիժված է, որ նորա դէմ ինքն հերքութենով պատասխան կուտայ։ 28 Ագրիպպասին համարեա թէ քրիստոնեայ լինելոյ մին քիչ կըմնայ։ 31 Ամէն ժողովն վկայում թէ պօղոսն անմեղ է։

1 Ու ագրիպպաս պօղոսին ասաց. (քեզ) հրամայն է որ քեզ համար խօսիս. էն ժամանակն պօղոս ձեռըն մեկնեց՝ եւ պատասխան էր տալիս։

2 Էն ամէն ամբաստանութեան համար՝ որ հրէաներն արին ինձանից՝ ով ագրիպպաս թագաւոր՝ իմ անձըս երանելի եմ համարում՝ որ ես օր քո առաջիդ պատասխան պիտի տամ։

3 Մանաւանդ (նրահամար)՝ որ հենց դու տեղեակ ես հրէաների ամէն սովորութիւններին եւ վիճմունքներին. նրահամար աղաչում՝ որ համբերութենով լաս ինձ։

4 Հնչու որ՝ ամէն հրէաներն տեղեակ են իմ կեանքիս՝ որ տղայութենից հետէ սկզբից իմ աղգիս մէջ երուսաղէմումն եմ էլել։

5 Առաջուց շատ վաղուց հետէ գիտումեն, թէ որ կամենան վկայութիւն տալ, որ ես մեր օրէնքի աւելի ճշմարիտ կրօնքովն եմ՝ ապրել՝ փարիսեցի լինելով[1]։

6 Ու հիմիկ տիվանի մէջն կանգնած դատապարտվումեմ էն յուսոյն համար՝ որ մեր հարանցն Աստուածանից տըվված[2] աւետիքին վերայ է[3]։

7 Ու մեր տասներկու ցեղն[4] գիշեր եւ ցերեկ անդադար պաշտելով[5], սպասումեն հասնել նորան[6]. եւ էս յուսոյս համար ամբաստանվումեմ հրէաներից՝ ով թագաւոր։

8 Ինչ անհաւատալի բան է երեւում ձեզ՝ որ Աստուած մեռելնե-

[16] Գործ. իբ. 2, 3, 7։ [17] Գործ. իբ. 22։ [18] Գործ. իդ. 9, 29։ իզ. 31։ [19] Գործ. 11, 12։ [1] Գործ. իբ. 3։ իդ. 6։ իդ. 15, 22։ Փիլիպ. գ. 5։ [2] Գործ. իդ. 6։ [3] Ծննդ. գ. 15։ իբ. 18։ իզ. 4։ իմ. 10։ բ Օրէն. ժը. 15։ ր Թագ. է. 12։ Սաղմ. ՃՂԲ. 11։ Եսայ. գ. 2։ է. 14։ Թ. 6։ Ե. 10։ Երեմ. իդ. 5։ լդ. 14, 15, 16։ Եզեկ. լդ. 23։ լէ. 24։ Դան. Թ. 24։ Միք. է. 20։ Գործ. ժգ. 32։ Հռոմ. ժե. 8։ Տիտ. բ. 13։ [4] Ցակ. ա. 1։ [5] Ղուկ. բ. 37։ ա Տիմ. ե. 5։ աԹես. գ. 10։ [6] Փիլիպ. գ. 11։

բին Յարութիւն առնել է տալիս։

9 Ընդ նոյն ես ինքս Հարկաւոր էի համարում՝ որ Յիսուս Նազովրեցի անունին հակառակ շատ բաներ գործեմ[7]։

10 Որ երուսաղէմացիս էլ արի[8]. եւ սրբերից շատերին ես բանտի մէջ դնել էի տալիս. ինչու որ՝ քահանայապետներից իշխանութիւն էի առել՝ եւ նորանց սպանվածների համար բերուածի նորանց մօտ[9]։

11 Յաճախ ամէն ժողովարաններում շատ անգամ պատիժ տալով նորանց բռնադատում էի որ հայհոյեն. եւ էլ աւելի նորանց վերայ կատաղած՝ հալածում էի մինչեւ դրսի քաղաքները[10]։

12 Յայս պատճառով երբոր քահանայապետների իշխանութիւնով եւ հրամանով գնում էի դամասկոս[11],

13 Ահա օրի ժամանակին ճանապարհին վերայ տեսի՝ ով թագաւոր՝ որ արեգական լուսից աւելի մին պայծառ լոյս երկնքից ծագեց իմ շուրս կողմից՝ եւ նորանցով էլ՝ որ ինձ հետ գնում էին։

14 Յես մենք ամէնքս գետնին վերայ ընկանք, եւ մին ձայն լսեցի՝ որ հեբրայեցոց լեզուով ինձ ասում էր. սաւուղ սաւուղ՝ ինչ ինչու ես հալածում. դժուար է քեզ՝ որ խթանի (ընդդէմ) դէմ քացի տաս։

15 Յես ես ասացի. դու ով ես՝ Տէր. եւ Տէրն ասաց. ես Յիսուսն եմ՝ որ դու հալածում ես։

16 Այլ վեր կաց՝ եւ ոտներիդ վերայ կանգնիր՝ որ նրահամար երեւեցայ քեզ՝ որ քեզ ձեռքս առնեմ պաշտօնեայ եւ վկայ լինելոյ էն բաներին՝ որ դու տեսիր, եւ (էն) բաներին որ նորանցով պիտի երեւեմ քեզ[12]։

17 Որ ազատեմ քեզ էդ ժողովրդից՝ եւ հեթանոսներից, որ ես նորանց մէջ պիտի ուղարկեմ քեզ[13]։

18 Որ նորանց աչքերն բանան՝ եւ յետ դարձնեն[14] (նորանց) խաւարից դէպի լոյսն, եւ սատանայի իշխանութենից դէպի Աստուած[15]. որ նորանք ընդունին թողութիւն[16] եւ սրբերին հետ[17] ժառանգութիւն առնեն[18]։

19 Որահամար՝ ով ագրիպպաս թագաւոր՝ անհաւան չէլայ էն երկնային տեսիլքին։

20 Այլ առաջ նորանց՝ որ դամասկոսում եւ երուսաղէմում էին, եւ ամէն հրէաստանի եւ հեթանոսների գաւառներումն՝ պատմեցի[19], որ ղղջանան եւ դառնան կենդանի Աստուծոյ մօտն, որ ապաշխարութեան արժանի գործքեր գործեն[20]։

21 Որահամար հրէաներն ինձ առ ճարում բռնելով՝ ուզում էին որ սպանեն[21]։

22 Որովհետեւ Աստուածանից ինձ օգնութիւն հասաւ՝ մինչեւ էս օր կանգնեցի եւ վկայեցի փոքրին եւ մեծին. նրանից դուրս բան չասելով՝

[7] Ճվճ. ԺԷ. 2։ ա Ցխ. ա. 13։ [8] Գործ. ը. 3։ Գաղ. ա. 13։ [9] Գործ. Թ. 14, 21։ Իր. 5։ [10] Գործ. Իր. 19։ [11] Գործ. Թ. 3։ Իր. 6։ [12] Գործ. Իր. 15։ [13] Գործ. Իր. 21։ [14] Եսայ. Լե. 5։ Խր. 7։ Գաղ. ա. 79։ Ճվճ. ը. 12։ բ Կորնթ. գ. 4։ Եփես. ա. 18։ ա Թես. ե. 5։ [15] բ Կորնթ. ը. 14։ Եփես. գ. 18։ ե. 8։ Կող. ա. 13։ ա Պետր. բ. 9, 25։ [16] Գաղ. ա. 77։ [17] Գործ. ի. 32։ [18] Եփես. ա. 11։ Կող. ա. 12։ [19] Գործ. Թ. 20, 22. 29։ Ժա. 26։ Ժդ. Ժդ. Ժդ. Ժե. Ժը. ԺԹ. ի. իա։ [20] Մատթ. գ. 8։ [21] Գործ. իա. 30, 31։

քան որ մարգարէներն[22], եւ մօտէն խօսեցին էն նոր գալու լինելիքներին համար[23]։

23 Ով Աբրիատոն պիտի չարչարվի[24], թէ նա էլ առաջինն պիտի լինի մեռելների յարութենիցն[25] եւ լոյս պիտի քարոզէ ժողովրդին եւ հեթանոսներին[26]։

24 Եւ նա երբոր էս պատասխան տուաւ, փեստոն մեծ ձայնով ասաց. գժված ես՝ պօղոս, շատ կարդացողութիւններդ մոլորացուցին քեզ[27]։

25 Եւ պօղոսն ասաց. չեմ գժվում՝ ով ամենիւ փեստոս, բայց հնդուեան եւ ճշմարտութեան բաներ եմ խօսում։

26 Թագաւորն էլ էս բաններիս տեղեակ է, որ նորա հետ էլ համարձակ խօսումեմ. ինչու որ՝ չեմ կարծում որ սորանցից մինն էլ քեզանից ծածկված լինի. պատճառն որ՝ էս բանս ոչ մի անկիւնի (հնդ) տեղի մէջն էլած է։

27 Հաւատո՞ւմես դու մարգարէներին՝ ով ագրիպպաս Թագաւոր. գիտումեմ որ հաւատումես։

28 Եւ ագրիպպասն պօղոսին ասաց. մին քիչ է մնում որ ինձ համանայնես որ քրիստոնեայ լինիմ։

29 Եւ պօղոսն ասաց. Աստուածանից խնդրումեմ՝ թէ քիչով թէ շատով՝ լինի որ ոչ թէ միայնակ դու, բայց էն ամենքն էլ՝ որ էս օր լսումեն ինձ, էնպէս լինեին՝ ինչպէս որ ես եմ, էս կապանքներիցս զատ (աոանջոյ)[28]։

30 Ի վերկացաւ Թագաւորն եւ դատաւորն եւ բերրնիկէն, եւ նոքանք էլ՝ որ նորանց հետ նստած էին։

31 Եւ երբոր գնացին, իրար հետ խօսումեին եւ ասում, թէ էս մարդս խէի մեռնելոյ կամ կապանքի արժանի բան չի գործել[29]։

32 Իսպ ագրիպպասն փեստոսին ասաց. կարելի էր էս մարդըս արձակել՝ թէ որ դէպի կայսրն չէր բողոքել[30]։

## ԳԼ. ԻԷ

1 պօղոս դէպի Հռոմ նաւով գնալով, 10 Առաջուց իմացուցին կլսայ թէ էն նաւարկութիւնն նեղութիւնով պիտի լինի, 11 Եւ Հարիւրապետն չի՛ հաւատալ նորա խօսքերին։ 14 Քամուցն էսաեղ էնաեղ կըշնան, 41 Նաւըն կը քանդվի, 22, 34, 44. բայց ամենն էլ կազատվին էն ինսախց։

1 Երբոր հրաման եղաւ մեզ՝ որ նաւով գնանք իտալիա, պօղոսին եւ ուրիշ մին քանի կապտվածներ էլ տուին մին Հարիւրապետի, որ նորա անունն յուլիոս էր՝ սեբաստոսի գընդիցն (պաօլըկիոն)[1]։

2 Եւ որ վեր էլանք մին անդրամիսացի նաւ՝ որ պէտք էր գնայ ասիացոց կողմերն, գնացինք. արիստարքոս մակեդոն թեսաղոնիկեցին էլ մեզ հետ էր[2]։

3 Եւ վեր եկինք սիդոն. եւ յու-

[22] Ղ՟ե։ իդ. 27, 44։ Գործ. իդ. 14։ իը. 23։ Հաւմ. գ. 21։ [23] Ցաղ. ւ. 46։ [24] Ղ՟ե։ իդ. 26, 46։ [25] ա Կորնթ. ւժե. 20։ Կող. ա. 18։ Ցայտ. ա. 5։ [26] Ղ՟ե։ բ. 32։ [27] գ Թագ. ւթ. 11։ Ցաղ. ժ. 20։ ա Կորնթ. ա. 23։ բ. 13, 14։ գ. 10։ [28] ա Կորնթ. է. 7։ [29] Գործ. իգ. 9, 29։ իե. 25։ [30] Գործ. իե. 11։ [1] Գործ. իե. 12, 25։ [2] Գործ. ժթ. 29։

լեոն սէր ցոյց տալով պօղոսին՝ հը-
բամայեց որ բարեկամներուն մնան
գնայ՝ եւ հանգիստ գտնէ[3]։

4 Իւ Էնտեղից նաւով գնացինք
կիպրոսի ցած կողմնէն՝ քամւոյ ներ-
հակ լինելոյ պատճառուն։
5 Իւն ժամանակն կիլիկիայի եւ
պամիֆիլիայի ծովի միջումն գնալով՝
վեր եկինք լիկիացոց սիրտան։
6 Իւ հարիւրապետն Էնտեղ մին
աղէքսանդրացի նաւ գտաւ՝ որ Իտա-
լիա էր գնում, եւ մեզ Էնտեղ
մացրուց։
7 Իւ շատ օր նաւովն ծանր գնա-
լով՝ դժուար հասինք կնիդի կող-
մերն, եւ երբոր քամին չը թողց
մեզ, նաւով գնացինք կրետէի ցած
կողմն սաղմնեպի մօտ։
8 Իերբոր նորանով դժուար անց-
կացանք՝ եկինք միտեղ, որ գեղ-
ցիկ նաւահանգիստ էր կոչվում, որ
ղասէ քաղաքն նորա մօտ էր։
9 Իւ երբոր շատ ժամանակ էլ
անց էր կացել՝ եւ նաւով գնալոյ
համար սխալմունք էր լինում, ինչու
որ պասի ժամանակն էլ անց էր կա-
ցել, պօղոս խրատ էր տալիս[4],
10 Իւ նորանց ասումէր, ով մար-
դիք՝ ես տեսնում եմ որ էս նաւար-
կութիւնս նեղութենով եւ շատ
վնասով պիտի լինի, ոչ թէ մեզ
բեռնիդ եւ նաւիդ, բայց մեր անձնե-
րիս էլ։
11 Բայց հարիւրապետն նաւապե-
տին եւ նաւ քշողին աւելի ականջ
էր դնում՝ քան թէ պօղոսի խոս-
քերին։
12 Իրովհետեւ էն նաւահանգիս-
տըն անյարմար էր երեւում ձմեռըն
անցկացնելոյ համար, շատերն մնա-
ծեցին՝ որ էնտեղից գնան, որ լինի
թէ ձմեռն մնալոյ համար կարողանան
փիւնիկէն հասնիլ կրէտացոց էն
նաւահանգիստն՝ որ դէպի հարաւ
կողմի եւ աշխարհքն էր նայում։
13 Իւ երբոր հարաւի քամին
փչեց, կարծումէին թէ աչք դրած
տեղն կը հասնեն, եւ մօտ քցած՝ կրե-
աւէի կողմնէն անց էին կենում։
14 Իւ որ շատ ժամանակ չէր ան-
ցած՝ նորա վերայ ուռած քամի ըն-
կաւ՝ որ եւրակիկլօն է կոչվում։
15 Իերբոր նաւն բռնըվեցաւ՝ եւ
քամուն դէմ չըկարաց դիմանալ,
թոյլ տուած գնումէինք եւ գալիս
էինք։
16 Իերբոր ջանք արինք գնալ մին
կղզի (ապայ)՝ որ կղօդա էր կոչվում,
դժուար կարացինք մակոյկըն (ջո-
լա՛ն) բռնել։
17 Իր էն առին նաւին հետ օգ-
նութեան համար կապեցին, եւ վա-
խելով՝ որ չը լինի թէ յորձանուտն
(ախոռնէլոն) ընկնին, առագաստըն
(եւչէնդե) վեր թողին՝ էնպէս գնում-
էին եւ գալիս։
18 Իւ երբոր մենք շատ նեղու-
թիւն էինք քաշում, յետեւի օրումն
կարասին (պապպաճաղա՛ն) ծովին մէջ
էին քցում՝։
19 Իւ երրորդ օրումն իրանց ձե-
ռովն նաւի գործիքըն դուրս քցե-
ցին[5]։
20 Իերբոր շատ օրեր՝ ոչ արեւ եւ
ոչ աստղներ չէին երեւում, եւ
ձմեռն էլ քիչ չէր որ մեզ վերայ
կար, ապա մեր ազատվելոյ ամէն
յոյսն կտրըվեցաւ։
21 Իւ օրովհետեւ շատ օր սոված

[3] Գործ. իգ. 23։ իը. 16։ [4] Ղեւտ. իգ. 27, 29։ [5] Ցոն. ա. 5։

էին, էն ժամանակին պօղոսն նորանց մէջն կանգնած՝ ասաց. «ով մարդիք՝ պէտք էր ձեզ՝ որ ինձ լսէիք, եւ կրետիայիցն դուրս չըգայիք՝ եւ էս նեղութիւնս եւ վնասս չը քաշէիք:

22 Եւ հիմիկ խրատուում եմ ձեզ՝ որ սրտապինդ կենաք. ինչու որ՝ ձեզանից իսկի մէնի անձին էլ վնաս չի լինել, էդ նաւիդ ջոկ (առանձին):

23 Պատճառն որ՝ էս գիշերուան երեւեցաւ ինձ էն Աստուծոյ հրեշտակն[6] որ ես նորանն եմ, եւ նորան պաշտում եմ[7]:

24 Եւ ասաց. մի վախենար, պօղոս. պէտք է քեզ՝ որ կայսերի դիմացն էլ կանգնիս. եւ ահա Աստուած բաշխելէ քեզ էդ ամէնքըդ՝ որ քեզ հետ էդ նաւիդ մէջն կան:

25 Արդեամնար՝ սրտապինդ կացէք՝ ով մարդիք. ինչու որ՝ հաւատում եմ Աստուծոյն՝ որ էապէս լինի ինչպէս որ ինձ հետ խօսեց[8]:

26 Ախց պէտք է որ՝ գնանք մի կղզի (ապայ) ընկնինք[9]:

27 Երբոր տասնու չորս գիշերն էլաւ՝ քանի որ գետ Հանգրիւնի անդունդներում էս կողմն էն կողմն շարժվում էինք, կէս գիշերուան նաւավարներն կարծում էին՝ թէ մի աշխարհքի հասած լինին:

28 Եւ գընդերքն քցեցին, քսան դիրկ (պըլաճ) խոր գտին. եւ մի քիչ որ կացան՝ մինէլ քցեցին՝ եւ տասնուհինգ դիրկ գտին:

29 Ա՛խ ահեցան որ չըլինի թէ պինդ տեղերի՝ մէջ ընկնին. եւ յետեւի կողմից չորս խարիսխ (չանաղոյ եղ-նախ) քցեցին, սպասում էին որ լոսանայ:

30 Ախց նաւավարներն ուզում էին՝ որ էն նաւից փախչին. եւ կոխրըն (լօսկան) վէրըներն ծովն. էն պատճառանքով՝ իբր թէ առաջն կողմից էլ պիտի խարիսխ քցեն:

31 Պօղոսն Հարիւրապետին եւ զինուորներին ասաց, թէ որ դորանք էս նաւում չըմնան, դուք չէք կարող ապրիլ:

32 Էն ժամանակին զինուորներն կրի (լօսկայի) չուանները կարճցին՝ եւ (նորան) դուրս քցեցին:

33 Եւ գետ քանի որ ուղում էր որ առաւօտ լինի, պօղոսն ամէնին աղաչում էր՝ որ կերակուր առնեն, ասում էր. էս տասնու չորս օրն է՝ որ դուք սպասելով՝ անօթի էք մնացել, եւ մին բան չէք կերել:

34 Արդեամնար աղաչում եմ ձեզ՝ որ կերակուր ուտէք, որ Հինց էն ձեր փրկութեան համար է. ինչու որ՝ ձեզանից մէնի գլխից իսկի մին մազ չի կորչիլ[10]:

35 Եւ երբոր էս ասաց, Հաց առաւ ամէնի առաջին Աստուածանից գոհացաւ. կտրեց՝ եւ սկսեց ուտել[11],

36 Եւ ամէնքն սրտապինդ լինցան: եւ նորանք էլ կերակուր առին:

37 Եւ նաւի մէջն ամէնքս երկու Հարիւր եօթանասուն եւ վեց Հոգիք էինք:

38 Երբոր էն կերակրոնից կշտացան, նաւըն թեթեւացրին՝ եւ ցորենն ծովին մէջ թափեցին:

39 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ էն երկիրըն չէին ճանաչում, բայց մին գոգ տեսնում էին՝ որ ծովի եզրն (ղըմըն) է. մտածում էին որ եթէ Հընար լինի, նաւըն էնտեղ պր ծացընեն:

---

[6] Գործ. ԻԷ. 11: [7] Դան. զ. 16: Հռովմ. ա. 9: բ Տիմ. ա. 3: [8] Գործ. ա. 45: Հռովմ. դ. 20, 21: բ Տիմ. ա. 12: [9] Գործ. ԻԸ. 1: [10] գ Թագ. ա. 52: Մատթ. ժ. 30: Գործ. ԺԲ. 7: իա. 18: [11] ա Թագ. թ. 13: Մատթ. ԺԱ. 36: Մարկ. ը. 6: Յովհ. զ. 11: ա Տիմ. գ. 3, 4:

40 Այլ էն խարիսխներն որ հաստատած էր՝ ծովը քցեցին, թեւերի կապվածները թողացրին, եւ առագաստն վերաւին, եւ քամուն տուին դէպի ծովի եզրի (ղբաղ) կողմն։

41 Մինաեղ ընկան՝ որ երկու կողմից ծով ունէր՝ նաւն ծուեցին[12], եւ նաւի առաջին կողմն խրված անշարժ էր մնում, եւ յետին կողմն ալիքների սաստկութենից քանդվում էր։

42 Այ զինուորներն խորհուրդ էին արել՝ որ կապածներըն սպանեն, որ չըլինի թէ մին լողալ փախչի։

43 Այ Հարիւրապետն՝ որովհետեւ կամեցաւ որ պօղոսին ապրեցնէ, նորանց էն խորհրդից խափանեց, հրամայեց որ՝ ով որ կամենայ լողալ՝ առաջ ընկնին՝ եւ դուրս գնան ցամաքն։

44 Այ ուրիշներն էլ՝ որն տախտակներով՝ եւ որն էն նաւի մնի ուրիշ կարասիքներով։ Եւ էնպէս էլաւ՝ որ ամէնքն պրծան դուրս եկին ցամաքն[13]։

## ԳԼ · ԻՐ

1 Ամէնն պօղոսի հետ ապրելուց վերջն՝ բարբարոսներն շատ մարդասիրութիւն ցոյց կըտան նորանց։ 5 Մին օձ պօղոսի ձեռքից կըկախվի, բայց իսկի վնաս չի տալ նորան 8 Պօղոսն շատ հիւանդներ կըբժշկէ կղզումն։ 11 Հռոմ գնալոյ համար էն կղզուց վերկէլան։ 17 Իրան էնտեղ գնալոյ պատճառն հրէաներին կըպատմէ։ 24 Էնտեղ կըքարոզէ նորանց, բայց մին քանիսն հաւանում էին, եւ մէսերն չէին հաւանում։ 30 Բայց նա էն տեղ երկու տարի քարոզ կըտայ։

1 Այ երբոր ապրեցանք, էն ժամանակն գիտացինք՝ որ էն կղզոյ (ապոյն) անունն Մելիտինէ էր[1], բայց բառբարոսներն քիչ մարդասիրութիւն չէր՝ որ ցոյց տուին մեզ[2]։

2 Ինչու որ՝ կրակ վառեցին՝ եւ մեզ ամէնս ընդունեցին էն անձրեւին համար՝ որ վերայ էր գալիս, եւ սաստիկ ցրտին համար։

3 Այ երբոր պօղոսն՝ մին քիչ խոշոր էր հաւաքում, եւ դնում կրակին վերայ, էն տաքութենից մին իժ (օձ) դուրս եկաւ՝ եւ նորա ձեռքից բռնեց։

4 Այ երբոր բարբարոսներն տեսին՝ որ էն գազանն նորա ձեռքից կախված էր, իրար ասումէին, ուրեմն էս մարդս մարդասպան է, որ թէ եւ ծովից պրծաւ, բայց արդար իրաւունքներն չըթողին որ ապրի։

5 Այ նա էն գազանն կրակին մէջ թափտաւ, եւ նորան իսկի մին վնաս էլ չէլաւ[3]։

6 Այ նորանք սպասումէին՝ թէ կամ կուռչի կամ վէր կընկնի եւ շուտով կըմեռնի, երբոր շատ սպասեցին, եւ տեսին որ իսկի վնաս չէլաւ նորան, մինել իրանց խօսքըն դարձրին՝ եւ ասումէին, թէ սա մին աստուած է[4]։

7 Այ Էնտեղ չորս կողմանն՝ էն կղզոյ (ապոյն) գլխաւորին գիւղեր

[12] ը կոր՝. ժա. 25։ [13] վէր. 23։ [1] Գործ. իե. 26։ [2] Հռովմ. ա. 14։ ա կորնթ. ժգ. 11։ կող. գ. 11։ [3] Մարկ. ժգ. 18։ Ղուկ. ժ. 19։ [4] Գործ. ժգ. 11։

կային՝ որ նորա անունն պողպիոս էր. որ խօսք տալով մեզ երկը օր իրան մնա առաւ՝ եւ սիրով ընդունեց:

8 Եւ էլաւ՝ որ պողպիոսի հայրն տենդով եւ փորի քշելովն հիւանդացած վէր ընկած էր. պողոսն նորա մնա մնաւ՝ եւ աղօթք արաւ[5], եւ ձեռըն նորա վերայ դրաւ, եւ նորան բժշկեց[6]:

9 Եւ երբոր էս էլաւ, ուրիշ հիւանդներ որ էն կղզումն կային, գալս էին եւ բժշկվում:

10 Որ նորանք էլ շատ պատուով պատուեցին մեզ. եւ երբոր գնացինք, ինչ որ մեզ պէտք էր՝ տուին[7]:

11 Եւ երկը ամիսն ետեւ վերէլանք մին աղէքսանդրացւոի նաւ՝ որ էն ձմեռըն էն կղզումն էր անցկացրել՝ եւ դիոսկուրացոց նշանըն ունէր:

12 Եւ վէր եկինք սիրակուսա՝ եւ երեք օր էնտեղ մնացինք:

13 Էն տեղից գնացինք հասինք հռեգիոն. եւ մին օրից ետեւ երբոր հարաւի քամին փչեց, երկրորդ օրումն եկինք պաոխոլոս:

14 Որ էնտեղ եղբարներ էլ գըտինք, նորանք աղաչեցին՝ որ եօթն օր էնտեղ մնանք. եւ յետոյ գուբս եկինք հռոմ:

15 Եւ երբոր էնտեղից եղբարըներն մեզ համար լսեցին՝ մեր առաջս գուբս եկին մինչեւ ապիփոսի որգոստան (պողպոն)՝ եւ երեք խանութներն (պրոթաննեըն). պօղոսն որ նորանց տեսաւ, Աստուածանից գոհացաւ՝ եւ սրտապինդ էլաւ:

16 Եւ երբոր մտինք հռոմն, պօղոսին հրաման էլաւ՝ որ իրան պահապան զինուորին հետ առանձին կենայ[8]:

17 Եւ երեք օրից ետեւ էլաւ՝ որ նա հրէաներն գլխաւորներին կանչեց. եւ երբոր եկին, նորանց ասաց. մարդիք եղբարք՝ ես թէ եւ ժողովրդին՝ կամ հայրենական կրօնքին հակառակ մին բան չեմ գործել[9], երուսաղէմից կապված մատնվեցայ հռոմայեցոց ձեռքն[10]:

18 Որ նորանք երբոր ինձ դատեցին՝ կամեցան թողանել, ինչու որ՝ ինձանում իսկի մին մեռնելոյ պատճառ (աոՀ) էլ չըգտին[11]:

19 Որ հայց երբոր հրէաներն ներհակութիւն էին անում՝ պէտք էլաւ որ ես դիպի կայսերն բողոքեմ. ոչ թէ որ իմ ազգիցն մի չարախօսելոյ բան ունէի[12]:

20 Որս պատճառներիս համար աղաչեցի ձեզ՝ որ տեսնեմ (ձեզ) եւ խօսիմ. ինչու որ՝ իսրայէլի յուսոյն համար[13] ես էս շղթայիս (պընճէյնս) մէջն կամ[14]:

21 Եւ նորանք ասացին նորան. մենք քեզ համար հրէաստանիցն (ջեհուդաստանից) ոչ թուղթ ենք ստացել՝ եւ ոչ էլ եղբարներիցն միներն եկաւ պատմեց՝ կամ քեզ համար մին չար բան խօսեց:

22 Հայց աղաչում ենք որ քեզանից լսենք՝ թէ ինչ խորհուրդ ունես. ինչու որ՝ էդ հերձուածիդ համար

[5] Ցաւ. ե. 14, 15: [6] Մարկ. գ. 5: է. 32: Ժղ. 18: Ղուկ. դ. 41: Գործ. ժԹ. 11, 12: ա Կորնթ. Ժբ. 9, 28: [7] Մատթ. Ժե. 6: ա Տիմ. ե. 17: [8] Գործ. իգ. 25: իէ. 3: [9] Գործ. իգ. 12, 13: իե. 8: [10] Գործ. իա. 33: [11] Գործ. իբ. 24: իգ. 10: իե. 8: իզ. 31: [12] Գործ. իե. 11: [13] Գործ. իզ. 6, 7: [14] Գործ. իզ. 29: Եփես. գ. 1: դ. 1: զ. 20: բ Տիմ. ա. 16: բ. 9: Փիլ. 10, 13:

հինց մեզ յայտնի է, որ ամէն տեղ
ներհակութիւն է քաշում[15]:

23 Երբոր նորա հետ մին օր ժա-
մանակ դրած էին, շատ մարդիք նո-
րա մօտ եկին էն քնակարանումն, որ
նորանց Աստուծոյ արքայութիւնըն
վկայութենով պատմում էր[16]. եւ
Յիսուսին համար նորանց հաւանաց-
նում էր, մանկան օրէնքիցն եւ մար-
գարէներիցն առաւօտանց մինչեւ ի-
րիկունն[17]:

24 Եւ մին քանիսն խօսքերին հա-
ւանում էին, եւ կէսերն չէին հաւա-
նում[18]:

25 Եւ իրար հետ չըմիաբանված՝
արձակվեցան, երբոր պօղոսն էն մին
խօսքըն ասաց. Լաւ սուրբ Հոգին ե-
սայի մարգարէի ձեռովն մեր հարանց
հետ լաւ խօսեց.

26 Եւ ասաց. գնա՛ ժողովրդին
մօտ՝ եւ ասա՛. դուք լսելով կը լսէք՝
եւ չէք իմանալ. եւ տեսնելով կը-
տեսնէք՝ եւ չէք տեսնիլ[19]:

27 Պատճառն որ՝ էն ժողովրդի
սիրտն լիանձրացաւ, եւ իրանց ա-
կանջներովն ծանր լսեցին. եւ իրանց
աչքերըն խփեցին, որ խելի աչքով
չըտեսնեն՝ եւ ականջներով չըլսեն,
եւ սրտով չիմանան՝ եւ չետ դառ-
նան, եւ ես բժշկեմ նորանց:

28 Եւ հիմիկ՝ յայտնի լինի ձեզ՝
որ Աստուծոյ էս փրկութիւնս ու-
ղարկվեցաւ հեթանոսներին, եւ նո-
րանք կը լսեն[20]:

29 Եւ երբոր էս ասաց՝ հրէա-
ներն դուրս գնացին նորանից. որ
նորանք իրանց մէջն շատ վիճմունք
ունէին:

30 Եւ բոլոր երկու տարի, իրան
վարձքովն էլաւ էնտեղ:

31 Եւ էն ամէնին՝ որ նորա մօտ
էին մտնում, ընդունում էր:

32 Աստուծոյ արքայութիւնն քա-
րոզում էր, եւ Տէր Յիսուսի Քրիս-
տոսի համար սովորցնում էր, անխա-
փան ամէն համարձակութենով[21]:

[15] Գործ. ը. 34: Գործ. իգ. 5, 14: ա Պետր. բ. 12: դ. 14: [16] Գործ. իգ. 27: Գործ. ժէ. 3: ժԹ. 8: [17] Գործ. իզ. 6, 22: [18] Գործ. ժդ. 4: ժէ. 4: ժԹ. 9: [19] Եսայ. զ. 9: Եբէր. ե, 21: Եզէկ. ժբ. 2: Մատթ. ժգ. 14, 15: Մարկ. դ. 12: Գործ. ը. 10: Ճառկ. ժբ. 40: Հռոմ. ժա. 8: [20] Մատթ. իա. 41, 43: Գործ. ժդ. 46, 47: ժը. 6: իբ. 21: իզ. 17, 18: Հռոմ. ժա. 11: [21] Գործ. դ. 31: Եփես. զ. 19:

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՈՌՈՄԱՑՍ ԳԻՐՔ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Պօղոս կը հաստատէ թէ ինքն Աստուծոյ Ա֊ռաքեալն հաւատարմին համար ընտրուած մին Առաքեալ է, եւ Աստուծոյ որդւոյն վերայ խօսելուըն յետոյ ընդհանուր եւ խաղաղութիւն կու֊ղարկէ հռոմայեցւոց Աստուածանիցն եւ Տէր Յիսուս Քրիստոսէն, 10 Եւ ինքն ծորանց մօտ գնալոյ համար կը ցանկանայ։ 16 Կը պատասխանէ թէ Աւետարանն եւ նորան ցոյց տուած արդարութիւնն ի՞նչ է, 18 թէ Աստուծոյ բարկութիւնն կը յայտնվի ամէն մարդկանց մեղքերին վերայ. 21 Ցոյց կըտայ հեթանոսներին գործած մեղքերն։

1 **Պօղոս՝** ծառայ Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ կանչված առա֊քեալ[1] Աստուծոյ աւետարանին հա֊մար ընտրված[2].

2 Յն որ առաջուց[3] խոստացաւ իւրան մարգարէներովն ձեռնվն սուրբ գրքերումն[4]

3 Իւրան որդոյ համար՝ որ մարմ֊նոյ կողմանէ զաւթի զաւակից[5] է֊լաւ[6].

4 Եւ Աստուծոյ որդին սահման֊վեցաւ զօրութեանով[7] սրբութեան հոգւոյն կողմանէ՝ մեռելներուն միջնէն յարութիւն առնելուըն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար[8].

5 Որ նորանով ընդունեցինք շը֊նորհք եւ առաքելութիւն[9] որ հա֊ւատքի հնազանդութիւնն ամէն հե֊թանոսներուն մէջն հաստատվի[10] նո֊րա անունին համար[11]։

6 Որ նորանց միջումն դուք էլ Յիսուսի Քրիստոսի կանչված էք։

7 Ձեզ ամենիք՝ որ հռոմայ էք՝ Աստուծոյ սիրելիներիդ՝ կանչված սրբերիդ[12]՝ շնորհք (լինի) ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր հօրիցն եւ Տէր Յիսուս Քրիս֊տոսիցն[13]։

8 Առաջ գոհանում եմ իմ Աս֊տուածանից՝ Յիսուսի Քրիստոսի

[1] Գործ. իբ. 21։ ա Կորնթ. ա. 1։ Գաղ. ա. 1։ ա Տիմ. ա. 11։ բ. 7։ բ Տիմ. ա. 11։ [2] Գործ. Թ. 15։ Ժգ. 2։ Գաղ. ա. 15։ [3] Հռոմ. գ. 21։ Ժգ. 26։ Գաղ. գ. 8։ [4] Գործ. իզ. 6։ Տիտ. ա. 2։ [5] Ցուդ. ա. 14։ Գաղ. գ. 4։ [6] Մատթ. ա. 6. 16։ Ղուկ. ա. 32։ Գործ. բ. 30։ բ Տիմ. բ. 8։ [7] Գործ. Ժգ. 33։ [8] Եբր. Թ. 14։ [9] Հռոմ. ժբ. 3։ Ժե. 15։ ա Կորնթ. Ժե. 10։ Գաղ. ա. 15։ բ. 9։ Եփես. գ. 8։ [10] Գործ. զ. 7։ Հռոմ. Ժգ. 26։ [11] Գործ. Թ. 15։ [12] Հռոմ. Թ. 24։ ա Կորնթ. ա. 2։ա Թես. գ. 7, [13] ա Կորնթ. ա. 3։ բ Կորնթ. ա. 2։ Գաղ. ա. 3։

ձեռոքն ձեզ առնիմք համար[14], ինչու որ՝ ձեր հաւատքդ ամէն աշխարհքի մէջ պատմված է[15]։

9 Ըստուած ինձ վկայ է[16], որ նոյնան ես պաշտում իմ հոգովս՝ նոյնա որդոյ աւետարանովն[17], թէ ինչպէս ձեր յիշատակութիւն անում եմ[18]։

10 Ամէն ժամանակ իմ աղօթքումս աղաչելով՝ որ լինի թէ ինձ անգամ յաջողվի ինձ[19] Ըստուծոյ կամքովն ձեզ մօտ գալ[20]։

11 Ինչու որ՝ շատ ցանկանում եմ ձեզ տեսնելոյ՝ որ միւս հոգևոր շնորհք ձեզ վերայ դարձնեմ, ձեզ հաստատելոյ համար[21].

12 Այսինքն՝ որ ձեզ հետ միսիթարվիմ ես իմ եւ ձեր հաւատքիս համար՝ որ իրար հետ ունինք[22]։

13 Չուզաքը՝ ես եղբարք, թէ շատ անգամ յօժար էլայ՝ որ ձեզ մօտ գամ[23], եւ մինչեւ հիմիկ արգելվեցայ[24]. որ ձեր միջումն էլ միւս պատուղ գտնեմ ինչպէս որ ուրիշ հեթանոսների մէջն էլ[25]։

14 Պատճառն որ՝ ես յունաց եւ բարբարոսաց, իմաստուններուն եւ անմիտներուն պարտական եմ[26]։

15 Ինձէս՝ որքան որ ձեռքս գալիս է՝ յօժար եմ ձեզ էլ, որ հռոմայ էք՝ աւետարանըն քարոզելոյ։

16 Ինչու որ՝ (ես) աւետարանըն ամօթ չեմ համարում. պատճառն որ[27]՝ Ըստուծոյ զօրութիւն[28] է ամէն նորանց փրկելոյ համար՝ որ հաւատում են, առաջ հրէային եւ յետոյ հեթանոսին[29]։

17 Ինչու որ՝ Ըստուծոյ արդարութիւնն նորանով յայտնվում՝ հաւատքից հաւատքի մէջ. ինչպէս որ էլ գրված է[30], թէ արդարն հաւատքից կապրի[31]։

18 Պատճառն որ՝ Ըստուծոյ բարկութիւնն երկնքիցն կը յայտնվի մարդկանց ամէն ամբարշտութեան եւ անիրաւութեան վերայ, որ (Ըստուծոյ) ճշմարտութիւնն անիրաւութենով խափանում են[32]։

19 Որհամար որ՝ Ըստուծոյ գիտութիւնն յայտնի է նորանցում[33], ինչու որ՝ հենց Ըստուած յայտնեց նորանց[34]։

20 Պատճառն որ՝ նորա աներեւոյթ բաներն[35], որ է՝ նորա միշտ լինելն եւ զօրութիւնն եւ Ըստուածութիւնն աշխարհքի սկզբից ստեղծվածներով խնայվելով տեսնվում են, ինչպէս որ իսկի չզկարեն պատասխան տալ։

21 Ինչու որ՝ Ըստուծոյն ճանաչեցին, եւ նորան Ըստուծոյ պէս չփառաւորեցին՝ կամ շնորհակալ էլան. բայց իրանց մտածմունքներում

[14] ա Կորնթ. ա. 4։ Փիլիպ. ա. 3։ Կող. ա. 3. 4։ ա Թես. ա. 2։ Փիլմ. 4։ [15] Հռոմ. ժգ. 19։ ա Թես. ա. 8։ [16] Հռոմ. իթ. 1։ բ Կորնթ. ա. 23։ Փիլիպ. ա. 8։ ա Թես. բ. 5։ [17] Գործ. իե. 23։ բ Տիմ. ա. 3։ [18] ա Թես. գ. 10։ [19] Հռոմ. ժե. 23, 32։ ա Թես. գ. 10։ [20] Ճակ. գ. 15։ [21] Հռոմ. ժե. 29։ [22] Տիտ. ա. 4։ բ Պետր. ա. 1։ [23] Հռոմ. ժե. 23։ [24] Գործ. ժզ. 7։ ա Թես. բ. 18։ [25] Փիլիպ. գ. 17։ [26] ա Կորնթ. իթ. 16։ [27] Յովհ. իա. 9, 10։ Մատթ. ը. 38։ բ Տիմ. ա. 8։ [28] ա Կորնթ. ա. 18։ ժե. 2. [29] Գաղատ. բ. 30, 31, 32։ Իդ. 47։ Գործ. գ. 26։ ժգ. 26, 46։ Հռոմ. բ. 9։ [30] Հռոմ. գ. 21։ [31] Ամբ. բ. 4։ Ճաղ. գ. 36։ Գաղ. գ. 11։ Փիլիպ. գ. 9։ Եբր. ժ. 38։ [32] Գործ. ժէ. 30։ Եփես. ե. 6։ Կող. գ. 6։ [33] Գործ. ժգ. 16։ [34] Ճակ. ա. 9։ [35] Յովհ. Ժէ. 1։ Գործ. ժգ. 16։ ժե. 27, Խոյնէ։

փչացան՝ եւ նորանց սրտերն անմտութեանով խաւարվեցան[36]։

22 Իրանց անձներըն՝ որ իմաստունի տեղ համարուէին, յիմարեցան[37]։

23 Իւ չտպականելի Աստուծոյ փառքըն փոխեցին ապականելի մարդոյ եւ թռչուններուն եւ չորս ոտանիներուն եւ սողացողներուն պատկերին նմանութեան հետ[38]։

24 Վրայհամար Աստուած նորանց մատնեց իրանց սրտերուն ցանկութեան մէջ՝ որ պղծվին[39]. որ իրանց մարմիններըն[40] իրանց անձնեղումն խայտառակեն[41]։

25 Որովհետեւ որ Աստուծոյ ճշմարտութիւնըն ստութեան հետ փոխեցին[42]. հնազանդվեցան եւ պաշտեցին ստեղծվածներուն, եւ ոչ թէ ստեղծողին[43], որ օրհնված է յաւիտեան. ամէն։

26 Վրայհամար Աստուած մատնեց նորանց խայտառակ ցանկութիւններուն մէջ. որ նորանց կանայքն բնական գործածութիւնըն փոխեցին անբնական գործածութեան հետ[44]։

27 Իսկապէս եղ արձ մարդիքն կանանց բնական գործածութիւնըն թողին, եւ իրանց ցանկութիւններով իրար հետ բորբոքվեցան. արձ մարդ արձ մարդոյ հետ խայտառակութիւն եղին գործեցին, եւ էն փոխադարձըն՝ որ արժան էր իրանց մոլորութեանն՝ իրանց անձնեղումն ընդունեցին։

28 Իւ նրահամար որ չընտրեցին՝ Աստուծոյն ճանաչել, Աստուած մատնեց նորանց անարգութեան մտքի մէջ՝ որ անարժան բաներ գործեն[45]։

29 Իրն լցվածներն ամէն անիրաւութեանով, պոռնկութեանով, անզգամութեանով, ագահութեանով, չարութեանով, լիքն նախանձութեանով, մարդասպանութեանով, կռվով, խաբեպաշութեանով, չարասրտութեանով, քսուններ,

30 Խմբասօղներ, աստուածատօղներ, թշնամանք խօսօղներ, ամբարտաւաններ, գոռոզներ՝ չար բաներ հնարօղներ՝ ծնօղներուն անսրտօղներ։

31 Ընդհաներ, խօսք չըպահօղներ, անգութներ, անմարդկներ, անողորմներ։

32 Որ նորանք լաւ հասկանալուէին Աստուծոյ իրաւունքներըն[46], թէ նորանք որ էսպէսի բաներ գործումեն՝ մահի արժանաւոր են. եւ ոչ թէ միայն նորանք, որ էս անումեն[47], բայց նորանք էլ՝ որ էն գործօղներին կամակից են լինում[48]։

[36] գ Թես. ժէ. 15։ Երէմ. բ. 5։ Եփես. դ. ի17, 18։ [37] Երէմ. ժ. 14։ [38] բ Օրէն. գ. 16, Խոյնե։ Սաղմ. ճզ. 20։ Եսայ. խ. 18, 26։ Երէմ. բ. 11։ Եզեկ. ը. 10։ Գործ. ժէ. 29։ [39] Սաղմ. ձա. 12։ Գործ. է. 42։ Եփես. դ. 18, 19։ բ Թես. բ. 10, 11։ [40] Ղեւտ. ժը. 22։ [41] ա Կորնթ. զ. 18։ ա Թես. գ. 4։ ա Պետր. դ. 3։ [42] ա Թես. ա. 9։ ա Ցովհ. ե. 20։ [43] Եսայ. խգ. 20։ Երէմ. ժ. 14։ ժգ. 25։ Ամովս. բ. 4։ [44] Ղեւտ. ժը. 22, 23։ Եփես. ե. 12։ Ծննդ. 10։ [45] Եփես. ե 4։ [46] Հռովմ. բ. 2։ [47] Հռովմ. զ. 21։ [48] Ղեւտ. է. 3։ Սաղմ. ե. 18։

# ԳԼ · Ր

1 Նորանք որ ուրիշի մեղքն դատումն եւ իրանք էլ էն բաներն են գործում, կարօղ չէն իրանց անձներին արդարացնել, 3 եւ Աստուծոյ դատաստանից էլ կարօղ չի՛ պիտի լինին ազատ մնալ, 9 թէ հրեայ եւ թէ հեթանոս լինին որ չարութիւն կը գործեն, նեղութիւն եւ վիշտ կը լինի նորանց վերայ: 14 Հեթանոսներն իրանց սրտերումն գրված օրէնքով պիտի դատվին, 17 հրեաներն էլ իրանց օրէնքովն դատվելու. 25 Նորանք որ օրէնք չեն պահել՝ թլփատութիւնն նորանց մին չահ չի՛ անել:

1 Վասն որոյ համար դու առանց պատասխան տալոյ ես՝ ով մարդ, որ (ուրիշին) դատումես[1], պատճառն որ՝ ինչ բանով որ քո ընկերիդ դատումես, նորանով քո անձդ դատապարտումես[2]. ինչու որ՝ դու էլ հենց էն բաներն ես գործում՝ որ նորանով դատումես:

2 Պատճառն որ՝ գիտումենք թէ Աստուծոյ դատաստանն շիտակ է նորանց վերայ, որ էնպէսի բաներ են գործում,

3 Ույց՝ ով մարդ, որ դատումես նորանց՝ որ էսպէսի բաներ են գործում, եւ դու հենց էն ես գործում, միթէ կարծումես՝ թէ դու ազատ կըլինաս Աստուծոյ դատաստանիցն:

4 Միթէ նորա քաղցրութեան մեծութիւնն[3] եւ նեղելն[4] եւ երկայնամտութիւնն ոչ ի՞նչ կըհամարես[5]. միթէ չի՞ս գիտում, որ Աստուծոյ քաղցրութիւնն քեզ դէպի ապաշխարութիւնն է տանում[6]:

5 Ույց դու քո խստութենովդ եւ անզղջ սրտովդ բարկութիւն ես կիտում քո անձիդ համար՝ բարկութեան եւ Աստուծոյ արդար դատաստանի յայտնութեան օրումն[7]:

6 Այս որ ամէն մէկին իրանց գործքերին պէս հատուցումն կրտայ[8]:

7 Նորանց՝ որ համբերութենով բարի գործքերի մէջ կացած են՝ եւ փառք եւ պատիւ եւ չապականելի բաներ են ուզում, յաւիտենական կեանքըն:

8 Ույց նորանց՝ որ հակառակող են՝ եւ ճշմարտութենին ապստամբված՝ եւ անիրաւութեան հետեւին գնացած, բարկութիւն եւ սրտմտութիւն[9]՝

9 Նեղութիւն եւ վիշտ էն ամէն մարդոյ վերայ՝ որ չարութիւն է գործում՝ առաջ հրէային՝ եւ յետոյ հեթանոսին[10]:

10 փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն էն ամէնին վերայ՝ որ բարի է գործում՝ առաջ հրէային՝ եւ յետոյ հեթանոսին[11]:

11 Ինչու որ՝ Աստուծոյ մօտ երեսպաշտութիւն չըկայ[12]:

12 Նորանք՝ որ օրէնքիցն դուրս

[1] Հռով. ա. 20: [2] բ Թագ. ժբ. 5, 6, 7: Մատթ. է. 1, 2: Յովհ. բ. 9: [3] Հռով. թ. 23: Եփես. ա. 7: բ. 4, 7: [4] Հռով. գ. 25: [5] Եսա. լդ. 6: [6] Նաա. Լ. 18: բ Պետր. գ. 9, 15: [7] բ Օրին. լբ. 35: Յով. ե. 3: [8] Յոբ. լդ. 11: Սաղ. կբ. 12: Եսայ. իդ. 12: Երեմ. ժէ. 10: լբ. 19: Մատթ. ժգ. 27: Հռով. ժգ. 12: ա Կորնթ. գ. 8: բ Կորնթ. ե. 10: Յայտ. բ. 23: ի. 12: իա. 12: [9] Յոբ. իգ. 13: Հռով. ա. 18: բ Թես. ա. 8: [10] Ամոս. գ. 2: Դան. ժբ. 47, 48: ա Պետր. գ. 17: [11] ա Պետր. ա. 7: [12] բ Օրին. ժ. 17: բ Մնաց. ժե. 7: Յոբ. լդ. 19: Գործ. ժ. 34: Գաղ. բ. 6: Եփես. զ. 9, Կող. գ. 25: ա Պետր. ա. 17:

մեղք գործեցին, էլ օրէնքիցն դուրս կըկորչէին. եւ նորանք՝ որ օրէնքի տակն (լինելով) մեղք գործեցին, օրէնքովն կըդատուին։

13 Պատճառն որ՝ չէ թէ նորանք՝ որ օրէնք լսող են՝ Աստուծոյ առաջին արդար են, բայց օրէնք կատարողներն կարդարանան[13]։

14 Ուրեմն հեթանոսներն՝ որ օրէնքն չունին՝ երբոր բնութենով օրէնքի գործքերն անեն, նորանք՝ որ օրէնքն չունին, իրանց անձներին համար հենց իրանք են օրէնք։

15 Որ ցոյց են տալիս, թէ օրէնքի գործքն նորանց սրտերումն գրված է՝ որ նորանց միաքն էլ վկայէ, եւ նորանց մտածմունքներն իրար յանդիմանումեն, կամ թէ պատասխան են տալիս,

16 Յն օրն՝ որ Աստուած մարդկանց ծածուկ բաներըն կըդատէ[14]՝ իմ աւետարանիս պէս[15] Յիսուսի Քրիստոսի ձեռովն[16]։

17 Պատ դու՝ որ հրէայ անուանված[17] ես, եւ օրէնքին վերայ յոյս ես դնում[18], եւ Աստուծով պարծենում[19].

18 Յն նորա կամքըն գիտես[20], եւ էն որ լաւն է ընտրում ես, եւ օրէնքիցն խրատված ես[21].

19 Վո՛ւ անձիդ վերայ վստահութիւն ունիս՝ որ կուրերի առաջնորդ լինիս՝ եւ խաւարվածների լոյս[22].

20 Յնմիտների խրատ տուող՝ տղաների վարդապետ. որ օրէնքի գիտութեան եւ ճշմարտութեան (դրսի) կերպարանքըն ունենաս[23]։

21 Ուրեմն դու՝ որ քո ընկերիդ սովրցնում ես, քո անձիդ չես սովրցնում. դու որ քարոզում ես՝ թէ չըգողանան, գողանում ես[24]։

22 Որ ասում ես՝ թէ շնութիւն չըգործեն՝ շնութիւն ես գործում. դու որ կռքերից գարշում ես՝ սեղանները ես թալանում[25]։

23 Դու՝ որ օրէնքովն պարծենում ես, օրէնքին դէմ գործելով Աստուծոյն անարգում ես[26]։

24 Յնչու որ՝ Աստուծոյ անունն ձեր պատճառովն հայհոյվում է հեթանոսների միջումն, ինչպէս որ էլ գրված է[27]։

25 Թլփատութիւնն շահաւոր է՝ թէ որ օրէնքըն պահես. ապա թէ որ օրէնքին դէմ գործես, քո թլփատութիւնդ անթլփատութիւն է լաւ[28]։

26 Նայց թէ որ անթլփատութիւնն օրէնքի իրաւունքներըն պահէ, չէ՞ որ նորա անթլփատութիւնն՝ թլփատութիւն կըհամարվի[29]։

27 Յն էն որ բուն անթլփատութիւն է՝ օրէնքըն կատարելով կըդատէ քեզ, որ գրով եւ թլփա-

---

[13] Մատթ. է. 21։ Յով. ա. 22, 23, 25։ ա Ցովհ. գ. 7։ [14] Ժող. ժբ. 14։ Մատթ. իե. 31։ Ցովհ. ժբ. 48։ Հռովմ. գ. 6։ ա Կորնթ. դ. 5։ Ցայտ. ի. 12։ [15] Հռովմ. ժզ. 25։ ա Տիմ. ա. 11։ բ Տիմ. բ. 8։ [16] Ցովհ. ե. 22։ Գործ. ժ. 42։ ժե. 31։ բ Տիմ. գ. 1, 8։ ա Պետր. գ. 5։ [17] Մատթ. գ. 9։ Ցովհ. ը. 33։ Հռովմ. թ. 6, 7։ բ Կորնթ. ժա. 22։ [18] Միք. գ. 11։ Հռովմ. թ. 4։ [19] Եսայ. խե. 25։ Խը. 2։ Ցովհ. ը. 41։ [20] բ Օրին. դ. 8։ Սաղմ. ճխե. 19, 20։ [21] Փիլիպ. ա. 10։ [22] Մատթ. ժե. 14։ Իգ. 16, 17, 19, 24։ Ցովհ. թ. 34, 40, 41։ [23] Հռովմ. գ. 17։ բ Տիմ. ա. 13։ գ. 5։ [24] Սաղմ. ծ. 16, Խոսյե։ Մատթ. իգ. 3, Խոսյե։ [25] Մատթ. գ. 8։ [26] վԵր. 17։ [27] բ Թագ. ժբ. 14։ Եսայ. ծբ. 5։ Եզեկ. լզ. 20, 23։ [28] Գաղ. և. 3։ [29] Գործ. ժ. 34, 35։

տուԹենով օրէնքի գէմ գործօղ ևս[30]։

28 Պատճառն որ՝ ոչ ԹԷ նա է հրէայ՝ որ դրսի երեւուԹով է, որ ոչ ԹԷ էն է ԹլփատուԹիւնն՝ եւ մարմնով դրսի երեւուԹով է[31]։

29 Այլ նա՝ որ ներսեւանց ծածուկ հրէայ է[32], եւ սրտի ԹլփատուԹիւն[33] հոգովն՝ եւ ոչ ԹԷ գրով[34]. որ նորա գովասանքն ոչ ԹԷ մարդկանցից է, այլ Աստուածանից[35]։

## ԳԼ · Գ

1 Հրէաներին ունեցած փառքերն եւ օրինադրուԹիւնները Աստուածանից. 3 Որ նորանք մինչեւ հիմիկ կորած չէ՛ն ԹԷ որ մին քանիսն չըհաւատացին էլ. 9 Քրիստոնեաներն իակի մին բանով աւելի չէն հրէաներից եւ հեԹանոսներից մեզքի տակն լինելոյ համար։ 20 Օրէնքի գործքերիցն իակի մին ժարմին չէ կարող արդարանալ Աստուծոյ առաջին, 28 Բայց միայն մարդն հաւատքով կարդարանայ՝ ԹԷ հրէայ լինի ԹԷ հեԹանոս, 31 Բայց ոչ ով կարօղ չէ՛ խափանել օրէնքն. բայց նորան հաստատումն ամէն հաւատացօղներն։

1 Ապա ուրեմն՝ հրէան ի՞նչ աւելի բան ունի, կամ էն ԹլփատուԹենիցն ի՞նչ օգուտ է գալիս։

2 Շատ բաներ՝ ամէն կողմանէ. առաջ հինց էն՝ որ Աստուծոյ ասվածներն նորանց հաւատացվեցան[1]։

3 Այլ ի՞նչ է. ԹԷ որ մին քանիսն չըհաւատացին[2] միԹէ նորանց անհաւատուԹիւնն Աստուծոյ հաւատքըն կըխափանէ. քաւ լիցի[3]։

4 Այլ մնայ Աստուած ճշմարիտ լինի[4] եւ ամէն մարդ սուտ[5]. ինչպէս որ էլ գրված է նրահամար, որ արդար լինիս քո խօսքերումդ, եւ յաղԹես՝ երբոր դատվիս[6]։

5 Այլ ԹԷ որ մեր անիրաւուԹիւնն՝ Աստուծոյ արդարուԹիւնըն յայանի երեւացնումէ, էլ ի՞նչ ասենք. միԹէ՝ անիրաւ է Աստուած՝ որ բարկ է բերիւն է բերում.

6 Այ արդեօ կերպով եմ ասում[7], քաւ լիցի. ապա ԹԷ չէ՝ Աստուած ի՞նչպէս կըդատէ աշխարհքըս[8]։

7 Ինչու որ՝ եԹէ Աստուծոյ ճշմարտուԹիւնն իմ ստուԹենովս աւելացաւ նորա փառքին համար, էլ ինչո՞ւ ես մեղաւորի պէս կըդատվիմ։

8 Եւ կամ ԹԷ՝ ինչպէս որ մենք հայհոյվումենք, եւ ինչպէս որ մին քանիսն ասումեն մեզ համար՝ որ ասացինք, ԹԷ չար գործենք՝ որ բարին գայ[9]. որ նորանց դատաստանն ուղղրդ է։

9 Այ հիմիկ ի՞նչ բանով աւելի ենք. իրաւի որ՝ իակի մին բանով չէ. պատճառն որ՝ առաջ մեղադրեցինք

[30] Մատ. ժբ. 41. 42։ [31] Մատ. գ. 9։ Ցեփ. բ. 39։ Հռովմ. Թ. 6, 7։ Գաղ. գ. 15։ Յայտ. բ. 9։ [32] ա Պետր. գ. 4։ [33] Կող. բ. 11։ Փիլիպ. գ. 3։ [34] Հռովմ. է. 6։ բ Կորնթ. գ. 6։ [35] ա Կորնթ. դ. 5։ բ Կորնթ. ժ. 18։ ա Թես. բ. 4։ [1] բ Օրէն. գ. 7, 8։ Սաղմ. Ճխե. 19, 20։ Հռովմ. բ. 18։ Թ. 4։ [2] Հռովմ. ժ. 16։ Եբր. գ. 2։ [3] Թագ. իգ. 19։ Հռովմ. Թ. 6։ ԺԱ. 29։ բ Տիմ. բ. 13։ Ցեփ. Լա. 8։ [4] Ցեփ. գ. 33։ [5] Սաղմ. կբ. 9։ Ճժգ. 11։ [6] Սաղմ. ծա. 4։ [7] Հռովմ. գ. 19։ Գաղ. գ. 15։ [8] Ծննդ. ժբ. 25։ Ցեփ. ը. 3։ Լե. 17։ [9] Հռովմ. ե. 20։ գ. 1, 15։

հրէաներին եւ հեթանոսներին՝ որ ամէնքն մեղքի տակն են[10]։

10 Ինչպէս որ կը գրուած է, թէ արդար չկայ՝ իսկի մինն կը չէ[11]։

11 Չէ ոչ ոք հասկացող՝ որ իմանայ, եւ ոչ ոք չկայ՝ որ Աստուծոյն խնդրէ։

12 Ամէնքն ճանապարհից դուրս գնացին՝ եւ անպիտան եղան, ոչ ոք չկայ՝ որ քաղցրութիւն անէ, ոչ ոք չկայ մինչեւ մինն կը չկայ։

13 Գերանց կոկորդն (պողպն) բաց գերեզման է, եւ իրանց լեզուներովն խաբեայութիւն են առնում[12]. (իժ) օձերի թոյնն նորանց պուշների տակն է[13]։

14 Գերանց բերանն անէծքով եւ դառնութիւնով լիքն է[14]։

15 Գերանց ոտներն շուտագնաց են արիւն թափելոյ համար[15]։

16 Կորուստ եւ խեղճութիւն է նորանց ճանապարհներումն։

17 Չէ խաղաղութիւն ճանապարհն ընկան։

18 Աստուծոյ վախն նորանց աչքերի առաջին չէ[16]։

19 Հայց գիտենք՝ թէ ամէն ինչ որ օրէնքն ասէ՝ նորանց է ասում, որ օրէնքի տակն են[17]. որ ամէն բերան խըփվի[18], եւ ամէն աշխարհք Աստուծոյ առաջին դատապարտեալ լինի[19]։

20 Պատճառն որ՝ օրէնքի գործքերոյն իսկի մին մարմին չի արդարանալ նորա առաջին[20], ինչու որ՝ օրէնքովն մեղքի գիտութիւն է լինում[21]։

21 Հայց հիմիկ՝ հենց առանց օրէնքին Աստուծոյ արդարութիւնն յայտնըված է[22]՝ էն որ օրէնքիցն[23] եւ մարգարէներիցն վկայված է[24]։

22 Պատճառն որ՝ Աստուծոյ արդարութիւնն Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն էն ամէնին վերայ է դալիս՝ որ հաւատում են[25], եւ իսկի զատկութիւն չկայ[26]։

23 Գրահամայր որ՝ ամէնքն մեղանչեցին, եւ Աստուծոյ փառքիցն պակասվեցան[27]։

24 Չէ ձրի (նո-ֆրա) արդարանում նորա շնորհքովն[28] էն փըրկութեան ձեռովն՝ որ Յիսուս Քրիստոսումն էլաւ[29]։

25 Որ Աստուած նորան առաջ դրաւ՝ քաւութիւն լինելոյ[30] համար նորա արիւնովն հաւատքի ձեռովն[31]. որ իրան արդարութիւնըն ցոյց տայ՝ էն առաջուց գործված մեղքերի[32] թողութեան համար[33]։

26 Գրըռոր Աստուած ներումէր՝ որ իրան արդարութիւնըն երեւացնէ էս ժամանակումս. որ ինքն արդար լինի, եւ արդարացնէ նորան՝ որ Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն է.

---

[10] Վայր· 23։ Գաղ· գ· 22։ [11] Սաղմ· ժգ· 1, 2, 9։ ծգ· 1։ [12] Սաղմ· ե· 9։ Երեմ· ե· 16։ [13] Յաղ· ծխ· 3։ [14] Սաղմ· ժ· 7։ [15] Առակ· ա· 16։ Եսայ· ծթ· 7, 8։ [16] Սաղմ· լզ· 1։ [17] Ցնծ· ժ· 34։ ժե· 25։ [18] Ցնծ· ե· 16։ Սաղմ· ճէ· 43։ Նեղէ· ժգ· 63։ Հռովմ· ա· 20։ բ· 1։ [19] Վէր· 9։ Վայր· 23։ Հռովմ· բ· 2։ [20] Սաղմ· ճկգ· 2։ Գործ· ժգ· 39։ Գաղ· բ· 16։ գ· 11։ Եփես· բ· 8, 9։ Տիտ· գ· 5։ [21] Հռովմ· է· 7։ [22] Գործ· ժե· 11։ Հռովմ· ա· 17։ Փիլիպ· գ· 9։ Եբր· ժա· 4, Խոյնը։ [23] Ցնծ· ե· 46։ Գործ· իզ· 22։ [24] Հռովմ· ա· 2։ ա Պետր· ա· 10։ [25] Հռովմ· գ· [26] Հռովմ· ժ· 12։ Գաղ· գ· 28։ Կող· գ· 11։ [27] Վէր· 9։ Հռովմ· ժա· 32։ Գաղ· գ· 22։ [28] Հռովմ· գ· 16։ Եփես· բ· 8։ Տիտ· գ· 5, 7։ [29] Աւետ· բ· 28։ Եփես· ա· 7։ Կող· ա· 14։ ա Տիմ· բ· 6։ Եբր· թ· 12։ ա Պետր· ա· 18, 19։ [30] Ղեւտ· ժգ· 15։ ա Ցովհ· բ· 2։ գ· 10։ [31] Կող· ա· 20։ [32] Գործ· ժէ· 30։ Եբր· թ· 15։ [33] Գործ· ժգ· 38, 39։ ա Տիմ· ա· 15։

27 Ութերեսն հիմիկ ոմանք պարծանքն, խափանվեցաւ, որ օրինքով, միթէ գործքերի՞ օրինքովն, չէ, այլ հաւատքի օրինքովն[34]։

28 Պատճառն որ՝ համարումենք, որ մարդն հաւատքով արդարանուի առանց օրինքի գործքերին[35]։

29 Միթէ Աստուած միայն հրէայներին է՝ եւ հեթանոսներին չէ՞ հա՝ հեթանոսներին էլ է։

30 Պատճառն որ՝ մին Աստուած է՝ որ թլփատութիւնըն հաւատքիւն արդարացնուի՝ եւ ապա անթլփատութիւնըն էլ հենց էն հաւատքովն[36]։

31 Ապա միթէ օրինքըն խափանումենք հաւատքով։ քաւ լիցի, քայց օրինքըն հաստատումենք։

## ԳԼ · Գ

1 Աբրահամի հաւատքն արդարութիւն համարվեցաւ նորան. 10 Իրան անթլփատութեան ժամանակումն։ 13 Ինչն եւ իրան զաւակն միայն հաւատքի արդարութենին աւելիքն առին։ 16 Աբրահամ ամէն հաւատացողներին հայրն է։ 24 Մեր հաւատքն էլ մեզ արդարութիւն պիտի համարվի։

1 Ապա ի՞նչ ասենք՝ էն որ մեր նահապետ աբրահամն գտաւ մարմնոյ կողմանէ[1]։

2 Ինչու որ՝ եթէ աբրահամն գործքերովն արդարացած լինէր՝ իւրաւի որ պարծենալոյ պատճառ ունէր[2], քայց չէ թէ Աստուծոյ առաջին։

3 Ինչ գիրքն ի՞նչ է ասում. աբրահամն հաւատաց Աստուծոյն, եւ արդարութիւն համարվեցաւ նորան[3]։

4 Ինչ նորան՝ որ գործք է առնում, վարձքն չէն համարվում շնորհքի տէղ, քայց պարտքի տէղ[4]։

5 Ինչ նորան՝ որ գործք չանէ՝ քայց հաւատաց նորան՝ որ ամբիշխանըն արդարացնուի, նորա հաւատքն համարվում արդարութեան տէղ[5]։

6 Ինչպէս որ դաւիթն էլ երանելի է ասում էն մարդոյն՝ որ Աստուած նորան արդարութիւն է համարում առանց գործքերի։

7 Երանի նորանց՝ որ նորանց անօրէնութիւնները թողվան, եւ նորանց մեղքերն ծածկվեցան[6]։

8 Երանի է էն մարդն՝ որ նորան Տէրն չի համարիլ նորա մեղքերին։

9 Ապա էս երանութիւնս միթէ թլփատութեան վերայ է՝ կամ թէ անթլփատութեան վերայ. ինչու որ՝ ասումենք՝ թէ աբրահամի հաւատքն արդարութիւն համարվեցաւ (նորան)։

10 Ապա ի՞նչպէս համարվեցաւ. երբոր թլփատութենումն էր՝ թէ դէտ որ անթլփատութենումն էր. ոչ թէ թլփատութենումն, քայց անթլփատութեան ժամանակումն։

11 Եւ թլփատութիւնըն նշանի տեղ առաւ՝ որ էն հաւատքի արդարութեան կնիք (Ռօհք) լինի՝ որ ան-

[34] Հռով. բ. 17, 23։ գ. 2։ ա Կորնթ. ա. 29, 31։ Եփես. բ. 9։ [35] Գաղ. ժգ. 38, 39։ Վէր. 20–23։ Հռով. ը. 3։ Գաղ. բ. 16։ [36] Հռով. ժ. 12, 13։ Գաղ. գ. 8, 20, 28։
[1] Եսայ. ծա. 2։ Մատթ. գ. 9։ Ցովհ. ը. 33, 39։ բ Կորնթ. ժա. 22։ [2] Հռով. դ. 20, 27, 28։
[3] Ծննդ. ժե. 6։ Գաղ. գ. 26։ Ցակ. բ, 23։ [4] Հռով. ժա. 6։ [5] Ցհ. Ից. 2։ [6] Սաղմ. լբ. 1, 2։

Թլփատութեանն ունէր[7]։

12 Որ նա հայր լինի էն ամէն հաւատացեալներին՝ որ անթլփատութեան են՝ որ նորանց էլ համարվի արդարութիւնն, եւ էլ թլփատութեան հայր՝ չէ թէ միայ նորանց՝ որ թլփատութեան են, բայց նորանց էլ՝ որ էն հաւատքի ճանապարհովն են գնում, որ մեր հայր աբրահամն անթլփատութեանն ունէր[8]։

13 Պատճառն որ՝ ոչ թէ օրէնքովն էլան աբրահամին՝ եւ նորա զաւակին էն աւետիքն որ աշխարհքի ժառանգ լինին, բայց հաւատքի արդարութեան[9]։

14 Ինչու որ՝ եթէ նորանք՝ որ օրէնքիցն են, ժառանգ լինէին՝ ապա հաւատքն ունայն էր՝ եւ աւետիքն դադարէ[10]։

15 Պատճառն որ՝ օրէնքն բարկութիւն է գործում. բայց որտեղ որ օրէնք չկայ՝ հնտեղ էլ օրէնքի դէմ մեղք չկայ[11]։

16 Վրահամայ հաւատքիցն է՝ որ շնորհքովն լինի[12]. որ աւետիքն հաստատ լինի ամէն զաւակին համար[13]. ոչ թէ միայ նորա համար՝ որ օրէնքիցն է, բայց էլ նորա համար՝ որ աբրահամի հաւատքիցն է, որ նա մեր ամէնիս հայրն է[14]։

17 Ինչպէս որ էլ գրված է, թէ շատ ազգերի հայր կանիմ քեզ՝ Աստուծոյ առաջին[15]. որ նա հաւատաց նորան՝ թէ մեռելներն կենդանի է անում[16] եւ չըլինող բանն էլ լինողին պէս է կանչում[17]։

18 Որ չըյուսալու բանի մէջն յուսով հաւատաց՝ որ նա շատ ազգերի հայր լինի. ինչպէս որ էլ ասվեցաւ՝ թէ հնպէս պիտի լինի քո զաւակդ[18]։

19 Չնա նա չերկմտեցաւ հաւատքիցն, թէ եւ իրան մարմինն այնուհետեւ մեռածի պէս տեսաւ[19]. ինչու որ հարիւր տարեկանի չափ էր, եւ սառայի փորըն էլ մեռած։

20 Ինայց Աստուծոյ աւետիքին համար չերկմտեցաւ անհաւատութեանով, բայց հաւատքով զօրացաւ, (եւ) Աստուծոյ փառք տուաւ։

21 Չնա իրան մարգումն հաստատ գրաւ, թէ հն՝ որ նա խոստացաւ, կարող է անել[20]։

22 Վրահամայ՝ արդարութիւն համարվեցաւ նորան։

23 Ինայց հն՝ որ գրվեցաւ, ոչ թէ միայ նորա համար է՝ թէ նորան համարվեցաւ արդարութիւն[21]։

24 Ինայց մեզ համար էլ՝ որ մեզ պիտի համարվի, որ մենք հաւատանք նորան՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին յարոյց մեռելներից[22]։

25 Որ նա մատնվեցաւ մեր մեղաց համար[23]. եւ յարութիւն առաւ մեզ արդարացնելոյ համար[24]։

---

[7] Ծննդ. ԺԷ. 10։ [8] Գալ. Գ. 9։ Ղեւտ. Գ. 7։ [9] Ծննդ. ԺԷ. 4, Ելսէ։ Գալ. Գ. 29։ [10] Գալ. Գ. 18։ [11] Հռով. Գ. 20։ Ա. 13, 20։ Է. 8, 10, 11։ Ա կորնթ. ԺԵ. 56։ Բ կորնթ. Գ. 7, 9։ Գալ. Գ. 10, 19։ Ա Ցովհ. Գ. 4։ [12] Հռով. Գ. 24։ [13] Գալ. Գ. 22։ [14] Ելսէ. Ծա. 2։ Հռով. Թ. 8։ [15] Ծննդ. ԺԷ. 5։ [16] Հռով. Ը. 11։ Եփես. Բ. 1, 5։ [17] Հռով. Թ. 25։ Ա կորնթ. Ա. 28։ Ա Պետր. Բ. 10։ [18] Ծննդ. ԺԵ. 5։ [19] Ծննդ. ԺԷ. 17։ ԺԸ. 11։ Եբր. Ժա. 11, 12։ [20] Յովհ. ՆԺԸ. 3։ Ղեւտ. Ա. 37, 45։ Եբր. Ժա. 19։ [21] Հռով. ԺԵ. 4։ Ա կորնթ. Ժ. 6, 11։ [22] Գործ. Բ. 24։ ԺԳ. 30։ [23] Ելսէ. ՃԳ. 5, 6։ Հռով. Դ. 25։ Ե. 6։ Ը. 32։ Բ կորնթ. Ե. 21։ Գալ. Ա. 4։ Ա Պետր. Բ. 24։ Գ. 18։ Եբր. Թ. 28։ [24] Ա կորնթ. ԺԵ. 17։ Ա Պետր. Ա. 21։

# ԳԼ · Ն

1 Մինչ՝ որ Հաւատքովն կարդարանանք, Աստուծոյ հետ խաղաղութիւն կունենանք Տէրն մեր Յիսուս Քրիստոսով, 2 Նաև Աստուծոյ փառաց յուսովն պարծենութիւնը, 8 Եւ թէ երբոր մենք մեղաւոր էինք, Քրիստոսի արիւնովն արդարացանք, 10 Եւ թէ որ թշնամի էինք, Աստուծոյ հետ հաշտեցանք Նորա Որդոյ մահովն՝ որքան աւելի պիտի ապրինք նորա կեանքովն: 12 Ինչպէս որ մեղքն եւ մահն Ադամի ձեռովն մտան աշխարհքս, 17 Նոյնպէս էլ շնորհքն եւ արդարութիւնն եւ կեանքն Քրիստոսի ձեռովն առին մարդկանց վերայ աւելցաւ: 20 Մեղքն որ աւելի էլաւ աշխարհքումն՝ էլ աւելի չատացաւ շնորհքն:

1 Արդեմն մենք՝ որ հաւատքովն արդարացած ենք[1], Աստուծոյ հետ խաղաղութիւն ունենանք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովն[2]:

2 Որ նորանով էլ ընդունելութիւնք հաւատքով մտնելըն էս շնորհքիս մէջ[3] որ նորանում կացած ենք[4], եւ Աստուծոյ փառաց յուսովն պարծենումենք[5]:

3 Եւ ոչ թէ մենակ էս չափ, բայց մեր նեղութիւններին համար էլ պարծենումենք[6], ինչու որ՝ գիտումենք, որ նեղութիւնները համբերութիւն են գործում[7]:

4 Համբերութիւնն՝ վարժութիւն, վարժութիւնն՝ յոյս[8]:

5 Յոյսն խայի մին ժամանակ չի ամաչացնում[9], պատճառն որ՝ Աստուծոյ սէրն փուած է մեր սրտերի մէջ սուրբ Հոգով ձեռովն՝ որ տրված մեզ[10]:

6 Ինչու որ՝ երբոր մենք դեռ տկար էինք՝ Քրիստոս մեզ համար իրան ժամանակումն ամբարիշտներին վերայ մեռաւ[11]:

7 Արդ գժուար կը լինի՝ որ մին արդարի համար մինն մեռնի. բայց մին բարի մարդոյ համար կը լինի, որ մինն համարձակվի մեռնել:

8 Աստուած իրան սէրըն մեզ վերայ յայտնեց, որ երբոր մենք դեռ մեղաւոր էինք[12],

9 Քրիստոս մեզ համար մեռաւ. ապա ո՛րքան աւելի հիմիկ՝ որ արդարացանք նորա արիւնովն[13]՝ կըփրկվինք նորանով էն բարկութիւնից[14]:

10 Պատճառն որ՝ եթէ դեռ որ թշնամի էինք[15], Աստուծոյ հետ հաշտվեցանք նորա որդոյ մահովն. ո՛րքան աւելի էլ՝ որ հաշտված ենք[16], կապրինք նորա կեանքովն[17]:

11 Եւ ոչ թէ մենակ էս չափ, բայց Աստուծով էլ պարծենումենք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովն, որ հիմա նորանով հիմիկ հաշտութիւնն ընդունեցինք[18]:

12 Պատճառն որ՝ ինչպէս որ մին մարդոյ ձեռովն մեղքն մտաւ աշխարհքս[19] եւ էն մեղքովն էլ մա-

[1] Նոյ· ւբ· 17: Ցուն· ժզ 33: Հռոմ. գ· 28, 30: [2] Եփես· բ· 14: Կող· ա· 20: Ացուն. ժ· 9: ժգ· 6: Եփես· բ· 18: գ· 12: Եբր· ժ· 19: [4] ա Կորնթ· ժե· 1: [5] Եբր· գ· 6: [6] Յարտ· ե· 11, 12: Գործ· ե· 41· բ Կորնթ· ժբ· 10: Փիլիպ· բ· 17: Ցակ· ա· 2, 12: ա Պետր· գ· 14: [7] Ցակ· ա· 3: [8] Ցակ· ա· 12: [9] Փիլիպ· ա· 20: [10] բ Կորնթ· ա· 22: Գաղ· գ· 6: Եփես· ա· 13, 14: [11] Ղաբ· 8, 9: Հռոմ· գ· 25: [12] Ցուն. ժե· 13: ա Պետր· գ· 18: ա Ցուն. գ· 16: դ· 9, 10: [13] Հռոմ· գ· 25: Եփես· բ· 13: Եբր· ի· 14: ա Ցուն. ա· 7: [14] Հռոմ. ա· 18: ա Թես· ա· 10: [15] Հռոմ· ը· 33: [16] բ Կորնթ· ե· 18, 19: Եփես· բ· 16: Կող· ա· 20, 21: [17] Ցուն. ե· 26: ժգ· 19: բ Կորնթ· գ· 10, 11: [18] Հռոմ· բ· 17: գ· 29, 30: Գաղ· գ· 9: [19] Ծննդ· գ· 6: ա Կորնթ· ժե· 21:

հրն[20]. եւ Էնպէս մահն ամէն մարդկանց վերայ փուեցաւ, որովհետեւ ամէնքն մեղանչեցին։

13 Ինչու որ՝ մինչեւ օրէնքն՝ մեղք կար աշխարհքումն, բայց մեղքն չի համարվում՝ որտեղ որ օրէնք չըկայ[21]։

14 Այց մահն թագաւորեց ադամից մինչեւ մեսէսն նորանց վերայ էլ՝ որ ադամի մեղքին նման չըմեղանչեցին, որ նա օրինակ է նորա համար՝ որ յետոյ գալու էր[22]։

15 Այց շնորհքն Էնպէս չէ՝ ինչպէս որ մեղքն. ինչու որ՝ եթէ մէնի մեղքովն շատ մարդիք մեռան՝ էլ որքան աւելի Աստուծոյ շնորհքն եւ պարգեւն մին Յիսուս Քրիստոս մարդոյ շնորհքովն աւելացաւ շատերի վերայ[23]։

16 Եւ պարգեւն Էնպէս չէ՝ ինչպէս էն որ մին մեղաւորիցն էլաւ. ինչու որ՝ դատաստանն էն մին մեղքիցն դատապարտութիւն բերաւ. բայց շնորհքն շատ մեղքերիցն արդարութիւն է տանում։

17 Պատճառն որ՝ եթէ մէնի մեղքին համար մահն թագաւորեց էն մէնի ձեռովն, որքան էլ աւելի նորանք, որ շնորհաց լիութիւնըն եւ արդարութեան պարգեւներըն առնեն, կեանքով կըթագաւորեն՝ էն մին Յիսուսի Քրիստոսի ձեռովն։

18 Պա ուրեմն՝ ինչպէս որ մէնի մեղքովն ամէն մարդկանց վերայ դատապարտութիւն (եկաւ), հենց էնպէս էլ մէնի արդարութենովն ամէն մարդկանց վերայ կենաց արդարութիւն (է գալիս)[24]։

19 Ինչու որ՝ ինչպէս որ մին մարդոյ անհնազանդութենովն շատ մեղաւորներ էլան, էնպէս էլ մէնի հնազանդութենովն շատ արդարներ կըլինին։

20 Այց օրէնքն մէջ ընկաւ՝ որ մեղքն շատանայ[25]. ինչու որ՝ որտեղ որ աւելի էլաւ մեղքն՝ էնտեղ էլ աւելի շատացաւ շնորհքն[26]։

21 Պատճառն որ՝ ինչպէս որ մեղքն թագաւորեց մահի ձեռովն, էնպէս էլ շնորհքն կըթագաւորէ արդարութենով յաւիտենական կեանքին մէջ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն։

## Կ Լ · Օ

1 Խոկի մեղքի մէջն չի՛ պիտի վարվինք, որ շնորհքն շատանայ, 2 Պատճառն որ՝ մենք մեղքին համար մեռանք, 3 Ինչպէս որ մկրտվելով ցոյց կըտանք նորան։ 12 Պէտք չէ որ էլ մեղքն թագաւորէ մեր մարմիններին վերայ, 18 Բայց մեղքերիցն ազատված՝ ծառայենք արդարութեան, 23 Պատճառն որ՝ մեղքի պաշարն մահն է։

1 Պ[ուրեմն] ի՞նչ պիտի ասենք. էլ աւելի՞ վարվինք մեղքի մէջն, որ շնորհքն շատանայ[1].

2 Ո՛չ լինի. մենք որ մեռանք մեղքին, էլ ի՞նչպէս դեռ ապրինք նորանում[2]։

3 Կամ թէ չէ՞ք գիտում՝ թէ մենք ամէնքս, որ Յիսուս Քրիստո-

[20] Նեեմ. բ։ 17։ Հռոմ. գ· 23։ ա Կորնթ. ժե. 21։ [21] Հռոմ. դ· 15։ ա Ցովհ. գ· 4։ [22] ա Կորնթ. ժե· 21, 22, 45։ [23] Եսայ. ծգ· 11։ Լուսկ. ի· 28։ իվ· 28։ [24] Ցովհ. ժե· 33։ Եբէր· բ· 9։ [25] Ցովհ. ժե. 22։ Հռոմ. գ· 20։ գ· 15։ է· 8։ Գաղ· գ· 19, 23։ [26] Ղեւի. է· 47։ ա Տիմ. ա· 14։ [1] Հռոմ. դ· 8։ Վայր· 15։ [2] Վայր· 11։ Հռոմ. է· 4։ Գաղ· բ· 19։ գ· 14։

սումն մկրտվեցանք[3] նորա մահին մէջ մկրտվեցանք[4]։

4 Ո՝կրտութենովն նորա հետ թաղվեցանք մահի մէջ[5]. որ ինչպէս Քրիստոս հոր փառքովն մեռելներէ միջոցն յարութիւն առաւ[7], նոյնպէս մենք եւ նորոգված կեանքումն մանք գանք[8]։

5 Պատճառն որ՝ եթէ մենք նորա հետ տընկվեցանք, որ նորա մահին նման լինինք. ապա նորա յարութեանն եւ նման կը լինինք[9]։

6 Այս գիտացէք, որ մեր հին մարդն նորա հետ խաչվեցաւ[10], որ մեղաց մարմինն խափանվի, որ մենք եւ չըծառայինք մեղքին[11]։

7 Պատճառն որ՝նա որ մեռնումէ՝ արդարացած է մեղքից[12]։

8 Եւ եթէ մեռանք մենք Քրիստոսի հետ, հաւատամք՝ որ եւ կապրինք նորա հետ[13]։

9 Գիտենք որ՝ Քրիստոս մեռելների միջոցն յարութիւն է առել[14]. (եւ) սրանից եւս չի մեռնում, եւ մահն նորա վերայ եւ չի տիրում[15]։

10 Քանզի որ՝ էն որ մեռաւ՝ մեղքին մեռաւ մինանգամ[15], եւ էն որ կենդանի է՝ Աստուծոյն է կենդանի[16]։

11 Նոյնպէս դուք եւ ձեր անձնեղրդ մեղքին մեռած համարեցէք[17], եւ Աստուծոյն կենդանի մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռնով[18]։

12 Որոհամար թոյլ մեղքն չը թագաւորէ ձեր մահկանացու մարմիններին վերայ՝ որ նորա ցանկութիւններին հնազանդվիք[19]։

13 Եւ չըլինի որ ձեր անդամներըդ մեղքի անիրաւութեանն զէնք պատրաստէք[20]. բայց ձեր անձներըդ պատրաստեցէք Աստուծոյն[21]՝ ինչպէս մեռելներից կենդանի էլած, եւ ձեր անդամներըդ արդարութեան զէնք՝ Աստուծոյ համար։

14 Քանզի որ՝ մեղքն չի տիրիլ ձեզ վերայ. պատճառն որ՝ օրէնքի ներքեւն չէք, բայց շնորհքի ներքեւն է[22]։

15 Պա ի՞նչպէս. միթէ մեղք գործենք՝ նրահամար որ օրէնքի ներքեւն չենք՝ բայց շնորհքի ներքեւն[23]. քաւ լիցի։

16 Ձէք գիտում, թէ ում որ ձեր անձներըդ ծառայ էք պատրաստում՝ նորան հնազանդվելոյ համար, նորա ծառայ էք՝ որ հնազանդվումէք նորան[24]. թէ մեղքին՝ դէպի մահ, եւ թէ արդարութեան հնազանդութեանն՝ դէպի կեանքն։

17 Այլ շնորհակալութիւն Աստուծոյ. որ մեղքի ծառայ էիք՝ եւ սրտով հնազանդվեցաք էն վարդապետութեան օրինակին՝ որ նորան յանձնվեցաք[25]։

18 Պա ուրեմն դուք մեղքերիցն ազատված՝ ծառայեցէք արդարութեանն[26]։

---

[3] Հռ. գ. 3։ ա Պետր. բ. 24։ [4] ա Կորնթ. ժե. 29։ [5] Կող. բ. 12։ [6] Ցվէ. բ. 11։ Ժա. 40։ [7] Հռոմ. ը. 11։ ա Կորնթ. ը. 14։ բ Կորնթ. ժգ. 4։ [8] Գող. զ. 15։ Եփես. գ. 22, 23, 24։ Կող. գ. 10։ [9] Փիլիպ. գ. 10, 11։ [10] Գող. բ. 20։ Ե. 24։ ը. 14։ Եփես. գ. 22։ Կող. գ. 5, 9։ [11] Կող. բ. 11։ [12] ա Պետր. գ. 1։ [13] բ Տիմ. բ. 11։ [14] Յայտ. ա. 18։ [15] Եբր. թ. 27, 28։ [16] Ղուկ. ի. 38։ [17] Վէր. 2։ [18] Գող. բ. 19։ [19] Սաղմ. ԺԹ. 13։ ՃԺԹ. 133։ [20] Հռոմ. է. 5։ Կող. գ. 5։ Յով. գ. 1։ [21] Հռոմ. ժբ. 1։ ա Պետր. բ. 24։ գ. 2։ [22] Հռոմ. է. 4, 6։ ը. 2։ Գող. ե. 18։ [23] ա Կորնթ. թ. 21։ [24] Լուսկ. ը. 24։ Ցվէ. ը. 34։ բ Պետր. բ. 19։ [25] բ Տիմ. ա. 13։ [26] Ցվէ. ը. 32։ ա Կորնթ. է. 22։ Գող. ե. 1։ ա Պետր. բ. 16։

19 Մարդկանց կերպալ կասեմ՝ ձեր մարմնոյ ակարութեան համար. որ ինչպէս որ ձեր անդամներդդ ծառայ պատրաստեցիք պղծութեան եւ անօրէնութեան՝ անօրէնութիւն գործելոյ համար, հնոյց էնպէս էլ հիմիկ ձեր անդամներդդ ծառայ պատրաստեցէք արդարութեան՝ սրբութեան համար:

20 Ինչու որ՝ երբոր մեղքի ծառայ էիք՝ ազատ էիք արդարութենիցն[27]:

21 Ապա ի՞նչ պտուղ ունէիք էն ժամանակն[28], որ նորա համար հիմիկ ամօթ կը քաշում. ինչու որ՝ նորա վերջն մահն է[29]:

22 Բայց հիմիկ որ մեղքիցն ազատված եւ Աստուծոյ ծառայ կը եղած՝ ձեր պտուղն էն ունիք՝ որ սուրբ լինիք, եւ նորա վերջն յաւիտենական կեանքն է[30]:

23 Պատճառն որ՝ մեղքի պաշարն մահն է[31], բայց Աստուծոյ շնորհքն՝ յաւիտենական կեանք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն[32]:

## Գլ. 7:

1 Օրէնքն սերտումէ՝ քանի ժամանակ որ մարդն կենդանի է. 4 Բայց մենք մեռանք օրէնքին: 7 Օրէնքն մեղք չէ, 12 Բայց սուրբ եւ արդար եւ բարի է, 16 Պօղոսն էլ կըխոստովանի թէ մին խղճալի մարդ է, պատճառն որ՝ չի կարող օրէնքն պահել:

1 Միթէ չէք գիտում՝ եղբարք, (ինչու որ՝ օրէնք գիտօղներին հետ եմ խօսում), որ օրէնքն մարդդ վերայ տիրումէ՝ քանի ժամանակ որ նա կենդանի է:

2 Պատճառն որ՝ մարդ ուեօղ կին՝ իրան կենդանի մարդդ հետ կապված է օրէնքովին. բայց թէ որ մարդն մեռնի՝ էն (իրան) մարդդ օրէնքիցն արձակված է[1]:

3 Ապա ուրեմն՝ քանի որ մարդն կենդանի է՝ նա շնացօղ է կոչվում՝ թէ որ ուրիշ մարդդ գնայ[2]. եւ թէ որ մարդն մեռնի, էն օրէնքիցն ազատ է՝ որ չըշնամարվի շնացօղ՝ եթէ ուրիշ մարդդ գնայ:

4 Նըմանն դուք էլ՝ եղբարք, Քրիստոսի մարմնովն մեռաք օրէնքին[3] որ ուրիշի լինիք՝ նորան որ մեռնելի միջիցն յարութիւն է առել, որ պտուղ բերինք Աստուծոյն[4]:

5 Ինչու որ՝ քանի որ մարմնով էինք, մեզաց ցանկութիւններն՝ որ օրէնքովին էին՝ զօրանում էին մեր անդամներումն[5], որ մենք պտուղ բերինք մահին[6]:

6 Բայց հիմիկ էն օրէնքիցն արձակվեցանք. ինչու որ՝ մեռանք նորան՝ որ նորանով բռնըված էինք, որ մենք Հոգւոյ նորոգութեամն ծառայինք՝ եւ ոչ թէ գրի հնութեանովն[7]:

7 Ապա ի՞նչ ասենք. միթէ օրէնքն մեղք է. քաւ լիցի. բայց մեզքըն չէի գիտենալ՝ եթէ ոչ օրէն-

[1] Ցուճ. ը. 34: [2] Հռովմ. է. 5: [3] Հռովմ. ա. 32: [4] Ցուճ. ը. 32: [5] Ծննդ. ը. 17: Հռովմ. է. 12: Ցոխ. ա. 15: [6] Հռովմ. ը. 7: է. 17, 21: ա Պետր. ա. 4: [7] ա Կորնթ. է. 39: [8] Յոաննէս. է. 32: [9] Հռովմ. ը. 12: Գաղ. ը. 19: է. 18: Եփես. ը. 15: Կող. ը. 14: [10] Գաղ. է. 22: [11] Հռովմ. զ. 13: [12] Հռովմ. զ. 21: Գաղ. է. 19: Ցոխ. ա. 15: [13] Հռովմ. ը. 29: բ Կորնթ. գ. 6:

քոնի[8] · եւ ցանկութիւնըն էիր ճա-
նաչել՝ թէ որ օրէնքն էիր ասել՝
թէ մի ցանկանար[9] :

8 Ի՝նդքն պատճառ առաւ պա-
տուիրանքովն, եւ ինձանում ամէն
ցանկութիւն գործեց[10] · ինչու որ՝ ա-
ռանց օրէնքին մեղքն մեռած էր[11] :

9 Ես առաջ օրէնքին մին
ժամանակով կենդանի էի · բայց
երբոր պատուիրանքն հասաւ ինձ,
մեղքն կենդանի էլաւ :

10 Ես մեռայ, եւ հենց էն պա-
տուիրանքն՝ որ կենաց համար էր
(տրվված), ինձ մահի պատճառ է-
լաւ[12] :

11 Ինչու որ՝ մեղքն պատճառ ա-
ռած պատուիրանքովն խաբեց ինձ,
եւ նորանով սպանեց :

12 Ուրեմն՝ օրէնքն սուրբ է՝ եւ
պատուիրանքն էլ սուրբ եւ արդար
եւ բարի[13] :

13 Ա՞պա միթէ էն՝ որ բարի է, ինձ
համար մա՞հ էլաւ · քա՛ւ լիցի · բայց
մեղքն · որ երեւի թէ՝ մեղքն բա-
րիովն ինձ մա՞հ գործեց · որ մեղքն
էլ աւելի մեղաւոր լինի պատուի-
րանքի ձեռովն :

14 Գիտումնք՝ որ օրէնքն հո-
գեւոր է · բայց ես մարմնաւոր եմ՝
մեղքին ներքեւ ծախված[14] :

15 Ինչու որ՝ չեմ գիտում ինչ որ
գործումեմ · որ ո՛չ թէ ինչ որ կա-
մենումեմ՝ էն եմ գործում · բայց
ինչ որ ատումեմ՝ էն եմ գործում[15] :

16 Ա՞պա թէ որ՝ ինչ որ չեմ կա-
մենում՝ էն եմ գործում, օրինաց
համար վկայումեմ՝ թէ բարի է :

17 Ա՞պա ուրեմն ո՛չ թէ ես եմ
գործում էն, բայց մեղքն՝ որ բնակ-
ված է ինձանում :

18 Գիտումեմ որ ինձանում՝ այ-
սինքն իմ մարմնումն մին բարի բան
բնակված չըկայ · ինչու որ՝ կամք
կայ ինձ մօտ, եւ բարին անելն չը-
կայ[16] :

19 Պատճառն որ՝ ո՛չ թէ բարին՝
որ կամենումեմ, անումեմ · բայց
չարն՝ որ չեմ կամենում, էն եմ
գործում :

20 Ա՞պա թէ որ էն՝ որ չեմ կա-
մենում, էն եմ անում · էլ ես չեմ
անում, բայց մեղքն՝ որ ինձանում
բնակված է :

21 Ուրեմն գտնումեմ նորա օ-
րէնքըն՝ որ կամենում բարին անել
ինձանում · եւ չարն իմ առաջիս
կայ :

22 Հաւան եմ կենում Աստու-
ծոյ օրէնքին[17] ներսի մարդովն[18] :

23 Այլ տեսնումեմ ուրիշ օ-
րէնք[19] իմ անդամներումն՝ որ իմ
մտքիս օրէնքին դէմ հակառակ է
կենում, եւ ինձ գերի է բռնում էն
մեղքի օրէնքովն՝ որ իմ անդամնե-
րումն է[20] :

24 Ա՛խ մին խղճալի մարդ եմ՝ ո՞վ
կապրեցնի ինձ էս մահի մարմնիցս :

25 Աստուծոյ շնորհքն
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձե-
ռովն · ուրեմն ես ինքս իմ մտքովս
ծառայումեմ Աստուծոյ օրէնքին, եւ
մարմնովս մեղքի օրէնքին[21] :

[8] Հռոմ. գ · 20 : [9] Ելք · ի · 17 : ը Օրին · ե · 21 : գ Ծէք · ի · 33 : Հռոմ. ժգ · 9 : [10] Հռոմ. գ · 15 : ե · 20 : [11] ա կորնթ. ժե · 56 : [12] Գործ · ժը · 5 : Ելք · ի · 11, 13, 21 : բ կորնթ. դ · 7 : [13] Սաղմ. ժթ · 8 : Ճմեթ · 38 · 137 : ա Տիմ. ա · 8 : [14] գ Թագ · իա · 20 Թագ · գ · 25 · ժե · 17 : [15] Գաղ · ե · 17 : [16] Ծննդ · զ · 5 : ը · 21 : [17] Սաղմ. ա · 2 : [18] բ կորնթ. դ · 16 : Եփես. գ · 16 : Կող. գ · 9, 10 : [19] Գաղ · ե · 17 : [20] Հռոմ. զ · 13, 19 : [21] ա կորնթ.

# ԳԼ· Ը

1 Խակի դատապարտութիւն չընկայ նորանց համար որ Քրիստոսումն են, պատճառն որ կենաց հոգոյ օրէնքովն ազատած են մեղքի եւ մահի օրէնքէն։ 5, 13 Մարմնոյն պէս ապրողներէն ելած վնաս, 6, 14. Եւ հոգուոյն ելած բարութիւնն, 17 Եւ Աստուծոյ որդիք լինելն, 19 Սանձվածներուն յոյսն Աստուծոյ որդոյ յայտնութեանն սպասելն, 29 Նորանք՝ որ առաջուց ճանչցեց, առաջուց հրաւիրեց նորանց արդարացնելոյ համար։ 38 Ո՛չ ոք կարօղ չէ մեզ բաժնել Աստուծոյ սիրոյն։

1 Ասոր որ էդպէս է՝ իսկի դատապարտութիւն չընկայ նորանց համար՝ որ Յիսուս Քրիստոսումն են՝ որ մարմնոյ պէս չեն վարվում[1]։

2 Ինչու որ՝ կենաց հոգոյ օրէնքն[2] Յիսուս Քրիստոսումն՝ ազատեց ինձ[3] մեղքի եւ մահի օրէնքէն[4]։

3 Պատճառն որ՝ էն որ անկարելի էր օրէնքին, որովհետեւ տկար էր մարմնոյ պատճառովն[5], Աստուած իրան որդին ուղարկեց մեղաւոր մարմնոյ նմանութեւնովն՝ եւ մեղքին համար, եւ մեղքին դատապարտեց էն մարմնումն[6]։

4 Որ օրէնքի արդարութիւնն կատարվի մեզանում, որ մարմնոյն պէս չենք վարվում՝ բայց հոգոյն պէս[7]։

5 Ինչու որ՝ նորանք որ մարմնոյն պէս են՝ մարմնոյ բաներըն են մտածում. եւ նորանք՝ որ հոգոյն պէս[8] հոգոյ բաներըն[9]։

6 Պատճառն որ՝ մարմնոյ մտածմունքն՝ մահ է. եւ հոգոյ մտածմունքն՝ կեանք եւ խաղաղութիւն[10]։

7 Ինչու որ՝ մարմնոյ մտածմունքն Աստուծոյ դէմ թշնամութիւն է[11]. Նրահամար որ՝ Աստուծոյ օրէնքին չի հնազանդվում, եւ էլ կարօղ չէ (հնազանդվիլ)[12]։

8 Պատճառն որ՝ նորանք՝ որ մարմնոյն են, չեն կարօղ Աստուծոյ հաճոյ լինիլ։

9 Բայց դուք մարմնով չէք՝ բայց հոգով, թէ որ Աստուծոյ հոգին ձեզանում բնակված է[13]. ապա թէ որ մին Քրիստոսի հոգին չունի՝ սա նորանն չէ[14]։

10 Բայց թէ որ Քրիստոս ձեզանում է՝ ապա մարմինն մեռած է մեղքին համար, եւ հոգին կենդանի է արդարութեան համար։

11 Ասոր որ նորա հոգին՝ որ Յիսուսին յարոյց մեռելներից՝ ձեզանում բնակված է[15], ապա նա՝ որ Յիսուս Քրիստոսին յարոյց մեռելներից, ձեր մնկհանացու մարմինն էլ կրկենդանացնէ իրան հոգովն, որ ձեզանում բնակված է[16]։

ժե· 57։ [1] վ Յոյր· 4։ Գաղ· ե· 16, 25։ [2] ա Կորնթ· ժե· 45։ բ Կորնթ· գ· 6։ [3] Ցովհ· ը· 36։ Հռոմ· ը· 18-23։ Գաղ· բ· 19։ ե· 1։ [4] Հռոմ· է· 24, 25։ [5] Գործ· ժգ· 39։ Հռոմ· գ· 20։ Եբր· է· 18, 19։ ժ· 1, 2, 10, 14։ [6] Գաղ· գ· 13։ բ Կորնթ· ե· 21։ [7] վ Եր· 1։ [8] Ցովհ· գ· 6։ ա Կորնթ· բ· 14։ [9] Գաղ· է· 22. 25։ [10] Հռոմ· ը· 21։ վ Յոյր· 13։ Գաղ· ը· 8։ [11] Ցակ· դ· 4։ [12] ա Կորնթ· բ· 14։ [13] ա Կորնթ· գ· 16։ ը· 19։ [14] Ցովհ· գ· 34։ Գաղ· գ· 6։ Փիլիպ· ա· 19։ ա Պետր· ա· 11։ [15] Գործ· բ· 24։ [16] Հռոմ· ը· 4, 5։ ա Կորնթ· ը· 14։ բ Կորնթ· գ· 14։ Եփես· բ· 5։

12 Ուրեմն՝ եղբարք, պարտական ենք ոչ թէ մարմնոյն՝ որ մարմնոյն պէս ապրինք[17]։

13 Ինչու որ՝ եթէ մարմնոյն պէս ապրիք՝ կըմեռնիք[18]. բայց թէ որ Հոգով մարմնոյ գործերըն սպանէք՝ կապրիք[19]։

14 Պատճառն որ՝ նորանք որ Աստուծոյ Հոգովն են վարվում՝ նորանք Աստուծոյ որդիք են[20]։

15 Ինչու որ՝ ծառայութեան Հոգին չէք առել[21] որ միևնոյն վախենաք[22]. բայց որդեգիր լինելոյ Հոգին էք առել[23], որ նորանով աղաղակումենք՝ աբբա, Հայր[24]։

16 Հենց էն Հոգին վկայութիւն է տալիս մեր Հոգոյն, որ մենք Աստուծոյ որդիք ենք[25]։

17 Իսկ եթէ որդիք՝ ապա էլ ժառանգներ. Աստուծոյ ժառանգներ եւ Քրիստոսի ժառանգ ընկերներ[26]. եթէ որ նորա չարչարանքներին ընկեր լինինք՝ փառքին էլ մասնակից կըլինինք[27]։

18 Ինձ էնպէս է երեւում՝ թէ էս ժամանակիս չարչարանքներն չեն արժանի էն նոր գալու փառքին՝ որ մեղանում պիտի Յայտնվի[28]։

19 Ինչու որ՝ ստեղծվածներն Յոյսն[29] Աստուծոյ որդոց Յայտնութեանն է սպասում[30]։

20 Պատճառն որ՝ ստեղծվածներն հնազանդվեցան ունայնութեանն, ոչ թէ իրանց կամքովն՝ բայց նորա համար՝ որ հնազանդացրուց (նորանց) յուսով[31]։

21 Ինչու որ՝ հենց իրանք ստեղծվածներն էլ ապականութեան ծառայութենիցն կազատվին՝ Աստուծոյ որդոց փառաւոր ազատութեան պէս։

22 Պատճառն որ՝ գիտումենք՝ թէ ամեն ստեղծվածներն միևնոյն հիմիկ հառաչումեն՝ եւ սաստիկ ցաւի եւ աշխատանքի մէջ են[32]։

23 Եւ ոչ թէ մենակ էսքան. բայց հենց մենք էլ՝ որ Հոգոյ պտուղըն ունինք[33], ինքներս մեր անձներումն հառաչումենք[34] որովհետեւ որդեգիր լինելոյն ենք սպասում[35]. մեր մարմնոյ ազատութեանն[36]։

24 Ինչու որ մենք յուսով ապրեցանք. բայց Յոյսն՝ որ տեսնըվում, Յոյս չէ. պատճառն որ՝ էն բանն, որ միևն տեսնումէ՝ ի՞նչպէս էլ կըյուսայ նորան[37]։

25 Իսկ եթէ որ էն՝ որ չենք տեսնում, նորան Յոյս ունինք, ապա համբերութենով սպասումենք։

26 Հենց էնպէս էլ Հոգին ձեռն է տալիս մեր տկարութեան. ինչու որ՝ մենք չենք գիտում թէ ինչ բանի համար աղօթք անենք ինչպէս որ արժան է[38]. բայց ինքն Հոգին անասելի հառաչանքով բարեխոս է լինում[39]։

27 Իսկ նա՝ որ սրտերըն քննում է, նա գիտումէ թէ ինչ է Հոգոյ խորհուրդն[40]. ինչու որ Աստուծոյն վայելած կերպով սրբոց համար բա-

---

[17] Հռոմ. ը. 7, 14։ [18] Վէր. 6։ Գաղ. գ. 8։ [19] Եփես. դ. 22։ Կող. գ. 5։ [20] Գաղ. 6. 18։ [21] ա Կորնթ. բ. 12։ Եբր. բ. 15։ [22] բ Տիմ. ա. 7։ ա Ցովհ. դ. 18։ [23] Եսայ. ծդ. 5։ Գաղ. դ. 5, 6։ [24] Մարկ. ժգ. 36։ [25] բ Կորնթ. ա. 22։ 6. 5։ Եփես. ա. 13։ գ. 30։ [26] Գործ. իզ. 18։ Գաղ. գ. 7։ [27] Գործ. ժգ. 22։ Փիլիպ. ա. 29։ բ Տիմ. բ. 11, 12։ [28] բ Կորնթ. դ. 17։ ա Պետր. ա. 6, 7։ դ. 13։ [29] բ Պետր. գ. 13։ [30] ա Ցովհ. գ. 2։ [31] Վայր. 22։ Գննդ. գ. 19։ [32] Եբրայ. ժբ. 11։ [33] բ Կորնթ. 6. 5։ Եփես. ա. 14։ [34] բ Կորնթ. 6. 2, 4։ [35] Ղուկ. ի. 36։ [36] Ղուկ. իա. 28։ Եփես. դ. 30։ [37] բ Կորնթ. 6. 7։ Եբր. ժա. 1։ [38] Մարկ. ի. 22։ Ցովհ. դ. 3։ [39] Զաք. ժբ. 10։ Եփես. զ. 18։ [40] ա Պետր. իբ. 9։ Պսալմ. է. 9։ Առակ. ժէ. 3։ Եբրայ. ժա. 20։ ժէ. 10։ ի. 12։ Գործ. ա. 24։ ա Թես. բ. 4։ Ցայտ. բ. 23։

բեհեսամի[41]։

28 Այլ գիտումենք, որ նորանց՝ որ Աստուծոյն սիրումեն՝ նա ամեն բանի մէջ օգնական է լինում գէպի բարին նորանց՝ որ հրաւիրեալներ* կանչվեցան[42]։

29 Պատճառն որ՝ նորանց՝ որ առաջուց ճանաչեց[43], առաջուց հրաւիրեց[44]՝ որ նորա որդոյ պատկերին նման լինին[45], որ նա առաջինեակ լինի շատ եղբայրների միջումն[46]։

30 Ու նորանց՝ որ առաջուց հրաւիրեց, նորանց էլ կանչեց. եւ նորանց՝ որ կանչեց[47], նորանց էլ արդարացուց[48]. եւ նորանց՝ որ արդարացուց, նորանց էլ փառաւոր արաւ[49]։

31 Ապա ի՞նչ ասենք սրանհամար. Թէ որ Աստուած մեր կողմն է՝ էլ ո՞վ կը լինի մեզ հակառակ[50]։

32 Որ իրան որդոյն էլ չխնայեց[51]՝ այլ մեզ ամենիս համար մատնեց նորան. էլ ի՞նչպէս նորան հետ ամեն բան չի շնորհիլ մեզ[52]։

33 Ո՞վ է նա՝ որ Աստուծոյ ընտրեալներին վերայ մեղադրանք կանէ. Աստուած է՝ որ արդարացնում[53]։

34 Ո՞վ է նա՝ որ մեզ կը-դատապարտէ[54]. Քրիստոս Յիսուս, որ մեռաւ՝ եւ աւելի էլ որ հենց ինքն յարութիւն առաւ եւ Աստուծոյ աջ կողմն է[55], որ հենց ինքն էլ մեզ համար բարեխօս է[56]։

35 Ապա ո՞վ կը-բաժանէ մեզ Քրիստոսի սիրուցն. նեղութի՞ւն, թէ ընչաքաղցութիւն, թէ հալածմունք, թէ սով, թէ մերկութի՞ւն, թէ վիշտ, թէ սուր։

36 Ինչպէս որ էլ գրված է, թէ քեզ համար ամեն օր մեռնում ենք, եւ մորթելու ոչխարի պէս համարվեցանք[57]։

37 Այլ էս ամեն բաներում էլ աւելի յաղթում ենք նորա ձեռնով՝ որ մեզ սիրեց[58]։

38 Պատճառն որ՝ համոզում եմ, որ ո՛չ մահ եւ ո՛չ կեանք, եւ ո՛չ հրեշտակներ եւ ո՛չ իշխանութիւններ, եւ ո՛չ հիմիկվան բաներ եւ ո՛չ յետոյ եկողներ, եւ ո՛չ զօրութիւններ[59],

39 Ու ո՛չ բարձրութիւններ եւ ո՛չ խորութիւններ, եւ ո՛չ մին ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սիրուցն՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է։

---

[41] ա Ցռվ. ե. 14 [42] Հռ. թ. 11, 23, 24։ բ Տիմ. ա. 9։ [43] Եբ. ւդ. 12, 17։ Պտմ. ա. 6։ Երէմ. ա. 5։ Մտթ. է. 23։ Հռ. ժա. 2։ բ Տիմ. բ. 19։ ա Պետր. ա. 2։ [44] Եփես. ա. 5, 11։ [45] Ցռվ. ժէ. 22։ բ Կորնթ. դ. 18։ Փիլիպ. գ. 21։ ա Ցռվ. գ. 2։ [46] Կող. ա. 15, 18։ Եբր. ա. 6։ Յայտ. ա. 5։ [47] Հռ. ա. 6։ Թ. 24։ Եփես. դ. 4։ Եբր. թ. 15։ Ա Պետր. բ. 9։ [48] ա Կորնթ. զ. 11։ [49] Ցռվ. ժէ. 22։ Եփես. բ. 6։ [50] Թուա. ժդ. 9։ Պտմ. ձժբ. 6։ [51] Հռ. ը. 6, 10։ [52] Հռ. դ. 25։ [53] Եսայ. ծ. 8, 9։ Ցայտ. ժբ. 10, 11։ [54] Ցռբ. ւդ. 29։ [55] Մարկ. ժզ. 19։ Կող. գ. 1։ Եբր. ա. 3։ բ. 1։ ժբ. 2։ ա Պետր. գ. 22։ [56] Եբր. է. 25։ Թ. 24։ ա Ցռվ. բ. 1։ [57] Պտմ. խգ. 22։ ա Կորնթ. ժե. 30, 31։ բ Կորնթ. դ. 11։ [58] ա Կորնթ. ժե. 57։ բ Կորնթ. բ. 14։ ա Ցռվ. գ. 4։ ե. 4, 5։ Ցայտ. ժբ. 11։ [59] Եփես. ա. 21։ զ. 12։ Կող. ա. 16։ բ. 15։ ա Պետր. գ. 22։

* Ցունարէն. Կոչեցեալ սահմանէլոյն պէս։

## ԳԼ · Թ

Ը Պօղոսի առաքեալ տրամաբանութիւնն Հրէաներին համար։ 7 Ո՛չ թէ Աբրահամի ամէն զաւակներն աւետիքի եղ որդիքն են։ 18 Աստուած ողորմութիւն ումի որ կամենայ։ 21 Բացատուն իշխանութիւն ունի Հողի վերայ, որ նորանից ինչ որ կամենայ էն չինէ։ 25 Հեթանոսներին կանչուիլն, եւ հրէաներից դուրս քցուիլն առաջուց ասված էր։ 32 Իսրաէլն՝ արդարութեան օրէնքին չըհասաւ, պատճառն որ՝ չէ թէ հաւատքիցն՝ այլ օրէնքի գործքերիցն կամեցաւ արդարանալ։

1 Ա՛շմարիտըն ասումեմ Քրիստոսումն՝ եւ սուտ չեմ ասում՝ որ էն իմ խղճմտանքս էլ վկայում ինձ սուրբ Հոգումն[1]։

2 Որ սաստիկ տրամութիւն ունեմ՝ եւ անպակաս ցաւ իմ սրտի մէջն[2]։

3 Ինչու որ փափակելով կընդրուակի՝ որ ինքս նզոված լինեմ Քրիստոսից իմ եղբարներիս եւ մարմնաւոր ազգականներիս համար[3]։

4 Որ նորանք իսրայէլացի են՝ որ նորանցն է որդեգիր լինելն[5], եւ փառքն[6], եւ կտակարանները[7], եւ օրինադրութիւնն[8] եւ պաշտօնն[9] եւ աւետիքն[10]։

5 Որ նորանցն են հարքն[11] որ նորանցից էլ Քրիստոսն է մարմնով կողմանէ[12] նա որ ամէնին վերայ է Աստուած[13], օրհնեալ յաւիտեանս. ամէն։

6 Խոկի կարելի չէ՝ որ Աստուծոյ խօսքն պատիճն ընկնի[14]. ինչու որ՝ ո՛չ թէ ամէնքն որ իսրայէլցին են՝ նորանք իսրայէլացիք են[15]։

7 Նէ ո՛չ թէ՝ նորանք որ աբրահամի զաւակ են՝ էն ամէնքն որդիք են[16]. այլ իսահակով քեզ համար զաւակ պիտի կանչուի[17]։

8 Այսինքն՝ ո՛չ թէ նորանք որ մարմնոյ որդիք են՝ Աստուծոյ որդիք են. այլ աւետիքի որդիքն զաւակ կըհամարվին[18]։

9 Պատճառն որ՝ էս է յատուկ աւետիքի խօսք, թէ էս ժամանակումն կըգամ եւ սառային որդի կըլինի[19]։

10 Նէ ո՛չ թէ ամենակ էսքան. բայց Հռեբեկան էլ մեր հայր իսահակին մին պառկվածիցն (յղի լինելով[20])

11 Որ դեռ նորանք չէին ծնված, եւ դեռ մին բարի կամ չար բան չէին գործած. որ ընտրութեան պէս Աստուծոյ առաջուց սահմանվածն հաստատ մնայ.

12 Ո՛չ թէ գործքերիցն՝ այլ նորանից՝ որ կանչից, ասվեցաւ նո-

[1] Հռով. ա. 9։ բ Կորնթ. ա. 23։ ժա. 31։ Ժր. 19։ Գաղ. ա. 20։ Փիլիպ. ա. 8։ աՏիմ. բ. 7։ [2] Հռով. ժ. 1։ [3] Նէե. լը. 32։ [4] բ Օրին. է. 6։ [5] Նէե. դ. 22։ բ Օրին. ժգ. 1։ Երեմ. լա. 9։ [6] ա թագ. դ. 21։ գ թագ. ը. 11։ Սաղմ. կգ. 2։ Հը. 61։ [7] Գաղատ. դ. 25։ Եբր. ը. 8, 9. 10։ [8] Սաղմ. ճկե. 19։ [9] Եբր. թ. 1։ [10] Գաղատ. ժգ. 32։ Հռով. դ. 2։ Եփես. բ. 12։ [11] բ Օրին. ժ. 15։ Հռով. ժա. 28։ [12] Ղուկ. դ. 23։ Հռով. ա. 3. [13] Երեմ. իգ. 6։ Ցուհ. ա. 1։ Գաղատ. բ. 28։ Եբր. ա. 8։ աՑուհ. է. 20։ [14] Թագ. իգ. 19։ Հռով. գ. 3։ [15] Ցուհ. ը. 39։ Հռով. բ. 28. 29. դ. 12. 16։ Գաղ. ը. 16։ [16] Գաղ. դ. 23։ [17] Ծննդ. իա. 12։ Եբր. ժա. 18։ [18] Գաղ. դ. 28։ [19] Ծննդ. ժը. 10, 14։ [20] Ծննդ. իե. 21։

բան[21]։

13 Թէ մեծն պիտի ծառայէ փոքրին[22]. ինչպէս որ էլ գրված է, Թէ Յակոբին սիրեցի, եւ Եսաւին ատեցի[23]։

14 Ըպա ի՞նչ ասենք. միթէ Աստուծոյ մօտ անիրաւութի՞ւն կայ. քաւ լեցի[24]։

15 Պատճառն որ՝ նա մովսէսին ասումէ. կողորմիմ՝ ումի որ կողորմիմ, եւ գթած կըլինիմ՝ ումի որ գթած կըլինիմ[25]։

16 Ըպա նորանից չէ՝ որ կամենումէ, եւ ոչ էլ նորանից՝ որ վազումէ, բայց Աստուածանից՝ որ ողորմումէ։

17 Պատճառն որ՝ գիրքն ասումէ փարաւօնին[26], Թէ նրահամար դրըդեցի քեզ՝ որ քեզանում ցոյց տամ իմ զօրութիւնըս, եւ իմ անունս ամէն երկրի մէջ պատմվի[27]։

18 Ըպա ուրեմն՝ ումի որ կամենումէ ողորմումէ. եւ ումի կամենումէ՝ պինա կենումէ։

19 Ըպա կընի որ ասես Թէ, էլ նա ինչո՞ւ է մեղագրում՝ պատճառն որ՝ ոչ ով (կարօղ չէ) նորա կամքին հակառակ կենալ[28]։

20 Ըպա դու ո՞վ ես՝ մարդ՝ որ Աստուծոյն պատասխան տաս. միթէ ստեղծվածն կասէ՞ իրան ստեղծօղին՝ Թէ ինչո՞ւ էդպես արիր ինձ[29]։

21 Մի՞թէ բրուտն իշխանութիւն չունի՞ հողի վերայ[30], որ հենց մին շաղաղվածքիցն ամաններ շինէ՝ մին՝ որ պատուաւոր լինի, եւ մէկելը՝ որ անարդ լինի[31]։

22 Ըպա Թէ որ Աստուած կամենումէր ցոյց տալ բարկութիւնըն, եւ յայտնել իրան զօրութիւնըն՝ որ շատ երկայնմտութենով համբերեց բարկութեան ամաններին[32] որ կորուստի համար պատրաստված էին[33].

23 Որ յայտնի ցոյց տայ իրան փառաց մեծութիւնըն[34] ողորմութեան ամաններին վերայ, որ նորանց պատրաստեց փառաց համար[35]։

24 Որ նորանցումէ մեզ էլ կանչեց, ոչ Թէ մենակ հրէաներիցն, բայց էլ հեթանոսներիցն[36]։

25 Ինչպէս որ յոսէէն էլ ասում է. էն որ իմ ժողովուրդս չէ, ինձ ժողովուրդ կըկանչեմ. եւ չըսիրուածըն՝ սիրեցած[37]։

26 Նէ կըլինի որ էնտեղն որ ասվեցաւ նորանց՝ Թէ դուք իմ ժողովուրդ չէք՝ էնտեղ նորանք կենդանի Աստուծոյ որդիք կըկոչվին[38]։

27 Եսային աղաղակումէ իսրայէլի համար. Թէ որ իսրայէլի որդոց համարն ծովի աւազին պէս շատ լինի[39]՝ (նորանցից) քիչ մնացուք կըմնան[40]։

28 Պատճառն որ՝ մին կարճ եւ համառօտ բան (կըլինի) արդարութենով. Տէրն կարճ կանչ բանըն երկրի վերայ[41]։

---

[21] Հռովմ. գ. 17։ ը. 28։ [22] Ծննդ. իե. 23։ [23] Մաղ. ա. 2, 3։ բ Օբդ. խա. 15։ Ասա. ժգ. 24։ Մատթ. ժ. 37։ Գոյ. ժգ. 6։ Ճանվ. ժը. 25։ [24] բ Օբդ. լը. 4։ բ Մնաց. ժիե. 7։ Ճոբ. ը. 3։ լդ. 10։ Սամ. պբ. 15։ [25] Ելք. լդ. 19։ [26] Գաղ. գ. 8, 22։ [27] Ելք. թ. 16։ [28] բ Մնաց. ի. 6։ Ճոբ. թ. 12։ իգ. 13։ Դան. գ. 35։ [29] Նոյ. իթ. 16։ խե. 9։ կգ. 8։ [30] Ասա. ժը. 4։ Երեմ. ժը. 6։ [31] բ Տէմ. ը. 20։ [32] աթես. ե. 9։ [33] ա պետր. բ. 8։ Ճոբ. 4։ [34] Հռովմ. ը. 4։ Եփես. ա, 7։ 27։ Կող. ա. [35] Հռովմ. ը. 28–30։ [36] Հռովմ. գ. 29։ [37] Ովսէ. ը. 23։ ա պետր. բ. 10։ [38] Ովսէ. ա. 10։ [39] Նոյ. ժ. 22, 23։ [40] Հռովմ. ժա. 5։ [41] Նոյ. իը. 21։

29 Եւ ինչպէս որ եսայիէն ասուեցաւ թէ որ զբուսեալնոց Տէրն մեզ հասմար զաւակ էր թողած[42], մենք սոգոմին պէս կը լինէինք եւ գոմորին կը նմանէինք[43]։

30 Պա՛տ ի՞նչ ասենք. էն որ հեթանոսներն՝ որ արդարութեան եւ տեւէն չէին գնում[44] արդարութեան հասին, էն արդարութեան՝ որ հաւատքիցն է[45]։

31 Իսրայէլն՝ արդարութեան օրէնքի եաեւէն էր գնում[46]՝ եւ արդարութեան օրէնքին չհասաւ[47]։

32 Ինչու՞ համար. նրահամար՝ որ հաւատքիցն (չէն ուզում), բայց օրէնքի գործքերիցն. պատճառն որ նորանք գայթակղութեան քարին վերայ գլորվեցան[48]։

33 Ինչպէս որ էլ գրված է. ահա ես սիոնի մէջն գայթակղութեան քար[49] եւ գլորելոյ վէմ եմ դնում[50]. եւ ամէն ով որ կըհաւատայ նորան՝ նա չի ամաչիլ։

## ԳԼ · Ժ

5 Մուրը գրքերըն օրէնքից եւ հաւատքից արդարանալոյն խոստութիւնն ցոյց կըտայ 11 թէ ամէն հաւատացօղներն թէ հրեայ եւ թէ հեթանոս չը՛ պիտի ամաչեն, 18 քրիստոսի աշակերտներին ձայնն եւ խօսքն դուրս գնայ ամէն երկիրն եւ մինչեւ աշխարհքի ծայրերն հեթանոսներուն. 19 Իսրայէլն էլ լսեց՝ բայց չըհաւատայ նորանց։

1 Ես՝ղբաւլը՝ իմ սրտի կամքըն եւ գէպի Աստուած աղօթքըն նորանց համար էն է, որ փրկվին։

2 Ինչու որ՝ վկայում եմ նորանց՝ որ Աստուծոյ համար նախանձ ուենին՝ բայց գիտութեանով չէ[1]։

3 Պատճառն որ՝ Աստուծոյ արդարութիւնըն չեն գիտում[2], եւ հինց իրանցըն են կամենում կանգնացնել[3]. նրահամար որ Աստուծոյ արդարութեանն չըհնազանդվեցան։

4 Ինչու որ՝ Քրիստոսն է օրէնքի վախճանն՝ որ արդար լինի ամէն՝ ով որ հաւատում նորան[4]։

5 Մովսէսն գրում էն արդարութեան համար՝ որ օրէնքիցն է, թէ որ մին մարդ էն անէ՝ կապրի նորանով[5]։

6 Իսրայէլի արդարութեանն համար էսպէս է ասում. չի՛ ասես քո սրտումդ, ո՞վ վերկելի երկինքն՝ այսինքն՝ Քրիստոսին վէր բերելոյ համար[6]։

7 Կամ թէ՝ ո՞վ վերկըզայ անդունդն՝ այսինքն՝ Քրիստոսին մեռելներն միջնցն հանելոյ համար։

8 Իսրայէլի գիրքն ի՞նչ է ասում. էն խօսքն մօտիկ է քո բերանիդ, եւ քո սրտումն է[7]. այսինքն, հաւատքի խօսքն՝ որ քարոզըմենք։

9 Պատճառն որ՝ եթէ քո բերանով Յիսուսին Տէր դաւանես, եւ

[42] Եսայ. ա. 9։ Ռ՚Բ. գ. 22։ [43] Եսայ. ԻԳ. 19։ Երեմ. ծ. 40։ [44] Հռովմ. գ. 11։ Ժ. 20։ [45] Հռովմ. ա. 17։ [46] Հռովմ. Ժ. 2։ Ժա. 7։ [47] Գաղ. ե. 4։ [48] Ղուկ. բ. 34։ ա Պետր. ա. 23։ [49] Սաղմ. ճԺը. 22։ Եսայ. ը. 14։ ԻԸ. 16։ Մատթ. իա. 42։ ա Պետր. բ. 6, 7, 8։ [50] Հռովմ. Ժ. 11։ [1] Գործ. իա. 20։ իբ. 3։ Գաղ. ա. 14։ գ. 17։ Հռովմ. Թ. 31։ [2] Հռովմ. ա. 17։ Թ. 30։ [3] Փիլիպ. գ. 9։ [4] Մատթ. ե. 17։ Գաղ. գ. 24։ [5] Ղեւտ. ԺԸ. 5։ Նեեմ. Թ. 29։ Եզեկ. ի. 11, 13, 21։ Գաղ. գ. 12։ [6] ը Օրին. Լ. 12, 13։ [7] ը Օրին. Լ. 14։

քո սրտումդ հաւատաս՝ թէ Աստուած յարոյց նորան մեռելներից՝ դու կապրիս[8]։

10 Վասն որ՝ սրտով հաւատումք արդարանալոյ համար, եւ բերանով դաւանումք փրկվելոյ համար։

11 Պատճառն որ՝ գիրքն ասումէ. ամէն ով որ կը հաւատայ նորան՝ չի ամաչիլ[9]։

12 Վասնզի որ՝ չկայ հրէայի եւ հեթանոսի մէջ[10]. նոյա համար որ՝ ամէնին հենց մին Տէր է[11], որ բաւական է ամէնին համար՝ որ կանչումեն նորան[12]։

13 Վասն որ՝ ամէն ով որ Տէրի անունըն[13]՝ (իրան) կը կանչէ՝ կապրի[14]։

14 Պա ի՞նչպէս կանչեն նորան, որ չը հաւատացին. կամ ի՞նչպէս հաւատան նորան, որ չը լսեցին. կամ ի՞նչպէս լսեն, թէ որ մինն չը քարոզէ[15].

15 Կամ ի՞նչպէս քարոզեն, թէ որ չուղարկվին. ինչպէս որ էլ գըրված է. թէ ինչպէս գեղեցիկ են նորանց ոտներն՝ որ խաղաղութիւն են քարոզում եւ բարի բաների աւետիք են տալիս[16]։

16 Այլ ամէնքն հնազանդ չէրան աւետարանին, (որ) Եսային ասումէ[17]. Տէր՝ ո՞վ հաւատաց մեր խօսքին[18]։

17 Ուրեմն հաւատքն լսելուցն է, եւ լսելն՝ Քրիստոսի խօսքիցն։

18 Այլ ասումեմ. միթէ չլսեցի՞ն. իրաւի է որ նորանց ձայնն դուրս գնաց ամէն երկիրն[19], եւ նորանց խօսքն մինչեւ աշխարհքի ծայրերն[20]։

19 Այլ ասումեմ. միթէ Իսրայէլն չը լսեց. առաջ մովսէս է ասում. ես ձեզ նախանձաւոր կը շինեմ մին ոչ ինչ ժողովրդով[21], եւ ձեզ մին անմիտ ազգով կը կսկծացնեմ[22]։

20 Այլ Եսային էլ աւելի համարձակվումէ՝ եւ ասում. ես գտայ նորանցից՝ որ ինձ չէին խնդրում[23], յայտնի էլայ նորանց՝ որ ինձ համար չէին հարցնում։

21 Այլ Իսրայէլին ասումէ. ամէն օր իմ ձեռըս մեկնեցի դէպի անհաւատ եւ հակառակող ժողովուրդն[24],

[8] Մատթ. ժ. 32. Ղուկ. ժբ. 8։ Գործ. ը. 37։ [9] Եսայ. իը. 16։ Յոել. գ. 23։ Երէմ. ժէ. 7։ Հռոմ. թ. 33։ [10] Հռոմ. պ. 22։ Գործ. ժէ. 9։ Գաղ. գ. 28։ [11] Գործ. ժ. 36։ Հռոմ. գ. 29։ ա Տիմ. բ. 5։ [12] Եփես. ա. 7։ բ. 4, 7։ [13] Գործ. թ. 14։ [14] Ցաւէլ. բ. 32։ Գործ. բ. 21։ [15] Տիտ. ա. 3։ [16] Եսայ. նբ. 7։ Նաւում. ա. 15։ [17] Հռոմ. գ. 3։ Եբր. դ. 2։ [18] Եսայ. ծգ. 1։ Ցաւէ. ժբ. 38։ [19] Սաղմ. ժթ. 4։ Մատթ. իդ. 14։ իը. 19։ Մարկ. ժզ. 15. Կող. ա. 6, 23։ [20] գ Թագ. ժը. 10։ Մատթ. դ. 8։ [21] բ Օրին. լբ. 21։ Հռոմ. ժա. 11։ [22] Ջէդ. դ. 3։ [23] Եսայ. կե. 1։ Հռոմ. թ. 30։ [24] Եսայ. կե. 2։

# ԳԼ · ԺԱ

1 Աստուած դէն չէ՛ քցեց ամէն իրան ժողովուրդն։ 7 Մին քանի ընտրվածներն հասին եւ մնկէլներն կուրացան. 16 Բայց նորանց համար մնալ ընտրվելս չէր կայ։ 18 Հեթանոսներն պէտք չէ՛ որ նորանց դէմ պարծենան, 26 Ինչու որ նորանց ամէնին համար ապրելս աւետիք կայ։ 33 Աստուծոյ դատաստաններն անքննելի եւ նորա ճանապարհներն անհասկանալի են։

1 Ասա ասումեմ. միթէ Աստուած դէ՞ն քցեց իրան ժողովուրդն[1]. քաւ լիցի. ինչու որ՝ ես էլ իսրայէլացի եմ՝ աբրահամի զաւակից, բենիամինի ցեղից[2]։

2 Աստուած դէն չը քցեց իրան ժողովուրդն՝ որ նորան առաջուց ճանաչեց[3]. կամ թէ չէ՛ք գիտում թէ գիրքն ի՞նչ է ասում եղիայի համար. թէ ի՞նչպէս նա իսրայէլին դէմ ամբաստանում Աստուծոյ առաջին։

3 Տէր՝ քո մարգարէներիդ կոտորեցին եւ քո սեղաններիդ կործանեցին. ես մենակ մնացի, եւ իմ անձիս են ման գալիս[4]։

4 Բայց պատասխանն ի՞նչ է ասում նորան. եօթն հազար մարդ՝ ասումէ, թողի ինձ համար, որ բաղնեն ծունր չբերին[5]։

5 Ընդ ենդպէս էլ ես ժամանակումս շնորհքի ընտրութեան պէս մնացածներ էլան[6]։

6 Բայց թէ որ շնորհքով է՝ էլ գործքերից չէ. ապա թէ չէ՝ շնորհքն էլ շնորհք չի լինիլ[7]։

7 Ապա ուրեմն՝ ինչ որ իսրայէլն խնդրումէր՝ նորան չգտաւ. բայց ընտրվածներն հասին, եւ մնկէլներն կուրացան[8]։

8 Ինչպէս որ էլ գրված է. թէ Աստուած տուաւ նորանց թմրութեան հոգի[9]. աչքեր՝ որ նորանով չըտեսնեն, եւ ականջներ՝ որ նորանով չըլսեն[10], մինչեւ էս օրվան ժամանակս։

9 Եւ դաւիթն ասումէ. նորանց սեղանները թող որոգայթ (թակարդ) լինին նորանց՝ եւ ակնատ եւ գայթակղութիւն՝ եւ նորանց համար հատուցումն[11]։

10 Թող նորանց աչքերն խաւարվին՝ որ չըտեսնեն. եւ նորանց թիկունքները միշտ ծռացրու[12]։

11 Ուրեմն ասումեմ. միթէ նրա համար գլորվեցան՝ որ կործանվին. քաւ լիցի. բայց նորանց գլորվելովն հեթանոսների փրկութիւն էլաւ՝ որ նախանձ քցէ նորանց սիրտն[13]։

12 Բայց թէ որ նորանց ընկնիլն աշխարհի մեծութիւն էլաւ, եւ նորանց տակ քցվիլն՝ հեթանոսների մեծութիւն. էլ օրքան աւելի նորանց լիութիւն։

13 Բայց ձեզ հեթանոսներիդ ասումեմ. քանի ժամանակ որ հեթա-

---

[1] ա Թագ. ժբ. 22։ Երէմ. լա. 37։ [2] բ Կորնթ. ժա. 22։ Փիլիպ. գ. 5։ [3] Հռովմ. ը. 29։ [4] գ Թագ. ժԹ. 10, 14։ [5] գ Թագ. ժԹ. 18։ [6] Հռովմ. Թ. 27։ [7] Հռովմ. դ. 4, 5։ Գաղ. ե. 4։ բ Օրէն. Թ. 4, 5։ [8] Հռովմ. Թ. 31։ ժ. 3։ [9] Եսայ. խԹ. 10։ [10] բ Օրէն. խԹ. 4։ Եսայ. ղ. 9։ Երէմ. ե. 21։ Եզէկ. ժբ. 2։ Մատթ. ժգ. 14։ Յովհ. ժբ. 40։ Գործ. իբ. 26, 27։ [11] Սաղմ. կԹ. 22։ [12] Սաղմ. կԹ. 23։ [13] Գործ. ժգ. 46։ ժը. 6։ իբ. 18, 21։ իը. 24, 28։ Հռովմ. ժ. 19։

նոմների առաքեալ եմ՝ իմ պաշտօնը պատուոր կանեմ[14]։

14 Որ լինի թէ՝ իմ մարմնովս նախանձ քեզի՝ նորանց սիրոն, եւ նորանցից միջանխին ապրեցնեմ[15]։

15 Պատճառն որ՝ թէ որ նորանց երեսից քցվելն՝ աշխարհի հաշտութիւն է, ապա նորանց ընտրութիւն ի՞նչ է, եթէ ոչ կենդանի լինել մեռելներից։

16 Իւ թէ որ սկիզբն սուրբ է՝ ապա հունցվածն էլ, եւ թէ որ արմատն (ⱡⲟⲩⲣ)՝ ապա ճղներն էլ[16]։

17 Թէ որ ճղներից մին քանիսն փշրվեցան[17], եւ դուս որ վայրի ձիթենի էիր՝ նորանց վերայ պատրուստ եցար, եւ հաղորդ էլար արմատին եւ ձիթենոյ պարարտութեանն[18]։

18 Մի պարծենար էն ճղներին դէմ։ ապա թէ որ պարծենաս՝ (իմացիր որ ոչ դուս ես արմատն (ⱡⲟⲩⲣ) վերատնուտ, այլ արմատն՝ քեզ[19]։

19 Ուրեմն կըլինի որ ասես, ճղներն փշրվեցան՝ որ ես պատրուստվիմ։

20 Լաւ է։ նորանք անհաւատութեանով փշրվեցան, եւ դուս հաւատքով հաստատվեցար։ մի լինիր ամբարտաւան[20], այլ վախիր[21]։

21 Քանզի որ՝ եթէ Աստուած բնական ճղներին չըխնայեց, կըլինի որ քեզ էլ չըխնայէ։

22 Ուրեմն տես Աստուծոյ քաղցրութիւնն՝ եւ սաստկութիւնն։ կործանվածներին վերայ սաստկութիւնն, եւ քեզ վերայ Աստուծոյ քաղցրութիւնն, թէ որ դուս հնոյն քաղցրութենումն կենաս[22]։ ապա թէ չէ՝ դուս էլ կըկտրըվիս[23]։

23 Իւ նորանք թէ որ էն անհաւատութենումն էլ չըկենան՝ կըպատրուստվին։ քանզի որ Աստուած կարող է միւսէլ պատրուստել նորանց[24]։

24 Պատճառն որ՝ եթէ դուս բնական վայրի ձիթենոյն կըտրըվեցար՝ եւ բնութեան դէմ բարի ձիթենոյ վերայ պատրուստվեցար, էլ ո՛րքան աւելի նորանք՝ որ բնական են՝ կըպատրուստվին իրանց (յատուկ) ձիթենոյն վերայ։

25 Ձեմ կամենում եղբարք՝ որ չըգիտենաք էս խորհուրդս, որ ձեր անձներումդ ձեզ խնաստուն չըհամարիք[25]։ էն որ փորը ի շատ իրացէլն կուրութիւն էլաւ[26], մինչեւ որ հեթանոսների լիութիւնն մտնէ[27]։

26 Իւ նրանից ետեւ ամէն իսրայէլն կապրի։ ինչպէս որ էլ գրված է, թէ սիոնիցն փրկիչ կըգայ՝ եւ ամբարշտութիւններն դէն կըքցէ յակոբից[28]։

27 Իւ էս է ուխտատպմանս՝ որ ես նորանց հետ կըդնեմ՝ երբոր նորանց մեղքերն վերկառնեմ[29]։

28 Աւետարանին միով տալով՝ նորանք թշնամի են ձեր պատճա-

---

[14] Գործ. թ. 15։ ժգ. 2։ իբ. 21։ Հռովմ. ժե. 16։ Գաղ. ա. 16։ բ. 2, 7, 8, 9։ Եփես. գ. 8։ ա Տիմ. բ. 7։ բ Տիմ. ա. 11։ [15] ա Կորնթ. է. 16։ թ. 22։ ա Տիմ. գ. 16։ Ճակ. ե. 20։ [16] Գնաց. խգ. 10։ Թագ. ժե. 18, 19, 20, 21։ [17] Երեմ. ժա. 16։ [18] Գործ. բ. 39։ Եփես. բ. 12, 13։ [19] ա Կորնթ. ժ. 12։ [20] Հռովմ. ժբ. 16։ [21] Առակ. իբ. 14։ Եսայ. ղզ. 2։ Փիլիպպ. բ. 12։ [22] ա Կորնթ. ժե. 2։ Եբր. գ. 6, 14։ [23] Յովհ. ե. 2։ [24] բ Կորնթ. գ. 16։ [25] Հռովմ. ժբ. 16։ [26] Վեր 7։ բ Կորնթ. գ. 14։ [27] Գաղ. իա. 24։ Ցայտ. է. 9։ [28] Եսայ. ծԹ. 20։ Սաղ. ժգ. 7։ [29] Եսայ. խէ. 9։ Երեմ. լա. 31, եւայլն։ Եբր. ը. 8։ ժ. 16։

ոսվն, ընտրութեան մխիկ տալով՝ սիրելի են Տարանց Տանար[30]։

29 Պատճառն որ՝ Աստուծոյ շնորհքն եւ կոչումն՝ զղջանալ չունի[31]։

30 Նման որ՝ ինչպէս որ դուք եղ մին ժամանակ ապստամբած էիք Աստուածանից՝ եւ հիմիկ ողորմութիւն գտիք նորանց ապստամբութեանովն[32],

31 Նոյնպէս եղ նորանք հիմիկ ապստամբ էլան ձեր ողորմութեանովն, որ նորանք եղ ողորմութիւն գտնեն։

32 Պատճառն որ՝ Աստուած ամենին անհաւատութեան մէջ արգելից՝ որ ամենին ողորմի[33]։

33 Ով (քանի է) Աստուծոյ մեծութեան եւ իմաստութեան խորութիւնն, ինչպէս անքննելի են նորա դատաստաններն[34], եւ անհասկանալի են նորա ճանապարհներն[35]։

34 Պատճառն որ՝ ով գիտաց Տէրի միտքըն[36], կամ ով խորհուրդի ընկեր կը լինի նորան[37]։

35 Կամ ով նորան տուաւ, որ նորա հատուցումն առնէ նորանից[38]։

36 Պատճառն որ՝ նորանից եւ նորանով եւ նորանում է ամէն բան[39]. նորան փառք յաւիտեանս, ամէն[40]։

## ԳԼ · ԺՀ

1 Աստուծոյ ողորմութիւնովն պէտք է որ՝ մեր մարմիններն պատրաստենք կենդանի՝ սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պաշտօնայ։ 3 Խոկի մին բան չըմոռանենք նրանից աւելի, քանի թէ են որ արժան է մոռանալոյ· բայց պարկեշտ կենալոյ մոռանենք։ 5 Մենք շատերս մին մարմին ենք Քրիստոսումն՝ բայց ամէն մէկն իրար հետ անդամ ենք, 6 Եւ թէ կերով կերով շնորհքներ ունինք։ 9 Պարտաւոր ենք որ սէր՝ առանց կեղծաւորութեան ունենանք եւ մեր ամէն ուրիշ պարտականութիւններն էլ կատարենք։ 19 Մեր անձներին համար վրէժխնդրութիւն չը պիտի առնենք, բայց բարկութեան տեղ տանք։

1 Ընդհանուր՝ ձեզ եղբայրք՝ Աստուծոյ ողորմութիւնովն[1], որ ձեր[2] մարմինները պատրաստեք[3] կենդանի սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պաշտօն, որ էն ձեր բանաւոր պաշտօն լինի[4]։

2 Եւ մի կերպարանուիք էս աշխարհքիս կերպարանքովն[5]. բայց նորոգուիք ձեր մտքի նորոգութեանովն[6], որ դուք քննէք էն՝ որ լաւն է[7]. եւ թէ ի՞նչ է Աստուծոյ կամքն՝ էն բարին եւ հաճելին եւ կատարեալ բանն։

3 Աստուծոյ շնորհքովն՝ որ ինձ տրվված է[8] էս եմ ասում ամենին, որ ձեր միջումն է, որ իսկի մին բան

---

[30] ր Օբդ. է· 8։ Թ· 5։ ժ· 15։ [31] Թուոց· իգ· 19։ [32] Եփես· բ· 2։ կող· գ· 7։ [33] Հռովմ· գ· 9։ Գաղ· գ· 22։ [34] Սաղմ· լգ· 6։ [35] Յոբ· ժա· 7։ Սաղ· ղբ· 5։ [36] Յոբ· ժե· 8։ Եսայ· խ· 13։ Երեմ· իգ· 18։ [37] ա կորնթ· բ· 16, [38] Յոբ· լե· 7։ խա· 11։ [39] ա կորնթ· ը· 6։ կող· ա· 16։ [40] Գաղ· ա· 5։ ա Տիմ· ա· 17։ բ Տիմ· գ· 18։ Եբր· ժգ· 21։ ա պետր· ե· 11։ բ պետր· գ· 18։ Յուդ· 25։ Յայտ· ա· 6։

[1] բ կորնթ· ժ· 1։ [2] ա պետր· բ· 5։ [3] Սաղմ· ծ· 13, 14։ Հռովմ· գ· 13, 16, 19։ ա կորնթ· գ· 13, 20։ [4] Եբր· ժ· 20։ [5] ա պետր· ա· 14։ ա Յովհ· բ· 15։ [6] Եփես· ա· 18։ գ· 23։ կող· ա· 21, 22։ գ· 10։ [7] Եփես· ե· 10, 17։ ա Թես· գ· 3։ [8] Հռովմ· ա· 5։ ժե· 15։ ա կորնթ· գ· 10։ ժե· 10։ Գաղ· բ· 9։ Եփես· գ· 2, 7, 8։

չըմտածէք նրանից աւելի, քանզի էն որ արժան է մտածելոյ[9]. բայց որ մտածելումն պարկեշտ կենաք էնպէս՝ ինչպէս որ Աստուած ամէն մէկին հաւատքի չափըն բաժանեց[10]։

4 Ինչպէս որ մին մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք, եւ էն ամէն անդամներն մին գործ չունեն[11]։

5 Ինչպէս էլ մենք շատերս մին մարմին ենք Քրիստոսումն, բայց առանձին մէկին իրար հետ անդամ ենք[12]։

6 Այնպէս էլ մենք կրկով կրկով շնորհքներ ունինք[13] էն շնորհքին պէս՝ որ մեզ տրվված է[14]. եթէ մարգարէութիւն՝ հաւատքի չափովն[15]։

7 Եթէ պաշտօն՝ պաշտամունքի չափովն. եթէ նա՝ որ սովորցնումն՝ վարդապետութեան չափովն[16].

8 Եթէ նա՝ որ մխիթարումն՝ մխիթարութեան չափովն[17]. նա որ առատաձեռն է՝ ուրախութենով[18]. նա որ վերակացու է՝ հոգս տանելովն. նա որ ողորմութիւն է անում[19] ուրախ սրտով[20]։

9 Այլ՝ առանց կեղծաւորու-

թեան (լինի)[21]. չարընատեցէք, բարոյն հետեւեցէք[22]։

10 Աղբայրասիրութենով իրար վերայ գթած (էլէք)[23]. պատիւ տալով իրար առաջ անցկացէք[24]։

11 Ջանք անելովն՝ թյլ չըլինէք. հոգովն ջերմեռանդ էլէք, Տէրին ծառայեցէք.

12 Յուսով ուրախացէք[25], նեղութեան համբերեցէք[26], աղօթքին խիստ հետեւեցէք[27]։

13 Սրբոց հարկաւոր լինող բանին հաղորդ էլէք[28]. օտարասիրութեան հետեւեցէք[29]։

14 Ձեզ անիծողներին օրհնեցէք, օրհնեցէք եւ մի անիծէք[30]։

15 Ուրախացողներին հետ ուրախացէք, եւ լացկ լինողներին հետ լացկ էլէք[31]։

16 Իրար հետ հենց մին խորհուրդ ունենաք[32]. ամբարտաւան մի լինէք[33], բայց խոնարհներին հետ խոնարհվեցէք. ձեր անձներումդ ձեզ իմաստուն մի համարէք[34]։

17 Ումեքին չարի տեղ չար մի տուցանէք[35]. ամէն մարդկանց առա-

---

[9] Ըստ. իե. 27։ Ծալ. է. 16։ Հռովմ. ժա. 20։ [10] ա Կորնթ. ժբ. 7, 11։ Եփես. դ. 7։ [11] ա Կորնթ. ժբ. 12։ Եփես. դ. 16։ [12] ա Կորնթ. ժ. 17։ ժբ. 20, 27։ Եփես. ա. 23։ գ. 35։ [13] ա Կորնթ. ժբ. 4։ ա Պետր. դ. 10, 11։ [14] Վէր. 3։ [15] Գործ. ժա. 27։ ա Կորնթ. ժբ. 10, 28։ ժգ. 3։ ժգ. 1, 6, 29, 31։ [16] Գործ. ժգ. 1։ Եփես. դ. 11։ Գաղ. զ. 6։ ա Տիմ. ե. 17։ [17] Գործ. ժե. 32։ ա Կորնթ. ժգ. 3։ [18] Առակ. զ. 1, 2, 3։ բ Կորնթ. ը. 2։ [19] Գործ. ի. 28։ ա Տիմ. ե. 17։ Եբր. ժգ. 7, 24։ ա Պետր. ե. 2։ [20] բ Կորնթ. թ. 7։ [21] ա Տիմ. ա. 5։ ա Պետր. ա. 22։ [22] Սալմ. լդ. 14։ լզ. 4։ ղէ. 10։ Ամովս. ե. 15։ [23] Եբր. ժգ. 1։ ա Պետր. ա. 22։ բ. 17։ գ. 8։ բ Պետր. ա. 7։ [24] Փիլիպ. բ. 3, ա Պետր. ե. 5։ [25] Գաղ. ժ. 20։ Հռովմ. ե. 2։ ժե. 13։ Փիլիպ. գ. 1։ դ. 4։ ա Թես. ե. 16։ Եբր. դ. 6։ ա Պետր. դ. 13։ [26] Գաղ. իա. 19։ ա Տիմ. զ. 11։ Եբր. ժ. 36։ ժբ. 1։ Ցալ. ա. 4։ ե. 7։ ա Պետր. բ. 19, 20։ [27] Գաղ. ժբ. 1։ Գործ. բ. 42։ ժբ. 5։ Կող. դ. 2։ Եփես. զ. 18։ ա Թես. ա. 17։ [28] ա Կորնթ. ժզ. 1։ բ Կորնթ. թ. 1, 12։ Եբր. զ. 10։ ժգ. 16։ ա Յովհ. գ. 17։ [29] ա Տիմ. գ. 2։ Տիտ. ա. 8։ Եբր. ժգ. 2։ ա Պետր. դ. 9։ [30] Լուկ. ե. 44։ Գաղ. զ. 28։ իգ. 34։ Գործ. է. 59։ ա Կորնթ. դ. 12։ ա Պետր. բ. 23։ գ. 9։ [31] ա Կորնթ. ժբ. 26։ [32] Հռովմ. ժե. 5։ ա Կորնթ. ա. 10։ Փիլիպ. բ. 2։ գ. 16։ ա Պետր. դ. 8։ [33] Սալմ. ճլա. 1, 2։ Երեմ. խե. 5։ [34] Ըստ. գ. 7։ իզ. 12։ Ես. ե. 21։ Հռովմ. ժա. 25։ [35] Ըստ. ի. 23։ Լուկ. ե. 39։ ա Թես. ե. 15։ ա Պետր. դ. 9։

ջին բարի խորհուրդ ունենաք[36]։

18 Լեթէ կարելի լինի ձեզ՝ ամէն մարդկանց հետ խաղաղութիւն ունենալ[37]։

19 Ձեր անձերիդ համար վրէժխնդրութիւն մի անէք սիրելիներ[38], բայց բարկութեան տեղ տուէք. ինչու որ գրված է՝ Թէ վրէժխնդրութիւն անելն իմն է[39]. եւ ես հատուցումն կրտամ, ասում Տէրն։

20 Այլ թէ որ քո թշնամին սոված լինի՝ հաց տուր նորան. եւ թէ որ ծարաւ լինի՝ ջուր տուր նորան[40]. ես անելով կրակի կայծակներ կը-ժողովես նորա գլխին վերայ։

21 Մի յաղթվիր չարիցն, այլ բարիովը յաղթիր չարին։

## ԳԼ · ԺԴ

1 Պէտք է որ մենք ամէն իշխանութիւններին հնազանդ լինինք եւ ուրիշ մեր ամէն պարտականութիւններն կատարենք։ 8 Խոկի մէնին պարտական չը՛մնանք՝ իրար սիրելուցն զատ, ինչու որ՝ օրէնքի բոլորվին՝ սէրն է։ 11 Նորանք՝ որ Քրիստոսի Աւետարանին եւ նորա թագաւորութեանն մէջ մտն կրգան, չը՛վնիներ որ նորանք՝ անառակութենով եւ հարբեցութենով եւ պղծութիւններով ժամանակ կորցնեն, բայց քրիստոնեայ հեզութեան անուն խաւարի գործքերըն։

1 Ամէն անձն՝ որ իշխանութեան ներքեւ է՝ թող հնազանդութենով կենայ[1]. պատճառն որ՝ իշխանութիւնն իսկի մէնից չէ, եթէ ոչ Աստուածանից[2]. եւ նորանք որ կան՝ Աստուածանից են կարգված։

2 Ապա ուրեմն՝ նա որ իշխանութեանն հակառակ է կենում[3] Աստուծոյ հրամանին է հակառակ կենում. եւ նորանք՝ որ հակառակ են կենում՝ իրանց անձներին համար դատաստան կընդունին։

3 Ինչու որ՝ իշխաններն բարի գործքերին վախի պատճառ չեն, բայց չար գործքերին. կամենո՞ւմես որ էն իշխանութենից չը՛վախենաս, բարի գործք արա, եւ նորանից գովասանք կընդունես[4]։

4 Պատճառն որ՝ նա Աստուծոյ պաշտօնեայ է քեզ համար դէպի բարին. ապա թէ որ չարագործ լինես՝ վախիր. ինչու որ՝ նա զուր տեղն սուրըն չի կապել մէջքումն. նա Աստուծոյ սպասաւոր է՝ բարկութենով վրէժխնդրութիւն անելոյ նորան՝ որ չարըն է գործում։

5 Վերահամար պէտք է հնազանդ լինել[5] ոչ թէ մէնակ բարկութեան համար, բայց էլ խղճմտանքին համար[6]։

6 Վերահամար հարկ էլ վճարումք. ինչու որ՝ նորանք Աստուծոյ սպասաւորներ են՝ հենց էն բանին պարապվելոյ համար։

7 Ուրեմն ամէնին վճարեցէք ինչ պարտք որ կայ[7]. ում որ հարկ՝ հարկըն. ում որ մաքս (կնոխտոս) մաքսըն. ում որ վախ՝ վախըն. ում որ պատիւ՝ պատիւըն։

8 Չէ իսկի մէնին պարտական չը-

[36] Հռովմ. ժգ. 16։ բ Կորնթ. ը. 21։ [37] Մարկ. թ. 49։ Հռովմ. ժգ. 19։ Եբր. ժբ. 14։ [38] Լեւտ. ժթ. 18։ Ածխ. խգ. 29։ Հռովմ. ժբ. 17։ [39] բ Օրէն. լբ. 35։ Եբր. ժ. 30։ [40] Նէ. խգ. 4, 5։ Ածխ. իե. 21, 22։ Մատթ. ե. 44։ [1] Տիտ. գ. 1։ ա Պետր. բ. 13։ [2] Ածխ. ը. 15, 16։ Դան. բ. 21։ գ. 32։ Յովհ. ժթ. 11։ [3] Տիտ. գ. 1։ [4] ա Պետր. բ. 14։ գ. 13։ [5] Գաղ. ը. 3։ [6] ա Պետր. բ. 19։ [7] Մատթ. իբ. 21։ Մարկ. ժբ. 17։ Ղուկ. ի. 25։

մինաք՝ նորանից ջոկ (աոձայէ)՝ որ իրար սիրէք, ինչու որ՝ նա որ ընկերին սիրում՝ նա օրէնքին կատարում[8]։

9 Չն մի շնար, եւ մի գողանար, եւ մի սուտ վկայեր, եւ մի ցանկանար[9], եւ էլ ինչ որ ուրիշ պատուիրանք կայ, էն խօսքումն ժողովված բոլորվումեն, թէ քո ընկերիդ քո անձիդ պէս սիրիր[10]։

10 Սէրն իրան ընկերին չար չի անիլ. օրէնքի բոլորվիլն սէրն է[11]։

11 Նա ժամանակիս համար էս էլ դիտացէք, որ հենց հիմիկ ժամանակն է՝ որ քնիցն զարթնենք[12], պատճառն որ՝ հիմիկ մեզ աւելի մօտ է փրկութիւնն՝ քան թէ էն ժամանակն՝ որ հաւատացինք։

12 Գիշերն հետացաւ եւ ցերեկն մօտեցաւ. ուրեմն հետ անենք խաւարի գործքերըն[13], եւ լուսոյ զէնքըն հագնենք[14]։

13 Ինչպէս ցերեկումն պարկեշտ էլած մանդամք[15]. չըլինի որ անառակութիւնով[16] եւ հարբեցութեամբ նով եւ խառն պարկվածներով[17] եւ պղծութիւններով, եւ չըլինի որ նախանձով[18] եւ հակառակութեամբ նով։

14 Նայց Տէր Յիսուս Քրիստոսին հագնիք[19]. եւ մարմնոյ համար հոգս մի անիք դէպի ցանկութիւն[20]։

## ԳԼ· ԺԴ

1 Պարտիք պէտք չէ որ՝ ուրիշներին անարգեն եւ դատեն, նորանց խղճմտանքին դէմ չէլած անմաղ բաներին համար, 13 Նայց զդոյշ լինին որ՝ էն բաներին մէջ նորանց գայդակղութիւն չը՛դնեն, 15 Կերակուրի եւ ուրիշ բաների համար Աստուածն չուտ պատճառներով կըհաստատէ թէ իսկի մին մարդ պայթակղութիւն չը՛դնէ եւ չը՛գատ իրան եղբօրն։

1 Նայց հաւատքի մէջ տկարացածներին ընդունեցէք առանց տարակուսանք անելոյ խղճմտանքին[1]։

2 Միսին հաւատում՝ թէ ամէն բան կարօղ է ուտել[2]. եւ նա որ հիւանդ է՝ բանջար կուտէ։

3 Կա՛ որ ուտում, թող չանարգէ նորան՝ որ չի ուտում, եւ նա՝ որ չի ուտում, թող չըդատէ նորան՝ որ ուտում[3], ինչու որ Աստուած ընդունեց նորան։

4 Դու ո՞վ ես՝ որ ուրիշի ծառային դատես[4]. իրան տիրոջն է կենում՝ կամ ընկնում. բայց կրկենայ, ինչու որ Տէրն կարօղ է հաստատել նորան։

5 Միսին պահում օր օրի վերայ, եւ մէկէլն պահում ամէն օր[5]. ա-

[8] Կ՚ասը· 10։ Գաղ· ե· 14։ Կող· գ· 14։ ա Տի՛մ· ա· 5։ Ցակ· բ· 8։ [9] Եփ· ե· 13, Խոյնը։ բ Օրին· ե· 17, Խոյնը։ Մարկ· ժե· 18։ [10] Դէսպ· ժե· 18։ Մարկ· իբ· 39։ Մարկ· ժբ· 31։ Գաղ· ե· 14։ Ցակ· բ· 8։ [11] Մարկ· իբ՝ 40։ Վէբ· 8։ [12] ա Կորնթ· ժե· 34։ Եփես· ե· 14։ ա Թեսս· ե· 5, 6։ [13] Եփես· ե· 11։ Կող· գ· 8։ [14] Եփես· զ· 13։ ա Թեսս· ե· 8։ [15] Փիլիպ· դ· 8։ ա Թեսս· դ· 11։ ա Պետր· բ· 12։ [16] Ռոմ· իգ· 20։ Գաղ· իա· 34։ ա Պետր· գ· 3։ [17] ա Կորնթ· զ· 9։ Եփես· ե· 5։ [18] Ցակ· գ· 14։ [19] Գաղ· գ· 27։ Եփես· գ· 24։ Կող· գ· 10։ [20] Գաղ· ե· 16։ ա Պետր· բ· 11։ [1] Հռոմ· ժե· 1, 7։ ա Կորնթ· բ· 9, 11։ Թ· 22։ [2] Վասը· 14։ ա Կորնթ· ժ· 25։ ա Տի՛մ· գ· 4։ Տէտ· ա· 15։ [3] Կող· բ· 16։ [4] Ցակ· գ· 12։ [5] Գաղ· գ· 10։ Կող· բ· 16։

մէն մէկն թող իւր մտքի ուզածըն անէ։

6 Ա՛յ՝ որ օրին մտիկ է անում, Տէրին համար է մտիկ անում. եւ նա՝ որ օրին մտիկ չի անում, Տէրին համար մտիկ չի անում[6]. եւ նա՝ որ ուտում, Տէրին համար է ուտում, եւ Աստուածանից գոհանում. եւ նա՝ որ չի ուտում, Տէրին համար չի ուտում, եւ Աստուածանից գոհանում[7]։

7 Պատճառն որ՝ մեզանից մէնն չըկայ՝ որ ինքն իրան համար ապրի եւ ինքն իրան համար մեռնի[8]։

8 Թէ որ ապրինք՝ Տէրին ենք ապրում, եւ թէ որ մեռնինք՝ Տէրին ենք մեռնում. ուրեմն թէ ապրինք եւ թէ մեռնինք՝ Տէրին ենք։

9 Պատճառն որ՝ հենց նրանամար էլ Քրիստոս մեռաւ եւ կենդանացաւ[9] որ մեռելներին եւ կենդանիներին վերայ աւհասարակ տիրապետէ[10]։

10 Դու ինչո՞ւ համար ես եղբօրդ դատում, կամ ինչո՞ւ ես քո եղբօրդ անարգում. ինչու որ՝ (մենք) ամենքս Քրիստոսի դատաստանի ամբոխի առաջին պիտի կենանք[11]։

11 Պատճառն որ՝ գրված է թէ ես կենդանի եմ, ասում Տէրն, որ ամէն ծունր ինձ պիտի չոքվի, եւ ամէն լեզու պիտի խոստովան լինի Աստուածըն[12]։

12 Ուրեմն մեզանից ամէն մէկն իւրան անձին կաղմանէ պիտի համար տայ Աստուծոյն[13]։

13 Արդ համար իրար չըդատենք. բայց աւելի ես դրէք ձեր միտքդ, որ եղբօրն իսկի գայթակղութիւն չըդնենք[14]։

14 Ես գիտումեմ, եւ հաստատ իմանումեմ Յիսուս Քրիստոսումն՝ որ իսկի մին բան պիղծ չէ իրանով[15]. բայց ով որ մին բան պիղծ կըհամարէ՝ նորա համար է պիղծ[16]։

15 Բայց թէ որ կերակուրի պատճառով քո եղբայրդ տրտմեցնես, էլ դու նորա հետ սիրով չըվարվեցար. քո կերակուրովն մի կորցներ նորան, որ նորա համար Քրիստոս մեռաւ[17]։

16 Ձըլինի որ ձեր բարի բանն հայհոյվի[18]։

17 Պատճառն որ՝ Աստուծոյ արքայութիւնն ուտելիք եւ խմելիք չէ[19], բայց արդարութիւն եւ խաղաղութիւն եւ ուրախութիւն սուրբ հոգովն։

18 Ինչու որ՝ նա որ սորանում Քրիստոսին ծառայումէ, Աստուծոյն հաճոյ է, եւ մարդկանց պատուելի[20]։

19 Ապա ուրեմն խաղաղութեան եաեւէն գնանք[21], եւ էն շինութեան՝ որ իրար մէջ է[22]։

20 Կերակուրի պատճառովն մի քանդեր Աստուծոյ գործըն[23]. ամէն բան սուրբ է[24], բայց չար էն մարդոյ համար՝ որ խըշճմանքով է ու-

[6] Գաղ. գ. 10։ [7] ա Կորնթ. ժ. 31։ ա Տիմ. դ. 3։ [8] ա Կորնթ. ղ. 19, 20։ Գաղ. բ. 20։ ա Թես. ե. 10։ ա Պետր. դ. 2։ [9] բ Կորնթ. ե. 15։ [10] Գործ. ժ. 36։ [11] Մատթ. խե. 31, 32։ Գործ. ժ. 42։ Ժէ. 31։ բ Կորնթ. ե. 10։ Ցոհ. 14, 15։ [12] Եսայ. խե. 23։ Փիլիպ. բ. 10։ [13] Մատթ. ժբ. 36։ Գաղ. գ. 5։ ա Պետր. դ. 5։ [14] ա Կորնթ. ը. 9, 13։ ժ. 32, [15] Գործ. ժ. 15։ վէր. 2, 4— վէրջ. 20։ ա Կորնթ. ժ. 25։ ա Տիմ. դ. 4։ Տիտ. ա. 15։ [16] ա Կորնթ. ը. 7, 10։ [17] ա Կորնթ. ը. 11։ [18] Հռոմ. ժբ. 17։ [19] ա Կորնթ. ը. 8։ [20] բ Կորնթ. ը. 21։ [21] Սաղմ. լդ. 14։ Հռոմ. ժբ. 18։ [22] Հռոմ. ժե. 2։ ա Կորնթ. ժդ. 12։ ա Թես. ե. 11։ [23] վէր. 15։ [24] Մատթ. ժե. 11։ Գործ. ժ. 15։ վէր. 14։ Տիտ. ա. 15։

տում Նորան[25]։

21 Ըհեղն լաւ է՝ ոչ միտուտել եւ ոչ գինի մխիլ, եւ ոչ էն բանըն (ա-նել՝) որ նորանով քո եղբայրդ գայ-թակղուում կամ գլորւում կամ տկարանում[26]։

22 Ի՞ հարկէ դու հաւատք ունիս, ապա քեզ առանձին բանիր Աստուծոյ առաջին։ Երանի է Նորան՝ որ ի-րան անձըն չըդատապարտէ Նորա-նով՝ որ ընկերին փորձում[27]։

23 Իսկ նա՝ որ խղճմտանք է ա-նում, թէ որ ուտէ՝ դատապարտված է, ինչու որ հաւատքիցն չէ։ բայց ա-մէն ինչ որ հաւատքիցն չէ, մեղք է[28]։ բայց Նորան որ կարօղ է ձեզ հաստատ պահել իմ աւետարանիս պէս, եւ Յիսուսի Քրիստոսի քա-րոզութեան պէս, էն խորհըրդոյ յայտնութեան պէս՝ որ յաւիտենից ժամանակից լուռ պահված էր, եւ հիմիկ մարգարէից գրքերումն յայտ-նըվեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս, եւ հաւատքի հնա-զանդութիւնըն (գործերի համար)՝ ամէն հեթանոսների միջումն խնա-յում տըվիւս։ Էն միայն իմաստուն Աստուծոյն՝ Նորան փառք յաւի-տեանս Յիսուսի Քրիստոսի ձե-ռումն, ամէն։

## ԳԼ· ԺԵ

1 Կարօղ էլօղներն պէտք է որ՝ տկարների տկարութիւնըն վերառնենք։ 2 Եւ ամէն մէկն թող հաճոյ լինի ընկերին։ 3 Պատճառն որ՝ Քրիստոս էլ չէ թէ իրան անձին հաճոյ է-լաւ։ 7 Քրիստոնեաներն պէտք է որ՝ իրար ընդունի՛ն ինչպէս որ Քրիստոս էլ Նորանց ընդունեց, 8 թէ Հրեայ լինի, 9 Եւ թէ հեթանոս։ 15 Պօղոս նեղութիւն խնդրում իրան համարձակութեանով գրելոյն համար հռոմայեցոց, 28 Եւ Նորանց միտքն անցկենալոյն համար խօսք կըսայ։ 30 Եւ Նորանցից աղօթք խնդրում։

1 Ամէնք որ կարօղ ենք՝ պէտք է որ տկարների տկարութիւնըն[1] վերառնենք[2], եւ մենակ մեր անձնե-րին հաճոյ չըլինինք։

2 Այլ մեզանից ամէն մէկն թող հաճոյ լինի ընկերին դէպի բարին[3] շինութեան համար[4]։

3 Պատճառն որ՝ Քրիստոս էլ չէ թէ իրան անձին հաճոյ էլաւ[5], բայց ինչպէս որ էլ գրված է, թէ քեզ նախատինք տուօղների նախա-տինքներն ինձ վերայ ընկան[6]։

4 Այլ ինչ որ գրվեցաւ՝ մեր վարդապետութեան համար գրվե-ցաւ[7], որ համբերութեանով եւ գըր-քերի մխիթարութենովն յոյսըն ըն-դունինք։

5 Այլ համբերութեան եւ ամէն մխիթարութեան Աստուածն տայ ձեզ՝ որ հինց մին մտածմունք ունե-նաք իրար հետ[8] Յիսուսի Քրիս-տոսի (կամաց) պէս։

6 Որ միաբան մին բերանով փա-ռաւոր անէք Աստուծոյն, եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօրըն[9]։

7 Ուրեմն իրար ընդունե-

[25] ա Կորնթ· ը· 9–12։ [26] ա Կորնթ· ը· 13։ [27] ա Ցովհ· գ· 21։ [28] Տէր· ա· 15։ [1] Գաղ· գ· 1։ [2] Հռոմ· ժգ· 1։ [3] ա Կորնթ· թ· 19, 22։ Ժ· 24, 33։ ԺԳ· 5։ Փիլիպ· բ· 4, 5։ [4] Հռոմ· ժգ· 19։ [5] Սաղմ· իզ· 39։ Ցովհ· ե· 30։ ը· 38։ [6] Սաղմ· կթ· 9։ [7] Հռոմ· դ· 23, 24։ ա Կորնթ· թ· 9, 10։ Ժ· 11։ բ Տիմ· գ· 16, 17։ [8] Հռոմ· ժբ· 16։ ա Կորնթ· ա· 10։ Փիլիպ· գ· 16։ [9] Գործ· գ· 24, 32։

ձէք[10], ինչպէս որ Քրիստոս էլ ձեզ ընդունեց Աստուծոյ փառաց համար[11]։

8 Ա՛յն ինչ ես ասում ձեզ. թէ էն որ Քրիստոս թլփատութեան սպասաւոր եղաւ՝ Աստուծոյ ճշմարտութեան համար էր[12], որ հարանց եղած աւետիքըն հաստատէ[13]։

9 Այլ հեթանոսներն ողորմութեան համար փառաւորումն Աստուծոյն[14], ինչպէս որ էլ գրված է. թէ սրահամայ կըզոհանամ քեզա նից հեթանոսների մէջն, եւ քո անունիդ սաղմոս կասեմ[15]։

10 Եւ մինէլ՝ թէ ուրախացէք ո՛վ հեթանոսնե՛ր նորա ժողովըրդի հետ[16]։

11 Եւ մինէլ՝ թէ օրհնեցէք Տէրին ամէն հեթանոսներ, եւ գովեցէք նորան ամէն ժողովուրդներ[17]։

12 Եւ մինէլ եսային ասում է. Յեսսէիցն արմատ կըլինի, եւ նա որ հեթանոսներին համար իշխան կըկանգնի. նորան յոյս կըդնեն հեթանոսներն[18]։

13 Այլ յուսոյ Աստուածն լի՛ցն անկ ձեզ ամէն ուրախութեամբ եւ խաղաղութեամբ, որ յուսով աւելանաք սուրբ Հոգոյ զօրութեամբն[19]։

14 Եւ ինքս էլ՝ իմ եղբայրք՝ ձեզ համար հաստատ եմ[20], որ դուք լիքն էք բարութեամբ. լիքն էք ամէն գիտութեամբ[21], (որ) կարօղ էք իրար խրատել։

15 Այլ համարձակվեցայ եղբայրք՝ եւ փոքր՚ի շատէ գրեցի ձեզ. իբր թէ ձեր մտքներդ բերելով էն շնորհքըն՝ որ ինձ տըվված է Աստուածանից[22]։

16 Որ ես Յիսուսի Քրիստոսի սպասաւոր լինիմ հեթանոսների միջումն[23]. Աստուծոյ աւետարանըն ցանկալի անելոյ, որ հեթանոսների պատարագըն ընդունելի լինի՝ սուրբ Հոգովն սրբված[24]։

17 Արահամայ պարծանք ունինք Յիսուս Քրիստոսումն Աստուծոյ առաջին։

18 Ինչու որ՝ չեմ համարձակվում մին բան խոսիլ՝ որ Նորան Քրիստոս չըգործեց ինձանով[25] հեթանոսներըն հնազանդացնելոյ համար՝ խոսքերով եւ գործքերով[26],

19 Նշանների եւ հրաշքների զօրութենով, սուրբ Հոգոյ զօրութենով. ինչպէս որ ես Երուսաղէմից մինչեւ Լիւրիկացոց կողմերն Քրիստոսի աւետարանըն լցրի։

20 Ինպէս ջանք արի աւետարանըն քարոզել, չէ թէ որտեղ որ Քրիստոսի անունն անուանվեցաւ՝ որ չըլինի թէ իբր ուրիշի հիմունքի վերայ շինեմ[28]. բայց ինչպէս որ էլ գրված է.

21 Թէ նորանք որ նորանց չիպատմվեց նորա համար՝ կըտեսնեն, եւ նորանք որ չեն լսել՝ միաք կառնեն[29]։

22 Արահամայ շատ անգամ խափանվեցայ ձեզ մօտ գալուց[30]։

23 Այլ հիմիկ ես էս կողմերումն

[10] Հռով. ժգ. 1, 3։ [11] Հռով. ե. 2։ [12] Պտրտ. ժե. 24 Ցուվ. ա. 11։ Գործ. գ. 25, 26։ ժգ. 46։ [13] Հռով. գ. 3։ բ Կորնթ. ա. 20։ [14] Ցուվ. ժ. 16։ Հռով. թ. 24։ [15] Ցուվ. ժը. 49։ [16] բ Օրէն. լբ. 43։ [17] Սաղ. ՃՀ. 1։ [18] Եսայ. ժա. 1, 10։ Ցայտ. ե. 5։ իբ. 16։ [19] Հռով. ժբ. 12։ ժդ. 17։ [20] բ Պետր. ա. 13։ ա Ցուվ. բ. 21։ [21] ա Կորնթ. ը. 1, 7, 10։ [22] Հռով. ա. 5։ ժբ. 3։ Գաղ. ա. 15։ Եփես. գ. 7, 8։ [23] Հռով. ժա. 13։ Գաղ. բ. 7, 8, 9։ ա Տիմ. բ. 7։ բ Տիմ. ա. 11, Փիլիպ. բ. 17։ [24] Եսայ. կգ. 20։ Փիլիպ. բ. 17։ [25] Գործ. իա. 19։ Գաղ. բ. 8։ [26] Հռով. ա. 5։ ժգ. 26։ [27] Գործ. ժԹ. 11։ բ Կորնթ. ժբ. 12։ [28] բ Կորնթ. ժ. 13, 15, 16։ [29] Եսայ. նբ. 15։ [30] Հռով. ա. 13։ ա Թես. բ. 17, 18։

էլ տեղ չունիմ. եւ շատ տարուց եմեւ սաստիկ փափակ ունիմ՝ որ ձեզ մօտ գամ[31]:

24 Երբոր անցկընկենամ սպանիա, յոյս ունիմ որ դէպի նորանց անցկենալոյ ժամանակին տեսնեմ ձեզ[32], եւ ձեզանից ճանապարհ ըցվիմ ենտեղ՝ եթէ առաջ փոքր ի շատէ ձեզանով կըշտանամ:

25 Բայց հիմիկ երուսաղէմ եմ գնում որ սրբըներուն ծառայութիւն կատարեմ[33]:

26 Պատճառն որ՝ մակեդօնացոց եւ աքայեցոց հաճոյ երեւեցաւ՝ որ մին հաղորդութիւն անեն աղքատ սրբըներուն հետ՝ որ երուսաղէմումն են[34]:

27 Հաճոյ երեւեցաւ, ինչու որ՝ հենց պարտական էլ են նորանց, պատճառն որ՝ եթէ հեթանոսներն նորանց հոգեւոր (բարիքներուն) մասնակից էյան[35], պէտք է՝ որ մարմնական (բաներուն) էլ մասնակից ա-նեն նորանց[36]:

28 Ուրեմն էս որ կատարեմ՝ եւ նորանց պտուղն իրան տէրն դըներեմ[37], անցկընկենամ սպանիա ձեր միջումն:

29 Յս գիտեմեմ՝ որ երբոր ձեզ մօտ գամ, Քրիստոսի աւետարանի առատ օրհնութիւնն կըգամ[38]:

30 Աղաչեմեմ ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռնումն եւ հոգոյ սիրումն[39], որ ինձ պատերազմի ընկեր լինիք՝ ինձ համար աղօթքի անելով դէպի Աստուած[40]:

31 Որ փրկվիմ են ապստամբներեն ձեռքիցն՝ որ Հրէաստանումն են[41], եւ իմ ծառայութիւնս՝ որ երուսաղէմի մէջ (եմ տանեմ)՝ սրբըներուն ընդունելի լինի[42]:

32 Որ ուրախութիւնով ձեզ մօտ գամ[43] Աստուծոյ կամքումն[44], եւ ձեզ հետ հանգիստ առնեմ[45]:

33 Եւ խաղաղութիւն Աստուածն ձեզ ամենիք հետ լինի[46]. ամէն:

## ԳԼ· ԺՕ

3 Պօղոս դրուժ եղբարներն որ իրան ժլատ մարդկանց ողջոյն ասեն, 17 Եւ կըյորդորէ որ հերձուածներ եւ գայթակղութիւններ չինողներեցին զգոյշ լինին, 21 Եւ ուրիշ տեղ մարդկանցից ողջոյն տալուցն եւեւ Աստուծոյ պատիւ եւ փառք տալով վերջ կանէ:

1 Յանձնումեմ ձեզ մեր փիլիքքոյրըն, որ կենքրացոց եկեղեցոյն սպասաւոր է[1]:

2 Որ նորան ընդունիք Տէրով[2], ինչպէս որ սրբըներուն արժան է. եւ նորան ձեռն տուօղ էլէք՝ ինչ հարկաւոր բանի համար որ կանչէ ձեզ. պատճառն որ՝ նա էլ շատ մարդկանց ձեռն տուաւ, եւ յատուկ ինձ էլ:

3 Ողջոյն տուէք պրիսկային եւ

[31] Գործ. ԺԹ. 21: Վ.յր. 32: [32] Գործ. ԺԵ. 3: Վ.յր. 32: [33] Գործ. ԺԹ. 21: Ի. 22: Իգ. 17: [34] Ա Կորնթ. Ժգ. 1, 2: Բ Կորնթ. ը. 1: Թ. 2, 12: [35] Հռոմ. ԺԱ. 17: [36] Ա Կորնթ. Թ. 11: Գաղ. գ. 6: [37] Փիլէմ. գ. 17: [38] Հռոմ. ա. 11: [39] Փիլէմ. բ. 1: [40] Բ Կորնթ. ա. 11: Կող. գ. 12: [41] Բ Թես. գ. 2 [42] Բ Կորնթ. ը. 4: [43] Հռոմ. ա. 10: [44] Գործ. ԺԸ. 21: Ա Կորնթ. գ. 19: Ցոխ. գ. 15: [45] Ա Կորնթ. Ժգ. 18: Բ Կորնթ. է. 13: Բ Տիմ. ա, 16: Փիլէմ. 7, 20: [46] Հռոմ. ԺԶ. 20: Ա Կորնթ. Ժգ. 33: Բ Կորնթ. ԺԳ. 11: Փիլիպ. գ. 9: Ա Թես. ե. 23: Բ Թես. գ. 16: Եբր. ԺԳ. 20: [1] Գործ. ԺԸ. 18: [2] Փիլիպ. բ. 29: Ա Ցովհ. 5, 6:

ակիւզային՝ իմ գործընկերներիս Քրիստոս Յիսուսում[3]։

4 Որ իմ անձիս տեղակ իրանց վզներուն առաջ դրին, որ նորանցից ոչ մէկ մնակ ես եմ շնորհակալ՝ բայց հեթանոսների ամէն եկեղեցիներն էլ,

5 Նոյնպէս տանն [4](որ նրանց եղբայրական) սիրելոյս՝ որ առաքեալքն պատուէր է Քրիստոսում[5]։

6 Ողջոյն տուէք Մարիային՝ որ շատ աշխատանքով աշխատեց ձեր միջումն։

7 Ողջոյն տուէք անդրոնիկէին եւ յունիային՝ իմ ազգականներիս, եւ գերուեան ընկերներուս, որ առաքեալների մէջն երեւելի են՝ որ նաեւ Քրիստոսում էլան[6]։

8 Ողջոյն տուէք ամպղեայի իմ սիրելոյս Տէրով։

9 Ողջոյն տուէք ուրբանէին՝ իմ գործընկերիս Տէրով, եւ ստաքէին իմ սիրելոյս։

10 Ողջոյն տուէք ապէլլէին՝ որ ազնիւ է Տէրով։

11 Ողջոյն տուէք նորանց՝ որ արիստաբուլի տանէյն են։ ողջոյն տուէք հերովդիոնին՝ իմ ազգականիս։ ողջոյն տուէք նորանց, որ նարկիսէի տանէյն են՝ Տէրով։

12 Ողջոյն տուէք տրիփոնին եւ տրիփոսին՝ աշխատաւորներին Տէրով։ ողջոյն տուէք պերսիդէին սիրելոյն՝ որ շատ աշխատանքով աշխատեց Տէրով։

13 Ողջոյն տուէք ռուփոսին՝ որ ազնիւ[7] է Տէրով, եւ նորա եւ իմ մօրն։

14 Ողջոյն տուէք ասինկրիտին, փլեգոնտին, երմէին, պատրոբին, երմին, եւ եղբարներին՝ որ նորանց հետ են։

15 Ողջոյն տուէք փիլողոգին եւ յուլիային եւ նեռէային եւ նորա ոլիմպաս քրիստոսն եւ ամէն սրբերին՝ որ նորանց հետ են։

16 Ողջոյն տուէք իրար սուրբ համբուրմամբ[8]։ ողջոյն են տալիս ձեզ Քրիստոսի ամէն եկեղեցիներն։

17 Աղաչեմ եղբայրք, որ մտիկ տաք նորանց՝ որ երկպառաճներ եւ գայթակղեցնող իններ են շինում էն վարդապետութեան դէմ՝ որ դուք սովորեցիք[9] եւ հեռու քաշվեցէք նորանից[10]։

18 Պատճառն որ՝ էնպէսներն մեր Տէր Քրիստոսին չեն ծառայում, բայց իրանց փորին[11]։ եւ քաղցր խօսքերով եւ օրհնութեամբ նով խաբում են անմեղների սրտերն[12]։

19 Քանզի որ՝ ձեր հնազանդութիւնն ամէնի (ականջն) հասաւ[13]։ եւ սրամամբ ուրախ եմ ձեզ համար։ միայն թէ ուզում՝ որ դուք իմաստուն լինէք դէպի բարին եւ անմեղ չարի կողմանէ[14]։

20 Իսկ խաղաղութեան Աստուածն[15] կըխորտակէ սատանային ձեր ոտաց ներքեւն շուտով[16]։ մեր Տէր

[3] Գործ· ԺԸ, 2, 18, 26։ բ Տիմ· գ· 19։ [4] ա կորնթ· Ժգ· 19։ կող· գ· 15։ Փիլիմ· 2։ [5] ա կորնթ· Ժգ· 15։ [6] գաղ· ա· 22։ [7] բ Ցովհ· 1։ [8] ա կորնթ· Ժգ· 20։ բ կորնթ· Ժգ· 12։ ա Թես· ե· 26։ ա Պետր· ե· 14։ [9] Գործ· ԺԸ· 1, 5, 24։ ա Տիմ· զ· 3։ [10] ա կորնթ· ե· 9, 11։ բ Թես· գ· 6, 14։ բ Տիմ· գ· 5։ Տիտ· գ· 10։ բ Ցովհ· 10։ [11] Փիլիպ· գ· 19։ ա Տիմ· զ· 5։ [12] կող· բ· 4։ բ Տիմ· գ· 6։ Տիտ· ա· 10։ բ Պետ· բ· 3։ [13] Հռով· ա· 8։ [14] Մատթ· Ժ· 16։ ա կորնթ· Ժգ· 20։ [15] Հռով· ԺԶ· 33։ [16] Ծննդ· գ· 15։

Յիսուսի Քրիստոսի շնորհքն լինի ձեզ հետ[17]։

21 Ողջոյն ե տալիս ձեզ տիմոթէոս եղբայրն եւ իմ գործընկերս[18], եւ ղուկիոս[19] եւ յասոն[20] եւ սոսիպատրոս[21]՝ իմ ազգականներս։

22 Ողջոյն եմ տալիս ձեզ ես տերտիոսս էլ՝ որ էս թուղթը գրեցի Տէրոմից։

23 Ողջոյն ե տալիս ձեզ գայիոս[22]՝ որ իմ եւ ամէն եկեղեցոյ ընդունօղն է. ողջոյն ե տալիս ձեզ երաստոս[23]՝ քաղաքիս հոգաբարձուն, եւ կուարտոս եղբայրն։

24 Ա՛ստ Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն (լինի) ձեզ ամէնիդ հետ[24]. ամէն։

25 Ասյց նորան՝ որ կարօղ է ձեզ հաստատ պահել[25] իմ աւետարանիս պէս[26]՝ եւ Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պէս, էն խորհրդոյ յայտնութեանն պէս[27]՝ որ յաւիտենից ժամանակներից լուռ պահված էր[28],

26 Ասյց հիմիկ մարգարէից գրքերովն յայտնվեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս[29], եւ հաւատքի հնազանդութիւնըն (դարձնելոյ համար) ամէն հեթանոսների միջումն իմացուաւ տրվաւ[30].

27 Էն միայն իմաստուն Աստուծոյն[31], նորան պատիւ եւ փառք յաւիտեանս յաւիտենից Յիսուսի Քրիստոսի ձեռովն. ամէն։

---

[17] ա՛յր. 24։ [18] ա կոր՛ն. ժզ. 23։ [19] ղկոր՛ն. ժգ. 13։ [20] փիլէպ. գ. 24։ [21] թես. ե. 28։ [22] թես. գ. 18։ [23] ցայտ. իբ. 21։ [24] գործ. ժզ. 1։ կաղ. ա. 1։ [25] փիլէպ. բ. 19։ [26] թես. գ. 2։ ա Տի՛մ. ա. 2։ եբր. ժգ. 23։ [27] գործ. ժգ. 1։ [28] գործ. ժե. 5։ [29] գործ. ի. 4։ [30] ա կոր՛ն. ա. 14։ [31] գործ. ժի. 23։ բ Տի՛մ. գ. 20։ [32] ա՛յր. 20։ [33] թես. ե. 28։ [34] ա կոր՛ն. գ. 13։ [35] թես. գ. 13։ [36] թես. բ. 16։ գ. 3։ [37] ցաւ. 24։ [38] հռով. բ. 16։ [39] եփես. գ. 20։ [40] եփես. ա. 9։ գ. 3, 4, 5։ կաղ. ա. 27։ [41] ա կոր՛ն. բ. 7։ եփես. գ. 5, 9։ կաղ. ա. 26։ [42] եփես. ա. 9։ բ Տի՛մ. ա. 10։ Տիտ. ա. 2, 3։ ա պետր. ա. 20։ [43] գործ. զ. 7։ հռով. ա. 5։ ժե. 18։ [44] ա Տի՛մ. ա. 17։ զ. 15։ ցաւ. 25։

(Հաօմայեցոց վերջոյ գրվեցաւ նոպաստից, թվին ասբիւսագէն յետովն։)

# ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԸՆԾՐԵԼՈՑ

ԸՆ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԸՆԾԱՂԻՆ

## ԳԼՈՒԽ ԸՈՒԱՂՂԻՆ

*1 Ընաբեաքն իրան բարեւն եւ գոհութիւն տալուցն եաեւ, 10 կըյորդորէ Կորնթացիներն որ մին խօսք ունենան, 12 Իրանց միջ ելած հակառակութիւններն երեսներին կըթափէ։ 18 Ցոյց կըտայ թէ Աստուած իմաստուներուն իմաստութիւնն կըկորցնէ, 21 Ցիժար քարոզութիւնովն կապրեցնէ հաւատացեալներն, 26 Չէ թէ իմաստուներն եւ զօրաւորներն եւ ազնուականներն կըկոչէ, բայց 27, 28. Ցիմարներին, ակարներին եւ անարգվածներին ընտրեց։*

1 ՊՕՂՈՍ ՅԻՈՒՍԻՒ Վ[ր]իստոսի կանչված առաքեալ[1] Աստուծոյ կամքովը[2], եւ սոսթենէս եղբայր[3],

2 Աստուծոյ եկեղեցւոյդ՝ որ կըրնթոսում է[4], Յիսուս Վ[ր]իստոսումն սրբվածներիդ[5] կանչված սրբըներիդ[6] էն ամենին հետ որ մեր Տէր[7] Յիսուսի Վ[ր]իստոսի անունըն (իրանց) կանչումեն[8] ամեն նորանց եւ մեր տեղերումն[9]։

3 Շ նորհք (լինի) ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր հօրիցն՝ եւ Տէր Յիսուս Վ[ր]իստոսիցն[10]։

4 Ամեն ժամանակ գոհանում իմ Աստուածանից ձեզ համար[11], Աստուծոյ էն շնորհքներին համար՝ որ տրվված են ձեզ Յիսուս Վ[ր]իստոսումն։

5 Որ ամեն բանի միջ հարստացաք նորանով՝ ամեն խոսքով եւ ամեն գիտութենով[12]։

6 Ինչպէս որ հենց Աստուծոյ վկայութիւնն հաստատվեցաւ ձեր միջումն[13]։

7 Որ դուք չըպակասվիք իսկի մին շնորհքով էլ՝ եւ մեր Տէր Յիսուսի Վ[ր]իստոսի յայտնութեանն սպասսէք[14]։

[1] Հռով. ա. 1։ [2] բ Կորնթ. ա. 1։ Եփես. ա. 1։ Կող. ա. 1։ [3] Գործ. ԻԸ. 17։ [4] Ցաւոտ. 1։ [5] Ճաղ. ԺԱ. 19։ Գործ. ԺԱ. 9։ [6] Հռով. ա. 7։ բ Տիմ. ա. 9։ [7] ա Կորնթ. ը. 6։ [8] Գործ. Թ. 14, 21։ Իր. 16։ բ Տիմ. բ. 22։ [9] Հռով. գ. 22։ Ժ. 12։ [10] Հռով. ա. 7։ բ Կորնթ. ա. 2։ Եփես. ա. 2։ ա Պետր. ա. 2։ [11] Հռով. ա. 8։ [12] ա Կորնթ. ԺԲ. 8։ բ Կորնթ. ը. 7։ [13] ա Կորնթ. բ. 1։ բ Տիմ. ա. 8։ Յայտ. ա. 2։ [14] Փիլիպ. գ. 20։ Տիտ. բ. 13։ բ Պետր. գ. 12։ Կող. գ. 4։

8 Որ նա էլ հաստատ կըպահէ ձեզ մինչեւ վերջն[15], որ անմեղ լինիք մինչեւ մեր ՏԷր Յիսուսի Քրիստոսի օրն[16]։

9 Հաւատարիմ է Աստուած[17], որ զուք նորանով կանչվեցաք դէպի նորա որդին մեր ՏԷր Յիսուսի Քրիստոսի հաղորդութիւնն[18]։

10 Աղաչումեմ ձեզ եղբայրք՝ մեր ՏԷր Յիսուսի Քրիստոսի անունովն, որ ամէնքդ հնոյ մի խօսք ունենաք[19], եւ հերձուածք չըլինի ձեր միջումդ. հնչու որ՝ հնոց միտքի եւ միեւ կարծիքի մէջ հաստատուած էք։

11 Աղաչեմ՝ ես էն քաղաքինըրիցն իմացայ ձեզ համար՝ որ հակառակութիւններ կան ձեզանումդ։

12 Ասելն ես եմ ասում՝ որ ձեզանից ամէն մէկն ասում՝ թէ ես պօղոսեան եմ[20], եւ մէկէլն՝ թէ ես ապօղոսեան[21], եւ մէկէլն՝ թէ ես կեփասեան[22], եւ մէկէլն՝ թէ ես Քրիստոսեան։

13 Պա ուրեմն բաժանվա՞ծ է Քրիստոս[23]. միթէ պօղոս խաչվեցաւ ձեզ համար՝ կամ պօղոսի՞ անունովն մկրտվեցաք։

14 Գոհանում եմ իմ Աստուածանիցս՝ որ ձեզանից մինին չըմկրտեցի. բայց միայն կրիսպոսին[24] եւ գայիոսին[25], որ մինն չասէ,

15 Թէ զուք իմ անունովս մկրտվեցաք։

16 Յեւ տան ընէլն էլ մկրտեցի[26]. մին ուրիշը խակի չեմ գիտում, թէ մկրտեցի։

17 Պատճառն որ՝ Քրիստոս չուղարկեց ինձ մկրտելց, բայց աւետարանն քարոզելց. (եւ էն) ոչ թէ վարպետական խօսքերով[27], որ ունայն չըլինի Քրիստոսի խաչն։

18 Ինչու որ՝ խաչի խօսքն կորածներին համար[28] յիմարութիւն է[29], բայց մեզ փրկվածներիս համար[30]՝ Աստուծոյ զօրութիւն (է)[31]։

19 Ինչու որ գրված է. թէ իմաստունների իմաստութիւնն կըկորցնեմ, եւ խելացիների խորհուրդներըն կանաչգեմ[32]։

20 Յէ՞ որտեղ կայ իմաստուն, որտեղ կարդացօղ, որտեղ էս աշխարհքիս քննօղ[33]. չէ՞ որ Աստուած էս աշխարհքիս իմաստութիւնըն յիմարացուց[34]։

21 Որպահամար որ՝ Աստուծոյ իմաստութենովն աշխարհք իմաստութենով չըճանաչեց Աստուծոյն[35]. Աստուած կամեցաւ որ յիմար քարոզութենով ապրեցնէ հաւատացեալներին։

22 Հոյդ որովհետեւ հրէաներն նշան են ուզում[36], եւ հեթանոսներն իմաստութիւն են խնդրում.

---

15 ա թես. գ. 13։ 16 կող. ա. 22։ ա թես. ե. 23։ 17 եսայ. խե. 7։ ա կորնթ. ժ. 13։ ա թես. ե. 24։ բ թես. գ. եբր. 3. ժ. 23։ 18 ցովհ. ժե. 4։ ժէ. 21։ ա ցովհ. ա. 3։ գ. 13։ 19 հռոմ. ժբ. 16։ ժե. 5։ բ կորնթ. ժգ. 11։ փիլիպ. բ 2։ գ. 16։ ա պետր. գ. 8։ ա կորնթ. ժա. 18։ 20 ա կորնթ. գ. 4։ 21 գործ. ժը. 24։ ժի. 1։ ա կորնթ. ժգ. 12։ 22 ցովհ. ա. 42։ 23 բ կորնթ. ժա. 4։ եփես. գ. 5։ 24 գործ. ժը. 8։ 25 հռոմ. ժգ. 23։ 26 ա կորնթ. ժգ. 15. 17։ 27 ա կորնթ. բ. 1, 4, 13։ բ պետր. ա. 16։ 28 բ կորնթ. բ. 15։ 29 գործ. ժէ. 18։ ա կորնթ. բ. 14։ 30 ա կորնթ. ժե. 2։ 31 հռոմ. ա. 16։ ա կորնթ. ա. 24։ 32 ցոբ. ե. 12, 13։ եսայ. խի. 14։ երես. ը. 9։ 33 եսայ. լգ. 18։ 34 ցոբ. ժբ. 17, 20, 24։ եսայ. խգ. 25։ հռոմ. ա. 22։ 35 հռոմ. ա. 20, 21, 28։ լուսն. ժա. 35։ գոյ. ժ. 21։ 36 մարկ. ժբ. 38։ ժգ. 1։ մարկ. ը. 11։ գոյ. ժա. 16։ ցովհ. գ. 48։

23 Ա՛ն[ք] կը քարոզենք խաչված Քրիստոսին, հրէաներուն համար գայթակղութի՛ւն[37] եւ հեթանոսներուն համար յիմարութի՛ւն[38]։

24 Բայց հենց էն հրէաներուն եւ հեթանոսներուն համար, որ կանչ֊ված են, Քրիստոսին (քարոզու֊մենք) Աստուծոյ զօրութի՛ւն[39] եւ Աստուծոյ իմաստութի՛ւն[40]։

25 Պատճառն որ՝ Աստուծոյ յի֊մարն աւելի իմաստուն է քան թէ մարդիկ. եւ Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան թէ մարդիկ։

26 Նայէ հենց ձեր կոչումին տեսէք ե՛ղբարք, որ (ջրկան) ո՛չ շատ իմաս֊տուններ մարմնոյ կողմանէ, եւ ո՛չ շատ զօրաւորներ, եւ ո՛չ շատ ազ֊նուականներ[41]։

27 Բայց էս աշխարհքիս յիմար֊ներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ իմաստուններուն. եւ աշխարհ֊քիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ զօրաւորներուն։

28 Էս աշխարհքիս ցած մարդ֊կանց եւ անարգվածներուն Աստուած ընտրեց[42] եւ ոչինչներին[43]՝ որ միւս բան լինողներուն ոչինչացնէ[44]։

29 Որ իսկի մին մարմին չըպար֊ծենայ Աստուծոյ առաջին[45]։

30 Ինչու՞ որ՝ նորանից դուք էք Յիսուս Քրիստոսում՝ որ Աստուա֊ծանից մեզ համար էլաւ իմաստու֊թի՛ւն[46], արդարութի՛ւն[47] եւ սըր֊բութի՛ւն[48] եւ փրկութի՛ւն[49]։

31 Որ ինչպէս որ էլ գրված է. Նա որ պարծենում՝ Տէրով պար֊ծենայ[50]։

## Գ·Ի

1 Պօղոս ցոյց կըտայ իրան քարոզութիւնն չէ թէ իմաստութեան բարձր եւ խարերայ խօսքերով էլաւ, 5 Բայց Աստուծոյ զօրութենովն. եւ այնքան բարձր է 6 Աշխարհիս իմաստութենէն, եւ 9 Մարդոյ կարողութենէն, որ 14 Մարմնաւոր մարդն չի՛ կարող ընդունել նորան եւ դիտել։

1 Էս էս էլ ե՛ղբարք՝ ձեզ մօտ եկի, ո՛չ թէ իմաստութեան բարձր խօսքերով[1] Աստուծոյ վկայութի֊նն ձեզ պատմելոյ[2]։

2 Պատճառն որ՝ միտքս չէի դրած՝ մին ուրիշ բան գիտել ձեր միջումդ՝ բայց միայն Յիսուս Քրիստոսին՝ եւ նորան խաչված[3]։

3 Էս էս տկարութենով եւ շատ վախով եւ դողութենով[4] էլայ ձեզ մօտ[5]։

4 Էս իմ խօսքս եւ քարոզու֊թիւնս՝ ո՛չ թէ իմաստութեան խա֊բեայ խօսքերով էլաւ[6], այլ Հոգ֊ով նորոգութենովն եւ զօրութեն֊նովը[7]։

[37] Ես. ը. 14։ Ա Պետր. ժա. 6։ ժգ. 57։ Գործ. բ. 34։ Յովհ. ը. 61, 67։ Հռոմ. թ. 32։ Գաղ. ե. 11։ ա Պետր. բ. 8։ [38] Ա Կոր. ա. 18։ ա Կորնթ. բ. 14։ [39] Հռոմ. ա. 4, 16։ Ա Կոր. ա. 18։ [40] Կող. բ. 3։ [41] Յովհ. է. 48։ [42] Մատթ. ժա. 25։ Յակ. բ. 5։ Սաղմ. ը. 2։ [43] Հռոմ. դ. 17։ [44] ա Կորնթ. բ. 6։ [45] Հռոմ. գ. 27։ Եփես. բ. 9։ [46] Ա Կոր. ա. 24։ [47] Եբրայ. իդ. 5, 6։ Հռոմ. դ. 25։ բ Կորնթ. ե. 21։ Փիլիպ. գ. 9։ [48] Յովհ. ժէ. 19։ [49] Եփես. ա. 7։ [50] Երեմ. թ. 23, 24։ բ Կորնթ. ժ. 17։ [1] ա Կորնթ. ա. 17։ Ա Պետր. 4, 13։ բ Կորնթ. ժ. 10։ ժա. 6։ [2] ա Կորնթ. ա. 6։ [3] Գաղ. գ. 14։ Փիլիպ. գ. 8։ [4] բ Կորնթ. գ. 7։ ժ. 1, 10։ ժա. 30։ Ժբ. 5, 9։ Գաղ. գ. 13։ [5] Գործ. Ժբ. 1, 6, 12։ Ա Կոր. 1։ ա Կորնթ. ա. 17։ բ Պետր. ա. 16։ [7] Հռոմ. ժե. 19։ աթես. ա. 5։

5 Որ ձեր հաւատքն մարդկանց իմաստութեան վրայ չլինի՝ բայց Աստուծոյ զօրութեան[8]։

6 Իմաստութիւն ենք խօսում կատարեալներին հետ[9], չէ թէ էս աշխարհքիս իմաստութիւնը[10], եւ ոչ էլ էս աշխարհքիս իշխանների՝ որ պիտի խափանուին[11]։

7 Հապա Աստուծոյ իմաստութիւնն ենք խօսում՝ ծածուկ խորհրդով, որ Աստուած յաւիտենից առաջ սահմանեց մեր փառաց համար[12]։

8 Որ նորան էս աշխարհքի իշխաններից ոչ ով չճանաչեց[13], ինչու որ՝ եթէ ճանաչած լինէին՝ էլ փառաց Տէրն իսկի խաչ չէին հանել[14]։

9 Հապա ինչպէս որ էլ գրված է. (թէ) ինչ որ աչք չտեսաւ՝ եւ ականջ չլսեց՝ եւ մարդոյ սիրտն չընկաւ՝ էն պատրաստեց Աստուած իրան սիրողներին համար[15]։

10 Հապա մեզ Աստուած յայտնեց իրան հոգովն[16], ինչու որ՝ հոգին ամէն բան քննում է, եւ Աստուծոյ խոր բաներըն էլ։

11 Պատճառն որ՝ մարդկանցից ով է նա՝ որ մարդոյ բանըն գիտենայ՝ եթէ ոչ մարդոյ հոգին, որ նորա նում է[17]. էնպէս էլ Աստուծոյ բաներն ոչ ով չի գիտում, եթէ ոչ Աստուծոյ հոգին[18]։

12 Հապա մենք ոչ թէ էս աշխարհքիս հոգին առինք, այլ էն հոգին՝ որ Աստուածանից է[19]. որ ճանաչենք էն շնորհքըն՝ որ Աստուածանից տրվաւ մեզ։

13 Որ էս էլ խօսում ենք՝ չէ թէ մարդկանցից սովրած վարպետական խօսքերով[20], բայց (սուրբ) հոգոյ վարդապետութեամբ՝ (եւ) հոգեւորներըն հոգեւորներին հետ համեմատում ենք։

14 Պատճառն որ՝ մարմնաւոր մարդն Աստուծոյ հոգոյ բաներըն չի ընդունում[21]. ինչու որ՝ յիմարութիւն է նորա առաջին[22], եւ չի կարող գիտել՝ որ հոգեւոր կերպով պէտք է քննվի[23]։

15 Հապա հոգեւոր մարդն ամէն բան քննում է[24] եւ ինքն իսկի մէնից էլ չի քննվում։

16 Ապա ով է որ Տէրի միտքըն գիտաց, որ բան սովորցնէ նորան[25]. բայց մենք Քրիստոսի միտքըն ունենք[26]։

[8] բ Կոր. գ. 7։ ը. 7։ [9] ա Կոր. ժգ. 20։ Եփես. դ. 13։ Փիլիպ. գ. 15։ Եբր. հ. 14։ [10] ա Կորնթ. ա. 20։ գ. 19։ Ա Յոբ. 1։ Ա Յոբ. 13։ բ Կորնթ. ա. 12։ Ճակ. գ. 15։ [11] ա Կորնթ. ա. 28։ [12] Հռոմ. ժգ. 25, 26։ Եփես. գ. 5, 9։ Կող. ա. 26։ բ Տիմ. ա. 9։ [13] Մատթ. ժա. 25։ Ճառն. է. 48։ Գործ. ժգ. 27։ բ Կորնթ. գ. 14։ [14] Ղուկ. իգ. 34։ Գործ. գ. 17։ Ճառն. ժգ. 3։ [15] Եսայ. կգ. 4։ [16] Մատթ. ժգ. 11։ ժգ. 17։ Ճառն. ժգ. 26։ ժգ. 13։ ա Ճառն. բ. 27։ [17] Ասաղ. ի. 27։ իե. 19։ Երեմ. ժե. 9։ [18] Հռոմ. ժա. 33, 34։ [19] Հռոմ. ը. 15։ [20] բ Պետր. ա. 16։ ա Կորնթ. ա. 17։ Ա Յոբ. 4։ [21] Մատթ. ժգ. 23։ [22] ա Կորնթ. ա. 18, 23։ [23] Հռոմ. ը. 5, 6, 7։ Ճառք. 19։ [24] Ասաղ. իը. 5։ ա Թես. ե, 21։ ա Ճառն. գ. 1։ [25] Ճ-ի. ժե. 8։ Եսայ. խ. 13։ Երեմ. իգ. 18։ Հռոմ. ժա. 34։ [26] Ճառն. ժե. 15։

## ԳԼ · Գ

2 Ցղաբներին կամ տալ պէտք է, չէ թէ կերակուր։ 3 Առաքեալն ցոյց կուտայ թէ կռնեն եւ նախանձն մին նշան է մարմնաւոր լինելոյն։ 7 Ցնկօղն եւ ջուր առնօղն մին բան չէին։ 9 Պաշտօնեաներն Աստուծոյ գործընկերներ են։ 11 Ո՛չ ով ՔրիստոսԷ ուրիշ հիմն չի կարող դնել։ 16 Հաւատացեալներն Աստուծոյ տաճար են, 17 Նորանը որ՝ Աստուծոյ տաճար են պէտք է որ սուրբ լինին։ 19 Իմ աշխարհքիս իմաստութիւնն յիմարութիւն է Աստուծոյ առաջին։

1 Եւ ես եղբարք՝ չըկարացի ձեզ հետ խօսել ինչպէս հոգեւորներուն հետ[1], այլ ինչպէս մարմնաւորներուն հետ[2]։

2 Ինչպէս տղաներուն Քրիստոս սուտ[3] կաթը տուի ձեզ ուտել եւ չէ թէ կերակուր[4], ինչու որ՝ դեռ չէիք կարող, եւ հիմիկ էլ կարող չէք[5]։ Նրա համար որ դեռ մարմնաւոր էք։

3 Որովհետեւ դեռ հիմիկ կռիւ եւ նախանձ կայ ձեզանում[6]. չէ՞ որ մարմնաւոր էք եւ մարդկանց կերպով էք վարվում։

4 Երբոր ձեզանից մինն ասում՝ Թէ ես պօղոսեան եմ, եւ մէկէլն՝ Թէ ես ապողոսեան[7]. չէ՞ որ դուք մարդիկ էք. ապա ո՞վ է պօղոսն կամ ո՞վ է ապողոսն։

5 Պաշտօնեաներ (հն)՝ որ նոքանց ձեռնով հաւատացիք[8], եւ ամէն մէկն՝ ինչպէս որ Տէրն տուաւ[9]։

6 Ես տնկեցի[10], ապողոսն ջուր տուաւ[11], բայց Աստուած մեծացուց[12]։

7 Ուրեմն ո՛չ նա՝ որ տնկեց, մին բան է[13], եւ ո՛չ նա՝ որ ջուր տուաւ, բայց Աստուած որ մեծացրուց։

8 Այ՝ որ տնկեց եւ նա՝ որ ջուր տուաւ, մին (բան) են, բայց ամէն մէկն իրան վարձքն կառնէ իրան աշխատանքի չափովը[14]։

9 Ինչու որ՝ մենք Աստուծոյ գործընկեր ենք[15]. դուք Աստուծոյ գործն էք, Աստուծոյ շինվածն էք[16]։

10 Աստուծոյ շնորհքի չափովն՝ որ ինձ տրվված է[17], իմաստուն ճարտարապետի պէս հիմնն դրի[18], բայց ուրիշն է՝ որ շինում։ Միայն թէ ամէն մէկն լաւ մտիկ տայ՝ Թէ ինչպէս շինէ[19]։

11 Ինչու որ՝ ո՛չ ով ուրիշ հիմունք չեկարող դնել՝ քան Թէ էն որ գրված է[20], որ է Յիսուս Քրիստոսն[21]։

12 Թէ որ մինն էս հիմունքիս վերայ շինէ ոսկի, արծաթ, ազնիւ քարեր, փայտ, խոտ, եղեգն (ղամիշ),

13 Իւրաքանչիւր մէկի գործքն պիտի

---

[1] ա Կորնթ. բ. 15։ [2] ա Կորնթ. բ. 14։ [3] Եբր. ե. 13։ [4] ա Պետր. բ. 2։ [5] Յովհ. ժզ. 12։ [6] ա Կորնթ. ա. 11։ Ժա. 18։ Գաղ. ե. 20, 21։ Յակ. գ. 16։ [7] ա Կորնթ. ա. 12։ [8] ա Կորնթ. դ. 1։ [9] ա Կորնթ. գ. 3։ [10] Հռոմ. ժբ. 3, 6։ ա Պետր. գ. 11։ [10] Գործ. ժբ. 4, 8, 11։ ա Կորնթ. դ. 15։ Թի. 1։ ժե. 1։ [11] ա Կորնթ. ժ. 14, 15։ [12] Գործ. ժբ. 24, 27։ ԺԹ. 1։ [13] ա Կորնթ. ա. 30։ ժե. 10։ [14] ա Կորնթ. գ. 5։ [15] ա Կորնթ. ժբ. 11։ Գաղ. գ. 3։ [16] Սաղմ. կբ. 12։ Հեսու. բ. 6։ ա Կորնթ. գ. 5։ Գաղ. գ. 4, 5։ [17] Յովհ. բ. 23։ իբ. 12։ [18] Գործ. ժե. 4։ ա Կորնթ. գ. 1։ [19] Եփես. բ. 20։ Կող. բ. 7։ Եբր. գ. 3, 4։ ա Պետր. բ. 5։ [20] Հռոմ. ա. 5։ ժբ. 3։ [21] Հռոմ. ժե. 20։ ա Կորնթ. գ. 15։ Յովհ. իա. 14։ [21] ա Պետր. գ. 11, [20] Եսայ. ԽԸ. 16։ Լամխ. ժգ. 18։ ա Կորնթ. ժա. 4։ Գաղ. ա. 7։ [21] Եփես. բ. 20։

յայտնվի[22]. ինչու որ՝ օրն կերևւսցնէ[23], ինչու որ՝ կրակով պիտի յայտնվի[24]։

14 Այս ամեն մէկի գործքըն թէ ինչպէս է՝ կրակն կըփորձէ։

15 Թէ որ մէնի գործքն՝ որ շինեց, հաստատ կենայ՝ վարձք կառնէ[25]. եւ թէ որ մէնի գործքն այրվի՝ վնաս կըքաշէ, բայց ինքն կապրի. բայց էնպէս՝ ինչպէս որ կրակով[26]։

16 Չէք գիտում՝ որ դուք Աստուծոյ տաճար էք, եւ Աստուծոյ Հոգին բնակված է ձեզանում[27]։

17 Թէ որ մինն Աստուծոյ տաճարըն ապականէ, նորան էլ Աստուած կապականէ. ինչու որ՝ Աստուծոյ տաճարն սուրբ է՝ որ էն դուք էք։

18 Չընչինի որ մինն իրան անձըն խաբէ. թէ որ ձեզանից մինն կամենայ իմաստուն լինիլ էս աշխարքումս, թող նա յիմար լինի՝ որ իմաստուն լինի[28]։

19 Պատճառն որ՝ էս աշխարհքիս իմաստութիւնն յիմարութիւն է Աստուծոյ առաջին[29]. ինչու որ՝ գըրված է՝ (Թէ) իմաստուններին կըբռնէ իրանց խորագիտութեան մէջն[30]։

20 Եւ մին էլ՝ Թէ Տէրն ճանաչում է իմաստուններուն մտածմունքներըն, որ ունայն են[31]։

21 Ուրեմն՝ չըլինի որ մարդկանցից մինն պարծենայ[32]։

22 Պատճառն որ՝ ամեն բան ձեր է. թէ պօղոս, թէ ապօղոս, թէ կեփաս, թէ աշխարհք, թէ կեանք, թէ մահ, թէ հիմիկվընօր եւ թէ նոր գալու բաներն, ամեն բան ձերն է[33]։

23 Դուք Քրիստոսին (էք)՝ եւ Քրիստոս Աստուծոյն[34]։

## Կ. Գ

1 Առաքեալներն Քրիստոսի պաշտօնեաներ եւ Աստուծոյ խորհուրդների տնտեսներըն պէտք է որ համարենք։ 7 Քրիստոնեաներն մին բան չի կայ որ չէն առել։ 9 Առաքեալներն տեսարան էլած էին աշխարհքին, հրեշտակներին եւ մարդկներին, 13 Աշխարհքի առջեւ խախք եւ խայտառակ. 15 Բայց Քրիստոսով մեզ հայրեր են, 16 Որ նորան հետ պէտք է որ գնանք։

1 Թող մարդիք էսպէս համարեն մեզ՝ ինչպէս Քրիստոսի պաշտօնեաներըն[1] եւ Աստուծոյ խորհուրդների տնտեսներըն[2]։

2 Հիմիկ տնտեսների միջումն էն են խնդրում՝ որ մինն հաւատարիմ գտնըվի։

3 Բայց ինձ համար էս էլ հեշտ բան է՝ որ ձեզանից դատվիմ՝ կամ իսկի մին մարդուց. էլ ես իմ անձըս չեմ քննում։

4 Ինչու որ՝ իմ անձիս համար բան չեմ գիտում. բայց ոչ թէ սրանով արդարանում եմ[3], պատճառն որ՝ նա՝ որ ինձ քննում, Տէրն է։

5 Արեսհամար՝ ժամանակից ա-

---

[22] ա Կոր. գ. 5։ [23] ա Պետր. ա. 7։ գ. 12։ [24] Ղուկ. բ. 35։ [25] ա Կորնթ. գ. 5։ [26] Յուդ. 23։ [27] ա Կորնթ. զ. 19։ բ Կորնթ. զ. 16։ Եփես. բ. 21, 22։ Եբր. գ. 6։ ա Պետր. բ. 5։ [28] Ա Կորնթ. ե. 7։ Եսայ. ե. 21։ [29] ա Կորնթ. ա. 20։ բ. 6։ [30] Յոբ. ե. 13։ [31] Սաղմ. զդ. 11։ [32] ա Կորնթ. ա. 12։ գ. 6։ վէր. 4, 5, 6։ [33] բ Կորնթ. գ. 5, 15։ [34] Հռովմ. ժգ. 8։ ա Կորնթ. ժա. 3։ բ Կորնթ. ժ. 7։ Գաղ. գ. 29։ [1] Մարկ. իգ. 45։ ա Կորնթ. գ. 5։ Շար. 17։ բ Կորնթ. զ. 4։ Կող. ա. 25։ [2] Ղուկ. ժբ. 42։ Տիտ. ա. 7։ ա Պետր. գ. 10։ [3] Յոբ. թ. 2։ Սաղմ. ճվ. 3։ ճկգ. 2։ Եսայ. իա. 2։ Հռովմ. գ. 20։ դ. 2։

ասէ մի գատէքդ[4]. մինչեւ որ Տէրն կըգայ՝ որ խաւարի ծածուկ բաներըն կըբերէ լուսոյ մէջ, եւ սըրտերի խորհուրդներըն կըյայտնէ[5]. եւ ա-պա ամէն մէկին գովասանք կըլինի Աստուածմանից[6]:

6 Այս բանըս եղբարք՝ իմ անձիս եւ ապողոսին վերայ առակով ասա-ցի՝ ձեզ համար[7]. որ մեզանից սովո-րիք գրվածքին աւելի բան չհմա-նալ[8]. որ չըլինի թէ մարդ ընկերի վերայ հպարտանայ ընկերի պատճա-ռանի[9]:

7 Ապա ո՞վ է՝ որ քեզ կըքննէ. ի՞նչ ունիս դու՝ որ էն չես առել[10]. եւ թէ որ առեւես՝ ինչո՞ւ ես պար-ծենում՝ չառածի պէս:

8 Հէնց հիմիկ կըշտացել[ք] եւ հէնց հիմիկ հարստացա[ք][11], առանց մեզ թագաւորելոյք. եւ երանի թէ թագաւորէիք, որ մենք էլ ձեզ հետ թագաւորէինք:

9 Ինձ էապէս է երեւում՝ թէ Աստուած մեզ առաքեալներիս շատ յետին արաւ՝ մահապարտների պէս[12], ինչու որ աշխարհքի տեսա-բան էլանք, հրեշտակաց էլ՝ մարդ-կանց էլ[13]:

10 Մենք[14] յիմար (էլանք) Քրիստոսի համար[15], եւ դուք՝ իմաս-տուն Քրիստոսումն. մենք տկար՝ եւ դուք զօրաւոր[16]. դուք փառաւոր-ված եւ մենք անարգված:

11 Մինչեւ էս օրվան ժամանակս սովեցինք եւ ծարաւեցինք[17], եւ մերկ գնացինք[18] եւ գլխներս զարկվեցա[19] եւ հանգստատեղիւն չըգտինք:

12 Այլ աշխատեցինք մեր ձեռներ-բովս[20]. բամբասուելին մեզ՝ եւ մենք օրհնուելինք, հալածուելին՝ եւ մենք սիրով համբերուելինք[21]:

13 Հայհոյուելին՝ եւ մենք (նորանց համար) աղաչանք էինք անում. մինչ-պէս խայտառակութեան օրինակ է-լանք ամէն աշխարհքին՝ մինչեւ հի-միկ ընդդէմ լինելով ամէն մարդկանց առաջին[22]:

14 Չէ թէ ձեզ ամօթ անելոյ հա-մար եմ էս գրում. բայց ինչպէս իմ սիրելի որդիքներս խրատում[23]:

15 Թէ եւ հազարաւոր վարդա-պետներ ունենաք Քրիստոսումն՝ բայց ոչ թէ շատ հայր. ինչու որ Յիսուս Քրիստոսումն ես աւետա-րանովն ծնայ ձեզ[24]:

16 Աղերսեմ աղաչում եմ ձեզ՝ որ ինձ նմանող լինիք, ինչպէս որ ես էլ Քրիստոսի[25]:

17 Տրաքամար տիմոթէոսին ու-ղարկեցի ձեզ մօտ[26], որ իմ սիրելի եւ հաւատարիմ որդի է Տէրով[27], որ ձեր մտքներդ բերէ իմ ճանա-

[4] Ա Կոր. է. 1: Հռոմ. բ. 1, 16: Ժղ. 4, 10, 13: Յայտ. ի. 12: [5] ա Կորնթ. գ. 13: [6] Հռոմ. բ. 29: բ Կորնթ. ե. 10: [7] ա Կորնթ. ա. 12: գ. 4: [8] Հռոմ. Ժբ. 3: [9] Ի Կորնթ. գ. 21: ե. 2, 6: [10] Յովհ. գ. 27: Յակ. ա. 17: ա Պետր. գ. 10: [11] Յայտ. գ. 17: [12] Սղմ. խգ. 22: Հռոմ. բ. 36: ա Կորնթ. ժե. 30, 31: բ Կորնթ. գ. 11: զ. 9: [13] Եբր. ժ. 33: [14] ա Կորնթ. բ. 3: [15] Գործ. ժե. 18: իզ. 24: ա Կորնթ. ա. 18, Եփես. բ. 14: գ. 18: գ Թես. ի. 11: [16] բ Կորնթ. ժգ. 9: [17] բ Կորնթ. դ. 8: ժա. 23–27: Փիլիպ. գ. 12: [18] Յովհ. իբ. 6: Հռոմ. բ. 35: [19] Գործ. ժգ. 18: իգ. 2: [20] Գործ. Ժբ. 3: ի. 34: ա Թես. բ. 9: բ Թես. գ. 8: ա Տիմ. գ. 10: [21] Ա Կորնթ. ե. 44: Գաղ. զ. 28: իգ. 34: Գործ. է. 59: Հռոմ. Ժբ. 14, 20: ա Պետր. բ. 23: գ. 9: [22] Ովբ. գ. 45: [23] ա Թես. բ. 11: [24] Գործ. Ժբ. 11: Հռոմ. Ժե. 20: ա Կորնթ. գ. 6: Գաղ. գ. 19: Փիլիպ. 10: Յակ. ա. 18: [25] ա Կորնթ. Ժա. 1: Փիլիպ. գ. 17: ա Թես. ա. 6: բ Թես. գ. 9: [26] Գործ. Ժի. 22: ա Կորնթ. Ժգ. 10: Փիլիպ. բ. 19: ա Թես. գ. 2: [27] ա Տիմ. ա. 2: բ Տիմ. ա. 2:

պարհներըն՝ որ Յիսուս Քրիստոսումն են[28]. ինչպէս որ ամէն տեղ ամէն եկեղեցիներումն[29] սովորցնումեմ[30]։

18 Ի՛նձ քանիսն ամբարտաւանութեամբ պարծենումեն՝ իբր թէ ես չըպիտի գամ ձեզ մօ[31]։

19 Այլ կըգամ ես մօտիկ ժամանակներումս[32]՝ թէ որ Տէրն կամենայ[33], եւ միաքս կառնեմ ո՛չ թէ գոռոզացածներուն խօսքերըն՝ այլ զօրութիւնըն։

20 Ինչու որ՝ Աստուծոյ արքայութիւնն ո՛չ թէ խօսքերով է՝ այլ զօրութեամբ[34]։

21 Ա՛պա ի՞նչպէս կը կամենում, գաւազանո՞վ գամ ձեզ մօ[35], թէ սիրով եւ հեզութեան եւ արդարութեան հոգովն։

## Կ Ո · Ե

1 Իրան հօր կինն ունեցող մարդն, Եփեսոսի նորանոյ պարծանքին համար, 7 պէտք է որ դէն քցվի հին խմորը։ 9 Շարպարծութիւն անօդ եղբայր առնուանվածներին հետ պէտք չէ խառնըվիլ։

1 Իսկի ձեր միջումդ ինչո՛ւ պոռնկութիւն է անուանվում, եւ էնպէսի պոռնկութիւն՝ որ հեթանոսների միջումն էլ չըկայ[1], էնպէս որ մին իրան հօր կինն[2] ունենայ[3]։

2 Ու դուք գոռոզացած էք[4] եւ աւելի սուգ չէք մանում[5] որ ձեր միջից վեր առնըվի նա՝ որ էն բանն գործեց։

3 Իմ թէ եւ մարմնովս հեռու եմ, բայց հոգովս մօտիկ եմ[6]. եւ արդէն որպէս թէ ներկայ եմ՝ էն որ էս բանս գործեց՝

4 Ի՛մ Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ ձեր եւ իմ հոգով, միանալ ժողովվելով ժամանակումն՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրութեան հետ[7],

5 Էնպէսին մատնեմ[8] սատանայի ձեռքն՝ որ մարմինն սատակվի, որ հոգին ապրի մեր Տէր Յիսուսի Քրիստոսի օրումն։

6 Ձեր պարծանքդ լաւ չէ[10]. չէ՞ք գիտում՝ որ մին փոքր խմոր ամէն շաղախվածըն խմորացնում[11]։

7 Մէ՛ն քցեցէք հին խմորըն՝ որ նոր շաղախված լինէք, ինչպէս որ դուք չը խմորված էք. պատճառն որ՝ Քրիստոս մեզ համար[12] զատիկ (գառն) մորթվեցաւ[13]։

8 Արհամարհ ոտն կատարենք[14]. ո՛չ թէ հին խմորով[15], եւ ո՛չ թէ չարութեան եւ չարագործութեան

---

[28] ա Կոր. ժա. 2։ [29] ա Կորնթ. ժգ. 33։ [30] ա Կորնթ. է. 17։ [31] ա Կորնթ. ե. 2։ [32] Գործ. ժթ. 21։ ա Կորնթ. ժգ. 5։ բ Կորնթ. ա. 15, 23։ [33] Գործ. ժը. 21։ Հռով. ժե. 32։ Եբր. զ. 3։ Յակ. գ. 15։ [34] ա Կորնթ. բ. 4։ ա Թես. ա. 5։ [35] բ Կորնթ. ժ. 2։ ժգ. 10։ [1] Եփես. ե. 3։ [2] Ղեւտ. ժը. 8։ բ Օրին. իբ. 30։ իե. 20։ [3] բ Կորնթ. է. 12։ [4] ա Կորնթ. գ. 18։ [5] բ Կորնթ. է. 7, 10։ [6] Կող. բ. 5։ [7] Մատթ. ժզ. 19։ ժը. 18։ Յովհ. ի. 23։ բ Կորնթ. բ. 10։ ժգ. 3, 10։ [8] Յոբ. բ. 6։ Սաղմ. ճԺ. 6։ ա Տիմ. ա. 20։ [9] Գործ. իզ. 18։ [10] Գաղ. ե. 9։ բ Տիմ. բ. 17։ [11] ա Կորնթ. գ. 21։ գ. 19։ Յակ. գ. 16։ [12] ա Կորնթ. ժե. 3։ ա Պետր. ա. 19։ Յայտ. է. 6, 12։ [13] Յովհ. ժԹ. 14։ [14] Եբր. ժը. 15։ ժգ. 6։ [15] բ Օրին. ժզ. 3։

խմորովն[16], բայց արդարութեան եւ ճշմարտութեան չբխմորվածովն։

9 Պրեցի ձեզ էգ թղթովս՝ որ չբխառնըվիք պոռնիկներուն հետ[17]։

10 Եւ ոչ՝ թէ ես աշխարհքիս[18] պոռնիկներուն հետ, կամ ագահներուն հետ, կամ յափշտակողներուն հետ, կամ կռապաշտներուն հետ[19]. ապա թէ չէ՝ պէտք էր ձեզ՝ որ հենց աշխարհքիցս դուրս գնայիք[20]։

11 Այլ հիմիկ գրեցի ձեզ՝ որ չբխառնըվիք. թէ որ միւնն՝ որ եղբայր է անուանված[21], կամ պոռնիկ լինի, կամ ագահ, կամ բամբասող կամ հարբեցող, կամ յափշտակող, հնոպիսոյն հետ հաց էլ մի ուտէք[22]։

12 Ինձ ի՞նչ պէտք է՝ որ դրսինները դատեմ[23]. չէ՞ որ դուք ներսինները պիտի դատէք[24]։

13 Եւ դրսինները Աստուած կը դատէ. (դուք) հարցը ձեր միջիցն վեր առէք[25]։

## ԳԼ · Ը

1 Կորնթացիներն զգուշանն իրանց եղբայրներին՝ նորանք անիրաւների առաջին դատելոյ համար, 6 եւ հն էլ անհատաւանների մէջ. 9 Անիրաւներն Աստուծոյ արքայութիւնն չէն կարող ժառանգել. 15 Քրիստոսեանների մարմինները Քրիստոսի անդամներ են, 19 եւ Սուրբ Հոգոյ տաճար են, 16, 17 Ընտահամար պէտք է նորանց չի՛ապականել իրանց մարմիններն՝ բայց՛ սրբացնել։

1 Ձեզանից միւնն՝ թէ որ բան ունենայ իրան ընկերին հետ, համարձակվո՞ւմ՝ որ անիրաւների առաջին գատաստան անէ եւ ոչ թէ սրբերի առաջին։

2 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ սրբերն աշխարհքըս կըդատեն[1]. եւ թէ որ ձեզանով աշխարհքն կըդատվի՝ ապա չէք արժան՝ որ ցած բաների վերայ գատաստան անէք։

3 Չէք գիտում որ մենք հրեշտահներըն կըդատենք[2]. էլ ո՛րքան աւելի երկրաւոր բաներըն։

4 Երկրաւոր բաների համար թէ որ գատաստան ունիք՝ եկեղեցոյ ցած մարդկանցըն ձեզ համար գատաւոր նստացրէք[3]։

5 Ձեր ամօթի համար եմ ասում. էլ էնքան միւն իմաստուն մարդ չըկայ ձեր միջումդ՝ որ կարող լինի իրաւունք անել իրան եղբարների մէջն։

6 Այլ եղբայր եղբօր հետ գատաստան է գնում, եւ էն էլ անհաւատների մէջ։

7 Եւ հիմիկ՝ հենց խափա վատ բան է՝ որ ձեր միջումդ գատաստան եւ կռիւ կայ. ինչո՞ւ դուք չէք զրկվում. եւ աւելի դուք չէք նեղն մնում[4]։

8 Այլ դուք զրկումք եւ նե-

[16] Մատթ. ԺԶ. 6, 12։ Մարկ. Ը. 15։ Ղուկ. ԺԲ. 1։ [17] Վեր. Բ. 7։ Բ Կորնթ. Զ. 14։ Եփես. Ե. 11։ [18] ա Կորնթ. Ա. 20։ [19] ա Կորնթ. Ժ. 27։ [20] Յովհ. ԺԷ. 15։ ա Յովհ. Ե. 19։ [21] Մատթ. ԺԸ. 17։ Հռոմ. Ժ. 17։ Բ Թես. Գ. 6, 14։ Բ Յովհ. 10։ [22] Գաղ. Բ. 12։ [23] Մարկ. Գ. 11։ Կող. Դ. 5։ ա Թես. Դ. 11։ ա Տիմ. Գ. 7։ [24] ա Կորնթ. Զ. 1-4։ [25] Բ Օրէն. ԺԶ. 5։ ԺԷ. 7։ Իսա. Բ. 21։ Իր. Բ. 21, 22, 24։ [1] Սաղմ. Խթ. 14։ Դան. Է. 22։ Մատթ. ԺԹ. 28։ Ղուկ. Իբ. 30։ Յայտ. Բ. 26։ Գ. 21։ Ի. 4։ [2] Բ Պետր. Բ. 4։ Յուդ. 6։ [3] ա Կորնթ. Ե. 13։ [4] Ածոխ. Ի. 22։ Մատթ. Ե. 39, 40։ Ղուկ. Զ. 29։ Հռոմ. ԺԲ. 17, 19։ ա Թես. Ե. 15։

ղացնումիք՝ եւ էն էլ ձեր եղբայրներին[5]։

9 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ ա-
նիրաւներն Աստուծոյ արքայութիւ-
նըն չեն ժառանգիլ։ Մի խաբվիք։ ո՛չ
պոռնիկներն, ո՛չ կռապաշտներն,
ո՛չ շնացօղներն,

10 ո՛չ էգի տեղ անցնօղներն, ո՛չ
արուագէտներն, ո՛չ գողերն, ո՛չ ա-
գահներն, ո՛չ հարբեցօղներն, ո՛չ
բամբասօղներն, եւ ո՛չ յափշտակօղ-
ներըն՝ Աստուծոյ արքայութիւնն
չեն ժառանգիլ[6]։

11 Եւ դուք մին քանիներդ էն-
պէսիներ էիք[7]։ բայց լուացվեցաք՝
բայց սրբվեցաք՝ բայց արդարացաք
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անու-
նովն եւ մեր Աստուծոյ հոգովն[8]։

12 Ամէն բան կարելի է ինձ, բայց
ամէն բան օգուտ չէ։ ամէն բան կա-
րելի է ինձ, բայց չըլինի որ ես մին
բանի իշխանութեան տակն լինիմ[9]։

13 Կերակուրն փորին համար (է),
եւ փորն կերակուրին համար[10]։ բայց
Աստուած սրան եւ նրան կըխափա-
նէ։ Միայն թէ՝ մարմինն պոռնկու-
թեան համար չէ, բայց Տէրին հա-
մար[11]։ Եւ Տէրն մարմնոյն համար[12]։

14 Իսայց Աստուած՝ որ մեր Տէրն
յարոյց[13], ձեզ էլ կըյարուցանէ ի-
րան զօրութենովն[14]։

15 Չէ՞ք գիտում՝ որ ձեր մար-
միններն Քրիստոսի անդամներ են[15]։
ապա Քրիստոսի անդամներըն առ-
նենք՝ եւ պոռնիկի անդամ շինենք։
քաւ լիցի։

16 Կամ թէ չէ՞ք գիտում՝ որ նա՝
որ պոռնիկին մեռնում է, մին մար-
մին է (նորա հետ)։ Երկուան՝ ասում է,
մին մարմին կըլինին[16]։

17 Իսկ նա՝ որ Տէրին մեռնում է՝
մին հոգի է (նորա հետ)[17]։

18 Փախէք պոռնկութենիցն[18]։ ա-
մէն մեղք՝ ինչ որ մարդ գործում է,
իրան մարմնիցն դուրս է։ բայց նա՝
որ պոռնկութիւն է անում, իրան
մարմնոյն դէմ մեղանչում է[19]։

19 Կամ թէ չէ՞ք գիտում, որ ձեր
մարմինները սուրբ հոգոյ տաճար են՝
որ ձեզանում է, որ Նորան Աստուա-
ծանից ունիք[20]. եւ ձեր անձին տէր
չէք[21]։

20 Պատճառն որ՝ մեծ գին տալով
գընվեցաք[22]. էլ փառք տուէք Աս-
տուծոյն ձեր մարմնումն եւ ձեր հո-
գումն՝ (որ են Աստուծոյն)։

---

[5] ա թես. գ. 6։ [6] ա կորնթ. ժե. 0։ գաղ. ե. 21։ եփես. ե. 5։ ա տիմ. ա. 9։ եբր. ժբ. 14։ ժգ. 4։ ճայտ. խբ. 15։ [7] կորնթ. ժբ. 2։ եփես. բ. 2։ գ. 22։ ե. 8։ կող. գ. 7։ տիտ. գ. 3։ [8] ա կորնթ. ա. 30։ եբր. ժ. 22։ [9] ա կորնթ. ժ. 23։ [10] Մատթ. ժե. 17։ Հռոմ. ժգ. 17։ կող. բ. 23, 23։ [11] Ղեւտ. 15, 19, 20։ ա թես. գ. 3, 7։ [12] եփես. ե. 23։ [13] Հռոմ. զ. 5, 8։ ը. 11։ բ կորնթ. դ. 14։ [14] եփես. ա. 19, 20։ [15] Հռոմ. ժբ. 5։ ա կորնթ. ժբ. 27։ եփես. գ. 12, 15, 16։ ե. 30։ [16] Ծննդ. բ. 24։ Մատթ. ժե. 5։ եփես. ե. 31։ [17] ճառկ. ժե. 21–23։ եփես. դ. 4։ ե. 30։ [18] Հռոմ. զ. 12, 13։ եբր. ժգ. 4։ [19] Հռոմ. ա. 24։ ա թես. գ. 4։ [20] ա կորնթ. գ. 16։ բ կորնթ. զ. 16։ [21] Հռոմ. ժգ. 7, 8։ [22] Գործ. ի. 28։ ա կորնթ. է. 23։ Գաղ. գ. 13։ եբր. թ. 12։ ա պետր. ա. 18, 19։ բ պետր. բ. 1։ ճայտ. ե. 9։

## ԳԼ · Ի

*Ջ Պօղոս պատկվելոյ համար խօսումն, 4 Ցոյց տալով՝ որ նա պոռնկութեան համար մին չահ է, 10 Եւ խոկ չէ՛ինի որ էն պատկն մին բան չի՛համաբերլով մինն ջոկէ նորան։ 18, 20 Ամէն մարդ իրան կոչումի մէջն Թող կենայ՝ թէ թլփատված եւ անթլփատ, թէ ծառայ եւ ազատ լինի, 25 Պօղոս խրատ է տալիս կուսանքների համար, 35 Եւ ինչ պատճառի համար կարօղ ենք պատկվիլ կամ չը պատկվիլ։*

1 Ինձ էն բանի համար՝ որ ինձ գրեցիք, (ասումեմ՝) թէ լաւ է մարդ չ համար՝ որ կնկան չդպնանայ[1]։

2 Այլ՝ թէ՝ պոռնկութեան պատճառովն Թող ամէն մէկ մարդ իրան կինն բռնէ, եւ ամէն մէկ կին Թող իրան մարդն բռնէ։

3 Կնկանն իրան մարդն Թող պարտքըն վճարէ, եւ էնպէս էլ կինն իրան մարդոյն[2]։

4 Պատճառն որ՝ կինն իրան մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց մարդն, էնպէս էլ մարդն իրան մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց կինն։

5 Զրկէնի որ իրար զրկէք, բայց եթէ իրար հետ միաբանվիք մին քիչ ժամանակ, որ աղօթքի պարապվիք, եւ մինէլ միտեղ դարձէք[3], որ սատանան չըփորձէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան պատճառովն[4]։

6 Ես ներելով եմ՝ ասում, եւ ոչ թէ հրաման տալով[5]։

7 Պատճառն որ կամենումեմ՝ որ ամէն մարդ[6] ինձ պէս լինէր[7], բայց ամէն մարդ իրան (յատուկ) շնորհքըն ունի Աստուածանից[8], մինն էս պէս եւ մինն էնպէս։

8 Ինձ կին չունօղներին եւ որբևէրիներին ասումեմ թէ՝ լաւ է նորանց համար՝ որ ինձ պէս կենան[9]։

9 Այլ թէ որ չըդիմանան՝ Թող պատկվին[10], ինչու որ աւելի լաւ է պատկվիլ, քան թէ տաքանալ։

10 Ինձ պատկվածներին պատուիրումեմ, ոչ թէ ես[11] այլ Տէրն, որ կինն չըբաժկվի իրան մարդուցն[12]։

11 Այլ թէ որ բաժկվի Թող առանց մարդոյ մնայ՝ կամ մինէլ իրան մարդոյն հետ հաշտվի, եւ որ մարդն էլ իրան կինըն բաց չըթողէ։

12 Ինձ ուրիշներին ես պատուիրումեմ, չէ թէ Տէրն[13], որ եթէ մին եղբայր անհաւատ կին ունենայ, եւ նորան հաճոյ լինի նորա հետ բնակվիլ՝ Թող բաց չըթողէ նորան։

13 Եւ կին՝ որ անհաւատ մարդ ունենայ, եւ նա կամենայ նորա հետ բնակվիլ՝ նա Թող մարդոյն չըթողէ։

14 Պատճառն որ՝ անհաւատ մարդն՝ սրբված է կնկանովն, եւ անհաւատ կինն սրբված է մարդովն, ապա թէ չէ՝ ձեր որդիքն պիղծ կըլինէին[14], բայց հիմիկ սուրբ են։

15 Ինձ թէ որ անհաւատն զրկվելու լինի, Թող զրկվի, ինչու որ՝ էսպէսի բաներովն մէջ քրիստոնեան կամ եղբօր վերայ հարկաւորութիւն չը-

[1] Ա Կոր. է. 1։ [2] Եփես. ե. 22։ [3] Ա Պետր. գ. 7։ [4] Ա Թես. դ. 3։ [5] Ա Կոր. է. 6։ [6] Գործ. իզ. 29։ [7] Ա Կորնթ. թ. 5։ [8] Ա Կորնթ. ժե. 12։ [9] Ա Կորնթ. ժը. 11։ [10] Ա Տիմ. ե. 14։ [11] Ա Կոր. է. 12, 25, 40։ [12] Ա Կորնթ. ը. 14, 16։ Ա Կոր. ե. 32։ Ժե. 6, 9։ Ա Կոր. ժ. 11, 12։ Դ Կոր. ժզ. 18։ [13] Ա Կոր. 6։ [14] Ա Կոր. ը. 15։

կայ, Նրահամար որ Աստուած կանչեց մեզ խաղաղութեան մէջ[15]։

16 Ի՞նչ գիտես ո՛վ կին՝ որ քո մարդըդ կապրեցնես[16], եւ ի՞նչ գիտես ո՛վ մարդ՝ որ քո կինըդ կապրեցնես։

17 Միայն թէ՝ ամէն մէկն ինչպէս որ Տէրն բաժնեց նորան, ամէն մէկն ինչպէս որ Աստուած կանչեց նորան, էնպէս գնայ. եւ էնպէս ամէն եկեղեցիներուն պատուէր եմ տալիս[17]։

18 Ո՞ւրն՝ որ թլփատած կանչուեցաւ, թող անթլփատութեան չըցանկանայ. միւն որ անթլփատութեան կանչուեցաւ՝ թող չըթլփատուի[18]։

19 Ինչու որ՝ թլփատութիւն ո՛չինչ է, եւ անթլփատութիւն ո՛չինչ[19]. բայց Աստուծոյ պատուիրանքներուն պահպանութիւն[20]։

20 Նայց ամէն մէկն՝ որ կոչումի մէջն որ կանչուեցաւ, թող նորա նում կենայ։

21 Ծառայ կանչուեցար՝ թող՝ հոգս մի աներ. բայց թէ որ կարենաս ազատ էլ լինել՝ քեզ համար էնպէս էլ լաւ է։

22 Պատճառն որ՝ ծառան որ տէրովն կանչուած է՝ նա տէրի ազատն է[21]. հենց էնպէս էլ ազատն որ կանչուած է՝ Քրիստոսի ծառայ է[22]։

23 (Ո՛նծ) գնով գնուեցաք՝ մարդկանց ծառայ մի լինիք[23]։

24 Ամէն մէկն ինչ կոչումի մէջն որ կանչուեցաւ՝ ըղբարը, թող նորանում կենայ Աստուծոյ առաջին[24]։

25 Նայց կուսանքներուն համար միս հրաման չունիմ Տէրից[25]. միայն թէ խրատ եմ տալիս՝ ինչպէս միւն որ Տէրից ողորմութիւն գտաւ[26] հաւատարիմ լինելոյ[27]։

26 Էս համարումեմ՝ թէ էնպէս լաւ է. բայց վտանգին համար՝ որ մնալիկ է, լաւ է մարդն՝ որ էնպէս լինի[28]։

27 Կնկան հետ որ կապված ես՝ մի հետեւիր արձակուելոյ. կնկանիցն որ արձակված ես՝ կին մի ուզեր։

28 Նայց թէ որ պսակուիս՝ չըմեղանչեցիր. եւ թէ որ միւն կոյս պըսակուի՝ չըմեղանչեց. միայն թէ էնպէսիներն մարմնոյ նեղութիւն կունենան, բայց ես խնայումեմ ձեզ։

29 Նայց էս եմ ասում ըղբարը՝ թէ ժամանակս կարճ է սրանից եւ ասեւ[29], որ նորանք որ կին ունին՝ ինչպէս թէ չունենային։

30 Եւ նորանք՝ որ լայ են լինում, ինչպէս թէ լայ չըլինէին. եւ նորանք՝ որ ուրախանում են, ինչպէս թէ չուրախանային. եւ նորանք՝ որ ծախու առնում են, ինչպէս թէ չունենային։

31 Եւ նորանք՝ որ էս աշխարհքըս վայելումեն, ինչպէս թէ չըվայելէին[30]. ինչու որ՝ էս աշխարհքիս գեղեցկութիւնն անցել է[31]։

32 Նայց կամենումեմ որ դուք հոգսի մէջ չըլինիք. պատճառն որ

[15] Հռով. ժբ. 18։ ժդ. 19։ ա Կորնթ. ժդ. 33։ Եբր. ժբ. 14։ [16] ա Պետր. գ. 1։ [17] ա Կորնթ. դ. 17։ բ Կորնթ. ժա. 28։ [18] Գործ. ժե. 1, 5, 19, 24, 28։ Գաղ. ե. 2։ [19] Գաղ. ե. 6։ զ. 15։ [20] Ցաղ. ժե. 14։ ա Ցաղ. բ. 3։ գ. 24։ [21] Ցաղ. ը. 36։ Հռով. զ. 18, 22։ Փիլիմ. 16։ [22] ա Կորնթ. Թ. 21։ Գաղ. ե. 13։ Եփես. զ. 6։ ա Պետր. բ. 16։ [23] ա Կորնթ. զ. 20։ ա Պետր. ա. 18, 19։ Գործ. իե. 42։ [24] Վեր. 20։ [25] Վեր. 6, 10։ վ. 32։ 40։ բ Կորնթ. ը. 8, 10։ [26] ա Տիմ. ա. 16։ [27] ա Կորնթ. գ. 2։ ա Տիմ. ա. 12։ [28] Վեր. 1, 8։ [29] Հռով. ժգ. 11։ ա Պետր. գ. 7։ բ Պետր. ը. 8, 9։ [30] ա Կորնթ. է. 18։ [31] Սաղ. լթ. 6։ Ցակ. ա. 10։ գ. 14։ ա Պետր. ա. 24։ գ. 7։ ա Ցաղ. բ. 17։

նա՝ որ կին չունի՝ Տէրի բաներին համար է հոգս անում, թէ ինչպէս հաճոյ լինի Տէրին[32]։

33 Իւր նա՝ որ կին ունի, աշխարհքի բաներին համար է հոգս անում, թէ ինչպէս հաճոյ լինի իրան կնկանն։

34 Իւր էսպէս էլ իրարից ջոկված են պսակված կինն եւ կոյս. ինչու որ՝ կոյսն Տէրի բաներին համար է հոգս անում՝ որ սուրբ լինի մարմնով եւ հոգով[33], եւ պսակված կինն աշխարհքի կողմանէ հոգս է անում՝ թէ ինչպէս հաճոյ լինի իրան մարդոյն։

35 Այդ՝ ասում եմ (բանըս) ձեր շահի համար եմ ասում. եւ չէ թէ ձեր վըզերին խեղդելոյ չուան եմ քցում. բայց պարկեշտութեան համար՝ եւ առանց զըաղմունքի Տէրին հետեւելոյ համար։

36 Այլ թէ որ մինն ամօթ համարէ իրան կուսին համար՝ որ տարիքի չափից դուրս է էլել, եւ էնպէս պէտք բան պէտք է լինիլ. նա ինչպէս որ կամենում՝ թող անէ. չէ մեղանչում՝ թող պսակվի։

37 Բայց նա՝ որ իրան սրտի մէջն հաստատել է եւ մին վճռած չունայ նորա համար, էլ իրան կամքին վերայ իշխանութիւն ունի. եւ էն ընտրեց իրան սրտումն՝ որ իրան կոյսըն պահէ, նա լաւ է անում։

38 Իւր նա՝ որ իրան կոյսըն մարդոյ է տալիս, լաւ է անում[34], եւ նա՝ որ մարդոյ չի տալիս, էլ աւելի լաւ է անում։

39 Կինն կապված է՝ քանի ժամանակ որ նորա մարդն կենդանի է. բայց թէ որ նորա մարդն ննջէ, ապա աղատ է պսակվելոյ ումն որ կամենայ[35], միայն թէ Տէրով[36]։

40 Բայց էլ աւելի երանելի է. թէ որ էնպէս կենայ՝ իմ տրված խրատին պէս[37]. (բայց) ես էսպէս եմ՝ համարում, թէ ինձանում էլ Աստուծոյ հոգին կայ[38]։

## ԳԼ· Ը

1 Կռքի զոհվածն պէտք չէ որ ուտենք. 8, 9 Քրիստոնեաներն զգոյշ կենան՝ որ իրանց ազատութիւնն պայթակղութիւն չըլինի ակար եղբայրներին համար, 11 Եւ մեր գիտութենովն ակար եղբայրն չկորչի՝ որ նորա համար Քրիստոս մեռաւ։

1 Բայց կըռքերի մատաղներին համար[1] գիտումենք. որ ամենքս գիտութիւն ունինք[2]. գիտութիւնն հպարտացնում, բայց սէրն շինում[3]։

2 Ով որ մինն մըտքի մէջ դնէ թէ բան գիտէ, նա դեռ բան չըգիտացել՝ ինչպէս որ պէտք է գիտել[4]։

3 Բայց նա՝ որ Աստուծոյն սիրում, նա ճանաչված է նորանից[5]։

4 Ուրեմն զոհված կերակուրներին համար գիտումենք որ կըռքերն ոչ ինչ են աշխարհքումն[6]. պատճառն որ՝ իսկի մին Աստուած չըկայ էն մընիցն զոկ[7] (առջոյ)։

5 Որ թէ եւ կան՝ որ աստուածներ անուանվին՝ թէ երկինքումն եւ

---

[32] ա Տիմ. է. 5։ [33] Ղեւ. ժ. 40, Թ—յնը։ [34] Եբր. ժգ. 4։ [35] Հռովմ. է. 2։ [36] բ Կորնթ. ը. 14։ [37] Վէր. 25։ [38] ա Թես. գ. 8։ [1] գ Կորնթ. ժ. 19։ [2] Հռովմ. ժգ. 14, 22։ [3] Հռովմ. ժգ. 3, 10։ [4] ա Կորնթ. ժգ. 8, 9, 12։ Գաղ. ը. 3։ ա Տիմ. ը. 4։ [5] Եփ. լդ. 12. 17։ Նաա. ա. 7։ Մատթ. է. 23։ Գաղ. գ. 9։ բ Տիմ. բ. 19։ [6] Եսայ. խա. 24։ ա Կորնթ. ժ. 19։ [7] բ Օրին. դ. 39։ ը. 4։ Եսայ. խգ. 8։ Մատթ. ժբ. 29։ Վայր. 6։ Եփես. գ. 6։ ա Տիմ. բ. 5։

թէ երկրիս վերայ. ինչպէս որ շատ աստուածներ կան եւ շատ տէրեր[8]։

6 Նայց մենք մին Աստուած ունինք՝ Հայրըն[9], որ նորանից ամէն բան է, եւ մենք նորա համար[10]. եւ մին Տէր Յիսուս Քրիստոս[11] որ նորանով է ամէն բան, եւ մենք նորանով[12]։

7 Այլայն թէ ամէնքն գիտութիւն չունին. ինչու որ՝ մին քանիսն մինչեւ հիմիկ կրօքի բանըն զոհված բանի պէս խղճմտանքով են ուտում[13], եւ նորանց խղճմտանքն՝ որ տկար է, պղծվում[14]։

8 Նայց կերակուրն էն չէ՝ որ մեզ ընդունելի է անում Աստուծոյ առաջին[15], որ եթէ չուտենք՝ մին բանով չենք պակասիլ, եւ եթէ ուտենք՝ մին բանով չենք աւելանալ։

9 Այլայն թէ զգոյշ կացէք՝ որ էդ ձեր ազատութիւնդ[16] գայթակղութիւն չըլինի տկարներին համար[17]։

10 Թէ որ մինն քեզ՝ որ էդ գիտութիւնդ ունիս՝ կրօքի տան մէջ տեսնէ սեղան նստած, չէ՞ որ նորա խղճմտանքն՝ որ տկարութենով բունըված է՝ մինել կըդրդվի որ զոհված բանըն ուտի[18]։

11 Եւ էն տկար եղբայրն կըկորչի քո գիտութենովդ, էն՝ որ նորա համար Քրիստոս մեռաւ[19]։

12 Եւ էսպէս եղբարներին դէմ մեղանչելով, եւ տկարների խղճմտանքըն դրդելով՝ Քրիստոսին դէմ մեղք էք գործում[20]։

13 Ուրեմն՝ թէ որ կերակուր իմ եղբօրըս գայթակղացնում է, ես յաւիտեան միս չեմ ուտիլ, որ իմ եղբօրըս չըգայթակղացնեմ[21]։

## Գ.Ղ. ԼԹ

1 Պօղոս իրան ազատութիւնն ցոյց կըտայ, 7 Եւ մին չատ վկայութիւն տալըցն եւս։ 14 Պատուէր է տալիս՝ որ Քրիստոսի պաշտօնեաներն Աւետարանիցն ապրին Տէրի հրամանովն, 15 Բայց նա ինքն սրանցից իսկի մինըն էլ չըբանայցուց. 18 Որ մինն չատ թէ իրան համար մին բան առնէ է, 22 Եւ թէ փարթ բաների մէջ մընին գայթակղութիւն տուել է։ 24 Քրիստոնեաներին պէտք է որ Քրիստոսի Աւետարանի համար ապարէզի (մրցանակի) մէջ վազելոյ պէս ջանք անեն։

1 Ազէ՞ որ ազատ եմ, չէ՞ որ առաքեալ եմ[1], չէ՞ որ մեր Տէր Յիսուսին Քրիստոսին իմ աչքովս տեսի[2], չէ՞ որ դուք իմ գործս էք Տէրով[3]։

2 Թէ եւ ուրիշներին համար առաքեալ չըլինիմ, բայց դէպի ձեզ եմ. ինչու որ իմ առաքելութեան կնիքն (ջօհրէն) դուք էք Տէրով[4]։

3 Իմ պատեղ որ ինձ հարցնեն, իմ

[8] Ցովհ. ժ. 34։ [9] Մատթ. բ. 10։ Եփես. դ. 6։ [10] Գործ. ժէ. 28։ Հռովմ. ժա. 36։ [11] Ցովհ. ժգ. 13։ Գործ. բ. 36։ ա Կորնթ. ժբ. 3։ Եփես. դ. 5։ Փիլիպ. բ. 11։ [12] Ցովհ. ա. 3։ Կող. ա. 6։ Եբր. ա. 2։ [13] ա Կորնթ. ժ. 28, 29։ [14] Հռովմ. ժգ. 14, 23։ [15] ա Կորնթ. ժ. 28, 29, [14] Հռովմ. ժգ. 14, 23։ [15] Հռովմ. ժգ. 17։ [16] Գաղ. ե. 13։ [17] Հռովմ. ժգ. 13, 21։ [18] ա Կորնթ. ժ. 28, 32։ [19] Հռովմ. ժգ. 15, 21։ [20] Մատթ. ԺԸ. 40, 45։ [21] Հռովմ. ժգ. 21։ բ Կորնթ. ժա. 29։ [1] Գործ. Թ. 15։ ժգ. 2։ իգ. 17։ բ Կորնթ. ժբ. 12։ Գաղ. բ. 7, 8։ ա Տիմ. բ. 7։ բ Տիմ. ա. 11։ [2] Գործ. Թ. 3։ 17։ ժբ. 9։ իբ. 14, 18։ իգ. 11։ ա Կորնթ. ժե. 8։ [3] ա Կորնթ. դ. 6։ դ. 15։ [4] բ Կորնթ. դ. 2։ ժբ. 12։

պատասխանս էս է ։

4 Մի՞թէ (մենք) իշխանութիւն չունի՞նք ուտելոյ եւ խմելոյ[5] ։

5 Մի՞թէ իշխանութիւն չունի՞նք քրվոջներ, կանայք մանաւանդ ելոյ մեզ հետ, ինչպէս որ ուրիշ առաքեալներն եւ Տէրի եղբարքն էլ[6], եւ կեփասն էլ[7] ։

6 Մի՞թէ մենակ ես եւ բառնաբաս իշխանութիւն չունինք որ բան չըգործենք[8] ։

7 Ո՞վ է որ հենց իրան պատշաճովն զինուորութիւն անէ[9]. ո՞վ է որ պըտի (քաղ) անկէ՝ եւ նորա պըտուղից չուտէ[10]. ո՞վ է որ հօտ (ա՛ր-ջիւ) արածացնէ՝ եւ հօտի կաթնից չուտէ[11] ։

8 Մի՞թէ ես բանըս մարդոյ կերպով եմ ասում, կամ չէ՞ որ օրէնքն էլ ես բանըս ասում ։

9 Հենց Մովսէսի օրէնքումն գըրված է՝ թէ կալի մէջ աշխատող եզան դունչըն մի կապիր[12]. միթէ Աստուած եզներին համար էր հոգս անում ։

10 Չէ՞ որ մեզ համար է ասում. պատճառն որ՝ մեզ համար գրվեցաւ, որ նա՝ որ ցանում է, պէտք է յուսով ցանել. եւ նա՝ որ կասում է, յուսով վայելել[13] ։

11 Թէ որ մենք ձեզանում հոգեւորներըն սերմեցինք՝ էլ մեծ բան է՝ որ ձեզանից մարմնաւորներըն հընձեինք[14] ։

12 Թէ որ ուրիշներն էդ ձեզ վրայ իշխանութիւնըն կըվայելեն, էլ աւելի ինչո՞ւ մենք չէ. միայն թէ մենք էս իշխանութիւնըս չըբանացրինք[15], բայց ամէն բանի համբերում ենք, որ իսկի խափանմունք չըդնենք Քրիստոսի աւետարանին[16] ։

13 Չէ՞ք գիտում թէ նորանք՝ որ տաճարումն գործում են, էն տաճարից են ուտում. եւ նորանք՝ որ սեղանի պաշտօնեաներ են, էն սեղանից են վայելում[17] ։

14 Նոյնպէս էլ Տէրն հրամայեց տուաւ[18], որ նորանք որ աւետարանըն քարոզում են, էն աւետարանից ապրին[19] ։

15 Բայց ես սրանցից իսկի մինըն էլ չըբանացայ. եւ էդ բանըդ չըգրեցի ներահամար որ՝ ինձ էլ էդպէսի բան լինի[20]. էլ աւելի լաւ է ինձ՝ որ մեռնիմ, քանթէ՝ որ մինն իմ պարծանքըս ունայն համարէ[21] ։

16 Պատճառն որ՝ թէ որ աւետարանըն քարոզեմ, էն պարծանք չէ ինձ համար. ինչու որ՝ էն հարկ է ինձ վերայ[22]. բայց վայ է ինձ՝ թէ որ չաւետարանեմ ։

17 Թէ որ յօժար կամքով էն անեմ, վարձք կը լինի ինձ[23]. եւ թէ որ ակամայ (անեմ)՝ էլ տնտեսութիւնն յանձնըված է ինձ[24] ։

18 Ըպա ես ի՞նչ վարձք ունիմ,

---

[5] Վար · 14։ ա թես. բ · 7։ բ թես. գ · 9։ [6] Մարկ · ժգ · 55։ Մարկ · ղ · 3։ Ղուկ · ղ · 14։ Գաղ. ա, 19։ [7] Մարկ · բ · 14։ [8] բ թես. դ · 8, 9։ [9] բ կորնթ · ժ · 4։ ա Տիմ. ա · 18։ ղ · 12։ բ Տիմ. բ, 3։ գ · 7։ [10] բ Օրին · ի · 6։ Ասաֆ · իե · 18։ առակն · գ · 6, 7, 8։ [11] Ցվճ · խա · 15։ ա պետր · ե · 2։ [12] բ Օրին · իե · 4։ ա Տիմ. ե · 18։ [13] բ Տիմ. բ · 6։ [14] Հռովմ. ժե. 27։ Գաղ · զ · 6։ [15] Գործ · ի · 33։ վար · 15, 18։ բ կորնթ · ժա · 7, 9։ ժբ · 13։ ա թես. բ · 7։ [16] բ կորնթ · ժա · 12։ [17] Ղևտ · զ · 16, 26։ է · 6, Ելայսն։ թես · ե · 9, 10։ ժբ · 8–20։ բ Օրին · ժ · 9։ ժբ · 1։ [18] Մարկ · ժ · 10։ Ղուկ · ժ · 7։ [19] Գաղ · զ · 6։ ա Տիմ. ե · 17։ [20] վէր · 12։ Գործ · ժբ · 3։ ի · 34։ ա կորնթ · գ · 12։ ա թես. բ · 9։ բ թես. գ · 8։ [21] բ կորնթ · ժա · 10։ [22] Հռովմ. ա · 14։ [23] ա կորնթ · գ · 8, 14։ [24] ա կորնթ · ե · 1։ Գաղ · բ · 7։ Փիլիպ · ա · 16։ Կող · ա · 25։

էն որ՝ աւետարանելոյ ժամանակն ձրի (Ֆո՛ֆռռ) տամ աւետարանչն[25], որ իմ իշխանութիւնըս վատ չը բա՛նացնեմ՝ որ էն աւետարանումն է[26]։

19 Պատճառն որ՝ ամէն (մարդուց) ազատ էի[27], եւ իմ անձըս ամէնին ծառայ արի[28], որ շատ մարդկանց շահեմ[29]։

20 Հրէաներին հետ հրէայի պէս էլայ, որ հրէաներըն շահեմ[30]։

21 Օրէնքին ներքեւ լինօղներին հետ նորանց պէս էլայ, որ օրէնքի ներքեւն էին. իբր թէ չէ որ ես օրէնքի ներքեւն էի, բայց որ նորանց էլ շահեմ՝ որ օրէնքի ներքեւն են. անօրէններին հետ անօրէնի պէս էլայ[31]. իբր չէ թէ ես Աստուծոյ առաջին մին անօրէն էի, բայց Քրիստոսի օրէնքի ներքեւն[32], որ անօրէններին շահեմ։

22 Տկարներին հետ տկարի պէս էլայ[33] որ տկարներին շահեմ. ամէնին հետ ամէն բան էլայ[34], որ լինի թէ մին քանիսն ապրեցնեմ[35]։

23 Ես ամէն բաներըս աւետարանին համար եմ անում, որ բաժին ունենամ նորա հետ։

24 Չէ՞ք գիտում՝ թէ նորանք՝ որ ասպարէզի (Ստադիոն) մէջն վազում են, վազելով ամէնքն են վազում. բայց մին է՝ որ յաղթութեան պըսակըն առնում. դուք էնպէս վազեցէք՝ որ հասնիք[36]։

25 Ամէն՝ ով որ պատերազմ է անում, ամէն բանից ժուժկալ է կենում[37]. նորանք՝ որ մին ապականելի պսակ առնեն, եւ մենք՝ էն որ չի ապականվիլ[38]։

26 Ուրեմն հենց ես էնպէս եմ վազում, չէ թէ ինչպէս անելուդի բանի համար[39]. էնպէս եմ կռւում, չէ թէ ինչպէս քամիների զարկելով։

27 Այլ իմ մարմինըս ներքեւ եմ քցում[40] եւ հնազանդացնում[41], որ չըլինի թէ ես՝ որ ուրիշներին քարոզեցի, ինքս անպիտան դանըվիմ[42]։

## ԿԱ · Ի

1 Հրէաներին էլած բաներըն՝ իրանց, 6 Եւ մեզ օրինակներ էին լինում, 7 Եւ նորանց տարած պատիժներն էլ, 11 Օրինակի համար էր նորանց. բայց մեզ խրատի համար գրվեցաւ։ 14 Պէտք է կռապաշտութիւնից փախչել. 21 Չի՛նք կարող Տէրի սեղանից եւ դեւերի սեղանից վայելել, 24 Եւ խղճմտանքի վրա չէլած բաների մէջ չը լինի որ մեր եղբայրներին գայթակղութիւն տանք։

1 Չեմ կամենում եղբայրք՝ որ չը գիտենաք՝ թէ մեր հարքն ա-

[25] ա Կորնթ. ժ, 33։ [26] բ Կորնթ. գ. 5։ ժա. 7։ [27] վԲր. 1։ [28] Գաղ. ե. 13։ [29] Յոան. ժը. 15։ ա Պետր. գ. 1։ [30] Գործ. ժգ. 3։ ժը. 18։ իա. 23, եաւլե։ [31] Հռովմ. ը. 12, 14։ Գաղ. գ. 2։ [32] ա Կորնթ. է. 22։ [33] Հռովմ. ժե. 1։ բ Կորնթ. ժա. 29։ [34] ա Կորնթ. ժ. 33։ [35] Հռովմ. ժա. 14։ ա Կորնթ. է. 16։ [36] Գաղ. բ. 2։ ե. 7։ Փիլիպ. բ. 16։ գ. 14։ բ Տիմ. գ. 7։ Եբր. ժբ. 1։ [37] Եփես. ջ. 12։ ա Տիմ. ջ. 12։ բ Տիմ. բ. 5։ գ. 7։ [38] բ Տիմ. գ. 8։ Յակ. ա. 12։ ա Պետր. ա. 4։ ե. 4։ Յայտ. բ. 10։ գ. 11։ [39] բ Տիմ. բ. 5։ [40] Հռովմ. ը. 13։ Կող. գ. 5։ [41] Հռովմ. ջ. 18, 19։ [42] Եբր. ջ. 30։ բ Կորնթ. ժգ. 5, 6։

մէնքն էլ ամպի տակն էինի, եւ ամէնքն ծովի միջովն անցկացան[2]։

2 Եւ ամէնքն մասնակ ձեռնովն մկրտուեցան՝ էն ամպի եւ ծովի մէջն։

3 Եւ ամէնքն էլ էն հոգեւոր կերակուրըն կերին[3]։

4 Եւ ամէնքն էլ էն հոգեւոր խմելիքըն խմեցին[4]. ինչու որ՝ էն հոգեւոր վէմիցն էին խմում՝ որ գնում էր նորանց հետ. եւ էն վէմն Հինց ինքն Քրիստոս էր։

5 Նայց Աստուած նորանցից շատերին չըհաւան կացաւ. ինչու որ՝ էն անապատի մէջն գետնին քցված փուած վէրընկան[5]։

6 Եւ էն էլաւ՝ որ մեզ օրինակ լինի, որ չար բաների ցանկացող չըլինինք, ինչպէս որ նորանք ցանկացան[6]։

7 Եւ կռապաշտ չըլինինք[7] ինչպէս որ նորանցից մին քանիսն (էլան). ինչպէս որ գրված է, Թէ ժողովուրդն նստեց որ ուտէ եւ խմէ՝ եւ վերկացան որ խաղ անեն[8]։

8 Եւ պոռնկութիւն չանինք[9], ինչպէս որ նորանցից մին քանիսն պոռնկութիւն արին, եւ մին օրում քսան եւ չորս հազար մարդ վէր ընկան[10]։

9 Եւ Տէրըն չըփորձինք. ինչպէս որ նորանցից մին քանիսն փորձեցին[11], եւ էն օձերից սատակվեցան[12]։

10 Եւ չըտրտնջինք. ինչպէս որ նորանցից մին քանիսն տրտնջացին[13], եւ էն սատակօղն ձեռովն[14] կորան[15]։

11 Նայց էն ամէնն օրինակի համար էր նորանց վերայ անցնում, բայց մեզ խրատի համար գրվեցաւ[16], որ ժամանակների վերջն հասաւ մեզ[17]։

12 Ուրեմն ով որ համարէ՝ Թէ հաստատ է կանգնած, Թող զգայ լինի, որ վէր չընկնի[18]։

13 Ուրիշ փորձութիւն ձեզ վերայ չի եկել՝ բայց միայն մարդկանցից. բայց Աստուած հաւատարիմ է[19] որ չի քցիլ ձեզ փորձութեան մէջ ձեր կարօղութենից աւելի[20]. բայց էն փորձութեան հետ դուրս գալըն էլ կանէ՝ որ կարենաք համբերել[21]։

14 Սրանհամար իմ սիրելիքս՝ փախէք կռապաշտութենից[22]։

15 Ինչպէս իմաստուններին հետ եմ խօսում[23], դուք ինքդ գատեցէք էն՝ որ ասում եմ։

16 Օրհնութեան բաժակն (որ աւրհնում ենք, չէ՞ որ նա հաղորդութիւն է Քրիստոսի արիւնին[24]. հացն՝ որ կոտրում ենք, չէ՞ որ նա հաղորդութիւն է Քրիստոսի մարմնին[25]։

[1] Եէ. ժգ. 21։ Թ. 34։ Թոռ. Թ. 18։ ժգ. 14։ Բ Օրին. ա. 33։ Նեհ. Թ. 12. 19։ Սաղ. հը. 14։ Ճհ. 39։ [2] Ելք. ժգ. 22։ Թոռ. լդ. 8։ Ճ Թագ. գ. 23։ Սաղ. հը. 13։ [3] Եէ. ժգ. 15. 35։ Նեհ. Թ. 15, 20։ Սաղ. հը. 24։ [4] Եէ. ժէ. 6։ Թոռ. ի. 11։ Սաղ. հը. 15։ [5] Թոռ. ժգ. 29, 32, 35։ իզ. 64, 65։ Սաղ. ճղ. 26։ Եբր. գ. 17։ Ճ Թագ. 5։ [6] Թոռ. ժա. 4, 33, 34։ Սաղ. ճղ. 14։ [7] Վ Թագ. 14։ [8] Եէ. լբ. 6։ [9] ա Կորնթ. գ. 18։ Ճ Թագ. բ. 14։ [10] Թոռ. իե. 1, 9։ Սաղ. ճղ. 29։ [11] Եէ. ժէ. 2. 7։ Թոռ. խ. 5։ Բ Օրին. գ. 16։ Սաղ. հը. 18, 56։ զե. 9։ ճղ. 14։ [12] Թոռ. խա. 6։ [13] Եէ. ժգ. 2։ ժէ. 2։ Թոռ. ժգ. 2, 29։ ժգ. 41։ [14] Եէ. ժբ. 33։ բ Թագ. իգ. 16։ ա Պտնդ. խ. 15։ [15] Թոռ. ժգ. 37։ ժգ. 49։ [16] Հռովմ. ժե. 4։ ա Կորնթ. Թ. 10։ [17] ա Կորնթ. է. 29։ Փիլիպ. գ. 5։ Եբր. ժ. 25, 37։ ա Ճհ. բ. 18։ [18] Հռովմ. ժա. 20։ [19] ա Կորնթ. ա, 9։ [20] Սաղ. ճիե. 3։ բ Պետր. բ. 9։ [21] Եզեկ. իԹ. 11։ [22] Ղէր. 7։ բ Կորնթ. գ. 17։ ա Ճհ. ե. 21։ [23] ա Կորնթ. ը. 1։ [24] Պտրդ. իգ. 26, 27, 28։ [25] Գործ. բ. 42, 46։ ա Կորնթ. ժա. 23, 24։

17 Որովհետեւ մին հաց (է), մենք շատերս մին մարմին ենք[26]. ինչու որ՝ ամենքս էն մին հացիցն ենք վայելում:

18 Տեսէք իսրայէլին[27] մարմնոյ կողմանէ[28]. չէ՞ որ նորանք՝ որ մսատաղներիցն են ուտում, մասնակից են սեղանին[29]:

19 Պա ի՞նչ ասեմ. միթէ զոհվածն մին բան է, եւ կամ թէ կռքերն էլ մին բան են[30]:

20 Ոչայց էն, որ հեթանոսներն մատաղ են անում, դեւերին են մատաղ անում[31], եւ ոչ թէ Աստուծոյն. (ես) չեմ կամենում՝ որ դուք դեւերին մասնակից լինիք· պատճառն որ՝ չէք կարող Տէրի բաժակըն (խառնի) խմել՝ եւ դեւերի բաժակըն էլ[32]:

21 Չէք կարող Տէրի սեղանիցն վայելել՝ եւ դեւերի սեղանիցն էլ:

22 Կամ թէ Տէրըն նախանձ շարժենք[33]. միթէ (մենք) նորանից աւելի զօրաւոր ենք[34]. ամեն բան կարելի է ինձ, բայց ամեն բան օգուտ չէ:

23 Ամեն բան կարելի է ինձ, բայց ամեն բան շինութիւն չի տալիս[36]:

24 Ոչ ոքինի որ միւսն իրան անձին բանին միտք հետեւի, բայց նորան էլ որ ընկերին է[37]:

25 Ամեն ինչ բան՝ որ սպանդանոցումն (պատոպոհանոցում) ծախվում, կերէք՝ եւ չըքննէք խղճմտանքի պատճառովն[38]:

26 Պատճառն որ՝ երկիրն Տէրին է իրան ամեն լիութիւնովն[39]:

27 Թէ որ անհաւատներից մինն կանչէ ձեզ՝ եւ դուք կամենաք գնալ, ամեն բան որ ձեր առաջին դնվի՝ կերէք, եւ չըքննէք խղճմտանքի պատճառովն[40]:

28 Պա թէ որ մինն ասէ ձեզ՝ թէ էդ զոհված բան է, մի ուտէք՝ նորա պատճառովն՝ որ իմացում տուաւ, խղճմտանքի պատճառովն[41]:

29 Ոչայց խղճմտանք եմ ասում ոչ թէ իրանըն, այլ ընկերինըն. էլ իսկի ինչու իմ ազատութիւնս պիտի դատվի ուրիշի խղճմտանքից:

30 Թէ որ ես շնորհակալութեամբ վայելումեմ, ինչու՞ հայհոյվում էն բանի համար[42] որ ես նորա համար (Աստուածանից) գոհանում եմ[43]:

31 Ուրեմն թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ էլ որ անէք, ամեն բան Աստուծոյ փառաց համար արէք[44]:

32 Առանց դայթակղութեան տաղտ լինէք հրէաներին եւ հեթանոսներին[45] եւ Աստուծոյ եկեղեցոյն[46]:

33 Ինչպէս որ ես էլ ամեն բանով ամենին հաճոյ եմ լինում[47]. իմ անձիս օգուտը չեմ խնդրում, բայց շատերինըն՝ որ փրկվին[48]:

---

[26] Հռովմ. ժբ· 5։ ա Կորնթ· ժբ· 27։ [27] Հռովմ. դ· 12։ Գաղ· զ· 16։ [28] Հռովմ. դ· 1։ Թ· 3, 5։ բ Կորնթ· ժա· 18։ [29] Դէւտ· գ· 3։ է· 15։ [30] ա Կորնթ· ը· 4։ [31] Դէւտ· ժէ· 7։ բ Օրին· լբ· 17։ Սաղմ· ղզ· 37։ Յայտ· Թ· 20։ [32] բ Կորնթ· զ· 15, 16։ [33] բ Օրին· լբ· 38։ [34] բ Օրին· լբ· 21։ [35] Եսդի· իբ· 14։ [36] ա Կորնթ· զ· 12։ [37] Հռովմ. ժե· 1, 2։ Վայր· 33։ ա Կորնթ· ժգ· 5։ Փիլիպ· բ· 4, 21։ [38] ա Տիմ· դ· 4։ [39] Եզե· ԺՀ· 5։ բ Օրին· ժ· 14։ Սաղմ· իդ· 1։ ծ· 13։ Վայր· 28։ [40] Դէւտ· ժ· 7։ [41] ա Կորնթ· ը· 10, 12։ [42] Հռովմ. ժգ· 16։ [43] Հռովմ. ժգ· 6։ ա Տիմ· դ· 3, 4։ [44] Կող· գ· 17։ ա Պետր· դ· 11։ [45] Հռովմ. ժգ· 13։ ա Կորնթ· ը· 13։ բ Կորնթ· զ· 3։ [46] Գործ· ի· 28։ ա Կորնթ· ժա· 22։ ա Տիմ· գ· 5։ [47] Հռովմ. ժե· 2։ ա Կորնթ· Թ· 19, 22։ [48] Վէր· 24։

# ԿԻ · ԺԸ

3 Պօղոս կարեվարներին խրատ է տալիս որ իրանց Եկեղեցու մէջ ամէն մարդ գլուխը ծածկած աղօթք կամ մարգարէութիւն չանէ · 5 Եւ ամէն կին էլ բաց գլխով աղօթք կամ մարգարէութիւն չանէ · 17 Եւ ցաւատուն նորանք որ իրանց միտեղ ժողովվելիս ոչ թէ դէպի լաւն՝ այլ դէպի վատն գնում էին, 21 Մին էլ որ իրանց ընթրիքումն Տէրի ընթրիքն ոչ ինչ էին համարում · 23 Վերջապէս Հաղորդութեան սեղանի առաջի հաստատած կերպն նորանց սովորցնում է։

1 Ինձ նմանօղ եղէք, ինչպէս որ ես էլ Քրիստոսի[1]։

2 Գովում եմ ձեզ՝ որ իմ ամէն բաներըս յիշում էք[2], եւ ինչպէս որ պատուիրեցի ձեզ՝ էն պատուիրանքները պահում էք[3]։

3 Կամենում եմ՝ որ դուք գիտենաք, թէ ամէն մարդոյ գլուխն Քրիստոս է[4], եւ կնկան գլուխն մարդն (է)[5], եւ Քրիստոսի գլուխն Աստուած[6]։

4 Ամէն մարդ՝ երբոր աղօթք անէ՝ կամ մարգարէանայ՝ եւ գլուխը ծածկած ունենայ, ամօթ է անում իրան գլուխը։

5 Եւ ամէն կին՝ երբոր աղօթք անէ՝ կամ մարգարէանայ բաց գլխով[8], ամօթ է անում իրան գլուխը · ինչու որ՝ էնպէս է համարվում՝ թէ վերսրած է[9]։

6 Որ չթէ կին քող չը քցէ՝ թող իրան մազերըն էլ կտրէ · ապա թէ որ կնկան անպատշաճ է մազերըն կտրել կամ վերանել[10] թող քող քցէ։

7 Որ մարդոյ պէտք չէ որ իրան գլուխըն ծածկէ, պատճառն որ՝ նա Աստուծոյ պատկեր եւ փառք է[11] · բայց կինն իրան մարդոյ փառքն է։

8 Ինչու որ՝ ոչ թէ մարդն կինն է, բայց կինն մարդուցն[12]։

9 Պատճառն որ՝ ոչ թէ մարդն կնկան համար ստեղծվեցաւ՝ բայց կինն մարդոյ համար[13]։

10 Վերահասար պէտք է, որ կինն մեծարանքի նշան դնէ գլխի վերայ[14] հրեշտակներին համար[15]։

11 Սակայն թէ՝ ոչ կինն առանց մարդոյ է, եւ ոչ մարդն առանց կնկան Տէրումն[16]։

12 Ինչու որ՝ ինչպէս որ կինն մարդուցն (էլաւ), էնպէս էլ մարդն կնկանիցն (է) · բայց ամէնն Աստուածմանից (է)[17]։

13 Ասայ դուք ինքներդ իրաւունք դատեցէք · միթէ կնկան արժան է՝ որ բաց գլխով աղօթք անէ Աստուծոյ առաջին։

14 Չէնց բնութիւնն էլ չէ՞ ստվերցնում ձեզ · պատճառն որ՝ թէ որ մարդն (երկար) մազեր ունի՝ էն անարգանք է նորան։

[1] ա Կորնթ · գ · 16։ Եփես · ե · 1։ Փիլիպ · գ · 17։ ա Թես · ա · 6։ բ Թես · գ · 9։ [2] ա Կորնթ · գ · 17։ [3] ա Կորնթ · է · 17։ բ Թես · բ · 14։ գ · 6։ [4] Եփես · ե · 23։ [5] Ծննդ · գ · 16։ ա Տիմ · բ · 11, 12։ ա Պետր · գ · 1, 5, 6։ [6] Ցնծ · ժգ · 28։ Կորնթ · գ · 23։ ԺԱ · 27 · 28։ Փիլիպ · բ · 7–9։ [7] ա Կորնթ · ԺԲ · 10, 28։ ԺԳ · 1։ Խոսքն · [8] Գործ · իա · 9։ [9] բ Օրին · իա · 12։ [10] Թես · ե · 18։ բ Օրին, իբ · 5։ [11] Ծննդ · ա · 26, 27։ ե · 1։ Թ · 6։ [12] Ծննդ · բ · 21, 22։ [13] Ծննդ · բ · 18, 21, 23։ [14] Ծննդ · խդ · 65։ [15] Ժող · ե · 6։ [16] Գաղ · գ · 28։ [17] Հռով · ԺԱ · 36։

15 Ասաց կինն Թէ որ երկար մազեր ունի՝ էն փառք է նորան, ինչու որ՝ երկար մազերն հագուստի տեղ է տրվված նորան:

16 Պա Թէ որ մինն կամենումէ հակառակիլ[18], մենք էնպէսի սովորութիւն չունինք՝ եւ ոչ էլ Աստուծոյ եկեղեցիներն[19]:

17 Ասաց էս էլ պատուիրումեմ՝ եւ չեմ գովում ձեզ, որ դուք ոչ Թէ դէպի լաւն՝ այլ դէպի վատն ընկած վաղումէք:

18 Նախ՝ երբոր միտեղ ժողովվումէք եկեղեցոյ մէջն, լսումեմ որ հերձուածներ կան ձեր միջումդ[20], եւ մին քիչ էլ հաւատացի:

19 Ասաց հերձուածներն էլ պիտի լինին ձեր միջումդ[21] որ նորանք՝ որ ձեզանում ընտիր են՝ յայտնի լինին[22]:

20 Ուրեմն երբոր միտեղ ժողովվումէք՝ Տէրի տունն ձեզ համար հաց ուտելոյ տեղ չէ:

21 Պատճառն որ՝ ամէն մէկն վաղաղումէ իրան ընթրիքըն ուտելոյ. եւ մինն սոված է, եւ մինն հարբած[23]:

22 Միթէ տուն չունիք ուտելոյ եւ խմելոյ. կամ Թէ Աստուծոյ եկեղեցին ոչ ինչ էք համարում[24], եւ էքաւրներին ամօթ էք քցում[25]. ինչ ասեմ. գովէմ ձեզ. էդ բանում չեմ գովում:

23 Պատճառն որ՝ ես Տէրիցն ընդունեցի էն՝ որ ձեզ էլ տուի[26], որ Տէր Յիսուսն էն գիշերումն որ մատնվումէր, հաց առաւ,

24 Գոհացաւ, կտրեց եւ ասաց. առէք, կերէք. էս է իմ մարմինն՝ որ ձեզ համար տրվումէ. էս արէք իմ յիշատակիս համար[27]:

25 Նմանէս էլ՝ ընթրիքը ուտելուցն ետու բաժակըն (Թասն) առաւ եւ ասաց. էս բաժակս նոր ուխտ ու պայման է իմ արիւնովս. էս արէք՝ քանի անգամ որ խմէք, իմ յիշատակիս համար:

26 Վրանի անգամ որ էս հացս ուտէք, եւ էս բաժակըս խմէք, Տէրի մահըն պատմեցիք՝ մինչեւ որ նա կըզայ[28]:

27 Ուրեմն ով որ էս հացըս ուտէ՝ կամ Տէրի բաժակըն խմէ անարժանութեամբ, նա պատասխան կըլինի Տէրի մարմնոյն եւ արիւնին[29]:

28 Մարդ մարդն փորձէ իրան անձըն, եւ ապա էն հացիցն ուտէ՝ եւ էն բաժակիցն խմէ[30]:

29 Պատճառն որ՝ նա որ անարժանութեամբ է ուտում եւ խմում, իրան անձին համար դատաստան է ուտում եւ խմում. ինչու որ՝ նա չի ջոկում Տէրի մարմինըն:

30 Ենց նրահամար էլ ձեր միջումդ շատ հիւանդներ եւ ցաւագարներ կան. եւ շատ էլ նորանք են՝ որ ննջած են:

31 Ինչու որ՝ եթէ մեր անձներըս կըքննէինք, ապա չէինք դատապարտվիլ[31]:

32 Եւ Թէ որ դատվինք՝ Տէրիցն

[18] ա Տիմ. գ. 4: [19] ա Կորնթ. է. 17: Ժդ. 33: [20] ա Կորնթ. ա. 10–12: գ. 3: [21] Մատթ. ԺԸ. 7: Ղուկ. ԺԷ. 1: Գործ. ի. 30: ա Տիմ. գ. 1: բ Պետր. բ. 1, 2: [22] Ղուկ. բ. 35: ա Ճոհն. բ. 19: բ Օրէն. Ժդ. 3: [23] բ Պետր. բ. 13: Ճուդ. 12: [24] ա Կորնթ. ժ. 32: [25] Ցակ. բ. 6: [26] ա Կորնթ. ԺԱ. 3: Գործ. ա. 1, 11, 12: [27] Մատթ. ԻԶ. 26: Մարկ. Ժդ. 23: Ղուկ. ԻԲ. 19: [28] Ճոհն. Ժդ. 3: իա. 22: Գործ. ա. 11: ա Կորնթ. գ. 5: ԺԱ. 23: ա Թես. գ. 15: բ Թես. ա. 10: Ճուդ. 14: Ճայտ. ա. 7: [29] Թագ. Ի. 10, 13: Ճոհն. զ. 51. 63, 64: Ժդ. 27: ա Կորնթ. ժ. 21: [30] բ Կորնթ. Ժդ. 5: Գործ. զ. 3: [31] Պաւղ. Լե. 5: ա Ճոհն. ա. 9:

խրատովմունք[32], որ աշխարհքի հետ չըգատապարտվինք։

33 Ուրեմն եղբարք՝ երբոր ժողովիք ուտելոյ համար, իրար սպասեցէք։

34 Ապա թէ որ մինն սոված է[33]՝ թող իրան տանն ուտէ[34], որ դատապարտութեան համար չըժողովվիք. բայց ուրիշ բաներըն՝ երբոր կըգամ[35]՝ էն ժամանակն կըպատուիրեմ[36]։

## ԳԼ · ԺԲ

*1 Հոգեւոր շնորհքներն, 4 Բաժանված են, 7 Ամէն մէկին տըրված է Հոգոյ յայտնութիւն ամէն մէկի չահին համար, 8 Նըշանաւոր էնպես կերպ կերպ տըրված են, 12 Ինչպես որ մարմնի անդամներըն մին հատ ասարութիւն ունին եւ ամէնըն էլ մին ուղղ, պես որ մարմնի անդամներըն մին հատ ասարութիւն ունին եւ ամէնըն էլ մին ուղղ, 15 Իրար օգնութիւն անուն, 32 Եւ իրար ծառայում, 26 Եւ նա մարմնի հետ վարվում, 27 Ինչպես էլ մինք՝ պէտք է որ իրար օգնինք, որ Քրիստոսի մին հոգեւոր մարմին լինինք շատ անդամներ միասին։*

1 Բայց հոգեւոր (շնորհքներին) համար, եղբարք՝ չեմ կամենում որ չըգիտենաք[1]։

2 Ձեզ գուք լաւ գիտումիք՝ որ երբոր հեթանոս էիք[2], ինչպես էն անձայն կըռքերին (հետեւած)՝ գընում էիք եւ գալիս էիք[3]։

3 Ուրահամար յայտնի ասումեմ ձեզ, որ ոչ ով չըկայ՝ որ Աստուծոյ հոգովն խոսի՝ եւ Յիսուսին նզովք կարդայ[4]. եւ ոչ ով չի կարող Յիսուսին Տէր ասել՝ եթէ ոչ սուրբ հոգովն[5]։

4 Թէեւ շնորհքներն բաժանված են[6], բայց հոգին հենց մին է[7]։

5 Թէ որ պաշտօններն բաժանված են, բայց Տէրն հենց մին է[8]։

6 Թէ որ յայտնութիւններն բաժանված են՝ բայց Աստուած հենց մին է, որ ամէնըն ամէն բանի մէջն յայտնում[9]։

7 Բայց ամէն մէկին տըրված է հոգոյ յայտնութիւն՝ ամէն մէկի չահին համար[10]։

8 Ա՛ընին հոգուցն տըրված է իմաստութեան խօսք[11]. ուրիշին գիտութեան խօսք՝ հենց էն հոգոյ ձեռովն[12]։

9 Ա՛ւելին հաւատք հենց էն հոգովն[13]. ուրիշին բժշկութեան շնորհք հենց էն հոգովն[14]։

10 Ուրիշին զօրութիւններ անելոյ յայտնութիւն[15]. ուրիշին մարգարէութիւն[16]. ուրիշին հոգիներին ընտրութիւն[17]. ուրիշին կերպ կերպ լեզուներ[18]. ուրիշին լեզուներին

[32] Սալմ. ղդ. 12, 13։ Եբր. ժբ. 5–11։ [33] Ա՛բր. 21։ [34] Ա՛բր. 22։ [35] ա Կորնթ. դ. 19։ [36] ա Կորնթ. է. 17։ Տիտ. ա. 5։ [1] ա Կորնթ. ժգ. 1, 37։ [2] ա Կորնթ. զ. 11։ Եփես. բ. 11, 12։ աթես. ա. 9։ Տիտ. գ. 3։ ա Պետր. դ. 3։ [3] Սալմ. ճժե. 5։ [4] Մարկ. ի. 39։ ա Ցովհ. գ. 2, 3։ [5] Մատթ. ժզ. 17։ Ցովհ. ժե. 26։ բ Կորնթ. գ. 5։ [6] Հռոմ. ժբ. 4, խոսքն։ Եբր. բ. 4։ ա Պետր. դ. 10։ [7] Եփես. դ. 4։ [8] Հռոմ. ժբ. 6–8։ Եփես. դ. 11։ [9] Եփես. ա. 23։ [10] Հռոմ. ժբ. 6–8։ ա Կորնթ. ժգ. 26։ Եփես. դ. 7։ ա Պետր. գ. 10, 11։ [11] ա Կորնթ. բ. 6, 7։ [12] ա Կորնթ. ղա. 5։ ժգ. 2։ բ Կորնթ. ը. 7։ [13] Մատթ. ժէ. 19, 20։ ա Կորնթ. ժգ. 2։ բ Կորնթ. գ. 13։ [14] Մարկ. ժգ. 18։ Յակ. ե. 14։ [15] Վտբ. 28, 29։ Մարկ. ժգ. 17։ Գործ. գ. 5։ [16] Հռոմ. ժբ. 6։ ա Կորնթ. ժգ. 2։ ժգ. 1, խոսքն։ [17] ա Կորնթ. ժգ. 29։ ա Ցովհ. գ. 1։ [18] Գործ. բ. 4։ ժ. 46։ ա Կորնթ. ժգ. 1։

թարգմանութիւններ։

11 Այլ ես ամէնքս հինգ էն մին հոգին է յաջողում, եւ ամէն մէկին բաժանում[19] ինչպէս որ կամենում[20]։

12 Ինչպէս որ մարմին մինն է, եւ շատ անդամներ ունի. եւ մարմնոյ էն ամէն շատ անդամներն մին մարմին են[21]. ենպէս էլ Քրիստոս[22]։

13 Պատճառն որ՝ մենք ամէնքս մին հոգով մկրտվեցանք մին մարմին լինելոյ[23]. թէ հրէաներ, թէ հեթանոսներ, թէ ծառաներ, թէ ազատներ[24], ամէնքս մին հոգին խըմեցինք[25]։

14 Ինչու որ՝ մարմինն մին անդամ չէ, այլ շատ։

15 Թէ որ ոտն ասէ, որովհետեւ ձեռն չեմ՝ էլ էն մարմնիցն չեմ, միթէ նրանով էն մարմնիցն չի՞ լինիլ։

16 Եւ թէ որ ականջն ասէ, որովհետեւ ես աչք չեմ՝ էլ էն մարմնիցն չեմ. միթէ նրանով էն մարմնիցն չի՞ լինիլ։

17 Թէ որ ամէն մարմինն աչք լինէր՝ էլ որ տեղ էր ականջն. եւ թէ որ ամէն մարմինն լսելիք լինէր՝ էլ որ տեղ էր հոտոտելիքն։

18 Այլ հիմիկ Աստուած անդամներըն՝ նորանցից ամէն մէկըն մին մին դրաւ մարմնոյ մէջ[26] ինչպէս որ կամեցաւ[27]։

19 Այդ թէ որ ամէնն մին անդամ լինէր, որ տեղ էր մարմինն։

20 Այլ հիմիկ անդամներն շատ են, եւ մարմինն՝ մին։

21 Աչքն չի կարող ձեռին ասել, թէ ինձ պէտք չես. կամ միւսլ գլուխն ոտներին՝ թէ ինձ պէտք չէք։

22 Այլ աւելի էլ՝ մարմնոյ էն անդամներն՝ որ երեւումն թէ շատ տկար են, նորանք շատ հարկաւոր են։

23 Եւ նորանք՝ որ երեւումն՝ թէ մարմնոյ շատ անարգ վածներն են, նորանց էլ աւելի պատիւ ենք ածնում. եւ մեր ամօթալիքներն էլ աւելի պարկեշտութիւն ունին։

24 Եւ մեր պարկեշտ (անդամներին) մին բան պէտք չէ. պատճառն որ՝ Աստուած մարմինըն բարեխառնեց, եւ ցածին էլ աւելի պատիւ տուաւ։

25 Որ էն մարմնոյ մէջն տարաձայնութիւն չըլինի, բայց որ հինգ էն անդամներն իրար համար հոգ ունենան։

26 Եւ թէ որ մին անդամ ցաւում, ամէն անդամներն էլ նորա հետ ցաւումն. եւ թէ որ մին անդամ փառաւորվում, ամէն անդամներն էլ նորա հետ ուրախանում։

27 Այլ դուք Քրիստոսի մարմին էք[28], եւ նորա անդամներիցն անդամներ[29]։

28 Եւ նորանք՝ որ Աստուած եկեղեցում դրաւ, սորանք էն[30], առաջ՝ առաքեալներըն[31]. երկրորդ՝ մարգարէներըն[32]. երրորդ՝ վարդապետներըն. յետոյ զօրութիւններըն[33]. յետոյ բժշկութիւններըն[34], օգնութիւններըն[35], կառավարութիւններըն[36], կերպ կերպ

[19] Հռով. ժբ. 6։ ա Կորնթ. է. 7։ բ Կորնթ. ժ. 13։ Եփես. դ. 7։ [20] Ցուն. գ. 8։ Եբր. բ. 4։ [21] Հռով. ժբ. 4, 5։ Եփես. դ. 4, 16։ [22] ա Կորնթ. ժբ. 27։ Գաղ. գ. 16։ [23] Հռով. գ. 5։ [24] Գաղ. գ. 28։ Եփես. բ. 13, 14, 16։ Կող. գ. 11։ [25] Ցուն. գ. 64. է. 37–39։ [26] ա Կորնթ. ժբ. 28։ [27] Հռով. ժբ. 3։ ա Կորնթ. գ. 5։ վէր. 11։ [28] Հռով. ժբ. 5։ Եփես. ա. 23։ գ. 12։ ե. 23, 30։ Կող. ա. 24։ [29] Եփես. ե. 30։ [30] Եփես. դ. 11։ [31] Եփես. բ. 20։ գ. 5։ [32] Գործ. ժգ. 1։ Հռով. ժբ. 6։ [33] վէր. 10։ [34] վէր. 9։ [35] Թես. ժա. 17։ [36] Հռով. ժբ. 8։ ա Տիմ. ե. 17։ Եբր. ժգ. 17, 24։

լեզուներըն[37], լեզուների թարգմանՙ նութիւններըն:

29 Ո՛րիվ ամէնքն առաքե՞լ են, միթէ ամէնքն մարգարէ՞ են, միթէ ամէնքն վարդապե՞տ են, միթէ ամէնքն զօրութի՞ւն (անօղ) են:

30 Ո՛րիվ ամէնքն բժշկութեան շնորհքնե՞ր ունին, միթէ ամէնքն լեզունե՞ր են խօսում, միթէ ամէնքն թարգմանո՞ւմեն:

31 Նայց գուք խիստ հետեւեցէք էն շնորհքներին՝ որ շատ լաւ են[38], բայց ես էլ աւելի (լաւ) ճանապարհ եմ ցոյց տալիս ձեզ:

## Գ Ա Ղ · ԺԳ

1 Ամէն պարգեւներըն, 2 Որչափ լաւ որ լինին, գէռ առանց սէրի ոչինչ են. 4 Սէրի պատուղներըն, 13 Եւ թէ՝ նա յոյսից եւ հաւատքիցն շատ լաւ եւ պատուական է:

1 ԹՈ՛Ւէ որ մարդկանց եւ հրեշտակների լեզուներովն խօսիմ՝ եւ սէր չունենամ, ես պղինձի պէս կըլինիմ՝ որ ձայն է հանում, կամ ծընծդանների պէս՝ որ ձայնում են:

2 Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ, եւ ամէն խորհուրդներըն գիտենամ՝ եւ ամէն գիտութիւնըն[1], եւ թէ որ ամէն հաւատք ունենամ՝ մինչեւ որ սարերըն էլ փոփոխեմ[2], եւ սէր չունենամ, ոչ ինչ եմ:

3 Եւ թէ որ իմ ամէն ապրանքըս աղքատներին ուտացնեմ[3], եւ իմ մարմինըս մատնեմ որ այրվի, եւ սէր չունենամ, ես խէկի մին օգուտ չեմ ունենալ:

4 Սէրն[4] երկայնամիտ է՝ քաղցր է. սէրն չի նախանձվում, չի գոռոզանում, չի հպարտանում:

5 Չի լըբանում, իրան բանըն չի ուզում[5], չի դրդվում, չար բան չի մտածում:

6 Նրաւութեան համար չի ուրախանում[6], բայց ճշմարտութեան համար ուրախանում[7]:

7 Ամէն բանի դիմանում[8], ամէն բանի հաւատում, ամէն բանի համբերում:

8 Սէրն խէկի մին ժամանակ վեր չի ընկնիլ. թէ որ մարգարէութիւններ կան՝ կըխափանվին. թէ որ լեզուներ՝ լուռ կըկենան. թէ որ գիտութիւն՝ կըխափանվի:

9 Պատճառն որ՝ փոքր ի շատ գիտում ենք. եւ փոքր ի շատ մարգարէանում ենք[9]:

10 Նայց երբոր կատարեալն կըգայ, ես փոքր ի շատս կըխափանվիմ:

11 Երբոր տղայ էի՝ տղայի պէս էի խօսում, տղայի պէս էի մտածում, տղայի պէս էի համարում. բայց երբոր մարդ էլայ՝ էն տղայութեան բաներըն հետս (արի) խափանեցի:

12 Հիմիկ իբր թէ հայելոյ միջին օրինակով ենք տեսնում[10], բայց էն ժամանակն դէմադէմ[11]. հիմիկ փոքր ի շատ տեղեակ եմ, բայց էն ժամանակն էնպէս կըգիտենամ՝ ինչպէս

[37] Գործ. 10 [38] Ա Կորնթ. Ժդ. 1, 39: [1] Ա Կորնթ. Ժբ. 8, 9, 10, 28: Ժդ. 1, Եփես: Մատթ. է. 22: [2] Մատթ. Ժէ. 19: Մարկ. Ժա. 23: Ղուկ. Ժէ. 6: [3] Մատթ. ղ. 1, 2: [4] Ընթ. Ժ. 13: ա Պետր. գ. 8: [5] Ա Կորնթ. Ժ. 24: Փիլիպ. բ. 4: [6] Յովհ. Ժ. 3: Հռոմ. ա. 32: [7] Ը Ցովհ. 4: [8] Հռոմ. Ժե. 1: Գաղ. գ. 2: Բ Տիմ. բ. 24: [9] Ա Կորնթ. ը. 2: [10] Բ Կորնթ. գ. 18: Ե. 7: [11] Մատթ. Ժը. 10: Ա Ցովհ. գ. 2:

որ էլ նա ինձ ճանաչէց։
13 Ուրեմն կըմնան՝ հաւատք, յոյս, սէր. էս երեքս. եւ սորանցում մեծն սէրն է։

## ԳԼ· ԺԴ

1 Մարգարէութիւն, 3, 3, 4 Լեզուներով խօսելուցն աւելի լինելն. 7 Փողի կամ քնարի ձայնովն օրինակ է տալիս. 12 Էն երկուքն էլ պէտք է եկեղեցոյ շինութեան համար, 22 Լեզուներն նշանի համար են անհաւատներին, բայց մարգարէութիւնն հաւատացեալներին համար է. 26 Սորանց անելոյ լաւ կերպն ասըվորցնում, 29 Եւ չար կերպով չանելոյ վերայ խրատ է տալիս. 34 Կանայքն պէտք է որ ամէն եկեղեցիներումն լռեն կենան։

1 Ամրոյն հետեւեցէք, եւ հոգեւոր (շնորհքներին) ետեւէն ելէք[1]. եւ աւելի նորան՝ որ դուք էլ մարգարէանաք[2]։

2 Պատճառն որ՝ նա որ լեզուներով խօսում է, մարդկանց հետ չի խօսում, այլ Աստուծոյ հետ[3], ինչու որ ոչ ով չըկայ՝ որ լսում է, բայց հոգովն խորհուրդներ է խօսում[4]։

3 Իսկ նա՝ որ մարգարէանում է, մարդկանց շինութիւն եւ մխիթարութիւն եւ սիրտ տուօղ բան է խօսում։

4 Նա որ լեզուներով խօսում է, իրան անձըն է շինում, եւ նա՝ որ մարգարէանում է, եկեղեցին է շինում։

5 (Ես) կամենում եմ որ դուք ամէնքդ լեզուներով խօսէք, բայց էլ աւելի որ մարգարէանաք. ինչու որ՝ աւելի լաւ է նա՝ որ մարգարէանում է, քանի է նա՝ որ լեզուներով խօսում է. միայն թէ որ թարգմանէ՝ որ եկեղեցին շինութիւն առնէ։

6 Իսկ հիմի ընդարձակ՝ թէ որ ես ձեզ մօտ գամ եւ լեզուներով խօսիմ, ի՞նչ օգուտ կըլինի ձեզ՝ որ չըխօսիմ կամ յայտնութիւնով[5], կամ գիտութիւնով, կամ մարգարէութիւնով, կամ վարդապետութիւնով։

7 Ինպէս՝ ինչպէս որ շունչ չունօղ բաներն որ ձայն են տալիս, փող լինի, թէ քնար լինի. թէ որ ձայնի մին զանազանութիւն չանեն, ի՞նչպէս կըճանաչվի փողի փչելն, կամ քնարի ձայն հանելն։

8 Ինչու որ՝ եթէ փողն խառնած ձայն դուրս տայ, էլ ո՞վ կըպատրաստվի պատերազմի համար։

9 Ինպէս էլ դուք՝ թէ որ լեզուներովն բանըն յայտնի չասէք՝ էն խօսքն ի՞նչպէս կիմացվի. ինչու որ՝ իբր թէ օդին (հաւային) հետ խօսած կըլինիք։

10 Պատճառն որ՝ էն քան կերպ ձայներ կան աշխարհքումն. եւ նորանց խըմի մին էլ առանց ձայնի չէ։

11 Ուրեմն թէ որ ես ձայնի զօրութիւնըն չըգիտենամ, ապա նորան՝ որ ինձ հետ խօսում՝ խուժ կըլինիմ, եւ նա որ ինձ հետ խօսում՝ (ինձ համար) դուժ։

12 Ինպէս էլ դուք՝ որ հոգեւոր (շնորհքներին) հետեւում էք, եկեղեցոյ շինութեան համար ջանք էք անում՝ որ էլ աւելի առնէք։

13 Ուրեմն նա՝ որ լեզուներով

[1] ա Կորնթ. 31։ [2] Թես. ա. 25, 29։ [3] Գործ. ը. 4։ ժ. 46։ [4] Գործ. իբ. 9։ [5] Վերջ 26։

խօսումէ, թէզ աղօթիք անէ՝ որ էլ թարգմանէ։

14 Եթէ որ ես աղօթիք անեմ՝ (օտար) լեզուով՝ իմ հոգիս է աղօթիք անում, բայց միտքս պտուղ չի տալիս։

15 Ուպա ուրեմն ինչ պիտի լինի· աղօթիք անեմ հոգով էլ, աղօթիք անեմ մտքով էլ· սաղմոս ասեմ հոգով[6], սաղմոս ասեմ մտքով էլ[7]։

16 Ուպա թէ չէ՝ թէ որ դու օրհնես հոգով, նա որ տգէտի կարգումն է՝ ինչպէս ամէն ասէ քո օրհնութեան համար[8]· պատճառն որ՝ նա չի գիտում էն՝ որ դու ասում ես։

17 (Իրաւի՛) որ դու լաւ ես գոհանում, բայց ընկերն չի շինվում (նորանով)։

18 Գոհանում եմ Աստուածանից՝ նրա համար որ ձեզանից ամէնիցդ աւելի լեզուներով խօսում եմ։

19 Ուպա եկեղեցու մէջն աւելի կամենում եմ որ հինգ խօսք մտքով խօսիմ՝ որ ուրիշներին խրատ տամ, քանթէ շատ խօսքեր լեզուներով։

20 Ախպերք՝ մտքով տղայ մի լինէք[9]· բայց չարութեանին (հետևանով) տղայ էլէք[10], եւ մտքով կատարեալ էլէք[11]։

21 Պատճառն որ՝ օրէնքումն էլ[12] գրված է[13], թէ օտար լեզուներով եւ օտար պռօշներով կըխօսիմ էդ ժողովրդիդ հետ, բայց էնպէս էլ ինձ ականջ չեն դնիլ՝ ասում Տէրն։

22 Ուպա ուրեմն՝ լեզուներն նշանի համար են՝ ոչ թէ հաւատացեալներին՝ այլ անհաւատներին· բայց մարգարէութիւնն ոչ թէ անհաւատներին՝ այլ հաւատացեալներին համար է։

23 Ուպա թէ որ բոլոր եկեղեցին միևտեղ գայ, եւ ամէնքն լեզուներով խօսին· եւ տգէտներ եւ անհաւատներ մտնեն էնտեղ, միթէ չէն ասիլ թէ՝ դուք գժված էք[14]։

24 Ուպա թէ որ ամէնքն մարգարէանան, եւ մին անհաւատ կամ տգէտ մարդ էն տեղ մտնէ, նա ամէնիցն կըդատնիմանվի, եւ ամէնիցն կըքննըվի։

25 Նրա նորա սրտի ծածուկն յայտնի կըլինի· եւ ապա երեսին վերայ ընկած Աստուծոյն երկրպագութիւն կանէ, եւ խոստովան կըլինի թէ՝ ուղղրդ որ Աստուած ձեր միջումն է[15]։

26 Ուրեմն ինչպէս է եղբայրք· երբոր միտեղ ժողովվիք, ձեզանից ամէն մէկն թէ սաղմոս ունենայ, թէ վարդապետութիւն ունենայ[16], թէ յայտնութիւն ունենայ, թէ լեզու ունենայ, թէ թարգմանութիւն ունենայ, էն ամէնն թէզ շինութեան համար լինի[17]։

27 Եթէ որ մինն լեզուներով խօսի՝ թէզ երկու, եւ թէ որ էլ աւելի շատ՝ երեք լինին, եւ ապա մինն մընիցն եաեւ· եւ մինն թէզ թարգմանէ։

28 Ուպա թէ որ մին մարդ չըկայ որ թարգմանէ, թէզ լուռ կինայ եկեղեցումն, թէզ իրան մտքումն եւ Աստուծոյ հետ խօսի։

29 Նայց մարգարէներն թէզ երկու կամ երեք խօսին, եւ ուրիշներն քննեն[18]։

[6] Եփես. ե. 19։ Կող. գ. 16։ [7] Սալմ. խե. 7։ [8] ա Կորնթ. ժա. 24։ [9] Սալմ. ճլա. 2։ Մատթ. ժա. 25։ Ժը. 3։ Ժթ. 14։ Հռոմ. ժգ. 19։ ա Կորնթ. գ. 2։ Եփես. գ. 14։ Եբր. ե. 12, 13։ [10] Մատթ. Ժը. 3։ ա Պետր. բ. 2։ [11] ա Կորնթ. բ. 6։ [12] Ցածր. ժ. 34։ [13] Եսայ. իը. 11, 12։ [14] Գործ. բ. 13։ [15] Եսայ. խե. 14։ Զաք. ը. 23։ [16] Վէր. 6։ ա Կորնթ. ժբ. 8–10։ [17] ա Կորնթ. ժբ. 7։ բ Կորնթ. ժբ. 19։ Եփես. գ. 12։ [18] ա Կորնթ. ժբ. 10։

30 Ասաց Թէ որ Մին ուրիշն՝ որ էնտեղ նստած է՝ յայտնութիւն լինի, էն առաջինն Թող լուռ կենայ[19]։

31 Պատճառն որ՝ կարօղ էք Մինն մընից եառեւ մարգարէանալ, որ ամէնքն սովորին, եւ ամէնքն մխիթարվին։

32 Ինչու որ՝ Հինց մարգարէների հոգիներն էլ՝ մարգարէներին հնազանդվումեն[20]։

33 Պատճառն որ՝ Աստուած խռովութեան (Աստուած) չէ, բայց խաղաղութեան. ինչպէս որ սըրբերի ամէն եկեղեցիներումն[21]։

34 Ամանքն ամէն եկեղեցիներումն լուռ կենան[22]. ինչու որ՝ նոքանց Հրաման չըկայ որ խօսին՝ այլ որ հնազանդ լինին[23]. ինչպէս որ օրէնքն էլ ասումէ[24]։

35 Ապա Թէ որ Մին բան կամենան սովորիլ՝ Թող տան ամէն իրանց մարդկանցիցն Հարցնեն. ինչու որ՝ կնկանն չի վայելում՝ որ եկեղեցումն խօսի։

36 Աւետեաց Աստուծոյ խօսքն ձեզանից դուրս եկաւ, կամ Թէ ամենուկ ձեզ Հասաւ։

37 Ասաց Թէ որ Մինն կարծէ[25]՝ որ նա մարգարէ է՝ կամ Հոգեւոր, Թող գիտենայ էդ որ գրեցի ձեզ, որ Տէրի պատուիրանքն է։

38 Ապա Թէ որ Մինն տգէտ է՝ Թող տգէտ լինի։

39 Վերումն եղբարք՝ ջանք արէք որ մարգարէանաք[26], եւ լեզուներով խօսելն մի արգելէք։

40 Լաւ ձեր ամէն բանն Թող պարկեշտութեամբ եւ կարգով լինի[27]։

## ԳԼ · ԺԱ

8 Պօղոս Քրիստոսի յարութիւն առնելուն, 12 Մեր յարութիւն առնելն Հաստատումն մեռելների յարութիւն առնելն ուրացօղներին դէմ. 20 Յարութեան պատուղն, 35 Եւ կերպն, եւ էլ վերջն օրն ողջ մնացօղների նորոգվելոց խորհուրդն։

1 Յայտնումեմ ձեզ եղբարք էն աւետարանն՝ որ աւետարանեցի[1], որ նորան էլ ընդունեցիք, որ նորանումէ էլ Հաստատված էք[2]։

2 Որ նորանով ապրեցաք[3], էն բանով՝ որ ձեզ աւետարանեցի, Թէ որ բռնած ունենաք, եթէ ղուրտներն չէք Հաւատացել[4]։

3 Պատճառն որ՝ ես առաջուց էի տուի ձեզ[5] որ ես էլ ընդունեցի[6], Թէ Քրիստոս մեր մեղաց Համար մեռաւ՝ գրքերի ասածին պէս[7]։

4 Եւ Թէ Թաղվեցաւ, եւ Թէ երկրորդ օրումն յարութիւն առաւ՝ գրքերին պէս[8]։

5 Եւ Թէ երեւեցաւ Կեփասին[9],

[19] ա Թես. ե. 19, 20։ [20] ա Յովհ. գ. 1։ [21] ա Կորնթ. ժա. 16։ [22] ա Տիմ. բ. 11, 12։ [23] ա Կորնթ. ժա. 3։ Եփես. ե. 23։ Կող. գ. 18։ Տիտ. բ. 5։ ա Պետր. գ. 1։ [24] Ծննդոց. գ. 16։ [25] բ Կորնթ. ժ. 7։ ա Յովհ. գ. 6։ [26] ա Կորնթ. ժբ. 31։ ա Թես. ե. 20։ [27] ովբ. 33։ [1] Գաղատ. 11։ [2] Հռոմ. բ. 5։ [3] Հռոմ. ա. 16։ ա Կորնթ. ա. 21։ [4] Գաղ. գ. 4։ [5] ա Կորնթ. ժա. 2, 23։ [6] Գաղ. ա. 12։ [7] Սաղմ. իբ. 15, Եսայի. Եսայ. ծգ. 5, 6, Եսայի. Դան. թ. 26։ Զաք. ժգ. 7։ Ղեւ. իդ. 26, 46։ Գործ. գ. 18։ իզ. 23։ ա Պետր. ա. 11։ բ. 24։ [8] Սաղմ. բ. 7։ ժզ. 10։ Եսայ. ծգ. 10։ Ովսէ. գ. 2։ Ղեւ. իդ. 26, 46։ Գործ. բ. 25–31։ ժգ. 33–35։ իզ. 22, 23։ ա Պետր. ա. 11։ [9] Ղեւ. իդ 4

եւ յետոյ էն տաններկուսին[10]։

6 Յետոյ երեւեցաւ Հինգ հարիւրից աւելի եղբայրներին միանգամ, որ նորանցից շատերն մինչեւ հիմիկ կան, եւ մին քանիսն ննջեցին (մեռան)։

7 Յետոյ երեւեցաւ Յակոբին, յետոյ ամէն առաքեալներին[11]։

8 Ամենից ետեւ իբր թէ մին անպիտանի՝ ինձ էլ երեւեցաւ[12]։

9 Ինչու որ ես առաքեալների յետինն եմ[13], որ հենց արժանի չեմ առաքեալ կոչվելոյ. ինչու որ՝ Աստուծոյ եկեղեցին հալածեցի[14]։

10 Այլ Աստուծոյ շնորհքովն եմ ինչ որ եմ[15], եւ նորա շնորհքն՝ որ ինձանում է՝ ունայն չէլաւ. այլ նորանցից ամենից աւելի աշխատեցի[16]. եւ ես՝ ոչ թէ ես[17], այլ Աստուծոյ շնորհքն՝ որ ինձ հետ է։

11 Այս թէ ես՝ եւ թէ նորանք՝ էսպէս քարոզեցինք, եւ դուք էս պէս հաւատացիք։

12 Այս թէ որ Քրիստոսն քարոզվում՝ որ մեռելների միջից յարութիւն է առել, էլ ինչպէս ձեզանից միքանիսն ասումեն՝ թէ մեռելների յարութիւն չըկայ։

13 Թէ որ մեռելների յարութիւն չըկայ, ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել[18]։

14 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ունայն է մեր քարոզութիւնս, ունայն է ձեր հաւատքն էլ։

15 Եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնվում, որ Աստուծոյ համար վկայեցինք՝ թէ Քրիստոսն յարոյց[19], որ իրաւի չըյարոյց՝ թէ որ մեռելներն յարութիւն չառնեն։

16 Ասյց թէ որ մեռելներն յարութիւն չեն առնում՝ ապա Քրիստոս էլ յարութիւն չի առել։

17 Եւ թէ որ Քրիստոս յարութիւն չի առել՝ ունայն է ձեր հաւատքն. եւ դեռ էն ձեր մեղաց մէջն էք կենում[20]։

18 Ապա նորանք՝ որ Քրիստոսումն ննջեցին (մեռան), կորա՞ն։

19 Թէ որ մենք միայակ էս կեանքովս յոյս ունինք Քրիստոսի վրայ, ամէն մարդկանցից աւելի ողորմելի ենք[21]։

20 Ասյց հիմիկ՝ Քրիստոս յարութիւն է առել մեռելների միջիցն[22] ինքն ննջածնների առաջինեակ պատուղն (էլած)[23]։

21 Պատճառն որ՝ մարդով էլաւ մահն[24], եւ մարդով մեռելների յարութիւնն[25]։

22 Ինչպէս որ ադամիմն ամէնքն մեռնումեն՝ էնպէս էլ Քրիստոսումն ամէնքն կենդանի կըլինեն։

23 Ամեն մէկն իրան կարգումն. առաջ Քրիստոս[26], եւ յետոյ Քրիստոսեանները նորա գալոյ ժամանակումն։

24 Եւ ապա վերջն, երբոր թագաւորութիւնըն Աստուծոյ եւ Հօր

[10] Մարկ. ի. 17։ Մարկ. ժզ. 14։ Ղուկ. իդ. 36։ Ցովհ. ի. 19, 26։ Գործ. ժ. 41։ [11] Ղուկ. իգ. 50։ Գործ. ա. 3, 4։ [12] Գործ. թ. 4, 17։ իե. 14, 18։ ա Կորնթ. թ. 1։ [13] Եփես. գ. 8։ [14] Գործ. ը. 3։ թ. 1։ Գաղ. ա. 13։ Փիլիպ. գ. 6։ ա Տիմ. ա. 13։ [15] Եփես. բ, 7, 8։ [16] բ Կորնթ. ժա. 23։ ժբ. 11։ [17] Մարկ. ժ. 20։ Հռոմ. ժե. 18, 19։ բ Կորնթ. գ. 5։ Գաղ. բ. 8։ Եփես. գ. 7։ Փիլիպ. բ. 13։ [18] ա Թես. դ. 13, [19] Գործ. բ. 24, 32։ գ. 10, 33։ ժգ. 30։ [20] Հռոմ. գ. 25։ [21] բ Տիմ. գ. 12։ [22] ա Պետր. ա. 3։ [23] Գործ. իգ. 23։ Կայ. ա. 18։ Յայտ. ա. 5։ [24] Հռոմ. ե. 12, 17։ [25] Ցովհ. ժա. 25։ Հռոմ. ը. 23։ [26] Կէր. 20։ ա Թես. գ. 14, 15, 16։

ձեռքն կրտայ[27]. երբոր կրևսիափանէ ամէն իշխանութիւններըն եւ ամէն պետութիւնըն եւ զօրութիւնըն:

25 Պատճառն որ՝ պէտք է որ նա թագաւորէ՝ մինչեւ որ ամէն թշնամիներըն իրան ոտաց ներքեւն դնէ[28]:

26 Յետին թշնամին՝ որ կրևսիափանվի՝ մահն է[29]. (ինչու որ) ամէն բան հնազանդացուց Աստուած ոտաց տակն[30]:

27 Ասաց երբոր ասէ՝ թէ ամէն բան հնազանդ է Աստուած, բայցանի է որ Աստուածից զատ (առ՚ն) (է)՝ որ ամէն բան հնազանդացուց Աստուած:

28 Ասաց երբոր ամէնն կրհնազանդվի Աստուած[31] էն ժամանակն ինքն որդին էլ կրհնազանդվի Աստուած՝ որ ամէնըն հնազանդացուց Աստուած[32], որ Աստուած լինի ամէնն ամէն բանի մէջ:

29 Ապա թէ չէ՝ ի՞նչ կանեն նոքանք, որ մեռելներին համար մկրտվումեն՝ թէ որ մեռելներն յարութիւն չառնեն. էլ իսկի ինչու են նորանց համար մկրտվում:

30 Ինչու մենք էլ ամէն ժամանակ նեղութիւն ենք քաշում[33],

31 Այս ամէն ժամանակ մեռնում ենք[34], երդում եմ ուսում ձեր քաջութիւն՝ ձեր պարծանքովն՝ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն ունիմ[35]:

32 Թէ որ մարդոյ համար եվեսոսումն գազաններուն կռվի մէջ մտել էի[36] էն ի՞նչ օգուտ էր ինձ համար, թէ որ մեռելներն յարութիւն չեն առնում. ուտենք՝ խմենք, ինչու որ էգուց կրմեռնինք[37]:

33 Մի խաբվիք. չար խօսքեր սպականումեն քաղցր վարքերն[38]:

34 Զթձուն կացէք արդարութեամբ՝ եւ մեղք մի գործէք[39]. ինչու որ՝ մինքանիսն Աստուծոյ գիտութիւն չունին[40]. էս ձեր ամօթի համար եմ ասում[41]:

35 Ասյց կրլինի որ մինն ասէ. մեռելներն ի՞նչպէս յարութիւն կառնեն՝ կամ թէ ի՞նչ մարմնով կրգան[42]:

36 Անիմա, էն՝ որ դու սերմումես, չի կենդանանալ՝ թէ որ (առաջ) չմեռնի[43]:

37 Եւ էն՝ որ սերմումես, չէ թէ էն մարմինըն՝ որ պիտի ծնվի՝ սերմումես, բայց մին մերկ հատ. թէ գորնեի լինի, եւ թէ ուրիշ սերմունքներից:

38 Եւ Աստուած մարմին է տալիս նորան՝ ինչպէս որ էլ կամենում, եւ ամէն մէկ սերմունքներին իրանց մարմինըն:

39 Ամէն մարմին հենց մին մարմին չէ. այլ՝ ուրիշ մարմին է մարդկանց, ուրիշ մարմին անասուններին. ուրիշ մարմին թռչուններին՝ եւ ուրիշ մարմին ձկներին:

40 Եւ (կան) երկնաւոր մարմիններ՝ եւ երկրաւոր մարմիններ. բայց ուրիշ փառք ունին երկնաւորներն՝ եւ ուրիշ փառք երկրաւորներն:

41 Ուրիշ փառք է արեգականն՝ եւ ուրիշ փառք լուսնին, ուրիշ փառք աստղներին. եւ մին աստղն մեկել աստղեցն աւելի է փառքով:

42 Ինպէս էլ մեռելների յարու-

---

[27] դան. է. 14, 27: [28] Սաղմ. ճԺ. 1: Գործ. բ. 34, 35: Եփես. ա. 22: Եբր. ա. 13: Ժ. 13: [29] ա Տիմ. ա. 10: Յայտ. ք. 14: [30] Սաղմ. ը. 6: Մատթ. իը. 18: Եբր. բ. 8: ա Պետր. գ. 22: [31] Փիլիպ. գ. 21: [32] ա Կորնթ. գ. 23: Ժա. 3: [33] բ Կորնթ. ժա. 26: Գաղ. ե. 11: [34] Հռոմ. ը. 36: ա Կորնթ. դ. 9: բ Կորնթ. գ. 10, 11: Ժա. 23: [35] ա Թես. բ. 19: [36] բ Կորնթ. ա. 8: [37] Եսայ. իբ. 13: Ծգ. 12: Ժողգ. բ. 24: Գալ. ժբ. 19: [38] ա Կորնթ. ե. 6: [39] Հռոմ. ԺԳ. 11: Եփես. ե. 14: [40] ա Թես. գ. 5: [41] ա Կորնթ. ջ. 5: [42] Նեէմ. լէ. 3: [43] Ցուհ. ժբ. 24:

թիւնն[44]. սերմնովամբ ապականու-
թեամբ՝ եւ յարութիւն է առնում
առանց ապականութեան:

43 Սերմնովամբ անարգութեամբ՝
եւ յարութիւն է առնում փառ-
քով[45]. սերմնովամբ տկարութեամբ՝
եւ յարութիւն է առնում զօրու-
թեամբ:

44 Սերմնովամբ շնչաւոր մարմին՝ եւ
յարութիւն է առնում հոգեւոր
մարմին. թէ որ շնչաւոր մարմին կայ,
հոգեւոր էլ կայ:

45 Այնպէս էլ գրված է, (թէ) ա-
ռաջին մարդ ադամն կենդանի շունչ
առնդվեցաւ[46]. երկրորդ ադամն[47]
(է) կենդանի անօդ հոգի[48]:

46 Այն թէ հոգեւորն առաջ
չէ, բայց շնչաւորն, եւ յետոյ հո-
գեւորն:

47 Առաջին մարդն երկրիցն է[49]
հողից եղած[50]. բայց երկրորդ մարդն
է Տէրն՝ երկնիցն[51]:

48 Ինչպէս որ էն հողեղէնն է՝ էն-
պէս էլ հողեղէններս. եւ ինչպէս որ
էն երկնաւորն, էնպէս էլ երկնա-
ւորներն[52]:

49 Եւ ինչպէս որ հողեղէնի պատ-
կերն հագանք[53], երկնաւորի պատ-
կերն էլ պիտի հագնենք[54]:

50 Այսայն թէ ես եմ ասում եղ-
բայք՝ որ մարմին եւ արիւն չեն կա-
րող Աստուծոյ արքայութիւնն ժա-
ռանգել[55], եւ ոչ ապականութիւնն
անապականութիւնն է ժառան-
գում:

51 Ահա մի խորհուրդ եմ ասում
ձեզ. ոչ թէ մենք ամենքս կըննջենք
(կըմեռնինք)[56], այլ ամենքս կընո-
րոգվինք[57]:

52 Յանկարծ աչքի թափատամ՝
յետին փողի ժամանակում. ինչու
որ փողն կըփչվի[58], եւ մեռելներն
յարութիւն կառնեն առանց ապա-
կանութեան, եւ մենք կընորոգվինք:

53 Պատճառն որ՝ պէտք է որ էս
ապականութիւնս անապականու-
թիւնն հագնէ, եւ էս մահկանացուս
անմահութիւնն հագնէ[59]:

54 Ասայ երբոր էս մահկանացուս
անմահութիւնն կըհագնէ, եւ էս ա-
պականութիւնս անապականութի-
նըն, էն ժամանակն կըլինի էն բանն՝
որ գրված է. թէ մահն քո յաղթու-
թեան մէջն կուլտրվավ[60]:

55 Ո՛վ մահ՝ որտեղ է քո յաղ-
թութիւնդ. ո՛վ ժահիկ՝ որտեղ է քո
ծակոդդ[61]:

56 Այն մահի ծակօղն մեղքն է, եւ
մեղքի զօրութիւնն՝ օրէնքն[62]:

57 Ասայ շնորհակալութիւն (լինի)
Աստուծոյ[63], որ մեզ յաղթութիւն
տուաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
ձեռնէն[64]:

58 Ուրեմն իմ սիրելի եղբարքս,
հաստատ էլէք, անշարժ կացէք[65],
ամէն ժամանակ աւելի առաջացէք
Տէրի գործումն, գիտացէք՝ որ ձեր
աշխատանքն զուր չեն Տէրի առա-
ջին[66]:

---

[44] Գծ. ժբ. 3: Մարկ. ժգ. 43: [45] Փիլիպ. գ. 21: [46] Ծննդ. բ. 7: [47] Հռովմ. ե. 14: [48] Ցվհ. ե. 21: զ. 33, 39, 40, 54, 57: Փիլիպ. գ. 21: Կող. գ. 4: [49] Ցվհ. գ. 31: [50] Ծննդ. բ. 7: գ. 19: [51] Ցվհ. գ. 13, 31: [52] Փիլիպ. գ. 20, 21: [53] Ծննդ. ե. 3: [54] Հռովմ. ը. 29: բ Կորնթ. գ. 18: դ. 11: Փիլիպ. գ. 21: ա Ցվհ. գ. 2: [55] Մարկ. ժգ. 17: Ցվհ. գ. 3, 5: [56] ա Թես. գ. 14, 15, 16: [57] Փիլիպ. գ. 21: [58] Ջաք. թ. 14: Մարկ. իդ. 31: Ցվհ. ե. 25: ա Թես. գ. 15: [59] բ Կորնթ. ե. 4: [60] Եսայ. իե. 8: Եփես. բ. 14, 15: Ցայտ. բ. 14: [61] Ոսէ. ժգ. 14: [62] Հեբ. Հռովմ. գ. 15: ե. 5, 13. 13: [63] Հռովմ. ե. 25: [64] ա Ցվհ. ե. 4, 5: [65] բ Պետր. գ. 14: [66] ա Կորնթ. գ. 8:

## ԳԼ· ԺՕ

1 Առաքեալն յորդորէ զկորնթացիսն որ երթ սաղէմի եղբայրներին տուրք տան։ 10 Տիմոթէոսն գովէ, 13 Եւ զբիսատնէութեան խրատներ տալոյն ետու, 19 Շատ կերպ ողջոյններ տալով իրան թուղթին վերջ կանէ։

1 Բայց էն տուրքը ժողովելոյ կողմանէ՝ որ սրբերուին համար է[1], ինչպէս որ պաղատացոյց եկեղեցիներուն պատուիրեցի, էնպէս էլ դուք արէք։

2 Ամէն մէկ մէկ շաբթի օրերն ձեզանից ամէն մէկն թող իրան մօտ հաւաքէ՝ ինչ որ կը յաջողվի[2]։

3 Որ ջընկնի թէ երբոր գամ, էն ժամանակն ժողովելն լինի. բայց երբոր գամ՝ հենց էն՝ որ ձեր թղթերով ընտրեցիք[3], նորանց կուղարկեմ՝ որ ձեր շնորհքըն տանեն երուսաղէմ[4]։

4 Պատ թէ որ ինձ էլ պէտք լինի գնալ՝ թող ինձ հետ գնան[5]։

5 Բայց ձեզ մօտ կըգամ՝ երբոր մակեդոնիայից անց կըկենամ. բայց երբոր մակեդոնիայի մէջն մնկնըգամ[6],

6 Թէ բանն էնպէս բերէ, ձեզ մօտ կըմնամ՝ կամ թէ ձմեռըն անց կըկացնեմ. որ դուք ինձ ճանապարհ դնէք՝ որտեղ որ գնալու լինիմ[7]։

7 Ինչու որ՝ չեմ կամենում որ ձեզ հիմիկ անցկենօղն պէս տեսնեմ. յոյս ունիմ որ մին ժամանակ ձեզ մօտ կենամ, թէ որ Տէրն հրամայէ[8]։

8 Բայց հիմիկ եփեսոսումն եմ կենում՝ մինչեւ պենտեկոստէն։

9 Ինչու որ՝ մեծ եւ հարկաւոր դուռն բացված է ինձ[9], եւ հակառակօղներն շատ են[10]։

10 Հիմիկ թէ որ տիմոթէոսն գայ՝ նայեցէք թէ ինչպէս անվախ լինի ձեզ մօտ[11], ինչու որ՝ Տէրի գործըն է գործում, ինչպէս որ ես[12]։

11 Ըրլինի որ մինն անարգէ նորան[13]. եւ խաղաղութենով ճանապարհ դրէք նորան՝ որ ինձ մօտ գայ[14], ինչու որ սպասում եմ նորան եղբայրներին հետ։

12 Բայց ապողոս եղբօր համար[15] (պիտացէք) որ շատ աղաչեցի նորան՝ որ ձեզ մօտ գայ եղբայրներին հետ, եւ իրաւի որ կամք չունէր՝ որ հիմիկ գայ. բայց կըգայ երբոր պարապութիւն կունենայ։

13 Ըրեմուն էլէք[16], հաստատ կացէք հաւատքումն[17], ժիր էլէք եւ ուժացէք[18]։

14 Ձեր ամէն բաներդ թող սիրով լինին[19]։

15 Ընդառումիմ ձեզ եղբարք՝ գի-

[1] Գաղ. ժա. 2։ Իգ. 17։ Հռոմ. ժե. 26։ բ Կորնթ. ը. 4։ Թ. 1, 12։ Գաղ. բ. 10։ [2] Գաղ. ի. 7։ Ճայռ. ա. 10։ [3] բ Կորնթ. ը. 19։ [4] բ Կորնթ. ը. 4, 6, 19։ [5] բ Կորնթ. ը. 4, 19։ [6] Գաղ. ժԹ. 21։ բ Կորնթ. ա. 16։ [7] Գաղ. ժե. 3։ ժէ. 15։ իա. 5։ Հռոմ. ժե. 24։ բ Կորնթ. ա. 16։ [8] Գաղ. ժը. 21։ ա Կորնթ. գ. 19։ Ճայռ. գ. 15։ [9] Գաղ. ժգ. 26։ բ Կորնթ. բ. 12։ Կող. գ. 3։ Ճայռ. գ. 8։ [10] Գաղ. ժԹ. 9։ [11] Գաղ. ժԹ. 22։ ա Կորնթ. գ. 17։ [12] Հռոմ. ժզ. 21։ Փիլիպ. բ. 20, 22։ ա Թես. գ. 2։ [13] ա Տիմ. գ. 12։ [14] Գաղ. ժե. 33։ [15] ա Կորնթ. ա. 12։ գ. 4, 6։ [16] Մատթ. իգ. 42։ իե. 13։ ա Թես. ե. 6։ ա Պետր. ե. 8։ [17] ա Կորնթ. ժե. 1։ Փիլիպ. ա. 27։ գ. 1։ ա Թես. գ. 8։ բ Թես. բ. 14։ [18] Եփես. զ. 10։ Կող. ա. 11։ [19] ա Կորնթ. ժգ. 1։ ա Պետր. գ. 8։

տուէք ստեփանի եւ փարտուղատի տունըն[20], որ աքայեցոց պտուղն են[21], եւ իրանց անձնեըըն սըրբելի ծառայութեան տուին[22]։

16 Որ գուք էլ հնազանդ լինէք էնպէսներին[23], եւ ամէնին՝ որ գործ֊քի եւ աշխատանքին ընկեր են[24]։

17 Ուրախ էլայ ստեփանի եւ փոր֊տունատի եւ աքայիկոսի գալըն հա֊մար, ինչու որ նորանք ձեր պակա֊սութիւնըն լցրին[25]։

18 Պատճառն որ՝ իմ եւ ձեր հո֊գին հանգիստ տուին[26]. ուրեմն ճա֊նաչեցէք էնպէսներին[27]։

19 Ողջոյն են տալիս ձեզ ասիա֊յոց եկեղեցիներն. շատ ողջոյն են տալիս ձեզ Տէրով՝ ակիւղան եւ պրիսկիղան՝ էն եկեղեցոյն հետ՝ որ նորանց տանն է[28]։

20 Ողջոյն են տալիս ամէն եղբայրքն. ողջոյն տուէք իրար սուրբ համբուրոյնի[29]։

21 Այդ ողջոյնդ՝ իմ պօղոսիս ձե֊ռինն է[30]։

22 Ամէն որ միտն Տէր Յիսուսին չըսիրէ[31], անիծված լինի[32]՝ մարա֊նաթա[33]։

23 Ա՛ռը Տէր Յիսուսի Քրիստո֊սի շնորհքն ձեզ հետ լինի[34]։

24 Իմ սէրն ձեզ ամէնիդ հետ Քրիստոս Յիսուսումն. ամէն։

Կորնթացոց վերայ առաջին նամակ փնտռած գրվեցաւ՝ սրբոյն եւ փրկութեան եւ առյաջողութեան յիսուսի։

[20] առաքել. ա. 16։ [21] հռովմ. ժզ. 5։ [22] բ կորնթ. ը. 4։ թիմ. 1։ եբր. ղ. 10։ [23] եբր. ժգ. 17։ [24] եբր. ղ. 10։ [25] բ կորնթ. ժա. 9։ փիլիպ. բ. 30։ փիլիմ. 13։ [26] կող. դ. 8։ [27] ա թես. ե. 12։ փիլիպ. բ. 29։ [28] հռովմ. ժզ. 5, 15։ փիլիմ 2. [29] հռովմ. ժզ. 16, [30] կող. դ. 18։ բ թես. գ. 17։ [31] եփես. զ. 24։ [32] գաղ. ա. 8. 9։ [33] ցուց. 14, 15 [34] հռովմ. ժզ. 20։

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԸՆԾՐԵԼՈՅ

ԸՆ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

3 Առաքեալն սիրա կըտայ Կորնթացիներին իրանց նեղութիւններուն՝ Աստուծոյ միխ-
թարութիւններն եւ ազատութիւնները նորանց ցոյց տալով՝ որ նորանք ընդունէզ իրան
քաշած վիշտերուն, 8 Մանաւանդ Ասիոյ մէջ իրան վերջին նեղութիւններուն: 12 Թէ
իրան եւ թէ նորանց խղճմտանքի վկայութիւնն ցոյց տալով՝ ասուն թէ, ի՞նչպէս սըբ-
բութեամբ եւ Աստուծոյ ճշմարտութեամբ վարվել են աշխարհքի մէջն, եւ աւելի նո-
րանց հետ, 15 Իրան անձըն արդարացնուն որ կարօղ չէլաւ նորանց դնալ, ոչ թէ
թեթեւամտութեամբ վարվելով՝ բայց նորանց խնայելոյ համար:

1 ՊՕՂՈՍ ՅԻՍՈՒՍԻ Վ[ա]րիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովն[1], եւ տիմոթէոս եղբայրն.
Աստուծոյ եկեղեցւոյդ՝ որ կորնթոսոսի է՝ ամէն սըրբերին հետ՝ որ ա-
քայեացոց ամէն կողմերուն են[2],

2 Շ նորհք (լինի) ձեզ հետ եւ խաղաղութիւն՝ Աստուած մեր հօ-
րիցն,եւ Տէր Յիսուս Վրիստոսիցն[3]:

3 Օրհնված է Աստուած եւ մեր Տէր Յիսուսի Վրիստոսի հայ-
րըն[4]. ողորմութեան հայրն, եւ ամէն մխիթարութեան Աստուածն:

4 Որ նա մխիթարուէ մեզ մեր ա-
մէն նեղութիւններուն, որ մենք կա-
րօղ լինինք մխիթարել նորանց՝ որ ա-
մէն նեղութիւնների մէջ են, էն մխի-
թարութեամբն՝ որ մենք Աստուածա-
նից նորանով մխիթարվում ենք:

5 Պատճառն որ՝ ինչպէս որ Վր-
իստոսի չարչարանքներն աւելացան
մեզանում՝ էնպէս էլ Վրիստոսի
ձեռովն մեր մխիթարութիւնն աւելի
կըլինի[5]:

6 Որ թէ նեղութիւն քաշինք՝
էն ձեր մխիթարութեան եւ փրկու-
թեան համար (է)[6]. եւ թէ որ մխի-
թարվինք՝ ձեր մխիթարութեան եւ
փրկութեան համար է, որ յայտնվու-
մէ հենց էն չարչարանքների համբե-
րութեամբն, որ մենք չարչարվում ենք:

7 Եւ մեր յոյսն ձեզ համար

[1] ա կորնթ. ա. 1: եփես. ա. 1: կող. ա. 1: ա տիմ. ա. 1: բ տիմ. ա. 1: [2] փիլիպ. ա. 1:
կող. ա. 2: [3] հռովմ. ա. 7: ա կորնթ. ա. 3: գաղ. ա. 3: փիլիպ. ա. 2: կող. ա. 3:
ա թես. ա. 2: բ թես. ա. 2: փիլիմ. 3: [4] եփես. ա. 3: ա պետր. ա. 3: [5] գոլթ. թ. 4:
բ կորնթ. գ. 10: կող. ա. 24: [6] բ կորնթ. գ. 15:

Հաստատ է, ինչու որ՝ գիտեմնիք թէ՝ ինչպէս որ չարչարանքներին մասնակից ենք՝ նոյնպէս եւ մխիթարութեանն[7]:

8 Պատճառն որ չեմ կամենում եղբարք՝ որ դուք չըգիտենաք են նեղութիւնն որ ասիայի մէջն մեզ վերայ եկաւ[8], ինչու որ՝ մեր կարողութենիցն աւելի ծանր էաւ մեզ վերայ, մինչեւ որ մեր կենաց յոյսն էլ կորել էինք:

9 Նայց հենց մենք ինքներս մեզ վերայ մեռնելոյ վճիռըն առինք, որ համար որ՝ մեր անձնեներիս վերայ յոյս չըդնինք, բայց Աստուծոյ վերայ՝ որ մեռելներին յարուցանում[9]:

10 Որ նա էնպէսի մահից մեզ փրկեց՝ եւ էլ կըփրկէ[10]:

11 Ինչու որ՝ յոյս ունինք՝ որ դեռ էլ կըփրկէ ձեր մեզ համար արած աղօթքի օգնականութենովն[11], որ էն շատ կերպ շնորհներից՝ որ մեզ տուած են՝ շատերի ձեռովն գոհութիւններն շատանան մեզ համար[12]:

12 Պատճառն որ՝ մեր պարծանքն էս է, մեր խղճմտանքի վկայութիւնն, որ սրբութենով եւ Աստուծոյ ճշմարտութենովն[13] եւ չէ թէ մարմնական իմաստութենով, բայց Աստուծոյ շնորհքովն վարվեցանք աշխարհքի մէջն[14], եւ էլ աւելի ձեզ հետ:

13 Ինչու որ՝ ուրիշ բան չենք գրում ձեզ, բայց մենակ էն որ կարդումք՝ եւ ուղիակ էք, որ յոյս ունիմ թէ մինչեւ վերջն կըդիտենաք:

14 Ինչպէս որ էլ փոքր՝ ի շատէ հասկացաք մեզ, ինչու որ՝ մենք ձեր պարծանք ենք[15], ինչպէս որ դուք էլ մերն[16]՝ Տէր Յիսուսի Քրիստոսի օրումն:

15 Եւ սրանովքայ վստահացած՝ կամենում էի որ առաջ ձեզ մօտ գամ[17], որ դուք երկու չափով շնորհք ընդունիք[18]:

16 Եւ որ ձեզանից գնամ մակեդոնիա, եւ միւնէլ մակեդոնիայից ձեզ մօտ գամ, եւ ձեզանից ճանապարհ քցելիմ դեպի Հրէաստան[19]:

17 Նայց թէ որ էս միտք արի՝ միթէ թեթեւամտութենով վարվեցայ, եւ կամ թէ էն որ միտք եմ անում՝ մարմնոյ կերպով եմ միտք անում[20], որ իմ կողմանէս էլ հան՝ հայլինի, եւ չէն՝ չէ:

18 Աստուած հաւատարիմ է՝ որ մեր խօսքն՝ որ ձեզ հետ, հա եւ չէ չէլաւ:

19 Ինչու որ՝ Աստուծոյ որդին Յիսուս Քրիստոսն, որ մեզանով ձեր միջնէն քարոզվեցաւ[21], ինչ ձանով եւ սիլուանոսով եւ տիմոթէոսով՝ հա եւ չէ չէլաւ, բայց հան նորանում էլաւ[22]:

20 Պատճառն որ՝ որքան Աստուծոյ աւետիքներ որ կան՝ նորանում են հան[23], եւ նրանովքայ էլ ամէնն նորանով՝ որ Աստուծոյն փառք լինի մեզանով:

21 Նայց Աստուած է՝ որ մեզ ձեզ հետ հաստատեց Քրիստոսումն՝ եւ մեզ օծեց[24]:

---

[7] Հռոմ. ը· 17: բ Տիմ. բ· 12: [8] Գործ. ժթ· 23: ա Կորնթ. ժ· 32: ժգ· 9: [9] Երեմ. ժե· 5, 7: [10] բ Պետր. բ· 9: [11] Հռոմ. ժե· 30: Փիլիպ. ա· 19: Փիլմ. 22: [12] բ Կորնթ. գ· 15: [13] բ Կորնթ. բ· 17: գ· 2: [14] ա Կորնթ. բ· 4, 13: [15] բ Կորնթ. ե· 12: [16] Փիլիպ. բ· 16: դ· 1: ա Թես. բ· 19, 20: [17] ա Կորնթ. գ· 19: [18] Հռոմ. ա· 11: [19] ա Կորնթ. ժգ· 5, 6: [20] բ Կորնթ. ժ· 2: [21] Գործ. ա· 1: Գործ. ա· 35: Գործ. ի· 20: [22] Երէ. ժգ· 8: [23] Հռոմ. ժե· 8, 9: [24] ա Յովհ. բ· 20, 27:

22 Որ նա էլ կնքեց (Աբգարէս) մեզ[25], եւ հոգւոյ գրաւըն մեր սրտի մէջ դրաւ[26]։

23 Բայց ես Աստուածն վկայ եմ կանչում իմ անձիս վերայ[27]. որ ձեզ խնայելոյ համար՝ մինէլ չեկի կորնթոս[28]. ինչու որ՝ չէ թէ հաւատքով ձեզ վերայ տիրապետութիւն՝ այլ ձեր ընդհացդ գործընկեր ենք[29], ինչու որ՝ հաւատքով հաստատ կանգնած էք[30]։

## Գ. Ո

1 Առաքեալն նորանց տրտմութիւնով չըգնալոյ համար խօսելուցն եւեւ պատուէր է տալիս նորանց որ էն գուրս քցված մարդոյն ներնին եւ նորան մխիթարեն. 10 Եւ թէ որ նորանք մընին ներնին, ինչն էլ ներումն. 12 Յայց կուսայ թէ ինչու համար տրօադախին մակեդոնիա կըգնայ, 14 Եւ թէ իրան քարոզութիւնն ինչպես Աստուած յաջողութիւնով ամէն տեղ առաջ է տանում։

1 Բայց ես էս ընտրեցի՝ որ մինէլ տրտմութիւնով չըգամ ձեզ մօտ[1]։

2 Ինչու որ՝ թէ որ ես ձեզ տըրտմացնում, էլ ո՞վ է՝ որ ինձ ուրախացնէ՝ եթէ ոչ նա՝ որ ինձանից տրտմութիւն է առնում։

3 Էս գրեցի՝ որ չըլինի թէ երբոր գամ՝ տրտմութիւն քաշեմ էն կողմանէ[2]՝ որ պէտք էր ինձ ուրախ լինիլ. յոյսըս դրած եմ ձեզ ամէնից վերայ, որ իմ ուրախութիւնըս՝ ձեր ամէնից (ուրախութիւն) է[3]։

4 Պատճառն որ՝ շատ ցաւից եւ սրտիս նեղութիւնից գրեցի ձեզ շատ արտասուքով. չէ թէ՝ որ տրտմիք[4]՝ բայց որ իմ սէրըս գիտենաք, որ աւելի ունիմ ձեզ վերայ։

5 Բայց թէ որ մինն տրտմացրուց[5]՝ չէ թէ ինձ տրտմացրուց, բայց փոքր՝ ի շատէ, որ ձեզ ամէնից ծանրութիւն չըտամ[6]։

6 Բաւական է էնպէսի մարդոյ համար էն պատիժն՝ որ էն շատերից (տըվված) է[7]։

7 Արանից հետեւ՝ նրա հակառակն աւելի ներեցէք գուք նորան, եւ մխիթարեցէք[8]. որ չըլինի թէ շատ սաստիկ տրտմութիւնից էնպէսին խեղդվի։

8 Արահամար աղաչում եմ ձեզ՝ որ սէրըն հաստատէք նորա վերայ։

9 Ընդ նրահամար էլ գրեցի ձեզ, որ ձեզ փորձով գիտենամ՝ եթէ ամէն բանի մէջ հնազանդ էք[9]։

10 Բայց թէ որ գուք մինին ներեցէք՝ ապա ես էլ. պատճառն որ՝ ես էլ թէ որ ներեմ՝ ինչ բան որ ներումեմ՝ ձեզ համար է Քրիստոսի առաջին։

11 Որ չըզրկվինք սատանայից. ինչու որ՝ նորա մտքի խորհուրդներին անտեղեակ չենք։

[25] Եփես. ա. 13։ գ. 30։ բ Տիմ. բ. 19։ Ճոյս. բ. 17։ [26] բ Կորնթ. ե. 5։ Եփես. ա. 14։ [27] Հռովմ. ա. 9։ բ Կորնթ. ժա. 31։ Գաղ. ա. 8։ Փիլիպ. ա. 8։ [28] ա Կորնթ. դ. 21։ բ Կորնթ. բ. 3։ ժբ. 20։ ժգ. 2, 10։ [29] ա Կորնթ. գ. 5։ ա Պետր. ե. 3։ [30] Հռովմ. ժա. 20։ ա Կորնթ. ժե. 1։ [1] բ Կորնթ. ա. 23։ ժբ. 20, 21։ ժգ. 10։ [2] բ Կորնթ. ժբ. 21։ [3] բ Կորնթ. է. 16։ ը. 23։ Գաղ. ե. 10։ [4] բ Կորնթ. է. 8, 9, 12։ [5] ա Կորնթ. ե. 1։ [6] Գաղ. դ. 12։ [7] ա Կորնթ. ե. 4, 5։ ա Տիմ. ե. 20։ [8] Գաղ. զ. 1։ [9] բ Կորնթ. է. 15։ ժ. 6։

12 Խայց երբոր ես հասի տրօադա ՎՀրիստոսի աւետարանին համար[10], եւ դուռն ինձ համար բաց էր Տէրոմ[11]։

13 Իմ հոգւոյս հանգիստ չըտուի[12], ինչու որ՝ ես իմ տիտոս եղբօրըս Հնտեղ չըգտի. բայց նորանցից բաժըլուելա արած՝ գնացի մակեդոնիա։

14 Խայց շնորհակալութիւն Ըստուծոյն՝ որ ամէն բանի մէջ մեզ Հղչակաւոր է անում ՎՀրիստոս Յիսուսումն. եւ իրան գիտութեան Հոտըն մեզանով յայտնում ամէն տեղ[13]։

15 Ինչու որ՝ մենք ՎՀրիստոսի աՀ-

նուշ Հոտ ենք Ըստուծոյ առաջին, փրկվածների մէջն[14] եւ կորածների մէջն[15]։

16 Սրին քանիսին համար՝ Հոտ մահիցն դէպի մահն. եւ մին քանիսին համար՝ Հոտ կեանքիցն դէպի կեանքն[16]. եւ էս բանիս համար ո՞վ բաւական կըլինի[17]։

17 Պատճառն որ՝ ուրիշների պէս չենք, որ Ըստուծոյ խօսքըն վաճառականութիւն են անում[18], բայց ինչպէս Հաստատութենիցն, ինչպէս Ըստուածանից՝ Ըստուծոյ առաջին խօսում ենք ՎՀրիստոսումն[19]։

## Գ·Ի· Գ

1 Պօղոս կասկած է անում որ չըլինի թէ նորանց սուտ վարդապետներըն իրան համար ասեն թէ պարծենում. նրահամար նորանց ունեցած Հաւատքն եւ շնորՀըն իրան պարծանքի համար բաւական լինելն ցոյց կըտայ։ 6 Սրանից սկսում մին կողում անել օրէնքի եւ Աւետարանի պաշտօնեաներին մէջն, 12 եւ Հասատատում թէ էսպէսի յոյս որ ունինք՝ շատ համարձակութեամբ վարվինք, ոչ թէ խրսկէլի որդիներին պէս լինինք։ 14 Որ կուրացան Հին կտակարանի կարդացմունքի վերայ քցված քօղով՝ մինչեւ որ դէպի Տէրն դառնան, ապա էն սրաերին վերայ էլած ծածկոցն վեր կառնըվի. 18 Խայց մենք բաց երեսով Տէրի փառքըն տեսնում ենք։

1 Ուրեմն մինել սկսումենք մեր անձներըս գովելով ձեր առաջին դնել[1], թէ եւ պէտք չեն մեզ՝ ինչպէս որ մինքանիսին՝ ձեղ վերայ՝ կամ ձեզանից (գրած)՝ գովութեան թըղթեր[2]։

2 Խայց մեր թուղթս դուք էք՝ մեր սրտի մէջ գրած՝ ամէն մարդկացից իմացված եւ կարդացված[3]։

3 Պատք որ յայտնի էլած էք՝ թէ ՎՀրիստոսի թուղթն էք, մեզանից ծառայված[4], եւ գրված՝ ոչ թէ թանաքով, բայց կենդանի Ըստուծոյ Հոգովն. ոչ թէ քարէ տախտակների վերայ[5], բայց սրտի մսմմէ տախտակների վերայ[6]։

4 Սրին էսպէսի յոյս ունինք Ըստուծոյն՝ ՎՀրիստոսի ձեռովն։

---

[10] Գործ. Ժզ. 8։ [11] ա Կորնթ. Ժզ. 9։ [12] բ Կորնթ. է. 5, 6։ [13] Երէմ. ա. 3։ [14] ա Կորնթ. ա. 18։ [15] բ Կորնթ. գ. 3։ [16] Դաւիթ. բ. 34։ Ցովհ. Թ. 39։ ա Պետր. բ. 7, 8։ [17] ա Կորնթ. Ժե. 10։ բ Կորնթ. գ. 5, 6։ [18] բ Կորնթ. դ. 2։ Ժա. 13։ բ Պետր. բ. 3։ [19] բ Կորնթ. ա. 12։ գ. 2։ [1] բ Կորնթ. ե. 12։ Ժ. 8, 12։ Ժբ. 11. [2] Գործ. Ժը. 27։ [3] ա Կորնթ. Թ. 2։ [4] ա Կորնթ. գ. 5։ [5] Ելք. իդ. 12։ լբ. 1։ [6] Սաղմ. խ. 8։ Երէմ. լա. 33։ Եզէկ. Ժա. 19։ լզ. 26։ Եբր. ը. 10։

5 Որ ոչ թէ մենք մեզանով բաւական ենք մին բան միտք անել ինչպէս մեզանից[7], բայց մեր աչքն բաւական լինելն Աստուածանից է[8]:

6 Որ նա էլ բաւական արաւ մեզ նոր կտակարանի[9] պաշտօնեայ լինելոյ[10] ոչ թէ գրով, այլ Հոգով[11], ինչու որ՝ գիրն սպանում է[12], այլ Հոգին կենդանացնում է[13]:

7 Իսկ եթէ որ մահի պաշտամունքն[14] որ գրով քարէ տախտակների վերայ փորած էր՝ փառքով եղաւ[15], ինչու որ իսրայէլի որդիքն չէին կարող մեռնող երեսին մտիկ անել՝ նորա երեսի փառքին համար, որ խափանվելու էր[16].

8 Իսկ ո՞րքան աւելի Հոգոյ պաշտամունքն փառքով պիտի լինի[17]:

9 Ինչու որ՝ եթէ դատապարտութեան պաշտամունքն փառքով էր, էլ ո՞րքան աւելի արդարութեան պաշտամունքն փառքով է[18]:

10 Որ համար՝ էն փառաւորն էլ փառաւոր չէ էս կողմանէս՝ էն աւելի առեցած փառքին համար:

11 Պատճառն որ՝ թէ որ էն որ խափանվելու էր՝ փառքով էր, էլ ո՞րքան աւելի փառքով է էն՝ որ պիտի հաստատ կենայ:

12 Ուրեմն՝ որ էսպէսի յոյս ունինք, էլ շատ համարձակութեանով վարվինք[19]:

13 Եւ ոչ թէ ինչպէս որ մովսէսն իրան երեսին վերայ քօղ էր քըշում[20] որ իսրայէլի որդիքն չնային էն (բանի) վերջին՝ որ պէտք էր խափանվի[21]:

14 Իսկ նորանց միտքն կուրացաւ. ինչու որ՝ մինչեւ էս օրվան ժամանակս հենց էն քօղն քցված է հին կտակարանի կարդացմունքին վերայ. եւ վեր չի առնվում՝ որ էն Քրիստոսովն պէտք է խափանվի[22]:

15 Իսկ մինչեւ էս օր՝ երբոր մովսէսին կարդում են, հենց էն ծածկոցն նորանց սրտերին վերայ կայ:

16 Իսկ երբոր դէպի Տէրն կդառնան[23] ապա էն ծածկոցն վեր կառնվի[24]:

17 Ինչու որ՝ Տէրն է Հոգին. որտեղ որ Տէրի Հոգին է՝ էնտեղ ազատութիւն է[25]:

18 Իսկ մենք ամէնքս՝ որ բաց երեսով Տէրի փառքին[26] ինչպէս հայելոյ մէջն ակնածանքով[27] հենց էն պատկերի նման նորոգվում՝ փառքից դէպի փառք[28], ինչպէս թէ Տէրի Հոգուցն:

---

[7] Յովհ. ժե. 5: [8] ա Կորնթ. ժե. 10: Փիլիպ. բ. 13: [9] Երէմ. լա. 31: Ղուկ. իդ. 28: Եբր. ը. 6. 8: [10] ա Կորնթ. գ. 5: ժե. 10: բ Կորնթ. ե. 18: Եփես. գ. 7: Կող. ա. 25, 29: ա Տիմ. ա. 11, 12: բ Տիմ. ա. 11: [11] Հռով. բ. 27, 29: է. 6: [12] Հռով. գ. 20: գ. 15: է. 9, 10, 11: Գաղ. գ. 10: [13] Յովհ. ը. 63: Հռով. ը. 2: [14] Ճռով. է. 10: [15] Եմ. լդ. 1, 28: բ Օրէն. ժ. 1, եւայլն: [16] Եմ. լդ. 29, 30, 35: [17] Գաղ. գ. 5: [18] Հռով. ա. 17: գ. 21: [19] բ Կորնթ. է. 4: Եփես. գ. 19: [20] Եմ. լդ. 33, 35: [21] Հռով. ժ. 4. Գաղ. գ. 23: [22] Եսայ. ը. 10: Ա՛ռաք. ժգ. 11, 14: Յովհ. ժբ. 40: Գործ. իը. 26: Հռով. ժա. 7, 8, 25: բ Կորնթ. գ. 4: [23] Եմ. լդ. 34: Հռով. ժա. 23, 26: [24] Եսայ. իե. 7: [25] ակորնթ. ժե. 45: ղէբ. 6: [26] բ Կորնթ. գ. 4, 6: ա Տիմ. ա. 11: [27] ա Կորնթ. ժգ. 12: [28] Հռով. ը. 29: ա Կորնթ. ժե. 49: Կող. գ. 10:

## Գ·Ի · Գ

1 Ա՛ռաքեալն յայդ կոչեալ թէ ինչպէս իրան պաշտօնէն չընձանրանալով՝ խորամանկու-
թենով չվարվելով եւ Աստուծոյ խօսքն չձռնտելով կատարեց · 3 Եւ թէ Աւետարանն
կորածներուն մէջն է ծածկված · 7 Եւ մէնակ Աստուծոյ զօրութեան միջոցներնէն՝ ոչ թէ
իրանց հոգէ ամենեքինէն Աւետարանն քարոզելոյ համար հալածանք էին քաշում ամէն
որ, 12 Եւ Եկեղեցիին կանչելն համար, 13 Բայց մին հաւատքի հոգով հինց Աստ-
քեալներին եւ ամէն հաւատացեալներին, 17 Յաւիտենական փառքին համար էլ լինում
կին ։

1 Սրահամար մենք էս պաշտօ-
նըս ունինք[1], ինչպէս որ ողորմու-
թիւն գտինք՝ եւ չենք ձանձրանում[2]։
2 Այլ ամօթալի ծածուկ բանե-
րին չհետ քաշվեցանք[3]. որ խորա-
մանկութեամբ չվարվինք, եւ Աս-
տուծոյ խօսքըն չձռնտինք[4]. բայց ճըշ-
մարտութեան յայտնութեամբ[5] մեր
անձներըս ընդունելի անինք ամէն
մարդկանց խըղճմտանքին՝ Աստուծոյ
առաջին[6] ։
3 Այս թէ մեր աւետարանն
ծածկված էլ լինի, նա կորածներուն
մէջն է ծածկված[7] ։
4 Որ էս աշխարհքիս աստուածն[8]
էն անհաւատներուն սրտերըն կուրաց-
րուց[9], որ Քրիստոսի փառաւոր ա-
ւետարանի լուսաւորութիւնն չընձա-
գէ նորանց վերայ[10]. որ նա անեղեր-
պին Աստուծոյ պատկերն է[11] ։
5 Ինչու որ՝ մենք ոչ թէ մեր
անձներըս ենք քարոզում, բայց
Յիսուս Քրիստոսին՝ թէ նա Տէրն
է[12]. եւ մենք ձեր ծառաներ՝ Քրի-
ստոսի համար[13] ։
6 Պատճառն որ՝ Աստուած՝ որ
ասաց թէ՝ խաւարիցն լոյս ծագէ[14].
ինքն հինց մեր սրտերի մէջն ծագեց[15]՝
Աստուծոյ փառաց գիտութեան լու-
սաւորութիւնըն տալոյ Յիսուսի
Քրիստոսի դէմքովն[16] ։
7 Այլ էս գանձըս (խոպնաս)
ունինք հողէ շինած անոթներումն[17].
որ զօրութեան մեծութիւնն Աստ-
ուածանից լինի, եւ ոչ թէ մեզա-
նից[18] ։
8 Ամէն բանի մէջ նեղացած
(ենք)՝ բայց չենք թուլացած[19], կա-
րօտութեան մէջ կացած՝ բայց տա-
րակուսութիւն չը գալած ։
9 Հալածված՝ բայց երեսից չըն-
կած · չարչարված՝ բայց չըսատակ-
վածք[20] ։
10 Ամէն ժամանակն Յիսուսի
մահըն մեր մարմնումն տանումենք[21]՝
որ Յիսուսի կեանքն էլ մեր մարմ-

[1] բ Կորնթ · գ · 6 ։ [2] ա Կորնթ · է · 25 ։ ա Տիմ · ա · 13 ։ [3] Հռովմ · չ · 21 ։ [4] բ Կորնթ · բ · 17։
ա Թես · բ · 3, 5 ։ [5] բ Կորնթ · չ · 4, 7 ։ է · 14 ։ [6] բ Կորնթ · ե · 12 ։ [7] ա Կորնթ · ա · 18 ։ բ
Կորնթ · բ · 15 ։ բ Թես · բ · 10 ։ [8] Ցածն · ժբ · 31 ։ ժգ · 30 ։ ժչ · 11 ։ Եփես · չ · 12 ։ [9] Եսայ ·
չ · 10 ։ Ցածն · ժբ · 40 ։ բ Կորնթ · գ · 14 ։ [10] բ Կորնթ · գ · 8, 9, 11, 18 ։ Վէր · 6 ։ [11] Ցածն ·
ա · 18 ։ ժբ · 45 ։ ժգ · 9 ։ Փիլիպ · բ · 6 ։ Կող · ա · 15 ։ Եբր · ա · 3 ։ [12] ա Կորնթ · ա · 13, 23։
ժ · 33 ։ [13] ա Կորնթ · թ · 19 ։ բ Կորնթ · ա · 24 ։ [14] Ծննդ · ա · 3 ։ [15] բ Պետր · ա · 19 ։ [16] Վէր ·
ձ ։ ա Պետր · բ · 9 ։ [17] բ Կորնթ · ե · 1 ։ [18] Կորնթ · բ · 5 ։ բ Կորնթ · ժբ · 9 ։ [19] բ Կորնթ · է ·
5 ։ [20] Սամ · լե · 24 ։ [21] ա Կորնթ · ժե · 31 ։ բ Կորնթ · ա · 5, 9 ։ Գաղ · չ · 17 ։ Փիլիպ · գ · 10։

նուամ յայտնըվի[23]։

11 Պատճառն որ՝ մենք որ կենդանի ենք ենք, միշտ Յիսուսի համար մեռնելոյ մէջ ենք մատնըվում[23], որ Յիսուսի կեանքն էլ յայտնըվի մեր մահկանացու մարմնում։

12 Ուրեմն մահն մեզանում է զօրանում, եւ կեանքն ձեզանում[24]։

13 Բայց մին հաւատքի հոգին ունինք[25], ինչպէս որ էլ գրված է. հաւատացի՝ եւ նրա համար էլ խօսեցի[26]. մենք էլ հաւատում ենք՝ եւ հենց սրա համար էլ խօսում ենք։

14 Յս ենք գիտում, որ նա՝ որ Յիսուսին յարոյց[27], մեզ էլ Յիսուսի հետ կը յարուցանէ, եւ ձեզ հետ (իրան) առաջին կը կանգնացնէ։

15 Պատճառն որ՝ ամէն բան ձեզ համար է[28], որ շատացած շնորհքն էն շատերի գոհութենիցն աւելանայ Աստուծոյ փառաց համար[29]։

16 Այսհամար էլ չենք թուլանում, բայց թէ եւ մեր դրսի մարդն ապականվում, բայց մեր ներսի մարդս օրէ յօր նորոգվում[30]։

17 Ինչու որ՝ մեր ժամանակաւոր թեթեւ նեղութեան շատութիւնն յաւիտենական աւելութենով՝ փառքի մեծութիւն է գործում մեզ համար[31]։

18 Պատճառն որ՝ էս երեւօղ բաներըս չենք գիտում, բայց էն որ չի երեւում[32]. ինչու որ՝ երեւօղներս մին քիչ ժամանակ են, եւ չերեւօղներն՝ յաւիտենական։

## Գլ · Ե

1 Առաքեալն հաստատում թէ իրանք յաւիտենական փառքի յոյսն ունենալով, 9 Եւ էն փառքին եւ թէ էն դատաստանին որ գալու է՝ նրան սպասելով, աշխատում որ բարի խղճմտանք ունենան, 12 Ո՛չ թէ նրանով պարծենում, 14 Բայց Քրիստոսի սէրից սեխպվում որ մին նոր ստեղծվածի պէս մէնակ Քրիստոսի փառաց համար վաղեն. 18 Եւ իրանց հաշտութեան պաշտօնով ուրիշ մարդիկն էլ հաշտացրեն Աստուծոյ հետ Քրիստոսի ձեռովն։

1 Պատճառն որ՝ գիտում ենք որ եթէ մեր երկրաւոր շինվածքի տաճարն քանդվի[1], Աստուածանից մին շինվածք ունինք՝ մին տաճար առանց ձեռքի գործված, որ յաւիտենական է երկնքում։

2 Յս սրա համար զըզվում ենք, ինչու որ՝ ցանկանում ենք հագնիլ էն բնակութիւնն՝ որ երկնքիցն է[2]։

3 Այնպէս եթէ՝ երբոր էն հագնինք՝ մերկ չըգտնըվինք[3]։

4 Պատճառն որ՝ մենք էս ծածքիս տակն ծանրացած զըզվում ենք, որ չենք կամենում մերկանալ, բայց էն սրա վերայ հագնիլ, որ էս մահկանացուս էն կեանքին մէջ առնըվի[4]։

5 Բայց նա՝ որ էս բանըս յաջողում մեզ՝ Աստուած է[5], որ հոգոյ

[22] Հռով. ը։ 17 բ Տէր. բ. 11, 12։ [23] Պեսբ. գ. 13։ [24] Յովհ. խգ. 22։ Հռով. ը. 36։ ա Կորնթ. ժե. 31, 49։ բ Կորնթ. ա. 8, 9։ [25] բ Կորնթ. ժգ. 9։ [26] Հռով. ա. 12։ բ Պեսբ. ա. 1։ [27] Յովհ. ճժգ. 10։ [28] ա Կորնթ. զ. 14։ ա Կորնթ. գ. 22։ բ Կորնթ. ա. 6։ Կող. ա. 24։ բ Տէր. բ. 10։ [29] բ Կորնթ. ա. 11։ ը. 19։ Թ. 11, 13։ [30] Հռով. է. 22։ Եփես. գ. 16։ Կող. գ. 9։ ա Պեսբ. գ. 4։ [31] Մատթ. ե. 12։ Հռով. ը. 18։ ա Պեսբ. ա. 6։ ե. 10։ [32] Հռով. ը. 24։ բ Կորնթ. ե. 7։ Եբր. ժա. 1։ [1] Յոբ. գ. 19։ բ Կորնթ. գ. 7։ բ Պեսբ. ա. 13, 14։ [2] Հռով. ը. 23։ [3] Ցայտ. գ. 18։ ժգ. 15։ [4] ա Կորնթ. ժե. 53, 54։ [5] Եսայ. խԹ. 23։ Եփես. բ. 10։

գրաւըն տուաւ մեզ [6]։

6 Այլահամար ամէն ժամանակ համարձակութիւն ունինք, եւ գիտումնիք թէ՝ քանի որ էս մարմնուս ուշանումնիք՝ Տէրիցն օտարանում ենք ։

7 Ինչու որ՝ հաւատքով ենք գընում, եւ ոչ թէ կարծիքով [7] ։

8 Այլ սիրտ ենք առնում, եւ էլ աւելի հաճոյ է մեզ էս մարմինիցս դուրս գնանք՝ եւ Աստուծոյ մօտ մնանք [8] ։

9 Այլահամար էլ ջանք ենք առնում, որ եթէ ուշանանք՝ եւ եթէ դուրս գնանք՝ մէնակ հաճոյ լինինք նորան ։

10 Պատճառն որ՝ մենք ամէնքս պէտք է յայտնի լինինք Քրիստոսի դատաստանի ամբոխի առաջին [9], որ ամէն մէկն ընդունի իրան մարմնովն՝ ինչ որ առաջ գործեց՝ թէ բարի, եւ թէ չար [10] ։

11 Ուրեմն՝ մենք Տէրի ահաւորութիւնըն լաւ գիտելով, մարդկանց միտքըն հաւանացնումենք [11], բայց Աստուծոյ առաջին պիտի յայտնի վինք, եւ ես յոյս ունիմ՝ որ ձեր մտքումդ էլ յայտնի լեմ [12] ։

12 Չէ որ՝ իբր թէ մինէլ մեր անձնիըս գովելով ձեր առաջին դընենք [13], բայց պատճառ ենք տալիս ձեզ՝ մեզ համար պարծենալոյ [14], որ մին բան ունենաք նորանց դէմ՝ որ երեւութին պէս պարծենումեն, եւ ոչ թէ սրտով ։

13 Ինչու որ՝ թէ որ չափիցն անցկացանք՝ էն Աստուծոյ համար է, եւ եւ թէ որ չափաւոր ենք՝ էն ձեզ համար է [15] ։

14 Պատճառն որ՝ Քրիստոսի սէրն ստիպումէ մեզ՝ որ էս միտք անենք, ինչու որ՝ եթէ մինն ամենին տեղ մեռաւ, ապա ամէնքն մեռած են [16] ։

15 Եւ նա ամէնին վերայ մեռաւ, որ նորանք որ կենդանի են՝ ոչ թէ իրանց անձներին համար կենդանի լինին, այլ նորա համար՝ որ իրանց վերայ մեռաւ, եւ յարութիւն առաւ [17] ։

16 Այլ սրանից ետեւ մենք խակի մինին չենք գիտում մարմնոյ կողմանէ [18]. եւ թէ եւ Քրիստոսին էլ գիտումինք մարմնոյ կողմանէ, բայց հիմիկ՝ էլ էնպէս չենք գիտում [19] ։

17 Ինչ որ թէ որ մինն Քրիստոսումն է [20] մին նոր ստեղծված է [21], ինչու որ հինն անցկացաւ, եւ հիմիկ ամէն բան նոր եղաւ [22] ։

18 Մի՛այն թէ՝ էն ամենն Աստուածանից է, որ մեզ իրան հետ հաշտացրուց Քրիստոսի ձեռովն [23]. եւ մեզ հաշտութեան պաշտօնըն տուաւ ։

19 Ինչու որ՝ Աստուած էր էն, որ Քրիստոսովն աշխարհըս հաշտաց-

---

[6] Հբ. ը · 23։ բ Կոր. ա · 22։ Եփես. ա · 14։ գ · 30։ [7] Հմ. ը · 24, 25։ բ Կոր. դ · 18։ Քա Կոր. ժգ · 13։ Եբր. ժա · 1։ [8] Փիլիպ. ա · 23։ [9] Մատ. իե · 31, 32։ Հմ. ժգ · 10։ [10] Հմ. բ · 6։ Գաղ. զ · 8։ Եփես · զ · 8։ Կղ. կ · 24, 25։ Ցայտ. իբ · 12։ [11] Ցբ. լա · 23։ Եբր. ժ · 31։ Ցա · 23։ [12] բ Կոր. դ · 2։ [13] բ Կոր. դ · 1։ [14] բ Կոր. ա · 14։ [15] բ Կոր. ժա · 1, 16, 17։ ժբ · 6, 11։ [16] Հմ. ե · 15։ [17] Հմ. զ · 11, 12։ ժդ · 7, 8։ ա Կոր. զ · 19։ Գաղ. բ · 20։ ա Թես. ե · 10։ ա Պետ. դ · 2։ [18] Մատ. ժբ · 50։ Ցվէ. ժե · 14։ Գաղ. ե · 6։ Փիլիպ. գ · 7, 8։ Կղ. դ · 11։ [19] Ցվէ. զ · 63։ [20] Հմ. ը ·10։ ժզ · 7։ Գաղ. զ · 15։ [21] Գաղ. ե · 6։ զ · 15։ [22] Եսայ. խգ · 18, 19։ կե · 17։ Եփես. բ · 15։ Ցայտ. իա · 5։ [23] Հմ. ե · 10։ Եփես. բ · 16։ Կղ. ա ·20։ ա Ցվէ. բ · 2։ դ · 10։

ռուց իրան հետ, եւ նորանց մեղքերըն չըհամարեց նորանց[24], եւ հաշտութիւնն խօսքըն մեր միջումն դրաւ։

20 Ուրեմն Քրիստոսի կողմանէն պատգամաւոր (Էնք) ենք[25], ինչպէս որ Աստուած էլ յորդորումէ մեզանով, աղաչումենք Քրիստոսի կողմանէն՝ հաշտվեցէք Աստուծոյ հետ[26]։

21 Պատճառն որ՝ ինքն նորան՝ որ մեղք չէր գիտում, մեղ համար մեղք արաւ[27], որ մենք նորանով Աստուծոյ արդարութիւն լինինք[28]։

## Գ·Ը

1 Պօղոս խոստովանումէ թէ ինքն Քրիստոսի գործքի ընկեր է նորանց հետ՝ յորդորելով նորանց, 3 թէ իրանց պաշտօնն չընախատվի, 4 եւ թէ նորանք Աստուծոյ համար ամէն կերպ նեղութիւններին եւ անարգանքներին համբերեն։ 10 Նորանց համար շատ համարձակութիւնով խօսումէ, եւ իրան սիրոն նորանց լայն արձակ բացված, 13 և կամենումէ որ նորանք էլ ընդհակ սէր ունենան դէպի ինքն, 14 ցորդորումէ նորանք որ անհաւատների եւ կռապաշտների ընկերութիւնին դէն գնան, ինչու որ նորանք կենդանի Աստուծոյ տաճարն են։

1 Ձեր գործքի ընկեր ենք[1] եւ աղաչումենք[2], որ դուք Աստուծոյ շընորհքըն զուր տեղն չընդունիք[3]։

2 Պատճառն որ՝ ասումէ. ընդունելի ժամանակումն լսեցի քեզ, եւ փրկութեան օրումն օգնեցի քեզ. ահա (հիմիկ) ընդունելի ժամանակ է. հիմիկ փրկութեան օրն[4]։

3 Ընչինի որ խոչի մին բանով պայթակղութիւն տաք, որ (մեր) պաշտօնն չընախատվի[5]։

4 Այլ ամէն բանի մէջ ձեր անձներըդ առաջ դրէք ինչպէս Աստուծոյ պաշտօնեաներ՝ շատ համբերութիւնով նեղութիւններում, վիշտերում, չարչարանքներում[6],

5 Ծեծուտեւրում, բանտերում[7], խռովութիւններում, աշխատանքներում, ազաչումներում, պահոմ, հսկմունքներում, պահոմ,

6 Սրբութիւնում, գիտութիւնում, երկայնմտութիւնում, քաղցրութիւնում, սուրբ Հոգով, առանց կեղծաւորութեան սիրով.

7 Ճշմարտութեան խօսքերովը[8], Աստուծոյ զօրութիւնովը[9] արդարութեան զէնքերն առած աջ կողմանէ եւ ձախ կողմանէ[10]։

8 փառքով եւ անարգանքով, դովասանքով եւ բամբասանքով, ինչպէս մոլորացնողներ՝ եւ ճշմարիտ խօսողներ.

9 Ինչպէս չըճանաչվածներ՝ եւ ճանաչվածներ[11]. ինչպէս մեռածներ՝ եւ ահա կենդանի ենք[12]. ինչպէս պատժվածներ՝ եւ մահապարտ չը-

[24] Հռոմ. դ. 24, 25։ [25] Յոբ. լգ. 23։ Մաղ. բ. 7։ բ Կորնթ. դ. 6։ Եփես. գ. 20։ [26] բ Կորնթ. գ. 1։ [27] Եսայ. ծգ. 6, 9, 12։ Գաղ. գ. 13։ ա Պետր. բ. 22, 24։ ա Յովհ. գ. 5։ [28] Հռոմ. ա. 17։ ե. 19։ ժ. 3։ [1] ա Կորնթ. գ. 9։ [2] բ Կորնթ. ե. 20։ [3] Եբր. ժբ. 15։ [4] Եսայ. խթ. 8։ [5] Հռոմ. ժգ. 13։ ա Կորնթ. ի. 12։ ժ. 32։ [6] ա Կորնթ. գ. 1։ [7] բ Կորնթ. ժա. 23, Խոյլ։ [8] բ Կորնթ. գ. 2։ է. 14։ [9] ա Կորնթ. բ. 4։ [10] բ Կորնթ. ժ. 4։ Եփես. գ. 11, 13։ բ Տիմ. գ. 7։ [11] բ Կորնթ. գ. 2։ ե. 11։ ժա. 6։ [12] ա Կորնթ. գ. 9։ բ Կորնթ. ա. 9։ գ. 10, 11։

գովածներ[13]։

10 Ինչպէս տրտմածներ՝ եւ միշտ ուրախ ենք. ինչպէս աղքատներ՝ եւ շատերին հարստացնում ենք. ինչպէս թէ ոչ ինչ ունինք՝ եւ ամէն բան ունինք։

11 Ա՛ռ բերանս բացված է դէպի ձեզ կորնթացիք, եւ մեր սիրտս լայն արձակ է[14]։

12 Ա՛ռ անկից մին բանով նեղուած չըունիք, եւ ոչ ձեր սրտի դուռ թոնին նեղվիք[15]։

13 Հիմիկ՝ որ հենց մին հատուցումին ինչպէս թէ իմ որդիքներիս հետ ունենամ. դուք էլ լայն արձակ եղէք[16]։

14 Եւ անհաւատներին հետ լծի ընկեր մի լինիք[17]. պատճառն որ՝ ի՞նչ հաղորդութիւն կայ արդարութեան՝ անօրէնութեան հետ. եւ կամ թէ ի՞նչ հաւասարութիւն լուսոյն՝ խաւարին հետ։

15 Եւ կամ թէ ի՞նչ միաբանութիւն կայ Քրիստոսին՝ բելիարին հետ. կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալն անհաւատին հետ։

16 Կամ ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին՝ կռոքերի տան հետ[18], բայց դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք[19], ինչպէս որ Աստուած ասաց, թէ նորանց միջումն կբնակվիմ, եւ նորանց միջումն մանկըտամ. եւ նորանց Աստուած կըլինիմ, եւ նորանք իմ ժողովուրդ[20]։

17 Ելէք համար՝ նորանց միջնեցն դուրս գնացէք եւ զոկվեցէք, ասումէ Տէրն. եւ պիղծ բանների մի մօտենաք[21]։

18 Եւ ես կընդունիմ ձեզ. եւ ես հօր տեղ կըլինիմ ձեզ, եւ դուք ինձ որդիքների եւ աղջկունների տեղ կըլինիք, ասումէ ամենակարող Տէրն[22]։

## Գլ· Ի·

1 Պատճառ որովհետեւ մենք էս աւետիքըս ունինք սիրելիներ՝ մեր ամէն պղծութենից, սրբութիւնըն

[13] Սաղմ. ճժբ. 18։ [14] բ Կորնթ. է. 3։ [15] բ Կորնթ. ժբ. 15։ [16] ա Կորնթ. գ. 13։ [17] բ Օրին. է. 2, 3։ ա Կորնթ. է. 9։ է. 39։ [18] ա Թագ. է. 2, 3։ գ Թագ. ժբ. 21։ ա Կորնթ. ժ. 21։ Եփես. է. 7, 11։ [19] ա Կորնթ. գ. 16. զ. 19։ Եփես. բ. 21, 22։ Եբր. գ. 6։ [20] Եզեկիէլ. 45։ Գործ. իզ. 12։ Երեմ. լա. 33։ լբ. 38։ Եզեկ. ժա. 20։ լզ. 28։ լէ. 26, Խաչէ։ Զաք. բ. 8։ ժգ. 9։ [21] Եսայ. ծր. 11։ բ Կորնթ. է. 1։ Յայտ. ժբ. 4։ [22] Երեմ. լա. 1, 9։ Յայտ. իա. 7։

կատարինք Աստուծոյ ահռելի[1]։

2 Այո՛, արդ մեղ՝ որ մինչեւ գէմ մեղք չարինք, եւ մինչեւ ցայս չըստուխինք, եւ մինչեւ չըզղկեցինք[2]։

3 Ուր թէ ձեզ գատապարտելոյ համար եմ ասում ես, պատճառն որ՝ հինց առաջուց ասացի, որ դուք մեր սրտումն էք՝ մինչեւ ձեզ հետ կենդանի լինիլ եւ մեռնիլ[3]։

4 Շատ համարձակութիւն ունիմ դէպի ձեզ[4]. շատ պարծանք ունիմ ձեզ համար[5]. միխիթարութեանով լիքն եմ, ուրախութեանով աւելացած եմ մեր ամէն նեղութիւններումն[6]։

5 Պատճառն որ՝ երբոր հասինք մակեդոնիա, իսկի մին բանով էլ հանգիստ չըգտաւ մեր մարմնոյ համար[7], բայց ամէն բանի մէջ նեղութիւն քաշեցինք[8]. ինչու որ՝ դրսիցին կռիւ՝ ներսիցն ահ եւ վախ (կար)[9]։

6 Այց նա որ խոնարհներին միխիթարում[10]՝ Աստուած միխիթարից մեզ տիտոսի գալովն[11]։

7 Ուր թէ մինակ նորա գալովն, բայց էլ էն միխիթարութենովն՝ որ նա ձեր միջումն միխիթարվեցաւ, երբոր նա պատմեց մեզ ձեր սրտի փափագն՝ ձեր ողբալն՝ եւ ձեր ջերմեռանդութիւնն հինձ համար, մինչեւ որ էլ աւելի ուրախացայ։

8 Որ թէ եւ տրտմեցրի ձեզ էն թղթովն՝ չեմ զղջանում, եւ թէ որ զղջացած էլ էի. որովհետեւ տեսնում եմ՝ որ էն թուղթն մին փոքր ժամանակ ձեզ տրտմեցրուց[12]։

9 Այ հիմիկ ուրախ եմ, ոչ թէ նրահամար որ տրտմեցաք՝ բայց որ տրտմեցաք ապաշխարութենով. ինչու որ դուք Աստուծով տրտմեցաք, որ իսկի մեզանից մին բանով վնաս չըքաշէք։

10 Պատճառն որ՝ էն տրտմութիւնն որ Աստուծով է, ապաշխարութիւն է գործում՝ փրկութեան համար առանց զղջանալոյ[13]. բայց աշխարհքի տրտմութիւնն՝ մահ է գործում[14]։

11 Հիմիկ՝ հինց էն որ դուք Աստուծով տրտմեցաք, որքան ջանք գործից ձեզնում՝ կամ աղաչանք՝ կամ յանդիմանութիւն՝ կամ վախ՝ կամ փափագ՝ կամ նախանձախնդրութիւն՝ կամ վրէժխնդրութիւն. ինչու որ՝ ամէն բանով ցոյց տուիք ձեր անձնեղբդ՝ որ անմեղ էք էդ բանումդ։

12 Ուրեմն թէ եւ ես գրեցի ձեզ՝ ոչ թէ նորա համար էր՝ որ զրկանք արաւ, եւ ոչ թէ նորա համար՝ որ զրկանք քաշեց. բայց որ ձեր ջանքն՝ որ մեզ վերայ ունիք, յայտնի լինի ձեզ մեզ համար Աստուծոյ առաջին[15]։

13 Վասնզի համար միխիթարված ենք ձեր միխիթարութեան համար. եւ էլ աւելի ուրախացանք տիտոսի ուրախութեան համար, ինչու որ՝ նորա հոգին ձեր ամէնիցդ հանգիստ էր առած[16]։

14 Պատճառն որ՝ ինչ որ էլ ձեզ համար պարծեցայ նորա առաջին՝ չամաչեցի. բայց ինչպէս որ ամէն բան ճշմարտութենով խօսեցինք ձեզ հետ, էնպէս էլ մեր պարծանքն ճշմարիտ էլան տիտոսի առաջին։

15 Այց նորա սէրն էլ աւելի

[1] բ Կորնթ. գ. 17, 18։ [2] Գաղատ. ա. 3։ [3] բ Կորնթ. ժբ. 17։ [4] բ Կորնթ. գ. 11, 12։ [5] բ Կորնթ. գ. 12։ [6] բ Կորնթ. ա. 4։ [7] բ Կորնթ. ա. 14։ [8] բ Կորնթ. ա. 4։ Փիլիպ. բ. 17։ Կող. ա. 24։ [9] բ Կորնթ. բ. 13։ [10] բ Կորնթ. գ. 8։ [11] բ Օրին. լբ. 25։ [12] բ Կորնթ. ա. 4։ [13] բ Կորնթ. բ. 13։ [14] բ Թագ. ժբ. 13։ Առակ. իգ. 75։ [15] Եսայ. ժե. 22։ [16] բ Կորնթ. բ. 4։ Հռոմ. ժե. 32։

ձեզ վերայ կապված է, ինչու որ՝ մեր միաքս էր բերելու ձեր ամէնի հնազանդութիւնըն, թէ ինչպէս ահով եւ դողալով ընդունեցիք իրան[17]։

16 Արդարեւ՝ ուրախ եմ, որ ամէն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեզ վերայ[18]։

## ԳԼ · Ը

1 Պօղոս Մակեդոնացիներն օրինակ տալով՝ յորդորուէ կորնթացիները որ առատութիւնով օգնութիւն անեն Երուսաղէմի աղքատ սրբերին, 7 Ցոյց տալով նորանց ջանքըն՝ որ ունէրան էս ընորհքուան էլ, 9 Քրիստոսի աղքատութիւնն, 14 Կա՛ն մին շատ եւ լաւ խրատներ առնելուն եւիւ նորանց, կամենալէ՛ որ նորանց մէջ հաւասարութիւն լինի ողորմութեան համար՝ ու էլ թէ աւելութիւն կամ պակասութիւն լինի նորանց միջեն։ 16 Եւ աբեն ցոյց կուտայ նորանց թէ՝ Տիտոս իրան աղաչանքըն ընդունեց եւ յօժար սրտով նորանց մօտ գնաց, եւ մէկէ եղբօրըն էլ նորա հետ մին տեղ էս գործիս համար։

1 Եղբարք՝ ցոյց եմ տալիս ձեզ Աստուծոյ էն ընորհքըն՝ որ մակեդօնացոց եկեղեցիներին տըվված է։

2 Ինչու որ՝ նեղութեան մեծ փորձոնքն էլ աւելի շատ էլաւ նորանց ուրախութիւնն, եւ նորանց ծանր աղքատութիւնն էլ աւելի էլաւ նորանց համար մեծ առատութիւն[1]։

3 Պատճառն որ՝ իրանց կարողութեան չափովն՝ (էս) վկայութեամբ, եւ կարողութենիցն էլ աւելի։

4 Ինքն իրանց կամքով՝ շատ աղաչանքով ազաչութիւն՝ որ էն պաշտօնի ընորհքըն, եւ հաղորդութիւնըն՝ որ սրբերին է լինում, մեր ձեռքս տան[2]։

5 Ու էն թէ ոչքան որ յոյս ունէինք, բայց իրանց անձներըն էլ տուին, առաջ Տէրին՝ եւ ապա մեզ՝ Աստուծոյ կամքովն։

6 Որ մենք էլ տիտոսին աղաչեցինք՝ որ ինչպէս որ առաջուց սկսեց՝ էնպէս էլ էդ ընորհքըդ կատարէ ձեր միջումդ[3]։

7 Ինչպէս որ ամէն բանի մէջ աւելանում էք հաւատքով՝ եւ խօսքով՝ եւ գիտութենով՝ եւ ամէն ջանքով՝ եւ ձեր սիրովն որ դէպի մեզ է[4], ապա էդ ընորհքումդ էլ աւելացէք[5]։

8 Ու էն թէ իբր հրաման տալով եմ՝ ասում, բայց ուրիշների ջանք առնելուն համար, եւ ձեր սիրոյ համար՝ ձեր հաւատարմութիւնըն եմ՝ փորձում[6]։

9 Ինչու որ՝ գիտում էք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ընորհքըն, որ ձեզ համար աղքատացաւ նա[7]՝ որ հարուստ էր, որ դուք նորա աղքատութենովն հարստանաք։

10 Ու էս բանիս մէջ մին խրատ եմ տալիս[8], ինչու որ՝ էն օգուտ է ձեզ[9], որ ոչ թէ միանակ անելըն՝ բայց էլ կամենալըն առաջուց սկսեցիք՝

[17] բ Կորնթ. բ· 9։ Փիլիպ· բ· 12։ [18] բ Թես· գ· 4։ Փիլիպ. 8, 21։ [1] Մարկ· ժբ· 44։ բ Կորնթ· թ· 11։ [2] Գործ· ժա· 29։ իդ· 17։ Հռովմ. ժե. 25, 26։ ա Կորնթ· ժգ· 1, 3, 4։ բ Կորնթ· թ· 1։ [3] վ.յոյր· 17։ բ Կորնթ· ժբ· 18։ [4] ա Կորնթ· ա· 5։ ժբ· 8։ [5] բ Կորնթ· թ· 8։ [6] ա Կորնթ· է· 6։ [7] Մատթ· բ· 20։ Գաղ· թ· 58։ Փիլիպ· բ· 6, 7։ [8] ա Կորնթ· է· 25։ [9] Ընդ· ժթ· 17։ Մատթ· ժ· 42։ ա Տիմ· գ· 18, 19։ Եբր· ժգ· 16։

անցկացած տարուցդ հետէ[10]։

11 Իսպց հիմիկ անեղբն էլ կատա-
րեցէք, որ ինչպէս որ յօժարութիւնն
կամքիցն է առաջ գալիս, ենպէս էլ
անելն՝ ունեցածի չափովն։

12 Ինչու որ՝ եթէ յօժարութիւն
կայ, ունեցածի չափովն ընդունելի է՝
եւ չէ թէ չունեցածի չափովն[11]։

13 Պատճառն որ՝ չէ թէ ուրիշ-
ներին հանգստութիւն եմ՝ կամե-
նում, եւ ձեզ նեղութիւն։

14 Իսպց հաւասարութեամբ՝ հի-
միկվայ ժամանակումն (թմղ) ձեր
աւելութիւնդ (ծառայէ) նորանց
պակասութեանն, որ նորանց աւե-
լութիւնն էլ (ծառայէ) ձեր պակա-
սութեանն, որ հաւասարութիւն լի-
նի, ինչպէս որ էլ գրված է։

15 Ինչ նա՝ որ շատ արաւ, չաւե-
լացաւ, եւ նա որ քիչ՝ չպակասվե-
ցաւ[12]։

16 Իսպց շնորհակալութիւն (լինի)
Աստուծոյն՝ որ հենց էն ջանքըն ձեզ
համար քցեց տիտոսի սիրտն։

17 Ինչու որ՝ իմ աղաչանքս ըն-
դունեց, եւ շատ յօժար սրտով վը-
ռաղեց որ ձեզ մօտ գայ[13]։

18 Եւ նորա հետ ուղարկեցինք էն
եղբօրըն[14] որ նորա գովաբանքն ա-
ւետարանումն է ամէն եկեղեցիների
միջումն։

19 Եւ չէ թէ միայն այդ, այլ
նա եկեղեցիներից էլ ձեռնադրված՝
մեր պանդխտութեան ընկեր էլաւ
էս շնորհքումն[15] որ մենք ծառայու-
մենք նորան՝ Աստուծոյ փառաց հա-
մար եւ մեր յօժար սրտովն[16]։

20 Իսպց էս բանիցս զգուշութիւն
էնինք անում, որ չըլինի թէ մենք
մեզ աղտ քցէ էս հաստատ (լինու-
թեանս) վերայ՝ որ մենք ծառայու-
մենք նորան։

21 Պատճառն որ՝ բարի բաներ ենք
մտածում, չէ թէ միայն Տէրի առա-
ջին, այլ մարդկանց առաջին էլ[17]։

22 Եւ նորանց հետ ուղարկեցինք
մեր եղբօրըն՝ որ նորան շատ բանի
մէջ ընտրեցինք եւ շատ անգամ ժիր
գտինք, եւ հիմիկ էլ աւելի ջանք
անող էն մեծ վստահութեանովն՝ որ
ունի պէտի ձեզ։

23 Իսպց թէ որ տիտոսի համար
խօսք լինի, նա իմ հաւասարս է՝ եւ
ձեզ համար գործ ընկերս[18], եւ թէ
որ մեր եղբարներին (համար՝ նորանք)
եկեղեցոյ առաքեալներն են՝ եւ Քրի-
ստոսի փառք։

24 Ուրեմն ձեր սիրոյ ապացոյց
եւ մեր ձեզ համար պարծենալոյ (պատ-
ճառն), ցոյց տուէք գորանց՝ ամէն
եկեղեցիների առաջին[19]։

---

[10] բ կորնթ. թ. 2։ [11] կորնթ. ժբ. 43, 44։ գոլ. բա. 3։ [12] ելք. ժզ. 18։ [13] վեր. 6։
[14] բ կորնթ. ժբ. 18։ [15] ա կորնթ. ժզ. 3, 4։ [16] բ կորնթ. գ. 15։ [17] հռովմ. ժբ. 17։ փի-
լիպ. գ. 8։ ա պետր. բ. 12։ [18] փիլիպ. բ. 25։ [19] բ կորնթ. է. 14։ թ. 2։

## ԳԼ· Թ

1 Առաքեալն ցոյց կըտայ Թէ ինչու համար Ցիտոսն եւ մեկել եղբօրըն առաջուց ուղարկէց նորանց, Թէ եւ նորանց յօժարութիւնն եւ ջանքն գիտուէր· 6 Եւ յորդորուէ նորանք մին առակով՝ որ առատութեամբ անեն էս օրհնութիւնս, 10 Որ Աստուած ինչպէս սերմ ցանօղներին սերմ է ընծայում, ինքն ընծայէ եւ չատացնէ նորանց սերմանիքներըն եւ արդարութեան պտուղն, 12 Եւ էս տուրքիս պատճառովն չատերի ձեռովն Աստուծոյ գոհութիւնն չատանայ եւ Աստուած փառաւորվի։

1 Բայց էն պաշտամունքին համար՝ որ սըրբերին է լինում, աւելորդ է ինձ որ գրեմ ձեզ[1]։

2 Ինչու որ՝ գիտուեմ ձեր յօժարութիւնըն[2], որ նորանով մեկնեցօղացդ մէջն ձեզ համար պարծեցել եմ[3]. Թէ աքայեցիքն անցկացած տարուցն հետէ պատրաստ էն[4], եւ ձեր ջանքն շատերին յորդորեց։

3 Բայց եղբարներին ուղարկեցինք, որ մեր ձեզ վերայ պարծենալն զուր չըլինի էդ կողմանէդ. բայց ինչպէս որ հենց ասել եմ, լաւ պատրաստ գտնըվիք[5]։

4 Որ չըլինի Թէ՝ երբոր մակեդօնացիքն մեզ հետ գան՝ եւ ձեզ չըպատրաստված գտնեն, մենք էլ ամենի լինինք, որ չասենք Թէ՝ դուք, էդ մեր պարծանքի կողմանէ։

5 Սրահամար հարկաւոր համարեցի եղբարներին ազաչել, որ առաջուց ձեզ գնան, եւ առաջուց պատրաստեն ձեր առաջուց խոստացած օրհնութիւնըն՝ որ պատրաստ լինի, էնպէս[6]՝ ինչպէս օրհնութիւն՝ եւ ոչ Թէ ինչպէս ագահութիւն։

6 Պատճառն որ՝ էդ (եմ ասում) նա՝ որ խնայելով է սերմանում, խնայելով էլ հնձումէ. եւ նա՝ որ առատութեամբ է սերմանում, առատութեամբ էլ հնձումէ[7]։

7 Ամեն մէկն ինչպէս որ սրտի յօժարութիւն կայ, էն Թէ հարկադրութեամբ եւ տրամութեամբ[8]. ինչու որ՝ Աստուած ուրախ տուօղներին է սիրում[9]։

8 Բայց Աստուած կարօղ է ամեն շնորհքներըն աւելացնել ձեզանում. որ ամեն բանի մէջ ամեն ժամանակ ամեն բաւականութիւն առնէք, եւ ամեն բարի գործքերով աւելանաք[10]։

9 Ինչպէս որ էլ գրված է. փռեց եւ աղքատներին տուաւ. նորա արդարութիւնն մնումէ յաւիտեան[11]։

10 Բայց նա՝ որ սերմ ցանօղներին սերմ է ընծայում, եւ հաց՝ կերակուրի համար, նա էլ կընծայէ եւ կըշատացնէ ձեր սերմանքներըն[12], եւ ձեր արդարութեան պտուղն կըմեծացնէ[13]։

11 Որ ամեն բանի մէջ հարուստ լինիք ամեն լիութեամբ՝ որ էն մեզանով գոհութիւն է բերում Աստուծոյն[14]։

---

[1] Գործ. ժա. 29։ Հռովմ. ժե. 26։ ա Կորնթ. ժզ. 1։ բ Կորնթ. ը. 4։ Գաղ. բ. 10։ [2] բ Կորնթ. ը. 19։ [3] բ Կորնթ. ը. 24։ [4] բ Կորնթ. ը. 10։ [5] բ Կորնթ. ը. 6, 17, 18, 22։ [6] Ծննդ. դ. 11։ ա Թագ. իե. 27։ գ Թագ. ե. 15։ [7] Ղեւտ. ժա. 24։ ժԹ. 17։ Իս. 9։ Գաղ. գ. 8, 9։ [8] բ Օրէն. ժե. 7։ [9] Եզե. իե. 2։ Լե. 5։ Ղեւտ. ժա. 25։ Հռովմ. ժբ. 8։ բ Կորնթ. ը. 12։ [10] Ղեւտ. ժա. 24, 25։ Իս. 27։ Փիլիպ. գ. 19։ [11] Սաղմ. ճժբ. 9։ [12] Եսայ. ձե. 10։ [13] Ովսե. ժ. 12։ [14] բ Կորնթ. ա, 11։ գ. 15։

12 Ինչու՞ որ՝ Էս տուրքիս պաշտօնն չէ թէ մենակ սրբերուն պակասութիւնըն լեցնելոյ համար է[15]՝ բայց էլ որ շատերի ձեռովն Աստուծոյ գոհութիւնն շատանայ։

13 Որ էս պաշտամունքիս փորձովն Աստուած փառաւորվի ձեր Քրիստոսի աւետարանի հնազանդութեանն համար[16]. եւ էն աւատ հաղորդութեանովն՝ որ նորանց եւ ամէնին հետ է ունում[17]. եւ նորանց ձեզ համար (արած) աղօթքովն, որ նորանց փափաքն ձեզ վրայ է՝ Աստուծոյ էն հարուստ շնորհքներին համար՝ որ ձեզանում են[18]։

14 Խայց Աստուծոյ (լինի) շնորհակալութիւն՝ իրան անպատմելի պարգեւներին համար[19]։

## ԳԼ. Ժ

1 Պօղոս Առաքեալն ազաչում որ համարեա թէ կորնթացոց միջումն ցած է՝ բայց հեռուանցից համարձակ է դէպի նորանց, եւ չէ ուզում որ մտիցին էլ համարձակ լինի կամ էնպէս համարվի որ յանդուգն է մինչեանի սուտ առաքեալներին դէմ, որ կարծումին թէ մարմնոյ պէս է վարվում, թէ եւ մարմնոյ պէս է վարվում՝ բայց չէ թէ մարմնոյն պէս է զինուորութիւն անում, բայց Հոգեւոր զէնքով՝ Աստուծով զօրաւոր՝ ամէն բարձրութիւնն՝ որ գոռոզանում Աստուծոյ գիտութեան դէմ, քանդելոյ, 7 Եւ հաւատացուվ թէ որ մինն իրան անձին համար համարում՝ որ նա Քրիստոսինն է՝ էնպէս էլ ինքըն եւ իրան ընկերներն. եւ իրան իշխանութեան համար ասում՝ որ Տէրն տուաւ նորա, չինելոյ եւ չէ թէ քանդելոյ. եւ թէ Հնուանոյ խոչպէս է էս թղթերի խօսքերովն էնպէս էլ մտանոյ է գործով։ 12 Էն մին քանի ոուտ վարդապետների համար ասում՝ որ իրանց անձերըն գովելով չափից դուրս պարծենումն՝ էն էլ օտար աշխատանքովն։

1 Խայց հենց ես պօղոս աղաչումեմ ձեզ՝ Քրիստոսի հեզութեանովն եւ հանդարտութեանովն[1], որ ես ձեր դիմացն ցած եմ՝ ձեր միջումն[2]. բայց հեռուանցից համարձակ եմ դէպի ձեզ։

2 Աղաչումեմ որ չըլինի՝ թէ մոտիցն էլ վստահութեանով համարձակ լինիմ. կամ էնպէս համարվիմ՝ որ յանդուգն լինիմ մին քանիսին դէմ[3], որ մեզ համար կարծումին՝ թէ մարմնոյ պէս ենք վարվում։

3 Ինչու՞ որ՝ թէ եւ մարմնով ենք վարվում՝ բայց չէ թէ մարմնոյն պէս ենք զինուորութիւն անում։

4 Պատճառն որ՝ մեր զինուորութեան զէնքն մարմնաւոր չէ[5], բայց Աստուծով զօրաւոր[6], բերդերըն քանդելոյ[7]. խորհուրդներըն ենք քանդում՝

5 Եւ ամէն բարձրութիւնըն՝ որ գոռոզանում Աստուծոյ գիտութեան դէմ. եւ ամէն միտքըն գերի ենք անում՝ որ հնազանդ լինի Քրիստոսին[8]։

6 Եւ պատրաստ կացած ենք վը-

[15] բ Կորնթ. ը. 14։ [16] Լատ. է. 16։ [17] Եբր. ժգ. 16։ [18] բ Կորնթ. ը. 1։ [19] Յակ. ա. 17։ [1] Հռոմ. ժբ. 1։ [2] վ. յոբ. 10։ բ Կորնթ. ժբ. 5, 7, 9։ [3] ա Կորնթ. դ. 21։ բ Կորնթ. ժգ. 2, 10։ [4] ա Տիմ. ա. 18։ բ Տիմ. բ. 3։ [5] Եփես. զ. 13։ ա Թես. է. 8։ [6] Գործ. է. 22։ ա Կորնթ. բ. 5։ բ Կորնթ. զ. 7։ ժգ. 3, 4։ [7] Եբր. ա. 10։ [8] ա Կորնթ. ա. 19։ գ. 19։

*ըհժ[ան]դրութիւն անելոյ ամէն ան-*
*Հնազանդութեան համար*[9] *երբոր*
*ձեր Հնազանդութիւնն էլ կատարեալ*
*կըլլի*[10]։

7 Ա՛մէն մէկի երեսին նայեցէք[11],
*թէ որ մէնն իրան անձին վերայ վըս-*
*տահ է՝ որ նա Ա՛րիստոսին է*[12], *թող*
*իրան մտքումն էս էլ մնածէ՝ թէ*
*ինչպէս որ նա Ա՛րիստոսին է՝ էնպէս*
*էլ մենք*[13]։

8 Ինչու որ՝ եթէ էլ աւելի պար-
ծենալու լինիմ մեր իշխանութեան
համար՝ որ Տէրն տուաւ մեզ, ձեզ
շինելոյ՝ եւ ոչ թէ քանդելոյ հա-
մար[14], իսկի չեմ ամչնալ[15]։

9 Որ չերեւիմ իբր թէ վախ
քցել ձեզ վերայ էս թղթերովս։

10 Ինչո՞ որ ասէք, Թղթերս
ծանր են եւ սաստիկ· բայց մարմնոյ
կերպարանքն տկար[16] եւ խօսքն էլ
ոչ ինչ համարված[17]։

11 Էնպէսին թող էս միտք անէ,
*թէ մենք ինչպէս որ հեռուանոց ենք*
*էլ թղթերի խօսքերովն, էնպէս էլ*
*մօտանոց (ենք) գործքով*։

12 Պատճառն որ՝ մենք չենք հա-
մարձակվում մեր անձըն կշռել եւ
հաւասարել մին քանիսին հետ՝ որ
իրանց անձնները գովելով ձեր ա-
ռաջից են դնում՝ բայց նորանք ինք
իրանցով իրանց անձնները չափու-
մեն, եւ էնպէս իրանք իրանց կշռե-
լով՝ բան չեն հասկանում[18]։

13 Էսոյց մենք ոչ թէ չափից
դուրս պարծենում ենք՝ այլ էն կա-
նոնի չափովն, որ Աստուած
բաժանեց մեզ՝ հասնել մինչեւ ձեզ
մօտ[19]։

14 Որչ թէ՝ իբր թէ ձեզ մօտ հա-
սած չըլինինք, եւ մեր անձնները
երկայնացնենք· ինչու որ՝ մինչեւ
ձեզ մօտ հասինք Ա՛րիստոսի աւե-
տարանովն[20]։

15 Նէ չափից դուրս չենք պար-
ծենում՝ օտար աշխատանքովն[21],
բայց յոյս ունինք՝ որ ձեր հաւատքի
մեծանալոյ ժամանակումն՝ մինչ մե-
ծանանք ձեզանում աւետութենով՝
մեր կանոնիս պէս։

16 Որ ձեզանից էն կողմն էլ աւե-
տարանըն քարոզինք՝ եւ չէ թէ օտար
կանոնով պատրաստվածների վերայ
պարծենանք։

17 Ինչու որ՝ ով որ պարծենում՝
*թող Տէրովն պարծենայ*[22]։

18 Պատճառն որ՝ ոչ թէ նա՝ որ
իրան անձըն գովելով առաջն է գը-
նում՝ նա է ընտրված[23]· այլ նա՝ որ
Տէրն նորան գովելով առաջն է
դնում[24]։

---

[9] բ Կորնթ. ժգ. 2, 10։ [10] բ Կորնթ. բ. 9։ է. 15։ [11] Ցովհ. է. 24։ բ Կորնթ. ե. 12։ ժա. 18։ [12] ա Կորնթ. ժգ. 37։ ա Ցովհ. գ. 6։ [13] ա Կորնթ. գ. 23։ Թիմ. 1։ բ Կորնթ. ժա. 23։ [14] բ Կորնթ. ժգ. 10։ [15] բ Կորնթ. է. 14։ ժբ. 6։ [16] ա Կորնթ. բ. 3, 5։ Վէր. 1։ բ Կորնթ. ժբ. 5, 7, 9։ Գաղ. գ. 13։ [17] ա Կորնթ. ա. 17։ բ. 1, 4։ բ Կորնթ. ժա. 6։ [18] բ Կորնթ. գ. 1։ ե. 12։ [19] Վէր. 15։ [20] ա Կորնթ. գ. 5, 10։ գ. 15։ Թիմ. 1։ [21] Հռովմ. ժե. 20։ [22] Երեմ. կե. 16։ Երեմ. Թ. 23։ ա Կորնթ. ա. 31։ [23] Նահ. իե. 2։ [24] Հռովմ. բ. 29։ ա Կորնթ. գ. 5։

## ԳԼ · ԺԸ

*1 Ընտրեալն Կորնթացւոց վերայ ունեցած նախանձաւորութեան համար՝ որ նորահաս սուտ առաքեալներն իրանից վեր համարում էին, հարկաւոր կը լինի իրան որ մինչեւ պարծենայ, 5 Իրան են լաւ Ընտրեալներին հետ հաւասար լինելը, 7 Եւ նորանցից մին վարձք չառաւ՝ Ընտրեալներն նորանց ձրի աւետարանն գոյց կըտայ. 13 Եւ թէ ինքըն ամէն գործքերի մէջ էն խոթբերայ մշակներից ցած չէ, 23 Բայց նորանցից շատ աւելի հաւատարիմ է՝ թէ Քրիստոսի գործին մէջ, եւ թէ նորա Ընտրեալի համար ամէն կերպ նեղութիւններուն մէջ։*

1 Լաւ կը լինէր՝ թէ որ մինչիչ իմ յիմարութեանս էլ նեղէիք[1]. եւ (ինձ) էլ համբերեցէք։

2 Զի համար նախանձաւոր եմ Ընտրեալ նախանձովն[2]. ինչու որ՝ ձեզ մին մարդոյ հետ նշանեցի[3] որ ինչպէս մին սուրբ կոյս[4] Քրիստոսի առաջին կանգնացնեմ[5]։

3 Բայց վախենում եմ՝ որ չըլինի թէ ինչպէս օձն իրան խորամանկու-թիւնովն խաբեց Եւային[6] էնպէս էլ ձեր միաքն ապականվի էն միամտու-թիւնից՝ որ Քրիստոսումն է[7]։

4 Ինչու որ՝ թէ որ մին գայ եւ ուրիշ Քրիստոս քարոզէ՝ որ մենք չը-քարոզեցինք, կամ ուրիշ Հոգի առնէք՝ որ չառիք, կամ ուրիշ աւե-տարան[8] որ չընդունեցիք, ապա լաւ կըհամբերէիք նորանց։

5 Բայց ես էսպէս եմ համա-րում՝ թէ իսկի մին բանով էլ պա-կաս չեմ քան թէ էն լաւ առաքեալ-ներն[9]։

6 Թէ եւ տգէտ լինիմ խօս-քով[10] բայց չէ թէ գիտութեամբ[11], միայն թէ ամէն բանի մէջ իսպառ անձներըս յայտնեցինք ձեզ[12]։

7 Կամ թէ մին մեղք գործեցի՝ որ իմ անձըս խոնարհացրի[13], եւ էն ներահամար՝ որ դուք բարձրանաք. ինչու որ՝ Ընտուծոյ աւետարանն ձրի (ֆո֊ֆսայ) աւետարանեցի ձեզ։

8 Ուրիշ եկեղեցիներըն թալա-նեցի՝ եւ (նորանցից) վարձք առի՝ որ ձեզ ծառայեմ։

9 Լը երբոր ձեզ մօտ եկի, թէ եւ մին բանի պակասութիւն քաշե-ցի, ձեզանից մընին ծանրութիւն չը-տուի[14], ինչու որ՝ իմ պակասութիւ-նըս էն մակեդոնացիներից եկած եղբարքն լցրին[15]. եւ ամէն բանի մէջ առանց ձեզ ծանրութիւն տա-լոյ՝ իմ անձըս պահեցի, եւ էլ կը-պահեմ[16]։

10 Պատճառն որ՝ Քրիստոսի ճշմարտութիւնն ինձանումն կայ[17], որ ես պարծանքս աքայեցոց կողմերումն չէն խափանվիլ ինձանից[18]։

[1] վ֊ոյր · 16։ [2] բ Կորնթ · ե · 13։ [3] Գաղ · գ · 17, 18։ [5] Ովսէ · բ · 19, 20։ [4] Կորնթ · գ · 15։ [6] Գնծ · ի · 13։ [5] Կաղ · ա · 28։ [7] Եփես · գ · 24։ Կաղ · բ · 4, 8, 18։ [8] Տիմ · ա · 3։ գ, 1։ Եբր · ժգ · 9։ [9] բ Պետր · գ · 17։ [8] Գաղ · ա · 7, 8։ [9] ա Կորնթ · ժե · 10։ [10] բ Կորնթ · ժբ · 11։ Գաղ · բ · 6։ [10] ա Կորնթ · ա · 17։ բ · 1, 13։ [11] բ Կորնթ · ժ · 10։ [11] Եփես · գ · 4։ [12] բ Կորնթ · գ · 2։ ե · 11։ ժբ · 12։ [13] Գաղ · ժբ · 3։ [14] Կորնթ · թ · 6, 12։ [15] բ Կորնթ · ժ · 1։ [14] Գաղ · ի · 33։ [15] բ Կորնթ · ժբ · 13։ [16] Թես · բ · 9։ բ Թես · գ · 8, 9։ [15] Փիլիպ · գ · 10, 15, 16։ [16] բ Կորնթ · ժբ · 14, 16։ [17] Հռով. թ · 1։ [18] ա Կորնթ · թ · 15։ [19] բ Կորնթ · չ · 11։ է · 3։ ժբ · 15։

11 Ինչո՞ւ համար. իբր թէ ձեզ չե՞մ սիրում[19]. Էն Աստուած է գիտում:

12 Ի՞նչ որ անում եմ՝ էլ կանեմ. որ պատճառը կտրեմ նորանց՝ որ պատճառ են ինդրում[20]. որ ինչով որ պարծենում՝ նորանք էլ մեզ նման գտնվին:

13 Ինչու որ՝ Էնպէսիներն՝ առաւ առաքեալներ[21], խաբեբայ մշակներ, Քրիստոսի առաքեալների կերպարանքին կերպարանվում են[22]:

14 Եւ զարմանալի բան էլ չէ. ինչու որ՝ Հենց ինքն սատանան էլ լուսոյ հրեշտակի կերպարանքին է բան վերայ է առնում[23]:

15 Էս իսկի մեծ բան չէ՝ որ նորա պաշտօնեանքն էլ արդարութեան պաշտօնեանքին նման կերպարանվին[24]. որ նորանց վերջն էլ իրանց գործքերին պէս կըլինի[25]:

16 Ա՛յնել ասում եմ. չը՛լինի որ մին ինձ յիմար համարէ. ապա թէ չէ՝ գոնեա յիմարի պէս ընդունեցէք ինձ, որ ես էլ մի քիչ պարծենամ[26]:

17 Էս ես ինչ որ յոսում եմ՝ ո՛չ Տէրին մտիկ տալով եմ խոսում[27], այլ ինչպէս յիմարութենով՝ ինչպէս որ էդ պարծանքի կարգն բերում[28]:

18 Էս որովհետեւ շատքն մարմնով կողմանէն պարծենում՝ ես էլ կպարծենամ[29]:

19 Ցօժար մտքով համբերութեամբ անմիտներին՝ ձեր իմաստութենով:[30]

20 Պատճառն որ՝ համբերում եք թէ որ մին խաբէ ձեզ, թէ որ մին ծառայացնէ, թէ որ մին ձեր բանքն ուտէ, թէ որ մին բան առնէ, թէ որ մին գոռոզանայ, թէ որ մին ձեր երեսին զարկէ[31]:

21 Ինչ անարգանքիդ համար եմ ասում, իբր թէ մենք տկարացա՞նք արդեօք[32]. ինչ բանով որ մին համարձակվի, (յիմարութենով ասում եմ,) ես էլ կըհամարձակվիմ[33]:

22 Էբրայեցի՞ են, ես էլ. իսրայէլացի՞ են, ես էլ[34]. արբահամի զաւակ են, ես էլ:

23 Քրիստոսի պաշտօնեանե՞ր են, Յիմարձակութենով կասեմ՝ թէ էլ աւելի ես էլ, թէ աշխատանքով՝ աւելի[35], թէ ծեծով՝ էլ աւելի, թէ բանտով՝ նորանցից աւելի[36], թէ մահով՝ շատ անգամ[37]:

24 Հրեաներից հինգ անգամ՝ քառասունից մին պակաս ծեծ կերայ[38]:

25 Էրեք անգամ ձաղկով ծեծվեցայ[39]. մին անգամ քարկոծվեցայ[40]. երեք անգամ նաւակոծ էլայ[41]. ցերեկ եւ գիշեր անդընդումն նեղութիւն քաշեցի:

26 Շատ անգամ ճանապարհներումն, գետերից նեղութիւններ, աւազակներից նեղութիւններ[42],

[20] ա Կորնթ. Թ. 12: [21] Գործ. Ժե. 24: Հռոմ. Ժգ. 18: Գաղ. ա. 7: ղ. 12: Փիլիպ. ա. 15: բ Պետր. բ. 1: ա Յովհ. գ. 1: Յայտ. բ. 2: [22] բ Կորնթ. բ. 17: Փիլիպ. գ. 2: Տիտ. ա. 10, 11: [23] Գաղ. ա. 8: [24] բ Կորնթ. գ. 9: [25] Փիլիպ. գ. 19: [26] Ա՛ր. 1: բ Կորնթ. ժբ. 6, 11: [27] ա Կորնթ. ԺԷ. 6, 12: [28] բ Կորնթ. Թ. 4: [29] Փիլիպ. գ. 3, 4: [30] ա Կորնթ. գ. 10: [31] Գաղ. բ. 4: դ. 9: [32] բ Կորնթ. ժ. 10: [33] Փիլիպ. գ. 4: [34] Գործ. իը. 3: Հռոմ. ժա. 1: Փիլիպ. գ. 5: [35] ա Կորնթ. ժե. 10: [36] Գործ. Թ. 16: ի. 23: իա. 11: բ Կորնթ. Ա՛գ. 4, 5: [37] ա Կորնթ. ժե. 30, 31, 32: բ Կորնթ. ա. 9, 10: դ. 11: ղ. 9: [38] Բ Օրին. իե. 3: [39] Գործ. ժգ. 22: [40] Նորա. ժգ. 18: [41] Գործ. իե. 41: [42] Գործ. Վ. 23: ժգ. 50: ժգ. 5: ժե. 5: ի. 3: իա. 31: իդ. 10–12: իե. 3:

ազգիցս նեղութիւնները, հեթանոսներին նեղութիւնները[43], քաղաքի մէջ նեղութիւնները, անապատի (չօլէ) մէջ նեղութիւնները, ծովի մէջ նեղութիւնները, սուտ եղբայրներին նեղութիւնները։

27 Ջանքի մէջ եւ աշխատանքի մէջ, շատ անգամ արթնութիւնների մէջ[44], սովի եւ ծարաւի մէջ[45], շատ անգամ պասի մէջ, ցրտի եւ մերկութեան մէջ։

28 Թող ուրիշ նեղութիւնները էլ, եւ որ ամէն ժամանակ շատ ըղբաղմունք էլ ինձ վերայ կիսվում՝ եւ ամէն եկեղեցիների հոգան[46]։

29 Ո՞վ կը հիւանդանայ՝ եւ ես նորա ձեռքից չհիւանդանամ, եւ ո՞վ կը գայթակղվի՝ եւ ես չեմ բորբոքվիլ[47]։

30 Թէ որ պարծենալ պէտք լինի ինձ, իմ տկարութեանովս կը պարծեմ[48]։

31 Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրն՝ որ յաւիտեան օրհնել է[49], գիտէ՝ որ սուտ չեմ ասում[50]։

32 Դամասկոսումն արիտա թագաւորի ազգապետն դամասկացոց քաղաքին պահ էր դրել՝ որ ինձ բռնէ[51]։

33 Եւ պատուհանից քթոցով կախվեցայ պարսպից, եւ փախայ նորա ձեռքից։

## ԳԼ. ԺՈ

1 Իրան Առաքելութեան վերայ պարծենալոյն համար՝ թէեւ կարօղ է իրան էլած զարմանալի յայտնութիւններովն փառաւորվիլ, 9 Բայց աւելի ընտրում է իրան տկարութիւնների վերայ պարծենալ, 11 Եւ կըսպառէ նորանք որ իրան էապէս յիմարութեանով պարծենալոյն պատճառ էլան։ 14 Մինէլ նորանց գնալոյ խոստմունք կանէ, էն էլ ինչպէս մին հայր էնպէս սիրով, 20 Եւ վախենում որ սուտ մանելոյ չափ չապաշխարող եւ չար գործօղ մարդիք պիտի գանայ նորանց մէջ։

1 Ա՛պա՝ պարծենալ որ պէտք լինի, էլ օգուտ չի բերում ինձ, բայց կըգամ Տէրի տեսիլքներին եւ յայտնութիւններին մէջ։

2 Մին մարդ գիտում եմ Քրիստոսումն տասն չորս տարուց առաջ, եթէ մարմնով էր՝ չեմ գիտում, եւ եթէ առանց մարմնոյ էր՝ չեմ գիտում, Աստուած գիտում[1]։ *Նա յափշտակվեցաւ մինչեւ երրորդ երկինքն[2]։

3 Եւ գիտում եմ էնպէսի մարդըն եթէ մարմնով՝ եւ եթէ առանց մարմնոյ էր՝ չեմ գիտում, Աստուած գիտում։

4 Որ նա յափշտակվեցաւ դրախտի մէջ, եւ անասելի բաներ լսեց[3] որ մարդոյն պէտք չէ նորանց խօսել։

5 Ինչպէսոյն համար պարծենամ, բայց իմ անձիս համար չըպարծենամ, բայց միայն իմ տկարութեանս համա[4]։

6 Ինչու որ՝ թէ էլ կամենամ պարծենալ՝ յիմար չեմ լինիլ, պատ-

[43] Գործ. ԺԴ. 5։ ԺԹ. 24։ [44] Գործ. Ի. 31։ Բ Կորնթ. Գ. 5։ [45] Ա Կորնթ. Դ. 11։ [46] Գործ. Ի. 18, Խաչէն։ Հռովմ. Ա. 14։ [47] Ա Կորնթ. Ը. 13։ ԺԲ. 22։ [48] Բ Կորնթ. ԺԲ. 5, 9, 10։ [49] Հռովմ. Թ. 5։ [50] Հռովմ. Ա. 9։ ԺԲ. 1։ Բ Կորնթ. Ա. 23։ Գաղ. Ա. 3։ Ա Թես. Բ. 5։ [51] Գործ. Թ. 24, 25։ [1] Հռովմ. Ժգ. 7։ Բ Կորնթ. Ե. 17։ Գաղ. Ա. 22։ [2] Գործ. Իե. 17։ * Տէրի Տարին 46։ Լիւսաբացւոյն. Գործ. Ժգ. 6։ [3] Գաղ. Իգ. 43։ [4] Բ Կորնթ. Ժ. 30։

ճառն որ՝ ուղղորդէն եմ ասում. բայց խնայումեմ՝ որ չըլինի թէ մին ինձ համար աւելի բան համարէ, քանիթէ էն՝ որ ինձանում տեսնէ կամ ինձա-նից լսէ[5]։

7 Եւ որ փառաւոր յայտնու-թիւններովն չըպարտանամ, մանաւ-նոյ խայթ տրվաւ ինձ[6] սատան հր-շեշտակ, որ ինձ բռունցքով ծեծէ, որ չըգոռոզանամ[7]։

8 Եւ նրահամար երեք անգամ աղաչեցի Տէրին, որ էն հեռացնէ ինձանից[8]։

9 Եւ ինձ ասաց. իմ շնորհքս բաւական է քեզ համար, ինչու որ՝ իմ զօրութիւնս տկարութեան մէջն է կատարվում. եւ նրահամար աւելի լաւ կըլինի ինձ տկարութիւններով պարծենալ[9], որ Քրիստոսի զօրու-թիւնն բնակվի ինձանում[10]։

10 Նրահամար ուրախ եմ տկա-րութիւններուն, թշնամանքնե-րուն, վիշտերուն, հալածանքնե-րուն, եւ նեղութիւններուն Քր-իստոսի համար[11]. ինչու որ երբոր տկարանումեմ, էն ժամանակն զօ-րանումեմ[12]։

11 Ցիմար եղայ, ինչու որ դուք բունադատեցիք (ինձ)[13]. պատճառն որ՝ պէտք էր ինձ վկայութիւն առ-նել ձեզանից՝ թէ իսկի մին բանով պակաս չէլայ քանիթէ էն լաւ առա-քեալներն[14]. որ թէ եւ ես ոչ ինչ եմ[15]։

12 Բայց առաքելոյն նշաններն ձեր միջումն գործվեցան՝ ամէն համ-բերութեանով՝ նշաններով եւ հր-աշքներով՝ եւ զօրութիւններով[16]։

13 Պատ ի՞նչ է՝ որ նորանով պա-կաս գտվաք քանիթէ ուրիշ եկեղե-ցիներն[17]. եթէ ոչ նրանով՝ որ ես ծանրութիւն չըտուի ձեզ[18]. բաշ-խեցէք ինձ էդ մեղքդ[19]։

14 Պատ էս երեք անգամն է՝ որ պատրաստված եմ ձեզ մօտ գալոյ[20] եւ ձեզ բեռն չեմ լինիլ. պատճառն որ՝ ձեր բանը չեմ ուզում՝ բայց ձեզ[21]. ինչու որ ոչ թէ որդիքն հարանց հա-մար պէտք է գանձ (խոպնոյ) հաւա-քեն՝ այլ հարքն որդոց համար[22]։

15 Բայց ես յօժար սրտով[23] ձեր անձներիդ համար ծախք կանեմ[24], եւ ծախք կըլինիմ. թէ եւ աւելի սիրելով ձեզ՝ քիչ սիրվիմ[25]։

16 Բայց կըլինի՝ որ ես իսկի մին բանով ծանրութիւն չէլայ ձեզ[26]. միայն թէ՝ ես որ խորագէտ էի, խել-քով բռնեցի ձեզ։

17 Մի՞թէ նորանց ձեռովն՝ որ ձեզ մօտ ուղարկեցի՝ մին բա՞ն քաշեցի ձեզանից[27]։

18 Աղաչեցի տիտոսին[28] եւ նորա հետ էն եղբօրն էլ ուղարկեցի[29], միթէ տիտոս ձեզանից մին բա՞ն քա-շեց. չէ՞ որ մենք հենց մին հոգով վարվեցանք. չէ՞ որ հենց մին ճանա-պարհով գնացինք։

19 Մի՞ն էլ կարծումէք՝ թէ ա-

[5] բ Կորնթ. ժ. 8։ ժա. 16։ [6] Եսէ. խը. 24։ Գաղ. դ. 13, 14։ [7] Յոբ. բ. 7։ Պռ. ժգ. 16։ [8] բ Օրէն. գ. 23–27։ Մատթ. իզ. 44։ [9] բ Կորնթ. ժա. 30։ [10] ա Պետր. դ. 14։ [11] Հռոմ. ե. 3։ բ Կորնթ. է. 4։ [12] բ Կորնթ. ժգ. 4։ [13] բ Կորնթ. ժա. 1, 16, 17։ [14] բ Կորնթ. ժա. 5։ Գաղ. բ. 6, 7, 8։ [15] ա Կորնթ. դ. 7։ ժե, 8, 9։ Եփես. գ. 8։ [16] Հռոմ. ժե. 18, 19։ ա Կորնթ. թ. 2։ բ Կորնթ. գ. 3։ ը. 4։ ժա. 6։ [17] ա Կորնթ. ա. 7։ [18] ա Կորնթ. թ. 12։ բ Կորնթ. ժա. 9։ [19] բ Կորնթ. ժա. 7։ [20] բ Կորնթ. ժգ. 1։ [21] Գործ. ի. 33։ ա Կորնթ. ժ. 33։ [22] ա Կորնթ. դ. 14, 15։ [23] ա Թես. բ. 8։ Փիլիպ. բ. 17։ [24] Ցվճ. ժ. 41։ բ Կորնթ. ա. 6։ Կող. ա. 24։ բ Տիմ. բ. 10։ [25] բ Կորնթ. ը. 12. 13։ [26] բ Կորնթ. ժա. 9։ [27] բ Կորնթ. է. 2։ [28] բ Կորնթ. ը. 6, 16, 22։ [29] բ Կորնթ. ը. 18։

Նաւշ խօսքով ձեզ աղաչումե՞նք[30], Աստուծոյ առաջին Քրիստոսումն խօսումենք[31], որ ամէն բան սիրելի՛ նե՛ր՝ ձեր շինուելեան համար է[32]։

20 Ասյց վախումեմ, որ չըլինի թէ իմ գալց ժամանակն ձեզ էնպես չըգտնեմ՝ ինչպես որ կամենումեմ, եւ ես գտնըվիմ ձեզ համար՝ ինչպես որ դուք էլ չէք կամենում[33], որ միեւել չըլինի՝ կռիւ, նախանձ, բարկութիւններ, դըզդուքիւններ, չարախօսութիւններ, խօսք խառնելն, գոռոզութիւններ, ամբարտաւանութիւններ, խռովութիւններ։

21 Որ չըլինի թէ միեւել իմ գալց ժամանակն՝ իմ Աստուածն ինձ ցածցնէ ձեզ մօտ[34], եւ սուգ մանեմ շատերին համար՝ որ առաջուց մեղք գործեցին[35] եւ չապաշխարեցին՝ էն պղծութեան եւ պոռնկութեան[36] եւ գիճութեան համար՝ որ գործեցին։

## Գ·Ի· ՅԻԳ·

2 Պօղոս առաջուց մեղք գործածներին դէմ իրան իշխանութենովն սասումէ։ 5 Կըյորդոյն նորանք որ իրանց հաւատքն փորձեն, 7 Եւ իրան նորանց գնալուցն առաջ իրանց մեղքերըցն դառնան որ չըլինի թէ սասկութենով վարվի իրան իշխանութեան չափովն, 11 Եւ յորդորանքներով եւ աղօթքով իրան թուղթըն վերջ է անում։

1 Ահա երկրորդ անգամն է՝ որ ձեզ մօտ եմ գալիս[1], որ երկու եւ երկք վկայի բերանիցն ամէն բան հաստատվի[2]։

2 Առաջուց ասացի եւ միեւել էլ առաջ ասումեմ՝ իբր մօտ լինող երկու անգամն, եւ հիմիկ հեռուանց գրումեմ[3] էն առաջուց մեղք գործածներին՝ եւ ամէն ուրիշներին[4], որ եթէ միեւել գամ՝ չեմ խնայիլ[5]։

3 Ուրեմն ուզումէք փորձ առնել Քրիստոսի, որ ինձանով ձեզ հետ խօսումէ[6], որ ձեր միջումն զօրաւոր է, եւ տկար չէ[7]։

4 Ահնչու որ թէեւ խաչվեցաւ մեր տկարութենիցն[8], բայց կենդանի է Աստուծոյ զօրութենովն[9]. եւ մենք թէեւ տկարանանք նորա համար՝ բայց կենդանի կըլինինք նորա հետ Աստուծոյ զօրութենովն[10]։

5 Փորձեցէ՛ք ձեր անձերըդ[11], եւ թէ էն հաւատքի մէջն կանգնած էք. քննեցէ՛ք անձներըդ, կամ թէ չէք գիտում անձներըդ որ Յիսուս Քրիստոս ձեզանում է[12], եթէ ուչ անպիտան լինիք[13]։

6 Ասյց յոյս ունիմ որ գիտենաք, թէ մենք անպիտան չենք։

7 Ասյց խնդրումեմ Աստուածանից՝ որ չար բան չանէք. ուչ թէ որ մենք ընտիր երեւինք, բայց որ դուք բարին գործէք, եւ մենք անպիտան գանըվինք[14]։

8 Ահնչու որ՝ չենք կարող հակա-

---

[30] բ Կորնթ. ե. 12։ [31] Հռոմ. թ. 1։ բ Կորնթ. ժա. 31։ [32] ա Կորնթ. ժ. 33։ [33] ա Կորնթ. գ. 21։ բ Կորնթ. ժ. 2։ ժգ. 2, 10։ [34] բ Կորնթ. բ. 1, 3։ [35] բ Կորնթ. ժգ. 2։ [36] ա Կորնթ. ե. 1։ [1] բ Կորնթ. ժբ. 14։ [2] Թուոց. լե. 30։ բ Օրէն. ժէ. 6։ ժԹ. 15։ Մատթ. ժը. 16։ Յովհ. ը. 17։ Եբր. ժ. 28։ [3] բ Կորնթ. ժ. 2։ [4] բ Կորնթ. ժբ. 21։ [5] բ Կորնթ. ա. 23։ [6] Մատթ. ժ. 20։ ա Կորնթ. ե. 4։ բ Կորնթ. բ. 10։ [7] ա Կորնթ. Թ. 2։ [8] Փիլիպ. բ. 7, 8։ ա Պետր. գ. 18։ [9] Հռոմ. զ. 4։ [10] բ Կորնթ. ժ. 3, 4։ [11] ա Կորնթ. ժա. 28։ [12] Հռոմ. ը. 10։ Գաղ. գ. 19։ [13] ա Կորնթ. Թ. 27։ [14] բ Կորնթ. զ. 9։

ուակ լինիլ ճշմարտութեան. բայց ճշմարտութեան վերակացու ենք:

9 Որպես ենք՝ երբեմն մեզ տկա-
լանումենք[15]՝ եւ դուք զօրանումէք. հնոյ դրախամար աղօթք էլ անու-
մենք, որ դուք հաստատ լինիք[16]:

10 Նրախամար էս հետուանց եմ գրում[17], որ չըլինի թէ իմ գալոց ժամանակին՝ սաստկութեամբ վար-
վիմ[18], իմ իշխանութեան չափովն, որ Տէրն ինձ տուաւ ինձ շինելոյ՝ եւ չէ թէ քանդելոյ համար[19]:

11 Այ այսուհետեւ եղբարք, ուրախ էլէք, հաստատ կացէք, մխիթարվեցէք, միաբան էլէք[20], եւ խաղաղութեամբ վարվեցէք. եւ խաղաղութեան եւ սիրոյ Աստուածն՝ ձեզ հետ լինի[21]:

12 Խրատ ողջոյն տուէք սուրբ համբուրումն. ողջոյն են տալիս ձեզ ամէն սրբերն[22]:

13 Ո՛ր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն[23], եւ Աստուծոյ սէրն, եւ սուրբ հոգոյ հաղորդութիւնն (լինի) ձեզ ամենիդ հետ[24], ամէն:

Սրբոյ Առաքելոյ Երկրորդ Նամակն Փիլիպպեցւոց՝ Տէրոջ Մեր Յիսուս Քրիստոսի:

[15] ա Կորնթ. դ. 10: բ Կորնթ. ժա. 30: ժբ. 5, 9, 10: [16] ա Թես. գ. 10: [17] ա Կորնթ. դ. 21: բ Կորնթ. բ. 3: ժ. 2: ժբ. 20, 21: [18] Տիտ. ա. 13: [19] բ Կորնթ. ժ. 8: [20] Հռոմ. ժբ. 16, 18: ժե. 5: ա Կորնթ. ա. 10: Փիլիպ. բ. 2: դ. 16: ա Պետր. դ. 8: [21] Հռոմ. ժե. 33: [22] Հռոմ. ժզ. 16: ա Կորնթ. ժզ. 20: ա Թես. ե. 26: ա Պետր. ե. 14: [23] Հռոմ. ժզ. 24: [24] Փիլիպ. բ. 1:

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԸՆԾԵՐԱԿԱՆ

ԸՆ ԳԸՂԱՏԱՑԻՍՆ

### ԳԼՈՒԽ ԸՆԿԱՑԻՆ

6 Ուսաբեանն զարմանամէ որ ինքըն եւ Աւետարանըն Եապէս չուտով քցումն Գաղատացիքն, 8 եւ իրան աւետարանած Աւետարանիցն աւելի աւետարանօղն նզովումէ, 11 Ցոյց կըտայ թէ ինքըն՝ Աստուածանից առաւ Աւետարանըն եւ չէ թէ մարդկանցից, 13 Նաեւ թէ իրան կոչումիցն առաջ Ի՞նչ էր. 17 Եւ թէ նրանից ետեւ չուտով ի՞նչ արաւ։

1 ՊՕՂՈՍ ԸՆԾԵՐԱԿԱՆ՝ ոչ (թէ) մարդկանցից եւ ոչ (թէ) մարդոյ ձեռով[1], այլ Յիսուսի Քրիստոսի ձեռովն՝ եւ Աստուծոյ Հօր[2], որ մեռելներից յարոյց նորան[3],

2 Եւ ամէն եղբարքն՝ որ ինձ հետ են[4], գաղատացոց եկեղեցիներիդ[5]։

3 Շնորհք լինի) ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած Հօրիցն՝ եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսիցն[6]։

4 Որ իրան անձըն մեր մեղաց հաամար տուաւ[7], որ մեզ էս չար աշխարհքիցս փրկէ՝ Աստուծոյ եւ մեր Հօր կամքին պէս[8]։

5 Որ նորան (լինի) փառք յաւիտեանս, ամէն։

6 Զարմանումէմ՝ որ էդպէս չուտով փոխոխումիք նորանից[9] որ ձեզ կանչեց Քրիստոսի շնորհքի մէջ՝ դէպի ուրիշ աւետարան։

7 Որ էլ ուրիշ (աւետարան) չըկայ[10]. միայն թէ որ՝ մին քանիսն կան՝ որ ձեզ խռովացնումեն, եւ կամենումեն Քրիստոսի աւետարանըն փոխել[11]։

8 Բայց թէ որ մենք, կամ երկընքիցն (եկած) հրեշտակ աւետարանէ ձեզ աւելի քանթէ էն՝ որ մենք աւետարանեցինք ձեզ, (նա) նզոված լինի[12]։

9 Ինչպէս որ առաջ ասացինք՝ մինէլ հիմիկ ասումենք, թէ որ մինեւ

[1] Գաղ. ա. 1։ [2] Գաղ. ա. 7։ Բր. 10, 15, 21։ Իզ. 16։ Տէր. ա. 3։ [3] Գաղ. բ. 24։ [4] Փիլիպ. բ. 22. դ. 22։ [5] ա Կորնթ. ժզ. 1։ [6] Հռոմ. ա. 7։ ա Կորնթ. ա. 3։ բ Կորնթ. ա. 2։ Եփես. ա. 2։ Փիլիպ. ա. 2։ Կող. ա. 3։ աԹես. ա. 2։ բ Թես. ա. 3։ բ Ցովհ. 3։ [7] Մատթ. ի. 28։ Հռոմ. դ. 25։ Գաղ. բ. 20։ Տէր. բ. 14։ [8] Եսայ. կե. 17։ Ցովհ. ժե. 19։ ժէ. 14։ եԲէր. բ. 5։ զ. 5։ աՑովհ. ե. 19։ [9] Գաղ. ե. 8։ [10] բ Կորնթ. ժա. ե. 19։ [11] Գաղ. ժե. 1, 24։ բ Կորնթ. բ. 17։ ժա. 13։ [12] ա Կորնթ. ժզ. 22։

աւելի աւետարանէ քան էն՝ որ դուք առիք[13], նզոված լինի։

10 Եպա մարդկանց հաճոյ լինիմ, թէ Աստուծոյն[14]. կամ ուզեմ որ մարդկանց հաճոյ լինիմ[15]. թէ որ դեռ մարդկանց հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ չէի։

11 Ձեզ եմ տալիս ձեզ, եղբարք՝ էն աւետարանըն, որ ինձանից աւետարանվեցաւ. որ նա մարդոյ բան չէ[16]։

12 Պատճառն որ՝ ես էլ մարդուց չառի (նորան), եւ իսկի մընից չըսովորեցի[17], բայց Յիսուսի Քրիստոսի յայտնութենիցն[18]։

13 Ինչու որ՝ լսել էք դուք իմ վարքըս, որ մին ժամանակ հրէութեան մէջն էի. որ չափից դուրս հալածումէի Աստուծոյ եկեղեցին[19], եւ թալանումէի նորան[20]։

14 Եւ հրէութեան մէջ աւելի առաջ էի՝ քան իմ շատ հասակակից ընկերներս, որ իմ ազգիս մէջն էին. աւելի նախանձաւոր էի[21] իմ հայրենական աւանդութիւններին համար[22]։

15 Եայց երբոր Աստուած կամեցաւ՝ (նա՝ որ) իմ մօրս փորիցն ինձ (ջոկեց)[23], եւ իւրան շնորհքովն կանչեց,

16 Որ իւրան որդին ինձանով յայտնէ[24], որ նորան հեթանոսների միջումն աւետարանեմ[25]. էն ժամանակն շուտով մարմնով եւ արիւնի խսկի խնդ չըտուի[26]։

17 Եւ չըգնացի երուսաղէմ նոր անց մօտ, որ ինձանից առաջ առաքեալները էին. բայց գնացի արաբիա, եւ մինէլ դարձայ դամասկոս։

18 Յետոյ երեք տարուց հետեւ գնացի երուսաղէմ, որ պետրոսին տեսնեմ. եւ տասնուհինգ օր նորա մօտ էլայ[27]։

19 Եւ առաքեալներիցն ուրիշ մընին չըտեսի[28], բայց միայակ Տէրի եղբայր յակոբին[29]։

20 Եայց ես բանըս՝ որ ձեզ գըրումեմ, ահա Աստուծոյ առաջին՝ որ սուտ չեմ ասում[30]։

21 Յետոյ եկի ասորոց եւ կիւլիկեցոց կողմերն[31]։

22 Եւ երեսով ճանաչ չէի (Հրէաստանի) էն եկեղեցիներին[32] որ Քրիստոսումն[33] էին։

23 Միայն թէ՝ էն լսել էին, թէ նա՝ որ էն ժամանակն մեզ հալածումէր, հիմիկ էն հաւատքն է աւետարանում՝ որ առաջ քանդումէր։

24 Եւ ինձանով փառաւորումէին Աստուծոյն։

---

[13] ր Օրին. գ · 2։ Ժր. 32։ Ա՜ոմ. լ · 6։ Ցայտ. իբ · 18։ [14] ա Թես. բ · 4։ ա Թագ. իդ · 7։ Պսաղ. իը · 14։ ա Ցովհ. գ · 9։ [15] ա Թես. բ · 4։ Ցայ. գ · 4։ [16] ա կորնթ. ժե · 1։ [17] ա կորնթ. ժե · 1, 3։ վեր · 1։ [18] Եփես. գ · 3։ [19] Գործ. թ · 1։ իբ · 4։ իզ · 11։ ա Տիմ. ա · 13։ [20] Գործ. ը · 3։ [21] Գործ. իբ · 3։ իզ · 9։ Փիլիպ. գ · 6։ [22] Երեմ. թ · 14։ Պսաղ. ժհ · 2։ Պսալ. է · 5։ [23] Եսայ. խթ · 1, 5։ Երեմ. ա · 5։ Գործ. թ · 15։ ժգ · 2։ իբ · 14, 15։ Հռոմ. ա · 1։ [24] բ կորնթ. գ · 6։ [25] Գործ. թ · 15։ իբ · 21։ իզ · 17, 18։ Հռոմ. ժա · 13։ Եփես. գ · 8։ [26] Պսաղ. ՃԺգ · 17։ ա կորնթ. ժե · 50։ Եփես. զ · 12։ [27] Գործ. թ · 26։ [28] ա կորնթ. թ · 5։ [29] Պսալ. ժգ · 55։ Պսալ. զ · 3։ [30] Հռոմ. թ · 1։ [31] Գործ. թ · 30։ [32] ա Թես. բ · 14։ [33] Հռոմ. ժզ · 7։

## ԳԼ · Ր

1 Առաքեալն Հաստատումն Թէ ի՞րք մինէր գնաց Երուսաղէմ, եւ ին էլ ի՞նչ պատճառ. 3 Թէ Յիսուս Թլփատված չէր· 11 Եւ Թէ ինքըն պետրոսին Հակառակ կեցաւ· պատճառն որ՝ մեղադրելի էր· 14 Թէ ինքըն եւ Թէ ուրիշներքն Հրեայ լինելով կը Հաւատան Թէ Քրիստոսի Հաւատքին պիտի արդարանան եւ ոչ Թէ օրէնքի գործքերից, 29 Եւ Թէ Հաւատքին արդարացողներքն մեղքի մէջ չեն ապրիլ։

1 Յետոյ տասներկուս տարուց եւ տէր մինէլ *միանգամ բառնաբասին Հետ գնացի երուսաղէմ, եւ տիտոսին էլ ինձ Հետ առի[1]։

2 Այլ (ինձ էլած) յայտնութեան պատճառովն գնացի· եւ նորանց ի մացրի էն աւետարանն՝ որ Հեթանոսների միջումն քարոզում էի[2], (եւ) մանաւանդ ասպէս նորանց՝ որ մեծ էին Համարված· որ չըլինի Թէ՝ գուցէ տեղն վազած լինիմ կամ վազում[3]։

3 Այլ տիտոսն էլ՝ որ Հեթանոսների միջից ինձ Հետ էր, չըբըռնադատվեցաւ Թլփատվիլ։

4 Այլ էն նենց պրծած սուտ եղբարներն պատճառով, որ նենց պրծան մտնել[4] մեր ազատութիւնըն քննելը Համար՝ որ Քրիստոս Յիսուսումն ունինք[5], որ մեզ ծառայացնեն[6]։

5 Որանց իսկի մին քիչ ժամանակ էլ ականջ չըդրինք՝ Հնազանդ լինելը Համար· որ աւետարանի ճշմարտութիւնն ձեզանում Հաստատվի[7]։

6 Այլ էն կարծվածներին Համար՝ Թէ մին բան լինին[8], ինչպէս մի ժամանակ էին, ես իսկի Հոգս չեմ անում· պատճառն որ՝ Աստուած մարդկանց երեսին չի նայում[9]· ինչու որ էն կարծվածներն Էնպէսի բան չիմացրին ինձ[10]։

7 Այլ նրա Հակառակն՝ երբոր տեսին Թէ անթլփատութեան աւետարանն[11] ինձ Հաւատացված է[12], ինչպէս որ պետրոսին Թլփատութեան (աւետարանն)·

8 Պատճառն որ՝ նա որ պետրոսի առաքելութիւնըն յայտնեց Թլփատութեան մէջն, ինձ էլ[13] յայտնեց Հեթանոսների մէջն[14]։

9 Երբոր իմացան էն ընտրվքըն որ ինձ տըվված էր[15], յակոբոսն եւ կեփասն եւ յովհաննէսն, որ նորանք էին կարծված սիւներն[16], ինձ եւ բառնաբասին ձեռք տուին եւ Հաւանեցան· որ մենք Հեթանոսների մէջն (լինինք), եւ նորանք Թլփատվածների (մէջն)։

10 Այլ միայն որ աղքատներըն յիշենք· որ ես էլ ջանք արի էն անելը[17]։

[1] գործ· ԺԱ· 2։ *Աւմ Տետոն 52։ [2] գործ· ԺԱ· 12։ [3] փիլիպ· բ· 16։ ա թես· գ· 5։ [4] գործ· ԺԱ· 1, 24։ բ կորնթ· ժա· 26։ [5] գաղ· գ· 25։ ե· 1, 13։ [6] բ կորնթ· ժա· 20։ գաղ· գ· 3, 9։ [7] վ տոյր· 14։ գաղ· գ· 1։ գ· 16։ [8] գաղ· զ· 3։ [9] գործ· Ժ· 34։ Հռով· բ· 11։ [10] բ կորնթ· ԺԲ· 11։ [11] գործ· ԺԳ· 46։ Հռովմ· ա· 5։ ժա· 13։ ա Տիմ· բ· 7։ բ Տիմ· ա· 11։ [12] ա թես· բ· 4։ [13] գործ· ԺԹ· 15։ ԺԳ· 2· իբ· 21։ իզ· 17, 18։ ա կորնթ· ԺԵ· 10։ գաղ· ա· 16։ բ կոր· ա· 29։ [14] գաղ· գ· 5։ [15] Հռովմ· ա· 5։ ԺԲ· 3, 6։ ԺԵ· 15։ ա կորնթ· ԺԵ· 10։ եփես· գ· 8։ [16] Մատթ· ԺԶ· 18։ եփես· բ· 20։ Ցայտ· իա· 14։ [17] գործ· ժա· 30։ իզ· 17։ Հռովմ· ԺԵ· 25։ ա կորնթ· ԺԶ· 1։ բ կորնթ· ը ԽԹ։

11 Այլ երբոր կեփաս եկաւ անտիոք, ես հակառակ կացայ նորան[18], պատճառն որ՝ իբր մեղադրելի էր։

12 Ընչու որ՝ դեռ որ մին քանի մարդիկ չէին եկած յակոբիցն, առանց ջոկելոյ հեթանոսներին հետ ուտէաւ[19], բայց երբոր եկին, իրան անձն ջոկուէաւ եւ բաժանվուէաւ, վախենալով նորանցից՝ որ թլփատութեանից էին։

13 Նա նորա հետ ուրիշ հրէաներ էլ կեղծաւորութիւն արին. մինչեւ որ բառնաբաս էլ ծըռվեցաւ դէպի նորանց կեղծաւորութիւնն։

14 Այլ երբոր տեսի որ աւետարանի ճշմարտութեան մէջ շիտակ չեն գնում[20], ամէնի առաջին ասացի կեփասին[21]. եթէ դու որ հրէայ ես, հեթանոսի պէս ես վարվում՝ եւ ոչ թէ հրէայի պէս, էլ ինչու՞ համար ես բռնադատում հեթանոսներին՝ որ հրէայի պէս վարվին[22]։

15 Ընչու որ մենք բուն հրէաներ ենք[23], եւ ոչ թէ հեթանոսներից մեղաւորներ[24]։

16 Նա գիտումենք՝ որ մարդն օրէնքի գործքերից չի արդարանում[25], բայց միայն Յիսուսի Քրիստոսի հաւատքից. եւ մենք Յիսուս Քրիստոսին հաւատացինք, որ Քրիստոսի հաւատքից արդարանանք, եւ ոչ թէ օրէնքի գործքերից[26], պատճառն որ՝ օրէնքի գործքերից խկի մին մարմին չի արդարանալ[27]։

17 Այլ թէ որ մենք՝ երբոր ուզումենք Քրիստոսումն արդարանալ, էլ մեղաւոր գանըվինք[28]. ուրեմն Քրիստոս մեղքի պաշօնեայ՞ ելաւ. քաւ լիցի։

18 Պատճառն որ՝ եթէ էն՝ որ քանդեցի, հենց նրան մինէլ չինեմ, ապա ես ինքն իմ անձըս մեղաւոր եմ երեւացնում։

19 Ընչու որ ես օրէնքո՞ւն[29] մեռայ օրէնքին[30], որ ապրիմ Աստուծոյն[31], եւ ես Քրիստոսի հետ խաչվում[32]։

20 Նա սրանից եաեւ կենդանի եմ, չէ թէ ես՝ բայց Քրիստոսն կենդանի է ինձանում. բայց ինչ որ հիմիկ կենդանի եմ մարմնով՝ որպէս Աստուծոյ հաւատքո՞վն եմ կենդանի[33], որ ինձ սիրեց եւ իրան անձըն ինձ համար մատնեց[34]։

21 Նա ես Աստուծոյ շնորհքըն չեմ անարգում, ընչու որ՝ եթէ արդարութիւնն օրէնքից էր, ապա Քրիստոս զուր տեղն մեռաւ[35]։

[18] Գործ. ժե. 35։ [19] Գործ. ժ 28։ ժա. 3։ [20] Կէր. 5։ [21] ա Տիմ. ե. 20։ [22] Գործ. ժ. 28։ ժա. 3։ [23] Գործ. ժե. 10, 11։ [24] Յոան. թ. 11։ Եփես. բ. 3, 12։ [25] Գործ. ժգ. 38, 39։ [26] Հռով. ա. 17։ գ. 22, 28։ ը. 3։ Գաղ. գ. 24։ Եբր. է. 18, 19։ [27] Պսաղմ. ճխգ. 2։ Հռով. գ. 20։ Գաղ. գ. 11։ [28] ա Ցովհ. գ. 8, 9։ [29] Հռով. ը. 2։ [30] Հռով. է. 14։ է. 4, 6։ [31] Հռով. է. 11։ Կորնթ. ե. 15։ [32] Հռով. է. 6։ Գաղ. ե. 24։ գ. 14։ [33] Կորնթ. ե. 15։ [34] Թիթ. ե. 10։ ա Պետր. գ. 2։ [34] Գաղ. ա. 4։ Եփես. ե. 2։ Տիտ. բ. 14։ [35] Գաղ. գ. 21։ Եբր. է. 11։ Հռով. ժա. 6։ Գաղ. ե. 4։

## ԳԼ · Գ

1 Աստուածն կը հարցնէ Նոյանց, թէ ո՞վ նախանձով լցուց Նոյանք որ հաւատքն քցեն եւ օրէնքի ապաւինվին։ 6 Հաւատացեալներն մենակ կ'արդարանան, 9 Եւ Նոյանք Աբրահամի հետ կ'օրհնվին, 10 Եւ ես հաւատքից ապրիլն շատ վկայութիւններով հաստատուած։

1 Ով անմիտ գաղատացիք, ո՞վ նախանձով լցուց ձեզ[1] որ ճշմարտութեան չըհնազանդվիք[2]· որ հասմարեա թէ ձեր աչքերիդ առաջին գրվեցաւ Յիսուս Քրիստոս խաչ հանված։

2 Այս միայն կամենումեմ սովրիլ ձեզանից· միթէ օրէնքի գործքերի՞ն ընդունեցիք հոգին[3] թէ հաւատքի քարոզութեննի՞ն[4]։

3 Այնքան անմի՞տ էք· հոգով սկսեցիք[5], եւ հիմիկ մարմնո՞վ էք վերջանում[6]։

4 Այնքան նեղութիւններն ձեր գլուխն զուր տեղն անցկացան՝ թէ որ (էն) զուր լինի՞[7]։

5 Այսպա նա՝ որ հոգին բաժանեց ձեզ՝ եւ ձեր միջումն զօրութիւններ յաջողեց[8], միթէ նա օրէնքի գործքերի՞ն է՝ թէ հաւատքի քարոզութեննի՞ն։

6 Ինչպէս որ աբրահամն հաւատաց Աստուծոյն՝ եւ (էն) համարվեցաւ նորա արդարութիւն[9]։

7 Այնպէս գիտացէք· թէ նորանք՝ որ հաւատքիցն են, նորանք են աբրահամի որդիք[10]։

8 Գիրքն առաջուց գիտումէր, թէ Աստուած հաւատքիցն կարդարացնէ հեթանոսներին, (եւ նրահամար)[11] առաջուց աբրահամին խոստացաւ, թէ քեզանում պիտի ամէն ազգերն օրհնվին[12]։

9 Այնպէս նորանք՝ որ էն հաւատքիցն են՝ օրհնված աբրահամի հետ կըօրհնվին։

10 Պատճառն որ նորանք ամէնքն՝ որ օրէնքի գործքերիցն են, անէծքի տակ են· ինչու որ գրված է· թէ անիծեալ լինի ամէն մարդ՝ որ չըկենայ օրէնքի գրքի միջի ամէն գրվածներումն, որ ամէնքն անէ[13]։

11 Պատճառն որ՝ օրէնքովն ո՛չ ով չի արդարանում Աստուծոյ առաջին[14], էն յայտնի է· ինչու որ արդարն՝ ասումէ, հաւատքիցն պիտի ապրի[15]։

12 Այլոց օրէնքն հաւատքիցն չէ[16], բայց ով որ նորան կըկատարէ՝ նա կապրի նորանով[17]։

13 Քրիստոս գնեց մեզ օրէնքի անէծքիցն, (ինքն) մեզ համար անէծք լինելով[18]· ինչու որ՝ գրված է· թէ անիծեալ լինի ամէն, ով որ

[1] Գաղ. ե. 7։ [2] Գաղ. բ. 14։ ե. 7։ [3] Գործ. բ. 38։ ը. 15։ ժ. 47։ ժե. 8։ Վայր. 14։ եէ՛։ ա. 13։ Եբր. զ. 4։ [4] Հռով. ժ. 16, 17։ [5] Գաղ. դ. 9։ [6] Եբր. ե. 16։ թ. 10։ [7] Եբր. ժ. 35, 36։ բ Ցես. 8։ [8] բ Կորն. գ. 8։ [9] Ծննդ. ժե. 6։ Հռով. դ. 3, 9, 21, 22։ Ցես. բ. 23։ [10] Ցես. ը. 39։ Հռով. դ. 11, 12, 16։ [11] Հռով. թ. 17։ Վայր. 22։ [12] Ծննդ. ժբ. 3։ ժը. 18։ [13] բ Օրէն. իէ. 26։ Երեմ. ժա. 3։ [14] Գաղ. բ. 16։ [15] Ամբ. բ. 4։ Հռով. ա. 17։ Եբր. ժ. 38։ [16] Հռով. դ. 4, 5։ ժ. 5, 6։ ժա. 6։ [17] Պնդ. ժը. 5։ Նեհեմ. թ. 29։ Եզեկ. ի. 11։ Հռով. ժ. 5։ [18] Հռով. ը. 3։ բ Կորն. ե. 21։ Գաղ. դ. 5։

փայտին կախված լինի[19]։

14 Ըր աբրահամի օրհնութիւնն հեթանոսների մէջն լինի Յիսուս Քրիստոսումն[20], որ մենք սուրբ հոգոյ աւետիքըն ընդունինք հաւատքով[21]։

15 Մարդկանց սովորութեան պէս եմ ասում եղբարք. շնաակ որ մին մարդոյ հաստատված կտակըն խսկի մինն չի կարող անարգել, եւ ոչ էլ նորա վերայ ուրիշ հրաման աւելացընել[22]։

16 Պա աբրահամին խոստացվեցան էն աւետիքներն, եւ նորա զաւակին. եւ չի ասում՝ զաւակներն՝ ինչպէս շատերին, բայց ինչպէս մինին, թէ՝ եւ քո զաւակիդ[23], որ է Քրիստոսն[24]։

17 Ասյց էս եմ ասում. էն կտակին, որ առաջուց Աստուածանից հաստատված էր Քրիստոսի վերայ. օրէնքն որ չորս հարիւր եւ երեսուն տարուցն ետեւ դրվաւ[25], չի կարող քանդել՝ էնպէս որ աւետիքն խափանվի[26]։

18 (Ինչու որ) եթէ ժառանգութիւն օրէնքիցն լինէր[27], ապա աւետիքիցն չէր[28]. բայց Աստուած՝ աբրահամին (էն) շնորհեց աւետիքով։

19 Պա օրէնքն ի՞նչ է. (նա) յանցանքների պատճառովն աւելացաւ[29], մինչեւ որ գայ (էն) զաւակն, որ խոստումնըն նորա համար էլան[30] (եւ) հրեշտակներով կարգվեցաւ[31] միջնորդի ձեռովն[32]։

20 Ասյց միջնորդ մընին չէ՝ բայց Աստուած մին է[33]։

21 Պա օրէնն Աստուծոյ աւետիքներին հակառակ է. քաւ լինի. պատճառն որ՝ եթէ օրէնք տրվված լինէր՝ որ կարող էր (ինքն) կենդանի անել, ապա հաստատ էն օրէնքիցն էր արդարութիւնն[34]։

22 Ասյց գիրքն[35] ամէնին մեղքի նեղքեւ փակեց[36], որ աւետիքն Յիսուսի Քրիստոսի հաւատքիցն տրվի հաւատացեալներին[37]։

23 Դեռ որ հաւատքն չէր եկել՝ օրէնքի նեղքեւն փակված պահվում էինք՝ դէպի էն նոր գալու հաւատքն, որ մեզանում պէտք էր յայտնվի։

24 Ուրեմն օրէնքն մեզ համար տղայի վարպետ էլաւ՝ դէպի Յիսուս Քրիստոս (տանելոյ)[38], որ հաւատքիցն արդարանանք[39]։

25 Ասյց երբոր հաւատքն եկաւ, էլ (մենք) էն վարպետի հրամանի տակն չենք։

26 Ինչու որ ամէնքդ Աստուծոյ որդիք էք՝ Յիսուսի Քրիստոսի հաւատքովն[40]։

27 Դուք ամէնքդ՝ որ Քրիստոսումն մկրտվեցաք[41], Քրիստոսին հագած էք[42]. չկայ[43],

28 Էլ հրէայի (չհաւատի) եւ ոչ

---

[19] բ Օրէն. իա. 23։ [20] Հռոմ. գ. 9, 16։ [21] Եսայ. լբ. 15։ խգ. 3։ Երեմ. լա. 33։ լբ. 40։ Եզեկ. ժա. 19։ լգ. 27։ Ճանէլ. բ. 28, 29։ Ջոէլ. ժբ. 10։ Ճառք. է. 39։ Գործ. բ. 33։ [22] Երէր. իզ. 17։ [23] Ծննդ. ժբ. 3, 7։ ժէ. 7։ ԻԷր. 8։ [24] ա Կորնթ. ժբ. 12։ [25] Եսէ. ժբ, 40, 41։ [26] Հռոմ. գ. 13, 14։ ՎԱյր. 21։ [27] Հռոմ. ը. 17։ [28] Հռոմ. գ. 14։ [29] Ճառք. ժէ. 22։ Հռոմ. գ. 15։ է. 20։ է. 8, 13։ ա Տիմ. ա. 9։ [30] ՎԱյր. 16։ [31] Գործ. է. 53։ Երէր. բ. 2։ [32] Եսէ. ի. 19, 21, 22։ բ Օրէն. է. 5, 22, 23, 27, 31։ Ճառք. ա. 17։ Գործ. է. 38։ ա Տիմ. բ. 5։ [33] Հռոմ. գ. 29, 30։ [34] Գաղ. բ. 21։ [35] ՎԱյր. 8։ [36] Հռոմ. գ. 9, 19, 23։ ժա. 32։ [37] Հռոմ. գ. 11, 12, 16։ [38] Լաոդ. է. 17։ Հռոմ. ժ. 4։ Կող. բ. 17։ Երէր. իզ. 9, 10։ [39] Գործ. ժգ. 39։ Գաղ. բ. 16։ [40] Ճառք. ա. 12։ Հռոմ. ը. 14, 15, 16։ Գաղ. գ. 5։ ա Ճառք. գ. 1. 2։ [41] Հռոմ. գ. 3։ [42] Հռոմ. ժգ. 14։ [43] Հռոմ. ժ. 13։ ա Կորնթ. ժբ. 13։ Գաղ. է. 6։ Կող. գ. 11։

հնեմանսի, ոչ ծառայի՝ եւ ոչ ա-
զատի, ոչ արձի՝ եւ ոչ էգի· պատ-
ճառն որ՝ դուք ամենքդ մին էք Ք-
րիստոս Յիսուսումն[44]։

29 Եպա թէ որ դուք Քրիստոսին
էք, ուրեմն սերմն Աբրահամի զաւակներն
էք[45]՝ ըստ խոստման ժառանգներ[46]։

## ԳԼ· Դ

1 Ընդդէմ որ ժառանգն վերակացուների ներքեւն է՝ մինչեւ որ նա մեծանայ, էնպէս էլ մենք օրէնքի ներքեւն էինք մինչեւ որ Քրիստոս եկաւ, 5 եւ մեզ դնեց օրէնքիցն 7 ուրեմն էլ օրէնքի ծառայ չենք։ 14 Գաղատացոց նորան ընդունելն եւ ինքն էլ նո-
րանք ընդունելն կըսէ, 23 եւ ցոյց կըտայ թէ մենք սերմնաց ազատ կնականից էլած որդիք ենք։

1 Ես եմ ասում· (թէ) դեռ
քանի ժամանակ որ ժառանգն տղայ
է՝ նա իսկի ոչնչի չէ քան թէ ծա-
ռան· թէ եւ ամէն բանի տէր է։

2 Հապա վերակացուների եւ տըն-
տեսների ներքեւն է՝ մինչեւ (իրան)
հօր դրած հաստատած ժամանակն։

3 Ինչպէս էլ մենք՝ դեռ քանի որ
տղայ էինք՝ աշխարհքի սկզբունք-
ների ներքեւն ծառայութեան մէջ
էինք[1]։

4 Հապա երբոր ժամանակի լցվիլն
եկաւ, Աստուած ուղարկեց իրան որ-
դին[2] որ կնկանից[3] էլաւ[4], եւ օրէնքի
ներքեւ մնաւ[5]։

5 Որ գնէ նորանց[6] որ օրէնքի
տակն են[7], որ մենք որդեգրութիւնն
ընդունինք։

6 Եւ դուք որովհետեւ որդիք էք՝
Աստուած իրան որդոյ Հոգին ուղար-
կեց մեր սրտերի մէջն՝ որ աղաղակու-
մ էաբա Հայր[8]։

7 Ուրեմն չես ծառայ՝ բայց որ-
դի· եւ թէ որ որդի՝ էլ Աստուծոյ
ժառանգ[9]։

8 Հապա էն ժամանակն՝ որ Աս-
տուծոյն չէիք գիտում[10], նորանց էիք
ծառայում՝ որ յատուկ աստուածներ
չեն էին[11]։

9 Հապա հիմիկ որ ճանաչեցիք
Աստուծոյն, մանաւանդ թէ հենց
Աստուածանից ճանաչվեցաք[12], էլ ի՞նչպէս մինէլ կրտ էք դառնում[13]
դէպի էն տկար եւ աղքատ սկըս-
բունքներն[14], որ կամենում էիք մինէլ
ձեր անձներըդ նորանց ծառայու-
թեան մէջն քցել։

10 Ջ տկութիւն էք անում օրերի
մէջ՝ եւ ամիսների եւ ժամանակների՝
եւ տարիների մէջ[15]։

---

[44] Յովհ. ժ. 16։ Ժէ. 20, 21։ Եփես. բ. 14, 15, 16։ գ. 4, 15, 16։ [45] Յովհ. իա. 10, 12։ Հռովմ. թ. 7։ Եբր. ժա. 18։ [46] Հռովմ. ը. 17։ Գաղ. գ. 7, 28։ Եփես. գ. 6։ [1] Վայր. 9։ Գաղ. ե. 1։ կաղ. բ. 8, 20։ Եբր. թ. 10։ [2] Յովհ. խթ. 10։ Դան. թ. 24։ Մատթ. ա. 15։ Եփես. ա. 10։ [3] Յովհ. գ. 15։ Եսայ. է. 14։ Մատթ. ե. 2։ Մարկ. ա. 23։ Գաղ. ա. 31։ բ. 7։ [4] Յովհ. ա. 14։ Հռովմ. ա. 3։ Փիլիպ. բ. 7։ Եբր. բ. 14։ [5] Մարկ. ե. 17։ Գաղ. բ. 27։ [6] Յովհ. ա. 12։ գ. 26։ Եփես. ա. 5։ [7] Մարկ. ի. 28։ Գաղ. գ. 13։ Տիտ. բ. 14։ Եբր. թ. 12։ Եփես. ա. 7։ ա Պետր. ա. 18, 19։ [8] Հռովմ. ե. 5։ ը. 15։ [9] Հռովմ. ը. 16, 17։ [10] Եփես. բ. 12։ ա Թես. գ. 5։ [11] Հռովմ. ա. 25։ ա Կորնթ. ժբ. 2։ Եփես. բ. 11, 12։ ա Թես. ա. 9։ [12] ա Կորնթ. ը. 3։ ժգ. 12։ բ Տիմ. բ. 19։ [13] Գաղ. գ. 3։ կաղ. բ. 20։ [14] Հռովմ. ը. 3։ Եբր. ե. 18։ Վէր. 3։ [15] Հռովմ. ժգ. 5։ Կաղ. բ. 16։

11 Ա՛խտումեմ ձեզանից՝ որ չըլինի թէ պըտուղ տեղն աշխատեցի ձեր միջումն[16]։

12 Ինձ նման էլէք, ինչու որ ես էլ ձեզ նման էի. եղբայրք՝ աղաչումեմ ձեզ, դուք ինձ դէմ մին մեղք չէք արել[17]։

13 Դուք գիտումէք՝ որ մարմնոյ ախտութենով[18] առաջին անգամն աւետարանեցի ձեզ[19]. եւ էն փորձանքներըն՝ որ իմ մարմնումն էին,

14 Չանարգեցիք՝ եւ երեսից չըքցեցիք. այլ ինչպես Աստուծոյ հրեշտակ ընդունեցիք ինձ[20]՝ ինչպէս Յիսուս Քրիստոսին[21]։

15 Պատ ուրախ է էն ձեր երանութիւնն. վկայումեմ ձեզ համար, որ եթէ կարելի էր՝ ձեր աչքերըն (էլ) կըհանէիք եւ ինձ կըտայիք։

16 Ուրեմն՝ միթէ թշնամի էլայ ձեզ, նրահամար որ ճշմարիտըն ասացի[22]։

17 Նայց (նորանք) ձեզ նախանձով են շարժում՝ չէ թէ բարի բանի համար, եւ կամենումն արգելել ձեզ՝ որ նորանց համար նախանձաւոր լինէք[23]։

18 Նայց լաւ է բարի բաների համար ամէն ժամանակ նախանձաւոր լինելն, եւ չէ թէ միայն երբոր ձեր միջումն լինիմ։

19 Իմ որդեակներս, որ ձեզ մին-էլ ցաւով ծնումեմ՝ մինչեւ որ Քրիստոս կերպարանվի ձեզանում[24]։

20 Կամենումէի որ հիմիկ ձեզ մօտ գամ՝ եւ իմ ձայնըս փոխեմ. ինչու որ՝ տարակուսանքի մէջ եմ ձեզ համար։

21 Ըսացէք ինձ դուք՝ որ կամենումէք օրէնքի նեղքեւն լինիլ, միթէ դուք օրէնքըն չէք կարդացել։

22 Որ գրված է՝ թէ աբրահամն երկու որդիք ունէր, մինըն աղախնէյն (պաբաՀաչկո)[25], եւ մէկելըն ազատիցն[26]։

23 Նայց նա՝ որ աղախնիցն էր՝ մարմնոյ կողմանէն էր ծնված[27], եւ նա՝ որ ազատիցն՝ աւետիքին պէս[28]։

24 Որ ես օրինակի առակ է. ինչու որ՝ Հենց էս երկու կտակարաններն են, մինն սինայ սարիցն ծառայութեան մէջ ծնված՝ որ Հագարն էր[29]։

25 Պատճառն որ՝ Հագարն սինա սարն է՝ արաբիայումն, եւ Հասասալ է էս երուսաղէմիս. որ իրան որդիքներովն ծառայ է։

26 Նայց վերին երուսաղէմն ազատ է, որ մեր ամենի մայրն է[30]։

27 Պատճառն որ գրված է թէ, ուրախ կաց ամլի (չըբերէ) որ չէիր ծընում, կանչիր եւ աղաղակիր դու՝ որ երեխայ բերելոյ ցաւ չէիր քաշում. ինչու որ դու բաց թողվածդ աւելի որդիք ունիս՝ քան թէ մարդ ունօղն[31]։

28 Նայց մենք եղբայրք՝ իսահակին պէս աւետիքի որդիքն ենք[32]։

29 Նայց ինչպէս որ էն ժամանակումն նա՝ որ մարմնոյ կողմանէ ծըն-

[16] Գաղ. բ · 3։ ե. 2, 4։ ա Թես. գ · 5։ [17] բ Կորնթ. բ · 5։ [18] ա Կորնթ. բ · 3։ բ Կորնթ. ժա. 30։ ժբ. 7, 9։ [19] Գաղ. ա · 6։ [20] բ Թագ. ԺԹ · 27։ Մաղ. բ · 7։ Ջաք. ժբ. 8։ [21] Մատթ. ժ. 40։ Ղուկ. ժ. 16։ Յովհ. ժգ. 20։ ա Թես. բ · 13։ [22] Գաղ. բ · 5, 14։ [23] Հռովմ. ժ. 2։ բ Կորնթ. ժա. 2։ [24] ա Կորնթ. գ · 15։ Փիլիպ. 10։ Յով. ա · 18։ [25] Ծննդ. ժգ. 15։ [26] Ծննդ. իա. 2։ [27] Հռովմ. թ. 7, 8։ [28] Ծննդ. ժբ. 10, 14։ իա. 1, 2։ Եբր. ժա. 11։ [29] բ Օրէն. լգ · 2։ [30] Եսայ. բ. 2։ Եբր. ժբ. 22։ Յայտ. գ · 12։ իա. 2, 10։ [31] Եսայ. ծգ · 1։ [32] Գաղ. գ · 25։ Հռովմ. թ. 8։ Գաղ. գ · 29։

ված էր, Հալածումէր Նորան՝ որ Հա-
գոյ կողմանէն էր[33], Ենպէս եւ Հի-
միկ[34]։

30 Բայց գիրքն ի՞նչ է ասում[35]. դուրս Հանիր աղախինըն (ղաթաա-
շըն) եւ նորա որդին[36], որ աղախնի որդին ժառանգութիւն չըստանայ ա-
զատի որդոյն Հետ[37]։

31 Արդեամն եղբարք՝ մենք ա-
ղախնի որդիք չենք, բայց ազատին[38]. Էն ազատութենովն՝ որ Քրիստոս Նորանով մեզ ազատ արաւ[39]։

## ԳԼ· Ե

1 Զգուշութեամբ Նորանք՝ որ իրանց ազատութեան մէջն Հաստատ կենան, 3 եւ թլփատու-
թեան ծառայ չըլինին, 13 Բայց սիրով ծառայեն իրար, ինչու որ՝ օրէնքի կատարվիւն
սէրն է։ 19 Մարմնոյ գործքերն, 22 եւ Հոգոյ պտուղներն։ 25 Հոգով ապրելոյ մէն
յորդորանք։

1 Ուրեմն Հաստատ կացէք՝ եւ մինել ծառայութեան լծի նեղքեւն մի մտնէք[1]։

2 Ը.Հա՛ ես պօղոս ասումեմ ձեզ. որ եթէ թլփատվիք, Քրիստոսն իսկի ձեզ օգնութիւն չի անիլ[2]։

3 Ա կայտառեմ ամեն մարդոյ Հա-
մար՝ որ թլփատվուկ, թէ նա պար-
տական է ամեն օրէնքըն կատարել[3]։

4 Քրիստոսից հեռացած էք՝ (դուք) որ օրէնքովն էք կամենում արդարանալ[4]. եւ շնորՀքից վեր-
ընկած էք[5]։

5 Ինչու որ՝ մենք Հոգովն Հաւատ-
քից ենք սպասում արդարութեան յուսոյն[6]։

6 Պատճառն որ Քրիստոս Յի-
սուսումն՝ ոչ թլփատութիւնն մին բան կարօղ է՝ եւ ոչ անթլփատու-
թիւնն[7], բայց Հաւատք որ սիրով յայտնված է[8]։

7 Լաւ էիք վազում[9], ձեզ ո՞վ յետ կանգնացրուց՝ որ չըՀաւանիք ճշմարտութեանն[10]։

8 Ինչու որ էն Հաւանացնելն՝ նո-
րանից չէ՝ որ կանչեց ձեզ[11]։

9 Մ՚ինչիչ խմոր բոլոր շաղաղ-
վածն խմորացնում[12]։

10 Բայց ես ձեզ վերայ յոյս ու-
նիմ Տէրովն՝ որ ուրիշ բան չըմտա-
ծէք[13]. եւ նա՝ որ խռովացնում ձեզ[14] դատաստան կըքաշէ՝ ով որ լինի[15]։

11 Բայց ես եղբարք՝ թէ որ թլփատութիւն քարոզէի[16]՝ էլ ին-
չո՞ Համար եմ դեռ Հալածվում[17]. ապա ուրեմն խաչի գայթակղու-
թիւնն խափանված լինէր[18]։

12 Լրանի թէ (ձեր միջինն) կըտ-
րըվելին Նորանք[19]՝ որ խռովացնում ձեզ[20]։

13 Ինչու որ՝ դուք ազատութեան

[3] Ծննդ. խա. 9։ [34] Գաղ. ե. 11։ գ. 12։ [35] Գաղ. դ. 8, 22։ [36] Ծննդ. խա. 10, 12։ [37] Ըմէն. ը. 35։ [38] Ըմէն. ը. 36։ Գաղ. ե. 1, 13։ [39] Ըմէն. ը. 32։ Հռոմ. գ. 18։ ա պետր. բ. 16։ [1] Գործ. ժե. 10։ Գաղ. բ. 4։ դ. 9։ [2] Գործ. ժե. 1։ Գործ. ժգ. 3։ [3] Գաղ. գ. 10։ [4] Հռոմ. թ. 31, 32։ Գաղ. բ. 21։ [5] Եբր. ժբ. 15։ Հռոմ. ը. 24, 25։ բ Տէմ. դ. 8։ [7] ա Կորնթ. է. 19։ Գաղ. գ. 28։ գ. 15։ Կող. գ. 11։ ա Թես. ա. 3։ Ըմէն. բ. 18, 20, 22։ [9] ա Կորնթ. թ. 24։ [10] Գաղ. գ. 1։ [11] Գաղ. ա. 6։ [12] ա Կորն. ե. 6։ ժե. 33։ [13] բ Կորնթ. բ. 3։ ը. 22։ [14] Գաղ. ա. 7։ [15] բ Կորնթ. ժ. 6։ [16] Գաղ. գ. 12։ [17] ա Կորնթ. ժե. 30։ Գաղ. դ. 29։ գ. 17։ [18] ա Կորնթ. ա. 23։ [19] Ըհա. է. 25։ ա Կորնթ. ե. 13։ Գաղ. ա. 9։ [20] Գործ. ժե. 1. 2, 24։

մէջ էք կանչվել եղբարք. միայնիմէ ձեր ազատութիւնն պատճառ չըլլայ մարմնոյն[21], բայց սիրով ծառայեցէք իրար[22]:

14 Պատճառն որ՝ ամէն օրէնքն էն մին խօսքումն է կատարվում[23]. (թէ) քո ընկերըդ քո անձիդ պէս սիրէ[24]:

15 Նայց թէ որ իրար կծէք՝ եւ ուտէք, զգոյշ կացէք՝ որ չըլլինի թէ իրարից սատկվիք:

16 Նայց էս եմ ասում. հոգով դնացէք, եւ մարմնոյ ցանկութիւնըն մի կատարէք[25]:

17 Պատճառն որ՝ մարմինն ցանկանում հոգոյն հակառակ, եւ հոգին մարմնոյն հակառակ[26]. եւ որովհետեւ սորանք իրար հակառակ են, չըլինի թէ էն որ դուք կամենաք՝ (էն) անէք[27]:

18 Նայց թէ որ հոգով վարվիք՝ ապա օրէնքի նեղըքեւն չէք[28]:

19 Պատճառն որ՝ յայտնի են մարմնոյ գործքերն, որ սորանք են[29]՝ շնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիջութիւն,

20 կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, կռիւ, նախանձ, բարկութիւն, հակառակութիւններ, երկպառակութիւններ, բաժանմունքներ,

21 Ջար աչքով նայիլն, սպանութիւններ, հարբեցութիւններ, անառակութիւններ, եւ (էլ) ինչ որ սրանց նման են. էս որ առաջուց ասումեմ ձեզ, ինչպէս որ էլ սկիզբն ասումէի, թէ (նորանք) որ էսպէսի բան են գործում՝ Աստուծոյ արքայութիւնըն չեն ժառանգիլ[30]:

22 Նայց հոգոյ պտուղն էս է[31]. սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն,

23 Վաղցրութիւն[32], բարութիւն[33], հաւատք[34], հեզութիւն, ժուժկալութիւն. էսպէսիներին օրէնքն հակառակ չէ[35]:

24 Նայց նորանք՝ որ Քրիստոսին են, իրանց մարմիններն խաչ հանեցին ախտերին եւ ցանկութիւններին հետ[36]:

25 Թէ որ հոգով ենք ապրում, էլ հոգոյն հետ միաբան լինինք[37]:

26 Չէ ունայն պարծանքին չըհետեւինք՝ իրար դրդելով, եւ իրար վերայ նախանձելով[38]:

[21] ա Կոր. ը · 9։ ա Պետր. բ · 16։ բ Պետր. բ · 19։ Յուդ. 4։ [22] ա Կորնթ. թ · 19։ Գաղ. գ · 2։ [23] Մատթ. է · 12։ Ղեւ. 40։ Յակ. բ · 8։ [24] Ղեւտ. ԺԹ · 18։ Մատթ. իբ · 39։ Հռովմ. ժգ · 8, 9։ [25] Հռովմ. գ · 12։ ը · 1, 4, 12։ ժգ · 14։ Գալ. ե · 25։ ա Պետր. բ · 11։ [26] Հռովմ. է · 23։ ը · 6, 7։ [27] Հռովմ. է · 15, 19։ [28] Հռովմ. գ · 14։ ը · 2։ [29] ա Կորնթ. գ · 3։ Եփես. ե · 3։ Կող. գ · 5։ Յակ. գ · 14, 15։ [30] ա Կորնթ. գ · 9։ Եփես. ե · 5։ Կող. գ · 6։ Յայտ. իբ · 15։ [31] Յովհ. ժե · 2։ Եփես. ե · 9։ [32] Կող. գ · 12։ Յակ. գ · 17։ [33] Հռովմ. ժե · 14։ [34] ա Կորնթ. ժգ · 7։ [35] ա Տիմ. ա · 9։ [36] Հռովմ. գ · 6։ ժգ · 14։ Գաղ. ե · 19։ ա Պետր. բ · 11։ [37] Հռովմ. ը · 4, 5։ Վէր · 16։ [38] Փիլիպ · բ · 3։

# ՂԱ·Ջ

1 Աւաքեաքն յորդորումն նորանք որ սխալմունքով քանըվաճառներին հեզութեան հոգովն հաստատաւն, 2 եւ իրար բեռըն վերառնեն. 6 Իրանց վարդապետներին հաղորդութիւն անեն, 9 Խարի գործելուցն չըճանձրանան: 12 Ցոյց կըտայ թէ թլփատութիւն քարոզողներն ի՛նչ միտք ունին. 14 եւ ինքըն ուրիշ մին բանով չըպարծենուի՝ բայց միայն Քրիստոսի խաչովն:

1 Ա՛ղբարք՝ թէ որ ձեզանից մինն յանկարծ բռնըվի ինչ սխալմունքով որ լինի[1], դուք որ հոգեւոր էք[2] էն պէսիներին հաստատեցէք հեզութեան հոգովն[3]. զգո՛յշ կացէք ձեր անձներիդ՝ որ դուք էլ չըփորձվիք[4]:

2 Իրար բեռըն վերառէք[5], եւ էսպէս Քրիստոսի օրէնքն կատարեցէք[6]:

3 Թէ որ մինն համարի (իրան) թէ մին բան է՝ եւ չըլինի, նա իրան անձըն խաբումէ[8]:

4 Ամէն մէկն թո՛ղ իրան գործըն կշռէ, եւ ապա մէնակ իրան անձին պարծանք տայ[9], եւ չէ թէ իրան ընկերին մօտ[10]:

5 Ինչու որ՝ ամէն մէկն իրան բեռըն պիտի վերառնէ[11]:

6 Աշակերտն թո՛ղ հաղորդութիւն անէ վարդապետին՝ ամէն բարի բաներով[12]:

7 Ո՛չ խաբվիք[13]. Աստուած չի անարգվիլ[14]:

8 Վասնզաւն որ՝ ինչ որ մարդն սերմումէ՝ հենց էն կըհնձէ[15]. նա՝ որ իրան մարմնոյ մէջն է սերմում, էն մարմնիցն ապականութիւնն կըհնձէ[16]. եւ նա՝ որ հոգոյ մէջն է սերմում, էն հոգուցն էլ յաւիտենական կեանքըն կըհնձէ:

9 Խայտ չըճանճրանանք բարի գործելուցն[17], ինչու որ՝ իրան ժամանակումն կըհնձենք առանց պակասելոյ[18]:

10 Ուրեմն քանի որ ժամանակն ձեռներումս է[19] բարի գործենք ամէնին համար[20], մանաւանդ հաւատքի ընտանիքներին[21]:

11 Տեսէք թէ ինչպէսի գրերով գրեցի ձեզ (հենց) իմ ձեռովս:

12 Էն ամէնքն՝ որ կամենուն հաճոյ երեւիլ մարմնոյ կողմանէ, նորանք են ստիպում ձեզ՝ որ թլփատվիք[22], մէնակ նրանհամար[23]՝ որ Քրիստոսի խաչն հետեւէն չըգնան[24]:

13 Ինչու որ հենց նորանք էլ՝ որ թլփատված են, նորանք օրէնքըն չեն պահում· բայց կամենուն՝ որ

[1] Հռով. ժգ. 1: ժե. 1: Եբր. ժբ. 13: Ցակ. ե. 19: [2] Ա Կորնթ. բ. 15: գ. 1: [3] Ա Կորնթ. դ. 21: բ Թես. գ. 15: բ Տիմ. բ. 25: [4] Ա Կորնթ. է. 5: ժ. 12: [5] Հռով. ժե. 1: Գաղ. ե. 13: ա Թես. ե. 14: [6] Ցովհ. ժգ. 14. 15, 34: ժե. 12: Ցակ. բ. 8: ա Ցովհ. գ. 21: [7] Հռով. ժբ. 3: ա Կորնթ. ը. 2: Գաղ. բ. 6: [8] բ Կորնթ. գ. 5: ժբ. 11: [9] Ա Կորնթ. ժա. 28: բ Կորնթ. ժգ. 5: [10] Ղեւտ. ժբ. 11: [11] Հռով. բ. 6: ա Կորնթ. գ. 8: [12] Հռովմ. ժե. 27: ա Կորնթ. թ. 11, 14: [13] ա Կորնթ. ղ. 9: ժե. 33: [14] Ցոբ. ժգ. 9: [15] Ղեւտ. ժզ. 25: Հռով. բ. 6: բ Կորնթ. թ. 6: [16] Ցոբ. գ. 8: Ասել. ժա. 18: իբ. 8: Ովսէ. ը. 7: ժ. 12: Հռով. ը. 13: Ցակ. գ. 18: [17] բ Թես. գ. 13: ա Կորնթ. ժե. 58: [18] Մատ. իգ. 13: Եբր. գ. 6. 14: ժ. 36: ժբ. 3. 5: Ցայտ. բ. 10: [19] Ցովհ. թ. 4: ժբ. 35: [20] ա Թես. ե. 15: ա Տիմ. ղ. 18: Տիտ. գ. 8: [21] Եփես. բ. 19: Եբր. գ. 6: [22] Գաղ. բ. 3, 14: [23] Փիլիպ. գ. 18: [24] Գաղ. ե. 11:

գուք թլփատվիք, որ ձեր մարմնոյն պարծենան։

14 Բայց ինձ քաւ լիցի պարծե-նալ, բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն[25], որ նորանով աշխարհքն ինձ համար խաչված է, եւ ես էլ աշխարհքին (համար)[26]։

15 Պատճառն որ՝ Յիսուս Քրիս-տոսումն՝ ոչ թլփատութիւնն մին բան է՝ եւ ոչ անթլփատութիւնն[27], այլ նոր ստեղծված[28]։

16 Եւ ամենքն՝ որ ես կանոնիս միաբան են[29], նորանց վերայ (լինի) խաղաղութիւն եւ ողորմութիւն՝ եւ էլ Աստուծոյ իսրայելին վերայ[30]։

17 Արանից ետեւ ինձ մին չաշ-խատացնէ ինձ, ինչու որ ես Քրիս-տոսի չարչարանքներն իմ մարմնոյս մէջն եմ տանում[31]։

18 Մեր Տէր Յիսուսի Քրիս-տոսի շնորհքն ե՛ղբարք՝ ձեր հոգւոյն հետ լինի, ամէն[32]։

Պօղոսէն առաքեալ Հռոմ թուղթն գրվեցաւ։

[25] Փիլիպ· գ· 3, 7, 8։ [26] Հռովմ· զ· 6։ Գաղ· բ· 19։ [27] ա կորնթ· է· 19։ Գաղ· ե· 6։ կ· գ· 11։ [28] բ կորնթ· ե· 17։ [29] Փիլիպ· գ· 16։ [30] Ա՛ղ· ճգհե· 5։ Հռովմ· բ· 29։ գ· 13։ թ· 6, 7, 8։ Գաղ· գ· 7, 9, 29։ Փիլիպ· գ· 3։ [31] բ կորնթ· ա· 5։ գ· 10։ ժա· 23։ Գաղ· ե· 11։ կ· ա· 24։ [32] բ Տիմ· դ· 22։ Փիլիմ· 25։

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՑ

### ԸՆ ԵՓԵՍԱՑԻՍ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՔԵԼՈՅ

2 Պօղոս՝ Աստուծոյ Հնորհքըն եւ խաղաղութիւնն լինի ասելուցն, 3 Եւ Եփեսացոց համար գոհութիւն տալուցն եաեւ, 4 Քրիստոնեաներուն ընտրվելն, 6 Եւ Հնորհքով որդեգիր լինելն կըպատմէ, 11 Որ Նա մարդոյն փրկվելուն Հնմարիտ եւ միակ Հանապարհին։ 13 Ինքըն վկայութէ՝ որ Նորանք երբոր Հնմարտութեան խօսքին Հաւատացին եւ Սուրբ Հոգովն կնքվեցան, 16 Ներհամար գոհութիւն կըտայ եւ աղօթք կանէ, 17 Որ Աստուած Նորանց տայ իմաստութեան եւ գիտութեան Հոգին, որ գիտենան՝ իրանց կոչումի յոյսն, 20 Որ Նորան Քրիստոսումն յաջողեց, եւ Նորան յարոյց մեռելներէ միջէն եւ Նստացրուց Նա իրան աջ կողմն եւ ամէն բաներէ վերայ եւ Եկեղեցոյ գլուխ դրաւ։

1 ՊՕՂՈՍ ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովն[1] սըրբերին որ եփեսոսումն են[2], եւ Քրիստոսումն (լինօղ) Հաւատացեալներին[3]։

2 Ը ՆորՀք (լինի) ձեզ Հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցն՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսիցն[4]։

3 Օրհնեալ է Աստուած՝ եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրն[5], որ մեզ օրհնեց ամէն Հոգեւոր օրհնութիւնով երկնաւոր բաներուն Քրիստոսով։

4 Ինչպէս որ ընտրեց[6] մեզ Նորանով աշխարհքի լինելուցն առաջ[7], որ մենք սուրբ եւ անարատ լինինք Նորա առաջին սիրով[8]։

5 Ը Առաջուց սահմանեց մեզ[9], որ Հնոց իրան որդեգիր լինինք Յիսուսի Քրիստոսի ձեռովն[10] իրան կամքի Հաճութեան պէս[11],

6 Իրան փառաւոր շնորհաց գովասանքին Համար, որ սորանով ու-

[1] ա կորնթ. ա. 1։ [2] Հռոմ. ա. 7։ բ կորնթ. ա. 1։ [3] Գաղ. ա. 2։ [4] Գաղ. ա. 3։ Ցէփ. ա. 4։ [5] բ կորնթ. ա. 3։ ա պետր. ա. 3։ [6] ա պետր. ա. 2, 3։ [7] Հռոմ. ը. 28։ բ Թես. բ. 12։ բ Տիմ. ա. 9։ Ցով. բ. 5։ ա պետր. ա. 2։ բ. 9։ [8] Գաղ. ա. 75։ Եփես. բ. 10։ Ե. 27։ [9] Հռոմ. ը. 29, 30։ վայր. 11։ [10] Ցովհ. ա. 13։ Հռոմ. ը. 15։ բ կորնթ. գ. 18։ Գաղ. գ. 5։ ա Ցովհ. գ. 1։ [11] Մատթ. ժա. 26։ Գաղ. ժբ. 32։ ա կորնթ. ա. 21։ վայր. 9։

բախացրուց մեզ[12]՝ էն սիրելիովն[13]։

7 Որ Նորանով ունինք փրկու-
թիւն նորա արիւնովն, մեզայ թո-
ղութիւնըն[14]՝ իրան շնորհաց մեծու-
թեան չափովն[15]։

8 Որ էն աւելացաւ մեզանում
ամէն իմաստութենով եւ գիտու-
թենով։

9 Յայց տուաւ մեզ իրան կամքի
խորհուրդներըն՝ իրան հաճոյա-
թեան պէս[16]. էն որ առաջուց գրաւ
Նորանով[17],

10 յամանակներուն լցվելոյ տըն-
տեսութեան համար[18], որ ամէն
բան[19] բոլորվի Քրիստոսովն, ինչ որ
երկինքումն է՝ եւ ինչ որ երկրումն՝
հնոց Նորանում[20]։

11 Որ Նորանով էլ ստացանք
ժառանգութիւնըն մենք[21] որ առա-
ջուց հրաւիրվեցանք, Աստուծոյ ա-
ռաջադրութեան պէս[22]. որ ամէն բան
յաջողուսի իրան կամքի խորհուրդ-
ներին պէս[23]։

12 Որ մենք գովասանք լինինք Նո-
րա փառացն[24], որ առաջուց մեր յոյ-
սըն Քրիստոսի վերայ ենք դրել[25]։

13 Որ Նորանով դուք էլ երբոր
ճշմարտութեան խօսքըն լսեցիք՝ ձեր
փրկութեան աւետարանըն[26], որ նո-
րան էլ երբոր հաւատացիք՝ աւետի-
քի սուրբ հոգովն կնքվեցաք[27]։

14 Որ նա մեր ժառանգութեան
գրաւն է[28], մինչեւ (իրան) ստաց-
վածի[29] փրկութիւնըն[30], որ Նորա
փառացն գովասանք լինի[31]։

15 Վասն այսորիկ ես էլ երբոր լը-
սեցի ձեր հաւատքն՝ որ (ունիք) Տէր
Յիսուսին վերայ, եւ էն սէրըն որ
դէպի ամէն սրբերուն ունինք[32],

16 Չեմ դադարում ձեզ համար
գոհութիւն տալուց՝ եւ յիշում եմ
ձեզ աղօթքումն[33]։

17 Որ մեր Տէր Յիսուսի Քրիս-
տոսի Աստուածն[34] փառաց Հայրն՝
տայ ձեզ իմաստութեան եւ յայտ-
նութեան հոգին՝ իրան գիտութե-
նովն[35]։

18 Որ լուսաւոր անէ (մեր) սրտերի
աչքերըն[36] որ մենք գիտենանք՝ թէ
ի՞նչ է էն մեր կոչումի յոյսն[37], եւ
ի՞նչ է իրան ժառանգութեան փա-
ռաւոր մեծութիւնն, որ է սրբե-
րումն[38]։

19 Եւ ի՞նչ է Նորա զօրութեան
գերազանց մեծութիւնըն մեզանում՝
որ հաւատացինք, իրան կարող զօ-
րութեան յաջողութեան պէս[39],

20 Որ Քրիստոսումն յաջողեց.

---

[12] Հռոմ. գ·24։ ե·15։ [13] Յովր. գ·17։ Ժէ·5։ Ցուն. գ·35։ ժ·17։ [14] Գործ. ի·28։ Հռոմ. գ·24։ կող. ա·14։ Եբր. թ·12։ ա Պետր. ա·18, 19։ Ցայտ. ե·9։ [15] Հռոմ. բ·4։ գ·24։ թ·23։ Եփես. բ·7։ գ·8, 16։ Փիլիպ. գ·19։ [16] Հռոմ. ժգ·25. Եփես. գ·4, 9։ կող. ա·26։ [17] Եփես. գ·11։ բ Տիմ. ա·9։ [18] Գալ. գ·4։ Եբր. ա·2։ թ·10։ ա Պետր. ա·20։ [19] ա Կորնթ. գ·22, 23։ ժա·3։ Եփես. բ·15։ գ·15։ [20] Փիլիպ. բ·9, 10։ կող. ա·20։ [21] Գործ. ի·32։ իգ·18. Հռոմ. ը·17։ կող. ա·12։ գ·24։ Տիտ. գ·7։ Ցուն. բ·5։ ա Պետր. ա·4։ [22] վէր·5։ [23] Նայ. խգ·10, 11։ [24] վէր·6։ վայր·14։ բ Թես. բ·13։ [25] Ցուն. ա·18։ [26] Ցուն. ա·17։ բ Կորնթ. զ·7։ [27] բ Կորնթ. ա·22։ Եփես. գ·30։ [28] բ Կորնթ. ա·22։ ե·5։ [29] Գործ. ի·28։ [30] Վահան. ի·28։ Հռոմ. ը·23։ Եփես. գ·30։ [31] վէր·6, 13։ [32] կող. ա·4։ Փիլիմ. 5։ [33] Հռոմ. ա·9։ Փիլիպ. ա·3, 4։ կող. ա·3։ ա Թես. ա·2։ բ Թես. ա·3։ [34] Ցուն. ի·17։ [35] կող. ա·9։ բ·3։ [36] Գործ. իգ·18։ [37] Եփես. բ·12։ գ·4։ [38] վէր·11։ [39] Եփես. գ·7։ կող. ա·29։ բ·12։

ինչու որ յարոյց նորան մեռեալների միջնէն[40], եւ իրան ալ կողմն նստացրուց երկնքումն[41]։

21 Ի[42] որմէն իշխանութեան եւ պետութեան եւ զօրութեան եւ տէրութեան վերայ՝ եւ ամէն անունները որ կան վերայ՝ որ անուանվելու են, ոչ թէ միայն[43] այս աշխարհքումն՝ այլ եւ եկողի մէջն[43]։

22 Եւ ամէն բան հնազանդացրուց նորա ոտից ներքեւն[44], եւ նորան գլուխ դրաւ եկեղեցոյ ամէն բաներին վերայ[45],

23 Որ է նորա մարմինն է[46], (նորա) լիութիւնն[47] որ ամէնքն ամէնի մէջն լցնում[48]։

## Կ. Բ

1 Ասաքեաէն հաստատում թէ մենք ամէնքս էլ ի՛նչ էինք մին ժամանակ բնութենով, եւ հիմիկ ինչպէս կենդանի ենք, 5 Շնորհքով, 10 Եւ թէ բարի գործքեր անելոյ համար առեղծված ենք, 11 Ընտհանար պէտք չէ որ հեթանոսներին պէս ապրինք, 12 Որ մին ժամանակ առանց Քրիստոսի եւ առանց Աստուծոյ էինք աշխարհքումս, 13 Բայց հիմիկ մօտաւոր էլանք Քրիստոսի արիւնովն, 19 Եւ սըրբերին հետ քաղաքացիներ եւ Աստուծոյ ընտանիքներ։

1 Եւ դուք[1] որ մեռած էիք ձեր մեղքերումն եւ յանցանքներումն[2],

2 Որ նորանցում մին ժամանակ գնում էիք ես աշխարհքիս սովորութեան պէս[3] էն իշխանին պէս՝ որ ես օդիս (հասոյչ) մէջն իշխանութիւն է անում[4], էն չար հոգւոյն պէս՝ որ հիմիկ մտել է ապստամբութեանն որդիքներուն մէջ[5]։

3 Որ նորանց միջումն մենք ամէնքս էլ մին ժամանակ մեր էինք գալես[6] մեր մարմնոյ ցանկութիւններումն, եւ մարմնոյ եւ մտքի կամքն կատարում էինք[7], եւ իրաւի բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշներն[8]։

4 Բայց Աստուած՝ որ մեծ է ողորմութենով, իրան շատ սիրոյն համար՝ որ սիրեց մեզ[9],

5 Երբոր մեռած էինք (մեր) մեղքերումն[10], մեզ կենդանի արաւ Քրիստոսումն[11], (ինչու որ շնորհքով ապրեցանք[12]։

6 Նորա հետ (մեզ) յարոյց, եւ նորա հետ երկնքումն նստացրուց՝ Քրիստոս Յիսուսումն[13]։

7 Որ նոր եկող ժամանակներումն յայտնի ցոյց տայ՝ իրան շնորհաց գերազանց մեծութիւնն, ինչպէս էն քաղցրութենովն՝ որ մեզ վերայ

[40] Գործ. բ. 24, 32։ [41] Սաղմ. ճժ. 1։ Գործ. է. 55։ Կող. գ. 1։ Եբր. ա. 3։ ժ. 12։ [42] Փիլիպ. բ. 9, 10։ Կող. բ. 10։ Եբր. ա. 4։ [43] Հռովմ. ը. 38։ Կող. ա. 16։ բ. 15։ [44] Սաղմ. ը. 6։ Մատթ. իը. 18։ ա Կորնթ. ժե. 27։ Եբր. բ. 8։ [45] Եփես. գ. 15, 16։ Կող. ա. 18։ Եբր. բ. 7։ [46] Հռովմ. ժբ. 5։ ա Կորնթ. ժբ. 12, 27։ Եփես. դ. 12։ ե. 23, 30։ Կող. ա. 18. 24։ [47] Կող. բ. 9, 10։ [48] ա Կորնթ. ժբ. 6։ Եփես. գ. 10։ Կող. գ. 11։ [1] Ցովհ. ե. 24։ Կող. բ. 13։ [2] Վայր. 5։ Եփես. գ. 18։ [3] ա Կորնթ. զ. 11։ Եփես. գ. 22։ Կող. ա. 21։ գ. 7։ ա Ցովհ. ե. 19։ [4] Եփես. զ. 12։ [5] Եփես. ե. 6։ Կող. գ. 6։ [6] Տիտ. գ. 3։ ա Պետր. գ. 3։ [7] Գաղ. ե. 16։ [8] Սաղմ. ծա. 5։ Հռովմ. ե. 12, 14։ [9] Հռովմ. ժ. 12։ Եփես. ա. 7։ Վայր. 7։ [10] Հռովմ. ե. 6, 8, 10։ Վէր. 1։ [11] Հռովմ. զ. 4, 5։ Կող. բ. 12, 13։ գ. 1, 3։ [12] Գործ. ժե, 11։ Վայր. 8։ Տիտ. գ. 5։ [13] Եփես. ա. 20։

Էլաւ Վրիստոս Յիսուսումն[14]։

8 Պատճառն որ՝ նորա շնորհքովն փրկված էք[15] հաւատքի ձեռովն[16]. եւ էս ոչ թէ ձեզանից է, այլ Աստուծոյ պարգեւն է[17]։

9 Ո՛չ թէ գործքերիցն, որ իսկի մինն չըպարծենայ[18]։

10 Ինչու որ՝ նորա ստեղծվածն ենք[19] Վրիստոսով Յիսուսով հաստատված բարի գործքերին համար, որ Աստուած նորանց համար առաջուց պատրաստեց մեզ, որ նորանցում վարվինք[20]։

11 Ըրահամար դուք էլ մտքներդ բերէք՝ որ ժամանակով հեթանոս էիք մարմնոյ կողմանէ[21], որ անթլփատութիւն են կոչված էն մարմնաւոր ձեռքով արած թլփատութեներնից[22]։

12 Որ էն ժամանակումն էիք առանց Վրիստոսի[23], եւ օտարացած իսրայէլի քաղաքավարութենից[24]. եւ դուրս արած աւետիքի ուխտապայմանից[25], իսկի յոյս չունէիք[26], եւ առանց Աստուծոյ էիք աշխարհումն[27]։

13 Հայց հիմիկ Յիսուսի Վրիստոսի ձեռովն, դուք[28] որ ժամանակով հեռաւոր էիք՝ մօտաւոր եղաք Վրիստոսի արիւնովն[29]։

14 Պատճառն որ՝ նա է մեր խաղաղութիւնն[30] որ երկուսին մին արաւ[31]. եւ միջտեղ դրած պատնէշը (այսինքն) թշնամութիւնըն քանդեց[32] իրան մարմնովն[33]։

15 Եւ հրամանքներով դրած պատուիրանքների օրէնքըն խափանեց, որ հնից իրանով երկուսին մին նոր մարդ (շինէ) հաստատ[34], եւ խաղաղութիւն անէ։

16 Եւ երկուսին մին մարմնով հաշտացնէ Աստուծոյ հետ՝ իրան խաչովն[35]. ինչու որ թշնամութիւնն սպանեց իրան անձնուէրն[36]։

17 Եւ եկաւ աւետարանեց խաղաղութիւն ձեզ հեռաւորներիդ[37] եւ խաղաղութիւն մօտաւորներին[38]։

18 Պատճառն որ՝ նորանով երկուքս[39] մին հոգով ունինք մօտենալըն Հօր (Աստուծոյ) մօտ[40]։

19 Պա այսու հետեւ օտար եւ պանդխտ (ղպտի) չէք, բայց սրբերին հետ քաղաքացիներ[41] եւ Աստուծոյ ընտանիքներ[42]։

20 Առաքելոց եւ մարգարէից[43] հիմունքին վերայ[44] շինված[45]. որ

---

[14] Տիս. գ·4։ [15] վԷր·5։ Հռովմ. գ·24։ բ Տիմ. ա·9։ [16] Հռովմ. դ·16։ [17] Պետ. ժ. 17։ Ցվհ. ղ·44, 66։ Հռովմ. ժ·14, 15, 17։ Եփես. ա. 19։ Փիլիպ. ա·29։ [18] Հռովմ. գ·20, 27, 28։ դ·2։ Թի·11։ ժա·6։ աԿորնթ. ա. 29, 30, 31։ բ Տիմ. ա. 9։ Տիս. գ·5։ [19] բ Օրին. լբ·6։ Սաղմ. ճ. 3։ Եսայ. ԺԹ. 25։ Ին·23։ Խգ·21։ Ցվհ. գ. 3, 5։ ա Կորնթ. գ·9։ բ Կորնթ. ե. 5, 17։ Եփես. գ·24։ Տիս. բ. 14։ [20] Եփես. ա. 4։ [21] աԿորնթ. ժբ. 2։ Եփես. ե. 8։ Կող. ա. 21։ բ. 13։ [22] Հռովմ. բ. 28, 29։ Կող. բ. 11։ [23] Եփես. գ. 18։ Կող. ա. 21։ [24] Եսի. ժգ. 9։ Ցվհ. ժ. 16։ [25] Հռովմ. Թ. 4, 8։ [26] աԹես. դ. 12։ [27] Գաղ. դ. 8։ աԹես. գ. 5։ [28] Գաղ. գ. 28։ [29] Գործ. բ. 39։ վԱյր. 17։ [30] Յհնէ. ե. 5։ Ցվհ. ժգ. 33։ Գործ. ժ. 36։ Հռովմ. ե. 1։ Կող. ա. 20։ [31] Ցվհ. ժ. 16։ Գաղ. գ. 28։ [32] Կող. բ. 14, 20։ [33] Կող. ա. 22։ [34] բ Կորնթ. ե. 17։ Գաղ. գ. 15։ Եփես. գ. 24։ [35] Կող. ա. 20, 21, 22։ [36] Հռովմ. գ. 6։ բ. 3։ Կող. բ. 14։ [37] Եսայ. ՅԷ. 19։ Զաք. Թի. 10։ Գործ. բ. 39։ Ժ. 36։ Հռովմ. ե. 1։ վԱյր. 13, 14։ [38] Սաղմ. ճխը. 14։ [39] Ցվհ. Ժ. 9։ ժգ. 6։ Հռովմ. ե. 2։ Եփես. գ. 12։ ԵԲր. գ. 16։ Ժ. 19, 20։ ա Պետր. գ. 18։ [40] ա Կորնթ. ժբ. 13։ Եփես. գ. 4։ [41] Փիլիպ. գ. 20։ ԵԲր. ժբ. 22, 23։ [42] Գաղ. գ. 10։ Եփես. գ. 15։ [43] ա Կորնթ. ժբ. 28։ Եփես. գ. 11։ [44] Յաղթ. ժգ. 18։ Գաղ. բ. 9։ Ցայտ. Խա. 14։ [45] ա Կորնթ. գ. 9, 10։ Եփես. գ. 12։ ա Պետր. բ. 4, 5։

Նորա անկիւնի գլուխն Յիսուս Քրիստոս է[46]։

21 Որ նորանում բոլոր շինվածքն միաւորված եւ յարմարված է[47] եւ աճումն (որ լինի) սուրբ տաճար Տէրում[48]։

22 Որ նորանում դուք էլ նորա հետ շինվում եք Աստուծոյ բնակարան Հոգով[49]։

## ԳԼ. Գ

3 Աստիճան էն փրկութեան խորհուրդն ցոյց տրվաւ, 5 եւ ոչ ուրիշ պարտերի, բայց իրան սուրբ Առաքեալներին եւ Մարգարէներին յայտնվեցաւ, 6 Որ հեթանոսներն ժառանգութեան ընկեր լինին. 8 Եւ էս շնորհքն տրվաւ Պօղոսի որ հեթանոսների միջումն աւետարանէ քրիստոսի մեծութիւնըն, 9 Եւ էն խորհուրդն որ ծածկված էր Աստուծոյ մօտ։ 13 Պօղոս աղաչումէ որ չդժանդրանան իրան նեղութիւններումն որ նորանց համար է, 14 Եւ աղօթք կանէ, 17 որ քրիստոս հաստատով բնակվի նորանց բոլումն, 19 Եւ նորա գիտութեան գերազանց սէրըն ճանաչէն։

1 Այսհամար ես պօղոս՝ որ Յիսուսի Քրիստոսի կապվածն եմ[1] ձեզ հեթանոսներիդ համար[2]։

2 Կըլինի որ՝ դուք լսած էք Աստուծոյ շնորհայ էն անտեսութիւնըն[3], որ ինձ տրվված է ձեզ համար[4]։

3 Որ[5] յայտնութեամբով ցոյց տրվաւ[6] ինձ էն խորհուրդն[7], ինչպէս որ առաջուց կարճառօտ գրեցի ձեզ[8]։

4 Որ կարօղ լինիք կարդալ եւ մնքներդ առնել իմ տեղեկութիւնըս՝ որ Քրիստոսի խորհրդին համար է[9]։

5 Որ ուրիշ անցկացած պորտերի մարդկանց զաւակներին ցոյց չտրվվաւ[10], ինչպէս որ հիմի իրան սուրբ առաքեալներին եւ մարգարէներին յայտնըվեցաւ՝ Հոգով[11]։

6 Էն որ հեթանոսներն ժառանգութեան[12] եւ մարմնոյ ընկեր են[13], եւ Քրիստոս Յիսուսումն աւետիքին մասնակից՝ աւետարանով[14]։

7 Որ նորան ես պօղոս սպասաւոր էլայ[15] Աստուծոյ շնորհայ պարգեւին պէս՝ որ տրվաւ ինձ[16], ինչպէս որ նորա զօրութիւնն յաջողումէ[17]։

8 Ինձ՝ որ ամէն սրբերի յետինն եմ, տրվաւ էս շնորհքս[18], որ հեթանոսների միջումն[19] աւետարանեմ Քրիստոսի անքննելի մեծութիւնն[20]։

9 Եւ ամէնին լուսաւորեմ, թէ ի՞նչ է էն խորհրդի անտեսութիւնըն[21], որ ամէն յաւիտենի ժամանա-

---

[46] Սաղմ. ճԺը. 22։ Եսայ. իը. 16։ Մատթ. իա. 42։ [47] Եփես. գ. 15, 16։ [48] ա Կորնթ. գ. 17։ զ. 19։ բ Կորնթ. զ. 16։ [49] ա Պետր. բ. 5։ [1] Գործ. իա. 33։ իը. 17, 20։ Եփես. գ. 1։ զ. 20։ Փիլիպ. ա. 7, 13, 14, 17։ Կող. գ. 3, 18։ բ Տիմ. ա. 8։ բ. 9։ Փիլիմ. 1, 9։ [2] Կող. ա. 24։ բ Տիմ. բ. 10։ [3] Հռովմ. ա. 5։ Ժա. 13։ ա Կորնթ. գ. 1։ Եփես. գ. 7։ Կող. ա. 25։ [4] Գործ. ԻԹ. 15։ Ժգ. 2։ Հռովմ. Ժբ. 3։ Գող. ա. 16։ Վայր. 8։ [5] Գործ. իը. 17, 21։ իզ. 17, 18։ [6] Հռովմ. Ժզ. 25։ Կող. ա. 26, 27։ [7] Գող. ա. 12։ [8] Եփես. ա. 9, 10։ [9] ա Կորնթ. գ. 1։ Եփես. զ. 19։ [10] Գործ. Ժ. 28։ Հռովմ. Ժզ. 25։ Վայր. 9։ [11] Եփես. բ. 20։ [12] Գող. գ. 28, 29։ Եփես. բ. 14։ [13] Եփես. բ. 15, 16։ [14] Գող. գ. 14։ [15] Հռովմ. Ժե. 16։ Կող. ա. 23, 25։ [16] Հռովմ. ա. 5։ [17] Հռովմ. Ժե. 18, 19։ Եփես. ա. 19։ Կող. ա. 29։ [18] ա Կորնթ. Ժե. 9։ ա Տիմ. ա. 13, 15։ [19] Գող. ա. 16։ բ. 8։ ա Տիմ. բ. 7։ բ Տիմ. ա. 11։ [20] Եփես. ա. 7։ Կող. ա. 27։ [21] Վէր. 3։ Եփես. ա. 9։

կից հետեւ ծածկված էր Աստուծոյ մեծ[22]՝ նա որ ամէն բան արաւ[23]։

10 Որ հիմիկ իշխանութիւններին եւ պետութիւններին[24] որ երկնքումն են, եկեղեցոյ ձեռամբ յայտնըվի Աստուծոյ էն շատ կերպ[25] իմաստութիւն[26]։

11 Էն յաւիտենական առաջադրութեան պէս՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռամբ արաւ[27]։

12 Որ նորանով ունինք համարձակութիւն[28] եւ յուսով մօտենալըն՝ նորան հաւատալովին[29]։

13 Էրեհամար աղաչումեմ՝ որ չդձանձրանաք մեր նեղութենումն[30], որ ձեզ համար է[31]. որ ձեր փառքն է[32]։

14 Էրեհամար ծունր եմ դնում մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հօր առաջին։

15 Որ նորանից ամէն նահապետութիւն երկնքումն եւ երկրումն անուն է առնում[33]։

16 Որ իրան մեծ փառքին պէս տայ ձեզ[34], որ նորա հոգով ձեռամբն հաստատվիք[35] ներսի մարդումն[36]։

17 Որ Քրիստոս հաւատքով բնակվի ձեր սրտերումդ[37]. եւ սիրով արմատ քցած եւ հաստատված լինիք[38]։

18 Որ կարօղ լինիք ամէն սրբերին հետ իմանալ[39], թէ ի՞նչ է (էս խորհըրդիս) լայնութիւնն եւ երկարութիւնն եւ բարձրութիւնն եւ խորութիւնն։

19 Որ Քրիստոսի ամէն գիտութենից դերազանց սէրըն ճանաչէք. որ Աստուծոյ ամէն լիութենովն լցվիք[40]։

20 Էսպէս նորան՝ որ կարօղ է աւատութենով անել[41] էն ամէն բաներից աւելի՝ քանթէ էն՝ որ մենք խնդրումենք եւ իմանումենք[42], էն զօրութեան չափովն՝ որ մեզանում յաջողված է[43]։

21 Նորան (լինի) փառք եկեղեցումն[44], որ Քրիստոս Յիսուսումն է՝ ամէն պարտերի մէջն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ԳԼ · Գ

1 Աստուածն յորդորումէ նորանք որ իրար հետ մին լինեն. 7 Որ ամէն մէկիս տրվված է շնորհք. 11 Եւ ամէն հաւատացեալներին կերպ կերպ պարգեւներ տըւաւ, 12 Քրիստոսի մարմնոյ շինութեան համար, 15 Եւ Քրիստոսից բոլոր մարմինն իրար հետ կապված ամինք. 18 Պօղոս պատուէր կըտայ նորանց՝ որ հեթանոսների կերպովն չըդնան, 24 Եւ նոր մարդոյն հագնին, 25 Եւ դէն քցեն սուտ ասելըն, 29 Եւ ամէն գէշ խօսք նորանց բերանիցն չը դուրս գայ։

1 Աստեմն աղաչումեմ ձեզ ես՝ որ կապված եմ Տէրին համար[1], որ

---

[22] Հռովմ. ժգ. 25։ Վէր. 5։ ա Կորնթ. բ. 7։ Կող. ա. 26։ [23] Սաղմ. լգ. 6։ Ծննդ. ա. 3։ Կող. ա. 16։ Եբր. ա. 2։ [24] ա Կորնթ. բ. 7։ ա Տիմ. գ. 16։ [25] ա Պետր. ա. 12։ [26] Հռովմ. ը. 38։ Եփես. ա. 21։ Կող. ա. 16։ ա Պետր. գ. 22։ [27] Եփես. ա. 9։ [28] Եբր. դ. 16։ [29] Եփես. բ. 18։ [30] Գործ. ժգ. 21։ Փիլիպ. ա. 14։ աթես. գ. 3։ [31] Վէր. 1։ [32] բ Կորնթ. ա. 6։ [33] Եփես. ա. 10։ Փիլիպ. բ. 9–11։ [34] Հռովմ. թ. 23։ Եփես. ա. 7։ Փիլիպ. գ. 19։ Կող. ա. 27։ [35] Եփես. զ. 10։ Կող. ա. 11։ [36] Հռովմ. է. 22։ բ Կորնթ. դ. 16։ [37] Ծննդ. ժգ. 23։ Եփես. բ. 22։ [38] Կող. ա. 23։ բ. 7։ [39] Եփես. ա. 18։ [40] Ծննդ. ա. 16։ Եփես. ա. 23։ Կող. բ. 9, 10։ [41] Հռովմ. ժգ. 25։ Ծնոթ. 24։ [42] ա Կորնթ. բ. 9։ [43] Վէր. 7։ Կող. ա. 29։ [44] Հռովմ. ժա. 36։ ժգ. 27։ Եբր. ժգ. 21։ Եփես. գ. 1։ Փիլիպ. 1, 9։

ՀՆԱՂԱՑ գնաք ինչպէս որ էն կոչումին կը վայելէ՝ որ նորա մէջ կանչվեցաք[2]։

2 Ո՛մէն խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ, եւ իրար համբերեցէք սիրով[3]։

3 Ջ՛անք արէք հոգով միաբանութեան կապովն[4]։

4 Ո՛րն մարմին[5] եւ մի հոգի[6], ինչպէս որ եւ կոչվեցաք ձեր կոչումի մին յուսոյ մէջ[7]։

5 Ո՛րն Տէր է[8], մին հաւատք[9], մին մկրտութիւն[10]։

6 Ո՛րն Աստուած, եւ ամէնի Հայր[11] որ ամէնին վերայ (է) եւ ամէնին հետ՝ եւ մեր ամէնիս մէջն[12]։

7 Բայց մեր ամէն մէկիս տրվված է շնորհքն՝ Քրիստոսի պարգեւների չափին պէս[13]։

8 ՎրաՀամար եւ ասում. (թէ) վերբլալ բարձր տեղերն[14] գերի առաւ գերութիւնն, եւ մարդկանց պարգեւներ տուաւ[15]։

9 Էն՝ որ վեր էլաւ՝ ի՞նչ է, եթէ ոչ՝ որ առաջ վերեկաւ երկրի ցած կողմն[16]։

10 Ա՛ն՝ որ վերեկաւ, հենց նա է՝ որ ամէն երկինքներուցն աւելի բարձր վեր էլաւ[17], որ ամէնըն լցնէ[18]։

11 Եւ նա մին քանիսին տուաւ որ առաքեալ լինին, մին քանիսին մարգարէ[19], մինքանիսին աւետարանիչ[20], մինքանիսին հովիւ[21] եւ վարդապետ[22]։

12 Որ սրբերն հաստատվին՝ պաշտամունքի գործին համար[23], Քրիստոսի մարմնոյ[24] շինութեան համար[25]։

13 Մինչեւ որ ամէնքս հասնինք հաւատքի մին միաբանութեան մէջ՝ եւ Աստուծոյ որդոյ գիտութեան մէջ[26]. եւ կատարեալ մարդ լինինք Քրիստոսի կատարեալ հասակի չափովն[27]։

14 Որ սրանից հետեւ տղայ չըլինինք[28] շփոթված եւ էս կողմն էն կողմն շարժված վարդապետութեան ամէն[29] քամիներիցն[30] մարդկանց խաբեբայութեամբն, որ խորամանկութեամբ խաբեն եւ մոլորացնեն[31]։

15 Բայց ճշմարիտ լինինք սիրով[32], եւ աճինք ամէն բանով նորանո՛ւմ[33]՝ որ է գլուխն Քրիստոսն[34]։

16 Որ նորանից բոլոր մարմինն իրար հետ կապված՝ եւ շաղկապութեան ամէն խաղերովն յարմարված[35] էն զօրութեան չափովն՝ որ ամէն մէկ անդամումն է՝ էն մարմնոյ աճիլըն գործում՝ իրան անձըն սիրով շինելոյ համար։

---

[2] Փիլիպ. ա. 27։ Կող. ա. 10։ աԹես. բ. 12։ [3] Գործ. ի. 19։ Գալ. ե. 22, 23։ Կող. գ. 12, 13։ [4] Կող. գ. 14։ [5] Հռովմ. ժբ. 5։ ա Կորնթ. ժբ. 12, 13։ Եփես. բ. 16։ [6] ա Կորնթ. ժբ. 4, 11։ [7] Եփես. ա. 18։ [8] ա Կորնթ. ա. 13։ ը. 6։ ժբ. 5։ բ Կորնթ. ժա. 4։ [9] Ցոհ. գ. 3։ Վայր. 13։ [10] Գալ. գ. 27, 28։ Եբր. ջ. 6։ [11] Մատ. բ. 10։ ա Կորնթ. ը. 6։ ժբ. 6։ [12] Հռովմ. ժա. 36։ [13] Հռովմ. ժբ. 3. 6։ ա Կորնթ. ժբ. 11։ [14] Պսաղմ. կը. 18։ [15] Գործ. ե. 12։ Կող. բ. 15։ [16] Ցածն. գ. 13։ ջ. 33, 63։ [17] Գործ. ա. 9, 11։ ա Ցիմ. գ. 16։ Եբր. գ. 14։ է. 26։ ը. 1։ թ. 24։ [18] Գործ. բ. 33։ [19] ա Կորնթ. ժբ. 28։ Եփես. բ. 20։ [20] Գործ. իա. 8։ բ Ցիմ. գ. 5։ [21] Գործ. ի. 28։ [22] Հռովմ. ժբ. 7։ [23] ա Կորնթ. ժբ. 7։ [24] Եփես. ա. 23։ Կող. ա. 24։ [25] ա Կորնթ. ժգ. 26։ [26] Կող. բ. 2։ [27] ա Կորնթ. ժգ. 20։ Կող. ա. 28։ [28] Նոյ. իը. 9։ ա Կորնթ. ժգ. 20։ [29] Եբր. ժգ. 9։ [30] Մատ. ժա. 7։ [31] Հռովմ. ժգ. 18։ բ Կորնթ. բ. 17։ [32] Զաք. ը. 16։ բ Կորնթ. գ. 2։ Վայր. 25։ ա Ցիմ. գ. 18։ [33] Եփես. ա. 22։ բ. 21։ [34] Կող. ա. 18։ [35] Կող. բ. 19։

17 Ուրեմն ես եմ ասում՝ եւ վըկայում Տէրով· որ դուք մինէլ չըդնաք էն կերպովից[36] ինչպէս որ ուրիշ հեթանոսներն են գնում իրանց մըտքի ունայնութեանովից[37]։

18 Որ նորանց սրտերն խաւարված են[38], եւ օտար են Աստուծոյ կեանքից, էն տգիտութեան պատճառովն՝ որ նորանցում է[39]· իրանց սրտերի կուրութեան համար[40]։

19 Որ իրանց անձնների յոյսըն կարեցին[41], եւ իրանց անձներըն մատնեցին գիջըլութեան, ամէն պղծութեան գործքերի մէջ՝ ագահութեանով[42]։

20 Ձայց դուք Քրիստոսին էսպէս չըսովորեցիք։

21 Թէ որ նորանցից լսեցիք, եւ նորանով սովորեցիք՝ ինչպէս որ ճշմարտութիւն է Յիսուսում[43]։

22 Որ ձեզանից դուրս հանէք[44] հին մարդոյն[45] էն առաջին գնացքին պէս, նա՝ որ խաբերայ ցանկութիւններով ապականված է[46]։

23 Եւ ձեր մըտքի հոգուովն նորոգվիք[47]։

24 Եւ նոր մարդոյն հագնիք[48]՝ որ Աստուծոյն պէս ստեղծված է՝ ճշմարիտ արդարութեանով եւ սրբութեանով[49]։

25 Ուրահամար դէն քցեցէք սուտ ասելըն· խօսեցէք ճշմարտութիւնն ամէն մարդ իրան ընկերին հետ[50], ինչու որ մենք իրար անդամ ենք[51]։

26 Թէ որ բարկանաք՝ էլ մի մեղանչէք· Թող արեգակն ձեր բարկութեան վերայ չըմտնէ[52]։

27 Եւ պատճառ չըտաք սատանային[53]։

28 Ով՝ որ գողանում էր՝ Թող էլ չըգողանայ, լապց էլ աւելի աշխատի իրան ձեռներովն բարին գործ ելլոյ[54], որ բաւական ունենայ տալոյ՝ ումոր պէտք է[55]։

29 Ամէն դէշ խօսք չը գայ ձեր բերանիցն[56]· լապց էն՝ որ բարի է՝ շինութեան համար հարկաւոր[57], որ շնորհք տայ նորանց՝ որ լսումեն[58]։

30 Եւ մի տրտմացնէք Աստուծոյ սուրբ Հոգին[59], որ նորանով կընքվեցաք (Ἀπολύτρωσις)[60] դէպի փըրկութեան օրն[61]։

31 Ամէն դառնութիւն եւ բարկութիւն եւ սրտմտութիւն եւ աղաղակ[62] եւ հայհոյութիւն Թող վերառնվի ձեր միջիցն[63] ամէն չարութեան հետ[64]։

32 Իրար հետ քաղցր եղէք, գըթած[65] որ իրար ներէք, ինչպէս որ Աստուած էլ Քրիստոսովի մէջ նեըրեց[66]։

---

[36] Եփես· բ· 1-3· Վ·պ· 22· Կող· գ· 7· ա Պետ· գ· 3· [37] Հռովմ· ա· 21· [38] Գործ· իզ· 18· [39] Եփես· բ· 12· Գող· գ· 8· ա Թես·-ե·գ· 5· [40] Հռովմ· ա· 21· [41] ա Տիմ· գ· 2· [42] Հռովմ· ա· 24, 26· ա Պետ· գ· 3· [43] Եփես· ա· 13· [44] Կող· բ· 11· գ· 8, 9· Եփես· ժ· 1· ա Պետ· բ· 1· [45] Հռովմ· զ· 6· [46] Եփես· բ· 2, 3· վ·բ· 17· Կող· գ· 7· ա Պետ· գ· 3· [47] Հռովմ· ժ· 2· Կող· գ· 10· [48] Հռովմ· զ· 4· բ Կորնթ· ե· 17· Գող· զ· 15· Եփես· զ· 11· Կող· գ· 10· [49] Եփես· բ· 10· [50] Զաք· ը· 16· վ·բ· 15· Կող· գ· 9· [51] Հռովմ· ժ· 5· [52] Սղմ· գ· 4· լե· 8· [53] բ Կորնթ· բ· 10, 11· Ցաւ· գ· 7· ա Պետ· ե· 9· [54] Գործ· ի· 35· ա Թես· գ· 11· բ Թես· գ· 8, 11, 12· [55] Պաւղ· գ· 11· [56] Մաթ· ժ· 36· Եփես· ե· 4· Կող· գ· 8· [57] Կող· գ· 6· ա Թես· ե· 11· [58] Կող· գ· 16· [59] Եսայ· է· 13· կգ· 10· Եփէ· ժզ· 43· ա Թես· ե· 19· [60] Եփես· ա· 13· [61] Պաւղ· բ· 28· Հռովմ· բ· 23· Եփես· ա· 14· [62] Կո· ղ· գ· 8, 19· [63] Ցեր· գ· 2· Ցաւ· գ· 11· ա Պետ· բ· 1· [64] Ցեր· գ· 3· [65] բ Կորնթ· բ· 10· Կող· գ· 12, 13· [66] Մաթ· զ· 14· Մարկ· ժա· 25·

# ՊՂ · Ե

1 Ա՛ստուածդն նմանող լինելդ, 2 Սիրովդ գնալդ, 3 պոռնկութենիդ եւ սրբիդ չար բա-
ներդ պէն գնալդ, 17 Անհաւատութեան որդիքներին հետ մանակից չըլինելդ, 15 Շի-
տակ գնալդ, 18 Հոգով լավելդ չէ թէ գինով հարբենալդ՝ յորդորանքներդ եանէ.
22 գլաուէր կըսայ կանանցն՝ որ հնազանդ լինին իրանց մարդկանցն, 25 Եւ մարդ-
կանցն որ սիրեն իրանց կանանցըն, 32 ինչպէս որ Քրիստոսն սիրեց եկեղեցւոյն։

1 Ա՛ն մանօղ հլիք Ձ Ա՛ստուծոյն՝
ինչպէս սիրելի որդիքներ[1]։

2 Եւ սիրով գնացիք[2], ինչպէս
որ Քրիստոս էլ սիրեց մեզ, եւ իրան
անձըն մեզ համար մանեց[3], պա-
տարագ եւ մատաղ Ա՛ստուծոյ անոյշ
հոտ լինելոյն[4]։

3 Ասյց պոռնկութիւն եւ ամէն
պղծութիւն, կամ ագահութիւն[5]՝
թող էլ չանուանվի ձեր միջումդ,
ինչպէս որ սըրբերուն կըվայլէ[6]։

4 Եւ գարշութիւն, կամ յիմար
խօսքեր, կամ ծաղրաբանութիւն՝
որ չըվայելում[7], բայց էլ աւելի գո-
հութիւն։

5 Արան տեղեկացիք գիտացիք.
որ ամէն պոռնիկ կամ պիղծ՝ կամ
ագահ[8], որ նա կռապաշտ է[10]՝ ժա-
ռանգութիւն չունի Քրիստոսի եւ
Ա՛ստուծոյ արքայութենումն[11]։

6 Ձըլլինի որ մինն խաբէ ձեզ
ունայն խօսքերով[12]. ինչու որ հենց
էս պատճառովս էլ՝ Ա՛ստուծոյ բար-
կութիւնն գալիս է անհաւատու-
թեան[13] որդիքներուն վերայ[14]։

7 Ուրեմն մանակից մի լինիք նո-
րանց հետ։

8 Որ թէ եւ մին ժամանակ խա-
ւար էիք[15], էլ հիմիկ լոյս էք Տէ-
րումն[16]. լուսոյ որդիքներուն պէս
գնացիք[17]։

9 Ինչու որ լուսոյ պտուղն ամէն
բարութենով է, եւ արդարութե-
նով, եւ ճշմարտութենով[18]։

10 փորձեցիք՝ թէ ինչ է հաճոյ
Տէրին[19]։

11 Եւ մանակից մի լինիք[20] խա-
ւարի անպտուղ գործքերուն[21]. բայց
էլ աւելի յանդիմանեցիք (նո-
րանց)[22]։

12 Պատճառն որ էն՝ որ նորանց
միջումն ծածուկ գործվումէ, էն էլ
խօսքով ասել գալշելի է[23]։

13 Ասյց ամէն բան՝ լուսիցն որ
յանդիմանվի՝ յայտնի է լինում.

[1] Ա՛ստ. ե. 45, 48։ Գաղ. գ. 36։ Եփես. դ. 32։ [2] Ցվհ. ժգ. 3։ ժե. 12։ ա Թես.
գ. 9։ ա Ցվհ. գ. 11, 23։ դ. 21։ [3] Գաղ. ա. 4։ բ. 20։ Եփես. ե. 27։ Թ. 14, 26։ ժ.
10, 12։ ա Ցվհ. գ. 16։ [4] Ծննդ. ը. 21։ Ղեւտ. ա. 9։ բ Կորնթ. բ. 15։ [5] Հռովմ. գ.
13։ ա Կորնթ. գ. 18։ բ Կորնթ. ժբ. 21։ Եփես. դ. 19, 20։ Կող. գ. 5։ ա Թես. դ.
3, Ե՜սայ.։ [6] ա Կորնթ. ե. 1։ [7] Ա՛ստ. ժբ. 35։ Եփես. դ. 29։ [8] Հռովմ. ա. 28։ [9] ա
Կորնթ. գ. 9։ Գաղ. ե. 19, 21։ [10] Կող. գ. 5։ ա Տիմ. գ. 17։ [11] Գաղ. ե. 21։ Ցայտ.
իբ. 15։ [12] Եփես. ի՛ե. 8։ Ա՛ստ. իդ. 4։ Կող. բ. 4, 8, 18։ բ Թես. բ. 3։ [13] Հռովմ.
ա. 18։ [14] Եփես. բ. 2։ [15] Ե՜սայ. ի՛. 1։ Ա՛ստ. գ. 16։ Գործ. իգ. 18։ Հռովմ. ա.
21։ Եփես. բ. 11, 12։ դ. 18։ Տիտ. գ. 3։ ա Պետր. բ. 9։ [16] Ցվհ. ը. 12։ ժբ. 46։ բ
Կորնթ. գ. 18։ գ. 6։ ա Թես. ե. 5։ ա Ցվհ. բ. 9։ [17] Ղեւտ. ժգ. 8։ Ցվհ. ժբ. 36։
[18] Գաղ. ե. 22։ [19] Հռովմ. ժբ. 2։ Փիլիպ. ա. 10։ ա Թես. ե. 21։ ա Տիմ. բ. 3։
[20] ա Կորնթ. ե. 9, 11։ ժ. 20։ բ Կորնթ. գ. 14։ բ Թես. դ. 6, 14։ [21] Հռովմ. գ. 21։ ժգ.
12։ Գաղ. գ. 8։ [22] Ղեւտ. ժի. 17։ ա Տիմ. ե. 20։ [23] Հռովմ. ա. 24, 26։ Վեր. 3

ինչու որ ամէն բան՝ որ յայտնի է՝ էն լոյս է[24]։

14 Որահամար էլ ասուած. վեր-կաց դու՝ որ քնած ես[25], եւ վեր կանգնիր մեռելներից, եւ Քրիստոս կը լուսաւորէ քեզ[26]։

15 Նայեցէք թէ ինչպէս շիտակ գնաք. չէ թէ ինչպէս անխելքներն[27]։

16 Ոչ ինչպէս խելացիներն. գնեցէք ժամանակը[28], ինչու որ՝ օրերս չար են[29]։

17 Ընդհամար մի լինիք անմիտ[30], այլ իմացէք[31] թէ ինչ է Տէրի կամքն[32]։

18 Եւ մի հարբենաք գինով, որ նորանում անառակութիւն կայ, այլ աւելի լցուեցէք Հոգով[33]։

19 Ու ձեր սրտերում սաղմոսներ եւ օրհնութիւններ խօսէք՝ եւ հոգեւոր երգեր. որ Տէրին երգեք եւ սաղմոս ասէք ձեր սրտերումդ[34]։

20 Ամէն ժամանակ ամէն բանի վերայ գոհացեք Աստուածանից եւ Հօրից[35] մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովը[36]։

21 Իրար հնազանդ եղէք Քրիստոսի վախովը[37]։

22 Կանայքն ձեզ հնազանդ լինին իրանց մարդկանցն[38] ինչպէս Տէրին[39]։

23 Պատճառն որ մարդն է գլուխ կնկան գլուխն[40] ինչպէս որ Քրիստոս էլ եկեղեցոյ գլուխն է[41], եւ ինքն (իրան) մարմնոյ փրկիչն է[42]։

24 Ուստի ինչպէս որ եկեղեցին հնազանդ է լինում Քրիստոսին, էնպէս էլ կանայքն իրանց մարդկանցն ամէն բանի մէջ[43]։

25 Ա՛մարդիք՝ սիրեցէք ձեր կանանցդ, ինչպէս որ Քրիստոսն էլ սիրեց եկեղեցոյն[44], եւ իրան անձըն մատնեց նորա համար[45]։

26 Որ նորան սրբէ աւազանի սըրբութիւնովն[46] խօսքովն[47]։

27 Որ ինքն իրան առաջին փառաւոր կանգնացնէ եկեղեցոյն[48], որ իսկի չունենայ մին արատ կամ կեղտոտութիւն կամ ուրիշ էսպէսի բաներ[49], բայց որ սուրբ եւ անարատ լինի[50]։

28 Ընդ էնպէս պէտք է՝ որ մարդիքն իրանց կանանցն սիրեն, ինչպէս (ինց) իրան մարմինները. նա՝ որ իրան կնկանըն սիրում է, իրան անձըն է սիրում։

29 Ինչու որ իսկի մինն չըկայ՝ որ իրան անձըն ատէ, բայց կերակրում եւ պահպանում նորան. ինչպէս որ Քրիստոս էլ եկեղեցոյն։

30 Պատճառն որ նորա մարմնոյ անդամներն ենք, նորա մարմնիցն եւ նորա ոսկորներիցն[51]։

---

[21] Ցեղ. գ. 20, 21։ Եբր. գ. 13։ [25] Եսայ. կ. 1։ Հռովմ. ժգ. 11, 12։ ա Կորնթ. ժե. 34. ա Թես. ե. 6։ [26] Ցեղ. ե. 25։ Հռովմ. զ. ձ, 5։ Եփես. բ. 5։ Կող. գ. 1։ [27] Կող. գ. 5։ [28] Կող. գ. 5։ Գաղ. զ. 10։ [29] Ժող. ժա. 2։ Ժբ. 1։ Ցեղ. Ժբ. 35։ Եփես. ե. 13։ [30] Կող. գ. 5։ [31] Հռովմ. ժբ. 2։ [32] ա Թես. գ. 3։ ե. 18։ [33] Ընտ. ի. 1։ իգ. 29, 30։ Եսայ. ե. 11, 22։ Զաքար. իա. 3։ [34] Գործ. ժզ. 25։ ա Կորնթ. ժգ. 26։ Կող. գ. 16։ Ցեղ. ե. 13։ [35] Սաղմ. լգ. 1։ Եսայ. կգ. 7։ Կող. գ. 17։ ա Թես. ե. 18։ բ Թես. ա. 3։ [36] Եբր. ժգ. 15։ ա Պետր. բ. 5։ գ. 11։ [37] Փիլիպ. բ. 3։ ա Պետր. ե. 5։ [38] Ծննդ. գ. 16։ ա Կորնթ. ժգ. 34։ Կող. գ. 18։ Տիտ. բ. 5։ ա Պետր. գ. 1։ [39] Եփես. զ. 5։ [40] ա Կորնթ. ժա. 3։ [41] Եփես. ա. 22։ գ. 15։ Կող. ա. 18։ [42] Եփես. ա. 23։ [43] Կող. գ. 20, 22։ Տիտ. բ. 9։ [44] Կող. գ. 19։ ա Պետր. գ. 7։ [45] Գործ. ի. 28։ Գաղ. ա. 4։ բ. 20։ Վեր. 2։ [46] Ցեղ. գ. 5։ Տիտ. գ. 5։ Եբր. ժ. 22։ ա Ցեղ. ե. 6։ [47] Ցեղ. ժե. 3։ ժէ. 17։ [48] բ Կորնթ. ժա. 2։ Կող. ա. 22։ [49] Եբր. գ. 7։ [50] Եփես. ա. 4։ [51] Ծննդ. բ. 23։ Հռովմ. ժբ. 5։ ա Կորնթ. զ. 15։ ժբ. 27։

31 Արահամայ մարդն կրթողէ իւրան Յօրըն եւ մօրըն, եւ իւրան կնկան հետ կըգնայ[52], եւ երկուսն մին մարմին կըլլին[53]։

32 Էս խորհուրդս մեծ է, բայց ես Քրիստոսի եւ եկեղեցոյ վերայ եմ ասում։

33 Ինչպէս դուք էլ ամէն մէկդ ինչու որ ամէն մէկն իւրան կնկանըն Թող Էնպէս սիրէ, ինչպէս իւրան անձըն[54]. եւ կինն վախենայ իւրան մարդուցն[55]։

## Կ·Օ

1 Որդիքներըն իրանց ծնօղներին, 4 Հարբըն իրանց որդիքներին, 5 Ծառաներըն իրանց մարմնաւոր Տէրերին ունեցած պարտքերըն։ 10 Մեր կեանքն պէտք է որ մին հոգեւոր պատերազմի պէս լինի, 12 Չէ Թէ մարմնոյ Նեղի. 13 Հաւատացեալն զնքերըն, 18 Եւ նորանց գործածելոյ կերպըն։ 21 Ցիւրքոս սիրելի եղբօր հաւատարմութիւնն։

1 Որդիք՝ հնազանդ էլէք ձեր ծնօղներին Տէրոնէն. ինչու որ էն է արժանն[1]։

2 Պատուիր քո Յօրըդ եւ մօրըդ, որ էս առաջին պատուիրանն է աւետիքին հետ[2]։

3 Որ քեզ լաւ լինի, եւ երկար ապրես երկրի վերայ։

4 Հայրք՝ մի բարկացնէք ձեր որդիքներըդ[3], բայց մեծացրէք նորանց խրատով եւ Տէրի ուսմունքոնէն[4]։

5 Ծառաներ՝ հնազանդ էլէք ձեր մարմնաւոր տէրերին[5], վախով եւ դողալով[6] եւ ձեր սրտի միամտութեոնէն՝ ինչպէս որ Քրիստոսին[7]։

6 Ոչ Թէ մէնակ աչքերի առաջին ծառայելով՝ ինչպէս մարդոյ հաճոյ լինօղներն, բայց ինչպէս Քրիստոսի ծառաներն՝ որ Աստուծոյ կամքըն են անում[8]։

7 Լու յօժար մտքով են ծառայում ինչպէս Տէրին, եւ ոչ Թէ ինչպէս մարդկանց։

8 Գիտացէք որ ամէն մէկն ինչ բարի որ անէ, հենց էն կընդունի Տէրիցն[9]. Թէ ծառայ լինի եւ Թէ ազատ[10]։

9 Լու դուք տէրերդ՝ հենց էն արէք նորանց[11], որ ներելով անէք պատիժն[12]. գիտացէք որ նորանց եւ ձեզ էլ Տէր կայ երկնքումն[13], եւ նորա առաջին երեսպաշտութիւն չըկայ[14]։

10 Աղօտհետեւ զօրացէք Տէրով, եւ նորա զօրութեան կարողութեոնէն[15]։

11 Լու Աստուծոյ զէնքերըն հագէք. որ կարօղ լինիք սատանայի հնարքներին հակառակ կենալ[16]։

12 Ինչու որ մենք մարմնոյ եւ ա-

---

[52] Ծննդ. բ. 24։ Մարկ. ժԹ. 5։ Մարկ. ժ. 7, 8։ [53] ա Կորնթ. զ. 16։ [54] վեր. 25։ Կող. գ. 19։ [55] ա Պետր. գ. 6։ [1] Ընդհ. իդ. 22։ Կող. գ. 20։ [2] Եփես. ե. 12։ բ Օրին. ե. 16։ իե. 16։ Երեմ. լե. 18։ Եզեկ. իր. 7։ Մարկ. ա. 6։ Մարկ. ժե. 4։ Մարկ. է. 10։ [3] Կող. գ. 21։ [4] Ծննդ. ժը. 19։ բ Օրին. գ. 9։ զ. 7, 20։ ժա. 19։ Սաղմ. հը. 4։ Առակ. ժԹ. 18։ իր. 6։ իԹ. 17։ [5] Կող. գ. 22։ ա Ցիմ. զ. 1։ Տիտ. բ. 9։ ա Պետր. բ. 18։ [6] բ Կորնթ. է. 15։ Փիլիպ. բ. 12։ [7] ա Պետր. իԹ. 17։ Կող. գ. 22։ [8] Կող. գ. 22, 23։ [9] Հռոմ. բ. 6։ բ Կորնթ. ե. 10։ Կող. գ. 24։ [10] Գաղ. գ. 28։ Կող. գ. 11։ [11] Կող. գ. 1։ [12] Ղևտ. իե. 43։ [13] Ցուհ. ժգ. 13։ ա Կորնթ. է. 22։ [14] Հռոմ. բ. 11։ Կող. գ. 25։ [15] Եփես. ա. 19։ գ 16. Կող. ա. 11։ [16] Հռոմ. ժգ. 12։ բ Կորնթ. զ. 7։ վեր. 13։ ա Թես. ե. 8։

բիւնի հետ պատերազմ չունինք[17]. բայց իշխանութիւններին եւ պետութիւններին հետ[18], էս խաւար աշխարհքիս տիրապետողներին հետ[19], էն չար գէւերին հետ՝ որ երկնքի ներքեւն են:

13 Արդեամբ Աստուծոյ զէնքերըն առէք, որ կարօղ լինիք չարին հակառակ կենալ[20] չարութեան օրումն[21]:

14 Այս երբոր ամէնքն կատարէք, հաստատ կացէք. տեղումդ կանգնեցէք՝ ձեր մէջքերդ ճշմարտութեամբ պնտացրած[22], եւ արդարութեան զրահն հագած[23],

15 Այս ոտներն կօշիկ հագած՝ խաղաղութեան աւետարանի պատրաստութենովը[24]:

16 Այս ամէնին վերայ հաւատքի վահանըն առէք. որ կարօղ լինիք չարի ամէն մնուխ տրվված նետերըն անցնել[25]:

17 Այս փրկութեան սաղաւարտըն առէք[26], եւ հոգոյ սուրըն՝ որ Աստուծոյ խօսքն է[27]:

18 Ամէն աղօթքով եւ աղաչանքով աղօթք արէք ամէն ժամանակ հոգով[28]. եւ նորանում արթուն կացէք ամէն համբերութենով[29] եւ ամէն սրբերուն համար աղաչանք անելով[30],

19 Այս ինձ համար[31]. որ խօսք տրվի ինձ իմ բերանըս բանալոյ ժամանակն, որ համարձակութենով ցոյց տամ աւետարանի խորհուրդնեըն[32],

20 Որ նորա համար իմ կապանքումն[33] պատգամաւոր (Ելչի) եմ[34]. որ նորանով համարձակ լինիմ՝ ինչպէս որ էլ պէտք է ինձ խօսիլ[35]:

21 Այլ որ դուք էլ գիտենաք ինձ համար՝ թէ ինչ եմ գործում[36], ամէն բան ցոյց կըտայ ձեզ տիւքիկոս սիրելի եղբայրն՝ եւ Տէրումն հաւատարիմ պաշտօնեան[37]:

22 Որ նորան գրահամար ուղարկեցի ձեզ մօտ. որ դուք ինձ համար գիտենաք՝ եւ մխիթարվիք[38]:

23 Խաղաղութիւն (լինի) եղբարներին հետ, եւ սէր հաւատքով՝ Աստուած Հօրիցն եւ Տէր Յիսուս Քրիստոսիցն[39]:

24 Շնորհք (լինի) էն ամէնին հետ, որ մեր Տէր Յիսուսին Քրիստոսին սիրումեն առանց ապակառնութեան[40]. ամէն:

Լրիւ ասացող վերջին գրչագիրքն՝ Տիւրինի ձեռագրէն:

[17] Պտրն. ժգ. 17: ա Կորնթ. ժե. 50: [18] Հռովմ. ը. 38: Եփես. ա. 21: Կող. բ. 15: [19] Գաղ. իբ. 53: Ցովհ. ժբ. 31: ժգ. 30: Եփես. բ. 2: Կող. ա. 13: [20] բ Կորնթ. ժ. 4: Ա Յհ. 11: [21] Եփես. ե. 16: [22] Եսայ. ժա. 5: Գաղ. ժբ. 85: ա Պետր. ա. 13: [23] Եսայ. նժ. 17: բ Կորնթ. զ. 7: ա Թես. ե. 8: [24] Եսայ. ծր. 7: Հռովմ. ժ. 15: [25] ա Յովհ. ե. 4: [26] Եսայ. նժ. 17: ա Թես. ե. 8: [27] Եբր. դ. 12: Ցայտ. ա. 16: բ. 16: ժէ. 15: [28] Գաղ. ժբ. 1: Հռովմ. ժբ. 12: Կող. գ. 2: ա Թես. ե. 17: [29] Պտրն. իգ. 41: Պսլ. ժգ. 33: [30] Եփես. ա 16: Փիլէպ. ա. 4: ա Տիմ. բ. 1: [31] Գործ. դ. 29: Կող. գ. 3: բ Թես. գ. 1: [32] բ Կորնթ. գ. 12: [33] Գործ. իզ. 29: իբ. 20: Եփես. գ. 1: Փիլէպ. ա. 7, 13, 14: բ Տիմ. ա. 16: բ. 9: Փիլէմ. 10: [34] բ Կորնթ. ե. 20: [35] Գործ. իբ. 31: Փիլէպ. ա. 20: ա Թես. բ. 2: [36] Կող. գ. 7: [37] Գործ. ի. 4: բ Տիմ. գ. 12: Տիտ. գ. 2: [38] Կող. գ. 8: [39] ա Պետր. ե. 14: [40] Ցիտ. բ. 7:

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԸՆԾՅՈՒՂՑ

ԸՆ ՓԻԼԻՊԷՍԻՈՆ

### ԳԼՈՒԽ ԸՆԴՀԱՆՈՒՐ

3 Պօղոս գահանուէ Աստուածմանից եւ ցանկանուէ Փիլիպեցոց համար Քրիստոսի սիրոյն՝ իրանց հաւատքի պտուղներին եւ չարչարանքներին հաղորդ լինելոյն համար, 9 եւ թէ ամէն օր Աստուծոյ աղօթք կանէ որ նորանք ընդհարուէ հարստանան. 12 ցոյց կըտայ թէ Քրիստոսի հաւատքըն յառաջացաւ հռովմայի մէջ իրան կապանքների պատճառուին, 20 եւ թէ ի՞նչպէս ցանկանուէ Քրիստոսին փառաւորել թէ իրան կեանքոյն եւ թէ մահոյն. 27 ցորդորուէ նորանք որ ամէն կերպով մին լինին Աւետարանի հաւատքին համար, 28 եւ խնկէ չը՛վախենան էն հակառակօղների չարչարանքներից։

1 ՊՕՂՈՍ ԵՒ ՏԻՄՈԹԷՈՍ Յիսուսի Քրիստոսի ծառաներն[1] ամէն սրըբերին Յիսուս Քրիստոսումն, որ փիլիպեցոց կողմերումն են՝ եպիսկոպոսներին եւ սարկաւագներին հետ։

2 Շ ՆորՀք (լինի) ձեզ հետ եւ խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցն, եւ Տէր Յիսուս Քրիստոսիցն[2]։

3 Գոհանումեմ իմ Աստուածոյ ամէն ժամանակ որ ձեզ յիշումեմ[3],

4 Որ ամէն ժամանակ իմ ամէն աղաչանքներումն՝ ձեզ ամէնիդ համար աղօթք եմ անում ուրախութեամբ.

5 Ձեր աւետարանին հաղորդ լինելոյն համար՝ էն առաջին օրիցն մինչեւ հիմիկ[4]։

6 Եւ հաստատ յոյս ունիմ նրա վերայ՝ թէ նա՝ որ ձեզանում սկսեց էս բարի գործըս[5], էլ կըկատարէ մինչեւ Յիսուսի Քրիստոսի օրն[6]։

7 Ինչպէս որ իրաւունք է երեւում ինձ մտածելոյ էս (բանըս) ձեզ ամէնիդ համար, ինչու որ ձեզ իմ սրտիս մէջն ունիմ[7] իմ կապանքներումն[8], եւ իմ պատասխան տալոյ եւ

[1] ա Կոր. ա. 2։ [2] Հռով. ա. 7։ բ Կորնթ. ա. 2։ ա Պետր. ա. 2։ [3] Հռով. ա. 8, 9։ ա Կորնթ. ա. 4։ Եփես. ա. 15, 16։ Կող. ա. 3։ ա Թես. ա. 2։ բ Թես. ա. 3։ [4] Հռով. ժբ. 13։ ժե. 26։ բ Կորնթ. ը. 1։ Փիլիպ. դ. 14, 15։ [5] Ցովհ. զ. 29։ ա Թես. ա. 3։ [6] վ. յայր. 10։ [7] բ Կորնթ. դ. 2։ ե. 3։ [8] Եփես. գ. 1։ զ. 20։ Կող. դ. 3, 18։ բ Տիմ. ա. 8։

աւետարանին Հաստատելոյ ժամա-
նակումն[9]. որ դուք ամենքդ ինձ հետ
ընդհաղո Հաղորդ էլաք[10]:

8 Վստուած ինձ վկայ է[11], թէ
ինչպէս ձեզ ամենիդ ցանկանումեմ
Վրիստոսի Յիսուսի քաղցր սի-
րովն[12]:

9 Եւ ես աղօթք եմ անում. որ
ձեր սէրն աւելի եւ աւելի Հարստա-
նայ գիտութիւնով եւ ամեն իմաս-
տութիւնով[13].

10 Որ դուք լաւն ընտրէք[14], որ
Հաստատ լինէք եւ առանց գայթակ-
ղութեան[15] Վրիստոսի օրումն[16]:

11 Վդրգարութեան պտուղներով
լցված՝ Յիսուսի Վրիստոսի ձե-
ռովն[17], Վստուծոյ փառքին եւ գո-
վասանքին Համար[18]:

12 Այսմհետեւ եղբարք. որ գի-
տենաք. թէ ինչ բան որ ինձ վերայ
էլաւ, աւելի եւ աւելի յաջողեց ա-
ւետարանի առաջանալն:

13 Վ՚ինչեւ որ իմ կապանքներս
Վրիստոսումն յայտնի էլան տիւանի
բոլոր տան մէջն՝ եւ ուրիշ ամենքին
էլ[19].

14 Եւ շատ եղբարներին՝ Տէ-
րումն, որ իմ կապանքներովս սիրտ
առին՝ որ աւելի Համարձակ էլան՝
առանց վախի Վստուծոյ բանըն խո-
սելոյ:

15 Վ՚ին քանիսն նախանձաւորու-
թենով եւ հակառակութեան պատ-
ճառով[20], եւ մին քանիսն բարէյս-
ժար մտքով քարոզումեն Վրիստո-
սին:

16 Եւ մինքանիսն սիրով. ինչու
որ գիտումեն թէ աւետարանին ջա-
տագովելոյ Համար կանգնած եմ:

17 Եւ մինքանիսն ծուռ մտքով
Վրիստոսին պատմումեն, եւ ոչ թէ
պարզ կամքով. ինչու որ կարծումեն
թէ իմ կապանքներիս վերայ նեղու-
թիւն բերեն[21]:

18 Ինչ էս ի՞նչ է. որ կերպով
որ լինի, թէ պատճառանքով՝ եւ թէ
ճշմարտութենով՝ Վրիստոսն պատ-
մվումէ. եւ սրանմով ուրախ եմ՝
եւ էլ ուրախ կը լինիմ:

19 Ինչու որ գիտումեմ՝ թէ էս
բանս ինձ փրկութեան պատճառ կը-
լինի ձեր աղօթքներովն[22]՝ եւ Յի-
սուսի Վրիստոսի Հոգոյ պարգեւնե-
րովն[23],

20 Ինչպէս որ ես սպասումեմ եւ
յոյս ունիմ[24]. որ իսկի մին բանով
ամենի չընկնիմ[25], բայց ամեն Հա-
մարձակութենով՝ ինչպէս որ ամեն
ժամանակ, հիմիկ էլ Վրիստոս
փառաւորվի իմ մարմնումս, թէ
կեանքով՝ եւ թէ մահով[26]:

21 Պատճառն որ ինձ Համար Վր-
իստոս՝ կեանք է, եւ մեռնելն շահ:

22 Բայց թէ որ ես մարմնոյս
կեանքն իմ գործոյս պտուղ է քե-
րում. էլ ես չեմ գիտում՝ թէ որը
ընտրեմ:

23 Երկուսիցն նեղացած եմ[27].
դուրս գալոյ՝ եւ Վրիստոսի հետ լի-
նելոյ ցանկանալն՝ աւելի լաւ եմ
Համարում[28]:

24 Եւ էստեղ մարմնումն կենալն

[9] Վ.Յոր. 16: [10] Փիլիպ. գ. 14: [11] Հռովմ. ա. 9: Թ. 1: Գաղ. ա. 20: ա Թես. բ. 5: [12] Փիլիպ. բ. 26. գ. 1: [13] ա Թես. գ. 12: Փիլիմ. 6: [14] Հռովմ. բ. 18: Ժր. 2: Եփես. ե. 10: [15] Գործ. իգ. 16: ա Թես. գ. 13: ե. 23: [16] ա Կորնթ. ա. 8: [17] Ցածր. ժե. 4, 5: Եփես. բ. 10: Կող. ա. 6: [18] Ցածր. ժե. 8: Եփես. ա. 12, 14: [19] Փիլիպ. գ. 23: [20] Փիլիպ. բ. 3: [21] Վ.Եր. 7: [22] բ Կորնթ. ա. 11: [23] Հռովմ. ը. 9: [24] Հռովմ. ը. 19: [25] Հռովմ. ե. 5: [26] Եփես. գ. 19, 20: [27] բ Կորնթ. ե. 8: [28] բ Տիմ. գ. 6:

ինայն՝ աւելի հարկաւոր (է) ձեզ համար:

25 Ու հաստատ յուսով էս եմ գիտեմ, որ կրկնամ եւ կըմնամ ձեզ ամենիդ հետ[29], որ գոյք առաքանաք եւ ուրախ լինիք հաւատքումն:

26 Որ ձեր պարծանք աւելի լինի Յիսուս Քրիստոսումն ինձանով[30]՝ երբոր ես միւնէյ կըգամ ձեզ մօտ:

27 Միայն թէ ինչպէս որ կըվայելէ աւետարանին՝ կենցէս գնացէք[31], որ թէ գամ եւ տեսնեմ ձեզ, եւ թէ հեռու լինիմ եւ լսեմ ձեր զանից՝ որ հաստատ էք հինց մին հոգով[32], եւ (ինձ հետ) մին մտքով[33] կանգնիք աւետարանի հաւատքին համար[34]:

28 Ու իսկի մին բանով մի վախեցնաք էն հակառակողներից, որ էն նորանց կորստի նշան է[35], եւ ձեր փրկութեան[36]:

29 Ու ձեզ Աստուածանից էգ շնորհք էլաւ Քրիստոսի համար[37], որ չէ թէ միւնակ հաւատաք նորան, բայց էլ նորա համար չարչարվիք[38]:

30 Ու հինց էն պատերազմ քաշէք[39] որ ինձանում տեսէք, եւ հիմիինձանից լսումէք[40]:

## ԳԼ. Ը

1 Աւաքեաւն յորդորումէ նորանք՝ որ մին սէր եւ խոնարհութիւն ունենան, եւ սրահամար քրիստոսի խոնարհութիւնն եւ նորա բարձրանալն օրինակ է բերում. 12 խրատումէ որ ահով եւ դողալով իրանց անձների փրկութիւնն գործեն, եւ լոյս աւօդներ երեւին աշխարհի մէջն, 16 Եւ իրան պարծանք լինի նորանց հաւատքն՝ որ ինքն զուր տեղն չզվազեց եւ զուր չաշխատեց, եւ ուրախ է թէ եւ մատաղ լինի նորանց հաւատքի պատարագին վերայ: 19 Ինքն յոյս ունի որ Տիմոթէոսին ուղարկէ նորանց մօտ. եւ նորա իրան հետ արած ծառայութիւնն Աւետարանին համար գովումէ, 25 Ինչպէս որ Եպափրոդիտոս եղբօրն էլ ուղումէ որ նորանց ուղարկէ:

1 Աւրեմն թէ որ մին մխիթարութիւն կայ Քրիստոսումն, թէ սիրով սրտի հովութիւն, թէ հոգով հաղորդութիւն[1], թէ գթածութիւն եւ ողորմութիւն[2].

2 Ապա լցրէք իմ ուրախութիւնը[3]. (որ) հինց մին միտք ունենաք, հինց մին սէր ունենաք ձեր միջումէ, մին շունչ, մին խորհուրդ[4]:

3 Ոսկի մին բան չըլինի գրդռուածով[5], բայց խոնարհութիւնով թող մինն մէկէլին իրան անձնիցն աւելի լաւ համարէ[6]:

4 Ընձներիդ բանին մէնակ մտիկ չըտաք, բայց ամէն մէկն իրան ընկերի բանին[7]:

5 Ձեր ամէն մէկն թող էն մտածէ, որ էլ Քրիստոս Յիսուսումն (էլաւ)[8]:

[29] Փիլիպ. բ. 24: [30] բ Կորնթ. ա. 14: ե. 12: [31] Եփես. դ. 1: Կող. ա. 10: ա Թես. բ. 12: դ. 1: [32] Փիլիպ. դ. 1: [33] ա Կորնթ. ա. 10: [34] Յուդա. 3: [35] բ Թես. ա. 5: [36] բ Տիմ. բ. 11: [37] Գործ. ե. 41. Հռոմ. ե. 3: [38] Եփես. բ. 8: [39] Կող. բ. 1: [40] Գործ. ժզ. 19, Խոյնը: ա Թես. բ. 2: [1] բ Կորնթ. ժգ. 13: [2] Կող. գ. 12, [3] Յով. գ. 29: [4] Հռոմ. ժբ. 16: ժե. 5: ա Կորնթ. ա. 10: բ Կորնթ. ժգ. 11: Փիլիպ. ա. 27: գ. 16: գ. 2: ա Պետր. գ. 8: [5] Գաղ. ե. 26: Փիլիպ. ա. 15, 17: Յակ. գ. 14: [6] Հռոմ. ժբ. 10: Եփես. ե. 21: ա Պետր. ե. 5: [7] ա Կորնթ. ժ. 24. 33: ժգ. 5: [8] Մատթ. ժա. 29: Յովհ. ժգ. 15: ա Պետր. բ. 21: ա Յովհ. բ. 6:

6 Որ Աստուծոյ կերպարանքուն
լինելով[9], իսկի յափշտակութիւն
չդհամարեց Աստուծոյ հաւասար լի-
նիլըն[10]։

7 Այլ իրան անձըն ունայնացու-
ց[11], եւ ծառայի կերպարանքըն
առաւ[12], եւ մարդոյ նման էլաւ՝ եւ
կերպարանքով մարդոյ պէս գըտա-
ւաւ[13]։

8 Իրան անձըն խոնարհացուց,
եւ հնազանդ էլաւ մինչեւ ի մահ՝ եւ
էլ խաչի մահն[14]։

9 Վասնզահանար Աստուած էլ ա-
ւելի բարձրացուց նորան[15], եւ նո-
րան շնորհեց (էնպէսի) անուն, որ
ամէն անուններիցն առելի բարձր է[16]։

10 Որ Յիսուսի Քրիստոսի անու-
նովն ամէն ծունր դնվի երկնաւոր-
ներին եւ երկրաւորներին եւ երկրի
տակ լինողներին[17]։

11 Եւ ամէն լեզու դաւանի, թէ
Յիսուս Քրիստոս Տէր է Հօր Աս-
տուծոյ փառքին համար[18]։

12 Ուրեմն իմ սիրելիներս, ինչ-
պէս որ ամէն բանով հնազանդվե-
ցաք՝ չէ թէ միայն իմ գալոյ ժամա-
նակն, բայց էլ աւելի հիմիկ՝ երբոր
հեռու եմ ձեզանից[19], ահով եւ դո-
ղալով գործեցէք ձեր անձնների
փրկութիւնըն[20]։

13 Պատճառն որ Աստուած է՝ որ
յաջողումէ ձեզանում կամենալն եւ
անելն իրան հաճութեան պէս[21]։

14 Ամէն բան գործեցէք առանց
տրտնջելոյ[22] եւ փըսիրալոյ[23]։

15 Որ լինիք անբիծ եւ անարատ՝
Աստուծոյ որդիք[24], անմեղ[25] էն կա-
մակորդ եւ ծուռ ազգումից[26]։ որ
նորանց միջումն երեւիք ինչպէս լոյս
տուօղներն աշխարհքի միջն[27]։

16 Կենաց խօսքըն պահելով ձեր
անձներումդ՝ որ էն պարծանք լինի
ինձ Քրիստոսի օրումն[28]։ որ զուր
տեղն չըվազեցի՝ եւ զուր չաշխատե-
ցի[29]։

17 Այլ թէ եւ մատաղ լինիմ
ձեր հաւատքի պատարագին[30] եւ
պաշտամունքին վերայ[31] էլ ուրախ
եմ՝ եւ ձեզ ամենիդ հետ ուրախա-
նումեմ[32]։

18 Ինչպէս էլ դուք ուրախ էլէք՝
եւ ինձ հետ ուրախացէք։

19 Այլ յոյս ունիմ Տէր Յիսու-
սումն, որ Տիմոթէոսին շուտով ու-
ղարկեմ ձեզ մօտ[33], որ իմ սիրտս
էլ հանգիստ լինի, երբոր ձեզ վերայ
մին բան իմանամ։

20 Պատճառն որ չունիմ մինն
ինձ հետ միասիրտ, որ ընտանոյ պէս
հոգս տանի ձեզ համար[34]։

21 Ինչու որ ամէնքն իրանց բա-
ներին են մանգալիս, եւ չէ թէ Յի-

[9] Ց·Ղ·Ե· ա· 1· 2։ Ժէ· 5։ բ Կորնթ· գ· 4։ Կող· ա· 15։ Եբր· ա· 3։ [10] Ց·Ղ·Ե· Ե· 18։ Ժ· 33։ [11] Ա·Ղ·Ր· Իս· 6։ Ես·ց· Ծգ· 3։ Դատ· Թ· 26։ Մրկ· Թ· 11։ Հռով· Ժէ· 3։ [12] Ես·ց· Խը· 1։ Թղ· 3, 6։ Ծբ· 13։ Ծգ· 11։ Եփէ· Լգ· 23, 24։ Զաք· գ· 8։ Մատ· ի· 28։ Գործ· Իր· 27։ [13] Ց·Ղ·Ե· ա· 14։ Հռով· ա· 3։ ը· 3։ Գաղ· գ· 4։ Եբր· բ· 14, 17։ [14] Մատ· իզ· 39, 42։ Ց·Ղ·Ե· Ժ· 18։ Եբր· Ե· 8։ Ժբ· 2։ [15] Ց·Ղ·Ե· Ժէ· 1, 2, 5։ Գործ· բ· 33։ Եբր· բ· 9։ [16] Եփէս· ա· 20, 21։ Եբր· ա· 4։ [17] Ես·ց· Խե· 23։ Մատ· Իը· 18, Հռով· Ժգ· 11։ Յայտ· Ե· 13։ [18] Ց·Ղ·Ե· Ժգ· 13։ Գործ· բ· 36։ Հռով· Ժգ· 9։ ա Կորնթ· ը· 6։ Ժբ· 3։ [19] Փիլիպ· ա· 5։ [20] Եփէս· զ· 5։ [21] բ Կորնթ· գ· 5։ Եբր· Ժգ· 21։ [22] ա Կորնթ· Ժ· 10։ ա Պետ· գ· 9։ [23] Հռով· Ժգ· 1։ [24] Մատ· Ե· 45։ Եփէս· Ե· 1։ [25] ա Պետ· բ· 12։ [26] բ Օրին· Լբ· 5։ [27] Մատ· Ե· 14, 16։ Եփէս· Ե· 8։ [28] բ Կորնթ· ա· 14։ ա Թես· բ· 19։ [29] Գաղ· բ· 2։ ա Թես· գ· 5։ [30] բ Տիմ· գ· 6։ [31] Հռով· Ժե· 16։ [32] բ Կորնթ· է· 4։ Կող· ա· 24։ [33] Հռով· Ժզ· 21։ ա Թես· գ· 2։ [34] Սամ· Ծե· 13։

սուսի Քրիստոսի բաներին[35]։

22 Նայց դուք էլ փորձելիք դիտումնքը նորան, որ ինչպես օրդի (իրան) Հօրն՝ ենպէս ինձ հետ ծառայից աւետարանին[36]։

23 Ուրեմն յոյս ունիմ, որ սորան ուղարկեմ շուտով հենց էն ժամանակումն՝ որ իմ անձիս համար կըտեղեկանամ։

24 Նայց յոյս ունիմ Տէրումն, որ հենց ես էլ շուտով գամ[37]։

25 Նայց լաւ համարեցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրըն՝ իմ գործոյս[38] եւ զինուորութեան ընկերըն[39], էն ձեր առաքեալըն[40], եւ իմ պէտք լինող բաներն պաշտօնեան՝ ուղարկեմ ձեզ մօտ[41]։

26 Ինչու որ հենց ինքն էլ խիստ փափագ ունի, որ ձեզ ամենիդ տեսնէ[42], եւ հոգս էր քաշում՝ որ դուք լսել էիք՝ թէ նա հիւանդացաւ։

27 Եւ իրաւի որ հիւանդացաւ մինչեւ մահի մօտ, բայց Աստուած ողորմեցաւ նորան. չէ թէ մէնակ նորան, բայց ինձ էլ, որ տրտմութիւն տրտմութեան վերայ չը քաշեմ։

28 Ուրեմն վազով ուղարկեցի նորան, որ տեսնելով նորան մինէլ ուրախ լինիք, եւ ես առանց տրտմութեան լինիմ։

29 Ընդունեցէք նորան Տէրումն ամէն ուրախութեանով, եւ էնպէսներին պատուական համարեցէք[43]։

30 Ինչու որ Տէրի գործոյ համար մինչեւ ի մեռնիլն մօտեցաւ. հոգոյ չափ չանք անելով, որ լցնէ ինչ որ ձեզ պակասումէր իմ ծառայութեանս կողմանէ[44]։

## Կ· Գ

2 Պատուէր կըտայ նորանց որ զգոյշ կենան էն չար մշակներից որ թլփատութիւն են աւետարանում, 4 Եւ ցոյց կըտայ թէ ինքն էլ աւելի համարձակութիւն ունի օրէնքի արդարութեան վերայ քան թէ նորանք, 7 Բայց էն վնաս եւ ազէ է համարում որ քրիստոսին ստանայ եւ նորա արդարութիւնն ունենայ որ նորա հաւատքից է, 12 Կըխոստովանի թէ՝ ոչ թէ հենց հիմի ինքն կատարեալ էլած է, բայց հետեւում որ հասնէ նրան, 15 Զորդորում նորանց ամենին՝ որ էս մտածեն, 17 Եւ իրան նմանող լինեն, եւ նորանք իրան կերպով գնացօղներին օրինակ ունենան, 18 Աւաքսանի լալով է ասում նորանց, որ քրիստոսի խալի թշնամիներից Լոկվին՝ որ նորանց վերջն կորուստ է, եւ մնակ երկրաւոր բաներըն են մտածում։

1 Աչսու հետեւ իմ եղբայրք, ուրախ եղէք Տէրումն[1]. հենց մին բան գրելն ձեզ՝ ինձ համար ձանձրութիւն չէ՝ եւ ձեզ շատ զգուշութիւն է տալիս։

2 Զգոյշ կացէք էն շներից[2], զգոյշ կացէք էն չար մշակներից[3], զգոյշ կացէք էն ծայրի կտրածներից[4]։

3 Ինչու որ թլփատութիւնն մենք ենք[5], որ Աստուծոյ հոգովն պաշտումենք[6], եւ Քրիստոս Յիսուսովն

---

35 ա Կորնթ. ժ. 24, 33: ժգ. 5: բ Տիմ. գ. 9, 16: 36 ա Կորնթ. գ. 17: ա Տիմ. ա. 2: բ Տիմ. ա. 2: 37 Փիլէմ. ա. 25: Փիլիմ. 22: 38 Փիլէմ. գ. 18: 39 Փիլիմ. 2: 40 բ Կորնթ. ը. 23: 41 բ Կորնթ. ժա. 9: Փիլէմ. գ. 18: 42 Փիլէմ. ա. 8: 43 ա Կորնթ. ժզ. 18: ա Թես. ե. 12: ա Տիմ. ե. 17: 44 ա Կորնթ. ժզ. 17: Փիլէմ. գ. 10: 1 բ Կորնթ. ժգ. 11: Փիլէմ. գ. 1: ա Թես. ե. 16: 2 Ելսէ. ծգ. 10: Գաղ. ե. 15: 3 բ Կորնթ. ժա. 13: 4 Հռոմ. բ. 28: Գաղ. ե. 2: 5 բ Օրէն. ժ. 16: լ. 6: Երեմ. գ. 4: Հռոմ. բ. 29: գ. 11, 12: Կող. բ. 11: 6 Յովհ. գ. 23, 24: Հռոմ. է. 6:

պարծենումենք, եւ մարմնով պարծանք չենք անում[7]։

4 Թէ եւ ինձ ես էլ էն համարձակութիւն ունեմ մարմնոյ կողմանէ. թէ որ մին ուրիշ մարդ կարծէ որ մարմնով համարձակ լինի՝ էլ աւելի ես[8]։

5 Որ ութ օրուայն թլփատուեցայ[9], իսրայէլի ազգիցն[10] բենիամինի ցեղիցն[11], եբրայեցի եբրայեցուց (ծընված)[12], օրինաց կողմանէ՝ փարիսեցի[13]։

6 Ջ եկեղեցւոյն հալածումի նկատմամբ[14]՝ հալածումի եկեղեցւոյն[15], օրէնքի արդարութեանն մնիկ տաքով[16] անարատ էի[17]։

7 Բայց ինչ բան որ ինձ շահ էր, էն ինձա եմ համարում Քրիստոսի համար[18]։

8 Այ հենց ամէն բան էլ ինձա եմ համարում էն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութեանն համար[19], որ նորա համար ամէն բանից զրկվեցայ՝ եւ (նորանց) ագը եմ համարում, որ Քրիստոսին ստանամ,

9 Այ նորանում գտնըվիմ. չէ որ իրրեն իմ արդարութիւնըս ունենամ՝ որ օրէնքիցն է[20], բայց էն՝ որ Քրիստոսի հաւատքիցն է. որ էն արդարութիւնն Աստուածանից է[21]։

10 Որ հաւատքով ճանաչեմ նորան՝ եւ նորա յարութեան զօրութիւնն՝ եւ նորա չարչարանքին մասնակից լինեն, որ նորա մահին նման կերպարանվիմ[22]։

11 Որ լինի թէ մեռելների յարութեանն հասնիմ[23]։

12 Չէ որ՝ իրրեն հենց հիմիկ առած լինիմ[24], կամ թէ հենց հիմիկ կատարեալ եղած լինիմ[25]. հետեւումեմ որ հասնեմ նրան, որ նորա համար էլ հենց Քրիստոս Յիսուսից բռնըված եմ։

13 Ախպերք՝ ես իմ անձըս չեմ համարում՝ որ հասած լինիմ. բայց մին բան է՝ էն որ յետեւի բաներըն մոռացել եմ[26], եւ դէպի առաջ լեռնոյնների հասնելը ջանք եմ անում[27]։

14 Միտք դնելով վազումեմ[28] դէպի Աստուծոյ (երկնաւոր) կոչումի նպատակն՝ Քրիստոս Յիսուսումն[29]։

15 Ալ հասկամար դուք ամէնդ՝ որ կատարեալ էք[30], էս մտածեցէք[31]. եւ թէ որ մին ուրիշ բան մտածէք, էն էլ Աստուած կը յայտնէ ձեզ։

16 Միայն թէ նորանում որ մենք հասինք[32] հենց մին կերպով մտածենք[33] եւ հենց մին կանոնում միաբան լինինք[34]։

17 Ինձ նմանօղ եղէք եղբարք[35], եւ գիտացէք էնպէսներին, որ էն կերպով են գնում ինչպէս որ մեզ օրինակ ունիք ձեզ համար[36]։

---

[7] Գաղ. գ. 14։ [8] Կորնթ. ժա. 18, 21։ [9] Ծննդ. ժէ. 12։ [10] ը Կորնթ. ժա. 22։ [11] Հռոմ. ժա. 1։ [12] ը Կորնթ. ժա. 22։ [13] Գործ. իգ. 6։ իզ. 4, 5։ [14] Գործ. իբ. 3։ Գաղ. ա. 13, 14։ [15] Գործ. ը. 3։ Թ. 1։ [16] Հռոմ. ժ. 5։ [17] Ղուկ. ա. 6։ [18] Մատթ. ժգ. 44։ [19] Նայ. ծգ. 11։ Եբրայ. Թ. 23, 24։ Յովհ. ժէ. 3։ ա Կորնթ. բ. 2։ Կաղ. բ. 2։ [20] Հռոմ. ժ. 3, 5։ [21] Հռոմ. ա. 17։ գ. 21, 22։ Թ. 30։ ժ. 3, 6։ Գաղ. բ. 16։ [22] Հռոմ. գ. 3–5։ ը. 17։ բ Կորնթ. դ. 10, 11։ բ Տիմ. բ. 11, 12։ ա Պետր. դ. 13։ [23] Գործ. իզ. 7։ [24] ա Տիմ. գ. 12։ [25] Եբր. ժբ. 23։ [26] Սաղմ. խե. 10։ Ղուկ. Թ. 62։ բ Կորնթ. ե. 16։ [27] ա Կորնթ. Թ. 24, 26։ Եբր. գ. 1։ [28] բ Տիմ. գ. 7, 8։ Եբր. ժբ. 1։ [29] Եբր. գ. 1։ [30] ա Կորնթ. բ. 6։ ժգ. 20։ [31] Գաղ. ե. 10։ [32] Հռոմ. ժբ. 16։ ժե. 5։ [33] Փիլիպ. բ. 2։ [34] Գաղ. գ. 16։ [35] ա Կորնթ. դ. 16։ Ժա. 1։ Փիլիպ. գ. 9։ ա Թես. ա. 6։ [36] ա Պետր. ե. 3։

18 Պատճառն որ շատեր են գնում, որ նորանց համար շատ անգամ ասումէի ձեզ, եւ հիմիկ էլ լալով եմ ասում, Քրիստոսի խաչի թշնամիներին համար[37]։

19 Որ նորանց վերջն կորուստ է[38], որ նորանց աստուածն խրտնց փորն է[39], եւ փառքն իրանց ամօթն է[40], որ միտնակ երկրաւոր բաներըն են մտածում[41]։

20 Մեր քաղաքավարութիւնն երկնքում է[42], որ հետեղից[43] մտիկ ենք տալիս փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին[44]։

21 Որ մեր խոնարհ մարմինըն կը նորոգէ՝ որ իրան փառաւոր մարմնոյ կերպարանքին նման լինի[45], էն զօրութեան չափովն[46], որ կարող է ամէն բան հնազանդացնել իրան ներքեւն[47]։

## Գ·Ղ·Գ

1 Գլխաւոր խրատներ տալուցն հետե, 4 Ուրիշ յորդորմներ էլ կըտայ, 10 Եւ ցոյց կըտայ թէ ինքն շատ ուրախացաւ՝ նրա համար որ Փիլիպեցիքն հաղորդ էյան նորա իբան նեղութենեանն. երբ որ բանակի միջումն էր, ա՛չ թէ նրահամար որ իրան պակասութիւն լցաւ՝ բայց Աստուծոյ ընտրեալին համար որ նա նորանց միջումն տեսաւ։ 19 Աղօթելով եւ աղջկներով վերջ կ'անէ իրան խօսելն։

1 Ուրեմն իմ սիրելի եւ ցանկալի եղբարք[1], իմ ուրախութիւնս եւ պսակս[2]. էսպէս հաստատ կացէք Տէրումն՝ սիրելիներ[3]։

3 Օ՛նէսիփորին աղաչումեմ, եւ սիւնտիքեին էլ աղաչումեմ, որ Տէրոջ միտ միաք ունենան Տէրումն[4]։

3 Շ՛իտակ որ՝ քեզ էլ եմ աղաչում՝ իմ լըծի հարազատ ընկերս, դու էլ օգնիր նորանց՝ որ աւետարանումն ինձ հետ միտեղ պատերազմեցին՝ կըղեմէսի եւ իմ գործոյս ուրիշ ընկերներին հետ[5], որ նորանց անուններն կենաց դրքումն են[6]։

4 Ուրախ էղէք Տէրումն ամէն ժամանակ. միեղ ասումեմ՝ ուրախ էղէք[7]։

5 Ձեր հեզահոգի լինիլն թող յայտնի լինի ամէն մարդկանց. Տէրն մօտ է[8]։

6 Հո՛գս մի անէք միեն բանի համար, բայց ամէն աղօթքով եւ աղաչանքով եւ գոհութենով՝ ձեր խնդրուածքներն թող յայտնի լինին Աստուծոյ առաջին[9]։

7 Եւ Աստուծոյ խաղաղութիւնն՝ որ ամէն մտքից վերու է, պահպանէ ձեր սրտերըն եւ մտքներըն Քրիս-

[37] Գաղ. ա. 7։ բ. 21։ գ. 12։ Փիլիպ. ա. 15, 17։ [38] բ Կորնթ. ժա. 15։ բ Պետր. բ. 1։ [39] Հռովմ. ժգ. 18։ Տիտ. ա. 11։ [40] Ովսէ. դ. 7։ բ Կորնթ. ժա. 12։ Գաղ. գ. 13։ [41] Հռովմ. ը. 5։ [42] Եփես. բ. 6, 19։ Կող. գ. 1, 3։ [43] Գործ. ա. 11։ [44] ա Կորնթ. ա. 7։ ա Թես. ա. 10։ Տիտ. բ. 13։ [45] ա Կորնթ. ժե. 43, 48, 49։ Կող. գ. 4։ ա Յովհ. գ. 2։ [46] Եփես. ա. 19։ [47] ա Կորնթ. ժե. 26, 27։ [1] Փիլիպ. ա. 8։ [2] բ Կորնթ. ա. 14։ Փիլիպ. բ. 16։ ա Թես. բ. 19, 20։ [3] Փիլիպ. ա. 27։ [4] Փիլիպ. բ. 2։ դ. 16։ [5] Հռովմ. ժգ. 3։ Փիլիպ. ա. 27։ [6] Եզր. լբ. 32։ Սաղմ. կթ. 28։ Դան. ժբ. 1։ Ղուկ. ժ. 20։ Յայտ. գ. 5։ ժգ. 8։ ի. 12։ իա. 27։ [7] Հռովմ. ժբ. 12։ Փիլիպ. գ. 1։ ա Թես. ե. 16։ ա Պետր. դ. 13։ [8] Եբր. ժ. 25։ Յակ. ե. 8, 9։ ա Պետր. դ. 7։ բ Պետր. գ. 8, 9։ բ Թես. բ. 2։ [9] Սաղմ. ծե. 22։ Առակ. ժշ. 3։ Մատթ. գ. 25։ Ղուկ. ժբ. 22։ ա Պետր. ե. 7։

տոս Յիսուսումե[10]։

8 Ուրեմն եղբայրք՝ ինչ որ ճըշմարտութենով է, ինչ որ պարկեշտութենով, ինչ որ արդարութենով, ինչ որ սրբութենով, ինչ որ սիրով, ինչ որ բարի անունով[11], ինչ որ բարեգործութենով, ինչ որ գովութենով՝ էն մտածեցէք։

9 Էն՝ որ սովորեցիք՝ եւ ընդունեցիք՝ եւ լսեցիք՝ եւ ինձանում տեսիք, էն արէք[12]. եւ խաղաղութեան Աստուածն ձեզ հետ կը լինի[13]։

10 Էս շատ ուրախացայ Տէրումն, որ դուք էլ մտքներդ բերիք հոգս տանել ինձ համար, ինչպէս որ էլ հոգս էիք անում, բայց պատշաճ ժամանակ չէիք դանում[14]։

11 Չէ թէ կարօտութեան պատճառով եմ ասում էս. ինչու որ ես սովորեցի բաւական լինել նրանով՝ որ ունիմ[15]։

12 Գիտեմ պակասութիւն քաշել, եւ առատութենով լինել. ամէն բանի մէջ ամէնին լաւ սերտեցած եմ. կը շատանալն էլ՝ սովելն էլ. առատութենով լինելն էլ՝ պակասութիւն քաշելն էլ[16]։

13 Ամէն բան կարող եմ նորա ձեռնէն՝ որ ինձ զօրացրուց[17]։

14 Ասյց լաւ արիք, որ հաղորդ եղաք իմ նեղութենումն[18]։

15 Դուք էլ գիտեցէք փիլիպպեցիք, որ աւետարանիդ սկզբումն՝ երբոր մակեդոնիայից դուրս եկի, իսկի մին եկեղեցի էլ հաղորդութիւն չարաւ ինձ՝ տալոյ եւ առնելոյ համարօն, բայց միայակ դուք[19]։

16 Ինչու որ Թեսաղոնիկէի մէջ էլ միներկու անգամ բերել տուիք ինձ պէտք եկած բաներ։

17 Ոչ թէ էնպէս՝ որ տուրքըն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ աւելանայ ձեր համարումն[20]։

18 Ասյց ես ամէն բան առել եմ, եւ աւելութիւն ունիմ. լիքն եմ, որ եպափրոդիտոսի ձեռովն ընդունեցի էն[21], որ ձեզանից է՝ անուշ հոտ[22], ընդունելի պատարագ՝ Աստուծոյ համոյ[23]։

19 Եւ իմ Աստուածս լցնէ ձեր ամէն կարօտութիւնըն[24] իրան հարըստութեան չափովն՝ փառքով Քրիստոս Յիսուսումն[25]։

20 Ասյց Աստուծոյ մեր հօրն փառք (լինի) յաւիտեանս յաւիտենից[26]. ամէն։

21 Ողջոյն տուէք ամէն սրբերին՝ Քրիստոս Յիսուսումն։

22 Ողջոյն են տալիս ձեզ եղբարներն՝ որ ինձ հետ են[27]։

23 Ողջոյն են տալիս ձեզ ամէն սրբերն. մանաւանդ նորանք՝ որ կայսերի տանից են[28]։

24 Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն ձեր հոգոյն հետ (լինի)[29]. ամէն։

Փիլէմէոնց վերջ գրէցաւ ՝ Հռոմ յաղագս Լատինոսի Յեռաւն։

---

[10] Ցաւ. ժդ · 27։ Հռոմ. ե · 1։ կոր · դ · 15։ [11] ա թես · ե · 22։ [12] Փիլիպ · դ · 17։ [13] Հռոմ. ժե · 33։ ժզ · 20։ ա կորնթ · ժդ · 33։ բ կորնթ · ժդ · 11։ ա թես · ե · 23։ Եբր · ժգ · 20։ [14] բ կորնթ · ժա · 9։ [15] ա Տիմ · զ · 6, 8։ [16] ա կորնթ · դ · 11։ բ կորնթ · զ · 10։ ժա · 27։ [17] Ցաւ. ժե · 5։ բ կորնթ · ժբ · 9։ [18] Փիլիպ · ա · 7։ [19] բ կորնթ · ժա · 8, 9։ [20] Հռոմ. ժե · 28։ Տիտ · դ · 13։ [21] Փիլիպ · բ · 25։ [22] Եբր · ժգ · 16։ [23] բ կորնթ · թ · 12։ [24] Ղուկ. իգ · 1։ բ կորնթ · թ · 8։ [25] Եփես · ա · 7։ գ · 16։ [26] Հռոմ. ժզ · 27։ Գաղ · ա · 5։ [27] գաղ · ա · 2։ [28] Փիլիպ · ա · 13։ [29] Հռոմ. ժզ · 24։

# ԹՈՒՂԹ

# ՊՕՂՈՍԻ ԸՆԾԱՅԱԼՈՑ

## ԸՆ ԿՈՂՈՍԱՑԻՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՔԻՆ

1 Պօղոս Ցէրի չնորհքն եւ խաղաղութիւնն Կողոսացիներին տալուցն յետոյ՝ դոհանումն Աստուածանից նորանց հաւատքի համար. 7 Եպափրասն եւ իրան վարդապետութիւնն գովումն, 9 եւ նորանց համար շատ աղօթք է անում որ լցվին նորա կամաց գիտութեամբ. 14 Հաստատումն քրիստոսի ձեռնին եղած փրկութիւնն եւ մեղաց թողութիւնն. 21 Յորդորումն նորանց շատ կերպ խրատանելով եւ քրիստոսի սրած հաշտութիւնն քարոզումն, իրան պաշտօնն էլ ցոյց տալով։

**1** Պօղոս ցհումանի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովն[1], եւ տիմոթէոս եղբայրն։

**2** Սուղոսացի սրբերիդ եւ հաւատացեալ եղբարներիդ Քրիստոսումն։

**3** Շնորհք (լինի) ձեզ՝ հետ՝ եւ խաղաղութիւն Աստուած մեր հօրից՝ եւ Տէր Յիսուս Քրիստոսից[2]. դոհանումեմք Աստուածանից եւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հօրից. (եւ) ամէն ժամանակ աղօթք եմ անում ձեզ համար[3]։

**4** Լսելով լսեցինք ձեր հաւատքն՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ է[4], եւ սէրն՝ որ ամէն սրբերին հետ ունիք[5]։

**5** Լն յուսոյն համար՝ որ պահվում ձեզ համար երկնքումն[6]. որ նորա համար լսեցիք աւետարանի ճշմարիտ խոսքին։

**6** Որ էն հասաւ ձեզ, ինչպէս որ ամէն աշխարհքի մէջ, եւ մեծանում[7] եւ պտուղ է բերում[8]. ինչպէս որ ձեր միջումն էլ. էն օրից հետէ որ լսեցիք եւ Աստուծոյ շնորհքն ճանաչեցիք ճշմարտութեամբ[9]։

**7** Ինչպէս որ էլ սովորեցիք սիրելի եպափրասից, մեր ծառայութեան ընկերից[10], որ ձեզ համար Յիսուսի հաւատարիմ պաշտօնեայ է[11]։

**8** Որ էլ պատմեց մեզ ձեր սէրն հոգով[12]։

[1] Եփես. ա. 1։ [2] Գաղ. ա. 3։ [3] ա կորնթ. ա. 4։ Եփես. ա. 16։ Փիլիպ. ա. 3։ գ. 6։ [4] վեր. 9։ Եփես. ա. 15։ Փիլիմ. 5։ [5] եբր. չ. 10։ [6] բ Թիմ. դ. 8։ ապիտր. ա. 4։ [7] Մատթ. ից. 14։ Մարկ. ժգ. 15։ Հռոմ. ժ. 18։ վեր. 23։ [8] Մարկ. դ. 8։ Ցովհ. ժե. 16։ Փիլիպ. ա. 11։ [9] բ կորնթ. զ. 1։ Եփես. գ. 2։ Տիտ. բ. 11։ ա պիտր. ե. 12։ [10] Կող. գ. 12։ Փիլիմ. 23։ [11] բ կորնթ. ժա. 23։ ա Թիմ. դ. 6։ [12] Հռոմ. ժե. 30։

9 Վասն համար մենք եւ էն օրիցն հետե որ լսեցինք՝ չենք դադարում ձեզ համար աղօթք անել, եւ խնդրելով մաղթանք[13], որ լցվիք[14] նորա կամաց գիտութիւնովն[15], ամէն իմաստութիւնով եւ հոգեւոր խրատով[16]։

10 Որ գնաք ինչպես որ արժանի է Տէրոյն[17], ամէն բանի մէջ հաճոյ լինելով (նորան)[18], ամէն բարի գործերով պտղաբեր լինիք եւ Աստուծոյ գիտութեանումն մեծանաք[19]։

11 Զօրութեամբն զօրանաք իրան փառքի զօրութեան չափովն[20], ամէն համբերութեամբ եւ երկայնմտութեամբ[21] ուրախութեամբ[22]։

12 Գոհութիւն տաք Հօրն[23] որ մեզ կանչեց մասնակից լինելոյ սրբերի վիճակին լուսումն[24]։

13 Որ փրկեց մեզ խաւարի իշխանութենիցն[25], եւ փոխեց տարաւ մեզ իրան սիրելի որդոյ արքայութեան մէջ[26]։

14 Որ նորա ձեռնով ունինք փրկութիւն՝ նորա արիւնովն, եւ մեղաց թողութիւն նորա մարմնովն[27]։

15 Որ նա անեռերոյթի Աստուծոյ պատկերն է[28]՝ ամէն ստեղծուածոց անդրանիկն[29]։

16 Ինչու որ՝ նորանով ամէն բան ստեղծվեցաւ, ինչ որ երկինքումն եւ ինչ որ երկրումն։ Էն որ երեւումն եւ էն որ չի երեւում[30]. թէ աթոռներն, թէ տէրութիւններն, թէ պետութիւններն, թէ իշխանութիւներն[31]. ամէն բան նորանով՝ եւ նորա համար ստեղծվեցաւ[32]։

17 Եւ նա ամենիցն առաջ է, եւ ամէն բան նորանով բովանդակ է[33]։

18 Եւ նա մարմնոյ (այսինքն) եկեղեցոյ գլուխն է[34], որ նա է սկիզբն, մեռելներից առաջինն[35]. նրանով որ նա ամէն բանի մէջ առաջինն լինի։

19 Պատճառն որ հաճոյ էլաւ (Աստուծոյն), որ նորանումն Աստուածութեան ամէն լիութիւնն բնակվի[36]։

20 Եւ նորանով ամէնքըն[37]՝ հինց իրան հետ հաշտացնէ[38]. նա խաղաղութիւն արաւ իրան խաչի արիւնովն, էն որ երկրումն է՝ եւ էն որ երկընքումն է[39]։

21 Եւ ձեզ էլ՝ որ ժամանակով օտարացած էիք[40], եւ թշնամի մտքով չար գործքերումն[41],

22 Իմիկ հաշտացրուց իրան մարմնոյ անգամներովն՝ իրան մահովն, որ ձեզ սուրբ եւ անբիծ՝ եւ

---

[13] Եփես. ա. 15, 16։ Վէր. 3, 4։ [14] ա Կորնթ. ա. 5։ [15] Հռովմ. ժբ. 2։ Եփես. հ. 10, 17։ [16] Եփես. ա. 8։ [17] Եփես. գ. 1։ Փիլիպ. ա. 27։ ա Թես. բ. 12։ [18] ա Թես. գ. 1։ [19] Ցուհ. ժհ. 16։ բ Կորնթ. թ. 8։ Փիլիպ. ա. 11։ Տիտ. գ. 1։ Եբր. ժգ. 21։ [20] Եփես. գ. 16։ Ղ. 10։ [21] Եփես. գ. 2։ [22] Գործ. հ. 41։ Հռովմ. հ. 3։ [23] Եփես. հ. 20։ Կող. գ. 15։ [24] Գործ. իզ. 18։ Եփես. ա. 11։ [25] Եփես. ղ. 12։ Եբր. բ. 14։ ա Պետր. բ. 9։ [26] ա Թես. բ. 12։ բ Պետր. ա. 11։ Լուսոր. գ. 17։ Եփես. ա. 6։ [27] Եփես. ա. 7։ [28] բ Կորնթ. դ. 4։ Եբր. ա. 3։ [29] Ցուհ. գ. 14։ [30] Ցուհ. ա. 3։ ա Կորնթ. բ. 6։ Եփես. գ. 9։ Եբր. ա. 2։ [31] Հռովմ. ը. 38։ Եփես. ա. 21։ Կող. բ. 10. 15։ ա Պետր. գ. 22։ [32] Հռովմ. ժա. 36։ Եբր. բ. 10։ [33] Ցուհ. ա. 1. 3։ ժհ. 5։ ա Կորնթ. բ. 6, [34] Եփես. ա. 10, 22։ գ. 15։ հ. 23։ ա Կորնթ. ժա. 3։ [35] Գործ. իզ. 23։ ա Կորնթ. ժհ. 20, 21։ Ցուհ. ա. 5։ [36] Ցուհ. ա. 16։ գ. 34։ Կող. բ. 9։ գ. 11։ [37] Եփես. ա. 10։ [38] բ Կորնթ. հ. 18։ [39] Եփես. բ. 14, 15, 16։ [40] Եփես. բ. 1, 2, 12, 19։ գ. 18։ [41] Տիտ. ա. 15, 16։ [42] Եփես. բ. 15, 16։

անարատ կանգնացնէ նորա առա-
ջին[43]։

23 Թէ որ հաւատքի մէջ արմատ
քացի կենաք եւ հաստատուած[44]. եւ
առանց շարժուելոյ էն աւետարանի
յուսոյն՝ որ լսեցիք[45], որ երկնքի տակ
ամէն ստեղծուածներուն[46] քա-
րոզուեցաւ[47]. որ ես պօղոս նորա
պաշտօնեայ էլայ[48]։

24 Այ հիմիկ ուրախ եմ իմ[49]
չարչարանքներուս ձեզ համար[50],
եւ Քրիստոսի նեղութիւններուն պա-
կասը լցնում իմ մարմնովս[51]՝
նորա մարմնոյն համար՝ որ եկեղեցին
է[52]։

25 Որ ես պօղոս նորա պաշտօնեայ
էլայ՝ Աստուծոյ էն անտեսութեան
պէս, որ ինձ տրուած է ձեզ համար[53]՝
որ Աստուծոյ խօսքը կատարեմ[54]։

26 Էն խորհուրդն՝ որ ծածկուած
էր յաւիտեններէն եւ պորտերեցն[55]. որ
հիմիկ յայտնուեցաւ իրան սրբոց-
րին[56]։

27 Որ Աստուած կամեցաւ ցոյց
տալ նորանց[57], թէ ի՞նչ է իրան
խորհրդոյ փառաւոր մեծութիւնն
հեթանոսներուն[58], որ էն Քրիս-
տոսն է ձեզ համար՝ փառաց յոյսն[59]։

28 Որ մենք քարոզում ենք նորան,
եւ ամէն մարդ խրատում ենք՝ եւ ամէն
մարդ սովորցնում ենք ամէն հոգեւոր
իմաստութեամբ[60], որ ամէն մարդ
կատարեալ կանգնացնենք Քրիս-
տոս Յիսուսումն[61]։

29 Ասոր համար էլ աշխատում[62]
պատերազմ անելով[63] նորա յաջո-
ղութեան չափովն՝ որ ինձմում
յաջողված է զօրութեամբ[64]։

## ԳԼ · Ր

1 Ուզեմ տղերքս նորանց որ իմմանան Աստուծոյ խորհուրդն Քրիստոս Յիսուսումն։
8 Կըզգուշացնէ նորանք որ չըլինի թէ մինն խաբանէ նորանք փիլիսոփայութեամբ եւ
ունայն խաբեպայութեամբ, 18 եւ չըլինի որ մինն խաբէ նորանք խոնարհութեամբ եւ
հրեշտակներուն պաշտամունքով, 20 եւ օրէնքի եւ մարդկանց պատուիրաններուն պաշ-
տամունքով՝ որ նորանք քրիստոսի ձեռնէն ապահովված են։

1 Ամենեւին որ պիտի նաք
դուք՝ թէ ինչքա՜ն պատերազմ ու-
նիմ իմ՝ անձնուման ձեզ համար եւ
Լաւոդիկեացոց համար, եւ նորանց հա-
մար որ իմ երեսը մարմնով չեն
տեսել[1]։

2 Որ նորանց սրտերն մխիթար-
վին[2] եւ սերտվին սիրով. եւ կա-

[43] Ղ–Ա. ա. 75։ Եփես. ա. 4։ բ. 27։ աԹես. գ. 7։ Տիտ. բ. 14։ Ցոպ. 24։ [44] Եփես. գ. 17։ Կող. բ. 7։ [45] Ցվե. ԺԱ. 6։ [46] Սէր. 6։ [47] Հռովմ. Ժ. 18։ [48] Գործ. ա. 17։ բ Կրնթ. գ. 6։ դ. 1։ ե. 18։ Եփես. գ. 7։ Սալոբ. 25։ աՏիմ. բ. 7։ [49] Հռովմ. ե. 3։ բ Կրնթ. է. 4։ [50] Եփես. գ. 1, 13։ [51] բ Կրնթ. ա. 5, 6։ Փիլիպ. գ. 10։ բ Տիմ. ա. 8։ բ. 10։ [52] Եփես. ա. 23։ [53] ա Կրնթ. Թ. 17։ Գող. բ. 7։ Եփես. գ. 2։ Վէր. 23։ [54] Հռովմ. ԺԵ. 19։ [55] Հռովմ. Ժզ. 25։ ա Կրնթ. բ. 7։ Եփես. գ. 9։ [56] Պաւղ. Ժգ. 11։ բ Տիմ. ա. 10։ [57] բ Կրնթ. բ. 14։ [58] Հռովմ. Թ. 23։ Եփես. ա. 7։ գ. 8։ [59] ա Տիմ. ա. 1։ [60] Գործ. ի. 20, 27, 31։ [61] բ Կրնթ. Ժա. 2։ Եփես. ե. 27։ Վէր. 22։ [62] ա Կրնթ. Ժե. 10։ [63] Կող. բ. 1։ [64] Եփես. ա. 19։ գ. 7, 20։ [1] Կող. ա. 29։ Փիլիպ. ա. 30։ աԹես. բ. 2։ [2] Կրնթ. ա. 6։

տարեալ իմաստութեան ամէն մեծութիւնով[3], որ իմանան Աստուծոյ խորհուրդըն Քրիստոս Յիսուսումն[4]։

3 Որ նորանուամ ծածկուած կան իմաստութեան եւ գիտութեան ամէն գանձերն (նաւպանէքն)[5]։

4 Այդ ես եմ ասում, չըլինի թէ մին մըդրայնէ ձեզ խաբէբայ խօսքերով[6]։

5 Ինչու որ՝ թէեւ մարմնով հեռու եմ, բայց հոգով ձեզ հետ եմ[7], ուրախանում եմ՝ երբոր ձեր կարգըն տեսնում եմ[8], եւ ձեր հաւատքի հաստատութիւնըն՝ որ Քրիստոս Յիսուսումն է[9]։

6 Որպէս ինչպէս որ (դուք) Քրիստոս Յիսուս Տէրըն ընդունեցիք, հենց նորանով գնացէք[10]։

7 Բըմնա քցած՝ եւ նորանում շինուած, եւ հաւատքումն հաստատուած[11], ինչպէս որ սովորեցիք՝ եւ առաջացէք նորանում գոհութիւնով։

8 Զգոյշ կացէք՝ որ չըլինի թէ մին թալանէ ձեզ փիլիսոփայութիւնով՝ եւ ունայն խաբեբայութիւնով[12], որ մարդկանց աւանդութեան պէս[13] եւ աշխարհքիս սկըզբունքին պէս է[14] եւ չէ թէ Քրիստոս Յիսուսին պէս։

9 Ինչու որ նորանում քնակված է Աստուածութեան ամէն լիութիւնըն մարմնապէս[15]։

10 Եւ դուք նորանով լցված էք[16], որ նա ամէն իշխանութիւնների եւ պետութիւնների[17] գլուխն է[18]։

11 Որ նորանով դուք թլփատուացաք հաւատքով՝ էն աւանց ձեռքի եղած թլփատութիւնովն[19], մարմնոյ անդամներըն (ձեզանից) հանելովն՝ Քրիստոսի թլփատութիւնովն[20]։

12 Որ թաղվելոցաք նորա հետ մկըրտութիւնովն[21], որ նորանով էլ յարութիւն առաք նորա հետ[22] էն հաւատքովն՝ որ Աստուած գործեց[23], որ յարցոյց նորան մեռելների միջեցն[24]։

13 Եւ ձեզ՝ որ մին ժամանակ մեռած էիք մեղքումն՝ եւ ձեր մարմնոյ անթլփատութիւնումն, իրան անձնովն կենդանացրուց. մեր ամէն մեղքերըն բաշխեց մեզ[25]։

14 Եւ ընջեց էն ձեռագիրըն՝ որ մեզ հակառակ էր՝ իրան հրամայութիւն. որ էն մեզ հակառակ կար՝ նորան վերկալաւ մէջ տեղեցն՝ եւ խաչափայտին վերայ բեւեռեց[26]։

15 Իշխանութիւններն եւ պետութիւններն[27] մերկացրուց. յայտնի նորանց խայտառակից եւ (իրան) յաղթութեան նշան արաւ իրան անձնովն իրան յարութիւնումն[28]։

16 Ուրեմն թող մին չըզգաստէ

[3] Կող. գ. 14։ [4] Փիլիպ. գ. 8։ Կող. ա. 9։ [5] Ակոբն. ա. 24. բ. 6, 7։ Եփես. ա. 8։ Կող. ա. 9։ [6] Հռովմ. ժգ. 18։ Բ Կորնթ. ժա. 13։ Եփես. գ. 14։ ե. 6։ Վայր. 8, 18։ [7] Ա Կորնթ. ե. 3։ Թես. բ. 17։ [8] Ա Կորնթ. ժգ. 40։ [9] Ա Պետր. ե. 9։ [10] Թես. գ. 1։ Յովք. 3։ [11] Եփես. բ. 21, 22։ գ. 17։ Կող. ա. 23։ [12] Եբեր. ի. 8։ Հռովմ. ժգ. 17։ Եփես. ե. 6։ Վայր 18։ Եբր. ժգ. 9։ [13] Ա Պետր. ժե. 2։ Գաղ. ա. 14։ Վայր. 22։ [14] Գաղ. գ. 3, 9։ Վայր. 20։ [15] Ցածն. ա. 14։ Կող. ա. 19։ [16] Ցածն. ա. 16։ [17] Կող. ա. 16։ [18] Եփես. ա. 20, 21։ ա. Պետր. գ. 22։ [19] Բ Օրէն. ժ. 16։ Ղ. 6։ Եբեր. գ. 4։ Հռովմ. բ. 29։ Փիլիպ. գ. 3։ [20] Հռովմ. զ. 6։ գ. Եփես. 22։ Կող. գ. 8, 9։ [21] Հռովմ. գ. 4։ [22] Կող. գ. 1։ [23] Եփես. ա. 19։ գ. 7։ [24] Գործ. բ. 24։ [25] Եփես. բ. 1. 5, 6, 11։ [26] Եփես. բ. 15, 16։ [27] Եփես. գ. 12։ [28] Ընդդ. գ. 15։ Ա Տիմ. կը. 18։ Ես. ծգ. 12։ Ա Պետր. ժբ. 39։ Գաղ. ժ. 18։ ժա. 22։ Ցածն. ժբ. 31։ ժգ. 11։ Եփես. գ. 8։ Եբեր. բ. 14։

ձեզ[29]՝ ուսելոյ կամ խմելոյ հա-
մար[30], կամ տներուն կամ ամսագը-
ղեներուն կամ շաբաթներուն կողմա-
նէ[31]։

17 Որ սոդանք նոր գալու բաներուն
շուաքներն են, բայց մարմինն Քրի-
ստոս է[32]։

18 Ձըլլինի որ մինն խաբէ ձեզ,
որ կամենայ խոնարհութենով եւ
հրեշտակներուն պաշտամունքով[33]
զուր տեղն հետեւիլ էն բաներն՝ որ չէ
տեսած՝ եւ զուր տեղն գոռոզացած
լինի իրան մարմնաւոր մտքովն[34]։

19 Ու չէ նեղնայ Քրիստոս գլու-
խըն[35], որ նորանից ամէն մարմինն
յօդվածներով եւ խաղերով ջոկ-
ված եւ խառնված՝ մեծանում Աս-
տուծոյ աճմունքովն։

20 Թէ որ Քրիստոսի հետ մե-
ռաք[36] էս աշխարհքիս սկզբունքնե-
րից[37]՝ էլ ինչու էք էս աշխարհքիս
մէջ կենդանիներին պէս հետեւում
օրէնքին[38]։

21 Մի մտաներ, համ մի առներ,
մի դիպչիր[39]։

22 Որ էս ամէնս ապականվելուն
գործածութենով, եւ մարդկանց
պատուիրանքներին եւ վարդապե-
տութեան պէս է[40]։

23 Որ մին իմաստութիւն է հա-
մարվում[41], իրան կամքով հաստատ-
ված պաշտամունքով եւ խոնարհու-
թենով՝ եւ մարմնին չխնայելով,
եւ մարմնին պատիւ չտալով՝ որ
կշտացնեն նորան[42]։

## Կ Ո Լ Ո Ս Ա Ց Ի Ս Կ Ա Ն Ց Ի Ս Ա Ռ Ա Ք Ե Լ Ո Ւ Թ Ի Ւ Ն

1 Ընտրեալն Խրատուէ հաւատացեալներին որ՝ են վերինքն խնդրեն՝ որտեղ որ Քրիս-
տոսն է նստում։ 5 Եւ սպանեն իրանց երկրաւոր անդամներըն։ 10 Որ իրանցից հանեն
հին մարդըն իրան գործերովն։ Եւ նոր մարդոյն (Քրիստոս Քրիստոսն) հագնեն։ 12 Որ
իրանց Քրիստոնէական ամէն պարտքերըն կատարեն եւ իրար ներեն եւ ուրիշ շատ կա-
նոններ է տալիս նորանց։

1 Թէ որ Քրիստոսի հետ յա-
րութիւն առիք[1], ապա խնդրեցէք էն
վերինքն՝ որտեղ որ Քրիստոսն է
նստում Աստուծոյ աջ կողմն[2]։

2 Էն վերինքն մտածեցէք, չէ
թէ էն՝ որ էս երկրումն է։

3 Պատճառն որ դուք մեռաք[3] եւ
ձեր կեանքն Քրիստոսի հետ ծած-
կված է Աստուծոյ մէջն[4]։

4 Երբոր Քրիստոս[5] ձեր
կեանքն կըյայտնվի[6], էն ժամա-
նակն դուք էլ նորա հետ կըյայտնը-
վիք փառքով[7]։

5 Ուրեմն սպանեցէք[8] ձեր երկ-
րաւոր անդամներըն[9], դէն քցեցէք
պոռնկութիւնըն՝ պղծութիւնըն[10]՝

---

[29] Հռովմ. ժգ. 3, 10, 13։ [30] Հռովմ. ժգ. 2, 17։ [31] Կոր. ը. 8։ [32] Հռովմ. ժգ. 5։ Գաղ. գ. 10։ [33] Եբր. ը. 5։ Թ. 9։ Ժ. 1։ [34] Վեր. 4։ Ալար. 23։ [35] Եփես. ժգ. 3։ [36] Տիմ. ա. 7։ [37] Եփես. գ. 15, 16։ [38] Հռովմ. զ. 3, 5։ է. 4, 6։ Գաղ. բ. 19։ Եփես. բ. 51։ [39] Վեր. 8։ [40] Գաղ. գ. 3, 9։ [41] Տիմ. գ. 3։ [42] Նոյ. ԽԹ. 13։ Ղուկ. ժե. 9։ Տիտ. ա. 14։ [1] Հռովմ. գ. 8։ [2] Վեր. 8։ [3] Հռովմ. զ. 5։ Եփես. բ. 6։ Կող. բ. 12։ [4] Հռովմ. ը. 34։ Եփես. ա. 20։ [5] Հռովմ. զ. 2։ Գաղ. բ. 20։ Կող. բ. 20։ [6] Ա Կորնթ. է. 7։ Կող. ա. 5։ [7] Ա Յովհ. գ. 2։ [8] Յովհ. ժա. 25։ ժգ. 6։ [9] Ա Կորնթ. ժե. 43։ Փիլիպ. գ. 21։ [10] Հռովմ. զ. 13։ [11] Հռովմ. ը. 13։ Գաղ. է. 24։ [12] Եփես. է. 3։

կեղտոտութիւնն՝ չար ցանկութիւնն, եւ ագահութիւնն[11] որ կուռ պաշտութիւն է[12]։

6 Որ սորա համար Աստուծոյ բարկութիւնն[13] գայիս է անհաւատութեան որդիքներին վերայ[14]։

7 Որ նորանցով դուք էլ մին ժամանակ գնում էիք, երբոր կեն-դանի էիք նորանցում[15]։

8 Այլ հիմիկ դուք էլ դէն թափ տուէք էն ամէնն. բարկութիւնն՝ սրտմտութիւնն՝ չարութիւնն՝ հայհոյութիւնն[16] ծաղրաբանութիւնն ձեր բերանիցն[17]։

9 Սուտ մի խօսէք իրար հետ[18]. ձեղանից հանեցէք հին մարդն իրան գործքերովն[19]։

10 Եւ նոր մարդն հագէք՝ որ նորոգված է գիտութիւնով[20] իրան ստեղծողի[21] պատկերին պէս[22]։

11 Որ էնտեղ ո՛չ հրէայ կայ՝ եւ ո՛չ հեթանոս, ո՛չ թլփատութիւն՝ եւ ո՛չ անթլփատութիւն, խուժ՝ դուժ՝ սկիւթացի՝ ծառայ՝ ազատ[23], բայց ամէնն եւ ամէնի մէջն Քրիստոսն է[24]։

12 Ուրեմն ինչպէս Աստուծոյ ընտրվածներ՝ սըրբեր եւ սիրելիներ[25], հագէք[26] գթածութիւնն՝ ողորմութիւնն՝ քաղցրութիւնն՝ խոնարհութիւնն՝ հեզութիւնն՝ երկայնմտութիւնն[27]։

13 Իրար նեղեցէք, եւ իրար թողեցէք, թէ որ մինն մէկելոյն արգանդմունք ունենայ, ինչպէս որ Աստուած Քրիստոսովն ձեզ թողութիւն արաւ՝ էնպէս էլ դուք[28]։

14 Եւ ամէնի վերայ[29] (հագէք) սէրըն[30] որ կատարելութեան կապն է[31]։

15 Եւ Քրիստոսի խաղաղութիւնն թող հաստատվի ձեր սրտերումն[32], որ նորա մէջ էլ կանչվեցաք[33] մին մարմնով[34]. եւ գոհացող էլէք[35]։

16 Որ Քրիստոսի խօսքն լիութեամով բնակվի ձեր միջումն. որ ամէն իմաստութեամով իրար սովորցընէք եւ խրատէք, սաղմոսներով եւ օրհնութիւններով եւ հոգեւոր երգերով[36] եւ շնորհքով Աստուծոյն օրհնէք ձեր սրտերումն[37]։

17 Եւ ամէն ինչ՝ որ անէք խօսքով եւ գործով, էն ամէնն Տէր Յիսուսի անունովն արէք[38]. եւ նորա ձեռովն գոհութիւն տուէք Աստուծոյն եւ Հօրն[39]։

18 Կանայք՝ հնազանդ էլէք ձեր մարդկանց[40], ինչպէս որ կըվայելէ Տէրումն[41]։

19 Ա՛րդիւք՝ սիրեցէք ձեր կա-

[11] ա թես. գ·5։ [12] Եփես. ե·5։ [13] Հռովմ. ա·18։ Եփես. ե·6։ Յայտ. իբ·15։ [14] Եփես. բ·2։ [15] Հռովմ. ը·19, 20։ է·5։ ա Կորնթ. ը·11։ Եփես. բ·2։ Յեր. գ·3։ [16] Եփես. դ·22։ ա Պետր. բ·1։ Եբր. ժբ·1։ Յով. ա·21։ [17] Եփես. գ·29։ ե·4։ [18] Զաքար. ժթ·11։ Եփես. գ·25։ [19] Եփես. գ·22, 24։ [20] Հռովմ. ժբ·2։ [21] Եփես. բ·10։ [22] Եփես. գ·23, 24։ [23] Հռովմ. ժ·12։ ա Կորնթ. ժբ·13։ Գաղ. գ·28։ ե·6։ Եփես. գ·8։ [24] Եփես. ա·23։ [25] ա Թես. ա·4։ ա Պետր. ա·2։ բ Պետր. ա·10։ [26] Եփես. գ·24։ [27] Գաղ. ե·23։ Փիլիպ. բ·1։ Եփես. գ·2, 32։ [28] Լուկ. ժա·25։ Եփես. գ·2, 32։ [29] ա Պետր. գ·8։ [30] Յովհ. ժգ·34։ Հռովմ. ժգ·8։ ա Կորնթ. ժգ։ Եփես. ե·2։ կող. բ·2։ ա Թես. գ·9։ ա Տիմ. ա·5։ ա Յովհ. գ·23։ գ·21։ [31] Եփես. գ·3։ [32] Հռովմ. ժգ·17։ Փիլիպ. գ·7։ [33] ա Կորնթ. է·15։ [34] Եփես. բ·16, 17։ գ·4։ [35] կող. բ·7։ Յակոբ. 17։ [36] ա Կորնթ. ժգ·26։ Եփես. ե·19։ [37] կող. գ·6։ [38] ա Կորնթ. ժ·31։ [39] Հռովմ. ա·8։ Եփես. ե·20։ կող. ա·12։ բ·7։ աԹես. ե·18։ Եբր. ժգ·15։ [40] Եփես. ե·23։ Յեր. բ·5։ ա Պետր. գ·1։ [41] Եփես. ե·3։

նանցըն[42], եւ մի դառնացնէք նո-
րանց[43]։

20 Արդեաք[44] հնազանդ էիք ձեր
ծնօղներուն ամէն բանի մէջ[45] որ էն
հաճոյ է Տէրին։

21 Հայր՝ մի կսկիծացնէք ձեր
որդւոց սիրտըն, որ չըտրտմին[46]։

22 Ծառաներ[47] հնազանդ էիք
ձեր տէրերուն[48] ամէն բանի մէջ[49].
չէ թէ աչքի առաջին ծառայութիւն
անելով՝ երեսպաշներուն պէս. բայց
սրտի միամտութենով՝ Տէրոջն վա-
խենալով։

23 Ինչ որ անէք՝ յօժար սրտով
արէք՝ ինչպէս Տէրոջ, եւ չէ թէ ինչ-
պէս մարդկանց[50]։

24 Գիտացէք որ Տէրոջն կառնէք
ձեր ժառանգութեան հատուցու-
մըն[51]. ինչու որ Տէր Քրիստոսին էք
ծառայում[52]։

25 Այլ անօրէնն իրան անիրա-
ւութեան չափովը կընդունի. պատ-
ճառն որ երեսպաշութիւն չըկայ
Աստուծոյ առաջին[53]։

## Գ.

1 Կնայորդիք որ ադօթքին միչա հետեւին, 5 Որ իմաստութենով վարվին դըրսեհներ-
րին (Քրիստոսի գիտութիւնն չունեցողներին) հետ։ 10 Ոդջ պահ կուզարկէ նորանց իրան
ծոռ եղած Քրիստոնեաներից։

1 Պատք էլ տէրեր՝ ինչ որ ի-
րաւունք եւ հաւասար է՝ շնորհեցէք
ձեր ծառաներին. գիտացէք՝ որ դուք
էլ Տէր ունիք երկնքումն[1]։

2 Ադօթքին միչտ հետեւեցէք[2].
եւ արթմուն կացէք նորանում գո-
հութենով[3]։

3 Ինձ համար էլ ադօթք ա-
րէք[4], որ Աստուած խօսքի դուռըն
բանայ մեզ համար[5] որ Քրիստոսի
խորհուրդըն խօսինք[6], որ նորա հա-
մարել էլ ես կապված եմ[7]։

4 Որ յայտնեմ նորան՝ ինչպէս
որ ինձ արժան է խօսել։

5 Իմաստութենով վարվեցէք
դըրսեհներին հետ[8], եւ ժամանակըն
գնեցէք[9]։

6 Ձեր խօսքն թող ամէն ժա-
մանակ Տէրոջ շնորհքովն լինի[10] իբր
աղով համեղացած լինի[11], որ գի-
տենաք թէ ինչպէս արժան է ձեզ՝
ամէն մէկին պատասխան տալ[12]։

7 Այլ ինչ որ ինձ համար է՝ ա-
մէնն ըդդ կըտայ ձեզ տիւքիկոս սի-
րելի եղբայրն՝ եւ հաւատարիմ
պաշտօնեան, եւ ծառայութեանս
ընկերն Տէրոջմէն[13]։

8 Որ նորան հենց դրա համար
ուղարկեցի ձեզ մօտ, որ մեզ հա-
մար գիտենաք, եւ ձեր սրտերն միսի-
թարվին[14]։

9 Ընեսիմոս հաւատարիմ եւ սի-

---

[42] Եփես. ե. 25, 28, 33։ [43] Պիտ. գ. 31։ [44] Եփես. գ. 7։ [45] Եփես. ե. 1։ [46] Եփես. ե. 24։ Տիտ. բ. 9։ [47] Եփես. զ. 4։ [48] Եփես. զ. 5, Խոյնը։ [49] Տիտ. զ. 1։ Տիտ. բ. 9։ [50] Եփես. զ. 6, 7։ [51] Եփես. զ. 8։ [52] Կողոսս. է. 22։ [53] Բ Օրին. ժ. 17։ Հռոմ. բ. 11։ Եփես. զ. 9։ [1] Եփես. զ. 9։ [2] Ղուկ. ժբ. 1։ Հռոմ. ժբ. 12։ Եփես. զ. 18։ [3] Թես. ե. 17, 18։ [4] Կող. բ. 7։ գ. 15։ [5] Եփես. զ. 19։ [6] Թես. գ. 1։ [7] Կողոսս. ժգ. 11։ [8] Կողոսս. գ. 1։ Եփես. զ. 19։ [9] Կող. ա. 26։ բ. 3։ [10] Եփես. զ. 20։ Փիլիպ. ա. 7։ [11] Եփես. զ. 15։ [12] Թես. գ. 11։ [13] Եփես. ե. 16։ [14] Ժող. ժ. 12։ Կող. գ. 16։ [15] Մարկ. թ. 49։ [16] Պիտ. գ. 15։ [17] Եփես. զ. 21։ [18] Եփես. զ. 22։

ըն|լի եղբօրն հետ, որ նա ձեզանից է[15]. նորանք ամէն բան ցոյց կըտան ձեզ՝ որ ինչ էստեղ լինում է:

10 Ողջոյն են տալիս ձեզ արիստարքոսն՝ իմ գերուԹեան ընկերս[16], եւ մարկոս բառնաբասի եղբօր որդին[17], որ նորա համար պատուիրանք առիք՝ որ եԹէ ձեզ մօտ գայ՝ ընդունիք նորան:

11 Եւ Յիսուսն՝ որ յուստոս անուանված է, որ նորանք ԹլփատուԹեներից են, որ միայակ գործակից ընկերք էլան Աստուծոյ արքայուԹեանում, որ ինձ համար էլ միխիթարուԹիւն էլան:

12 Ողջոյն է տալիս ձեզ եպափրասն՝ Յիսուսի Քրիստոսի ծառան, որ ձեզանից է[18], որ ամէն ժամանակ ձեզ համար պատերազմում աղօթքումն[19], որ կատարեալ եւ լցված լինիք Աստուծոյ ամէն կամքումն[20]:

13 Ա կայսեմ նորան՝ որ շատ աշխատանք է քաշում ձեզ համար, եւ լաւոդիկեացոց համար, եւ նորանց համար էլ՝ որ յերապօլիսում են:

14 Ողջոյն է տալիս ձեզ ղուկաս բժիշկն եւ սիրելին[21], եւ դեմասն[22]:

15 Ողջոյն տուէք եղբայրներին՝ որ լաւոդիկեայումն են եւ նիմփային, եւ եկեղեցոյն՝ որ նորա տանն է[23]:

16 Եւ երբոր էս ԹուղԹս ձեզ մօտ կարդացված լինի[24]՝ արէք որ լաւոդիկեացոց եկեղեցոյ միջումն էլ կարդացվի. եւ էն որ լաւոդիկեացոյն է՝ որ դուք էլ կարդաք:

17 Եւ արքիպոսին ասացէք[25], զգոյշ կաց քո սպասաւորուԹեանդ՝ որ ընդունեցիր Տէրումն, որ դրան կատարես[26]:

18 Ողջոյնդ իմ պօղոսիս ձեռնին է[27]. իմ կապանքս Թող ձեր մտքներումդ լինին[28]. շնորհքն (լինի) ձեզ հետ, ամէն[29]:

Կողոսացոց վերայ գրվեցաւ ՚ի հռոմէական Տիւրիոսէ ե՟ Ընեսիմոսէ յԵաոսէն:

[15] Փիլէմ. 10: [16] գործ. ժե. 29 · ե. 4: իե. 2: Փիլէմ. 24: [17] գործ. ժե. 37: բ Տիմ. դ. 11: [18] դաղ. ա. 7: Փիլէմ. 23: [19] հռոմ. ժե. 30: [20] յայտն. ե. 48: ա կորնթ. բ. 6: ժգ. 20: Փիլիպ. գ. 15: եբր. ե. 14: [21] բ Տիմ. դ. 11: [22] բ Տիմ. դ. 9: Փիլէմ. 24: [23] հռոմ. ժգ. 4: ա կորնթ. ժգ. 19: [24] ա թես. ե. 27: [25] Փիլէմ. 2: [26] ա Տիմ դ. 6: [27] ա կորնթ. ժգ. 21: բ թես. գ. 17: [28] եբր. ժգ. 3: [29] եբր. ժգ. 25:

# ԹՈՒՂԹ

## ՊՕՂՈՍԻ ԵՒ ՍԻԼԱՍԻՈՅ

ԵՒ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԵՒ ԵՐԵՑԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ընտրեալն Քրիստոսի Յիսուսի կոչեցեալ Պօղոս առաքեալ, եւ Տիմոթէոս եղբայր, 2 Սրբոց որ են ի Քրիստոս Յիսուս ի Փիլիպպէ հանդերձ եպիսկոպոսօք եւ սարկաւագօք: 3 Շնորհք ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ Տեառն Յիսուսի Քրիստոսի: 4 Զոր միշտ յամենայն աղաչանս իմ վասն ամենեցուն ձերոց զուարճութեամբ աղաչեմ զԱստուած, 5 Վասն հաղորդութեան ձերոյ ի Աւետարանին Քրիստոսի յառաջագոյն քան զայս ամ: 6 Վասն որոյ եւ վստահ եմ զայս ինչ, զի որ սկսաւ ի ձեզ գործ բարի, նա կատարեսցէ մինչեւ ի յաւուրն Յիսուսի Քրիստոսի: 7 Որպէս արդար է ինձ զայս ինչ խորհել վասն ամենեցուն ձերոց, վասն զի ունիմ զձեզ ի սրտի իմում, եւ ի կապանսն իմ եւ ի պաշտպանութեան եւ ի հաստատութեան Աւետարանին, զհաղորդս իմ ամենեսեան ի շնորհացդ արարեալ: 8 Վկայ է ինձ Աստուած, զի ցանկանամ զամենեսեան ձեզ ի սրտի Քրիստոսի Յիսուսի: 9 Եւ զայս աղաչեմ զԱստուած, զի սէր ձեր առաւել եւս եւ եւս աճեսցէ ի գիտութեան եւ յամենայն զգայութեան, 10 Փորձել զոր ինչ ընտրելագոյնն են, զի լինիցիք անարատք եւ անդատապարտք ի յաւուրն Քրիստոսի, 11 Լցեալք պտղով արդարութեան որ է ի Յիսուսէ Քրիստոսէ, ի փառս եւ ի գովեստ Աստուծոյ:

12 Կամիմ զի գիտասջիք, եղբարք, զի զոր ինչ ինձ պատահեցաւ, յառաջադիմութիւն Աւետարանին եղեւ: 13 Մինչեւ զի կապանք իմ ի Քրիստոս յայտնի եղեն ամենայն պալատի եւ ամենայնի այլոց: 14 Եւ բազումք ի եղբարցն ի Տէր վստահացեալ ի կապանսն իմ, առաւել եւս համարձակագոյն եղեն առանց երկիւղի բանս Աստուծոյ խօսել: 15 Ոմանք եւ նախանձու եւ հակառակութեան քարոզեն զՔրիստոս, ոմանք եւ բարեհաճութեամբ: 16 Ոմանք ի սիրոյ գիտացեալ, զի ես ի պաշտպանութիւն Աւետարանին դրեալ եմ: 17 Իսկ ոմանք ի հակառակութենէ զՔրիստոս աւետարանեն, ոչ անմաքուր, կարծելով զի նեղութիւն յարուցանիցեն կապանաց իմոց: 18 Զի՞ ինչ ուրեմն: Բայց զի ամենայնիւ կամ ի պատրուակի կամ ի ճշմարտութեան Քրիստոս աւետարանի, եւ ընդ այսմ ուրախ եմ եւ ուրախ լինիմ: 19 Զի գիտեմ զի այս ինձ դարձցի ի փրկութիւն ձեր եւ ի հաստատութիւն Հոգւոյ Յիսուսի Քրիստոսի: 20 Ըստ ակնկալութեան եւ յուսոյ իմոյ, զի ոչ ամաչեցայց ինչ, այլ ամենայնիւ յամենայն ժամ, որպէս միշտ եւ արդ, մեծասցի Քրիստոս ի մարմնի իմում, կամ ընդ կեանս կամ ընդ մահ: 21 Զի ինձ կեանք Քրիստոս է, եւ մեռանել շահ: 22 Իսկ եթէ կեալ ի մարմնի, զայս ինձ պտուղ գործոյ է, եւ զոր ինչ ընտրեսցեմ ոչ գիտեմ: 23 Սակայն ի միում ինչ ի մէջ երկոցունց կամիմ, զմահ ունել եւ ընդ Քրիստոս լինել, զի բազում եւս առաւել է: 24 Բայց զի կեալ ի մարմնի, զայս ինձ պիտանի է վասն ձեր: 25 Եւ զայս վստահացեալ գիտեմ, զի մնասցեմ եւ կացից ընդ ամենեսեան ձեզ ի յառաջադիմութիւն եւ ի զուարճութիւն հաւատոյ ձերոյ: 26 Զի պարծանք ձեր առաւել եւս եւս աճեսցէ ի Քրիստոս Յիսուս ի ես ի ձեզ ի յայցելութենէ իմմէ: 27 Միայն արժանաւորապէս ի վարս Աւետարանին Քրիստոսի վարեցարուք, զի եթէ եկեալ տեսից զձեզ կամ բացակայ լուիցից զձերոց գործոց, զի կացէք ի մի հոգւոյ, միաբանութեամբ մարտնչեալ հաւատոյ Աւետարանին, 28 Եւ ոչ ամենեւին զարհուրեալ ի հակառակորդացն, որ է նոցա ապականութեան նշան, ձերոյ իսկ փրկութեան նշան, եւ զայս յԱստուծոյ: 29 Զի ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն զի հաւատասջիք նմա, այլ եւ զի վասն նորա չարչարեսջիք, 30 Զոյգ զոյգ մարտն զոր տեսէք ի իս, եւ արդ լսէք ի իմ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

10 Պատճառն որ վայելումէր նորան[17] որ ամեն բան նորա համար՝ եւ ամեն բան նորանով է[18], որ շատ որդիք փառքի մէջ տանի, եւ նորանց փրկութեան առաջնորդըն[19] չարչարանքով կատարէ[20]։

11 Ինչու որ՝ նա որ սրբում է, եւ նորանք՝ որ սրբվումեն[21], ամենքն էն մէնիկն են[22]. եւ նրահամար ամեն չի համարում՝ նորանց եղբայր կոչել՝ եւ ասել[23],

12 Կըպատմեմ քո անունըդ իմ եղբարներիս, եւ եկեղեցոյ միջումն կօրհնեմ քեզ[24],

13 Եւ մինէլ՝ թէ ես յոյսըս կըդնեմ նորա վերայ[25]. եւ մինէլ. ահա ես եւ իմ մանուկներս[26]՝ որ նորանց Աստուած տուաւ ինձ[27]։

14 Ուրեմն որովհետեւ մանկունքն արիւնին եւ մարմնոյն մասնակից էլան, հենց ինքն էլ մեռաւոր լինելով մասնակից էլաւ նորանց[28]. որ իրան մահովն խափանէ նորան, որ մահի իշխանութիւնըն ունէր, այսինքն՝ սատանային[29]։

15 Եւ ապրեցնէ նորանց, որ մահից վախենալով միշտ ծառայութեան մէջ ընկած բնըդված էին[30]։

16 Պատճառն որ՝ նա իսկի հրեշտակներին ձեռք չի տալիս. բայց աբրահամի զաւակին է ձեռք տալիս։

17 Հենց նրահամար պէտք էր նորան՝ որ իսպառ եղբարներին նման վի[31]. որ ողորմած լինի, եւ հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ առաջին անելոյ բաներումն, որ ժողովրդի մեղքերըն քաւէ[32]։

18 Ինչու որ՝ նորանով որ ինքն չարչարվեցաւ եւ փորձվեցաւ, կարող է նորանց էլ օգնութիւն տալ՝ որ փորձվումեն[33]։

---

[11] Ցած. է. 17։ Այլ. ը. 4։ Ծնդ. 3։ [12] Առակ. իբ. 18։ ա Կորնթ. ժէ. 27։ Եփես. ա. 22։ Եբր. ա. 13։ [13] ա Կորնթ. ժէ. 25։ [14] Փիլիպ. բ. 7, 8, 9։ [15] Գործ. բ. 33։ [16] Ցած. գ. 16։ ժբ. 32։ Հռովմ. է. 18։ ը. 32։ բ Կորնթ. ե. 15։ ա Տիմ. բ. 6։ ա Ցած. բ. 2։ Ցայտ. ե. 9։ [17] Գաղ. իդ. 46։ [18] Հռովմ. ժա. 36։ [19] Գործ. գ. 15։ ե. 31։ Եբր. ժբ. 2։ [20] Գաղ. ժգ. 32։ Եբր. ե. 9։ [21] Եբր. ժ. 10, 14։ [22] Գործ. ժէ. 26։ [23] Առակ. իը. 10։ Ցած. ի. 17։ Հռովմ. ը. 29։ [24] Այլ. իբ. 22, 25։ [25] Այլ. ժբ. 2։ Եսայ. ժբ. 2։ [26] Եսայ. ը. 18։ [27] Ցած. ժ. 29։ ժէ. 6, 9, 11, 12։ [28] Ցած. ա. 14։ Հռովմ. ը. 3։ Փիլիպ. բ. 7։ [29] ա Կորնթ. ժէ. 54, 55։ Կող. բ. 15։ բ Տիմ. ա. 10։ [30] Գաղ. ա. 74։ Հռովմ. ը. 15։ բ Տիմ. ա. 7։ [31] Փիլիպ. բ. 7։ [32] Եբր. գ. 15։ է. 1, 2։ [33] Եբր. գ. 15, 16։ է. 2։ է. 25։

## ԳԼ · Գ

*2 Քրիստոս Մովսէսից աւելի վաստկի արժան էլաւ, 7 Նրահամար թէ որ մենք իրան դէմ անհաւատութեան չար սիրտ ունենանք՝ որպէսզի պնատացած խրատներին չատ աւելի պատիժի արժան կըլինինք։*

1 Որեմն սո՛ւրբ եղբարք՝ որ երկնաւոր կոչումին մասնակից էք[1], մտիկ տուէք մեր դաւանութեան առաքելոյն եւ քահանայապետին՝ Յիսուս Քրիստոսին[2]։

2 Որ հաւատարիմ է իրան հաստատողին, ինչպէս որ Մովսէսն էլ նորա բոլոր տանն (էլաւ)[3]։

3 Պատճառն որ նա էլ աւելի փառքի արժան էլաւ քանթէ Մովսէսն, որքան որ տուն շինողն աւելի պատիւ ունի քանթէ տունն[4]։

4 Ինչու որ ամէն տուն՝ որ շինվում, մինից է շինվում. բայց նա որ ամէնն արաւ՝ Աստուած է[5]։

5 Ու Մովսէսն հաւատարիմ է նորա բոլոր տան մէջն[6] ինչպէս ծառայ՝ էն ասելոյ բաներուն վկայ լինելով[8]։

6 Հայց Քրիստոս՝ ինչպէս որդի իրան տան վերայ[9]. որ նորա տունն հինց մենք ենք[10], միայն թէ էն յուսոյ համարձակութիւնըն եւ պարծանքըն մինչեւ վերջն հաստատ բռնենք[11]։

7 Նրահամար սուրբ Հոգին էս պէս է ասում[12]. էս օր թէ նորա ձայնըն լսէք,

8 Մի պնատացնէք ձեր սրտերըն՝ ինչպէս որ էն բարկացնելոյ ժամանակումն, փորձութեան օրումն՝ անապատի (չէօլէ) միջումն[13]։

9 Ուր հնտեղ ձեր հարքն փորձեցին ինձ. քննեցին ինձ՝ եւ իմ գործքերըս տեսին քառասուն տարի։

10 Նրահամար զղվեցայ էն ազգիցն՝ եւ ասացի. միշտ մոլորված են սրտով. եւ նորանք չըճանաչեցին իմ ճանապարհներըս։

11 Ինչպէս որ երդում կերի իմ բարկութենումն, թէ որ մտնեն իմ հանգստի մէջ։

12 Նայեցէք եղբարք, որ չըլինի թէ ձեզանից մինն անհաւատութեան չար սիրտ ունենայ՝ որ ապստամբ լինի կենդանի Աստուածանից։

13 Հայց իրար մխիթարեցէք ամէն ժամանակ, քանի որ էս օրս ասուածիգ կայ. որ չըլինի թէ ձեզանից մինն պնատանայ մեղքի խաբէութենուն։

14 Պատճառն որ մասնակից էլանք Քրիստոսի. միայն թէ էն սկսած հաստատութիւնըն մինչեւ վերջն պինա բռնենք[14]։

15 Այն որ ասում՝ թէ էսօր՝ թէ որ նորա ձայնըն լսէք, մի պնատացնէք

[1] Հռոմ. ա. 7։ ա Կորնթ. ա. 2։ Եփես. գ. 1։ Փիլիպ. գ. 14։ բ Թես. ա. 11։ բ Տիմ. ա. 9։ բ Պետր. ա. 10։ [2] Հռոմ. ժե. 8։ Եբր. բ. 17։ գ. 14։ ե. 5։ զ. 20։ ը. 1։ թ. 11։ ժ. 21։ [3] Թուա. ժբ. 7։ Վայր. 5։ [4] Զաք. զ. 12։ Մատթ. ժգ. 18։ [5] Եփես. բ. 10։ գ. 9։ Եբր. ա. 3։ [6] Վէր. 2։ [7] Նէհ. ժգ. 31։ Թուա. ժբ. 7։ բ Օրին. գ. 24։ Ցեր. ա. 2։ ը. 31։ [8] բ Օրին. ժը. 15, 18, 19։ [9] Եբր. ա. 2։ [10] Կորնթ. գ. 16։ զ. 19։ բ Կորնթ. զ. 16։ Եփես. բ. 21, 22։ ա Տիմ. գ. 15։ ա Պետր. բ. 5։ [11] Վայր. 14։ Մատթ. ժ. 22։ իգ. 13։ Հռոմ. ե. 2։ Կող. ա. 23։ Եբր. ղ. 11։ ժ. 35։ [12] բ Թագ. իգ. 2։ Գործ. ա. 16։ [13] Վայր. 15։ Սամ. զե. 7։ [14] Վէր. 6։

ձեր սրտերքն ինչպէս որ բարկացնեք զոյ ժամանակուանի[15]։

16 Ինչու որ միևնոյնիսկ լսեցին եւ բարկացուին[16], բայց ոչ թէ էին ամենքն՝ որ եգիպտոսէն դուրս էին եկած մովսէսի ձեռովն։

17 Ումի՞ց զղուեցաւ էն քառասուն տարին, չէ՞ որ էն մեղք գործողներիցն, որ նորանց ոսկորներն ընկան անապատի մէջն[17]։

18 Ո՞ւմ երդում կերաւ՝ որ իրան հանգստի մէջ չըմտնեն, եթէ ոչ էն անհաւատներին[18]։

19 Այս տեսնում ենք՝ որ չըկարացին մտնել էն անհաւատութեան պատճառովն[19]։

## Կ Գ

1 Քրիստոնեաներըն հաւատքով էն հանգստին մէջ էն մտնում։ 12 Աստուծոյ խօսքն կենդանի է եւ զօրաւոր։ 14 Պէտք է որ պինդ բռնենք էն դաւանութիւնն, պատճառն որ մեր մեծ քահանայապետ ունինք Յիսուսին Աստուծոյ որդին, որ մեր տկարութիւնն իրան վերայ առաւ ամէն բանով՝ բայց առանց մեղաց, 16 Որպէսզի համարձակութեամբ մտնենանք նորա շնորհաց աթոռին։

1 Ուրեմն վախենանք՝ որ չըլինի թէ նորա հանգըստի մէջ մտնելոյ աւետիքըն թողնուի՝ ձեզանից մինն պակասած գտնըվի[1]։

2 Պատճառն որ՝ աւետիքն քարոզվեցաւ մեզ ինչպէս որ նորանց էլ. բայց նորանց խօսքի օգուտ չի բերում խօսքի քարոզութիւնն, որ չըկակղացան հաւատքի հնազանդութեանն։

3 Այդ մենք էն հանգստին մէջ ենք մտնում՝ որ հաւատացինք[2]. ինչպէս որ նա էլ ասաց. թէ ինչպէս որ երդում արի իմ բարկութեննումն, եթէ մտնեն իմ հանգստի մէջ[3]. թէ եւ գործքերն աշխարհքի սկզբըցին կատարված էին։

4 Ինչու որ միևնոյն եօթներորդ օրին համար էսպէս է ասում. եւ Աստուած եօթներորդ օրումն հանգիստ առաւ իրան ամէն գործքերիցն[4]։

5 Այս էստեղ միևնոյն ասում՝ եթէ մտնեն իմ հանգստի մէջ։

6 Ուրեմն որովհետեւ մնում որ միևնոյնիսկ նորա մէջ մտնեն, եւ նորանք՝ որ առաջուց աւետիքն քարոզվեցաւ (նորանց) չըմտին անհաւատութեան պատճառովն[5]։

7 Միևնոյն ուրիշ օր Դաւիտի մէջ՝ էն էսօրըն դաւթումն, եւ էնքան ժամանակներից ետեւ ասում, ինչպէս որ առաջ ասաց. էսօր որ նորա ձայնըն լսէք, մի պնդացնէք ձեր սրտերքն[6]։

8 Ինչու որ եթէ Յեսուն նորանց հանգստի մէջ էր տարել՝ էլ նորանից ետեւ ուրիշ օրի համար չէր խօսիլ։

9 Այդպէս ուրեմն մնում շաբաթի հանգիստ՝ Աստուծոյ ժողովրդին համար։

10 Պատճառն որ՝ նա որ նորա հանգիստն մտաւ, նա էլ հանգստացաւ էն իրան գործքերից. ինչպէս

[15] Վէր. 7։ [16] Թուո. ժդ. 2, 4, 11, 24, 30։ բ Օրին. ա. 34, 36, 38։ [17] Թուո. ժդ. 22, 29։ Ղ. 65։ Սաղ. ղդ. 26։ ա Կորնթ. ժ. 5։ [18] Թուո. 5։ [18] Թուո. ժդ. 30։ բ Օրին. ա. 34, 35։ [19] Եբր. գ. 9։ [1] Եբր. ժբ. 15։ [2] Եբր. գ. 14։ [3] Սաղ. ղե. 11։ Եբր. գ. 11։ [4] Ծննդ. բ. 2։ Ելք. ի. 11։ Լա. 17։ [5] Եբր. գ. 19։ [6] Սաղ. ղե. 7։ Եբր. գ. 7։

որ Աստուած էլ իրանները[7]։

11 Լուրեմն ջանք անենք էն հանգըստին մէջ մանելոյ, որ չըլինի թէ մինն հենց էն անհաւատութեան օրինակին պէս ընկնի[7]։

12 Ինչու որ Աստուծոյ խօսքն կենդանի է եւ զօրաւոր[8] եւ աւելի կորուկ քանիմէ ամէն երկուբերանի[9] սուր[10], եւ ներս է մտնում մինչեւ շունչն եւ հոգոյ եւ խաղերի եւ ծուծի բաժանվելն, եւ մտքներ եւ սրտի խորհուրդներ քննօղ[11]։

13 Չէ խեղի մին ստեղծված անեւրեւոյթ էչ նորա երեսիցն[12], բայց ամէն բան մերկ եւ յայտնի է նորա աչաց առաջին՝ որ նորա վերայ մենք խօսում ենք[13]։

14 Ուրեմն որովհետեւ մեծ քահանայապետ ունինք՝ Յիսուսին Աստուծոյ որդին[14], որ երկինքովն անցկացաւ[15], էլ պինդ բռնենք դաւանութիւնըն[16]։

15 Պատճառն որ չէմէք էնպէսի քահանայապետ ունինք՝ որ չըկարենայ մեր տկարութեան հետ չարչարակից լինել[17], բայց նա ամէն բանով փորձվեցաւ (մեզ) նման[18] (բայց) առանց մեղաց[19]։

16 Ուրեմն համարձակութեամբ մտանենք նորա շնորհաց աթոռին, որ ողորմութիւն ընդունինք եւ շնորհք գտանենք էն ժամանակումն՝ որ օգնութիւն պէտք է[20]։

## ԳԼ. Ե

1 Քահանայապետութիւնն՝ պատիւն եւ փառքն։ 11 Ես դիտութեան համար թուլ լինելն՝ յանդիմանվելոյ արժան բան է։

1 Պատճառն որ՝ ամէն քահանայապետ մարդկանցից առած՝ եւ մարդկանց համար[1] աստուածային բաներումն կանգնած է[2], որ պատարագներ եւ մատաղներ մատուցանէ մեղաց համար[3]։

2 Որ նա կարող է չափով չարչարակից լինել տգէտներին եւ մոլորվածներին[4], պատճառն որ՝ հենց ինքն էլ տկարութեամբ պատած է[5]։

3 Էն պատճառովն պէտք է՝ որ ինչպէս ժողովրդին համար՝ էնպէս էլ իրան անձին համար պատարագ մատուցանէ մեղաց համար[6]։

4 Էս չէ թէ մինն իրան անձնովն է էն պատիւն առնում[7], բայց նա որ Աստուածմանից կանչված է՝ ինչպէս Ահարօնն[8]։

5 Հենց էսպէս էլ Քրիստոս չէ թէ ինքն փառք դրաւ իրան անձին՝ որ քահանայապետ լինի[9], բայց նա որ ասաց նորան՝ թէ դու ես իմ որդի՛ս, ես էսօր ծնայ քեզ[10]։

6 Ինչպէս որ էլ մէկէլ տեղումն

[7] Եբր. գ. 12, 18, 19։ [8] Ես. խթ. 2։ Եր. խգ. 29։ Բ Կոր. ժ. 4, 5։ ա Պետ. ա. 23։ [9] Աւետ. է. 4։ [10] Եփես. զ. 17։ Յայտ. ա. 16։ [11] ա Կորնթ. ժգ. 24, 25։ [12] Յով. լգ. 13, 14։ զ. 8։ Ղեւ. 11, 12։ [13] Ցոբ. խգ. 6։ լգ. 21։ Աւետ. ժե. 11։ [14] Եբր. գ. 1։ [15] Եբր. է. 26։ թ. 12, 24։ [16] Եբր. ժ. 23։ [17] Ես. ծգ. 3։ Եբր. բ. 18։ [18] Գաղ. իր. 28։ [19] Բ Կորնթ. է. 21։ Եբր. է. 26։ ա Պետ. բ. 22։ ա Ցովհ. գ. 5։ [20] Եփես. բ. 18։ գ. 12։ Եբր. ժ. 19, 21, 22։ [1] Եբր. ը. 3։ [2] Եբր. բ. 17։ [3] Եբր. ը. 3, 4։ թ. 9։ ժ. 11։ ժա. 4։ [4] Եբր. բ. 18։ գ. 15։ [5] Եբր. է. 28։ [6] Ղեւ. գ. 3։ թ. 7։ ժգ. 6, 15, 16, 17։ Եբր. է. 27։ թ. 7։ [7] Բ Նոց. խգ. 18։ Ցովհ. գ. 27։ [8] Եզէ. իը. 1։ Թուոց ժգ. 5, 40։ ա Նոց. խգ. 13։ [9] Ցովհ. ը. 54։ [10] Սաղմ. բ. 7։ Եբր. ա. 5։

ասուածէ։ զօր քահանայ ես յաւիտեան մելքիսեդեկի կարգին պէս[11]։

7 Զի որ իրան մարմնոյ օրերուանն աղօթք եւ աղաչանք[12] սաստիկ աղաղակով եւ արտասուքով մատուցանուածը Նորան[13] որ կարող էր ապրեցնել իրան[14]. եւ լսուածը իրան լաւութեան համար[15]։

8 Թէեւ որդի է[16] էն չարչարանքներուն հնազանդութիւնը սորվեց[17]։

9 Եւ երբոր կատարուեցաւ՝ իրան ամէն հնազանդողներուն համար յաւիտենական փրկութեան պատճառ էլաւ[18]։

10 Եւ Աստուածանից անուանուեցաւ (յաւիտենական) քահանայապետ՝ մելքիսեդեկի կարգին պէս[19]։

11 Որ Նորա համար շատ բան ունինք ասելոյ, որ դժուար է խօսքերով մեկնել[20]. ինչու որ դուն եւ տակաւ էլաք ականջներով[21]։

12 Զի որ տակաւ որ պէտք էր ձեզ վարդապետ լինիլ ժամանակին մարդ տալով. պիտի է որ դուք սորվիք՝ թէ ինչ են Աստուծոյ խօսքերի առաջին նշանագիրներն[22]. եւ կարօտ էլաք կաթի՝ եւ ոչ թէ հաստատ կերակուրի[23]։

13 Ինչու որ՝ ամէն ոք որ կաթ նակեր է, տգէտ է արդարութեան խօսքին, որովհետեւ տղայ է[24]։

14 Հայց հաստատ կերակուրը կատարեալներուն է[25], որ նորանք չափահաս են. եւ նրահամար ուսելոյ վարժված զգայքերնին ունին՝ բարին եւ չարըն իրարից ջոկելոյ համար[26]։

## ԻԶ

1 Առաքեալն յորդորէ որ հաւատքից յետ չդառնան, 11 Բայց հաստատ լինին, 12 Հաւատքով եւ երկայնմտութեամբ աւետիքներըն ժառանգին, 13 Պատճառն որ Աստուած երան տալոյ աւետիքի խոստմունքին վերայ հաստատ է։

1 Զհրահամար Քրիստոսի վարդապետութեան առաջին սկզբնաւորութիւնը թողունք, եւ դէպի կատարեալն գանք[1]. առանց միմիկ հիմն դնելոյ ապաշխարութեան էն մեռած գործքերից[2], եւ հաւատքին՝ որ դէպի Աստուած է.

2 Եւ մկրտութիւններուն ուսմունքին[3], եւ ձեռքի ձեռնադրութեան[4], եւ մեռելներուն յարութիւն առնելոյն[5], եւ յաւիտենական դատաստանին[6]։

3 Եւ հիմիկ էն անունք՝ թէ որ Աստուած հրամայէ[7]։

4 Պատճառն որ՝ անկարելի է[8] որ նորանք՝ որ միւն անգամ մկրտուած

[11] Սաղ. ՃԺ. 4։ Եբր. է. 17, 21։ [12] Մարկ. իգ. 39, 42, 44։ Մարկ. ԺԳ. 36, 39։ Ճառկ. ԺԷ. 1։ [13] Սաղ. իբ. 1։ Մարկ. իէ. 46, 50։ Մարկ. ԻՀ. 34, 37։ [14] Մարկ. իգ. 53։ Մարկ. ԺԳ. 36։ [15] Մարկ. իգ. 37։ Մարկ. ԺԳ. 33։ Ղուկ. իբ. 43։ Ճառկ. ԺԲ. 27։ [16] Եբր. գ. 6։ [17] Փիլիպ. բ. 8։ [18] Եբր. բ. 10։ Ժան. 40։ [19] Ակբ. 6։ Հեբր. ը. 20։ [20] Ճառկ. ԺԳ. 12։ բ Պետր. գ. 16։ [21] Մարկ. ԺԳ. 15։ [22] Եբր. գ. 1։ [23] ա Կորնթ. գ. 1–3։ [24] ա Կորնթ. ԺԳ. 11։ ԺԳ. 20։ Եփես. գ. 14։ ա Պետր. բ. 2։ [25] ա Կորնթ. բ. 6։ Եփես. գ. 13։ Փիլիպ. գ. 15։ [26] Հռոմ. է. 15։ ա Կորնթ. բ. 14. 15։ [1] Փիլիպ. գ. 12–14։ Եբր. ե. 12։ [2] Եբր. թ. 14։ [3] Գործ. ԺԹ. 4, 5։ [4] Գործ. բ. 14–17։ ԺԹ. 6։ [5] Գործ. ԺԿ. 31, 32։ [6] Գործ. իգ. 25։ Հովհ. բ. 16։ [7] Գործ. ԺԸ. 21։ ա Կորնթ. գ. 19։ [8] Մարկ. ԺԸ. 31, 32։ Եբր. ԺԳ. 26։ բ Պետր. բ. 20, 21։ ա Ճառկ. ե. 16։

ձեն[9], որ երիվարաւոր պարագիներուն հա-
մըն առին[10], եւ սուրբ հոգւոյն մասնա-
կից եղան[11],

5 Ու Աստուծոյ ազնիւ խօսքի, եւ նորագալոց աշխարհքի զօրու-
թիւններուն համըն առին[12]։

6 Ու (յիրաւի) կործանվին, որ (նորանք) միւնէլ նորոգվին ապաշ-
խարութիւն գալով, ինչու որ՝ Աս-
տուծոյ որդւոյն միւնէլ իրանց համար
խաչեցին եւ միւնէլ խայտառակ ա-
րին[13]։

7 Պատճառն որ մին հող՝ որ շատ
անգամ իրան վերայ եկած անձրեւըն
խմէ, եւ շահաւոր պտուղ բուսացնէ
նորանց համար՝ որ գործեցին նորան,
նա Աստուծոյ օրհնութիւնըն կընդ-
ունի[14]։

8 Խայց էն որ փուշ եւ տատասկ
բերումէ, անպիտան է՝ եւ անէծքին
մօտ, եւ նորա վերջն՝ այրվիլն է[15]։

9 Խայց Հաստատ եմ ձեզ հա-
մար սիրելիներ, որ լաւ կողին էք,
եւ էն որ լիքն է փրկութիւնով, թէ
եւ էսպէս ենք խօսում։

10 Ինչու որ[16]՝ Աստուած անիրաւ
չէ[17] որ մոռնայ ձեր գործքերըն եւ
սէրըն, որ նորա անունովն ցոյց
տուիք[18], նրանով որ սրբոցն ծա-
ռայումիք եւ ծառայումիք[19]։

11 Ու մենք ցանկանումենք՝ որ
ձեզանից ամէն մէկդ հենց էն չանքըն
ցոյց տայ՝ որ յոյսն հաստատ մնայ
մինչեւ վերջն[20],

12 Որ մեքով թոյլ չըլինիք, (բայց) նմանող էլիք նորանց՝ որ
հաւատքով եւ երկայնմտութիւնով
աւետիքներըն ժառանգեցին։

13 Պատճառն որ՝ Աստուած եր-
բոր աբրահամին տուաւ աւետիքի
խոստմունքըն, որովհետեւ մին ուրիշ
աւելի մեծ չըկար՝ որ նորանով եր-
դում ուտէ[21],

14 Իրան անձնովն երդում կէ-
րաւ, եւ ասաց, ուղղիդ որ՝ օրհնելով
կօրհնեմ քեզ, եւ շատացնելով
կշատացնեմ։

15 Ու նա էնպէս երկայնամիտ է-
լաւ՝ եւ աւետիքին հասաւ։

16 Իրաւի է որ մարդիք նորանով
երդում են ուտում՝ որ իրանցից
վերեւ է, եւ նորանց ամէն հակա-
ռակութիւնների վճիռն՝ երդումն է՝
որ նորանով բանն հաստատվում[22]։

17 Նրահամար Աստուած էլ՝ ո-
րովհետեւ էլ աւելի կամեցաւ աւե-
տիքի ժառանգօրիներին ցոյց տալ[23]՝
իրան խորհրդոյ հաստատութիւ-
նըն[24], երդումն մէջ դրաւ։

18 Որ երկու բանով՝ որ չեն փո-
փոխվիլ, որ նորանցով անկարելի է
որ Աստուած սուտ խօսի, հաստատ
միխիթարութիւն ունենանք, մենք որ
ապաւինեցանք առաջի դրած յոյսըն
ձեռքով բռնելոյ։

19 Որ նորան՝ (նաւու) հաստատ
եւ անշարժ երկաթի պէս ունինք մեր
անձներիս համար, որ էլ մտնումէ
վարագուրի ներսի կողմն[25],

20 Որ տեղ որ մեր առաջնորդ
Յիսուսն մտաւ մեզ համար[26], մել-
քիսեդեկի կարգին պէս՝ յաւիտե-
նական քահանայապետ եղած[27]։

[9] ԵԲՐ. ժ. 32։ [10] ՑՒՀ. գ. 10։ Չ. 32։ ԵՓԵՍ. բ. 8։ [11] ԳԱՂ. գ. 2, 5։ ԵԲՐ. բ. 4. [12] ԵԲՐ. ք. 5։ [13] ԵԲՐ. ժ. 29։ [14] ՍԱՂՄ. կԶ. 10։ [15] ԵՍԱՅ. ԼԲ. 6։ [16] ԱՌԱՒ. ժգ. 31։ ՄԱՏ. ժ. 42։ ԼՒԿ. 40։ ՑՒՀ. ժգ. 20։ [17] ՀՈՎՀ. գ. 4։ ԲԹԽԱՍ. ա. 6, 7։ [18] ա ԹԽԱՍ. ա. 3։ [19] ՀԱՒՎ. ԺԶ. 25։ բ ԿՈՐՆ. ը. 4։ ԹԱ. 1. 12։ բ ՅՀՓ. ա. 18։ [20] ԵԲՐ. գ. 6, 14։ [21] ԾՆՆԴ. ԻԲ. 16, 17։ ՍԱՂՄ. ՃԶ. 9։ ՂԱՒ. ա. 73։ [22] ԵՍ. ԻԲ. 11։ [23] ԵԲՐ. ժա. 9։ [24] ՀԱՒՎ. ժա. 29։ [25] ՂԵՒՏ. ԺԶ. 15։ ԵԲՐ. Թ. 7։ [26] ԵԲՐ. գ. 14։ ը. 1։ Թ. 24։ [27] ԵԲՐ. գ. 1։ է. 6, 10, է. 17։

# ԳԼ· Ի·

1 Ցխսուս Մելքիսեդեկի կարգին պէս մին քահանայ է, 11 եւ էսպէս Ահարօնի կարգի քահանաներից աւելի ազնիւ է իրան քահանայութիւնն։

1 Պատճառն որ՝ էս մելքիսեդեկս սաղէմի թագաւոր էր[1]. բարձրեալ Աստուծոյ քահանայ. որ դուրս եկաւ աբրահամի առաջն, երբոր նա թագաւորների կոտորելուցն յետ դարձած գալիս էր՝ եւ օրհնեց նորան։

2 Որ աբրահամ՝ նորան էլ ամէն բաներից տասանորդ տուաւ. նա առաջ թարգմանվում արդարութեան թագաւոր, եւ ապա՝ սաղէմի թագաւոր՝ որ է խաղաղութեան թագաւոր։

3 Առանց հօր, առանց մօր, մին ազգի մէջ չըհամարված, որ ոչ օրերի սկիզբն ունի, եւ ոչ կենաց վերջն. (բայց) Աստուծոյ որդուն նման եղած՝ կենում միշտ յաւիտենական քահանայ։

4 Իմիկ տեսէք թէ քանի մեծ էր սա՝ որ աբրահամ նահապետն էլ նորան տասանորդ տուաւ էն (առած) աւարիցն (ըալանիցն)[2]։

5 Իրա զաւիթի որդիքներիցն նորանք՝ որ քահանայութիւնն առնում, հրաման ունին տասանորդ առնելոյ ժողովրդիցն օրէնքին պէս. պարոնքն՝ իրանց եղբայրներից. թէ եւ իրանք էլ աբրահամի երանքիցն (ըլջնիցն) են առաջ եկած[3]։

6 Բայց նա, որ նորանց ազգի մէջ չըհամարված՝ տասանորդ առաւ աբրահամիցն. եւ օրհնեց նորան՝ որ աւետիքներն ընդունել էր[5]։

7 Իմիկ առանց ամէն հակառակութեան է, որ ցածն վերինիցն օրհնվում։

8 Իրա էստեղ մեռնելու մարդիք տասանորդ են առնում. բայց էնտեղ վկայվեցաւ թէ նա կենդանի է։

9 Իրա ինչպէս որ խօսքի կարգն է բերում. ասեմ թէ աբրահամովն ղեւին էլ՝ որ տասանորդ է առնում, տասանորդ տուաւ։

10 Ինչու որ՝ դեռ նա իրան հօր երանքումն (ըլջումն) էր՝ երբոր մելքիսեդեկն նորա առաջն եկաւ։

11 Այս ուրեմն թէ որ կատարելութիւն ղեւտացոց քահանայութենովն էր, (ինչու որ ժողովուրդն նորա ներքեւն օրէնքըն ընդունեց). էլ ի՞նչ պէտք էր որ մելքիսեդեկի կարգին պէս մին ուրիշ քահանայ առաջ գայ՝ եւ ահարօնի կարգին պէս չասվի[6]։

12 Այլ երբոր քահանայութիւնն փոխվում, պէտք է որ օրէնքն էլ փոխվի։

13 Պատճառն որ՝ նա որ նորա համար էսպէս է ասվում՝ ուրիշ ցեղի մանակից է. որ նորանից իսկի մինն սեղանին հաղորդ չէլաւ։

14 Ինչու որ յայտնի բան է՝ որ մեր Տէրն յուդայի ցեղիցն ծագեց[7]. որ էն ցեղի վերայ մովսէն իսկի բան չըխօսեց քահանայութեան համար։

15 Իրա էլ աւելի յայտնի է թէ մելքիսեդեկի նմանութեան պէս մին

[1] Ծննդ. ժդ. 18։ [2] Ծննդ. ժդ. 20։ [3] Թուոց. ժը. 21, 26։ [4] Ծննդ. ժդ. 19։ [5] Հռովմ. դ. 13։ Գաղ. գ. 16։ [6] Գաղ. բ. 21։ Վայր. 18, 19։ Եբր. ը. 7։ [7] Եսայ. ժա. 1։ Մատթ. ա. 3։ Ղուկ. գ. 33։ Հռովմ. ա. 3։ Յայտ. ե. 5։

ուրիշ քահանայ պիտի առաջ գայ։
16 Որ մարմնաւոր պատուիրանքին պէս չէլաւ, բայց վերջն չունաղ կեան-քի զօրութեան պէս։
17 Ինչու որ՝ վկայվեցաւ, Թէ դու քահանայ ես յաւիտեան մելքիսե-դեկի կարգին պէս[8]։
18 Այ դէն է քովում առաջին պատուիրանքն՝ իրան տկարութեան եւ անօգուտ լինելոյն համար[9]։
19 Պատճառն որ՝ օրէնքն իսկի մին կատարելութիւն չըգործեց[10], եւ ներս մտաւ (աւելի) աղնիւ յոյս[11] որ նորանով մօտենում ենք Աստուծոյ մօտ[12]։
20 Այ էնքան որ առանց երդումի չէ։ (ինչու որ՝ նորանք առանց եր-դումի քահանայ են էլած։)
21 Ինչ որ սա՝ երդումով նորա ձե-ռովն՝ որ ասաց նորան։ Տէրն եր-դուաւ՝ եւ էլ չի՛ զղջանալ, Թէ դու քահանայ ես յաւիտեան[13]։
22 Այ էնքան աւելի աղնիւ ուխ-տապայմանի երաշխաւոր (գէնթէլ) է-լաւ Յիսուսն[14]։
23 Այ (նորանք) շատ քահանայ են էլել։ ինչու որ՝ մահն պրգելու-մէր նորանց՝ որ միշտ մնան։
24 Ինչ որ սա՝ որովհետեւ յաւի-տեան է կենում, քահանայութիւ-նըն ունի առանց անցկենալոյ։
25 Որ նրահամար էլ լոլորովին կարող է կենդանի անել նորանց՝ որ նորանով մօտենում Աստուծոյ մօտ, ինչու որ՝ միշտ կենդանի է՝ որ նորանց համար բարեխօսութիւն ա-նէ[15]։
26 Պատճառն որ՝ հէնց էսպէսի քահանայապետ վայելումէր մեզ, սուրբ, անմեղ, անաւլար, մեղաւոր-ներից զոկված[16] եւ երկնքից էլ վեր բարձրացած[17]։
27 Որ նորան պէտք չէ ինչպէս ու-րիշ քահանայապետներին, որ ամէն ժամանակ առաջ իրանց մեղքերին համար պատարագներ մատուցա-նեն[18] եւ յետոյ ժողովրդին հա-մար[19], բայց սա մին անգամ կատա-րեց էն նրանով՝ որ իրան անձըն պա-տարագ մատոյց[20]։
28 Որ էնքան մարդկանց կանգնաց-նում քահանայապետ՝ որ պատած են տկարութենով[21], բայց էն եր-դումի խօսքն՝ որ օրէնքից ետեւ է՝ (կանգնացնում) որդոյն՝ որ յաւի-տեան կատարեալ է[22]։

[8] Սաղմ. ճժ. 4։ Եբր. է. 6, 10։ զ. 20։ [9] Հռովմ. ը. 3։ Գաղ. գ. 9։ [10] Գործ. ժգ. 39։ Հռովմ. գ. 20, 21, 28։ ը. 3։ Գաղ. բ. 16։ Եբր. Թ. 9։ [11] Եբր. ջ. 18։ ը. 6։ [12] Հռովմ. ե. 2։ Եփես. բ. 18։ գ. 12։ Եբր. դ. 16։ ժ. 19։ [13] Սաղմ. ճժ. 4։ [14] Եբր. ը. 6։ Թ. 15։ ժբ. 24։ [15] Հռովմ. ը. 34։ ա Տիմ. բ. 5։ Եբր. Թ. 24։ ա Յովհ. բ. 1։ [16] Եբր. է. 15։ [17] Եփես. ա. 20։ դ. 10։ Եբր. ը. 1։ [18] Ղեւտ. Թ. 7։ ժզ. 6, 11։ Եբր. ե. 3։ Թ. 7։ [19] Ղեւտ. ժզ. 15։ [20] Հռովմ. ջ. 10։ Եբր. Թ. 12, 28։ ժ. 12։ [21] Եբր. ե. 1, 2։ [22] Եբր. է. 10։ ե. 9։

# ԳԼ· Ը

1 Քրիստոսի առանց անցկենալոյ քահանայութենովն Հարօնի Ղեւտացոյ քահանայութիւնն ապականվեցաւ· 7 Եւ հայրերին հետ ելած ժամանակաւոր ուխտապայմանքն՝ Ղեւտարանի յաւիտենական ուխտապայմանովն ապականվեցաւ։

1 Եւ ասաց խօսքերի գլուխըն էս է· (մենք) էսպէսի քահանայապետ ունինք, որ մեծութեան աթոռի աջ կողմն նստեց երկնքումն[1]։

2 Եւ սրբութեանց պաշտօնեայ է[2] եւ ճշմարիտ խորանի, որ նորան Տէրն կանգնացրուց՝ եւ ոչ թէ մարդ[3]։

3 Պատճառն որ՝ ամէն քահանայապետ մատաղներ եւ պատարագներ մատուցանելոյ համար կարգված է[4], ուրեմն նորան էլ պէտք է որ մին բան ունենայ՝ որ մատուցանէ[5]։

4 Ինչու որ եթէ երկրիս էր՝ էլ քահանայ էր չէր· պատճառն որ նորանք կային՝ որ օրէնքին պէս պատարագ էին մատուցանում։

5 Որ նորանք երկնաւոր բաներուն առակին եւ օրինակին ծառայութեան էին[6], ինչպէս որ Հրաման էլաւ մովսէսին՝ երբոր էն ժամի խորանըն շինելու էր, մտիկ տուր ասում է, որ ամէն բան անոնց օրինակին պէս՝ որ ցոյց տրվաւ քեզ սարումն[7]։

6 Հայց հիմի՝ Յիսուս աւելի ազնիւ պաշտամունքի հասաւ, որքան ինքն աւելի լաւ ուխտապայմանի միջնորդ է՝ որ աւելի ազնիւ աւետիքներուն վերայ հաստատվեցաւ[8]։

7 Ինչու որ՝ եթէ առաջինն անանց պակասութեան լինէր, էլ երկրորդին համար տեղ չէր խնդրվիլ[9]։

8 Հայց տէր յանդիմանում է նորանց եւ ասում· ահա օրեր կըգան՝ ասում Տէրն[10]· եւ նոր ուխտ կըկատարեմ իսրայէլի տանն եւ յուդայի տանն վերայ։

9 Ոչ թէ էն ուխտին պէս՝ որ նորանց հարանց հետ դրի՝ էն օրումն, որ ձեռքին բռնեցի նորանց եգիպտացոց երկրիցն հանելոյ համար· ինչու որ՝ նորանք հաստատ չըկացան իմ ուխտիս մէջ, եւ ես երեսից քըցեցի նորանց, ասում ամէնակալող Տէրն։

10 Հայց էս է ուխտն՝ որ կըդնեմ իսրայէլի տանն հետ՝ էն օրերիցն ետեւ, ասում Տէրն· կըտամ իմ օրէնքներըս նորանց մտքին մէջ՝ եւ նորանց սրտերի մէջ կըգրեմ նորանց[11]· եւ նորանց Աստուած կըլինիմ՝ եւ նորանք ինձ ժողովուրդ կըլինին[12]։

11 Եւ էլ նորանց ամէն մէկն չի սովորցնիլ իրան քաղաքացին, եւ ոչ էլ ամէն մէկն իրան եղբօրն՝ եւ ասել՝ թէ ճանաչէ՛ր Տէրն· ինչու որ՝ ամէնքն էլ կըճանաչեն ինձ՝ նորանց փոքրներիցն մինչեւ մեծամեծներն[13]։

12 Պատճառն որ՝ նորանց անօրէնութիւններին քաւիչ կըլինիմ· եւ նորանց մեղքերըն՝ եւ անօրէնու-

[1] Եբր· ա· 20· Կող· գ· 1· Եբր· ա· 3· ժ· 12· ժը· 2· [2] Եբր· թ· 8, 12, 24· [3] Եբր· թ· 11· [4] Եբր· ե· 1· [5] Եփես· ե· 2· Եբր· թ· 14· [6] Կող· բ· 17· Եբր· թ· 23· ժ· 1· [7] Եփ· իե· 40· իզ· 30· իէ· 8· թագ· ը· 4· Գործ· է· 44· [8] Յովհ· գ· 6, 8· 9· Եբր· է· 22· [9] Եբր· է· 11, 18· [10] Երեմ· լա· 31–34· [11] Եբր· ժ· 16· [12] Զաք· ը· 8· [13] Եսայ· ծգ· 13· Ցովհ· զ· 45· ա Ցովհ· բ· 27։

Թիւններըն էլ չեմ յիշել[14]։

13 Պատանոր ասելովն՝ էն առաջինըն հնացրուց, եւ էն որ հնանում եւ ծերանում՝ մօտ է ապականութեան[15]։

## ԳԼ · Թ

1 Տաճարի միջումն էլած գուբք բաներին եւ պատարագներին յիշատակութիւնն, 11 եւ թէ քրիստոսի արած պատարագըն՝ որ նա խաչին վերայ էլաւ, նորանցից շատ ազնիւ եւ կատարեալ է։

1 Ուղղորդ որ առաջին (կտակարանն) էլ էն ժամանակն պաշտամունքի իրաւունք ունէր՝ էն աշխարհական սրբատեղըն[1]։

2 Ինչու որ՝ առաջին խորանն էս պէս պատրաստվեցաւ[2], որ նորանում էր[3] ճրագակալն[4] եւ սեղանն՝ եւ նուէրքի հացն[5], եւ էն սրբութիւն էր կոչվում։

3 Իւ երկրորդ վարագուրիցն ետեւ էն խորանն էր՝ որ սրբութեանց սրբութիւն էր կոչվում[6]։

4 Որ նորանում կար ոսկէ բուրվառն, եւ կտակարանների սրնտուկն ներսիցն եւ դրսիցն ոսկով պատած[7]. որ նորանում կար ոսկէ կուժըն մանանայով լիքն[8], եւ ահարօնի գաւազանն՝ որ ծաղկեց[9], եւ կտակարանների տախտակներն[10]։

5 Իւ նորա վերայ փառաց քերովբէներն՝ որ շուաք էին անում քաւութեանն վերայ[11]. որ նորա համար պէտք չէ հիմիկ մին մին ասել։

9 Իւ երբոր էն ամէնն էնպէս պատրաստված էր, քահանայքն ամէն ժամանակ մանում էին առաջին խորանին մէջ՝ որ պաշտամունքներըն կատարին[12]։

7 Իսայց երկրորդին մէջ քահանայապետըն տարին մին անգամ (մանում էր)[13], եւ էն չէ թէ առանց արիւնի, որ իրան համար եւ ժողովրդի տգիտութիւններին համար մատուցանում էր[14]։

8 Որ սուրբ Հոգին նորանով էս ցոյց էր տալիս[15]՝ որ դեռ սրբութիւնների ճանապարհն յայտնված չէր[16]. նրահամար որ՝ առաջին խորանն դեռ հաստատ կանգնած էր։

9 Որ էն մին առակ էր էն ժամանակին համար, որ առջի կար. որ նորանում պատարագներ եւ մատաղներ էին մատուցանվում, որ խղճմտանքին մտիկ տալով՝ չէին կարող կատարեալ անել նորանց՝ որ պաշտում էին[17]։

10 Իսայց մէնակ կերակուրներով եւ խմելիքներով[18] եւ կերպ կերպ լուացմունքներով[19] մարմնոյ արդարութիւններ. որ նորանք մինչեւ շի-

[14] Հեսի. ժա. 27։ Եբր. ժ. 17։ [15] Բ Կոչնդ. ե. 17։ [1] Եբ. իե. 8։ [2] Եբ. իզ. 1։ [3] Եբ. իզ. 35։ խ. 4։ [4] Եբ. իե. 31։ [5] Եբ. իե. 23. 30։ Դէսպ. իդ. 5. 6։ [6] Եբ. իզ. 31, 33։ խ. 3, 21։ Եբր. զ. 19։ [7] Եբ. իե. 10։ իզ. 33։ խ. 3, 21։ [8] Եբ. ժզ. 33, 34։ [9] Թուա. ժե. 10։ [10] Եբ. իե. 16, 21։ լդ. 29։ խ. 20։ բ Օրին. ժ. 2, 5։ գ Թագ. ը. 9, 21։ բ Մնաց. ե. 10։ [11] Եբ. իե. 18, 22։ Դէսպ. ժզ. 2. գ Թագ. ը. 6, 7։ [12] Թուա. իը. 3։ Դան. ը. 11։ [13] Եբ. լ. 10։ Դէսպ. ժզ. 2, 11, 12, 15, 34։ Վայր. 25։ [14] Եբր. ե. 3։ է. 27։ [15] Եբր. ժ. 19, 20։ [16] Ցուվ. ժգ. 6։ [17] Գաղ. գ. 21։ Եբր. է. 18, 19։ ժ. 1. 11։ [18] Դէսպ. ֆա. 2։ կա. բ. 16։ [19] Թուա. ժԹ. 7։

տակվելոյ ժամանակին կարգված էին[20]։

11 Ասյց Քրիստոս որ յետոյ լինելու բարիքների[21] քահանայապետ եկաւ[22]՝ մեծ եւ կատարեալ՝ եւ ոչ անց ձեռքի շինած խորանովն, այսինքն՝ որ էս ստեղծվածներիցն չէ[23]։

12 Ոչ ուչ թէ նոխազների (աէնէքէնէլէ) եւ արջառների արիւնովն[24], այլ իրան արիւնովն[25] մին անգամ մտաւ էն սրբատեղն[26] եւ յաւիտենական փրկութիւն գտաւ[27]։

13 Ինչու որ՝ եթէ ցուլերի (պօղանէլէ) եւ նոխազների արիւնն[28] եւ երինջների մոխրն ցանելով՝ սրբութիւն պղծվածներին՝ մարմնաւոր սրբութիւն ստանալոյ համար[29],

14 Չ՞ որքան աւելի Քրիստոսի արիւնն[30] որ յաւիտենական հոգով ձեռնովն[31] իրան անձն անարատ պատարագ մատոյց Աստուծոյն[32], ձեր խղճմտանքըն կսրբէ[33] էն մեռած գործքերիցն[34] որ կենդանի Աստուծոյն պաշտէք[35]։

15 Ու նրա համար[36] նա նոր ուխտի միջնորդ է[37], որ երբոր մահ էլաւ փրկութեան համար էն առաջին ուխտի ժամանակումն էլած յանցանքների պատճառովն[38], աւետիքըն առնեն նորանք՝ որ ժառանգութեան մէջ կանչված են[39]։

16 Պատճառն որ՝ որտեղ որ մին կտակ կայ՝ հարկաւոր է որ էն կտակ

17 Ինչու որ՝ կտակ մեռնելուցն ետու հաստատ է, ապա թէ չէ՝ ի՞նչ պէս հաստատ կըլինի՝ քանի որ էն կտակ գրօղն կենդանի է[40]։

18 Ուրահամար առաջինն էլ առանց արիւնի չըհաստատվեցաւ[41]։

19 Պատճառն որ՝ երբոր մնէհան օրէնքի ամէն պատուիրանքներըն պատմեց ժողովրդին, ցուլերի (պողանէլէ) եւ նոխազների (աէնէնէլէ) արիւնըն առաւ[42] ջրի եւ կարմիր բըրդի եւ զոպայի հետ, եւ հենց էն կտակարաններին եւ ամէն ժողովրդին վերայ ցանեց[43],

20 Ասաց, Էս է կտակի արիւնն՝ որ Աստուած նորան պատուիրեց ձեզ[44]։

21 Ու խորանին եւ պաշտամունքի ամէն ամաններին վերայ էլ հենց էն պէս արիւնըն ցանեց[45]։

22 Ու համարեա թէ ամէն բան արիւնով էր սրբըվում օրէնքի համաձայն պէս, եւ առանց արիւն թափելոյ թողութիւն չէր լինում[46]։

23 Պատ հարկաւոր էր՝ որ երկնաւոր բանների օրինակներն էսպէսի բաներով սրբվին, բայց յաւուկ երկնաւորներն ինքնին նորանից աւելի աղնիւ պատարագներով[47]։

24 Պատճառն որ՝ չէ թէ ձեռքով շինված սրբատեղերին մէջ մտաւ Քրիստոսն[48] որ ճշմարտութեան օ-

---

[20] Եբր. բ. 15։ Կող. բ. 20։ Եբր. է. 16։ [21] Եբր. ժ. 1։ [22] Եբր. գ. 1։ [23] Եբր. ը. 2։ [24] Եբր. ժ. 4։ [25] Գործ. ի. 28։ Եփես. ա. 7։ Կող. ա. 14։ ա Պետ. ա. 19։ Յայտ. ա. 5։ է. 9։ [26] Ջաթ. գ. 9։ Ալյտ. 26, 28։ Եբր. ժ. 10։ [27] Դան. թ. 24։ [28] Ղեւտ. ժգ. 14, 16։ [29] Թուոց. ժթ. 2, 17։ [30] ա Պետր. ա. 19։ ա Ցովհ. ա. 7։ Յայտ. ա. 5։ [31] Հռոմ. ա. 4։ ա Պետր. գ. 18։ [32] Եփես. բ. 5։ Տիտ. բ. 14։ Եբր. է. 27։ [33] Եբր. ա. 3, ժ. 22։ [34] Եբր. զ. 1։ [35] Ղուկ. ա. 74։ Հռոմ. զ. 13, 22։ ա Պետր. գ. 2։ [36] ա Տիմոթ. բ. 5։ [37] Եբր. է. 23։ ը. 6։ ժբ. 24։ [38] Հռոմ. գ. 25։ է. 6։ ա Պետր. գ. 18։ [39] Եբր. գ. 1։ [40] Գաղ. գ. 15։ [41] Եսթ. իդ. 6։ [42] Եսթ. իդ. 5, 6, 8։ Ղեւտ. ժզ. 14, 15, 18։ [43] Ղեւտ. ժգ. 4, 6, 7, 49, 51, 52։ [44] Եսթ. իդ. 8։ Մատթ. իզ. 28։ [45] Եսթ. ին. 12, 36։ Ղեւտ. ը. 15, 19։ ժզ. 14, 15, 16, 18, 19։ [46] Ղեւտ. ժէ. 11։ [47] Եբր. ը. 5։ [48] Եբր. զ. 20։

բինակները էին[49], բայց հինց յատուկ երկնքին մէջ՝ որ Աստուծոյ երեսի առաջին երեւի մէզ համար[50]։

25 Հէ որ շատ անգամ իրան անձըն պատարագ մատուցանէ՝ ինչպէս որ քահանայապետըն, որ տարուց տարի մտնում մէջ սրբութեանց սրբութեթիւնն օտար արիւնով[51]։

26 Պա թէ չէ՝ պէտք էր որ նա աշխարհքի սկզբից ետու շատ անգամ՝ չարչարվի. բայց հիմի՝ ահա ժամանակների վերջում[52] մին անգամ[53] յայտնըվեցաւ, որ մեղքըն դէն քցէ իրան պատարագով։

27 Նէ ինչպէս որ մարդկանց համար սահմանված է մին անգամ մեռնելն[54] եւ նրանից ետու դատաստանն[55],

28 Հինց էնպէս էլ Քրիստոս մինանգամ պատարագվեցաւ[56] շատերի[57] մեղքերըն վերառնելոյ համար[58], բայց երկրորդ անգամն առանց մեղքի կը յայտնըվի նորանց՝ որ սպասումն նորան հաւատքով՝ որ փրկվին[59]։

## ԳԼ · Ի

1 Օրէնքի պատարագներին տկարութիւնն. 10 Քրիստոսի մարմնով մին անգամ պատարագվին սրբվեցանք. 14 Եւ միշտ եւ յաւիտեան մեղքերըն վերաւաւ։ 19 Համբերութեամբ եւ գոհութեամբ հաւատքի մէջ հաստատ մնալոյ մին յորդորանք։

1 Պատճառն որ՝ օրէնքն յետոյ գալու բարիքների[1] շնաքըն ունէր[2], ոչ թէ էն բաների յատուկ կերպարանքըն. տարուց տարի միշտ հինց էն պատարագներըն մատուցանում[3] որ չեն կարող կատարեալ անել մատուցանողներին[4]։

2 Պա թէ չէ՝ կըդադարէին էն մատուցանելուցն, նրահամար որ պաշտօն անողներն նրանից ետու էլ մեղքի խղճմտանք իսկի չէին ունենալ. ինչու որ՝ մինանգամ սրբվեցան։

3 Ասայ էն (պատարագներով) տարուց տարի մեղքերի յիշատակ էր լինում[5]։

4 Ինչու որ նոխազների (աեղք նէրէ) եւ ցուլերի (պօղանէրէ) արիւնն չէր կարող մեղքերըն վերառնել[6]։

5 Նրահամար իրան աշխարհք մտնելոյ ժամանակումն ասում. մատաղներ եւ պատարագներ (դու) չըկամեցար, բայց մարմինըն պատրաստեցիր հինձ[7]։

6 Ողջակէզներն եւ մեղաց համար (պատարագներն) հաճոյ չէլան քեզ։

7 Յետ ժամանակն ասացի Թէ՝ ահա եկի. գլքերի խօսքերումն գրըված է հինձ համար՝ քո կամքըդ անելոյ՝ ով Աստուած։

[49] Եբր. ը. 3։ [50] Հռովմ. ը. 34։ Եբր. է. 25։ ա Յովհ. բ. 1։ [51] Վէր. 7։ [52] ա Կորնթ. ժ. 11։ Գաղ. գ. 4։ Եփես. ա. 10։ [53] Վէր. 12։ Եբր. է. 27. ժ. 10։ ա Պետր. գ. 18։ [54] Ծննդ. գ. 19։ Թագ. գ. 20։ [55] Բկրնդ. ը. 10։ Յոբ. ի. 12, 13։ [56] Հռովմ. զ. 10։ ա Պետր. գ. 18։ [57] Մատթ. իզ. 28։ Հռովմ. ե. 15։ [58] ա Պետր. բ. 24։ ա Յովհ. գ. 5։ [59] Տէր. բ. 13։ բ Պետր. գ. 12։ [1] Եբր. թ. 11։ [2] Կող. բ. 17։ Եբր. ը. 5։ թ. 23։ [3] Եբր. թ. 9։ [4] Վայր. 14։ [5] Դէտ. ժզ. 21։ Եբր. թ. 7։ [6] Մատթ. զ. 6, 7։ Եբր. թ. 13։ Վայր. 11։ [7] Սամ. ե. 6։ ծ. 8։ Եսայ. ա. 11։ Եբր. զ. 20։ Ամաս. ե. 21, 22։

8 Վ Երեւումն ասուածՙ Թէ՝ մա-
տաղներն եւ պատարագներն եւ ող-
ջակէզներն եւ մեղաց համար (պա-
տարագներն) հաճոյ չէքան քեզ, եւ
չըհամեցար նորանց՝ որ օրէնքի հը-
րամանին պէս նորանք էին մատու-
ցանվում:

9 Ապա ասուածՙ ահա գալիս եմ
քո կամքըդ անելոյ՝ ով Աստուած,
առաջինն դէն է քցուածՙ որ երկրոր-
դըն հաստատէ:

10 Որ էն կամքովն մենք էլ սրբը-
վեցանք[8] միանգամ Յիսուսի Քրը-
իստոսի մարմնոյ պատարագովն[9]:

11 Եւ ամէն քահանայապետ ամէն
օր կանգնած պաշտամունք է կատա-
րում, եւ հենց էն պատարագներըն
շատ անգամ մատուցանում[10], որ
իսկի չեն կարող մեղքերըն վերաո-
նել[11]:

12 Բայց սա մին պատարագ մա-
տոյց մեղաց համար, եւ միշտ եւ յա-
ւիտեան նստեց Աստուծոյ աջ
կողմն[12]:

13 Եւ սրանից եւս սպասումՙ
մինչեւ որ իրան ամէն թշնամիներն
իրան ոտաց նեղքեւն դնվին[13]:

14 Ինչու որՙ մին պատարագով
միշտ եւ յաւիտեան կատարեց նո-
րանց որ սրբվումեն[14]:

15 Բայց սուրբ Հոգին էլ վկայու-
մ մեզ, երբոր առաջ ասաց.

16 Թէ էս է ուխտն՝ որ կըդնեմ
նորանց հետ էն օրերիցն ետեւ, կը-
տամ իմ օրէնքներըս նորանց մտքին
մէջ, եւ նորանց խորհուրդներին մէջ
կըգրեմ նորանց[15]:

17 Յետոյ ասումՙ Թէ նորանց
մեղքերըն եւ նորանց անօրէնու-
թիւններըն միեւ չեմ յիշել:

18 Բայց որտեղ որ (մեղաց) թո-
ղութիւն է՝ հետեղ էլ մեղքի հա-
մար պատարագ պէտք չէ:

19 Ուրեմն եղբայրք՝ համարձա-
կութիւն ունինք[16] սրբատեղն մըտ-
նելոյ Յիսուսի արիւնովն[17]:

20 Որ էն պատրաստեց նոր եւ
կենդանի ճանապարհ մեզ համար[18]
վարագուրի միջովն, այսինքն՝ իրան
մարմնովն[19]:

21 Եւ (ունինք) մեծ քահանայ[20]
Աստուծոյ տան վերայ[21]:

22 Ապա թող մտերնանք նորան
ճշմարիտ սրտով[22], կատարեալ հա-
ւատքով[23], սրտերըս լուացած չար
խղճմտանքիցն[24], եւ մարմիններըս
մկրտված սուրբ ջրովն[25]:

23 Պինտ բռնինք յուսոյ դաւա-
նութիւնն առանց շարժվելոյ[26],
պատճառն որ հաւատարիմ է նա՝ որ
խոստացաւ էն[27]:

24 Եւ հոգս անենք իրար համար՝
դէպի սէր եւ բարի գործքեր յորդո-
րելով:

25 Եւ չըթողնենք մեր իրար ժո-
ղովքըն, ինչպէս որ մին քանիան սո-
վոր են անել[28], բայց (իրար) յոր-
դորինք, եւ հենքան էլ աւելի՝ որքան
տեսնումՙք[29] որ էն օրն մօտեցած
է[30]:

[8] Ցաւ. ԺԱ. 19: Եբր. Ժդ. 12: [9] Եբր. Թ. 12, [10] Թաւ. Իբ. 3: Եբր. Է. 27: [11] Ա Կր. 4: [12] Եբր. ա. 3: Կող. գ. 1: [13] Ա Կոր. ԺԵ. 1: Գործ. բ. 35: ա Կորն. ԺԱ. 25: Եբր. ա. 13: [14] Ա Կր. 1: [15] Երեմ. լա. 33, 34: Եբր. Ը. 10. 12: [16] Հռոմ. Ե. 2: Եփես. բ. 18: գ. 12: [17] Եբր. Թ. 8, 12: [18] Ցաւ. Ժ. 9: Ժդ. 6: Եբր. Թ. 8: [19] Եբր. Թ. 3: [20] Եբր. դ. 14: [21] ա Տիմ. գ. 15: [22] Եբր. դ. 16: [23] Եփես. գ. 12: Ցակ. ա. 6: ա Ցովհ. գ. 21: [24] Եբր. Թ. 14: [25] Եզեկ. ԼԶ. 25: Բկորնթ. Է. 1: [26] Եբր. դ. 14: [27] ա Կորնթ. ա. 9: Ժ. 13: ա Թես. Ե. 24: Բ Թես. գ. 3: Եբր. Ժա. 11: [28] Գործ. Բ. 42: Ցաւ. 19: [29] Հռոմ. ԺԳ. 11: [30] Փիլիպ. դ. 5: Բ Պետր. գ. 9, 11, 14:

26 Պատճառն որ եթէ մենք ճըշմարտութեան գիտութիւնըն ընդունելուցն ետեւ[31] յօժար մտքով մեղք գործենք[32], էլ նրանից ետեւ մինէլ մեղաց համար պատարագ չի մնում,
27 Այլ դատաստանի ահաւոր սպասելն, եւ կրակի նախանձն՝ որ հակառակորդներին կը լափէ[33]:
28 Մէնն որ մեսկսի օրէնքըն առնդրութեան[34] երկու կամ երեք վկայի (խօսքով) մեռնում էր[35].
29 Չէ՞ որ ոչքան աւելի սաստիկ պատժոյ արժանի կըհամարիք նրան, որ Աստուծոյ որդոյն ոտի տակ կոխեց[36], եւ նոր ուխտի արիւնըն պիղծ համարեց՝ որ նա սրբվեցաւ նորա նով[37], եւ շնորհաց հոգոյն նախատինք տուաւ[38]:
30 Այլ գիտումենք նրան՝ որ ասաց. վրէժ առնելն իմն է, եւ ես հատուցումըն կըտամ՝ ասում Տէրն[39]. եւ մինէլ՝ թէ Տէրն կըդատէ իրան ժողովրդին[40]:
31 Սաստիկ վախենալոյ բան է՝ հնդպանի Աստուծոյ ձեռքին մէջ ընկնիլն[41]:
32 Այրեցէք յիշեցէք առաջին օրերըն[42], որ դուք լուսաւորվեցաք[43] եւ շատ նեղութիւններին եւ չարչարանքներին համբերեցիք[44]:
33 Մէնչու որ ժամանակ կար՝ որ նախատինքների եւ նեղութիւնների մէջ խայտառակվեցաք[45] եւ ժամանակ կար՝ որ էնպէսի բան քաշողներին հետ մասնակից էլաք[46]:
34 Պատճառն որ կապվածներին հետ էլ չարչարվեցաք[47], եւ ձեր ապրանքների յափշտակութիւնն էլ ուրախութեամբ ընդունեցիք[48]. քանզի որ գիտումիք որ ձեր անձներիդ համար էլ աւելի լաւ ստացուածք ունիք երկնքումն՝ որ կենում եւ մնում[49]:
35 Այրեցէք դէն չը՛քցիք ձեր վըստահութիւնն՝ որ նորանում մեծ վարձքի հատուցումն կայ[50]:
36 Համբերութիւն պէտք է ձեզ[51]. որ Աստուծոյ կամքըն անելով՝ աւետիքին հասնիք[52]:
37 Մէնչու որ՝ մինչիչ ժամանակ էլ[53] եւ նա որ գալու է՝ կըգայ եւ չի՛ ուշանալ[54]:
38 Այայ իմ արդարս հաւատքիցն կապրի[55]. եւ թէ որ մինն երկմիտ լինի, նորան իմ անձս չի հաւան կենալ:
39 Այայ մենք երկմտութեանով չենք՝ որ կորչինք[56]. բայց հաւատքով որ հոգիներս փրկվին[57]:

[31] բ Պետ. բ. 20, 21: [32] Թուա. ժե. 30: Եբր. զ. 4: [33] Եսէ. լգ. 5: Սոփ. ա. 18: գ. 8: բ Թես. ա. 8: Եբր. ժբ. 29: [34] Եբր. բ. 2: [35] բ Օրէն. ժե. 2, 6: ժթ. 15: Մատթ. ժը. 16: Ճովհ. ը. 17: բ Կորնթ. ժգ. 1: [36] Եբր. բ. 3: ժբ. 25: [37] ա Կորնթ. ժա. 29: Եբր. ժգ. 20: [38] Մատթ. ժբ. 31, 32: Եփես. գ. 30: [39] բ Օրէն. լբ. 35: Հռովմ. ժբ. 19: [40] բ Օրէն. լբ. 36: Սաղմ. ծ. 4: Ձնե. 14: [41] Դատ. ժբ. 5: [42] Գաղ. գ. 4: բ Ճովհ. 8: [43] Եբր. զ. 4: [44] Փիլիպ. ա. 29, 30: Կող. բ. 1: [45] ա Կորնթ. գ. 9: [46] Փիլիպ. ա. 7: գ. 14: ա Թես. բ. 14: [47] Փիլիպ. ա. 7: բ Ցիմ. ա. 16: [48] Մատթ. ե. 12: Գործ. ե. 41: Ճակ. ա. 2: [49] Մատթ. զ. 20: ժԹ. 21: Դատ. ժբ. 33: ա Ցիմ. զ. 19: [50] Մատթ. ե. 12: ժ. 32: [51] Դատ. իա. 19: Գաղ. զ. 9: Եբր. ժբ. 1: [52] Կող. գ. 24: Եբր. ժ. 15: ա Պետ. ա. 9: [53] Դատ. ժը. 8: բ Պետ. գ. 9: [54] Ամբակ. բ. 3, 4: [55] Հռովմ. ա. 17: Գաղ. գ. 11: [56] բ Պետ. բ. 20, 21: [57] Գործ. ԺԶ. 30, 31: ա Թես. ե. 9: բ Թես. բ. 14:

## ԳԼ· ԺԸ

1 Հաւատքն ինչ լինելն։ 6 Առանց հաւատքի կարօղ չենք հաճոյ լինել Աստուծոյն, 7 Եւ հաւատքի ճշմարիտ պատուղներն ունէին հին ժամանակուան մէջ հարքն։

1 Հաւատքն ինչ է, եթէ ոչ յուսացած բաներուն հաստատութիւն, եւ էն բաներուն ցոյց տալն՝ որ չեն երեւում[1]։

2 Ինչու որ նորանով առաջին մարդիքն վկայութիւն ընդունեցին[2]։

3 Հաւատքով ենք իմանում որ աշխարհքներն հաստատուեցան Աստուծոյ խօսքովն, որ աներեւոյթ բաներից էս երեւոյներս էլան[3]։

4 Հաւատքով աբէլն կայենիցն աւելի լաւ պատարագ էր մատուցանում Աստուծոյն[4] որ նորանով էլ վկայութիւն ընդունեց որ արդար է. ինչու որ էն պատարագներին վերայ վկայութիւն էլաւ նորան Աստուածանից, որ նա՝ թէ եւ մեռաւ նորա նով, բայց դեռ հիմիկ խօսում է[5]։

5 Հաւատքով ենոքն փոխուեցաւ՝ որ մահըն չըտեսնէ[6]. եւ իսկի մին տեղ չէր գանըւում. ինչու որ Աստուած փոխեց նորան. եւ իրան փոխելուցն առաջ վկայեցաւ՝ որ հաճոյ է Աստուծոյն։

6 Բայց առանց հաւատքի անկարելի է հաճոյ լինել (Աստուծոյն). քանզի նորան որ Աստուծոյն մօտենում՝ պէտք է որ հաւատայ՝ թէ Աստուած կայ. եւ նորանց որ ինդրումեն նորան՝ պարգեւ կըհատուցանէ։

7 Հաւատքով Նոյ հրաման առաւ դեռ չերեւած բաների համար[7] եւ խիստ վախով բանըւած շինումէր էն տապանըն իրան տան փրկութեան համար[8], որ նորանով աշխարհքիս դատեց. եւ էն արդարութիւնըն ժառանգեց՝ որ հաւատքիցն է[9]։

8 Հաւատքով աբրահամն երբոր կանչվեցաւ՝ հնազանդ եղաւ՝ դուրս գնալոյ էնտեղն, որ նորա ժառանգութեան պէս պիտի առնէր. դուրս եկաւ գնաց եւ չէր գիտում՝ թէ ուր գնայ[10]։

9 Հաւատքով պանդխտ (ղաջէպ) էլաւ աւետիքի երկրումն իբր մին օտար տեղում, խորաններում (չատրնէրօմ) բնակվեցաւ սահակի եւ յակոբայ հետ[11] որ նորանք էլ նորա հետ հենց էն աւետիքի ժառանգ էին[12]։

10 Պատճառն որ՝ սպասում էր հիմնարկով հաստատած քաղաքին[13], որ նորա ճարտարապետն եւ շինողն Աստուած է[14]։

11 Հաւատքով սառան ինքն էլ որ ամուլ (չըքէբ) էր, սերմըն առնելոյ զօրութիւն ընդունումէր՝ որդի ծնելոյ համար[15], եւ ժամանակից դուրս հասակի մէջ ծնումէր որդի[16]։

[1] Հռով. ը· 24, 25։ բ Կորնթ· գ· 18։ ե· 7։ [2] Վէսբ· 39։ [3] Ծննդ· ա· 1։ Սալմ· լգ· 6։ Ճովհ· ա· 3։ Եբր· ա· 2։ բ Պետր· գ· 5։ [4] Ծննդ· դ· 4։ ա Ճովհ· գ· 12։ [5] Ծննդ· դ· 10։ Առաք· իգ· 35։ Եբր· ժբ· 24։ [6] Ծնէսդ· ե· 22, 24։ [7] Ծննդ· զ· 13, 22։ [8] ա Պետր· գ· 20։ [9] Հռով· գ· 22։ դ· 13։ Փիլ· Լեղ· գ· 9։ [10] Ծննդ· ժբ· 1, 4։ Գործ· է· 2–4։ [11] Ծննդ· ժբ· 8։ ժգ· 3, 18։ ժը· 1, 9։ [12] Եբր· զ· 17։ [13] Եբր· ժբ· 23։ ժգ· 14։ [14] Եբր· գ· 4։ Ցայտ· իա· 2, 10։ [15] Ծննդ· ԺԸ· 19։ ԺԸ· 11, 14։ իա· 2։ [16] Գաղ· ա· 36։

ինչու որ Հաւատարիմ համարեց նո-
րան՝ որ խոստացաւ էն[17]։

12 Ուրահամար էն մէկից՝ որ էլ
իրան ժամանակով անցկացած էր՝
Հնքան շատեր ծնվուեցին[18], ինչպէս
երկնքի աստեղները՝ եւ ինչպէս ա-
ւազն ծովի եղերին (ղողջին) մնո՝ ա-
նանց համարի[19]։

13 Սրանք ամենքն մեռան Հաւատ-
քի մէջ, եւ դեռ աւետիքներին չըն-
դունեցին[20], բայց Հեռուանց տեսին
նորանց՝ եւ ուրախացան[21]. եւ դա-
նանեցին թէ օտար եւ պանդուխտ
են երկրումն[22]։

14 Պատճառն որ՝ նորանք որ էն-
պէսի բաներ են խօսում՝ յայտնի
ցոյց են տալիս՝ որ մին գաւառի են
մեն գալիս[23]։

15 Եւ թէ որ էն կըյիշէին՝ որ նո-
րանից դուրս եկին, ժամանակ կար
յետ դառնալոյ (Հնտեղ)։

16 Նոյց հիմիկ մին աւելի աղնիւ
(գաւառի) ցանկացած են, պայնքն
երկնաւորին. եւ Նրահամար Աստ-
ուած էլ ամօթ չի համարում՝ նորանց
Աստուած կոչվիլ[24]. ինչու որ քա-
ղաք պատրաստեց նորանց համար[25]։

17 Հաւատքով աբրահամն իսա-
հակին պատարագ մատոյց՝ իրան
փորձվելոյ ժամանակում[26]. եւ միա-
ծնուած որդուն մատուցանում էր,
նորան որ աւետիքըն ընդունել էր[27].

18 Նորան որ ասվեցաւ՝ թէ իսա-
հակով քո զաւակդ կըկոչվի[28]։

19 Նա միտք արաւ՝ թէ Աստուած
կարող է մեռելների միջնից էլ յա-
րուցանել[29]. եւ էս պատճառովս էլ
օրինակի համար ընդունեց նորան։

20 Հաւատքով իսահակն յակո-
բին եւ եսաւին օրհնեց նոր գալը-
բաներին համար[30]։

21 Հաւատքով յակոբն իրան
մեռնելոյ ժամանակումն յովսէփի որ-
դիքներից ամէն մէկին օրհնեց[31], եւ
իրան գաւազանի ծայրին վերայ ըն-
կած երկրպագութիւն արաւ[32]։

22 Հաւատքով յովսէփն իրան
վախճանելոյ ժամանակումն յիշեց
իսրայէլի որդոց դուրս գնալն, եւ ի-
րան ոսկորներին համար հրաման ար-
ւաւ[33]։

23 Հաւատքով մովսէսն երբոր
ծնվաւ՝ երեք ամիս թաքուն պահվե-
ցաւ իրան ծնողքից. ինչու որ՝ տե-
սին թէ մանուկն գեղեցիկ էր[34], եւ
չըվախեցան թագաւորի հրամա-
նից[35]։

24 Հաւատքով մովսէսն՝ երբոր մե-
ծացաւ՝ չըկամեցաւ փարաւոնի աղջ-
կան որդի կոչվիլ[36]։

25 Աւելի լաւ համարեց Աստուծոյ
ժողովրդին հետ չարչարվիլ, քան
թէ քիչ ժամանակ մեղքով վայե-
լել[37]։

26 Աւելի աղնիւ համարեց Քրի-
ստոսի նախատինքներըն, քանթէ
եգիպտացոց հարստ գանձերըն
(նաչանաՆքըն)[38]. ինչու որ աչք դը-

[17] Հռով. դ · 21։ Եբր · ժ · 23։ [18] Հռով. դ · 19։ [19] Ծննդ · իե · 17։ Հռով. դ · 18։ [20] Ա Պետ · 39։ [21] Ա Պետ · 37։ Ցածն · ը · 56։ [22] Ծննդ · իգ · 4։ խէ · 9։ ա Պետ · իե · 15։ Սաղմ. լե · 12։ Ճոբ · 19։ ա Պետր · ա · 17։ ը · 11։ [23] Եբր · ժգ · 14։ [24] Եբր · գ · 6, 15։ Մատթ · իը · 32։ Գործ · է · 32։ [25] Փիլիպ · գ · 20։ Եբր · ժգ · 14։ [26] Ծննդ · իս · 1, 9։ [27] Ցածն · ը · 21։ [28] Ծննդ · իա · 12։ Հռով. թ · 7։ [29] Հռով. գ · 17, 19, 21։ [30] Ծննդ · իէ · 27, 39։ [31] Ծննդ · խը · 5, 16, 20։ [32] Ծննդ · իէ · 31։ [33] Ծննդ · ծ · 24, 25։ Եբր · ժգ · 19։ [34] Եբր · բ · 2։ Գործ · է · 20։ [35] Եբր · ա · 16, 22։ [36] Եբր · բ · 10, 11։ [37] Սաղմ. ձդ · 10։ [38] Եբր · ժգ · 13։

բան մանիկ էր տալիս վարձքի հաստատմանքին[39]։

27 Հաստատով Թողեց Եգիպտացոց երկիրըն, եւ չըվախեցաւ թագաւորի բարկութենեին[40]. ինչու որ՝ Համբերութենով անեւրեւոյթի բաներըն տեսածի պէս Համարեց[41]։

28 Հաստատով արաւ զատիկըն եւ արիւն ԹափելըՆ. որ առաջինն կենդրի սատակօղն չըմօտենայ նորանց[42]։

29 Հաստատով անցկացան կարմիր ծովովն ինչպէս ցամաք երկրի վերայ. որ եգիպտացիներն էլ փորձեցին էն՝ եւ խեղդվեցան[43]։

30 Հաստատով երիքովի պարիսպներն վէր ընկան, երբոր եօթն օր նորա չորս կողմիվն պտըտեցին[44]։

31 Հաստատով բանաբաւ պոռնիկն չըկորաւ անհաւատներին հետ[45], որ նա լրտեսներըն (չըշոդնէրըն) ընդունել էր խաղաղութենով[46]։

32 Եւ հիմի՝ էլ ի՞նչ ասեմ. ինչու որ՝ ժամանակս բաւական չէ պատմելզ գեդէօնի[47], բարակի[48], սամիսօնի[49], յեփթայի[50], դաւթի[51] եւ սամուէլի եւ ուրիշ մըրգաբէների Համար[52]։

33 Որ նորանք Հաստատով թագաւորութիւնների յաղթեցին. արդարութիւն գործեցին. աւետիքներ ստացան[53], առիւծների բերանները խըցկեցին[54].

34 Կրակի զօրութիւնըն անցրին[55], սրբի բերանից պրծան[56]. տկարութենից զօրացան[57]. պատերազմի մէջ զօրաւոր էյան. օտարների բանակներըն (օրդոնէրըն) առին[58]։

35 Կանայքն իրանց մեռելներըն յետ ընդունեցին յարութենից[59], (բայց) կէսերն սպատիկ չարչարվեցան եւ չըկամեցան ազատվիլ, որ աւելի լաւ յարութիւն Հասնին[60]։

36 Եւ կէսերն տանջանքների եւ ծեծերի Համբերեցին, կապանքների եւ բանտերի[61]։

37 Վարիկած վեցան, սըղոցվեցան, փորձվեցան, սրով սպանվաձ մեռան[62]. ոչխարի մորթերով եւ այծի կաշիքներով մնանկին[63]. կարօտութիւն քաշած, նեղացած, չարչարվաձ.

38 Որ աշխարհքն նորանց արժանի չէ. անապատ տեղերի մէջ մըրգվեցան եւ սարերի եւ այրերի (Տալըպանէրի)[64] եւ երկրի փոսերի մէջ։

39 Եւ սորանք ամենքըն Հաստատով վկայութիւն առին, եւ աւետիքըն դեռ չընդունեցին[65]։

40 Ինչու որ՝ Աստուած մեզ Համար աւելի լաւ Համարեց[66], որ (նորանք) առանց մեզ չըկատարվին[67]։

---

[39] Եբր. ժ. 35։ [40] Եսէ. ժ. 28, 29։ Ժր. 37։ Ժգ. 17, 18։ [41] Վեր. 13։ [42] Եսէ. ժր. 21։ [43] Եսէ. ժդ. 22, 29։ [44] Յեր. գ. 20։ [45] Ցեր. գ. 23։ Ցոս. բ. 35։ [46] Ցեր. ա. 4։ [47] Դատ. գ. 11։ [48] Դատ. գ. 6։ [49] Դատ. ժգ. 24։ [50] Դատ. ժա. 1։ Ժր. 7։ [51] աթագ. ժգ. 1, 13։ Ժէ. 43։ [52] աթագ. ա. 20։ Ժր. 20։ [53] բ թագ. է. 11։ [54] Դան. Ժգ. 5, 6։ աթագ. Ժէ. 31, 35։ Դան. գ. 22։ [55] Դան. գ. 25։ [56] աթագ. ի. 1։ դ թագ. ժԹ. 3։ դ թագ. ղ. 16։ [57] դ թագ. ի. 7։ Ցոբ. խր. 10։ Սաղ. գ. 8։ [58] Գատ. Ժե. 8, 15։ աթագ. Ժգ. 13։ Ժէ. 51, 52։ բ թագ. ը. 1։ [59] դ թագ. Ժէ. 22։ դ թագ. գ. 35։ [60] Գատ. իր. 25։ [61] Ծննդ. լԹ. 20։ Երէմ. ի. 2։ լէ. 15։ [62] դ թագ. իա. 13։ բ Մնաց. իգ. 21։ Գատ. է. 58։ Ժգ. 19։ [63] դ թագ. ա. 8։ Առակ. գ. 4։ Ջար. Ժգ. 4։ [64] դ թագ. Ժը. 4։ ԺԹ. 9։ [65] Վեր. ը, 13։ [66] Եբր. է. 22։ ը. 6։ [67] Եբր. ե. 9։ Ժր. 23։ Ցայտ. գ. 11։

## ԳԼ · ԺՒ

*1 Հաւատքի՝ համբերութեան եւ Աստուածպաշտութեան մէջ հաստատ մնալոյ մին յորդորանք· 22 Նոր կտակարանի վերայ մին դատապարտութիւն, եւ թէ նա՝ Հին Կտակարանից աւելի լաւ է։*

1 Ուրեմն մենք էլ՝ որ վկաների
Եւ քան բազմութիւն ունինք մեր
Չորս կողմով պատած՝ ամէն գոտո-
զութիւն դէն քցինք[1], եւ մեղքըն
Էլ որ պաշարուած մեզ· համբերու-
թեամբ վազենք էն պատերազմի մէջ
Որ մեր առաջին կայ[2]։

2 Մտիկ տանք Յիսուսին հա-
ւատքի զօրագրչին եւ կատարօղին,
Որ նա ուրախութեան տեղ՝ որ նորա
առաջին կար, խաչըն իրան վերայ ա-
ռաւ, եւ ամօթըն ոչ ինչ համարեց[3]·
Եւ Աստուծոյ աթոռի աջ կողմն նըս-
տեց[4]։

3 Ուրեմն մտածեցէք նորան, որ
Համբերութեամբ էսպէսի բաներ
Քաշեց են մեղաւորների հակառա-
կութիւնից[5], որ դուք վատասած
Չըլինիք ձեր անձներովք եւ թու-
լանաք[6]։

4 Մինչու որ՝ դեռ մինչեւ արիւն
Թափելոյ չափ պատերազմելով՝ հա-
կառակ չէք կացած մեղքին[7]·

5 Եւ մոռացաք էն մխիթարու-
թիւնըն՝ որ ձեզ հետ ինչպէս որ-
դեակներին հետ խօսում է՝ իմ որ-
դեակս մի թուլանար Տէրի խրա-
տից, եւ թող սիրած չըկտրըվի՝

6 Պատճառն որ՝ Տէրն՝ նորան որ
սիրում՝ խրատում՝ տանջում ամէն
որդի՝ որ ընդունում[9]։

7 Խրատի մէջն թէ որ համբեր-
ութեամբ կենաք, Աստուած ձեզ
հետ ինչպէս որդոց հետ կըվարվի[10],
Ո՞ր որդի կայ՝ որ նորան հայրն չի
խրատում։

8 Բայց թէ որ առանց խրատի
լինիք՝ որ ամէնքն մասնակից էլան
նորան, ապա խորդ կըլինիք՝ եւ չէ
թէ որդիք[11]։

9 Ինչու որ՝ եթէ մեր մարմնաւոր
Հարանցիցն՝ որ խրատօղ ունինք՝ վա-
խով ամաչում ենք, էլ ո՞րքան աւելի
պիտի հնազանդվինք Հոգիների Հօրն՝
եւ ապրինք[12]։

10 Ինչու որ՝ սորանք մին քիչ ժա-
մանակ իրանց կամաց պէս են խրա-
տում· բայց նա օգտի համար՝ որ նորա
սրբութիւնըն ընդունինք[13]։

11 Ամէն խրատ՝ առնելոյ ժամա-
նակումն ուրախութիւն չի երեւում,
բայց տրտմութիւն· բայց յետոյ նո-
րանով վարժուածներին խաղաղու-
թեան պտուղ է վճարում արդա-
րութեամբ[14]։

[1] Կոր· գ· 8· ա Պետր· բ· 1· [2] ա Կորնթ· թ· 24· Փիլիպ· գ· 13· 14· Հեբր· ժ· 12· Եբր· ժ· 36· [3] Գործ· իդ· 26· Փիլիպ· բ· 8· ա Պետր· ա· 11· [4] Սամ· ճժ· 1· Եբր· ա· 3, 13· ը· 1· ա Պետր· գ· 22· [5] Մատթ· ժ· 24, 25· Ցուղ· ժե· 20· [6] Գաղ· զ· 9· [7] ա Կորնթ· ժ· 13· Եբր· ժ· 32–34· [8] Ցաք· է· 17· Աւետ· գ· 11· [9] Սամ· ղդ· 12· Ճժե· 75· Աւետ· գ· 13· Ցետ· ա· 12· Ցայտ· գ· 19· [10] բ Օրէն· ը· 5· բ Թագ· է· 14· Աւետ· ժգ· 24· ժե· 18· իգ· 13· [11] Սամ· հգ· 1· ա Պետր· է· 9· [12] բ Մակ· ժգ· 22· Իէ· 16· Ցաք· ժբ· 10· Ծագ· ժբ· 7· Եսայ· խբ· 5· Ծէ· 16· Ջափ· ժբ· 1· [13] Ալեք· գործ· ժա· 44· ժե· 2· ա Պետր· ա· 15, 16· [14] Ցետ· գ· 18·

12 Վասն այսորիկ հաստատացեք զթուլացեալ ձեռունսն եւ զկարծեալ ծունկսն[15]։

13 Եւ ձեր ոտիցն գնալով ճանապարհն շիտակեցէք[16], զի նա՝ որ կաղ է՝ ջերմանայցի, այլ եւ առնիցի բժշկի[17]։

14 Հետեւեցէք խաղաղութեան ամենեցուն հետ՝ եւ սրբութեան[18], զի առանց նորա ոչ ոք տեսցէ զՏէրն[19]։

15 Ողջ կացէք[20], զի չըլինի թէ միոն յետ միոյ Աստուծոյ շնորհքին[21]. զի միւս դառն արմատ վերջըստանիցէ եւ նեղութիւն տայ, եւ նովաւ շատ հոգիք պղծիցին[22]։

16 Զի միոն պոռնիկ եւ պիղծ չըլինի՝ ինչպէս Եսաւ[23], զի միւս կերակուրի համար իւրն առաջնեւնկութիւնն ծախեց[24]։

17 Գիտեմք՝ զի թէ եւ յետոյ կամեցաւ օրհնութիւնն ժառանգել, անպէտք գտաւ[25]. ինչու զի ապաշխարութեան ճար չըգտաւ, թէ եւ արտասուքով խնդրեց նորան[26]։

18 Զի մատեան որ՝ դուք չէք մօտեցած էն սարին՝ որ ձեռք կարօղ էին դիպչիլ, որ կրակով վառված էր՝ եւ էն մէգին եւ մշուշին եւ խաւարին եւ մրրկին[27]։

19 Զի էնտեղ փողն փչումէր եւ էրամանքներուն ձայնն, որ նորանից լսեցին՝ որ խօսքն միեւել չաւելն նորանց[28]։

20 Զի՝ ինչու որ՝ չէին դիմանում էն հրամանին, եւ թէ որ անասուն մօտենումէր սարին՝ քարկոծ էր լինում[29]։

21 Եւ էնպէս ահաւոր էր էն տեսիլքն, որ մնէսն էլ ասումէր, թէ ահով բռնըված եմ եւ դողումեմ[30]։

22 Այլ դուք մօտեցել էք սիօն սարին[31] եւ կենդանի Աստուծոյ քաղաքին, երկնաւոր երուսաղէմին[32], եւ հազար հազարաւոր հրեշտակներուն բազմութեանն[33]։

23 Եւ առաջինեկների եկեղեցոյն[34] որ երկընքումն գրված են[35], եւ Աստուծոյն ամէնքի դատաւորին[36], եւ կատարեալ արդարների հոգիներին[37]։

24 Եւ Յիսուսին նոր կտակարանի միջնորդին[38]. եւ նորա արիւն թափելոյն[39] որ աւելի լաւ է խօսում քանէ Հաբէլի (արիւնն)[40]։

25 Ողջ կացէք որ չըլինի թէ երես չէտ դարձնէք նորանից՝ որ խօսեց. զի պատճառն որ՝ եթէ նորանք չըկարացին պրծնիլ՝ որ երես դարձրին նորանից՝ որ երկրիս վերայ հրաման էր տալիս. էլ որքան աւելի մենք, թէ որ երկնաւորիցն երես դարձնենք[41]։

26 Որ նորա ձայնն էն ժամանա-

---

[15] Ճռճ· գ· 3, 4։ Եսայ· լէ· 3։ [16] Ա՛ռակ· գ· 26, 27։ [17] Գաղ· գ· 1։ [18] Ա՛ռակ· լգ· 14։ Հռովմ· ժբ· 18· ժգ· 19։ բ Տիմ· բ· 22· [19] Ա՛ռակ· ե· 8։ բ Կորնթ· է· 1։ Եփես· ե· 5։ [20] բ Կորնթ· գ· 1։ [21] Գաղ· ե· 4։ [22] բ Օրին· իթ 18։ Եբր· գ· 12։ [23] Եփես· ե· 3։ Կաղ· գ· 5։ ա Թես· գ· 3։ [24] Ծննդ· իե· 33։ [25] Ծննդ· իէ· 34, 36, 38։ [26] Եբր· չ· 6։ [27] Եւթ· ժի· 12, 18, 19։ ի· 18։ բ Օրին· դ· 11։ ե· 23։ Հռովմ· գ· 14։ ը· 15։ բ Տիմ· ա· 7։ [28] Եւթ· ի։ բ· 19 Օրին· ե· 5, 25։ ժը· 16։ [29] Եւթ· ժի· 13։ [30] Եւթ· ժի· 16։ [31] Գաղ· դ· 26։ Ցայտ· դ· 12։ իա· 2, 10։ [32] Փիլիպ· գ· 20։ [33] բ Օրին· լգ· 2։ Սաղմ· կը· 17։ Ճռճ· 14։ [34] Եւթ· դ· 22։ Ցայտ· ա· 18։ Ցայտ· ժգ· 4։ [35] Ղեւտ· ժ· 20։ Փիլիպ· գ· 3։ Ցայտ· ժգ· 8։ [36] Ընդդ· ժը· 25։ Սաղմ· զդ· 2։ [37] Փիլիպ· գ· 12։ Եբր· ժա· 40։ [38] Եբր· ը· 6։ իթ· 15։ [39] Եւթ· իգ· 8։ Եբր· ժ· 22։ ա Պետ· ա· 2։ [40] Ծննդ· դ· 10։ Եբր· ժա· 4։ [41] Եբր· ե· 2, 3։ գ· 17։ ժ· 28, 29։

կումն երկիրըն չարժեց[42]. եւ հիմիկ խոստացել է՝ եւ ասումէ. Թէ մինել կը շարժեմ, չէ Թէ մէնակ երկիրըն՝ բայց եւ երկինքըն[43]:

27 Ինչ էն մէկէլն ցոյց է տալիս՝ որ շարժվելի բաներն իբր Թէ էլածներն պիտի փոխվին, որ հաստատ մնան նորանք որ շարժվելի չեն[44]:

28 Վրահամար որովհետեւ չընշարժվելի Թագաւորութիւն ընդունենցինք, պինդ բռնենք էն շնորհքըն՝ որ նորանով պաշտումենք Աստուծոյն, ինչպես որ հաճոյ է նորան՝ ահով եւ դողալով:

29 Պատճառն որ մեր Աստուած այրող փչացնող կրակ է[45]:

## ԺԴ · ԺԹ

1 Խրատներ սիրոյ վերայ, 4 Եւ պարկեշտութեան, 5 Ագահութենից փախչելոյ, 7 Եւ Աստուծոյ քարոզիչներն պատուելոյ, 9 Օտար խօսքերից զգոյշ լինելոյ, 10 Քրիստոսի անունըն գաւանելոյ, 16 Ողորմութիւն տալոյ, 17 Դաստուրների հնազանդվելոյ, 18 Աղաչելոյ համար աղօթս անելոյ վերայ· 20 Վերջ անելոյ խօսքերըն:

1 Աղբայրասիրութիւնն Թող հաստատ լինի ձեր միջումդ[1]:

2 Օտարասիրութիւնըն մի մոռանաք[2]. պատճառն որ՝ նորանով միևնոյնին առանց գիտելոյ հրեշտակներին ընդունեցին[3]:

3 Յիշեցէք կապվածներին՝ ինչպես Թէ դուք էլ նորանց հետ կապված լինէիք· եւ չարչարվածներին՝ ինչպես Թէ դուք էլ (գետ) մարմնումն էք[4]:

4 Ամուսնութիւնն ամէն կողմանէ պատուական է՝ եւ անկողինըն սուրբ· բայց շնացողներին եւ պոռնիկներին Աստուած կը դատէ[5]:

5 Ա՛զգերն առանց արծաթա-

28 Վրահամար որովհետեւ չընշարժվելի Թագաւորութիւն ընդունենցինք, պինդ բռնենք էն շնորհքըն՝ որ նորանով պաշտումենք Աստուծոյն, ինչպես որ հաճոյ է նորան՝ ահով եւ դողալով:

29 Պատճառն որ մեր Աստուած այրող փչացնող կրակ է[45]:

## ԺԴ · ԺԹ

1 Խրատներ սիրոյ վերայ, 4 Եւ պարկեշտութեան, 5 Ագահութենից փախչելոյ, 7 Եւ Աստուծոյ քարոզիչներն պատուելոյ, 9 Օտար խօսքերից զգոյշ լինելոյ, 10 Քրիստոսի անունըն գաւանելոյ, 16 Ողորմութիւն տալոյ, 17 Դաստուրների հնազանդվելոյ, 18 Աղաչելոյ համար աղօթս անելոյ վերայ· 20 Վերջ անելոյ խօսքերըն:

1 Աղբայրասիրութիւնն Թող սիրութեան լինին, որ բաւական համարէք էն՝ որ ձեռներումն ունիք[6]. ինչու որ հենց ինքն ասաց, Թէ չեմ Թողել քեզ՝ եւ երեսից չեմ քցել[7]:

6 Ինպես որ համարձակ լինինք ասելոյ· Տէրն է իմ օգնականս, եւ չեմ վախենալ, ի՞նչ կանէ ինձ մարդն[8]:

7 Յիշեցէք ձեր առաջնորդներին՝ որ Աստուծոյ բանըն խօսացին ձեզ[9]. նայեցէք նորանց վարմունքի վախճանին՝ եւ նմանն էլէք (նորանց) հաւատքին[10]:

8 Յիսուս Քրիստոսն՝ երեկ եւ էսօր, եւ հենց էն էլ յաւիտեան[11]:

9 Կերպ կերպ ուսմունքներով

---

*1 Առաքեալքն հաստատելով քրիստոնեաներին Աստուծոյ շնորհքի մէջ չսասանելոյ ժա-
մովքն, 5 Յորդորումն նորանք որ հաւատքով եւ բարի գործքերով՝ իրանց կոչմանն
հաստատ պահեն. 12 Որ ինքն հոգ անումն նորանց յիշացնելոյ ճշմարտութիւնն, ցոյց
տալով որ իրան մահկան մօտ է: 16 Խրատումն որ հաստատ լինին քրիստոսի հաւատ-
քումն, վկայութենլով թէ նորան Աստուծոյ ճշմարիտ որդին է, պատճառն որ Առաքեալ-
ներքն նորա մեծ փառաւորութիւնքն տեսանօղ էլան. եւ Հայրքն եւ մարգարէներքն էլ
նորա համար կըվկայեն:*

1 ՍԻՄՕՆ ՊԵՏՐՈՍ Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ ա-
ռաքեալ, ձեզ որ մեզ հետ հաւա-
սար պատուական հաւատքին հասիք՝
մեր Աստուծոյ եւ փրկիչ Յիսուսի
Քրիստոսի արդարութենովն[1],

2 Շնորհք եւ խաղաղութիւն
շատանայ ձեզ վերայ Աստուծոյ եւ
մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գի-
տութենովն[2]:

3 Ինչպէս որ նորա աստուածային
զօրութիւնն շնորհեց մեզ էն ամէն
բան՝ որ կեանքին եւ աստուածա-
պաշտութեան համար (պէտք է), նո-
րա գիտութենովն[3], որ մեզ կանչեց
դէպի (իրան) փառքն եւ վայելչու-
թիւնն[4]:

4 Որ նորանցով շատ մեծ եւ
պատուական աւետիքներ են տրվ-
ած մեզ[5], որ նորանցով մասնակից
լինինք աստուածային բնութեանն[6]՝
(հաւատքով) աշխարհքի ցանկու-
թիւններից եւ ապականութիւննե-
րից հետ փախչելով[7]:

5 Ու հենց սրահամար՝ ամէն
ջանք արէք[8], որ ձեր հաւատքին
ընդայէք առաքինութիւն, եւ առա-
քինութենովն գիտութիւն,

6 Ու գիտութենովն ժուժկա-
լութիւն, եւ ժուժկալութենովն
համբերութիւն, եւ համբերութե-
նովն աստուածապաշտութիւն,

7 Ու աստուածապաշտութենովն
եղբայրսիրութիւն, եւ եղբայրսի-

[1] Հռովմ. ա. 13: բ Կորնթ. գ. 13: Եփես. գ. 5: Տիտ. ա. 4: [2] Դան. գ. 1: ղ. 25: ա Պետր.
ա. 1: Յուդ. 2: [3] Յովհ. ժէ. 3: [4] ա Թես. բ. 12: գ. 7: բ Թես. բ. 13: բ Տիմ. ա. 9:
ա Պետր. բ. 9: գ. 9: [5] բ Կորնթ. է. 1: [6] բ Կորնթ. գ. 18: Եփես. գ. 24: Եբր. ժբ.
10: ա Յովհ. գ. 2: [7] բ Պետր. բ. 18, 20: [8] բ Պետր. գ. 18:

բուբենովն սէր[9]։

8 Իմէ էս բանեըրս ձեր անձ-
նեըուսդ պահէք՝ եւ միշտ սորանց
հետեւիք (սորանք) պատարկ եւ ան-
պատուղ չի՛ն թողիլ ձեզ մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի գիտուբեւ-
նեամբ[10]։

9 Ումեք նա՝ որ էս բանեըրս ի-
բան հետ չունի, կոյր է եւ կարճա-
տես[11]. (եւ) մոռացել է իրան ա-
ռաջին մեղքերից սրբվիլն[12]։

10 Արդեամբ եղբայրք՝ աւելի
ջանք արէք որ ձեր կոչումն եւ
ընտրութիւնն հաստատ պահէք
բարի գործերով[13]. պատճառն որ՝
էսպէս անելով իսկի մին ժամանակ
չէք մեղանչիլ[14]։

11 Ինչու որ էսպէս առատու-
նով կըտրվի ձեզ՝ որ մտնէք մեր
Տէր եւ փրկիչ Յիսուսի Քրիստոսի
յաւիտենական արքայութիւնն։

12 Արդեամբ միշտ պատրաստ
եմ որ ձեզ յիշացնեմ սորանց հա-
մար[15] (թէեւ) լաւ գիտումէք եւ
հաստատված էք (էս) եկած ճշմար-
տութեանումը[16]։

13 Պատճառն որ իրաւունք եմ
համարում, որ դեռ քանի որ մարմ-
նոյս մէջն եմ[17] յիշացնելով զարթ-
նացնեմ ձեզ[18]։

14 Գիտումեմ որ շուտով պիտի
ինձանից հանեմ իմ մարմինըս[19],
ինչպէս որ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսն ցոյց տուաւ ինձ[20]։

15 Նէ ջանք եմ անում եւ վա-
ղումեմ միշտ յորդորել ձեզ, որ իմ
աշխարհքից դուրս գալուցն ետեւ՝
էս բաներըս յիշէք։

16 Պատճառն որ՝ մենք ոչ թէ
սուտասմուտ հնարված բաների հե-
տեւելով ցոյց տուինք ձեզ մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի զորութիւնըն
եւ գալուն[21]. բայց հենց մենք ինք-
ներս աչքով տեսինք նորա մեծու-
թիւնըն[22]։

17 Որ Աստուածանից եւ Տրիցն
փառ եւ պատիւ առաւ, երբոր էն
մեծավայելչութեան փառքիցն էնպէսի
ձայն եկաւ. թէ դա է իմ սիրելի որ-
դին՝ որ դորան հաւանել եմ[23]։

18 Նէ էս ձայնս՝ որ երկնքիցն ե-
կաւ՝ մենք ինքներս լսեցինք, որ հենց
նորա հետ էն սուրբ սարումն էինք[24]։

19 Նէ մարգարէական շատ հաս-
տատ խօսքերըն էլ ունինք, որ եթէ
նորանց մտիկ անէք՝ լաւ կանէք,
ինչպէս մին ճրագի՝ որ լոյս տայ
մութ տեղն մէջն[25], մինչեւ որ ցե-
րեկն լուսանայ, եւ արուսեակ
(աստղն) ծագի ձեր սրտերումն[26]։

20 Նայց առաջ էս պէտք է դի-
տենաք, որ ամէն մարգարէութիւն
իրան գրվածքի մեկնութիւնըն չու-
նի(*)[27]։

21 Պատճառն որ՝ ոչ թէ մարդ-
կանց կամքին պէս իսկի մին ժամա-

[9] Գաղ. գ. 10։ ա Թես. գ. 12։ ե. 15։ ա Ցովհ. գ. 21։ [10] Ցովհ. ժե. 2։ Տիտ. գ. 14։ [11] ա Ցովհ. բ. 9, 11։ [12] Եփես. ե. 26։ Եբր. թ. 14։ ա Ցովհ. ա. 7։ [13] ա Ցովհ. գ. 19։ [14] բ Պետր. գ. 17։ [15] Հռոմ. ժե. 14, 15։ Փիլիպ. գ. 1։ բ Պետր. գ. 1։ ա Ցովհ. բ. 21։ Ցաքո. 5։ [16] ա Պետր. ե. 12։ բ Պետր. գ. 17։ [17] բ Կորնթ. ե. 1, 4։ [18] բ Պետր. գ. 1։ [19] բ Օրին. գ. 21, 22։ Լուկ. 14։ բ Տիմ. գ. 6։ [20] Ցովհ. իա. 18, 19։ [21] ա Կորնթ. ա. 17։ բ. 1, 4։ բ Կո-
րնթ. բ. 17։ գ. 2։ [22] Մատթ. ժե. 1, 2։ Մարկ. թ. 2։ Ցովհ. ա. 14։ ա Ցովհ. ա. 1։ գ. 14։ [23] Մատթ. գ. 17. ժե. 5։ Մարկ. ա. 11։ թ. 6։ Գործ. գ. 22։ թ. 35։ [24] Եզե. գ. 5։ Ցեսու. ե. 15։ Մատթ. ժե. 6։ [25] Սաղմ. ճժթ. 105։ Ցովհ. ե. 35։ [26] Ցայտ. բ. 28։ իե. 16։ բ Կորնթ. գ. 4. 6։ (*) Ցասնաբերն. որ դրքի ամէն մարգարէութիւն յա-
տուկ մեկնութեամով չի լինիլ։ [27] Հռոմ. ժբ. 6։

*նակ տալվաս մարդաբէութիւն[28], սեղին Աստուծոյ մարդիքն[29]։ բայց սուրբ հոգուցն շարժեալ՝ խօ-*

## ԳԼ · Ր

*1 Մարգարէութիւն է անուամբ Թէ՝ սուտ վարդապետներ պիտի լինին եկեղեցւոյ մէջն, եւ ցոյց կու տայ՝ Թէ նորանց եւ Թէ նորանց հետեւողներին անառակութիւնները եւ նորանց պատիժը, 7 Որ նորանից Տէրն կը փրկէ ասատուածապաշտներին, ինչպէս որ Ղովտը Սոդոմից փրկեցաւ։ 10 Իսկ անառակ եւ հպարտութիւն անող խարէբայներին վարքերն աւելի տեղ՝ ի տեղն խօսում է, որ լինի Թէ՝ մարդիկ տեսնելով շուտ ճանչնան նորանք, եւ նորանից հեռու կան։*

1 Սուտ մարգարէք էլ կային էն ժողովրդի մէջն[1], ինչպէս որ ձեր մէջն էլ պիտի սուտ վարդապետներ լինին, որ ներս պրծած՝ կորստական հերձուածողութիւններ կը մտցնեն[2], ուրանալուն[3] էն Տէրն որ իրանց գնեց՝ (եւ) իրանց վերայ շուտասյա կորուստ են բերում[5]։

2 Եւ շատ մարդիք կը հետեւին նորանց անառակութիւններին, որ նորա համար ճշմարտութեան ճանապարհն կը հայհոյվի։

3 Եւ ագահութեամբ իրանց մտքից հնարած խօսքերով[6] ձեզ կը խաբեան (ձեր տեղից)[7], որ նորանց դատաստանն իսկի մին ժամանակ դատարկ չի կենալ, եւ նորանց կորուստն գուբ չի հանիլ[8]։

4 Մեղաւոր որ եղեք Աստուած մեզանից[9] հրեշտակներին չխնայեց[10], բայց խաւարի կապանքով քցից տարտարոսն՝ եւ պահել տուաւ որ դատվին[11]։

5 Եւ առաջին աշխարհքին էլ չխնայեց, բայց միւնակ նոյին որ ութ հերոգրդն էր[12]՝ էն արդարութեան քարոզչին պահից աշխարհքի ջրհեղեղին[13], որ ամբարիշտներին վերայ ածեց[14]։

6 Եւ սոդոմացոց եւ գոմորացոց քաղաքներըն մոխիր դարձնելով՝ դատաստան արաւ[15], (որ նորանով) յետոյ եկող ամբարիշտներին օրինակ էր դնում[16]։

7 Եւ փրկեց արդար ղովտին՝ որ անկարգ դիճութեան վարմունքներովն ձանձրացել էր[17]։

8 Ինչու որ էն արդարն նորանց մէջ բնակվելով՝ որ աչքովն տեսաւ եւ ականջովն լսեց, օրէցօր իրան սուրբ հոգին տանջում էր նորանց անօրէն գործքերովն[18]։

9 Տէրն դիտում աստուածապաշտներին փրկել փորձանքից, եւ

---

[28] բ Տիմ. գ. 16։ ա Պետր. ա. 11։ [29] բ Թագ. խգ. 3։ Ղեւ. ա. 70։ Գործ. ա. 16։ գ. 18։ [1] բ Օրին. ժգ. 1։ [2] Մատթ. իզ. 11։ Գործ. ք. 30։ ա Կորնթ. ժա. 19։ ա Տիմ. դ. 1։ բ Տիմ. գ. 1, 5։ ա Ցովհ. գ. 1։ Ցակոբ. 18։ [3] ա Կորնթ. զ. 20 Գաղ. դ. 13։ Եփես. ա. 7։ Եբր. ժ. 29։ ա Պետր. ա. 18։ Ցայտ. ե. 9։ [4] Ցակոբ. 4։ [5] Փիլիպ. գ. 19։ [6] Հուդ. ժզ. 18։ բ Կորնթ. ժբ. 17, 18։ ա Տիմ. զ. 5։ Տիտ. ա. 11։ [7] բ Կորնթ. բ. 17։ բ Պետր. ա. 16։ [8] բ Օրին. լբ. 35։ Ցակոբ. 4, 15։ [9] Ցովհ. ը. 44։ ա Ցովհ. գ. 8։ [10] Ցուդ. գ. 18։ Ցակոբ. 6։ [11] Գաղ. ը. 31։ Ցայտ. ի. 2, 3։ [12] Ծննդ. է. 1, 7, 23։ Եբր. ժա. 7։ ա Պետր. գ. 20։ [13] ա Պետր. գ. 19։ [14] բ Պետր. գ. 6։ [15] Ծննդ. ժի. 24։ բ Օրին. իի. 23։ Ցակոբ. 7։ [16] Թագ. իգ. 10։ [17] Ծննդ. ժի. 16։ [18] Սաղմ. ճժի. 139, 158։ Եզեկ. ի. 4։

անօրէնների պահել դէպի զատաստանի օրն՝ որ տանջվին[19]։

10 Մ՚անաւանդ նորանց՝ որ մարմնոյ պիղծ ցանկութիւնների ետեւէն են գնացած[20]. (որ) տէրութիւնն անարգումն, անամօթներ, յանդուգներ, որ չեն վախում՝ փառքն հայհոյել[21]։

11 Թէ եւ հրեշտակներն որ զօրութիւնով եւ կարօղութիւնով աւելի մեծ են նորանցից, հայհոյանքի դատաստանն չեն բերում նորանց վերայ Տէրի առաջին[22]։

12 Այլ սորանք ինչպէս անխօս անասունները՝ որ իրանց բնութեան պէս աւերվելոյ եւ ապականվելոյ համար են ծընված, հայհոյում են բաներըն որ չեն գիտում, եւ իրանց ապականութիւնովն կապականվին[23],

13 Ընդհատութեան վարձքովն տանջված[24], որ նորանք ցանկութիւն են համարում էս օրվան փափկութիւնըն[25], որ պղծութեան հետեւօղ պղտոր, եւ իրանց խաբեբայութիւնով փափկացած են[26], եւ ձեր հացկերութեան ընկեր են լինում[27]։

14 Պոռնիկների նման աչքեր ունին, որ մեղքից չեն դադարիլ. խաբում են թեթեւամիտների անձնները. որ սրտեր ունին ագահութիւնով բռնված[28] անէծքի որդիք։

15 Որ շիտակ ճանապարհըն թողած՝ մոլորվեցան. բնօրեան բադամի ճանապարհին հետեւելով՝ անիրաւութեան վարձքըն սիրեցին[29]։

16 Որ իրան անօրէնութեանն յանդիմանօղ ստացաւ էն անխօս էշն. որ մարդոյ ձայնովն խօսելով՝ արգելից էն մարգարէի անօրէնութիւնըն։

17 Լսպէսներն՝ անջուր աղբիւրներ են, եւ մրրիկ քամուց քշված ամպեր. որ խաւարի թանձր մէջ թեթիւն նորանց համար պահված կայ յաւիտեան[30]։

18 (Ինչու որ) մեծ մեծ դատարկ բաներ խօսելով՝ դիմութիւններով՝ մարմնոյ անառակ ցանկութիւններով խաբումն նորանց[31], որ ճշմարտապէս փախչումն նորանցից. որ մոլորութեան մէջն են ման գալիս[32]։

19 Ազատութիւն են խոստանում[33], եւ իրանք ապականութեան ծառաներ են. (ինչու որ) ինչ բանով որ մին (մարդ) յաղթվի, նոյնց նորան էլ ծառայ է[34]։

20 Պատճառն որ՝ եթէ աշխարհքի պղծութիւններից[35] փախան[36] մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութենովն, եւ մինէլ նորանում շաղաղված պատառվին, նորանց վերջն չար կըլինի քանիմէ առաջինն[37]։

21 Ինչու որ լաւ էր նորանց՝ որ իսկի չըճանաչէին արդարութեան ճանապարհըն, քանիմէ որ ճանաչելին՝ եւ յետ քաշվեցան էն սուրբ պատուիրանքից որ տրվվաւ նորանց[38]։

22 Որ նորանց լաւ յարմար է գալս խնամատարութեան էն ճշմարիտ աւանին, թէ շունն մինէլ դառնում դէպի իրան փսխածն, եւ լուացված խոզն ցեխի մէջն թավալվում[39]։

---

[19] Ա՚մ. լդ. 17, 19։ ա Պետր. ժ. 13։ [20] Ց՚ուդ. 4 7, 8,, 10, 16։ [21] Ց՚ուդ. 8։ [22] Ց՚ուդ. 9։ [23] Երէմ. ժբ. 3։ Ց՚ուդ. 10։ [24] Փիլիպ. գ. 19։ [25] Հռովմ. ժգ. 13։ [26] Ց՚ուդ. 12։ [27] ա Պետր. ժա. 20, 21։ [28] Ց՚ուդ. 11։ [29] Թուա. իբ. 5, 7, 21, 23, 28։ Ց՚ուդ. 11։ [30] Ց՚ուդ. 12, 13։ [31] Ց՚ուդ. 16։ [32] Գաղ. գ. 40։ բ Պետր. ա. 4։ Վ՚ար. 20։ [33] Գաղ. ե. 13։ ա Պետր. բ. 16։ [34] Յովհ. ը. 34։ Հռովմ. զ. 16։ [35] բ Պետր. ա. 4։ Վ՚էր. 18։ [36] Մ՚ատթ. ժբ. 45։ Գ՚ործ. ժա. 26։ Եբր. գ. 4։ ժ. 26, 27։ [37] բ Պետր. ա. 2։ [38] Գ՚ործ. ժբ. 47, 48։ Ց՚ուդ. թ. 41։ ժե. 22։ [39] Ա՚ռակ. իզ. 11։

# ԳԼ · Գ

1 Հաստատուած քրիստոսի դատաստան գալոյն ճշմարիտ լինելն են ծաղրանօղ մարդկանց դէմ. 8 Կրկրատեւ Աստուածապաշտներին որ Աստուծոյ երկայնամիտ լինելն յիշելով սպասկաքարեն. 10 Ցոյց կուտայ թէ ինչ կերպով աշխարհս վերջ պիտի լինի. 11 Զգոյշ օրդորէ նորանք՝ որ էս բաներս սուրբ եւ անարատ կարգով սպասեն, 15 Եւ խրատուին թէ Տէրի երկայնամիտ լինելն իրանց փրկութեան համար է, ինչպէս որ պօղոս էլ գրել էր նորանց՝ իրան թուղթերումն։

1 Սիրելիներ՝ էս երկրորդ թուղթըն է՝ որ գրումեմ ձեզ, որ սորա նով ձեր հաստատ մտքներդ զարթնացնեմ յիշելոյ համար[1]։

2 Որ յիշէք էն խօսքերըն որ առաջուց ասված են սուրբ մարգարէներից՝ եւ ձեր առաքեալներից էն Տէրի եւ փրկչի պատուիրանքներըն[2]։

3 Նայց առաջ էս գիտայէք, որ յետին օրերումն՝ բանի տեղ ջրդնօղ, ծաղրանօղ (մարդիք) կըգան[3], որ իրանց ցանկութեանց (ուզածին) պէս կըվարվին[4]։

4 Եւ կասեն՝ ո՞ւր է նորա գալուստեւնէն, ինչու որ նրանից հետու որ հարքն վախճանվեցան՝ ամէն բան հենց էնպէս կենումէ մեռումի աշխարհքի ստեղծագործութեան սկզբից։

5 Նայց նորանք՝ որ էս են ուզում՝ էն բանըն մոռացել են, թէ երկինքն սկզբից էլաւ, եւ երկիրս ջրից, եւ ջրով հաստատվեցաւ[6] Աստուծոյ խօսքովն[7].

6 Նրանով էն հին աշխարհքն մին ժամանակ ջրհեղեղով ապականված կորաւ[8]։

7 Եւ հիմիկ երկինքն եւ երկիրս հենց էն խօսքովն կացած ամբարված[9] են, կրակի համար պահված մինչեւ գատաստանի օրն, եւ ամբարիշտ մարդկանց կորուստն[10]։

8 Եւ էս էլ ձեզանից ծածուկ չըլինի՝ սիրելիներ, թէ Տէրի (առաջնի) մին օր հազար տարի պէս է, եւ հազար տարի էնչպէս մին օր[11]։

9 Տէրն չի ուշացնիլ (իրան) աւետիքըն ինչպէս որ մինքանիսն ուշ են կարծումի[12], բայց երկայնամիտ է լինում ձեզ վերայ[13], պատճառն որ չի կամենում որ մինն կորչի[14], բայց որ ամէնքն ապաշխարութեան հասնեն[15]։

10 Նայց Տէրի օրն գողի պէս կըգայ[16], որ նորանում երկինքն սաստիկ ձայնով անցկրկեայ, եւ տարերքն կրակով վառված կըհալվին, եւ երկիրն էլ եւ ամէն բաներն էլ՝ որ նորանում գտնըվին[17]։

11 Ուրեմն երբոր էս ամէնս էս-

[1] բ Պետ. ա. 13։ [2] Յուդ. 17։ [3] ա Տիմ. գ. 1։ բ Տիմ. գ. 1։ Յուդ. 18։ [4] բ Պետ. բ. 10։ [5] Ծնոյ. ե. 19։ Երեմ. ժե. 15։ Եզեկ. ժր. 22, 27։ Մատթ. իգ. 48։ Գալատ. ժր. 45։ [6] Սաղ. իգ. 2։ Ոչ. 6։ Կող. ա. 17։ [7] Ծննդ. ա. 6, 9։ Սաղմ. լգ, 6. Եբր. ժա. 3։ [8] Ծննդ. է. 11, 21, 22, 23։ բ Պետ. բ. 5։ [9] Վտր. 10։ [10] Մատթ. իե. 41։ բ Թես. ա. 8։ [11] Սաղմ. զ. 4։ [12] Ա Հովհ. բ. 3։ Եբր. ժ. 37։ [13] Ծնոյ. լ. 18։ ա Պետ. գ. 20։ Վտր. 15։ [14] Եզեկ. ժը. 23, 32։ լգ. 11։ [15] Հռոմ. բ. 4։ [16] Մատթ. իգ. 43։ Գալատ. ժր. 39։ ա Թես. ե. 2։ Յայտ. գ. 3։ ժգ. 15։ [17] Սաղմ. ծբ. 26։ Ծնոյ. ծա. 6։ Մատթ. իգ. 35։ Մարկ. ժգ. 31։ Եբր. ա. 11։ Յայտ. ե. 11։ իա. 1։

պէս կըհալվի, ի՞նչպէսի պէտք է գանըվիք դուք՝ որ սուրբ եւ աստուա-
ծապաշտ կարգով[18] սպասէք[19],
12 Յե՛ ջանք անէք հասնէք Տէրի
գալու օրին, որ նորանում երկինքն
կրակով պրված կըքանդվին[20], եւ
տարերքն կրակ ընկած կըհալվին[21]։
13 Այլ նորա խոստմունքին պէս,
նոր երկնքի եւ նոր երկրի մխիկ տա-
լով սպասումենք. որ նորանցում՝ ար-
դարութիւն է բնակվում[22]։
14 Սրահամար սիրելիներ՝ սո-
րանց սպասելով ջանք արէք՝ որ ա-
ռանց պղծութեան եւ անարատ գըտ-
նըվիք նորա առաջին խաղաղութեան
մէջ[23]։
15 Յե՛ Տէրի երկայնամիտ լինելըն
փրկութիւն համարեցէք. ինչպէս որ
մեր սիրելի եղբայր պօղոսն էլ՝ էն Ը-
տուածանից իրան տրվված իմաս-
տութեան պէս՝ գրեց ձեզ[24]։
16 Ինչպէս որ հէնց ամէն թըղ-
թերումն էլ խօսում էս բաներիս
համար[25], որ նորանցում մին քանի
դժուար հասկանալու բաներ կան.
որ ուսմունք չըգիտօղներն, եւ թե-
թեւամիտներն նորանց կամքով ծը-
ռումեն, ինչպէս որ հէնց ամէն գըր-
քերն էլ՝ իրանց անձներըն կորցնե-
լու համար։
17 Սիրելիներ՝ դուք բա-
նը (առաջուց) հասկացօղների պէս[26]
զգոյշ կացէք[27]. որ չըլինի թէ ա-
նառակ մոլորութենով շաղաղված՝
վեր ընկնիք էդ ձեր հաստատութե-
նից։
18 Ըճեցէք մեր Տէր եւ փրկիչ
Յիսուսի Քրիստոսի շնորհքումն եւ
գիտութենումն[28]. նորան (լինի)
փառք՝ հիմիկ էլ՝ եւ մինչեւ յաւի-
տենական օրն էլ. ամէն[29]։

[18] ա Պետր. ա. 15։ [19] ա Կորնթ. ա. 7. Տէր. բ. 13։ [20] Սաղմ. ծ. 3։ Եսայ. լդ. 4։ [21] Մէթ. ա. 4։ Վէբ. 10։ [22] Եսայ. կե. 17։ կզ. 22։ Ճայտ. խա. 1, 27։ [23] ա Կորնթ. ա. 8։ Ժե. 58։ Փիլիպ. ա. 10։ ա Թես. գ. 13։ ե. 23։ [24] Հռոմ. բ. 4։ ա Պետր. գ. 20։ Վէբ. 9։ [25] Հռոմ. ը. 19։ ա Կորնթ. Ժե. 24։ ա Թես. գ. 14։ [26] Մարկ. Ժգ. 23։ բ Պետր. ա. 12։ [27] Եփես. գ. 14։ բ Պետր. ա. 10, 11։ բ. 18։ [28] Եփես. գ, 15։ ա Պետր. բ. 2։ [29] բ Տէր. գ. 18։ Ճայտ. ա. 6։

# ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵՑԻ

# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Առաքեալն կը յորդորէ Քրիստոսի անձնէն՝ որ նորանով յաւիտենական կեանք եւ Աստուծոյ մօտ հաղորդութիւն ունինք. 5 կը յորդորէ որ սրտով սուրբ վարք եւ ունենանք, եւ ցոյց տանք թէ մեր հաւատքն ճշմարիտ է, եւ հաստատ լինինք թէ Քրիստոսի մահովն մեր մեղացն թողութիւն կըլինի։

1 Յն ՈՐ ՍԿԶԲԱՆ ԷՐ[1], որ նորանցից լսեցինք, որ նորան հինց մեր աչքերովս տեսինք, որ նորա վերայ մտիկ տուինք[2], եւ մեր ձեռներն գիպան կենաց բանին վերայ[3]։

2 Յն կեանքն[4] յայտնըվեցաւ մեզ, եւ տեսինք[5], եւ վկայումենք[6], եւ պատմումենք ձեզ (էն) յաւիտենական կենաց համար[7], որ հօր մօտն էր՝ եւ երեւեցաւ մեզ[8]։

3 Յն որ տեսինք եւ լսեցինք՝ պատմումենք ձեզ, որ դուք էլ հաղորդութիւն ունենաք մեզ հետ[9]. եւ մեր հաղորդութիւնն լինի հօր հետ՝ եւ նորա որդոյ Յիսուսի Քրիստոսի հետ[10]։

4 Յն էս գրումենք ձեզ, որ ձեր ուրախութիւնն կատարեալ լինի[11]։

5 Յն էս է էն աւետիքն՝ որ նորանից լսեցինք՝ եւ պատմումենք ձեզ[12], թէ Աստուած լոյս է, եւ իսկի մին խաւար չըկայ նորանումՐ[13]։

6 Յթէ ասենք՝ թէ հաղորդութիւն ունինք նորա հետ, եւ խաւարի մէջ մանգանք, սուտ ենք ասում՝ եւ ճշմարտութիւնըն չենք անում[14]։

7 Բայց եթէ լուսոյ մէջ մանգանք՝ ինչպէս որ նա լոյս է, (ապա) հաղորդութիւն ունինք իրար հետ. եւ նորա որդոյ Յիսուսի Քրիստոսի արիւնն մեզ սրբում ամէն մեղքից[15]։

8 Յթէ ասենք՝ թէ մենք մեղք չունինք, մեր անձներըս ենք խա-

[1] Ցովհ. ա. 1։ ա Ցովհ. բ. 13։ [2] Ցովհ. ա. 1։ բ Պետր. ա. 16։ ա Ցովհ. գ. 14։ [3] Գործ. ի. 39։ Ցովհ. ի. 27։ [4] Ցովհ. ա. 4։ Ժա. 25։ Ժգ. 6։ [5] Հռով. Ժգ. 26։ ա Տիմ. գ. 16։ ա Ցովհ. գ. 5։ [6] Ցովհ. իա. 24։ Գործ. բ. 32։ [7] ա Ցովհ. ե. 20։ [8] Ցովհ. ա. 1, 2։ [9] Գործ. գ. 20։ [10] Ցովհ. Ժե. 21։ ա Կորնթ. ա. 9։ ա Ցովհ. բ. 24։ [11] Ցովհ. Ժե. 11։ Ժգ. 24։ բ Ցովհ. 12։ [12] ա Ցովհ. գ. 11։ [13] Ցովհ. ա. 9։ ը. 12։ Թ. 5։ Ժբ. 35. 36։ [14] բ Կորնթ. զ. 14։ ա Ցովհ. բ. 4։ [15] ա Կորնթ. չ. 11։ Եփես. ա. 7։ Եբր. Թ. 14։ ա Պետր. ա. 19։ ա Ցովհ. բ. 2։ Ցայտ. ա. 5։

բաւմ[16]. եւ ճշմարտութիւն չըկայ բե[19]:

9 Եպա եթէ մեր մեղքըն խոստովանվինք, նա հաւատարիմ է եւ նուիրական՝ որ մեր մեղքըն թողէ մեզ[18], նուիրական է եւ մեզ ամէն անիրաւութենից սըրբէ:

10 Եթէ ասենք՝ թէ մենք իսկի մեղք չըգործեցինք, սուտ ենք առնում նորան, եւ նորա խօսքն մեզանում չէ:

## Կ·Ը

1 Մին մխիթարութիւն կըտայ անարատներին. 3 կըտուվորնիկ թէ ճշմարտասէս Աստուած ճանաչելն՝ նորա պատուիրանքներին պահելն է, 9 եւ մեր եղբայրներին սիրելն, 15 եւ աշխարհիս չըսիրելն է. 18 պէտք է որ մոլորցնողներից հեռու կանք, 20 որ նորան մոլորութենեցն քրիստոնեաներն ազատ կըլինին՝ հաստատ հաւատքով եւ սուրբ վարքով պահված:

1 Իմ որդեակներս, էս եմ գըրում ձեզ՝ որ չըմեղանչէք, եւ եթէ որ մինն մեղանչէ, բարեխօս ունինք Յիսուս Քրիստոսին՝ Աստուծոյ մօտ Հիսուս Քրիստոսին՝ էն արգարին եւ անարատին[1]:

2 Նա է մեր մեղաց քաւութիւնն[2]. եւ ոչ թէ մենակ մերին՝ բայց էլ ամէն աշխարհքին[3]:

3 Նըմ սորանով ենք գիտում՝ որ ճանաչեցինք նորան, թէ որ նորա պատուիրանքներըն պահենք:

4 Ով որ ասէ՝ թէ ճանաչեցի նորան՝ եւ նորա պատուիրանքներըն չըպահէ[4], սուտ է՝ եւ ճշմարտութիւն չըկայ նորանում[5]:

5 Նայց նա՝ որ նորա խօսքըն պահում[6], շիտակ է՝ որ Աստուծոյ սէրն նորանում կատարեալ է[7]. սորանով ճանաչում ենք որ նորանում ենք[8]:

6 Ով որ ասում թէ նորանում եմ բնակվում[9], էնպէս պէտք է գնայ, ինչպէս որ նա գնաց[10]:

7 Սիրելիներ՝ չէ թէ մին նոր պատուիրանք եմ գրում ձեզ[11], բայց էն հին պատուիրանքըն՝ որ սկըզբից ունէինք, եւ հին պատուիրանքն էն խօսքն է՝ որ լսեցիք[12]:

8 Մինել նոր պատուիրանք եմ գրում ձեզ՝ որ ճշմարիտ է նորա նում ձեզանում[13], ինչու որ խաւարըն անցկացաւ[14], եւ ճշմարիտ լոյսն հիմի երեւում[15]:

9 Ով որ ասէ թէ լուսոյ մէջն է՝ եւ իրան եղբօրըն ատէ, սուտ է՝ եւ դեռ հիմի խաւարի մէջն է[16]:

10 Նա՝ որ իրան եղբօրըն սիրում, լուսոյ մէջն է բնակվում[17], եւ գայթակղութիւն չըկայ նորանում[18]:

[1] գ Յովհ· ը· 46: [2] ա Յովհ· գ· 36: ՃԱ· Ի· 2: Հբ· 14: Ի՛ե· 4: [3] Ա՛ոմ· ի· 9: Ծա՛ղ· է· 20: Ճա՛· գ· 2: [4] ա Ճա՛ղ· ը· 4: [5] Ա՛ղմ· լբ· 5: [6] Ա՛ոմ· իը· 13: [7] Ա՛ոմ· ծա· 2: [8] Հա՛ռմ· ը· 34: [9] ա Տի՛մ· ը· 5: [10] Եբր· է· 25: [11] Ի՛ե· 24: [12] Հա՛ռմ· գ· 25: [13] ը Կո՛ռնթ· է· 18: [14] ա Ճա՛ղ· ա· 7: [15] գ· 10: [16] Ճա՛ղ· ա· 29: [17] գ· 42: [18] Ժա· 51, 52: [19] ա Ճա՛ղ· գ· 14: [20] ա Ճա՛ղ· ա· 6: [21] գ· 20: [22] ա Ճա՛ղ· ա· 8: [23] Ճա՛ղ· Ի՛ժ· 21, 23: [24] ա Ճա՛ղ· գ· 12: [25] ա Ճա՛ղ· գ· 13: [26] Ճա՛ղ· Ժե· 4· 5: [27] Ա՛ռաքլ· Ժա· 29: [28] Ճա՛ղ· Ժգ· 15: [29] ա Պետր· բ· 21: [30] ը Ճա՛ղ· 5: [31] ա Ճա՛ղ· գ· 11: [32] բ Ճա՛ղ· 5: [33] Ճա՛ղ· Ժգ· 34: [34] Ժե· 12: [35] Հա՛ռմ· Ժգ· 12: [36] Եբե՛ռ· է· 8: [37] ա Թի՛մ· է· 5, 8: [38] Ճա՛ղ· ա· 9: [39] բ· 12: [40] Ժբ· 35: [41] Ա՛կնխ· Ժգ· 2: [42] բ Պետր· ա· 9: [43] ա Ճա՛ղ· գ· 14, 15: [44] ա Ճա՛ղ· գ· 14: [45] բ Պետր· ա· 10:

11 Խոյց նա՝ որ իրան եղբօրըն ա-
տումէ, խաւարումն է, եւ խաւարի
մէջ է մանն գալիս, եւ չի գիտեմ
թէ ուր է դնում. ինչու որ խաւարն
կուրացրուց նորա աչքերըն[19]:

12 Կրտումեմ ձեզ ովդեաներ՝
պատճառն որ ձեր մեղքերն թող-
ված են ձեզ՝ նորա անունի համար[20]:

13 Կրտումեմ ձեզ հայրք՝ ինչու
որ դուք ճանաչեցիք նորան՝ որ
սկզբըիցն (է)[21]. գրումեմ ձեզ երի-
տասարդներ՝ ինչու որ դուք յաղ-
թեցիք չարին:

14 Կրեցի ձեզ մանկունք՝ պատ-
ճառն որ դուք ճանաչեցիք Հօրըն.
գրեցի ձեզ հայրք՝ պատճառն որ
դուք ճանաչեցիք նորան՝ որ սկզբ-
ըիցն (է). գրեցի ձեզ երիտասարդ-
ներ՝ ինչու որ դուք զօրացել էք, եւ
Բ.ստուծոյ խօսքն բնակվումէ ձեզա-
նում, եւ դուք յաղթեցիք չարին[22]:

15 Մի՛ սիրէք աշխարհքըս, եւ ոչ
էլ են ամէնըն՝ որ աշխարհքիս մէջն
է[23]:

16 Թէ որ միեն աշխարհքին սիրէ՝
չօր սէրն նորանում չէ[24]. պատ-
ճառն որ ամէն ինչ որ աշխարհքում
է՝ մարմնոյ ցանկութիւն է, եւ աչ-
քերի ցանկութիւն է[25], եւ էս
կեանքիս ամբարտաւանութիւն. որ
Հօրիցն չէ՝ բայց էս աշխարհքիցս է:

17 Եւ աշխարհքս անց է կենում,
եւ (նորա) ցանկութիւնըն էլ[26].
բայց նա՝ որ Բ.ստուծոյ կամքըն ա-
նում, յաւիտեան մնում:

18 Որդեակներ[27]՝ յետին ժամա-
նակն է, եւ ինչպէս որ լսեցիք[28]՝ թէ
Նեռն գալու է[29], եւ հիմիկ
շատ նեռեր եկել են[30], որ սորանով
կարող ենք իմանալ՝ թէ յետին ժա-
մանակն է[31]:

19 Մ՚եզանից դուրս գնացին, բայց
մեզանից չէին[32]. պատճառ որ՝ եթէ
մեզանից լինէին, ապա մեզ մօտ կը-
մնային[33], բայց որ յայտնի լինին՝ թէ
նորանք ամէնքն մեզանից չէին[34]:

20 Եւ դուք օծութիւն ունէք[35]
(էն) սըրբիցն[36], եւ ամէն (բան) գի-
տումէք[37]:

21 Չ՚գրեցի ձեզ՝ իբր թէ ճըշ-
մարտութիւնըն չէք գիտում, բայց
որ գիտումէք նորան. եւ որ ամէն
ստութիւն էն ճշմարտութենիցն չէ:

22 Խոյց ո՞վ է սուտ, եթէ ոչ նա
որ ուրանումէ թէ Յիսուսն չէ Քրը-
իստոսն. Հենց նա է Նեռն, որ ու-
րանումէ Հօրըն եւ որդոյն[38]:

23 Ամէն ով որ որդոյն ուրանում-
է, Հօրըն էլ չի՛ ընդունում[39]. նա
որ որդոյն դաւանումէ, Հօրն էլ ըն-
դունումէ[40]:

24 Կուք՝ էն որ լսեցիք սկզբիցն,
թող բնակվի ձեզանում[41]. պատ-
ճառն որ՝ թէ որ բնակվի ձեզանում
էն՝ որ սկզբիցն լսեցիք, դուք էլ կը-
բնակվիք որդոյ եւ Հօր մէջն[42]:

[19] Ցովհ. ժբ. 25: [20] Ղուկ. իգ. 47: Գործ. գ. 12: Ժ. 43: Ժգ. 38: ա Ցովհ. ա. 7: [21] ա Ցովհ. ա. 1: [22] Եփես. զ. 10: [25] Հռովմ. ժբ. 2: [24] Յակոբ. զ. 24: Գաղ. ա. 10: Ցակ. գ. 4: [25] Ծաղ. ե. 11: [26] ա Կորնթ. է. 31: Ցակ. ա. 10: դ. 14: ա Պետր. ա. 24: [27] Ցովհ. իա. 5: [28] Եբր. ա. 2: [29] բ Թես. բ. 3: բ Պետր. բ. 1: ա Ցովհ. գ. 3: [30] Յակոբ. իգ. 5, 24: բ Ցովհ. 7 [31] ա Տիմ. գ. 1: բ Տիմ. գ. 1: [32] բ Օրին. ժգ. 13: Սաղմ. խա. 9: Գործ. ի. 30: [33] Յակոբ. իգ. 24: Ցովհ. զ. 37: Ժ. 28, 29: բ Տիմ. բ. 19: [34] ա Կորնթ. ժա. 19: [35] բ Կորնթ. ա. 21: Եբր. ա. 9: Ա.ստ. 27: [36] Յարկ. ա. 24: Գործ. գ. 14: [37] Ցովհ. ժ. 4, 5: ժգ. 26: ժզ. 13: Ա.ստ. 27: [38] ա Ցովհ. գ. 3: բ Ցովհ. 7: [39] Ցովհ. ժե. 23: բ Ցովհ. 9: [40] Ցովհ. ժգ. 7, 9, 10: ա Ցովհ. գ. 15: [41] բ Ցովհ. 6: [42] Ցովհ. ժգ. 23: ա Ցովհ. ա. 3:

25 Այլ ես է (էն) աւետիքն՝ որ նա աւետարանեց մեզ՝ (այսինքն) յաւիտենական կեանքըն[43]։

26 Այս գրեցի ձեզ՝ որ չըլինի թէ միւնն մոլորացնէ ձեզ[44]։

27 Այլ դուք էն օծութիւնըն, որ նորանից ընդունեցիք՝ կըբնակվի ձեզ մէջ, եւ պէտք չէ՝ որ միւնն սովորցնէ ձեզ[46]. բայց ինչպէս որ նորա օծութիւնն սովորցնում ձեզ ամէն (բանի) համար. եսպէս էլ ճշմարիտ է՝ եւ սուտ չէ. եւ ինչպէս որ նա սովորցրուց ձեզ՝ կացէք նորանում[47]։

28 Այլ հիմի որդեակներ՝ կացէք նորանում, որ երբոր (նա) կըյայտնըվի, համարձակութիւն ունենանք[48], եւ չամաչենք նորանից՝ նորա գալոյ ժամանակումն[49]։

29 Եթէ գիտումէք՝ որ նա արդար է[50], գիտենաք թէ ամէն ով որ արդարութիւն կանէ՝ նորանից է ծընված[51]։

## ԳԼ · Գ

1 Ասուածոյ մեզ շնորհած զարմանալի սէրըն՝ որ նորանով մեզ իրան որդիք արաւ, 3 Առաքեալն յորդորումն մեզ որ հնազանդութեանով նորա պատուիրանքներըն պահենք, 11 եւ միմեանց եղբայրներն պէս իրար սիրենք։

1 Տեսէք՝ թէ հայրն ինչպէսի սէր շնորհեց մեզ, որ Աստուծոյ որդիք կոչվինք[1]. սրա համար աշխարհքն չի՛ ճանաչում մեզ, պատճառն որ նորան (էլ) չըճանաչեց[2]։

2 Սիրելիներ՝ հիմիկ Աստուծոյ որդիք ենք[3], եւ դեռ յայտնի չէ՝ թէ ինչ պիտի լինինք[4]. գիտումնք՝ թէ երբոր նա կըյայտնըվի՝ նորան նման կըլինինք[5], ինչու որ կըտեսնենք նորան՝ ինչպէս որ է[6]։

3 Այլ ամէն ով որ էս յոյսս ունի իրանում, սրբուսի իրան անձըն՝ ինչպէս որ նա սուրբ է[7]։

4 Ամէն ով որ մեղք է գործում, նա անօրէնութիւն էլ է անում, եւ հենց ինքն մեղքն անօրէնութիւն է[8]։

5 Այլ գիտումնք՝ թէ նա նրա համար յայտնըվեցաւ[9] որ (մեր) մեղքերըն վերառնէ[10]. եւ նորա մէջ մեղք չըկայ[11]։

6 Ամէն ով որ նորանում հաստատված է՝ չի՛ մեղանչում. եւ ամէն ով որ մեղանչումէ, ոչ տեսաւ նորան՝ եւ ոչ ճանաչեց նորան[12]։

7 Պ՚անկուն՝ չըլինի թէ միւնն ձեզ խաբէ[13]. նա՝ որ արդարութիւն է անում, արդար է, ինչպէս որ նա էլ արդար է[14]։

8 Այլ նա որ մեղք է անում՝ սա-

---

[43] Ցուղ. ժէ. 3։ ա Ցուղ. ա. 2։ է. 11։ [44] ա Ցուղ. գ. 7։ բ Ցուղ. 7։ [45] Վէր. 20։ [46] Երէմ. լա. 33. 34։ Եբր. ը. 10, 11։ [47] Ցուղ. ժգ. 26։ ժզ. 13։ Վէր. 20։ [48] ա Ցուղ. գ. 2։ [49] ա Ցուղ. գ. 17։ [50] Գործ. իբ. 15։ [51] ա Ցուղ. գ. 7. 10։ [1] Ցուղ. ա. 12։ [2] Ցուղ. ժէ. 18. 19։ ժզ. 3։ ժէ. 25։ [3] Նաայ. ծգ. 5։ Հռովմ. ը. 15։ Գաղ. գ. 26։ գ. 6։ ա Ցուղ. է. 1։ [4] Հռովմ. ը. 18։ բ Կորնթ. գ. 17։ [5] Հռովմ. ը. 29։ ա Կորնթ. ժե. 49։ Փիլիպ. գ. 21։ Կող. գ. 4։ բ Պետր. ա. 4։ [6] Ցոհ. ժբ. 26։ Յայտ. ժզ. 11։ Մատթ. ե. 8։ ա Կորնթ. ժգ. 12։ բ Կորնթ. է. 7։ [7] ա Ցուղ. գ. 17։ [8] Հռովմ. գ. 15։ ա Ցուղ. է. 17։ [9] ա Ցուղ. ա. 2։ [10] Նաայ. ծգ. 5, 6, 11։ ա Ցհ՛ով. ա. 15։ Եբր. ա. 3։ Թ. 26։ ա Պետր. բ. 24։ [11] բ Կորնթ. է. 21։ Եբր. գ. 15։ Թ. 28։ ա Պետր. բ. 22։ [12] ա Ցուղ. բ. 4։ գ. 8։ գ Ցուղ. 11։ [13] ա Ցուղ. բ. 26։ [14] Եփես. ժբ. 5–9։ Հռովմ. բ. 13։ ա Ցուղ. բ. 29։

տանայիցն է, ինչու որ սատանան հինց սկզբնիցն մեղանչումէ[15]. նրա համար յայտնըվեցաւ Աստուծոյ որդին՝ որ սատանայի գործքերըն քանդէ[16]:

9 Ամեն ով որ Աստուածանից է ծնված՝ մեղք չի անում[17], ինչու որ նորա սերմն մնումէ նորանում. եւ կարօղ չէ մեղանչել, պատճառն որ Աստուածանից է ծնված[18]:

10 Սրանով իրարից (ջոկվածք) յայտնի են Աստուծոյ որդիքն՝ եւ սատանայի որդիքն. ամեն ով որ արդարութիւն չի անում՝ նա Աստուածանից չէ[19], եւ ոչ էլ նա՝ որ իրան եղբօրըն չի սիրում[20]:

11 Ինչու որ էս է էն պատուիրանքն՝ որ սկզբնիցն լսեցիք[21] որ պէտք է իրար սիրենք[22]՝

12 Չէ թէ ինչպէս կայէնն (որ) չարիցն էր՝ եւ իրան եղբօրըն սպանեց[23]. եւ ինչու համար սպանեց նորա. նրան համար որ իրան գործերըն չար էին եւ եղբօրն բարի:

13 Մի՛ զարմանաք եղբարք, եթէ աշխարհս ատէ ձեզ[24]:

14 Մի՛նք գիտումինք՝ որ մահիցն դէպի կեանքն փոխվեցանք. որովհետեւ որ եղբայրներին սիրումինք[25]. բայց ով որ չի սիրում եղբայրներին, մնում մէջն է մեռում[26]:

15 Ամեն ով որ իրան եղբօրըն ատումէ՝ մարդասպան է[27]. եւ գիտումէք՝ որ ամեն մարդասպան յաւիտենական կեանքն չունի հաստատված իրանում[28]:

16 Սրանով գիտացինք Աստուծոյ սերըն, որ նա իրան անձըն դրաւ մեզ վերայ[29]. եւ մինք էլ պէտք է մեր եղբարց վերայ դնինք մեր անձներըս:

17 Ա՛յ՝ որ էս աշխարհքիս ապրանքըն ունենայ, եւ տեսնէ թէ իրան եղբայրն կարօտ է մին բանի, եւ իրան գութըն փակէ նորանից[30], էլ ի՞նչպէս Աստուծոյ սերն քնակված կըլինի նորանում[31]:

18 Որդեակներ՝ ոչ թէ խօսքերով եւ լեզուներով սիրենք, այլ գործքով եւ ճշմարտութիւնով[32]:

19 Ա՛ս սրանով ճանաչվումինք՝ թէ էն ճշմարտութիւնից ենք[33]. եւ նորա առաջի կանենք մեր սրտերի քնութիւնըն:

20 Նէթէ մեր սրտերն մեղադրեն մեզ, բայց Աստուած մեր սրտերից էլ աւելի մեծ է՝ եւ ամեն բան գիտումէ[34]:

21 Սիրելիներ՝ եթէ մեր սրտերն չըմեղադրեն մեզ, համարձակութիւն ունինք Աստուծոյ առաջին[35]:

22 Ա՛ս ինչ որ խնդրենք՝ կառնենք նորանից[36]. պատճառն որ նորա պատուիրաններըն պահումինք, եւ էն բաներըն՝ որ նորա առաջին

---

[15] Մատթ. ժգ. 28: Ցովհ. ը. 44: [16] Ծննդ. գ. 15: Ղեւտ. ժ. 18: Ցովհ. ժզ. 11: Եբր. բ. 14: [17] ա Ցովհ. ե. 18: [18] ա Պետր. ա. 23: [19] ա Ցովհ. բ. 29: [20] ա Ցովհ. գ. 8: [21] ա Ցովհ. ա. 5: բ. 7: [22] Ցովհ. ժգ. 34: ժե. 12: Վեպ. 23: ա Ցովհ. գ. 7, 21: բ Ցովհ. 5: [23] Ծննդ. գ. 4, 8: Եբր. ժա. 4: Ցուդ. 11: [24] Ցովհ. ժե. 18, 19: ժէ. 14: բ Տիմ. գ. 12: [25] ա Ցովհ. բ. 10: [26] ա Ցովհ. բ. 9, 11: [27] Մատթ. ե. 21, 22: ա Ցովհ. գ. 20: [28] Գաղ. ե. 21: Ցայտ. իա. 8: [29] Ցովհ. գ. 16: ժե. 13: Հռոմ. ե. 8: Եփես. ե. 2, 25: ա Ցովհ. գ. 9, 11: [30] բ Օրին. ժե. 7: Ղեւտ. գ. 11: [31] ա Ցովհ. գ. 20: [32] Եփես. լգ. 31: Հռոմ. ժբ. 9: Եփես. գ. 15: Ցով. բ. 15: ա Պետր. ա. 22: [33] Ցովհ. ժը. 37: ա Ցովհ. ա. 8: [34] ա Կորնթ. գ. 4: [35] Ցոբ. իբ. 26: Եբր. ժ. 22: ա Ցովհ. բ. 28: գ. 17: [36] Սաղմ. լգ. 15: Ճխե. 18, 19: Ա՛ռակ. ժե. 29: Երէմ. իթ. 12: Մատթ. է. 8: իա. 22: Մարկ. ժա. 24: Ցովհ. ժգ. 13: ժե. 7: ժզ. 23, 24: Ցակ. ե. 16: ա Ցովհ. ե. 14:

Հաճոյ են, անուանիք[37]։

23 Այլ ես է նորա պատուիրանքն, որ հաւատանիք նորա որդոյ Յիսուսի Քրիստոսի անունին[38], եւ իրար սիրեսջիք[39], ինչպէս որ նա պատուիրանք տուաւ մեզ[40]։

24 Այլ նա՝ որ նորա պատուիրանքները պահէ[41], նորանո՛ւմ հաստատուած է՝ եւ նա նորա՛նով[42]. եւ սրանից գիտենք թէ բնակիւմ մեզանո՛ւմ էն հոգուո՛ն՝ որ (նա) տուաւ մեզ[43]։

## ԳԼ · Դ

1 Կըպատուիրէ որ ամէն վարգապետների չըհաւատանք, որ նորանք պարծենումն՝ թէ Աստուծոյ Հոգին ունին, բայց պէտք է փորձել նորանք ճշմարիտ հաւատքի վարդապետութիւններովն։ 7 Եւ շատ պատճառներով յորդորումն եղբայրական սէր ունենալոյ համար։

1 Սիրելիներ՝ ամէն հոգոյ մի հաւատաք[1]. բայց փորձեցէք հոգիներըն եթէ Աստուածանից են[2]. պատճառն որ շատ սուտ մարգարէներ են եկել աշխարհքը[3]։

2 Այս մենք սրանով ենք ճանաչում Աստուծոյ հոգին. ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով եկած է խոստովանում, նա Աստուածանից է[4]։

3 Այս ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով եկած չի խոստովանում, նա Աստուածանից չէ. եւ էս նեռի (հոգին) է[5], որ նորա համար լսեցիք թէ գալու է, եւ հիմ էլ աշխարհքումն է[6]։

4 Դուք Աստուածանից էք որդեակներ, եւ յաղթեցիք նորանց[7]. պատճառն որ՝ նա որ ձեզանում է՝ մեծ է, քանթէ նա՝ որ աշխարհքի մէջն է[8]։

5 Նորանք աշխարհքիցն են, նրահամար աշխարհքիցն են խօսում[9], եւ աշխարհքն լսում նորանց[10]։

6 Մենք Աստուածանից ենք. ով որ Աստուծոյն ճանաչումէ՝ լսում մեզ[11], եւ ով որ Աստուածանից չէ՝ չի լսում մեզ. սրանով ենք ճանաչում ճշմարտութեան հոգին[12] եւ խաբեբայութեան հոգին։

7 Սիրելիներ՝ իրար սիրենք[13], ինչու որ սէրն Աստուածանից է. եւ ամէն ով որ սիրումէ՝ Աստուածանից է ծընված, եւ ճանաչումէ Աստուծոյն։

8 Ա՛ն՝ որ չի սիրում, Աստուծոյն չի ճանաչում[14], ինչու որ Աստուած

[37] Ցուն. ը. 29։ Թ. 31։ [38] Ցուն. զ. 29։ Ա Ե. 3։ [39] Մարկ. իբ. 39։ Ցուն. Ա գ. 34։ Ա Ե. 12։ Եբր. ե. 2։ ա Թես. դ. 9։ ա Պետր. դ. 8։ Վեր. 11։ ա Ցուն. դ. 21։ [40] ա Ցուն. բ. 8, 10։ [41] Ցուն. Ա գ. 23։ Ա Ե. 10։ ա Ցուն. դ. 12։ [42] Ցուն. Ա Ե. 21։ [43] Հռով. ը. 9։ ա Ցուն. դ. 13։ [1] Եբր. ԺԳ. 8։ Մարկ. իգ. 4։ [2] ա Կորնթ. Ա գ. 29։ ա Թես. ե. 21։ Ցաղ. բ. 2։ [3] Մարկ. իգ. 5. 24։ Գործ. ի. 30։ ա Տիմ. դ. 1։ բ Պետր. բ. 1։ ա Ցուն. բ. 18։ բ Ցուն. 7։ [4] ա Կորնթ. Ա բ. 3։ ա Ցուն. ե. 1։ [5] ա Ցուն. բ. 22։ բ Ցուն. 7։ [6] բ Թես. բ. 7։ ա Ցուն. բ. 18. 22։ [7] ա Ցուն. ե. 4։ [8] Ցուն. Ա բ. 31։ Ա գ. 30։ Ա զ. 11։ ա Կորնթ. բ. 12։ Եբր. ը. 2։ զ. 12։ [9] Ցուն. գ. 31։ [10] Ցուն. Ա ե. 19։ Ա է. 14։ [11] Ցուն. ը. 47։ Ա. 27։ ա Կորնթ. Ա բ. 37։ բ Կորնթ. Ա. 7։ [12] Ներս. ը. 20։ Ցուն. Ա գ. 17։ [13] ա Ցուն. Ա գ. 10, 11, 23։ [14] Ա Ցուն. բ. 4։ գ. 6։

սէր է[15]։

9 Ի սրանով Աստուծոյ սէրն երեւեցաւ մեր միջումն[16], որ Աստուած իրան միածին որդին ուղարկեց աշխարհ, որ նորանով կենդանի լինինք[17]։

10 Սրանում է սէրն. որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծոյն, բայց որ նա սիրեց մեզ[18], եւ իրան որդին ուղարկեց մեր մեղքերըն քաւելոյ համար[19]։

11 Սիրելիներ՝ եթէ Աստուած էսպէս սիրեց մեզ, ապա մենք էլ պէտք է իրար սիրենք[20]։

12 Խոկի մին ժամանակ միւնն չի՛ տեսել Աստուծոյն. թէ որ (մենք) իրար սիրենք՝ Աստուած մեզնում է բնակվում[21], եւ նորա սէրն մեզանում կատարեալ է[22]։

13 Սրանով գիտումենք որ մենք նորանում ենք բնակված՝ եւ նա մեզնում. որ իրան Հոգուցն տուաւ մեզ[23]։

14 Ի մենք տեսինք եւ վկայումենք[24], որ Հայրն իրան որդին ուղարկեց աշխարհքի փրկիչ (լինելոյ)[25]։

15 Ով որ դաւանի՝ թէ Յիսուս է Աստուծոյ որդին, Աստուած նորա նում է բնակվում՝ եւ նա Աստուածանում[26]։

16 Ի մենք հաւատացինք եւ ճանաչեցինք Աստուծոյ սէրըն՝ որ ունի մեզ վերայ. Աստուած սէր է[27], եւ ով որ սիրոյ մէջն է կենում՝ Աստուծոյ մէջն է բնակվում, եւ Աստուած նորանում է բնակվում[28]։

17 Սրանում է նորա սէրն կատարեալ մեզ հետ, որ համարձակութիւն ունինք դատաստանի օրումն[29]. պատճառն որ ինչպէս որ նա է՝ էնպէս էլ մենք ենք էս աշխարհքումս[30]։

18 Ո՛չ երկեայ սիրոյ մէջն. այլ կատարեալ սէրն հեռացնում վախն. ինչու որ վախն տանջանք ունի. բայց նա՝ որ վախում է, կատարեալ չէ սիրոյ մէջն[31]։

19 Մենք սիրենք Աստուծոյն. պատճառն որ առաջ նա սիրեց մեզ։

20 Եթէ որ մինն ասէ՝ թէ սիրում Աստուծոյն, եւ իրան եղբօրըն ատէ, նա սուտ է. ինչու որ նա՝ որ իրան եղբօրըն որ տեսնում՝ չի՛ սիրում[32], Աստուծոյն որ չի՛ տեսել՝ ի՞նչպէս կարող է սիրել[33]։

21 Ի էս պատուիրանքըս ունինք նորանից, թէ նա որ Աստուծոյն սիրում, իրան եղբօրըն էլ սիրէ[34]։

[15] Ա Յով. 16։ [16] Ց-ԿՂ · դ · 16։ Հռոմ. ե · 8։ ը · 32։ [17] ա Ց-ԿՂ · դ · 16։ [18] Ց-ԿՂ · ե · 11։ [19] Ց-ԿՂ · Ժե · 16։ Հռոմ. ե · 8, 10։ Ցխ · գ · 4։ [20] ա Ց-ԿՂ · բ · 2։ [21] Մատթ. Ժը · 33։ Ց-ԿՂ · Ժե · 12, 13։ ա Ց-ԿՂ · դ · 16։ [22] Ց-ԿՂ · ա · 18։ ա Ցխ. զ · 16։ Ա Յով. 20։ [23] ա Ց-ԿՂ · դ · 24։ [24] Ց-ԿՂ · ա · 14։ ա Ց-ԿՂ · ա · 1, 2։ [25] Ց-ԿՂ · գ · 17։ [26] Հռոմ. Ժ · 9։ ա Ց-ԿՂ · ե · 1, 5։ [27] Ա Յով. 8։ [28] ա Ց-ԿՂ · գ · 24։ Ա Յով. 12։ [29] Ց-Կ · բ · 13։ ա Ց-ԿՂ · բ · 28։ գ · 19, 21։ [30] ա Ց-ԿՂ · գ · 3։ [31] Ա Յով. 12։ [32] ա Ց-ԿՂ · բ · 4։ գ · 17։ [33] Ա Յով. 12։ [34] Մատթ. իբ · 37, 39։ Ց-ԿՂ · Ժգ · 34։ Ժե · 12։ ա Ց-ԿՂ · գ · 23։

## ԳՒ · Ե

1 Նա որ Աստուծոյն սիրումէ՝ նորանից ծնուած որդիներին էլ սիրումէ, եւ նորա պատուիրանքներըն չկըպահէ, 3 Որ նորանք խիկ ծանր չեն հաւատացեալներին։ 9 Յիսուս Աստուծոյ որդինն լինելով, կարող է մեզ փրկել։ 14 Եւ մեր աղօթքներըն լսել, որ նորանք թէ մեզ համար եւ թէ ուրիշներին համար որ անենք։

1 Ամէն ով որ հաւատումէ[1] թէ Յիսուս է Քրիստոսն[2], Աստուածանից է ծնուած[3]. եւ ամէն ով որ ծնողնից է ծնուած[4] սիրումէ, նորանից ծնուածին էլ սիրումէ։

2 Այնով ենք ճանաչումէ՝ թէ Աստուծոյ որդին(*) սիրումենք, երբոր Աստուծոյն սիրենք, եւ նորա պատուիրանքներըն անենք։

3 Պատճառն որ Աստուծոյ սէրն էս է, որ նորա պատուիրանքներն պահենք[5]. եւ նորա պատուիրանքներըն խիկ ծանր չեն[6]։

4 Ինչուոր՝ ամէն ով որ Աստուածանից է ծնուած՝ յաղթումէ աշխարհքին. եւ էս է յաղթութիւնն՝ որ աշխարհքին յաղթումէ, (այնքան) մեր հաւատքն[7]։

5 Ո՞վ է՝ որ յաղթումէ աշխարհքին, բայց միայն նա՝ որ հաւատումէ, թէ Յիսուս Աստուծոյ որդին է[8]։

6 Այ է որ եկաւ ջրով եւ հոգով եւ արիւնով՝ (այնքան) Յիսուս Քրիստոսն. ոչ թէ միայնակ ջրով, բայց արիւնով եւ ջրով[9]. եւ հոգին է որ վկայումէ, որ հինց հոգին է ճշմարտութիւնն[10]։

7 Պատճառն որ երեք են որ երկընքումն վկայումեն, Հայրն եւ բանն եւ սուրբ հոգին[11]. եւ էս երեքս միեն[12]։

8 Եւ (էս) երեքս են որ երկրումն վկայումեն. հոգին, եւ ջուրն, եւ արիւնն. եւ էս երեքս միեն։

9 Եթէ մարդկանց վկայութիւնն ընդունումենք, ապա ուրեմն Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է[13]. (ինչուոր) էս է Աստուծոյ վկայութիւնն, որ վկայեց իրան որդոյն վերայ[14]։

10 Ով որ հաւատումէ Աստուծոյ որդոյն, էս վկայութիւնըս ունի իրան անձնումի[15]. ով որ չի հաւատում Աստուծոյ որդոյն, սուտ է անում նորան[16]. պատճառն որ չի հաւատում էն վկայութեանն, որ Աստուած վկայեց իրան որդոյ վերայ։

11 Եւ հինց էս է վկայութիւնն, որ Աստուած յաւիտենական կեանքն տուաւ մեզ[17]. եւ էս կեանքս էն է՝ որ նորա որդոյ միջումն է[18]։

12 Ով որ որդոյն ընդունի, (նա) կեանքըն էլ կընդունի. եւ ով որ Աստուծոյ որդոյն չընդունի, (նա) կեանքըն էլ չի՛ ընդունիլ[19]։

---

[1] Ցվե. ա. 12։ [2] ա Ցվե. բ. 22, 23։ գ. 2, 15։ [3] Ցվե. ա. 13։ [4] Ցվե. ժե. 23։ * Ցոռներ. Աստուծոյ որդիքներին։ [5] Ցվե. ժգ. 15, 21, 23։ ժե. 10։ բ Ցվե. 6։ [6] Մխի. գ. 8։ Մատ. ժա. 30։ [7] Ցվե. ժզ. 33։ ա Ցվե. գ. 9։ դ. 4։ ա Կորնթ. ժե. 57։ ա Ցվե. գ. 15։ – Ցվե. ժԹ. 34։ [10] Ցվե. ժգ. 17։ ժե. 26։ ժզ. 13։ ա Ցհ՛. գ. 16։ [11] Ցվե. ա. 1։ Ցոյե. ժԹ. 13։ [12] Ցվե. ժ. 30։ [13] Ցվե ը. 17, 18։ [14] Մատ. դ. 16, 17։ ժե. 5։ [15] Հովհ. ը. 16։ Գաղ. գ. 6։ [16] Ցվե. գ. 33։ ե. 38։ [17] ա Ցվե. բ. 25։ [18] Ցվե. ա. 4։ ա Ցվե. գ. 9։ [19] Ցվե. գ. 36։ ե. 24։

13 Այս (բանըս) գրեցի ձեզ[20] որ հաւատաք՝ թէ յաւիտենական կեանքն ունիք[21], եւ (էլ) որ հաւատաք Որդոյ Աստուծոյ անունին։

14 Այս է են համարձակութիւն՝ որ մենք ունինք նորա մօտ, թէ ինչ որ նորա կամաց պէս խնդրենք՝ կը լսէ մեզ[22]։

15 Այս թէ որ գիտէ մինք՝ թէ մեր խնդրուածքներին կը լսէ· ապա գիտենք որ կառնենք (մեր) խընդրուածքներըն՝ որ խնդրեցինք նորանից։

16 Թէ որ մինն տեսնէ՝ թէ իրան եղբայրն մեղանչել է (էնպէսի) մեղք՝ որ դէպի մահն չէ, թող խնդրէ (Աստուածանից)՝ եւ կեանք կըտայ նորան՝ (այսինքն) նորան որ մեղանչել է չէ թէ դէպի մահ[23]. կայ մեղք՝ որ մահու չափ է[24], նորա համար ես չեմ ասում՝ որ խնդրես[25]։

17 Ամէն անիրաւութիւն մեղք է· եւ կայ մեղք որ մահու չափ է[26]։

18 Գիտենք որ ամէն ով որ Աստուածանից է ծնուած՝ մեղք չի գործում[27], բայց նա՝ որ աստուածանից է ծնուած, իրան անձըն պահպանէ[28], եւ չարն չի մօտենում նորան։

19 Գիտենք որ (մենք) Աստուածանից ենք, եւ բոլոր աշխարհք չարութեան մէջ է կենում[29]։

20 Այս գիտենք որ Աստուծոյ որդին եկաւ, եւ մեզ միտք տուաւ[30], որ ճշմարիտն ճանաչենք[31]. եւ ճշմարտի միջումն ենք, (այսինքն) նորա որդի Յիսուս Քրիստոսումն. սա ճշմարիտ Աստուած է[32] եւ յաւիտենական կեանք[33]։

21 Որդեակներ՝ (ձեր) անձներըդ պահեցէք կռապաշտութենից[34]։

[20] Ցովհ. ա· 31։ [21] ա Ցովհ. ա. 1, 2։ [22] ա Ցովհ. գ· 22։ [23] Ցաք. խբ· 8։ Ցակ. ե. 14, 15։ [24] Մատթ. ժբ. 31, 32։ Մարկ. գ· 29։ Ղուկ. ժբ. 10։ Եբր. զ. 4, 6։ ժ. 26։ [25] Երեմ. է. 16։ ժդ. 11։ Ցովհ. ժե. 9։ [26] ա Ցովհ. գ. 4։ [27] ա Պետր. ա. 23, ա Ցովհ. գ. 9։ [28] Ցակ. ա. 27։ [29] Գաղ. ա. 4։ [30] Ղուկ. կդ. 45։ [31] Ցովհ. ժէ. 3։ [32] Եսայ. ի. 6 խդ. 6։ Ծդ. 5։ Ցովհ. ի. 28։ Գործ. ի. 28։ Հռոմ. թ. 5։ ա Տիմ. գ. 16։ Տիտ. բ. 13։ Եբր. ա. 8 [33] Վէր. 11–13։ [34] ա Կորնթ. ժ. 14։

# ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵՑԻ

## ՅՈՎ ՀՐՃՆԵՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

1 Առաքեալն յորդորումն մին բարեպաշտ կնոջ՝ որ իրան որդեանիներով Հաստատուն կեա-նայ Քրիստոսի՝ սերմ եւ հաւատքի մէջն. 8 Որ չըլինի թէ իրանց առաջի գաւանութեան վարձքն կորցնեն. 10 Պատուէր է տալիս որ չընդունին էն մոլորացնողներին՝ որ նո-րանք ցիտուսի ճշմարիտ վարդապետութիւնն չունին։

1 ԱՅՐԻՑԻՍ ԿՈՂՄԱՆԻ ընտրեալ կիւրիայիդ, եւ իրան որ-դեաներին՝ որ ես նորանց սիրու-մեմ ճշմարտութենով[1], եւ ոչ թէ ինձանակ ես, բայց էլ էն ամէնքն՝ որ ճշմարտութիւնն ճանաչել են[2].

2 Յէն ճշմարտութեան պատճա-ռովն՝ որ մեզանում հաստատված է, որ նա էլ ձեզ հետ լինի, եւ դուք յաւիտեան մեզ հետ լինիք,

3 Շ նորհք, ողորմութիւն, խա-ղաղութիւն Աստուած Հօրիցն, եւ Տէր Ցիսուս Քրիստոսիցն Հօր որ-դուցն՝ լինի ձեզ հետ[3], ճշմարտու-թենով եւ սիրով[4]։

4 Շ ատ ուրախ էլայ, որ քո որ-դեաներիդից գտի՝ որ ճշմարտութե-նով են գնում՝ էն պատուիրանքին պէս որ Հօրիցն առինք[5]։

5 Եւ հիմիկ աղաչումեմ քեզ կիւրիայ. իբր ոչ թէ մին նոր պատ-ուիրանք եմ գրում քեզ, այլ հենց էն որ սկըզբից ունէինք[6], որ իրար սիրենք[7]։

6 Եւ էս է սէրն, որ նորա պատ-ուիրանքներին պէս գնանք[8], եւ էս է պատուիրանքն, որ ինչպէս որ լսեցիք սկըզբից՝ էնպէս գնաք[9]։

7 Մնչու որ շատ մոլորացնողներ դուրս եկին աշխարհքի մէջ[10]. ովոր չի գաւանում Յիսուս Քրիստո-սին որ մարմնով է եկած[11], նա մո-լորացնող է՝ եւ նեռն[12]։

8 Ո գիւշ կացէք անձներիդ՝ որ չըլինի թէ կորցնէք էն որ վաստա-կեցիք. բայց որ բոլոր վարձք առ-նէք[13]։

9 Ամէն ով որ յանցանք գործէ,

[1] ա Յովհ. գ. 18։ գ Յովհ. 1։ վ Յոյր. 3։ [2] Յովհ. բ. 32։ Գործ. բ. 5, 14։ գ. 1։ ե. 7։ կոր. ա. 5։ բ Թես. բ. 12։ ա Յեփ. բ. 4։ եբր. ժ. 26։ [3] ա Յեփ. ա. 2։ [4] Ա եր. 1։ [5] գ Յովհ. 3։ [6] ա Յովհ. բ. 7, 8։ գ. 11։ [7] Յովհ. ժգ. 34։ ժե. 12։ եփես. ե. 2։ ա Պետր. գ. 8։ ա Յովհ. գ. 23։ [8] Յովհ. ժգ. 15, 21։ ժե. 10։ ա Յովհ. բ. 5։ ե. 3։ [9] ա Յովհ. բ. 24։ [10] ա Յովհ. գ. 1։ [11] ա Յովհ. գ. 2, 3։ [12] ա Յովհ. բ. 22։ գ. 3։ [13] Գործ. գ. 4։ եբր. ժ. 32, 35։

եւ չըկենայ Քրիստոսի վարդապետութեան մէջն, Աստուծոյն չի ճանաչուի[14]. ով որ կենուի վարդապետութեան մէջն, նա՝ որդոյն էլ եւ Հօրըն էլ ընդունուի:

10 Եթէ որ միտն ձեզ մօտ գայ եւ էս վարդապետութիւնս չունենայ, մի ընդունիք նորան (ձեր) տունն, եւ ողջոյն մի տաք նորան[15]:

11 Ով որ ողջոյն տայ նորան, մասնակից կըլինի նորա չար գործքերին:

12 Շատ բան ունէի ձեզ գրելոյ, բայց չըկամեցայ թղթով եւ թանաքով (գրել). պատճառն որ յոյս ունիմ՝ որ հինց ես ինքն գամ ձեզ մօտ, եւ բերանէ բերան խօսիմ[16]. որ մեր ուրախութիւնն կատարեալ լինի[17]:

13 Ողջոյն են տալիս քեզ քո ընտրեալ քրոջը որդիքն[18]. Ընդհանք (լինի) ձեզ հետ, ամէն:

[14] ա Ցովհ. բ. 23: [15] Հռոմ. ժզ. 17: ա Կորնթ. ե. 11: Ժզ. 22: Գաղ. ա. 8, 9: բ Տիմ. գ. 5: Տիտ. գ. 10: [16] գ Ցովհ. 13, 14: [17] Ցովհ. ԺԵ. 13: ա Ցովհ. ա. 4: [18] ապիւոր. ե. 13:

# ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ

## ՅՈՎ ՀՈՎՆԱՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՈՐԴ

1 Առաքեալն գովուած Գայիոսի բարեպաշտութիւնն. 5 Եւ Օտարականներին սիրելը. 7 Որ նորանով ճշմարիտ քարոզիչներին պատիւ էր անում. 9 Դիոտրեփեսի անվայել վարքն եւ նորա պարծանքը կանարգէ. 11 Որ նորա չար օրինակից զգոյշ լինելու համար պատուէր է տալիս. 12 Մին յաւուրէ վկայութիւն կըտայ Դեմետրիոսի բարի անունին համար։

1 Ընդ[1] սիրելի գայիոսիդ, որ ես սիրում ճշմարտութեամբ[1]։

2 Սիրելի՛ քո ամէն բանի յաջողութեան եւ առողջութեան համար աղօթք եմ անում, ինչպէս որ քո անձնդ էլ յաջողութեան մէջ է։

3 Շատ ուրախ էլայ երբոր եղբարքն եկին, եւ քո ճշմարտութեանդ վկայ ելան, ինչպէս որ դու ճշմարտութեամբ գնում[2]։

4 Չկայ սրանից աւելի մեծ ուրախութիւն չունիմ, որ լսում եմ իմ որդեակներս ճշմարտութեամբ են գնում[3]։

5 Սիրելի՛ հաւատարմութեամբ ես գործում էդ՝ ինչ որ անում ես եղբարներին, հէնց էդ էլ օտարականներին կանես։

6 Որ նորանք քո (արած) սիրոյդ վկայութիւն տուին եկեղեցոյ առաջին. որ եթէ նորանց Աստուծոյ արժանաւոր ճանապարհ դնես, լաւ կանես։

7 Ինչու որ (Քրիստոսի) անունին համար դուրս եկին, եւ իակի մի հեթանոսից մի բան չեն առնում[4]։

8 Ուրեմն պէտք է որ մենք ընդունինք էնպէսիներին, որ օգնական լինինք ճշմարտութեան գործոյն։

9 Մի բան գրեցի եկեղեցոյն. բայց դիոտրեփես՝ որ նորանց միջում առաջ ընկնօղն է, մեզ չի ընդունում։

10 Վրահամար թէ որ գամ՝ նորա գործքերըն կըյիշեմ՝ որ նա անում է. շատախօսութեան չար խօսքերով նեղացնում մեզ. եւ սրանով էլ բաւական չի լինում, ինքն չի ընդունում եղբարներին, եւ նորանց

[1] բ Յովհ. 1։ [2] բ Յովհ. 4։ [3] ա Կորնթ. գ. 15։ Փիլիպ. 10։ [4] ա Կորնթ. թ. 12, 15։

*էլ՝ որ ընդունումեն, արգելումէ. եւ եկեղեցոյ միջնցն էլ հանումէ:*

**11** *Սիրելի՛ մի լիներ նման չարին՝ բայց բարոյն[5]. ինչու որ ով որ բարի է գործում՝ Աստուածանից է[6]. եւ ով որ չարիք է գործում՝ նա իսկի մին ժամանակ Աստուծոյն չի՛ տեսաւ:*

**12** *Դեմետր (բարի) վկայութիւն ունի ամէնից[7], եւ եկեղեցուցն էլ, եւ հենց ճշմարտութենից էլ, եւ մենք էլ վկայումենք. եւ դու գիտումես որ մեր վկայութիւն ճշմարիտ է[8]:*

**13** *Շատ բան ունէի քեզ գրելոյ բայց չեմ կամենում թղթով եւ թանաքով գրել[9]:*

**14** *Պատճառն որ՝ յոյս ունիմ որ հենց մօտ ժամանակումն քեզ տեսնեմ, եւ բերանէ բերան քեզ հետ խօսիմ:*

**15** *Խաղաղութիւն (լինի) քեզ հետ. ողջոյն են տալիս քեզ սիրելիքն. ողջոյն տուր մեր սիրելիներին ամէն մէկին իրան անունովն:*

[5] Յով. լէ· 27: [6] Յոհ. ա· 16, 17: գ Պետր. գ· 11: [7] գ Յովհ· բ· 29: գ· 6, 9: [8] գ Յովհ· գ· 7: [9] բ Յովհ· 12:

# ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԷՈՑ

# ՅՈՒԴԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

1 Ընտրեալն յորդորումն քրիստոնեաներըն՝ որ հաստատ կենան հաւատքին դաւանութեանն մէջն, և խնդց տալով նորանց թէ՝ խաբեբայ վարդապետներ մտել են նորանց միջումն՝ որ նորանք մոլորացնեն. որ նորանց դատապարտվելոյ արժան վարդապետութեանըն եւ վարքին համար՝ սոսկալի պատիժ պատրաստված է. 20 Բայց բարեպաշտներին համար խնդց կլսայ թէ՝ նորանք Աստուծոյ աղօթք անելով՝ Սուրբ Հոգին օգնութեամբն կարօղ են հաստատ կենալ, անձներին անարատ պահել եւ ուրիշներին է փրկել են մոլորացնօղներին հնարքներիցն:

1 ՅՈՒԴԱՅ ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի ծառայ, եւ յակոբայ եղբայր[1]. ձեզ (հեթանոսներիդ)՝ որ Աստուած հօրից սիրված էք, եւ Յիսուս Քրիստոսումն պահված[2] եւ ընտրված[3]:

2 Ողորմութիւն, խաղաղութիւն եւ սէր շատանայ ձեզ վերայ[4]:

3 Սիրելիներ՝ որովհետեւ ամէն չանք արի որ գրեմ ձեզ մեր հասարակաց փրկութեան համար. հարկ էլաւ ինձ որ գրեմ ձեզ՝ եւ աղաչեմ[5], որ չանք անէք են հաւատքին վերայ՝ որ միանգամ սրբերին պահ տրվված[6]:

4 Պատճառն որ միտքանիսն ներս պրծան մտին[7], որ նորանք հինց առաջուց հաստատված էին էս դատաստանիս համար[8]. ամբարիշտներ՝ որ մեր Աստուծոյ շնորհքըն[9] անկարգութիւն դարձրին[10]. եւ էն միւն միւնակ (Աստուծոյն եւ) իշխանին, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին ուրացան[11]:

5 Արհամար իմ կամքս էս է՝ որ ձեր միտքն բերեմ ձեզ որ էս ամէն բաներըս գիտուէք. թէ Աստուած միանգամ ժողովուրդըն փրկից եւ գիպտոսիցն[12], եւ երկրորդ անգամ անհաւատներին կորցրուց[13]:

6 Եւ էն հրեշտակներըն՝ որ իրանց իշխանութիւնն չըպահեցին, այլ իրանց բնակութիւնըն թողին[14], (նա) յաւիտենական կապանքներով

[1] Գաղ. ա. 16: Գործ. ա. 13: [2] Յովհ. ժէ. 11, 12, 15: ա Պետր. ա. 5: [3] Հռոմ. ա. 7: [4] ա Պետր. ա. 2: բ Պետր. ա. 2: [5] Տիտ. ա. 4: [6] Փիլիպ. ա. 27: ա Տիմ. ա. 18: գ. 12: բ Տիմ. ա. 13: գ. 7: [7] Գաղ. բ. 4: բ Պետր. բ. 1: [8] Հռոմ. թ. 21. 22: ա Պետր. բ. 8: [9] Տիտ. բ. 11: Եբր. ժբ. 15: [10] բ Պետր. բ. 10: [11] Տիտ. ա. 16: բ Պետր. բ. 1: ա Յովհ. բ. 22: [12] ա Կորնթ. ժ. 9: [13] Թուա. ժգ. 29. 37: իգ. 64: Սաղմ. ղզ. 26: Եբր. գ. 17, 19
[14] Յովհ. բ. 44:

*խաւարի մէջ պահեց*[15] *մեծ օրի գա-*
*տաստանին համար*[16]։

7 Ինչպէս որ սոդոմն եւ գոմոր,
եւ նորանց չորս կողմի քաղաքներն,
որ հինց էն կերպով պոռնկվեցան
(իրանց) ընկերների մարմիններին
հետ, օրինակի համար առաջներս
դրված՝ յաւիտենական կրակի պա-
տաստան ընդունելով[17]։

8 Հենց էնպէս էլ սորանք իրր
քնով թմրացած՝ մարմինըն պղծու-
մեն[18], տէրութիւններին անարգու-
մեն, եւ փառքըն հայհոյումեն[19]։

9 Մ՝ինչ որ միքայէլ հրեշտա-
կապետն երբոր բանսարկու սատա-
նայի հետ հակառակվելով պատաս-
խան էր տալիս մեռելի մարմնոյն հա-
մար[20], չհամարձակվեցաւ հայհո-
յանքին դատաստան անել[21], բայց
ասաց՝ Տէրն քեզ պատժէ[22]։

10 Բայց սորանք էն բաներն որ չեն
իմանում՝ հայհոյումեն. եւ ինչ որ
էլ անխօս անասունի պէս բնութե-
նով գիտումեն՝ նորանցով կապա-
կանվեն[23]։

11 Վ՝այ էնորանց, ինչու որ կայե-
նի ճանապարհովն գնացին[24]. եւ
բաղաամի մոլորութեան պէս չար
վարձքի շահին հետեւեցին[25], եւ
կորչայ հակառակութեան պէս կո-
րան[26]։

12 Սորանք առելի են (եւ) քաղց-
րախօս խաբեբայք[27], որ իրանց ցան-
կութիւններին են հետեւում[28]. ի-
րանց սէրըն ցոյց են տալիս խաբե-
բայութիւնով, ձեզ հետ ուրախու-
թեան ընկեր են լինում, եւ առանց
վախի (իրանց) անձներըն արածացո-
նումեն. անջուր ամպեր[29] քամինե-
րով անդադար տատանված[30]. պը-
տուղ կորցնող անպտուղ ծառեր,
երկու անգամ մեռած՝ արմատից
(հանված) պոկված[31],

13 Ծովու կատաղած ալիքներ[32],
որ միշտ իրանց անձնների ամօթըն են
փրփրացնում[33]. մոլորված աստեղ-
ներ, որ յաւիտենական խաւարի
անդունդըն նորանց համար է պահ-
ված[34]։

14 Այնաքն էլ՝ որ Հօթնեքորդն է
ադամից[35], սորանց համար մարգա-
րէացաւ՝ եւ ասաց. ահա Տէրն հա-
զարաւոր սուրբ հրեշտակներով ե-
կաւ[36],

15 Որ դատաստան անէ ամենին,
եւ ամբաստիչներին յանդիմանէ ի-
րանց գործքերին համար՝ որ նորանք
ամբարշտութեամբ գործեցին. եւ
ամէն կոչիծ եւ ծանր խօսքերին հա-
մար՝ որ ամբարիշտներն եւ մեղաւոր-
ներն նորանից խօսեցին[37]։

16 Սորանք են տրտնջօղներ եւ
փսփսօղներ, որ իրանց անձնների ցան-
կութիւնների պէս են գնում. եւ
նորանց բերանները ամբարտաւան
բաներ են խօսում[38]. երեսպաշտու-
թիւն են անում շահի համար[39]։

17 Բայց դուք սիրելինե՛ր՝ յիշե-

[15] բ պետր· բ· 4։ [16] ցոյց· ի· 9։ [17] Յուդա· ժի· 24։ բ Օրին· իզ· 23։ բ պետր· բ· 6։ [18] բ պետր· բ· 10։ [19] եւ· իբ· 28։ [20] դան· ժ· 13։ ժբ· 1։ ցոյց· ժբ· 7։ [21] բ պետր· բ· 11։ [22] զաք· բ՛· 2։ [23] բ պետր· դ· 12։ [24] Յուդա· դ· 5։ ա Յովհ· դ· 12։ [25] թուա· իբ· 7, 21։ բ պետր· բ· 15։ [26] թուա· ժզ· 1։ [27] բ պետր· բ· 13։ [28] առակն· ժա· 21։ [29] Առաք· իե· 14։ բ պետր· բ· 17։ [30] եփես· դ· 14։ [31] Յուդա· ժե· 13։ [32] Եսայ· նէ· 20։ [33] փիլիպ· դ· 19։ [34] բ պետր· բ· 17։ [35] Յուդա· ե· 18։ [36] բ Օրին· լգ· 2։ դան· է· 10։ զաք· ժգ· 5։ Յուդա· իե· 31։ բ թես· ա· 7։ ցոյց· ա· 7։ [37] ա թագ· բ· 3։ Սոփ· ա· 18։ զդ· 4։ Մաղ· գ· 13։ [38] բ պետր· բ· 18։ [39] Առաք· իբ· 21։ ցուդ· բ· 1, 9։

ցՀՔ մեր ՏԷր Յիսուսի Քրիստոսի առաքելոց առաջուց ասած խօսքերն[40]։

18 Ինչու որ ասում էին ձեզ՝ թէ յետին ժամանակներում անարգող մարդիկ կը լինին, որ իրանց ամբարշտութեան ցանկութիւնով կերթան[41]։

19 Սրանք են ջոկված հեռացած[42] շնչաւորներ[43], որ հոգի չունին։

20 Բայց մենք սիրելիներ՝ մեր անձներդս սուրբ հաւատքին վերայ շինենք սուրբ հոգով[44], աղօթք անենք[45],

21 Որ անձներդս Աստուծոյ սիրոյն պահենք· մեր ՏԷր Յիսուսի Քրիստոսի ողորմութեանն մտիկ տալով՝ յաւիտենական կենացն հասնելոյ համար[46]։

22 Եւ մինքանիսին որ դատապարտվելոյ վերայ են, խրատ տուէք։

23 Եւ մինքանիսին ապրեցրէք[47] կրակից դուրս քաշելով[48]. եւ մինքանիսին վերայ խղճացէք՝ որ վախով դատապարտէք էն շորցն էլ՝ որ մարմնից կեղտոտված է[49]։

24 Եւ նորան՝ որ կարող է անապատ[50] եւ անկեղտ պահել ձեզ[51], (եւ) իրան փառաց առաջին կանգնացնել առանց վախի ցնծութիւնով·

25 Էն մին Աստուծոյն՝ եւ մեր փրկիչ Յիսուս Քրիստոսին՝ (լինի) փառք, մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն ամէն յաւիտեանները։ ցայց առաջ, եւ հիմիկ եւ ամէն յաւիտեանները։ ամէն[52]։

---

[40] բ Պետր· գ· 2։ [41] ա Տիմ· գ· 1։ բ Տիմ· գ· 1։ գ· 3։ բ Պետր· բ· 1։ գ· 3։ [42] Ղեւտ· ժը· 1։ Եզեկ· ժգ· 7։ Ովբե· դ· 14։ Թ· 10։ Եբր· ժ· 25։ [43] ա Կորնթ· բ· 14։ Յուդ· 15։ [44] Կող· բ· 7։ ա Տիմ· ա· 4։ [45] Հռովմ· ը· 26։ Եփես· գ· 18։ [46] Յեր· բ· 13։ բ Պետր· գ· 12։ [47] Հռովմ· ժա· 14։ ա Տիմ· դ· 16։ [48] Ամով· դ· 11։ ա Կորնթ· գ· 15։ Զաք· գ· 2։ [49] Զաք· դ· 4, 5։ Յայտ· գ· 4։ [50] Հռովմ· ժզ· 25։ Եփես· գ· 20։ [51] Կող· ա· 22։ [52] Հռովմ· ժզ· 27։ ա Տիմ· ա· 17։ բ· 3։

# ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

## Ց Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Ս Ո Ւ Ր Բ Ե Լ Ո Յ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅՆՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ցօհաննէս իրան ելած յայտնութիւնն գրում է եօթն եկեղեցիներին որ Ասիայի մէջ են, որ նորանց նշանց լինելը համար ցոյց ավված եօթն ոսկի ճրագակալներն: 7 Քրիստոսի գալը, 14 Եւ նորա զօրութիւնն եւ մեծ փառքը:

1 ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ յայտնութիւն՝ որ նորան Աստուած տուաւ իրան՝ որ ցոյց տայ իրան ծառաներին[1] էն որ շուտով պիտի լինի[2]. եւ իրան հրեշտակի ձեռովն ուղարկեց նշանց տուաւ իրան Յօհաննէս ծառային[3]:

2 Որ վկայեց Աստուծոյ բանին, եւ Յիսուսի Քրիստոսի վկայութեանն[4] որ տեսաւ[5] էն որ էր, եւ որ նրանից հետեւ պիտի լինէր:

3 Երանի՛ նորան՝ որ կարդայ կամ լսէ էս մարգարէութեան խօսքերըն, եւ պահէ էն՝ որ սորանում գրված է[6], ինչու որ ժամանակս մօտացել է[7]:

4 Ցօհաննէսից եօթն եկեղեցիներին՝ որ ասիայի մէջն են, շնորհք (լինի) ձեզ հետ՝ եւ խաղաղութիւն Աստուածանից՝ նորանից որ է[8], եւ որ էր[9], եւ որ գալու է, եւ եօթն հոգիներից, որ նորա աթոռի առաջին են[10]:

5 Եւ Յիսուս Քրիստոսից էն հաւատարիմ վկայից[11], որ մեռելների միջից առաջինն էղ[12], եւ երկրի թագաւորների իշխան[13], որ մեզ սիրեց[14], եւ մեր մեղաց կապանքներըն արձակեց իրան արիւնով[15]:

6 Եւ մեզ արաւ թագաւորներ, եւ քահանաներ Աստուծոյ եւ իրան հօր համար[16], որ նորան (լինի) փառք եւ զօրութիւն՝ հիմիկ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն[17]:

7 Էհա գալիս է ամպերով, եւ ամէն աչքերն կըտեսնեն նորան, եւ

---

[1] Ցուխ. գ. 32: ը. 26: Ժբ. 49: [2] Ցայտ. գ. 1: Վայր. 3: [3] Ցայտ. իբ. 16: ա Կորնթ. ա. 6: Ցայտ. զ. 9: Ժբ. 17: Վայր. 9: [5] ա Ցուխ. ա. 1: [6] Ղուկ. Ժա. 28: Ցայտ. իբ. 7: [7] Հռովմ. Ժգ. 11: Ցուխ. ե. 8: ա Պետր. գ. 7: Ցայտ. իբ. 10: [8] Եսա. գ. 14: Վայր. 8: [9] Ցուխ. ա. 1: [10] Զաք. գ. 9: դ. 10: Ցայտ. գ. 1: դ. 5: ե. 6: [11] Ցուխ. բ. 14: ա Տիմ. զ. 13: Ցայտ. գ. 14: [12] ա Կորնթ. Ժե. 20: Կող. ա. 18: [15] Եփես. ա. 20: Ցայտ. Ժե. 14: Ժթ. 16: [14] Ցուխ Ժգ. 34: Ժե. 9: Գող. բ. 20: [15] Եբր. թ. 14: ա Ցուխ. ա. 7: [16] ա Պետր. բ. 5, 9: Ցայտ. ե. 10: ի. 6: [17] ա Տիմ. զ. 16: Եբր. Ժգ 21: ա Պետր. գ. 11: ե. 11: [18] Դան. է. 13: Մատթ. իդ. 30: իզ. 64: Գործ. ա. 11:

երկրի ծայրերն, եւ նորանք էլ որ խօցեցին նորան[18]. եւ երկրի ամէն ազգերն կոծ կանեն նորա վերայ. ի՛ սուրբ՝ ամէն[19]:

8 Այնժամ այիան՝ եւ ես եմ՝ քէն, ասում Տէր Աստուածն[20], նա որ է՝ եւ որ էր՝ եւ որ գալու է՝ Ամենակարօղն[21]:

9 Ես Յովհաննէս ձեր եղբայր եւ հաւասար ընկեր[22] նեղութեան՝ եւ արքայութեան[23] եւ համբերութեան որ Քրիստոս Յիսուսումն է. եւ պատմես սաված կղզումն (ապոստոլն) էի՝ Աստուծոյ բանին համար, եւ Յիսուսի Քրիստոսի վկայութեանն համար[24]:

10 Ես հոգի եղաւ ինձ վերայ[25] կիրակի օրումն[26], եւ իմ եաեւէս մին մեծ ձայն լսեցի ինչպէս փողի, որ ասում էր ինձ[27], ես եմ այիան եւ օն[28], առաջինն եւ վերջինն[29]:

11 Ինչ որ տեսնում էս՝ գրիր մին գրքի մէջ, եւ տուր տանել էն եօթն եկեղեցիներին որ Եփեսոսի եւ Զմիւռնիայի, եւ պերգամոնի, եւ Թիւատիրայի, եւ սարդիկէի, եւ փիլադելփիայի, եւ լաւոդիկեայի մէջն են:

12 Ես դարձայ որ էն ձայնն տեսնեմ՝ որ ինձ հետ խօսում էր. եւ երբոր դարձայ՝ եօթն ոսկի ճրագակալ տեսի[30]:

13 Ես էն եօթն ճրագակալների միջումն[31] (մինն կար) որդոյ մարդոյ նման[32], որ երկար կապայ ունէր հագած մինչեւ ոտների պճղներն[33], եւ ծոցերին ճատ ոսկի գօտիկ կապած[34]:

14 Ես նորա գլուխն եւ մազերն բըրդի պէս՝ եւ ձիւնի պէս սպիտակ[35]. եւ նորա աչքերն կրակի բոցի պէս[36]:

15 Ես նորա ոտներն կարմրած (ածիւս) պղնձի պէս որ փուռն մէջն կրակով կարմրած է[37], եւ նորա ձայնն շատ ջրերի ձայնի պէս[38]:

16 Ես իրան աջ ձեռի մէջն եօթն աստղներ ունէր[39], եւ նորա բերանից երկու բերանի սուր էր դուրս գալիս[40], եւ նորա երեսն արեգական պէս ճառագայթած էր երեւում[41]:

17 Ես երբոր տեսի նորան՝ մեռածի պէս վէր ընկայ նորա ոտների առաջին[42]. եւ իրան աջ ձեռըն ինձ վերայ դրաւ՝ եւ ասաց ինձ[43]. մի վախենար, ես եմ առաջինն եւ (ես եմ՝) վերջինն[44]:

18 Ես (ես եմ՝) կեանքն[45], եւ ես (եմ՝) նա որ մեռայ, եւ (այիան) կենդանի եմ հիմիկ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն[46]. եւ ու-

---

[19] Ջոփ. ժր. 10: Ցվկ. ժԹ. 37: [20] Եսայ. վաս. 4: խգ. 6: խը. 12: Վայր. 10, 17: Ցայտ. բ. 8: իա. 6: իբ. 13: [21] Վէր. 4: Ցայտ. գ. 8: ժա. 17: ժգ. 5: [22] Փիլիպ. ա. 7: գ. 14: բ Տիմ. ա. 8: [23] Հռովմ. ը. 17: բ Տիմ. բ. 12: [24] Ցայտ. զ. 9: վէր. 2: [25] Գործ. ժ. 10: բ Կորնթ. ժր. 2 Ցայտ. գ. 2: ժէ. 3: իա. 10: [26] Ցվկ. ի. 26: Գործ. ի. 7: ա Կորնթ. ժգ. 2: [27] Ցայտ. գ. 1: ժ. 8: [28] վէր. 8 [29] Վայր. 17: [30] Վայր. 20: Եզէ. իե. 37: Ջոփ. գ. 2: [31] Ցայտ. բ. 1: [32] Եզէկ. ա. 26: Դան. է. 13: ժ. 16: ժգ. 14: [33] Դան. ժ. 5: [34] Ցվկ. ժէ. 6: [35] Դան. է. 9: [36] Դան. ժ. 6: Ցայտ. բ. 18: ժԹ. 12: [37] Եզէկ. ա. 7: Դան. ժ. 6: Ցայտ. բ. 18: [38] Եզէկ. խգ. 2: Դան. ժ. 6: Ցայտ. ժգ. 2: ժԹ. 6: [39] Վայր. 20: Ցայտ. բ. 1: գ. 1: [40] Եսայ. խԹ. 2: Եփես. զ. 17: Եբր. գ. 13: Ցայտ. բ. 12. 16: ժԹ. 15. 21: [41] Գործ. իզ. 13: Ցայտ. ժ. 1: [42] Եզէկ. ա. 28: [43] Դան. ը. 18: ժ. 10: [44] Եսայ. խա. 4: խգ. 6: խը. 12: Ցայտ. բ. 8: իբ. 13: վէր. 10: [5] Ցվկ. ժա. 25: ժգ. 5: Հռովմ. զ. 9: [4] Ցայտ. գ. 9: ե. 14:

նիմ մահի եւ գժոխքի բանալիքները[47]։

19 Կրիր ինչ որ տեսնուիս[48]՝ եւ ինչ որ է[49], եւ ինչ որ յետոյ լինելու է[50]։

20 Յն եօթն աստեղների խորհուրդը որ իմ աջ ձեռիս մէջն տեսիր[51], եւ էն եօթն ոսկի ճրագակալները՝ եօթն աստեղներն՝ եօթն եկեղեցիների հրեշտակներն են[53], եւ եօթն ճրագակալներն՝ եօթն եկեղեցիներն են[54]։

## ԳԼ · Ր

1 Եփեսացոց, 8 Զմիւռնացոց, 12 Պէրգամոյ, 18 եւ Թիւատիրի եկեղեցիներին հրեշտակներին (այսինքն) հովիւը պաշտօնեաներին էլած պատուէրները, եւ էն եկեղեցիներին էլոծ գովասանքն եւ սաստկն։

1 Եփեսացոց եկեղեցոյ հրեշտակին գրիր, Էսպէս է ասում (էն) կաղնուց՝ որ եօթն աստեղները ունի իրան աջ ձեռումն[1], եւ եօթն ոսկի ճրագակալների մէջն մեն է գալիս[2]։

2 Գիտումմ քո գործքերդ՝ եւ քո վաստակներդ եւ քո համբերութիւնդ[3]. եւ որ չարերին չես համբերում, եւ (էլ) փորձեցիր նոքանց[4] որ իրանց առաքեալ են ասում՝ եւ չեն, եւ երբոյեցի (են ասում)՝ եւ սուտ են[5]։

3 Յէ իմ անունիս համար համբերեցիր, եւ նեղութիւն քաշեցիր եւ աշխատեցիր (եւ չըձանձրացար[6])։

4 Բայց էս եմ ասում քեզ՝ որ քո առաջին սէրըն թողիր։

5 (Ուրեմն) յիշիր (թէ) որտեղից վէր ընկար՝ եւ ղղջացիր, եւ քո առաջին գործքերըն արա. ապա թէ չէ՝ ես կըգամ շուտով, եւ քո ճրագակալդ կը շարժեմ իրան տեղիցն՝ թէ որ չապաշխարես[7]։

6 Բայց էս բանըս արա՝ որ նիկոլայոսի գործքերըն ատես, էն որ ես էլ ատումմ[8]։

7 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ սուրբ Հոգին ասումէ եկեղեցիներին[9]. ով որ յաղթումէ՝ նորան կենաց փայտիցն[10] ուտել կըտամ, որ Աստուծոյ դրախտի մէջն է[11]։

8 Եւ զմիւռնացոց եկեղեցոյ հրեշտակին գրիր. Էսպէս է ասում նա՝ որ ոչ սկիզբըն ունի եւ ոչ վերջ, որ էլաւ մեռաւ՝ եւ կենդանացաւ[12]։

9 Տեսի քո գործքերդ՝ եւ նեղութիւնդ եւ աղքատութիւնդ[13], բայց քո աղքատութիւնդ մեծութիւն կըլինի[14]. եւ (նորանց) հայհոյանքըն որ իրանց համար ասումեն թէ հրեայ են՝ եւ չեն[15], բայց սատանայի ժողովք (են)[16]։

10 Մի վախենար էն բաներիցն որ պիտի էարչարվիս. ահա սատանան պատրաստված է որ ձեզանից բանտի մէջ քցէ, որ փորձվիք, եւ տասն օր

[47] Ցաւ. կը · 20։ [48] Ցաւ. ր · 1։ [49] Ցաւ. ր · 1։ [50] Ցաւ. գ · 1։ [51] Ա Էր · 16։ [52] Ա Էր · 12։ [53] Մ Ղ · ր · 7։ Ցաւ. ր · 1։ [54] Զա. գ · 2։ Մ Գ. ե · 15։ Փիլիպ. ր · 15։ [1] Ցաւ. ա · 16, 20։ [2] Ցաւ. ա · 13։ [3] Ս Ղ. ա · 6։ Ա Էր · 9, 13, 19։ Ցաւ. ե · 8, 13։ [4] Ա Ցովհ. գ · 1։ [5] Բ Կորնթ. ժա · 13։ Բ Պետր. բ · 1։ [6] Գ Ղ. զ · 9։ Եբր. ժբ · 3, 5։ [7] Մ Գ. բա · 41, 43։ [8] Ա Էր · 15։ [9] Մ Գ. ժա · 15։ ժգ · 9, 43։ Ա Էր · 11, 17, 29։ Ցաւ · գ · 6, 13, 22։ ժգ · 9։ [10] Ծննդ · ր · 9։ [11] Ցաւ. իր · 2, 14։ [12] Ցաւ · ա · 8, 17, 18։ [13] Ա Էր · 2։ [14] Գ Թագ. ժբ · 21։ Ա Տէր. գ · 18։ Ցակ. ե · 5։ [15] Հռով. ր · 17, 28, 29։ Թ · 6։ [16] Ցաւ. գ · 9։

ներդրեալ կունենաք[17]. Հաւատա-
րիմ կաց մինչեւ մահ[18], եւ կենաց
պսակը կը տամ քեզ[19]:

11 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝
թող լսէ ինչ որ սուրբ Հոգին ասու-
մէ եկեղեցիներուն[20]. ով որ յաղ-
թումէ, երկրորդ մահէն ալ
պիտի չվնասի[21]:

12 Նաեւ պէրգամոսի եկեղեցոյ հր-
եշտակին գրէ. Հսկէս ի ասում
նա՝ որ երկու բերանի սուրը սրած
ունի[22]:

13 Գիտեմ քու գործքերդ[23], եւ որ
դուն հանգչելու կը բնակուիս՝ որտեղ
որ սատանայի աթոռն է[24], եւ իմ ա-
նունըս ունիս, եւ իմ հաւատքս չու-
րացար՝ էն օրումն, որ իմ անմիտաս
վկան Հաւատարիմ Էլաւ. (ինչու որ
ամէն հաւատացեալ՝ իմ հաւատա-
րիմ վկաս է,) որ ձեր միջումն սատան
կը բնակուիս:

14 Բայց քեզ դէմ քիչ բան ու-
նիմ. պատճառն որ քեզ մօտ կայ
բաղաամի վարդապետութիւնն՝ որ
բաղակին սովորցուց, որ դայթակ-
ղութիւն դնէ իսրայէլի որդոց առա-
ջին[25], որ նորանք (կռոտի) մատաղ
ուտեն[26] եւ պոռնկութիւն անեն[27]:

15 Նոյպէս էլ դուն նիկողայեցոց
վարդապետութիւնըն ունիս՝ որ ես
ատումեմ[28]:

16 Ապրումն ապաշխարիր, ապա
թէ չէ՝ կը գամ շուտով, եւ կը կռուիմ
նորանց հետ իմ բերանիս սրովն[29]:

17 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝
թող լսէ ինչ որ Հոգին ասումէ ե-
կեղեցիներուն[30]. ով որ յաղթումէ՝
էն պահված մանանայիցն ուտել կը-
տամ նորան, եւ սպիտակաքար գիր
կը տամ նորան. եւ էն գրի վերայ նոր
անուն գրված, որ իսկի մինչ չի գի-
տում[31], բայց նա՝ որ առնումէ[31]:

18 Նաեւ Թիւատիրի եկեղեցոյ հր-
եշտակին գրէ. Հսկէս ի ասում
Աստուծոյ որդին, որ նորա աչքերն
կրակի բոցի նման են, եւ նորա ոտ-
ներն մաքուր գտված պղնձի պէս[32]:

19 Գիտեմ քու գործքերդ[33], եւ սէ-
րդդ, եւ հաւատքդ, եւ քու ծա-
ռայութիւնդդ, եւ քու համբերու-
թիւնդդ. որ քու վերջին աշխատանքդ
շատ է քանիե առաջինն:

20 Բայց քեզ շատ եմ ասում.
էն որ յեզաբէլ կնկանն թոյլ տուիր՝
որ մարգարէ էր ասում իրան, եւ
իմ ծառաներիս մոլորութիւն է սո-
վորցնում[34], որ պոռնկութիւն անեն
եւ (կռոտի) մատաղ ուտեն[35]:

21 Եւ ժամանակ տուի նորանց՝ որ
ապաշխարեն իրանց պոռնկութեան
համար, եւ չապաշխարեցին[36]:

22 Իմ հա ես նորան փուռն մէջ
կը քցեմ, եւ նորա գործընկերներըն
էլ որ նա նորանց հետ շնացաւ՝ մեծ
մեծ նեղութիւնների մէջ. թէ որ
չապաշխարեն իրանց գործքերիցն:

23 Եւ նորանց որդիքներըն մա-

[17] Մատթ. ժ. 22: [18] Մատթ. խդ. 13: [19] Յայտ. ա. 12: Յայտ. գ. 11: [20] վէր. 7: Յայտ. ժգ. 9: [21] Յայտ. ի. 14: իա. 8: [22] Յայտ. ա. 16: [23] վէր. 2: [24] վէր. 9: [25] Թուոց. խդ. 14: իե. 1: լա. 16: բ Պետր. բ. 15: Յուդ. 11: [26] վ. 20: Գործ. ժե. 29: ա Կորնթ. ը. 9, 10: ժ. 19, 20: [27] ա Կորնթ. զ. 13: [28] վէր. 6: [29] Եսայ. ժա. 4: բ Թես. բ. 8: Յայտ. ա. 16: ԺԹ. 15, 21: [30] վէր. 7, 11: [31] Յայտ. գ. 12: ԺԹ. 12: [32] Յայտ. ա. 14, 15: [33] վէր. 2. 9. 13: [34] գ Թագ. ժգ. 31: իա. 25: դ Թագ. Թ. 7: [35] Ելք. լդ. 15: Գործ. ժե. 20, 29: ա Կորնթ. ժ. 19, 20: վէր. 14: [36] Հռոմ. բ. 4 Յայտ. Թ. 20:

Հով կըսպանեմ . եւ ամէն եկեղեցիներն կըճանաչեն՝ թէ ես եմ որ քննումեմ երիկամունքներըն եւ սրտերըն[37], եւ տալիս եմ ձեզ ամէն մէկիդ իւրեան գործքերի չափովը[38] :

24 Ասյց ձեզ ասումեմ՝ որ թիւաւորումն էք, եւ ես վարդապետութիւնըս չունիք . որ սատանայի խորութիւններըն էլ չըճանաչեցիք, ինչպէս որ նորանք խօսումեն . ձեզ վերայ ծանրութիւն չեմ ըդիլ[39] :

25 Ասյց էն որ ունիք՝ պահեցէք մինչեւ ես գամ[40] :

26 Եւ ով որ յաղթումէ՝ եւ իմ գործքերըս պահումէ մինչեւ վերջն[41], նորան իշխանութիւն կըտամ ազգերի վերայ[42] :

27 Եւ երկաթէ՝ գաւազանով կըհովուէ նորանց, եւ բրուտի (հողէյ չէնած) ամանի պէս կըփշրէ նորանց[43] :

28 Ինչպէս որ ես էլ իմ Հօրիցս ընդունեցի, եւ կըտամ նորանց առաւօտու աստղըն[44] :

29 Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասումէ եկեղեցիներին[45] :

## Գլ · Գ

2 Քրիստոս սաստումէ Սարդիացոց Եկեղեցոյ հրեշտակին . 3 Զգուշանալ նորան որ ապշեցնէ եւ պատիժ խոստանումէ նորա . 8 Գովումէ Փիլադելփեայի եկեղեցոյ հրեշտակին՝ 10 Իրան արձանն լինելոյն եւ համբերութեանն համար . 15 Նախատինք է տալիս Լաւոդիկեայ եկեղեցոյ հրեշտակին՝ ոչ ցուրտ եւ ոչ տաք լինելոյն համար, 19 Եւ պատուէր է տալիս որ աւելի նախանձով եւ ջերմեռանդ լինի : 20 Քրիստոս դռան առաջին կանգնած թակումէ :

1 Եւ սարդիացոց եկեղեցոյ հրեշտակին գրիր . Էսպէս է ասում նա՝ որ Աստուծոյ եօթըն Հոգիքըն, եւ (էն) եօթըն աստղներըն ունի[1] . տեսի քո գործքերըդ[2], ինչու որ կենդանոյ անուն ունիս՝ եւ մեռած ես[3] :

2 Արթնուն կաց, եւ սրանից եւ տիւ հաստատվիր, որ (շուտով) պիտի մեռնիս . պատճառն որ քո գործքերըդ կատարեալ չըգտի Աստուծոյ առաջին :

3 Ուրեմն միտդ բեր թէ ինչպէս ընդունիր, եւ պահիր[4] եւ ապաշխարիր[5] . ապա թէ որ չըղարթնանաս՝ կըգամ գողի պէս . եւ ոչ ով չիմանալ իմ գալըս քեզ մօտ[6] :

4 (Ասյց) ունիս մինչեւ անուններ էլ սարդիացոց մէջն[7], որ իրանց շորերըն չըկեղտոտացրին[8], եւ սպիտակ (շորերով) են մանկալիս՝ որ նորան արժանի էլան[9] :

[37] աԹես. ժգ. 7: ա Պետ. իը. 9: իԹ. 17: բ Պետ. գ. 30: Սաղմ. է. 9: Երեմ. ժա. 20: ժէ. 10: ի. 12: Ճառնի. բ. 24, 25: Գործ. ա. 24: Հռոմ. ը. 27: [38] Սաղմ. կը. 12: Պետ. ժգ. 27: Հռոմ. բ. 6: ժգ. 12: բ Կորնթ. է. 10: Գալ. գ. 5: Ճայտ. ի. 12: [39] Գործ. ժէ. 28: [40] Ճայտ. գ. 11: [41] Ճառնի. գ. 29: ա Ճառնի. գ. 23: [42] Պետ. ժԹ. 28: Ղուկ. իը. 29, 30: ա Կորնթ. գ. 3: Ճայտ. գ. 21: ի. 4: [43] Սաղմ. բ. 8, 9: իԹ. 14: Դան. է. 22: Ճայտ. ժբ. 5: ժԹ. 15: [44] բ Պետր. ա. 19: Ճայտ. իը. 16: [45] Պէտ. 7: [1] Ճայտ. ա. 4, 16: գ. 5: է, 6: [2] Ճայտ. բ. 2: [3] Նէեմ. բ. 1, 5: ա Ցհ. է. 6: [4] ա Տհ. գ. 20: բ Տհ. ա. 13: Պետ. 11: [5] Պետ. 19: [6] Պետ. իգ. 42, 43: իե. 13: Պետ. ժգ. 33: Ղուկ. ժբ. 39, 40: ա Թես. է. 2, 6: բ Պետր. գ. 10: Ճայտ. ժգ. 15. [7] Գործ. ա. 15: [8] Ճայտ. 23: [9] Ճայտ. գ. 4: գ. 11: է. 9, 13:

5 Ով որ յաղթուիմ՝ էսպէս սպիտակ կըհագնի[10]. եւ նորա անունն[11] կենաց գրքէն չի ջնջվիլ[12]. եւ կըդաւանեմ նորա անունըն իմ Հօրս առաջին՝ եւ նորա հրեշտակներուն առաջին[13]:

6 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներուն[14]:

7 Եւ փիլադելփիայի եկեղեցոյ հրեշտակին գրիր. Էսպէս է ասում սուրբն[15], ճշմարիտն[16], որ դաւիթի բանալիքներըն ունի[17]. բանում՝ եւ ոչ ով չըկայ որ փակէ[18], եւ փակում՝ եւ ոչ ով չըկայ որ բաց անէ[19]:

8 Գիտէ քո գործքերըդ[20]. ահա քո առաջիդ (մին) բացված դուռըն գրի, որ նորան ոչ ով կարող չէ փակել[21], ինչու որ քիչ զօրութիւն ունիս, եւ իմ խօսքերըս պահեցիր, եւ իմ անունըս չուրացար:

9 Ահա ես սատանայի ժողովքէն քեզ եմ տալիս, որ իրանց համար ասումեն թէ հրեայ են՝ եւ չեն, բայց սուտ են ասում[22]. ահա կանեմ նորանց՝ որ գան քո ոտներիդ առաջին երկրպագութիւն անեն, եւ ճանաչեն թէ ես սիրեցի քեզ[23]:

10 Որովհետեւ իմ համբերութեան խօսքըն պահեցիր, ես էլ քեզ կըպահեմ փորձանքի ժամումն (առ Հալոօն)[24]. որ պիտի գայ բոլոր աշխարհքին վերայ որ փորձէ ամէնքն[25]՝ որ երկրի երեսի վերայ բնակված են[26]:

11 Ահա կըգամ շուտով[27], (պինդ) բռնիր էն որ ունիս[28], որ չըլինի թէ մինն առնէ քո պսակըդ[29]:

12 Ով որ յաղթուիմ՝ սիւն կանեմ նորան իմ Աստուծոյ տաճարումն, եւ էլ դուրս չի գնալ[30]. եւ նորա վերայ կըգրեմ իմ Աստուծոյ անունը, եւ իմ Աստուծոյ քաղաքի անունըն[31], (այսինքն) նոր Երուսաղէմին՝ որ երկնքէն պիտի վերջպայ իմ Աստուածանիկս[32], եւ իմ նոր անունըս[33]:

13 Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներուն[34]:

14 Եւ լաւոդիկեայ եկեղեցոյ հրեշտակին գրիր. Էսպէս է ասում ամէնն[35]՝ էն հաւատարիմ եւ ճշմարիտ վկան[36], Աստուծոյ ստեղծուածներուն սկիզբն[37]:

15 Գիտեմ քո գործքերըդ[38]՝ որ ոչ ցուրտ ես՝ եւ ոչ տաք. պէտք էր որ դու ցուրտ լինէիր՝ եւ կամ տաք:

16 Բայց դու գոլ ես՝ եւ ոչ տաք եւ ոչ ցուրտ, որ պիտի փսխըվիս իմ բերանիցս:

17 Պատճառն որ ասումես թէ հարուստ եմ՝ եւ մեծացայ, եւ իսկի մին բանով կարօտ չեմ[39]. եւ չես

[10] Ցայտ. ժթ. 8: [11] Եփ. լբ. 32: Սաղմ. կթ. 28: [12] Փիլիպ. դ. 3: Ցայտ. ժգ. 8: ժէ. 8: ի. 12: ԻԱ. 27: [13] Մատթ. ժ. 32: Գործ. ժբ. 8: [14] Ցայտ. բ. 7: [15] Գործ. գ. 14: [16] ա Ցովհ. ե. 20: Ա՛յբ. 14. Ցայտ. ա. 5: զ, 10: ժթ. 11: [17] Եսայ. իզ. 22: Գործ. ա. 32: Ցայտ. ա. 18: [18] Մատթ. ժզ. 19: [19] Ցոբ. ժբ. 14: [20] Ա՛յբ. 1: [21] ա Կորնթ. ժզ. 9: բ Կորնթ. բ. 12: [22] Ցայտ. բ. 9: [23] Եսայ. խթ. 23: կ. 14: [24] բ Պետր. բ. 9: [25] Գործ. բ. 1: [26] Եսայ. իդ. 17: [27] Փիլիպ. դ. 5: Ցայտ. ա. 3: իզ. 7, 12, 20: [28] Ցայտ. բ. 25. [29] Ցայտ. բ. 10: [30] գ Թագ. է. 21: Գործ. բ. 9: [31] Ցայտ. բ. 17: ժգ. 1: իզ. 4: [32] Գործ. դ. 26: Եբր. ժբ. 22: Ցայտ. իա. 2, 10: [33] Ցայտ. իզ. 4: [34] Ցայտ. բ. 7: [35] Եսայ. կե. 16: [36] Ցայտ. ա. 5: ժթ. 11: Ղեւ. 6: Ա՛յբ. 7: [37] Կող. ա. 15: [38] Ա՛յբ. 1: [39] Ոչնի. ժբ. 8: ա Կորնթ. դ. 8:

գիտում՝ թէ դու ոչըմէնի՛ ես՝ եւ ծոյլ, աղքա՛տ՝ մերկ՝ եւ կոյր,

18 Ուրեմն ես խրատ տամ՝ քեզ, գնի՛ր՝ ա՛ռ ինձանից կրակումն փորձ֊ված ոսկի՝ որ հարըստանա՛ս[40], եւ սպիտակ շորե՛ր՝ որ հագնիս, որ քո մերկութեան ամօթին չերեւի[41]. եւ դեղ դի՛ր քո աչքերիդ՝ որ տեսնես:

19 Ես ո՛ւմ՝ որ սիրում եմ՝ յանդի֊մանում եմ եւ խրատում եմ[42]. ուրեմն ջա՛նք արա, եւ ապաշխարի՛ր:

20 Ո՛չա՛ ես դուռն առաջին ֆանգ֊նած եմ եւ թակում եմ[43]. թէ որ մինչ իմ ձայնը՝ եւ դուռը բա֊նայ[44], կըմտնեմ նորա մօտն՝ եւ ընթրիս կանեմ նորա հետ, եւ նա ինձ հետ՛[45]:

21 Ով որ յաղթում՝ կըտամ նո֊րան՝ որ ինձ հետ նստի աթոռիս վե֊րայ[46], ինչպէս որ ես յաղթեցի՝ եւ նստեցի իմ Հօրս աթոռն:

22 Ով որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասում է եկեղեցինե֊րին[47]:

## ԿԱ · Գ

2 Յօհաննէս Աստուծոյ աթոռն տեսնում է երկնքում: 4 Քսան եւ չորս երէցներ: 6 Չորս կենդանիք՝ որ նորանց առաջուց եւ յետուց լիքն էին աչքերով: 10 Երեցներըն՝ իրանց պըսակներըն աթոռի վերայ նստողի առաջին վեր դնելով՝ երկրպագութիւն կը֊տան նորան:

1 Յե էս ամէն բաներից ետեւ՝ տեսի, եւ ահա (մին) դուռն էր բացված երկնքում, եւ էն առաջին ձայնն որ փողի պէս լսեցի՝ խօսում էր ինձ հետ եւ ասում[1]. վե՛ր էլի՛ էս տեղ[2]՝ եւ ցոյց կըտամ քեզ ինչ որ լինելու է յետին ժամանակներում[3]:

2 Յե հենց էն ժամուն (ոգեհա֊ռո՛ւն) Հոգի եկաւ ինձ վերայ[4]. եւ տեսի որ մին աթոռ կար երկնքում[5]:

3 Յե նա՝ որ աթոռին վերայ նստած էր, յասպիս եւ սարդիոն ա֊կութի նման տեսիլք ունէր:

4 Յե էն աթոռի չորս կողմին կանանչ կարմիր գօտիկ կար, որ զըմրուխտի նման տեսիլք ունէր, եւ աթոռի չորս կողմին քսան եւ չորս աթոռներ (կային), եւ էն աթոռ֊ներին վերայ քսան եւ չորս էրէցներ նստած էին[6] սպիտակ շորեր հա֊գած[7], եւ իրանց գլխներում ոսկի պսակներ[8]:

5 Յե էն աթոռիցն փայլատակ֊մունք եւ ձայներ եւ որոտմունք էին դուրս գալիս[9]. եւ եօթն լամպարներ կրակով բորբոքված աթոռի առա֊ջին[10], որ նորանք Աստուծոյ եօթն Հոգիներն են[11]:

6 Յե աթոռի առաջին ապակոյ (շո֊շայե) պէս ծով կար սպիտակ

[40] Եսայ. ծէ. 1: Մատթ. ժգ. 44: իէ. 9: [41] բ Կորնթ. է. 3: Ցայտ. է. 13: ժգ. 15: ժծ. 8: [42] Ցած. է. 17: Ամոս. գ. 11, 12: Նբէ. ժբ. 5, 6: Ճոխ. ա. 12: [43] Երգ. է. 2. [44] Դատ. ժբ. 37: [45] Ճանճ. ժգ. 23: [46] Մատթ. ժծ. 28: Դատ. իբ. 30: ա Կորնթ. գ. 2: բ Տիմ. բ. 12. Ցայտ. բ. 26, 27: [47] Ցայտ. բ. 7: [1] Ցայտ. ա. 10: [2] Ցայտ. ժա. 12: [3] Ցայտ. ա. 19: իբ. 6: [4] Ցայտ. ա. 10: ժէ. 3: իա. 10: [5] Եսայ. ղ. 1: Երեմ. ժէ. 13: Եզէկ. ա 26: ժ. 1: Դան. է. 9: [6] Ցայտ. ժա. 16: [7] Ցայտ. գ. 4, 5: ղ. 11: է. 9, 13: 14: ժծ. 14: [8] Գաղ. 10: [9] Ցայտ. ը. 5: ժգ. 18: [10] Նէ. լէ. 23: բ Մնաց. գ. 20, Եզէկ. ա. 13: Զաք. դ. 2: [11] Ցայտ. ա. 4: գ. 1: է. 6:

սառուցի նման[12], եւ աթոռի մէջն չորս կենդանիք (կային)[13] որ առաջուց եւ յետուց լիքն էին աչքերով[14]։

7 Եւ առաջին կենդանին առիւծի նման էր, եւ երկրորդ կենդանին եղջ նման, եւ երրորդ կենդանին մարդոյ երես (ունէր), եւ չորրորդ կենդանին թռած արծուի նման[15]։

8 Եւ էն չորս կենդանիքն ամէն մէկն վեց թեւ ունէին, իրանց չորս կողմանից[16] եւ ներսեւանց լիքն էին աչքերով[17]. եւ հանգիստ չէին առնում՝ ոչ ցերեկ եւ ոչ գիշեր՝ ասելով. սուրբ, սուրբ, սուրբ[18], Տէր Յաստուած ամենակարող[19], եւ որ էիր, եւ ես, եւ որ գալու ես[20]։

9 Եւ երբոր էն կենդանիքն փառք, եւ պատիւ, եւ գոհութիւն էին տալիս աթոռի վերայ նստողին՝ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից[21],

10 Վիսան եւ չորս երէցներն վեր էին ընկնում աթոռի վերայ նստողի առաջին[22], եւ երկրպագութիւն էին տալիս նորան՝ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից[23]. եւ իրանց պսակներըն վեր էին դնում աթոռի առաջին եւ ասում[24].

11 Արժանի ես մեր սուրբ Տէր Յաստուած՝ որ փառք, եւ պատիւ, եւ զօրութիւն առնես[25]. պատճառն որ դու ստեղծեցիր ամէն բան, եւ քո կամենալովդ ստեղծվեցան՝ եւ կեցուածն հաստատ[26]։

## ԳԼ· Ե

1 Եօթեն կնքով (մեօհրով) կնքված գիրքն։ 9 Մէնակից մարթված Գառն արժանի էր էն գիրքըն բանալ։ 12 Նորա համար երէցներըն փառք եւ օրհնութիւն կըտան նորա։ 19 Եւ կըդաւանեն որ նա վրիժեց իրանք՝ իրան արիւնովն։

1 Եւ աթոռի վերայ նստողին աջ ձեռումն մին գիրք տեսի, որ ներսեւանց եւ դրսեւանց գրված էր[1], եւ եօթեն կնքով (Ե֊օհրով) կնքված[2]։

2 Եւ մին զօրաւոր հրեշտակ տեսի՝ որ մեծ ձայնով կանչումէր եւ քարոզումէր. ո՞վ է արժանի բանալ էս գիրքըս՝ եւ սորա կնիքներըն (Ե֊օհրնեըն) արձակել։

3 Եւ խոկի միջն՝ ոչ երկնքումն եւ ոչ երկրի վերայ եւ ոչ երկրի ներքեւումն՝ կարող չէր էն գիրքըն բանալ, եւ ոչ էլ տեսնել նորան[3]։

4 Եւ ես սաստիկ լաց էի լինում, որ ոչ ով չէր գտավաւ արժանի՝ որ էն գիրքըն բանայ, եւ նորա մէջ նայի։

5 Եւ էն երէցներիցն միսն ասաց ինձ. լաց մի լինիր, ահա յաղթեց էն առիւծն որ Յուդայի ցեղիցն է[4] դաւթի արմատիցն (Ֆ֊օֆֆըն), որ գիրքըն բաց անէ[5] եւ նորա եօթըն կնիքներըն (Ե֊օհրնեըն) արձակէ[6]։

6 Եւ տեսի էն աթոռի միջումն

[1] Եզէկ· լբ· 8։ Ցայտ· ժե· 2։ [2] Եզէկ· ա· 5։ [3] Վայր· 8։ [4] Եզէկ· ա· 10։ ժ· 14։ [5] Եսայ· ղ· 2։ [6] Վէր· 6։ [7] Եսայ· ղ· 3։ [8] Ցայտ· ա· 8։ [9] Ցայտ· ա· 4։ [10] Ցայտ· ա· 18։ ե· 14։ ժե· 7։ [11] Ցայտ· ե· 8, 14։ [12] Վէր· 9։ [13] Վէր· 4։ [14] Ցայտ· ե· 12։ [15] Ծննդ· ա· 1։ Գործ· ժե· 24։ Եփես· գ· 9։ կո֊ղ· ա· 16։ Ցայտ· ժ· 6։ [16] Եզէկ· բ· 9, 10։ [17] Եսայ· խթ· 11։ Դան· ժբ· 4։ [18] Վայր· 13։ [19] Ծննդ· խթ· 9, 10։ Եբր· է· 14։ [20] Եսայ· ժա· 1, 10։ Հռոմ· ժե· 12։ Ցայտ· իբ· 16։ [21] Վէր· 1։ Ցայտ· ղ· 1։

եւ չորս կենդանիներն միջումն՝ եւ երիցներն միջումն մին գառն էր կանգնած մորթածի նման[7], որ եօթն եղջիւր ունէր՝ եւ եօթն աչք[8], որ Հոգիքն են Աստուծոյ եօթն զոր ուղարկած են ամէն երկիրներըն[9]։

7 Եւ նա եկաւ՝ եւ էն աթոռն վերայ նստողն աջ ձեռնէն (էն գիրքը) առաւ[10]։

8 Եւ երբոր գիրքն առաւ չորս կենդանիներն եւ քսան եւ չորս Երիցներն վեր էին ընկնում՝ գառի առաջին[11]. եւ նորացն ամէն մէն քնար (առնելու) ունէին՝ եւ ոսկի բուրվառ լեռնով լիքն[12], որ սրբոց աղօթքն էՀ[13]։

9 Եւ նոր երգով օրհնում էին եւ ասում[14]. (դու) արժանի ես էդ գիրքըդ առնել՝ եւ դորա կնիքներն բանալ[15], ինչու որ մորթվեցար[16], եւ քո արիւնովդ մեզ գնեցիր Աստուծոյ համար[17] ամէն ազգերից՝ եւ լեզուներից՝ եւ հեթանոսների ժողովրդից[18]։

10 Եւ մեր Աստուծոյ համար թագաւորներ եւ քահանաներ արիր, որ երկրի վերայ՝ թագաւորելիս անենք[19]։

11 Եւ տեսի՝ եւ շատ հրեշտակների ձայն լսեցի՝ որ աթոռի եւ չորս կենդանիքների եւ երիցների չորս կողմումն էին կանգնած[20]. եւ նորանց համարն էր բիւրք բիւրոց՝ եւ հազարք հազարաց[21]։

12 Որ մեծ ձայնով ասում էին. արժանի է գառնըգ՝ որ մորթված է՝ որ մեծութիւն եւ իմաստութիւն եւ զօրութիւն եւ պատիւ եւ փառք եւ օրհնութիւն առնէ[22]։

13 Եւ ամէն ստեղծվածներն որ երկնքումն են եւ երկրի վերայ եւ ծովումն, եւ նորանք որ նորա մէջն են, (էն ամենին) լսեցի որ ասում էին[23]. (նա) որ աթոռին վերայ նըստած է՝ եւ գառն էլ[24], օրհնված բարձրացած եւ փառաւորված (լինի) յաւիտեանս յաւիտենից[25]։

14 Եւ չորս կենդանիքներն ասում էին[26], ամէն. եւ Երիցներն վեր էին ընկնում՝ նորա՝ առաջին եւ երկրպագութիւն էին անում[27]։

## ԳԼ՝ Ջ

1 Կնիքներին կարգով բացվելն, եւ նորանց յետոյ գալող տեսիլքներըն։

1 Եւ տեսի որ գառն էն կնիքներիցն մինըն բաց արաւ[1], եւ էն չորս կենդանիքներն մէնիցն լսեցի որոտմունքի ձայնի պէս՝ որ ասում էր էկ

[7] Եսայ. ծգ. 7։ Ցաւ. ա. 29, 36։ ա Պետր. ա. 19։ Ցայտ. ժգ. 8։ Վայր. 9, 12։ [8] Զաք. գ. 9։ գ. 10։ [9] Ցայտ. գ. 5։ [10] Ցայտ. գ. 2։ [11] Ցայտ. գ. 8, 10։ [12] Ցայտ. ժգ. 2։ ժե. 2։ [13] Ողմ. ճխա. 2։ Ցայտ. ը. 3, 4։ [14] Սաղմ. խ. 3։ Ցայտ. ժգ. 3։ [15] Ցայտ. գ. 11։ [16] Վեր. 6։ [17] Գործ. ի. 28։ Հռովմ. գ. 24. 25։ ա Կորնթ. ղ. 20։ է. 23։ Եփես. ա. 7։ Կող. ա. 14։ Եբր. թ. 12։ ա Պետր. ա. 18, 19։ բ Պետր. բ. 1։ ա Յովհ. ա. 7։ [18] Դան. գ. 1։ ղ. 25։ Ցայտ. է. 9։ ժա. 9։ ժգ. 6։ [19] Նէ. ԺԹ. 6։ Ցայտ. ա. 6։ ի. 6։ իբ. 5։ [20] Ցայտ. գ. 4, 6։ [21] Սաղմ. կը. 17։ Դան. է. 10։ Եբր. ժբ. 22։ [22] Ցայտ. գ. 11։ [23] Փիլիպ. բ. 10։ վեր. 3։ [24] Ցայտ. ղ. 16։ է. 10։ [25] ա Մրենաց. ԽԹ. 11։ Հռովմ. ԺԹ. 5։ ժգ. 27։ ա Տիմ. գ. 16։ ա Պետր. գ. 11։ է. 11։ Ցայտ. ա. 6։ [26] Ցայտ. ժԹ. 4։ [27] Ցայտ. գ. 9, 10։ [1] Ցայտ. է. 5, 6, 7։

կըգամ[2] (*)։

2 Եւ տեսի՝ եւ ահա մին սպիտակ ձի[3]. եւ նա՝ որ նորա վերայ հեծած էր՝ մին աղեղ ունէր[4]. եւ մին պսակ տրվաւ նորան[5], եւ եկաւ յաղթող եւ յաղթել։

3 Եւ երբոր երկրորդ կնիքըն բաց արաւ, երկրորդ կենդանին լսեցի՝ որ ասումէր՝ Եկ կըգամ[6] (*)։

4 Եւ ուրիշ ձի դուրս եկաւ կարմիր[7]. եւ նա՝ որ նորա վերայ հեծած էր՝ նորան տրվաւ որ խաղաղութիւնըն վեր առնէ երկրիցն, որ իրար մորթեն. եւ մին մեծ սուր տրվաւ նորան։

5 Եւ երբոր երրորդ կնիքըն բաց արաւ, երրորդ կենդանին լսեցի՝ որ ասումէր՝ Եկ կըգամ[8] (*)։ Եւ տեսի՝ եւ ահա մին սեւ ձի[9], եւ նա՝ որ նորա վերայ նստած էր՝ կշիռք ունէր իրան ձեռուն։

6 Եւ չորս կենդանիներուն միջեցն ձայն լսեցի՝ (Եկ) մին կապիճի չափ ցորեն մին դենարի, եւ երեք կապիճի չափ գարին մին դենարի, եւ ձէթին եւ գինուն վնաս չըտաս[10]։

7 Եւ երբոր չորրորդ կնիքըն բաց արաւ, չորրորդ կենդանիին ձայն լսեցի՝ որ ասումէր՝ Եկ կըգամ[11] (*)։

8 Եւ տեսի՝ եւ ահա մին մոխրագոյն ձի[12], եւ նա՝ որ նորա վերայ նստած էր՝ նորա անունն մահ էր, եւ դժոխք էր գնում նորա ետեւէն. եւ իշխանութիւն տրվաւ նորան աշխարհքի չորրորդ բաժնի վերայ՝ որ սրով եւ սովով եւ մահով[13] եւ երկրի գազաններովն սատակէ[14]։

9 Եւ երբոր հինգերորդ կնիքըն բաց արաւ, տեսի սեղանի տակըն[15] էն ամէն (մարդկանց) հոգիքըն[16] որ մորթված էին Աստուծոյ բանին համար[17] եւ նորա վկայութեան համար որ ունէին[18]։

10 Եւ մեծ ձայնով աղաղակին ասելով՝ Տէր եւ ճշմարիտ[19] մինչեւ ե՞րբ[20] դատաստան չես անում[21], եւ մեր արիւնի օրը չես խնդրում երկրի վերայ բնակողներուն։

11 Եւ սպիտակ վերարկուներ տրվաւ նորանց[22], եւ ասվեցաւ նորանց՝ որ մին քիչ ժամանակ հանգիստ առնեն[23], մինչեւ որ նորանց ծառայ ընկերներուն եւ նորանց եղբարներն էլ կատարվին՝ որ նորանց պէս պիտի սպանվին։

12 Եւ տեսի երբոր վեցերորդ կնիքըն բաց արաւ՝ (երկրի) մեծ շարժմունք էլաւ[24], եւ արեգակն սեւացաւ այծի մազէ կարկատանի պէս, եւ լուսինն իսպառ արիւնի պէս էլաւ[25]։

13 Եւ երկինքի աստեղներն թափվեցան երկրի վերայ՝ ինչպէս թզկի (ծառի) տերեւ՝ որ սաստիկ շարժվում քամիցն[26]։

14 Եւ երկինքն մագաղաթէ գրքի պէս կօղըվում[27] եւ ամէն սարեր եւ կղզինեք (տեղինէք) իրանց տեղիցն շարժվեցան[28]։

15 Եւ երկրի թագաւորներն եւ

---

[2] Ցայտ. գ. 7։ *Ցառնարէն. Ե՛կ եւ տե՛ս։ [3] Զաք. զ. 3։ Ցայտ. Ժէ. 11։ [4] Սաղմ. խե. 4, 5։ [5] Զաք. զ. 11։ Ցայտ. Ժգ. 14։ [6] Ցայտ. գ. 7։ [7] Զաք. զ. 2։ [8] Ցայտ. գ. 7։ [9] Զաք. զ. 2։ [10] Ցայտ. Թ. 4։ [11] Ցայտ. գ. 7։ [12] Զաք. զ. 3։ [13] Եզեկ. Ժգ. 21։ [14] Ղեւտ. իզ. 33։ [15] Ցայտ. ը. 3։ Թ. 13. Ժգ. 18։ [16] Ցայտ. ի. 4։ [17] Ցայտ. ա. 9։ [18] Բ Տիմ. ա. 8։ Ցայտ. Ժը. 17։ Ժէ. 10։ [19] Ցայտ. գ. 7։ [20] Զաք. ա. 12։ [21] Ցայտ. Ժա. 18։ Ժէ. 2։ [22] Ցայտ. գ. 4. 5։ է. 9. 14։ [23] Եբր. ժա. 40։ Ցայտ. Ժգ. 13։ [24] Ցայտ. Ժզ. 18։ [25] Յոէլ. բ. 10. 30։ գ. 15։ Մատթ. իգ. 29։ Գործ. բ. 20։ [26] Ցայտ. ը. 10։ Թ. 1։ [27] Սաղմ. ճբ. 26։ Եսայ. լգ. 4։ Եբր. ա. 12։ [28] Երեմ. գ. 23։ դ. 24։ Ցայտ. Ժզ. 20։

իշխանները՝ հազարապետները եւ մեծամեծները եւ զօրաւորները՝ եւ ամէն ծառաները եւ ամէն ազատները թաքցուին իրանց անձնները՝ այրերի (Տալպռանէրէ) եւ սարերի քարերի մէջը[29]։

16 Եւ սարերին ասումէին՝ վէր ընկէք մեզ վերայ, եւ դարերին՝ թէ ծածկեցէք մեզ ահաւոր վերայ նըստողի երեսին, եւ գառի բարկութենէն[30]։

17 Քանզի որ նորա բարկութեան մեծ օրն եկել է[31], եւ ո՞վ կարող է կենալ նորա առաջին[32]։

## ԳԼ· Ի·

2 Մին հրեշտակ Աստուծոյ ծառաներին վերայ կնիք կը դնէ՝ իրանց ճակատներումն 4 կնքվածների համարը՝ այսինքն Իսրայէլի ցեղերին զատած մին համար, 9 եւ ամէն ազգէ ժողովրդներ որ նորանչ համար չկրնար աթոռի առաջին կանգնած էին իրանց վերայ սպիտակ շորեր քցած՝ եւ իրանց ձեռներումն արմաւենիներ (բռնած)։ 14 Նորանց վերարկուները լուացված էին գառինն[ի]ն։

ԵՒ սրանից ետեւ տեսի՝ որ չորս հրեշտակ կանգնած էին երկրի չորս անկիւնումն. եւ երկրի չորս քամին էլ բռնել էին[1] որ քամի չըվիչէ, ո՛չ երկրի վերայ՝ ո՛չ ծովի վերայ, եւ ո՛չ ծառերի վերայ[2]։

2 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ արեւելքիցն դուրս եկաւ, եւ կենդանի Աստուծոյ կնիքըն (Մէհրըն) ունէր, եւ մեծ ձայնով աղաղակեց դէպի էն չորս հրեշտակներն՝ որ իշխանութիւն էին առել որ երկիրըն եւ ծովըն ապականեն։

3 Եւ ասումէր. վնաս մի տաք, ո՛չ երկրին՝ ո՛չ ծովուն՝ եւ ո՛չ էլ ծառերին[3], դադարեցէք մինչեւ որ իմ Աստուծոյ ծառաներին վերայ կնիք (Մէհր) դնեմ[4] (իրանց ճակատներումն)[5]։

4 Եւ կնքվածների համարը լսեցի[6] (որ էր) հարիւր քառասուն եւչորս հազար՝ որ կընքվեցան ի բոլոր Իսրայէլի որդոց ամէն ցեղերիցն[7]։

5 Յուդայի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Ռուբենի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Գադայ ցեղիցն՝ տասներկու հազար կնքված։

6 Ասերի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Նեփթաղիմի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Մանասէի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված։

7 Շմաւօնի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Ղեւիի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Իսաքարի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված։

8 Զաբուղոնի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Յոսէփի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված. Բենիամէնի ցեղիցն՝ տասներկու հազար կնքված։

9 Եւ ես բաներիցս ետեւ տեսի՝ եւ ահա շատ ժողովուրդ (կար) որ նորանց համար չըկար[8], ամէն հեթանոսներիցն եւ ամէն ազգերիցն եւ ամէն լեզուներիցն եւ ամէն ժողո-

[29] Եսայ· ը· 19։ [30] Ովսէ· ժ· 8։ Ղուկ· իդ· 30։ Ցայտ· թ· 6։ [31] Եսայ· ժգ· 6։ Սոփոնիա· 14։ Ցայտ· ժգ· 14։ [32] Սաղմ· հզ· 7։ [1] Դան· է· 2։ [2] Ցայտ· թ· 4։ [3] Ցայտ· զ· 6։ թ· 4։ [4] Եզէկ· թ· 4։ Ցայտ· ժդ· 1։ [5] Ցայտ· իբ· 4։ [6] Ցայտ· թ· 16։ [7] Ցայտ· ժգ· 1։ [8] Հռով· ժա· 25։

վուրձներիցն, որ աճուռի առաջին եւ գառի առաջին կանգնած էին[9] իբրանց վերայ սպիտակ շորեր քցած[10], եւ իրանց ձեռներումն արմաւենիներ (բռնած)։

10 Ղաղաղակումէին բարձր ձայնով՝ եւ ասում. փրկութիւն մեր Աստուծոյն[11] որ աճուռի վերայ նստումէ, եւ գառինն[12]։

11 Եւ ամէն հրեշտակներն կանգնած էին աճուռի եւ երէցների եւ չորս կենդանիքների չորս կողմանի, եւ վէր էին ընկնում երեսներին վերայ աճուռի առաջին՝ եւ երկրպագութիւն էին անում Աստուծոյն[13],

12 Ասելով. ամէն, օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ գոհութիւն եւ պատիւ եւ զօրութիւն եւ շնորհք (լինի) մեր Տէր Աստուծոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն[14]։

13 Եւ էն երէցներից մինն ասաց ինձ. սորանք՝ որ սպիտակ շորեր են հագել՝ ո՞վ են, եւ կամ ո՞րտեղից են գալիս[15]։

14 Եւ ասացի նորան. Տէր՝ դու ես գիտում. եւ ասաց ինձ. սորանք են՝ որ մեծ նեղութիւններից են գալիս[16], եւ իրանց վերարկուները լուացին՝ եւ սպիտակացրին գառի արիւնովն[17]։

15 Վրահամար Աստուծոյ աճուռի առաջին են՝ եւ ցերեկ եւ գիշեր պաշտամունն նորան իրան տաճարի միջումն. եւ նա՝ որ աճուռի վերայ նստած է, բնակված է նորանց միջումն[18]։

16 Ո՛չ կրսովին՝ եւ ո՛չ կրծարաւ էին[19], եւ ո՛չ ով չի՛ նեղացնել նորանց՝ ո՛չ արեգակն եւ ո՛չ տաքութիւնն[20]։

17 Եւ գառն իրան աճուռի միջից կարածացնէ նորանց[21], եւ կառաջնորդէ նորանց դէպի կենաց աղբիւրի (կենդանի) ջուրն. եւ Աստուած սրբեց ամէն արտասուքը նորանց երեսներիցն[22]։

## Կ֊Ը

1 Եօթներորդ կնիքին բացուածք ժամանակումն. 2 Եօթն հրեշտակներին եօթն փող կըտվի. 6 Նորանցից չորսն իրանց փողերը կըփչին, եւ մեծ պատժներ հետեւումն։

1 Եւ երբ որ եօթներորդ կնիքըն բացարաւ՝ լռութիւն եղաւ երկնքումն՝ կէս ժամի (ահաւոր) չափ ժամանակ[1]։

2 Եւ եօթն հրեշտակներ տեսի՝ որ Աստուծոյ առաջին կանգնած էին[2]. եւ եօթն փող տրվաւ նորանց[3]։

3 Եւ մին ուրիշ հրեշտակ եկաւ կանգնեց սեղանին մօտ, եւ ոսկի խնկաման ունէր. եւ շատ խունկ տրվաւ նորան, որ (նորանով) ամէն սրբերի աղօթքըն[4] մատուցանէ էն ոսկի սեղանին վերայ որ աճուռի առաջին էր[5]։

4 Եւ խնկերի ծուխն՝ սրբոց աղ-

[9] Ցայտ. ե. 9։ [10] Ցայտ. գ. 5, 18։ գ. 4։ զ. 11։ Վայր. 14։ [11] Սաղմ. գ. 8։ Եսայ. խգ. 11։ Երեմ. գ. 23։ Ովսէ. ժգ. 4։ Ցայտ. ԺԹ. 1։ [12] Ցայտ. ե. 13։ [13] Ցայտ. գ. 6։ [14] Ցայտ. ե. 13, 14։ [15] Վէր. 9։ [16] Ցայտ. զ. 9։ ժէ. 6։ [17] Եսայ. ա. 18։ Եբր. թ. 4։ ա Յովհ. ա. 7։ Ցայտ. ա. 5։ Ջաք. գ. 3–5։ [18] Եսայ. գ. 5, 6։ Ցայտ. իա. 3։ [19] Եսայ. խթ. 10։ [20] Սաղմ. ճիա. 6։ Ցայտ. իա. 4։ [21] Սաղմ. իգ. 1։ լգ. 8։ Յովհ. ժ. 4, 11, 14։ [22] Եսայ. խն. 8։ Ցայտ. իա. 4։ [1] Ցայտ. զ. 1։ [2] Մատթ. ժը. 10։ Ղուկ. ա. 19։ [3] Բ Մնաց. խԹ. 25–28։ [4] Ցայտ. ե. 8։ [5] Եբ. Լ. 1։ Ցայտ. զ. 9։

գօթքն վեր էլաւ հրեշտակներուն ձեռներէն Աստուծոյ առաջին[6]։

5 Եւ հրեշտակն էն խնկամանը լցուց էն սեղանի կրակիցն, եւ քցեց նորան երկրի վերայ։ Եւ որոտմունք եւ ձայներ եւ փայլատակմունք[7] եւ մեծ շարժ էլաւ[8]։

6 Եւ էն եօթն հրեշտակներն՝ որ էն եօթն փողերըն ունէին՝ իրանց պատրաստեցին որ փչեն։

7 Եւ առաջին հրեշտակն փողն փչեց, եւ էլաւ կարկտա եւ կրակ եւ արիւն խառնըված[9] եւ ընկաւ երկրի վերայ եւ երկրի երրորդ բաժինըն պրեց[10], եւ ծառերի երրորդ բաժինըն պրեց, եւ բոլոր կանանչ խոտերըն պրեց[11]։

8 Եւ երկրորդ հրեշտակն փչեց, եւ մին մեծ սարի պէս որ կրակով բորբոքված էր՝ ընկաւ ծովի մէջ[12], եւ ծովի երրորդ բաժինն[13] արիւն դարձաւ[14]։

9 Եւ ըղացօղ կենդանիքներուն երրորդ բաժինն սատակվեցաւ, եւ նա էլ որ կենդանի շունչ ունէր՝ ապականվեցաւ[15]։ Եւ նաւերի երրորդ բաժինն ծովի մէջ կործանվեցաւ։

10 Եւ երրորդ հրեշտակն փչեց, եւ մին մեծ աստղ ընկաւ երկնքիցն՝ լամպարի (ֆաղէ) պէս բորբոքված[16], եւ ընկաւ գետերի եւ աղբիւրներուն երրորդ բաժինի վերայ[17]։

11 Եւ աստղին անունն գառնուծիւն էր[18]։ Եւ շատ մարդիք մեռան էն ջրերի դառնութենիցն[19]։

12 Եւ չորրորդ հրեշտակն փչեց, եւ վիրաւորվեցաւ արեգական երրորդ բաժինն, եւ լուսնի երրորդ բաժինն, եւ աստղներուն երրորդ բաժինն, եւ նորանց երրորդ բաժինն խաւարվեցաւ, եւ ցերեկի երրորդ բաժինն լոյս չէր տալիս, հնպէս էլ գիշերի երրորդ բաժինն[20]։

13 Եւ տեսի՝ եւ ձայն լսեցի, որ մին հրեշտակ երկնքի միջումն թռուած մեծ ձայնով ասում էր[21]. վայ, վայ, վայ նորանց՝ որ բնակված են երկրի վերայ, երբոր էն մէկել երեք փողերի ձայնն կը լինի՝ որ հրեշտակներն պիտի փչեն[22]։

## ԿԻ · Թ

1 Հինգերորդ հրեշտակն փողն փչելով՝ մին աստղ երկնքիցն վեր ընկաւ, որ նորա անդունդի գըբի բանալիքն տրվվաւ։ 2 Նա՝ անդունդի գուբըն բանուէ, որ էն տեղից մաբանիներ դուրս կըգան կարճնների պէս։ 12 Մին վայն կ'անցկանայ։ 13 Վեցերորդ փողըն կըփչվի։ 14 Զորս հրեշտակներըն որ կապված են՝ արձակվում են։

1 Եւ հինգերորդ հրեշտակն եւ անդունդի գըբի բանալիքն տրվփչուէր, եւ տեսի որ մին աստղ վաւ նորան[2], երկնքիցն վեր ընկաւ երկրի վերայ[1]։ 2 Եւ էն գըբիցն ծուխ էր դուրս

[6] Սաղմ. ճիա. 2։ Ղեւի. ա. 10։ [7] Ցայտ. ժգ. 18։ [8] բ Թագ. իբ. 8։ գ Թագ. ժԹ. 11։ Գործ. գ. 31։ [9] Եզեկ. լը. 22։ [10] Ցայտ. ժգ. 2։ [11] Եսայ. բ. 13։ Ցայտ. թ. 4։ [12] Եբեմ. ծա. 25։ Ամբա. է. 4։ [13] Ցայտ. ժգ. 3։ [14] Եզեկ. ժգ. 19։ [15] Ցայտ. ժգ. 3։ [16] Եսայ. ժգ. 12։ Ցայտ. թ. 1։ [17] Ցայտ. ժգ. 4։ [18] Հռուտ. ա. 20։ [19] Եզ. ժե. 23։ Երեմ. թ. 15։ իգ. 15։ [20] Եսայ. ժգ. 10։ Ամբա. ը. 9։ [21] Ցայտ. ժգ. 6։ ժԹ. 17։ [22] Ցայտ. թ. 12։ ժա. 14։ [1] Ղեւի. ժ. 18։ Ցայտ. ը. 10։ [2] Ղեւի. ը. 31։ Ցայտ. ժէ. 8։ ի. 1։ Վայր. 2. 11։

գալիս մեծ փառն Յիսի պէս. եւ ա-
րեգակն եւ օդն (հասան) խաւարվե-
ցաւ[3]։

3 Եւ գըբիեղն մարախ էր դուրս
գալիս երկրի վերայ[4]. եւ նորանց իշ-
խանութիւն տըվվաւ կարիճի խայ-
թոցի պէս[5]։

4 Եւ նորանց ասվեցաւ՝ որ երկ-
րի խոտին[6] վնաս չը՛տան[7], եւ ոչ էլ
ամէն ծառերին, բայց միայն երկրա-
ւոր մարդկանց, որ (Ը)ստուծոյ կնի-
քըն (ճակատներն) չունին իրանց ճա-
կատներին վերայ[8]։

5 Եւ հրաման տըվվաւ նորանց՝
որ չը՛սպանեն նորանց, բայց հինգ
ամիս չարչարեն նորանց. եւ նորանց
չարչարանքն կարիճի խայթոցի պէս
(էր)՝ որ մին մարդոյ կ՛նուվ[9]։

6 Եւ էն օրերուն մարդիք մահ
կըխնդրեն՝ եւ չը՛ն գտնիլ. եւ կը-
ցանկանան մեռնելոյ՝ եւ մահն կը-
փախչի նորանցից[10]։

7 Եւ էն մարախի կերպն՝ նման
էր ձիոյ՝ որ պատրաստված է կռվի
համար[11]. եւ նորանց գըլխներին վե-
րայ պսակի պէս (էր)՝ ոսկոյ նման[12].
եւ նորանց երեսներն մարդոյ երեսի
նման[13]։

8 Եւ նորանց մազերն կըներան
մազերի պէս. եւ նորանց ատամներն
առիւծի (ատամների) նման[14]։

9 Եւ զրահներ ունէին՝ ինչպէս
երկաթէ զրահներ. եւ նորանց թռե-
ւերի ձայնն՝ նման (էր) շատ կառք
(ոտոպոյ) քաշող ձիանց պէս՝ որ
կռվի մէջ վազըմէն[15]։

10 Եւ ապիներ ունէին կարիճի
նման, եւ խայթոց իրանց ապիներ-
ում էր. եւ իշխանութիւն ունէին՝
որ հինգ ամիս մարդկանց չարչարեն[16]։

11 Եւ իրանց վերայ թագաւոր
ունէին[17] գժոխքի հրեշտակըն[18]. եւ
նորա անունըն՝ երբայեցերէն ազ-
բադոն (էր)՝ որ հայերէն կորուստ
կասվի։

12 Վ(հա՛մին վայն անցկացաւ, եւ
երկու վայ էլ պիտի գան[19]։

13 Եւ վեցերորդ հրեշտակն փո-
ղըն փչեց. եւ ձայն լսեցի էն չորս
կենդանիներիցն՝ որ Ը)ստուծոյ սե-
ղանի առաջին էին,

14 Որ ասում էր վեցերորդ հրեշ-
տակին՝ որ էն փողըն ունէր. (թէ)
արձակիր էն չորս հրեշտակներըն՝
որ եփրատ գետի վերայ կապված
են[20]։

15 Եւ էն չորս հրեշտակներն ար-
ձակվեցան, որ պատրաստված էին
ժամին եւ օրին եւ ամսին եւ տարոյն
համար, որ մարդկանց երրորդ բա-
ժինըն սպաննէն։

16 Եւ նորանց ձիաւոր զօրքի հա-
մարն[21] բիւրք բիւրոց եւ հազարք
հազարաց (էր)[22]՝ լսեցի նորանց հա-
մարըն[23]։

17 Եւ էն տեսիլքի մէջ ձիանք
տեսի, եւ նորանց վրայ հեծածներն
կրակէ եւ յակինթէ եւ ծըծումբով
(յոտոպլով) վառված զրահներ
ունէին. եւ ձիանքի գըլխներն ա-
ռիւծի գըլխների նման (էին). եւ
նորանց բերանիցն կրակ եւ ծուխ եւ
ծծումբ էր դուրս գալիս[24]։

18 Եւ էս կոտորմանքիցս՝ մարդ-
կանց երրորդ բաժինն մեռաւ էն կը-
րակից եւ ծխից եւ ծըծումբից,

[3] Ցվէլ. բ. 2, 10։ [4] Եսա. ժ. 4։ Դատ. է. 12։ [5] Վայր. 10։ [6] Յայտ. ը. 7։ [7] Յայտ. գ. 6։ է. 3։ [8] Եսա. ժբ. 23։ Եզեկ. թ. 4։ Յայտ. է. 3։ [9] Յայտ. ժ. 7։ Վայր. 10։ [10] Յոբ. գ. 21։ Երես. բ. 19։ Եզեկ. ը. 3։ Յայտ. զ. 16։ [11] Յովէլ. բ. 4։ [12] Նահում. գ. 17։ [13] Դան. է. 8։ [14] Ցվէլ. ա. 6։ [15] Ցվէլ. բ. 5–7։ [16] Վէր. 5։ [17] Եզեկ. բ. 2։ [18] Վէր. 1։ [19] Յայտ. ը. 13։ [20] Յայտ. ժզ. 12։ [21] Եզեկ. լը. 4։ [22] Սաղմ. կը. 17։ Դան. է. 10։ [23] Յայտ. է. 4։ [24] ա Պետ. ժբ. 8։ Եսա. ե. 28, 29։

որ նորանց բերանին դուրս էր գա-
լիս։
19 Ինչու որ նորանց զօրութիւնն
իրանց բերանումն էր՝ եւ իրանց ա-
զինեցումն, եւ նորանց ափիներն օձի
նման (էին), եւ գլխներ ունէին՝
որ նորանցով սպանում էին անիրաւ-
ներին[25]։
20 Այլ էն մեկել մարդիքն որ չը-
մեռան էս կոտորմունքիցս, չապաշ-
խարեցին եւ չի դարձան իրանց
ձեռաց գործքերից[26], որ երկրպա-
գութիւն չանեն դեւերին[27] եւ ոսկէ
եւ արծաթէ եւ պղնձէ եւ քարէ եւ
փայտէ չկնած կըռքերին, որ ո՛չ
տեսնել կարող են՝ եւ ո՛չ լսել՝ եւ
ո՛չ գնալ[28]։
21 Այլ չապաշխարեցին իրանց
մարդասպանութենից՝ եւ (մահի)
դեղ տալուցն[29]՝ եւ պոռնկութե-
նից՝ եւ գողութենից։

## ԳԼ · Ի

1 Մին զօրաւոր հրեշտակ երեւումի՝ իրան ձեռումն մին գիրք ունէր բացած։ 6 Եւ երդում է ուտում յաւիտեանս յաւիտենից կենդանի լինողին վերայ, թէ էլ աւելի ժամանակ չըկայ։ 9 Հրեշտակն հրաման է անում Յովհաննէսին որ էն գիրքըն առնէ եւ ուտէ։

1 Այլ մին ուրիշ զօրաւոր հրեշ-
տակ տեսի՝ որ երկինքից վէր էր գա-
լիս, եւ ամպ ունէր հագած՝ եւ իրան
գլխումն կանաչ կարմիր գոտիկ[1],
եւ նորա երեսն արեգական նման
(էր)[2], եւ նորա ոտներն կրակի սիւ-
ների պէս[3]։
2 Այլ իրան ձեռումն մին փոքր
գիրք ունէր բացած։ եւ իրան աջ ո-
տքն դրաւ ծովու վերայ, եւ ձախըն՝
երկրի վերայ[4]։
3 Այլ մեծ ձայնով աղաղակեց՝
առիւծի պէս գոռաց։ եւ երբոր ա-
ղաղակեց՝ եօթն որոտմունքն իրանց
ձայնովն խօսեցին[5]։
4 Այլ երբոր եօթն որոտմունքն
խօսեցին՝ կամենումի գրել։ եւ ձայն
լսեցի երկինքիցըն՝ որ ասումէր, Կնքիր
(Ծ֊օհ֊ր֊ր) էն որ եօթն որոտմունքըն
խօսեցին[6]՝ եւ մի գրեր։
5 Այլ էն հրեշտակն որ տեսի՝
(նա) որ իրան ոտըն դրաւ ծովու վե-
րայ՝ եւ մեկելըն ցամաքի վերայ, ի-
րան աջ ձեռըն դէպի երկինքն բարձ-
րացրուց[7]։
6 Այլ երդուաւ նորանով որ կեն-
դանի է յաւիտեանս յաւիտենից,
որ ստեղծեց երկինքըն՝ եւ ինչ որ
նորանումն է, եւ երկիրս՝ եւ ինչ որ
նորանումն կայ, (եւ ծովըն՝ եւ ինչ
որ նորանումն է,)[8] թէ էլ աւելի
ժամանակ չըկայ[9]։
7 Այլ եօթներորդ հրեշտակի
ձայն հանելոյ օրերումն՝ երբոր փողը
կըփչէ, Աստուծոյ խորհուրդն կը-
կատարվի՝ էն որ աւետարանվեցաւ
իրան ծառայ մարգարէներին[10]։
8 Այլ էն ձայնն որ երկինքից լը-
սեցի՝ մինել խօսեց ինձ հետ՝ եւ ա-
սաց[11]. գնա առ էն փոքր գիրքըն՝ որ

[25] Ծոյ. թ. 15։ [26] բ Օրին. ա. 29։ [27] գՆոյ. ԺԶ. 7։ բ Օրին. լբ. 17։ Սաղմ. ՀԶ. 37, ա Կորնթ. ժ. 20։ [28] Սաղմ. ՃԺԶ. 4։ ՃՂԵ. 15։ Դան. ե. 23։ [29] Յայտ. իբ. 15։ [1] Եզեկ. ա. 28։ [2] Մատթ. ԺԷ. 2։ Յայտ. ա. 16։ [3] Յայտ. ա. 15։ [4] Մատթ. իբ. 18։ [5] Յայտ. ը. 5։ [6] Դան. ը. 26։ Ժբ. 4, 9։ [7] Եզե. գ. 8։ Դան. Ժբ. 7։ [8] Նեհեմ. թ. 6։ Յայտ. դ. 11։ Ժգ. 7։ [9] Դան. Ժբ. 7։ Յայտ. Ժգ. 17։ [10] Յայտ. Ժա. 15։ [11] Ակբ. 4։

հրեշտակն քաց բռնած ունի իրան ձեռումն եւ կանգնած է ծովու եւ ցամաքի վերայ։

9 Եւ ես գնացի հրեշտակի մօտն՝ եւ լինդրեցի նորանից. եւ նա ասաց ինձ՝ առ սրան՝ եւ կեր սորան, եւ կըդառնանայ քո փորումդ, բայց քո բերանումդ քաղցր կըլինի մեղրի պէս[12]։

10 Եւ էն քաց փոքր գիրքըն առի հրեշտակիցն՝ եւ կուլտուի նորան. եւ իմ բերանումս քաղցր էր մեղրի նման[13], եւ երբոր կերի՝ դառնացաւ իմ փորումս[14]։

11 Եւ ասաց ինձ, պէտք է որ դու մին էլ մարգարէանաս ժողովրդների՝ եւ ազգերի՝ եւ լեզուների՝ եւ թագաւորների առաջին։

## ԳԼ · ԺԱ

3 երկու վկայներըն կըմարգարէանան։ 6 Նորանք իշխանութիւն ունին երկինքըն փակելոյ՝ որ անձրեւ չըգայ։ 7 Գազանն կռիւ կըտայ նորանց հետ, եւ կըսպանէ նորանց։ 8 Նորանք չըթաղված կըմնան, 11 Եւ երեք եւ կէս օրին հաւեւ կենդանի հոգիով վեր կըկենան կըկանգնին։ 14 Երկրորդ վայն կ'անցկանայ։ 15 Եօթներորդ փողն կըփչվի։

1 Եւ մին եղէգ (պաշէ) տըվին ինձ գաւազանի նման[1]. եւ կանգնած էր հրեշտակն՝ եւ ինձ ասում էր. վեր կաց եւ չափիր Աստուծոյ տաճարըն եւ սեղանըն՝ եւ նորանց էլ որ նորա նում երկրպագութիւն են անում[2]։

2 Եւ գաւիթըն որ տաճարիցն գուրս է՝ թող նորան՝ եւ մի չափեր[3], ինչու որ նա հեթանոսներին է տըվված[4]. եւ սուրբ քաղաքն էլ ոտի տակ կոխ կըտան[5] քառասուն եւ երկու ամիս[6]։

3 Եւ իմ երկու վկաներիս կըտամ[7] եւ հազար երկու հարիւր եւ վաթսուն օր[8] կըմարգարէանան՝ քուրձ (տոպէ շոր) հագած[9]։

4 Նորանք են (էն) երկու ձիթենիքն՝ եւ երկու ճրագներն, որ Աստուծոյ առաջին կանգնած են երկրում[10]։

5 Եւ նորանք որ կամենան վնաս տալ նորանց, կրակ գուրս կըգայ նորանց բերանիցն՝ եւ կայրէ իրանց թշնամիներին[11]. եւ նորանք որ կամենան վնաս հասցնել նորանց՝ էսպէս պիտի սատակվին[12]։

6 Նորանք իշխանութիւն ունին երկինքըն փակելոյ՝ որ անձրեւ չըգայ իրանց մարգարէութեան օրերումն[13]. եւ իշխանութիւն ունին ջրերի վերայ՝ որ արիւն դարձնեն նորանց, եւ ամէն կերպ պատուհասներով պատուհասեն երկիրըն քանի անգամ որ կամենան[14]։

7 Եւ երբոր իրանց վկայութեան ամէն օրերըն կըկատարեն[15], էն գազանն էն գաղտնի[16] որ անդունդիցն է գուրս գալիս[17] կռիւ կըտայ նո-

[12] Երէմ. ԺԵ. 16։ Եզէկ. բ. 8։ գ. 1, 2, 3։ [13] Եզէկ. գ. 3։ [14] Եզէկ. բ. 10։ [1] Եզէկ. խ. 3, 5։ Զաք. բ. 1։ Յայտ. իա. 15։ [2] Թագ. խդ. 18։ [3] Եզէկ. խ. 17, 20։ [4] Սաղմ. հթ. 1։ Ղուկ. իա. 24։ [5] Դան. ը. 10։ [6] Յայտ. ժգ. 5։ [7] Յայտ. ի. 3։ [8] Յայտ. ժբ. 6։ [9] Յայտ. ժԹ. 10։ [10] Սաղմ. ծբ. 8։ Երէմ. ժա. 16։ Զաք. գ. 3, 11, 14։ [11] Թագ. ա. 10, 12։ Երէմ. ա. 10։ ե. 14։ Եզէկ. խգ. 3։ Ամոս. գ. 5։ [12] Թագ. ժգ. 29։ [13] Թագ. ժէ. 1։ Յայ. է. 16, 17։ [14] Եզ. է. 19։ [15] Ղուկ. ժգ. 32։ [16] Յայտ. ժգ. 1, 11։ ժէ. 8։ [17] Յայտ. ԺԹ. 2։

քանց Հետ, եւ կը յաղթէ նորանց՝ եւ կը սպանէ նորանց[18]։

8 Եւ նորանց մեռած մարմիններն վէրընկած կրնան նորանց մեծ քաղաքի փողոցներուն մէջն[19], որ նոյա անունն Հոգեւոր մարդով սոդոմ եւ եգիպտոս է կոչվում, որտեղ որ Նոքանց Տէրն էլ խաչվեցաւ[20]։

9 Եւ նորանց կրնեանեն ամէն ազգերն եւ ժողովուրդներն՝ եւ ամէն լեզուներն եւ հեթանոսներն[21], ինչու որ նորանց մեռած մարմիններն վէր ընկած կրնան երեք օր եւ կէս. եւ թոյլ չեն տալ՝ որ նորանց ոսկորներն թաղվին գերեզմանի մէջ[22]։

10 Եւ նորանք՝ որ երկրի վերայ բնակված են, ուրախ կը լինին՝ եւ խնդութիւն կանեն նորանց վերայ[23], մինչեւ որ միեան միմեանց ընծաներ եւ պարգեւներ տանել[24], ինչու որ էս երկու մարգարէքս չարչարեցին երկրի վերայ բնակողներին[25]։

11 Եւ երեք եւ կէս օրից եւ տես[26] Աստուածանից կենդանի Հոգի կըմտնէ նորանց մէջ, եւ վեր կը կենան կրկանգնին իրանց ոտներին վերայ[27], եւ մեծ վախ ընկաւ նորանց վերայ որ տեսին նորանց։

12 Եւ մեծ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասում էր նորանց. վերացէք վերէ՛ք էստեղ, եւ ամպերով[28] վերացան վերէլան երկինքն[29], եւ նորանց թշնամիներն տեսին նորանց[30]։

13 Եւ հենց էն ժամումն (ահա՛ ըռոմի) մեծ շարժմունք էլաւ[31], եւ քաղաքի տասներորդ բաժինն կործանվեցաւ[32], եւ էն շարժից եօթն հազար մարդիկ մեռան. եւ նրանից ետեւ մեծ վախ էլաւ ամէնի վերայ, եւ փառք էին տալիս երկնաւոր Աստուծոյն[33]։

14 Էհա երկրորդ վայն անցկացաւ, եւ երրորդ վայն շուտով պիտի գայ[34]։

15 Եւ երրոր եօթներորդ հրեշտակն փողը փչեց[35], մեծ ձայն էլաւ երկինքումն՝ եւ ասաց[36]. բոլոր աշխարհքի թագաւորութիւնն էլաւ մեր Տէրին՝ եւ նորա Քրիստոսին[37]. եւ կըթագաւորէ յաւիտեան յաւիտենից[38]։

16 Եւ քսան եւ չորս էրէցներն՝ որ իրանց աթոռներին վերայ նստած էին Աստուծոյ առաջին, իրանց երեսներին վերայ վեր ընկնում՝ եւ երկրպագութիւն էին անում Տէր Աստուծոյն, եւ ասում էին[39].

17 Գոհանում ենք քեզանից Տէր Աստուած ամենակալօղ, որ էիր եւ ես[40], եւ քո մեծ զօրութիւնդ առիր, եւ թագաւորեցիր[41]։

18 Եւ հեթանոսներն բարկացան, եւ քո բարկութիւնդ եկաւ[42], եւ մեռելների ժամանակն՝ որ դատվին. որ վարձք տաս քո ծառայ մարգարէներին եւ սըրբերին, եւ քո անունից վախեցօղներին[43]՝ փոքրներին եւ մեծերին[44] եւ երկիրը ապականօղներին ապականես[45]։

19 Եւ Աստուծոյ տաճարն որ եր-

---

[18] Դան. է· 21։ Զաք. ժգ· 2։ [19] Յայտ. ժգ· 8։ ժէ· 1, 5։ ժը· 10։ [20] Եբր. ժգ· 12։ Յայտ. ժը· 24։ [21] Յայտ. ժէ· 15։ [22] Ծն. հի· 2, 3։ [23] Յայտ. ժը· 12։ ժգ· 8։ [24] Եսթ. թ· 19, 22։ [25] Յայտ. ժգ· 10։ [26] Եզեկ. լէ· 5, 9, 10, 14։ [28] Ամոս. կ· 8։ Գործ. ա· 9։ [29] Եսայ. ժգ· 13։ Յայտ. ժը· 5։ [30] Գործ. ը· 1, 5, 7։ [31] Յայտ. ղ· 12։ [32] Յայտ. ժգ· 19։ [33] Եփես. է· 19։ Յայտ. ժգ· 7։ ժէ· 4։ [34] Յայտ. ը· 13։ թ· 12։ ժէ· 1։ [35] Յայտ. է· 7։ [36] Եսայ. խե· 13։ Յայտ. ժգ· 17։ ժթ· 6։ [37] Յայտ. ժը· 10։ [38] Գաղ. ը· 44։ է· 14, 18, 27։ [39] Յայտ. է· 4։ է· 8։ ժթ· 4։ [40] Յայտ. ա· 4, 8։ գ· 8։ ժգ· 5։ [41] Յայտ. ժթ· 6։ [42] Վէր· 2, 9։ [43] Դան. է· 9, 10։ Յայտ. ղ· 10։ [44] Յայտ. ժթ· 5։ [45] Յայտ. ժգ· 10։ ժը· 6։

կրնքուեմ էր՝ բաց էլաւ, եւ Աստուծոյ տապանակն երեւեցաւ իրան տաճարի մէջն[46]. եւ փայլատակմունք եւ ձայներ եւ որոտմունքներ, եւ շարժմունքներ, եւ մեծ մեծ կարկուտ էյան[47]։

## ԺԲ. ԺԲ

1 Մին կին արեգակն իրան վերայ առած՝ ցաւ քաշումէ. 4 Եւ մեծ կրակի պէս վիշապն էն կնկան առաջին կղկանդնի, որ կուլայ նորա որդին. 6 Բայց կինն երթոյ կ՚ըծնի, կը-փախի մին անապատ երկիր։ 7 Մէքայէլն եւ իրան հրեշտակներըն կռիւ կրնան վիշապին հետ, եւ կ՚յաղթեն նորան։ 13 Վիշապն որ վեր ընկաւ երկրի վերայ՝ հալածեց կինն։

1 Եւ մին մեծ նշան երեւեցաւ երկինքումն. (այնինչն) մին կին՝ որ ա-րեգակըն իրան վերայ էր առել, եւ լուսինըն էլ իրան ոտների տակն. եւ իրան գլխի վերայ տասներկու աս-տեղներից մին պսակ (ունէր)։

2 Եւ յղի էր. եւ ցաւ քաշե-լումն սաստիկ ազաղակումէր, եւ շատ չարչարանքով ծնելոյ մնաս էր[1]։

3 Եւ մին ուրիշ նշան (էլ) ե-րեւեցաւ երկինքումն. եւ ահա մին մեծ կրակի պէս վիշապ (կար)[2]. որ եօթն գլուխ ունէր եւ տասն եղ-ջիւր[3], եւ նորա գլուխներին վերայ եօթն թագաւորական պսակ[4]։

4 Եւ նորա պոչին[5] երկնքի աս-տեղների երրորդ բաժինըն քաշու-մէր[6], եւ նորանց քցեց երկրի վե-րայ[7]. եւ վիշապն կանգնած էր էն կնկան առաջին՝ որ պիտի ծնէր[8], նրահամար որ երբոր կինն իրան որ-պին ծնէ՝ վիշապն կուլայ նորան[9]։

5 Եւ կինն արու (որձ) զաւակ ծնաւ՝ որ նա պիտի բոլոր հեթանոս-ներին երկաթէ գաւազանով հո-վուէ[10]. եւ նորա որդին յափշտակ-վեցաւ Աստուծոյ մօտ՝ եւ նորա աթոռին մօտ։

6 Եւ կինն փախաւ մին անապատ երկիր՝ որ էն տեղ Աստուածանից տեղ էր պատրաստված նորա հա-մար[11], որ կերակրվի էն տեղ հազար երկու հարիւր եւ վաթսուն օր[12]։

7 Եւ կռիւ եղաւ երկնքումն, մի-քայէլն եւ իրան հրեշտակներն[13] կռիւ մէին վիշապին հետ[14]. եւ վի-շապն կռիւ մէր իրան զօրքերովն։

8 Եւ չ՚կարացին դէմ կենալ, եւ տեղ էլ չ՚գտաւ նորանց հա-մար երկինքումն։

9 Եւ վեր ընկաւ մեծ վիշապն[15] էն առաջին օձն, որ բէեղզէբուղ եւ սատանայ է կոչվում[16], որ բոլոր բովանդակ աշխարհքըն մոլորա-ցրուց[17]. եւ իրան հրեշտակներն էլ իրան հետ վեր ընկան[18]։

10 Եւ մեծ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասումէր. հիմիկ զօրութիւնն եւ փրկութիւնն եւ թագաւորութիւնն էլաւ մեր Աստուծոյն, եւ իշխանու-թիւնն նորա օծեալին[19]. քանզի որ վեր ընկաւ մեր եղբայրների չարա-

[46] Ցայտ. ԺԵ. 5, 8։ [47] Ցայտ. Ը. 5։ ԺԶ. 18։ [1] Եսայ. կԶ. 7։ Դաշ. գ. 19։ [2] Ցայտ. ԺԷ. 3։ [3] Ցայտ. ԺԷ. 9, 10։ [4] Ցայտ. ԺԳ. 1։ [5] Ցայտ. Թ. 10, 19։ [6] Ցայտ. ԺԷ. 18։ [7] Դան. Ը. 10։ [8] Ալէք. 2։ [9] Ելք. ա. 16։ [10] Սաղմ. բ. 9։ Ցայտ. բ. 27։ ԺԹ. 15։ [11] Ալէք. 4։ [12] Ցայտ. ԺԱ. 3։ [13] Դան. Ժ. 13, 21։ Ժբ. 1։ [14] Ալէք. 3։ Ցայտ. Ի. 2։ [15] Գոխ. Ժ. 18։ Ցեզ. Ժբ. 31։ [16] Ծննդ. գ. 1, 4։ Ցայտ. Ի. 2։ [17] Ցայտ. Ի. 3։ [18] Ցայտ. Թ. 1։ [19] Ցայտ. ԺԱ. 15. ԺԹ. 1։

խօսն՝ որ ցերեկ եւ գիշեր նորանցից չարախօսութիւն էր անում Աստուծոյ առաջին[20]։

11 Իսկ նորանք յաղթեցին նորան գառի արիւնովն՝ եւ նորա վկայութեան խօսքովը[21]. եւ իրենց հաւատը չսիրացան վիշապին մինչեւի մահն[22]։

12 Սրահամար թող ուրախ լինին երկինքն, եւ ամենքդ որ բնակված էք նորանում[23]. վայ երկրին եւ ծովին, ինչու որ բանսարկուն վէր ընկաւ ձեզ մծա, որ նա մեծ սաստիկ բարկութիւն ունի[24]. պատճառն որ գիտէ որ միւնչեւ ժամանակ պիտի մնայ[25]։

13 Իսկ երբոր տեսաւ վիշապն՝ թէ վէր ընկաւ երկրի վերայ, էն կնկան եռեւէն ընկաւ՝ որ էն արու (որձ) զաւակըն ծնաւ[26]։

14 Իսկ էն կնկանն երկու մեծ արծուի թեւ տրվաւ[27] որ թռչի[28] անապատն իրան տեղն[29]. որ էն տեղ կերակրվուէր՝ միւս ժամանակ եւ ժամանակներ եւ կէս ժամանակ օձի երեսից (պահված)[30]։

15 Իսկ օձն իրան բերանիցն ջուր թափեց էն կնկան եռեւէն՝ որ նորան ջրով խեղդէ[31]։

16 Իսկ երկիրն օգնութիւն արաւ կնկանն, եւ երկիրն իրան բերանըն բաց արաւ եւ էն ջուրըն կուլ տուաւ՝ որ վիշապն իրան բերանիցն թափեց։

17 Իսկ վիշապն բարկացաւ էն կնկան վերայ, եւ գնաց որ նորա մնկել զաւակներին հետ կռիւ անէ[32] որ Աստուծոյ պատուիրաններըն պահումին[33], եւ Յիսուսի վկայութիւնըն ունէին[34]։

18 Իսկ ծովու աւազի վերայ կանգնեց։

## ԿԱ · ԺԴ

1 Եօթն գլուխով եւ տասն եղջիւրով մին գազան ծովիցն դուրս կըգայ, եւ էն վիշապն իրան զօրութիւնըն կըտայ նորան։ 11 Միւս ուրիշ գազան դուրս կըգայ երկրիցն. 14 Ա-ռաջինն գազանին պատկերըն չինել կըտայ. 15 Եւ բռնութիւն է անում մարդկանց որ նորա երկրպագութիւն անեն, 16 Եւ նորա դրոշմի նշանն ընդունին իրանց աջ ձեռումն եւ իրանց ճակատումն։

1 Իսկ տեսի որ ծովիցն միւն գազան էր դուրս գալիս[1], եւ եօթն գլուխ ունէր եւ տասն եղջիւր[2], եւ նորա եղջիւրներին վերայ տասն թագաւորական պսակ (կար), եւ նորա գլուխներին վերայ հայհոյութեան անուններ։

2 Իսկ էն գազանն որ տեսի՝ էդ ինձի (ղաբլանի) նման (էր)[3], եւ նորա ոտներն արջի նման[4], եւ նորա բերանն առիւծի նման[5]. եւ էն վիշապն տուաւ նորան իրան զօրութիւնըն[6] եւ իրան աթոռըն[7] եւ իրան մեծ իշխանութիւնըն[8]։

---

[20] Յեր. ա. 9։ բ. 5։ Ջած. գ. 1։ [21] Հռովմ. ը. 33, 34, 37։ Ժզ. 20։ [22] Գոծ. Ժգ. 26։ [23] Ովս. զզ. 11։ Եսայ. խԹ. 13։ Յայտ. ժը. 20։ [24] Յայտ. ը. 13։ ժա. 10։ [25] Յայտ. ժ. 6։ [26] Ա Եր. 5։ [27] Եզ. ժԹ. 4։ [28] Ա Եր. 6։ [29] Յայտ. ժԷ 3։ [30] Դան. է. 25։ ժբ. 7։ [31] Եսայ. ձԹ. 19։ [32] Ծննդ. գ. 15։ Յայտ. ժա. 7։ ժգ. 7։ [33] Յայտ. ժգ. 12։ [34] Ա Կորնթ. բ. 1։ Ա Յովհ. ե. 10։ Յայտ. ա. 2, 9։ գ. 9։ ի. 4։ [1] Դան. է. 2, 7։ [2] Յայտ. ժբ. 3։ ԺԷ. 3, 9, 12։ [3] Դան. է. 6։ [4] Դան. է. 5։ [5] Դան. է. 4։ Յայտ. ժբ. 9։ [7] Յայտ. ժգ. 10։ [8] Յայտ. ժբ. 4։

3 Եւ նորա գլխաներից մին մեռնելոյ չափ խոցված էր. եւ նորա մահի խոցն ողջանում էր[9]. եւ բոլոր երկիրն զարմացաւ էն գազանի վրայ, (ինչու որ վիշապն իրան թագաւորութիւնն տուաւ նորան)[10]:

4 Եւ երկրպագութիւն արին վիշապին՝ որ իշխանութիւնն տուաւ գազանին, եւ ասում էին. ո՞վ կը լինի ես գազանիս նման. կամ ո՞վ կարէ դորա հետ կռիւ անել[11]:

5 Եւ բերան տրվաւ նորան որ մեծ մեծ բաներ խոսի, եւ հայհոյանք[12]. եւ իշխանութիւն տրվաւ նորան քառասուն եւ երկու ամիս[13]:

6 Եւ իրան բերանն հայհոյանքով բաց արաւ Աստուծոյ դէմ, եւ հայհոյեց նորա անունն՝ եւ նորա խորանն՝ եւ նորանց էլ որ երկնքում բնակված են:

7 (Եւ տրվաւ նորան որ սրբերին դէմ կռիւ անէ եւ նորանց յաղթէ)[15]. եւ իշխանութիւն տրվաւ նորան ամէն ազգերի եւ լեզուների եւ ժողովուրդների վերայ[16]:

8 Եւ երկրպագութիւն կանեն նորան էն ամէնքն՝ որ երկրի երեսի վերայ բնակված են, որ նորանց անունները[17] գրված չեն գառի կենաց գրքի մէջն՝ որ աշխարհքի ստեղծագործութեան սկզբից է մորթված[18]:

9 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[19]:

10 Ինչու որ կան մին քանիսն՝ որ պիտի գերութեան մէջ քաշվին[20], եւ կան մին քանիսն՝ որ պիտի սրով մեռնին[21], եւ կան մին քանիսն, որ պիտի իրանք իրանց սպանեն. Էստեղ է սրբերի համբերութիւնն եւ հաւատքն[22]:

11 Եւ տեսի մին ուրիշ գազան՝ որ դուրս էր գալիս երկրիցն[23], եւ երկու եղջիւր ունէր գառի նման. եւ վիշապի նման էր խոսում:

12 Եւ էն առաջին գազանի ամէն իշխանութիւնն բանացնում էր նորա առաջին. եւ էնպէս էր անում, որ երկիրն եւ նորա վերայ ամէն բնակօղներն՝ երկրպագութիւն անեն էն առաջին գազանին, մինչեւ որ նորա մահի խոցն ողջանայ[24] (*):

13 Եւ շատ նշաններ էր անում[25] եւ երկնքիցն կրակ էր վէր բերում երկրի՝ մարդկանց առաջին[26]:

14 Եւ մոլորացնում էր նորանց, որ բնակված են երկրի վերայ[27]՝ էն նշաններովն որ տրվաւ էին նորա ձեռքն[28]՝ որ գործէ գազանի առաջին. եւ երկրի բնակօղներն ասացին նորան՝ պատկեր շինիր էն գազանին՝ որ էն սրի խոցից ապրեցաւ[29] (**):

15 Եւ իշխանութիւն տրվաւ նորան որ հոգի տայ էն գազանի պատկերին, եւ որ պատկերն խոսի էլ. եւ երկրպագութիւն կանեն նորան՝ երկրի վերայ ամէն բնակօղներն. եւ ով որ երկրպագութիւն չանէ գա-

[9] Ա յայտ. 13, 14: [10] Յայտ. ժէ. 8: [11] Յայտ. ժբ. 18: [12] Դան. է. 8, 11. 25: ժա. 36: [13] Յայտ. ժա. 2: ժբ. 6: [14] Յովհ. ա. 14: Կող. բ. 9: [15] Դան. է. 21: Յայտ. ժա. 7: ժբ. 17: [16] Յայտ. ժա. 18: ժէ. 1: [17] Եսա. լը. 32: Դան. ժբ. 1: Փիլիպ. դ. 3: Յայտ. գ. 5: ի. 12, 15: իա. 27: [18] Յայտ. ժէ. 8: [19] Յայտ. բ. 7: [20] Երեմ. լգ. 1: [21] Ննդեղ. թ. 6: Ա Թագ. իշ. 52: [22] Յայտ. ժդ. 12: [23] Յայտ. ժա. 7: [24] Ա Կր. 3: (*) Ցաւոտ էր. Որ նորա մահի խոցն ողջացել էր: [25] Բ Օրին. ժգ. 1–3: Ա Թագ. իգ. 24: Բ Թես. բ. 9: Յայտ. ժդ. 14: [26] Գ Թագ. ժը. 38: Դ Թագ. ա. 10. 12: [27] Յայտ. ժբ. 9: ժԹ. 20: [28] Բ Թես. բ. 9, 10: [29] Դ Թագ. ի. 7: (**) Ցաւոտ էր. Եւ երկրի բնակօղներն ասաց, որ պատկեր չինեն էն գազանին:

զանի պատկերին, նորան կըսպանէ[30]։

16 Այլ կանէ որ ամէնքն փոքրներն եւ մեծամեծներն, հարուստներն եւ աղատներն եւ աղքատներն եւ ծառաներն՝ իրանց ալ ձեռուն եւ իրանց ճակատուն դրոշմի նշան ընդունին[31]։

17 Այլ որ իսկի մինն չըկարենայ գնել եւ ծախել՝ թէ որ էն գազանի նշանըն եւ նորա անունըն[32]՝ եւ նորա անունի համարըն չունենայ[33]։

18 Այստեղ է իմաստութիւն[34], ով որ միտք ունի՝ թող գազանի համարը համարէ[35]. ինչու որ մին մարդոյ համարն է, եւ նորա անունի համարն էսէ. վեց հարիւր վաթսուն եւ վեց[36]։

## ԻԱ · ԺԹ

1 Գառն իրան հետեւողներին հետ Սիօն սարի վերայ կըկանգնէ։ 6 Մին հրեշտակ քարոզում Աւետարանըն։ 8 Բաբիլոնի վեր ընկնալն։ 15 Ի աշխարհի հունձքն, 18 Աստգոյ քաղվելն։ 20 Ասուածոյ բարկութեան հնձանն։

1 Այլ տեսի՝ եւ ահա գառն կանգնած էր սիօնի սարին վերայ[1]. եւ նորա հետ հարիւր քառասուն եւ չորս հազար (հոգի)[2], որ նորա անունըն եւ նորա հօր անունըն գրած ունէին իրանց ճակատներին վերայ[3]։

2 Այլ ձայն լսեցի երկնքէյն շատ ջրերի ձայնի պէս, եւ մեծ որոտմունքի ձայնի պէս[4]. եւ քնար (սանդուխ) ածողների ձայնի պէս լսեցի՝ որ իրանց քնարներըն ածումէին[5]։

3 Այլ նոր երգեր էին երգում աթոռի առաջին եւ չորս կենդանիների առաջին՝ եւ էրէցների առաջին[6]. եւ ոչ ով չի կարող գիտել նորանց երգերըն՝ բայց միայն էն հարիւր քառասուն եւ չորս հազարներն, որ երկրից ազատվել են[7]։

4 Սորանք են՝ որ կանանց հետ չըխառնակվեցան եւ կոյս են[8]. սորանք գառի եաեւէն են գնում որ-

տեղ որ գնայ[9]. սորանք մարդկանցից ընտրվեցան[10] Աստուծոյ եւ գառի առաջին[11]։

5 Այլ նորանց բերանումն սուտ չը գտավ[12]՝ ինչու որ անարատ են[13]։

6 Այլ մին ուրիշ հրեշտակ տեսի որ թռչումէր երկնքի մէջն[14], եւ յաւիտենական աւետիս ունէր աւետաբանել[15] ամէն ազգերին եւ լեզուներին՝ որ երկրումն քնակված են[16]։

7 Այլ մեծ ձայնով ասումէր. վախեցէք Աստուածանից՝ եւ փառք տուէք նորան[17]. պատճառն որ նորա դատաստանի ժամն (ահաւոնն) եկաւ. եւ երկրպագութիւն արէք երկնքի եւ երկրի եւ ծովի եւ աղբիւրի ջրերի ստեղծողին[18]։

8 Այլ մին ուրիշ երկրորդ հրեշտակ էր գալիս նորա եաեւէն եւ ասումէր. վէր ընկաւ՝ վէր ընկաւ էն մեծ բաբիլոնն[19], ինչու որ ամէն հե-

[30] Յայտ. ժգ. 2։ ԺԹ. 20։ ի. 4։ [31] Յայտ. ԺԳ. 9։ ԺԹ. 20։ ի. 4։ [32] Յայտ. ԺԳ. 11։ [33] Յայտ. ԺԵ. 2։ [34] Յայտ. ԺԵ. 9։ [35] Յայտ. ԺԵ. 2։ [36] Յայտ. իա. 17։ [1] Յայտ. է. 5։ [2] Յայտ. է. 4։ [3] Յայտ. է. 3։ ԺԳ. 16։ [4] Յայտ. ա. 15։ ԺԹ. 6։ [5] Յայտ. է. 8։ [6] Յայտ. է. 9։ ԺԵ. 3։ [7] Կէր. 1։ [8] Ր Կորնթ. Ժա. 2։ [9] Յայտ. գ. 4։ ե. 15. 17։ ԺԵ. 14։ [10] Յայտ. է. 9։ [11] Ճոխ. ա. 18։ [12] Սոփ. լբ. 2։ Սոփ. գ. 13։ [13] Եփես. է. 27։ Յուդ. 24։ [14] Յայտ. ը. 13։ [15] Եփես. գ. 9, 10, 11։ Տիտ. ա. 2։ [16] Յայտ. ԺԳ. 7։ [17] Յայտ. Ժա. 18։ ԺԵ. 4։ [18] Նեհ. թ. 6։ Սոփ. լգ. 6։ Ածխ. 8։ Ասղ. 5, 6։ Գործ. ԺԳ. 15։ ԺԵ. 24։ [19] Եսայ. իա. 9։ Երէմ. Ծա. 8։ Յայտ. ԺԸ. 2։

թանանոցին Հարքեցրուց իրան պոռնկութեան բարկութեան Հարբեցնող գինուցն։

9 Եւ մին ուրիշ երրորդ հրեշտակ էր գալիս նորանց ետեւէն՝ եւ մեծ ձայնով ասումէր. ով որ երկրպագութիւն արաւ գազանին եւ նորա պատկերին, եւ կամ նորա նշանի դրոշմն առաւ իրան ճակատն կամ իրան ալ ձեռին վերայ[20],

10 Նոյնպէս Աստուծոյ բարկութեան բաժակին (եաօ՝ գն) պիտի խմէ[21] որ առանց խառնուելոյ թափուած[22] նորա բարկութեան բաժակի մէջն[23]. եւ կրակով եւ ծծումբով (քոքուրդով)[24] պիտի տանջուի Աստուծոյ եւ գառի առաջին[25]։

11 Եւ նորանց ծուխն վէր կելլի յաւիտեանս յաւիտենից[26]. եւ ցերեկ եւ գիշեր Հանգիստ չունին նորանք՝ որ երկրպագութիւն արին գազանին՝ եւ նորա պատկերին. եւ ով որ էլ նորա նշանն եւ անունն ընդունի։

12 Յստակ է սրբերի համբերութիւնն[27]. նորանք որ Աստուծոյ պատուիրանքներն, եւ Յիսուսի Հաւատքն պահումեն[28]։

13 Եւ երկնքից ձայն լսեցի որ ասումէր ինձ. գրիր, երանի են մեռնելներին[29] որ Տիրոջ շնորհով (մեռան)[30]. Հոգին էս է ասում. պատճառն որ իրանց աշխատանքներից Հանգիստ առին[31], բայց իրանց գործքերն գնացին իրանց ետեւէն։

14 Եւ տեսի՝ եւ ահա սպիտակ ամպ, եւ (մին) նստած էր ամպի վերայ որդի մարդոյ նման[32], եւ նորա գլխին վերայ ոսկի պսակ[33], եւ իրան ձեռումն սուր գերանդի (ծեծ օլաճ) ունէր։

15 Եւ ուրիշ հրեշտակ էր դուրս գալիս երկնքից[34], մեծ ձայնով աղաղակումէր՝ եւ ասում. դու որ ամպի վերայ նստած ես՝ ուղարկիր քո գերանդիդ՝ եւ հնձիր[35], ինչու որ հնձի ժամանակն եկաւ, եւ երկրի հունձքն հասել է[36]։

16 Եւ նա՝ որ ամպի վերայ նստած էր՝ վէր ձգեց իրան գերանդին երկրի վերայ, եւ հնձումէր երկրի ամէն բնակիչներին։

17 Եւ ուրիշ հրեշտակ էլ դուրս էր գալիս էն տաճարից՝ որ երկնքումն (է), եւ սայ էլ սրած գերանդի ունէր։

18 Եւ ուրիշ հրեշտակ էր դուրս գալիս սեղանից՝ որ իշխանութիւն ունէր կրակի վերայ[37], եւ մեծ ձայնով աղաղակեց դէպի էն հրեշտակն՝ որ էն սրած գերանդին ունէր՝ եւ ասումէր. ուղարկիր քո սուր գերանդիդ՝ եւ երկրի այգոյ (քեռպէ) ողկոյզներն քաղիր, ինչու որ դորա միջն խաղողն հասել է[38]։

19 Եւ հրեշտակն իրան գերանդին ձգեց երկրի վերայ, եւ նորա խաղողն քաղումէր, եւ քցում Աստուծոյ մեծ հնձանի մէջն[39]։

20 Եւ հնձանն կոխվեցաւ[40] քաղաքի դուրս կողմանն[41], եւ արիւն

[20] Ցայտ. ժգ. 14. 15, 16։ [21] Սաղմ. հե. 8։ Եսայ. նա. 17։ Երեմ. իե. 15։ [22] Ցայտ. ժբ. 6։ [23] Ցայտ. ժգ. 19։ [24] Ցայտ. ժԹ. 20։ [25] Ցայտ. ի. 10։ [26] Եսայ. կդ. 10։ Ցայտ. ժԹ. 3։ [27] Ցայտ. ժգ. 10։ [28] Ցայտ. ժբ. 17։ [29] Թեսաղ. գ. 1, 2։ Ցայտ. ի. 6։ [30] ա Կորնթ. ժե. 18։ աթես. գ. 16։ [31] բ Թես. ա. 7։ Եբր. գ. 9, 10։ Ցայտ. զ. 11։ [32] Եզեկ. ա. 26։ Դան. է. 13։ Ցայտ. ա. 13։ [33] Ցայտ. զ. 2։ [34] Ցայտ. ժգ. 17։ [35] Ցաքե. գ. 13։ Մարկ. ժգ. 39։ [36] Երեմ. նա. 33։ Ցայտ. ժգ. 12։ [37] Ցայտ. ժզ. 8։ [38] Ցաքե. գ. 13։ [39] Ցայտ. ժԹ. 15։ [40] Եսայ. կգ. 3։ Ողբ. ա. 15։ [41] Ցայտ. ժա. 8։ Եբր. ժգ. 12։

*էր գուրս գալիս հնձանիցն մինչեւ թիւնն հասցար եւ վեց հարիւր ասձիոյ սանձքն[42]. եւ նորա երկարու- պարկեզ (յանդէպ) (էր)։*

## ԳԼ · ԺԱ

*1 Վերջին եօթն պատուհասքն բանած ունող եօթն հրեշտակներըն։ 3 Գազանին յաղթողներն երգեն։ 7 Ասուածոյ բարկութենով լիքն եօթն ոսկէ սկաւառակներըն։*

1 Եւ մին ուրիշ մեծ եւ զար- մանալի նշան տեսի երկինքումն[1]. եօթն հրեշտակ՝ որ վերջին եօթն պատու- հասըն բռնած ունէին[2]. ինչու որ Ասուածոյ բարկութիւնն նորանցով էր կատարվում[3]։

2 Եւ տեսի մին ապակոյ (շո- շայի) նման ծով[4] կրակի հետ խառ- նած[5]. եւ նորանք որ յաղթեցին գազանին՝ եւ նորա անունի համա- րին՝ եւ նորա պատկերին՝ եւ նորա թուոյն[6], նորանք կանգնած էին էն ապակոյ (շօշայի) ծովի վերայ, եւ Ասուածոյ քնարներըն ունէին[7]։

3 Եւ Մովսէսի երգըն եւ գառի երգըն երգում էին Ասուածոյ առա- ջին[8], ասելով. Մեծ եւ զար- մանալի են քո գործքերդ՝ Տէր Ասուած ամենակարող[9]. արդար եւ ճշմարիտ են քո ճանապարհներդ, ով ամէն հեթանոսների թագա- ւորդ[10]։

4 Եւ ո՞վ (է) որ քեզանից չը- վախենայ՝ ով Տէր, եւ քո անունդ փառաւորէ[11]. պատճառն որ մէնակ դուս ես սուրբ եւ արժանաւոր եր- կրպագութիւն առնելոյ. ինչու որ ամէն հեթանոսներն պիտի գան եւ քո առաջիդ երկրպագութիւն անեն՝ ով Տէր, երբոր քո արդարութիւնդ կը յայտնըվի[12]։

5 Եւ սրանից ետեւ տեսի՝ եւ վկայութեան խորանի տաճարն՝ որ երկինքումն էր՝ բացվաւ[13]։

6 Եւ եօթն հրեշտակ էին դուրս գալիս՝ որ (էն) եօթն պատուհասըն ունէին[14], եւ տաճարումն մաքուր եւ պայծառ կտաւ էին հագած, եւ ծը- ծերի մօտովն ոսկէ գօտիկներ կա- պած[15]։

7 Եւ էն չորս կենդանիներից մինն էս եօթն հրեշտակներիս եօ- թըն ոսկէ սկաւառակ (ԼՈՄ) տուաւ Ասուածոյ բարկութենով լիքն[16] որ նա կենդանի է յաւիտեանս յաւի- տենից[17]։

8 Եւ տաճարն[18] լցվաւ Ասուա- ծոյ փառաց՝ եւ նորա զօրութեան ծխովովն[19]. եւ ոչ ով կարող չէ մտնել տաճարի մէջն՝ մինչեւ էն եօթն հրեշտակների եօթն պատու- հասներն կատարվին։

---

[42] Յայտ. ժԹ. 14։ [1] Յայտ. ԺԲ. 1, 3։ [2] Յայտ. Ժզ. 1 [ա]. 9։ [3] Յայտ. Ժզ. 10։ [4] Յայտ. գ. 6։ [ա]. 18։ [5] Մատթ. գ. 11։ [6] Յայտ. Ժզ. 15, 16, 17։ [7] Յայտ. է. 8։ Ժզ. 2։ [8] Եւթ. Ժե. 1։ ր Օրէն. լ. 30։ Յայտ. Ժզ. 3։ [9] ր Օրէն. իբ. 4։ Ովս. ՃԺ ա. 2։ Զեք. 14։ [10] Յաղ. Ճխե. 17։ Ովսէ. Ժզ. 9։ Յայտ. Ժզ. 7։ [11] Եւթ. Ժե. 14, 15, 16։ Երէ. Ժ. 7։ [12] Եսայ. կզ. 22։ [13] Թուոց. ա. 50։ Յայտ. Ժա. 19։ [14] Վայր. 1։ [15] Եւթ. իր. 6 8։ Եզեկ. խդ. 17, 18։ Յայտ. ա. 13։ [16] Յայտ. դ. 6։ [17] ա Թագ. ա. 9։ Յայտ. դ. 9։ Ժ. 6։ [18] Եւթ. Ե. 34։ գ Թագ. ը. 10։ ր Մնաց. է. 14։ Եսայ. զ. 4։ [19] ր Թագ. ա. 9։

## ԳԼ. ԺՋ.

1 Հրեշտակները թափուելն են եօթն սկաւառակներին որ Աստուծոյ բարկութեանն լեր են. եւ կերպ կերպ պատուհասներ կըլլեին մարդկանց վրայ։ 15 Քրիստոս գողի նման կըգայ։ երանի՛ նորանց որ արթուն կ՚ենին։

1 Եւ մեծ ձայն լսեցի տաճարէին՝ որ ասումէր են եօթն հրեշտակներին[1]. գնացէ՛ք՝ եւ եդ եօթը ըն սկաւառակները գ (Աստուծոյ) որ Աստուծոյ բարկութեանն լեր են՝ թափեցէ՛ք երկրի վրայ[2]։

2 Եւ առաջին հրեշտակն գնաց՝ եւ իրան սկաւառակն (Աստուծ) թափեց երկրի վրայ[3], եւ չարաչար պատուհասներ եղան մարդկանց վրայ[4], որ գազանի դրոշմն ունէին[5], եւ նորա պատկերին երկրպագութիւն արին[6]։

3 Եւ երկրորդ հրեշտակն իրան սկաւառակն (Աստուծ) թափեց ծովին մէջ[7], եւ ջուրին դարձան մեռածի արիւն[8]. եւ ամէն կենդանի շունչ՝ որ ծովումն էր՝ սատակվեցաւ[9]։

4 Եւ երրորդ հրեշտակն իրան սկաւառակն (Աստուծ) թափեց գետերի եւ ջուրի աղբիւրներուն վրայ[10], եւ եղաւ արիւն[11]։

5 Եւ ձայն լսեցի (ջուրի) հրեշտակին՝ որ ասումէր. արդար է նա[12] որ էր եւ է, եւ սուրբ (է) իրան դատաստանները,

որ եսպէսի դատաստան արաւ[13]։

6 Պատճառն որ են ամբարիշտներն[14] սրբոցին եւ մարգարէներուն արիւնը թափեցին[15]. ներհամար արիւն տուաւ նորանց խմել՝ ինչպէս որ արժան էր[16]։

7 Եւ էն սեղանիէն (ձայն) լսեցի՝ որ ասումէր. իրաւի է՝ Տէր Աստուած ամենակարող[17], արդար եւ ճշմարիտ են քո դատաստանները դ[18]։

8 Եւ չորրորդ հրեշտակն իրան սկաւառակը (Աստուծ) թափեց արեգական վրայ[19]։

9 Եւ արեվուս նորան որ մարդկանց խաչէ կրակով[20]. եւ սաստիկ տաքութիւն եղաւ մարդիկը, եւ Աստուծոյն հայհոյեցին՝ որ էս պատուհասներիս վրայ իշխանութիւն ունի[21], եւ չապաշխարեցին[22] որ փառք տան նորան[23]։

10 Եւ հինգերորդ հրեշտակն իրան սկաւառակը (Աստուծ) թափեց գազանի աթոռին վրայ[24]. եւ նորա թագաւորութիւնն խաւար եղաւ[25]. եւ իրանց լեզուները ծամեցին ցաւի տանջանքից[26]։

11 Եւ երկնքի Աստուծոյն հայհոյեցին իրանց ցաւերի[27] եւ դառն տանջանքի պատճառովին[28]. եւ չապաշխարեցին իրանց գործքերից[29]։

12 Եւ վեցերորդ հրեշտակն իրան սկաւառակը (Աստուծ) թափեց մեծ

[1] Ցայտ. ԺԶ. 1։ [2] Ցայտ. Ժգ. 10։ ԺԶ. 7։ [3] Ցայտ. Ը. 7։ [4] Եփ. Թ. 9–11։ [5] Ցայտ. Ժգ. 16, 17։ [6] Ցայտ. Ժգ. 14։ [7] Ցայտ. Ը. 8։ [8] Եփ. Է. 17. 20։ [9] Ցայտ. Ը. 9։ [10] Ցայտ. Ը. 10։ [11] Եփ. Է. 20։ [12] Ցայտ. ԺԶ. 3։ [13] Ցայտ. ա. 4, 8։ գ. 8։ ԺԸ. 17։ [14] Ա Պետ. իգ. 34, 35։ Ցայտ. Ժգ. 15։ [15] Ցայտ. ԺԸ. 18։ ԺԸ. 20։ [16] Եսայ. խթ. 26։ [17] Ցայտ. ԺԶ. 3։ [18] Ցայտ. Ժգ. 10։ ԺԹ. 10։ ԺԹ. 2։ [19] Ցայտ. Ը. 12։ [20] Ցայտ. Թ. 17, 18։ ԺԹ. 18։ [21] Ա Պետ. 11, 21։ [22] Դան. Է. 22. 23։ Ցայտ. Թ. 20։ [23] Ցայտ. ԺԸ. 13։ ԺԹ. 7։ [24] Ցայտ. Ժգ. 2։ [25] Ցայտ. Թ. 2։ [26] Ցայտ. ԺԸ. 10։ [27] Ա Էր. 9։ Ա Պետ. 21։ [28] Ա Էր. 2։ [29] Ա Էր. 9։

եփրատ գետին վերայ[30], եւ նորա ջրերն ցամաքեցան[31] որ արեւելքի թագաւորներին համար ճանապարհ պատրաստվի[32]։

13 Եւ տեսի որ վիշապի բերանիցն՝ եւ գազանի բերանիցն[33] եւ սուտ մարգարէի բերանիցն[34] երիք պիղծ հոգի էին դուրս գալիս գորտի նման[35]։

14 Որոնք որ նորանք դիւական հոգիք էին[36] որ նշաններ էին անում[37], եւ գնում էին քոլոր երկրի թագաւորներուն մօտ[38] որ նորանց ժողովին կռվելոյ համար, ամենակարող Տէրի մեծ օրումն[39]։ (պատճառն որ էսպէս ասաց Տէրն։)

15 Ինչա գողի նման եմ գալիս[40], երանի՛ նորանց որ արթուն լինին, եւ իրանց շորերըն պահպանեն· որ մերկ մին չըգան, եւ իրանց ամօթանքն չերեւի[41]։

16 Եւ կըժողովեմ՝ նորանց մինաեղ՝ որ եբրայեցերէն արմաքեդօն է կոչվում[42]։

17 Եւ եօթներորդ հրեշտակն իւրան սկաւառակըն (եասէն) թափեց օդի վերայ· եւ մեծ ձայն դուրս եկաւ երկնքի (տաճարիցն) եւ աթոռիցն՝ որ ասում էր թէ՝ Եղաւ[43]։

18 Եւ փայլատակմունք եւ ձայներ եւ որոտմունք էյան[44]· եւ մեծ շարժմունք էյաւ[45] որ էնպէսի մեծ շարժմունք չի էյած սկըզբիցն՝ քանի որ մարդիք երկրի վերայ հաստատվել են[46]։

19 Եւ մեծ քաղաքն երիք կատոր եյաւ[47], եւ ազգերի քաղաքներն վեր ընկան· եւ մեծ բաբիլոնն յիշվեցաւ Աստուծոյ առաջին[48], որ իրան սրտմտութեան գինոյ բաժակըն (եաքն) նորան տայ[49]։

20 Եւ ամէն կղզիներն (ապառնեքն) փախան, եւ սարերն միջիցն ատնըվեցան[50]։

21 Եւ երկնքիցն մեծ մեծ կարկտուտ էր վեր գալիս մարդկանց վերայ, մինն մին տասնդիվ կշռոյի չափով[51]· եւ մարդիք հայհոյեցին Աստուծոյն (երկնքումն)[52] էն կարկտուտ պատուհասի համար, ինչու որ մեծ եւ սաստիկ էր էն պատուհասն[53]։

## ԿԱ· ԺԱ

3 Որ կին որ ծիրանիներ եւ կարմիրներ է հագել, որ ոսկէ բաժակ ունի իրան էներում, գազանի վերայ նստած։ 5 Դա է մեծ բաբիլոնն եւ ամէն գարշելիների մայրն։ 9 Գազանի եօթն գլուխներին, 12 Եւ տասն եղջիւրներին մեկնութիւնըն։ 14 Գառ յաղթութիւնըն։ 16 Պոռնկին պատիժըն։

1 Եւ էն եօթն հրեշտակներիցն՝ նէյն՝ մինն եկաւ խօսեց ինձ հետ՝ եւ ասաց[1]· եկ Էատեղ՝ եւ քեզ ցոյց

[30] Ցայտ· ի· 14։ [31] Երեմ· ծ· 38։ Ծա· 36։ [32] Եսայ· խա· 2, 25։ [33] Ցայտ· ժբ· 3, 9։ [34] Ցայտ· ժի· 20։ ի· 10։ [35] ա Թագ· գ· 1, 2, 3։ [36] ա Տիմ· գ· 1։ Ցայ· գ· 15։ [37] բ Թես· բ· 9։ Ցայտ· ժգ· 13, 14։ ժի· 20։ [38] Գոյ· բ· 1։ [39] Ցայտ· ժէ· 14։ ժի· 19։ ի· 8։ [40] Պարխ· իգ· 43։ ա Թես· ե· 2։ բ Պետր· գ· 10։ Ցայտ· գ· 3։ [41] բ Կորնթ· ե· 3։ Ցայտ· գ· 4, 18։ [42] Ցայտ· ժի· 19։ [43] Ցայտ· խա· 6։ [44] Ցայտ· գ· 5։ ը· 5։ ժա 19։ [45] Ցայտ· ժա· 13։ [46] Դան· ժբ· 1։ [47] Ցայտ· ժգ· 8։ ժէ· 18։ [48] Ցայտ· ժբ· 5։ [49] Եսայ· ծա· 17, 22, 23։ Երեմ· խե· 15, 16։ Ցայտ· ժգ· 10։ [50] Ցայտ· զ· 14։ [51] Ցայտ· ժա· 19։ [52] Վէբ· 9· 11։ [53] Եզե· ի· 23–25։ [1] Ցայտ· խա· 9։

կըտամ[2] էն մեծ պոռնկի դատաստանըն[3], որ շատ ջրերի վերայ է նստում[4]։

2 Որ նորա հետ պոռնկվեցան երկրի թագաւորներն[5] եւ երկրի բնակիչներն նորա պոռնկութեան հարբեցնող գինովը հարբեցան[6]։

3 Ու ինձ հոգովը առաւ տարաւ անապատ (տեղ)[7]. եւ մին կին տեսի որ կարմիր գազանի վերայ նստած էր[8], եւ լիքն էր հայհոյութեան անունով[9]. եւ էն գազանն որ տեսի՝ եօթն գլուխ ունէր[10] եւ տասն եղջիւր[11]։

4 Ու էն կինն ծիրանիներ եւ կարմիրներ էր հագել[12], եւ ոսկով եւ մարգարիտով եւ պատուական ակունքներով զարդարված էր[13], եւ մին ոսկի բաժակ (Նոս) ունէր իրան ձեռնումն[14], որ լիքն էր գարշելի եւ պիղծ պոռնկութենով[15]։

5 Ու նորա ճակատումն գրված էր անունն՝ խորհուրդ[16], մեծ բաբելոնն[17] պոռնիկների եւ երկրի գարշելիների մայրն[18]։

6 Ու տեսի որ էն կինն հարբած էր[19] սրբերի արիւնովն[20] եւ Յիսուսի ամէն վկաների արիւնովն[21]. եւ երբոր տեսի նորան՝ մեծ զարմանքով զարմացայ։

7 Ու հրեշտակն ասաց ինձ. ինչու համար զարմացար. ես կասեմ քեզ էդ կնկան խորհուրդն, եւ էն գազանինն էլ՝ որ նորան վերկայած ունի. որ եօթն գլուխ ունի եւ տասն եղջիւր։

8 Գազանդ որ տեսիր՝ նա էր, եւ չէ, եւ պիտի դժոխքիցն դուրս գայ[22] եւ կորուստն գնայ[23]. եւ ամէնքն որ երկրի վերայ բնակված են՝ որ նորանց անունները գրված չէն կեանց գրքին մէջ աշխարհքի ստեղծագործութենիցն հետէ[24] կըզարմանան երբոր տեսնեն էդ գազանըդ որ էր, եւ չէ, եւ մեռ է[25]։

9 Ումտեղ է իմաստութիւնն՝ էն որ միտք ունի[26]. էն եօթն գլուխն՝ եօթն սարերն են որ կինն նորանց վերայ նստած է[27]. (եւ նորանք եօթն թագաւորներ են.) եւ եօթն թագաւոր որ էին,

10 Հինգն վեր ընկան, եւ մինն կայ, եւ մինն դեռ չի եկել. եւ երբոր գայ՝ մինչիչ ժամանակ ունի։

11 Ու գազանն որ էր, եւ չէ, նա էլ ութերորդն է. եւ էն եօթնիցն է, եւ պիտի կորուստն գնայ[28]։

12 Ու տասն եղջիւրներն որ տեսիր՝ տասն թագաւոր են[29]. որ դեռ թագաւորութիւն չեն առել, բայց պիտի հենց մին ժամի (սահմանի) չափ թագաւորի պես իշխանութիւն առնեն էն գազանի հետ։

13 Մորանք մին կամք ունեն, եւ իրանց զօրութիւնն եւ իշխանութիւնըն կըտան գազանին։

14 Ու կռիւ կանեն գառին հետ[30], եւ գառն կը յաղթէ նորանց, ինչու

---

[2] Ցայտ. ժզ. 19։ ժը. 16, 17, 19։ [3] Եսայ. դ. 4։ Ցայտ. ժԹ. 2։ [4] Երեմ. ծա. 13։ Ովսէ. 15։ [5] Ցայտ. ժը. 3։ [6] Երեմ. ծա. 7։ Ցայտ. ժգ. 8։ ժը. 3։ [7] Ցայտ. ժը. 6, 14։ [8] Ցայտ. ժը. 3։ [9] Ցայտ. ժգ. 1։ [10] Ովսէ. 9։ [11] Ովսէ. 12։ [12] Ցայտ. ժը. 12, 16։ [13] Դան. ժա. 38։ [14] Երեմ. ծա. 7։ Ցայտ. ժը. 6։ [15] Ցայտ. ժգ. 8։ [16] Բթխս. ը. 7։ [16] Ցայտ. ժա. 8։ ժգ. 8։ ժզ. 19։ ժը. 2, 10, 21։ [18] Ցայտ. ժը. 9։ ժԹ. 8։ [19] Ցայտ. ժը. 24։ [20] Ցայտ. ժգ. 15։ ժզ. 6։ [21] Ցայտ. ը. 9, 10։ ժս. 11։ [22] Ցայտ. ժա. 7։ ժգ. 1։ [23] Ցայտ. ժգ. 10։ Ովսէ. 11։ [24] Ցայտ. ժգ. 8։ [25] Ցայտ. ժգ. 3։ [26] Ցայտ. ժգ. 18։ [27] Ցայտ. ժգ. 1։ [28] Վէր. 8։ [29] Դան. է. 20։ Ջոէ. ա. 18, 19, 21։ Ցայտ. ժգ. 1։ [30] Ցայտ. ժզ. 14։ ժԹ. 19։

որ նորանց Տէրն է, եւ թագաւորքն երկրի թագաւորն[31]. եւ նորանք՝ որ նորա հետ են կոչված, ընտրված եւ հաւատացեալ[32]:

15 Եւ ասաց ինձ. Եդ ջուրդ որ տեսիր՝ որ տեղ որ պոռնիկն նստած էր[33], ժողովուրդներ են, եւ բազմութիւններ եւ ազգեր եւ լեզուներ[34]:

16 Եւ տասն եղջիւրներն՝ որ տեսիր գազանուն, նորանք (կրտեսանեն պոռնկին)[35] եւ կատեն նորան[36]. եւ նորա մսովինն կուտեն՝ եւ կրակով կայրեն նորան[37]:

17 Պատճառն որ Աստուած դրաւ նորանց սրտի մէջ՝ որ նորանք միով կամք ունենան, եւ որ իրանց թագաւորութիւնն տան գազանին[38], մինչեւ որ Աստուծոյ խօսքն կատարվի[39]:

18 Եւ կինն որ տեսիր՝ էն մեծ քաղաքն է[40], որ թագաւորութիւն է անում երկրի թագաւորութիւնների վերայ[41]:

## ԻԸ · ԺԵ

2 Մեծ բաբելոնն վէր կ'ընկնի: 4 Աստուծոյ ժողովուրդին հրաման կըլինի, որ նորա մեղքին դուրս գան: 9 Երկրի թագաւորներն, 11 վաճառականներն 17 Եւ նաւավարներն ողբ եւ սուգ կանեն նորա վերայ: 20 Սուրբերըն ուրախ կըլինեն էն մեծ քաղաքին վերայ՝ ինչու որ Աստուած նորա դատաստանն դատեց նորա վերայ:

1 Եւ էս բաներիցս ետեւ տեսի որ՝ մին ուրիշ հրեշտակ երկնքիցն վէր էր գալիս՝ որ մեծ իշխանութիւն ունէր[1], եւ երկիրն լուսաւորվեցաւ նորա փառքիցն[2]:

2 Եւ մեծ ձայնով աղաղակեց՝ եւ ասաց. վէր ընկաւ էն մեծ բաբիլոնն[3], եւ եղաւ դեւերի բնակութիւն՝ եւ ամէն պիղծ հոգիների կենալոյ տեղ[4], եւ ամէն անսուրբ եւ ատելի հոգիների բանտ[5]:

3 Պատճառն որ նորա պոռնկութեան գինով բարկութիւնիցն խմեցին ամէն ազգերն եւ երկրի թագաւորներն՝ որ նորա հետ պոռնկվեցան[6]. եւ երկրի վաճառականներն հարբուսատցան նորա փափկութեան առատութիւնիցն[7]:

4 Եւ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասում էր. դուրս եկէք դորա միջիցն իմ ժողովուրդ, որ մասնակից չըլինիք դորա մեղացն, եւ (որ) դորա պատուհասըն չընդունիք[8].

5 Ինչու որ դորա մեղքերն հասին մինչեւ երկինքն[9]. եւ Աստուած յիշեց դորա ամբարշտութիւնները[10]:

6 Եւ հատուցումն արէք դորան՝ ինչպէս որ դա հատուցումն տուաւ ձեզ, եւ թող դա իրան գործած-

---

[31] բ Օբդ. ժ. 17: ա Ցխ. ղ. 15: Ցայտ. ԺԶ. 16: [32] Երէմ. ծ. 44, 45: Ցայտ. Ժգ. 4: [33] Եսայ. ը. 7: Վէր. 1: [34] Ցայտ. Ժգ. 7: [35] Երէմ. ծ. 41, 42: Ցայտ. Ժզ. 12: [6] Եզեկ. Ժզ. 37–44: Ցայտ. Ժը. 16: [37] Ցայտ. Ժը. 8: [38] բ Թես. բ. 10: [39] Ցայտ. ժ. 7: [40] Ցայտ. Ժզ. 19: [41] Ցայտ. Ժբ. 4: [1] Ցայտ. ԺԷ. 1: [2] Նէխ. խգ. 2: [3] Եսայ. Ժգ. 19: իա. 9: Երէմ. ծա. 8: Ցայտ. Ժգ. 8: [4] Եսայ. Ժգ. 21: իա. 8: լդ. 14: Երէմ. ծ. 39: ծա. 37: [5] Եսայ. Ժգ. 23: լդ. 11: Մատ. ե. 2, 3: [6] Ցայտ. Ժգ. 8: ԺԷ. 2: [7] Վայր. 11, 15: Եսայ. խե. 15: [8] Եսայ. խը. 20: ծբ. 11: Երէմ. ծ. 8: ծա. 6, 45: բ Կորնթ. ղ. 17: [9] Դանիէլ. Ժը. 20, 21: Երէմ. ծա. 9: Ցածխ. ա. 2: [10] Ցայտ. Ժզ. 19:

ներբ չափովն երկու պատիկ առնէ[11]. եւ էն բաժակըն (ԼոսՊն) որ դա լցրուց (ձեզ)[12], լցրէք դորա համար երկու չափով[13]:

7 Յե որչափ որ իրան փառաւորեց եւ փափկացաւ, էնչափ սուգ եւ տանջանք հատուցուցէն տուէք դորան[14]. ինչու որ իրան սրտումն ասումէր՝ Ես (միշտ) թագուհի պիտի նստիմ՝ եւ որբեւէրի չեմ լինիլ. (եւ էլ սուգ չեմ տեսնիլ[15]):

8 Ւրահամար հենց մին օրումն պիտի դան դորա վերայ պատահաս՝ մահ, եւ սուգ, եւ սով[16], եւ կրակով պիտի այրվի[17]. ինչու որ հզոր է Տէր Աստուածն որ դորա դատաստանըն արաւ[18]:

9 Յե լաց եւ կոծ կանեն դորա վերայ[19] երկրի թագաւորներն՝ որ դորա հետ պոռնկվեցան եւ խաղացին[20]. եւ ոդը կանեն երբոր տանջանքով դորա այրվելոյ ծուխըն կըտեսնեն[21]:

10 Հեռու կըկանգնեն դորա տանջանքի վախից՝ եւ կասեն. վայ քեզ՝ մեծ քաղաք բաբիլըն, զօրաւոր քաղաք[22]. ինչու որ հենց մին ժամումն (սահմռոնմն) քո դատաստանդ եկաւ հասաւ[23]:

11 Յե երկրի վաճառականներն ոդը եւ սուգ կանեն քեզ վերայ, ինչու որ իսկի մինն չըկայ որ նորանց բեռներըն առնէ[24]:

12 Յե քեզանից էլ շահ չի՛ լինիլ ոսկոյ եւ արծաթի եւ պատուական ակունքներե՛ւ մարգարիտի եւ բեհեզի եւ ծիրանի եւ ոսկեթելի եւ կարմիր որդի (ջրմուղի), եւ ամէն կերպ խնկի փայտի՝ եւ ամէն փղի ոսկորից շինած ամաններ, եւ ամէն պղնձից եւ պղինձից եւ երկաթից եւ կիճ (Ղրմա) քարից շինած ամաններ[25]:

13 Յե կինամոն (պարչին) եւ ամէն կերպ խունկ եւ իւղ եւ կընդրուկ, եւ գինի եւ ձէթ, եւ շաղամաղձ ալիւր եւ ցորեան, եւ ամէն (կերպ) ապրանք, արջառ եւ ոչխար, եւ ձիանք եւ կառքեր (պրապանը)՝ էն որ մարդկանց մարմիններըն եւ հոգիներըն կըվաճառէ[26]:

14 Յե քո անձիդ ամէն ցանկութիւնն գնաց քեզանից, եւ ամէն լուսով փայլող վայելչութիւնն, պատարան եւ գիրացածն եւ սպիտակն գնաց քեզանից, եւ էլ չես գանիլ դորան:

15 (Յե) ամէն վաճառականներն՝ որ սրանցով հարստացան՝ (քեզանից) հեռու կըկենան քո տանջանքի վախից լաց եւ սուգ անելով[27]:

16 Կասեն. վայ վայ (քեզ) մեծ քաղաք, որ բեհեզներ եւ ծիրանի եւ կարմիր որդ (ջրմուղ) էիր հագած. եւ ոսկով եւ ականի քարերով եւ մարգարիտով (զարդարված)[28]:

17 Ինչու որ հենց մին ժամի մէջ էդ չափ մեծութիւնդ պահասեցաւ[29]. եւ ամէն նաւավարներն եւ էն ամէնքն որ տեղ տեղ նաւով են գնում, եւ նորանք որ նաւի մէջ են գործում, եւ էն ամէնքն որ ուռկան (Ռօա) են բանացնում՝ հեռու կը-

[11] Սաղմ. ճէ. 8: Երէմ. ծ. 15, 29: Ծա. 24, 49: բ Տիմ. դ. 14: Ցայտ. ժդ. 10: [12] Ցայտ. ժդ. 10: [13] Ցայտ. ժզ. 19: [14] Եսէի. իբ. 2: [15] Եսայ. խէ. 7, 8: Սափոն. բ. 15: [16] Եսայ. խէ. 9: Ալայր. 10: [17] Ցայտ. ժէ. 16: [18] Երէմ. ծ. 34: Ցայտ. ժա. 17: [19] Երէմ. ծ. 46: [20] Եսէի. իզ. 16, 17: Ցայտ. ժէ. 2: Ալէր. 3: [21] Ալայր. 18: Ցայտ. ԺԹ. 3: [22] Եսայ. խա. 9: Ցայտ. ժդ. 8: [23] Ալայր. 17, 19: [24] Եսէի. իէ. 27–36: Ալէր. 3: [25] Ցայտ. ժէ. 4: [26] Եսէի. իէ. 13: [27] Ալէր. 3, 11: [28] Ցայտ. ժէ. 4: [29] Ալէր. 19:

կանգնեն լաց լինելով[30],

18 Եւ կաղաղակեն՝ ձորա այրվելոյ ծուխըն տեսնելով (եւ) կասեն[31], ո՞ր (քաղաք) նման է ես մեծ քաղաքիս[32]:

19 Եւ հող կը֊ձգեն իրանց գլխներին վերայ, եւ մեծ ձայնով կաղաղակեն եւ լաց եւ սուգ անելով կասեն. վայ վայ մեծ քաղաք, որ (քեզանով) էինք հարստանում ամէնքս, որ ծովի վերայ նաւեր ունենինք քո պատուականութեան համար[33]. ի՞նչպէս մի ժամի (ահաւոր) մէջ ապականված կործանվեցար[34]:

20 Ուրախ եղէք նորա վերայ երկինք՝ եւ սուրբ առաքեալք եւ մարգարէք[35], ինչու որ Աստուած ձեր դատաստանն դատեց դորա վերայ[36]:

21 Եւ մի զօրաւոր հրեշտակ՝ մի քար առաւ մեծ ջաղացաքարի պէս՝ եւ ձգեց ծովի մէջ ասելով. Էսպէս պիտի սաստիկ վերջնկի բաբիլոնն մեծ քաղաքն[37], եւ էլ չի՛ գտնվիլ[38],

22 Եւ էլ քնար ածողների, եւ երաժիշտների եւ արուեստականների, եւ փող փչողների եւ թմբուկի ձայն չը֊պիտի լսվի քո միջումդ[39].

23 Եւ ճրագի լոյս եւ ջաղացի ձայն էլ խակի չը֊պիտի երեւի քո միջումդ[40]. եւ փեսայի ձայն եւ հարսի ձայն էլ չը֊պիտի լսվի քեզանում[41], եւ ոչ էլ քո վաճառականներդ երկրի (մարդկանց) մեծաւորներ եւ փառաւորները (կը լինին). որ նոքանք քեզանով էին ուրախանում, պարծենում[42]. ինչու որ քո դեղատուութեան կախարդութիւնովն ամէն ազգերն մոլորվեցան[43]:

24 Եւ քեզանում գտաւ մարգարէների եւ սրբերի եւ էն ամէնի արիւն[44] որ կենդանեաց երկրումն դրված են[45]:

## ԳԼ· ԺԹ·

1 Երկրորդումն Աստուծոյն փառք կըտան՝ որ մեծ պոռնիկըն դատեց, եւ իրան ծառաների արիւնի վրէժըն խնդրեց: 7 Գառի հարսանիքն: 10 Հրեշտակն չի՛ թողել որ երկրպագութիւն անէ: 17 Թռչուններին կոչվումն՝ որ ուտեն մարդկանց եւ անասունների մարմիններըն:

1 Եւ սրանից հետու մեծ բազմութեան ձայն լսեցի երկինքումն՝ որ ասում էին[1]. ալէլուիա, փրկութիւն եւ փառք եւ պատիւ եւ զօրութիւն մեր Աստուծոյն[2]:

2 Ինչու որ նորա դատաստանները ճշմարիտ եւ արդար են. որովհետեւ էն մեծ պոռնիկըն դատեց իրան պոռնկութեանումն[3], եւ իրան ծառաների արիւնի վրէժըն խնդրեց նորա ձեռքից[4]:

3 Եւ նորից երկրորդ անգամ էլ

[30] Եսայ. իգ· 14: Եզէկ. իէ· 29: [31] Եզէկ. իէ· 30, 31: Վեր· 9: [32] Ցայտ· ժգ· 4: [33] Ցեւս· է· 6: ա Թագ· գ· 12: Ճոբ· բ· 12: Եզէկ. իէ· 30: [34] Վեր· 8: [35] Եսայ· խգ· 23: Ժէ· 13: Երեմ. ծա· 48: [36] Ղուկ. ժա· 49, 50: Ցայտ· ժէ· 2: [37] Երեմ. ծա· 64: [38] Ցայտ· ժբ, 8: ժզ· 20: [39] Եսայ· իգ· 8: Երեմ. է· 34: ժզ· 9: իե· 10: Եզէկ. իգ· 13: [40] Երեմ. իե· 10: [41] Երեմ. է· 34: ժզ· 9: իե· 10: լգ· 11: [42] Եսայ· խգ· 8: [43] գ Թագ· ի· 22: Նաւում. գ· 4: Ցայտ· ժէ· 2, 5: [44] Ցայտ· ժէ· 6: [45] Երեմ. ծա· 49: [1] Ցայտ· ժա· 15: [2] Ցայտ· գ· 11: է· 10, 12: ժբ· 10: [3] Ցայտ· ժէ· 3: ժգ· 7: [4] բ Օրէն· լբ· 43: Ցայտ· գ· 10: ժբ· 20:

(օրհնեցին) եւ ասացին, ալէլուիա. եւ նորա ծուխն դուրս էր գալիս յաւիտեանս յաւիտենից[5]:

4 Եւ քսան եւ չորս երէցներն եւ չորս կենդանիքներն վէր ընկան՝ եւ երկրպագութիւն արին Աստուծոյն՝ որ իրան փառաց աթոռի վերայ նստած էր՝ եւ ասացին[6]. ամէն՝ ալէլուիա[7]:

5 Եւ աթոռիցն ձայն էր դուրս գալիս՝ ասելով. օրհնեցէք Աստուծոյն՝ նորա ամէն ծառաներդ[8], եւ դուք էլ որ նորանից վախումէք՝ փոքրներդ եւ մեծերդ[9]:

6 Եւ մեծ բազմութեան ձայն լսեցի՝ շատ ջրերի ձայնի պէս, եւ սաստիկ որոտմունքի ձայնի նման, որ մինէլ ասումէր[10]. ալէլուիա, զատ ճառն որ ամենակարող Տէր Աստուածն թագաւորեց[11]:

7 Ուրդահնք եւ ուրախ լինինք, եւ փառք տանք նորան. ինչու որ գառի հարսանիքն եկաւ (հասաւ). եւ կինն՝ (նորա հարսն) իրան պատրաստեց[12]:

8 Եւ տըվվաւ նորան՝ որ սպիտակ սուրբ եւ լուսով փայլող բեհեզ հագնի[13]. ինչու որ բեհեզն սրբոց արդարութիւնն է[14]:

9 Եւ (էն երէցներից մինն ասումէր ինձ՝ գրիր էդ, երանելի՛ են էն ամէնքն՝ որ կանչված են գառի հարսանիքի ընթրիսն[15]. (եւ ասաց ինձ՝ էս են Աստուծոյ ճշմարիտ խօսքերն:)

10 Եւ ես վէր ընկայ նորա առաջեն որ երկրպագութիւն անեմ նորան[16]. եւ ասաց ինձ. զգոյշ կաց՝ մի ընկներ իմ առաջիս, ինչու որ ես էլ ծառայ ընկեր եմ քեզ հետ եւ քո եղբայրներին հետ[17], որ Յիսուսի Քրիստոսի վկայութիւնն ունին[18]. մէնակ Տէր Աստուածոյն երկրպագութիւն արա. (պատճառն որ էդ տեսիլքդ եւ մարգարէութեան հոգի Յիսուսի հաստատութիւնն է.) ինչու որ Յիսուսի վկայութիւնն սուրբ հոգուին է, որ մարգարէնեբումն էր:

11 Եւ տեսի երկինքըն բացված[19], եւ ահա մին սպիտակ ձի. (եւ) նա՝ որ նորա վերայ հեծած էր[20], (կոչվումէր) հաւատարիմ եւ ճշմարիտ[21], եւ արդարութեամբ է դատաստան անում՝ եւ կռվում[22]:

12 Եւ նորա աչքերն կրակի բոցի (պէս էր)[23], եւ նորա գլխի վերայ շատ պսակներ կար[24]. եւ անուն ունէր գրած, որ նորան իսկի մինն չէ գիտում՝ բայց միայն ինքն[25]:

13 Եւ իրան վերայ արիւնով ներկած շոր էր քցել[26]. եւ նորա անունն Աստուծոյ բան (խօսք) էր կոչվում[27]:

14 Եւ երկինքի զօրավարներն եւ զօրքերն՝ նորա հետեւէն գնում էին սպիտակ ձիով[28] սուրբ եւ սպիտակ բեհեզ հագած[29]:

---

[5] Ներմ. կդ. 10: Ցայտ. ժգ. 11: Ժը. 9, 18: [6] Ցայտ. դ. 4, 6, 10: Ե. 14: [7] Ա Պտոց. ժգ. 36: Նէեմ. ե. 13: Ը. 6: Ցայտ. ե. 14: [8] Սաղմ. ճկդ. 1: ճկե. 1: [9] Ցայտ. ժա. 18: ի. 12: [10] Եսայ. ա. 24: խգ. 2: Ցայտ. ժգ. 2: [11] Ցայտ. ժա. 15, 17: Ժբ. 10: իա. 22: [12] Մատթ. իբ. 2: իե. 10: բ Կորնթ. ժա. 2: Եփես. ե. 32: Ցայտ. իա. 2, 9: [13] Սաղմ. խե, 13, 14: Եսայ. ժգ. 10: Ցայտ. գ. 18: [14] Սաղմ. ճկբ. 9: [15] Մատթ. իբ. 2, 3: Ղուկ. ժգ. 15, 16: [16] Ցայտ. իբ. 8: [17] Գործ. ժ. 26: ժգ. 14, 15: Ցայտ. իբ. 9: [18] ա Ցովհ. ե. 10: Ցայտ. ժբ. 17: [19] Ցայտ. ժե. 5: [20] Ցայտ. չ. 2: [21] Ցայտ. գ. 14: [22] Եսայ. ժա. ն: [23] Ցայտ. ա. 14: բ. 18: [24] Ցայտ. չ. 2: [25] Ցայտ. բ. 17: Ա Յոան. 16: [26] Եսայ. կդ. 2, 3: [27] Ցովհ. ա. 1: ա Ցովհ. ե. 7: [28] Ցայտ. ժգ. 20: [29] Մատթ. իբ. 3: Ցայտ. դ. 4: է. 9:

15 Այլ նորա բերանից սրած սուր էր դուրս գալիս, որ նորանով զարկէ ազգերին[30]. եւ նա երկաթէ գաւազանով կը հովուէ նորանց[31]. եւ ամենակալող Աստուծոյ բարկութեան սրատաճառութեան գինոյ հնձան նըն նա պիտի կոխէ[32]:

16 Այլ իրան կապոյի վերայ, եւ իրան անդամներին վերայ դիր ունէր գրած[33]. Թագաւորների Թագաւոր՝ եւ տէրերի Տէր[34]:

17 Այլ ուրիշ հրեշտակ տեսի՝ որ կանգնած էր արեգական վերայ, եւ մեծ ձայնով աղաղակեց եւ ամէն թռչուններին՝ որ երկնքի մէջ թռչումեն՝ ասաց[35]. եկէք հաւաքուեցէք մեծ Աստուծոյ ընթրիքին[36]:

18 Այլ կերէք Թագաւորների մարմիններըն, եւ ձիանքի՝ եւ նոյանց վերայ ամէն հնձածներնի մարմիններըն, եւ ազատներնի եւ ծառաներնի՝ մեծի եւ փոքրի մարմիններըն[37]:

19 Այլ տեսի գազանին եւ երկրի Թագաւորներին եւ նորանց զօրքերին միմեանց հետ պատերազմ անելու համար՝ որ կռիւ անեն նորա դէմ՝ որ էն սպիտակ ձին հնձել էր՝ եւ նորա զօրքերին դէմ[38]:

20 Այլ գազանն բունըվեցաւ, եւ նորա հետ սուտ մարգարէն էլ՝ որ նշաններ էր անում նորա առաջին, եւ նորանցով մոլորացուց նորանց[39]՝ որ գազանի դրոշմըն առին, եւ նոյանց էլ՝ որ երկրպագութիւն արին նորա պատկերին[40]. եւ նորանց էնպէս կենդանի[41] քցեցին կրակի լճի մէջն՝ որ ծծմբով (խոյոյթով) այրվում է[42]:

21 Այլ ուրիշներն մեռան էն ձիոյ վերայ նստողի սրից, որ նորա բերանից սուր էր դուրս գալիս[43]. եւ ամէն թռչուններն[44] կըշտացան նոյանց մարմիններից[45]:

## ԳԼ · Ի

2 Սատանան կապվում է հազար տարի: 6 Առաջին յարութիւնն. երանի նորանց որ բաժին ունին նորա մէջն: 7 Սատանան մինէլ աբձակվելով՝ կըժողովէ Գոգըն եւ Մագոգն: 9 Սատանան կըքցվի կրակի եւ ծըծմբի ծովը: 12 Վերջի ամէն մարդկանց յարութիւնն:

1 Այլ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ վէր էր գալիս երկնքիցն, եւ դրժոխքի բանալիքըն ունէր, եւ մին մեծ շղթայ (պընճկէլ) իրան ձեռումն[1]:

2 Այլ էն առաջին վիշապին բռնեց՝ որ է բանսարկուն եւ սատանան, եւ նորան կապեց հազար տարի[2].

3 Այլ քցեց նորան գժոխքի անդունդն, եւ փակեց՝ եւ կնիք (Ջօհր) դրաւ նորա վերայ՝ որ էլ չըմոլորացնէ ազգերին, մինչեւ որ հազար տարին լցվի. եւ նրանից հետո պէտք է որ նա մինչիչ ժամանակ արձակվի[3]:

4 Այլ աթոռներ տեսի, եւ նոյանց

[30] Եսայ. ԺԱ. 4: Բ Թես. Բ. 8: Ցայտ. Ա. 16: Վայր. 21: 2 [31] Սաղմ. Բ. 9: Ցայտ. Բ. 27: Ժբ. 5: [32] Եսայ. ԿԳ. 3: Ցայտ. ԺԴ. 19, 20: [33] Վէր. 12: [34] Դան. Բ. 47: ա Տիմ. Զ. 15: Ցայտ. Ժէ. 14: [35] Վայր. 21: [36] Եզէկ. ԼԹ. 17: [37] Եզէկ. 18. 20: [38] Ցայտ. Ժչ. 16: Ժէ. 13, 14: [39] Ցայտ. Ժչ. 13, 14: [40] Ցայտ. Ժգ. 12, 15: [41] Ցայտ. Ի. 10: Դան. Է. 11: [42] Ցայտ. Ժգ. 10: Իս. 8: [43] Վէր. 15: [44] Վէր. 17, 18: [45] Ցայտ. Ժէ. 16: [1] Ցայտ. Ա. 18: Թ. 1: [2] Ցայտ. Ժբ. 9: Բ Պետր. Բ. 4: Ցուդ. 6: [3] Դանէլ. Ը. 17: [4] Ցայտ. Ժչ. 14, 16: Վայր. 8:

վերայ նստեցին[5]. եւ դատաւորու-
թիւն տրվաւ նոցանց[6], որ ընտրեն
նորանց հոգիքըն որ գլխատվել էին
Յիսուսի վկայութեան համար՝ եւ
Աստուծոյ բանին համար[7]. եւ նո-
րանց որ երկրպագութիւն չի արին
գազանին, (եւ ոչ էլ նորա պատկե-
րին)[8], եւ նորա դրոշմին չառին ի-
րանց ճակատն՝ եւ ոչ էլ իրանց ա-
ձեռն վերայ[9]. եւ սորանք կենդա-
նացան՝ եւ Քրիստոսի հետ թագա-
ւորութիւն արին հազար տարի[10]։

5 Եւ սրանից ետեւ էլ ոչ մի ըն-
կենդանացաւ մեռելներից, մինչեւ
որ հազար տարին լցվի. էս է առա-
ջին յարութիւնն։

6 Երանի էն սրբերին, որ բա-
ժին ունին առաջին յարութեան
մէջ. սորանց վերայ իշխանութիւն
չունի երկրորդ մահն[11]. բայց Ա-
ստուծոյ՝ եւ Տէր Յիսուսի Քրիս-
տոսի քահանայք կըլինին[12], եւ նորա
հետ կըթագաւորին հազար տարի[13]։

7 Եւ հազար տարուցն ետեւ՝
կարձակէ սատանային՝ եւ էն բան-
տից կըհանէ[14]. եւ դուրս կըգայ եւ
կըմոլորացնէ բոլոր աղգերըն որ
երկրի չորս կողմումն են[15], եւ գոգն
եւ մագոգն էլ (իրան ձեռքն կառ-
նէ)[16] որ (նորանցով) ամէն զօրքե-
րըն կռվի մէջ ժողվէ. որ նոյանց
համարն ծովի աւազի պէս է[17]։

8 Եւ դուրս կըգան երկրի լայ-
նութեան վերայ, եւ սրբերի բա-
նակներըն (օթոցներըն) եւ սիրելի
քաղաքն կըպատեն չորս կողմով[18]։

9 Եւ երկնքից կրակ վէր կըգայ
Աստուածանից՝ եւ կայրէ կըսատակէ
նորանց եւ նորանց զօրագլուխ սա-
տանան՝ որ նորանց մոլորացրուց[19]՝
կըքցվի կրակի եւ ծրնծրմբի ծովի,
որտեղ որ էն գազանն՝ եւ սուտ մար-
գարէն էին[20]։

10 Եւ կըջարջարվին ցերեկ եւ գի-
շեր[21]։

11 Եւ մին սպիտակ մեծ աթոռ
տեսի, եւ նորան էլ որ նորա վերայ
նստած էր, որ նորա երեսից եր-
կինքն եւ երկիրն վախտվին եւ
փախչում[22]. եւ տեղ չըգտվաւ նո-
րանց (համար)[23]։

12 Եւ տեսի որ մեռելներն մեծ եւ
փոքր կանգնած էին աթոռի առա-
ջին[24]. եւ գրքեր էին բացվում[25].
եւ մին ուրիշ գիրք բացվաւ, որ է
կենաց (գիրքն), եւ մեռելներն
դատվեցան էն գրքերիցն[26] իրանց
գործքերին պէս[27]։

13 Եւ ծովն իրան (միջն) մեռել-
ներըն տուաւ, եւ մահն եւ դժոխքն
իրանց մեռելներըն (տուին)[28]. եւ ա-
մէն մէկն իրանց գործքերին պէս
դատվեցան[29]։

14 Մահն եւ դժոխքն մանրվե-
ցան (քցվեցան) կրակի լըճի մէջ[30].
(էս է երկրորդ մահն[31])։

15 Եւ ով որ գրված չըգտաւ կե-
նաց գրքի մէջն, կրակի լըճին մէջ
քցվեցաւ[32]։

---

[5] Դան. է. 9, 22, 27։ Մատթ. ժթ. 28։ Ղուկ. իբ. 30։ [6] ա Կորնթ. գ. 2, 3։ [7] Յայտ. գ. 9։ [8] Յայտ. ժգ. 12։ [9] Յայտ. ժգ. 15, 16։ [10] Հռոմ. ը. 17։ բ Տիմ. բ. 12։ Յայտ. ե. 10։ [11] Յայտ. բ. 11։ իա. 8։ [12] Եսայ. կա. 6։ ա Պետր. բ. 9։ Յայտ. ա. 6։ ե. 10։ [13] վէր. 4։ [14] վէր. 2։ [15] վէր. 3։ Եսայ. կ. 9։ [16] Եզեկ. լը. 2։ լթ. 1։ [17] Յայտ. ժգ. 14։ [18] Եսայ. ը. 8։ Եզեկ. լը. 9, 16։ [19] վէր. 7։ [20] Յայտ. ժթ. 20։ [21] Յայտ. ժգ. 10, 11։ [22] բ Պետր. գ. 7, 10, 11։ Յայտ. իա. 1։ [23] Դան. բ. 35։ [24] Յայտ. ժթ. 5։ [25] Դան. է. 10։ [26] Սաղմ. կթ. 28։ Դան. ժբ. 1։ Փիլիպ. գ. 3։ Յայտ. գ. 5։ ժգ. 8։ իա. 27։ [27] Երեմ. ժէ. 10։ լբ. 19։ Մատթ. ժգ. 27։ Հռոմ. բ. 6։ Յայտ. բ. 23։ իբ. 12։ վէր. 13։ [28] Յայտ. գ. 8։ [29] վէր. 12։ [30] ա Կորնթ. ժե. 26. 54, 55։ [31] վէր. 6։ Յայտ. իա. 8։ [32] Յայտ. ժթ. 20։

# ԳԼ · Ի՛Ր

1 Նոր երկինքն եւ նոր երկիրն։ 10 Երկնային եքսստազէմ տեսիլքն եւ նորա պատմութիւնն։ 23 Նորա մէջ արեգական պէտք չունի, պատճառն որ՝ Աստուծոյ փառքն լուսաւորում նորան։ 24 Երկրի թագաւորներն իրանց փառքն կը բերեն նորա մէջ։

1 Յե տեսի՝ նոր երկինք եւ նոր երկիր[1]. ինչու որ առաջին երկինքն եւ երկիրն անցկացա[2]. եւ ծով էլ չկար։

2 Յե սուրբ քաղաքըն՝ էն նոր Եռուսաղէմին տեսի՝ որ վէր էր գալիս Աստուածանից[3] (Եւ) երկնքիցն՝ պատրաստված ինչպէս մի զարդարված հարսն իրան մարդոյն համար[4]։

3 Յե ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասում էր՝ ահա Աստուծոյ խորանն մարդկանց միջումն (է), (եւ) նա կը բնակվի նորանց հետ. եւ նորանք (կը լինին) նորան ժողովուրդ, եւ սա նորանց Աստուած[5]։

4 Յե ամէն արտասուքը կըսրբէ նորանց աչքերիցն[6]. եւ էլ մահ չի լինիլ[7], ոչ սուգ եւ ոչ աղաղակ. եւ ոչ ցաւ եւ ոչ աշխատանք էլ չի լինիլ, ինչու որ առաջինն անցկացա[8]։

5 Յե նա որ աթոռին վերայ նըստած էր՝ ասաց ինձ[9]. ահա ամէն բան նոր եմ՝ շինում[10]. եւ ասաց ինձ. գրիր. ինչու որ՝ էս խօսքերս ճշմարիտ եւ հաւատարիմ (են)[11]։

6 Յե ինձ ասաց. էլաւ[12]. ես եմ այփան եւ օն. սկիզբն եւ վերջն[13]. ես ձրի (ման-ֆոյ) կըտամ ծառաներին կենաց աղբիւրի ջրիցն[14]։

7 Ով որ յաղթէ, էս ամէնըս կը ժառանգէ. եւ ես կը լինիմ նորան Աստուած, եւ նա կը լինի ինձ որդի[15]։

8 Բայց ծուլերին եւ անհաւատներին, մարդասպաններին եւ պոռնիկներին, եւ կախարդներին, եւ կըռապաշտներին՝ եւ մնացողը տուօղներին՝ եւ ամէն սուտ ասողներին՝ եւ ամբարիշտներին[16]՝ նորանց բաժինն էն լըճումն կը լինի որ կըբակով եւ ծծմըմով վառվում է, որ է երկրորդ մահն[17]։

9 Յե մինն էն եօթն հրեշտակներիցն՝ որ էն եօթն սկաւառակըն (Եասըն) ունէին՝ վերջին եօթն պատուհասներովն լցված, ինձ մօտ եկաւ, խօսեց ինձ հետ եւ ասաց[18]. ինկ՝ ցոյց տամ քեզ հարսըն (որ է) գառնին կինն[19]։

10 Յե հոգովն առաւ տարաւ ինձ մի բարձր սար[20], եւ ինձ ցոյց տուաւ էն մեծ քաղաքըն սուրբ՝ Երուսաղէմն, որ երկնքիցն էր վէր եկել Աստուածանից[21]։

11 Յե Աստուծոյ փառքըն ունէր. եւ լուսաւորութիւն ունէր պատուական ակունքի պէս, (ոյաֆնա) սառուցի պէս պայծառ յասպիս քարի նման[22]։

[1] Եսայ. կե. 17: կզ. 22: բ պետր. գ. 13: [2] Ցայտ. ի. 11: [3] Եսայ. ծբ. 1: Գաղ. դ. 26: Եբր. ժա. 10: ժբ. 22. ժգ. 14: Ցայտ. գ. 12: Վայր. 10: [4] Եսայ. ծգ. 5: կա. 10: բ Կորնթ. ժա. 2: [5] Զաքար. լզ. 11, 12: Եզեկ. խգ. 7: բ Կորնթ. զ. 16: Ցայտ. է. 15: [6] Եսայ. խե. 8: Ցայտ. է. 17: [7] ա Կորնթ. ժե. 26, 54: Ցայտ. ի. 14: [8] Եսայ. լե. 10: կա. 3: կե. 19: [9] Ցայտ. դ. 2, 9: ե. 1: ի. 11: [10] Եսայ. խգ. 19: բ Կորնթ. ե. 17: [11] Ցայտ. ժԲ. 9: [12] Ցայտ. ժգ. 17: [13] Ցայտ. ա. 8: իբ. 13: [14] Եսայ. ժբ. 3: ծե. 1: Ցաքար. դ. 10, 14: է. 37: Ցայտ. իբ. 17: [15] Ջաք. ը. 8: Եբր. ը. 10: [16] ա Կորնթ. զ. 9, 10: Գաղ. ե. 19, 20, 21: Եփես. ե. 5: ա Յովհ. ա. 9: Եբր. ժբ. 14: Ցայտ. իբ. 15: [17] Ցայտ. ի. 14, 15: [18] Ցայտ. ժե. 1, 6, 7: [19] Ցայտ. ժԲ. 7: Վէր. 2: [20] Ցայտ. ա. 10: ժե. 3: [21] Եբր. խը. Վէր. 2: [22] Ցայտ. իգ. 5: Վայր. 33:

12 Եւ նորա պարիսպներն մեծ եւ բարձր էին, եւ տասներկու դուռն ունէր. եւ տասներկու դռնումն տասներկու հրեշտակ. եւ ամէն մէկ դռներին վերայ անուններ էին գրած՝ որ իսրայէլի տասներկու ցեղի անուններն էին[23]։

13 Արեւելքի կողմիցն երեք դուռն, եւ հիւսիսի կողմիցն երեք դուռն, եւ հարաւի կողմիցն երեք դուռն, եւ արեւմտքի կողմիցն երեք դուռն[24]։

14 Եւ քաղաքի պարիսպն տասներկու հիմունք ունէր, եւ նորանց վերայ գառի տասներկու առաքելոց տասներկու անուններըն[25]։

15 Եւ նա որ ինձ հետ խօսումէր, մին ոսկէ եղէգ (չափ) ունէր իրան ձեռումն, որ քաղաքըն եւ նորա դռներըն եւ նորա պարիսպներըն չափէ[26]։

16 Եւ քաղաքն չորս անկունանի էր, եւ որչափ նորա երկայնութիւնն (էր), հնչափ էլ նորա լայնութիւնն՝ եւ բարձրութիւնն՝ հաւասար. եւ նորա երկայնութեան չափն տասներկու հազար ասպարէզ (Տանիվէլ) (էր), եւ նորա լայնութիւնն եւ բարձրութիւնն միաչափ։

17 Եւ նորա պարիսպըն չափեց հարիւր եւ քառասուն եւ չորս ասպարէզ. մարդոյ չափովն՝ որ հրեշտակինն է։

18 Եւ քաղաքի պարիսպներուն շինուածքն յասպիս (քարից) էր. եւ քաղաքն մաքուր ոսկի էր՝ յիստակ եւ ըսպիտակ ապակի (շուշայ) նման։

19 Եւ քաղաքի հիմունքն ամէն պղնիւ ակունքներից (էր). պարսպի առաջին հիմն յասպիս, երկրորդն՝ շափիղայ, երրորդն՝ պղձագոյն, չորրորդն զմրուխտ[27]։

20 Հինգերորդն՝ եղենգնաքար, վեցերորդն սարդիոն, եօթներորդն ոսկէքար, ութերորդն՝ բիւրեղ, իններորդն՝ ադամանդ, տասներորդն՝ քրիսոպրասոս, տասնեւմէկերորդն՝ յակինթ, տասներկուերորդն՝ ամէթիստ։

21 Եւ տասներկու դուռն կար՝ տասներկու մարգարիտից՝ մին ձեւով. եւ ամէն մէկ դուռն մէկ մարգարիտից. եւ քաղաքի բաց փողոցներն յիստակ ոսկի՝ ինչպէս պայծառ ապակի (շուշայ)[28]։

22 Եւ տաճար չէ՛ տեսի նորա մէջն, ինչու որ Տէր Աստուած ամենակալն՝ նորա տաճարն էր տաճարն նորա մէջ[29]։

23 Եւ քաղաքն իսկի արեգական եւ լուսնի պէտք չունէր՝ որ լուսաւորեն նորան. ինչու որ Աստուծոյ փառքն միշտ լուսաւորումէր նորան, եւ նորա ճրագն գառնն էր[30]։

24 Եւ հեթանոսներ նորա լուսովն էին գնում. եւ երկրի թագաւորներն նորա փառաց լոյսըն հագնումէին[31](*)։

25 Եւ նորա դռներն չէին փակվում ցերեկ եւ գիշեր, այլ միշտ բաց էին մնում[32]. եւ գիշեր էլ չէր լինում նորա մէջն[33]։

26 Եւ ազգերի փառքըն եւ պատիւըն (կբերուին) նորա մէջ[34]։

27 Եւ իսկի չար կամք ունող չի՛ մտնիլ էն տեղն, եւ ոչ էլ պիղծ՝ եւ սուտ[35], բայց միայն նորանք՝ որ գառին կենաց գրքի մէջն գրված են[36]։

---

[23] Եսի. խը. 31–34։ [24] Եսի. խը. 31–34։ [25] Մատ. ժզ. 18։ Գաղ. բ. 9։ Եփես. բ. 20։ [26] Եսի. կ. 3։ Զաք. բ. 1։ Ցայտ. ժա. 1։ [27] Ելս. ծգ. 11։ [28] Ցայտ. իբ. 2։ [29] Ցվե. գ. 23։ [30] Ելս. իդ. 23։ կ. 19, 20։ Ցայտ. իբ. 5։ Ա Կոր. 11։ [31] Ելս. կ. 3, 5, 11։ կզ. 12։ (*) Ցանոյնէն. Իրանց փառքն եւ պատիւն կբերուին նորա մէջ։ [32] Ելս. կ. 11։ [33] Ելս. կ. 20։ Զաք. ժգ. 7։ Ցայտ. իբ. 5։ [34] Ա Կոր. 24։ [35] Ելս. լե. 8։ Ծն. 1։ կ. 21։ Ցվե. գ. 17։ Ցայտ. իբ. 14, 15։ [36] Փիլիպ. գ. 3։ Ցայտ. գ. 5։ ժգ. 8։ ի. 12։

# ԳԼ · ԻՒ

1 կենդանի ջրի գետն։ 2 կենաց ծառն։ 5 Տէր Աստուածն լուսաւորութիւ սուրբ քա-
ղաքին։ 9 Հրեշտակն չէ ուզում՝ որ իրան երկրպագութիւն անեն։ 18 թէ որ մինն՝ մի-
բան աւելացնէ ես գրքի վերայ, եւ մին բան պակասացնէ նորանից՝ Աստուած էլ կաւե-
լացնէ նորա վերայ եօթն պատուհասներըն, եւ կըպակասացնէ նորա բաժինըն կենաց
ծառիցն, եւ սրբերի քաղաքիցն։

1 Եւ ինձ մին մաքուր գետ ջրոյ
տուաւ, կենդանի ջրի՝ սաւուցի նը-
ման (փայլուն), որ Աստուծոյ եւ
դառի աթոռիցն էր գալիս[1]։

2 Եւ քաղաքի բաց փողոցների
միջումն էր գնում[2]։ եւ գետի եղերքն
(պռոպէրն) էս կողմից էն կողմից կե-
նաց ծառ (կար)՝ որ տասներկու
պտուղ էր բերում[3]. ամէն մէկ ամսի
(ժամանակումն) իրանց պտուղըն
տալիս էին։ եւ ծառի տերեւն բժըշ-
կութիւն էր հեթանոսներին (հա-
մար)[4]։

3 Եւ հետեղն էլ իսկի նզովք չը-
կար[5]։ եւ Աստուծոյ եւ (նորա) գա-
ռի աթոռն էր նորանում[6]. եւ նորա
ծառաներն պաշտուելին նորան[7]։

4 Եւ նորա երեսըն տեսնելին. եւ նորա անունն գրված էր նորանց ճակատումն[8]։

5 Եւ գիշեր չի կար հետեղն, եւ իսկի ճրագի եւ արեգական լոյս պէտք չէր հետեղն[9]. պատճառն որ Տէր Աստուածն լուսաւորում էր նո-
րանց[10]. եւ կըթագաւորին յաւի-
տեանս յաւիտենից[11]։

6 Եւ ասաց ինձ. էս խոսքերս
հաւատարիմ եւ ճշմարիտ են[12]. եւ
Տէրն՝ սուրբ մարգարէից Աստուածն
իրան հրեշտակըն ուղարկեց՝ որ իրան
ծառաներին ցոյց տայ էն որ շուտով
պիտի լինի[13]։

7 Ահա շուտով (կըգամ)[14]. եւ
բանի նորան՝ որ էս (գրքի) մարգա-
րէութեան խոսքերըն կըպահէ[15]։

8 Եւ ես Յովհաննէս էս ամէն
բաներըս լսեցի եւ տեսի. եւ երբոր
լսեցի եւ տեսի, վերընկայ՝ որ երկրը-
պագութիւն անեմ էն հրեշտակին,
որ էս ամէն բաներըս ցոյց էր տալիս
ինձ[16]։

9 Եւ ինձ ասաց. մի ընկնիր իմ
առաջս՝ եւ երկրպագութիւն մի ա-
ներ. ինչու որ ես էլ ծառայ ընկեր
եմ քեզ եւ քո եղբարներին՝ որ էս
գրքի մարգարէութեան խոսքերըն
կըպահեն. Աստուծոյն երկրպագու-
թիւն արա՛[17]։

10 Եւ ասաց ինձ (մինէլ). մի կընը-
քեր (ֆօհրնէ) էս գրքի մարգարէա-
կան խոսքերըն[18]. ինչու որ ժամա-
նակն մօտացել է[19]։

11 Ով որ ամբարիշտ է՝ թող ամ-

[1] Եզէկ. խէ. 1։ Զաք. ժգ. 8։ [2] Եզէկ. խէ. 12։ Ցայտ. իա. 21։ [3] Ընդդ. բ։ 9։ Ց գ. բ. 7։ [4] Ցայտ. իա. 24։ [5] Զաք. ժգ. 11։ [6] Եզէկ. խը. 35։ [7] Մատթ. է. 8։ ա Կորնթ. ժգ. 12։ ա Յովհ. գ. 2։ [8] Ցայտ. գ. 12։ ժգ. 1։ [9] Ցայտ. իա. 23, 25։ [10] Ղուկ. կզ. 9։ Զգ. 11։ [11] Դան. է. 27։ Հռովմ. ե. 17։ բ Տիմ. բ. 12։ Ցայտ. գ. 21։ [12] Ցայտ. ժԹ. 9։ իա. 5։ [13] Ցայտ. ա. 1։ [14] Ցայտ. գ. 11։ Վսյր. 10, 12, 20։ [15] Ցայտ. ա. 3։ [16] Ցայտ. ժԲ. 10։ [17] Ցայտ. ժԲ. 10։ [18] Դան. ը. 26։ ժբ. 4, 9, Ցայտ. ժ. 4։ [19] Ցայտ. ա. 3։

Թո՛ղ կեղտոտվի, եւ ով որ արդար է՝ թո՛ղ (էլ) արդարանայ, եւ ով որ սուրբ է՝ թո՛ղ (էլ) սրբվի[20]։

12 Ա՛հա շուտով կըգամ[21] եւ իմ վարձքս էլ ինձ հետ (է)[22]. որ ամէն մէկին հատուցանեմ իւրան գործքին պէս[23]։

13 Ա՛ս եմ ալֆան եւ օն, սկիզբն եւ կատարածն, առաջինն եւ վերջինն[24]։

14 Երանելի՛ են նորանք՝ որ նորա պատուիրանքներըն կըպահեն[25]. նոքանք իշխանութիւն ունին որ կենաց փայտին ուտեն[26] եւ քաղաքի դռնովն ներս մտնեն[27]։

15 Ասց դուրս պիտի գնան[28] շներն, եւ մնհադեղ տուօղներն, սպանօղներն, եւ կռապաշաներն, եւ են ամէնքն որ սուտ[իւ]ն են սիրում[29]։

16 Ա՛ս Յիսուս իմ հրեշտակըս ուղարկեցի՝ որ վկայէ ձեզ եկեղեցներիդ՝ ես բանիս համար[30]. ես եմ գաւթի արմատն եւ ցեղն[31], եւ առաւօտու պայծառ աստղն[32]։

17 Ա՛ւ Հոգին՝ եւ հարսն ասումեն՝ եկ[33]. եւ նա որ լսումէ թո՛ղ ասէ՝ եկ. եւ ով որ ծարաւ է՝ թո՛ղ գայ, եւ նա որ կամենումէ կենաց ջուրըն ձրի (ֆաֆաց) առնել[34]։

18 Ա՛ս վկայումեմ ամէնին՝ ով որ էս գրքի մարգարէութեան խօսքերըն լսումէ. թէ որ մինն բան աւելացնէ սորա վերայ[35], Աստուած կաւելացնէ նորա վերայ էն եօթն պատուհասներըն՝ որ էս գրքումս գրված են։

19 Ա՛ւ թէ որ մինն էս գրքիս մարգարէութեան խօսքերից բան պակասացնէ, Աստուած կըպակասացնէ եւ կըկտրէ նորա բաժինըն կենաց ծառից[36], եւ սրբերի քաղաքից՝ որ էս գրքումս գրված են[37]։

20 Ա՛ն որ էս (բաներս) վկայեց՝ ասաց. (իրաւի) ես շուտով կըգամ[38]. ամէն[39]. եկ Տէր Յիսուս[40]։

21 Ո՛ր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն լինի ամէն սրբերին վերայ։ Ամէն[41]։

[20] Եղէկ. գ. 27։ Դան. ժբ. 10։ բ Յհ. գ. 13։ [21] Վէր. 7։ [22] Եսայ. խ. 10։ կբ. 11։ [23] Հռովմ. բ. 6։ ժգ. 12։ Ցայտ. ի. 12։ [24] Եսայ. խա. 4։ խգ. 6։ խը. 12։ Ցայտ. ա. 8, 11։ իա. 6։ [25] Դան. ժբ. 12։ ա Ցովհ. գ. 24։ [26] Վէր. 2։ Ցայտ. բ. 7։ [27] Ցայտ. իա. 27։ [28] ա Կորնթ. ը. 9, 10։ Գաղ. ե. 19, 20. 21։ Կող. գ. 6։ Ցայտ. իթ. 20, 21։ իա. 8։ [29] Փիլիպ. գ. 2։ [3] Ցայտ. ա. 1։ [31] Ցայտ. ե. 5։ [32] Թուոմ. իգ. 17։ Ջաքա. զ. 12։ բ Պետր. ա. 19։ Ցայտ. բ. 28։ [33] Ցայտ. իա. 2, 9։ [34] Եսայ. նե. 1։ Ցովհ. է. 37։ Ցայտ. իա. 6։ [35] բ Օրին. գ. 2։ ժբ. 32։ Ա՛ռակ. ե. 6։ [36] Եզէ. լբ. 33։ Սաղմ. կճ. 28։ Ցայտ. գ. 5։ ժգ. 8։ [37] Ցայտ. իա. 2։ [38] Վէր. 12։ [39] Ցովհ. իա. 25։ [40] բ Տիմ. դ. 8։ [41] Հռովմ. ժզ. 20, 24։ բ Թես. գ. 18։

Հ.Ս.Խ.Ր. ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
7/XI 1922
ИМЕНИ, МЯСНИКЯН
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ Ն. ՀԱՍ

## Վ Ր Ի Պ Ա Կ

| Երես | Տող | Ո՛ղիղ | Սխալ | Երես | Տող | Ո՛ղիղ | Սխալ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 140 | 42 | սորանից | Նորանից | 365 | 48 | ինչէս որ Հողեղէնըն՝ | ինչպէս որ (Հողեղէնըն) |
| 292 | 30 | որ Նորան քեզ | Նորան քեզ | | | | |
| 341 | 11 | գրուած | գրուած | 382 | 4 | զէքն | զէնքն |